Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5858

2
2-70

Printed in Turkey

001/100
bb4.pl
75

29 JUL 2009

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Ա

12 JUN 2013

762-50

1776
Z-66.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

2
Z-70

ՏԵՍԱԿԱՆ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ Ի ՁԵՌՆ

ՏԵԱՌՆ ԵԳՈՒԱՐԴԱՑ Վ. ՀՒՐՄԻՒԶ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Գ.Ա.Ա. ԱԲՏ. ՀԱՅԿ. ՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄ. Ա. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ

ԾԻՇԱՏԱԿ

Մ Ա Գ Ա Ք Ե Ա Ն

ՏՈՀՄԻՆ

Printed in Turkey

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աստուածաբանութեանն անուն ինքնին իսկ յայտ առնէ զբարձրագոյն քան զամենայն գիտութիւնս. զի եթէ աղնուականութիւն և վսեմութիւն արուեստից և գիտութեանց ըստ իրացն է՝ զորովք յածին, ապա աստուածաբանականն գիտութիւն առանց Համեմատութեան գեր ՚ի վերոյ է քան զամենայն գիտութիւն՝ որչափ Աստուած ՚ի վեր է քան զամենայն արարածս կան բնութիւնս և քան զայլ ամենայն Հնմարտութիւնս։ Սովաւ աստուածաբանն առ աղբիւրն յաւիտենական Հնմարտութեան ՚ի վեր ելանէ, և ըստ պայմանի մարդկեղէն տկարութեանս զծարաւ ընդաթոյս Հնմարտասիրութեանն ընու. պարարին միտք նորա ընկղմեալ ՚ի լոյս աստուածութեան, և զմայլի Հոգի իւր՝ զուղիս փափկութեան նորա արբեալ։

Սմին իրի Համբակին աստուածաբանութեան պարտ է նախ քան զամենայն պատրաստել զանձն սրբութեամբ մտաց և խաղաղութեամբ սրտի յընդունակութիւն աստուածային լուսոյ. զի որպէս ինքն Աստուած ուսոյց եկեղեցւոյ իւրում զՀնմարտութիւնս Հաւատոյ և զխորհուրդս աստուածգիտութեան իւրոյ, նոյնպէս և ինքն

լուսաւորէ զմիտս փափաքողաց ճանաչել զայնս, և ըզ-
սիրտս նոցա բորբոքէ սիրով՝ որ զհետն գայ ճանաչման:
Այսու որոյ զոր իմաստասէր վարդապետն մեր Գրիգոր
զվարժապետաց աստուածաբանութեան ասէ. "Յոր-
ժամ զաներեւութէնն և զնորին մշտնջենաւոր զօրու-
թենէն ճառիցէ ոք, քանզի մարմնաւոր լեալ է, պար-
տի զմիտս յատակել և զխորհուրդս սրբել, զոյզս շարժ-
մանց պարզել, զի յայն՝ զոր առաջի եդ՝ հասանել կա-
րասցէ,,. և որ ինչ օրինակ և պատճառս բանիցն յա-
ւելու՝ "Այս և որ ընդ ճառագայթս արեգականն հայել
կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն զաղտն և զբիժն
՝ի բաց պարզել, զի մի մթալքն՝ որ զբաւքն շողայցեն՝
արգել հայելոյ ՝ի յատակութիւն լուսոյն լինիցին,,. և
առաւել զուսանողաց աստուածաբանութեան զնոյն է
ասել, զի յամենայն աշխարհական զբօսանաց պարտին
խաղաղացուցանել զմիտս՝ առ ՝ի կարող լինելոյ յու-
սումն աստուածայնոց ճշմարտութեանց պարապել:

Նման ծայրաձաւալ է գիտութիւնս այս, և անդունդ
խորին. որպէս զի ՝ի դէպ է աստանօր զառաքելականն
բացագանչել. "Ո՛վ խորք գիտութեանն Աստուծոյ,,.
(Հռ. ԺԱ. 12): Այսպէսն ներհուն աստուածաբանիչ
և աստուածարեալոց արանց անկ եր, և ոչ իմեամն չափա-
ւորութեան, յանդուգնս յայս նաւարկել. այլ եթէ
յորդոր քաջալերութեան բաւական իցէ անբասիր առ-
նել զձեռնարկութիւն ՝ի վեր քան զկար, խոստովա-
նիմ զի չիշխեի երբէք յայսպիսի ինչ լինել ձեռներէց՝
եթէ ոչ խրախուսեր զիս ներողամիտ զիջումն Գրհիա-
պատիւ Տեառն Գնտոնի վարդապետի Հասունեան նա-
խագահ եպիսկոպոսապետին մերոյ, որոյ հրաւիրանաւն
ձեռն արկի ՝ի գրել՝ զոր չէր իմ և ընդ միտ անգամ
ածեալ: Այլ թէպէտ զամենայն ջան ՝ի գործ արկի
պատկառ կալ յամենայնի ուղիղ վարդապետութեան
սրբոյ կաթողիկէ եկեղեցւոյ, վասն որոյ և զամե-
նայն ինչ ՝ի սմա ՝ի քաջածանօթ աստուածաբանից վը-

կայելոց ողջմտութեամբ՝ ի կիր առի, այլ հանդերձ այսու ամենայնիւ սկսանիմ և ինքեմ զգիրս զայս խոնարհ խոստովանութեամբ, զի եթէ ինչ՝ ի սմա սպրդեալ իցէ յանգէտս՝ որ չիցէ ըստ առաջադրութեանս իմում, ընդ անսխալ դատաստանաւ սրբոյ առաքելական Պահոն Հռովմայ արկանեմ որդիաբար։

Ի չափոյ իսկ գրոցս յայտ է, զի ոչ որպէս աստուածաբանութիւն ձոխ և լիուլի զսա՝ ի լոյս ընծայեմ, առ որ բազմահատոր ստուարակարկատ մատենից պէտք էին, այլ որպէս համառօտութիւն իմն՝ ի վարժս և՝ ի նախակրթութիւն ուխտի մանկանց։ Վասն որոյ մի՛ ոք խնդրեսցէ՝ ի սմա աւանդեալ երկարապատում զկարծիս և զհակաճառութիւնս այլ և այլ կաճառաց աստուածաբանից, մանաւանդ զերից՝ որ չեն՝ ի հաւատոյ։ Քանզի այսոքիկ անդէն՝ ի սկզբան խոկեալ՝ ի միտս համբակաց՝ շփոթեն զնոսա, և՝ ի կարևորս անդր տկարացուցանեն։ Ո՛չ խնդիրք, յորս ներհուն ոք աստուածաբան զուարճութեամբ պարապէ, ածէն նորուամանց ձանձրութիւն, և տաղտկալի նոցա զուսումն աստուածաբանութեան առնեն։ Այլ ոչ զառարկութիւնս աղանդոց և հերձուածոց՝ ի սմա համահաւաքեմ, այլ զսահմանս ևեթ հաւատոյ, զհաստատութիւնն նոցին՝ ի սուրբ գրոց, յաւանդութենէ, ՝ի ժողովոց և՝ի Հարց, և զգլխաւորս ևեթ յառարկութեանց. որպէս զի դիւրին իցէ համբակաց առնուլ՝ ի միտ զամենայն, առանց ընտրելոց և յապաւելոց։ Ո՛չ եթէ զտարերս զայսոսիկ աստուածաբանութեան քաջ՝ ի միտ առնուցուն, ինքնին ասպա բաւական լինին և զայլ ամենայն առարկութիւնս լուծանել. մանաւանդ եթէ յետ այնորիկ՝ ի մատեանս Հարց դեգերեսցին, որք աւանդապահքն են վարդապետութեան եկեղեցւոյ։

Վարձեալ և՝ ի նորաշանդիցն բազմապատիկ մոլորութեանց զծանօթագոյնս ևեթ՝ ի սմա շատ համարեցայ բացատրել և եղծանել. քանզի այլքն չնորհօքն

Աստուծոյ անծանօթ են յարևելս, և ուխտիւք փափաքելի պի չգայցեն երբեք ՚ի ծանօթս։

Ջանացայ և պարզախօսել ՚ի սմա ըստ կարի. այլ եթէ մեծին ինչ ուրեք ըստ խորութեան աստուածայինն անհասանելի խորհրդոյ և ըստ թերութեան մարդկեղէն բանից գտայի ուրեք, վարժապետաց է կենդանի ձայնիւ լնուլ զթերին բացատրութեանս, և զամենայն փոյթ և ջան ՚ի կիր արկանել՝ դիւրին և ցանկալի աշակերտելոյն իւրեանց առնելոց զգիտութիւնս զայս, որ զերանութիւն մեր յերկինս յօրինելոց է։ Զանգի այժմու գիտութիւնս մեր յաստուածայինս այնպէս է առ հանդերձեալն գիտութիւն՝ որպէս տեսութիւն ՚ի հայելոջ առ նախատիպին իսկապէս նկատումն, ըստ առաքելական բանին. “Զայժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմ փոքր ՚ի շատէ, այլ յայնժամ գիտացից որպէս և նայն ծանեաւ ինձ ,,. (Ա. Կոր. ԺԳ. 12)։

Ա. Bernasconi inc.

Եկեղեցիք Հաւատոյ կենդանւոյ

Սրբոյն հաւատարմորքիւ ժողովրդոցն քրիստոսի.

Ա. Կոր. Գ. 15.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ

ՆԱԽԱԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԶԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵՆՆ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

Աստուածաբանութիւն, որպէս և յանուանէն իսկ յայտ է, է գիտութիւն՝ որ ձառէ զԱստուծոյ և զաստուածայնոց։ Արդ է ահա սահմանել զայն. Վասնզի հանդերձ պատճառօք ցկրծնիլ, ևս ըստ վարդապետութեան հաւատոյ, ևս ըստ բարոյականին, և ևս ըստ պաշտամանց։ Ոչ ի աստուածաբանութիւն լինքն բովանդակիլ զքննութիւն վարդապետութեան հաւատոյ՝ որ յայտնեալ են մեզ յԱստուծոյ, օրինաց՝ որ տուեալ են՝ ի նմանիլ, և պաշտամանց՝ որ՝ ի նմանիլ դարձեալ սահմանադրեալ։ Այսու յառաջ գայ զանազանութիւն Տեսական աստուածաբանութեան, որ սահմանի զՀնմարտութիւնն՝ որոյ պարտիմք հաւատալ. Բարոյական աստուածաբանութեան, որ բացատրէ որ ինչ պարտիքն գործել. և Կանոնական աստուածաբանութեան, որ ձառէ զաստուածային պաշտամանց և զարեւկարգութեանց եկեղեցւոյ։

Այսաւք գիտութիւն հանդերձ պատճառօք, զի աստուածաբանութիւն է գիտութիւն խորին և ստոյգ, որ ցուցանէ մեզ զպատճառս պարտուց մերոց առ Աստուած, առ մեզ, և առ այլս. և գիտութեամբս այսուիկ զանազանի աստուածաբանն՝ ի պարզ հաւատացեալ՝ որում է

գիտել ըստ բաւականին որ ինչ պարտի հաւատալ և որ ինչ պարտի գործել, առանց կարելոյ պատճառաբանել զկրօնից։

Աստուածաբանութիւն կարևոր է եկեղեցւոյ, որպէս իրաւապիտութիւն աշխարհական տէրութեան. վասն որոյ առաքեալն ասէ. (Ա Տիմ. գ. 11.) "Այս նա եւս զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս, ՚ի հաստատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման,,։ Այս կարևոր է հովուաց գիտել զկրս կրօնից, որպէս զատաւորաց զօրինս. վասն որոյ յաւելու նոյն առաքեալ. (Տիտ. ա. 9.) "Պարտ է եպիսկոպոսին... լինել հաւատարիմ բանին վարդապետութեան, զի կարօղ իցէ և մխիթարել ողջմտութեամբ վարդապետութեանն, և զհակառակորդսն կշտամբել,,։ Այլ ոչ և պարզ հաւատացեալց. զի չէ նման պարտ ուսանել զաստուածաբանութիւն, որպէս և ոչ ամենին ուսանել զիրաւապիտութիւն։ Քրիստոս կացոյց յեկեղեցւոջ իւրում առաքեալս և մարգարէս և վարդապետս, այլ ոչ ամենեքին առաքեալք են, ոչ ամենեքին մարգարէք, և ոչ ամենեքին վարդապետք. (ա Կորնթ. ժբ. 29.) "Միթէ ամենեքին վարդապետք իցեն,,։ Յոր յաւելու առաքեալն Գրիգորիոս. (Յաղագս Աստուածաբանի. զիրք ժդ. ա.) "Նազումք ՚ի հաւատացելոց զգիտութիւնս զայս ոչ ունին, ձախացեալք հաւատովք. զի այլ է գիտել և եթէ որ ինչ պարտ է առ ՚ի ստանալ զերանելի կեանսն՝ որ են կեանք յաւիտենականք, և այլ գիտել թէ զիարդ իցէ սուաւ ապառաղինել հաւատացելոց ընդդէմ անհաւատից,,։

Եւ քանզի չէմարտութիւնք աստուածաբանականք հաստատեալ են ՚ի վերայ աստուածային յայտնութեան, պարտ է աստուածաբանին վկայութեամբք նորին յառաջ բերել զչէմարտութիւն։ Ուստի ասի թէ հաւատացելոյ ոչ է պարտ զարտուղել ՚ի վարդապետութենէ հաւատոյ ՚ի չառեալ զաստուածային բնութենէ, զբարեչութենէ և զտեսչութենէ տիեզերաց, զմարդոյ և զհանդերձելոց նորա։ Ուստի հաստատութիւն իւրով կարծեցեալ յառաջադիմութեամբն, ոչ կամելով իւր այլ առաջնորդ՝ բայ ՚ի բանին լուսոյ, և մերժեալ ՚ի բայ զլոյս յայտնութեան՝ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ գայոյ

է յաչխարհ, մոլորութեանց ՚ի մոլորութիւնս զառաջա-
նի: Քանզի մարդկային աստուածայնով ևեթ յայտնու-
թեամբ Աստուած ոպիսի էն, չգիտէ զգաղտնիս
նորա, զվճիռս, զխորհուրդս և զկամս, բայց որչափ ինչ
Աստուած ՚ի ձեռն հրեշտակաց իւրոց կամեցաւ յայտ-
նել նմա: Ո՛չ Աստուծոյն ինքն միայն գիտէ իսկապէս,
իսկ մեք պիտակաբար և առեալ գիտութեամբ: Ա-
տանտիոս, Ա՛ղեքսանդրացի, Կղեմէս աղեքսանդրացի, Տեր-
տուղիանոս, Թէոփիլոս անտիոքացի և սուրբն Յուս-
տինոս հեառազօտեալ զտիս և զգիշեր ՚ի խնդիր ճշմ-
արտութեան, և ՚ի վերայ հասեալ տկարութեան
մարդկեղէն մտաց պատանելոյ զայն իւրովին, մանաւանդ ՚ի
տեսանել զմոլորութիւնս և զհակասութիւնս զայնմանէ
իմաստնագունիցն ՚ի նախնիս, ընկալան զբրիստոնէա-
թիւն, ոչ ինչ այնու վերջացեալք յիմաստասիրութե-
նէ: Իսկ ասելամբ եղեն զի ոչ անարժան ինչ էր Աստու-
ծոյ բարբառել առ մարդ և ոչ մարդոյ անարժան խո-
նարհել զմիտս իւր ՚ի հաւատս աստուածեղէն պատգա-
մաց: Քանզի հաւատալ խիղք, յետ միանգամ գիտելոյ
հաւաստեօք զի Աստուծոյ է յայտնեալ զայն, ոչ ևս
է հրաժարել ՚ի բանականութենէ. այլ որպէս կոյր ՚ի
ծնէ զի հաւատայ վկայելոյ այլոց զլուսոյ: Որպէս և ոչ
հրաժարէ օք յիւրոց կամաց յառնել զկամս Աստուծոյ,
և ՚ի կատարել զհրամանս վեհագունից և գօրէնս Թա-
գաւորաց: "Ի խնդիրս իմաստասիրութեան, ասէ Ֆիլոն-
լան, այն ինչ պատահէ ինձ ձշմարտութիւն ինչ հաւա-
տոյ հակառակ իրիք ՚ի կարծեաց իմաստասիրութեան՝ որ
Թուի ինձ հաւանելի, զկայ առնում. և առանց ընդ բանս
ածելոյ՝ ընտրեմ զաստուածայինն գեր ՚ի վերոյ քան
զլմն իմացութիւն. և զաղօտ լոյս մտաց իմոց չկարեմ
այլ ազգ ՚ի կիր արկանել յօգուտ, բայց ՚ի հաւատս բա-
նից նորա զայն նուիրելով: Ա՛յսու օրինակաւ անլուր
եղեալ ինձ, լսեմ աստուածայնոց պատգամաց՝ որ ՚ի
ձեռն եկեղեցւոյ ինձ հասեալ, և մերժեմ որ ինչ նայն
ինձ մերժել ուսուցանէ: Այսպէս երկրաչափիք ամենեքեան
միաբան ասեն ՚ի տիւրի ումեք մտացւոյ ձշմարտութիւն
ինչ երկրաչափական՝ մտաց նորա անըմբռնելի, հաւատս
իմաստութեամբ ընծայեր նա վկայութեան նոցա. լաւ
համարեր նա յայնժամ զտգետ միտս իւր ներքոյ արկա-

նել վեհապոյն և նեղհոգն այնքանեաց գիանոցն մտաց. ոչչափ ևս առաւել պարտ էր ինձ զծանծաղ միտս իմ նեղբոյ արկանել աստուածայնոյ անհոգն մտացն. անհոգն զայն գաւանելով, հաւատամ գեր՝ի վերոյ քան զմիտս իմ ելանել հասանել նովաւ յանհոգնս։ Կ՚յայտ պէս՝ի հաւատոյս միամտեմ, ոչ այլ ինչ խնդրեալ ապացոյց բաց՝ի վկայութենէ եկեղեցւոյ՝ որ զաստուածայինն յայտնութիւն ինձ առաջի առնէ ,,. (Աստղիկ. Ղ. յղ. Կրծնէց)։

Վակայն և ոչ մերժէ աստուածաբանն զմտաց օգնականութիւն, այլ համարի զայն անհրաժեշտ կարևոր, և նովաւ հետազօտէ որ ինչ՝ի հիմունս՝ և՝ի հաստատութիւն հաւատոց հային։ Ամացականիս զօրութեամբք, զգայութեանցս նպաստիւք և վկայութեամբ այլոց՝ի վերայ հասանելիք արդեանց իրաց՝ յորս աստուածայինքն հաստատին յայտնութիւնք, ցուցանէմք զհաւատարմութիւն սուրբ գրոց և զաւանդութեանց՝ յորոց կէսք՝ի Վրիստոս, և կէսք մինչև՝ի սկիզբն աշխարհի՝ի վեր ելանեն։ Այլ՝ի հասանել միանգամ մտօք յաստուածային անդր յայտնութիւն, բանն ինքնին՝ եթէ չկայ տիրացեալ՝ի յանդուգն ամբարտաւանութենէ՝ կարծել առաւել ինչ քան զԱստուած գիտելոյ, զկայ առնու և մտանէ ընդ լծոյ հաւատոյ, գերելով զմիտս՝ի հնազանդութիւն պատգամաց նորա՝ որ նոյն ինքն է Ճշմարտութիւն, Թէպէտ և անհասանելիք իցեն իւր որ ինչ՝ի նմանէ ասացեալք։

Իբր ոչ եթէ երկբայի մարդ նախ քան զհաւատալ, և ոչ թէ տարակոյս կանխէ քան զհաւատս՝ի միտս քրիստոնէի. զի յուղղափառ հաւատս հաւատիք կըցոլոզք են Ճշմարտութեան, որպէս զի յուսանել անդ որ ինչ պարտիմքն հաւատալ՝ ուսանիմք որ ինչ հիմունք հաւատոցս են։ Այս քանզի ապացոյցք աստուածայինն յայտնութեան հասանելի են ամենայն մտաց, զոյգ ընդ վարդապետութեան Ճշմարտութեանց ըմբռնել զայնոսիկ ամենայն որ՝ առանց ընդ բանս ածելոյ՝ի խնդիր այլոց հաւատարեաց։ Աստուածայինն յայտնութիւն և հաւատիք նորա համանգամայն յանդիման լինին մտաց առանց կանխիկ տարակուսանաց. վասն զի հաստատին յարդիւնս իրաց և՝ի վկայութիւնս դիւրահաս մտաց,

որով պատճառք խելամտութեան կանխեն կամ ընկերեն միշտ գիտութեան, և նովին իսկ օրինաւոր առնեն իսկ և իսկ ընդունել զհաւատոյս, որպէս և զայլ ամենայն սոցին սակի ճշմարտութիւնս։ Համառօտիւ ասել՝ առ ընդունելոյ զքրիստոնէութիւն ոչ է հարկ անցանել ընդ երկաթս, որպէս և ոչ ի գիտութիւն առաածից և պատմական իրաց և ամենայն իսկ ճշմարտութեանց, զորս ընդունի ոք վկայութեամբ այնպիսւոյ՝ զորմէ չիցէ օրէն երկուանալ։

Իսկ ի յայտնելոց ճշմարտութեանց, իբր յաներկուանալի առաածից, ձեռնարկութեամբ յառաջ ածէ աստուածաբանն հետևանս առաւել կամ նուազ ըստ տոյժս, առաւել կամ նուազ հաւանականս, ըստ առաւել կամ նուազ կցորդութեանն ընդ յայտնեալ ճշմարտութիւնն, և ըստ առաւել կամ նուազ համաձայնութեան ընդ հաւատս և ընդ վարդապետութիւն եկեղեցւոյ։ Այն իսկ ձեռնարկութիւնք աստուածաբանականք՝ որ մասունք են հաւատոյ, և եկեղեցի սուրբ առաջի գնէ մեզ զայնս որպէս աստուածայինս յայտնութիւնս, զի վճիռք իւր հիմնեալ են միշտ ի սուրբ գիրս և յաւանդութիւնս։

Զատի յառաջ գան երեքին գլխաւոր տեղիք աստուածաբանականք, այս ինքն աղբերք՝ յորոց աստուածաբանութիւն առնու հաւատիս, առ ի հաստատել զճշմարտութիւնս հաւատոյ և զբարոյականին. և են Սուրբ գիրք, աստուածային Աւանդութիւն, և Ս. Հիւռք եկեղեցւոյ։

Առաջին աղբիւր՝ Սուրբ գիրք, որ է բան Աստուծոյ դրեալ ի ձեռն աստուածազդեցիկ մարդկան։

Երկրորդ աղբիւր՝ Աւանդութիւն աստուածային, այս ինքն բան Աստուծոյ աւանդեալ բերան ի բերանոյ, և պահեալ ի գիրս նախնեաց, ի հանդանակս, յեկեղեցական պաշտամունս, և ի հաստատուն և յընդհանրական սովորութիւնս ուղղափառ եկեղեցւոյ։

Երրորդ աղբիւր՝ Ս. Հիւռք եկեղեցւոյ, ընդ որովք է իմանալ և զսահմանադրութիւնս ընդհանուր և մանաւանդ ժողովոց, և զվճիռս գահին Հռովմայ՝ որ է մայր եկեղեցեաց։ Ասն որոյ կարևոր է աստուածաբանին պարապել ի սուրբ գիրս, ի մատեանս հարց եկեղեցւոյ,

և ՚ի սահմանադրութիւնս ժողովոյ. և պիտել զեկե-
ղեցական պատմութիւն, որ յաջորդէ զհետ սրբազան
պատմութեան հին և նոր կտակարանաց. վասն զի ՚ի
սմա բովանդակին վարդապետութիւնք, վճիռք և սո-
վորութիւնք եկեղեցւոյ: Գիտեն աստուածաբանին և
բնական գիտութիւնք, և արտաքին պատմութիւն ըստ
կցորդութեանն ընդ կրօնականին, և իմաստասիրու-
թիւն. բայց այսոքիկ ոչ են իսկապէս տեղիք աստուածա-
բանականք, այլ օգնականք նոցին և պատսպարանք ընդ-
դէմ հակառակորդաց. ուղիք յաղբերս անդր հասանե-
լոյ, և ոչ աղբերք՝ յորոց մարթ իցէ առնուլ զուղղափառ
վարդապետութիւն:

Վասն որոյ յաւելում դարձեալ, զի որովհետև հիմն
աստուածաբանութեան է յայտնութիւն աստուա-
ծային, և աստուածաբանութիւն յածի զյայտնեալ
ձշմարտութեամբք, ապա բուն աղբերք նորա են սուրբ
գիրք, աւանդութիւն, և վարդապետութիւն եկեղե-
ցւոյ՝ որ աւանդապահն է և թարգման սուրբ գրոց և
աստուածային աւանդութեանց: Ապա ուրեմն մինչև
զմնասանց հաւատոյ բուռն հարեալ, ըստ կարգի է մեզ
ձառել նախ զսուրբ գրոց և զաւանդութենէ. երկրորդ
զկրօնից, երրորդ զաստուածայնութենէ քրիստոսական
կրօնից, և չորրորդ զեկեղեցւոյ: Այս ապա ըստ կարգի
զհաւատոյ, զԱստուծոյ, զհորհրդոյ ամենասուրբ Եր-
րորդութեան, զԱրդեղութենէ և զարդասեաց նորա:

ՃԱՌ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԵԻ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

Կրկնակի մարթ է նկատել զբանս Աստուծոյ. մի՝ զրեալ առաքեալն ազդեցութեամբ, և միւս ևս՝ բերան ի բերանոյ աւանդեալ և հասեալ առ մեզ անպիղ։ Աջինն կոչի սուրբ գիրք, երկրորդն աւանդութիւն. և յերկոսին յայտնի բովանդակին պատգամք աստուածայինք, յորոց ուսանիմք զՀամարտութիւնս կրօնից։

ԳԼՈՒԽ Ա

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Սուրբ գիրք՝ որ կոչին և Աստուածաշունչ գիրք կամ տառք, աստուածեղէն պատգամք, կամ Կտակարանք, սահմանին Հան Աստուծոյ գրեալ ի սրբոցն գրչէ ազդեցութեամբ Հոգւոյն սրբոյ, ևեթ այնպիսի ընկալեալ յեկեղեցւոյ։ Հան Աստուծոյ բովանդակ և զանգիր աւանդութիւն, որպէս առաքեալն ասէ. (Ա Թիմ. Գ. 16.) «Հաղորդ մնասցիք և բազում օրինակօք կանխաւ խոստեցաւ Աստուած ընդ Հարս մեր մարգարէիւք. ի վախճան աւուրցս այսոցիկ խոստեցաւ ընդ մեզ որդւովն»։ Ա ասն որոյ յաւելումք՝ քան Աստուծոյ գրեալ, առ ի զանազանել յանգիր աւանդութենէն զսուրբ գիրս։ Յաւելումք դարձեալ ի սրբոցն գրչէ, առ ի յայտ առնել զի սուրբ գիրք գրեցան ի ձեռն մարդկան ընտրելոց յԱստուծոյ, և ոչ որպէս տախտակքն կտակարանաց գրեալ մատամբն Աստուծոյ։ Իսկ սրբոցն գրչեան կոչե-

լոմ որոշեմք զնոսա յայլոց, որ Թէպէտ սուրբք իցեն և աստուածային բանս աւանդիցեն, այլ գրուածք նոցա ոչ են սուրբ գիրք: Յաւելումք գարձեալ պղտեցուածոյ Ֆոփոյն սղբոյ, որով գրուածն այն լինի Հարազատ բան Աստուծոյ, և սմին իրի կոչի աստուածաշունչ. (ք. Տիմ. գ. 16.) "Ամենայն գիրք աստուածաշունչք օգտակարք՝ ի վարդապետութիւն են,,: (ք. Պետր. ժգ. 3.) "Նթէ զիտէք ինչ ինդրեք զԱբիատոսի, որ ինձաս ընդ ձեզ խօսի,,: (ք. Պետր. ա. 21.) "Ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբեք, այլ ի Հոգւոյն սրբոյ կրեալ՝ խօսեցան մարդիկ,,: Յաւելումք ի վերջ եթէ այնպէս ընկալեալ չեկեղեցւոյ. զի եկեղեցւոյ է ցուցանել մեզ զսուրբ գիրս՝ ընդունելի որպէս բան Աստուծոյ: Որով՝ի բաց մերժին ոչ միայն սըտայօդ գրուածք՝ յանուն սրբազան գրչաց աւանդեալք, այլ և անյայտն՝ որ հելլէն ձայնիւ ապոկրիֆք յորջորջին. զի Թէ և կայցեն՝ի նոսա ինչ ինչ Հարազատ գրուածք սրբազան մատենագրաց, սակայն եկեղեցի ոչ ընկալաւ զայնոսիկ որպէս սուրբ գիրս, և ոչ իբր այնպիսիս ետ մեզ:

Աւդ նախնի Հայոց առհասարակ քսան և երկու գիրս ձանաչէն հին կտակարանաց յայանիս, և իբր արտաքոյ ամենայն երկբայութեան ընդունելիս. նոյնպէս և Յովսեպոս Համարի, և նոյնչափ ցարդ իսկ՝ի ժողովարանս Հրէից են ընդունելի: Այլ այս քսան և երկու Թիւ՝ ըստ ալփաբետոյ եբրայեցւոց սահմանեալ Թէրևս Հնդրէ, որ գրիչն էր օրինաց տեառն, գիրս իբր քառասուն լինքն բովանդակէ. զի՝ի մի համար գասին երկոտասան մարգարէիցն փոքրիկանց գիրք, և այլ և այլ գիրք Նահաւոդայ և Աննաւորդայ և այլն:

Յովսեպոս յերիս բաժանէ զաստուածային գիրս. յօրէնս՝ որ են հինգ գիրք Մովսիսի, ՚ի մարգարէս՝ որ ընդ պատմականս՝ի միասին Համարին երեքտասան, և յօրհնութիւնս այսինքն յոտանաւոր գիրս՝ զորս Համարի չորս. զի Սողոմոնի ընդ Նդրա երգոց՝ի մի գասեալ, Աղաղնոք, Առակք և Յոբ: Այսմ գասակարգութեան՝ի ձահ պատահէ տերունական բան. (Ղ Կ. իդ. 44.) "Պարտ է ընուլ ամենայն գրելոցն յօրէնս Մովսիսի և՝ի մարգարէս և՝ի սաղմոսս վասն իմ,,:

Յերկիս կարգս բաժանել և առնլքն Յերանելոյն զհինն Կտակարանս. ՚ի հինգ գիրսն Մովսիսի, զորս և ինքն օրէնս անուանէ. յոլով մարգարէս, այսինքն Յեսու, Դատաւորք Հանդերձ Հռութայ, Սամուէլ այսինքն Ա և Բ Թագաւորք, Թագաւորք այսինքն Գ և Դ, Ես սայի, Յերեմիա, Եզեկիէլ, և Յերկոտասան մարգարէք. և յինն սրբագիրս՝ որ են Յոբ, Սաղմոս, Առակք, Սաղմոսող, Յերգերգոց, Դանիէլ, Մնացորդք Ա և Բ, Եզր և Նեեմի, և Եսթեր: Եւ յաւելու Յերոնիմոս. "Ըն որք և զՀռութ և զՄողբս ընդ սրբագիրս դասեն, և ըստ այմ լինին հին Կտակարանացդ գիրք քսանևչորք.,: Իսկ Եզր առաջին՝ ընդ երկրորդին և ընդ երրորդին՝ յարևելեան Յարց ՚ի նախականոնս համարեալ՝ առ լատինացիս և ոչ ընդ երկրորդականոնն է:

Նպիփան ՚ի քառեակ հնգամատեանս բաժանէ զհինն կտակարանս. առաջին՝ օրինականքն գիրք Մովսիսի. երկրորդ՝ հնգէքին ստիքերոնք այսինքն ոտանաւոր գիրք, Յոբ, Սաղմոս, Առակք, Սողոմոնի, և Յերգերգոց. երրորդ՝ սրբագիրք, այսինքն Յեսու, Դատաւորք և Հռութ, և Ա և Բ Թագաւորք, Գ և Դ Թագաւորք, Ա և Բ Մնացորդք. իսկ չորրորդ հնգամատեան՝ մարգարէականք, այսինքն փոքր մարգարէք, Նսայի, Յերեմիա հանդերձ Ողբովք և Նարուքաս, Եզեկիէլ, և Դանիէլ: Յորս յաւելեալ և զՆզր և զՆսթեր, Թուէ միահամուռ գիրս քսան և երկու:

Ակիւրեղ երուսաղեմացի և Մելիտոն աստուածաբան Յերկս կարգս բաժանեն և նոքա զհինն Կտակարանս. Պատմականք երկոտասան, այսինքն հինգ գիրքն Մովսիսի, Յեսու, Դատաւորք, Հռութ, Ա և Բ Թագաւորք, Գ և Դ Թագաւորք, Մնացորդք, և Նզրաս: Ստիքերոնք հինգ, այսինքն Յոբ, Դաւիթ, Առակք, Սողոմոնի, Յերգերգոց: Մարգարէականք, այսինքն փոքր մարգարէք, Նսայի, Յերեմիա Ողբովք հանդերձ և Նարուքաս, Եզեկիէլ, և Դանիէլ:

Ի չորեսին դասակարգութիւնս յայսոսիկ բովանդակին և քանք այլոց Յարց առհասարակ. որովք ՚ի միտ առնուլ է՝ զի քսան և երկու գրովք իմանան զնոյն զայն գիրս, զորս մեք Թուեմք իբր քառասուն և որք կոչին

ՙԱլեքսանդրացւոյ։ Բայց այսմ ի խմանալ և զասել Աստե-
ծացւոյն զԹարգմանչացն մերոց ձեռն արկանելոյ Թարգ-
մանել զբան և երկու յայտնիս։ Իսկ որ արտաքոյ այ-
սոցիկ գիրք՝ երկրորդականաց անուանին կամ վերծանելիս.
բայց զայսցանէ ոչ միաբանին Հարք, ոմանց զայս և
ոմանց զայն գիրս ընդ երկրորդականաս և ընդ անյայտս
դասեալ։ Ո՛ան որոյ առաջաբանք՝ ի բովանդակու-
Թենէ բանից անտի Հարց և Վարդապետաց տահմանեն եր-
կրորդականաս զՍոբէմ, զՅուդիթ, զԵսթեր ինչ Այս-
Թերայ այսինքն՝ ի 4 Հատորոյ Թ գլխոյն ց24 Թ՝ գլխոյն,
զԱտարօք, զՄաքաբայեցիս, զՈիրաք, զաղօթս Ազա-
րիայ, զօրհնուԹիւն երից մանկանց՝ ի Դանիէլէ, զպատ-
մուԹիւն Շ ուշանայ և զԱեղայն և զվիշապին, զԱ և զԲ
Առակաբայեցիս։ Եւ պատճառք երկրորդականն Հա-
մարելոյ գրոցս, զի Աղբատ վերջին՝ ի մարգարէս և հր-
մուտ աստուածային օրինաց՝ ազդեցուԹեամբ սրբոյ
Հոգւոյն խմբագրեաց զաստուածաշունչ գիրս յետ բազ-
մամեայ գերուԹեանն Բաբելից և կործանելոյ տաղան-
նեան տաճարին. և որ ինչ յետ այնորիկ՝ ի վեր երևե-
ցան, արտաքոյ ՃՈացին նախականաց գրոցն։ Իբր ոչ ե-
Թէ այսու ընդհատ ինչ լեալ ընդունելիք, զի յամե-
նայն ժամանակի՝ ի Քրիստոսէ և այսր ընդ առաջ գիրս
Հաւատացեալ և Համարին ցարդ առ ուղղափառս, մանա-
ւանդ յետ վՀաց տրիդենտեան ժողովոյն։

Իսկ՝ ի նորոց կտակարանաց նախականքն՝ զորոց չե-
զև երբեք երկբայուԹիւն յեկեղեցիս ուղղափառաց,
չորք Աւետարանք, Գործք առաքելոց, Թուղթք Պօղո-
սի բաց յԱբրայեցւոցն, ա՛ Պետրոսի, և ա՛ Յովհաննու։
Երկրորդականքն՝ զորոց առ ոմանս՝ ի Հարց և յա-
ռանձին եկեղեցեաց եղև երկբայուԹիւն, վերջին գլուխ
Մարկոսի սկսեալ՝ ի բանէն՝ ՙՙՅարուցեալ Յիսուս ա-
ռաւօտուն,,. ՊատմուԹիւն արեան քրտանցն Քրիս-
տոսի՝ ի պարտիզին. (Ղ ԺԲ. ԽԲ։). ՊատմուԹիւն շնա-
ցեալոյ կնոջն. (Յո. Ը։). Ղուկաս Աւետարանչի Յա-
կոբեայ առաքելոյն. Պետրոսի Ա Թուղթն. Յովհան-
նու Բ և Գ Թուղթն. Յուդայի Առաքելոյն, և Պօղոսի
առ Աբրայեցիս. այլ զկնոջէ զայսմանէ երկբայուԹիւն
ոչ այնչափ վասն կանոնականուԹեանն էր, որչափ վասն
գրողին՝ Թէ արդեօք՝ ի Պօղոսէ՞ Թէ յայլմէ ումեքէ

յառաքելոց կամ յաշակերտաց գրեալ, ոմանց զոյն Ոսկասու ընծայելով, այլոց Նառնաբայ, և ոմանց Կղեմայ։ Ընաւել եղև երկբայութիւն զգրոց Յայտնութեան, մինչև Ժողովոյն Լաւոդիկեայ չդնել զոյն ի կարգի նոր կտակարանաց, և ըստ վկայելոց Աղիքոսի աստուածաբանին և սրբոյն Հերոնիմոսի՝ բազումք ի հնոց Հարց չհամարէին զոյն ընդունելի. ոպէս և նախնի թարգմանիչք մեր ոչ թարգմանեցին զոյն, այլ յետոյ թարգմանեցաւ։ Նոյպ սուրբն Ընթանաս ընդունելի համարի զոյն յայտնապէս ընդ սուրբ գիրս ի ոճական թղթին, և յետոյս բովանդակութեան սուրբ գրոց յաւելու. "Ի վերայ սոցա է և Յայտնութիւն Յովհաննու աստուածաբանին, ընկալեալ իբրև նորայն, և հաւատարիմ դատեալ ի նախնի սրբոց և ի հոգեկիր Հարանց ,,։

Ի սոյն կարգ դասի ի սակաւուց ոմանց աստուածաբանից և բան Յովհաննու առաքելոյն. (Ը. Ղեղ. Ե. 7։) "Երեք են որ վկայեն յերկինս, Հայր, Բան, և Հոգին սուրբ, և երեքին մի են ,,. որ և ի Լատին օրինակս ոմանս պակասէ, իսկ յարևելեայս առ հասարակ։ Նոյնպէս և Պաւղի յաւելուածն (Չ. 13.) "Օ՛ի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն ,,. և (Իբ. 18.) "Որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ ,,. որ ի բազմագոյն օրինակս այլոց թարգմանութեանց պակասեն։

Ընդ սոքիկ կարևոր ի գիտութիւն աստուածաբանին՝ առ ի յաղթահարել զնորազանգս ի նախականոնաց անտի գրոց, զի նոքա խոյս տան յայլոցն, յայտնագոյնս ի նոսա գտանելով յանդիմանութիւնս մոլորութեանց իւրեանց։ Ընդ սոսու օրինակաւ և փրկիչն մեր պատասխանեցոյց զսադուկեցիս ի մոլեխոսական գրոց՝ որ միայն ընդունելի էին նոցա, բայց ի վերայ ածեալ զկշտամբութիւնն. "Պոլորեալք ոչ գիտէք զգիրս ,,. (Պօղ. Իբ. 29։) Պ ան որոյ և զերկրորդականոնացս նորոց կտակարանաց յաւելումբ որ ինչ զհնոց կտակարանացն ասացաք, զի ոչ ինչ ընդհատ ընդունելի են յուղղափառ եկեղեցւոջ։ Ուանզի ժողովն տրիդենտեան յետ քննելոյ զամենայն բանս սրբոց Հարց յաղագս երկաքանչիւր կարգի գրոցս, և յետ կշռադատելոյ զայնս ընդ նախնի

Կանոնս աւանդեալս ՚ի կաթողիկէ եկեղեցւոջ, ՚ի թիւ արկեալ եթէ զնախականսն և եթէ զերկրորդականսն՝ զորս ՚ի վեր անդր յիշատակեցաք, և զորոց զնացուք զցուցակ ՚ի ստորև առ ՚ի դիւրութիւն, սահմանեաց՝ զի "Ոչ ոք զգիրս զայսոսիկ ոչ ընդունիցի իբրև սուրբս և կանոնականս, նզովեալ լիցի,,։

Վասնզի Կանոնն սահմանեալ ՚ի տրիգենտեան ժողովոյ, բայց յայլոց հաստատութեանց՝ զորս ՚ի վեր անդր յիշատակեցաք, յենու ՚ի սկիզբն կաթողիկէ եկեղեցւոյ։ Զի Կանոնն այն յար և նման է Կանոնին, զոր Նչգինեա չորրորդ յամին 1439 սահմանեաց. և այն նման է այնմ՝ զոր Գելասիոս ետ. և Գելասեայն հաւասար է Կանոնին, զոր Ինոսվկենտիոս առաջին ետ, զոր և սուրբն Գոտաւինոս յամին 400, և երրորդ ժողովն Կարթագինեայ յամին 397, և ժողովն Իպպոնեան յամին 393, յար և նման աւանդեն։

Զայս Կանոնն տրիգենտեան գտանի նոյն ընդ այնմ՝ որ ՚ի չորրորդ դարու ՚ի Հռովմէական և յափրիկեան եկեղեցւոջ պատուէր։ Նա քանզի ափրիկեան եկեղեցի, որպէս յանժխտելի աւանդից յայտ է, յեկեղեցւոյն Հռովմայ ընդ հաւատոյն ընկալաւ զայն ՚ի վախճան առաջնոյ դարուն, ապա յայտ է զի նոյն ՚ի տրիգենտեան ժողովոյ սահմանեալ Կանոնքն ՚ի Հռովմէական եկեղեցւոջ յառաջնումն անդ դարու։ Նա Զղեմս Հռովմայեցի ժամանակակից առաքելոյ յառաջնումն Թղթին առ կորնթացիս յիշատակէ անխտիր զնախականսն և զերկրորդականսն գիրս հին և նոր կտակարանացն զրեթէ առհասարակ։ Ոնոյն հաստատեն և զուցակք նոցին, զորս դարուց ՚ի դարս աւանդեն ժողովք և մատենագիրք եկեղեցականք։

Յուշակ Կաւնուական գրոց

Վասն և երկու նախադասութիւնք ի հին կտակարանէ.

Ծննդոց.
Ելից.
Ղեւտացւոց.
Թուոց.
Երկրորդ օրինաց.
Յեսուայ.
Դատաւորաց և Հռութայ.
Ա և Գ Եզրի, կամ Բ. Եզր և Նեհեմի.
Ա և Բ Թագաւորութեանց.
Գ և Դ Թագաւորութեանց.
Ա և Բ Մնացորդաց.
Եսթերայ.
Յոբայ.
Սաղմոսք.
Առակաց.
Ժողովողի.
Երգերգոց.
Եսայեայ.
Երեմիայ մարգարէութիւնք և Ողբք.
Եզեկիէլի.
Դանիէլի.
Երկոտասան մարգարէից:

Վասն նախադասութիւնք ի նոր կտակարանէ.

Աւետարանք Մատթէոսի.
Մարկոսի.
Ղուկասու.
Յովհաննու.
Գործք առաքելոց.
Պօղոսի առ Հռովմայեցիս.
առ Կորնթացիս Ա.
առ Կորնթացիս Բ.
առ Գաղատացիս.
առ Եփեսացիս.
Պօղոսի առ Փիլիպեցիս.
առ Կողոսացիս.
առ Թեսաղոնիկեցիս Ա.
առ Թեսաղոնիկեցիս Բ.
առ Տիմոթէոս Ա.
առ Տիմոթէոս Բ.
առ Տիտոս.
առ Փիլիմոն.
Պետրոսի Կաթողիկէ Ա.
Յովհաննու Կաթողիկէ Ա:

Եկերդոցականք ի հին կտակարանէ.

Տավթի.
Յուդիթ.
Մասն ինչ Եսթերայ.
Ա և Բ Մակաբայեցիք.
Իմաստութիւն.
Սիրաք.
Բարուք.
Ի Դանիէլէ Աղօթք Ազարիայ.
Օրհնութիւն երից մանկանց.
Պատմութիւն Շուշանայ.
Իլք Բէլայ և վիշապին:

Եկերդոցականք ի նոր կտակարանէ.

Պօղոսի առ Եբրայեցիս.
Յակոբայ Կաթողիկէ.
Պետրոսի Կաթողիկէ Բ.
Յովհաննու Կաթողիկէ Բ և Գ.
Յուդայի Կաթողիկէ.
Յայտնութիւն:

Ընկանոնք կամ անյայտք.

Պօղոսի առ Կորնթացիս Ա.
Կորնթացւոց առ Պօղոս.
Բառնաբայ Կաթողիկէայ.
Սրբոյն Հերմէայ գիրք մակապրեալ Հովիս:
Սրբոյն Կղեմայ Հռովմայ հայրապետի գործք:
Կանոնք և վարդապետութիւնք առաքելոց:
Ննջումն Յովհաննու՝ էր ընդ եղբարան:
Թուղթ Երեմիայ:

Իսկ որ ինչ արտաքոյ սոցին աւետարանք յիշատակեալք յանուն այլ և այլ առաքելոյ, գործք և ուղևորութիւնք և նահատակութիւնք առաքելոց, գիրք մանկութեան Յիսուսի, յաղագս Մարիամու և փոխմանն նորա, այլովքն հանդերձ, անընդունելիք են և կամ խոտելիք. որպէս և Սարգիս վարդապետն մեր գրէ. "Ընդհենևին խոտելիք են, զի ի հոգւոյն մոլորութենէ արտադրեցան պրակասաւադայքն (այսինքն Կրաքսիս աւդօն՝) զոր ծոմ Մարիամու անուանեն, և աւետարանն՝ զոր Թովմայի ասեն, և գիրք տղայութեան Յիսուսի, և այլ սոյնպիսիքը, որք ի տիպ ձշմարտութեան կամեցան ի նեղըս մտանել, որ ոչ ընկալաւ եկեղեցի Աստուծոյ զորոմն չարութեան և զգաղձն միաստակար. վասն զի ոչ եաես ի նոսա տիպ ինչ ստուգութեան, այլ ամենևին լի ստութեամբ,,: (յառաջաբ. ը. պէտր):

ԱՌ ԱՐԿՈՒԹԻՆՔ

Ա. Հռովմէական եկեղեցւոյ աթոռ իշխանութիւն և ազանդութիւն ոչ բաւէ առ ի սահմանել զդիրս կանոնականս. զի և ոչ միօրինակ յամենայն ժամանակի կալաւ նա զցանկ կանոնական գրոց, զի Կանոն տրիդենտեան ժողովոյն ոչ միաբանէ ընդ Կանոնս Աւգինեայ Դ, Պելասիոսի, Ինոսէնտեայ, և ընդ ափրիկեան Կանոնի, որ անստոյգ իսկ են:

Գ. Աթէ հռովմէական եկեղեցի ոչ հանուրց եկեղեցեաց էր մայր և վարդապետ, ոչ բաւէր իշխանութիւն նորա և ազանդութիւն. այլ զի ի նմա, որպէս Տերտուղիանոս ասէ, (ի Նախատ. գլ. լշ.) "Պետրոս և Պօղոս և Յովհաննէս զամենայն վարդապետութիւն

ընդ արեան իւրեանց հեղին, և նա զօրէնս և զմաղ-
գարէս ընդ աւետարանական և առաքելական գիրս յե-
ռեալ՝ անտի լսիլ զՀաւատս ,,, և առ նա ամենայն ե-
կեղեցիք յերկեսից իւրեանց զիմեքէ՝ ի գրոց դիմիլն,
բաւել բաւե իշխանութիւն նորա և աւանդութիւն:
Նա պարագայք ժամանակաց յաւելին հաստատել ընդ-
հանուր զկանոնն՝ ի նմանել սահմանեալ: Նա ոչ իսկ
ընդունելի է առարկեալք զանազանութիւն կանոնաց,
զի՝ ի քննութենէ բանիբուն արանց գտանին քաջ ընդ
իրեարս միաբան, և ամենայն գժուարութիւն բար-
ձեալ՝ ի բաց:

Բ. — Ե. Հրեայք զերկրորդականոն գիրս չհամարին
ընդ կանոնականս. և յաւուրս Քրիստոսի չհամարէին
այնոքիկ ընդ սուրբ գիրս, քանզի Քրիստոս բովանդա-
կէ զայնոսիկ ‘‘յօրէնս՝ ի մարգարէս և՝ ի սաղմոս ,,.
(Ղկ. իդ:) Նա ոչ առաքեալք՝ ի գիրս իւրեանց ա-
ծէն յայնցանէ վկայութիւնս: Բ. Ալեքսեան, սարդի-
կեան և լաւոդիկեան ժողովք զկանոնական գիրս ևեթ
Հրէից ընդունելի սահմանեցին, և Հարք չորրորդի
դարուն կալան զնոյն առ՝ ի լաւոդիկեան ժողովոյ սահ-
մանեալ կանոն: Գ. Պաղեստինեան ափրիկեան ժողովք և
ինքն իսկ Ղեռոնիմոս զերկրորդականոնս ընդ կանոնա-
կանս համարեցան, այլ վրիպեցան այնու՝ զի յաղեք-
սանդրեան թարգմանութեան բովանդակէին և եր-
կրորդականունք. և ընթերցմանէ այնոցիկ յեկեղեցւոջ
առ՝ ի շինութիւն, տակաւ մեծարանք ընդ կանոնականս
զայնոսիկ գրեցին: Դ. Ոմանք յոլովք՝ ի Հարց եղին
զանազանութիւն ընդ կանոնական գիրս և ընդ եկեղեցա-
կանս. որպէս Հերոնիմոս զկանոն Հրէից կալաւ հաս-
տատուն, զոր և Ղեռոնիմոս և մեծն Աթիգոս յայտնա-
պէս ունին՝ ի Ձառեալն զգրոցն Մակաբայեցւոց:

Պ. — Ս. Ի ստոյգ աւանդից և՝ ի վկայութենէ Յով-
սեպոսի յայտ է, զի Հրեայք առ սուրբ գիրս ունէին և
զերկրորդականոնս, և վկայութիւնս իսկ յայնցանէ ա-
ծէին. այլ քանզի նախականոնք առաւել արգոյք էին
առ նոսա, վասն որոյ ըստ մեռոց նոցա և փրկիչն մեր յո-
բիներ զբանն. և որ հաստատէն ինչ, ոչ մերժէ զայլս:
Իսկ առաքեալք ածէն յայտնապէս վկայութիւնս յայն-
ցանէ կամ ակնարկեն՝ ի նոյնս բազում ուրեք. որպէս

'ի (Ղ Կ. ԻԲ. 19։ Ներմ. Ա. 20։ Եբր. ԺԱ. 34։ Յակ. Ա. 11)։ — ԺԲ. Այնպէս և մեղեաեան և սարդիկեան և Ասոզիկեան ժողովք, և զհետ նոցա Նարք ջորջոզի գալուն, յընդունել զԵրեքին Կանան՝ ոչ մերժեցին զերկրորդականանս. և պատճառք զայն ևեթ ընդունելոյ, զի չև ևս զայլոցն վճիռ ինչ վաւերական գոյր լեալ յեկեղեցւոյ։ — ԺԳ. Նայց ափրիկեան ժողովք և սուրբն Գոստինոս ըստ աւանդութեան հռովմէական եկեղեցւոյ, որ սուրբ և աստուածային զդիրն զայնոսիկ համարէր, առ կանոնական և զերկրորդականանն կալան։ Ոչ եթէ նոցա՝ վասն աղեքսանդրեան թարգմանութեան էր ընկալեալ զայնս, պարտ էր և զերջոզ Նակաբայեցին ընդունել որ և այն բովանդակի'ի թարգմանութեան անդ. այլ ոչ ընկալան զայն, բայց միայն զորս համարէին աստուածայինս։

— ԺԴ. Երդարև արարին Նարք զայդ խոիր զանազանութեան ընդ կանոնական և ընդ եկեղեցական գիրս. այլ ոչ ինչ ընդհատ'ի կանոնականացն մեծարէին և զեկեղեցականս, և ինքն իսկ Երոնիմոս ընդ այլս ածէ յայնցանէ վկայութիւնս որպէս'ի սուրբ գրոց։ Վասն որոյ զանազանութիւնդ այդ ընդ նախականոն և ընդ երկրորդականոն գիրս՝ զայն ևեթ յայտ առնէր, զի երկրորդականոնքն չև ևս ըստ օրինի սահմանեալ էին յեկեղեցւոյ ընդ կանոնականս։ Ըստ այսմ է խմանալ զԳոստինոսի և զմեծին Գրիգորի բանն յաղագս Նակաբայեցւոյն գրոց։

Գ. Հռովմէական եկեղեցի գեթ զՊօղոսի առ եբրայեցիս Թուղթն, ոչ ընդ կանոնականս համարէր, որպէս Կայիոս երէց վկայէ առ Գեսեբեայ, որում երաշխաւորէ Երոնիմոս։ Այնպէս և Յայտնութիւնն Յովհաննու, որպէս նոյն ինքն Երոնիմոս և սուրբն Գիոնեսիոս աղեքսանդրացի վկայեն, չէր ընդունելի առ անլեւեայս. և սակաւք ումանք'ի Նարց տրիդենտեան ժողովոյն, ոչ բաւականապէս հմուտք, սահմանեցին զայն ընդ կանոնական գիրս։

Գ. Կայիոս երէց և Երոնիմոս վկայեն յերկբայս արկեալ ումանց զդիրն առ եբրայեցիս Թուղթն, և ոչ եթէ հռովմէական եկեղեցւոյ երկուսայեալ ընդ կանոնականութիւն Թղթոյն։ Նռովանդակ խնդիրն զայնմա-

նէ էր, թէ արդեօք Պօղոսի գրեալ զայն կամ թէ այլոց ուրուք. զի ոչ երբէք հռովմէական եկեղեցի յերկբայս եղեւ՝ թէ չիցէ Թուղթն այն աստուածայինն։

Այն երկբայութիւն և առ արեւելեայս զգրոցն Յայտնութեան եղեւ, ոմանց՝ ի նոցանէ Յովհաննու ումեմն երիցու և ոչ աւետարանչին ընծայելով զայն՝ որպէս և զսրբոյն Դիոնիսեայ աղեքսանդրացւոյ վկայէ Եւսեբիոս։ Այլ այս երկբայութիւն մերժի՝ ի բաց՝ ի նորին իսկ աւետարանչին բանէ, զոր՝ ի սկիզբն գրոցն Յայտնութեան ասէ. "Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի... առ ծառայ իւր Յովհաննէս, որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ ,,. որով յայտնապէս ակնարկէ զաւետարան իւր։ Ոմանն որոյ սուրբն Յուստինոս, սուրբն Երանոս, Աղոգինէս, և հաստարակաց կարծիք չարոյ ոչ ևս նեղեն երկբայել զայնմանէ։

Իսկ զկանոնականութենէ նորա եթէ էր իսկ լեալ առ արեւելեայս՝ ի սկզբան անդ երկբայութիւն, այլ յետ ընդունելոյ զայն չարոյ կարծեցեալն ժողովոյն՝ ի վախճան չորրորդի դարուն, ընդունելի եղեւ այն և յարեւելս։ Ոմանց որոյ ոչ անհմուտք ոմանք՝ ի չարոյ տրիդենտեան ժողովոյն յաւելին զայն՝ ի կանոնս սուրբ գրոց, այլ ներհունք իմաստութեամբ։ Որ եթէ չէին իսկ այնպիսիք սակաւքն գումարեալք՝ ի սկզբան, այլ այն ամենայն վճիռք և սահմանք առաջնոյ գումարմանցն՝ ի վերջ կոյս ժողովոյն՝ ի համագումար ժողովն վերատին քննեալ հաստատեցան։ Վասնզի ժողովն այն ոչ ինչ սահմանեաց առանց քաջ քննելոյ և կշռադատելոյ և զբանս չարոյ արեւելեայց. որպէս զի եթէ քաջահմուտ վարդապետք և գիտնեայ փաստաբանք արեւելեայք՝ ի ժողովն անդ գտեալ էին, չկարէին այնպէս ջատագովել կալ իրաւանց և վարդապետութեան արեւելեայց, որպէս կացին նոցա աստուածաբանք արեւմտեայք։ Զի՝ ի միտ առնուլ զաստուածային իմաստութիւն այնր ժողովոյ, շատ է ընթեռնուլ զվաւելչինի սրբոյ հռովմէական եկեղեցւոյ կարգինսն, որ և ինքն՝ ի ժողովն անդ էր, և անդստին՝ ի սկզբանէ մինչև ցվախճան զանցս ժողովոյն և զիւօսակցութիւնս և զբերաբերեալ վճռաբանութիւնս զնուրաքանչիւր խնդրոց գրեաց մանրապատում։

Ա.Ս.Ս.Ր. ԱՐՁԱՆԱԳՐԱՏՈՒՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ
Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐՎԱՍՏ

ԳԼՈՒԽ Բ

ՅԱՂԱԳՍ ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Անհնար է, առանց զառաջանալոյ ի սկեպտիկեան ցնորս, յերկբայս արկանել զվաւերականութիւն սուրբ գրոց։ Որ, որ չկոչէ ցնորեալ, ստայօդս համարեսցի զՅոմերի և զՎիրգիլեայ քերթուածիս, զԵմմենիդեայ և զԱիկերոնի առեղծաբանութիւնս, զՊղատոնի և զԱրիստոտելի իմաստասիրութիւնս, զԳաղիանոսեղեայ և զԱերթողահօր մերոյ պատմութիւնս, և որ սոցին սակի մատենագրութիւնք նախնեաց։ Այլ զիաւրդ իսկ մարթ էցէ երկբայել զվաւերականութենէ իրիք ի գրոց՝ ուստի այլք ի մատենագրաց դարուց ի դարս ածեն վկայութիւնս անընդհատ յաջորդութեամբ, վկայելով այնմ անդատին ի ժամանակէ գրութեանն և այսր։ Այնէ չէին իսկ վկայքս այսոքիկ, սակայն շատ իսկ էր աւանդութիւն բերան ի բերանոյ հասեալ առ մեզ անընդհատ, առ ի չտարակուսելոյ՝ թէ այր ուրուք զայնոսիկ գրեալ էցէ։ Յայսմիսկ է վաւերականութիւն հինն և նորո Կտակարանաց, այսինքն զի Աշմարտիւ յայնցանէ են գրեալ՝ զորոց բերեն զանուանս, և զի չմարթի այնոցիկ իսկ՝ որոց չէցեն ծանօթ մատենագիրք՝ ստայօդս գոլ։ Յայմ Աշմարտութեան յաւելուն հզօր հաստատութիւն, որ ինչ ի սկզբանէ հետէ ընդդէմ վաւերականութեան սուրբ գրոց նիւթեալ դարանք յանհաւատից և յաղանդաւորաց, որ ոչ կարացին ստնանել ինչ նոցա։

Ոչ ոք կարէ ժխտել՝ զի եկաց Մովսէս օրէնսդիր Աստուծոյ. զի եթէ չէր նորա կացեալ, հարկ էր ասել և ոչ զազգն Աստուծոյ կացեալ յաշխարհի. քանզի պատմութիւն նոցա և կրօնք և ծէսք և օրէնք և արարողութիւնք՝ ցարդ ի նոցանէ ընդ ամենայն երկիր պաշտեալք՝ հաստատեալ են ի մեծարանս Մովսիսի, և վկայեն աւհասարակ կալոյ նորա օրէնսդիր, և կալոյ յառաջ քան զամն երեք հազար, զի անդատին և այսր

ազգն այն վարի նովին օրինօք և կարգօք ։ Այլ Թա՛զ զայն , զվկայութիւն հրէից Հաստատեն և հեթանոս մատենագիրք բազումք , և Յունաց և Լատինաց և Եգիպտացւոց ծանօթ էր նա և օրէնսդրութիւն նորա , և ոչ Կելտոս և Պորփիւր և Յուլիանոս՝ ոխերիմ թշնամիք քրիստոնէութեան՝ կարացին երբեք ժխտել զմովսիսական օրէնսդրութիւն ։

Այլ նոյն հաւաստիք՝ որ ցուցանեն զկաղ Մովսիսի , ցուցանեն և զվաւերականութիւն գրոց նորա . զի ազգ մի ողջոյն, զորոյ բովանդակեն գիրքն այն զպատմութիւն, զկրօնս և զօրէնս , վկայէ ՚ի Մովսիսէ գրեալ զայն ։ Այսու քահանայապետք և երիցունք և զևտացիք ուսանէին զպարտս պաշտաման իւրեանց և զանբաւ արարողութիւնս . աստի աւագանին և դատաւորք ուսանէին զօրէնս և զիրաւունս առ ՚ի դատել . սա զկարգս հարսանեաց , զժառանգութիւնս , զդաշինս , զպատիժ պատուհասի յանցանաց , և զամենայն պայմանս պատերազմի և խաղաղութեան սահմանեալ ։ Ամիկն իսկ ՚ի գրոց աստի զամենայն ինչ ունէր , զազգաբանութիւն իւր , զիրաւունս ժառանգութեան , և զամենայն պարտս իւր , և պարտ էր նմա հանապազ ՚ի ձեռին ունել զսա և ուսուցանել որդւոց յորդիս ։ Ի սմա Մովսէս զնոսին իսկ իսրայելացիս , առ որս գրէրն , վկայս կոչէ ականատեսս հարուածոյն Եգիպտոսի , անցիցն նոցա ցամաքաթև ընդ ծովն կարմիր , մանանայիսն տեղալոյ յերկնից , աստուածային օրինացն որոտընդոստ տուչութեան ՚ի Սինա լերինն , ջուրցն ՚ի վիմէ բղխելոց , Յորդանայ և Երիքովնի կենդանեացն անդրնդաստղ լինելոց , և այլ ամենայն հրաշիցն՝ զորս պատմէ ։ Ի սմա ազգն այն յանդիմանի որպէս ապերախտ և ապստամբ ՚ի տեառնէ և յաՀախ ՚ի նմանէ պատուհասեալ . աստ բազմաց ՚ի ցեղից և բոլոր ազգին պատմին նախատինք ։ Այլ գիրքն այսպիսի չմարթին երբեք գոլ խաբէական . և եթէ սըտայօղ էր , ընդունելութիւն սորին ՚ի բովանդակ ազգէն յոյժ առաւել հրաշալի լինէր քան որ ինչ ՚ի սմա պատմին հրաշք ։ Այս ընդունելութիւն ոչ վարկապարակ , այլ գիւիշատակս հրաշիցն որ ՚ի նմա անդատին և այսր պահելով սահմանադրութեամբ տօնից և պաշտամանց ։

Այն արդարև ՚ի գրոց հին Կտակարանաց , զորոց ոչ

է գիտել Հաւատեաւ զմատենագիրս . սակայն ՚ի վա
ւերականութիւն նոցին շատ է ցուցանել զի ՚ի ժամա
նակս անդր ՚ի վեր ելանեն՝ յորս Համարին գրեալ, և զ
՚ի ժամանակակից որերոյ են գրեալ, կամ ՚ի հաստ
տակաց գիւանաց և յարձանագրութեանց առեալ, և
զի գրոցք նոցին չկարելին երբեք պատրել զաղգն : Ընդ
այս ամենայն հաւաստիք ՚ի վերայ այլոց ևս գրոց հին
Կտակարանաց առհասարակ Ճշմարտին , և ոչ միայն
Դաւթի և Սողոմոնի և մարգարէիցն գիրք , այլ և այ
նոքիկ՝ որոց չեն անուանեալ մատենագիրք՝ գտանին վա
ւերականք : Օ՛ի որ ինչ զմովսիսականացն ասացաք
զնոյն և զսոցանէ է ասել . զի նոյն հաստատակաց և ան
յեղլի կարծիք բովանդակ ազգին վկայեն և աստ , և
նոյն իրաւացի բողոք ազգին ընդդէմ գրոցն այնոցիկ ամ
բաստանայր՝ եթէ չէին վաւերականք : Յաւել զի և նոյն
ինքն փրկիչն մեր և առաքեալք և Հարք եկեղեցւոյ
վկայութիւնս յայնցանէ ՚ի կիր առնուն , և քրիստո
նեայք առհասարակ ազգք զվկայութիւն Հրեից հաս
տատեն :

ԳԼՈՒԽ Գ.

ՑԱՂԱԳՍ ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Զկիք յաշխարհի մատեան՝ որոյ վաւերականութեան
գտանիցի վկայութիւն այնպիսի միաբան , ընդհանուր և
հաստատուն , որպիսի քրիստոնէիցն է զնորոց Կտակա
րանաց : Քրիստոնեայք առհասարակ սիրեալք ընդ
տիեզերս հաւատան ընկալեալ զայնս ՚ի հիմնադրաց կա
րեանց , և գտանին այնոքիկ ամենայն ուրեք , առ Հայս ,
առ Լատինս , առ Յոյնս , և առ ամենայն արևե
լեայս և արևմտեայս , Թարգմանեալ ՚ի բազում այնչափ
լեզուս . և ամենայն ուրեք ընդունին զայնս քրիստո
նեայք և ՚ի միտ առնուն և յարգեն : Ի յառնել խընդ
րոյ ինչ ՚ի հաւատոյս՝ դիմեն անդր , և պատգամք նո
ցին մեծարոյ են առ ամենեսեան : Ընդ այս հաւատք
ընդհանուր և անընդհատ , զորոյ սկիզբն ոչ է մարթ
գտանել առանց ՚ի վեր ելանելոյ մինչև անդր իսկ յա

ւորս առաքելոց, են Հաւատիք այնպիսի՝ զոր չէ մարթ յերկեսայս արկանել առանց՝ ի դէմս ածելոյ զրական և անժխտելի Հաւատիս։

Ա՛ռաջին սուրբ Հոգի, և առաջնոյ դարուց քրիստոնէութեան, ընկալան և պաշտպանեցին զայնս ընդդէմ աղանդաւորաց. վկայք յատենի բռնաւորաց առաքեալ չափ դաւանեցին զայնս. և սուրբն Յուստինոս, իմաստասէր քրիստոնեայ յերկրորդ դարու, վկայէ զի ընթեռնուին այնոքիկ՝ ի ժողովս հաւատացելոց. յորմէ յայտ է զի ոչ միայն գոյին յայնժամ գիրքս այսոքիկ, այլ և ընդունելի ամենեցուն էին, և համապիւռ յեկեղեցիս։ Սուրբն Պապիաս՝ որ եկեաց ընդ աշակերտս տեառն, Սուրբն Պողիկարպոս՝ աշակերտ Յովհաննու աւետարանչի, սուրբ Աթտուածադպեացն՝ որ յամին 107 վկայեաց, սուրբ քահանայապետն Կղեմէս՝ որ հանգեաւ յամին 91, և այլք սոցին ժամանակակիցք, ածեն վկայութիւնս՝ ի նորոյ Կտակարանաց իբր յաստուածայինս գրոց։ Այս ուրեմն ըստ վկայելոյ մատենագրաց առաջնոց իսկ դարուց քրիստոնէութեան՝ վաւերական նութիւն նորոյ Կտակարանաց ցուցանի յաւուրց անտի առաքելոց սկիզբն առեալ։

Ի վերայ այսքանեաց և այսպիսի հաւատարիմ վկայից՝ եթէ տակաւին իցէ օրէն յերկբայս արկանել զվաւերականութիւն նորոյ Կտակարանաց, հարկ լինի և զմատենագրութիւնս սրբոյ Աթտուածադպեցին և ընդ Պողիկարպոսի և զՊապիասայ՝ որ զհետ առաքելոց յաջորդեն՝ համարել ստայօդս։ Իսկ զհետ նոցա դարձեալ զգիրս սրբոյն Յուստինոսի զԴոմիտիլեայ անտիոքացւոյ և զԱրաննոսի, որք ի նորոյ Կտակարանաց ածեն վկայութիւնս, հարկ լինի անվաւերս և զայնոսիկ համարել։ Իսկզբանէ ի յաջորդս նոցին. և հարկ լինի մեզ ասել զի և ոչ Տերտուղիանոսի և Կղեմեայ և Աղեքսանդրացւոյ և Որոգինեայ գրեանքն նոցա իցեն, յաղագս ընդունելի՝ ի նոսա գոլոյ նորոյ Կտակարանաց։ Եւ սակս օրինակի և որ զհետ նոցին մինչև առ մեզ անընդհատ յաջորդեալ մատենագրութիւնք Յարց և աստուածաբանից, հարկ լինի անվաւերս առհասարակ համարել զայնս, կամ ըստ կարևոր մասանցն խարդախեալ, որ անտեղի է։

Աղանդաւորք իսկ առաջնոց դարուց, Կերինթեանք և Կարպոկրատեանք, Ա աղենտինեանք, Արկիոնիտք և այլք ընդունէին զնոր Կտակարանս, և որչափ և ցանկալի էր նոցա յերկեսայս արկանել զայնս՝ չկարացին ժխտել զվաւերականութիւն նոցին. և ՚ի սոցանէ Եբիոն և Կերինթոս ժամանակակիցք էին առաքելոց, կամ գէթ Յովաննու աւետարանչի: Այս ուրեմն վաւերականութիւն նորոց Կտակարանաց հաւաստի է և ՚ի խոստովանութենէ աղանդաւորաց առաջնի և երկրորդ դարու, թէպէտ և ՚ի նոսա մոլորութիւնք իւրեանց գտատապարտին:

Կելսոս, Պորփիւր, և ուրացօղն Յուլիանոս, ոխերիմ թշնամիք քրիստոնէութեան, ոչ երբեք ժպրհեցան յերկեսայս արկանել զվաւերականութիւն նորոց Կտակարանաց: Յուլիանոս, ուր ուրեք բանք լինին զաւետարանաց, յանուանէ գրողացն կոչէ զնոսա. մերթ վկայութիւնս ՚ի թղթոցն Պօղոսի առնու ՚ի կիր, և մերթ բաջաղղի զի ոչ Պօղոս և ոչ երեքին աւետարանիչք Ա ծաուած անուանեն զՔրիստոս, այլ Յովաննէս ևեթ զայն ուսուցանէ. և այլուր զբժշկութիւնս ինչ փրկչին խոստովանի. և յարգելով ՚ի քրիստոնէից զընթերցումն քերթողաց՝ ասէ. "Ա՛ղ ընթերցցին Ա ղուկաս և Ա ատթէոս ՚ի ժողովս գալիլիացւոց ,,:

Պորփիւր՝ երիցագոյն ժամանակաւ քան զՅուլիանոս՝ արար ընդդէմ քրիստոսական կրօնից գիրս, զոր հեթանոսք սրբազանս իմն համարէին. և ՚ի նմա զառարկութիւնս իւր մեծաւ մասամբ ՚ի նորոց Կտակարանաց առնու ՚ի կիր, որով յայտ է զի վաւերականութիւն նոցա ոչ էր կեղակարծ անդամին յերրորդ դարէ: Այս յառաջ իսկ քան զՊորփիւր՝ Կելսոս որ յաւուրս Ադրիանոսի կացեալ, քաջահմուտ էր նորոց Կտակարանաց. և որպէս ՚ի գրոցն Ա րոգինեայ ՚ի միտ առնուլէ, ոչ երբեք կասկածէր նա ՚ի քրիստոնէից յօդեալ զայնոսիկ յանուն առաքելոց: Այս ուրեմն քրիստոնեայք առհասարակ ամենայն ժամանակի, աղանդաւորք և առաջնոց դարուց, և հեթանոսք իսկ ոխերիմ թշնամիք քրիստոնէութեան, վկայեն վաւերականութեան նոր Կտակարանաց:

ԳԼՈՒԽ Դ

ՑԱՂԱԳՍ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Ոչ է բաւական ցուցանել զվաւերականութիւն սուրբ գրոց, պարտ է յաւելուլ և զայն՝ զի ամբողջ և անայլայլակ հասեալ իցեն առ մեզ։ Արդ դիւրին լիցի ցուցանել զայնոսիկ ըստ կարևոր մասանցն անեղծ պահեալ։

Նախ՝ զի կան մինչև ցարդ օրինակք սուրբ գրոց վաղեմիք հազարաւոր ամաց, յոր և նման այժմու օրինակաց ըստ էական մասանց. և արք եկեղեցւոյ՝ ի սկզբանէ և այսր յամենայն դարս անբաւ վկայութիւնս ածեն՝ ի սուրբ գրոց՝ ամենևին նոյնս ըստ իմաստից որպէս տիեզերական եկեղեցի ընթեռնու ցարդ. որպէս զի հարկ եր ընդ սուրբ գրոց և զամենայն գիրս արց համարել այլայլեալս, որ է անհնարին։

Երկրորդ՝ զի որպէս՝ ի խնդիրս բնագրաց և թարգմանութեանց առաջի կայ մեզ ասել, այլ և այլ ազգք և ազինք զնոյն իմաստս ըստ էական մասանցն բերեն, և զանազանութիւն լեզուաց և օրինակաց անժխտելի կացուցանէ զամբողջութիւն գրոցն։

Երրորդ՝ զի որպէս վասն հին Կտակարանաց վկայեն ազգովին Հրեայք թշնամիք քրիստոնէութեան, զի չիք՝ ի նոսա փոփոխութիւն եղծիչ ամբողջութեան, նոյնպէս և վասն նորոց Կտակարանաց զթշնամիս եկեղեցւոյ ունիմք վկայս, ոչ ինչ խոիր ընդ օրինակս նոցա և ընդ մերս գտեալ։ Եւ յումմէ՞ համարիցիմք զսուրբ գիրս այլայլեալ. եթէ յուղղափառաց, չարափառք պարսաւադէտք նոցա միշտ բողոքել կարէին ընդդէմ խարդախութեան նոցա. ապաքէն զրպարտեն նոքա զուղղափառս՝ կամակորել և թիւր իմանալ զսուրբ գիրս, այլ ոչ երբէք խարդախել զայնս։ Եթէ համաձայնիցին՝ ի չարափառաց, արդարև եղեն ոմանք՝ ի նոցանէ առ նախնեօք՝ որք փորձեցան՝ ի սուրբ գիրս այլայլել ինչ ինչ հակառակս մնջորութեան իւրեանց. այլ՝ ի հրատարակել նոցա զօրինական այլայլեալս, բողոքեցին

ուղղափառք ընդդէմ խարդախութեան նոցա, և ՚ի դերև եկ Ճիզն նոցա։ Արկիմնիտք, ա աղենահնեանք, և Անկեցիք ամենայն Ճգամբ իւրեանց չկարացեալ պղծել զինչ ՚ի սուրբ աւետարանս, յաւելին ապացոյցս ամբողջութեան նոցա։ Նայ համարել ՚ի ՚ըրէից կամ ՚ի հեթանոսաց զայնոսիկ պղծել. այլ որպէս մարթէր նոցա ընդունելի առնել ուղղափառ եկեղեցւոյ կամ Թագուցանել ՚ի նմանէ զխարդախութիւն իւրեանց, զոր նշաւակէին օրինակք ամենայն ուրեք սփռեալք, և ՚ի միտս ամենեցուն տպաւորեալք։ Այլ ուրեմն սուրբ գիրք ամբողջ և անեղծ ըստ պատմութեանցն և ըստ վարդապետութեանց հասին առ մեզ որպէս և գրեցանն։

ԳԼՈՒԽ Ե

ՅՈՂՈՎՈՍ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՈՂՈՑ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Որ ինչ առարկութիւնք են Թերահաւատից զպատմութենէ և զհրաշից բովանդակելոյ ՚ի սուրբ գիրս, այնոցիկ եղծումն արտաքոյ հանէ զմեզ ՚ի մերմէ առաջարկութենէս։ Այլ եթէ վաւերականք իցեն սուրբ գիրք և ամբողջ առ մեզ հասեալ, և եթէ աղեղութեամբն Աստուծոյ են գրեալ, ապա ամենայն ինչ Ճշմարտապատում է ՚ի նոսա և գեր ՚ի վերոյ ամենայն առարկութեանց։ Այլ սմին իրի իսկ անկ է մեզ և ըստ կարգի խօսել աստանօր զաստուածայինն աղեղութենէն, որով այնոքիկ գրեցան։ Աղեղութիւն Աստուծոյ կամ ներշնչութիւն կոչի շարժումն գերբնական՝ որով վարէ զոք Աստուած ՚ի գրել, Թելադրելով նմա զգրելիս, և ուղղելով զգրիչ նորա, զի մի ինչ վրիպակ ՚ի պատմութիւնս, ՚ի հաւատոյս և ՚ի բարոյականին ՚ի գրեն սպրդեսցի։ Այս այսմ երկու ինչ բերէ աղեղութիւնս այս յինքեան. զներգործութիւն Հոգւոյն սրբոյ ՚ի շարժել զմտաւեռագիրն ՚ի գրութիւն այս ինչ կամ այնը իրաց, և զաստուածային գործակցութիւն պահելոյ զնա ՚ի վրիպանաց։ Որ աղեղութեամբս այսուիկ գրե ինչ կամ բարբառի յանուն Աստուծոյ, ոչ

խաբիլ և ոչ խաբեալ զայլս կարէ ։ Ա. յլ գործակցութիւն ևեթ Հոգւոյն սրբոյ՝ ոչ է ներշնչութիւն կամ ազդեցութիւն. վասն որոյ վճիռք եկեղեցւոյ թէպէտ և անսխալք են գործակցութեամբ Հոգւոյն սրբոյ սահմանեալ, թէպէտ և համաձայնք են աստուածայնոյն բանից, այլ չեն իսկապէս ներշնչութիւնք, և ոչ համարին ի սուրբ գիրս ։ Յերկոսին յայսոսիկ շրջնորհս ներշնչութեան յաւելուլ պարտ է և գաստուածայինն յայտնութիւն ուր ուրեք սրբազան մատենագիրն չկարէ բնականապէս գիտել զոր գրէն. որպիսի մարգարէութիւնքն են և խորհրդոյն Աստուծոյ չև ևս յայտնելոց վարդապետութիւնք ։

Հաւատք ուղղափառ եկեղեցւոյ դաւանեն ազդեցութեամբ Հոգւոյն սրբոյ զհին և զնոր Ստակարանս գրեալ ։ Ուղղափառ եկեղեցի ընդունի զայնոսիկ ըստ ամենայն մասանց սրբազանս և աստուածաշունչս ։ Նոյն հաւատք են և քրիստոնէից առհասարակ հերձուածողաց. նոյն հաւատք են և նորագանդից զնախահականն գրոց. նոյն և Երէից զհին Ստակարանաց. և նոյն հաւատք եղեն յեկեղեցւոջ յամենայն ժամանակի, որպէս յայտ է ի գրոց Հարց և վարդապետաց առհասարակ, որք զբանս սուրբ գրոց Հոգւոյն սրբոյ միշտ ընծայեն, և պատգամ Աստուծոյ համարին զբանս առաքելոց և մարգարէից և զբնաւ իսկ հին և նոր Ստակարանաց ։ Ա՛ան որոյ զբնաւից առհասարակ է իմանալ որ ինչ առաքեալն առ Տիմոթէոս գրէ. (բ. Տիմ. գ. 16.) “Ամենայն գիրք աստուածաշունչք օգտակարք ի վարդապետութիւն են,,. և զոր առաքելապետեան զմարգարէութեանց ասէ, մարգարէութիւնս ըստ եբրայեցւոցն սովորութեան զամենայն սուրբ գիրս յորջորջելով. (բ. Պետր. ա. 21.) “Ոչ գուշակութեամբ մարդկան տուաւ մարգարէութիւն, այլ ի Հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ Աստուծոյ,,։ Եւ ոչ զազդեցութիւնս զայս բնական ինչ ըստ արդի բանականն աղանդաւորացն մտաց իմանալի է որպէս զքերթողացն և զնկարչաց, այլ գերբնական և աստուածայինն. որպէս զի շփոթել զայսոսիկ ընդ իրեարս, կամ առաձնանալ ևեթ զանազանել յիրերաց, ոչ ուղղափառ հաւատոյ է և ոչ քրիստոնէական կրօնից ։

ՅՕԴՈՒԱԾ Ա

Ջի կանոնական գիրք հնոց և նորոց կտակարանաց, գէր ըստ իրացն և ըստ իմաստից, ազդեցութեամբ Հոգւոյն նի գրեալ:

Գէթ ըստ իրացն և ըստ իմաստից ասեմք, առ 'ի քաց առնուլ զինդիր աստուածաբանից՝ Թէ արդեօք և ամենայն բառք սուրբ գրոց նոյնին ազդեցութեամբ ի ցեն գրեալ: Տրիդենտեան ժողովոյն է վճիռ մակադիր՝ զոր եդաք, և ցուցանի նոյնին հաւաստեօք՝ որովք զկանոնականութիւն սուրբ գրոց 'ի վեր անդր ցուցաք: Պանդղ յայն սակս եկեղեցի կարգեաց զայնոսիկ 'ի կանոն, զի սուրբս և հոգեշունչս զնոսա համարի յամենայն ժամանակս կալեալ. վասն որոյ նոյն պատճառք, որ ցուցանեն զարդի կանոնն յարևնման կանոնի սկզբնան եկեղեցւոյ, ցուցանեն և զաստուածայինն սկիզբն սուրբ գրոց առհասարակ: Այս Հարք զնոյն հաստատեն՝ պատգամն աստուածայինս, իմաստս Հոգւոյն, հոգեշունչս, աստուածաշունչս զայնոսիկ ամենայն ուրեք կոչելով. և Իրոգինէս ասէ (Ճառ. իա. 'է գէրս Նոտոց.) "Հոգին է, որ խօսի 'ի գիրս,,: Ասկեբերան (Ճառ ՟ը. 'է Ծնունդս.) "Պանձք ամբառ 'ի հոգեշունչ գիրս ծածկին,,: Մելիտոպոլետաս (յառաջաբ. սպղմ.) "Հոգւոյն սրբոյ են գրիչք՝ լեզուք և ձեռք սրբազան մատենագրաց,,: Սուրբն Գրիգոր մեծն (յառաջաբ. 'է Յոբ.) "Գիրք սուրբք ամենակալին Աստուծոյ նամականի է առ արարածս գրեալ,,: Ըստ սմին օրինակի և այլք 'ի Հարց առհասարակ:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Պէթ հոգեշունչս պարտ իցէ համարել զսուրբ գիրս այնու՝ զի յամենայն ժամանակի այնպիսիս համարեցաւ զայնս եկեղեցի, նոյնին իսկ և մահմետական նին զի ընդան, և ամենայն աղանդոյ զմատեանս գենին իւրեանց օրէն էր համարել աստուածայինս: Ըստ հարկ

է նեբբին պատճառք աստուածայինս ցուցանել զայնպիսիկ. ապա թէ ոչ, լիցի անկանել ի յոռի շրջանակ. զաստուածայնութիւն գրոց ցուցանելով ի ձեռն անսխալութեան եկեղեցւոյ, և զանսխալութիւն նորա ի ձեռն աստուածայնի գրոց: Այլ այն պի՝ ամենք ի Հարց առ աստուածայինս ունին զգիրս ինչ, զորս եկեղեցի ոչ ընդունի:

Պ. Որչափ եր աղանդաւորաց զմատեանս դնելին իւրեանց համարել աստուածայինս, եթէ և նոցա նոյն հաւատի նշանք էին Ձեմարտութեան կրօնիցն. քանզի յայսմ իսկ է խնդիրն, զի և ոչ միւսմ յաղանդոց են նշանքն այնոքիկ՝ յորս կաթողիկէ եկեղեցի հաստահիմն հաստատեալ է: Նեբբին պատճառք ցուցանել ցուցանեն զաստուածայնութիւն գրոց ընդհանրապէս, այլ ոչ և զմի մի յայնցանէ. վասն որոյ ի բառնալ աւանդութեան և իշխանութեան եկեղեցւոյ, ոչ է մարթ ցուցանել աստուածայինս զամենայն և զիւրաքանչիւր գիրս՝ որ բովանդակին ի Կանոնի: Այլ ոչ աստի հասանել վերստին ի յոռի շրջանակ անկանելոյ. քանզի եկեղեցի որպէս զլոյս արեգական ցուցանէ զինքն նշանօքն իւրովք, և ոչ ի գրոց ևեթ ունի զիւր հաստատութիւն. իսկ սուրբք գիրք ըստ վկայութեան եկեղեցւոյ ունին առ մեզ զհաւաստիս գոլոյ աստուածայնին. յոր հայի հոչակաւորն այն բան սրբոյն Պօղոսինոսի՝ թէ. "Հաւատայի աւետարանին, եթէ ոչ կաթողիկէ եկեղեցւոյ վկայութիւն շարժէր զիս ի հաւատս":

Բ. Ի Վրիստոսէ սկսանին հաւատք, ի նմանէ գիրք սուրբք առնուն հաստատութիւն, և ի գրոց անտի ըզգոյութիւն եկեղեցւոյ և զձիրս նորա ցուցանեն Հարք և աստուածաբանք. և առաքելական հանգանակին իսկ կարգ զոյն պահանջէ, առաջի դնելով մեզ նախ՝ հաւատալ Հայր ամենակալ և Որդի նորա ի Վրիստոս և ի Հոգին սուրբ, և ապա յեկեղեցի:

Պ. Ի Վրիստոսէ իսկապէս սկսանին հաւատք ըստ ինքեան, այլ ոչ և ըստ կարգի Ճանաչման մերոյ. զի եկեղեցի է՝ որ ծանոյց և ծանուցանէ անհաւատից ըզՎրիստոս. վասն որոյ հարկ է մեզ Ճանաչել նախ զեկեղեցի, և ապա ի ձեռն եկեղեցւոյ զՎրիստոս: Ընդ նոյն է ասել և զսուրբ գրոց, զի ի ձեռն եկեղեցւոյ

Հանապազեմք զայնս, ի նմանէ ընդունիմք, և ըստ վկայելոյ նորա գիտեմք՝ զի են աստուածայինք։ Եւ այն զի գիրք նորոյ Կտակարանին չև ևս գոյին, յորժամ եկեղեցի սկսաւ կատարել զաւանդեալն նմա զպաշտօն քարոզութեան։ Ա այսն որոյ հանդանակին առաքելական, և եթէ ուրեք չորք և աստուածաբանք ընդոյն կարգ հանդանակին ունիցին, ըստ ներքինն կարգի մատանց հաւատոյ է, և ոչ ըստ կարգի Հանապազման մերոյ։

Գ. Եթէ ազգեցութեամբ Հոգւոյն գրեալ են սուրբ գիրք, ընդէր ապա մատենագիրք նոցին զանգիտեն իմն՝ զգժուարութիւն առաջարկութեան իւրեանց նկատեալ։

Պ. Ազգեցութիւն Հոգւոյն սրբոյ ոչ բառնայ զընութիւն մատենագրին, որպէս և ոչ զազատութիւն նորին, այլ ի տկարութեան անդ նորա ներգործէ զզօրութիւն իւր. որով մատենագիրն Հանդերձ աղատութեամբ իւրով, և պահելով զընական տիպս կերպարանաց բանից իւրոց, գրէ զոր ինչ կամի Ստուած, և գրէ անսխալ. որպէս որ ընդՀօքն Ստուծոյ գործէ, գործէ աղատութեամբ, և Հանդերձ երկիւղիւ՝ գործէ զկամն Ստուծոյ։ Որ եթէ չէր այսպէս, և ոչ զանազանութիւն ի տիպս բանից սրբազան մատենագրացն գոյր տեսանել. այլ արդ Թէպէտ և նոցին Հոգի է՝ որ ի չորեսին աւետարանիչս ազդէ, այլ տիպք բանից նոցա զանազանին յիրերայ բոլորովին. մինչև քնիկ արուեստին իսկ տեղի ուրեք գտանել ի բանս նոցա. զի ահա ուր Մատթէոս զպայծառակերպութենէն Քրիստոսի ասէ «Հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև ղլոյս». (Ժէ. 2.) Մարկոս, զի Թափիչ էր արուեստիւ, ասէ «Որպէս Թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել». (Թ. 2.) Եւ ոչ այսչափ միայն, այլ և նոքին իսկ ի Հոգեշունչ մատենագրացն՝ որք յարտաքնոյ ինչ առնուն ի կիր, որպէս գրիչ Ռ. Մակաբայեցւոցն ի Յասոնեայ կիւրենացւոյ ասէ առնուլ, ազգմամբ Հոգւոյն այնպէս զայնոսիկ սրբազանեն՝ որպէս որ զմեհեան ի տաճար Ստուծոյ սրբէ, և զսանձս ձիոյ ի սրբութիւն տեառն։

ՅՕԴՒԱԾ Բ

Չի և քառք իւրաքանչիւր՝ ի տուրք գիրս ազգիցուքևաւք Հոգւոյն ևն գրևալ :

Խնդիր է առ աստուածաբանս Թէ արդեօք ազգե-
ցուԹիւն Հոգւոյն զիմաստս ևԵԹ սուրբ գրոց ԹեԼա-
ղրէ , Թէ զբառս ևս՝ որովք վարին սրբազան մատե-
նագիրքք : Տարաձայնին աստուածաբանք զայսմանէ , կի-
սոց և զբառս ՀամարեԼով ազգեալ՝ ի Հոգւոյն , այլոց
ՀամարեԼով զայնոսիկ նոյն ընդ բնական տիպս կերպա-
րանաց բանից իւրաքանչիւր ուրուք՝ ի սրբազան մատե-
նագրաց՝ զոր Թողու Հոգին ազատ՝ ի գիրս նոցա : Բայց
առաջնոյն կարծիք Համաձայնագոյն է բանից Հարց ,
որք պատգամս Աստուծոյ կոչեն զբանս սուրբ գրոց : Եւ
կարծեաց նոցա՝ ի դէպ գայ

Նախ՝ բանն տէրունական . (Ա՛ՌԼ . Է . 18 .) “ Ա-
մէն ասեմ՝ ձեզ , մինչև անցցեն երկինք և երկիր , յոտ
մի՝ որ նշանախեց մի է՝ ոչ անցցէ յօրինացն և՝ ի մար-
գարէից մինչև ամենայն եղիցի ,, : Այսպս ուրեմն ամե-
նայն բառք սուրբ գրոց մինչև ցնշանախեցն՝ ի Հոգւոյն
սրբոյ ազգեալ են . և ևԵԹ նշանախեցն , ևս առաւել
բառք և բանք :

Երկրորդ՝ նկատել առաքելոյն ատեպ զբառս սուրբ
գրոց , և՝ ի միտ առնուլ յայնցանէ խօրհուրդս . որպէս
(ԳՂ . Գ . 16 .) “ Ով սակ զաւակաց իբրև զբազմաց ,
այլ իբրև զմիոյ՝ ԹԷ և զաւակի քումմ՝ որ է Քրիստոս ,, :

Երրորդ՝ եղանակ բացատրուԹեան սուրբ գրոց , որ
պատգամս Աստուծոյ առհասարակ կոչեն անխտիր ըղ-
խօսեցեալսն . որպէս ԴաւիԹ (Ա՛ՂՄ . խԷ . 2 .) “ Բըղ-
խեցի սիրտ իմ զպատգամս քո բարիս ,, : Եւ (ՔՐ . ՀՓԳ .
ԽԷ . 2 .) “ Հոգի տեառն խօսեցաւ յիս , և բան նորա
՝ի լեզուի իմում ,, : Եւ Պետրոս՝ ի Գործս առաքելոց .
(Ա՛ . 16 .) “ Օ որ յառաջագոյն ասաց Հոգին սուրբ
՝ի բերանոյ ԴաւիԹի ,, : Եւ այն (Ա ՀՏ . Ա՛ . 70 .)
“ Որպէս խօսեցաւ՝ ի բերանոյ սրբոյ իւրոց ,, :

Ողբողդ՝ վկայութիւնք սրբոց Հարց ամենայն ազգաց. ՚ի Յունաց Ալեքսեան. (Ննդ. Ե.) "Ոչ և չիք ինչ ՚ի գրի վանկ և ոչ գրախեց մի, յորոյ ՚ի խորհուրդ անդ չկայցէ ամբարեալ գանձ բազում,,:

Ի Ղատինաց Գոստինոս. (Հմաչայնութիւն աւետ. գիրք ա. գլ. լե.) "Որ ինչ միանգամ կամք եղեն Քրիստոսի տալ մեզ յընթերցուածն յաղագս գործոց և բանից իւրոց, զայն հրամայեաց նոցա իբրև ձեռայ իւրոց ՚ի գրի առնել,,:

Նա մեծն Կղիմդոս. (՚ի յառաջաբ. Հարց. ա. 2.) "Նա ինքն գրեաց՝ որ ետն գրել զայսոսիկ, նա ինքն գրեաց՝ որ ազդեացն,,:

Ի Հայոց Մամբրէ. (Ճառ յարութեան Ղ աղ.) "Գիր մի ձայնաւոր մի անցցէ զմտօք քովք, ամենայն շարագծածս լի են հոգևորական իմաստութեամբ,,:

Մարգիս (Ջ. Յոհ. Ջ.) "Օ՜ իմիրդ մարթէր նոցա ասել քանս գրել՝ որ Հոգւոյն խօսէին. ապա յայտ է թէ լեզուն միայն էր նոցա՝ որով Հոգին խօսէր, իսկ բանքն Հոգւոյն,,:

Ամբրոնացի (՚ի Ղեւն առաքել.) "Օ՜ սոյն երկրորդէ և Մովսէսն՝ թէ լեզուս պատգամ է Հոգւոյն սրբոյ, որով ընդ ձեզ խօսի նա՝ որ ՚ի սիրտս է բնակեալ, և ուսուցից ձեզ զբանս իմ՝ որ նորա է ազդումն, և իմ միայն լեզուիս երեւումն,,:

Հինգերորդ՝ զի վտանգաւոր իսկ են հակառակ կարծիք այլոց. զի ոչ անպէտ եւեալ ինայցէ զօրութիւն սուրբ գրոց՝ եթէ ՚ի բառս ուրեք և ՚ի բանս համարիցիմք զազդեցութիւն Հոգւոյն պակասեալ, և զբառս ինչ կամ զբանս գրոց ոչ Հաստուածոյ համարիցիմք. զի դժուարին իսկ է սահման հատանել այսմ կարծեաց, և ընտրել ՚ի որ այն բառք առանց աստուածային ազդեցութեան իցեն գրեալ, և գրեթէ չինայցէ բառ անեղ կռանալի ՚ի սուրբ գիրս, և "Հատանեսցին հաւատքն բատ բանից Գոստինեայ՝ ուր դեղեսցի զօրութիւն աստուածային առից,,:

ԳԼՈՒԽ Զ

ՅԱՂԱԳՍ ԲՆԱԳՐԻ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Բնագիրք հին Կտակարանաց ըստ մեծի մասին գրեցան եբրայեցերէն, հին տառիւք Ասորւոց՝ որ միացին առ սամարացիս. զի ապա Աղբաս օրինակեաց զայն ամենայն նոր տառիւքն՝ զորս Ասորւայք առին 'ի քաղդէացւոց։ Բայցաքը ըստ մեծի մասին, զի ըստ սրբոյն Ժերոնիմեայ՝ գիրքը Դանիելի, Տոբիթայ և Յուդիթայ քաղդէարէն բնագրեալ են, և Մակաբայեցւոց երկրորդն յոունարէն։

Բնագիրը նորոց Կտակարանաց ևս յոունարէն. բայց միայն Մատթէոս գրեաց եբրայեցերէն 'ի լեզու երուսաղէմացւոց, որ էր խառնուրդ ասորի քաղդէացի և եբրայական լեզուաց՝ լեալ յայնժամ աշխարհաբառ լեզու Ասրէից. զի յետ դարձի նոցա 'ի գերութենէն ոչ ևս միաց առ նոսա առաջին անխառն եբրայեցին, որով գրեցան հին Կտակարանք։ Ի նոյն բարբառ համարին գրեալ և զԹուղթն առ եբրայեցիս Յակոբոս, Յերունիմոս և Թէոդորետոս։

Սամարացւոցն օրինակ նոյն ևս ընդ Սուխիական բնագրին ըստ լեզուի և ըստ տառից, յորմէ ըստ տառից ևեթ զանազանի եբրայականն գրեալ Ասղրայ՝ որպես ասացաք՝ նորովք տառիւք։ Բայց միայն զանազանութիւնք ընթերցուածոց են 'ի նոսա յաւուրց իսկ անտի Յակոբեայ, և ուրեք ուրեք համաձայնի սամարացին եօթանասնիցն Թարգմանութեան։

Պաղեստինացին Թարգմանութիւն մեկնաբանական է՝ խառն հրէական աւանդութեամբք. վասն որոյ չիք նորա իսկապէս վաւերականութիւն, այլ նպաստակ մեկնչաց սրբոց գրոց՝ գիտել զհնոց ըստբանեացն Ասրէից խմացուած։ Նշմայտ է ժամանակ այսր Թարգմանութեան. ոմանք երիցագունեն զայն քան զԹուական փրկչին, այլ չիք յիշատակ նորա ոչ առ Ղուկինեայ, և ոչ առ Ապիսիանու և Ասերունիմեայ, որք յեղյեղեցին զամենայն Թարգմանութիւնս։

Աստի ի թարգմանութեան նմանութիւն յոյժ է ընդ բնագրին վասն մերձաւորութեան լեզուին ընդ եբրայականին. և յարդի յոյժ վասն զգուշաւորութեանն և հնութեանն, զի վաղեմի է, և Թերևս յառաջ իսկ քան զԹուական փրկչին:

Այն և արաբացի, պարսիկ, և եԹովպացի թարգմանութիւնք. այլ զսոցանէ չիք կարևոր ինչ գիտելի:

Հնագոյն քան զամենայն Թարգմանութիւնս յունական է, եօԹանասնիցն յորլորլեալ. զոր Պտղոմէոս Աղբայրասէր արքայ Եգիպտոսի 273 ամօք յառաջ քան զՔրիստոս ետ թարգմանել եօԹանասուն և երկուց բաբունեաց Երկից ծերոց, զորս Եղիազար քահանայապետ ազգին յղեաց ի խնդրոյ արքային ընտրեալս վեց վեց յերկոտասան ցեղիցն Իսրայելի, ներհունս եբրայականին և Հելլէն բարբառոյ: Քրիստէոս, որ ինքն պատգամաւոր ի թագաւորէն գնաց առ քահանայապետն, ատուգասպատում առնէ զպատմութիւն Թարգմանութեանս այսորիկ. զոր և հաստատեն Հարք Յունաց և Լատինաց, Աբրահոս, Յուստինոս, Կղեմէս աղեքսանդրացին և Հրուսաղեմի, Եւսեբիոս, Եպիփան, Թէոդոտիոս, Հերոնիմոս, և այլք, ի հանգամանս ինչ իրացն միայն զանազանեալ: Իսկ ի մերոցս յոլովք Հարևանցի զայն յիշատակեն, մեծն եւ եթ Վարդան ի սկիզբն մեկնութեան Սաղմոսաց պատմէ Հոխագոյնս:

Քսպիսի է յարդ Թարգմանութեանս այսորիկ, մինչև բազմաց ազդեցութեամբն Պտուծոյ համարել զայն արարեալ: Պտանօր ի դէպ համարիմ ածել ի ներքս զբանս Թէոտինեայ յաղագս քաղաքին Պտուծոյ, (գիրք ԺԸ. գլ. խԵ.) առ ի կարձել զամենայն վիճաբանութիւն, և տալ զկարևորն տեղեկութիւն յաղագս այսր Թարգմանութեան: "Պտղոմէոս Աղբայրասէրն մակձայնեալ՝ զՀրեայս դերեվարեալս ի նախորդէ իւրմէ եԹող անդրէն յազատութիւն. յաւել և պարգևս արքայականս առաքել ի տաճարն Պտուծոյ, խնդրեալ Եղիազարէ այնր ժամանակի քահանայապետէ զմատեանն զառ ի համբաւոյ ծանուցեալ աստուածայինս, որոյ վասն ունել զայնոսիկ յանկայր յիւրակերտն ի բազմագանձ մատենադարանի: Ա՛ւ զի

Հեբրայական լեզու առաքեաց զայնս քահանայապետն, խնդրեաց Թագաւորն Թարգմանիչս, և առաքեցան ծերք եօթանասուն և երկու՝ հերկոտասան ցեղից ամի, արք քաջագէտք երկաքանչիւր լեզուի՝ եբրայականին և յունականին. յորմէ և սովորութիւն կալաւ՝ յօթանասից յորջորջել զնոսայն Թարգմանութիւն։ Այս ապաքէն զրոյց՝ այնպիսի հրաշալի միաձայնութեան իմն աստուածայնոյ եղեալ՝ ի բանս նոցա, զի ուր առանձինն իւրաքանչիւր միայնիկ պարապէին յայս գործ՝ կամեցեալ Թագաւորին այսու՝ ի վերայ կալ հաւատարմութեան նոցա, ոչ՝ ի միում բառի՝ թէ և նոյնանիշ և համխմաստ, և ոչ՝ ի շարս բանից գտաւ զանազանութիւն հերետից. այլ իբր միոյ ուրուք Թարգմանչի՝ նոյն մի էր Թարգմանեալն յամենեցունց, քանզի և արդեամբք մի հոգի էր յամենեսին՝ ի նոսա։ Եւ մեծի այսմ աստուածահրաշ պարգևի յայն սակս եղեն բաժանորդք, զի արգոյ ընծայեսցի այսու զօրութիւն մատենիցն, ոչ իբրև մարդկայնոց՝ այլ որպէս արդարև աստուածեղենոց, ՚ի շահ յապա հաւատալոցն աղգաց, զոր և տեսանեմք ՚ի գլուխ ելեալ։

Վանգէլ եղեն կացին և Թարգմանք այլ՝ որք հեբրայեցի բարբառոյ ՚ի յոյն փոխաբերեցին զաստուածաշունչ գիրս, որպէս Ակիւլաս, Սիմաքոս, Թէոդոտիոն, զոր օրինակ է միւս այլ յանծանօթ մատենագրէ և անանուն, վասն այն հինգերորդ Թարգմանութիւն կոչեցեալ։ Սակայն զեօթանասնիցն իբր մի միայն՝ այնպէս ընկալաւ եկեղեցի, և զայն ՚ի կիր առնուն յունական ժողովուրդք քրիստոսադաւանք, յորոց բազումք և գիտեն ոչ գնաւ՝ թէ կայցէ այլ Թարգմանութիւն։ Թարգմանութենէ աստի եօթանասնից հեղաւ և ՚ի լեզու լատինական, զոր ունին Լատինացն եկեղեցիք։ Սակ առ մերով ժամանակաւ եկաց Երոնիմոս երէց՝ այր յոքնիմաստ, տեղեակ երեցունց և այլ լեզուաց, որ ՚ի Լատին բարբառ հեղաշրջեաց զնոսայն մատեանս ոչ ՚ի յունականէն՝ այլ հեբրայեցւոյն։ Եւ թէպէտ զայս զգրաւոր վաստակս նորա հարազատ և լինել հաստատեն Երեայք, և եօթանասնից Թարգմանչաց վրիպակս ընծայեն ՚ի բաղում տեղիս, սակայն եկեղեցիք Քրիստոսի ոչ զմի զոք նախասահմանադատին

քան զվկայութիւն բազմաց արանց ընտրելոց յայն ’ի մեծ գործ Աղեքսանդրեայ քահանայապետէ։ Օ՛ի թէ և ոչ միոյ հոգւոյ աստուածայնոյ ազգեալ էր ’ի նոսա, այլ ըստ մարդկան սովորութեան խորհրդակիցք միանոյ լեալ էին ’ի վերայ բանից Թարգմանութեանն, որպէս զի ամենեցունց հաճոյ Թուեցեալն կացցէ, տակաւին ոչ օրէն էր զմի ոք Թարգման առանձին՝ վերոյ նոցա դնել։ Այլ քանզի աստուածազգեցիկ ներգործութեանն ոչ դոյզն նշանակ ’ի նոսա երևի, արդարև ո՞ր այլ Թարգման գրոցն այնոյիկ յեբրայականէն յայլ լինչ և իցէ բարբառ գտանիցի Աշխրտաբան, այնպիսին կամ հաճաբան լինի եօԹանասնից Թարգմանչաց, և կամ եԹէ այլաբան տեսանիցի՝ խորհուրդ ինն մարգարէական անգանօր հատատալ արժան է։ Ասան զի Հոգի՝ որ ’ի մարգարէն էր ’ի բարբառել նոցա, նոյն և յեօԹանասնեան արան էր ’ի Թարգմանել նոցա. որ և կատարող էր ապաքէն աստուածայնոյն իշխանութեամբ ասել և զայլ ինչ, որպէս Թէ նորին մարգարէի ասացեալ էր զերկոսին. իբրև զի երկուն և նորին Հոգւոյ լինէր ասացած, կամ զնոյն զմի այլազգաբար ասել. որ զի Թէ ոչ նոյն բանք, բայց իմաստք նոյն յայտնեացին քաջ մեկնուածոց. և կամ Թողուլ ինչ և այլ ինչ յաւելուլ, զի և այսու ծանիցի՝ ոչ մարդկային ծառայութեամբ յաջողեալ գործոյդ այդմ, բանիցն հարկ արկանելով Թարգմանչին, այլ առաւել աստուածային տէրութեամբ՝ որ զԹարգմանչին միտս ընդոր և վարէր։»

ԶԹէ առաւելագոյն ումեք բանք վարդապետիս Թուիցին, սակայն որչափ և յոտպատիկին՝ բաւականք իցեն առ ընծայելոց զարժանին մեծարանս այսմ Թարգմանութեան։ Ա՛ւ Արքեպոս Ե. քահանայապետն Հռոմայ, ’ի սկիզբն Թարգմանութեան եօԹանասնից՝ որ կայ ’ի վաւիկանեան մատենադարանի, գրէ. «Հին Կտակարանն որ ըստ եօԹանասնից՝ ընդունելի լիցի առ ամենեսին և պահելի, ոչ որպիսի և իցէ օրինակաւ՝ այլ որպէս վաւերական Թարգմանութիւն... արգել ’ի վերայ եդեալ՝ զի մի ոք իշխեսցէ առյապոյն այլայլել ինչ.» Ասակ որ այլ Թարգմանութիւնք յունականք ’ի բանս անդ յիշատակեալ՝ այսոքիկ են.

Ակրղոդ Ակիւղասայն. սա պոնտացի էր Հելլէն

ազգաւ և քրիստոնեայ. որ դարձեալ ՚ի հրէութիւն, թարգմանեաց զհին Կտակարանն յեբրայականէն ՚ի յոյն յամի տեառն 130. և ատելութեամբն ընդդէմ քրիստոնէից՝ աղօտացուցանէ զվկայութիւնս որ զՔրիստոսէ։

Երրորդ Թէոդոտիոնին. սա ևս յոյն էր եփեսացի, և ՚ի քրիստոնէութենէ անկեալ յաղանդ եբիոնիանց և ապա ՚ի հրէութիւն, արար զթարգմանութիւն հին Կտակարանաց յեբրայականէն ՚ի յոյն յամի տեառն 183։

Չորրորդ Ակիմաքոսին՝ որ սամարացի էր, և նախ ընկալեալ զհրէութիւն, ապա եղեալ քրիստոնեայ, և ապա անկաւ յաղանդ եբիոնիանց հրեամիտ աղանդաւորաց։ Սա ևս յեբրայականէն ՚ի յոյն թարգմանեաց զհին Կտակարանն, այլ ազատ թարգմանութեամբ՝ զիմաստսն եւեթ պահելով, և ըստ նմանութեան Ակիւղասայ քօղարկելով որ ինչ զՔրիստոսէ վկայութիւնք։ Այսր աղագաւ յերեցունց թարգմանութեանցս Թէոդոտիոնին եւեթ ընդունելի էր առ Հարս, և ՚ի զննութիւն եբրայական բառիւ եւեթ այլքն պիտանի։

Իսկ հինգերորդն և վեցերորդ թարգմանութիւն անանուն, մին գտեալ Այրիքով քաղաքի, և միւսն ՚ի Նիկոպօլիս։ Զայս ամենայն յունական օրինակս յերիս մատեանս խմբագրեաց Որոգինէս, որք կոչեցան քառիւղեան, վեցիւղեան և ութիւղեան։ Յառաջնումն գրեալ կային ՚ի չորս գաւազանս կամ էջս չորեքին յունական թարգմանութիւնք այսու կարգաւ.

ա. Ղօթանասնիցն.
բ. Ակիւղասայն.
գ. Ակիմաքոսին.
դ. Թէոդոտիոնին։

Ի վեցիւղեանն կային վեց օրինակք այսու կարգաւ.

ա. Հնագիրն եբրայական.
բ. Յոյնն Հելլէն տառիւք.
գ. Ղօթանասնիցն.
դ. Ակիւղասայն.
ե. Ակիմաքոսին.
զ. Թէոդոտիոնին։

Իսկ ութիւղեանն եւերկու ՚ի վերջ և զերիքովեանն և զնիկոպօլսեան, որ Թերևս հնագոյն քան զայլսն էին։

Ապաստամբոյց եղև յոյժ նախնի մեկնչայ աշխատասիրութիւնս այս Աղուիանեայ, որոյ արդ հատուածք աեղի են ի միջի։

Բայց այսմ օրինակի արարեալ է փարիզեան տպագրութիւնն վեցերորեան. յոր Աղթամն անգղիացի յաւելեալ երկուս այլ լեզուս՝ զեթովպացին և զպարսիկ, ուղղեցուեան ի լոյս ընծայեալ ի Անգլիոն։ Ի սոյն կարգ հոգայր դասակարգել և զմերս օրինակ ուռաեղ գաղղիացի՝ որոյ վաղահաս վախճան յամին 1799, ի դերև եհան զիղձս նորա։ Այլ իղձք եղեն յետ այնորիկ և Տիտոյի գաղղիացւոյ դերահռչակ տպագրի համախոհութեամբ բազմահմուտն Այլ սրբոյ Հռոմէական եկեղեցւոյ կարգինալն. այլ և այն ի դերև ել, կանխեալ մահու կարգինալին։

Երես օրինակ ի Թարգմանութենէ եօթանասնիցն յեղաւ ի Նմայ ըստ հին Կտակարանին. այլ յայնպիսի ընտիր ձեռագրէ, և այնու զգուշաւոր Թարգմանութեամբ, զի և օտարազգիք հայագէտք մեծարեն զայն, և ընդունին և աքրօզ՝ քաջահմուտ գաղղիացիք՝ մարթել ասեն զարդի յայն օրինակն ուղղագրել ի մերմէ օրինակէս, և աքրօզ իշխէ իսկ դշնոյ ամենայն ընթերցանողաց զմերս անուանել։ Այս է սա երկասիրութիւն Թարգմանչացն մերոյ Կահակայ և Եսրոպայ գործակցութեամբ ձեռասուն աշակերտացն իւրեանց. որոյ բաղդատեալ զայն ընդ եբրայական ընդ ասորի և ընդ արաբացի օրինակս, և զնորոյ ևս Կտակարանայ յաւելեալ յայն զԹարգմանութիւն, պարգևեցին մեզ գանձ հոգևոր։

Նազմապատիկ Թարգմանութիւնք են առ աստիճս հին և նոր Կտակարանաց. այլ ընտիր քան զամենեսին Թարգմանութիւն սրբոյն Երոնիմեայ, որ եկաց ժամանակակից մերոցս Թարգմանչաց։ Այս Թարգմանութիւն, ընդ հին Թարգմանութեան գրոցն խմաստութեան և Աքրաբայ և Նարուբայ և Մակաբայեցւոյ՝ զորս ոչ Թարգմանեալ Երոնիմոս, կոչի Ուլկատա այսինքն հրատարակեալ՝ ի ջանացանութիւն յայլոց Թարգմանութեանց, որ և զտեղի կալաւ անուանեալ Կտակարան Թարգմանութեանն եօթանասնից՝ որով վարիցին աստիճք յառաջագոյն։ Այլ Թէպէտ ի սկզբան անդ

կրեաց Հակառակութիւն բազում Հերմիմեայն Թարգմանութիւն, այլ տակաւ ընդունելի լեալ Հռոմայ, ի Սպանիա և ի Գաղղիա, ի սկիզբն եօթներորդի դարուն տարածեցաւ յամենայն եկեղեցիս արեւմտից։

Իսկ քանզի ի մէջկոյս վեցտասաներորդի դարուն բազում ազգի ազգի Թարգմանութիւնք հին և նոր Կտակարանաց ի լատին բարբառ յածէին ի ձեռս ամենեցուն, և ա՛յս և ի նորագանդից Թարգմանեալք, ժողովն Տրիդենտեան առ ի խափանել զայնսոսիկ՝ յայտ արար վաւերական զՈւլկաթայն իբր Հարազատ Թարգմանութիւն ըստ էական մասանց, և զերծ յամենայն վրիպակէ՝ որ կարիցէ ստնանել քրիստոսական Հաւատոց և կրօնից։ Ա՛յս է իմաստ տրիդենտեան վճռոյն, և ոչ պարտ նորագանդք ժպրհեցան զբպարտել զսուրբ ժողովն, իբր Թէ զՈւլկաթայն նախամեծար բնագրին և այլ ամենայն Թարգմանութեանց արարեալ իցէ, և ա՛յս և եօթանասնից, և արդելուցու զայնսոսիկ իբր անվաւերս։ Ո՛չ ատ իսկ է զվճիռն զայն յակն արկանել առ ի միտ առնուլ զանիրաւութիւն ատգտանացն. զի ոչ բնագրի յիշատակք են անդ, և ոչ արևելեան Թարգմանութեանց. այլ զլատինականացն և՛ եթէ խօսի՝ որք յածէին յայնժամ ընդ Աւրոպա. "Յամենայն տուչութեանց լատինականաց՝ որք յածին ի միջի*,,։ Ո՛ւ ատն որոյ ուղղափառք արևելեայք ոչ դադարեցին վարել և յետ այնորիկ իւրեանց օրինակօքն, և ոչ երբեք ի սրբոյ գահէ անտի եղև նոցա ատգիւտ։

Ա՛յլ ուրեմն յամենայնէ, որ ինչ մինչև ցայսր զբնագրաց սուրբ գրոց և զԹարգմանութեանց ասացաք, ի միտ առնուլ է

Նախ՝ զի այն ամենայն օրինակք և Թարգմանութիւնք սուրբ գրոց, որ ի վաղուց հետէ ընդունելի լեալ յաղգս քրիստոնէից յարևելս, և վարին յեկեղեցական պաշտամունս նոցա, վաւերականք են և ընդունելի կաթուղիկէ եկեղեցւոյ. որպիսիք են եբրայական, յոյն, Հայ, ասորին, արաբացին և եթովպացին։ Ա՛յլ Թարգմանութիւնք, որոց չիք վաւերականութիւն և չեն իսկ լեալ ընդունելի, օգնեն և եթէ ի

* Ex omnibus latinis editionibus quæ circumferuntur.

պետս քննութեան և մեկնութեան : Իսկ որ յինքնա-
հրաման և ի կեղակարծ գրչաց թարգմանեալ, և մա-
նաւանդ ի ռամիկ բարբառ, արգելեալ իսկ են և ըզ-
գուշալի :

Երկրորդ՝ զի և ի վաւերական օրինակս մարթէ զի
իցեն մարդկօրէն վրիպակք թարգմանութեան կամ
գրչի . այլ այն ինչ ոչ սահանակ վաւերականութեան և
ամբողջութեան սուրբ գրոց , ուր ի կարևոր մասունսն
չիք ինչ վրիպակ կամ իմաստ ինչ ընդդէմ հաւատոյ և
բարի վարուց :

Երրորդ՝ զի ուր ուրեք միաբանին ընթերցուածք վա-
ւերական օրինակաց , վկայութիւնք՝ որ անտի ածեալ՝
են անժխտելի . և ուր բազումք կամ սակաւք միաբա-
նին , ըստ առաւելութեան և նուազութեան լինի զօ-
րութիւն վկայութեանն :

ԵՒս չորրորդ՝ զի որոց և է վաւերական օրինակաց զա-
նազանութիւնք ընթերցուածոց չեն անգանելի , այլ
պիտանի ըստ տեղւոյն, որպէս քաջ իմաստասիրեն մեկ-
նիչք և աստուածաբանք :

ԳԼՈՒԽ Ի

ՑԱՂԱԳՍ ԻՄԱՑՈՒԱԾՈՑ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Իմացուած կամ տեսութիւն սուրբ գրոց է իմանալ
զընդիկ նշանակութիւն նորա ազգեալ ի Հոգւոյն : Յե-
րիս յօդուածս բովանդակեմ որ ինչ կարևոր են առ
այս . նախ՝ հանրական կանոնք իմացուածոյ սուրբ գրոց .
երկրորդ՝ այլ և այլ ազգ իմաստից սուրբ գրոց . երրորդ՝
երբայական ոճք և տիպք խօսից ածանցեալք ի թարգ-
մանութիւնս :

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Հաւրական կանոնք իւնացուածոյ սուրբ գրոց :

Ա. Կանոն. Օ՛ բանս սուրբ գրոց պարտ է իմանալ, ոչ ըստ իւրաքանչիւր ուրուք մտաց՝ որպէս սոկինեան և բանական աղանդաւորք կարծեն, ոչ ըստ աստուածային առաժամայն յայտնութեան՝ որպէս անուանեալ աստուածարելոյն աղանդ երագէ, և ոչ ըստ առանձնական իւրաքանչիւր ումեք՝ ի նոցուն տուեալ շնորհաց՝ որպէս լութերականք և կալուինականք համարին, այլ ըստ վարդապետութեան կաթուղիկէ եկեղեցւոյ : Օ՛ այս այսպէս կալաւ միշտ եկեղեցի Քրիստոսի, որպէս պարտիմք՝ ի ձառս աւանդութեան և իշխանութեան եկեղեցւոյ ցուցանել :

Բ. Կանոն. Ի հաւատոյս և՝ ի բարոյականս պարտ է խնդրել զմիաբան տեսութիւն յոլովից սրբոց նոցա. զի այս իսկ հաւաստիք են վարդապետութեան կաթուղիկէ եկեղեցւոյ : Այլ կանոնս այս ոչ միշտ զօրէ և յարտաքին գիտութիւնս. զոր օրինակ զշարժելոյ արեգական կամ երկրի, զժամանակէ ստեղծման նախատարերց աշխարհի, և զսոցին սակի խնդրոց, յորս ոչ են այս պարտք վարելոյ վկայութեամբ նոցա, որ հարևանցի խօսին զայսպիսեաց, և նոցա չնորհ ոչ զարտաքին գիտութիւնս էր ուսուցանել մարդկան՝ այլ զառաքելական աւանդս և զՀնմարտութիւնս կրօնից :

Գ. Կանոն. Օ՛ բառս սուրբ գրոց պարտ է իմանալ ըստ բնիկ նշանակութեանն՝ ուր չիցէ ինչ անտեղութիւն կամ հակասութիւն ընդ այլոց բանից. այլ և ոչ պարտ է անտեղութիւն համարել զգեր՝ ի վերոյս մարդկեղէնն մտաց և զխորհուրդս սուրբ հաւատոց, և հեռքել այնու զբնիկ նշանակութիւնս բառից և յայլաբանականն դիմել :

Դ. Կանոն. Օ՛ իմաստս սուրբ գրոց, որպէս և զամենայն մատենագրաց, ոչ է պարտ ուրոյն՝ ի նախորդ և

'ի յաջորդ բանիցն առնուլ, այլ ըստ պատշաճի և ըստ պահանջելոյ նոցին :

Ե . Կանոն . Պարտ է առաջի աչաց ունել միշտ զոհ-ղի , զաղգ , զժամանակ և զհանգամանս սրբազան մա-տենագրին, և զտիպս կերպարանաց լեզուին՝ որով գիրքն այն գրեալ են : Ա՛ան որոյ պարտ է առ այս ունել տե-ղեկութիւն լեզուաց ինչ հնոց , պատմութեան և սո-վորութեան հին ազգաց , ժամանակագրութեան և աշ-խարհագրութեան , բնական պատմութեան երկրին պա-տահմանաց և հնախօսութեան եբրայեցւոց :

Զ . Կանոն . Սովորութիւն է սուրբ գրոց մարդկայ-նովքս զաստուածայինն բացատրել , օրինակ լինի աչս և ականջս Աստուծոյ ընծայելով :

Է . Կանոն . Օ՛ օրինակս և զնմանութիւնս ոչ բոլ ամենայն մասանցն է իմանալ , այլ ըստ գլխաւոր մա-սին . զոր քաջ բացատրէ Կիպնատիոս վարդապետ 'ի մեկնութեանն Ղուկայ . “ Օ՛ զօրութիւն աւետարա-նին , ասէ , . . . երբեմն խմորոյ նմանեցուցանէ վասն ձգիչ զօրութեանն , և դարձեալ մանանխոյ՝ վասն տարածանե-լոյն , և գանձի՝ վասն փարթամացուցիչ և պատուական բնութեանն . իսկ աստ հրոյ՝ վասն ջեռուցանող , սրբիչ և լուսաւոր բնութեանն : Ա՛ան որոյ պէտք են այնո-ցիկ՝ որ յայսմ պարապին , առաքելս ընտրութեամբ զկողմն օրինակին՝ որ անպատշաճն է ձշմարտութեանն՝ 'ի բաց քակել 'ի բանէն , և այնու՝ որով ունի զմիտս խորհրդոյն՝ վարել բանիւն ,, :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս այլ և այլ ազգ իմաստից սուրբ գրոց :

Իմաստք սուրբ գրոց զանազանին ըստ այլ և այլ ազգ տեսութեան . և նախ ըստ ձայնին և ըստ մտաց , զոր և նկարագրականն և ֆիլոսոբեբրայեցին կոչեմք իմաստս : Օ՛ որ օ-րինակ “ Ա՛կրատեցաւ Յիսուս 'ի Յորդանան 'ի Յով-հաննէ ,, , է ըստ ձայնին ըստ ձառին ըստ նկարագրին՝ լուանալ Քրիստոսի զրով 'ի Յորդանան , Ա՛յլ սուրբ առ

“Ակրտութիւն մի ունիմ մկրտիլ, և զիաւրդ փութամ մինչև կատարեսցի ,, , փոխաբերական է և առ՛ի միտս, և նշանակէ զարեամբ Թաթաւիլն : Ետ այսմ և գառն կոչի Քրիստոս ըստ Հեղութեանն և ըստ մարգասիրութեան :

Աւրկրորդ՝ իմաստ խորհրդական է, ուր խորհուրդ լինէ ընդ բանիւքն բովանդակի, որպիսի էն որ լինէ՛ի հինն Կտակարանս զՔրիստոսէ և զեկեղեցւոյ նորա ասացեալ բանք . որպես Աբրահամու երկուց որդւոցն նշանակել զհինն և զնոր Կտակարանս , և Իսահակայ զնուաճն՝ զպատարագել Քրիստոսի՛ի խաչին : Ալ ասն ընդ խորհրդականս այս իմաստ երրակի զանազանի . Առաջ՝ այլաբանական , որպես ամենայն արարողութեանց օրինականաց խորհուրդք , զորոց առաքեալն ասէ (Հբր. ժ . 1 .) “Զանգի զստուեր հանդերձելոց բարեացն ունելին օրէնք , և ոչ զնոյն կերպարանս իրացն ,, : Աւրկրորդ՝ բարոյական , ուր բանք գրոյն քաց՛ի նկարագրական իմաստից ակնարկեն՛ի խրատ վարուց . զոր օրինակ (ք . օրէն . իբ . 4 .) “Մի կապեսցես զցուռկ եզին կալոտաց ,, . զորոյ զբարոյական իմաստն տայ առաքեալն . (ա . Տիմ . ե . 18 .) “Արժանի է մշակն վարձու իւրոյ ,, : Աւ երրորդ՝ վերածական , ուր բանք գրոյն քաց՛ի նկարագրական իմաստից ակնարկեն յերկնայինս և՛ի յաղթականն եկեղեցի : Որպես առաքեալն զբան սաղմոսին՝ որ ըստ Հառնի հայի յերկիրն աւետեաց՝ իմանայ զերկինից . (Հբր . ի . 11 .) “Որպես երդուայ՛ի բարկութեան իմում եթէ մտցեն՛ի հանգիստ իմ ,, : Աւյս ամենայն իմաստք՛ի մի և եթ բառն Հրեայսդեմ բովանդակին , որ ըստ գրոյն նշանակէ զմայրաքաղաքն Երկից , այլաբանօրէն՝ զեկեղեցի Քրիստոսի , բարոյապէս՝ զհոգի հաւատացեալ , և՛ի վերածական միտս՝ զերկնից արքայութիւնն :

Իսկ երրորդ իմաստ՝ յաւմարական , ուր ուրեք սուրբ գիրք զայլմէ իմեքէ խօսին , և վարդապետք յայլ կին յաւմարեն զայն վասն նմանութեանն : Օրինակ իմն ումանք՛ի Հարց , որպես և Յայսմաւուրք մեր , գեղեցիկ յաւմարութեամբ զերեքհարիւր յիսուն և ութ հայրապետս Նիկիոյ սուրբ ժողովոյն , զվանիչս Քրիստոսի , օրինակեն՛ի նոյնչափ ընդոծինս Աբրահամու , ոչ ըստ վանեաց նա զբազմութիւն թշնամեաց :

Ի մեռնայն բանից սուրբ գրոց հարկ է ունել յատուկամ փոխաբերական իմաստս, և չիք ինչ ի նոսա որ ոչ նշանակիցէ ինչ ըստ նկարագրին կամ փոխաբերաբար։ Ա՛յս են գլխաւոր իմաստք՝ յորս պարտ է դիմել աստուածաբանին առ ի ցուցանել զճշմարտութիւն կրօնից, զհաւատս և զկանոն քրիստոնէական վարուց, և մեկնչաց զայն հետազօտել յառաջ քան զկորհրդականն իմաստս։

Այն որք համարին նոյն միով բանի սուրբ գրոց տալ կրկին իմաստս նկարագրականս. այլ կարծիք նոցա՝ ոչ ըստ բաւականին բերէ հաւաստիս։ Ա՛յլ զկորհրդականն իմաստից չիք երկբայել, զի և տէրն մեր և առաքեալք, և ժողովք և վարդապետք յամենայն ժամանակի, և ՚ի բեայք անդամ, այլաբանական իմաստիւք սուրբ գրոց վարեցան. շատ լիցին առ ի տեառնէ առեալքն ՚ի կիր՝ Յովհաննու զերիս տիւս և զերիս գիշերս կալ ՚ի փոր կիտին ՚ի նշանակ յարութեանն, և բարձ բացուցանել Մովսիսի զօձն յանապատին յօրինակ խաչելութեանն, այլովքն հանդերձ։ Ա՛յլ ոչ է յայտ ամենայն իսկ բանից ընդ նկարագրականին բերել և իմաստս խորհրդականս. վասն որոյ պարտ է անդստին ՚ի սուրբ գրոց ուսանել և յաւանդութենէ և ՚ի վարդապետութենէ եկեղեցւոյ, այս ինչ կամ այնր բանի զայս ինչ կամ զայն բերել իմաստս խորհրդականս՝ առ ի ցուցանել նուաճ զմաստունս հաւատոյ. և որչափ և յայտնի նմանութիւն ՚ի միջի կայցէ ընդ օրինակն և ընդ օրինակեալ, սակայն խորհրդական իմաստից ոչ է մարթ հաւաստիս աստուածաբանականս տալ, բայց ըստ վկայութեան սրբոց Հարց և վճռոց եկեղեցւոյ

Իսկ յարմարական իմաստք չկարեն երբեք հաստատել զհաւատոյ ճշմարտութիւնս և զվարդապետութիւն կրօնից. բայց օրինակաւ Հարց և Եկեղեցւոյ ուսանիմք՝ զի օրէն է երբեմն վարել նոքօք, և զբանս սուրբ գրոց զաստացեալս զայլմէ, յայլ ինչ կամ յայլ ինչ յարմարել։ Սակայն պարտ է նախ զգուշանալ ամենևին, մի իբրև հաւաստիս ՚ի սուրբ գրոց ածելոյ զայնս ՚ի հաստատութիւն մասանց ինչ հաւատոյ և բարոյականին. երկրորդ՝ մի երբեք տալ այնոցիկ իմաստս այնպիսի, որ զնկարագրական և կամ զկորհրդական իմաստսն

եղծանիցեն . երրորդ՝ հետեւել յայսմիկ օրինակի սըրբոց Հարց և հոգեկիր մեկնչաց , և մի յաձախել յարմարական մեկնութիւնս անխտիր՝ որպէս բեմախօսացն վտանգ է զեղծանելոյ նոքօք . և չորրորդ՝ ի հոգևորս ևեթ վարել նոքօք , և մի երբեք յանսուրբս . որպէս եկեղեցի պատշաճապէս յարմարէ ի սուրբ Հայրապետս զտուն սաղմոսին՝ “ Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի ,, . որպէս և մեք ի սուրբ Լուսաւորիչն մեր զտունն՝ “ Ելանն զիս ի գբոյ տառապանաց ի կաւոյ և ի տղմոյ ,, . և ի սուրբ Հռիփսիմեանս զմարգարէականն՝ “ Սոքա են քարինք սուրբք հիմնեցեալք ի լերկրի ,, . և որ սոցին սակի գեղեցիկ յարմարութիւնք :

ԳՕԴՈՒԱԾ Գ

Երբայական տիպք բանից ածանցեալք ի թարգմանութիւնս սուրբ գրոց :

Որպէս լեզուաց իւրաքանչիւր են աղգային յատկութիւնք , այսպէս և եբրայականին , զորս Թարգմանիչք ընդ սուրբ գիրս աւանդեցին մեզ յոլով յայնցանէ : Ոմանն որոյ առ ի ստոյգ իմացուած սուրբ գրոց , հարկ է ունել զայնցանէ տեղեկութիւն : Օրինակքս , որ փոքր ի շատէ աստանօր համառօտեալ , օգնեսցեն ի խնդրութիւն :

“ Օ ողորմութիւն կամիմ , և ոչ զզոհ ,, . (Աղե . ՟ը . 6 .) Ժխտական փոխանակ բաղդատականի . և իմաստքն են . Առաւել կամիմ զողորմութիւն քան զզոհ : Ըստ այսմ և Պաղաքեայն (՟ա . 2 .) “ Օ Յակովբ սիրեցի և զԵսաւ ատեցի ,, . այսինքն Օ Յակովբ առաւել սիրեցի քան զԵսաւ : Նոյնպէս և ի (Ղ . ԺՀ . 26 .) “ Եթէ ոք գայ առ իս , և ոչ ատեայ զհայր իւր և զմայր . . . ոչ կարէ իմ աշակերտ լինել ,, : Օ որ ինքն իսկ Վրիստոս մեկնէ ի (Մատթ . Ժ . 36 .) “ Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս , չէ ինձ արժանի ,, :

“ Արդ երգոյ , սրբութիւն սրբոյ , Պատուած աստուածոյ , երկինք երկնից ,, , և որք սոցին նման կրկնութիւնք զգերադրականի ունին զօրութիւն :

“Լերինք Աստուծոյ. որսորդ առաջի տեառն Աստուծոյ. սկայ առաջի տեառն Աստուծոյ,,. այսինքն բարձրաբերձք քան զամենայն լերինս, քաջք քան զամենայն որսորդս, յաղթանդամք քան զամենայն հսկայս։

“Համբերելով համբերի. լալով լայ. ապականելով ապականեցաւ երկիր. լսելով լուիցէ և մի իմասցէ. ցանկանալով ցանկացայ զայս պատեք ուտել ընդ ձեզ,,. և այլ բազում ուրեք և յաճախ այսպիսի կրկնութիւնք առ սաստկացուցանելոյ ե զնշանակութիւնն։

Նայիլ ժամանակք և եղանակք և թիւք այլ ընդ այլոց վարին յաճախ. զոր օրինակ (սաղմ. ա. 1.) “Երանեալ է այր՝ որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց,,. այսինքն որ ոչ գնայ. (Նաւայ. ի. 2.) “Յարուցեալ որ գնայր ընդ խաւար, ետես լոյս մեծ,,. այսինքն որ գնայ ընդ խաւար, տեսցէ լոյս մեծ. (Հռոմ. ժբ. 15.) “Ուրախ ընդ ուրախացօղս, լալ ընդ լացօղս,,. այսինքն ուրախացէք, լացէք։

Մակբայից ընդարձակ առումն. (Եբր. ժգ. 8.) “Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս,,. այսինքն որ ինչ ցարդ. (Մրկ. գ. 5.) “Եւ վայրկեանակի բուսաւ,,. այսինքն՝ յետ այնորիկ, ըստ ժամանակին. (Ածտ. ը. 7.) “Եւ արձակեաց Նոյ զագռաւն, և ել, և անդրէն ոչ դարձաւ մինչև ցցամաքել ջրոյն յերկրէ,,. այսինքն ոչ եւս դարձաւ, եւս և յետ ցամաքելոյ ջրոյն։ Նման այսմ իմա և (Մտթ. ա. 25.) “Եւ ոչ գիտէր զնա, մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ,,։ (սաղմ. ճժը. 133.) “Մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք,,. այսինքն և ոչ մի՛ ի մեղաց. (Մտթ. ին. 22.) “Նմին ոչ կարձեին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին,,. այսինքն և ոչ մի ոք. (Յհ. է. 16.) “Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնոցիկ որ առաքեացն զիս,,. այսինքն ոչ իմ միայն է, այլ և այլն. (Յհ. ժբ. 44.) “Որ հաւատայ յիս, ոչ հաւատայ յիս, այլ յայն՝ որ առաքեացն զիս,,. այսինքն ոչ յիս միայն հաւատայ, այլ և այլն։

Նայլ և այլ նշանակութիւնք պայմանական շաղկապիս ԵՒԷ. (Գ Կ. ժբ. 23.) “Տէր, եթէ սակաւք իցեն՝ որ ապրելոց իցեն,,. Թարմատար՝ այսինքն սակաւք իցեն։ (Մրկ. ը. 12.) “Բայց ձեզ, եթէ տացի նշան

աղկա այսմիկ ,, . այսինքն մի տացի : Նոտ այսմ և (առաջ . ղդ . 11 .) “ Նդուայ ’ի բարկութեան իմում թէ մտցեն ’ի հանգիստ իմ ,, . այսինքն մի մտցեն :

Ո աղկապքս պէ , որպէս պէ , յաձախ նշանակեն ոչ ըզ պատճառս իրացն , այլ զարդիւնս . ըստ այսմ ասի բա- տէպ յաւետարանս . “ Օ՛ի լցցի որ ասացաւն ’ի ձեռն մարգարէին . Օ՛ի լցցի քան մարգարէին ,, :

Ի սակաւուց աստի օրինակաց ’ի միտ առնուլ է զկա- րևորութիւն հմտութեան եբրայաբանութեանց , որ է ուրեք զի բազմոցին այլ ազգ կարեն տալ իմաստս :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Զի սուրբ գիրք ևս և ’ի մասունս հաւատոյ և բարի վարուց ոչ այնպես բացայայտ են զի չիցեն նոցա պետք մեկնուրեաց :

Քանզի սուրբ գիրք ոչ ամենայն ուրեք զՀիմարտու- թիւնս հաւատոյ և զբարի վարուց իբրև զհանգանակ և զբրիստոնէական վարդապետութիւն բացայայտ ա- ւանդեն , աստի զհետ գայ հարկ մեկնութեան և ան- սխալ մեկնչի . ապա թէ ոչ , մնրթ իցէ որպէս մնան հաւատոյ առնուլ ինչ որ ոչն է , և զոր էն՝ իբր ոչ այն- պիսի : Նայց նորաղանդք ոչ ընդունին թէ ’ի սուրբ գիրս իցէ ինչ ուրեք մթութիւն . վասն որոյ ’ի բաց մեր- ժեալ զհարկ մեկնութեան և զնմացուած կաթողիկէ եկեղեցւոյ , ամենայն ումեք ընծայեն իրաւունս իւրովի մեկնելոյ և իմանալոյ զայնս :

Ոչ ոք անպիտանայ զնսուրբ գիրք յայտնի և լուսա- ւոր են ընդհանրապէս . այլ զնի իցեն ’ի նմա և մթու- թիւնք ուրեք ուրեք ’ի մասունս հաւատոյ և բարի վա- րուց , ցուցանեն վկայութիւնքնոցին իսկ գրոց և Նարոց , իրն ինքնին , և փորձ իսկ իրացն :

Նբաքեան Պետրա վասն թզթոցն Պօղոսի ասէ (բ . կը . ջ . 16 .) “ Յորս գտանի ինչ ինչ դժուարիւ- մայ , զոր անուսմունքն և յողդողդք կամակորեն . որ- պէս և զամենայն իսկ գիրս՝ առ իւրեանց անձանցն կո- րուստ ,, : Նս ոչ թէթև ինչ համարելի է և դուշնա-

քեայս, որպէս նորաշանդքն համարին զայնս, որ կա-
րենն ածել՝ի կորուստ։ Եւ Պաւլոս ասէ. (սաղմ. ՃԺԷ.)
“Իմաստուն արա զիս, և քննեցից զօրէնս քո,,։ Եւ
դարձեալ (125) “Իմաստուն արա զիս, և ծանեայց
զվկայութիւնս քո,,։ Որոց գրէ սուրբն Ջերոնիմոս
առ Պաւլինոս. “Եթէ այսպիսի մարգարէն խոստովան
լինի զխաւար տգիտութեան, որպիսի գիշերաւ տգի-
տութեան չիցեմք մեք շուրջ պատեալ մանկունքս հա-
զիւ ստնդեայք,,։ Եւ փրկիչն մեր (Ղ. ԻԳ. 27.
45.) “Սկսեալ՝ի Մովսիսէ և յամենայն մարգարէից,
մեկնէր նոցա որ ինչ յամենայն գիրս գրեալ է զնմա-
նէ,,։ Եւ “Եբաց զմիտս առաքելոցն՝ իմանալ զգիրս,,։
Եւ առ ինչ պէտք էին մեկնելոյ և բանալոյ զմիտս, ե-
թէ սուրբ գիրք բացայայտք էին յամենայնի որպէս նո-
րաշանդքն համարին։

Իսկ Հարք այնպէս միաբան զնոյն հաստատեն, զի
գրեթէ չիք ոք՝ի նոցանէ՝ որոյ չիցէ ձեռնարկեալ՝ի
մեկնութիւն սուրբ գրոց։ Եւ սուրբն Ոգոստինոս խոս-
տովան լինի (՝ի Ղևղնին ծԸ. առ Յան.) “Հազուա-
յոյժ քան զորս գիտեմն, անպիտանամ՝ի սուրբ գիրս,,։

Ընդառաջել ևս քան զվկայութիւնս իրն ինքնին է յայտ-
նի։ Զանգի ոչ միայն Հմմարտութիւնք գերբնականք,
խորհուրդք հաւատոց, պատուիրանք բարւոյ վարուց,
յաստուածային գիրս բովանդակեալք, բարձունս և
դժուարիմացս առնեն զնոսա, այլ և եղանակ խօսից այլ
և այլ ժամանակաց, սովորութիւնք այլ և այլ տեղեաց,
արարողութիւնք, ձևք բանից, յատկութիւնք լեզուաց,
վեր՝ի վերոյ երևեալ հակասութիւնք, յորս հանձարք
մեծամեծք աշխատ եղեն ցարդ, և տակաւին կայ ինչ
բազում՝ ինչ հետաքննելի՝ի նոսա և բացատրութեան
կարօտ։

Իսկ փորձ իրացն, և նոցին իսկ նորաշանդիցն անա-
գան խոստովանութիւն, զլուծն ընծայէ հաւաստեաց։
Որ՝ի եթէ սուրբ գիրք յամենայնի բացայայտք իցեն և
ամենայն ումեք դիւրիմացք, ուստի՞ այնքան վէճք՝ի
հաւատոյս և՝ի բարոյականին՝ յոր չէ ևս կարեն միա-
բանել նորաշանդք յետ երից դարուց։ Ընդէր այնքան
բազմահատոր նոցին մատեանք՝ի մեկնութիւն և յի-
մացուած սուրբ գրոց, այնքան կանոնք և պատուէրք

բացատրութիւն նոցին, որ չև ևս առնուն դուլ և դադար։ Ճատ իսկ է առ ամի՛ի բերան առնելոյ զնոսա, առաջարկել նոցա զառաջինն գլուխս Յննդոց։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Սուրբ գիրք և Հարք լուսաւոր և բացայայտ համարին զաստուածային պատգամս. “Պատուիրանք տեառն լոյս են, և լոյս տան աչաց,,. (սաղմ. ԺԸ. 9.) “Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս տան շաւղաց իմոց,,. (անդ. ՃԺԸ. 105.) “Ո՛ի ճրագ է պատուիրան օրինացն և լոյս,,. (առակ. Ձ. 23.) Եւ Պետրոս ասէ. (բ. կր. ա. 19.) “Եւ ունիմք հաստատագոյն զբանն մարգարէականս, որում եթէ անսայցէք՝ բարւոք առնէք, իբրև ճրագի՝ որ տայցէ լոյս ի խաւարչտին տեղւոջ,,։ Եւ Պօղոս յետսամտաց ևեթ և թիւրելոց սրտիւ ծածկեալ ասէ զաւետարանն. (բ. կոր. Դ. 3.) “Ապա եթէ իցէ ևս ծածկեալ աւետարանն մեր, ի մեջ կորուսելոցն է ծածկեալ,,։ Հարք ևս ոչ դուն ուրեք զնոսա հաստատեն. որպէս Ակեբերան ի Ճառն Ղազարու Ձ. և ի Թ Ամեսաղնիկեցիս. Ճառ Ձ. “Ասացեալ, լուսաւորս,, կոչէ զսուրբ գիրս և զի “չիք ի նոսա մեղին ինչ, որ ոչ լիուլի լուսաբանեալ իցէ այլոյ,,։ Եւ զբանս իւրեանց Հարք սովոր են վկայութեամբ սուրբ գրոց հաստատել. արդ զայսոսիկ նուազ յայտնեաք ոչ է մարթ ցուցանել։ Եւ այն զի չիք պատճառ, որոյ վասն անյայտս և մեղինս առ մարդիկ խօսեցեալ Աստուած։

Պ. Բանք սաղմոսին ցուցանեն զբացայայտութիւն սուրբ գրոց և զպատուիրանացն Աստուծոյ ընդհանրապէս, և ոչ ի բաց առնուն զդժուարիմաց և զմեղին որ ի նոսա բանս։ Եւ բանք Պետրոսի հային ի մարգարէութիւնս զՔրիստոսէ, որք գալստեամբ նորա լուսաւորեցան. վասն որոյ և նմանեցուցանէ զայնս “Ճրագի ի խաւարչտին տեղւոջ, մինչև ցլուսաւորել տունջեան, և արևուս ծագել Քրիստոսիս ի սիրտս հաւատացելոց,,։ Դարձեալ և Պօղոսի զքարոզութենէ աւետարանին են բանք, որում ոչ լսէին յետսամիտք՝ կամա-

կար զաչս իւրեանց առ լոյս նորա կախուցեալ, և ոչ ե-
թէ զլուսաւորութենէն կամ զմթութենէն սուրբ գրոց։

Ասկեբերան զեղանակէ բանից սրբազան մատենա-
գրացն խօսի, և ոչ եթէ զխորին խորհրդոց սուրբ գրոց,
զորոց բազում ուրեք խոստովանի զմթութիւն. և 'ի
մեկնութեան Յովհաննու (գէր՛ ա՛. Ն՛՛՛. խբ.) ա-
սէ. "Այս մեզ կարի կարևոր մեկնել զայս ամենայն...
զի մի և բանքն Պաուղոսի մարտս 'ինելիքս ածել թուես-
ցին։.. Արդ այսոքիկ ուժգին զմարտն երևեցուցանեն
բատ առաքելոյն. վասն որոյ կարևոր է զմեկնութիւնն
'ի վերայ ածել,,։ Պատքէն զյայտնագոյնս ոչ է մարթ
նուազ յայտնեօք ցուցանել, այլ Հարբ զվկայութիւնս
գրոց ոչ առ 'ի բացայայտել զբանս իւրեանց ածեն, այլ
առ 'ի հաստատել։ Օ՛ի թէպէտ և բանք գրոց չիցեն
առաւել յայտնի քան զբանս իւրեանց, այլ աստուա-
ծային զօրութիւն է նոցա՝ որում չէ մարթ զդէմ
ունել։

Սակ խորհրդոցն և բանից 'ի սուրբ գիրս բովանդա-
կելոց մթութիւն, նախ զի ոչ յաստուածակոյս կողմա-
նէ է, այլ 'ի բնութենէ իրացն և 'ի պատճառաց՝ զորս
'ի վեր անդր ասացաք. և երկրորդ՝ զի մարթ իսկ էր
Պաուղոս 'ի վեր քան զհասարակաց միտս տալ պատ-
գամն, որպէս զի հաւատացեալք 'ի ձեռն վարդապետու-
թեան եկեղեցւոյ իմանայցեն զայնս՝ զոր կացոյց մեկնիչ
և վարդապետ անսխալ բանիցն իւրոց։

ՅՕԴՈՒԱԾ Ե

*Զի նկատելոյ միայն է տալ անսխալ զվարդապետական մեկնու-
թիւն սուրբ գրոց։*

Ոչ միայն զնիւթական պահպանութիւն սուրբ
գրոց, այլ և զաստուածականն՝ որ է իմաստից նոցին հարա-
զատութիւն, աւանդեաց Վրիտոս եկեղեցւոյ իւրում
յառելն. (Ա՛ՔՌ. իբ. 20.) "Ուսուցէք նոցա (այսինքն
հաւատացելոց) զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ,,։
Այս իշխանութիւն ուսուցանելոյ պահանջէ զանսխա-

լութիւն՝ի վարդապետել։ Օ այս պաշտօն իւր եկեղեցի կատարեաց յամենայն ժամանակի, հերքելով զմոլորութիւնս՝ որ աստուածային յայտնութեանց հակառակ ելանէին, և զհերետիկոսս յամառեալս՝ի ծոցոյ իւրմէ՝ի բաց մերժելով, սկսեալ՝ի Սիմոնէ մոգէն մինչ ցՆուերթոր և ցԱլալուին և ցսերբունդա նոցա։

Նոքին իսկ հերետիկոսք ընկալան զդատաստան եկեղեցւոյ ընդդէմ մոլորութեանց՝ որ յառաջ քան զիւրեանցն՝ի վեր երևեալ, և որ այլազգ յիւրեանց յայտնէին մոլորութեանց։ Արդ եթէ եկեղեցւոյ միայնոյ է իշխանութիւն դատելոյ զվէճս, ապահմանելոյ զվարդապետութիւնս հաւատոյ՝ որ յաստուածային յայտնութիւնս բովանդակին, զհետ գայ զի և վարդապետական մեհնութիւն սուրբ գրոց նմա միայնոյ իցէ պահեալ, զի առանց [այսորիկ] չէ մարթ առնել զայն դատաստան։

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆՔ

Ա. — ա. Արիստոս արգելու եկեղեցւոյ զմեհնութիւն սուրբ գրոց յասելն. (Ա՛որ. իբ. 8.) "Ա՛ի ղեք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ... և մի կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Արիստոս է,,։ Նոյնդարձեալ (Յհ. ե. 34.) "Ա՛յլ ես ոչ եթէ՝ի մարդկանէ առնում վկայութիւն,,։ Նոյնդարձեալ. (անդ. է. 17.) "Նթէ ոք կամի զկամն նորա առնել, գիտասցէ վասն վարդապետութեանս՝ յԱստուծոյ իցէ արդեօք,,։ Նոյնդարձեալ (անդ. ճ. 27.) "Ունկնարք իմ ձայնի իմում լսեն... և զկնի իմ գան,,։ Ա՛ս ասն որոյ բերիացիք, որպէս՝ի գործս առաքելոց պատմի, (իէ. 11.) "Հանապազ քննէին զգիրս, եթէ իցէ այս այսպէս,,։

բ. Նոյնդարձեալ եթէ չէր այսպէս, զեկեղեցի՝ի վեր քան զսուրբ գիրս պարտ էր համարել, և հաւատացելոց զհաւատս իւրեանց յենուլ՝ի բանս մարդկան, ոչ ևս ըստ առաքելոյն՝ "Ճ նեալք՝ի վերոյ հիման առաքելոց և մարգարէից,,. և պատգամք Աստուծոյ՝ի բանից մարդկան առնուին զհաստատութիւն։

գ. — ա. Արիստոս առաջնով բանիւն արգելու առաքելոց զիշխանութիւնէ փարիսեցւոցն, որ ռաբբի ռաբբի

տային կոչել զինքեանս . ապա Թէ ոչ , չէրամայէր նո-
ցա լինել ուսուցիչս , յասելն՝ “ Ուսուցէք նոցա զամե-
նայն որ ինչ պատուիրեցի ձեզ ,, : Արկրորդաւն ցուցանէ
զի ինքն չկարօտեր վկայութեան առ՝ի մարդկանէ :

Արկրորդաւն հրաւիրէ զամենեսեան՝ի լուր վարդա-
պետութեան իւրոյ , առ՝ի ձանաչել զառաքումն իւր
Յ՚ստուծոյ :

Ողրորդաւն յայտ առնէ զՀլուԹիւն այնոցիկ՝ որ ծա-
նեան զնա՝ի նշանացն և՝ի վարդապետութենէն , և
հաւատացին նմա :

Ներիացիք նախ քան զՀաւատալն քննէին զպատ-
ճառս հաւատոյն , զմարգարէութիւնս որ զՆրիստոս
ակ՝ եւ եւաղս՝ի գլուխ :

Եւ զի՞ կայ այսր ամենայնի ընդ մեկնութեան տուբ
դրոց : Եւ մի Թէ դատաւորք , որք մեկնեն զօրէնս ,
գերապո՞յնք օրինացն իցեն :

Բ . Հաւատացեալք՝ի վերայ բանին Յ՚ստուծոյ հաս-
տատեն զՀաւատս իւրեանց , այլ ըստ իմացութեանց կա-
Թողիկէ եկեղեցւոյ : ԱրԹէ վասն այսորիկ օրէն իցէ ասել՝
Թէ՝ի բանս մարդկան յենուն զՀաւատս , ապա օրէն էր
և ասել՝ զի նորաշանդք՝ի միտս իւրաքանչիւր կամ՝ի
բանս ուԹերի և Կալուինի յենուն զՀաւատս իւրեանց :

Պատգամք Յ՚ստուծոյ չկարօտին հաստատութեան
ըստ բնիկ ամենազօր զօրութեանն , այլ առ միտս մեր
զՀաւատիս վարդապետական իմաստիցն՝ի ձեռն ան-
սխալ մեկնութեան Հեթ եկեղեցւոյ ունիմ :

ԳԼՈՒԽ Ը

ՅԱՂԱԳՍ ԱԽԱՆԴՈՒԹԵԱՆ

Ախանդութիւն՝ ընդհանրապէս առեալ , է սովորու-
Թիւն ինչ կամ վարդապետութիւն կրօնից՝ի նախորդ-
դաց առ յեանորդս անցեալ անընդհատ յաջորդու-
Թեամբ : Յ՚յլ աստ աւանդութեամբ իմանամք զբան
Յ՚ստուծոյ հասեալ առ մեզ վկայութեամբ այնոցիկ՝ ո-
րոց յայտնեցաւն , Թէպէտ և գրաւոր՝ այսինքն արտա-

քոյ սուրբ գրոց՝ ի գրի արարեալ, և թէ անգիր, պահեալ անյեղլի ի հաւատս և ի սովորութիւնս ազգաց։ Այս կոչի սա աստուածային, զի Հեղինակ ունի զԱստուածոյ, և յածի զՀնամարտութեամբք յայտնեցեալովք առ ի Հեղինակէ։

Ըստ այլ և այլ դարուց և ըստ այլ և այլ հանգամանաց աստուածպաշտութեան ի սկզբանէ աշխարհի և այսր՝ զանազանի և աւանդութիւն ի նախնական ի մովսիսական և ի քրիստոնեական։ Առաջինն ինքանէ Հեղեամայ և ի նահապետաց, երկրորդն ի Մովսիսէ, երրորդն ի Քրիստոսէ. և երեքեան ևս Հայրն ի նոյն կրօնս աստուածպաշտութեան, որոյ վարդապետութիւնք և սահմանադրութիւնք բացայայտեցան ըստ պիտոյից մարդկութեանս աստուածեղէն իմաստութեանն տնտեսութեամբ։

Նախնականն աւանդութիւն, որոյ հետք կան և մնան առ ամենայն ազինս, բովանդակէ զՀնամարտութիւնս՝ զորս յաստուածային յայտնութենէ ընկալան նախածնողք մեր, որպէս զՀաւատս արարչագործութեան աշխարհի և մարդոյ, զգլխաւոր պաշտամունս կրօնից, զանկումն մարդկութեանս, զՀանդերձեալ կեանս, զանմահութիւն հոգւոյ, զաւետիս փրկութեան և զՀնարս հաշտութեան ընդ Աստուծոյ ի ձեռն Հնորհալի փրկչին։

Մովսիսականն աւանդութիւն Հայի ի Հին Կտակարանս։ Մովսէս ոչ զամենայն ինչ գրով ետ Հրէից, վասն որոյ ի վախճանելն իւրում ասաց ցնոսա (Բ. օրէն. լԲ. 7.) «Յուշ լեսցին քեզ աւուրքն յաւիտենից, իմացարո՛ւք զամն ազգաց յազգս. Հարց զՀարան քո, և պատմեսցեն քեզ. և ցծերս քո, և ասասցեն քեզ»։ Ասաց նոցա ընթեռնուլ զգիրս իւր, վերծանել զպատմութիւն աշխարհի՝ զոր Թողեր նոցա. զի ընթեռնլոց էին զայնոսիկ աներկբայապէս. այլ Հարցանել զՀարս, զի առանց Հայրենի աւանդութեանց և ոչ զայնս մարթէր նոցա իմանալ բովանդակ։ Մովսէս ոչ շատ Համարեալ պատմել՝ի գիրս իւր զբանչելին՝ զորս արար առ նոսա Աստուած, յիշատակարանս ևս այնոցիկ եթող ածս տարեկանս և արարողութիւնս զի մի մոռասցին զայնս, և պատուիրեաց զպատձառս նոցին աւանդել որդւոց յորդիս առ ի տպաւորել զայնոսիկ անջինջ ի

միտս նոցա. (Բ. օրին. Ջ. 19.) «Եւ եղիցի յորժամ հարցանիցէ զքեզ վաղիւ որդին քո և ասիցէ, զինչ են վկայութիւնքն և իրաւունք և դատաստանք՝ զոր պատուիրեաց տէր Աստուած մեր մեզ, և ասասցես ցորդին քո. Ծառայք էաք Փարաւոնի Եգիպտոս, և հան զմեզ տէր Աստուած անտի...» Եւ առ ինչ այսքան պատուէրք և զգուշութիւնք, եթէ մատեանքն՝ զորս Թողոյն՝ բաւականք էին առանց ինչ աւանդութեան։ Որով սէս՝ ի վերայ սկզբնական մեղայ և հանդերձելոց կենաց աղօտագոյնս գրէ քան զքաղուման՝ ի սրբազան մատենագրաց՝ որ կրտսերագոյնք յոյժ քան զնա կացին ժամանակաւ. արդ ընդէր էր նմա գրեթէ լռել զկարևորացս, բայց զի նախնականն աւանդութիւն այնքան կենդանի էր՝ ի ժողովրդեանն և քաջածանօթ ամենեցուն, զի չէին պէտք գրաւոր բացատրութեան։

Եւ կարևորագոյն մեզ աստ քրիստոնէականն է աւանդութիւն աստուածայինն, հիմնեալ՝ ի բանս Քրիստոսի. և զանազանի սա յեկեղեցականէն՝ որ հայի՝ ի բարեկարգութիւնս և՝ ի սահմանադրութիւնս, յորոց ոմանք յառաքելոց անտի առնուն սկիզբն։ Պաշկն առաքելականք կոչին յաձախս և աստուածայինքն և ոմանք եկեղեցական աւանդութեանց. աստուածայինքն՝ զի՝ ի ձեռն առաքելոց հասին առ մեզ, և եկեղեցականքն՝ զի յառաքելոց անտի աւանդեցան. որք որպէս հովիւք եկեղեցւոյ բազում ինչ բարեկարգութիւնս սահմանեցին յաստուածայինն պաշտամունս և՝ ի մատակարարութիւն խորհրդոց։ Եւ դիւրաւ է ընտրել զայսոսիկ յաստուածայնոցն՝ որք՝ ի հաւատս և՝ ի բարի վարս պատկանին, ուր եկեղեցականքն հային՝ ի բարեկարգութիւն՝ որ ըստ ժամանակաց և տեղեաց կրէ փոփոխմունս, թէպէտ և աւետարանական հոգի եկեղեցւոյ կայ և միայ անփոփոխ։

Հաւատիք առաքելական աւանդութեանց, նախ՝ միաձայնութիւն հարց զայնմանէ, և երկրորդ՝ միօրինակ սովորութիւն յամենայն եկեղեցիս քրիստոնէից, կամ գէթ՝ ի բազումս զանազանեալս ազգաւ և սովորութեամբք, յանյիշատակ ժամանակաց կալեալ։ Որպիսի է սրբել զաւուրս կիրակէից, յիշատակ տէրունական ծննդից գլխաւորաց, և բազում կարգաւորու-

թիւնք խորհրդոյ եկեղեցւոյ , Օ՜ որ օրինակ եթէ յա-
մենայն ժամանակի կալաւ յեկեղեցւոջ այս ինչ կամ
այն սովորութիւն , թէ ուսուցին Նարք զայս ինչ կամ
զայն վարդապետութիւն , որպէս զնիկական ներկայու-
թիւն Քրիստոսի ՚ի սուրբ խորհրդեան , և զտարբե-
պէս փոխարկութիւն հացին և գինւոյ ՚ի մարմին և յա-
րիւն Քրիստոսի , և եթէ գոն իսկ ՚ի պաշտամունս ե-
կեղեցւոյ և ՚ի պատարագի արարողութիւնք և աղօթք՝
որ ՚ի նոյնս ակնարկեն , այս ամենայն աւանդութիւնք
հաստատեն աներկբայելի զվարդապետութիւն Ճշմար-
տութեանն :

Ա՜ սն որոյ աստ զբուն աստուածայինն կամ զառաքե-
լական աւանդութենէ առաջի կայ մեզ Ճառել :

ԳՕԴՈՒԱԾ Ա.

*Ցաղագս գոյութեան և կարևորութեան առաքելական աւանդու-
թեանց :*

Առաքելական կամ աստուածայինն աւանդութիւն է
բան Նստուծոյ անգիր , զոր առաքելոց ՚ի բերանոյ
Քրիստոսի ընկալեալ կամ ՚ի Նոգւոյն սրբոյ ազդեցութե-
նէ՝ աւանդեցին աշակերտաց իւրեանց և յաջորդաց , և
՚ի նոցանէ եհաս առ մեզ անընդհատ վարդապետու-
թեամբ կաթողիկէ եկեղեցւոյ , հաստատուն և միօրի-
նակ վկայութեամբ Նարց , գրովք վարդապետաց ,
վճռովք ժողովոց , ընդհանուր և յայտնի սովորու-
թեամբ հաւատացելոց , և եկեղեցական պաշտամամբք՝
որ հասակակից են քրիստոնէութեան : Նրդ այս ա-
ւանդութիւնն է երկրորդ ինն կանոն հաւատոյ յետ սուրբ
գրոց , և բովանդակէ զայն ամենայն վարդապետու-
թիւնս՝ որ ոչ յիշատակին ՚ի սուրբ գիրս : Ա՜ սն որոյ
ժողովն տրիդենտեան յայտ արար , զի “ Ա՜ ուրդապե-
տութիւն ուղղափառ հաւատոյ ոչ ՚ի գիրս սուրբս միայն
բովանդակին , այլ և յանգիր աւանդութիւնս՝ զորս ա-
ռաքեալք ՚ի բերանոյ Քրիստոսի կամ ՚ի Նոգւոյն սրբո-
յ ազդեցութենէ ընկալեալ աւանդեցին , և բերան

՚ի բերանոյ մինչև այսր առ մեզ եհաս ,, : Ա՚ան որոյ և նզովէ զայնոսիկ , որ գիտութեամբ արհամարհեն զաւանդութիւնս : Ա՚ան այսորիկ պարտ է զաւանդութիւնքս զայսոսիկ զանազանել յայնցանէ , զորս ոչ հրաժարեն նորազանդք յընդունելոյ , և կոչեն յարնչականս . այսինքն զայնոսիկ և՚ի սուրբ գիրս բովանդակին . օրինակ ինն զկարութիւնն Ա՚բրիատոսի , որում՝ առանց իսկ վկայութեան գրոց մարթէր ինձալ աւանդութեամբ առ հաւատացեալս : Ա՚յլ ուղղափառ վարդապետութիւն ընդունի , զի և արտաքոյ սուրբ գրոց կարևոր են աստուածային աւանդութիւնք : Ա՚ան զի առանց այսոցիկ ոչ էր մարթ գիտել ոչ զկանոնական գիրս , ոչ զնոցին աստուածային ազդեցութեամբ գրութիւն , ոչ զնոցին հարազատ իմաստս , և ոչ իսկ զամենայն մասունս հաւատոյ՝ յորոց ոչ սակաւք և նորազանդից ընդունելի :

Ա՚ւ նախ չիք ՚ի սուրբ գիրս սահման կանոնական գրոց , ուրեմն յաստուածային աւանդութենէ է գիտելի : Ա՚պաքէն նորազանդք , որք ոչ ընդունին զաւանդութիւնս , չկարացին երբէք միաբանել յիւրեանս զայնցանէ . դատողական քննութիւն ոչ բաւէ սահմանել զայն , այլ մանաւանդ յաձախել զայնմանէ զտարաձայնութիւն : Ա՚ւ եթէ գտանէր իսկ ուրեք ՚ի գրոց սահմանի կանոնականաց , սակայն ոչ ինչ օգնէր . զի մարթէր զնորին իսկ կանոնականութիւն յերկբայս արկանել , որպէս ոչ սակաւք ՚ի նորազանդից յետոյ ուրեմն ստիպեցան խոստովան լինել զայս : Ա՚ր ինչ զկանոնականութենէ գրոց ասացաք , զնոյն է ասել և զնոցին ազդեցութեամբ Հոգւոյն գրութենէ :

Ա՚րկրորդ ոչ ինչ նուազ կարևոր են աստուածային աւանդութիւնք առ ՚ի սահմանել զվարդապետական իմաստս սուրբ գրոց : Ա՚անզի սուրբ գիրք ոչ ամենայն ուրեք են բացայայտք , և ոչ յիրս հաւատոց և բարոյականին . և ՚ի տարաձայնել իմացուածոց , գժուարիմաց բանից սուրբ գրոց՝ ոչ է մարթ զհարազատ իմաստս նոցին գիտել այլազգ , բայց աւանդութեամբ այնոցիկ՝ որք զկայանութիւնն զայն ընկալան Հ՚յտուծոյ և հաստուցին առ մեզ : Ո՚ի առանց նպաստից աւանդութեան ոմպէս մարթ էր մեզ ՚ի միտ առնուլ զհարհուրդ ամենա-

սուրբ Աղբորդութեան, զհամագոյութիւն երից անձանց, զըզխուածն Յոգւոյն և Աղբեցոյ, զկորհուրդ մարդեղութեան, զաստուածածնութիւն սրբոյ Կուսին, զսկզբնական մեղացս սերուածն ի մեզ, և զայլ ևս սոցին սակի խորհուրդս. և իբր իսկ հաստատութեամբ ըզդեմ ունել հակառակ մնջորութեան։ Ո՛ի ահա նորադանդեք առանց այսր օգնականութեան չկարացեալ յաղթել սակինեանց, ինքեանք ևս ի նոցին մնջորութիւնս զառածան։

Աղբորդ՝ զի առանց աւանդութեան չէր մարթ զիտել զբազում ինչ մասունս Հաւատոյ, որ և նորադանդից են ընդունելի. որպես այն՝ զի անծին է Հայրն, և զի պարտ է մկրտել և զաղայս, և զի զօրէ մկրտութիւն հերետիկոսաց, և զի փոխանակ շաբաթուց պարտ է սրբել զկիրակէս, և ձև մկրտութեան, և դադարումն օրինաց հրաժարելոյ յարենէ և ի հեղձուցելոյ, այլովքն հանդերձ։

Ողորդ՝ զի աւետարանք և Թուղթք առաքելոց ոչ իսկ և իսկ զկնի համբարձման տեառն և գալստեան Յոգւոյն սրբոյ գրեցան, այլ յետ ոչ սակաւուց ամաց. ապա ի նորաճնեալ եկեղեցւոջ գոյր աւանդութիւն անդիր ի կանոն հաւատոյ և բարոյականին, այսինքն կենդանի բարբառ առաքելոց և աշակերտաց նոցին։ Եւ յայտ իսկ է, զի առաքեալք զամենայն ինչ զոր և խոսեցան ուսեալք ի տեառնէ՝ ոչ գրեցին, այլ բազում ինչ յայնցանէ Թողին աւանդութեամբ առ հաւատացեալս. և ի Յարց անտի ի դիրս անցեալ և ի սովորութիւնս եկեղեցւոյ, հասին այնոքիկ առ մեզ։

Ինգերորդ՝ զի և նոքին իսկ առաքեալք հաստատեն ի դիրս իւրեանց զաւանդութիւնս. քանզի ասէ առաքեալն առ կորնթացիս. (ա. Կոր. ժա. 2.) “Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիս յիշեք, և որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք”։ Եւ ի բանէ ասաի յուցանէ Պօղոս առաքեալ, զի բազում ինչ ի վարդապետութիւն և յօրինադրութիւն եկեղեցւոյ պատշաճեալք ի բանից Աստուծոյ առաքեալց, և յերկար ժամանակաւ պահեալ ի յիշատակ հաւատացելոց և ի սովորութիւնս եկեղեցեաց, յետոյ ուրեմն արկան ընդ գրով։

Յաւելու նոյն առաքեալ. (ա Տիմ. ժա. 34.) "Նայց զայլ ինչ, յորժամ եկից, յայնժամ պատուիրեցից,,: Եւ դարձեալ. (բ. Տիմ. բ. 14.) "Զայսու՛հետեւ, եղբարք, հաստատուն կացէք, պինդ կալարո՛ւք զաւանդութիւնն՝ զորս ուսարուք եթէ բանիւ և եթէ թղթով մերով,,: Եւ դարձեալ. (բ. Տիմ. գ. 6.) "Պատուիրեմ ձեզ, եղբարք, յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, խոյշել ձեզ յամենայն եղբօրէ՝ որ ատակհական գնայցէ, և ոչ ըստ աւանդութեանն՝ զոր ընկալարուք 'ի մէնջ:

Օնոյն և առաքելապետն պատուիրէ. (բ. Պետ. ա. 15.) "Եւ փութամ Ձեպիմ միշտ զձեզ յորդորել, զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշատակս այսոցիկ:

Եւ առաքեալն Յոհաննէս գրէ. (բ. Կր. 12.) "Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ և դեղով գրել. զի ակն ունիմ լինել ինձէն իսկ գալ, և բերան 'ի բերան խօսել,,:

Եւ առաքեալն Յուդա ասէ. "Նայց դուք, սիրելիք, յիշեցէք զկանխասաց բանս զառաքելոցն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,,: Յայս ամենայն բանից յայտ է, զի առաքեալք բազում ինչ առաւել քան զգրեալսն աւանդեցին ուսմունս հաւատոց և կարգայ աստուածպաշտութեան, որք պահին ցարդ յեկեղեցիս աւանդութեամբ ըստ պատուիրելոց նոցա:

Վեցերորդ՝ զի բաց 'ի տրիդենտեան ժողովոյ, որ բացայայտագոյնս զայսմանէ ետ վճիռ, վաղագոյն յոյժ սահմանեալ էր այն յերկրորդ ժողովն Նիկիոյ, (ա Հմ. է.) որ ասէ. "Ուսեալք յառաքելոց անտի, պինդ ունիմք զաւանդութիւնս՝ զորս ընկալաք. ընդունիմք և դաւանիմք որ ինչ միանգամ կաթողիկէ եկեղեցի 'ի վաղուց ընդունի գրաւոր և անգիր աւանդութեամբ,,:

Օնոյն և Հարք ամենայն եկեղեցեաց Հաստատեն, աւանդապահք և վկայք առաքելական աւանդութեանց:

Ի Հարց Յուսնաց.

Ասեբի (՝ի պմ. եկեղ. գ. 36.) պատմէ, զի սուրբն Իգնատիոս աստուածազգեաց յորդորէր զՀաւատա-

ցեալս “ Պինդ ունել զառաքելոցն աւանդ , զոր և ’ի պետս զգուշութեան գրով Թողուլ հարկ համարեցաւ՝ անձամբ վկայելով ,, ասէ նոյն ինքն Յեսեբի ։ Եւ (’է գլ . Է . 20 .) զնոյն և վասն սրբոյն Պողիկարպոսի , և (’է գլ . Ձ . 39 .) վասն Պապիասայ վկայէ ։

Սուրբն Դիոնեսիոս արիսպագացի (’է ՎԿ . եկեղ . ա . գ .) “ Յառաջինքն այն որ ըստ մեզ քահանայապետութեան առաջնորդք ’ի գերագոյական աստուածպետութենէ առցեալք սուրբ պարգեւօք , զծայրագոյնսն և զգերագոյականս մեզ աւանդեցին , որ գրաւոր և որ անգրաւոր օրինադրութեամբ իւրեանց ,, ։ Նոյն ինքն դարձեալ . (’է Ղէն . պաթրպէ . 232 . 233 .) “ Եւ զայս աւանդութիւն Հնմարիտ կարգաւորութեանս՝ որքան ինչ կատարեմք՝ յաստուածայնոց Հարցն մերոց գրով և առանց գրոյ հաստատեցաւ ’ի մեզ ։ Վասնզի նոքա երանելի Հարքն անմարմնապէս մաքրութեամբ ’ի յերկրի հուպ գոլով հրեշտակաց՝ կարող եղեն զերկնայնոցն կարգաւորութիւն մաքուր մտօք Հանաչել , և ’ի ձեռն միջնորդութեան բանի և գրոյ աշակերտացն իւրեանց աւանդել ։ Եւ զի անկար էր մարմնաւորացս և յաշխարհի վիճակելոցս զվերնականացն գիտութիւն , նոցա նման՝ որք վարուք հպեցան ’ի հրեշտակս իմացականապէս՝ ուսանել , կարևոր համարեցան մարմնաւոր նշանակօք մեզ զնոյն տալ ։ . . Այսպա վայելչապէս դասք սուրբ առաքելոցն . . . ուսուցին Հանաչել զգալեօք պատկերովք զերկնայինսն . . . և զայս գրով և առանց գրոյ եառն մեզ , խորհրդազգացս արարեալ զՀաւատացեալս սրբոյ օրինադրութեանն ,, ։ Այս բան յանուն Դիոնեսիոսի արիսպագացւոյ ածի ’ի վկայութիւն ’ի Ջ . Է . ընդՀանուր ժողովս . և ’ի Դրիգորէ Ա . ’ի Հառն յաղագս Նարիւր ոչխարաց . ’ի Աթանասէ Ա . ’ի ժողովն Հռով մայ . և յԱգաթոնէ ’ի Թղթին առ Կոստանդին կայսր ։

Սուրբն Երանոս յաղագս Հերձուածողաց (Գէդ . Ջ . գլ . Ը .) ասէ . “ Յորժամ ’ի գրոց յանդիմանին , դառնան ’ի չարախօսել զգրոց . . . իսկ յորժամ Հարկեցուցանեմք զնոսա յաւանդութիւն անդր՝ որ յառաքելոց , որ և յաջորդութեամբ երիցանց պահի յեկեղեցիս , ընդդեմ դառնան աւանդութեան . . . . Այսպա յայտ է թէ ոչ գրոց , և ոչ աւանդութեան անսան ,, ։

Լե դարձեալ (՚ի գլ. ՟ը.) "Ալան զի առաքեալքն իբրև՝ ի մեծահարուստ շռեմարանի դանձեցին յեկեղեցւոջ լինելն որ ինչ Հմարտութեանն է, զի որ կամի՝ առցէ անտի զջուրն կենդանի: Ալանզի սա է դուռն կենաց, իսկ այլքն ամենայն գողք են և աւազակք. վասն որոյ պարտ է խոյզել յայնպիսեաց անտի, իսկ որ ինչ եկեղեցւոյ՝ ամենայն փութով պնդութեան ողջագուրել, և քուռն Հարկանել զաւանդից Հմարտութեան:... Ալեկ չէր և գիրս մեզ Թողեալ առաքելոց, ոչ ապաքէն պարտ էր զՀետ երթալ կարգի աւանդութեան, զոր աւանդեցին այնոցիկ՝ որոց յանձն առնէին զեկեղեցիս ,,:

Ալոգինէս (՚ի գլ. ՟ը. Եղբ. Հռոմ.) "Ալկեղեցի յառաքելոց անտի ընկալաւ զայս աւանդութիւն տալոյ և մանկանց զկնիք ,,: Լե՛ի (՚ե ՃաՀ Ցոոոց.) յետ ասելոյ՝ թէ "Յեկեղեցական կարգաւորութիւնս են ինչ ինչ՝ զորս ամենեցուն պարտ է առնել, թէպէտ և ոչ ամենեցուն յայտնի իցեն պատճառքն ,,, յաւելու ածել յօրինակ այլ և այլ անգիր աւանդութիւնս:

Ալեմէս աղեքսանդրացի (առ Լոսեբեայ՚ի պատմ. ՟ը. 11.) "Հարկեցուցին զիս եղբարք՝ ի գրի առնել և աւանդել յետնոց որ ինչ՝ ի բանից աւանդեցին ինձ երիցունք յաջորդք առաքելոց ,,:

Լուսեբի ընդեմ Արկելեայ անկիւրացւոյ յաղագս ուղղափառ վարդապետութեանց ասէ. "Լյօգիկ ոչ միայն յաստուածային գիրս դրօշմեալ, այլ և զբան գիտ Հաստատեալ աւանդութեամբ կաթողիկէ եկեղեցւոյ ծագաց՝ ի ծագս երկրի, որ անգիր աւանդութեամբ Հաստատեալ կնքէ զտուրբ գրոց վկայութիւնս ,,:

Ալուրբն Լթանաս՝ ի սահմանս Ալիկիական ժողովոյն. "Ալեք աւասիկ քաջիկ ցուցանեմք Հարանց՝ ի Հարս աւանդեալ զայս վարդապետութիւն. իսկ դուք, նոր Հրեայք և Կայիափայ աշակերտք, զմո՞ւ՝ ի Հարց ունիք ձերոց բանիցդ վկայս ,,:

Ալուրբն Լարսեղ (յղ. Հոփոյն ոդբոյ. գլ. իէ.) "Ալ ինչ միանգամ յեկեղեցւոջ պահեալ վարդապետութիւնք և քարոզութիւնք, և զի՝ ի գլուխորական ուսմանէ ունիմք, և է զի յառաքելոցն աւանդութենէ խորհրդաբար ընկալեալ. և երկոցունց սոցա նոյն զօրութիւն է առ բարեպաշտութիւն ,,:

Ասկեբերան ՚ի բան առաքելոյն՝ “ Պինդ կալարուք զաւանդութիւնս ,, . (Ը . Յովհ . Ը . 14 .) “ Լսատի ՚ի միտ առ , զի ոչ զամենայն գրով աւետարանեցին առաքեալք , այլ բազում՛ ինչ և անգիր . այսոքիկ և այնոքիկ հաւասարապէս արժանահաւատք . այսր աղագաւ պարտ և արժան է մեզ զաւանդութիւնս եկեղեցւոյ դատել հաւատարիմս . աւանդութիւն է , մի ևս ինչ խնդրիցես աւելի քան զայն ,, :

Սուրբն Կիպրիան . “ Սահմանք մեզ եղան և հիմունք և շինուած հաւատոյ՝ առաքելոյն աւանդութիւնք և գիրք սուրբք ,, :

“ Ոչ է մարթ զամենայն ՚ի գրոց սրբոց ուսանել . այլ ինչ ինչ գրով , և ինչ ինչ աւանդութեամբ ետուն սուրբ առաքեալք ,, :

Սոյն սմին օրինակի և այլ Հարք Հռոմայ , և մանաւանդ Գրիգոր Լստուածաբան , և Կիւրեղ երուսաղէմացի՝ որ ՚ի Կոչումն ընծայութեան Հառէ յաւանդութենէ ևեթ զկարգս եկեղեցւոյ ՚ի պաշտամունս միջոցութեան և այլոց խորհրդոց . յորոց կէսք յաստուածային աւանդութիւնս հային , և կէսք յառաքելականս և յեկեղեցականս :

Ի Հարց Լատինացւոց .

Տերտուղիանոս (յղ· պոաչէ ղԷնոռորէ գլ· Ճ·) “ Օ այցանել և զայլոց ևս կարգաց եթէ օրէնս խնդրիցես , և ոչ մի գտցես ՚ի գրոց սրբոց · այլ յաւանդութենէ այնոքիկ վճռեալ , սովորութեամբ հաստատեալ , և հաւատոլք պահպանին ,, :

Սուրբն Կիպրիանոս և սուրբն Լմբրոսիոս յայլ և այլ Հառս իւրեանց յիշեն տէրունական և առաքելական աւանդութիւնս , որոց չիք ՚ի սուրբ գիրս յիշատակ · որպէս օծանել զերախայս նախ քան զմկրտութիւն , պահել զքառասնորդս , զառաքելական Հանգանակին , այլոյքն Հանդերձ :

Սուրբն Հերոնիմոս (՚ի պրամախօսուԼեանն ընդդէմ լուցիփերեանոց · գլ· Ճ·) “ Լմէ և չէր ՚ի միջի վկայութիւն գրոց սրբոց , բոլոր աշխարհն ՚ի մասինս յայսմիկ միաձայնութիւն լինէր պատուիրան · զի և բազում՛ այլ ինչ

աւանդութեամբ պահեալ յեկեղեցիս՝ հաւատարիմք որպէս օրինք գրաւորականք գտանին։

Սուրբն Գոտանինոս (՚ի ք. գէր. ընդդէմ Դոնատեանց. գլ. ի.) «Այս և սովորութիւն յառաքելական աւանդութենէ համարիմ առ մեզ հասեալ, որպէս և բազում այլ ինչ՝ որ ոչ ՚ի գիրս նոցա և ոչ ՚ի սահմանս ժողովոց գտանին. այլ քանզի պահին յամենայն եկեղեցիս, յառաքելոց անտի հաւատամք աւանդեալ և հրամայեալ»։

Ի Հարց մերազնեայց.

Սուրբ Ղուսաւորիչն (յԱգաթ. 220.) «Ամենայն նահապետացն շատակեաց եղեալ... զի որք ՚ի ծոցն ստացան՝ պատմեցին հարց որդւոց, զի իբրև պատուիրանք զգուշացուցիչք լինիցին»։

«Երեսականքն հարք և մարգարէք աւանդեցին իւրեանց ազգին զհօրհնութիւնն յառաջագոյն» (այսինքն զգալստեանն Քրիստոսի)։

«Ասէ Պօղոսի յուշ արարեալ զաւանդելոցն հրամանս, և ուխտեալ թէ ոչ զանպիտեղի յօգտակարացն հրապարակաւ և առ տնին տալ վկայութիւն»։

Սուրբն Գրիգոր Նարեկացի (՚ի Ներբող առաքելոց.) «Ո՛ աշխարհս ամենայն աշակերտեցին սկզբնաւորեալ յԱրուսաղեմ... վ՚ատենացիս խառն ընդ հիւսիսի և ընդ արևելս՝ յորում առաւել բնակեաց բան նոցա և աւանդութիւն»։

Գրիգոր Մագիստրոս (՚ի Նոաղնս.) «Ո՛ որ աղաչեմ անհակամիտաբար ուղղել զքեզ ՚ի թևակոխութեանց, և պարապել ճշմարտութեան, և զհետ երթալ աւանդութեանց հարցն»։

Մարկաւագ վարդապետ (՚ի Ճառն յանհանապատականեան.) «Ո՛ այսքան և զայսպիսի յեկեղեցւոջ բարեկարգութեան յօրինուածս... որքան ինչ յիշատակ աւանդեցաւ ՚ի տեառնէ քրիստոնէից և յառաքելոց իւրոց»։

Ներսէս Շնորհալի (Նոաղն առ Մելքիսեդեկ.) «Ցայս ճշմարիտ հաւատոյ հիման՝ զոր եդին սուրբ հարքն մեր առաջինք՝ հաստատեցէք զանձինս ձեր. և եթէ այլ ոք

ուսուսցէ ձեզ Հակառակ սրբոց Հարցն աւանդութեանց, Հալածեցէք ՚ի միջայ ձերմէ զայնպիսին ,, :

Մարդիս վարդապետ զբան առաքելոյն " Նա փութաման ձեպիմ միշտ զձեզ յորդորել, զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս առնիցէք զյիշատակս այսոցիկ ,, , այսպէս երկրորդէ . " Նկրկնչիմ ՚ի ձէնջ թէ գուցէ կիսակատար ինացեալ ձեր ՚ի գիտութենէ՝ զբազումս յաւանդելոյն կորուսանիցէք , և գեղեցիկքն յանդունդս մոռացման անկեալ աղաւաղեսցին . նորին աղագաւ փութաման ձեպիմ և այլն :

Ներսէս լամբրոնացի (՚ի ճէն պատարագէ .) " Ոչ ես , այլ աստուածաշունչ գիրք և Հարցն սրբոց աւանդութիւնք գրով առ մեզ Հասեալ ,, :

Ոչ սակս սրոյ յաւելումք ընդ Նեղլարմինեայ , զի որպէս ՚ի միաբան Հաւանութենէ Հարց՝ որ ընկալան զաւանդութիւնս յառնոյն ժամանակի՝ իմաստասիրել է զի են այնոքիկ ընդունելի , նոյնպէս և ՚ի միաբան Համախոհութենէ Հերետիկոսաց՝ որք յառնոյն ժամանակի մերժեցին և մերժեն զաւանդութիւնս՝ ՚ի միտ առնուլ է , զի չեն այնոքիկ մերժելի :

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա . — ե . Գիրք սուրբք բազում ուրեք զաւանդութիւնս ընդ վայր Հարկանեն . որպէս Պրիստոս (Ա՛ռ . ԺԵ . 3 .) յանդիմանէ զփարիսեցիս , զի անցանէին զպատուիրանաւն Աստուծոյ վասն մարդկան աւանդութեանց : Նա առաքեալն առ գաղատացիս ասէ (Ա . 8 .) " Ա՛յլ թէ մեք , կամ Հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ , նզովեալ լիցի ,, : Նա յայտնագոյն ևս առ կողոսացիս . (Բ . 8 .) " Օ գոյշ լերուք , մի ոք իցէ՝ որ զձեզ կողոպտիցէ Հարտասմտութեամբ և անոտի խաբէութեամբ որք ըստ մարդկան աւանդութեան ,, :

Ե . Նա գարձեալ առ Տիմոթէոս . (Բ . Կղ . Գ . 15 .) " Ա՛մենայն գիրք աստուածաշունչք օգտակարք ՚ի վարդապետութիւն են և յանդիմանութիւն և յուղղութիւն և ՚ի խրատ արդարութեան , զի կատարեալ իցէ

մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հասատեալ»։ Արդ եթէ սուրբ գիրք բաւական են՝ ի յարդարել զմարդ յամենայն գործս բարութեան կատարեալ, աւելորդ է ամենայն աւանդութիւն։ Արդեօք զի եթէ չիցեն իսկ գրեալ ամենայն որ ինչ Քրիստոսի գործք և բանք, այլ որ ինչ՝ ի սուրբ գիրս բովանդակիւին՝ բաւականք են՝ ի հաւատս և առ՝ ի փրկութիւն, ըստ աւետարանչին բանի. (Յոհ. ե. 31.) «Այլ այս այնչափ ինչ գրեցաւ, զի հաւատայցէք եթէ Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ, և զի հաւատալովք և զկեանս յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա»։

գ. — ե. Սուրբ գիրք զաւանդութիւնս հնարեալս՝ ի մարդկանէ ընդ վայր Տարկանեն. որպէս՝ ի նմին իսկ բանի յայտ առնէ Քրիստոս՝ «Ընկալարուք զպատուիրաս նաւն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեան»։ Այլ յանդիմանէ զնանրահաւատ սովորութիւնս փարիսեցւոց հնարեալս՝ ի Տարց իւրեանց, մանաւանդ յետ գերութեան Բաբելոնի, զորս առ Ձիմարիտ աւանդութիւնս ունէին ընդունելիս, որպէս այն՝ զոր առաքեալն ասէ. (Գաղատ. ա. 14.) «Աւելս նախանձախնդիր էի իմոց Հայրենի աւանդութեանցն»։

դ. Եթէ իմաստ բանից առաքելոյն էր աւելորդ Համարել զամենայն բաց՝ ի գրոցն՝ զորոց խօսի, աւելորդ Համարելի էր և զնոր Կտակարանս իսկ, զի անդ առաքեալն զՆոյ և եթե Կտակարանաց խօսի՝ որ միայն ճանօթք էին Տիմոթեայ։ Այսպա ուրեմն այլ ինչ ասէ առաքեալն, այսինքն զի պարտ է առն վարդապետի և պաշտօնեի աւետարանին ոչ միայն քաջալսումն գոլ յաստուածային գիրս, այլ և յար՝ ի նոսա դեգերիլ, և մի յօտար գրոց խնդրել զշահեկանութիւնս՝ զոր Աստուած ինքնագիր բանիւքն կամեցաւ ընծրհել մարդկան։ Այլ իմաստք մերժելոյ՝ ի բաց զաւանդութիւնս օտար է՝ ի բանից աստի. զի ոչ ասէ առաքեալն թէ սուրբ գիրք բաւականք են, այլ զի առանց գրոց և արտաքոյ նոցին չիք գտանել զՁիմարիտ վարդապետութիւնն, որումմ ոչ զկետ գայ՝ թէ նոքօք միայն մարթի իցէ Ճանաչել զամենայն Ձիմարտութիւնս։ Այս դարձեալ՝ այլ են գիտելիք իւրաքանչիւր ումեք հաւատացելոյ առ՝ ի գնալ ըստ հաւատոյ, առ որ բաւական են սուրբ գիրք,

և այլ գիտելիք ընդհանրական եկեղեցւոյ առ ընտրելոյ զՀնչմարտութիւն ի ստութենէ և զուղիղն ի խոտորնակ. առ որ բազում նպաստս տան Հնչմարիտ աւանդութիւնք. զի վաւերականութիւն աստուածային գրոց և ողջամիտ իմաստք նոցին, որպէս ասացաք, ոչ հաստատին առանց աւանդութեան: Այլ ըստ այսմ զանազանութեան է իմանալ և զբան աւետարանչին՝ "Այլ այս այնչափ ինչ գրեցաւ" և այլն. զի անկ է բովանդակել զկարևորս առ՝ի փրկութիւն հաւատացելոյ, և անկ զանգնային Հնչմարտութիւնս հաւատոյ կարևորս կանոնիկ եկեղեցւոյ:

Բ. — ե. Ո կանոնական գիրս և զաստուածաշունչ գոլ նոցա ամենեքեան ընդունին, և չեն պէտք առ այս աւանդութեան: բ. Այլ եթէ աստուածաշունչք են, ապա զամենայն հաւատոյս պարտին բովանդակել, զի գործք աստուածայինք անթերի են. և չիք իսկ պատճառք, վասն որոյ Աստուած ըստ մասին և եթէ՝ի գիրս ծանուսցէ զկամն իւր, որ ոչ իմաստուն օրէնսգիրն է: Այլ ոչ արժանահաւատ ինչ է՝ զի այնչափ ինչ դուշնաքեայք՝ի գիրս սուրբս գտանիցին, որպէս փիլոն Պոզոսի և մատեանք, փոքրել զՀերս, համբոյր սրբութեան, և բիւր այլ այսպիսի իրք, և չգտանիցին կարևորքն ամենայն՝ի հաւատս: գ. Պարձեալ և նոքին իսկ աստուածաբանք Հակառակամարտք զայսմանէ ընդ միմեանս գտանին. զի կէսք զկնուք տղայոց, զպաշտօն սրբոց և զնշխարաց նոցա և զպատկերաց և այլն, յաւանդութենէ եթէ ասեն գիտել, իսկ այլք և՝ի սուրբ գրոց ցուցանեն զայնս: Այսպա չեն ընդունելի այլ աւանդութիւնք բայ՝ի յարնչականաց և որք օգնեն՝ի պարզել զգիրս. վասն որոյ և տրիդենտեանն ՀՀիռ՝ որ զուղղափառ վարդապետութիւն՝ի սուրբ գիրս և յանգիր աւանդութիւնս սահմանէ, ոչ բաժանաբար զայն իմանայ՝ իբր թէ կէսք՝ի Հնչմարտութեանց հաւատոյ՝ի գիրս և այլք յաւանդութիւնս բովանդակիցին, այլ զի և՝ի գիրս և յաւանդութիւնս ամենայն Հնչմարտութիւնք բովանդակին:

պ. — ե. Ո կանոնական գիրս և զապգեցութիւն Հոգւոյն՝ի նոսա ոչ ամենեքեան ընդունին, զի ահա նորաստնդք զկէս՝ի նոցանէ մերժեն՝ի բայ. և պատ-

Ճառք իսկ մերժելոյ նոցա զայնս , զի չընդունին զաւանդութիւնս : Այսուհանդերձ եւ չիք գտանել՝ ի բազում այնչափ աղանդս նոցա՝ երկուս հաեթ , որ միաբանիցին՝ ի կանոն սուրբ գրոց : ԺԲ . Ընթերի են գործք Աստուծոյ ըստ նպատակին՝ յոր սահմանեալն են , և ոչ ըստ մտաց մարդկան : Այսպէս թէ ոչ , զմին ի՝ ի գրոց՝ որ յայլ և այլ ժամանակս են գրեալ՝ անկատարս պարտ էր ասել նախ քան զլրումն Թուոց նոցին , զոր ոչ ոք ասէ . քանզի աստուածեան իսկ կատարեալք էին ըստ այնմ՝ յոր սահմանեալն էին , և բովանդակէին որ ինչ Աստուած ըստ այնմ սահմանի կամեցաւ աղգել սրբազան մատենագրաց : Այսուհանդերձ եւ ոչ զբոլորն՝ ի միասին թերի օրէն է ասել այնու զի ոչ բովանդակեն զամենայն իրս հաւատոյ : Ընթէ չէր Աստուծոյ կացուցեալ անսխալ և հաւատալրիմ աւանդապահ յայտնութեանց իւրոց զեկեղեցի , մարթէր թերի զսուրբ գիրս համարել . այլ վարդապետ անսխալ հաւատոյ և վարուց կացոյց զեկեղեցի , զի՝ ի միտ առցեն հաւատացեալք՝ ի ձեռն նորա գիտել զաւգտաւէտ վարդապետութիւն , որ թէպէտ և Աստուծոյ յայտնեալ՝ այլ ոչ բովանդակի՝ ի սուրբ գիրս : Այսպէս թէ ոչ , մարթ էր և զայն առարկել թէ ընդէր Աստուծոյ անդամին՝ ի սկզբանէ՝ ի միում մատենի զամենայն Ճշմարտութիւնս չէաց յայտնեալ : Այսու՝ ի յայտ գայ անտեղութիւն նմանութեանն Աստուծոյ ընդ խնամատուն օրէնսդրի : Ընթէ Աստուած զգուշնաքեայս կամեցաւ աղգել՝ ի սուրբ գիրս , վասնէրն նմա է գիտելի . տգիտութիւն մարդկան ոչ անարժանս զայնոսիկ կարէ կացուցանել Աստուծոյ :

Գ . Այսպէսն Աստուածաբանք ումանք հինին ինչ զառարկելոց Ճշմարտութեանցն ասացին գտանել՝ ի սուրբ գիրս , այլ ոչ եթէ հաւաստիս . որով բառնի կարծեցեալն՝ ի նոսա հակասութիւն : Ասութերականք իսկ փորձեցան՝ ի ձեռն սուրբ գրոց հաեթ յաղթահարել զկրկնակնութ աղանդաւորս , այլ՝ ի զուր : Այս թէ՛ զայս՝ զկանոնականութիւն և զաստուածաշունչութիւն մեն միոյ՝ ի գրոց ոչ երբեք մարթ է ցուցանել՝ ի սուրբ գրոց : Այսակ իմաստ արիդենտեան վճռոյն յայտնապէս՝ ի վեր երևի՝ ի զանազանելոց Հարց ժողովոյն զվարդապետութիւն՝ որ՝ ի սուրբ գիրս բովանդակի , յայտնանէ որ յանգիր աւանդութիւնս :

Գ. Նմանութիւն է անգիր աւանդութեանց ընդ այնչափ դարս մնալ անեղծ և անայլայլակ. և ոչ մարթի է հաւատալ, զի ի խաւարի այնպիսի տգիտութեան և յոռութեան միջին դարու՝ չիցեն այլայլեալ աւանդութիւնք. ապա ասելի է, զի կամ չիցեն լեալ աւանդութիւնք առաքելականք, և կամ զի խաթարեալք իցեն, և ի սուրբ գիրս ևեթ է գտանել քրիստոնէական հաւատս:

Պ. Նանդութիւնք աստուածայինք ոչ իբրև զմարդկայինս են, որք բերան ի բերանոյ ևեթ հասանեն առ մեզ. այլ Նստուած որպէս սուրբ գրոց աւանդասահ կացոյց զեկեղեցի, նոյնպէս և անգիր աւանդութեանց: Նւ որպէս օգնականութեամբն Նստուծոյ անեղծ ի նմա և անայլայլակ պահին գիրք սուրբք, նոյնպէս և աւանդութիւնք. մանաւանդ զի սոքա ըստ առաւելագոյն մասին գործնականք, ի հանապազօր սովորութենէ դիւրագոյնք ևս պահին: Նւ տգիտութեան և յոռութեան մարթէր այլայլել զայս, եթէ ոչ ընդ վարդապետութիւնս եկեղեցւոյ էին կցորդեալ: Նյսր աղագաւ տեսանեմք զի յայլ և այլ եկեղեցիս զանազանեալս ի միմեանց աղգաւ և տեղեաւ, բազում աւանդութիւնք պահեալ են անայլայլակ. վասն որոյ անտեղի է զհետ բերել՝ զի կամ չիցեն լեալ աւանդութիւնք և կամ խաթարեալք իցեն:

Դ. — Ա. Նխալականք էին Նարք և ոչ բաւականապէս քննաբանք. յաւուրց անտի նոցա սկսան սպրդել նորաձևութիւնք՝ որ ապա աճեցին և բազմացան, որպէս կարգք միայնակեցաց, պաշտօն պատկերաց և այլն:

Բ. Դարձեալ և չէ մարթի հաստատել զաւանդութիւնս առանց ընդ վայր հարկանելոյ զսուրբ գիրս. ապա պարտ է սուրբ գրոց ևեթ պատկառ կալ, և եթէ իցէ ինչ ի նոսա դժուարիմաց՝ ըստ պատշաճի և ըստ համեմատութեան հաւատոյ իմանալ զայն:

Պ. — Ա. Պարտ է զանազանել զիւրաքանչիւրսն ի Նարոյ զբանս ի միաբանութենէ նոցա, և զմիաբանութիւն նոցա զարձեալ յեկեղեցւոյ: Նյթէ չէին իսկ Նարք բաւականապէս քննաբանք, և մէն մի ի նոցանէ սխալական էր, սակայն ոչ ինչ օգնէր այս նորաձևութիւնց, զի աւանդութիւնք ոչ ի մէն մի ի նոցանէ յենուն, և ոչ

'ի միաբանութիւն ևեթ նոցին ուրոյն , այլ 'ի միասին ընդ եկեղեցւոյ :

Յաւուրց անտի Հարց սպրդեալքն , ըստ մտաց նոր բաղանդից նորաձևութիւնք , միշտ իսկ էին յեկեղեցւոջ , և ոչ նոր ինչ յայնժամ մուծեալ : Այսպիսակեացք զԽրիստոս Քրիստոսի կամ զԽոր Հուրդս յանձն առեալք , որոց և Նազայեանք 'ի նորաղանդից սկսան հետևել , և պատկերայց յարգութիւն , և սոցին նման սովորութիւնք , ոչ ինչ օտար կամ հակառակ են սուրբ գրոց , որպես յիւրում տեղւոջ տեսցի :

Բ . Յընդունելութենէ աւանդութեանց ոչ զհետ գայ ընդ վայր հարկանել զսուրբ գիրս , այլ հաւատալ բազատիս զերկաքանչիւր առնել , զի երկոքին և աստուածային յայտնութիւնք են , մին գրեալ և միւսն անգիր : Իսկ զդժուարիմաց բանս սուրբ գրոց իմանալ ըստ հաւատոյ մարթ իսկ է , եթէ հաւատք յանսխալ վարդապետութեան հաստատեալ՝ անյեղլի հանէն որպես 'ի կաթողիկէ եկեղեցւոջ . իսկ առ նորաղանդս ոչ այսպէս , զի 'ի քննութիւն և 'ի հետազօտութիւն իւրաքանչիւր ուրուք հաստատեալ՝ յար 'ի փոփոխութեան կան :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս առաքելական վարդապետական առաքինութեանց :

Քրիստոս աստուածայնոց Հնմարտութեանցն , զորս եբեր 'ի յերկիր , կացոյց զեկեղեցի վարդապետ անսխալ առ ամենայն ազինս և յամենայն ժամանակի : Եւ սա յորմէ հետէ սկսաւ վարել զպաշտօնն զայն ընկալեալ 'ի Քրիստոսէ , այսինքն յօրէ իջման Հոգւոյն սրբոյ 'ի վերայ առաքելոցն , ոչ երբէք դադարեաց 'ի վարելոյ զայն , այլ վարէ յարդ և վարեսցէ մինչև 'ի կատարած աշխարհի : Սկսաւ քարոզութեամբ դարձուցանել զազգս 'ի հաւատս , և զհաւատացեալսն ուսուցանել . նա եցոյց զդիրս՝ զորս կանոնականս անուանեմք , նա զվարդապետական իմաստս նոցին յուցանէ և սահ-

մանէ. վասն որոյ զԿնոջ սուրբք զամենայն զօրութիւն իւրեանց առ Ն՚ն ունին յեկեղեցւոյ, և ինքն է մերձաւոր կանոն հաւատոց և գործոց մերոց։ Օնորայն որ ի սկզբանէ և այսր անընդհատ վարդապետութիւն պարտ է մեզ ունել, և զամենայն հերետիկոսաց և զանդաւորաց վարդապետութիւնս ընդ այնմ համեմատել՝ առ ի ձանաչելոյ զմոլորութիւնս նոցա։ Այս եթէ ուսուցանէ ինչ՝ որ ի գիրս սուրբս ոչ բովանդակին, յայտնութենէ զայն խնդրելի է։ Ապացի յամենայն ձառնակ. զի եթէ խոստացաւ Քրիստոս լինել ընդ նմա մինչև ի կատարած աշխարհի, և առաքել առ նա ըզսուրբ Հոգին Աշմարտութեան՝ որ ընդ նմա բնակեսցէ ի յաւիտեան, անպարշտութիւն է ամիտել յերիս և ի չորս դարս եթէ զնորին անսխալ վարդապետութիւն։ Եթէ յայնժամ անսխալ էր և հաւատարիմ աւանդապահ և օրինաւոր Թարգման աստուածային յայտնութեանց, նոյն և այժմ է. զի խոստումն Քրիստոսի ոչ միայն չսահմանէ ժամանակ, այլ և մերժէ ի բաց զամենայն սահման ժամանակի։ Ապա կամ ոչ երբեք և կամ միշտ եկեղեցի ունի զիշխանութիւնս զայս։

Սահմանք տիեզերական ժողովոց են սահմանք նորին եկեղեցւոյ, զոր ժողովքն այնոքիկ յանդիման առնեն. վասն որոյ վճիռք նոցա հաստատեալք ի գլխոյն եկեղեցւոյ՝ են Աշմարտութիւնք հաւատոյ, որով և աւանդութիւնք ընդհանուր եկեղեցւոյ։ Ընդ ժողովք սիեզերականք առաւել քան զվկայութիւնս սուրբ գրոց ի դէմ ածէին հերետիկոսաց զաւանդութիւնս. զի եթէ զայնոցիկ իմաստս կամակորելով խեսսափէին, ի սոցունց չկարէին խոյս տալ։

Օնոյն է ասել և զվարդապետական վճռոց Հռովմայ Հայրապետին, յորս երաշխաւորէ նա աւանդութեան Հռովմէական եկեղեցւոյ, նա մանաւանդ կաթողիկէ եկեղեցւոյ, որոյ գլխաւոր մասն է Հռովմէականն։

Իսկ Թեմական կամ գաւառական և կամ ազգային ժողովոց զօրաւոր է վկայութիւն. զի բազումք ի նոցանէ չերբեցին զմոլորութիւնս առանին ի վեր երևեալս, և վճիռք նոցա վկայք են աւանդութեանց եկեղեցեացն այնոցիկ։ Այս եթէ վճիռքն այնոքիկ և ի գլխոյն եկեղեցւոյ իցեն հաստատեալ, անժխտելի ունին զօրութիւն

Ա.յլ որպէս առտուաճաբանք առհասարակ ազգ առնեն, պարտ է զանազանել զյորդորականն կամ զխրատականս՝ ի վճռոց անտի սահմանելոց. որպէս և զվարդապետութիւն ումանց կամ զբազմաց իսկ ի Հայոց ժողովոյն՝ ի վարդապետութենէ որ ամենեցուն միաբան հաւանութեամբ են սահմանեալ։

Ա կայաբանութիւնք ևս հզօր հաւաստիք են աւանդութեանց. քանզի վկայք զվարդապետութիւն եկեղեցւոյ՝ ի հարցափորձս դատաւորաց՝ ի յայտ ածէն, և անտի՝ ի միտ առնումք որպիսի ինչ հրահանգս՝ ի հովուաց իւրեանց ընդունէին՝ ի վերայ խորին խորհրդոց հաւատոյս մերոյ։ Ա.րուէ աստուածութիւն Ա.բրիատոսի, մարդեղութիւն Բանին, խորհուրդ սրբոյ Ա.րրորդութեան, և բազում այլ ևս սոցին սակի վարդապետութիւնք հզօրեզակս ընդդէմ աղանդաւորաց ցուցանեն զՀնամարտութիւն։ Ա.նաւանդ զի վկայաբանութիւնքն այնոքիկ ընթեռնուին հրապարակաւ յեկեղեցւոջ լու՝ ի լու եպիսկոպոսաց։

Ա.կեղեցական գրեանք և արարողութիւնք, յորս ամենայն եկեղեցիք միաբանին, յանդիման առնեն զվկայութիւն կաթողիկէ եկեղեցւոյ, և ցուցանեն մեզ զհաւատս եպիսկոպոսաց քահանայից և զհաւատացեալոց առհասարակ։ Յայնցանէ ուսանիմք զնախնի եկեղեցւոյ վարդապետութիւն, զոր՝ ի յեթին ժամանակս յերկեսաս արկին ազգ ազգ աղանդաւորաց, զիսկապէս նեբկայութենէն Ա.բրիատոսի՝ ի սուրբ խորհրդեան և զտարրապէս փոխարկութենէ հացին և գինւոյ՝ ի մարմին և յարիւն Ա.բրիատոսի, զխորհրդոյ մարդեղութեան և զսրբոյ Ա.րրորդութեան, զսկզբնական մեղացն և զնորին սերնդենէ՝ ի մեզ, զգլխաւորութենէ Հռովմայ հայրապետին վանն յաջորդութեան առաքելապետին, զբախտութենէ սրբոց և զյարգութենէ նշխարացն նոցին, այլովքն հանդերձ։

Նակ առանձին եկեղեցեաց արարողութիւնք և զբաւեանք այնչափ առաւել ունին զօրութիւն, որչափ հնագոյնք են և երևելագունից եկեղեցեաց աւանդք անեղծ պահեալ և անձեռնմխելք՝ ի հերետիկոսաց։

Յայս հայի և մատակարարութիւն խորհրդոց, յորմէ՝ ի միտ առնումք զթիւ նոցա և զգօրութիւն. քանզի

'ի հանապազորդ սովորութիւնս ոչ է մարթի փոփոխութեան 'ի ներքս սպրդել, այլ անընդհատ միանչեւնաւորութեամբ գործոց 'ի գործս անցանեն. որով յանդիմանի նորաղանդիցն նորաձեւութիւն, որ առաջինք եղեն 'ի բռնաբարել զիւիւ նոցա և զզօրութիւն։

Օնոյն է իմանալ և զհոգեւոր տօնախմբութեանդ, զնկմանդ և զպահոց՝ որ յանշիշատակ ժամանակաց սովորեցին յեկեղեցւոջ 'ի պատիւ Տիրամօրն և սրբոց առաքելոց և մարտիրոսաց։

Ա կայութիւնք ևս սրբոց Հարց և վարդապետաց եկեղեցւոյ են հաւաստիք աւանդութեանց. նախ՝ եթէ յայտնապէս վկայեն զիմեքէ. երկրորդ՝ եթէ հաստատեն զայն իբր հաւաստի և ընկալեալ յեկեղեցւոյ. երրորդ՝ եթէ ընդդէմ դառնան նորաձեւութեան իմք, հերքելով զայն իբր մոլորութիւն հակառակ վարդապետութեան եկեղեցւոյ. չորրորդ՝ եթէ զօրութեան մեծ վարդապետութեան իրիք մերժեն իբրև հերետիկոս. հինգերորդ՝ եթէ յոգունք 'ի Հարց ժամանակակիցք միաբանին զիմեքէ, և հաստատէ զայն եկեղեցի։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Որ իւիչ 'ի հին արձանագրութիւնս, 'ի նկատս և 'ի քանդակս առաչնոց դարուց պահեալ առանդուրիւնք։

Ի հին արձանագրութիւնս յայտնապէս է տեսանել, զի նախնի հաւատացեալք զվարդապետութիւնս կրօնից իւրեանց 'ի նոսա աւանդէին. և գլխաւորք 'ի վարդապետութեանց, որոց հակառակինն նորաղանդք, պահին անդանօր։

Ընդդէմ կրկնակնութ աղանդաւորաց, որք զմկրտութիւն տղայոց անզօր և առ ոչ ինչ համարին, տղայք դեռաճիւք յարձանագրութիւնս կոչին ՅԱՊՂԱՊԱՒՆԿ 'ի հապա և հապագեալք. որպիսի է արձանագրութիւնն՝ զոր ածէ Ա լիկատր յիմաստասիրական Ձառին, յորում Ա՛ռեկ՝ դեռ ևս իննամեայ՝ հապագեալ կոչի. և որպէս այն զոր Պողիկարպ 'ի տեսութիւնս իւր 'ի վերայ ստո-

բերկրեաց դամբարանաց ածէ, ուր Վիկտոր ոմն մանկիկ եռամեայ՝ կոչի Նորաչնոյ։ Որպէս և այլ բազում ուրեք։

Այս ընդդէմ նորադանդից, որք զնորհուրդ դրոշմին նոյն ընդ մկրտութեան հաստարին, արձանագրութիւնք բազումք զհակառակն վկայեն։ Վասնզի Կրօտեր՝ ի գանձարանին հին արձանագրութեանց, ածէ զՊիկեն տեայ գտարկի վաղ իսկ մկրտելոց զյիշատակարան ընդունելոյ և զդրոշմ՝ ի Լիբերեայ, հանդերձ Թուականաւն։

Պատ սմին օրինակի գտան և այլ արձանագրութիւնք՝ ի տարերկրեայ դամբարանս Հռովմայ և այլուր, որք զհակապէս ներկայութիւնն Քրիստոսի՝ ի տուրբ խորհրդեան, զբարեխօսութիւն սրբոց, զնպաստ կենդանեայ վասն ննջեցելոց, և բազում ինչ այլ՝ ի մասանց հաւատոյ աւանդեն։ Օրինակ իմն՝ Քրիստոս նշանակեալ՝ ի ձև ձկան*, եղջերուի առ աղբեր, հովուի ոչխար ըստ անձին, աղաւնոյ, և հելլէն տառիցս Α և Ω։ Այս դարձեալ զյարգութիւն պատկերաց յայտնապէս տեսանել է անդ յաստուածընկալ նշանս և՝ ի նկարակերտ կերպարանս Տիրամօրն և առաքելոց և մարտիրոսաց, որ կան անդ՝ ի վերայ սրբոց սեղանոց. դարձեալ՝ և զգլխաւորութիւն առաքելապետին՝ որ և քան զՊօղոս՝ ի վերոյ զկայ առեալ կայ անդ, ընդդէմ մնջորութեան՝ որ երկդիմա կացուցանէ զեկեղեցի. դարձեալ և զանսխալութիւն սրբոց եկեղեցւոյ, որ՝ ի տիպ նաւակի նկարեալ կայ՝ զՅովին սուրբ ունելով զեկավար՝ ի խելս։ Այս դարձեալ՝ ի տարերկրեայ մատրունս անդ և յեկեղեցիս է տեսանել զզանազանութիւն եկեղեցականաց՝ ի ժողովրդենէ, յայլ և այլ կայից անտի վասն երկաքանչիւրոցն սահմանելոց. և դարձեալ՝ երկուս և երիս սեղանս՝ ի միում ևեթ մատրան, զնշխարս վկայից՝ ի վերայ և՝ ի ներքոյ սեղանոց զետեղեալ, և այս և այնոսիկ և սպասս սրբոց պատարագին, և այլ ևս սոցին սակի ապացոյցս աւանդութեանց՝ որ համարին՝ ի նորա-

* Քանզի տառք յունական բառիս Ἰχθὺς, որ նշանակէ ձուկն, են սկզբնատառք բառիցս՝ ի յոյնն՝ Յիսուս Քրիստոս Աստուծոյ որդի փրկիչ. և զի դարձեալ ձուկնն ջրով կեայ, և հաւատացեալն մկրտութեամբ։

զանդից նորաձևութիւնք ՚ի հռովմէական եկեղեցւոյ մուծեալք ՚ի յետին ժամանակս ։

Նոյնպէս և ՚ի գրանոց իսկ և ՚ի գրոչմածաց ՚ի յայտ գան չհմարտութիւնք , զորս մերժեն նորագանդք , որ- պէս երկոցունց Ա՛ակաբայեցւոց գրոցն իրք ՚ի գրան ար- քայիցն Ն՛որւոց ։ Ն՛ւ ՚ի ստուգագոյն տեղեկութիւն այսոցիկ՝ շատ է ՚ի մատեանս հնագիտացն դեգերել , յորս հռչակաւորք են Պ՛ոզի , Ն՛ըննկի , Պ՛ոթթաւրի , Ա՛իկտոր , Լ՛ուբի , Ա՛աֆկի , Պ՛ոլտկոթի , որք զատո- րերկրեայ դամբարանաց նախնի գարուց ներհուն հըմ- տութեամբ Ճառեն ։

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԿՐՕՆԻՑ

Հինն կրօնից են հաւատք խօսելոյ Աստուծոյ առ մարդիկ՝ ի ձեռն նախահարտեղծին և նահապետաց, ի ձեռն Մովսեսի և մարգարէից, և ապա Քրիստոսիւ, որպէս առաքեալն ասէ. (Հբր. ա. 1.) "Բազում մասամբք և բազում օրինակօք խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք. ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն ,,: Աւրբ գիրք և հաւատք աւետեան ժամանակաց ուսուցանեն, զի Աստուած ինքնին յայտնեաց մարդկան զկարևոր մասունս կրօնից. և տեսանեմք իսկ՝ զի յայտնութեանցն այնոցիկ նշխարք, թէ և այլայլեալք, սակայն գտանին յաւանդութիւնս ամենայն ազգաց:

Յերիս գլուխս ապա խօսեցուք զայսմանէ. նախ՝ զի կարելի էր Աստուծոյ յայտնել մարդկան զկարևորս առ ի փրկութիւն. երկրորդ՝ զի կարևորք էին մարդկան յայտնութիւնք աստուածայինք. և երրորդ՝ յաղագս նշանաց աստուածային յայտնութեան:

ԳԼՈՒԽ Ա.

ՋԻ ԿԱՐԵԼԻ ԷՐ ԱՍՏՈՒԾՈՑ ՅԱՅՏՆԵԼ ՄԱՐԴԿԱՆ ՋԿԱՐԵՒՈՐՍ ԱՌ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ

Ճշմարտութիւնս այս, զորմէ նորաղանդք այնչափ խնդիրս յուզեն հակառակ, ի վեց հազար ամաց հետէ սահմանեալ է: Գիրք սուրբք, զորոց վաւերականութիւն ոչ է մարթ երկբայս արկանել առանց խախտե-

լոյ զՀիմունս պատմական Հնմարտութեանց, վկայեն այս-
միկ. վկայեն Հաւատքնահապետացն և Հրէից և քրիստո-
նէից. վկայեն և Հաւատք ազգացն և ազանց, և և հեթա-
նոսացն, որք և՛ ի մտաւոր կրօնս իւրեանց պահեն զՀաւաս-
տիս աստուածային յայտնութեան: Եւ զինչ գժուա-
րութիւն՝ ի միջի կայցէ յայտնելոյ Աստուծոյ առ մարդիկ գերբնական օրինօք: Մանաւանդ առ՝ ի չկարելոյն Աս-
տուծոյ. այլ որպէս չիցէ նմա կարելի այն՝ զոր ինքն ետ մարդոյ, կարել յայտնել այլոց զիմաս իւր և զկամս: Մանաւանդ զի Հակառակ իցէ այն իմաստութեանն Աստուծոյ՝ որ բնական և ընդՀանուր օրինօք ուղղէ զաշխարհ: Այլ որպէս կարիցէ ոք ցուցանել զի չիցէ արժան իմաստութեանն Աստուծոյ ընտրել մարդկան առաւել քան զոր պարտի, կամ չկարդել զնա՛ ի գերբնական ինչ վախճան՝ տալով նմա և զպիտոյս առ այն: Որպէս կարիցէ ոք ցուցանել թէ իցէ Հակառակ իմաստութեանն Աստուծոյ ստեղծանել զմարդ առ՝ ի կեալ ընդ իւր յաւիտեան, և օրէնս յատուկս սահմանել նմա առ այն. և ընդդէր չիցէ արժան իմաստութեանն Աստուծոյ սահմանել առանձին օրէնս բանաւոր արարածոյ ընդ արարչին իւրում կցորդութեան: Այլ և չէ իսկ անարժան խնամել Աստուծոյ զմարդիկ՝ զոր՝ ի պատկեր իւր արար. չէ և չէ իսկ անարժան իմաստութեան նորա, և ոչ բարութեան, կարգել զնա յերանաւէտ կեանս՝ որում չէր նմա օրէն ակն ունել բնականապէս, և յայտնել նմա Հնմարտութիւնս՝ պատկանաւորս առ այն՝ գերբնականս: Այսպա ուրեմն ոչ է անկարելի յայտնութիւն, նըկատեալ առ՝ ի Աստուծոյ:

Այլ անկարելի, նկատեալ և առ՝ ի մարդկանէ. զի մարդ առ՝ ի Հնազանդութիւն աստուածադիր կարգաց է ստեղծեալ. և անմարթ իսկ էր նմա գիտել իւրովի զգերբնական վախճան իւր՝ յոր կարգեալն է, և ոչ կատարել զպարտս՝ զոր գնեն նմա օրէնք բնականք առ Աստուած և առ ընկերս իւր: Այսպա աստուածային յայտնութիւն ոչ միայն չէ Հակառակ, այլ և պատշաճ է մարդկային բնութեան: Եւ չէ մարթ ասել՝ թէ անկարելի իցէ մարդոյ՝ ի գերբնական կարգ՝ ի վեր ելանել այնու իսկ՝ զի բնական զօրութեամբ չկարէ Հասանել յայն. ապաքէն չկարէ առանց նպաստից աստուա-

ծային յայտնութեան. այլ սա հնարաւոր առնէ մարդոյ որ ինչ անհնարինն է բնութեան նորա, ընդհակառակ զհնարս կարեւորս առ այն:

Ոչ անկարելի և ըստ ճշմարտութեանցն՝ զորս յայտնէ: Լուտուած ամենևին ճշմարիտ արդար և սուրբ, չկարէ ինչ յայտնել՝ բայց որ ինչ ըստ ճշմարտութեան է, որ ինչ ըստ արդարութեան, որ ինչ ըստ սրբութեան, և որ ինչ կարեւոր է մարդոյ և մարդկային ընկերութեան առ'ի հասանել նպատակին՝ յոր կարգեալն է զնա: Ոչ ան որոյ զճշմարտութիւնս յայտնեալս, թէպէտ և կարիցեմք և թէ չկարիցեմք գիտել զայնոսիկ բնականաւս և եթ լուսով բանի, պարտիմք քննել և եթ և ծանուցեալ՝ թէ իցէ՞ն արդարև Լուտուծոյ յայտնեալ: Եւ ծանուցեալ միանգամ զայս, չենայ մեզ այլ ինչ այնուհետև՝ բայց հպատակել նոցին, զի չկարէ Լուտուած խաբել զոք: Լպա ուրեմն աստուածային յայտնութիւն ըստ ամենայն տեսութեանց է կարելի:

ԱՌ ԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ա. Ոկարեմք հասու լինել՝ թէ ո՞րպէս յայտնիցէ ինչ Լուտուած. զի և ոչ վստահ ոք լինել կարասցէ՝ ի բարւո՞յ թէ ի չարէ հոգւոյ ազդիցի ինչ ի նա, կամ թէ երևակայութեան ինչ ցնորք իցեն յայտնութիւնքն կարծեցեալք. քանզի յոգունք գտան պատրեալք ի ցնորից երևակայութեան, և պատրողք ևս բազումք: Ոչ ան որոյ չէ իսկ արժան հաւատալ՝ թէ Լուտուած ի ձե՞ն դիւրապատիր մարդկեղէն մտաց կամիցի յայտնել զճշմարտութիւնս հաւատոյ, զի և ոչ ի դէպ է այս իմաստութեան նորա: Ոչ հոգեբանութիւն ամենայն ազգաց անժխտելի ապացոյց է խաբէութեան մարդկային մտաց ի խորամանկութենէ փա՛ռամոլ մարդկան, որ պատրուակաւ աստուածային յայտնութեան պատրեցին զազգս և զազինս:

պ. Նմանութեամբ ևս թէ չկարիցեմք հասու լինել՝ թէ ո՞րպէս յայտնիցէ ինչ Լուտուած, ոչ զհետ գայ այսի անհնարութիւն աստուածային յայտնութեան. զի կարէ Լուտուած և ներքին ազդեցութեամբ, և տես-

լեամբք, և զգալի բարբառով, և այլովք ևս բազմապիսի օրինակօք յայտնել ինչ մարդոյ։ Եւ այնպիսի ատոյգ և անվրէպ նշանս ներքինս և արտաքինս ընդ յայտնութիւնս իւր կցորդէ, զի չինայ տեղի երկբայելոյ զայնցանէ՝ ոչ ընդունելեաց զյայտնութիւնն, և ոչ այլոյ։ Օ՛ի և ոչ պարտի ոք հաւատալ վկայելոյ ուրուք յայտնութիւն՛ի տեառնէ ընկալեալ, եթէ չիցեն կցորդ այնոցիկ նշանք արտաքինք անժխտելիք, որպիսիք են հրաշք և մարգարէութիւնք եկեալք՛ի լուսն։ Պաքէն գտանին խաբեալք և խաբեբայք յնորիւք երևակայութեան, այլ առ՛ի չգոյէ հաւաստեացս այսոցիկ՝ զորս պարտ էր նոցա հետազօտել, և որովք աներկբայելի առնել Աստուած զյայտնութիւնս իւր։ Ա՛ան որոյ եթէ ապգք և ազինք՛ի սուտ յայտնութեանց պատրանս զբռտանին ըմբռնեալ, ասեմք նախ՝ զի ապգ և ազինք կարելի ուրեմն համարին զաստուածային յայտնութիւնս, և հակառակորդք ընդդէմ հաստարակաց հաւանութեան մտաց առարկեն. և երկրորդ՝ զի եթէ զհաւաստիս նոցին կամէին հետազօտել, ոչ ըմբռնէին՛ի պատրանս. ուրեմն ոչ՛ի յայտնութեանցն, այլ յիւրեանցն թերութենէ են պատրանքն։

Բ. Ընդէր էր հարկ Աստուծոյ յայտնել մեզ զկորհուրդս այսինքն զՀամարտութիւնս անհասանելիս. և առ ինչ եւս մեզ միտս, քայց զի հաստս լինիցիմք։ Պատճառն զի կարծել, զի Աստուած յայտնեացէ Հմարտութիւնս՝ որոյ չկարէն միտք հաստս լինել։ Եւ զարձեալ հակառակ բանի ըմբռնեն միտք զկորհուրդս, այնու զի հակառակել թուին մտաց։

Գ. Ի զուր էր Աստուծոյ յայտնել մեզ զկորհուրդս, եթէ բնաւին էին անհասանելի. այլ չեն այնպիսի։ Օ՛ի թէպէտ և ներքին զօրութիւն նոցա ծածկի՛ի միջոց, այլ իմաստիցն հաստս լինին միտք, և իմանան զայնս լուսի։ Օրինակ իմն. քաջ իսկ իմանան միտք, զի է մարդ՝ կենդանի՛ի մարմնոյ և՛ի հոգւոյ բանականէ բազկացեալ, թէպէտ և ներքին կցորդութեան նոցա չիցեն հաստս, և ոչ կարիցեն ըմբռնել՝ թէ յերկոցունցն՝ այսինքն՛ի մարմնոյ և՛ի հոգւոյ որպէս մի անձն էանայցէ։ Այս սմին օրինակի իմանան միտք երիս այլ և այլ անձինս՛ի միում աստուածային բնութեան

յայտնեալ Աստուծոյ, կամ զԱնձն մարմին եղեալ, այսինքն որդւոյն Աստուծոյ առեալ զմարդկային բնութիւն՝ ի վերայ աստուածայնոյն, և զայլ ամենայն սոցին սակի խորհուրդս։ Այլ չկարեն ևեթ հասու լինել՝ թէ արդեօք երեք անձինք իսկապէս զանազանեալք՝ ի միմեանց կարիցեն՝ ի միում բնութեան կալ, և կամ արդեօք բնութիւնք երկու՝ ի միում անձին. զնոյն իմա և զայլոց։ Օ՛ի այլ ինչ է հակառակ բանի թուել, և այլ իսկապէս այնպիսիս ըմբռնել մտաց զայնոսիկ։ Առաջինն անդատին յիւրութենէ խորհրդոց աստուածայնոց յառաջ գայ, որ՝ ի վեր են քան զմիտս, վասն որոյ և հակառակել թուին մտաց։ Իսկ երկրորդն անդ ևեթ գտանէ տեղի, ուր միաք իսկապէս ըմբռնեն հակասութիւն. որպէս թէ ոք քառակուսի զբաղորակ ասիցէ, որ չիք ուրեք երբէք յաստուածային խորհուրդս հակասութիւն այսպիսի։

ԳԼՈՒԽ Բ

ՉԻ ԿԱՐԵԻՈՐ ԻՐ ՄԱՐԴԿԱՆ ՑԱՑՏՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ

Որ միանգամ ընդունի զի՝ ի գերբնական վախճան կարգեալ է մարդ Աստուծոյ, ընդունի և զկարևորութիւն աստուածային յայտնութեան։ Այլ ոչ զայսմանէ է մեզ խնդիր աստանօր. և ոչ գիտելոյ թէ, արդեօք կարևոր իցէ աստուածային յայտնութիւն, եթէ սկզբնականն, եթէ մնալսական, և եթէ աւետարանական։ Այլ խնդիրս է զկարևորութենէ աստուածային յայտնութեան ընդհանրապէս ընդդէմ աստուածեան և բանական աղանդաւորաց, որք համարին թէ կարելի մարդ առանց գերբնական նպաստից գիտել զկարևոր պարտս իւր առ Աստուած և առ ընկերս, և սահմանել օրէնս կրօնականս և բարոյականս այնպէս անթերի, որպէս ունիմք արդ ըստ քրիստոնէական ծանօթութեանց։ Արդ մարդոյ, առանց նպաստից աստուածային յայտնութեան, կարելի՞ արդեօք գիտել բաւականապէս զբնական օրէնս. մոլորութիւնք, յորս զա-

ռածաւ իւրովի, ոչ ցուցանիցեն արդեօք զկարևորու-
թիւն աստուածային յայտնութեան. մարթիցի իմաս-
տասիրութեան փարատել զմոլորութիւնն զայնոսիկ.
ահա զայսոսիկ երիս խնդիրս աստանօր հետազօտեմք:

Ա. Զանդաւորք ոչ միայն չցուցանեն, այլև ոչ կա-
րեն ցուցանել, զի լուսով բանին և մարթ իցէ մարդ-
դոյ գիտել զամենայն որ ինչ կարևոր է նմա: Օ՞ի՛ թէ
բաց առեալ զնուազունս ոմանս անտառանոնդս՝ի մանր-
կութենէ, չիք ոք որոյ միտք չիցեն աւելի կամ նուազ
լուսաւորեալ՝ի գիտութենէ աստուածային յայտնու-
թեանց: Ա՛ռ՝ի գիտել թէ ցնորվայր կարեն հասու լի-
նել միտք մարդկային, ոչ է պարտ դիմել ոչ առ նահա-
պետս՝ որոց յայտնեցաւ Աստուած հրաշափառապէս առ
՝ի լուսաւորութիւն ամենայն ազգաց, ոչ առ Հրեայս՝
որ ընդ գալս Հոգետատան ականատեսք եղեն սքանչե-
լեաց ամենազօր ձեռին, և ոչ առ քրիստոնեայս՝ որոց
ծագեաց լոյս աւետարանին, լոյն Ճշմարիտ՝ որ լուսա-
ւորէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ, և ոչ
առ իմաստունս նախնի հեթանոսաց՝ առ որս գոյր գէթ
ազօտ ինչ յիշատակ սկզբնական աւանդութեանց, և
որոց ծանօթ իսկ էին մատեանք մովսիսականք. այլ
ստոյգ կանոն գիտելոյ ճշմարիտ ինչ զօրէն միտք մարդոյ
՝ի կրօնականս՝ և քննել ճշմարիտ ինչ կարաց նա գիտել ա-
ռանց ինչ նպաստիւ աւանդութեան: Զդժ ծրագիս մարթ
իցէ առնել զայս քննութիւն, ուր՝ի հեթանոս իսկ ա-
մենայն ուրեք երևին հետք աւանդութեան անդաստին
՝ի սկզբանէ աշխարհի՝ի ձեռն Նոյի իջեալք. զիաւրդ ի-
մաստասէրն աստուածեան կամ բանական, ՝ի մէջ
քրիստոնէից կեցեալ, կարասցէ ցուցանել մեզ՝ զի ծանօ-
թութիւնք իւր զԱստուծոյ և զպարտուց մարդոյ առ
Աստուած և առ ընկերս չիցեն առեալ՝ի փոխ:

Ասիցեն Թերևս, զի իմաստասիրութեամբ մարթ է
ցուցանել զվարդապետութիւն և զպատճառս բնական
օրինաց: Ա՛յս կարի իսկ քաջ՝ յետ գիտելոյ զայս. այլ
ոչ երբէք կարասցեն ցուցանել՝ զի լուսով բանին
և իմաստասիրութեամբ հասու լեալ իցեն այնց:

" Ա՛յլ է, ասէ Պէրժիէ, զի միտք մարդկային գամ
մի լուսաւորեալ յաստուածային յայտնութենէ կարի-
չէ գիտել և ցուցանել զճշմարտութիւնս սկզբնական

հաւատոյ՝ զորս դաւանեցին նահապետք, և այլ՝ զի միտք իւրովի անօգնական գիտիցէ զայնս։ Ո՛տացի ոք կարող է չլեւռնի յօրինուածն ի միտ առնուլ, և հաւատեաց նորա հաստ լինել, և որ անտի զհետ եկեալ Աշմարտութեանցն խելամուտ, առաջի աչաց զամենայն ունելով. այլ իցէ՞ թէ գտանել ևս կարիցէ զայնս առանց ինչ լսելոյ յումեքէ ,,։ Եւ ոք ասէ. "Ընդհանուր իրք են՝ զորս ի խանձարրոյ է մեր ուսեալ, և ծանօթութիւնք՝ որ ընդելացեալ են մեզ յօրինաց աւետարանին որպէս բնածինք ի մեզ, զորս համարիմք անժբխտելի Աշմարտութիւնս դիւրինս ի ցուցակութիւն. և ոչ իմանամք սրչափ ժամանակս հատանէր մեզ անգիտանալ զայնս, և կամ գէթ յերկբայս արկանել, եթէ աստուածային յայտնութեան չէր մեզ զայնոսիկ ուսուցեալ ,,։ Ո՛ւստի և Ղուկաս և Պաւղոս հաստատեն։

Ո՞րչափ են ապա բնականքն կոչեցեալ օրէնք և կրօնք։ "Բնականք կոչին, յաւելու նոյն ինքն Ղուկաս, ոչ զի միտք իւրովի գտին զայն ի սկզբանէ, այլ զի գամ ի ծանուցեալ զայն՝ ընդունին իբր հիմնեալ ի վերայ Աշմարտութեան և բնութեան։ Բնական կրօնք կարի համաձայնք են ընդ աստուածային գերբնական յայտնութեան, եթէ ի գիւտ և ի հրատարակումն, և եթէ ի նորոգումն յետ ժամանակաց՝ յայլայլելն իւրում ապականութեամբ ազգի մարդկան, և ի տկարանալ և յաղօտանալ օրինաց նորա և այնպէս չիմութեալ ընդ մոլորութիւնս, մինչև կարօտել մարդկան նորոց նպաստից առ ի գիտել զայն, առ ի միտ առնուլ և առ ի գործ դնել։ Կրօնք և բնականք են և յայտնեալ. բնականք, որպէս կարի քաջ իմաստասիրէ Պլեժիէ, զի են ըստ պիտոյից մարդկութեանս և պատշաճք աստուածայնոյ բնութեանն և մարդկայնոց. և զի ի գիտել մեր գամ մի զայն, կարեմք լուսով բանի ի միտ առնուլ և ցուցանել զՀմարտութիւն նորա։ Այլ չեն և չեն բնականք՝ իբր զի կարիցէ մարդ ի խոյզ և ի խըն-դիր անկեալ իւրովի գտանել զվարդապետութիւնս նորա և զպատուէրս, և դաւանել զայն յիւրումն սրբութեան. ոչ ոք խելամուտ եղև այնմ, բայց որք յաւանդութենէ ընկալան զայն։ Ո՛ւր բաղդատեն աստուածեանք թէ պարտք բնական կրօնից հաստատեալ էին

յհական կցորդութիւնս մեր ընդ Աստուծոյ և ընդ մարդկան, որ տպատորեալ են ի սիրտս մեր։ Աթէ դաստիարակութիւն և խրատք ուսուցչաց և օրինակ քաղաքակցաց ոչ կրնէին զմեզ յընթերցուածն տառիցն այնոցիկ, լիներ մեզ այն որպէս մատեան փակեալ։։

Աւ այսպէս աղանդաւորացն այնոցիկ չինայ այլ ուստեք իմաստասիրել ինչ՝ բայց ի մարդկեղէն էակաց ոմանց, որք հեռի յամենայն կցորդութենէ մարդկան կալեալ՝ գտանիցին անատնամիտք. սակայն և ի նոցանէ չկարեն ցուցանել՝ զի բանին ևեթ և ոչ այլում առաջնորդի կարօտիցի մարդ, և ոչ՝ զի կարիցէ, առանց նըպաստից աստուածային յայտնութեան գիտել բաւականապէս զսկզբունս կրօնից և զբարոյականին։ Ամենայն ձիգն նոցա զայսմանէ բացայայտագոյն ևս եղոյց զսուիկարութիւն մարդկային մտաց՝ իւրովի հասու լինելոյ կրօնական և բարոյական ճշմարտութեան, և ըզկարևորութիւն աստուածային յայտնութեան։

Բ. Այս և ի մոլորութենէ ազգաց բացայայտ ելևէի, որոց առաքել կամ նուազ մոռացօնք եղեն աստուածային յայտնութեան։ Ասանն մարդկային չկարաց երբեք թերադրել որ ինչ պարտն էր նոցա հաւատալ, և որ ինչ գործել. և առանց մովսիսական և աւետարանական օրինաց՝ որք ևս քան զևս պարզեցին զաստուածային յայտնութիւն՝ հասանէր ազգի մարդկան կալ և մնալ ցարդ ի զրահեղեղ պաշտամունս կռոց։ Յաւուրց անտի Աբրահամու պաշտօն ճշմարտին Աստուծոյ սկսաւ օտարանալ, և կռապաշտութեան գրեթէ կալեալ էր զաշխարհ յերևել Աովսիսէ. բայ ի Հրէից այլ ամենայն ազգք, պահեալ ևեթ զծանօթութիւն պերազոյն էին և զգլխաւոր մասանց կրօնից, զանհաղորդական պաշտօն արարչին՝ ընծայեցին արարածոց։

Ա. Ահանագոյնք և իմաստնագոյնք յազգս, քաղդեացիք, եգիպտացիք, Հելլէնք և Հռովմայեցիք, տգիտագոյնք և կոյրք ևս էին կրօնից ճշմարտութեան։ Աւ կալի իսկ քաջ, զի մեծի աստուածային ընդհատից պէտք էին և գերաշխարհիկ իմաստութեան առ ի հասու լինելոյ այնմ։ Ա՛ իշխեաց ընդ դրոյ արկանել զպաշտամունս դից նոցա և զպիղծ խորհրդածութիւնս։ Ցօնք նոցա և զոհք, օրհնութիւնք և նկարք սրբատա-

նեալք ՚ի մեհեանս նոցա, յանդիման առնէին զտարփանս նոցա, զանգթութիւնս, զմոլեգնախանձ հակառակութիւնս և զայլ ևս ապիրատութիւնս նոցա։ Ոչ այսմ օրինակի պաշտէին յոռութիւնք, և կարևոր համարէին ՚ի պաշտօն դից։ Ո՛չ գօնագոյնն յիմաստասէրս արգելու զարբեցութիւն, և ներէ ևեթ զայն ՚ի Սպանդարամետական տօնս ՚ի պատիւ դիցն Կիմնիսի։ Ո՛չ այլ ոմն գալձեալ խստիւ զանհամեստ պատկերս եպերէ, բայ ՚ի գիցականացն՝ որոց միանգամ ՚ի դից այնպիսեաք խայտառականօքն հաձոյ թուէր առնուլ պաշտօն։ Ել և մարթ առանց յասպուշ հարկանելոյ ընթեռնուլ որ ինչ սպաս Ոստղկան պարտ էր մատուցանել, և զպղծութիւնս՝ որ ՚ի պաշտօն նորին օրինադրեալ։ Կլեոպատրա բարգաւաձեալն և իմաստուն ընկալաւ զխորհրդատօնսն զայնոսիկ գարշելիս. ՚ի յաջողութիւն գործոց կարևոր սակայնք և պետութիւնք ուսանէին Ոստղկան ժանտագործ կանայս. և ոչ ամաչեաց Կլեոպատրա գրել զփրկութիւն իւր աղօթիցնոցա մատուցելոյ դիցուհւոյն, և յետ պարտութեանն Ոկտեբրեայ և ահագին բանակի նորա՝ եդին ՚ի մեհենի զմաղթանաց նոցա պատկերս նկարակերտ, արձանագրեալ Կիմնիպեայ գերահռչակ քերթողի՝ մաղթանօք և առ սէր նոցին փրկեալ Ոստղկան զԿլեոպատրա։ Կթէ պաշտել արժան էր զսէր, պարտ էր գէթ զսէր ողջախոհ առնուլ ՚ի պաշտօն. այլ ոչ այսպէս։ Ողջոյն, (և ո՛ կարէր ածել զմտաւ, ո՛ ՚ի մեծ առնէն այսպիսեաւմ անարժան գործոյ ակնունել կացեր,) կանգնեաց Յ՚Կթէնս մեհեան Ըրբենւոյ Ոստղկան կամ Ոնաւակ սիրոյ։ Կ՚ի էր Կլեոպատրա մեհենեաք դիցուհւոյս, իսկ Հարսանեկանն սիրոյ և ոչ մի մեհեան ընդ երկիրն ամենայն։ Կյ սակայն եպերէին զչնութիւն յարս և ՚ի կանայս, և ամուսնութիւն սրբազան էր առ նոսա. այլ յիրս կրօնից օտարախորհուրդք ոմանք թուէին, և իմաստութիւն նոցա հեռանայր ՚ի բաց։

Կյ ոչ զգօնութիւնն Հռովմէական խոհականագոյն գտաւ ՚ի կրօնս. զի ՚ի պաշտօն դից զպղծութիւնս թատերաց և զարհուրախանձ տեսարանս սուսերամարտից նուիրէր, ասեմ իսկ զամենայն՝ որ ինչ պղծագոյն և որ ինչ խժդժագոյն մարթէրն ածել զմտաւ...։ (Պոսիոե. Ստոռ ՚ի վէպս ապիտոյ. ը. ԺՀ։)

Ա՛նդ, Հնդիկք, Սկիւթք, նախնի գաղղիացիք և գերմանացիք, ազգք հիւսիսոյ և Ամերիկայ ոչինչ ընդհատ քան զՀռոմայեցիս էին տգէտք կրօնից և բարոյականին։ Այս քան զչնորհս աւետարանին գրեթէ ամենայն ուրեք մասն էր կրօնից շուայտութիւն, լկտութիւն, և մարդազոհ. և որ աւազելին ևս է և թշնամանադիր մարդկեղէն մտաց, ՚ի քարոզել առաքելոց ընդդէմ հեթանոսական մոլորութեանց և սնոտի պաշտամանց՝ իբրև ամպարիշտք և անաստուածք դատապարտէին ՚ի մահ։ Ոչ ոամիկն միայն, այլ և իշխանք և դատաւորք և գիտունք, ևս և իմաստասէրք զդէմ կային հաստատելոց քրիստոնէութեան։ Դարկ էր կարի յոյժ սաստիկ գոլ կուրութեան մտաց մարդկան՝ առ ՚ի չկալ ընդ ՚ի միտ առնուլ առժամայն զօրքութիւն աւետարանական վարդապետութեան, և ՚ի բաց կալ գոնեա ՚ի թանձրադոյն մոլորութեանց կրօնիցն իւրեանց։ Յայտ է զի առանց քրիստոնէական յայտնութեան հասանէր կալ և մնալ նոցա ՚ի կռապաշտութեան, ՚ի տգիտութեան, և ՚ի սնոտի պաշտամունս՝ յորս տեսանեմք ցարդ զազգս խաւարեալս ՚ի լուսոյ աւետարանին։

Գ. Իմաստասիրութեան ոչ էր մարթ յետս կացուցանել զազգ մարդկան ՚ի մոլորութեանց իւրոց։ Պատմութիւն իմաստասիրութեան ոչ այլ ինչ է, բայց պատմութիւն զանազանութեան մտաց մարդկան. վարկածք զվարկածս եղծանեն, և դրութիւնք յաջորդեն դրութեանց։ Ըստ Արրոնիս երկերիւր ութսուն և ութ հաշուէին աղանդք, և Քեմեստիոս յաւելու զայն ցերեքարիւր. ահարկութիւն այսր թուոյ ևս քան զևս յաձախ յածել զմտաւ՝ զի աղանդից իւրաքանչիւր յոգնախուռն աշակերտաք ոչ ընդ իրեարս և ոչ ընդ վարժապետս իւրեանց միաբանէին։ Ստոմահմետան Պաբրիկիոս հարիւր յիսուն և վեց հերձուածս հաշուէ պիւթագորականին ևեթ աղանդոյ։ Ընդ մտաց ընդ ելիսական վարժարանս, և ընդ երկոսին մեծամեծ սերունդս նոցա բնազանցականս և բնաբանականս. ընդ աղանդ իմաստակացն, որ յիտալական վարժարանէն առեալ սկիզբն՝ ծաւալեցաւ համաստիւռ ընդ Հռոմ. ընդ վարժարանն յանիական՝ զոր հիմնեաց Պաղէս, և աշակերտաք նորա Անաքսիմանդր, Անաքսիմեն, Անաք-

սագոր . Պիտգինէս ապօրինացի , և Ա՛ղբեղայոս , յայլ և այլ աղանդս բաժանեցին զայն . ընդ վարժարանն Սոկրատայ՝ որ նախ՝ի հինգ , և ապա ՝ի բազում այնքան աղանդս սերեցաւ , յորս էին Կիւրենականն և Մեգարեանն և Ընական՝ որք և ևս յեղաշրջեցին զմիտս և եղծին զբարս յոնաստանի : Ա՛նց ընդ պղատոնականն նախկին Ա՛կադեմ, ընդ երկրորդն հիմնեաւ Ա՛րկեսիլայ , ընդ երրորդն ՝ի Կարնէադեայ՝ զոր համարականն Աստուած եա աքսորել ՝ի Հռովմայ . ընդ չորրորդն հիմնեալ ՝ի Փիլոնէ , որոյ իւրաքանչիւր կարծիք իմաստասիրականք հակառակք էին իրերաց . և ընդ հակաճառական վարժարանն Ա՛րիստոտէլի , ընդ բաժանումն Նիկոնի ՝ի բազում այնչափ աղանդս , ընդ ստոյիկեանն՝ ոսոխ Կարնէադեայն, ընդ եպիկուրեանն և ընդ պիւռոնեան աղանդս բաղմաերեսունդ , բնաւք ՝ի միմեանց տարաձայն, բնաւք իրերաց հակասականք :

Վկեսք ասեն Թէ բնաւ իսկ ոչ գոյ Ա՛ստուած . այլք Թէ աշխարհս է Ա՛ստուած , և Թէ միանձնական է աշխարհ և յաւիտենական . վկեսք մարմնաւոր ասեն զԱ՛ստուած կամ գէթ բաժանելի՝ նոյն ընդ մասունս համագոյից : Վարժարանն Սոկրատայ դնէ առաջին պատճառ , զպիկուրեայն դիպաց արդասիս համարի զաւետնայն . նա ընդունի զհոգի , սա զմարմին և՛ն Թ : Ամենք համարին զարդարութիւն արդասիս դաշնակցութեան . այլք գերանութիւն մարդոյ , որով և զառաքինութիւն , կացուցանեն ՝ի հեշտութեան : Ա՛ւ յայնքան ցնորս և ՝ի մոլորութիւնս իւրաքանչիւրոց զառածեալ, մինչև ասել Կիկերոնի . “ Ոչ մարթ անտեղի լինչ հանձարել, զոր ուրուք յիմաստասիրաց չիցէ յառաջագոյն ուսուցեալ,, :

Ասացեալ Թէպէտ և իմաստասիրաց գեղեցիկ եր վարդապետեալ, չկարէին զդէմ ունել հեղեղաց մոլորութեան . վասն որոյ Սոկրատ և Պղատոն յուսահատեալ, ասացին՝ Թէ պարտ եր իւրաքանչիւր ումեք կրօնից երկրին հետևել , և չառնել լինչ փոփոխումն կրօնից սահմանելոց : Ա՛ւ երևելագոյնք ՝ի նախնի իմաստասիրաց խոստովան եղեն զտկարութիւն իւրեանց , և ծանեան զկարևորութիւն գերբնական լուսոյ առ ՝ի ձանաչել զբնութիւն Ա՛ստուծոյ , զեզանակ պաշտելոյ զնա , զվախճան և զպարտս մարդոյ : Պղատոն իրաւե զօրէնսը-

դիրն՝ “ Ի փոփոխումն ինչ առնել կրօնից, գուցէ անաստուգագոյն ինչ փոխանակիցես. զի ոչ է մարթ մահկանացու բնութեան գիտել ինչ հաւաստեաւ զկրօնից ,, . (Յ Ա Ղ Ե Ն Ո Ի Ս :) Եւ այլուր ՚ի դիմաց Սոկրատայ ասէ . “ Պատեհ պարտ է՝ զի եկեալ ոք ուսուցէ մեզ ուրպէս պարտիմքն վարել առ Աստուած և առ մարդիկ . . . լաւ է յամել ցայն վայր զպատարագս՝ քան պատարագել առանց գիտելոյ թէ իցեն աստուածահաճոյ պատարագք մեր ,, . (Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Լ Ք Ի Ա Դ Ի Ս :) Եւ ՚ի չորրորդ գիրս օրինադաց ասէ՝ թէ պարտ է դիմել առ ոք ՚ի դից, կամ մնալ յերկնից գալստեան առաջնորդի ուրուք կամ վարդապետի՝ որ ուսուցէ զկրօնից : Եւ Սոկրատ զանմահութենէ հոգւոյ ասէ (՚ի Փ Ե Դ Ո Ն Է .) “ Ընդհանրին է ունել զայսմանէ պայծառ գիտութիւն, կամ գէթ կարի դժուարին . պարտ է ապա իմաստնոյ պատկառ կալ այնմ՝ որ հաւանականագոյնն թուի, եթէ չիցէ նորա ապահովագոյն ծանօթութիւն կամ քան Աստուծոյ՝ որ առաջնորդեսցէ նմա ,, :

Կիկերոն ՚ի Տուսկուլեանսն յետ ՚ի ներքս ածելոյ որ ինչ հինք զանմահութենէ հոգւոյ վարդապետեցին ՚ի հերքումն կամ ՚ի հաստատութիւն, ասէ . “ Աստուծոյ է գիտել որ ՚ի կարծեաց աստի Ճշմարիտ իցէ . իսկ մեք չկարեմք սահմանել որ քան զոր իցէ հաւանական ,, :

Պղատարքոս ՚ի Հառին յաղագս Խեսէյ և Եսիրեայ, համախոհ ընդ Պղատոնի և ընդ Աքիստոտելի, հաստատէ՝ զի վարդապետութիւն հաւատոյ յաղագս Աստուծոյ արարչի տիեզերաց, յաղագս նախախնամութեան, և յաղագս անմահութեան հոգւոյ, են նախնի աւանդութիւնք և ոչ գիւտք իմաստութեան, և սկիզբն առնէ Հառին՝ զի արժան է առն իմաստնոյ հայցել ՚ի դից զամենայն բարիս, և մանաւանդ զընորհս Հանաչելոյ զնոսա ըստ պայմանի մարդկային տկարութեան . զի չիք Աստուծոյ մեծագոյն ինչ քան զայս ընծորհել մարդկան ,, :

Յամբլիկոս ասէ . “ Պարտ է մարդոյ գործել զՀաչոյս Աստուծոյ . այլ ոչ դիւրին ինչ է գիտել որ այն իցէ, եթէ ոչ Աստուծոյ ինքնին ուսուցեալ իցէ զայն և կամ ուրուք ՚ի հոգւոց, կամ թէ աստուածայնով որ լուսով իցէ լուսաւորեալ ,, : Եւ դարձեալ ասէ . “ Ա-

է հնար մարդոյ ճառել զաստուածոյ, եթէ ոչ ինքնին նոքա ուսուսցեն մեզ,,։ Օնոյն և Պորփիւր Հաստատէ։

Այլ ուրեմն պարտ է ընդունել զկարևորութիւն աստուածային յայտնութեան, և ս առ ի գիտել զՀնմարտութիւնս կրօնից՝ որ բնականն կոչի։ “ Հարկաւոր է մարդոյ, ասէ տուրքն Ղոռմա, ուսանել ի հաւատոյ ոչ միայն որ ինչ ի վեր են քան զմիտս, այլ և որոյ մարթի իցէ հասու լինել մտօք. նախ՝ զի վաղագոյն հասցէ մարդ ի գիտութիւն աստուածային Հնմարտութեան, երկրորդ՝ զի գիտութիւնն Աստուծոյ լիցի ամենեցուն հասանելի, և երրորդ՝ զի ստոյգ իցէ։ Օ ի բանն մարդկային վերջանայ ի հասողութենէ աստուածայնոց իրաց, որպէս յայտ է ի բազմապատիկ մոլորութեանց և հակասութեանց իմաստասիրացն ի ճառել նոցա ըզմարդկայնոց. իսկ առ ի ստոյգ գիտութիւն զաստուածայնոց՝ հարկ եղև ի ձեռն հաւատոյ աւանդել զայնոսիկ մարդկան, հաստատեալ ի վկայութիւն Աստուծոյ՝ որ ոչն կարէ ստել,,. (Ղովանդ. մ. ք. խ. ք. յ. ղ։)

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա. — ա. Աստկանութիւնդ այդ մարդկութեան, յորմէ զնետ բերես զհարկ աստուածային յայտնութեան, ոչ այնպէս ընդհանուր էր որպէս կարծի. զի ոչ միայն կային ի հեթանոսս արք և կանայք գերազանց եաք առաքինութեամբ, այլ և ազինք ազատք ազգովին յատկանութենէ. որպէս զՆաւումայեցւոցն առաքինութիւնս գովաբանէ (Գոստինոս։ ր. Հայց եթէ էր իսկ աշխարհ ամենայն ապականեալ, ոչ ինչ զնետ գայր այժմ. զի ոչ եթէ յատկարութենէ մտաց և ի մոլորութենէ յառաջ գայր ապականութիւնդ այդ, այլ ի յոռութենէ կամաց՝ որ միտէ ի ցանկութիւնս ընդդէմ թելադրութեան ուղիղ բանի, և առ ի ցածուցանել զհայեցի խղճի մտաց՝ փոխէ յօրէնս զգօջնականն մոլորութիւնս իւր։ Այս այս յայտ անտի է, զի օրինքն բարւոյն և չարի կան միանգամ անջինջ և անյեղլի ի միտս մարդկան. ապա եթէ ոչ, մարթէր անդադարապարտ

առնել զգործս նոցա : ԳԼ. Ի մեղրութենէ ևս և այլ նեցուն ոչ է օրէն զՀետ քերել զապիկարութիւն նոցա ՚ի ձանաչել և ՚ի կատարել զպարտս բնական օրինաց . ապա թէ ոչ , հարկ եր ասել՝ զի և ոչ աստուածային յայտնութեամբք կարող իցէ նուաճել զչարութիւն կամաց , որովհետև յարատև այնու ամենայնիւ ապականութիւն :

Պ . — Ս . Ամենայն աւանդք պատմականք ցուցանեն լեալ ընդհանուր զապականութիւն մարդկան , և սակաւք ումանք օրինակք առաքինութեան ոչ զօրեն ընդհակառակն . զի ըստ հասարակաց օրինաց կենցաղավարութեան պարտ է առնել դատաստան : Ամենաւանդ զի սակաւուցն այնոցիկ առաքինեաց մարթէր ՚ի հայրենի աւանդութենէ աստուածային յայտնութեանց , որ չէր ՚ի սպառ կորուսեալ , գիտել զաստուածահաճոյ կրօնս և զօրինս ուղղութեան վարուց : Ոսկ աղինք գլխովին ՚ի հասարակաց ապականութենէ անտի ազատք ոչ ուրեք գտանին . զի և զհռովմայեցւոց , զորոց ներբողէ ( )գոստինոս զառաքինութիւնս , վկայէ նոյն ինքն՝ թէ ՚ի պակս անձնանուէրք ՚ի կռապաշտութիւն և ՚ի պիղծ զոհս , փառասիրութեամբ ևեթ յաղթէին ցանկութեանցն :

Բ . Ապիկարութիւն մեռոյ մարդկան ՚ի ձանաչել զօրէնս բնութեան ոչ այնպիսի ինչ էր , մինչև անյաղթելի կացուցանել յամենայնի զմեղորութիւն . այլ միտք անխնքնաբաւ և յոռութիւն կամաց ՚ի միասին եղեն պատճառք ապականութեանն : Վհանգի շարժիչք կամացն , առանց աստուածային յայտնութեանց տարտամք և տկարք , ոչ զօրէին յաղթել յոռութեան կամաց . վասն այսորիկ և ՚ի տեսական օրէնս զգործնական մեղորութիւնս իւրեանց կարացին փոխել մարդիկ : Ապաքէն օրէնք բարւոյ և չարի անջինջ ՚ի սիրտ մարդկեղէն տպաւորեալ են , այլ դիւրին է զնոսա կամակորել , և ունակութեամբ բարեբել զմեղորութիւնս , և այնպէս զխայթ մեռոյ բթացուցանել՝ մինչև չկատածելոյ ընդ յոռութիւնս :

Գ . Մեղորութիւն մարդկան ոչ ընդհանուր միայն էր , այլ և յարատև . ոչ գործնական ևեթ , այլ և տեսական . օրէնք հասարակաց , օրինակ և վկայութիւն աւադանւոյ , մեհեանք , պաշտամունք , արարողութիւնք ,

տօնք, տեսարանք, մատեանք, և ամենայն ինչ ի նոյն միաբանեալ. և ի վերայ ամենայնի այսոցիկ ինքը մարթ իցէ ասել՝ թէ միտք այսքանեաւ խաւարաւ շրջապատեալ՝ կարող էին փարատել զայնս։ Այլ ընդունիմք թէ նոյն ապականութիւն հանդերձ աստուածային յայտնութեամբք յարատեւիցէ. Ի և առ հաւատացեալս ապականութիւն, այլ անձնական՝ ի տկարութենէ կամ ի չարութենէ, և ոչ ի հասարակաց օրինաց. ուր անհաւատք ազգովին քաղաքական և կրօնական օրինօք և սովորութեամբք՝ ի չարն զառածանին, սակաւուց ևեթ ի հասարակաց օրինաց անտի՝ ի բաց կացեալ։

Բ. Ապիկարութիւնդ այդ մարդոյ՝ ի ձանձրել ինքնին զպարտս իւր և՝ ի կատարել՝ անիրաւութիւն ածէ զԱստուածով, որ և զանբան կենդանիս ստեղծ բաւականս ժամանելոյ իւրովի՝ ի նպատակ իւրեանց։

Գ. Այլ ապիկարութիւնդ այդ՝ ի ստեղծմանէն Աստուծոյ էր, զոր թերևս տեղի հետևանացդ. այլ այնու իսկ, զի բանաւոր ստեղծ Աստուած զմարդ, եդ՝ ի նմա զկարողութիւն գիտելոյ և առնելոյ զպարտս իւր։ Իսկ նա անձնիշխանութեամբն իւրով տեղի տուեալ ցանկութեան, և ընտրեալ զխաւար քան զլոյս, կուրացոյց զմիտս իւր. և յայնպիսի տկարութիւն կամակար զառածեալ, յորմէ չկարէր՝ ի վեր կանգնել առանց դերբնական օժանդակութեան։ Իսկ անբան կենդանիք, այնու իսկ զի չեն ազատք և անձնիշխանք, հարկաւորապէս բերին առ կէտ նպատակի իւրեանց, ներքին ազդեցութեամբքն՝ զորս եդ՝ ի նոսա Աստուած։

ԳԼՈՒԽ Գ

ՑԱՂԱԳՍ ՀՐԱՇԻՑ Ի ՑՈՑՑ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՑԱՑՏՆՈՒԹԵԱՆ

Զկին պէտք՝ ի սկզբանէ՝ առհաւատչեայ աստուածային յայտնութեան ածել նշանս. զի սկզբնական հանգամանք աշխարհի, կարօտութիւն մարդկան ուսանելոյ յարարչէն, և վկայութիւն նախաստեղծից և նահապետաց՝ որոց յայտնէրն Աստուած ինքնադիմաբար,

բառնային զայն պէտս ։ Ա՛յլ՝ի փոխել կրօնիս յընտանեկան ընկերութենէ՝ի քաղաքաժողով և յազգային ընկերութիւն, և ապա՝ի տիեզերական, դադարեցին յայտնութիւնք յաճախաւորք, ոչ ևս խօսեցաւ Ա՛ստուած ինքնին առ մարդիկ՝ այլ՝ի ձեռն պատգամաւորաց, զորոց առաքումն յուցանէր սքանչելեօք և մարգարէութեամբք, որոց չէ մարթ առանց Ա՛ստուծոյ յաջողել ։ Յայնմհետէ հրաշք և մարգարէութիւնք եղեն առհասատչեայք անհրաժեշտք աստուածային յայտնութեան ։

Օ՛մարգարէութեանց՝ի յաջորդ գլուխդ խօսեսցուք. իսկ աստ, նախ՝ թէ զինչ են հրաշք, երկրորդ՝ զի կարելի են, և երրորդ՝ զի ցուցանեն զառ՝ի Ա՛ստուծոյ առաքումն այնորիկ՝ յոյր ձեռն ներգործին ։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Հրաշք չկարեն ցուցանել հաւաստեաւ զայտնութիւն աստուածային, զի և ինքեանք չեն հաւաստի. զի առ՝ի գիտել՝ թէ դէպք ինչ արտաքոյ օրինաց բնութեան պատահեն, հարկ է գիտել և ձանաչել զամենայն օրէնս բնութեան և թէ ցոր վայր զօրութիւն նորա ձգիցի, զոր ոչն գիտեմք ։ Օ՛ի ահա բազում ինչ երբեմն հրաշք թուէին առ առաւելապոյն տգիտութեան օրինաց բնութեան. և յանդգնութիւն մարդկան առ՝ի չխոստովանելոյ զտգիտութիւն իւր՝ հրաշս համարի զդէպս անսովորս ։

Պ. Ա՛ռ՝ի ձանաչել թէ դէպք ինչ արտաքոյ օրինաց բնութեան իցեն, ոչ ընդունիմք՝ թէ հարկ իցէ գիտել զամենայն օրէնս բնութեան. այլ շատ է գիտել զայս ինչ կամ զայն հաստատուն օրէնս նորա ։ Որինակ իմն. գիտեմք զի ծանուցք՝ի վայր բերին, հուր այրէ, ջուր թանայ, մեռեալք ոչ յառնեն, և այլ այսպիսի անյեղլի օրէնս բնութեան. և իբրև տեսանեմք զի հրամանաւ ուրուք կամ կարգալով զանուն Ա՛ստուծոյ՝ վէմ յանկանեն զկայ առնու յօդս, հուր դադարէ յայրելոյ, ցամաքաքաթև ոք ընդ ջուր ընթանայ, կամ դիակն նեխահոտ յառնէ, չէ իսկ հարկ գիտել զայլ ամենայն օրէնս բնութեան առ՝ի դատել՝ զի ընդդէմ օրինաց նորա այ-

սոքիկ դիպիցին ։ Այսաքէն գիտուն և տգէտ գիտեն՝ զի դի նեխահոտ ոչ կենդանանայ . և ՚ի յառնելն՝ որպէս ոչ է պարտ նոցա ուսանել զամենայն օրէնս բնութեան առ ՚ի դատել զի արարչին բնութեան զօրութիւն յաղթուցանէ զնա ։ Այսաքէն տգիտութիւն հրաշս համարի բազում ինչ՝ որ չիցեն հրաշք . այլ ոչ այսուհետ ձգմաբիտքն հրաշք դադարեն ՚ի հրաշս գոլոյ , բայց միայն դիւրահաւանութիւն տգիտացն գայ ՚ի յայտ՝ որք առանց քննութեան հաւատս ընծայեն անխտիր ձգմարտին և ստոյ ։ Այլ ոչ նմանութիւն իցէ տգիտացն աքանչելիս կարծելոյ զհաւարուածն արեգական ընդ հաւատս գիտնոյ՝ որք յանուն Աստուծոյ տեսանիցեն յանկարծ խուլ և համրը ՚ի ծնէ՝ լսել և խօսել , կուրի կոյր ծնիցելոյ յանկարծ տեսանել , բազմամեայ անդամալուծի գնալ և վազվազել . և ոչ յանդգնութիւն ՚ի հաւատս նոցա գտանիցի ։

Բ . Կարող են և դեւք գործել հրաշս , և կամ դէթ զարմանալիս՝ որ հրաշք թուիցին . որպէս և մոգքն Փարաւոնի՝ որ “ ընկեցին զգաւազանս իւրեանց , և եղեն վիշապք ,, . (Ելէց . է . 12 .) “ և գարձուցին կախարդութեամբն իւրեանց զջուրս գետոյն յարիւն ,, (անդ . 22 .) և հանգոյն Անտիքրիստոսի “ հանին գորտ յերկրին եգիպտացւոց ,, . (անդ . ը . 7 .) Այսուհանդերձ ոչ ոք ասէ զնոսին ինքեան Անտիքրիստոս պատուիրեր իսրայէլացւոց՝ զգոյշ կալ ՚ի սուտ մարգարէից , մի՛ լսել բանից նոցա ։ (ը . օր . ժգ .) Զնոյն և Քրիստոս պատուիրէ , և յաւելու՝ զի “ Յարիցեն սուտ մարգարէք , և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս , մինչև մոլորեցուցանել՝ թէ հնար իցէ՝ և զընտրեալսն ,, . (Մատ . իգ . 24 .) Այս առաքեալն ասէ վասն նեռին (ը . Թես . ը . 9 .) “ Որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է , ամենայն զօրութեամբ և նշանօք և արուեստիւք ստոյք ,, ։ Այդ զի ոչ է մարթ դիտել հաւաստեաւ եթէ Աստուծոյ կամ ՚ի դիւէն ներգործին հրաշքն , ապա չկարեն աստուածային յայտնութեանն գոլ ապացոյց ։

Գ . Ունիք երկբայել զի և դեւք ընդ իշխանութեամբն Աստուծոյ են , և չկարեն ինչ գործել առանց Աստուծոյ թողացուցանելոյ ։ Հաստատեալ միանգամ զայս աներկբայելի , կործան անկանին ամենայն առարկութիւնք՝

որ ՚ի զօրութենէ դիւաց։ Օ՚ի եթէ Ա՚ստուած ՚ի հաստատութիւն յայտնութեանցն իւրոց զհրաշս տայ ՚ի նըշան, ձշմարտութիւն իւր պահանջէ չթողացուցանել դիւին կեղակարծ զնշանն զայն կացուցանել։ Ա՚ան ո՚րոյ զօրութիւն դիւին, որպիսի ինչ և համարիցիմք զայն, եթէ իսկապէս հրաշագործութեան՝ որպէս Թուխ ոմանց, և եթէ առ աչօք ևեթ հրաշս երևեցուցանելոյ՝ որպէս Թուխ Հաւանագոյն, անհնար է՝ թէ չընտրիցի այն յամենակարող զօրութենէն Ա՚ստուծոյ. զի կամ չթողացուցանէ զայնս, և կամ եթէ թողացուցանէ՝ այնպիսի հրաշս ընդդէմ այնոցիկ գործէ, որովք աստուածայինքն ծանիցին։ Որպէս նոքին իսկ գէտքն եգիպտացւոց ծանեան զզօրութիւն նորա, և զկարողութիւն իւրեանց խոստովան եղեն՝ զի "Ա՚ան Ա՚ստուծոյ էր այն ,, ։ (անդ ։ ը ։ 9։) Ա՚յդարև գնաք առ ՚ի փորձ բարեաց և կամ առ ՚ի պատուհաս չարաց, թողացուցանելովն Ա՚ստուծոյ, կարեն հրաշագործել. այլ չեն երբէք երբեք Ա՚ստուած՝ զի խաբէութիւն նոցա չիցէ ձանաչելի. ապա թէ ոչ, չհրամայեր զպուշանալ յայնմանէ, և ոչ ՚ի մեզ նանրահաւատիցն համարէր զպատրանս նոցա, և ոչ առաքեալն զնշանն զայնսիկ և զարուեստս կոչէր սոփս և պոռնս. (ը ։ Ղ։ ։ ը ։ 10։)

Գ. Հրաշից, որոց չիցեմք ականատես լեալ, չկարեմք և ոչ իսկ պարտիմք հաւատս ընծայել. քանզի օրէն է կասկածել՝ զի հինք ոչ բաւականապէս քննեալ իցեն զայնս, կամ խաբեալք՝ և զմեզ ևս կամիցին խաբել. զի քննաւորեալ իսկ է ռամիկն դիւրահաւան գոլ հրաշից, և պատմութիւն ինաստասիրութեան վկայէ բազում ինչ հրաշս երբեմն կարծեցեալ՝ որ արդ բնաբանական օրինաք մերկնին։

Գ. Ա՚յ ընդունիմք զի չիցէ պարտ հաւատալ որոց չիցեմքն լեալ ականատես. քանզի բառնան այգուիկ ամենայն հաւատք մարդկային, զոր ոչ ոք յիմաստնոց ընդունի։ Ա՚արդիկ յամենայն ժամանակի նոյնպէս քնաւորեալ են, վասն որոյ պարտ է համարել՝ զի ոչ առանց բաւականապէս քննելոյ հաւատս ընծայեալ իցեն հրաշից, այլ խնդրեալ զհաւաստիս՝ զորս խնդրեմք մեք արդ. մանաւանդ ուր զնոր կրօնից էին բանք, և պարտ էր նոցա զկեանս իւրեանց ՚ի վերայ նորա փոխանակել։

Այս ոչպէս մարթ էր առանկին զկրօնս իւր փոխել, և ըզմահ յանձն առնուլ, դիւրահաւան լինելով հրաշից՝ առանց քննելոյ զայնս և զհաւաստիս նոցին հետազօտելոյ։ Այլ զի ոչ առանկին ևեթ էր տեսօղ հրաշիցն, այլ և գիտունք և հմուտք։ Պատմութիւն իմաստասիրութեան մեկնէ արդ թերևս լինչ լինչ ըստ օրինաց քննաբանութեան, որ հրաշք երբեմն համարէին. այլ ոչ լինչ՝ի հրաշից անտի, յորս հաստատեալ են կրօնք և յայտնութիւնք աստուածայինք. վասն որոյ և ոչ խըն դրելն է մեզ զայնցանէ։

Դ. Պէտ ըստ օրինաց կենդանական մագնիսական նութեան մարթ իցէ մեկնել զհրաշս. զի նուաւ գաղտնիք՝ի յայտ գան, ապագայք պատմին, անցից անցեալոց՝ի հեռաւոր տեղիս յաջողէ գիտութիւն, ախտք ապաքինին, և այլ ևս սոցին սակի զարմանալիք։ Վասն որոյ գէթ զբաղումս՝ի հրաշագործութեանցն Պրիտոսի մարթ է համարել արգասիս մագնիսական օրինաց. զի և ինքն, որպէս որք մագնիսական օրինօքն վարին՝ հաւատս և վստահութիւն խնդրէր՝ի մատուցելոցն առ նա՝ի խնդիր բժշկութեան, և ձեռս ստէպ՝ի վերայ նոցա դնէր, որ մագնիսական զարմանոյ բերեն ցոյցս։

Ե. Այսխ ոչ ընդունիմք, զի այն ամենայն զարմանալիք՝ զորս պաշտպանք մագնիսականութեան համբաւեն՝ իցեն ձշմարիտք. զի և նոքին իսկ բազում լինչ հաստատեալ նախ՝ և ապա ժխտեցին, վասն ոչ ևս երկրորդ անգամ յաջողելոց կարծեցեալ զօրութեանցն։ Սակայն եթէ արդարև մարթ իցէ գիտել նուաւ զծածկեալս և զհեռաւորս, զի է զի ցայսմայր յայնչափ ծածկելոց գանձուց ընդ երկրաւ և ոչ մի լինչ ածին՝ի լոյս. եթէ արդարև մարթ իցէ գուշակել նուաւ զապառնիս, և կամ որ դիւրագոյնն ևս է՝ գիտել զհեռաւորս և զանելևոյթս, զի է զի չկարեն գիտել զթիւս խաղարկութեան [օթի՝ որով մարթ է նոցա անբաւ գանձս՝ի միում ևեթ աւուր շահել. ոչ միայն զչև հանեալ թիւս գուշակելով, այլ զվաղ իսկ հանեալն այլ ուրեք՝ի քաղաքաց տեսեալ՝ի հեռուստ, և յառաջ քան ըզհրատարակել նոցին զնոյն թիւս խաղալով։ Ինդիր ոչ և զգողոնս՝ի յայտ ածէն, և զմատնիչս պետութեանց,

և զսոցին սակի անթիւս ՚ի ցանկալեաց։ Այլ իցէն այդոքիկ որպէս և ենն, սակայն և ստուերք կարծեցեալ զօրութեանդ չիք ՚ի աքանչելիս ներգործեալս ՚ի Քրիստոսէ։ Օ՛ի նա ՚ի ցոյց առ ՚ի յԱստուածոյ առաքելութեանն հրաշագործելով՝ ինդրէ զհաւատս մատուցելոցն առ ինքն, և ՚ի նշանակ աստուածայինն զօրութեան իւրոյ՝ դնէր ձեռս ՚ի վերայ հիւանդաց։ Այս ոմն երբէք առանց աստուածայնի զօրութեան ձեռս ևեթ յուրուք վերայ դնելով յաջողեցի յանկարծ կաղաց գնալ, կուրաց տեսանել, խլից լսել, համերոյ բարբառել, և բնաւ իսկ արարածոյ յանկարկել ևեթ ուրուք հնազանդել։ Ո՞ր երբէք մագնիսական օրինօք լուեցին յանկարծ մրրիկք, կամ մեռեալք յարեան։ Այս եթէ մագնիսական զօրութեամբ զջուր ՚ի գինի մարթէր փոխարկել, աղբերք քաղաքաց գինի արդ բղխէին առհասարակ։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Ջինւոյ և հրաշք։

Հրաշք է գործ զգալի և աստուածային՝ արտաքոյ օրինաց բնութեան։ Աստուած միայն, արարիչն օրինաց բնութեան, կարող է երբ և կամի՝ արտաքոյ օրինացն այնոցիկ գործել ինչ։ “Ընդհանուր տէր Աստուած Նարայելի, որ առնէ աքանչելիս միայն,,։ (սաղմ. հա։) Որչափ և հզօրք իցեն գևք և հրեշտակք, սակայն ոչ զօրեն գործել հրաշս։ “Վերակացից արարածոց զօրութեամբ ոչ է մարթ երբէք գործել հրաշից,,, ասէ սուրբ Աւգուստինոս։ Ա՛ն որոյ յորժամ հրեշտակաց և սրբոց ասեմք գործեալ հրաշս, իմանամք Աստուածոյ ՚ի ձեռն նոցա գործեալ։ Ապաքէն չիք ինչ աքանչելի, բայց որ արտաքոյ բնական օրինաց ելանէ՝ զընթացս նոցին սովորականս խափանեալ. վասն որոյ ոչ էլեկտրականին և ոչ մագնիսականին արգասիք հրաշք են։ Ա՛նանց իսկ կարելոյ գիտել և բացատրել զպատճառս նոցին, ոչ ինչ երկբայիմք ընդ լինել նոցա ըստ օրինաց բնութեան,

առանելով զի նոյն միշտ արդասիք՝ի նոյն բնական գոր-ծողութենէ յառաջ գան։ Գոյեցն գիտութիւնք որ ինչ գիտաս և ասիցես, այլ ստեղծումն նախահօրն և նա-խամօր՝ որպէս՝ի Ադնուդման պատմի, լեցին միշտ հրաշք։ Ջրհեղեղն՝ զոր պատմէ Մովսէս, յարութիւն մեռելոց և յանկարծակի բժշկութիւն հիւանդի՝ի բարբառ մար-գոյ՝ առանց ինչ դեղոց, լեցին միշտ Ճշմարտապէս հրաշք։ զի սքանչելիքս այսոքիկ հակառակք են օրինաց բնու-թեան, և առտուածադիր կարգաց։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Ջի կարկի և հրաշք։

Ոչ է մարթ ժխտել զաստուածագործ սքանչելիս։ պատմութիւնք հին և նոր Կտակարանաց, հաւատք ա-մենայն ազգաց քրիստոնէից, Հրէից, սամարացւոց, և և հեթանոսաց զՋրհեղեղէն, և ամենայն յիշատակա-րանք սրբազանք և արտաքինք ցուցանեն բացայայտ հր-բաշա բազում գործեալս իսկապէս։ ապա ուրեմն կա-րելի են հրաշք։ Անդրիւնք իրաց են անժխտելի ապա-ցոյցք, և՝ի վկայել հաւատարիմ պատմութեան՝ լուել հարկ է բնազանցին։ Այս զինչ իսկ կարիցեն անհաւատք՝ի դէմ ածել այսպիսի տիեզերական և մշանջենաւոր վկայութեան ազգի մարգկան։ Ամբ ցուցանիցեն զի նուիթոյ եղեալ միանգամ՝ի ձեռանէ հաստչին՝ ոչ ևս ընդ իշխանութեամբ նորա իցէ։ կամ զի որ հրաշս հր-բաշից ներգործեաց՝ի չգոյէ՝ի գոյ ածեալ զերկինս և զերկիր, յարկանել զնոսա միանգամ ընդ օրինօք ինչ՝ ոչ ևս կարող իցէ խափանել առ վայր մի զինքնագիր օրէնսն զայնոսիկ։ կամ զի որ ստեղծն զմարմին նախաս-տեղծից արտաքոյ օրինաց ծննդագործութեան՝ չկա-րէր զմարմին՝ Քրիստոսի ներգործել յարգանդի Կուսին առանց գործակցութեան առն։

Հրաշք ոչ միայն չեն՝ի վեր քան զկարողութիւնն Աստուծոյ, այլ և ոչ անպատշաճ իմաստութեան նորա կամ հակառակ անփոփոխելի բնութեան, որպէս հա-

մարին արդի աղանդաւորք։ Օ՛ի ո՞ կարիցէ օրէնս պատշաճից սահմանել Աստուծոյ. և ընդէ՞ր անպատշաճ իցէ նմա ցուցանել զկարողութիւն իւր և զողորմութիւն՝ առ ընդոստուցանելոյ այսուիկ զապշութիւն մարդկան. "Աստուած, ՚ի ժամանակի յորում գրեթէ ամենայն մարդիկ մոռացեալ էին զնա, արար հրաշս մեծամեծս՝ տալով բնութեան իրերաց ՚ի հաստատուն օրինաց իւրոց, առ ՚ի ցուցանել այնու զի ինքնիշխան տէր էր ամենայնի, և ՚ի կամաց ևեթ իւրոց կայ և ինայ անլուծանելի կարգ տիեզերաց։ Վասն զայս ստուգապէս մոռացեալ էր մարդկան, և հաստատութիւն գեղեցիկ այսր կարգի տայր նոցա կարծել զայն միջնորդնական և ինքնագոյ, ուստի և զառածեալ էին ՚ի պաշտել կէսք զաշխարհ առհասարակ, այլք զաստեղս կամ զտարերս, և կամ որ այլ մարմինք մեծամեծք կացուցանեն զայն։ Աստ ուրեմն զարժանին իւր բարութիւն եցոյց Աստուած աղգի մարդկան, լուծանելով ՚ի դէպս երևելիս զկարգն, որ ոչ միայն չընդոստուցանէր զնոսա ընդեղականութեամբն՝ այլ զի և պատճառս տայր կուրութեան նոցա խնամանալ արտաքոյ Աստուծոյ միջնորդնականաց ինչ և ինքնիշխան։ .... Հրաշք տպաւորագոյնս յայտ առնեն մեզ զաստուածպետականին ամենազօր տէրութիւն ՚ի վերայ արարածոց իւրոց, եթէ ՚ի հնազանդել զնոսա հանրականաց ինքնադիր օրինացն, և եթէ ՚ի տալ նոցա այլ օրէնս յորժամ կարևոր թուի նմա առ ՚ի սեփականել նորահրաշ աքանչելեօք զմիմբրեալ աղգ մարդկան,,։ (Պոսէ. Բ. ա։)

Հրաշք և ոչ անփոփոխելի բնութեանն Աստուծոյ են հակառակք. զի ՚ի խափանել ինչ առ վայր մի յօրինացս բնութեան, ոչ փոփոխէ նա զվճիռս իւր՝ այլ կատարէ։ Ի սկզբանէ հաստատեաց Աստուած առնել ըստ տիեզերս, բովանդակելով յօրէնս նորին և զդարուցն նոցին առ վայր մի, հաւասարապէս զայս և զայն վճռեալ։ Պատաւոր յօրինադրել իւրում եթէ դէպս ինչ յօրինացս անտի ՚ի բաց առնուցու, ՚ի պատահել դիպացն՝ համարիցի յողդողդ. քա՛ւ լիցի։ Որ եդն զօրէնս բնութեան՝ սահմանեաց և զառվայր մի դադարումն նոցին յայս ինչ կամ յայն դէպս նախահայեցեալ տեսութեամբ. և հրաշք կատարումն հրամանացն այ-

նոցիկ են՝ ի հասանել դիպացն։ Այլ ուրեմն հրաշք չեն հակառակ, ոչ կարողութեանն Աստուծոյ, ոչ իմաստութեան, և ոչ անփոփոխելի բնութեան նորա։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Զի հրաշք ապացոյցք են առ ի Աստուծոյ առաքելութեան։

Ապացոյց անժխտելի աստուածային յայտնութեան են հրաշք. զադարեցուցանեն զամենայն պատճառս, կարձեն զամենայն վէձ, լուծանեն զամենայն դժուարութիւն։ Հրաշք յամենայն ժամանակի առ ամենայն ազգս համարեցան հաւաստի և աներկբայելի ապացոյցք աստուածային իշխանութեան. և չէ մարթ չընդունել իբրև առաքեալ Աստուծոյ՝ որ զաստուածայինն զայն իշխանութիւն բերէ յանձին. զի առ ինչ իցէ Աստուծոյ տալ մարդկան այնպիսի իշխանութիւն՝ բայց առ ի ցուցանել հրաշիւքն զի յանուն իւր խօսին և գործեն. և չկարէ Աստուած խաբել զոք։ Այսու որոյ և մարդիկ անյապաղելի բերմամբ ձգին ի հաւատալ այնմ, որ յանուն Աստուծոյ հրաշագործէ, հաստատելով հրաշիւք զբանս իւր։ Զի է ապացոյցս այս դիւրահաս մտաց ամենեցուն, պարզամտաց և իմաստնոց, գիտնոց և տգիտաց. և է բարբառ ինն և լեզու յատուկ հրաշից՝ իմանալի ամենեցուն, բարբառ աստուածային. և ի բարբառել Աստուծոյ՝ լռէ ամենայն վէձ։

Այլ իցէ մարթ գոլ աներկբայ ընդ իսկութիւն հրաշից։ Այսաքան զի հրաշք է գործ զգալի, և ոչ այլով իւիք զանազանի ի բնական գործոց՝ բայց զի յանեբևոյթ պատճառէ գայ յառաջ։ Այլ արթ է ուսումնասիրել անխտիր զընթացս առն ընդ ալիս և ընդ երկիր, տեսանել քննել գնալ զերևեալն յետ յարութեան՝ որպէս յառաջ քան զմեռանիլն. և դիւրին իսկ է ստուգել աներկբայելի ի ձեռն վկայից գործ ինչ գերբնական յար և նման որպէս զգործս բնականս։

Այսաքան զի Աստուած միայն կարօղ է հրաշագործել։ Այսպէն հրեշտակք և գևք, զորոց գոյութիւն

յաստուածային յայտնութենէ գիտեմք, չկարեն յա-
տուկ և բնական իւրեանց զօրութեամբ գործել իսկա-
պէս հրաշս խափանելով զօրէնս բնութեան աստուա-
ծադիրս. քանզի այս օրինադրին ևեթ պահի իշխա-
նութիւն։ Այլ թէպէտ գիւաց գերագոյն քան զմարդ-
կան է զօրութիւն, թէպէտ և կարիցեն նոքա գործել
ինչ ինչ՝ի վեր քան զմեր կարողութիւն, սակայն չնե-
րէ նոցա Աստուած փորձել զմեզ առաւել քան զկար
մեր. "Հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ
՝ի փորձութիւն առաւել քան զկար ձեր,,. (ա. Կորնթ.
Ժ. 13.) Դարձեալ թէպէտ և դէպ առաւել քան
զմեզ կարօղ իցեն դուշակել զապառնիս, այլ չկարեն
իսկապէս մարգարէանալ ինչ, այսինքն նախատեսել
որ ինչ զկամաց մարդկան կախի, և մանաւանդ որ ինչ
զկամացն Աստուծոյ։ Ընչափ և հնարք իցեն իշխանին
խաւարի կերպարանելոյ՝ի հրեշտակ լուսոյ, մարթ է
միշտ օգնականութեամբ չնորհացն՝ զոր ոչ ումեք զլա-
նայ Աստուած, ընտրել զկանխասացութիւնս աստուա-
ծայինս և զհրաշս ուր է մանն Աստուծոյ՝ յերկդիմի
գուշակութեանցդիւաց և՝ի գերմարդկայինհնարից
ինչ, զորս ներէ երբեմն նոցա Աստուած առ՝ի փորձել
զարդարս և առ՝ի պատուհասել զամպարշտութիւն։

ԳԼՈՒԽ Դ

ՑԱՂԱԳՍ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ

Բառս Մարգարէ նշանակէ երբեմն առաջնորդ բանի,
խօսօղ՝ի դիմաց այլոց ուրուք. որպէս յերկնչէլն Մով-
սիսի խօսել առ Փարաւոն, ասէ նմա Աստուած (Ել.
Է. 1.) "Ահարոն եղբայր քո լիցի քեզ մարգարէ,,։
Նշանակէ երբեմն և զօրհներգուս, որ որդիք կամ պարք
մարգարէից կոչին՝ի սուրբ գիրս։ Նշանակէ և գու-
շակս ըղձապատումս և քերթողս. որպէս մարգարէքն
Բահաղու անուանեալք՝ի սուրբ գիրս, և այն՝ զոր ա-
ռաքեալն ասէ (Տիտ. ա. 12.) "Ասաց ոմն՝ի նոցանէ

իւրեանց իսկ մարգարէ ,, : Այլ բուն նշանակութիւն բառիս է , որպէս մեքս իմանամք աստանօր , նախապատմող ապառնեայ , և մարգարէութիւն՝ կանխասացութիւն հանդերձելոց : Երկրորդ տեսցուք նախ՝ զինչ է իսկապէս մարգարէութիւն . երկրորդ՝ զի է ապացոյց աստուածային յայտնութեան :

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Թէ զինչ է իսկապէս մարգարէութիւն :

Մարգարէութիւն իսկապէս է ստոյգ կանխասացութիւն ապառնւոյ իրիք , որ Աստուծոյ միայն է գիտելի : Ապա տեսեմք առ՛ի զանազանել զայն՛ի գուշակութեանց հաւանականաց , և՛ի յանդուգն յախտունախօս կանխասացութեանց , որ ըստ դիպուածոյ երբեմն յարդիւնս գան : Յատեալ դարձեալ ապառնոյ իրիք . զի զիտորհուրդս Աստուծոյ զանցեալս կամ զներկայս յանուն նորա խօսել՝ կոչի աստուածային յայտնութիւն , որ չէ մարգարէութիւն : Յաւելաք որ Աստուծոյ ձայն է գիտելի . զի չեն մարգարէութիւնք որ ինչ որ՛ի բնական պատճառաց նախագուշակէ . որպէս աստեղաբաշխին զերևոյթ վարսամից և զիաւարմունս լուսաւորաց գուշակել , նաւապետի զմրրիկս , և բժշկի զմահ հիւանդաց : Այլ զաքագէտ քաջահմուտ , որ զիտէր առեալ մարդկայնոց կրից և զարգասեաց շահախնդրութեան և փառասիրութեան՝ գուշակէ զաղմուկս յեղափոխութեանց , ոչ է մարգարէ : Մարգարէութիւն այն է , եթէ որ պատմեսցէ կանխաւ զառյապայ լինելոցն՝ որ՛ի կամս Աստուծոյ է , զոր օրինակ զԵրեզեկ . և կամ՛ի կամս մարդոյ , որ չև իսկ ծնեալ իցէ : Այսան օրոյ պահանջի առաջս նախատեսութիւն և հաւաստի գիտութիւն հանդերձելոց , որ Աստուծոյ միայնոյ է :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Զի կարկի է մարգարէութիւն :

Եւ եհաս հին կտակարանք հաստատեն զայս . Հրեայք և քրիստոնեայք հաւատս ընծայեցին միշտ մարգարէութեանց . առ նահապետս և առ հեթանոսս իսկ էին նոյն հաւատք . առ ամենայն ազգս պահեալ էին հետք ինչ աղօտք աւետեաց գալստեան փրկչին՝ որ էր ակնկալութիւն հեթանոսաց : Այլ և չէր մարթ միաբանել ամենեցուն ՚ի հաւատալ՝ զի կարելի էցեն մարգարէութիւնք , եթէ ոչ վկայէին այնոցիկ աւանդութիւնք և փորձ և բանականութիւն :

Արդ եթէ յաւիտենական է Աստուած , հարկ է խոստովանել՝ զի տեսանէ զանցեալն , ընդկայ և զապառնի . չընդունել Աստուած զայս գիտութիւն , հակառակ է և իմաստասիրութեան , և եղծանէ զաստուածայինն բնութիւն . զի եթէ է ինչ՝ զոր անգիտանայ , ապա պակասէ ՚ի նմա ինչ ՚ի կատարելութեանց . եթէ յաւելուն ՚ի նա գիտութիւնք ըստ գալոց իրաց յարդիւնս , ապա ստանայ ինչ հետզհետէ՝ որ ինչ յառաջագոյն պակասէրն ՚ի նմա . և ամենայն յաւելուած և նուազութիւն եղծանէ զանփոփոխելի բնութիւն նորա : Ապա հարկ է խոստովանել զի գիտէ նա ՚ի յաւիտենից զամենայն որ ինչ լինելոցն է . և եթէ գիտէ , կարող է և յայտնել զայնոսիկ մարդկան , և հաղորդել նոցա զգիտութիւն ի բաց՝ զորս չկարեն գիտել բնականապէս : Ապա որպէս յամենակարողութենէն Աստուծոյ հաւաստի է հնարաւորութիւն հրաշից , նոյնպէս և ՚ի կանխագիտութենէ նորա յայտ է զի կարելի իսկ են մարգարէութիւնք :

Այլ որպէս ընդ կանխագիտութեանն Աստուծոյ և ընդ մարգարէութեան մարթ իցէ կալ ազատութեան մարդոյ , զի հարկ է այնուհետեւ գործել մարդոյ ըստ կանուխ գիտութեանն Աստուծոյ : Կանխագիտութիւնն Աստուծոյ և ազատութիւն մարդոյ երկոքեան իսկ ճշմարտութիւնք են հաւատոյ , և համաձայնք բանի .

ծայրք են շղթայի, ասէ Պօսիւէ, որոյ օղք կցորդու-
թեան ծածկեալ են ՚ի մէնջ։ Ա՛ստուած ՚ի յաւիտենից
տեսանէ զգործս մարդոյ, և ոչ է մարթ սխալել տես-
թեան նորա. սակայն մարդ գործէ ազատութեամբ, և
ազատութեան նորա ոչ ինչ ստնանէ անսխալ գիտու-
թիւնն աստուածային. Հարկ է ամենայն նրբին առար-
կութեանց տեղի տալ առաջի անդրդուելի վարդապե-
տութեանս։ Ա՛յժմ բացատրութիւնք այսր վարդապե-
տութեան չկցեն բաւական առ ՚ի խելամուտ առնել
զանհաւանս, եթէ միաբանութիւն երկոցունց Հնմար-
տութեանցս է նոցա անհասանելի, զինչ այլ ևս խնդրեն
առ ՚ի խոստովան լինել զտկարութիւն մտաց իւրեանց և
զչափաւորութիւն մարդկային հասողութեան։

Ա՛յլ մարթ իսկ է մեզ յառաջ ևս մատչել, և ասել
զի չէ անկարելի միաբանել զկանխագիտութիւնն Ա՛ս-
տուծոյ ընդ ազատութեան մարդոյ. զի գիտութիւնն
Ա՛ստուծոյ ոչ փոխէ զհանգամանս իրաց. որպէս տես-
նէ զնոսա՝ նոյնպէս և յարդիւնս գան, Հարկաւորքն
Հարկաւորապէս, և ազատքն ազատօրէն։ Ա՛պաքէն ա-
րասցէ մարդ՝ որ ինչ գիտէ Ա՛ստուած զի առնելոց է նա,
այլ արասցէ ազատութեամբ. ոչ արասցէ մարդ վասն
գիտելոյն Ա՛ստուծոյ որ ինչ առնելոցն է, այլ ընդ Հա-
կառակն գիտէ Ա՛ստուած վասն զի առնելոց է նա զայն
ազատութեամբ։ Գիտութիւնն Ա՛ստուծոյ թէպէտ և
կանխէ ըստ ժամանակի քան զգործ մարդոյ, այլ յե-
տոյ է ըստ պատճառին. զի առ Ա՛ստուծոյ չկայ անցեալ
և ապառնի, այլ ամենայն ինչ ներկայ է նմա. և որպէս
մեքս տեսանեմք զգործել ինչ ուրուք ազատութեամբ,
և տեսութիւնս մեր ոչ ինչ ստնանէ ազատութեան նո-
ցա, այսպէս և կանխատեսութիւնն Ա՛ստուծոյ՝ որ իբրև
ներկայ տեսանէ զապառնին. վասն որոյ սուրբն ( )գոս-
տիանոս և մեծն Գրիգոր տեսութիւն մանաւանդ կոչեն
զկանխագիտութիւնն Ա՛ստուծոյ։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Չի մարգարէութիւնք ևս հզօր ապացոյցք աստուածային յայտնութեան :

Ոչ է մարթ Աստուծոյ հաստատել զտուրքիւն հրաշիւք կամ մարգարէութեամբք : Աստուած ՚ի ձեռն Աւետեայ մարգարէի ապացոյց աստուածութեան իւրոյ ածէ զկանխատեսութիւն, և ձայն տայ աստուածոց սրտոց մարգարէանալ. “ Յայտնեցէք մեզ, պատմեցէք մեզ որ ինչ ՚ի վախճանի լինիցի, և գիտասցուք եթէ աստուածք իցէք ,, . (Եսայի . խա . 23 :) Եւ ապա (Ես . խզ . 10 .) “ Ես եմ Աստուած և չիք այլ ոք բաց յինէն՝ որ պատմիցէ յառաջագոյն զվերջինան մինչչև եղեալ իցեն, և միանգամայն կատարեսցին ,, : Եւ չիք իսկ ոք՝ որ ոչ խոստովանեսցի Աստուծոյ միայնոյ պահեալ զկանխատեսութիւն. նոքին իսկ անհաւատք խոստովանեն արդեօք զայն, եթէ հաւատայցին միանգամ մարգարէութեանց հինն և նոր կատարանայ :

Աղդողապոյնք են մարգարէութիւնք, և յայտնապէս և աստուածայինք, յորժամ նախասպատմեն իրս՝ որոց ոչ ըստ բնական կարգի և ոչ ըստ կամաց մարդկան մարթ է պատահել : Աստուած ինքն միայն գիտէ որ ինչ ըստ ամենակարողութեան իւրում հաստատեալ է գործել առյապայս . և յորժամ ոք ՚ի մարդկանէ նախատամէ զայնոսիկ, և յարդիւնս գան, ոչ ևս է երկբայել՝ զի է նա իսկապէս մարգարէ և աստուածազգեցիկ ոք : Յապէս կանխատեսութիւն տիեզերական ջրհեղեղին, որում չէր մարթ բնականաբար պատահել. նմանապէս (Ծն . ժե . 13 .) ուր յայտնէ Աստուած Աբրահամու զկերութիւն որդւոց նորա Իսպիսատոս և զազատութիւն նոցա սքանչելեօք յետ չորեքարիւրոց ամաց, այս կանխատեսութիւն գալով չափ յարդիւնս՝ կրնակի բերէ զնկարագիր աստուածայինն յայտնութեան. զի որպէս Աստուծոյ միայնոյ է գործել զքանչելիս, նոյնպէս և նմա միայնոյ էր նախատամել զայնոսիկ : Օնոյն է ասել և զկանխատեսութենէն Աբրահամայ ցառաքեալս, զի հանդերձեալ էին գարձու-

ցանել զՀեթանոսս ՚ի հաւատս՝ հրաշագործելով յանուն իւր. անհնարին էր մարդկեղէն մտաց գուշակել զայն, և մարդկեղէն զօրութեան ածել զայն ՚ի կատարումն։

Այսպա ուրեմն հրաշք և մարգարէութիւն են անժըխտելի ապացոյցք Հաւատոյ. Աստուծոյ միայնոյ է խափանել զօրինս բնութեան, և գիտել զՀանդերձեալս։ Ասա որոյ և Հարք առհասարակ դիմին ՚ի մարգարէնութիւնս առ ՚ի ցուցանել զաստուածայնութիւն քրիստոնէական կրօնիդ. նոցին և մեք զՀետ երթեալ ՚ի մարգարէութեանց և ՚ի հրաշից ցուցցուք զայն յառաջիկայս։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Հարկ. ա. — ա. Ահ այլ ինչ են մարգարէութիւնք՝ բայց աշխոյժք մտաց և ցնորք երևակայութեան զապառնեաց, որոց պատահէ յաճախ յարդիւնս գալ. վասն այսորիկ և կրթիչին յայնս պարք մարգարէից, որպէս յայտ է ՚ի սուրբ գրոց. (ա. Դգ. Ճ. 5.) և մանաւանդ ՚ի պատմութենէ Դաղիսէի, զի սաղմոսատաց եւս ածել, և ՚ի նուագել նորա սկսաւ մարգարէանալ. (գ. Դգ. գ. 15։) — բ. Նմին իրի մեծին իսկ են մարգարէութիւնք և առ բազում ինչ յարմարաւորք, գԺպատեհք աստուածային աղդեցութեան։

Պե. — ա. Ո՞չ հոգի աստուածեղէն վառեր զաշխոյժս մտաց ՚ի յափշտակել ածել զմիտս մարգարէից ՚ի տեսութիւն ապառնեաց, որպէս և յօրհնութիւնս նոցա առհասարակ, ընդունելի է մեզ. այլ զի խանդք և աշխոյժք յայտնիցեն մտաց զապառնիս՝ առանց կանխագիտին Աստուծոյ ազդեցութեան, ժխտեմք բայե ՚ի բաց։ Ասպծէ ՚ի սուրբ գիրս և պարտ մարգարէից կոչին և ժողովք աստուածապաշտից և երկիւղածաց, և ոչ ուրեք գտանեմք ՚ի սուրբ գիրս՝ զի կրթիցին համբակք ՚ի մարգարէութիւն. միթէ Յակոբ ՚ի Հովսեփ վաճս կամ յարածել զհաշինս աբեանու կրթեցաւ ՚ի մարգարէութիւն, և քնար և սաղմոսատաց եւսն նմա ՚ի Հոգեվարս իւր մարգարէանալ։ Սաղմոս և քնար ամիոփել ամիոփեն զմիտս ՚ի պատրաստութիւն, այլ Աստուծոյ է ազդել մտաց զապառնիս։

— ԺԸ. Պատանին ապաքէն՝ ի սուրբ գիրս ոչ սակաւ ինչ բանք մեծինք և գժուարիմացք, ոչ՝ ի մարգարէութիւնս եւեթ՝ այլ և՝ ի վարդապետականս և այլսըր. այլ այսոցիկ պատճառք, նախ՝ զի ազգեցութիւն Հոգւոյն ոչ փոխէ զանիպս կերպարանսդ մարդկեղէն բանից. երկրորդ՝ զի չեմք տեղեակք եբրայական լեզուի, և թարգմանութիւնք յաւելուն աղօտացուցանել զբանս որպէս և՝ ի պատմականս իսկ. երրորդ՝ զի բազում ինչ՝ ի հանգամանաց ժամանակին և իրացն անծանօթք են մեզ. և չորրորդ՝ զի չկարեմք խորհրդոյն և Արարածոյ հասու լինել, որովք զիրաց իրաց ինչ մեծինս տայ մարգարէիցն իւրոց բարբառել: Այլ զի և բազում ինչ յայտնաբարբառ գուշակեն՝ մանրաքննուամ զապառնիս առնելով, տեսցուք յառաջիկայս՝ ի գուշակութիւնն՝ որ զՔրիստոսէ, զորոց ոչ է մարթ կամակորել զիմաստս և յայլ ոք յարմարել:

Աւրկ. Բ. Հեթանոսաց ևս էին մարգարէք, որք պատգամս և հրամանս պատասխանւոյ մարգարէականս տային, որպէս վկայեն պատմիչք: Ապաքէն և գիք ևս կարեն նախապատմել որ ինչ առյապայս գործելոց են:

Պէս. Որչափ ինչ խտիր ընդ մարգարէիցն պատգամս և ընդ նենգաւորս քրմացն երկդիմի հրամանս պատասխանւոյ կայցէ, ոչ է հարկ ասել: Այլ և ոչ զհեռաւորսդ ինչ ժամանակաւ ապառնեացդ գտանի նոցա տուեալ պատգամս, բայց որ ինչ մարդկօրէնն գուշակութեամբ էր նոցա վաղակարծել, և զկարծիսն տարտամ և բազմադիմի իմաստիւք բացատրելով՝ առ ամենայն դէպս յարմարաւոր: Արթ իսկ էր և դիւաց՝ ի ձեռն քրմացդ տալ պատգամս. այլ նախ՝ զի և ոչ դիք կանխագէտք են ապագայից, բայց միայն՝ ի հանգամանաց իրացդ առաւել յոյժ քան զմարդիկ գիտեն գուշակել, իւր և եւեթ պահեալ Արարածոյ զկանխագիտութիւն, որպէս մարգարէիքն ձայն տայ աստուածոյ օտարաց՝ պատմել զհանդերձեալս եթէ գիտիցեն: Այլ երկրորդ՝ որպէս զհրաշինն ասացաք, աստուածախնամ տեսչութիւն չթողացուցանէ երբէք դիւաց պատրել զմարդիկ կանխասացութեամբ՝ զորս՝ ի նշանակ և՝ ի հաւաստիս յայտնութեանցն իւրոց պահեալ է:

ՃԱՌ ԵՐՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԱԾԱՑՆՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԻՑ

Իբրև եհաս ժամանակն նախատացեալ ՚ի մարգարէից վասն գալստեան Աստուծոյն՝ որում ակն ունէին և հրեայք և արևելք առհասարակ, յորժամ ազգ և ազինք խորասուզեալ կային ՚ի մեղսուԹիւնս և ՚ի պղծուԹիւնս կռապաշտուԹեան, երևեցաւ փրկիչն մեր ՚ի հրէաստանի քարոզել զալքայուԹիւնն Աստուծոյ։ Յղացեալ ՚ի Հոգւոյն սրբոյ, ծնաւ սքանչելապէս ՚ի կուսէ, ՚ի Մեղհէմ ՚ի մարի, երկրպագեալ անդ ՚ի հովուաց։ Եւ ՚ի ծնանել նորա երևեալ աստղ յարևելս, ածէ առ ոսս տղայոյ փրկչին զերախայրիս հեԹանոսաց։ Յետ սակաւ միոյ ընծայի ՚ի տաճարին, և ծերունին Սիմէոն ֆառ ծողվըրդեանն Իսրայելի և լոյս հեԹանոսաց զնա աւետարանէ։ Օ երեսուն ամ կեցեալ անցեալ, և ապա սկսանի քարոզել զաւետարանն. և ընտրեալ իւր երկոտասան առաքեալս, շրջի նոքօք հանդերձ ընդ հրէաստան, և զվարդապետուԹիւն իւր հաստատէ սքանչելեօք։ ՚Ելախանձ փարիսեցւոց և երիցանց դրդուէ զժողովուրդն ընդդէմ նորա. և ամբաստանեալ յատենի՝ դատապարտի ՚ի մահ, զի ասէր լինել որդի Աստուծոյ։ Ծողու զանձն կամաւ ՚ի ձեռս անօրինաց, և մեռանի ՚ի խաչին. ապանի երկիր, խաւարին լուսաւորք, հարիւրապետն՝ որ պահէրն զնա՝ հիացեալ ընդ իշխանաբար աւանդել նորա զոգին, գոչէ. “Արդարև այրս այս որդի Աստուծոյ էր,,. և ամենևքեան, որ անդն կային, դառնան բաղխելով զկուրծս։ Յարուցեալ յետ երիր աւուր, երևի իւրոցն՝ որ չհաւատային յարուԹեան նորա. տեսանեն զնա, խօսին ընդ նմա, շօշափեն զնա, և միաք նոցա յաղԹահարեալ հաւանին։

Ո՛ւսուրս քառասուն յետ յարութեան իւրոյ կացեալ ընդ աշակերտս իւր, խօսի ընդ նոսա և ուսուցանէ նոցա զամենայն՝ որ ինչ վասն արքայութեանն Աստուծոյ, վասն կրօնից, և վասն եկեղեցւոյ իւրոյ. և ասէ ցնոսա. "Ցուսաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ. գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև՛ ի կատարած աշխարհի,,. (Մատ. իը. 18։) Պարձեալ վերստին խոստանայ նոցա առաքել զսուրբ Հոգին. "Այլք զօրութիւն՛ ի հասանել Հոգւոյն սրբոյ ՛ի վերայ ձեր, և եղիջիք ինձ վկայք Երուսաղէմ և յամենայն հրէաստանի և՛ ի Սամարիա, և մինչև՛ ի ծագս երկրի,,. (Գործ. ա. 8։) Եւ զայս ասացեալ ամբառնայ յերկինս առաջի աչաց նոցա։ Ապողինի աշակերտք՛ ի մի վայր՛ ի նոյն տեղւոջ Երուսաղէմ յաւուրն յիսներորդի, և իջանէ Հոգին զգալի երևմամբ՛ ի վերայ նոցա։ Պարոզեն առաքեալք զհաւատսն Քրիստոս, և յառաջնումն և յերկրորդ քարոզութեանն Պետրոսի ութ հազար հոգիք հաւատան՛ ի հաւատս, պաշտել զնա զոր սպանին հայհոյելով։ Կերպարանի եկեղեցին, և հալածանք ընդդէմ նորա սկսանին. առաքեալք քարոզեն հեթանոսաց զաւետարանն, և զվկայութիւն իւրեանց վասն Քրիստոսի հեղմամբ արեան իւրեանց կնքեն։

Ո՛պատմութիւն վարդապետութեանն Քրիստոսի աւանդեն մեզ չորեքին աւետարանք և այլ գիրք նորոց կտակարանաց, զորոց վաղ իսկ ցուցաք զվաւերականութիւն, զամբողջութիւն և զճշմարտութիւն. և՛ի գրոց սոսկ պարտ է դատել՝ թէ Քրիստոս իցէ՞ արդարև Աստիայն խոստացեալ հարցն մերոց, և թէ օրէնք աւետարանականք՛ ի նմանէ հաստատեալք իցե՞ն աստուածայինք։ Եւ և՛ս է մեզ աստանօր խնդիր՝ թէ իցէ՞ նա արդարև որդի Աստուծոյ և Աստուած հաւասար և համագոյակից Հօր. այլ թէ իցէ՞ առաքեալ՛ ի Հօրէ, այս է խնդիր մեր աստանօր։ Արդ դիւրին է մեզ ցուցանել ընդդէմ Արեից և անհաւատից զի մար-

գարեւութիւնք հնոց կտակարանաց ակնարկեն ՚ի Քրիստոս, եւ կատարեցան ՚ի Քրիստոս, եւ զի մարդարեութիւնք եւ սքանչելիք Քրիստոսի եւ մանաւանդ յարութիւն նորա, եւ հրաշք՝ զոր առաքեալք յանուն նորա գործեցին, սքանչելահրաշ տարածութիւն աւետարանին, սրբութիւն եւ վսեմութիւն վարդապետութեան նորա, են առհասարակ ապացոյցք առ ՚ի Աստուածոյ առաքման նորա։

ԳԼՈՒԽ Ա.

ԿԱՏԱՐՈՒՄՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՑ Ի ՔՐԻՍՏՈՍ, ԱՊԱՑՈՑՑ ԱՌ Ի ՅԱՍՏՈՒԱԾՈՅ ԱՌԱՔՄԱՆ ՆՈՐԱ

Մարգարէութիւնք հնոց կտակարանաց՝ որ վերայիցն՝ կատարեցան ՚ի Քրիստոս, ուրեմն Քրիստոս Աստուածոյ է առաքեալ։

Նահապետն Յակոբ երկոքումբք նշանօք եղոյց կանխաւ զժամանակ գալստեան նորա. մի զի յայնժամ դադարելոց էր իշխանութիւն յազգէ Յուդայ, եւ երկրորդ՝ զի յառնելոց էր յայնժամ թագաւորութիւն նոր յայնմհետայն ազգաց ժողովեալ, որոյ նա ինքն՝ ակնկալեալն ՚ի հեթանոսաց՝ հանդերձեալ էր լինել թագաւոր։ “Մի պակասեսցէ իշխան Յուդայ, եւ մի պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ նա՝ որոյ իւրն է հանդերձեալքն, եւ նա է ակնկալութիւն հեթանոսաց„. (Ծն. խթ. 8։) Արդ ուրեմն դադրեր են՝ զի պակասեաց իշխանութիւն ՚ի Յուդայ. Հերովդէս օտարազգի յաջորդեաց զայն սակաւ ինչ ամօք յառաջ քան զծնունդն Քրիստոսի, եւ սակաւ ինչ ամօք յետոյ քան զմահ նորա կործանեցաւ եւ մայրաքաղաք նոցա Երուսաղէմ, եւ բարձաւ ՚ի նոցանէ ամենայն ձեւ քաղաքականն։ Ի նմին ժամանակի եկաց թագաւորութիւն նոր յամենայն ազգաց ժողովեալ ընդ Քրիստոսիւ. ուրեմն նա ինքն էր նախագուշակեալն ՚ի Յակոբայ Աստիայն ակնկալութիւն հեթանոսաց։

Ձ՛ղիւ ևս համարով աւուրց եցոյց Դանիէլ կանխաւ զգալուստ Մեսիային. պարտ էր ջրհեղեղիւ և ինքնուն ամաց անցանել յետ հրովարտակի Արկայնաբազուկն Ա.րտաշիսի վասն շինուածոյն Երուսաղէմի մինչև ցնահ Քրիստոսի. զի այս են եօթանասուն եօթնեակքն ամաց ըստ գլխատական համարոյ (Գ Եզր. իե. 8:) Եւ ի կէս վերջնոյ եօթնեկին, այսինքն եօթանասներորդին, մարգարէանայ զբարձումն ()ծելոյն այսինքն Քրիստոսի, և յետ այնորիկ զդադարումն զոհից և ըզպղծուածին և զաւերած տաճարին. (Դան. թ. 24:) Ա.րդ զեօթանասուն եօթնեակս ամաց հաշուեալ յեօթներորդ ամէ թագաւորութեանն Ա.րտաշիսի, կամ ի քսաներորդէ գահակցութեան իւրոյ ընդ հօր իւրում, յորում ամի արար զհրովարտակն, հասանեմք յամն՝ յորում փրկիչն մեր գենաւ ի խաչին զոհ ձմարիտ, և սաուերակերպքն գադարեցին:

Բազում ուրեք ի հին կտակարանս գտանեմք նախատեսութիւն զի Ա.բրահամ ի Յակոբայ ի Յուդայէ և ի զաւակէ Դաւթի գալոյ է Քրիստոսն. և Նայաի ասէ. (ԺԱ. 1.) "Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի և հանգիցէ ի վերայ նորա Հոգի Ա.ստուծոյ.., և ի նա հեթանոսք յուսասցին,,: Միաբանին և Հրեայք՝ որպէս Դաւթի ընդունել զՄեսիան: Ա.րդ Մատթէոս և Ղուկաս աւետարանիչք ձղիւ զազգաբանութիւն նորա իջուցանեն ի Յուդայէ, և որպէս Դաւթի զնա կոչէին յայտնապէս Հրեայք:

Քրիստոս ծնաւ ի Բեթղեհէմ գեղջ, որպէս յայտ է յաւետարանչաց. (Մատ. ԺԱ. 6: Յհ. Է. 42.) և Միքիայ մարգարէացեալ էր զայն. (Ե. 2.) "Եւ դու Բեթղեհէմ, տուն Եփրաթայ սակաւաւոր, իցես լինել ի հազարաւորս Յուդայ. ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայելի, և ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի,,: Եւ այնպէս բացայայտ էր մարգարէութիւնս այս և առ Հրեայս, զի ի հարցանել Հերովդէի զքահանայապետս նոցա և զդպիրս, եառն պատասխանի առանց ընդ բանս ածելոյ՝ զի ի Բեթղեհէմ ծնանելոյ էր Քրիստոս:

Ո՛չ աքանչելիսն, որովք հաստատեաց նա զվարդապե-

տուԹիւն իւր աստուածային, նախապատրաստ Լսայի. (ԼԵ. 5.) "Յայնժամ աչք կուրաց բացցին, և ականջք խլից լսիցեն. յայնժամ վազեսցէ կաղն իբրև զեղջերոտ, և պարզ լիցի լեզու ծանրախօսաց,,: Օր և ինքնին փրկիչն մեր ածէ 'ի վկայուԹիւն առ աշակերտս Յովհաննու. "Գնացէք պատմեցէք Յովհաննու զոր լսայք և տեսէք. կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին և խուլք լսեն,,:

Իսկ որ ինչ յաղագս մտից նորա Լերուսաղէմ, և մանուԹեան նորա և ջարչարանաց և նախատանաց և մահուն Հառէն մարգարէք, ոչ կանխատեսուԹիւնս՝ այլ պատմուԹիւնս իրացն արժան է կոչել զայնոսիկ:

"Ահա Թագաւոր քո գայ առ քեզ արդարև փրկիչ, նոյն հեզ և հեծեալ 'ի վերայ իշոյ և յաւանակի նորոյ. (Օշ. Թ. 9:)

"Որ ուտէր ընդ իս հաց, յարձակեաց առնել ինձ խաբէուԹիւն,,. (սղ. Խ:)

"Վշտեցին զվարձս իմ երեսուն արծաԹի,,. (Օշ. ԺԱ:)

"Յարեան 'ի վերայ իմ վկայք ջարեաց,,. (սղ. ԼԵ:)

"ՕԹիկաւնս իմ եատու 'ի Հարուածս, զծնօտս իմ յապտակ, և զերեսս իմ ոչ դարձուցի յամօԹոյ ընդ երեսս Թքանելոյ,,. (Լսայ. Ծ:)

"Ոտակեցին զձեռս իմ և զոտս... Խաժանեցին զհանդերձս իմ 'ի մէջ իւրեանց, և 'ի վերայ պատմուՀանի իմոյ վիճակս արկանէին,,. (սղ. ԼԱ:)

"Ես գոյր նորա տեսիլ և ոչ փառք... այլ տեսիլ նորա անարգ՝ նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան. այր մի 'ի Հարուածս, և գիտէ Համբերել ցաւոց... նա զմեզ մեր բառնայ, և վասն մեր չարչարի.... վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց... և նորա վիրօքն բժշկեցաք:.. Իբրև ոչխար 'ի սպանդ վարեցաւ, իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր,,. (Լսայ. ԾՊ:)

"Ումենեքեան՝ որ տեսանէին զնա՝ արհամարհէին զինեն, խօսէին շրԹամբք և շարժէին զգլուխս իւրեանց. յուսացաւ 'ի տէր, և փրկեսցէ զնա,,. (սղ. ԼԲ:)

"Հատուն 'ի կերակուր ինձ լեղի, և 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ,,. (ԿԲ:)

"Նա տաց նշանս յերկինս՝ի վեր, և նշանս յերկիր՝ի խոնարհ . . . արեգակն դարձցի՝ի խաւար և լուսին յարիւն ,, . (Յովէլ . բ . 30 :)

"Նա եղիցի յաւուր յայնմիկ, մտցէ արեգակն՝ի մի-ջօրէի, և խաւարեսցի յերկրէ լոյս՝ի տուէ ,, . (Ամովս . ը :)

"Նղիցի օր մի, և օրն այն յայտնի տեառն . ոչ տիւ իցէ, և ոչ գիշեր . և ընդ երեկս եղիցի լոյս ,, . (Զաք . ժդ :)

Նոյն մարգարէք, որք զչարչարանս նորա այսպէս մանրապատում նկարագրեն, պատմեն նմանապէս և զյարուԹիւն նորա . և ԴաւիԹ յայտնապէս ասէ . "Ոչ ոչ Թողցես զանձն իմ՝ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քումմէ տեսանել զապականուԹիւն ,, . (սղմ . ժե . 10 :)

Նոյն մարգարէք և զպատուհաս աստուածասպան աղգին սպառնան . և տեսանեմք զսպառնալիս նոցա լցեալ, և զգերուԹիւն երկից քան զայլ ամենայն նուաստս յերկարաձգեալ . և որ ոՀիւ իցէ նոցա մեծ քան զկռապաշտուԹիւն, վասն որոյ այսքան ծանրագոյն պատժոյ գըտանին արժանի, բայց զի ինքեանք զայն՝ի վերայ իւրեանց կոչեցին ազաղակելով . "Արիւն դորա՝ի վերայ մեր, և՝ի վերայ որդւոց մերոց ,, :

Նոյն մարգարէք և զդարձ հեԹանոսաց՝ի հաւատս Քրիստոսի նախապատմեցին . "Դարձցին առ տէր ամենայն ծագք երկրի ,, . (սղմ . իա . 28 .) "Ցիրեսցէ նա՝ի ծովէ մինչև՝ի ծով, և՝ի գետոց մինչև՝ի ծագս աշխարհի ,, . (Հա . 8 :)

"Ո՛ ամենայն ազգս, զոր արարեր, եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո ,, . (ձե . 9 :)

"ՆրԹիցեն ժողովուրդք բազումք և ասասցեն . եկայք ելցուք՝ի լեառն տեառն, և՝ի տուն Աստուծոյ Յակոբայ, և պատմեսցեն մեզ զՀանապարհս իւր, և գնասցուք ընդ նա ,, . (Ամ . ը . 3 :)

"Նտու զքեզ յուխտ ազգի, և՝ի լոյս հեԹանոսաց ,, . (խը . 6 .) "Դամ ժողովել զամենայն ազգս և զլեզուս, եկեսցեն և տեսցեն զփառս իմ. և Թողից՝ի վերայ նոցա նշան . և առաքեցից՝ի նոցանէ փրկեալս յազգս . . . և՝ի կղզիս Հեռաւորս, որոց չիցէ լուեալ զանուն իմ . . . և պատմեսցեն զփառս իմ և զանուն իմ՝ի մէջ ազգաց . . . և՝ի նոցանէ առից ինձ՝ի քահանայս և՝ի ղեւտացիս, ասէ տէր ,, . (Եսայ . կձ . 18 :)

Ընդ այս ամենայն կանխասացութիւնք եկին ելին ի վերայ հեթանոսաց, և ազգք և ազինք քարոզութեամբ առաքելոյ և աշակերտացն Քրիստոսի դարձան ի պաշտօն Ճշմարտին Աստուծոյ՝ հրաժարեալք ի կռոց, և կանգնեցին զնշան խաչին զրօշ զինուորութեան իւրեանց զհետ Քրիստոսի։ Եւ այս ամենայն, և որ այլ ինչ ցայս վայր փոքր ի շատէ համառօտեալ մարգարէութիւնք, ի Քրիստոս ևեթ պատշաճին. և չիք այլ ոք կացեալ ի հնուն, զորոյ զկեանս բազում դարիւք յառաջ մանրապատում արարեալ իցէ։ Այս ոչ ումեն Քրիստոս է Յեսիայն խոստացեալ Հարցն մերոց, և առաքեալ Աստուծոյ. ապա և օրէնք աւետարանականք ի նմանէ սահմանեալք՝ են աստուածայինք։

ԳԼՈՒԽ Բ

ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ, ԱՊԱՑՈՑՔ ԱՌԱՔՄԱՆ ՆՈՐԱ ԱՌ Ի ՅԱՍՏՈՒԾՈՑ

Քրիստոս պատմեաց զհանդերձեալս յառաջագոյն, և լցան ի ժամանակի կանխասացութիւնք նորա, ապա առ ի Աստուծոյ էր առաքումն նորա։

Քրիստոս ասաց զանձնէ “Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետին և դպրաց, և դատապարտեսցեն զնա ի մահ, և մատնեսցեն զնա հեթանոսաց այպանել և հարկանել և ի խաչ հանել, և յերիր աւուր յարիցէ,,. (Մարկ. ը. 18։) Եւ մանաւանդ զյարութիւն իւր այնպէս յայտնի ծանոյց օրինակաւն Յովնանու, զի և Հրեայք ասէին (իե. 63.) “Յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ,,։ Ընդ այս ամենայն կատարեցան ըստ ամենայն հանդամանացն։

Այսց և զառաքելոցն, զՊետրոսէ՝ զի ուրանալոց էր զինքն, զՅակարովհատացոյն՝ զի մատնելոց էր, և զամենեցունց՝ զի սքանչելիս մեծամեծս գործելոց էին, և վասն անուան իւրոյ վկայելոց, և զքարոզութենէ աւետարանի ընդ աշխարհ. և ամենայն ինչ, որպէս և ասացն, եկին ելին ի գլուխ։

Ա՛սաց և զկործանմանէ Երուսաղէմի և զաւերածոյ տաճարին, և այն ևս ըստ ամենայն մանրապատում հանդամանացն կատարեցաւ. վկայեն այսօրիկ և արտաքին պատմիչք, և Յովսեպոս ժամանակակից ազգային և ականատես պատմիչ։ Ա՛պա այսօրիկ ամենայնի կատարումն անժխտելի ապացոյցք են առաքմանն Քրիստոսի առ՛ի Ա՛ստուածոյ։

ԳԼՈՒԽ Գ

ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՊԱՑՈՑՑՔ ԱՌԱՔՄԱՆ ՆՈՐԱ ԱՒ Ի ՅԱՍՏՈՒԽՈՑ

Հրեայք ասացին ցՔրիստոս. "Եթէ դու ես Քրիստոսն, ասա մեզ յամարձակ։ Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Ա՛սացի ձեզ, և ոչ հաւատայք ինձ. զգործսն՝ զորս ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին վկայեն վասն իմ։... Ո՛ գործսն՝ զորս ես ցիս Հայր զի կատարեցից զնոսա, նոքին իսկ գործքն զոր գործեմ, վկայեն վասն իմ եթէ Հայր առաքեաց զիս։... Թէև և ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք, զի գիտասջիք և ծանիջիք եթէ Հայր յիս և ես ՚ի Հայր,,։ Եւ գործք նորա էին շրջել ընդ ամենայն քաղաքս, և բժշկել զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս ՚ի ժողովրդեանն. (Ա՛ռ. Ե. 38։) Ա՛պա ուրեմն Քրիստոս առ՛ի Ա՛ստուածոյ էր առաքեալ։

Քրիստոս զաքանչելիսն գործէր հրապարակաւ, մինչև զպրաց իսկ և փարիսեցւոց չկարել ժխտել զայնոսիկ և գիւաց ընծայել։ Հազմացուցանել նորա զնկանակս և զձկունս, զջուր ՚ի գինի փոխարկել, յարուցանել ըզդուստր ժողովրդապետին և զ՚Ղազար, բանալ զաչս ՚ի ծնէ կուրին, զկաղն և զխեղ ՚ի ծնէ, ողջանդամ կացուցանել, գնալ ՚ի վերայ ծովու և գնացուցանել, սաստել ծովու և զալիս նորա մրրկեալս ցածուցանել, այս ամենայն այնպիսի սքանչելիք են, զի և աղանդաւորք խոստովանին թէ չէ հնար արուեստիւք կամ մոգնիսական

զօրութեամբ մեկնել զայնոսիկ, այլ հարկ է ընդունել որպէս և պատմեն աւետարանիչք։ Վասն այն վարկածք և մեկնութիւնք ի գերմանացւոց և ի գաղղիացւոց ա-զանդաւորաց հնարեալք ոչ գտին տեղի. զի կայր ի ծնէ, կաղն և խեղ, համր և խուլ յորովայնէ, զի նեխեալ, յակնարկել կամ ի հրամայել մարդոյ չկարեն առնուլ զտեսութիւն, զողջանդամ գնացս, զլուր և զկեանս. ոչ է հնար ընդ տալը լոյծ իբր ընդ տրամ գետին ընթանալ և ընթացուցանել, սաստել հողմոյ և մրրկայ և հնազանդեցուցանել զնոսա։ Ոյք հնար, հարկ է կամ ընդունել առ ի Յ.ստուծոյ առաքեալ զՔրիստոս, և կամ յերկբայս զպատմութիւն աւետարանին արկանել. այլ մեք վաղ իսկ ցուցաք զվաւերականութիւն նորոց կտակարանաց, զի ամբողջ և առանց այլայլութեան ըստ էական մասանցն հասեալ են առ մեզ, զի բովանդակեալ ի նմա իբր ձշմարիտ և անժխտելի են, զի աշակերտաք Քրիստոսի պատմիչք ժամանակակիցք ոչ խաբել կարէին՝ ծանօթ և աչխարհաքարոզ գոլով իրացն, և ոչ խաբել՝ վասն ի յայտ գալոյ խաբէութեանն. ապա ուրեմն հարկ է խոստովանել, զի Քրիստոս առ ի Յ.ստուծոյ է առաքեալ։

ԳԼՈՒԽ Գ

ՑԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՊԱՑՈՑՑ ԱՌԱՔՄԱՆ ՆՈՐԱ ԱՌ Ի ՑԱՄՍՈՒՆՔՈՑ

“Եթէ Քրիստոս չէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր,,. ասէ առաքեալն (Ա. Կոր. ԺԵ. 14։) Այս անհաւատք իսկ խոստովանին, զի ընկալեալ միանգամ զՔրիստոսի յարութիւնն՝ հարկ է նոցա ընդունել զառաքումն նորա առ ի Յ.ստուծոյ, և զհաւատս քրիստոնէից։ Ա՝ ասն որոյ ուրոյն ջհաւաստիս այսր սքանչելեացս արժան է՝ քննել։

Յայտ է ի պատմութենէ աւետարանչաց զի Քրիստոս մեռաւ ի խաչին. վկայէն և վիճուորք՝ որք զաւազակացն խորտակեալ զբարձս, զնորոյն ոչ խորտակե-

յին՝ զի այն ինչ մեռեալ էր. վկայէ և Պիղատոս՝ որ ոչ կամեցաւ չնորհել Յովսէփայ զմարմինն նորա մինչ չև գիտացեալ զի ստուգիւ մեռեալ էր. վկայէ և հարբիւրապետն՝ ականատես լեալ աւանդելոյ նորա զոգին. վկայեն և հրեայք՝ որք պահապանս առ գերեզմանաւն կացուցին, զի մի գուցէ աշակերտք նորա գիշերի գողանայցեն զմարմինն. եթէ թեթև ինչ կասկած լեալ էր նոցա թէ չիցէ տակաւին մեռեալ, հանդարտէին երբեք ի ձգանցն զրաւելոյ զնա ի կենաց: Համարեալ ևս թէ չէր տակաւին մեռեալ, մարթէր նմա կեալ յետ անցանելոյ տիզին ընդ կողս նորա՝ ուստի ել արիւն և ջուր, ապացոյց խոցուածոյ սրտին: Այս ամենայն հանգամանք խաչելութեան և թաղմանն Քրիստոսի անժխտելի կացուցանեն զմահ նորա:

Ասացին Քրիստոսի եղաւ ի գերեզմանի ի նմին իսկ աւուր մահու նորա յաւրբաթու երեկոյին. զգուշութիւն հրէից ի կնքել զգերեզմանն և ի կացուցանել անդ պահապանս վկայէ, զի գիտէին հաւաստեաւ ըզդնել անդ մարմնոյն. և ե հաւաստի զի ի կիւրակէի առաւօտուն ոչ ևս էր անդ մարմին նորա: Յարութիւն նորա այնպէս յայտնի ինչ էր, զի առաքեալք ոչ ինքեանք խաբիլ, և ոչ զայլս խաբել կարէին զայնմանէ. Քրիստոս երևեցաւ կենդանի ոչ միւմ և եթ ումեք՝ զի առաչօք ինչ կարծիցի, այլ բազմաց առանձինն, և բազմաց ի միասին. երևեցաւ մագդաղենացւոյն և կանանցն իւղաբերից, երևեցաւ ուղևորացն Էմմաուս. "Երևեցաւ Կեփայի, և ապա երկոտասանիցն. ապա երևեցաւ աւելի ևս քան զհինգհարիւր եղբարց միանգամայն... և ապա երևեցաւ Յակովբայ, ապա առաքելոցն ամենեցուն,,. (ա. Կոր. ԺԵ. 4:) Երևեցաւ ոչ յանուրջս կամ ի տեսլեան, այլ ի մունջեան, ի բազում ուրեք, ի պարտիզին, ի հասարակաց ուղւոջ, ի վերնատան, յեզը ծովակին Տիբերեադայ, ի վերայ միոյ ի լերանց Գալիլեոյ. ոչ առ վայր մի հարևանցի, այլ զաւուրս քառասուն երևեալ նոցա, և խօսեցեալ ընդ նոսա, և հաղորդեալ ընդ նոսա հացիւ: Եւ առաքեալքն ոչ միայն տեսին զնա յարուցեալ, ոչ միայն լուան խօսելոյ նորա, այլ և շօշափեցին զձեռս և զոտս նորա, և արկին զմատունս իւրեանց ի վէրս նորա:

«Օ՜ի խռովեալ էք, և ընդէր խորհուրդք ելանեն՝ ի սիրտս ձեր. տեսէ՛ք զձեռս իմ և զոտս զի ես նոյն եմ. շօշափեցէ՛ք զիս և տեսէ՛ք, զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ»: (Ղ. Ի. 39:) Այնմէ այսու ամենայնիւ Համարիցի ոք խաբեալ զառաքեալս, զինչ և զօրէ այնուհետև վկայութիւն զպայութեանց, զինչ զօրէ վկայութիւնն մարդկան՝ յոր հաստատեալն է կարգ ընկերական և ընկերութիւն առհասարակ:

Առաքեալք և ոչ զայլս խաբել կարէին զկարութենէ Քրիստոսի. զի զիսոյդ մարթէր այնպիսի առաստել ընդունելի առնել զառնէ՝ որ իբր հայհոյիչ և ապիրատ խաչեալն էր, և ցուցանել զնա Հրէից և սամարացւոց և բոլոր աշխարհի որպէս զՄեսիայն խոստացեալ, և որդի Աստուծոյ և Աստուած: Զիոյ իսկ ընդդեմ բնութեան խորհել ինչ այսպիսի անհնարին, և՝ ի գործ դնել զայն՝ զմահ յանձն առեալ առ՝ ի խաբել ևեթ զայլս: Այլ եթէ խորհել իսկ մարթէր նոցա զայս, ո՞չ վհատեին՝ ի տեսիլ անյաղթելի խափանաց՝ ի յաջողութիւն խաբէութեան իւրեանց. զիսոյդ հնար էր նոցա բառնալ անհետ առնել զմարմինն, որում Հրեայք ըզդուշանային զօրականօք. զիսոյդ հնար էր վստահել նոցա զի յայնքան բազմութենէ հինգհարիւրոց և աւելի ևս արանց ոչ ոք մատներ զխաբէութիւնն, և ծաղր զինքեանս կացուցանէր աշխարհի. զիսոյդ հնար էր չերկնչել նոցա յերիցանց և յիշխանաց ազգին, որոց յամօթ մեծ և՝ ի նախատինս էր խաբէութիւնն այն, և էին իսկ նոցա իրաւունք և զօրութիւն նշաւակելոց զայն և պատուհասելոց: Սրսիսի և իցէ ապշութիւն և յիմարութիւն չէ բաւական խիզախելոց ընդդեմ այսքանեաց և այսպիսի խաբանաց: Սա ասն այսր ամենայնի նախնի հաւատացեալք զկարութենէն Քրիստոսի կոչէին Վկայութիւն այսինքն ապացոյց կրօնիս մերոյ, և ըստ յոյն բարբառոյ Մարտիրիոն. ուստի և առաջին եկեղեցին՝ որ՝ ի պատիւ կարութեանն Քրիստոսի կանգնեալ յառաքելոցն յԵրուսաղէմ՝ ի վերնատունն Սիանի՝ կոչեցաւ Մարտիրիոն կամ մատուռն, զորոյ գիշատակին կատարեմք՝ ի կիւրակէի աշխարհամատրան: Այս անտի զամենայն եկեղեցիս սովորութիւն կալաւ կոչել մատուռն:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Տէր. Ա. — ա. Հրաշագործութիւնս Քրիստոսի վկայեն առաքեալք և Եւթ, որոց կեղակարծ է վկայութիւն զվարդապետէն իւրեանց. և ոչ հարցփորձ և քննութիւն երբեք օրինաւոր լեալ է զայնցանէ, վասն որոյ և փարիսեցւոց և գպրաց չեղեն ընդունելի, և առաքեալք իսկ եւթ հաւատարիմ զայնս համարէին՝ չթողուին զնա ի մահուն։ — բ. Նոյն է իմանալ և զնախասացութեանցն, որ ոչ ինչ աւելի են քան զգուշակութիւնս առն քաղաքագիտի. զի նշանք քաղաքականք հանդերձելոց կործանմանն Երուսաղէմի անդստին ի վեր երևէին, յորժամ գուշակեացն զայն Քրիստոս։

Պե. — ա. Հրաշագործութիւնս Քրիստոսի ոչ առաքեալք Եւթ վկայեն, այլ և պատմիչք Հրեայք և Հեթանոսք, թէպէտ և մոգական արուեստի ընծայեալ զայն։ Այլ թէ և առաքեալք Եւթ վկայէին, սակայն չէր մարթ կասկածել զվկայութենէ նոցա. զի իբր յայտնի ամենեցուն և հրապարակաւ գործեցեալս պատմեն զայնոսիկ, յականէ յանուանէ նշանակեալ և զայնոսիկ՝ յորոց վերայ հրաշքն էին գործեցեալ, և որք կարէին յանդիմանել զստութիւն բանից նոցա։ Եւ ոչ վարկպարապղի ինչ լեալ էր նոցա աշակերտել Քրիստոսի, այլ հարկ լեալ նոցա թողուլ վասն նորա զամենայն ինչս իւրեանց և զընտանիս և զկեանս իսկ իւրեանց փոխանակել։

Եւ թէպէտ հրաշքն գործեցեալք ի Քրիստոսէ չէին կարօտ քննութեան, զի աչք և լսելիք բազականք էին առ ի չերկբայելոց զայնցանէ, սակայն անօրինելովք Իւդայեցւոյ ի պատանաւմն անհաւատից՝ եղեն և խիստ հարցափորձք և քննութիւնք զուժկութենէ կուրին ի ծնէ, զի ազարու յարութենէն, զմահուանէ նորին իսկ փըրկչին և զյարութենէ, զի հրամանաւն Պիղատոսի ստուգեալ զմահ նորա, և զգերեզման նորա կնքեալ մատանեաւ քահանայից, և պահապանօք զգուշացան՝ զի մի աշակերտք նորա եկեալ գիշերի գողանայցեն զնէրուն մարմին։ Իսկ եթէ զայլոց հրաշից՝ որ յայտ

յանդիման առհասարակ էին գործեցեալ՝ չարարին ինչ քահանայապետքն և դպիրք հարցփորձ և քննութիւն ոչ այլ ինչ էին պատճառք՝ բայց զի գիտէին հաւատեալ զի չէր մնրթ յերկեայս արկանել զայնս, և զի առաջել ևս այնուիկ համբաւէին իրքն։

Վարիսեցիք իսկ և դպիրք ոչ ամենևքեան անհաւատք եղեն հրաշիցն Քրիստոսի. զի և Նիկոդեմոս և Յայրոս, և այլք ոչ սակաւք ի նոցանէ, և «յիշխանաց իսկ անտի բազումք հաւատացին ի նա» (Յհ. ժբ. 42.) «և բազում ժողովք ի քահանայիցն անսային հաւատոց». (Գործ. զ. 7։) Իսկ եթէ այլք նախանձու և չարութեամբ խոյին զաչս իւրեանց առ ի չտեսանելոյ զլոյս, չարութեան նոցա պարտ է համարել զայն, որպէս և երկիւղն, զառաքելոցն վայրիկ մի թողուլ զվարդապետն իւրեանց։

— ԲԱպաքէն գուշակել գուշակեսցէ մարդկային խոհականութիւն ինչ ինչ ստուգապէտ նշանօք, այլ ոչ երբեք զհանգամանս իրացն գիտել կարիցէ և մանրապատում առնել յառաջագոյն։ Քաղաքագէտ որ կարասցէ արդեօք գուշակել զկործանումն ուրուք ի պետութեանց, այլ որ ինչ ի կործանել անդ դէպք լինիցին, մանաւանդ յազատ պատճառաց, կարիցէ երբեք նախապատմել՝ որպէս արարն Քրիստոս զկործանմանէն Երուսաղէմի, և յայլ ամենայն կանխասացութիւնս իւր։ Ա Ղուկ. Բ. — և. Ա կայութիւն առաքելոց գեթ զյարութենէն Քրիստոսի ոչ ինչ զօրէ. զի նուաղունք և ոտիկք ամենք ի փառս վարդապետին իւրեանց վկայէին, ուստի և մեծի շահու յոյս էր նոցա։ — Բ. Ետանիչք ոչ միաբանին իրերաց ի պատմել զյարութիւն Քրիստոսի, և երկաքին ի լոյ ևեթ ասանդեն զայն։ — Գ. Ել անընդհատ՝ այլ երբեք երբեք երևել նորա յետ յարութեան, առ աչօք զերկուսին նորա կարծել առաքելոց, անգիտանալ նոցա և չհաւատալ զյարութիւնն նորա, այս ամենայն երկբայելի առնեն զայն։ — Դ. Ել ընդհ՚ր իսկ Քրիստոս յարուցեալ ոչ երևեցաւ թշնամեաց իւրոց, որոց խոստացեալն էր զայն առհաւատչեայ առ ի Ա՚ստուծոյ առաքման իւրոց. և ընդհ՚ր առաքեալք գիր վկայութեան ի Պիղատոսէ ոչ խնդրեցին ի հաւատս յարութեան։ — և. Ել պահապանքն և ոչ կնիք գերեզ-

մանին օգնեն ինչ. զի զզօրականն մարթէր գինւով և արծաթով որսալ, և թափուր թերևս գերեզմանն էր յորժամ կնքեցան, զի օր՝ի միջի անցեալ էր ընդ թաղումնն և ընդ կնքել գերեզմանին և կացուցանել առնովաւ պահ: Գերևս և ոչ իսկ մեռեալ էր Քրիստոս յորժամ աշակերտքն գնա իջուցին՝ի խաչէ. զի և Պիղատոս զարմացաւ՝ թէ այնչափ վաղ մեռաւ. ապա գարմանեալ առ փոքր ի՝ի վիրացն և կազդուրեալ՝ի զօրութիւն՝ երևեցաւ ծածկաբար առաքելոցն իբր՝ի մեռելոց յարուցեալ:

Պա.— ա. Զթէ չէր տեսեալ առաքելոց զՀրաշագործութիւնս Քրիստոսի, ոչ գնային զհետ նորա՝ յանձն առեալ զամենայն նեղութիւնս և զմահ, և ոչ յետ տեսանելոյ զմահ վարդապետին իւրեանց՝ իշխէին տալ վկայութիւն զյարութենէ նորա: Զառաջ քան զսփռել նոցա յայլ և այլ աշխարհս՝ի քարոզութիւն, որ յետ տասնամեայ ժամանակի եղև, ոչ գագարէին՝ի քարոզելոյ՝ի հրեաստան, "Եւ զօրութեամբ բազմաց տային վկայութիւն զյարութենէ տեառն Յիսուսի Քրիստոսի. (Գործ. գ. 33.) և նուազունքն այնոքիկ և ռամիկք բիւրաւորս յամենայն կարգաց աճէին՝ի հաւատս, նշանօքն և զօրութեամբք՝ որ՝ի ձեռս նոցա ըստ խոստմանն Քրիստոսի գործէին: Եւ մեծամեծ շահք նոցա՝ի վկայելոյ զյարութենէն Քրիստոսի՝ էին գանք և բանտք և մահ և կորուստ կենաց: Ոմն զի և ոչ առաքեալք միայն եղեն վկայք յարութեանն Քրիստոսի, որպէս՝ի վեր անդր ցուցաք:

— բ. Ամիաբանել աւետարանչացն՝ի մանրապատում հանգամանս յարութեանն՝ որպէս Թուի վեր՝ի վերոյ, յաւելու զհաստատութիւն իրին՝ յոր միաբանին ամենեքեան: Ո՛չ ոչ օտար ինչ է տարաձայնել վկայից՝ի հանգամանս ինչ իրաց, ուր չիցէ նոցա միաբանեալ համախոհութեամբ՝ի տալ: Այլ երկուց աւետարանչացն՝ի լոյ ևեթ գրել՝ ոչ ինչ տնտանէ իրացն ճշմարտութեան, ուր յականատես վկայից ընկալեալ զայն, և հրատարակէին ուր մարթ էր ամենեցուն զտութիւն նոցա ածել յերևան:

— գ. Քրիստոսի յետ յարութեանն ոչ ամենեցուն երևել և ոչ ընդ ամենեսին կենցաղավարել՝ աստուա-

ծային կամացն և խնամատուԹեան էր անօրէնուԹիւն, որ ոչ իւիք կարէր ՁնմարտուԹեան իրացն ստանալ. զի երեւել նորա կանանցն իւղաբերից և ապա Պետրոսի, և ապա առաքելոցն բազում անգամ, և տալ նոցա շօշափել զձեռս և զկողս իւր, և ապա հինգհարիւր եղբարց 'ի միասին, և ապա Յակովբոսի գլխաւորի եօԹանասնաւն և երկուց աշակերտացն, և ապա նոցին իսկ աշակերտացն ամենեցուն, և ուտել և ըմպել ընդ առաքեալս և ընդ ուղեւորսն Էմմաուս, և ակն յանդիմման ամենեցուն նոցա Համբառնալ յերկինս, առաւելեալն բաւականք էին հաւաստի առնելոյ զյարուԹիւն իւր: Իսկ առաքելոցն սասանել և ոչի ինչ կարծել տեսանել յերեւել նոցա փրկչին, մանաւանդ զրօքն փակելովք, բնական իմն էր և յանկարծական, որ անց վաղվաղակի 'ի սկսանելն Քրիստոսի խօսել և հանդարտել զնոսա: Եւ չհաւատալ նոցա բանից իւղաբեր կանանցն հաստատէ մանաւանդ զՁնմարտուԹիւն իրացն, զի ոչ որպէս կարծեցին առարկուք՝ դիւրահաւան գտան առաքեալք, այլ յետ քննելոյ զիրան և ստուգելոյ և ականատես լինելոյ հաւատացին. և Թոմասու ցայն վայր Թերահաւատեալ, մինչև յետ շօշափելոյ զնշան բեւեռացն և զկողս փրկչին՝ ապա հաւատաց. վասն որոյ և յանդիմանեցաւ իսկ 'ի տեառնէ:

— Դ. Իսկ երեւել Քրիստոսի Թշնամեաց իւրոյ յետ յարուԹեանն, ոչ միայն որպէս 'ի վեր անդր ասացաք՝ աստուածային կամաց և խնամատուԹեան էր խորհուրդ, այլ և զի անարժանք այնմ ընծրհի էին նոքա, և բաւական էր նոցա այնքանեաց ականատեսից վկայուԹիւն յառհաւատչեայ յարուԹեանն Քրիստոսի: Զմանապէս և գրաւոր վկայուԹեանն Պետրոսի էին ինչ պէտք, ուր նշանք՝ որ 'ի ձեռս առաքելոցն գործէին՝ հրաշագործունք յոյժ քան զայն էին ապացոյցք յարուԹեանն Քրիստոսի:

— Ե. Զի 'ի ցրել զգօրուԹիւն կինքելոց գերեզմանին և պահապանացն զգուշուԹեան՝ պարտ էր ապուշս համարել զհրեիսն և զխորամանկ հակառակորդս Քրիստոսի, որ անտեղի է: Ո՛չ ընդ հակառակն պարտ է համարել, նախ քան զկինքել գերեզմանին՝ արարեալ նոցա զամենայն զգուշուԹիւն. պարտ է համարել՝ զի ա-

ջօք իւրեանց կամեցեալ իցէ նոցա տեսանել զմարմինն տէրունական և ձեռօք զննեալ, և պահապանս հաւատալ՝ ըստ կացուցեալ և ստէպ զնոսին փոփոխեալ և լրտեսս ՚ի վերայ նոցա կացուցեալ, որպէս Թէլադրէրն նոցա ո՛խերիմ ատելութիւն զայս ամենայն։ Օ՚նոյն զգուշութիւնս և վասն ստուգելոյ զմահն Քրիստոսի համարեա՛լ է արարեալ նոցա։ Եւ տիգախոց հարուածն ևս կողին, ուստի բղխեացն արիւն և ջուր, բառնայ զամենայն երկբայս զմահուանէ նորին. և զարմանք Պիղատոսի ընդ այնչափ վաղ մեռանել նորա՝ յաւելու զհաստատութիւն իրացն, ստուգելով նորա զայն ՚ի ձեռն հարիւրապետին առ ՚ի չնորհել Յովսեփայ զմարմինն տէրունական։ Ի ժխտել զհրաշս յարութեանն Քրիստոսի համարին նման առարկուք ոչ ինչ ընդհատ հրաշագործեալ, բժշկելով զկեղեքեալ և զկարեվէր մարմին իւր ՚ի ժամ իբր քառասունն, և կազդուրեալ առաքեալն ՚ի զօրութիւն յետ այնքանեաց զառն չարչարանաց և արեանհեղութեան։

ԳԼՈՒԽ Ե

ՀՐԱՇԱԼԻ ՏԱՐԱԾՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ, ԱՊԱՑՈՑՑ ԱՌԱՔՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌ Ի ՑԱՂՏՈՒԽՄՈՑ

Զկեր և չէր մարթ տարածանել քրիստոնէութեան վաղ ընդ փոյթ ընդ տիեզերս, և դառնալ հեթանոսաց ՚ի քրիստոնէութիւն, եթէ չէին ՀՀմարիտ հրաշագործութիւնք Քրիստոսի և աշակերտաց նորա։ Զանազ այսոցիկ, և առանց մեծագոյն ևս հրաշից ընծրհացն Սուրբ, չէր մարթ առաքելոյ տգիտաց անշնանիցս աղքատաց և տկարաց երկնել զկորհուրդ փոխելոյ ըզկրօնս Հրէից և հեթանոսաց։ Եւ եթէ երկնէին իսկ խորհուրդ այսպիսի՝ անմիտ ըստ մարդկօրէն մտածութեան, ոչ երբեք կարէին ածել զայն ՚ի կատարումն. և եթէ ածէին, դերագոյն ևս քան զայլ ամենայն հրաշս հարկ էր համարել զկատարումն խորհրդոյ նոցա։ Ալբիոյն ( )գոստինոսի է ձեռնարկութիւնս այս, որ այսպէս ՚ի գիրս յաղագս քաղաքին Սուրբ իմաստասէ-

ըէ. (գէր՛ իբ. գլ. է:) "Արբեակ ուրեմն անհաւատալիք են, որ արդեամբք կատարեցան. անհաւատալի՝ Արիստոսի յառնել մարմնով, և մարմնով յերկինս վերանալ. անհաւատալի՝ զգոյն անհաւատալի հաւատալ աշխարհի. անհաւատալի՝ մարդոյ անտռհմից տրպայ ստկաւուց անիմաստից զմեծ զայդ անհաւատալի ազգս զապէս հաւանեցուցանել աշխարհի, և որ՝ի նմա պիտ նաւորաց էս: Յերից այսոցիկ անհաւատալեաց զառաջինն չկամին դոքա՝ առ որս խօսիմքն՝ հաւատալ. զերկրորդն բռնադատին տեսանել իսկ, այլ չունիցին ասել ուստի եղև՝ եթէ զերկրորդն ոչ հաւատան: Այսպէսն յարուցիւն Արիստոսի, և յերկինս ամբառնալ մարմնով յարուցեալով, ընդ աշխարհ ամենայն ահա քարոզեալ է և հաւատացեալ. եթէ չհաւատալի իցէ, զիա՞րդ ընդհանուր տիեզերս հաւատացեալ գոյ: Եթէ արդեօք բազումք աղնուականք և հզօրք և իմաստունք աստցին տեսեալ զայն յառնել, և զոր տեսինն՝ փոյթ կալան համբաւել, ոչ ինչ զարմանք են թէ հաւատայ նոցա աշխարհ, և զոցա խիստ է անհաւատանալ այլ ևս: Այսպա եթէ, որպէս էն իսկ Ճշմարիտ, սակաւուց ոմանց աննշանից յետնոց անուսից ասացեալ և գրով առանդեալ թէ տեսին զայն՝ հաւատս ընծայեաց աշխարհ, զի սակաւքդ կամակորեալ կան մնան անհաւատք աշխարհի՝ որ հաւատացեալն է: Ալ սա յայն սակս հաւատաց սակաւաթիւ արանց անտռհմից անարգաց չըգիանոց, վասն զի հրաշափառագոյն ևս յարհամարհս վկայեն յայնոսիկ աստուածութիւնն ինքնին հաւանեցուցանէր. զի առ՝ի քարոզչացն ասացեալ պատգամք ոչ բանք սուտ էին, այլ հրաշագործութիւնք: Վասն զի ոչ ոք զԱրիստոս չէր տեսեալ մարմնով յառնել և նովիմբ յերկինս վերելակել, հաւատային տեսողացն զնոյն ոչ լոկ բանիւքն պատմելոյ՝ այլ և զարմանագործ նշանացն յուցմամբ: Ալ ասն զի արանց, որ միում լեզուի՝ կամ թէ աւելի՝ երկուց և եթէ գիտակք էին, լսէին յեղակարծումն զամենայն ազգաց բարբառս համարձակախօսել. կաղն յորովայնէ մօր ծնելոյ՝ յետ քառասնամեայ հասակի՝ բանիւ նոցա յանուն Արիստոսի ողջանգամ ընթանալ. Թաշկինակաց առելոյ՝ի մարմնոյ նոցա՝ ազգել յախտաժետացն բժշկութիւն. յանցանել նոցա

ընդ փողոց՝ վտանգելոց ի պետպետս ախտս կալ դասաւորեալ բազմութեամբ, և ի հպել հովանւոյ անցորդացն՝ վաղվաղակի յառողջութիւն պատսպարիլ. բազում և այլս հրաշանշանս նոքօք ներգործեալս յանուն Քրիստոսի, մինչև ապա զմեռելոց յառնել տեսանէին նոքա։ Եթէ հաւանին թէ այսոքիկ որպէս ընթեռնուքն՝ լինելով եղեն, ահա զյոլովագոյն անհաւատալիս յաւելումբ յայնս երիս. և առ հաւատարիմ լինելոյ միոյ անհաւատալւոյն՝ որ յաղագս մարմնոյ յարութեան և յերկինս վերանալոց, բերեմք զումարեմք զմեծամեծ վկայութիւնս անհաւատալեաց. և ոչ այսու ամաչել դեռ կարողանամք զանհաւանիցն խստասրտութիւն սաստափելի։ Ապա եթէ չհաւանին թէ այս աքանչելիք գործեալ իցեն առաքելովք առ ի հաւատս յարութեան և վերացման Քրիստոսի՝ զոր քարոզէինն, այս մի միայն աքանչելիք մեզ շատ է՝ զի տիեզերական աշխարհ հաւատացեալ իցէ զյարութիւն Քրիստոսի առանց միոյ իրիք աքանչելեաց ,,։

Ի վերայ այսոցիկ պարտ է յաւելուլ և զհալածանս, որ խափանէին զտարածումն քրիստոնէութեան՝ զինուս բեալ ընդդէմ հաւատացելոց։ Ատելութիւն հրէից և փարիսեցւոց, բռնաւորութիւն կայսերաց և թագաւորաց, անգթութիւն քաղաքապետաց և դատաւորաց, զայրոյթ և մոլեգնախանձ կատաղութիւն ժողովրդոց, անդատին ի սկզբանէ քրիստոնէութեան մինչև ցդարձ Կոստանդիանոսի ոչ դադարեցին ի հալածելոյ զհաւատացեալս։ Առաքելոցն Յիսուսաղէմ բանտարկութիւն և գանահարութիւն, նախավկային քարկոծումն, Սողոսի զարս և զկանայս կապեալս ածել Յիսուսաղէմ, և նորին իսկ հրաշալի դարձ և հալածումն ի հրէից, հերոմովգէսի ջարչարել զհաւատացեալս, զՅակովբոս զեղբայր տեառն սպանանել սրով, և զՊետրոս իսկ ունել ի բանտի՝ առ ի սպանանելոյ զնա առաջի ժողովրդեան, և բոլորից իսկ առաքելոց դատափետիլ, այս ամենայն պատմին ի գործս առաքելոց։

Իսկ զներոնի հալածանն ընդդէմ քրիստոնէից պատմէ Տակիտոս վիպագիրն անկասկածելի, թէ որպէս հրդեհ ի Հռոմ արկեալ՝ զնաստապարտս հրդեհին կացոյց զքրիստոնեայս, և ազգի ազգի կտտանօք ետ զնո-

սա սպանանել անդէն յիւրում պարտիզին, լուսաւորեալ զայն նորահնար ջահիւք՝ ցցապատ մարմնովք նոցա բոլբոքելովք։ Ի նոյն հալածանս և երկոքին գլխատուր առաքեալք արեամբ իւրեանց վկայեցին ՚ի վերայ քրիստոսական հաւատոյ։

Ա՛ՆԴՐԵՈՍ միայն, այլ և ՊԵՏՐՈՍ նորա Դամետիանոս, Տրայիանոս, Ներոս, Դեկոս, Ադրիանոս, Ալեքսիանոս, Վոկղետիանոս, Մաքսիմիանոս և Դաղերոս, հանգոյն նմին հրովարտակս արիւնահանձս ընդդէմ քրիստոնէից հանեալ՝ դատապարտէին զնոսա ՚ի մահ, փոխանակելով նոցա զանձինս վասն անուանն Քրիստոսի։ Ուսակալք և քաղաքապետք ընդ ամենայն սահմանս լայնածաւալ ինքնակալութեանն Հռովմայեցւոց յաւելուին և աս քան զնս ՚ի խստութիւն հրովարտակի ինքնակալացն, և ժողովուրդ անգութ և նանրահաւատ զաղաղակ հարեալ՝ խնդրէր զարիւն քրիստոնէից, և չարչարանք նոցա և մահ կացուցանէր զտեսարանս դաղանային զբօսանաց նորա։

Ա՛Ր իսկ է մարթ ունել զհաշիւ վկայելոցն ընդ դարս երիս անընդհատ հալածանացն. արք և կանայք, ծերք և տղայք, Հոիք և աղքատք, ասպգ և ռամիկք, տային զանձինս ՚ի մահ այնու արիութեամբ և զուարթութեամբ, մինչև զէնընկէց առնել յաձախ զդահիճս։ Ա՛յլ առաւել քան զամենայն հաւատացեալս՝ հալածեալք լինէին եպիսկոպոսունք, երիցունք և սարկաւագունք, և առաւել քան զամենայն եկեղեցիս՝ Հռոմէականն կրէր հալածանս, ուր առաւել քան զհարիւր բիւրս հաշուին վկայեալք ՚ի Հռովմ։ Ա՛յրեսուն քահանայապետք Հռովմայ արեամբ իւրեանց կնքեցին զաւետարանն՝ զոր քարոզէին. և սաստկագոյն քան զամենայն հալածանս առ Վոկղետիանոսիւն եղև, զորմէ ասէ Ա՛ւետիք ժամանակակից պատմիչ. "Ոչ իսկ մարթ ասել քանիք ընդ ամենայն տեղիս և ընդ քաղաքս ինքնակալութեանն վկայք եղեն Քրիստոսի,,։ Ա՛յնչափ կարծել հեթանոսաց սպառեալս զնոսա. զի և զրամ զրոշմեալ ՚ի Վոկղետիանոսէ բերէ զարձանագիրս զայս. Ի ԲՆԱՋԻՆՉ ԲՈՒՅՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԱՆ ԱՆՈՒԱՆ։ Ա՛յլ խաբեցան. զի յաբենէ քրիստոնէից, ասէ Տերտուղիանոս, բողբոջեցին քրիստոնեայք. խոնջեցան, վաստակաբեկ եղեն հալա-

ծիչք, և ժողովուրդք հիացեալ ընդ սրբութիւն վարուց նոցա և ընդ արիութիւնն գերաշխարհիկ՝ որով դիմէին ՚ի մահ, գոնդագոնդ դառնային ՚ի հաւատս։

Ոչ այսոսիկ ոչ դուշնաքեայ ինչ պատմիչք աւանդեն, և ոչ քրիստոնեայ եւեթ մատենագիրք Թէոդորետոս, Լևոն, Գոռտինոս, Սուլպիկիոս Սեւերոս, Հերոնիմոս և Սոկրեբերան, և վկայք ժամանակակիցք Նսաեբիոս, Լակտանտիոս, Ընոբիոս, Կիպրիանոս, Որոգինէս, Մինուտիոս Փիլիքս, Կղեմէս աղեքսանդրացի, Տերտուղիանոս, Նրանոս, Թենագորաս, Թէոփիլոս անտիոքացի, Մելիտոն սարդիկեցի և Յուստինոս, այլ և հեթանոսք ինքնին Մարկոս Աւրելիոս և Մաքսիմինոս երկրորդ՝ ինքնակալք, Սուետոնիոս, Տակիտոս, Պլինիոս կրտսերն, Սպարտիանոս, Վոփոն, Ալբիանոս, Լամպրիդես և Լիբանիոս։ Ամիք ինչ ՚ի պատմութիւնս հաւատարմագոյն ինչ քան զայս. և ստորերկրեայ դամբարանք Հռովմայ, լայնածաւալք քան զքաղաքն, և լուսիք մարմնովք վկայից, վկայեն անժխտելի՝ արձանագրութեամբքն որ ՚ի նոսա, տանջանարան գործեացն քանդակօք ՚ի վերայ գերեզմանացն, և անօթովք արեան՝ որ ընդ սուրբ նշխարս նոցա կան և մնան ցարդ առհաւատչեայ ճշմարտութեան քրիստոսական կրօնիցս։

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆՔ

Ընդդէմ. — ա. Քրիստոնէութեան արագ արագ տարածումն ՚ի հանդիսպմանէ բնական պատճառաց յաջողեր։ Քանզի ազգք և ազինք կցորդեալ էին ընդ իրեարս ընդ հռոմէական պետութեամբ. և ժողովուրդք տաղտկացեալ ՚ի կռապաշտութենէ, և ՚ի ձեռն խնամատարութեաց ծանուցեալ զանտեղութիւն նոցա, պատրաստք կային ընդունելոյ զնոր և իսկ այլ կրօն. և ՚ի հակառակն գործք մարդասիրութեան, աղքատանոցք, հիւանդանոցք, անկեալանոցք, որբանոցք, և դիւրութիւն ընդունելոյ զթողութիւն մեղաց հրաւիրեցին զազգս ՚ի քրիստոսական կրօնս։ — բ. Քաջութիւն և նորութիւն խրատուն, և օրինակ Թագաւորաց և իշխանաց, և ինքնակալացն բռնութիւն ընդդէմ կռապաշտից օգնեցին քրիս-

տանէութեան : — ԺԲ. Այնպէս և մահմետականացն և նորաշնդից կրօնք արագ արագ տարածեցան , այլ ոչ որ դերբնականս զայնոսիկ համարի : — ԺԳ. Այլ միով բանիւ առ նմս ի սկզբան անդ տարածեցաւ քրիստոնէութիւն , բայց առ ռամիկն և առ արս տգէտս , որք ոչն կարէին առնել դատաստան զձշմարտութենէ քրիստոնէական կրօնիս :

ՊԽ. — Ա. Արդարև հանդիպումն բնական պատճառացդ օգնեաց տարածման քրիստոնէութեան , ի տնօրինելոյ աստուածախնամ տեսչութեանն էր այն՝ առ ի դիւրել զտարածումն նորին . այլ ոչ եթէ բաւական արտաքին պատճառքն այնոքիկ էին տարածանելոյ քրիստոնէութեան , եթէ չէր ներքին պատճառ ձշմարտութիւն նորին : Ոչ ի եթէ բաւականք այնոքիկ էին , ընդէր և Հրէաստան և Հռոդայի գալիլեացւոյ , և Աթենքիոսի ախանացւոյ , և այլ ևս այնր ժամանակի աշխարհք ոչ յաջողեցան նոցին արտաքին պատճառօք : Այսպա ուրեմն այլ պատճառ խնդրելի է . և չկայ այլ , բայց ի աստուածայինն էր վարդապետութիւն Քրիստոսի , և ինքն Աստուածոյ առաքեալ :

Ոսկ հիւանդանոցք և անկելանոցք և այլ ևս մարդասիրական գործք , ոչ պատճառք են տարածման քրիստոնէութեան՝ այլ արդասիք նորին . և դիւրութիւն Թողութեան մեղաց զկնի հաւատոյ աղղի ի սիրտ , իսկ առանց հաւատոյ առաւել ևս քան զնախնահաւատ աբարոյութիւնս հեթանոսաց կրէ դժուարութիւն քրիստոնէականս խորհուրդ ապաշխարութեան :

— Բ. Ի դառնալ ինքնակալաց ի հաւատս , վաղ իսկ մեծ մանն Հռոմէական սահմանաց դարձեալ էր . և զինացորդս ևեթ կռապաշտութեան թարձին նաքա . իսկ նորաձևութեան հրապոյրք զօրել զօրեն ի զեղծմունս և յապականութիւն բարուց , այլ ի խստակրօնութիւն ոչ ևս . մանաւանդ ի յեզափոխութիւն հաւատոյ և կանխակալոյ մտահաճութեան : Այեթէ օրինակ թագաւորաց և իշխանաց զօրեր ինչ յայսպիսիս , ոչ էր հնար աձել քրիստոնէութեան յառաջին երիս դարս :

— Գ. Ոսկ յերկուց անտի կրօնիցն տարածելոյ որք ի դէմս բերին , առաջինն սուսեր ի ձեռին եբայեցւոյ և Ճանապարհ դիւրին ընդ զառ ի վայր , այսինքն ի

տածուն ախտից և յապականութիւն բարուց, և՛ի կրօնս՝ որ նեղէ զգայութեան զամենայն։ Սակ բազում ոչ նոր ինչ հնարեցաւ կրօնս, այլ ընդ գեղեցիկ պատրուակաւ լուսանոյշ բարեկարգութեան, թօթափեալ զուծ հպատակութեան, բարձեալ՝ի բաց զկուսական կենցաղ եպիսկոպոսաց և զվարդապետաց, յափշտակեալ և ամենեցուն հասարակաց արարեալ զինչս եկեղեցւոյ, ըստ հաճոյութեան մտաց յերիւրեալ զհաւատոյս, զխոստովանութիւն՝ի բաց մերժեալ, և դիւրին իմն կրօնս քրիստոնէութեան յարմարեալ, ՚ի պատրանս խաբէութեան էարկ զաշգս։

— Ո՛չ ընդունիմք զի՛ ի սկզբան եկեղեցւոյ ռամիկն ևեթ և տգէտք եկեալ իցեն՝ի հաւատս։ Այլ արդարև ի մաստութիւնն Աստուծոյ զտգէտս առաւելապէս կոչեաց՝ի սկզբան, և զնոսա ընտրեաց քարոզս՝ զի մի մարդկային Հարտարութեան ընծայեսցի տարածումն քրիստոնէական կրօնից։ Այլ՝ի ձեռն նոցա ած՝ի հաւատս և զգիտունս և զիմաստասէրս, որպէս վկայեն արձանագիրք և եկեղեցական պատմութիւն։ Այս զարձեալ՝՚ի դատաստան ռամկին ոչ է վստահել, եթէ յանկարծ ինչ խռովութեամբ և զրգռութեամբ յուզեալ գայցէ՚ի համախոհութիւն. այլ ոչ ևս՝ եթէ տակաւ և հանդարտութեամբ դատեալ, և տուժիւք համբաւոյ և ընչից և կենաց գայցէ՚ի հաւանութիւն։ Սակ վարդապետաց և գիտնոց դատաստանաւ յամենայն դարս եւ յոյժ Աստուած, զի ոչ զաչացու տգիտութեամբ ընկալեալ էր ռամիկն զքրիստոնէութիւն, և յամենի արար նոքօք զնոսոի Հարտարմտութիւն իմաստնոց։

ԳԼՈՒԽ Զ

ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ԵԻ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՆԱՆՆ ՓՐԻՍՏՈՍԻ, ԱՊԱՑՈՑՑ ԱՌԱՔՍԱՆ ՆՈՐԱ ԱՌ Ի ՑԱՍՏԱՒԻԾՈՑ

Վարդապետութիւն Քրիստոսի քովանդակի՚ի չորեսին աւետարանս և՚ի նոր կտակարանս առ հասարակ. զի ոչ է մարթ զանազանել զբանս առաքելոց՚ի բանից վարդապետին իւրեանց, որոյ եւինն պատգամաւորք։ Այլ

վարդապետութեանս այսմիկ, ոչ ըստ մտացոյ հաւատոյ, ոչ ըստ պաշտամանց, և ոչ ըստ բարոյականին, մարթ էր մարդկօրէն հնարաւորել ի ժամանակին՝ յորում Քրիստոս եկն յաշխարհ։ Այս՝ ըստ մասին հաւատոյ ի մելոտութիւնս և ի պղծութիւնս կռապաշտութեան խորասուզեալ կայր յայնժամ աշխարհ։ Իբեայք իսկ՝ որք պաշտէին զաճ Աչմարիա՝ օտարացեալ էին ի մխիթարական օրինաց ի մելոտութիւնս սագուկեցւոց և ի մնոտի աւանդութիւնս փարիսեցւոց։ Եւ դարձեալ ազգն այն երկրաքարշ անկեալ ընդ ձեռամբ օտարաց, աշխարհակալ ոք համարէր զԱեսիան՝ ահաւասիկ գերեվարացն իւրոց, մոռացեալ ամենևին զմարգարէս՝ որ այնպէս բացայայտ պատմէին զիմնարհութիւնս նորա, և փրկիչ աշխարհի զնա քարոզէին։ Սակայն Քրիստոս երևեալ ի Նազարեթ, առաջարկէր նոր օրէնս կարևոր ամենայն աղգաց երկրի. և ածեալ ի յիշատակ զսկզբնական հաւատս՝ որոց հաղիւ ճնային հետք աղօտք առ հեթանոսս, մեկնէր զայնոսիկ, քայտարէր, և հրամայէր առաքելոցն ուսուցանել զայնոսիկ ամենայն աշխարհի։

Նահապետք, Մովսէս, և ամենայն մարգարէք ուսուցանէին մի Աստուած արարիչ երկնի և երկրի. Քրիստոս յառաջ ևս մատչի, և ուսուցանէ մեզ զի Աստուած զամենայն ինչ արար Բանիւ՝ որ է միւս ևս ինքն, և զի Հոգին սուրբ՝ որ խօսեցաւն ի մարգարէս՝ մի և նոյն Աստուած է, համագոյ ընդ Հօր և ընդ Որդւոյ. Երեէին ոմն։ Որ նախնեաց ընդ աղօտ ևեթ էր տեսեալ, Քրիստոս ուսուցանէ զայն բացայայտ։ Մովսէս ասէ. "Լսա Աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում,,. և զխորհուրդ բանին յայտնէ Քրիստոս ի պատուիրել անդ առաքելոցն. "Կրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,,։ Հետաքրքրանին էր ծանուցանել մեզ զխորին և զանհաս խորհուրդ գերաբնուն էին, զանձառ միութիւնն նորա և զանբաժանելի Երրորդութիւն, ինքն ընդ ինքեան հաղորդակից։ Եւ խորհուրդս այս սրբոյ Երրորդութեան առաջնորդէ մեզ ի խորհուրդ մարդեղութեան, այսինքն Որդին Աստուծոյ մարդացեալ։ Արդ օտարացեալ մեղօք Աստուծոյ՝ չկարէ դառնալ ի հնորհս առանց

միջնորդի, որ զաստուածայինն և զմարդկայինն բնութիւնս համանգամայն բերելով յինքեան՝ "մերձեցուցէ զնա առ Ած, և հաշտեցուցէ զարարածն ընդ արարչին ,,։ Յայսմ խորհրդեան փայլէ արդարութիւն և ողորմութիւն Այ. արդարութիւն՝ զի խնդրէ զհատուցումն մեղաց, և ողորմութիւն՝ զի չնորհէ մեզ 'ի ձեռն խոնարհութեան և մահուան աստուածամարդոյն հնարս հատուցանելոյ աստուածային արդարութեան զփոխարէնս մեղաց մերոց։ Խորհուրդ փրկութեան զհետ գայ անկման նախաստեղծին, և ազգի մարդկան կորուսանելոյ ընդ նմա զչնորհսն Աստուծոյ։ Ահա այսմ օրինակի գիրք նորոց կտակարանաց յածին զսկզբնական մեղաւք առաւել քան զհին կտակարանս։

Նաւատք աստուածախնամ տեսչութեան այլայլեալ էր առաւելապէս առ հեթանոսս, և Պրիստոս խրատէ զաշակերտսն. "Ոչ ապաքէն հինգ ձագք երկուց դանգաց վաճառին, և մի'ինոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ. այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է, մի երկնչիք՝ զի քան զբազում ձագս լաւ էք դուք.(Ղ. Ժք. 6։) "Մի հոգայք վասն ոչուոց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, և մի վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. Հայեցարուք 'ի թռչունս երկնից, զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն 'ի շտեմարանս. և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ոչ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա ,,. (Մատ. Զ. 25։) Մովսէս ըստ նախախնամութենէ խօսի առաւելապէս ըստ ժամանակաց կենցաղոյս, և խոստանայ Երէից զթող երկնից, ըստ պարարտութիւն երկրի, և յաղթութիւն ընդդէմ թշնամեաց, եթէ կացցեն յօրէնս տեառն, և սպառնայ առ նոսա աշխարհական՝ եթէ հեռասիցեն։ Իսկ Պրիստոս խօսի առաւելապէս ըստ հոգեկան մասին զնախախնամութենէ. "Մի այսուհետև հոգայցէք և ասիցէք՝ զինչ կերիցուք կամ զինչ արբցուք կամ զինչ զգեցցուք, զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն։ Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ ,,. (անդ. 31)։

Հեթանոսք համարէին սկզբնապատճառս բարեաց

զՀրեշտակս, և չարեաց զդևս, և ընդ դիս պաշտելին զերկաքանչիւր. իսկ աւետարանն ուսուցանէ մեզ պաշտօնեայս Աստուծոյ զՀրեշտակս, և չարանախանձ թշնամիս երանութեան մարդոյ զդևս այսինքն զապստամբ Հրեշտակս, որ հրապուրեն զմեզ ՚ի չարն, այլ չկարեն բառնալ զազատութիւն մեր և խափանել զմեզ ՚ի բարին։

Հաւատք անտի կենայց պահէին առ հեթանոսս ՚ի սնոտի պաշտամունս դից. այլ նախնի իմաստասէրքն յերկբայս արկեալ էին զյաւիտենականութիւն պատժոց։ Որինք մովսիսականք հաստարին զայն աներկբայելի քան թէ ուսուցանեն։ Իսկ Քրիստոս յայտնի բացատրէ զայն. "Եւ երթիցեն նոքա ՚ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն ՚ի կեանսն յաւիտենականս,,։ (Մատթ. ԻԵ. 46։) Ուսուցանէ և զյարութիւն մարմնոց ՚ի վախճան ժամանակի. զի որ ՚ի պատկեր Աստուծոյ ստեղծաւն, որ միաւորութեամբ որդւոյն Աստուծոյ ընդ մարդկային բնութեանս և ընդ հոգւոյս մերում այնքան աղնուացաւն, և որ աստուածային արեամբն գնեցաւ, մի հոգ ՚ի գերեզմանի միասցէ յաւիտեան. այլ չարին և բարւոյ եղեալ ՚ի մեզ գործի, հաղորդ լիցի ընդ մեզ երանութեանն կամ թշուառութեան՝ որ պահի մեզ։

Ախնիք ազօտ ինչ ունէին գիտութիւն զընորհաց, որ յուշ ածէ մարդոյ զկարօտութիւն նորա և զերջանիկ հարկն դիմելոյ միշտ առ ՚ած, միանգամայն և զվէրան ընկալեալս ՚ի մեղաց և որ անտի միացեալ ՚ի նմա տկարութիւն։ Քրիստոս ուսուցանէ մեզ յայտնապէս, զի չկարեմք ինչ առնել մեզինն՝ առանց շնորհացն Աստուծոյ ըստ մասին յաւիտենական փրկութեան։ Ը նորհք ըզմիտս մեր լուսաւորեն, զօրացուցանեն զկամն, և տան մեզ բառականութիւն գործելոյ գերաշխարհիկ առաքինութիւնս. և շնորհքս այս պարգևի մեզ վասն արժանեաց փրկչին մերոյ՝ որ մեռաւն ՚ի փրկութիւն աշխարհի։ Ասն որոյ օրէնք աւետարանականք ՚ի կարևոր մասն ՚ած֊ային պաշտամանն ունին զնորհուրդ պատարագին, որով նորոգի ՚ի մեզ խորհրդաբար՝ այլ իսկապէս՝ պատարագն որ ՚ի վերայ խաչին. խորհուրդ անձառելի, որով Քրիստոս հանապազորդ կալ ինքնին ընդ մարդկան առհաւատչեայ յաւիտենական երանու֊

Թեան՝ որ է անմիջաբար ժառանգութիւն Աստուծոյ, որ ինքն կամի լինել վարձք մեր։ Այսոքիկ են գլխաւոր մասունք քրիստոնէական վարդապետութեան։

Երկրորդ ըստ պաշտամանց՝ ոչ ինչ նուազ է հրաշալի վարդապետութիւն Քրիստոսի։ Պաշտամունք հեթանոսաց թշնամանք էին առ Աստուած, և անարգանք մարդկութեան. մնապաշտութիւն զառածեալ՝ի գիտութենէ հարկի քաւութեան, խնդրէր ցածուցանել զցասումն դից հեղմամբ մարդկեղէն արեան։ Ըստ աւետարանին՝ որդին Աստուծոյ պատարագեալ՝ի խաչին՝ի քաւութիւն և՝ի փրկութիւն մարդկան, անարատ գառն Աստուծոյ զենու՝ի վերայ սեղանոց մերոց առ՝ի բառնալ զմեզս աշխարհի։ Մովսիսական օրինաց պաշտամունք ծանրաբեռնեալ էին արտաքին և տեղական իրօք, որ Երեից և եթէ էին պատկանաւորք. իսկ աւետարանական պաշտաձին ամենայն ազգաց, և ընդ ամենայն երկիր մարթ է կատարել զայնոսիկ. զի զներքինն առաւելապէս խնդրեն. "Եկեսցէ ժամանակ, և այժմ իսկ է, յորժամ Աչմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր հոգւով և Աչմարտութեամբ. քանզի և Հայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ։ Հոգի է Աստուած, և երկրպագուացն նորա հոգւով և Աչմարտութեամբ պարտ է երկիր պագանել,,։ (Յհ. ՃԴ. 23)։

Այլ քանզի ներքինն պաշտօն՝ որ ցոյց է կցորդութեան հոգւոյ ընդ Աստուծոյ, անբաժանելի է յարտաքին պաշտամանէ՝ որ ցոյց է կցորդութեան մարմնոյ ընդ հոգւոյ, և՝ի հասարակաց պաշտամանէ՝ որ ցոյց է կցորդութեան մարդոյ ընդ այլս, փրկիչն մեր որպէս ինքն կատարեաց զայն՝ նոյնպէս և օրինադրեաց մեզ զգլխաւոր մասունս նորա. ուսուցանելով որպէս պարտ է մեզ կալ յաղօթս, և սահմանելով զնորհուրդս եկեղեցւոյ։ Աչմարտութեամբն քաւին սկզբնական մեղք, և վերստին ծնանի մարդ յորդի Աստուծոյ։ Հրաշիւրն զինուորեալ Քրիստոսի, զօրանայ ընդդէմ թշնամեաց փրկութեան իւրոց։ Հաղորդութեամբն սնանի հոգեպէս, և ընդունի առհաւատացեալ փառաւոր յարութեան։ Պաշխարութեամբ քաւին մեղք նորա, որչափ և ծանունք իցեն և բազմաթիւք։ Ի երջին օծմամբն պատրաստի՝ի մահ արդարոյ՝ սրբեալ յամենայն արատոյ մեղաց։ Կարգ

քահանայութեան ընծայէ պաշտօնեայս ՚ի մատակարարութիւն խորհրդոց և ՚ի տեսչութիւն եկեղեցւոյ Նոր Պատգամի սրբէ զհարսանիս, և օգնէ ՚ի բարեկենդանութիւն որդւոց։ Այլ զինչ քան զայսպիսի կրօնից պատմունս պարզ և կատարեալ կայցէ. որդւոյն Աստուծոյ էր գիտել այսպէս և ընդել զկետս մարդկային սրտի և մտաց։

Երրորդ ըստ բարոյականին՝ չիք և չիք վարդապետութիւն վեմ քան զաւետարանականն։ Հանգոյն կրօնականացն և օրէնք բարոյականին խանգարեալ էին առ հեթանոսս. կրօնք իսկ նոցա, կամ մանաւանդ անպատշաճութիւն, յաւելուր ապականել զբարս նոցա. օրինակաւ դից յորդորէին ՚ի պղծութիւնս. իբրաքանչիւրոց աիտից էին ուրոյն դիք, մեհեանք, քուրմք, խոհուրդք և երկրպագութք։ Այն են և ՚ի գիրս նախնի իմաստասիրաց առածք ինչ գեղեցիկք, այլ խառն ընդ թանձր մոլորութիւնս. չիք ոք յիմաստասիրաց նոցա, որոյ չիցէ ուսուցեալ մոլորութիւն ինչ, և ոչ մոլորութիւն ինչ, զոր չիցէ ուրուք յիմաստասիրաց նոցա ուսուցեալ։ Իսկ Հրէից բարոյական, Թէպէտ և վեհագոյն քան զհեթանոսացն և քան զիմաստասիրաց, այլ Թերակատար։ Ոսկեհատակ օրէնք չարգելուն զապահարզան և զբազմակնութիւն, և ոչ զվաշխառութիւն յօտարաց. սիրել զընկերն իբրև զանձն յիսրայէլացիս և եթ սահմանէր և յեկս բնակեալս ընդ նոսա։ Ոչ այսպէս յաւետարանական օրէնս. դատապարտէ սա զլուծումն հարսանեաց և զբազմակնութիւն, զվաշխ առ հասարակ, և հրամայէ սիրել զամենեսեան իբրև զանձն. զի ընկեր է յաւետարանական օրէնս անխտիր իսրայէլացին և սամարացի, Հրեայն և անթլփատ, յոյնն և բարբարոս, ազգակիցն և օտար, բարեկամն և թշնամի։ Ոչ ինչ ուրեմն են զարմանք, զի ՚ի լուր բանիցն Քրիստոսի գոչէր ժողովուրդն. „Ոչ երբեք խօսեցաւ մարդ որպէս այրն այն„. (Յով. է. 46)։

Աւետարանական օրէնք ոչ միայն զամենայն որպիսի և իցէ յոռութիւն դատապարտեն, այլ և որ ինչ ածէ ՚ի նոյնս. զառաջս ունին զբարեաց, և դատապարտեն զայնս չե՛ի գործ եկեալ՝ ՚ի խափանել զմարդասպանութիւն, արգելու Քրիստոս զբարկութիւն. և առ ՚ի խափանել զշնութիւն, արգելու զցանկանալ ՚ի սրտի և զյայրատ

հայեցուած։ Այլ ոչ միայն դատապարտեն զյոռութիւն, այլ և հրամայեն զամենայն գործս առաքինութեան, զայնպիսիս իսկ՝ որ անծանօթք էին առ Հեթանոսս և առ Հրեայս։ Նաց յեղբայրսիրութենէ՝ որ ի մի սիրտ և ի մի հոգի միաբանէ զմարդիկ, և առնէ նոցա ներել միմեանց, և նուաճել զանձնասիրութիւն զնախանձ զցանկութիւն և զագահութիւն, պատուիրէ Աստուածային զօրութիւն հակառակ բղջախոհութեան, դատապարտելով զամենայն որ ինչ մերձաւոր կամ հեռաւոր վտանգ ածէ ի հրապոյրս ցոփութեան. զժուժկալութիւն ընդդէմ շռայլութեան ի կերակուրս և յըմպելիս. զհոնարհութիւն, որ քաջիկ միաբանեալ ընդ աղնուախոհութիւն և ընդ վսեմական միտս՝ պատսպարէ զմեզ յամենայն նսեմութենէ, ի գոռոզութենէ և ի փառամոլութենէ. զհեզութիւն՝ որ սանձահարէ զբարկութիւն, և տայ մեզ իշխել անձին. զբարեգթութիւն, որ ամբէ զնաստութիւն դատաստանաց մերոց. զհամբերութիւն, որ տայ մեզ տոկալ արկածից և թշուառութեան. զչափաւորութիւն առ ի չզեղծանել ի յաջողութիւնս. զարդարութիւն՝ առ ի տալ իւրաքանչիւր զիւրն, և մի ինասել ընչից կամ համբաւոյ կամ անձին ուրուք. և զհնազանդութիւն՝ առ ի յարգել զիշխանութիւն քաղաքական և զհոգևոր, տալով զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ։

Այլ ոչ այսչափ միայն, այլ և խրատս ի պատուէրս անդր օրինացն յաւելու, խրատս բարձրագոյն սրբութեան, խոհիր առնելով ընդ պարտս՝ զոր հրամայէ, և ընդ կատարելութիւն՝ զոր առաջի առնէ։ Այրանէ զաղքատս հոգւով, այլ ոչ եպերէ անխոհիր զմեծատունս առհասարակ. չարաց Աբեթ ի մեծատանց վայ կարդայ, որք զեղծանին ձոխութեամբ և մեծարեն զերկրաւոր բարիս քան զերկնաւորս։ Պահվէ զկուսակրօն կեանս իբր կատարելագոյն, այլ ոչ գարշի ի խնջոյից հարսանեաց, սրբէ իսկ զամուսնութիւն՝ վերառեալ զայն ի խորհուրդ սրբազան։ Կամաւոր աղքատութիւն ումանց սանձահարէ զագահութիւն այլոց։ դիւրանայ զգաստութիւն ամուսնացելոց ի տեսանել կայսս զժուժկալութիւն. օրինակ ի վեր քան զօրէնս առաքինացելոց, որոց մարթէր վայելել յօրինաւորս առանց ինչ ի վը-

տանգ արկանելոյ զփրկութիւն իւրեանց, յորդորէ զայլս ի լնուլ զանհրաժեշտ պարտս օրինաց։ Եւ ո՛ իշխեսցէ ի վեր քան զկար իւր զպատուիրանս աստուածայինս համարել, ի տեսանելն զի այլք հասակակիցք իւր և համակարգիք ի վեր ևս քան զպատուիրանս առաքինանան։

Ցայսպէս ուրեմն հաւատք քրիստոնէականք և պաշտամունք և պատուէրք բարոյականին ցուցանեն զգերբնական ի նոսա հոգին վարդապետութեան։ Պաքէն մանուկ երկոտասանամեայ ի միջի մերում առաւել գիտէ քան զամենայն իմաստունս նախնեաց զընութենէն Աստուծոյ և յաղագս սկզբան և վախճանի մարդոյ. շատիակ է գիտել նորա զի Աստուած արարիչ է երկնի և երկրի, և զի արարեալ է նա զմեզ առ ի ձանաչել և սիրել զնա և ծառայել նմա, և այսուիկ հասանել երանութեան անտի կենաց։ Վասն նա զայս մեծ ճշմարտութիւն անծանօթ լեալ հեթանոսաց և ասէից. "Օ՛ինչ օգտիցի մարդ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցի..." (Մատ. ԺՁ. 26)։

Այսպ ուրեմն առաքումն Քրիստոսի առ ի Աստուծոյ յայտ է ի բարձրութենէ և ի սրբութենէ վարդապետութեան նորա, ի հրաշալի տարածմանէ աւետարանին, ի հրաշագործութեանց նորա, ի յարութենէ և ի կատարմանէ կանխասացութեանց նորա, և ի մարգարէութեանց հին կտակարանաց՝ որ կատարեցան ի նմա։ Այսպ աւետարանականն յայտնութիւն արարեալ ի Քրիստոսէ՝ է աստուածային. վասն որոյ ոչ իբրև առաքեալ եթէ Աստուծոյ ծանուցաւ նա, այլ իբրև որդի Աստուծոյ և Աստուած համագոյակից և հաւասար Հօր։ Անկեղեցին հիմնեալ ի նմանէ տարածեցաւ ընդ ամենայն տիեզերս, յաղթանակեաց ի վերայ ամենայն մոլորութեանց. և կրելով միշտ յարձակմունս, և միշտ յաղթ գոլով, ցուցանէ յարատևութեամբն յայտնապէս զվերին օգնականութիւնն, զոր խոստացաւ նմա ինքն Քրիստոս։

Ա Ռ Ա Ք Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ա՛ռաջ.— ա. Ա՛ստուածային վարդապետութիւն ոչ իւիք կարէ ցուցանել զգերբնական և զառ՛ի Ա՛ստուծոյ առաքումն Քրիստոսի։ Ալ ըստ գործնական մասին, զի ոչ՛ի վեր ինչ է այն քան զմարդկեղէն միտս. քանզի Քրիստոս ոչ յաւել նոր ինչ, որ չիցէ աւանդեալ Թէ՛ի Մովսիսէ և՛ի մարգարէից, և Թէ՛ի բարոյականաց եբրայեցւոց։ — բ. Այլ ոչ օրէնք սիրելոյ զՔնամիս և չինդրելոյ վրէժս, նոր ինչ են. զի Թէպետ և ասէ Քրիստոս. "Լուարուք ապաքէն, զի ասացաւ. Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զՔնամին քո,,. (Մտթ. ե. 43.) սակայն ոչ ուրեք՛ի սուրբ գիրս է գտանել զայս, այլ ընդհակառակն կան խրատք օգնելոյ Թշնամւոյն՛ի գիրս Ելից (իգ. 4.) և՛ի գիրս Ա՛ռակաց (իե. 22). Այս օրէնքն իսկ այն ակն ընդ ական և ատամն ընդ ատաման՝ վասն դատաւորաց էր սահմանեալ, և ոչ վասն իւրաքանչիւր ուրուք առանձինն վրէժխնդրութեան։

— գ. Ա՛ արդապետութիւն Քրիստոսի կանանց մանաւանդ քան Թէ արանց է պատկանաւոր, և կատարելութիւնն այն անհնակ՛ի դէպ է յարդարելոյ միանձնուհս քան Թէ մարդ ընկերական։ Օ՛ի քաղաքաժողով ընկերութեան միաստակարք են, Թէ՛ խոնարհութիւնն այն այնչափ ներքոզեալ, Թէ՛ արգելք վաշխից՝ որով խափանին տուրևառք, և Թէ արհաւիրք երկիւղին՝ որով փոքրոգի և վատասիրտ եղանին մարդիկ և առ պատերազմնս տաղտուկք։

— դ. Իսկ ըստ տեսականի մասին ոչ է մարթ գովեզի համարել զվարդապետութիւն աւետարանին այնու իսկ, զի՛ի վեր է քան զՀասողութիւն մարդկայինս մտաց, և չկարեմք զայնմանէ առնել դատաստան։

Պե. — ա. Խոլորից անցելոյ դարուց փորձ, այնքանեաց իմաստասիրաց և օրէնսդրաց Ձիգն և Ջան, և Հանուրց ազգաց մոլորութիւնք քաջայայտ առնեն՝ զի քրիստոնէական օրինաց է գերբնական։ Մովսիսական իսկ օրէնք և որ՛ի մարգարէիցն և՛ի բարոյականաց եբրայեցւոց աւանդեալ վարդապետութիւն

Թերի է յոյժ, և զանազանեալ՝ի վարդապետութենէն Քրիստոսի որպէս արշալոյս՝ի միջօրեայ պայծառութենէ, Թէպետև նոցին իսկ վարդապետութիւն ազդեալ Աստուծոյ։ Որպէս Թագաւոր, որ յետ պատգամաւորաց խօսելոյ՝ ապա և զորդի իւր առաքիցէ ներհուն հայրենի կամացն, այսպէս արար և Աստուած. "Հազում մատամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք.՝ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն,,. (Հբր. ա. 1)։

— ԺԲ. Արդարև օրէնքն այն ակն ընդ ական և ատամն ընդ ատաման վասն գատաւորաց էր սահմանեալ. այլ քանզի ամենայն ուժեք օրէն լեալ էր՝ի խնդիր վրիժուց վարել նոցաւ, Քրիստոս ոչ միայն առ՝ի բառնալ զամենայն վրէժխնդրութիւն՝ի հաւատացելոց՝ եղծ զայն, այլ և վասն այն՝ զի յերջայրսիրութենէ գայցեն յանհնազանդութիւն և՝ի չքնաւել միմեանց, և մի՛ յերկիւղէ վրէժխնդրութեան, որպէս իմանան սուրբ Հարքն։ Այժ այսմ է իմանալ և զբանն Քրիստոսի "Լուարուք ասացաւ՝ զի ասացաւ. Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո,,։ Քանզի Հրեայք զայլ ամենայն ազգս համարէին թշնամիս, և ոչ միայն չառնէին ընդ նոսա բարեկամութիւն՝ այլ և հրաման էր նոցա ջնջելոյ զայլազգիս։ Իսկ Քրիստոս, որ եկն առ՝ի քակել զմիջնորմն ցանկոյն՝ որով բաժանէր յայլոց ազգն հրէական, եւ զօրինս սիրոյ առ ամենեսեան. զոր ոչ ուրեք է գտանել՝ի հին օրէնս գրեալ "սիրել զթշնամիս և բարի առնել ատելեաց,,։

— Գ. Վտանգ ամենայն ժամանակի բաւական է՝ի ցուցանել, զի վարդապետութիւն աւետարանին ոչ միայն զարս քաջասնդէ՝ այլ և զկանայս արիացուցանէ, յաղթելոյ և անձին. և իմաստասէրս ներհունս և թագաւորս քաջս՝ի լոյս էած վարդապետութիւնն այն։ Իսկ կատարելութեան պատուէրքն Թէպետև ոչ վասն ամենեցուն տուեալ են, բայց սակայն և ոչ իւիք միսասեն ընկերութեան, այլ մանաւանդ օժանդակեն. զի խոնարհութիւնն աւետարանական ոչ միայն չընկճէ զոգիս, այլ և զօրացուցանէ վստահութեամբն Աստուած, որով՝ի գեր՝ի վերոյս քան զկար մարդկեղէնն լինի ձեռներէց վստահացեալն Աստուած։

Նթէ աւետարանական վարդապետութիւն արգելոյր և զօրինաւորն վաշխս, խափանէին թերևս տուրևառք. այլ նա զանիրաւ և զվնասակար ևեթ վաշխս դատապարտէ, որովք կործանին աղգատոհմք։ Ս. Հաւիւրք քրիստոնէական երկիւղին վասն չարաց է, որոց վասն և աշխարհական իշխանութիւն կրէ սուսեր յազգեր. բայց Քրիստոս առաւել քան զերկիւղ զսէր կացուցանէ շարժիչ մարդկան՝ ի բարեգործութիւն։ Աւետարանական վարդապետութիւն ոչ միայն չառնէ վատասիրտս զմարդիկ, այլ և խաղաղութեամբն խղճի մտաց արիացուցանէ՝ յաչս դնել և զմահ, որպէս յայտ է՝ ի բազմաց քաջ զօրավարաց և զօրաց նոցին, զորս քրիստոնէական կրօնք արիացուցին՝ ի պատերազմունս։

— ԺԸ. Խոկ՝ ի տեսական մասին վարդապետութեանն Քրիստոսի ապաքէն՝ ի վեր են քան զմիտս խորհուրդքն առաջարկեալք՝ ի նմանէ՝ ի հաւատս. այլ այնպիսի կապակցութիւն է նոցա ընդ գործնականին, զի են նորա խարիսխ հաստատութեան, և յորդորիչ՝ ի պահպանութիւն նորին, զոր ոչ ուրեք է գտանել՝ ի վարդապետութիւնս իմաստասիրաց. և այնու խոկ զի՝ ի վեր են քան զմիտս, յայտ է զի ոչ՝ ի մարդոյ են հնարեալ։

ՃԱՌ ՁՈՐՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եկեղեցի ընդարձակագոյն նշանակութեամբ ցուցանէ զգաստ կամ զժողով բազմութեան հրեշտակաց և արդարոց՝ որ են յերկինս. որ և կոչի եկեղեցի յաղթական, կամ ըստ առաքելոյն՝ եկեղեցի անդրանկաց։ Ցուցանէ և զբազմութիւն արդարոց՝ որք վասն քաւութեան մեղաց կան ՚ի քաւարանի, և կոչի եկեղեցի չարչարազգեաց։ Ցուցանէ և զմիաբան ժողով հաւատացելոց՝ որք են յերկրի, և կոչի եկեղեցի զինուորեալ։ Ամենեցուն սոցա երեցունց եկեղեցեացս գերագոյն և նախապետական գլուխ է ինքն Քրիստոս, որպէս ասէ առաքեալն. (Եփես. ա. 20.) "Ի յարոյց զնա ՚ի մեռելոց, և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս ՚ի վեր քան զամենայն իշխանութեան և պետութեան և զօրութեան և տէրութեան, և զամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ՝ այլ և ՚ի հանդերձեալումն։ Եւ զամենայն ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա, և զնա եդ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ՝ որ է մարմին նորա, և լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու։"

Յայս եկեղեցի հանրական բովանդակի և բազմութիւն Հնմարիտ աստուածապաշտից նահապետաց՝ որ ՚ի նախնի դարս կացին, և կոչի եկեղեցի նախնական։ Առաքեալքն և Հրեից՝ որ կացին յառաջ քան զգալուստ փրկչին, և կոչի եկեղեցի մովսիսական. քանզի և նոքա ամենեքեան Հնմարիտ աստուածպաշտութեամբ միացեալ էին ՚ի գլուխն Քրիստոս, յոր Հաւատացին՝ զի գալոց է փրկիչ, և զի նովաւ Հասանելոց էին երանութեան։

Այլ մեզ աստանօր զզինուորեալ եկեղեցւոյ քրիստոնէից են բանք, որ և կոչի եկեղեցի աւետարանական։

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԸՆԴՀԱՆՐԱԳԻՍ

Եկեղեցի է ժողով հաւատացելոց մկրտելոց և միաբանելոց ի մի հաւատս, և ի հաղորդութիւն նոյն խորհրդոց, ընդ միով գլխով յերկինս ընդ Քրիստոսիւ, և առաջնորդեալ յօրինաւոր հովուաց և ի միջէ հովուապետէ՝ այսինքն ի փոխանորդէ Քրիստոսի յերկրի։ Այս սահման բովանդակութիւն է բանից սրբոց Հարց, որք հաւատացեալս համարին զայնոսիկ առհասարակ՝ որ մկրտեալք և դաւանեն որ ինչ դաւանէ եկեղեցի, և ընդունին զխորհուրդս զորս ընդունի եկեղեցի հաստատեալ ի Քրիստոսէ, և կան ընդ իշխանութեամբ հովուաց՝ զորս կացուցանէ եկեղեցի ըստ կարգաց սահմանելոց ի Քրիստոսէ։ Ոչ ասն որոց չէ հաւատացեալ՝ որ չիցէ մկրտեալ, որ չընդունի զվարդապետութիւն եկեղեցւոյ, որ չհաղորդի խորհրդոց՝ զորս նայն մատակարարէ, և որ ոչն հնազանդի հովուաց կացուցելոց ի նմանէ։ Այս ուրեմն անհաւատք, ուրացողք, աղանդաւորք, հերձուածողք, բանադրեալք յայտնապէս և հրապարակաւ, և երախայք իսկ չեն անդամք եկեղեցւոյ։

Այլ քանզի Քրիստոս կացոյց զեկեղեցի իւր որպէս անձն մի՝ որոյ գլուխ գերագոյն ինքն իսկ է, նկատի ի նմա հոգի և մարմին. զհոգի եկեղեցւոյ կացուցանեն հաւատք, Յոյս և Սէր, իսկ զմարմին նորա ժողով հաւատացելոց ակներև, և ոչ որպէս նորաշանդքն համարին աներևոյթ զեկեղեցի։ Ոչ ասն որոյ մարթ է կցորդ լինել մարմնոյ եկեղեցւոյ, առանց կցորդելոյ հոգւոյն. և ընդ հակառակն՝ կցորդ գոլ հոգւոյն, առանց կցորդելոյ մարմնոյն։ Այսպէս արդարոք հաւատացեալ՝ պատշաճի և հոգւոյ և մարմնոյ եկեղեցւոյ. իսկ հաւատացեալ՝ որ չէ ի շնորհս Աստուծոյ՝ պատշաճի ի մարմին եւեթ եկեղեցւոյ, այլ ոչ և ի հոգին։ Նոյնպէս չէ մկրտեալ՝ որ կայ ի կատարեալ սէրն Աստուծոյ՝ պատշաճի ի հոգի եկեղեցւոյ, թէպէտ և ի մարմին նորա

չև ևս պատշաճեալ։ Ա՝անկունք մոլորելոց և հերձուա-
ծողաց, մկրտեալք ըստ օրինի, պատշաճին և նոքա ՚ի
հոգի եկեղեցւոյ։ Օ՝նոյն է ասել և զջախահասից, որ
յանյաղթելի տպիտուԹեան կայցեն՝ անպիտացեալ ՚ի
սպառ զպարտս ՚ի խնդիր լինելոց ձշմարտուԹեան։ Կայց
՚ի ձառելն զեկեղեցւոյ՝ իմանամք մեք զայն ըստ մարմ-
նոյն, այսինքն ըստ երևելի մասին՝ զոր կացոյց Ք՝րիս-
տոս առ ՚ի պահել և դարուց ՚ի դարս աւանդել զա-
ւանդս ձշմարտուԹեան։

Ա՝յդ ՚ի հաղորդուԹենէ ասէ եկեղեցւոյ արտաքոյ
ինան, ոչ միայն հերձանոսք և այլազգիք՝ որ զուրկ են ՚ի
հաւատոյ, և ՚Հրեայք՝ որ չհաւատան ՚ի Ք՝րիստոս որ-
պէս եկեալ և ոչ իսկ յաստուածուԹիւն նորա, այլ և
հերետիկոսք այսինքն մոլորեալք՝ որք ոչ զնոյն վարդա-
պետուԹիւն եկեղեցւոյ ունին, և հերձուածողք՝ որք ոչ
հնազանդին օրինաւոր հովուաց և հովուապետին։ Ք՝ան-
զի Ք՝րիստոս ՚ի վերայ առաքելոց շինեաց զեկեղեցի իւր,
և կարգեաց ՚ի նմա քահանայապետուԹիւն աւանդա-
պահ ձշմարտուԹեան, տուեալ նմա իշխանուԹիւն ա-
ռաւցանելոյ և առաջնորդելոյ հաւատացելոց՝ որք ՚ի
՚Հրէից և ՚ի հերձանոսաց կոչեցեալք անդր, նովին իսկ
և արտաքսելոյ անտի զայնոսիկ՝ որ իշխիցեն այլայլել
զձշմարտուԹիւն կամ հեռանել և ՚ի բաց կալ ՚ի հնա-
զանդուԹենէ։ Ա՝ան որոյ այնպիսիք իբրև անպամք
հատեալք ՚ի մարմնոյ և որպէս ուռք չօտեալք յորթոյ,
ոչ ևս կցորդին ՚ի գլուխն Ք՝րիստոս, յորմէն ձշմարիտ,
և են արտաքոյ եկեղեցւոյ։ Ա՝ւրդապետուԹիւնս այս
հաստատի ՚ի վկայուԹիւնս յայսոսիկ սուրբ գրոց։

“Ա՝նացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն
հեթանոսս . . . ուսուցէք նոցա պահել զամենայն որ
ինչ պատուիրեցի ձեզ ,,. (Մ՝ատ. իե. 19։) “Ա՝ն ձեզ
լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ ,,.
(Ղ ՚Հ. Ճ. 16։)

“Ա՝պաթէ և եկեղեցւոյն ոչ լսիցէ, եղիցի քեզ իբ-
րև զհեթանոսն և զմաքսաւոր ,,. (Մ՝ատ. ժե. 17։)

“Ա՝յլ թէ մեք, կամ հրեշտակ յերկինից աւետա-
րանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաք ձեզ,
նզովեալ լիցի ,,. (Գ՝աղ. ա՝. 8։)

“Յառնէ հերձուածողն, յետ միանգամ և երկիցս

խրատելոյ, հրաժարեսջիր. գիտասջիր զի Թիւրեալ է այնպիսին և մեղանչէ անձամբ զանձն դատապարտեալ»։ (Տիտ. գ. 10)։

Յովհաննէս Կիկիլոյ սահմանէ. «Եթէ ումեք ի Կովատեանց կամք իցեն մտանել ի կաթողիկէ եկեղեցի... մտցեն և մնասցեն ի գղերս»։

Գրոստինոս. «Որ ինչ ի հնումն գործէը սպանութիւն, զնոյն արդ առնեն բանադրանք. արդ սա բառնայը զյանցաւորն յաշխարհէ, ապա և նա յեկեղեցւոյ»։

Այս այսմ օրինակի ամենայն աղանդք և հերձուածք յաւուրց անտի առաքելոց և այսր դատապարտեալ և արտաքսեալ են յեկեղեցւոյ. և որք միանգամ գիտութեամբ կամ յաղթելի տգիտութեամբ գտանին արտաքոյ եկեղեցւոյ, չիք նոցա փրկութիւն։

Այսեմք գիտութեամբ կամ յաղթելի տգիտութեամբ. զի եթէ անյաղթելի տգիտութեամբ ոք գտանիցի յաղանգ մոլորութեան կամ ի հերձուած կորստեան, թէպէտ և անկցորդ ի մարմին եկեղեցւոյ՝ այլ կըցորդ է նմին Հոգեպէս։ Այսպա բովանդակ խնդիրն է ի վերայ բառիս գէտռնէ՛ն կամ անյաղթելի գէտռնէ՛ն. զի որ մոլորութեամբ ինչ գնէ ի մոլ կամ քարոզէ, գիտելով զի զհակառակն դաւանի և ուսուցանէ կաթողիկէ եկեղեցի, և յամառեալ այնմի՛ի մոլար կարծիս իւր՝ ոչ հպատակելով կաթողիկէ եկեղեցւոյ, ոչ ևս տգիտութեամբ է մոլորութիւն նորա, ոչ ևս նիւթապէս, այլ գիտութեամբ և կամակար, որով է իսկապէս հերետիկոս. և ըստ առաքելոյն՝ «Որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան,... աճեն ի վերայ անձանց զերագահան կորուստ»։ (Բ. Պետր. բ. 1։) Այնպէս և որք տգիտութեամբն կան ի մոլորութեան կամ ի հերձուածողութեան, կարօղք հետազօտել և գիտել զճշմարտութիւն, ոչ ևս անյաղթելի է տգիտութիւն նոցա, վասն որոյ և ընդ նովին դատաստանաւ առաքելոյն անկանին։

Այլևս որդ համարիմք ածել առ այս վկայութիւնս ի Նարեկ, որք առհասարակ զմոլորեալս և զհերձուածողս առակեն յուռւս հատեալս և ցամաքեալս, և ի յարդ հոսեալ ի կալոյ՝ ձարակ անշէջ հրոյն։

ԱՌԱՔԱԿԱՆ ԹԻՒՆ Ը

Յաղթ. Ա. Կիրք սուրբ սահպ ուսուցանեն, զի յընտրելոց Աեթ բաղկանայ եկեղեցի. զի առաքեալն Յովհաննէս ասէ. (ա. կաթ. բ. 19.) "Ոչ ի մէնջ եւ լին, այլ ոչ էին ի մէնջ. զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ մնային. այլ զի յայտնի լինիցին, եթէ ոչ էին ամենեքեան նոքա ի մէնջ,,: Եւ առաքեալն Պօղոս ասէ. (բ. Տիմ. բ. 19.) "Ծանեաւ տէր զայնոսիկ որ իւրն են,,:

Պե. Պէտ է կարգ նախասահմանութեան կամ հոգի եկեղեցւոյ՝ որպէս ասացաք, եւ այլ մարմին նորին կամ այժմու կարգ արդարութեան. առաջնումն կարգի պատկանին ընտրեալք Աեթ, որ մինչեւ ի սպառ յարատեւենն ի շնորհս Աստուծոյ, զորոց եւ Քրիստոս ասէ. "Ձկնաբուք իմ ձայնի իմում լսեն... եւ ես տամ նոցա զկեանն յաւիտենականս, եւ մի կորիցեն յաւիտեան,,. (Յհ. ժ. 27:) Իսկ երկրորդումն կարգի պատկանին եւ մեղաւորք, որպէս սարդիացւոց եկեղեցւոյն եպիսկոպոսն՝ որ ի մարմնի Աեթ եկեղեցւոյ էր, այլ ոչ մանաւանդ հոգւոյն. վասն որոյ ասէ սուրբ գիրն. "Անուն կենդանւոյ ունիս, եւ մեռեալ ես,,. (Յայտ. գ. 1:)

Յաղթ. Բ. Եկեղեցի սուրբ եւ անարատ է ըստ գրոց. "Ոչ ի մի ինչ ունիցի արատ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայսպիսեաց. այլ զի իցէ սուրբ եւ անարատ,,. (Եփ. Ե. 26:) Ո՞ւմն որոյ չկարեն պատկանիլ ի նա, բայց միայն արդարքն, որպէս նոյն ինքն առաքեալն ասէ. (Գործ. ժբ. 23.) "Յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս,,. զի ոչ է մարթ Քրիստոսի, որ է գլուխ եկեղեցւոյ, ունել անդամս անսուրբս. "Ոչ հինչ միաբանութիւն լոյս Քրիստոսի ընդ Բելիարայ,,. (բ. Կոր. զ. 14:) Ո՞ւմն որոյ սուրբ Գիրք ասեն սահպ զմեղաւորաց՝ Թէ՝ ոչ պատկանին յեկեղեցի Քրիստոսի: Ընդ եթէ մեղաւորք ոչ են յեկեղեցւոջ Քրիստոսի, ապա աներեւոյթ է եկեղեցի: Եւ հասարակաց իսկ միտք ցուցանեն, զի սուրբքն՝ որպիսի է եկեղեցի՝ չկարէ բաղկանալ յանսըրբոց, եւ որոյ չիցէ Աստուած հայր՝ չկարէ ունել զեկեղեցի ի մայր:

պէս. Այեղեցւոյ սրբութիւն բազմադիմի է, զի է սուրբ ըստ գլխոյն՝ որ է ինքն Քրիստոս, սուրբ ըստ վարդապետութեանն, ըստ խորհրդոց, և ըստ բազմաց յանդամոցն. սուրբ է դարձեալ, զի առ՝ի սրբել զանդամս իւր սահմանեալ է՝ի Քրիստոսէ: Իսկ եթէ մեղաւորք էին յեկեղեցւոջ Քրիստոսի, ՚ի զուր էր նմա սահմանել զխորհուրդ ապաշխարութեան, և տալ իշխանութիւն քահանայից կապելոյ և արձակելոյ: Ի յաղթական ևեթ եկեղեցւոյ արտաքսին մեղաւորք, և պայմանեալ է բան առաքելոյն՝ զի գրեալքն ևեթ յերկինս պատկանին յայն:

Այսպէս և զվիւս բան առաքելոյն՝ թէ Ո՞րինչ միաբանութիւն ի՞նչ Քրիստոսի ընդ Բելիարայ, զկռապաշտից իմանալի է և զանհաւատից, որ չկարեն անդամ գոլ Քրիստոսի: Այլ ոչք միրտութեամբն և հաւատովք սրբին, անդամք լինին Քրիստոսի. և թէպէտ պղծիցին ապա մեղօք, կան և մնան յեկեղեցւոջ՝ առձեռն պատրաստ ունելով զխորհուրդս սրբարարս: Ոչ սակս որոյ և զբանս Չարչ իմանալի է զհոգւոյ եկեղեցւոյ. զի արդարև մեղաւորք ոչ պատկանին՝ի հոգի նորին, այլ ՚ի մարմին ևեթ: Քանզի նորին իսկ Չարք ընդդէմ նովատեանց և դոնատեանց և այլոց աղանդաւորաց հաստատեն և զմեղաւորս գոլ յեկեղեցւոջ Քրիստոսի: Եւ այս ոչ ինչ ատնանկ սրբութեան եկեղեցւոյ, զի ոչ եթէ՝ի հոգի նորա պատկանին՝ յորում է սրբութիւն նորա, այլ՝ի մարմին ևեթ նորին՝ որ հաստատեալ է՝ի դաւանութիւն նոյն հաւատոյ, և յընդունելութիւն նոյն խորհրդոց: Իսկ որք ոչն պատկանին՝ի հոգի եկեղեցւոյ, ոչ հայր է նոցա Աստուած, և ոչ մայր եկեղեցի, այլ նիւթապէս ևեթ կցորդին նմա:

ԳԼՈՒԽ Բ

ՑՂԱՂԴՍ ՆՇԱՆԱՑ ԱՌՀԱՒԱՏՉԻՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Եթէ եկեղեցի Հաստատեցաւ 'ի Քրիստոսէ առ 'ի փրկութիւն՝ որոց խնդրեն զՍուտուած և զՀմարիտ կրօնս, հարկ է զի իցեն նորա նշանք և ցուցակութիւնք այնպիսիք՝ որովք մարթ իցէ ճանաչել զայն և ընտրել յայլոց կրօնից։ Այս են նշանքս այսոքիկ չորեքին. միութիւն, սրբութիւն, ընդհանրականութիւն, առաքելականութիւն, որպէս և դաւանեմքն 'ի Հանգանակին. "Հաւատամք և 'ի մի միայն, կաթողիկէ և առաքելական եկեղեցի,,։ Այս 'ի ժամերգութեան. "Զայս չեսցուք զամենակալն Սուտուած վասն միայնոյ սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյ,,։ Ապա որոյ հարկ է Հմարիտ եկեղեցւոյ զչորեսին զայսոսիկ նշանս բերել յինքեան, և բերել երևելի Հանգամանօք որովք զանազանիցի յայլոց։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս միութեան եկեղեցւոյ։

Որպէս մի է Հմարտութիւն, նոյնպէս պարտ է և եկեղեցւոյ լինել մի։ Ի զուր էր փրկչին աւանդել եկեղեցւոյ զվարդապետութիւն իւր, եթէ մարթէր վարդապետութեանս այսմիկ այլ և այլ աղգ յայլ և այլ եկեղեցիս զանազանել։ Քրիստոս ոչ այլ և այլ եկեղեցիս կացոյց ըստ աղգաց, այլ մի միայն, և յաւէլ. "Կան և այլ ևս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. և զայնս ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ,,. (Յհ. Ժ. 16։) Այս վասն առաքելոցն իւրոց և ամենայն Հաւատացելոց աղաչէ զՀայր, զի իցեն ամենեքեան մի. "Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն քո... զի եղիցին մի, որպէս և մեք մի եմք,,. (անդ Ժէ. 11։)

"Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս, զի ամենեքին մի իցեն, որպէս դու Հայր յիս և ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ, եթէ դու առաքեցեր զիս: Եւ ես զփառսն՝ զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք. ես ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք ի մի,,:

Պօղոսեալք իսկ և հերձուածողք ընդունին զմիութիւն եկեղեցւոյ, այլ ի սահմանելն լեթ զայն տալ բաձայնին: Ասն որոյ պարտ է մեզ ցուցանել զձշմարիտ սահման այսր միութեան, որ ի կրկին գլխոց առեալ լինի, ի միութենէ վարդապետութեան, և ի միութենէ հաղորդութեան: Նախնին հաստատի ի հաւատալ զնոյն ճշմարտութիւնս հաւատոց, այսինքն համաձայնել ի նոյն ճշմարիտ հաւատս և ի վարդապետութիւն, ի նոյն խորհուրդս, ի նոյն պատուիրանս, ի նոյն պաշտամունս, և ի նոյն վերջին վախճան. որպէս և առաքեալն ասէ "Ջուխալ պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւ խաղաղութեան: Մի մարմին և մի հոգի, որպէս և կոչեցայք ի մի յոյս կոչման ձերոյ: Մի է տէր, մի հաւատք, մի մկրտութիւն: Մի Նստուածք և հայր ամենեցուն... մինչև հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց և գիտութեան որդւոյն Նստուածոյ, յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի,,. (Եփես. դ. 3:) Իսկ երկրորդն հաստատի ի հպատակել օրինաւոր հովուաց ընդ միով գերագոյն հովուապետաւ: Յառաջին միութենէն ի բաց կան հերետիկոսք, այսինքն այլափառք մոլորեալք ի հաւատոյս, օտարացեալք յուղիղ վարդապետութենէ. յերկրորդ միութենէ ի բաց կան հերձուածողք, այսինքն բաժանեալք ի հաղորդութենէ ընդհանրական եկեղեցւոյ և գլխոյ նորին:

Սուրբ գիրք և աւանդութիւն ցուցանեն յայտնապէս, զի կարևոր է եկեղեցւոյ կատարեալ միութիւն վարդապետութեան: Քրիստոս ի տալ իշխանութիւն առաքելոցն՝ ասէ. "Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս... ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ,,: Ոչ զանազանէ զկարևոր մասունս վարդապետութեանն ի չկարևորաց

անտի, որպէս նորաշանդք կամին. ոչ խտիր առնէ ընդ մանն և ընդ մանն հաւատոյ. այլ անխտիր հրամայէ ուսուցանել զամենայն պատուէրս իւր: Եւ առաքեալք հաւատարիմք՝ ի կատարել զպատուէրն նորա, ոչ հանդարտեին և փոքու իւիք զարտուղել՝ ի վարդապետութենէ անտի: Պօղոս հրամայէ (Տիտ. գ. 10.) "Յառնէ հերձուածողէ, յետ միանգամ և երկիցս խրատելոյ, հրաժարել,,. և նզովէ որ այլ ինչ օտար՝ ի վարդապետութենէ անտի ուսուցանիցեն. (գաղ. ա. 8:) "Եւ այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի:... Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզովեալ լիցի,,: Եւդ իցէ թէ կերինթեանք, վալենտինեանք, մարկիոնիտք, մոնտանեանք, նուվատեանք, սաբելեանք, արիանոսք, պեղագեանք, նեստորեանք և եւտիքեանք, զնոյն վարդապետութիւն աւետարանին քարոզիցեն: Իցէ թէ բազում այնչափ ջոկք նորաշանդից, լութերականք, կալուինականք և այլք, զնոյն վարդապետութիւն աւետարանին ունիցին: Իցէ թէ բողոքականք զմի և զնոյն վարդապետութիւն կաթողիկէ եկեղեցւոյ դաւանիցեն: Այլ է թէ ոչ. ապա ուրեմն հարկ է կամ սոցա և կամ նոցա ընդ առաքելական նզովիւքն անկանել. առաքեալն ոչ խտրէ ընդ էական մասունս հաւատոյ և ընդ ոչ այնպիսիս, այլ անխտիր ասէ. "Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզովեալ լիցի,,:

Նոյն ինքն պրէ առ Հռովմայեցիս (ԺԶ. 17.) "Աղաչեմ զձեզ, եղբարք, դիտել զայնպիսիսն՝ որ հերձուածս և գայթակղութիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուքն ուսարուք. և խոյշեցարուք՝ ի նոցանէ,,: Նոյն և առ կորնթացիս պրէ. (ա Կոր. ա. 10.) "Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, և մի իցեն՝ ի ձեզ հերձուածք. քանզի էիք հաստատեալք՝ ի նոյն միտս և՝ ի նոյն հանճար,,: Եւ հերձուածս կոչէ, ոչ զայս ինչ կամ զայն մնալոր վարդապետութիւն, այլ առհասարակ զամենայն ինչ արտաքոյ վարդապետութենէն՝ զոր դուքն ուսարուք: Եւ ուստի խափանելոյ Թլփատութեան՝ որ ոչ էական ինչ մանն էր հա-

ատոյ, զի յառաջ քան զվճիռ ժողովոյ առաքելոցն յԵրուսաղէմ՝ նորին ինքեան առաքելոյ Թլփատեալ էր զՏիմոթէոս, ասէ նրբել պոռոտոպանս այնոցիկ՝ որք խառնվեցուցանէին զդաւդատացիս, քարոզելով զԹլփատութիւն. (գաղատ. Ե. 10։)

Եւ աղօտ ինչ քան զնա և առաքեալն Յովհաննէս ուսուցանէ. "Ոմանցն որ յանցանիցէ և ոչ կացցէ 'ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ոչ ունի։ ... Եթէ ոք գայցէ առ ձեզ, և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի ընդունիք զնա 'ի տուն, և մի ողջոյն տայցէք նմա,, (Բ. Յով. 10։) Այսինքն է մի հաղորդել ընդ այնոսիկ՝ որ այլայլեն իւրք զվարդապետութիւն Քրիստոսի, առ մոլորեալս և առ հերձուածօղս ունել զնոսա։

Այսպէս և Տարք առհասարակ ուսուցանեն զմի և զնոյն վարդապետութիւն լեալ յեկեղեցւոջ Քրիստոսի, և արտաբսեն անտի անխտիր զամենայն տարաձայն վարդապետութիւն։ Ասէրն Կղիմդոր Նազիանզացի. (յղ. կաթոլ.) "Ի նասակարապոյնք 'ի հերեսիովտաց այնոքիկ են, որք ամբողջ զամենայն վարդապետութիւնս ընկալեալ՝ միով և եւթ բառիւ, որպէս 'ի կաթիլ թունաւորի, զուղիղ և զպարզ կաթողիկէ հաւատս, որով և զաւազակական աւանդութիւն սպանանեն,,։

Աճն Բարսեղ. "Ամուսք սուրբ զրոց չհանդուրժեն և ոչ վանկ մի յաստուածային վարդապետութեանցն 'ի բաց թողուլ. զամենայն մահուընս կամակոր յանձն առեալ, եթէ հարկ իցէ, առ 'ի պահել զնոսա ամբողջ,,։ (Ակերոդոքս. Ղ. 19։)

Սուրբն Աթանաս. ('ի սահմանս նիկիական ծողովոյ. Ղ.) "Ճշմարիտ վարդապետութիւն այն է, զոր աւանդեցին մեզ Տարք. և Ճշմարիտ վարդապետաց նշան՝ համաձայնութիւն ամենեցուն ընդ իրեարս, և ոչ ընդդիմանալ միմեանց և կամ հարցն իւրեանց վարդապետութեան,,։

Սուրբն Իլարիոս. "Ամենայն հերեսիովտայք միաբանին ընդդէմ եկեղեցւոյ. և 'ի յաղթել նոցա միմեանց՝ յաղթանակէ 'ի վերայ ամենեցուն նոցա եկեղեցի։ Ամենեքին հակառակ են նմա. այլ նա 'ի վերայ ամպարիշտ մոլորութեանց ամենեցուն կանգնէ յաղթանակ,,։

Աւսեբի. (՚ի պարբ. աբէբ.) "Երեսիուսեցաք բաժանեն զհանդերձս Քրիստոսի յիւրեանս, և ՚ի վերայ պատմուճանի նորա վիճակս արկանեն, յեղծանել զզարդարանս Քրիստոսի, այսինքն զսուրբ գիրս, իբրև քանչիւր ոք ՚ի նոցանէ խանդարեալ և պատառեալ կամակորելով զայնոսիկ ՚ի վկայութիւն վարդապետութեան իւրոց ,,:

Գրիգոր Լուսաւորիչ (Յաճախապարտ 114.) "Որ մեծայն որ քակէ ՚ի միաբանութենէ հաւատոյն և ՚ի սուրբ վարուցն, ոչ միայն հրաժեշտ լինի յերանութենէն անտի, այլ և ՚ի պատիժ մատնի. որպէս անդամ ՚ի մարմնոյ հատեալ անպիտան լինի, և. կամ ոստ ՚ի ծառոյ կտրեալ ՚ի հուր ,,:

Յովհան իմաստասէր (յաղենաբանութեանն.) "Ո՞ւ մի քայքայեալ ցրուիցին մերձ՚ի դժոխս՝ գեղեցկապէս միաւորեալ Քրիստոսի անդամքն, այլ ամենեքեան միոյ գաւթի՝ միոյ քրիստոսական գաւազանին յարդարեացն լինել հօտ ,,:

Լամբրոնացի (՚ի ճէն. պարբ.) "Կանգնի մի է տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի եկեղեցի՚ի զանազան աղգաց որոշեալ, և մկրտութեամբն ծնեալ, և Քրիստոսի անուանեալ:... Ոչ բաժանեալ Քրիստոս ՚ի Պօղոս և ՚ի Պետրոս, և ոչ եկեղեցի նորա ՚ի Հայս կամ ՚ի Հռոմ կամ ՚ի Ֆռանգ. թէպէտ և տկարացն կարծիք այսմ ծառայէ. զի բաժանեալ էաք, թէ առ այլ Պետուած յոյս ունէաք իւրաքանչիւր:... Իսկ որ Համարի զինքն քրիստոնեայ, և ՚ի համանուն քրիստոնէէ վանս տարալեզութեանն խորշի, յայտ է թէ կամաւ զինքն ՚ի գլխոյն Քրիստոսէ որոշէ և ՚ի նորա անդամոց ,,:

Ոյս միութիւն յայտ առնէ գարձեալ և սուրբ գրոց միաւորական ձայնիւ անուանել միշտ զեկեղեցի. "Ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ: Պպա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր: Ո՞ւ այր է գլուխ կնոջ, և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ: Ստրհուրգս այս մեծ է, այլ ես ասեմ ՚ի Քրիստոս և յեկեղեցի ,,: Ոյս յայտնաբանէ և մերս Ստեփոս յասելն (՚ի ճէն. պարբ.) "Պաբելական եկեղեցիք թէպէտ և ընդ բազում տե-

ղիս են, սակայն մի ասի վասն միաբանական հաւատոյն. վասն որոյ որպէս զմիոյ ասի, եկեղեցի քո՝ զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քո . . . ոչ բազմանունաբար եկեղեցիս, այլ եկեղեցի, և ոչ զորս փրկեցեր, այլ զոր փրկեցեր. և ոչ ասէ՝ Թէ տուր սոցա, այլ Թէ տուր սմա զանշարժ քո ղեկաղաղութիւն ,,: Նոյն ուրեք բազմաւորական ձայնիւ գտանիցի ասացեալ՝ի սուրբ գիրս և առ Հարս, որպէս և՝ի Շ արականի. "Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան ,,, յայտ է Թէ զառանձին եկեղեցեաց աշխարհաց և գաւառաց են բանքն. որք որպէս անդամք կցորդին՝ի մի մարմին կաԹողիկէ եկեղեցւոյ միութեամբ հաւատոյ, և՝ի մի գլուխ նորին՝ միութեամբ հաղորդութեան:

Եւ Եանզի և երկրորդ պայման միութեան եկեղեցւոյ է միութիւն հաղորդութեան. որով իւրաքանչիւր որ հաւատացեալ, և մանկական ժողովք հաւատացելոց, հնազանդեալ օրինաւոր իւրումն առաջնորդի, և նա քան զինքն վերնագունի, գնան կցորդին՝ և որպէս միոյ մարմնոյ անդամք՝ միանան ամենեքեան՝ի մի գերագոյն գլուխ: Ոչ՝ի դասակարգութիւն առաջնորդաց է յեկեղեցւոջ, որք նովին կարգաւ յաջորդեն միմեանց, և՝ի նոյն պաշտօն առաջնորդութեան տքնին հանապազ, որոց կարգ երթայ աւարտի՝ի գերագոյն գլուխ անդր կամ՝ի հովապետ հանրական, որ ինքն Քրիստոս է յերկինս՝ այլ փոխանորդ՝ի նմանէ կարգեալ՝ի յերկրի: Եանզի եկեղեցի կոչի և է արքայութիւն Քրիստոսի, և նման է զօրու մեծի կամ բանակի զինուորելոց ընդդէմ հակառակամարտից. ուր որպէս գոն կարգ ըստ կարգէ տասնապետք, հարիւրապետք, հազարապետք և սպարապետք, որք լսեն փոխանորդի Թագաւորին, այլ և սա նմին իսկ արքայի, նոյնպէս և յեկեղեցւոջ. և այս է առաքելոյ ասելն. "Եւ նա եդ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս, առ՝ի հաստատութիւն սրբոց, ՝ի գործ պաշտաման, ՝ի շինուած մարմնոյն Քրիստոսի ,,. այսինքն առ՝ի շինութիւն եկեղեցւոյ՝ որ է մարմին Քրիստոսի: Եւ զի կարգ պաշտօնէից ամենեցուն կատարի՝ի մի գերագոյն գլուխ և հովիւ, յայտ՝ի բանէն Քրիստոսի է. "Եւ եղիցին մի հօտ և մի հովիւ ,,: Եւ

ոք իցէ միութիւն հօտի եթէ հովիւք բազումք ինքնագլուխք փեռեկեալ զայն վարեսցեն ըստ հաճոյս, կամ ոք միութիւն բանակի եթէ զօրավարք իւրաքանչիւր իցեն անկախք ամենևին ՚ի սպարապետէն և սպարապետն ՚ի թագաւորէն. զնոյն է իմանալ և զեկեղեցւոյ՝ որ հօտ է և բանակ քրիստոսեան և կերտուած գերագոյն աստուածայնոյ իմաստութեան:

Ա. ՈՒԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ընթերց. Ա. Իշխանութիւն եկեղեցական ընդդէմ է հրամանին Քրիստոսի, որ ասէ. (Մատ. ի. 25.) "Գիտէք զի իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն նոցա. ոչ այնպէս իցէ և ՚ի ձերում միջի, այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ,,: Իւ Պետրոս այսպէս ուսեալ ՚ի Քրիստոսէ, զնոյն և այլոց եպիսկոպոսաց պատուիրէ. (ա. Պետ. ե. 3.) "Մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին,,: Այնպէս և այլ առաքեալք և մանաւանդ Պօղոս, ոչ իշխանս և պետս կոչէին զանձինս, այլ ծառայս Քրիստոսի և պաշտօնեայս և հաղարապետս խորհրդոցն Աստուծոյ:

Պե. Հրամանն Քրիստոսի արգելու զգոռոզութիւն եւ զի աշխարհական և զնախատաւութիւն. ապա թէ ոչ, չտայր առաքելոցն և ոչ մի ինչ իշխանութիւն, ոչ զնոսա նախադասեր աշակերտացն, և ոչ զՊետրոս զքոյր առաքելոցն կարգեր. չասեր իսկ նոցա. "Ալ ձեզ լսէ, ինձ լսէ,,. և ոչ զփականս արքայութեան երկնից տայր նոցա. և ոչ ասէր Պետրոսի՝ արածել զոչխարս իւր. զոր և ինքն առաքեալսեան ասէ այլոց եպիսկոպոսաց. "Արածեցէք որ ՚ի ձեզ հօտ է,,:

Այլ է աստ խնդրելի թէ արդեօք առաքեալք կոչէին թէ ոչ զանձինս որ ինչ էինն, այլ այն է խնդրելի թէ ունէին արդեօք և վարէին զիշխանութիւն: Պօղոս ասէ. (Բ. Կոր. Ժ. 6.) "Ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ ամենայն անհնազանդութեան, յորժամ ձեր ևս հնազանդութիւնդ կատարեսցի,,: Իւ գարձեալ. (Անդ. ԺԳ. 2.) "Յառաջ ասացի և գարձեալ կանխաս

ասեմ . . . զի եթէ եկից դարձեալ, ոչ խնայեցից ,, : Ա-
պա առաքեալք, Թէպետ և ծառայք և պաշտօնեայք
Քրիստոսի, այլ իշխէին հաւատացելոց :

Յաւել . ԺԲ . — ԺԵ . Հերետիկոսք և հերձուածողք այն-
պէս ունին առ նորս եկեղեցի, որպէս սամարացիք և
սադուկեցիք առ հինն : Արդ սոքա և հերովդիանոսք և
փարիսեցիք և յեսեանք ոչ համարէին արտաքոյ հրէա-
կան եկեղեցւոյ, ապա և ոչ հերետիկոսք և հերձուա-
ծողք արտաքոյ են եկեղեցւոյ : — ԺԶ . Ի միաւորեալն
որդեգրէ և զնոսա Հաւուծոյ, և անդամս առնէ Քրիս-
տոսի . դաւանեն զհաւատս Քրիստոսի, և կատարեն
որ ինչ խնդրի յաշակերտութիւն Քրիստոսի . քանզի
ասէ (Յհ . ԺԳ . 1 .) “ Հաւատացէք յՀաւուծ, և յիս
հաւատացէք ,, : Այլ այլուր . (ԺԴ . 35 .) “ Հայեմ գի-
տասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ
սիրիցէք զմիմեանս ,, : Այս այլուր (Ը . 47 .) “ Ոչ հա-
ւատայ յիս, ընդունի զկեանսն յաւիտենականս ,, :
— ԺԷ . Ընծանօթ էր յաւուրս առաքելոց և առ նախնի
հաւատացեալս խորութիւնդ այդ :

Պե . — ԺԸ . Ցախս և յառաջ ասեմք, զի Քրիստոս այլ-
ազգ ’ի հրեականէն զեկեղեցի իւր կարգաւորեաց : Այս
երկրորդ՝ զի սամարացիք ըստ քաղաքական եւթի մա-
սին հերձեալ էին ազգովին ’ի հրէից, իսկ ըստ կրօնա-
կան մասին ոչ ամենեքեան՝ այլ բազումք . քանզի կէսք
’ի նոցանէ հաղորդէին ընդ հրեական եկեղեցւոյ, իսկ
կէսք զգուշանային յարտաքին հաղորդութենէ, Թէ-
պետ և համակրօնք : Այս երրորդ՝ զի զանազանելի է զսա-
դուկեցիս յայլոց աղանդաւորաց . քանզի նոքա անհա-
ւատք էին, այլ որպէս յաւուրս մեր անհաւատք քա-
ղումք, որք ’ի մերումն եւթէ եկեղեցւոյ կան ընդ հաւա-
տացեալս, և ոչ կազմեն ժողով ուրոյն : Իսկ այլք ’ի
հրէական աղանդոյ՝ էին դպրոցք այլ և այլ քան Թէ
աղանդք :

— ԺԹ . Արարչին միաւորութիւն որդեգիրս առնէ զամե-
նեսեան Հաւուծոյ և անդամս Քրիստոսի ’ի մանկու-
Թենէ . այլ ’ի հասակ և ’ի միտս լինել իւրաքանչիւր
ուրուք, և ’ի յարել ’ի հերձուած ինչ կամ յաղանդ մո-
լորութեան, դադարէ յորդեգրութենէ՝ այլաձայն գա-
ւանութեամբն կամ հպատակելով հովուի օտարի :

Ա՛նգղի իմաստ պատգամացն Ա՛րիստոսի այն է, զի առանց այնոցիկ ոչ է մարթ լինել աշակերտ Ա՛րիստոսի, այլ ոչ եթէ այնոքիկ ևեթ բաւականք իցեն. Հաւատացելոց ամենեցուն պարտ է զնոյն ունել դաւանութիւն, և միոյ եկեղեցւոյն Ա՛րիստոսի գոլ հպատակք, և ոչ իւրաքանչիւր ումեք ըստ մտի իւրում յերիւրել իւր հաւատս։ Ո՛յ նոյն ինքն՝ որ զսէր նշանակ քրիստոնէի ետ, պատուիրեաց և առաքելոցն. "Ունայիք նոցա (այսինքն հաւատացելոց) պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ,,։

— Գ. Ո՛չ ընդունիմք անծանօթ լեալ առ հինս զխորհուրդն մկրտութիւն մկրտելոց և հերձուածողաց. զի ահա Պօղոս զԵ՛իմենոս և զՊիլետոս և զԱ՛լեքսանդրոս դարբին արտաքսեաց յեկեղեցւոյ. Յոհաննէս զկերինթացիս, Պետրոս և Յուդաս զաղանդաւորս՝ որոց հակառակ զԹուղթս իւրեանց գրեցին։ Նա առ Տիտոս գրէ Պօղոս. (Ա՛. 10.) "Յառնէ հերձուածողէ, յետ միանգամ և երկիցս խրատելոյ, հրաժարեսջիր,,։ Նա Յոհաննէս. (Բ. Կաթ. Ա՛. 10.) "Նթէ ոք գայցէ առ ձեզ, և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի՛ ընդունիցիք զնա՝ ի տուն, և մի՛ ողջոյն տայցէք նմա,,։ Պովին կանոնիւ վարեցաւ միշտ եկեղեցի ընդ օտարաձայնս՝ ի հաւատոց։ Ո՛ ասն որոյ և Յովհ. իմաստասէր կանոնէ (կան. իԹ.) "Ո՛չ է պարտ ամենևին անխտիր լինել և հաղորդութիւնս առնել ընդ հերձուածողաց, այլ խորշել՝ ի նոցանէ, և չհաւասարել ընդ նոսա՝ ի հոգեկան և՝ ի մարմնական սեղանս. զի պատկառեսցեն և փափաքեսցեն միաբանել ընդ ուղղափառութեանն աւանդիչս,,։

Ա՛ռաք. Գ. — ԺԱ. Ա՛իութիւն եկեղեցւոյ՝ ի միօրինակ դաւանութենէ այսինքն՝ ի նիւթական ձևոյ հանգանակին առեալ, անպոյ իմն է. զի այնչափ բազմապատիկ են իմաստք հանգանակին, որչափ արտասանողացն զայն այլ և այլ՝ ի միմեանց են միտք։ — Բ. Ո՛նտեղի է զմիութիւն հաւատոյ կամ եկեղեցւոյ հաստատել յիշխանութիւն միոյ ուրուք կամ բազմաց։ — Գ. Ա՛րիստոս՝ ի հաստատեն զեկեղեցի՝ ոչ սահմանեաց զարտաքին կամ զյարակից հանգամանս նորին. վասն որոյ մի է եկեղեցի, Թէպէտ և զանազանեալ այլաձև վարդապետութեամբ յարակից հանգամանաց քրիստոնէութեան։

պէս. — ա. Իւրաքանչիւր ձեռնադրութեան կամ հանդանակն՝ սահմանեալ ըստ հասատաց մտաց, որպէս զի ոչք վարիչն նովաւ՝ զնոյն ամենեքեան հաւատասցեն և զնոյն ունիցին դաւանութիւն։ Ոչ այլ և այլ աստիճան հաստոցութեան, որով ոք առաւել և այլ ոք նուազ ըմբռնել զնմանատս ձեռնադրութեանն, ոչ ինչ ստնանել էութեան իրացն։ Այլ ամն որոյ խրատէ առաքեալն զՏիմոթէոս (ա. Տիմ. ա. 13.) ունել օրինակ (այսինքն զպատձէն) ողջմտութեան բանիցն. զի առ՝ի չգոյէ սորին՝ բազում հերձուածք և օտարաձայն վարդապետութիւնք՝ի վեր երևին։

— բ. Եթէ իշխանութիւն միոյն այնորիկ կամ բազմաց՝ որ վարդապետեն՝ մարդկային էր իշխանութիւն, էր արդարև մարթ հաստատել յայն զմիութիւն եկեղեցւոյ. այլ՝ի Քրիստոսէ է իշխանութիւնն այն անսխալ վարդապետութեան։ Այլ եթէ՝ի Քրիստոսէ է, կարօղ էր նա անխափոր շնորհել զայն միութիւն կամ բազմաց։

— գ. Եթէ յարակից կամ արտաքին հանգամանաւք իմանայցեմք որ ինչ նորաղանդք և հերետիկոսք այլաձևութիւնս մուծին յեկեղեցի, արդարև ոչ՝ի Քրիստոսէ այնորիկ են սահմանեալ. այլ եթէ զսահմանադրութիւնս և զաւանդս եկեղեցւոյ, սխալեն. զի զայնոսիկ ինքն իսկ սահմանեաց Քրիստոս, և կամ ողիկ եկեղեցի չկարէ փոփոխել կամ այլայլել զայնս. և որք այլայլենն՝ ոչ ևս պատկանին՝ի միութիւն կամ ողիկ եկեղեցւոյ։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Քաղագս սրբութիւան եկեղեցւոյ։

Ամենայն հաւատացեալք ընդունին, զի պարտ է եկեղեցւոյ գոլ սուրբ. քանզի Քրիստոս սրբեաց զնա, և խոստացաւ լինել ընդ նմա մինչև՝ի կատարած աշխարհի։ «Քրիստոս սիրեաց զեկեղեցի, ասէ առաքեալն, (Եփես. Ե. 25.) և մատնեաց զանձն իւր վասն նորա, զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բա-

նիւ, զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց, այլ զի իցէ սուրբ և անարատ ,,: Եւ ոչ առ այլ ինչ կամեցաւ հաստատել զեկեղեցի, բայց առ՝ի սրբել զմարդիկ. պաշտօն քարոզութեան, մատակարարութիւն խորհրդոց, կարգ քահանայութեան, պատարագն և ամենայն ինչ սահմանեալ է՝ի սրբութիւն մարդկան. “Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս, ՚ի հաստատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման, ՚ի շինուած մարմնոյն Քրիստոսի ,,. (ՍԵՓ. Դ. 11):

Ասն որոյ սուրբ է եկեղեցի, նախ՝ ըստ սկզբանն և ըստ նախապետական գլխոյն իւրոյ Քրիստոսի, որ սուրբն է սրբոց և աղբիւր ամենայն սրբութեանց: Եւ ևս ըստ առաքելոցն սրբոց, և յաջորդաց նոցին՝ Հարց և Հայրապետաց սրբոց, որք եղեն որպէս քարինք պատուականք՝ի հիմունս նորա սրբեալք մաքրեալք և յարդարեալք յօրինակ ամենայն հաւատացելոց:

Երկրորդ՝ սուրբ է ըստ կոչմանն՝ի սրբութիւն, զի ամենայն անդամք նորա հաւատացեալք համօրէն կոչեցեալ են՝ի սրբութիւն, որպէս ասէ առաքեալն. (Եփես. ա. 4.) “Ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զվինելն աշխարհի, լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա սիրով ,,: Եւ առաքելապետն ասէ. “Քանզի սրբոյն՝ որ կոչեացն զձեզ, և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք ,,. (ա. Պետր. ա. 15): Եւ դարձեալ. “Քանզի դուք ազգ եք ընտիր, քահանայութիւն, թագաւորութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինութիւնն նուիրիցէք այնմ, որ զձեզ՝ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն ,,. (ա. Պետր. բ. 9):

Սուրբ է և ըստ անհամար իւրոցն մարտիրոսաց, որք ցօղով արեան իւրեանց սրբեցին զնա, և պատարագաւ մահուան իւրեանց և հեղմամբ սուրբ արեան եղեն օրինակ սրբութեան հաւատացելոց, և ընկալան Հոգւոյն ձիրս շնորհաց և պարգեւաց վասն համօրէն եկեղեցւոյ: Սուրբ է դարձեալ և ըստ բազմութեան կենդանի անդամոց իւրոց, որ սուրբ են՝ի մեղաց և ձգտացեալք՝ի շնորհս արդարութեան և՝ի սէր Աստուծոյ.

քանզի այսպիսիք չպակասեն երբեք յեկեղեցւոջ յաւետենական ժամանակի։

Արդարդ՝ սուրբ է ըստ վարդապետութեանն, զի դաւանեն և ուսուցանեն Հաւատացելոց զսուրբ Հաւատս, քարոզեն զարքունութիւն վարուց, դատապարտեն զախտս չարս և զմեղութիւնս։ Սուրբ է և ըստ խորհրդոց, ըստ պատուիրանաց, ըստ պաշտամանց և ըստ արարողութեանց, որ համայն սուրբք են և առաքինորդեն ՚ի սրբութիւն։

Արդ սուրբ է եկեղեցի, զի սուրբ է վարդապետութիւնն նորա, սուրբ և սրբարար են խորհուրդք նորա. բայց պարտ է զանազանել զարքունութիւն վարդապետութեան ՚ի սրբութենէ անդամոց. զի վարդապետութեանն հարկ է ըստ ամենայն մասանց լինել սուրբ, այլ անդամոցն ոչ այսպէս. հարկ է զի իցեն միշտ ՚ի նմա սա սուրբք, այլ ոչ է հարկ՝ թէ ամենեքին իսկ իցեն սուրբք։ Արդ պարզ և անխառն սրբութիւն միայնոյ յաղթական եկեղեցւոյ է յերկինս. իսկ ՚ի գինուորեալս եկեղեցւոջ յերկրի՝ գտանին արդարք և մեղաւորք, ընտրեալք և խոտանք, բարիք և չարք, կատարեալք և անկատարք. և են մի՝ դաւանութեամբ նոյն Հաւատոյ, հաղորդութեամբ նոյն խորհրդոց, և հպատակութեամբ օրինաւոր հովուաց ընդ միով հովուապետիս երևելեալ։ Ո՛չ մահուչափ մեղք ոչ արտաքսեն յեկեղեցւոյ զմեղաւորս, և ոչ կայցեն ՚ի հաւատս՝ կցորդին եկեղեցւոյ նովին հաւատովք։ Քրիստոս առակէ զեկեղեցի յանդ՝ ուր աձէ որոմն ընդ ցորենոյ, ՚ի կալ՝ ուր է և յարդ ընդ հատս ցորենոյ, յուսկան արկեալ ՚ի ծով՝ յոր ազգի ազգի ձկանց է ժողով, և ՚ի հօտ խառն ՚ի խուռն յօդեաց և յայծեաց. և գտանէ նա յեկեղեցւոջ իւրում ծառայս չարս ընդ ծառայս հաւատարիմս իւր, և կուսանս յիմարս ընդ խմաստունս։ Այսուհանդերձ որոյ առաքեալք թէպէտ և ոչ ինչ ՚ի ջանից թողին առ ՚ի սրբել զհաւատացեալս, այլ զանսուրբս ևս ՚ի նոցանէ համարեին անդամս եկեղեցւոյ. խրատ, յանդիմանութիւն, աղօթս, սաստ և սպառնալիս, և զամենայն հնարս ՚ի կիր արկանէին առ ՚ի զգաստութիւն ածել զնոսա և ՚ի քրիստոնէական պարտս. այլ ոչ իբրև ընդ ստարս եկեղեցւոյ վարէին ընդ նոսա։ Այսպէսն առաքեալն Յովհաննէս ոչ արտաքոյ եկեղեցւոյ համարի

զմեզաւորս ուր ասէ (ա. Յով. ա. 8.) "Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն՝ի մեզ ոչ գոյ ,,։

Սոյնպէս վարդապետեն և Հարք առհասարակ. վասն որոյ դատապարտեալ է յեկեղեցւոյ յանաւենեանն վարդապետութիւն. "Եկեղեցի է ժողով որդւոց Աստուծոյ որդեգրելոց Քրիստոսիւ, որ հոգւով նորա կեան, և գործեն ընդհօք նորա ,,։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Բաղագս ընդհանրականութեան եկեղեցւոյ :

Ընդհանրական է եկեղեցի այսինքն կաթողիկէ, նախ՝ ըստ տեղոյ թեան, զի եկաց միշտ և կայցէ մինչև՝ի կատարած աշխարհի. երկրորդ՝ ըստ վարդապետութեան, զի բովանդակէ համօրէն զնոյն ճշմարտութիւնս աւանդեալս՝ի Քրիստոսէ. և երրորդ՝ ըստ տեղւոյ, վասն համասփիւռ տարածութեանն ընդ տիեզերս. և այս է բուն ընդհանրականութիւն, զորմէ աստանօր մեր բանքս են։ Այլ առ այս ոչ է կարևոր, զի ամենայն ուրեք՝ ուր և հասանէ՝ զօրացի, և առաւելուցու թեամբ քան զայլ աղանդս. այլ շատ իսկ է նմա տակաւ ամենայն ուրեք երևել և ունել տեղի։ Արդարեք, փրկիչն մեր, առաքեալք և վարդապետք յամենայն ժամանակի միաբանին յանդիման առնել մեզ զեկեղեցի ըստ այսմ ընդհանրականութեան։

"Ինդրեա յինէն, և տայ քեզ զհեթանոսս՝ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի ,,. (սղմ. բ. 7)։

"Տիրեսցէ նա՝ի ծովէ մինչև՝ի ծով, և՝ի գետոց մինչև՝ի ծագս աշխարհի։ Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա ,,. (հա. 8. 12)։ Այսոսիկ ամենայն սուրբ Հարք ինանան զՔրիստոսէ։ Նոյնպէս և Յայտն ասէ զՔրիստոսէ. "Եդի զքեզ յուխտ ազգի և՝ի լոյս հեթանոսաց, լինել փրկութիւն մինչև՝ի ծագս երկրի ,,. (խլ. 5)։

"Օ՛ի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեա-

ոչն, և տուն Աստուծոյ՝ի վերայ գլխոց լերանց, և բարձրասցի՝ի վերայ բլրոց. և եկեսցեն՝ի նա ամենայն հեթանոսք ,,. (Ը. 1)։

Նոյնպէս և վէմն առանց ձեռին հատեալ, զոր ետես Դանիէլ, ակնարկէ՝ի Քրիստոս և յեկեղեցի. "Նա վէմն, որ եհար զպատկերն, եղև լեառն մեծ, և ելից զամենայն երկիր ,,. (Դան. Ը. 35)։ Նա Աղաքիա ասէ. "Յարևելից մինչև՝ի մուտս արևու փառաւորեալ է անուն իմ՝ի մէջ ազգաց, և յամենայն տեղիս մատչին խունկք անուան իմոյ, զի մեծ է անուն իմ՝ի հեթանոսս ,,. (Ա. 11)։

Քրիստոս ըստ մարդարէութեանցս այսոցիկ ասաց ցաշակերտս իւր. "Այս բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզն էի, թէ պարտ է լնուլ ամենայն գրելոցն յօրէնսն Մովսեսի և՝ի մարգարէս և՝ի սաղմոսն վասն իմ։ Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս. և ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ էր չարչարել Քրիստոսի և յառնել՝ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս, սկսեալ Երուսաղէմէ ,,. (Ղ Ի. ԻԳ. 47)։

"Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց ,,. (Մարկ. ԺԶ. 15)։

"Ընկնիջիք ինձ վկայք Երուսաղէմ և յամենայն հրէաստանի և՝ի Սամարիա, և մինչև՝ի ծագս երկրի ,,. (Գործ. Ա. 8)։

"Ումէն ասեմ ձեզ, զի ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, խօսեսցի և զոր արար դա ,,. (Մատթ. ԻԶ. 10)։

Նա ամենայն սուրբք Հայր յեղյեղելով զկանխասացութիւնս զայսոսիկ, հաստատեն զընդհանրականութիւն եկեղեցւոյ. և սուրբն Կիւրեղ ասէ՝ի Կոչումն ընծայութեան (ԺԸ.) "Կաթողիկէ անուանեալ է, զի ընդ ամենայն տիեզերս՝ի ծագաց մինչև՝ի ծագս երկրի է, և զի ուսուցանէ առանձինն և անպակաս՝ի գիտութիւն գալ մարդկան՝ի կարևոր հրամանս... և զի առանձինն բժշկեսցէ և ողջացուսցէ զամենայն ազգս մարդկան ,,։

Մեծն Լեւոն (՝ի Ռէն. Քոմակարգ.) "Ո՞չ ինչ է կա-

Թողիկէն, տիեզերական. զի ամենայն եկեղեցիք ուղղափառաց՝ որ ընդ տիեզերս՝ մի են. մի Աքրիատոս յամենայն եկեղեցիս է, որ ըստ առաքելոցն Հաւատոյ շինի, զոր և առաքելական կոչեմք։ Որ զի Թէ և բաժանին ըստ տեղեաց, այլ ոչ երեք ըստ ժողովրդոց. զի՛ ի ծագաց մինչև՛ ի ծագս երկրի, ուր և հաւանիցէ Աչմածիւտ Հաւատայեաւն յեկեղեցիս ուղղափառաց, իւր եկեղեցի է. և ոչ որոշէ զնա, ոչ աշխարհն, և ոչ լեզուին օտարութիւնն։

Աուբրն (Դոստինոս (ընդդէմ Թռնո. գլ. ը.) «Պինդ ունի զիս նոյն ինքն անունն կաթողիկէ. զի ոչ առանց պատճառի՛ ի մէջ այնչափ բազմութեան հերձուածոց այս եկեղեցի միայն զայս անուն կալաւ»։ Նոյ այլուր (յղ. Ժամանակի. Հատ Ճլա.) «Պպա մի միայն Աչմարիտ Հարսն Աքրիստոսի եկեղեցին՝ միշտ և ամենայն ուրեք մեծարի անուամբս կաթողիկէ»։

Պարթ է ասել և ընդհանրական զեկեղեցի ըստ իշխանութեանն, զի է՛ ի նմա լուսի և հանրական իշխանութիւն քննելոց և դատելոց, կապելոց և արձակելոց, ուղղելոց և վարելոց զՀաւատացեալս առհասարակ։ Այս հանրական իշխանութիւն է նախ՝ ՛ի գլուխն եկեղեցւոյ, ՛ի հանրական փոխանորդն Աքրիստոսի. և երկրորդ՝ ՛ի ժողովն տիեզերական, գումարեալ Հաւանութեամբ գլխոյն և ՛ի նմանէ Հաստատեալ։ Նստ այսմ գլուխն և այ կոչի հանրական, զի է նորա իշխանութիւն ուղղելոց և վարելոց զընդհանուր եկեղեցի. որպէս և յաղգի մերում օրինաւոր գլուխն կամ հովիւ հոգևոր Համօրէն ազգին կաթողիկոս կոչի, այսինքն ընդհանրական։ Պրդ եթէ գլուխ ազգի միոյ, կամ աւանձին եկեղեցւոյ, կոչի ընդհանրական ըստ իշխանութեանն՝ զոր ունի՛ ի վերայ այնր եկեղեցւոյ, քանի՛ և առաւել գլուխն ընդհանուր եկեղեցւոյ։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս առաքելականութեան եկեղեցւոյ։

Եկեղեցի Քրիստոսի անդստին ի հիմնադրէն իւր՝ ունէր զառաքելականութիւն իւր. զի Քրիստոս առաքեալ ի Հօրէ եկն, և կենսաբուղխ վարդապետութեամբ իւրով և աւանդութեամբ փրկագործ օրինաց և պատուիրանաց հիմնեաց և հաստատեաց զեկեղեցի իւր. վասն որոյ կոչի "Առաքեալ խոստովանութեան մերոյ,,. (Հբր. գ. 1)։ Այս գնոյն գործ և զիշխանութիւն առաքելութեան հաղորդեալ առաքելոց իւրոց, առաքեաց գնոսա ասելով. "Գնացէք այսուհետև ասշակերտեցէք զամենայն հեթանոս,,։ Այս յանընդհատ յաջորդութենէ անտի առաքելոց պահի ցարդ և պահեսցի յեկեղեցւոջ առաքելութիւն մինչև ցկատարած աշխարհի։

Այլ այսմ յաջորդութեան մարթի է գոլ կրկնակի. մի՝ ուղիղ յաջորդութեամբ եպիսկոպոսաց զհետ միմեանց, և միւս ևս՝ կցորդութեամբ ընդ այնս, որոց ընկիզն յառաքելոց անտի առեալ է։ Քանզի առաքելոց ևեթ, և նոցին օրինաւոր յաջորդաց ետ Քրիստոս զիշխանութիւն քարոզելոյ, և ընդ նոսա խոստացաւ լինել մինչև ի կատարած աշխարհի։ Ո՛չ եպիսկոպոսն ևս զայսոսիկ մասունս հաստատէ Տերտուղիանոս (ի գիրս պարբռոնեան հերետիկոսաց.) "Հապա ցուցցեն զսկիզբն իւրեանց, ածցեն ինձուսցեն զկարգ եպիսկոպոսաց իւրեանց ի սկզբանէ և այսր յառաքելոց անտի, կամ յառաքելական արանց՝ որոց կենակից լեալ իցէ ընդ առաքեալս։ Քանզի այսու օրինակաւ առաքելական եկեղեցիք յառաջ բերեն զդասակարգութիւն իւրեանց. որպէս զիւրոնացւոց եկեղեցին զՊոլիկարպոս ի Յովհաննէ կարգեալ, Հռոմայեցւոցն զԿղեմէս զոտ ի Պետրոսէ ձեռնադրեալ, ըստ նմին և այլք։... Քառքեալք ի քաղաքս քաղաքս հաստատեցին եկեղեցիս, յորոց այնուհետև և այլ եկեղեցիք ընկալան զհաւատս

և զերմանս վարդապետութեան, որով և նոքին առաքելական համարին ,,։

Ըստ այսմ ամենայն եկեղեցիք ուղղափառաց կոչին և են առաքելականք, կամ ուղղագիծ յաջորդութեամբ յառաքելոց անտի ինքեալք, և կամ անբաժանելի կցորդեալք ՚ի մի սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի. և որ ոչն ունի զայս վերջինն պայման, թէ և ուղղագիծ յումեքէ առաքելոց ինքեալ, չէ առաքելական՝ այլ օտարացեալ ՚ի Քրիստոսէ եկեղեցւոյ։

Առաքելական է եկեղեցի և այնու, զի ոչ դադարէ ընդուլ զպաշտօն առաքելութեան՝ առաքելով ամենայն ուրեք և առ ամենայն ազգս հեթանոսաց քարոզս բանին կենաց՝ ծառայել զհաւատս Քրիստոսի ըստ նորին հրամանի. “Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց ,,. (Մրկ. ԺՁ. 15)։

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆՔ

Բ-արկ. ա. — ա. Ինդունայն է սահմանել նշանս առ ՚ի ճանաչել զեկեղեցի. զի հարկ է ճանաչել ինչ նախ, առ ՚ի գիտել զնշանս նորա. զի եթէ չէր յառաջածառնօթ եկեղեցի, և ոչ զնշանս նորա մարթ էր գիտել։ — բ. Ի սուրբ գիրս չկայ այլ ինչ նշան եկեղեցւոյ սահմանեալ բաց ՚ի սիրոյ. և Քրիստոս ասէ (Յհ. ԺՁ. 35.) “Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս ,,։ — գ. Ընդունայն է միութիւն՝ որ ՚ի միօրինակ դաւանութեան հաստատեալ. զի առանց այնը իսկ կարէ կալ եկեղեցի, որպէս յայտ է ՚ի նովատեանց, ՚ի կիսապելագեանց, և արդ իսկ ՚ի յանսեներանց, որք թէպէտ և տարաձայնին ՚ի վարդապետութենէ եկեղեցւոյ՝ այլ չհամարեցան և չհամարին արտաքոյ եկեղեցւոյ։ — դ. Այսպէս և ընդհանրականութիւն ոչ ինչ կարևոր է եկեղեցւոյ. որ թէ ՚ի սկզբան էր ընդհանուր, այլ արդ գրեթէ ՚ի գաւառ մի համփոփեալ։ — ե. Առքութիւն ևս անյայտ ինչ նշան է. զի Քրիստոս նորանշան ինչ ընդհս միջնէներաւորս ոչ խոստացաւ եկեղեցւոյ, այլ և չարաց հնարաւորս եղոյց զայն

ոչ դուն ուրեք, և զի դարձեալ աղանդաւորք ևս ընծայեն զայնոսիկ անձանց իւրեանց։ — ԺԴ. Իսկ վասն առաքելականութեան շատ իսկ է ունել զվարդապետութիւն առաքելոց, և չէ հարկ ունել զանընդհատ յաջորդութիւն նոցա։ — Ե. Իւ քանզի ըստ այսմ չարմարին նշանքս այսոքիկ ամենայն դասուց քրիստոնէից, ապա անօգուտք են։

Պէ. — Ե. Պատքէն հարկ է նախ Ճանաչել, ոչ զեկեղեցի, այլ զհանգամանս՝ որովք կացոյց Քրիստոս զեկեղեցի, առ՝ ի կարող լինելոյ Ճանաչել հանգամանացն այնոցիկ նշանօք զեկեղեցի Քրիստոսի։ Արդարև զի առ՝ ի յուցանել զՀռոմ քաղաք, ասիցէ՝ ի վերայ եօթանց բլուրց կառուցեալ զայն՝ գետոյ ընդ մէջ անցանելով. որպէս զի քաղաք՝ ի քաղաքէ ուղևորեալ, ընտրեսցէ յայնցանէ զայն՝ յորում զինշանական զայնոսիկ դատանիցէ զեօթն բլուրսն և զգետ ընդ մէջ հոսեալ։

— Ը. Արքն կամ եղբայրսիրութիւն նշանակ է իւրաքանչիւր ուրուք աշակերտաց Քրիստոսի, և իբր առանձնական ինչ յատկութիւն քրիստոնէի, և ոչ իբր նշան եկեղեցւոյ. ապա թէ ոչ, արտաքս անկանիցէր յեկեղեցւոյ՝ որ քէն ինչ ոք զեղծօրէ իւրմէ պահէր՝ ի սրտի։

— Թ. Իսկ նովատեանց և այլոց նոցին նմանեաց յաւելոյ առ ժամանակ մի յեկեղեցւոջ կրկին են պատճառք. մի՝ երկայնամտել եկեղեցւոյ յուսով դարձի նոցա, մինչև յամառութեամբն իւրեանց ստիպեն զնա՝ ի հատուցին. և միւս ևս՝ զի ոչ ամենայն մոլորեալք խումբս կազմեն, այլ վարատականք կան՝ ի ծոց եկեղեցւոյ. որք թէպէտ առ Աստուծոյ իսկապէս են հերետիկոսք կամ հերձուածողք, այլ առ եկեղեցւոյ համարին պատկանել՝ ի մարմին նորա և ևթ. որպէս եղեն յամենայն ժամանակի և են իսկ զարդիս անհաւատք և անաստուածք և որք չեն՝ ի շնորհս Աստուծոյ, որ ինքեանց ստանանեն և ոչ միութեան եկեղեցւոյ։

— Ժ. Եկեղեցի թէպէտ և ըստ նիւթական տարածութեանն չիցէ ընդհանուր, այլ ըստ տեսական ծանօթութեանն՝ որ հաստատեալն է՝ ի մի և՝ ի նոյն դաւանութիւն, և ըստ տարածութեանն յամենայն ժամանակս և՝ ի տեղիս, է ընդհանրական։ Վասն որոյ և

Քրիստոս ասաց՝ Թէ քարոզեսցի աւետարան իւր ընդ ամենայն աշխարհ, և ապա աւերումն Երուսաղէմի վախճան մի լինի. այսինքն է եկեղեցւոյ:

— ե. Այլ են նշանք սուտք՝ երբեք երբեք ի սուտ մարգարէից գործեցեալք. այլ են գարձեալ նշանք՝ ևս և Հնմարիտք՝ աստուածային իմն տեսչութեամբ ի դէպս ինչ ներգործեալք, և այլ որ գարուց ի գարս ի ձեռն սրբոց սուղորաբարն գործին: Այս հնորհ եկեղեցւոյ ևեթ Քրիստոսի է, և ոչ ուրեք յայլս աղանդոց. և ըստ այսմ հնորհս այս է նշանակ սրբութեան այնր ևեթ եկեղեցւոյ, յոր սուրբքն այնոքիկ պատկանին: Այս ևեթ խոիր է ընդ առաջին և ընդ արդի ժամանակս եկեղեցւոյ, զի յայնժամ յաձախեալ էին և հասարակաց այսպիսի նշանք, որպէս պէտք ժամանակին պահանջէին զայն, և այժմ ի դադարել պիտոյիցն այնոցիկ՝ դադարեալ է և յաձախութիւն նշանաց:

— զ. Յաջորդութիւն օրինաւոր հովուաց միակ նշանակ է յարատևութեան առաքելական վարդապետութեան. և անընդհատ յաջորդութիւն յայն սակս կարևոր, առ անլուծանելի ունելոյ զկցորդութիւն ընդ օրինաւոր յաջորդս առաքելոյ:

— է. Ոչ ընդունիմք զի նշանքս այսոքիկ ամենայն դասուց քրիստոնէից յարմարիցին. զի հարկաւ պակասէ նոցա միութիւն ընդ սկզբանն՝ յորմէ սերին, վասն որոյ և այլքն՝ որ ի միութեան անդ հաստատեալ կան:

ԳԼՈՒԽ Գ

ԹԷ ՈՐՈ՛ՒՄ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՉՈՐԵՔԻՆ ՆՇԱՆՔՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՆԿ ԻՑՆ

Եկեղեցի Քրիստոսի մի է, որպէս խոստովանին զայս քրիստոնեայք առհասարակ, և դաւանեն իսկ ի հանդանակի: Ընդունին՝ զի եկեղեցիք երկու կամ երեք, անմիաբանք և անկցորդք և հակառակք իսկ միմեանց, չկարեն զոլ միանգամայն Հնմարիտ եկեղեցիք Քրիստոսի. այլ հարկ է՝ միայն յայնցանէ զոլ Հնմարիտ, և

պլոց ոչ։ Իսկ արդ զի Թէ կամիմք և եթէ ոչ, սակայն լեալ են և են իսկ ցարդ եկեղեցիք կամ ժողովք քրիստոնէից զանազանեալք յիրերաց՝ ի վարդապետութիւն հաւատոյ, և անկցորդք՝ ի միութիւն, նա աւանիկ և հակառակք իրերաց, որպիսի նորազանդիցն են, և այլոց որոշելոց՝ ի հռովմէական եկեղեցւոյ, որք տարաձայնք և անմիաբանք յիւրեանս՝ հակառակին առհասարակ և հռովմէական եկեղեցւոյ, հարկ է՝ կամ հռովմէականին գոլ Ճշմարիտ, և կամ միոյ ուրուք՝ ի նոցանէ։ Ապա այն որոյ արժան է խնդրել՝ Թէ որո՞ւմ յեկեղեցեաց պատշաճիցին նշանքս Ճշմարիտ եկեղեցւոյ։

ԳՕԴՈՒԱՆ Ա.

Զի չորեքին նշանք առհաւատչեայք Ճշմարիտ եկեղեցւոյ երևին յայտնապէս՝ ի միայ հռովմէական եկեղեցւոյ։

Զև մատուցեալ՝ ի ցոյց Ճշմարտութեանս, կարևոր համարիմք ծանուցանել՝ զի երրորդի է իմանալ զեկեղեցի հռովմէական։ Իսկ՝ որպէս եկեղեցի հռովմայ, որպէս ժողով բազմութեան հաւատացելոց՝ որ են՝ ի քաղաքի անդ և՝ ի սահմանս նորին։ Երկրորդ՝ որպէս աթոռ հռովմայ, գահ առաքելապետին Պետրոսի և յաջորդաց նորա քահանայապետաց հռովմայ, հանդերձ ուխտիւն և գլխաւոր առաջնորդօք եկեղեցւոյն։ Երրորդ՝ որպէս միաբանութիւն համօրէն հաւատացելոց՝ ի Քրիստոս համապիւռս ընդ տիեզերս. որք միաբանին՝ ի հաւատս ընդ նմին եկեղեցւոյ, և զքահանայապետն հռովմայ ընդունին որպէս յաջորդ սրբոյ առաքեալապետին՝ գլուխ ընդհանուր եկեղեցւոյ։

Ասա առաջնում նշանակութեան՝ եկեղեցի հռովմայ է մի յառանձինն եկեղեցեաց, սահմանեալ՝ ի հռովմէական գաւառի։ Ասա երկրորդ նշանակութեան որպէս աթոռ հռովմայ՝ նոյնպէս է առանձին եկեղեցի ըստ տարածութեան, այլ ըստ վարդապետութեանն և ըստ իշխանութեան հանրական։ Իսկ ըստ երրորդ նշանակութեան, ըստ որում է իմանալ զամենայն նոյնադաւան հաւատացեալս՝ յորս բովանդակի և եկեղեցի և

աթոռ Հռովմայ, է եկեղեցի ընդհանրական ըստ ամենայն մասանց: Ըստ այսմ նշանակութեան առնումք ասա ցուցանել՝ զի է Հիմարտապէս մի միայն, ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցի:

Այս զայս դարձեալ արժան համարիմք ազդ առնել, զի եկեղեցի Հռովմէական և եկեղեցի լատինացւոց ոչ մնոյն բերեն նշանակութիւն. զի եկեղեցի Հռովմէական հանրաբար առեալ՝ նշանակէ, որպէս ասացաք, ըզՀաւատացեալս Հայրէն զանազանեալս ազգաւ և սովորութեամբ և արարողութեամբք, որք միաբանին՝ի նոյն դաւանութիւն Հաւատոյ: Իսկ եկեղեցի լատինացւոց նշանակէ զայն ամենայն եկեղեցիս կամ ազգս և գլեզուս, որք միաբանին ընդ Հռովմայ՝ ոչ ըստ Հաւատոյ ևեթ, այլ և՝ի ծէսս և՝ի պաշտամունս, ևս և՝ի լեզու եկեղեցական:

Ո՛յսոսիկ, որ յայտնի են իմաստնոց, Հարկ համարեցաք նշանակել աստ Հարևանցի. որպէս զի մի՛ ոք առ՝ի համաձայնել ընդ Հռովմայ եկեղեցւոյն ըստ Հաւատոյ՝ Հարկ համարեսցի փոխոխել զազգային ծէսս և արարողութիւնս: Այսուհետև արդ՝ի ցոյց առաջարկութեանս:

ԳՈՒՆԱԾ Բ

Գաղափս միաբեան հռովմէական եկեղեցւոյ:

Զկատարեալ միութիւն Հռովմէական եկեղեցւոյ ոչ ոք կարասցէ ժխտել: Ոչնք միահեծան պետութիւն՝ի վերայ երկրի, որ Հաւասարեսցէ նմա՝ի գաւակարգեալ միութեան: Այի Հովուապետ, և ընդ նմա Հովիւք Հազարաւորք, եպիսկոպոսունք, արքեպիսկոպոսունք և պատրիարքունք որ Հովուեն զՀօտ Քրիստոսի. և ընդ նոքօք գասք գասք պաշտօնէից և քահանայից բիւրաւորաց՝ որ օժանդակեն նոցին: Այսիսկոպոսաց իւրաքանչիւր, արքեպիսկոպոսաց և պատրիարքաց պաշտօն և իշխանութիւն սահմանեալ միօրինակ կարգօք և օրինօք, յորոց՝ի պահպանութիւն Հսկէ Հովուապետն, և առ նա դիմեն ամենեքեան՝ի յառնել խնդրոց, և՝ի

նմանէ ընկալեալ վձիռ և հպատակեն՝ ի մի ձայն հո-
վուապետին սահմանք նորա և հրամանք լսելի լեալ առ
ամենեսին։ Մինչդեռ ի հռովմէական եկեղեցւոջ
միութիւնս այս պահի, մինչև բազմաց բողոքել զայն-
մանէ. ստոյգ հաւաստիք, զի եկեղեցի Հռովմայ խորշի
ի ստուերաց իսկ հերձուածոյ և քակտելոյ միութեան։

Սատագոյն ևս ի հռովմէական եկեղեցւոջ պահի
միութիւն քան հաւատոյ։ Մինդ ամենայն ուրեք յամե-
նայն եկեղեցիս միաբանս ընդ նմա՝ նոյն դաւանութիւն
է ամենևին, նոյն վարդապետութիւն, նոյնօրինակ բա-
ցատրութիւն մասանց հաւատոյ կարևորաց, նոյն խոր-
հուրդք, նոյն պատուիրանք, և նոյն պաշտօն Աստուծոյ՝
որպէս զիարդ յառաքելոյ անտի և ի սրբոյ Հարց ա-
ւանդեալ։ Եւ յամենայն վէձս և ի խնդիրս հաւատոյ
միակ և վերջին պատգամատու ամենեցուն է գահա-
կալուն եկեղեցւոյ, որ մեկնէ զդժուարինս, բացայայտէ
զմթինս, և չներէ այլայլել յոմանս ի մասանց հաւա-
տոյ՝ զորս յառաքելոյ անտի ընկալաւ եկեղեցի։

Ոչ ասեն որոյ սուրբն Կրեգորիոս հետևող առաքելոյն ա-
սէ զեկեղեցւոյն Հռովմայ. (Ընդդէմ հերձ. գ. 3.)՝ "Հայր
եկեղեցի վասն առաւելագոյն գլխաւորութեանն հարկ
է գալ միաբանել ամենայն եկեղեցեաց,,։

Սուրբն Կիպրիանոս (ի Նոաղն ծԸ.) կոչէ զաթոռն
Հռովմայ՝ "Գլխաւոր եկեղեցի, ուստի սկիզբն կալաւ
միութիւն քահանայական,,։

Եւ սուրբն Երոնիմոս ի տարաձայնել աթոռոց ա-
րևելեցւոց վասն բառիս ԷՕՆՈՒՍԻՈՆ, զրէ այսպէս՝ի Հռովմ:
(ի Նոաղն աա Գաղատս.) "Ստանօր յերիս մասունս
պատառեալ եկեղեցի, իւրաքանչիւր ոք ջանայ յինքն
ձգել զնս. այլ ես ձայնարկեմ. Ամ ոք միաբանի ընդ գա-
հին Պետրոսի, իմ է,,։

Իսկ զվկայութիւնս Հարց մերոց է տեսանել՝ի ստո-
րև, ի ձառս գլխաւորութեան քահանայապետին Հռո-
մայ։

Դայց հարկ է յուշ առնել աստանօր, զի այս միու-
թիւն և համաձայնութիւն հաւատացելոց՝ի մի հա-
ւատս՝ պահանջի և է յայն ևեթ մասունս հաւատոյ, որ
վձռեալ և սահմանեալ են յեկեղեցւոյ առ՝ի հաւա-
տալ։ Ոչ՝ի տարաձայնութիւն կարծեաց և վարդապե-

տութեան մարթի գոլ, և ե իսկ, յայնպիսի խնդիրս և ՚ի բանս սուրբ գրոց՝ որ չև են սահմանեալ, և յորս տա- րաձայնութիւն ոչ ինչ ստանանէ միութեան հաւատոց, այլ մանաւանդ օգտէ իսկ երբեմն առ ՚ի լուսաբանել զինդիրն մինչև սահմանեացն յեկեղեցւոյ: Որպէս եղևն և ՚ի խնդիր անարատ յղութեան Տիրամօր կուսին, և յայնմհետէ դադարեցին վէճք և տարաձայնութիւնք:

Ըստ այսմ և զհամաձայնութիւն հաւատացելոց ա- մենեցուն ՚ի խորհուրդս եկեղեցւոյ՝ ըստ հռութեան խոր- հըրդոցն է իմանալ, և ոչ ըստ ծիսից և ըստ արարողու- թեանց, ըստ երգոց, ըստ աղօթից, ըստ ընթերցուա- ծոց, և ըստ սպասուց՝ որովք պաշտին: Ո՛չ ազգք և ժողովուրդք իւրաքանչիւր զանազանին յայնս ՚ի մի- մեանց, յեական մասունս խորհրդոցն միաբանեալ ամե- նեցուն. որպէս ՚ի խորհուրդ մկրտութեան, սրբոյ պա- տարագին, պսակի, և այլն. և եկեղեցի Աղաչուցա- նէ, նա աւանիկ և հրամայէ այլ և այլ ազգաց ունել և պահել զհինաւանդ սովորութիւնս իւրեանց ընկա- լեալս ՚ի նախնի Հարց և ՚ի հայրապետաց ազգին: Զան- զի այս ամենայն զանազանութիւնք, ՚ի վերայ մեծի վայելչութեան, յաւելուն և ձգնել յոյժ զնորաշանդս ՚ի հաստատութիւն խորհրդոց եկեղեցւոյ՝ զորս մերժեն որպէս նորաձեւութիւնս: Ո՛չ ե եթէ այսպէս եր, իբր ազգք և ազինք քրիստոնէից, ամենևիմբ զանազանեալք յիրերաց, արևելեայք և արևմտեայք, միաբանէին յեա- կան մասունս նոցին ՚ի նիւթն և ՚ի ձև:

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս սրբոյ հռոմէական եկեղեցւոյ:

Սրբութիւն հռովմէական եկեղեցւոյ ըստ վարդա- պետութեան հաւատոյ և բարոյականին այնչափ և այն- պէս վկայեալ է, զի թէպէտ հակառակորդք բազումք զրպարտիչք և զրախնդիր պարսաւադետք դուն գործեն աղարտել զայն, սակայն ոչ ոք կարաց ցարդ արատ ինչ իրաւացի դնել խոստովանութեան հաւատոց նորա և վարդապետութեան բարոյականին: Զանզի սուրբ է

ըստ սկզբանն, գլուխ իւր նախապետական խոստովանելով զՔրիստոս։ Սուրբ է ըստ կոչմանն, զի զորդիս իւր զամենեսեան զհաւատացեալս կոչէ և յորդորէ՝ի սրբութիւն, որպէս զի արդարացեալք հոգւով՝ի ձեռն հաւատոց յուսոյ և սիրոյ, և գործովք բարեաց միասցին ընդ իւր դիմել՝ի նոյն նպատակ, ՝ի նոյն վախճան սուրբ։

Սուրբ է ըստ վարդապետութեան հաւատոյ. ոչ ուսուցանէ այլ ինչ, բայց զոր ընկալաւն յառաքելոց և՝ի Քրիստոսէ, և զնոյն պինդ ունի այնպիսեաւ սուրբ նախանձու, զի ընդ երևել՝ի լոյս գրոց ինչ մոլար վարդապետութեան՝ անդէն և անդ դատապարտէ զայն, ժողովով եպիսկոպոսաց և աստուածաբանիւ՝ որ առ այս իսկ սահմանեալ կան՝ի Հռոմ, և արդելու հաւատացելոց ընթեռնուլ զմատեանն՝ բանագրեալ երբեմն և զմատենագիրսն նոցին։ Նոյնպէս և՝ի վարդապետութիւն բարոյականին, դատապարտէ զախտս չարեաց և զմոլութիւնս, պատուիրէ զառաքինութիւն և զսրբութիւն, մեծարէ զաւետարանական կատարելութիւն, խնամ ունի քրիստոնէական դաստիարակութեան և գործոց բարեաց, կառուցանել ամենայն ուրեք կղերանոցս, դպրոցս աստուածպաշտութեան, աղքատանոցս, անկեղանոցս, որբանոցս, որ այնպէս յաձախեալ են առ Հռոմէական հաւատացեալս և մանաւանդ՝ի Հռոմ, որպէս ոչ այլ ուրեք է տեսանել՝ի քրիստոնէական ընկերութիւնս։

Սուրբ է և ըստ անթիւ անհամար անդամոյ իւրոց աստուածահաճոյից, որք՝ի սկզբանէ և այսր՝ի գարս իւլաքանչիւր և յամենայն ժամանակի կացին և կան։ Որ յայլոց եկեղեցեաց կարիցէ հանել՝ի հանդէս այնչափ քահանայապետս, եպիսկոպոսունս և քահանայս վկայեալս վասն հաւատոց, այնչափ բիւրս բիւրուց մարտիրոսաց նահատակեալս երբեմն անդ իսկ՝ի Հռոմ, և որք ցարդ նահատակին՝ի Չինս, ՝ի Հընդիկս, ՝ի Յապոնիա, և ՚ի Աբիսինիա։ Որ այլ ուրեք յեկեղեցեաց կացին և կան այնչափ աստուածարեալ հիմնադիրք երկնակրօն կարգաց միանձանց և կուսաստանաց, և բարեգործ միաբանութեանց, ՝ի բարգաւաճութիւն և՝ի նպաստ հաւատացելոց։ Եւ ցարդ իսկ

յանկրծնութեամբ ձմեռնացեալ ժամանակիս եկեղեցի հռովմէական ածէ՝ ի լոյս արս և կանայս սուրբս և հրաշագործս յետ ընդ երկար խիտ և մանրախոյզ քննութեան վարուց նոցա և հրաշից*։ Զ սա է անաչառ մեծաւոք և առանց կանխակալից մտահաճութեան մատչել՝ ի դատաստան, և տեսցէ ամենայն ոք զսրբութիւն հռովմէական եկեղեցւոյ։

Այլ սրբութիւն նորա ոչ ըստ ամենայն անդամոյն է իմանալ. զի արդարք խառն ընդ մեղաւորս լեալ են միշտ և են յեկեղեցւոջ։ Յերիոտասան առաքեալս իսկ դատ մի ոմն խոտան. քահանայք, եպիսկոպոսունք և քահանայապետք մարդիկ են և նոքա, նմին իրի և մարդկայնոց կրից և տկարութեան ներքոյ անկեալ. սակայն թերութիւնք նոցա անձնականք՝ որովք մեղապարտն գտանին՝ ոչ ինչ սահանեն սրբութեան եկեղեցւոյ, որ պատապարտէ զայնոսիկ, և զամենայն դուն գործէ առ՝ ի խափանել և ուղղել զայնոսիկ։ Այլ որ անաչառ արդարութեամբ դատել կամիցի, առաւել քան ամենայն ուրեք գտանիցէ՝ ի հռովմէական եկեղեցւոջ երիցունս և եպիսկոպոսունս պայծառացեալս իմաստութեամբ և սրբութեամբ և նախանձու կրօնից, աստուածաբանս հզօրս, իրաւագէտս անուանիս, և անվեհեր ախոյեանս կրօնից։ Ի նմա և քահանայապետք պերճահռչակք գիտութեամբ և սրբութեամբ, անձնանուէրք՝ ի վերայ եկեղեցւոյն Քրիստոսի, հակառակամարտք անկարգութեանց և ախտից։ Ոչեն թերևս լեալ և՝ ի նոսա նուազունք ոմանք ոչ յոյժ արժանաւորք սրբութեան աթոռոյն. այլ միթէ մե՞ծ ինչ իցեն զարմանք, զի՝ ի շարս

* Ջմի ևեթ՝ ի հրաշից երանելւոյն Պօղոսի կարպապետի Ջարջարակիր կոչեցելոյն միանձանց, ՝ի հնգից ամաց հետէ եպիսկոպոսունք երեք և նոսաքոյք երիս և բժիշկք քաջահմուտք պարապեն՝ ի քննել զի Թերևս բնաւորապէս իցէ պատահեալ հիւանդին հոգեվարքն՝ ՝ի կարդալ զանուն նորա՝ յանկարծակի բժշկութիւն։ Եւ յետ կատարելոյ քննութեան նոցա որ ուրեմն Թերևս տակաւին գոյան, անցանեն իրքն՝ ի ժողով կարդինալաց և սրբազան Հայրապետին՝ ի քննութիւն։ Եւ ոչ միւ ևեթ հրաշք բաւեն՝ ի դատաստան սրբութեան ուրուք, այլ քառեակ խնդրին աքանչելիք։ Ըստ սմին հաստատութեան և զվարուց սրբոյն լինին քննութիւնք. այնպէս զի սրբոց բազմաց յառանէ անգ քննութեան անդիտելի միայ սրբութիւն, իսկ որոց սահմանի անդ սրբութիւն՝ ոչ է մարթ Թէ չիցեն սուրբք։

հարիւրաւոր քահանայապետաց գտանիցին և այնպիսիք ոմանք. որ ցուցանեն մանաւանդ զինաման Աստուծոյ ի վերայ եկեղեցւոյ իւրոյ, զի և հանդերձ այնպիսեացն ոմանց անձնական Թերութեամբ՝ անեղծ և անարատ պահեալ է ի նմա վարդապետութիւն հաւատոյ և բարոյականին։ Այսոյ որոյ ի դէպ է ասել, որ ինչ սուրբն Գոստինոս առ հերետիկոսս իւրոյ ժամանակին ասէր. "Ինչև ցերբ ոչ դադարիցէք ի նախատելոյ զեկեղեցի ուղղափառաց. զԹերութիւնն՝ զոր ստգտանէքդ չարաչար, դատապարտէ և նա ինքն ընդ ձեզ,,։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս ընդհանրականութեան հռովմէական եկեղեցւոյ։

Զիք այլ ոք ի դասուց քրիստոնէից այնպէս ընդհանրական, որպիսի է եկեղեցին հռովմէական՝ միաբանեալ յայլ և այլ ազգաց բազմաց և ի թագաւորութեանց. այսմ և այլափառք վկայեն։ Վասն ընդհանրութիւն հաւատոյ նորա և վարդապետութիւն միաձև և միօրինակ սփռեալ է և տարածեալ ի քառակողմն աշխարհի, Եւրոպէ, Ասիա, Աֆրիկէ, Ամերիկա, և ի կղզիս Վակիանիա և Աստրալիա։ Եւ զրեթէ յամենայն ազգս, ի բաժանեալս իսկ ի նմանէ, բիւրաւորք զնորայն ունին դաւանութիւն, և միջնորդաւ հովուաց իւրեանց և հովուապետաց զնա խոստովանին գլուխ գերագահ, և չիք այլ ոք յազգաց քրիստոնէից՝ որ հաւասարեսցի նմա, ոչ թուով միայն՝ այլ և համաձայն և համախոհ միութեամբ։ Ի ահա և նորաղանդք թէպէտ և բազմաթիւ համարեալք, սակայն հերձեալ և բաժանեալ ի դասս դասս և յայլ և այլ աղանդս՝ ոչ կացուցանեն մի միայն եկեղեցի, և ոչ ընդ միով գլխով կան. որպէս է իսկ դատակնիք մոլորելոցն ի ձշմարտութենէ ընդ բազում հետս գնալ, և գժուարին իսկ է վտարանջելոց յօրինաւոր իշխանութենէ հպատակել այլում։ Այսր աղագաւ չիք ժողովուրդ՝ որոյ անուն յօտարաց իսկ կոչեսցի կաթողիկեայ, այսինքն ընդհանրական. վասն որոյ և սուրբն Գոստինոս ասէ. "Ի հռովմէական եկեղեցւոջ պինդ ունի զիս անունն կաթողիկեայ,,։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Յաղագս առաքելականութեան հռոմէական եկեղեցւոյն :

Առաքելականութիւն Հռոմայ եկեղեցւոյն ըստ վարդապետութեանն է և ըստ իշխանութեան : Ըստ վարդապետութեանն, զի անդստին յառաքելոց անտի առեալ և ունի միշտ զնոյն վարդապետութիւն : Որ ինչ և ուսուցանէ, ընկալեալ է յառաքելոց անտի բանիւ կամ գրով. և հաւատարիմ աւանդապահ այնոցիկ, ոչ ինքն փոխէ ինչ յայնցանէ, և ոչ այլոց թողու փոփոխել : Ի յառնել հերեսիովտաց՝ վիճի ընդ նոսա, և դատապարտէ զմոլորութիւնս նոցա, և ժողովս գումարէ ևս և տիեզերականս՝ առ ի պահել անարատ զհաւատսն, զոր ընկալաւ յառաքելոց : Առաքելական է և ըստ իշխանութեանն, զի անդստին յառաքելոց ունի զայն. որպէս զի ոչ որ ի պատրիարքաց և յեպիսկոպոսաց կարէ ցուցանել այնպէս ուղղագիծ և անընդհատ զյաջորդութիւն իւր իջեալ յառաքելոց անտի որպէս զքահանայապետին Հռոմայ : Ալ ասն որոյ սուրբն Իգնատիոս ի թիւ արկեալ զքահանայապետս՝ որ ի Պետրոսէ հետէ յաջորդեալս յաթոռ Հռոմայ, ասէ. "Ի Հռոմէական եկեղեցւոջ պինդ ունի զիս անընդհատ յաջորդութիւն քահանայապետաց յաթոռ սրբոյն Պետրոսի զհետ նորին կացելոց, որում զհօտ իւր աւանդեաց Վրիստոս, մինչև ի սերկեւանս քահանայապետս ,, : Եւ յառաջ խօսքան զսուրբն Իգնատիոս՝ զառաքելականութիւն Հռոմէական եկեղեցւոյ սուրբն Ղպտատոս, Տերտուղիանոս և Իրանոս ցուցին ընդդէմ հերեսիովտաց այնր ժամանակի, անընդհատ յաջորդութեամբ քահանայապետից յաթոռ սրբոյն Պետրոսի :

Այսպա ուրեմն եկեղեցին Հռոմայ է մի, սուրբ, կաթողիկէ և առաքելական, բերելով յինքեան զջուրեսին նշանս Համանգամայն զձշմարիտ եկեղեցւոյ : Ալ ասն ոչ ոյ ոչ սակաւք յայլոց ազգի ազգի աղանդաւորաց և ի հերձուածողաց զղջացեալք ի մահուն իւրեանց՝ ընկալան և ընդունին զՀռոմէական դաւանութիւն. իսկ ի

կաթ ողիկեայց ստրջացեալք բազումք ընդ վարս իւրեանց՝ զի ոչ ըստ հաւատոյն կեցին, այլ ընդ հաւատս իւր ղջնացեալ՝ ի մահուն և ոչ մի։

Ընդ եթէ հռովմէական եկեղեցին է Աշմարիտն և՝ կեղեցի, և Աշմարիտ եկեղեցին է մի միայն, զհետ գայ ինքնին՝ զի՝ ի նմա և եթէ չորեքին նշանքս Աշմարտին համանգամայն։ Ոչ նորաշանդից է իսկ հարկ ասել, որոց և ոչ առաքելական է սկիզբն. այլ յերից և՝ ի չորից դարուց հետէ ինքնահնար սկսեալ կրիւք. և այնչափ վարդապետութիւնք են՝ ի նոսա մոլորք և հակառակք աւետարանին, և այնչափ անթիւ՝ ի նոսա աղանդք զանազանեալք յիրերաց, զի և յամենայն իսկ ժողովոյ քրիստոնէից հերքեալ մերժին որպէս մոլորեալք։ Իսկ այլք յեկեղեցեաց ապաքէն գուն գործեն ցուցանել յինքեանս զչորեսին նշանքս, այլ այնպիսեօք կարկատուն ապացուցիւք, մանաւանդ զմիութիւն իւրեանց և զընդհանրականութիւն, զի նովին իսկ բացայայտագոյն կացուցանեն զհաւատսիս Աշմարիտն եկեղեցւոյ, առ որ մարգարէականն Աշգրտիւ՝ ի դէպ ելանէ պատգամ. «Ո՛ի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն, և տուն Աստուծոյ՝ ի վերայ գլխոց լերանց ...» (Եսայ. ը. 1)։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Այլ ասիցէ ոք յայլափառաց, որպէս և ասեն իսկ նորաշանդք լուտանօք ընդդէմ հռովմէական եկեղեցւոյ, իբր թէ հռովմայեցիք զինքեանս ևեթ համարին զնոյն ուղղափառս, զայլ ամենայն աղինս համարելով չափառս և որդիս կորստեան. և զի ոչ է մարթ առնել զայդ ամփոփումն առանց անիրաւութիւն ածելոյ զողորմութեամբն Աստուծոյ, ասել՝ թէ արտաքոյ հռովմէական եկեղեցւոյ չիք փրկութիւն։

Ընդ այդ պատասխանեմք նախ՝ զի զհակառակն մանաւանդ ասեն հռովմայեցիք, այսինքն զգաւանութիւն իւրեանց յամենայն ազգս տարածեալ. և ուր և կայցեն ուղղափառք ծանօթք կամ անծանօթք, զամենեսին եղբարս իւրեանց համարին և կոչեն։ Ապա որոյ որ ոք ցուցանէ զի չէ հերետիկոս կամ հերձուածող, այսինքն ոչ տարաձայն՝ ի վարդապետութենէ միոյ հըշ-

մարիա եկեղեցւոյն Հռիփսիմեի, և ոչ բաժանեալ ՚ի կցորդութենէ գլխոյն և անդամոց նորա, համարին զնա նոյն ընդ ինքեանս մարմին Քրիստոսի, և անդամ յան դամոց նորա։ Այլ առ ՚ի բացայայտագոյն առնել զբանս, պատասխանեմք դարձեալ։

Հռովմէական եկեղեցի ուսուցանէ նախ առաջին՝ զի Պետրոս կամի զամենայն մարդիկ զի կեցցեն, և ամենեցուն տայ ընտրեա բաւական առ ՚ի փրկութիւն։ Երկրորդ՝ զի ոչ ոք կարէ հասանել փրկութեան առանց Քրիստոսի վաստակոյն և արժանեաց. "Ո՛չ և ոչ անուն այլ դոյ ՚ի ներքոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ, որով արժան իցէ մեզ կեալ,,. (Գործ. դ. 14)։ Երրորդ՝ զի ըստ տեսութեան բանին՝ "Զի եկեղեցւոյն ոչ լսէ, եղիցի որպէս զհեթանոսն և զմաքսաւորն,,. (Մատ. ԺԸ. 17)։ Ո՛չ մի ե՛կեղեցի Քրիստոսի ըստ հաւատոց և ըստ տեսչութեան. և որ լուծանէ զմիութիւնս զայս մոլորութեամբ կամ հերձուածով, նովին իսկ դադարէ ՚ի մասնակցութենէ եկեղեցւոյն Քրիստոսի, ուստի և արտաքոյ չիք փրկութիւն։ Իսկ եթէ ընդէ՞ր արտաքոյ եկեղեցւոյն Քրիստոսի չիք փրկութիւն, քաջայայտ է. զի որ անարգէ զեկեղեցի Քրիստոսի, զՔրիստոս անարգէ. "Ո՛չ որ ձեզ լսէ, ասէ նոյն ինքն Քրիստոս, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ,,. (Ղ՚. Ժ. 14)։ Պատուիրեմն որ վտարանջէ յեկեղեցւոյ Քրիստոսի, վտարանջէ ՚ի Քրիստոսէ. և ցոլջալի ՚ի վտարանջութեանն կայ, չիք նմա փրկութիւն։

Նաքին իսկ առարկուք, և նորաձանդք իսկ, ընդունին զառաջս զայս, զի արտաքոյ եկեղեցւոյ չիք փրկութիւն, որպէս ՚ի դաւանութիւնս իսկ նոցին տպագրեալս է տեսանել. միայն չմիաբանին ընդ մեզ ՚ի ծանօթութիւն և ՚ի սահման եկեղեցւոյ։ Այլ որպէս և սահմանեսցեն զայն, սակայն ընդունին՝ զի արտաքոյ այնր միութեան չիք փրկութիւն. և որչափ և ընդարձակեսցեն զայն, սակայն չընդունին զոք ՚ի ներքս քան ՚ի քրիստոնէից։ Այսպա ուրեմն սակաւ ինչ ընդհատ ՚ի մէնջ արտաքսեն և ինքեանք ՚ի փրկութենէ զառաւելագոյնս յոյժ, և առանց համեմատութեան առաւելագոյնս, քան զընկալեալսն եկեղեցի Քրիստոսի։

Այլ յիրաւի արդեօք ամբաստանիցեն զՀռովմէա-

կան եկեղեցի, թէ դատապարտիցէ զամենեսեան՝ որ չիցեն ՚ի նմին եկեղեցւոջ։ Այսեմք թէ կարի յանիրաւի. զի նա դատապարտէ եւեթ զայնոսիկ, որք ընդդէմ տերունեան հրամանին՝ եկեղեցւոյ ոչ լսեն։ Այլ ըստ այսմ արտաքոյ եկեղեցւոյ համարի զայնոսիկ՝ որք ձաշնաչէնն կամ կարեն ձանձաչել զնա, և յաղթելի տգիտութեամբ յամառեալ կան ՚ի հերձուած իւրեանց կամ ՚ի մոլորութեան։ Հռովմէական եկեղեցի ոչ ինչ խըստագոյն քան զայս առնէ դատաստան, յայտ իսկ արարեալ վարդապետութեամբ աստուածաբանից՝ զի մարթէ և մանաւանդ զոլ հոգեպէս եկեղեցւոյն Քրիստոսի, թէպէտ և անմասն ՚ի մարմնոյ նորա։ Այն են և արտաքոյ եկեղեցւոյ որդիք նորին աներեւոյթք. ընդհակ միրտութեան՝ որ փրկէ զմանկունս հերետիկոսաց ըստ օրինի միրտեալս, կարէ իսկ յարաձնել կամ կատարեալ զըղջմամբ նորոգիլ ՚ի չափահասակ՝ զորս անյաղթելի տգիտութիւն կաշկանդէ արտաքոյ եկեղեցւոյ։ Այս վարդապետութիւն ոչ նոր ինչ է. այլ որպէս հին և նոր աստուածաբանք առհասարակ ուսուցանեն, մարթ է ումեք գոլ հերձեալ՝ առանց գոլոյ հերձուածող։ Ոմն ի որք կամաւոր կամ յաղթելի տգիտութեամբ կան ՚ի հերձուածս՝ նոքա են հերձուածողք, զի մերժեն գիտութեամբ կամ կամաւոր տգիտութեամբ զեկեղեցի կամ զվարդապետութիւն նորա. իսկ որ անյաղթելի տգիտութեամբն անգիտանայ զնա կամ զվարդապետութիւն նորա, չէ հակառակող նմին. և ըստ տերունեան բանին՝ "Որ ոչն է ընդ մեզ հակառակ, ՚ի մեր կոյս է,, (Ղկ. Թ. 39)։ Քանզի և մոլորութիւնք և հերձուածք են իբրև զայլս ՚ի մէջայ. որ անյաղթելի տգիտութեամբ մեղս ինչ գործէ, նիւթապէս եւեթ մեղանչէ, և չհամարի նման այն ՚ի մեղս։ "Ել է պարտ ընդ հերետիկոսս դասել, ասէ սուրբն Գրիգոր Նիսացի, զայնոսիկ իսկ՝ որոց միաբանակարագոյն են մոլորութիւնք, եթէ չյամառիցին յայնս. մանաւանդ զայնոսիկ՝ որոց մոլորութիւնք ոչ ինքնահաւանութեան և յանդգնութեան են արգասիք, այլ թշուառութիւն ժառանգեալ ՚ի ծնողաց, և որք ՚ի խնդիր են ճշմարտութեան՝ յօժարք ՚ի թողուլ զմոլորութիւն ՚ի գտանելն զայն,, (Ընդ. խղ)։ Այս դարձեալ ասէ. "Գիտութիւք թէ իցէ ոք

՝ի փոխինեան մոլորութեան ՝Քրիստոսէ, ուղղափառութիւն զայն կարծելով. չև և ես կոչեմ ես զնա հերետիկոս, եթէ ոչ յետ տեղեկանալոյ ընտրեսցէ կալ ընդդէմ կաթողիկէ հաւատոյ՝ քան հրաժարել յընկալեալ մոլորութենէն ,,. (յղ. Դր. գիրք Գ. գլ. ԺՇ)։ Այսպա ուրեմն հռովմէական եկեղեցի ոչ, որպէս ամբաստանեն զնա նորաղանդք, իսկ ինքնիշխանն դատապարտէ զամենեսեան, այլ որք յամառութեամբ կամ կամակար և յաղթելի տգիտութեամբ կան՝ի մոլորութեան կամ՝ի հերձուածս։

Իսկ անհաւատից, այսինքն Հրէից և մահմետականաց և հեթանոսաց, կամ դրական է անհաւատութիւն և կամ բացասական։ Դրական այնոցիկ է՝ որք մերժեն զաւետարանն, և կամ յաղթելի տգիտութեամբ անգիտանան զայն. արդ յայտնի է՝ զի հռովմէական եկեղեցի չկարէ անդատապարտ առնել զսոսա. զի տէրունեան է վճիռն. "Որ ոչն հաւատայ, դատապարտեսցի ,,. (Մրկ. ԺՇ. 16)։ Այլ ոչ զնոյն է ասել զբացասական անհաւատութենէ, այսինքն զայնցանէ՝ որոց չէցէ երբեք լուեալ զքարոզութիւն աւետարանին, զի ասէ. "Եթէ եկեալ և խօսեցեալ, մեղ ինչ ոչ գոյր նոցա ,,. (Յհ. ԺԵ. 22)։ Դանզի պարտք հաւատալոյ՝ի լսելոյ են, որպէս առաքեալն ասէ. "Ո՞ւրդ հաւատասցեն որում ոչն լուան, կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ ,,. (Հռ. Ժ. 14)։ Այսմ որոյ հռովմէական եկեղեցի զայսպիսի տգիտութիւն անյաղթելի ոչ միայն չհամարի անհաւատից՝ի մեղս, այլ և դատապարտեայ զմոլորական վարդապետութիւնն. "Ընդհաւատութիւն պարզապէս բացասական՝ համարի՝ի մեղս և այնոցիկ, առ որս չէցէ երբեք քարոզեալ աւետարանն ,,։

Յառաջ ևս կարեմք խաղալ անվեհեր, առանց երկիւղի խոտորելոյ՝ի վարդապետութենէ հռովմէական եկեղեցւոյ, և ասել՝ զի անհաւատք աստուածապաշտք, որոց չէցէ երբեք լուեալ զքարոզութիւն աւետարանին, հաւասար են հեթանոսաց՝ որք յառաջ քան զգալոսան Քրիստոսի էին, որոց չէր այլ ինչ պարտք բացի՝ի բնական օրինաց, և որ ինչ հաւատք Հնմարտութեան և յուսոյ Եսիային՝ի հարց անտի աղօտաբար առնո-

սա հասեալ։ Քանզի Քրիստոս ոչ եկն ՚ի կորուսա-
նել, այլ առ ՚ի փրկել զաշխարհ. և ոչ է մարթ ասել՝
փրկագործութեանն Քրիստոսի բարձեալ զինարս փըր-
կութեան այնոցիկ, որք յառաջ քան զգալուստ նորա
փրկեին։ Ընդհակառակ՝ որ համարի ըստ Աստուծոյ որ ինչ
է նորա ծանօթութիւն զկրօնից, և ցանկայ ՚ի սրտե գի-
տել զկամս Աստուծոյ, հաւատայ նա զօրութեամբ որ
ինչ մեքս հաւատամք. և թէպէտ թերի են հաւատք
նորա, այլ կարեն բաւել ՚ի փրկութիւն։ Ո՛չ ի բաց ի սա-
հէ նա զամենայն օրէնս Աստուծոյ՝ զորս ձանաչէ, հաս-
ցէ փրկութեան. զի է նա հոգեպէս ՚ի ձեռին Հոգւոյն։

Պարտէն չէ մարթ առանց մկրտութեան մտանել
յարքայութիւնն Աստուծոյ. բայց աստուածաբանք, ըստ
հոգւոյ աւետարանին և ըստ վարդապետութեան Տեր-
ոջ, երիս մկրտութիւնս զանազանեն. այսինքն ջրոյ, արեան
և ըղձից։ Արդ երրորդս այս, այսինքն իղձ մկրտութեան,
ընդ զտեղի խոստմունքն յորս սիրեն զԱստուած ՚ի վեր
քան զամենայն. և զիղձս զայս, եթէ ոչ արդեամբք՝ այլ
զօրութեամբ համարելի է յայնպիսիս, որ անդէտք խոս-
տմունքն՝ ցանկան կատարել զամենայն կամս Աստուծոյ,
և որ ինչ կարևոր է ՚ի փրկութիւն։ Ո՛չ այս այսպէս վար-
դապետք սուրբ Գրիգորիոսին, (Տաճ. ՀԲ. Խնդիր կԹ. յօդ.
Ի.) սուրբն Լփոնսոս, (Ճառ. ՀԲ. գլ. ա.) և այլք յաս-
տուածաբանից։

Եւ զարձեալ եկեղեցի սուրբ զկարևորութիւն մկըր-
տութեան ուսուցանէ սկսեալ յետ քարոզութեան ա-
ւետարանին։ Արդ այս քարոզութիւն ոչ միահաղոյն
եղև, այլ տակաւ. ապա և պարտք մկրտութեան տա-
կաւ ընդ քարոզութեան աւետարանին տարածեցաւ ՚ի
մարդիկ։ Եւ իցէ թէ զուրկ ՚ի հնարից գտան յայն-
ժամ աղգք, յորս չև եր քարոզեալ ոչ աւետարանն և
ոչ մկրտութիւն. նպաստք՝ որ զօրեին յառաջ քան զգա-
լուստն Քրիստոսի տղայոց և չափահասից ընդդէմ
սկզբնական մեղաց, միթէ պակասեցին անդէն և անդ
գալստեամբն Քրիստոսի։ Ոչ է մարթ ասել զայս. այլ
մանաւանդ օրէնն է հաստատել՝ զի նոյն նպաստք դեռևս
զօրեն վասն հեթանոսաց, առ որս չկոչեցին տակաւին քա-
րոզեալ աւետարանն։ Ընդ նորդք աւետարանին՝ յոր վայե-

լեմքս՝ չէ մարթ թէ իցէ ՚ի կորուստ այնոցիկ, առ որս չիցէ հասեալ աւետարանն։ Ոչ և չէ մարթ՝ թէ փըրկագործութիւնն Քրիստոսի յոռեգոյն զհանգամանս նոցա իցէ արարեալ։

Համառօտ ասել. Հռովմէական եկեղեցի արտաքսէ յարքայութենէ զայնոսիկ ևեթ, զորս արգարութիւնն Աստուծոյ դատապարտէ, եթէ յանհաւատից, եթէ ՚ի հերետիկոսաց, և եթէ ՚ի հերձուածողաց, նմին ինքեան Աստուծոյ սրտագիտին թողեալ դատել զչափ տգիտութեան նոցա՝ թէ արդեօք իցէ անյաղթելի. և այս է հարազատ իմաստ բանին՝ Ընտաքոյ եկեղեցւոյ չիք փրկութիւն *։

Ընացելովքս լուծանի և միւսն այն առարկութիւն. զի — Եթէ իցեն ՚ի հռոմէական եկեղեցւոջ սուրբք և հրաշագործք, չպակասեն և առ այլս, և քանիք իսկ վկայեալք վասն հաւատոյ։

— Կանգի եթէ գտանիցին ՚ի նոսա ըստ տեղեաց տեղեաց անձինք աստուածահաճոյք և վկայք Քրիստոսի, խնդրելի է թէ այք ումանք այնոքիկ իցեն. արդեօք հակառակասէրքն և հակառակք հռոմէական եկեղեցւոյ, թէ անյաղթելի տգիտութեամբ կացեալք նիւթապէս արտաքոյ նորին, զի և այնպիսիքն՝ անդամք են հոգեպէս Քրիստոսի եկեղեցւոյ՝ որպէս ասացաք, կցորդեալք հոգւոյ նորին։

Գ Լ Ո Ի Խ Դ

ՑԱՂԱԳՍ ՑԱՏԿՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Բայց ՚ի չորեցունց նշանաց աստի եկեղեցւոյ՝ որ են արտաքին ցուցակութիւնք առ ՚ի Քրիստոսէ ընտրեալ զնա, են նորա և ներքին էական յատկութիւնք կամ ձիրք՝ ողորմելք կայ և յարատեւէ ՚ի սպառ, և որոց յայտարարք են նշանքն այնոքիկ։ Այս են յատկութիւնքս այսոքիկ, զի է երևելի, միտակայ և անսխալ։

* Տես յաստուածաբանութեան էջ 550. ՚ի Քառն եկեղեցւոյ. մասն ա. գլ. Ե. յօդ. Է. համար 915։) Կոսմէի, որոյ հռոմէական եկեղեցւոյ կարգինալի. (հատ. ա.

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ջի եկեղեցի Քրիստոսի երևելի է և մշտակայ :

Ուղղափառ վարդապետութիւն ուսուցանել ընդդէմ նորաձանդից, զի եկեղեցւոյ Քրիստոսի պարտ է գոլ երևելի և զգալի, միտքլենաւոր և անպակասելի : Այուրք գիրք գյատկութիւնքս զայսոսիկ յայտ առնեն՝ ի ցուցանելն զեկեղեցի որպէս տուն Աստուծոյ կանգնեալ՝ ի բարձու լերին, որպէս Թագաւորութիւն անկործանելի, որպէս քաղաք՝ի ծագ լերին, որպէս ատեան՝ կանգնեալ՝ի պետս հաւատացելոց, որպէս շինուած և մարմին Քրիստոսի, որպէս ամրոց հաստահիմն՝ի դրանց դժոխոց անվանելի, և իբրև հօտ յանձնեալ՝ի հոգաբարձութիւն հոգևոր հովուաց : "Օ՛ի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն, և տուն Աստուծոյ՝ի վերայ գլխոց լերանց, և բարձրասցի՝ի վերայ բլրոց. և եկեսցեն՝ի նա ամենայն հեթանոսք ,,. (Ես. ՟Բ. 2 :) "Յարուսցէ Աստուած երկնից Թագաւորութիւն, որ յաւիտեանս ոչ եղծանիցի ,,. (Դան. ՟Բ. 44 :) "Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք Թագչել, որ՝ի վերայ լերինն կայցէ ,,. (Մատ. Է. 14 :) "Այսպա Թէ և եկեղեցւոյն ոչ լսիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր ,,. (Մատ. ԺՀ. 17 :) "Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս, ՚ի հաստատուԹիւն սրբոց, ՚ի գործ պաշտամանն, ՚ի շինուած մարմնոյն Քրիստոսի ,,. (Եփ. Դ. 11 :) "Ի նմանէ զպակասութիւնն նեղուԹեանցն Քրիստոսի՝ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի ,,. (Կողոս. Ա. 25 :) "Դուք ես վէմ, և՝ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղԹահարեսցեն ,,. (Մատ. ԺՁ. 18 :) "Օ՛ գոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զԺողովուրդ տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով ,,. (Գործ. Ի. 28) :

Եւ Քրիստոս խոստանայ լինել ընդ եկեղեցւոյ իւ-

բում մինչև ի կատարած աշխարհի, ապա ուրեմն ոչ է մարթ եկեղեցւոյ դադարել երբեք և պակասել. «Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ մինչև ի կատարած աշխարհի. (Մատ. իը. 20): Սուրբ գիրք ամենայն ուրեք յանդիման առնեն զեկեղեցի որպես երևելի ինչ և զգալի, և ոգին սուրբ զգալի օրինակաւ էջ ի վերնատունն ի վերայ նորածին եկեղեցւոյն Քրիստոսի. և յամենայն իսկ ժամանակի այսպէս խնդացն զգանս սուրբ գրոց ածք առհասարակ. սուրբ Սկսեբերան, սուրբն Կիպրիանոս, Ոսկիբերան, սուրբն Երոնիմոս, և այլք առհասարակ մեկնիչք սուրբ գրոց: Եւ ի վերայ ածէ սուրբն Գրոտիոս. «Ո՛չինչ այլ ունիցիմք կոչել՝ բայց զաչացուս, որք զայնպիսի լեառն մեծ չտեսանիցեն, և ընդդէմ ձրագի՝ որ ի վերայ աշտանակի կայ՝ զաչս կափուցանիցեն»: Եւ այլուր. «Եկեղեցի յայտնի է ամենեցուն և երևելի. զի որ ի վերայ լերինն կառուցեալ քաղաք, չկարէ թաքչել»: Սակ վասն միանձնաւորութեան եկեղեցւոյ յաւելու ընդդէմ այնոցիկ՝ որք պակասելի զնա համարին. «Ո՛չ այդ ասեն՝ զքրիստինամա... չէք նա, զի դու չես ի նմա. տէս, գուցէ վասն այն սակ դու չիցես, զի նա է՝ թէ և դու չիցես»:

Դարձեալ և յամենայն ժամանակի մոլորեալք արտաքոյ եկեղեցւոյ դատեցան: Պաւղոս Հրամայէ Տիտոսի՝ յառնէ հերձուածողն հրաժարել. (Տիտ. գ. 10): Կերինթեանք, եբիոնեանք, վալենտինեանք, մարկիոնիտք, սաբելեանք, արիանոսք, մակեդոնեանք, և այլք առհասարակ աղանդաւորքն առաջնոյ դարուց արտաքսեցան յեկեղեցւոյ. ապա ուրեմն անդստին յաւուրց իսկ առաքելոց երևելի և զգալի համարէր եկեղեցի. ապա թէ ոչ, որո՞վ իրաւամբք կարէր դատապարտել զնոսա, և որպէս զնդովքն արդարացուցանել՝ եթէ նզովեալք ընդդէմ դառնային իշխանութեան նորա, և աներևոյթ զեկեղեցի Քրիստոսի խոստովանէին:

Դարձեալ և նորաղանդք ինքնին ի տպագիր դաւանութիւնս իւրեանց խոստովանին, զի արտաքոյ եկեղեցւոյ չէք փրկութիւն: Եւ առաքեալն ասէ (ա. Տիմ. բ. 4.) զի Աստուած «Ո՛ամենայն մարդիկ կամի զի կեցցեն, և ի գիտութիւն Ճշմարտութեան եկեսցեն»: Պէդ որպէս կարիցեն նոքա գալ յեկեղեցի Աստուծոյ

առ ՚ի փրկութիւն, եթէ եկեղեցի չիցէ երևելի, և չկա-
րիցեն ձանաչել զնա։ Եւ եթէ մարթ իցէ եկեղեցւոյ
առ ժամանակ մի պակասել, որպէս նորաղանդք ասեն,
որպէս այնը ժամանակի մարդիկն կարիցեն հասանել
փրկութեան։

Քանզի Քրիստոս ՚ի սոյն իսկ հաստատեաց զեկե-
ղեցի, զի ՚ի նմա և ՚ի ձեռն նորա հասցեն ամենեքեան
փրկութեան. վասն որոյ եթէ պակասէր երբեք եկե-
ղեցի, և կամ չձանաչէր, վրիպէր սահմանադրութիւն
Քրիստոսի յուշոյ նպատակին։ Այլ հարկ է զի եկե-
ղեցի իցէ երևելի և անպակասելի, և կայցէ միասոյ իւ-
րովք ներքինք յատկութեամբքն և արտաքին նշանօք.
և այս է տէրունեան պատգամն, թէ գրունք գԺողով
զնա մի յաղթահարեսցեն։

Օ երկոսին զայսոսիկ յատկութիւնս եկեղեցւոյ ու-
բացան նորաղանդք, ստիպեալք ՚ի հարցանելոյ ուղղա-
փառաց՝ թէ ո՞ր էր եկեղեցի նոցա յառաջ քան զ|ու-
թեր և զկալուին։ Զ՚ի գտանել ելս ՚ի վէհ ասէ՚ի
խնդիր եղեն հնոց աղանդաւորաց համախոհից որոշե-
լոյ ՚ի հռովմէական եկեղեցւոյ. այլ ոչ կարացեալ հա-
ստուցանել զնոսա մինչև ՚ի ժամանակս առաքելոց, հար-
կաւորեցան մուծանել յեկեղեցի Քստուծոյ խառն ՚ի
խուռն զամենայն իսկ քրիստոնեայս, զՅոյնս, զլատինս,
զՀայս, զեթովպացիս, զլութերականս, զկալուինա-
կանս, զկրկնակնուքս, և զայլ ամենայն ժողովս քրիս-
տոնէից, շատ համարեալ առ ՚ի փրկութիւն զկարևոր
և զհիմնական ձշմարտութեանց և եթէ զհաւատս։ Զայլ
այս վարդապետութիւն զանազանելոյ կարևոր և անկա-
րևոր մասունս հաւատոյ, հիմնականս և ոչ հիմնականս,
ոչ միայն քայքայէ զամենայն իսկ զհաւատս քրիստոնէու-
թեան, այլ և ուղղակի ընդդէմ ելանէ խոստմանն Քրի-
ստոսի առ առաքեալս և առ յաջորդս նոցին՝ ընդ նոսա լինելոյ
մինչև ՚ի սպառ յաշակերտեն զհեթանոսս և յուսուցա-
նել նոցա զամենայն որ ինչ պատուիրեաց։ Օ՚ի ոչ է
մարթ ասել՝ թէ Քրիստոս ուսուցանիցէ նորօք մոլո-
րութիւնս ՚ի մասունս հաւատոյ ոչ կարևորս և ոչ հիմ-
նականս։ Մի է ապաքէն ձշմարտութիւն, մի եկեղե-
ցի, և վարդապետութիւն նորա մի։ “Մի է տէր, մի
հաւատք, մի մկրտութիւն,,. (Եփես. դ. 5)։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ա՛ռաք. — ա. Վերկութիւն մարդկան ոչ այնպէս կը-ցորդեալ է ընդ արտաքին նպաստս, զի՛ պակասել նո-ցա չկարիցեն ընդ զտեղին նոցա ներքին յօժարութիւնք Հոգւոյ։ Ա՛ն որոյ ընդունայն է երևելի դնել եկեղե-ցի առ՛ի հաստանել նոսա փրկութեան։ Այլ թէ այնքան նուազեսցի եկեղեցի՝ մինչև չմարթելոյ ձանաչել զնա, շատ լինի յայնժամ սրտիւ ևեթ յարիլ յայն. որպէս և պատահելոց իսկ են դէպքս այս ըստ տերունական բանին. (Ղ ՚Ի. ԺԸ. 8.) “Սակ որդի մարդոյ եկեալ գտա-նիցէ արդեօք հաւատս յերկրի ,,։ — բ. Ա՛ն որոյ խոս-տումն Քրիստոսի զյարատևութենէ եկեղեցւոյ՝ պայ-մանաւ է, այսինքն եթէ մարդիկ կամակոր ոչ՛ի բաց կացցեն յեկեղեցւոյ։

Պե. — ա. Յօժարութիւնք Հոգւոյ կարել կարեն ընդ զտեղի պակասութեան արտաքին նպաստից, եթէ այսոքիկ չիցեն՛ի կարի իւրում։ Այլ թէ ոք զաչս իւր փակեսցէ առ՛ի չտեսանելոց զլոյս, կամակոր խարխա-փէ։ Ցորաղանդք՛ի ներքին յօժարութիւն ապաստա-նին, առ՛ի չընդունելոց երևելի զեկեղեցի. վասն որոյ և դէպս անհնարինս՛ի ներքս աճեն, չարաչար ընդե-լացեալ բանիցն Քրիստոսի Թէ Ուրի մարդոյ եկեալ և այլն. զի Քրիստոս բանիւն այնուիկ ցուցանէ ևեթ զբազմաց քակտումն՛ի հաւատոյ և զնուազումն սիրոյ՛ի հաւատացեալս։ Այլ թէ ոչ՝ չինայր հարկ նեռինն ընդդիմամարտ եկեղեցւոյ նստել՛ի տաձարին Աստու-ծոյ ըստ բանից առաքելոյն (Բ. Թես. Բ. 3), և ցուցանել զանձն Թէ Աստուած իցէ. զոր տեր Յի-սուս սատակելոց է Հոգւով բերանոյ իւրոյ, այսինքն բանիւ աւետարանին իւրոյ, որպէս իմանան սուրբ Հարք, և խափանելոց է զչարիս նորա՝ յուղղութիւն և՛ի ճըշ-մարտութիւն դարձուցանելով զմնացեալս՛ի պատրա-նաց նորա, և զանդարձն պատուհասելով։

— բ. Աստուծոյ Քրիստոսի այդու մնացածին պայ-մանաւ լինելը անտեղի. զի եթէ յայնվայր ևեթ տևե-լոց էր եկեղեցի՝ ցորչափ մարդիկ ոչ՛ի բաց կային՛ի

նմանել, հաւասար լինելը ասելոյ՝ թէ եկեղեցի կացցէ ցորչափ ժամանակս կացցէ։ Իսկ եթէ խոստացաւ կալ ընդ եկեղեցւոյ մինչև ի կատարած աշխարհի, աստուածային ամենակալ զօրութեամբն պահելոց է զայն մինչև ի սպառ։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս անսխալութեան եկեղեցւոյ։

Ա՛նդադարձ վարդապետութեան իւրոյ կացցէ Քրիստոս զեկեղեցի. ապա առ նա պարտ է ամենեցունն դիմել ի գիտութիւն ճշմարտութեան։ Ի զուր էր որդւոյն Աստուծոյ իջանել յերկինից առ ուսուցանելոյ զմարդիկ, եթէ չէր թողեալ յեկեղեցւոջ իւրում դիւրին և ապահով եղանակ ուսուցանելոյ զճշմարտութիւն։ Զդայ այս եղանակ է նորին իսկ եկեղեցւոյ վարդապետութիւն, և ատեան՝ որ ի ինդիրս հաւատոյ և բարոյականին տայ վճիռ անբողոքելի։ Պարտ է ատենիս այսմիկ դոլ անսխալ. զի ոչ է մարթ ընդունել վարդապետութիւն ինչ որպէս Աստուծոյ, եթէ որ ուսուցանէն զայն՝ սխալել կարիցէ։ Մինայն քրիստոնեայք ընդունին զայս ճշմարտութիւն, բայց ի նորա ղանդից՝ որք զսուրբ գիրս ևեթ համարին կանոն հաւատոյ և վարուց, զմեկնութիւն նոցին ի միտս և յիմացուած իւրաքանչիւր ուրուք արարեալ ապաստան։ Զայլ այսր վարդապետութեան այնպէս յայտնի է անտեղութիւն, զի ամենայն ոք զհերքուածն սորին դիւրաւ կարէ և ի հասարակաց իսկ մտաց իմաստասիրել։ Օ՛ եթէ չէր ատեան եկեղեցւոյ, և անդրդուելի հաստատութիւն նորա ի վերայ ճշմարտութեան՝ ըստ խոստմանց և ըստ աւանդութեան սրբոց Հարց, և օրէնն էր իւրաքանչիւր ումեք ըստ մտի իւրում յերիւրել հաւատս՝ որպէս և զիարդ զգիրս սուրբս իմանայր, ըստ Թուոյ մարդկան յաճախեին մոլորութիւնք. զի որչափ մարդիկ, այնչափ կարծիք, ասէ առաածն։ Ո՛ւ ան որոյ բարւոք զայսմանէ և չարաղանդն իսկ Նեստոր իմաստասիրէ յասելն. "Ցոյց լինէ զի ի հաւատոյս պարտ իցէ

ինձ վճռոյ ուրուք անսալ, և եղէց անդէն կաթողիկէայ. և ամենայն ոք մոացի և ողջամիտ սրտացեղ իբրև զիս ,,։

Օգոստ. Ճշմարտութիւն ուսուցանէն և սուրբ գիրք. "Ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն ,,. (Մտթ. ԺԶ. 18)։ Եդ եթէ սխալել մարթ էր եկեղեցւոյ, յաղթահարելին զնա դրունք դժոխոց։

"Ուսուցէք նոցա (այսինքն հաւատացելոց) պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի ,,. (Մտթ. ԻԸ. 29)։ Եդ եթէ սխալական էր եկեղեցի, չկարէր նա ուսուցանել հաւատացելոց որ ինչ պատուիրանս 'ի Քրիստոսէ ընկալեալ, և ոչ ինքն Քրիստոս լինէր միշտ ընդ նմա։

"Օ ի գիտասցես թէ ոչպէս պարտ իցէ քեզ 'ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի Աստուծոյ, սիւն և հաստատութիւն ճշմարտութեան ,,. (Ա. Տիմ. Գ. 15)։ Եդ եթէ չէր եկեղեցի անսխալ, ոչ էր մարթ կոչել զնա սիւն և հաստատութիւն ճշմարտութեան։

Վրկիչն մեր գՀրէական գրերցն ասէ (Մտթ. ԻԳ. 2.) "Յաթոռն Մովսեսի նստան դպիրքն և փարիսեցիք. զամենայն ինչ զոր ասիցեն ձեզ՝ արարէք, բայց ըստ գործոց նոցա մի առնէք ,,։ Եւ սակս բանիս յայտնապէս ցուցանէ՝ զի թէպէտ և ամենայն չարեօք և ապականութեամբ լցեալ էին, այլ վարդապետութիւն նոցա անսխալ էր։ Եդ եթէ ընդհակ աթոռոյն Մովսեսի այսքան, որչափ և առաւել քրիստոսականին՝ որ նոյն ինքն է ճշմարտութիւն։

Օ նոյն և Հարք միաբան հաստատեն. Լակեդեմեան ('ի Ճառն Կոփեփալոսեան.) "Ոչ ծերանայ եկեղեցի, ոչ նուաճի, և ոչ 'ի դիմամարտից յաղթահարի... քանզի Քրիստոս վասն նորա չարչարեցաւ, դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն ,,։

Նոյնպէս դարձեալ ('ի Ճառն Պ. յԱսպոյ.) "Գիւրին է արեգական շիջանիլ, քան եկեղեցւոյ խաւարել ,,։

Ամբրոսիոս ('ի Սաղմոն. գլ. Պ.) "Վէպէտ և 'ի մերկաց յաձախ կոծեալ, սակայն չէ և. չէ հնար եկեղեցւոյ նաւաբեկիլ ,,։

Հերոնիմոս (յԱդաւտ. գԼ. ՃԸ.) "Հիմնեալ 'ի վերայ վիմի՝ ոչ 'ի մրրկաց սասանի, և ոչ 'ի հողմոց կործանի ,,։

Գրիգորիոս (առ Երաստոս. գԼ. ՃԸ.) "Մինչդեռ մոլորութիւնք 'ի բաց ելին յեկեղեցւոյ իբրև ուռք անպիտանք հատեալք յորթոյ. այլ ինքն 'ի բունն իւր կայ և ինձ յորթ իւր, 'ի սէր իւր. և զրունք գժոխոց զնա մի յաղթահարեսցեն ,,։

Աղիէ ('է պատ. Ա ՏԻՏ. գԼ. Ը.) "Հիմունք նորա եդեալ են 'ի վերայ հաստատուն վիմի. ոչ նեղբինք շարժել կարեն, և ոչ վերինք դրդուեցուցանել. և զոր երկինք և երկիր ոչ դողացուցանէ, մի ոք 'ի մարդկանէ խորհրդակից յաղթել նմա ,,։

Կարեկացի ('է բանն Հե.) "Նեմ ահաւորին առնի 'ի սմա հաստատեալ տեսանի. սովաւ խորհրդաբանեցին հերձուածողաց մոլեգնաձառ բերանք կարկին ,,։

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ա՛ստղ. — ա. Կարծեցեալ անսխալութիւն եկեղեցւոյ ընտանական իմն է, զի տածէ զմոլենախանձ տգիտութիւն և ոչ նեղէ երկայնամտել այլակրօնից։ — բ. Կարձեալ և անհիմն է, զի 'ի սուրբ գիրս չկայ այլ ինչ վկայութիւն զայնմանէ՝ բաց 'ի տէրունական բանէն. "Դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն ,,. և զայն պարտ է իմանալ զհալածանաց ընդդէմ եկեղեցւոյ։ Իսկ առաքելականն բան, "սիւն և հաստատութիւն ճշմարտութեան ,,, հայի 'ի սուրբ գիրս, իբր զի եկեղեցի աւանդապահ է սուրբ գրոց՝ որք ուսուցանեն մեզ զճշմարտութիւն։ — գ. Կարձեալ այդ վարդապետութիւն 'ի վեր քան զսուրբ գիրս կացուցանէ զեկեղեցի. զի ոչ զոր ինչ սուրբ գիրք ուսուցանեն, այլ զոր եկեղեցի ուսուցանէ, պարտին հաւատալ քրիստոնեայք. ըստ իմաստից՝ զորս եկեղեցի ընծայէ սուրբ գրոց, և ոչ ըստ այնմ՝ զոր գիրք սուրբք իսկապէս ուսուցանեն։ — դ. Կարխել գարձեալ զհաստատութիւն եկեղեցւոյ և զկրօնից, որ յաստուածսիրութեան և յեղբայրսիրութեան հաստատեալն է։

Պե. — ա. Նմին անսխալութիւն եկեղեցւոյ տա-

ձէր զմելենախանձ տպիտութիւն, Աբիատոս և առաքեալք անսխալք յաւանդէն զաւետարանական վարդապետութիւն՝ տածէին զկրօնամոլութիւն, և մերժելի լինէին հաւատք. այլ ընդհակառակն տածէ զնոնարհութիւն, գերելով զմիտս ի հնազանդութիւնն Աբիատոսի։ Ել տածէ զտգիտութիւն, զի օրէն է առաջնոյն ուժեք հետազօտել զպատճառս Հմարտութեանց հաւատոյ՝ ցորվայրս հասանեն միտք. այլ մանաւանդ տածէ զգիտութիւն, որպէս արդիւնք իրացն գտնուց ի գործս յայտ առնեն։ Հմարտութեան չկարել երկայնամտել և ներել մոլորութեան՝ բառնայ ևէթ զկրօնական անխտրութիւն, որ անտեղեաց անտեղին է. այլ այս չունի ինչ ընդ քաղաքական խաղաղութեան պլակրօնից, որք վայելեն ի բազում խաղաղութեան յերկրի ուղղափառաց, ուր սոքա յերկրի պլակրօնից առաւել յոյժ կրեն բռնութիւնս։ — ե. Ամաստք տեղեակ բռնական բանին տուեալ ի նորազանդից, ոչ միայն հակառակ է իմաստից՝ զորս ասն այնմ սուրբ Գիրք, այլ և անտեղի. զի զինչ օգուտ էր եկեղեցւոյ կալ ինալ նիւթապէս անպարտելի ի հալածանաց ամպարշտաց, եթէ մարթէր նմա մոլորել և մոլորութեանց գոլ ուսուցիչ և վարդապետ։ Այս եթէ պետն և հաստատութիւն ճշմարտութեան յայն ասէ ևէթ կոչէր, զի աւանդապահ է սուրբ գրոց, զգարանս և մատենից օրէն էր նովին փառաւորեալ անուամբ յորջորջել։

— ե. Որպէս դատաւորք ունելով իշխանութիւն մեկնելոյ զօրէնս առ ի լուծանել զվէճս, սակայն չեն ի վերոյ քան զօրէնս, նոյնպէս և եկեղեցի ի մեկնել և ի բացատրել զսուրբ գիրս։ Այթէ առանձին օք ըստ մտի իւրում զսուրբ գիրս մեկնեսցէ, որպէս կամինն նորազանդք, մնացածին յայնժամ իմաստք նորա համարելի են. և ոչ որպէս մեկնեսցէ օրինաւոր Թարգման սուրբ գրոց յօրինադրէ նոցին սահմանեալ, որպիսի է եկեղեցի սահմանեալ ի Աբիատոսէ աւանդապահ և Թարգման սուրբ գրոց։

— ե. Անսխալութիւն եկեղեցւոյ ոչ միայն չխափանէ զհաստատութիւն կրօնից, այլ և կայիսէ զայն աւանդելապէս, բառնալով ի բաց զամենայն վէճ, և համամիտս զհաւատացեալս ներգործելով։ Ի աստուածսի-

րութիւն մարթէ կալ՝ի կրօնս, յորում իւրաքանչիւր
ոք զնմանատս մտացն իւրոց պաշտիցէ, առանց գերելոց ըղ-
միտս իւր՝ի հնազանդութիւնն Քրիստոսի։ Որ եղ-
բայրսիրութիւն մարթէ կալ՝ի կրօնս, յորում ամե-
նայն ոք թողեալ կայ ազատ՝ի մելսրութիւնս մտացն ի-
ւրոց։ Հանգերձ այսու ամենայնիւ՝ կրօնք և եկեղեցի ոչ
յատուածսիրութիւն ևեթ և յեղբայրսիրութիւն
հաստատեալ են, այլ և՝ի հաւատս՝ առանց որոյ ոչ ա-
տուածսիրութիւն կարէ կալ և ոչ եղբայրսիրութիւն։

ԳՕԴՈՒԱԾ Գ

*Զի հարկ է թէ իցէ եկեղեցւոյ աստուածատուր իշխանութիւն
ուսուցանելոյ զճշմարտութիւն։*

Զիք այլ եղանակ ձանաչելոյ զճշմարտութիւնս հա-
ւատոյ, բայց կամ ընդունել յեկեղեցւոջ ընչհանութիւն
ուսուցանելոյ, և կամ զձանաչումն իւրաքանչիւր ուրուք
բաւական համարել։ Ոչ՝ի կամ ըստ ուղղափառ վար-
դապետութեան՝ եկեղեցւոյ է սահմանել զինդիրս հա-
ւատոյ և ուսուցանել զճշմարտութիւն, և կամ ըստ
նորաղանդից պարտ է ասել նախ՝ զի սուրբ գիրք ևեթ
իցէն կանոն հաւատոյ, երկրորդ՝ զի իւրաքանչիւր ու-
մեք իցէն իրաւունք ըստ մտի և ըստ ձանաչման իւրում
իմանալ զայնս, և երրորդ՝ զի կարիցէ ամենայն ոք ի-
րովի առանց օգնականութեան եկեղեցւոյ գտանել՝ի
սուրբ գիրս զդիւրաւոր մասունս քրիստոնէական կրօնից
կարևորս՝ի փրկութիւն։ Որդ երեքին հիմունքս այսո-
քիկ, յորս հաստատին հաւատք նորաղանդից, են ան-
տեղի. ապա ուրեմն հարկ է՝ թէ իցէ եկեղեցւոյ իշխա-
նութիւն ուսուցանելոյ։

Պատեղի է նախ՝ ասել զի սուրբ գիրք ևեթ իցէն կա-
նոն հաւատոյ. զի է և աւանդութիւն, այսինքն և բան
Աստուծոյ անգիր, որ ոչ է գրեալ՝ի սուրբ գիրս։ Որ ան-
դութիւն ոչ միայն օգնէ առ՝ի սահմանել զինդիրս
սուրբ գրոց, այլ և ուսուցանէ ձշմարտութիւնս՝ զորս
լուեն սուրբ գիրք կամ հարևանցի ակնարկեն։ Որքին
իսկ սուրբ գիրք կարևոր ցուցանեն զաւանդութիւն, և

առաքեալն պատուիրէ Տիմոթեայ և հաւատացելոց՝ պինդ ունել զաւանդութիւնս ուսեալս յիւրմէ. զնոյն և Նարբք առհասարակ ուսուցանեն, որպէս յիւրում տեղւոջն ցուցաք: Այլ ինքեանք իսկ նորաղանդք աւանդութեամբ ունին զվաւերականութիւն սուրբ գրոց, սրբել զկիւրակէս, մկրտել զտղայս, և այլ ևս ոչ սակաւ մասունս հաւատոյ: Նարկ է ապա ընդունել նոցա զաւանդութիւն առ՝ի չանկանելոյ՝ի հակառութիւն. ապա սուրբ գիրք միայն չգաւեն՝ի կանոն հաւատոյ:

Ընդհեղի է երկրորդ՝ իւրաքանչիւր ումեք տալ իշխանութիւն իմանալոյ ըստ մտի զսուրբ գիրս, և զիւրաքանչիւր ուրուք միտս սահմանել կանոն հաւատոյ: Քանզի հակառակ է այս սովորութեան, զոր յամենայն ժամանակի կալաւ եկեղեցի՝ ըստ հասարակաց իմացուածոց Նարց իմանալ զսուրբ գիրս. և զի զարձեալ, որպէս առաքելապետն զթղթոյն Պօղոսի ասէ, "Յորս գտանին ինչ ինչ դժուարիմաց, զոր անուսումունքն և յողդողդքն կամակորեն, որպէս և զամենայն իսկ գիրս, առ իւրեանց անձանցն կորուստ,, (ք. Պետր. գ. 16): Այլ զարձեալ զի այդ ազատութիւն վէձս և հակառակութիւնս յաձախէ՝ի հաւատս. զի որպէս Տերտուղիանոս ասէ (յղ. Նախագր. գլ. ԺԲ.) "Որչափ և քաջահմուտ՝ի վարժս սուրբ գրոց իցես, մի յուսայցես յաղթել՝ի վիձաբանութեան. զի որ ինչ և ասիցես՝ ժխտեսցէ նա, և հաստատեսցէ որ ինչ և ժխտեսցես,,: Այլ ո՞ կարասցէ՝ի համար արկանել զաղանդս և զմոլորութիւնս՝ որ յաղատութենէ աստի սերեալ և բազմացեալ. զի գրեթէ ըստ թուոյ անձանց յաձախեցին և յաձախեն առ նորաղանդս իմաստք սուրբ գրոց. որպէս զի չիք մոլորութիւն՝ զոր չիցէ նոցա հանեալ անտի, կամակորելով ընդդէմ գրոց: Ո՛չ իշխանութիւն եկեղեցւոյ միանգամ՝ի բաց եդեալ, մնայ իւրաքանչիւր ումեք վձիռս տալ զհաւատոց, և հիմնել զհաւատս՝ի վերայ իւրաքանչիւր ուրուք մտաց:

Ընդհեղի է երրորդ՝ համարել թէ իւրաքանչիւր ումեք մարթի իցէ ձանաչել իւրովի զկարևոր մասունս հաւատոյ: Ոչիք իսկ զանազանութիւնդ այդ՝ի սուրբ գիրս՝ կարևորաց և անկարևորաց՝ի հաւատոյս, և ոչ մի ինչ վկայութիւն՝ որ զձշմարտութիւնս ինչ աւետարանին

ցուցցէ առելորդս առ ՚ի փրկութիւն։ Օ ի ՚ի զանազանութենէ այսի կարևոր և անկարևոր մասանց հաւատոյ ըՀետ գայ մուծանել յեկեղեցի զամենայն հերձուածս քրիստոնէից, որպես ասացաք. որպես և հարկեցան մուծանել նորաշանդք ըլուԹերականս, զկալուվնականս, զզուինգլեանս, զկրկնակնիքս, զԹաբօրականս, զվիկլեփեանս, զփոտեանս, զնեստորականս, զեւտիքականս, և զամենայն այլ և այլ խառնափնդոր հերձուածս անգ՚ղիական եկեղեցւոյ։ Այս եԹէ կամիցին ինքեանք ինքեանց բանիցն ըՀետ գնալ, ստիպին և պապա՝ որպես կոչեն նոքա անարգանօք զկաԹողիկեայս՝ ընդունել յեկեղեցի, և չարտաքսել զնոսա ևս ՚ի փրկուԹենէ։ Այլ եԹէ այս այսպէս է, որպես և խոհականագոյնք ՚ի նոցանէ առհասարակ խոստովանին, զինչ հարկ էր ապա նորոգուԹեանն՝ զոր մուծին, և զինչ պատճառք հարկեցուցիչք հերձուածոցն ըլուԹերականաց և կալուինականաց և հենրիկեանց, որովք խռովեցին զաշխս և զքաղաքս և զազգատոհմս։ Այլ ինչ ապա կոչել նոցա նեռն զքահանայապետան Հռովմայ, և Բաբիլոն և պոռնիկ զեկեղեցին հռովմէական, եԹէ պահին և ՚ի նմա կարևորագոյն ՃշմարտուԹիւնք հաւատոյ ընդ կարծեցեալ աւելորդան. և ընդէր իցէ կաԹողիկեայց անցանել ՚ի հերձուած նորաշանդից, և դնել վայրապար զանձինս ՚ի վտանգ դատապարտուԹեան, եԹէ առանց իսկ այնր մարԹ է նոցա հասանել փրկուԹեան։

Պարձեալ և ինքեանք իսկ նորաշանդք չկարացին ցարդ միաբանել յիւրեանս՝ իսահմանել զկարևոր մասունս հաւատոյ առ՚ի փրկուԹիւն։ Այլ զիա՞րդ իսկ էր միաբանել, ուր ոչ կանոն հաւատոյ իւրաքանչիւր ուրուք միտք են։ Այլ եԹէ ՃշմարտուԹիւնք հաւատոյ իցեն որպես զլոյս արեգական կամ որպես զջերմուԹիւն հրոյ ըստ նոցա բանիցն, զի է զի ոչ ամենեքեան տեսանեն և զգան զայնոսիկ միօրինակ։ Օ ի այլազգ լուԹերականն իմանայ, և այլազգ բողոքականն և կալուինական. և եԹէ օրէն է իւրաքանչիւր ումեք ըստ մտի իմանալ զաստուածս գիրս, ոչ ինչ ապա ստգտանելի է և Ա՛րիոսի ուրանալ զաստուածուԹիւնն Ա՛րիստոսի, և Մ՛ակեդոնի զՅոգւոյն, Նեստորի զմիուԹիւն անձին ՚ի Ա՛րիստոս, Նատիքեայ զերկուս

քնութիւնս, Պետրոսեայ զսկզբնական մեղս և զկարևորութիւն չնորհացս, Յովհննեայ զամենայն իսկ խորհուրդս քրիստոնէական կրօնից, և աստուածեանց և բանականաց զամենայն աստուածային յայտնութիւն։

Այսպս ըստ այդմ վարդապետութեան անհնար է ցուցանել, զի ոչ այլազգն խորհիցի՝ սխալիցէ ՚ի կարևոր ինչ մասն հաւատոց. քանզի ամենայն ոք կարէ զմոլորութիւն իւր հաստատել այնու, զի իցէն նորա իրաւունք ըստ մտի իմանալ զսուրբ գիրս. "Ունիք ձշմարտութիւն յայտնագոյն քան զայն, ասէ Պօսիւէ, զի իւրաքանչիւր ումեք հետազօտել իւրովի ՚ի սուրբ գիրս զձշմարտութիւն ըստ մտի իւրում, և ոչ ըստ հասարակաց իմացուածոց միութեան եկեղեցւոց, աղբիւր է ամենայն հերձուածոց և մոլորութեանց,,։ Դարկ է ապա խոստովանել, զի եկեղեցի աւանդապահ սուրբ գրոց և աւանդութեան՝ ունի իշխանութիւն ուսուցանելոց և սահմանելոց զինդիրս հաւատոց, և ամենեցուն պարտ է վճռոց նորա հնազանդել։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Որ ՚ի հասանել փրկութեան՝ շատ է հաւատալ որ ինչ կամի Քրիստոս զի հաւատասցուք. աստուածաբանք իսկ պապականք զանազանեն զմնասուն հաւատոյ կարևորս ՚ի փրկութիւն, յայնցանէ՝ որ ըստ պատութեանի ևեթ կարևորքն են, և յաղագս այսոցիկ շատ համարին զլռելեայն հաւատս, այսինքն հաւատալ որ ինչ ուսուցանէ կաթողիկէ եկեղեցի։ Որդ եթէ այս լռելեայն հաւատք շատ իցեն առ ՚ի փրկութիւն, ընդէր չիցէ բաւական և միւսն։

Պատասխանեմք առ այս ընդ Պօսիւէի. "Որմենեցուն է ՚ի միտ առնուլ, զի այլ է կաթողիկեացս ասել՝ Հաւատամ որ ինչ հաւատայ եկեղեցի, և այլ նորազանդիցն ասել՝ Հաւատամ որ ինչ կամի Քրիստոս չէ հաւատացեալ, ևորչ ինչ ուսուցանէ նա ՚ի բանս իւր։ Քանզի դիւրին է գիտել որ ինչ հաւատայ եկեղեցի, որոյ վճիռք բացայայտք ընդդէմ մոլորութեանց առձեռն պատրաստ կան ամենեցուն. և եթէ դժուարիմաց ինչ ՚ի նոսա կայցէ, կեն-

դանի է նա և կարէ բացատրել։ Որպէս զի որ յօժարին ՚ի հաւատալ յոր ինչ հաւատայ եկեղեցի, պատրաստ է ՚ի հրաժարել յայտնապէս յիւրոց կարծեաց. և եթէ հակառակք են այնոքիկ վարդապետութեան եկեղեցւոյ, դիւրին է նմա ՚ի միտ առնուլ զայն. որով և հրաժարէ յամենայն մոլորութեանց դատապարտելոց յեկեղեցւոյ։ Ա՛յլ բողոքականն ՚ի մոլորութեան իւրում յոյժ ՚ի բացեայ է յայտ պատրաստութենէ. զի Թէպէտ և ասիցէ՝ Հաւատամ որ ինչ կամ Որիսպոս պէ հաւատացէց, և որ ինչ ոսոցանէ նա ՚է գիրս, այլ Որիստոս ոչ գայ ՚ի յայտնել զմոլորութիւնս նորա, և ոչ գիրք սուրբք փոխին յորմէ են՝ առ ՚ի դարձուցանել զնա ՚ի մոլորութենէն։ Այլ հաւատքն այն՝ զոր պանծայ ունել ՚ի Որիստոս և ՚ի պատգամս նորա, ոչ այլ ինչ է՝ բայց անփոյթ առնել զբանից նորա. և որ զայս դաւանութիւն շատ համարի, հաւանի յայտնապէս ընդ ինքն և է կրօնս։ Վասն որոյ յայս գեղերեսեալ հարցուած բողոքականին՝ Թէ ընդէր լռելեայն հաւատք ՚ի Որիստոս չիցէ բաւական որպէս բաւական է եկեղեցի, դիւրաւ է ՚ի միտ առնուլ զնաբէութիւնն՝ որ ընդ բարեբիկ եղելութիւն ծածկեալ։

Ա՛յլ առանց ինչ երկարելոյ, շատ է գիտել՝ զի դաւանութիւնս այս, որով բողոքականն շատանայ ասել՝ Հաւատամ որ ինչ կամ Որիսպոս պէ հաւատացէց, և որ ինչ ոսոցանէ ՚է գիրս, ոչ այլ ինչ է ասել՝ բայց Հաւատամ որ ինչ կամիմ, և որ ինչ հաճոյ է ինձ համարել աստուածեալ Որիստոսի և սուրբ գրոց. առանց արտաքսելոյ ՚ի հաւատոց անտի և ոչ զմի ՚ի կրօնից և յաղանդոց՝ որ ընդունին զսուրբ գիրս, և ոչ իսկ զՀրէականն. զի և Հրեայք կարեն ասել՝ Հաւատամ որ ինչ կամի Աստուած, և որ ինչ խօսեցաւն ընդ Եսայիէն ՚է ՅԵռն մարգարէից։ Ուստի զի այս դաւանութիւն բովանդակէ զամենայն Քրիստոսութիւն՝ մանաւանդ զհաւատս որ ՚ի Որիստոս, յարևնման դաւանութեան բողոքականին։ Ըստ այսմ օրինակի կարող է և մահմետականն և աստուածեան ասել որպէս զՔրեայն և զքրիստոնեայ. Հաւատամ որ ինչ է Աստուած։ Այլ եթէ անդր ևս կամք իցեն յառաջ խաղալ, ՚ի բերան իսկ անաստուածին մարթ է գնել զայսպիսի լռելեայն դաւանութիւն. Հաւատամ որ ինչ

ճշմարիտն է, Թ որ ինչ պատիւանաւոր բանէ։ Վասնզի և այս գաւանութիւն բովանդակէ զօրութեամբ զաւետեացն, և զքրիստոսական հաւատս ,,։

Ընդէ՞ր յաւելուլ ինչ յայս պատասխանի, բայց որ ինչ անտեղութիւնս ի վեր անդր ասացաք յաղագս ամենայն ուրուք ըստ մարի զօրութ գիրսն իմանալոյ. որով գաւանութիւնս այս հաւատալի ծաղր առնելոց զբ։ տուած։ Օ՛ի ուր Վրիստոս ասէ. ,,Ընդ այս թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւորն ,,. բազմքականն արհամարհելով զկաթողիկէ եկեղեցւոյ իմացուած, զիւրն նախադասէ և համարի կանոն հաւատոյ։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Զի անսխալ է եկեղեցի և է՛ ի տահմանել գիրս վարդապետական։

Իր վարդապետական ասի վարդապետութիւն ինչ ըստ ուղղափառ կամ ըստ մոլար մտաց վարդապետողին առեալ. զի իմաստ բանին հետևի մտաց մատենագրին կամ ուշոյ նպատակի նորին։ Ընդ այսմ էրն է առաքական իմաստ մատենագրին, իբր հետևորդ առաջարկութեան մտաց նորին. և վարդապետական, զի վհատատոյ են բանք։ Որինակ իմն այս բան. Հաստատուած արդարանայ մարդ. ի գիրս ուղիղք է մոլորական, զի միտք նորա և առաջարկութիւն և կարգ բանիցն է ցուցանել զի հաւատովք ևեթ արդարանայ մարդ։ Ուր ի գիրս ողջամիտ մատենագրի նոյն բան ուղղափառական է, զի է ասել՝ թէ հաւատք հանդերձ գործովք բարեաց արդար ցուցանեն զհաւատացեալն։ Ա՛ն որոյ յայտ է զի ուղղափառութիւն կամ մոլորութիւն բանին կախի զմտաց մատենագրին, և յենու յիւրն՝ ընդ որում կցորդին իրաւունք։ Ա՛ահման կամ վճիռ եկեղեցւոյ ոչ բերի ուղղակի յիւրն՝ զի համարի այն ստոյգ կամ ծանօթ ի պատմութենէ կամ ի մարդկային դատաստանէ, այլ բերի յիրաւունան կցորդս իրին։ Ընդ այսմ մարթ է

զիրս վարդապետականս սահմանել՝ Արաւմնս Հաստատեալ յիւրն։

Յանսենեանք եղեն առաջինք՝ ի զանազանել ընդ Արաւմնս և ընդ իւր, առ՝ ի խոյս տալոյ՝ ի դատապարտութենէ հնգեցունց բանիցն Յանսենիոսի. և պարագլուխ նոցա եկաց Արնալտոս։ Սոստովան եղեն զի մոլորականք էին բանքն այնոքիկ, այլ ժխտէին թէ յ(ո)գոսթինոսն մակագրեալ մատենին Յանսենեայ իրօք այնպիսի բանք և կամ գէթ յայնպիսի միտս գտանիցին ասացեալ՝ ի նմանէ։

Արդ անսխալութիւն եկեղեցւոյ՝ ի դատել զիրս վարդապետականս ցուցանի այսպէս։ Քրիստոս կացոյց զեկեղեցի ոչ միայն վկայ և աւանդապահ Աշմարտութեանցն՝ զորս յայտնեաց, այլ և դատաւոր և վարդապետ. քանզի ասաց (Մատ. ԺԸ. 17.) “Արդ թէ և եկեղեցւոյն ոչ լսիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր։” Եւ դարձեալ (Ղուկ. Ժ. 16.) “Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ։” Եւ դարձեալ (Մատ. իբ. 19.) “Աշակերտեցէք զամենայն հեթանոսս . . . ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ։” Եւ առ Պետրոս ասաց. “Արածեա զոչխարս իմ.” Եւ Պետրոս ուսեալ՝ ի վարդապետէն՝ առ երիցակիցս իւր ասէ. (Ա. Կաթ. Ե. 2.) “Արածեցէք որ՝ ի ձեզ հօտ է Աստուծոյ։” Եւ Պօղոս ասէ. (Գործ. Ի. 28.) “Ո՛ղջ կացէք անձանց, և ամենայն հօտիւ՝ յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զԺողովուրդ տեառն . . . քանզի գիտեմ եա՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ գայցեն գայլք յափշտակօղք՝ ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտին. և՝ ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսիցին թիւրս, ձգել զաշակերտան զկնի իւրեանց. վասն այսորիկ արթուն կացէք։”

Արդ եկեղեցի չկարէր ոչ զպաշտօն վարդապետի և ոչ զդատաւորի կատարել, եթէ չէր անսխալ. քանզի մարթէր նմա մոլորական համարել զողջամիտ վարդապետութիւն, կամ ողջամիտ զմոլորականն, և ազատ լինէին յայնժամ հաւատացեալք՝ ի հնազանդութենէ՝ չլսել բանից նորա, և չկարէր նա՝ ի բաց դարձուցանել զհօտն՝ ի միաբանակար արօտոյ, որով փոխանակ Աարակելոյ՝ Թունաւորէին. և լինէր անօգուտ վարդապետու-

թիւն նորա և դատաստան։ Վարձեալ և կարէր յայնժամ եկեղեցի սխալել՝ ի հաստատել անդ՝ ի գրոց Հարց և վարդապետաց ղբան Ճշմարտութեան, և՝ ի տալ զայնոսիկ յընթերցումն հաւատացելոց։ Եւ այս ամենայն հակառակէր սահմանադրութեանն Քրիստոսի, որ կացոյց զեկեղեցի իւր ուսուցիչ և դատաւոր։

Վասն որոյ եկեղեցի վստահացեալ միշտ յօգնականութիւն Հոգւոյն և՝ ի խոստմունս Քրիստոսի, հաստատեաց իւր ոզջամիտս, կամ հերքեաց որպէս մոլորս զվարդապետութիւնս ըստ մտաց վարդապետողացն։ Ըստ այսմ ժողովն Նիկիական դատապարտեաց իւր ամպարշտական զմտառեան մանկագրեալ Արեհեան. ժողովն Քաղկեդոնի ընկալաւ որպէս ուղղափառականս զգիրս Կիւրղի աղեքսանդրացւոյ ընդդէմ Նեստորի, և զՆեստորին ընդդէմ Կիւրղի դատապարտեաց. յերկրորդ ժողովն Կոստանդինուպոլսի դատապարտեցան եւ բերին գլուխք Թէոդորի մոպսուեստացւոյ, Իբասայ եդեսացւոյ, և Թէոդորետեայ։ Ըստ սմին օրինակի ապարին և այլ ժողովք, և զդատաստանս նոցա ընկալան հաւատացեալք և Հանդեան. յորմէ յայտ է, զի ոչ երկբայելին ընդ անսխալութիւն եկեղեցւոյ՝ ի դատել և՝ ի սահմանել զիրս վարդապետականս։

Ըստ ուրեմն եթէ չիցէ պարտ ասել, թէ Քրիստոս զեկեղեցի իւր կացոյց անկարող՝ ի կատարել զպաշտաւն՝ զոր ետ նմա, և կամ թէ եկեղեցի անձին սեփականեաց իրաւունս՝ որ չէր նմա անկ, հարկ է ասել՝ զի և յիրս վարդապետականս է անսխալ՝ ի սահմանել. ապա թէ ոչ, անօգուտ գտանէր անսխալութիւն նորա յիրս հաւատոյ և բարւոյ։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Ընդդէմ. — ա. Իրք վարդապետականք ոչ բովանդակին յաստուածային յայտնութիւնս, ապա և ոչ ընդ անսխալութեամբ եկեղեցւոյ կարեն անկանել։ Զմտաց մոգ մատենագրին կախի զտրամաբանութենէ՝ զդատողական քննութենէ և զմեկնաբանութենէ, յորս եկեղեցի չկարէ գոլ անսխալ. զի եթէ անսխալ յայտ-

սիկ էր, նորանոր մասունս հաւատոյ անդադար կարէր յաւելուլ ըստ Թուոյ վարդապետական իրաց։ Այլ եթէ չիցէ պարտ զվճիռս վարդապետական իրաց ընդունել որպէս մասունս հաւատոյ, ապա մարդկային հաւատովք են ընդունելի և չեն անսխալ։ — Ռ. Տարացուցիչ իմն է վարդապետութիւնդ այդ, զոր ոչ ճանաչէին նախնի քահանայապետք, սուրբն Լևոն, Պելագիոս Ռ. և Մեծն Գրիգոր. որոց քաջ զանազանեալ զհաւատս 'ի վարդապետական իրաց, անսխալ ասացին զեկեղեցի 'ի հաւատս՝ այլ ոչ և 'ի վարդապետական իրս. վասն որոյ և ոչ բռնագատեցին զտարաձայնեալս ընդ վճռով հինգերորդի ժողովոյն 'ի դատապարտութիւն գրոցն Թէոդորի, Իբասայ և Թէոդորետոսի։ — Ա. Այլ Բելարմինոս և Բաղմինոս, Հռովմէական եկեղեցւոյ կարդինալք, համարին զվեցերորդ ժողովն մերձենալ 'ի դատապարտել զՍեվերիոս և զգիրս նորա որպէս մերձականնս, այնու զի եկեղեցի յիրս այսպիսիս վարդապետականս ոչ է անսխալ։

Պե. — Ա. Յոստովանիմք զի իրք վարդապետականք նիւթապէս ոչ բովանդակին յատուածային յայտնութիւնս. օրինակ իմն՝ թէ արդեօք Յանսենիոսի գրեալ իցէ զայս ինչ կամ զայն, և կամ թէ յայսպիսի ինչ կամ յայնպիսի միտս։ Բայց տեսականապէս իրք վարդապետականք՝ ըստ ողջամիտ կամ մերձ վարդապետութեան՝ կարի իսկ բովանդակին։ Ալ ասն որոյ եկեղեցի որպէս ուսուցիչ և դատաւոր վճռից՝ անսխալ է 'ի սահմանել զողջմտութիւն կամ զմերձութիւն վարդապետութեան, զոր առաջարկութիւն մատենագրին, կարգ բանիցն, և այլ սոցին սակի ցոյցք ընծայեն։ Ի անսխալ վճիռ եկեղեցւոյ ոչ բերի ուղղակի յիրն, որպէս ասացաք, այլ յիրաւունս անդր՝ որ յենու յիրն։ Եւ ոչ այսուիկ բաղմապատկին մասունք հաւատոյ. այլ վճիռք եթէ համաձայնութեան այսր իրիք կամ այնր բանի ընդ մասունս հաւատոյ։ Եւ ըստ այսմ աստուածային հաւատով ընդունելի են վճիռքն այնոքիկ, իբր համաձայնք հաւատոյ կամ անհամաձայնք, և իբր անսխալ դատաստանք եկեղեցւոյ։

— Ռ. Այլ է վարդապետութիւնս այս, ոչ ըստ իրին՝ այլ ըստ ձևոյ. զի որպէս ցուցաք 'ի վերոյ, յիսկութե-

նէ իշխանութեանն՝ զոր ետ Քրիստոս եկեղեցւոյ՝ յառաջ գայ և այս բարեմասնութիւն նորա, որով և վարեցաւ միշտ եկեղեցի, և ոչ ոք բաց ի հերետիկոսաց ժխտեաց զայս ձիրս նորին։ Այլ զձևս զայս հաւ յորմէհետէ յանսենեանք յերկբայս արկին զայն, կամ բնաւ իսկ ժխտեցին։ Ոսկ քահանայապետքդ վերոյիշեալ զանձնական իրս ևեթ և զմիաս զանազանեցին ի հաւատոց, և ի քննութիւն ևեթ անձնական իրացդ ոչ անսխալ համարեցան զեկեղեցի, որպէս և մեզ է ընդունելի։ Այս և յառաջարկութենէ իսկ նոցա յայտ է պաշտպանելոց զդատաստան Ժողովոյն Վաթիկեդոնի զանձնէ Ավգոդոլի, Թեսայ և Ավգոդոբետեայ։ Այլ ոչ երբէք ժխտեցին նոքա զանսխալութիւն եկեղեցւոյ յիրս վարդապետութեան, որպէս և այս դարձեալ յայտ է ի պաշտպանելոց նոցա զդատապարտութիւն գրոց նոցա վճռաւ հինգերորդ Ժողովոյն։ Ոսկ չատիպել նոցա առ ժամանակ մի զտարաձայնեալս ընդ վճռաւ Ժողովոյն, զի հռչակ ի ժամանակին յայնմիկ ընդ բազում գաւառս արևմտից հարեալ էր՝ իբր թէ ընդ մատեանս այնոսիկ և զմատենագիրսն գտատապարտեալ հինգերորդի Ժողովոյն, զորս Ժողովն Վաթիկեդոնի անդատապարտս յայտ արարեալ էր։ Յայնպիսում աղմկի և ի յոյզ խռովութեան մնաց՝ քահանայապետքն Հռովմայ խոհականութեամբ բազմաւ վարեցան մինչև ի լոյս գալ ձշմարտութեանն, զի մի գուցէ հերձուածք գաւառացն այնքանեաց լինիցին։ Օ ի ապա ի բառնալ ամենայն երկբայութեան՝ ստիպեցին զամենեսեան յընդունելութիւն վճռոյ հինգերորդ Ժողովոյն, և գյամառեալս ընդ հերձուածողս համարեցան. որպէս յայտ յակուխլեացւոց անտի է, որք անագան ուրեմն ի հերձուածոյ իւրեանց գարձան ի միաբանութիւն։

— ԹԵ. Այսպէս և Վելարմինոս և Տարնիոս զանձնական իրաց ևեթ Ոնորիոսի և զմտաց նորա ձառեն, յորս ոչ է անսխալ եկեղեցի. այլ ոչ զվարդապետական իրացդ կամ զառարկական իմաստից Ոնորիոսի։ Այլ եթէ ոչ բացայայտագոյնս խոստեցան, ընդ այն չեն ինչ զարմանք. զի չև ևս յառաջ քան զյանսենեանս սահմանեալ էր ձև խնդրոյս այսորիկ։

ԳԼՈՒԽ Ե

ՑԱՂԱԳՍ ԺՈՂՈՎՈՑ

Ժողով է գումարումն եպիսկոպոսաց առ՝ի խորհել և սահմանել զիրաց կրօնից։ Արկին ազգք են ժողովոց, ընդհանուր և մասնաւոր. ընդհանուր կամ տիեզերական ժողով է, որ յանդիման առնէ բովանդակ զեկեղեցի, որպէս այն որ հրաւիրեաւ Հռովմայ քահանայապետին գումարին եպիսկոպոսունք աւելի կամ նուազ յայլ և այլ կողմանց աշխարհի։ Իսկ մասնաւոր ժողով է, յոր գումարին միոյ կամ բազում գաւառաց եպիսկոպոսունք. եթէ միոյ՝ կոչի գաւառական, իսկ եթէ բազմաց՝ կոչի մասնաւոր։

Հռովմայ քահանայապետին է կոչել ժողով ընդհանուր. և եպիսկոպոսաց ժողով գաւառական կամ մասնաւոր, յորժամ կարևոր թուի նոցա առ՝ի սահմանել զնդիրս հաւատոց և բարոյականին, և առ՝ի բարեկարգութիւն հաւատացելոց։ Օ՛ի պէտքն եկեղեցւոյ և եպիսկոպոսաց է անկ ամբողջ պահել զաւանդն սուրբ, որ նոցա հաւատացաւ։ Ա՛ան որոյ յամենայն ժամանակի, սկսեալ յաւուրց անտի առաքելոց, հովիւք եկեղեցւոյ գումարեցին ժողովս յաղագս վարդապետութեան հաւատոյ և բարի վարուց և եկեղեցական բարեկարգութեանց։ Յերիս առաջին դարս Թէպէտ և գժուարին յոյժ էր եպիսկոպոսաց՝ի մի վայր ժողովել, սակայն ժողովք իբր վաթսուն համարին գումարեալ մինչև՝ի նախկին ժողովն տիեզերական՝ որ գումարեցաւ՝ի Նիկիա յամին 325։

Նշանութիւն գումարելոյ ժողով տիեզերական անկ է քահանայապետին և եթէ Հռովմայ. իսկ ուր ասի ինքնակալաց գումարեալ ժողով, պարտ է իմանալ՝ի հրամանէ կամ հաւանութեամբ նորին։ Որպէս Հարք վեց երորդի ընդհանուր ժողովոյն յայտ առնեն Աեղեստրոսի քահանայապետին գումարեալ զնիկիականն՝ միաբանութեամբ Կոստանդիանոսի կայսեր։

Ո՛չ՝ի կացուցանել ժողով ընդհանուր՝ ոչ է հարկ ա-

մենայն եպիսկոպոսաց գումարել՝ի ժողով, և ոչ իսկ առաւելագունից՝ի նոցանէ, այլ շատ է զի՝ի գլխաւոր եկեղեցեաց գտանիցին եպիսկոպոսունք ոմանք. քանզի տարակայիչ համարի հաւանել ընդ վճիռս ժողովոյն։ Այլ որ ինչ երկբայութիւն և ծնանիցի զտիեզերական նուիրեանէ ժողովոյն ըստ Թուոյ և ըստ այլոց հանգամանաց, շատ իսկ է՝ի վաւերականութիւն նորին՝ հաստատել գլխոյն եկեղեցւոյ զվճիռս նորա, և ընդունել զայնս այլոց ևս եպիսկոպոսաց՝ որ չիցեն լեալ՝ի ժողովին անդ։ Ժողովք, որ յամին 381 և 553 գումարեալք՝ի Կոստանդնուպոլիս, այսու օրինակաւ հաւանութեամբ եպիսկոպոսաց ամենեցուն եղեն՝ի համարի տիեզերական ժողովոյ։ Ոչ ան որոյ կարևոր քան զամենայն առ վաւերականութիւն ընդհանուր ժողովոյ է հաստատութիւն վճռոյ նորա՝ի Պապէն, որում պարտ է անձամբ կամ՝ի ձեռն նուիրակաց կալ գահերէց ժողովոյն։

Ոչ միոք տիեզերական ժողովոց զկրօնական իրաց են անսխալ. քանզի Վրիստոս խոստացաւ լինել միշտ՝ի կատարած աշխարհի ընդ եկեղեցւոյ, և ժողով ընդհանուր յանդիման առնէ զեկեղեցի։ Այլ դարձեալ եթէ որ անսասանէն եկեղեցւոյ՝ է իբրև զհեթանոսն և զմաքսաւոր, ապա անմոլար է՝ի վարդապետութեան իւրում եկեղեցի՝ զոր յանդիման առնէ ժողովն տիեզերական։ Ահա և՝ի գործս առաքելոց ընթեռնումք, զի առաքեալք առ՝ի սահմանել զինդիրն՝ թէ արդեօք պարտ էր հեթանոսաց հաւատացեալոց պահել զմովսիսական արարողութիւնս, ժողովեցան Երուսաղէմ ընդ եպիսկոպոսունս, և քննեալ զինդիրն՝ ետուն վճիռ. "Ահա Հոգւոյն սրբոյ և մեզ՝ մի ինչ աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն՝ի կարևորացս յայսոցիկ,, (Ժե. 28)։ Ընդ առաքեալք զվճիռ ժողովոյն համարեցան պատգամ Հոգւոյն սրբոյ. և այսպէս այնուհետև համարեցան միշտ յեկեղեցւոջ վճիռք տիեզերական ժողովոյ՝ի հաւատոյս։

Իսկ վճիռք մանաւանդ ժողովոյ, թէպէտ և ոչ անսխալ համարին, այլ զօրեն՝ի վկայութիւն աւելի կամ նուազ՝ ըստ առաւել կամ նուազ բազմութեան ժողովականաց, եթէ չիցեն վճիռք նոցա հաստատեալ՝ի Պապէն. իսկ եթէ հաստատեալ, համարին յայնժամ անսխալ։

Ա. ՈՒԱՐԿՈՒԹԻՒՆ Ք

Գործ. Ա. Իւթեքին առաջին ժողովք տիեզերական ինքնակալաց գումարեցան. և յիրաւի, զի նոցա է անկ խնամ ունել ոչ ինչ ընդհատ՝ ի քաղաքականն և հոգևոր խաղաղութեան ժողովրդոց, և զի՝ ի սահմանս նոցա հարկ էր գումարել ժողովոյ։ Իսկ եթէ՝ ի յաջորդ դարս Հայրապետք Հռովմայ կոչեցին ժողով, ի ներքոյ թագաւորաց էր. ոչ մարդկային և ոչ աստուածային օրինք պահեն նոցա զայդ իշխանութիւն, այլ ինքեանք ինքեանց սեփականեցին զայն՝ ի միջին դարս, յորժամ իրաւունք վեր՝ ի վայր աղմկեին։

Գլ. Ունի իշխանութիւն ինքնակալաց Հոգեպէս՝ ի վերայ եպիսկոպոսաց, վասն որոյ և ոչ կոչելոց զնոսա՝ ի ժողով. և վկայեն պատմութիւնք, զի ինքնակալք Հրամանաւ Հռովմայ Հայրապետին գումարեցին զութիւնս տիեզերական ժողով. որպէս զնիկիականն և Հայսմաւուրք մեր վկայեն, զի «Արին (այսինքն Աղբեսիոսոյ Հռոմայ Հայրապետին) խրատովն և հաւանութեամբ եղև առաջին սիւնհոդոս՝ ի Նիկիա, ուր ժողովեցան եպիսկոպոսունք ՅԺԸ.»։

Իսկ թէ՝ ի ժողովս ուրեք առաւելագոյն իշխանութեամբ վարեցան ինքնակալք, զեղծմամբ էր այն և ոչ ըստ իրաւանց իշխանութեան իւրեանց. զի ինքնակալաց և թագաւորաց պարտ է արդարև խնամ ունել և հոգևոր խաղաղութեան ժողովրդոց, այլ ազդ առնելով հոգևոր առաջնորդաց զպէտս նոցա, և ոչ եթէ՝ ի հոգևոր իշխանութիւն նոցա լինելով ձեռներէց։ Իւ եթէ թագաւորաց պարտ է խնամ ունել հոգևոր խաղաղութեան հայեցակաց իւրեանց, ապա և օգնել հոգևոր առաջնորդաց, և տեղի՝ ի սահմանս իւրեանց տալ գումարելոց նոցա՝ ի ժողով, եթէ ինչ նոցա կարօտութիւն՝ ի սահմանս անդ ժողովելոց։ Իւ ոչ ընդունիմք զի՝ ի նեբելոց թագաւորաց՝ ի յետին ժամանակս կարացեալ իցեն հայրապետք Հռովմայ ժողով գումարել, և զի չիցէ նոցա յաստուածային օրինաց այս իշխանութիւն. քանզի նովին իսկ, զի գլուխ են եկեղեցւոյ, յաստուածային օրինաց անկ է նոցա այն։

Կ՚ասէ. Բ. — Ա. Եթէ վճիռք տիեզերական ժողովոյ էին անսխալ, չէր մարթ սրբոյն Աթոռոսի ասել (Գէորգ Ք. յղ. դր.) զի Լեհաստար ժողովք՝ ի յաջորդացն իւրեանց ժողովոց մարթէն ընդունել ուղղութիւն. և ոչ ընդդէմ Կաթուղիկէ արիոսականի, Թողեալ զսահմանս Նիկիական ժողովոյն, վկայութեամբ Լեհ սուրբ գրոց և փաստիւք բանականաւք վիճաբանել։ — Բ. Եթէ արդարև անսխալք էին վճիռք ժողովոց, ապաքէն ոչ ինչ խոտիր ընդ տիեզերական ժողովս և ընդ սուրբ գիրս լինէր՝ ի միջի, վասն որոյ և ոչ՝ ի կանոնս ուրեք անսխալութիւն նոցա սահմանեալ գտանի։

Պե. — Ա. Ժողովք Լեհաստար կոչէին առ հինս ազգայինք և գաւառականք. և կարգ բանից իսկ սրբոյն Աթոռոսի զայն յայտ առնէ, զի խօսի զԺողովոյն՝ զոր Կիպրիանոս գումարեաց, և որով զեղծանէին զոնատեանք. և դարձեալ զի յառաջ քան զԱթոռոսս երկու Լեհ տիեզերական ժողովք գումարեալ էին, Նիկիականն և Կոստանդնուպօլսի առաջինն. և երկրորդս այս ոչ երբեք զնիկիականն գատեցաւ։ Եւ քանզի Կաթուղիկէ սիմինոս ընդդէմ Նիկիական ժողովոյն զԵրիմինեան չարաժողովն կացուցանէր, սրբոյ վարդապետին Թողեալ զերկոսեան Լեհ՝ ի բաց՝ ՚ի սուրբ գրոց զնա յաղթահարեր։ — Բ. Սուրբ գիրք պատգամք են Աստուծոյ, ազդեցութեամբ Հոգւոյն գրեալք և՝ ի քննութենէ իւրեանց անսխալք. իսկ սահմանք ժողովոց՝ ի չնորհաց նորին անսխալք։ Եւ ոչ՝ ի կանոնս ուրեք անսխալութիւն նոցա գտանի սահմանեալ, զի չիք երբեք երկբայութիւն լեալ զայնմանէ, և զի ընդ անսխալութեան եկեղեցւոյ կցորդ ե անբաժանելի։

Կ՚ասէ. Գ. — Ա. Հաւանութեան ընդհանուր եկեղեցւոյ պէտք են առ՝ ի գիտել՝ զի ըստ օրինի գումարեալ ե ժողովն, և զի ամենայն պայմանք պահեալ՝ ի նմա. քանզի սովին իսկ ցուցանէ սուրբն Աթանաս ընդդէմ արիանոսաց զօրինաւորութիւն Նիկիական ժողովոյն, զի «Ամենք աշխարհի հաւանեալ ասէ ընդ այն». (Ընդ. առ Աֆր.)։ — Բ. Եւ թէպէ իսկ մարթի ընդունել ժողովոյ զանսխալութիւն իւր՝ ի Հոգւոյն Հայրապետէն, ուր նորին իսկ անսխալութիւն ոչ՝ ի հաւատոյ ե։ — Գ. Կիպրիանոս առաքելոյ ամենեցուն՝ ի միասին ետ

զանսխալութիւն. ապա մանն ինչ եպիսկոպոսաց՝ ևս և ընդ Հռովմայ հայրապետին՝ չկարէ զոլ անսխալ, այլ եպիսկոպոսաց ամենեցուն հաւանութեան պէտք են. ո՛չ ոք հաւանութեամբ և բազում գաւառական ժողովոց սահմանք եղեն անմերժելիք. վասն որոյ սորբոնեան ժողով աստուածաբանից դատապարտեաց զվարդապետութիւնն զայն՝ թէ տիեզերական ժողովք իցեն անհրաժեշտ կարևորք։

Պե. — ս. Հաստատութիւն ևեթ սահմանաց ժողովոյն՝ ի Հռովմայ հայրապետէն շատ համարեցան նախնիք՝ ի վաւերականութիւն նորին. այլ ամենայն պայմանաց բազում անտեղութիւնք գտեալ են։ Սորբն Թանաս բոլոր աշխարհի հաւանեալ ասէ ընդ ժողովին նիկիական, զի ըստ օրինի էր գումարեալ. և ոչ եթէ բոլոր աշխարհի հաւանութեամբն լեալ զժողովն զայն օրինաւոր։ Նզբաւ է խտիր ընդ մէջ երկոցունց բանիցս։

— ր. Նսխալութիւն Հռովմայ հայրապետին չէ՝ ի հաւատոց ինքնուրոյն առեալ. այլ է իակ՝ ի միասին ընդ ժողովոյ, զայսմանէ չիք խնդիր և երկբայութիւն առ աստուածաբանս։

— գ. Վրիատոս Պետրոսի ևեթ խոստացաւ զմշտնջենաւոր անսխալութիւն, վասն որոյ եթէ եպիսկոպոսունք ընդ յաջորդին նորա Հռովմայ հայրապետին են անսխալք, զհետ գայ զի այլոց եպիսկոպոսաց հաւանութիւն ոչ է կարևոր առ անսխալութիւն, այլ մանաւանդ զհետ գայ հարկ տալոց նոցա և զիւրեանց հաւանութիւն։ Բազում գաւառական ժողովոց սահմանք եղեն անմերժելիք՝ հաստատեալք՝ ի Հռովմայ հայրապետէն, և ոչ հաւանութեամբ ևեթ այլոց եպիսկոպոսաց։ Ի չհարկաւորութենէ տիեզերական ժողովոց առ՝ ի հերքել զմոլորութիւնս, ոչ զհետ գայ սխալականութիւն նոցին. տրամաբանութիւն զայդ ոչ ընդունի։

ԳՕԴՈՒԱԾ Ա

Տիեզերական ժողովք:

Ա. Նիկիոյ առաջին ժողովն գումարեալ ՚ի Խուժաստանիա յամին 325 առ Աեղեստրոսիս, յաւուրս Կոստանդիանոսի ինքնակալի. յորում էին ՅԱԸ սուրբք հայրապետք, ընդ որս և մեր սուրբն Ալիստակէս: Դատապարտեցան անդ արիոսեանք, և յաւելաւ ՚ի հանգանակն ձայնս հոմոփոյսիէց. սահմանեցաւ տօնել զԱտիկն ՚ի կիրակէի զկնի չորեքտասաներորդ աւուր լուսնոյ մարտի. ընկեցաւ յաթոռոյ Աեղիտոս եպիսկոպոս Իկոպոլսի վասն հերձուածոյն, և սահմանեցան կանոնք բարեկարգութեան քան. որք գոն և ՚ի կանոնագիրս մեր ընդ այլ ևս ՃԻԴ կանոնաց:

Բ. Կոստանդնուպոլսի առաջին ժողովն գումարեալ ընդդէմ Հոգեմարտից առ Դամասոսիս յամին 381, յաւուրս մեծին Թէոդոսի. յորում էին հայրապետք ՃԾ. ընդ որս և սուրբ հայրապետն մեր մեծն Ղեր-սէս: Դատապարտեցան անդ Մակեդոն և Պնոսինար, վերստին հաստատեցաւ հանգանակն Նիկիական, և յաւելաւ ՚ի նմա ընդդէմ ապոլինարեանց՝ Յղացեալ Որդւով սրբով ՚ի Մարիամայ կոյսէն. և ընդդէմ մակեդոնեանց՝ Ի Հոգին սուրբ յԱստուածն ՚ի կենդանարար՝ որ ելանէ ՚ի Հօրէ, և ընդ Հօր և ընդ Որդւոյ երկրպագի և փառաւորի, որ խօսեցաւ մարգարէիւք: Հաստատեցաւ անդրէն յաթոռն Կոստանդնուպոլսի Գրիգոր աստուածաբան՝ զոր թշնամեաց ուղղափառութեան ընկեցեալ էր յաթոռոյ անտի, և զՄաքսիմոս ՚ի տեղի նորա կացուցեալ: Այս սահմանեցան կանոնք եօթն:

Գ. Եփեսոսի ժողովն գումարեալ յամին 431, առ Կելեստինէսս քահանայապետիս, յաւուրս փոքուն Թէոդոսի. յորում էին հայրապետք իբր երկերիւր, որք դատապարտեցին զՆեստոր, և սահմանեցին կանոնս վեց, զորս ե տեսանել և ՚ի կանոնագիրս մեր:

Դ. Քաղկեդոնի ժողովն գումարեալ յամին 451, ՚ի քահանայապետութեան Լեւոնի, և յինքնակալութեան Մարկիանոսի. յորում էին ՈՒՀ հայրապետք, որք դա-

տապարտեցին զԱւսեփէս և զՆեսկորոս, և սահմանեցին կանոնս երեսուն։

Ե. Կոստանդնուպոլսի երկրորդ ժողովն գումարեալ յամին 553, ՚ի քահանայապետութեան Վիգիլիոսի և ՚ի կայսերութեան Յուստինիանոսի, ուր էին հայրապետք ՃԿԵ. որք դատապարտեցին զԹէոդորոս մոպսուեստացի և զգիրս նորա. դատապարտեցին և զգիրս Թէոդորոսի կիւրենացւոյ և Իբասայ, առանց նզովելոյ զանձինս նոցա։ Ընդունեցին և զորոշմնեանս հանդերձ մեղսութեամբք նոցա։ Յայսմ ժողովի՝ ՚ի վկայութիւն մեղսութեանն Թէոդորոսի՝ ՚ի մէջ ածեալ ընթերցաւ և թուղթ մեծի հայրապետին մերոյ Սահակայ Պարթևի՝ գրեալ առ Պրոկլ համաձայնութեամբ Ընդունելոյ Ընդ գումարելոյ յերրորդ ժողովն Ճշմարտութեան։

Զ. Կոստանդնուպոլսի երրորդ ժողովն գումարեալ յամին 680, յաւուրս Ագաթոնի պապին և Կոստանդեայ Պոգոնատոսի կայսեր. ուր էին ՄՃԸ հայրապետք, որք դատապարտեցին զմիակամեայս, և զկտուրթիւն Սեվերոսի Պապին՝ յոր ածեալ էր զնա չարափառայ առ ՚ի խոյս տալ ՚ի դատապարտութենէ։

Է. Նիկիոյ ժողովն երկրորդ գումարեալ յամին 787, յաւուրս Ադրիանոսի Ա. պապին և Կոստանդեայ կայսեր. յորում էին ՅԾ հայրապետք, միանձունք բազումք և վանահարք. որք դատապարտեցին զպատկերամարտս, և սահմանեցին կանոնս քսանևերկու։

Ը. Կոստանդնուպոլսի չորրորդ ժողովն գումարեալ յամին 869, յաւուրս Ադրիանոսի Բ. պապին, և Վասլի կայսեր Հայկազնի. յորում էին ՃՌ հայրապետք. որք ընկեցին յաթոռոյ Կոստանդնուպոլսի զՓոտ, և կացուցին անդ վերստին զերանելին Իգնատիոս, և սահմանեցին կանոնս ինչ։

Թ. Ատերանի առաջին ժողովն գումարեալ ՚ի Հռոմ ՚ի լատերանեան եկեղեցւոջ, յամին 1123, յորում էին հայրապետք աւելի քան զերեքքարիւր, և միանձունք բազումք և երիցունք, յաւուրս Կալիստոսի Բ. քահանայապետի, վասն եկեղեցական բարեկարգութեանց, և ազատութեան Պաշխատինու և Պասնիոյ ՚ի ձեռաց այլազգեաց։

Ժ. Լատերանեան ժողովն երկրորդ գումարեալ յա-

մին 1139, առ Գնեմղկենտիոսիս Ե. յորում էին հայրապետք իբր հազար, ընդդէմ հերձուածոյն Նակղիտեայ դերապապի, և ընդդէմ աղանդոյն պետրոսրուսեանց և մելորուեթեան Ընալդոսի բրիքսացւոյ։

ԺԱ. Ա տեբրանեան ժողովն երրորդ գումարեալ յամին 1179, յերեքհարիւր հայրապետաց յաւուրս Ղեքսանդրի Ե. ընդդէմ հերձուածոյ դերապապից, և ընդդէմ աղանդոյն վալդեցւոց և ալբիգեանց։

ԺԲ. Ա տեբրանեան չորրորդ կամ դլխաւորագոյն ժողովն գումարեալ յամին 1215, յաւուրս Գնեմղկենտիոսի Գ, Ի չորեքհարիւր հայրապետաց վասն ազատութեան սրբոյ երկրին, և բարեկարգութեան ընդհանուր եկեղեցւոյ, և ընդդէմ մելորուեթեանց Յովակիմայ աբբայի և Ընմարիկոսի։

ԺԳ. Ա ուգոնի առաջին ժողովն գումարեալ Ի Գաղղիա յամին 1245, յաւուրս Գնեմղկենտիոսի Դ. Ի հարիւր և քառասուն եպիսկոպոսաց. վասն բարեկարգութեան եկեղեցականաց, վասն ազատութեան սրբոյ երկրին, վասն միաբանութեան Յունաց ընդ եկեղեցւոյ, և վասն խաղաղութեան Հռոմայ գահին։

ԺԴ. Ա ուգոնի երկրորդ ժողովն գումարեալ յամին 1274, յաւուրս Գրիգ. Ժ. Ի հինգ հարիւր եպիսկոպոսաց, յորս և պատրիարքն Կոստանդնուպօլսոյ և Ընտիոքայ և բազում արբայք և գիտնաւորք, վասն ազատութեան սրբոյ երկրին, վասն միաբանութեան Յունաց, և վասն եղանակի ընտրութեան Պապին։ Յերրորդում գումարման հասին դեսպանք կայսեր Ալէքսեայ ուղղադաւան Թղթով եպիսկոպոսացն Յունաց. երիցս Ի ձայնաւոր պատարագի երգեցաւ հանդանակն յաւելուածովն. միաբանեցան Յոյնք երիւք պայմանօք. ա. զի յիշեսցի անուն Պապին Ի պատարագի. բ. զի օրէն իցէ ամենայն Յունաց բողոքել առ գահն առաքելական. գ. զի Պապին Հռոմայ իցէ գերիշխանութիւն յամենայնի։ Յայս ժողով կոչեցաւ Թղթով և արբայն Հայոց։

ԺԵ. Կոստանդեան ժողովն գումարեալ Ի Կոստանդիա քաղաք Գուեւիոյ, յամին 1414, յաւուրս Յոհաննու ԻԳ, և Ա՛արտինոսի Ե. ընդդէմ հակապապից, և աղանդաւորաց. և դատապարտեցան Ի նմա Յոհաննէս Ա Իկլեփ, Յոհաննէս Հուս, և Ջերոնիմոս բրագացի,

և սահմանեցան բարեկարգութիւնք և կանոնք ընդդէմ հերձուածոց յընտրութիւն Պապին։

ԻԶ. Ի ենթական ժողովն գումարեալ 'ի Ենետս քաղաք Վաղղիոյ, յամին 1431, առ Կղեմաւ Ե. ուր էին եպիսկոպոսունք իբր երեքարիւր, ընդդէմ Ցաճախակացն և այլոց աղանդաւորաց, և դարձեալ վասն ազատութեան սրբոյ Եկեղեցւոյն։

ԻԲ. Փլորենտեան ժողովն գումարեալ յամին 1439, առ Եւգինեաւ Դ. ուր յետ բազում վիճաբանութեան Յունաց ընդ Լատինս վասն բղխման Հոգւոյն սրբոյ և Որդւոյ, վասն Հատուցման Հոգւոց նախ քան զկատարածոյ յարութիւն, և վասն քահանայի, միաբանեցան 'ի հաւատոյս. ուր և նուիրակք Սերբոյ Կոստանդնի Ե. հասեալ 'ի վերջ, ընկալան զսահմանս ժողովոյն։

ԻՀ. Տրիտենդեան ժողովն գումարեալ 'ի Տրիտենդ քաղաքի, յամին 1545, առ Պօղոսիւ Գ. և տեւեալ ցամին 1563, ընդդէմ նորադանդիցն Լութերի, Օ ուինգլիոսի, Կալուինի, և համախոհից նոցա. և սահմանեցան ամենայն խնդիրք յուզեալք 'ի նոցանէ յաղագս սուրբ խորհրդոց եկեղեցւոյ, և բարեկարգութիւնք բազումք 'ի քահանայինդ գումարմանն։

ԳՕԴՒԱԾ Բ

Չի անհրաժեշտ է եկեղեցի և 'ի վերայ՝ յորս համաձայնին եպիսկոպոսունք բնդ գլխոյն եկեղեցւոյ, և առանց գումարման 'ի ժողով։

Քրիստոս խոստացաւ առաքելոցն՝ լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի. և դարձեալ թէ դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն ի վերայ եկեղեցի։ Արդ այս խոստումն առանց ինչ պայմանի է վասն ամենայն ժամանակի, զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի. ապա ընդ նոսա էր յաշակերտել նոցա զկեթանոսս, ընդ նոսա 'ի մկրտել նոցա զհաւատացեալս, ընդ նոսա յուսուցանել նոցա զամենայն որ ինչ պատուիրեալն էր. և ե և լոյծ ընդ նոսա մինչև 'ի կատարած

աշխարհի ՚ի յօթևորդս նոցա։ Այսոքն որով Հարքն զմիաձայնութիւն կաթոլիկ եկեղեցւոյ Համարէին ապացոյց ուղղափառ վարդապետութեան, և քան զամենայն զէնս զօրաւորագոյն ընդդէմ հերեսիարքացն՝ զհաւատս և զմիօրինակ սովորութիւն եկեղեցեաց։

Յարձեալ և յանձնարարեցնս ՚ի յառնել մոլորութեանց՝ եկեղեցի սուրբ, և ա՛ռ և առանց զումարելոյ ՚ի ժողով, զատապարտեաց զայնոսիկ։ Առաջին ժողովն տիեզերական զումարեցաւ յամին 325. և սակայն վըճիռ և ատեան եկեղեցւոյ կանոն լեալ էր միշտ և յառաջ քան զժողովն զայն։ Ո՛չ ոչ է մարթ ասել՝ թէ չիցեն բաւականապէս դատապարտեալ նովատեանք, սամոսատացին, մանիքեցիք, պեղագեանք, և բազում այլ և այնպիսիք, որք յառաջ քան զժողովն նիկիական դատապարտեցան։ Այլ որպէս ՚ի դատապարտելն զնոսա անսխալ էր եկեղեցի, նոյնպէս և զայլս կարող է դատապարտել. զի միաձայնութիւն նորա կանոն է հաւատոյ։ Յաւուրս սրբոյն Աթանասի չև և ա՛ռ ՚ի ժողով տիեզերական դատեալ էր Արեղագիոս. այլ վճիռք երկուց մանաւոր ժողովոց յղեալ էին յաթոռն Հռոմայ ՚ի հաստատութիւն, և ասէ սուրբն վարդապետն. (Ամո՛ Ճիա.) "Ահմանք երկուց ժողովոց զայսմանէ վաղ իսկ յղեցան յաթոռն առաքելական, և եկին անտի վճիռք. դատաստանն վճարեցաւ, իսկ վճարեր և մոլորութիւնն.,։ Այս թէպէտ պեղագեանք բողոքեցին ՚ի ժողով տիեզերական, այլ բողոք նոցա փոխանակ բառնալոյ զդատապարտութիւնն նոցա՝ և և՛ս ծանրացոյց զայն. վասն որոյ յաւելու նոյն սուրբ վարդապետն. "Ա՛յդ, չիք իսկ մոլորութիւն առանց ընդհանուր ժողովոյ դատապարտեալ. նա աւանիկ սակաւք են մոլորութիւնք, վասն որոյ դատապարտութեան կարևոր համարեալ իցեն ժողովք ընդհանուրք. և բազումք այնոքիկ են ՚ի մոլորութենէ՝ որք անդէն առեալեղ դատապարտեալ, ծանուցան և ել այլոց հաւատացելոց առ ՚ի զգուշութիւն ՚ի մոլորութեանց անտի.,. (առ Ա՛նէֆ. գիրք Թ. գլ. ԼԲ)։

Այս ոչ այսչափ միայն, այլ և եկեղեցի ել է և առանց ՚ի մի վայր ժողովելոյ չէր անսխալ, և ոչ ընդհանուր ժողովք լինէին անսխալ. քանզի այնու իսկ անսխալ են

նոքա, զի զկաթողիկէ եկեղեցի յանդիման կացուցանեն։ Արկրորդն և հինգերորդ տիեզերական ժողովք՝ ի սկզբան անդ էին ժողովք մանանականք. և ապա հաստատութեամբ սահմանաց նոցա և վճռոց՝ ի քահանայապետէն Հռովմայ, և ընդունելութեամբ այնոցիկ յաբևմտեան եպիսկոպոսաց, եղեն ընդհանրականք։ Օ՜ի եթէ ոչ այսպէս էր, հարկ լինէր՝ ի յառնել ամենայն մեղրութեանց՝ ժողով տիեզերական գումարել. և եթէ չէր եկեղեցի Քրիստոսի անսխալ աւանդապահ առաքելական վարդապետութեան և կանոն չմարտութեան, հասանէր հաւատացելոց «տատանել յամենայն հողմոց վարդապետութեան», և մեղրութիւնք «իբրև զքաղցկեղ չարակ գտանէին», մինչև ցգումարել եպիսկոպոսաց՝ ի չորից ծագաց աշխարհի, հանդերձ ամենայն դժուարութեամբք յերեսաց այլ և այլ պետութեանց. և չէր մարթի եկեղեցւոյ կատարել զպաշտօն իւր ընկալեալ՝ ի Քրիստոսէ, եթէ չէր նորա յարատև և անընդհատ իշխանութիւն դատապարտելոց զհերձուածս և զմեղրութիւնս։

Այսու ձևով գայ, զի և լռելեայն հաւանութիւն յոգոնց յեպիսկոպոսաց ընդմանն ինչ հաւատոյ սահմանեալ՝ ի գլխոյն եկեղեցւոյ՝ բաւական է առ՝ ի կացուցանել զմիաձայնութիւն ընդհանուր եկեղեցւոյ։ Օ՜ի եթէ մարթէր նոցա լռութեամբն հաստատել զմեղրութիւն, ոչ ևս եկեղեցի լինէր անսխալ։ Վասն որոյ ընդդէմ վճռոց, զորս գլխոյն եկեղեցւոյ սահմանէ՝ ի հաւատոյս և առաքելագոյնք եպիսկոպոսաց ընդունին լռելեայն, բողոքել ամենից՝ ի ժողով ընդհանրական՝ է ապստամբել յեկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ Զ

ՅԱՂԱԳՍ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԳԱՀԻՆ, ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀՌՈՎՄԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Եւ քանզի հիմն իշխանութեան Հռովմայ հայրապետին է լինել նորա յաջորդ առաքելապետին, վասն որոյ ըստ կարգի է մեզ ձառել նախ զգլխաւորութենէ

Պետրոսի։ Այլ չև մատուցեալ ՚ի ցոյց առաջարկու-
թեանս, առ ՚ի քաջ խելամտութիւն Հնդարտասիրաց՝
թէ զինչ իցէ գլխաւորութիւնս այս առաքելապետին,
և ի զանազանիցի և կամ առաւելուցու քան զիշխա-
նութիւն այլոց առաքելոցն, արժան համարիմք նախա-
կարգել ինչ ինչ։

Այսր՝ զի առաքեալք ամենայն, պարզաբար ըստ ա-
ռաքելական պաշտամանն և իշխանութեան, հաւասարք
էին միմեանց. և գործ նոցա և իշխանութիւն էր քա-
րոզել զաւետարանն ընդ աշխարհ ամենայն, աշակեր-
տել զմարդիկ ՚ի հաւատս, հաստատել եկեղեցիս՝ կար-
գեալ ՚ի նոսա զսուրբ խորհուրդս, քահանայս, հովիւս,
առաջնորդս, և սահմանել նոցա կանոնս և օրէնս ա-
ռանձին. ձեռնադրել եպիսկոպոսունս ըստ եկեղեցեաց՝
զորս հաստատէին, բաշխել զՀոգին սուրբ՝ այսինքն շը-
նորհս Հոգւոյն սրբոյ՝ որպէս և տեսանել ՚ի գործս
առաքելոց, ունել զօրութիւն հրաշագործելոց, դրել և
աւանդել սուրբ գիրս յայտնութեամբն Աստուծոյ և
ազդեցութեամբ Հոգւոյն, ոչ իբրև զբան իւրեանց՝ այլ
իբրև պատգամ Աստուծոյ։

Ո այս ամենայն հաւասարապէս ունէին առաքեալք
ամենայն. այլ Պետրոսի ՚ի վերայ այսոցիկ տուեալ էր
՚ի Հրիատոսէ և իշխանութիւն գլխաւորութեան ՚ի վե-
րայ նոցին իսկ առաքելոց, և ՚ի վերայ բովանդակ եկե-
ղեցւոյ. իշխանութիւն ընդհանուր տեսչութեան և ան-
սխալ առաջնորդելոց զինուորեալս եկեղեցւոյ ՚ի հա-
ւատս և ՚ի բարի վարս։ Այս էր առաւելութիւն Պետ-
րոսի քան զայլ առաքեալս։ Այսօր այսմ և արդ եպիսկո-
պոսունք առհասարակ, ըստ քահանայութեանն պարզ-
զաբար և ըստ եպիսկոպոսութեան հաւասարք են. ա-
մենեքեան միօրինակ կարեն մատակարարել զխորհուր-
դս եկեղեցւոյ, ձեռնադրել, և զայլ քահանայական և
եպիսկոպոսական պաշտամունս կատարել. բայց ըստ հո-
վուական և առաջնորդական իրաւանց և իշխանութեան՝
վեհագոյն է արքեպիսկոպոսն քան զեպիսկոպոս, մետ-
րապոլիտն քան զարքեպիսկոպոս, և պատրիարքն քան
զմետրապոլիտ։

Երկրորդ՝ զի եկեղեցի Հրիատոսի ՚ի սուրբ գիրս
պեպեպես անուամբք և նմանութեամբք յորջորջի. մերթ

որպէս տուն կամ շինուած, մերթ որպէս ալքայութիւն կամ թագաւորութիւն, և մերթ որպէս մարմին և կամ հօտ։ Աբդ որպէս ի հաստատութիւն տան կամ շինուածոյ հարկ է զի իցէ նորա հիմն հաստատեալ ի վերոյ վիմի, ի հաստատութիւն թագաւորութեան՝ զի իցէ նորա թագաւոր կամ պետ ուղղիչ և առաջնորդ, ի հաստատութիւն և ի կենդանութիւն մարմնոյ՝ զի իցէ նորա գլուխ, յորմէ սփռի յանդամս զօրութիւն կենսական, և յորմէ ուղղին անդամք առհասարակ, և ի հաստատութիւն կամ ի պահպանութիւն հօտի՝ զի իցէ նորա հովիւ և հովուապետ, նոյնպէս և ի հաստատութիւն եկեղեցւոյ հարկ է՝ զի իցէ նա հիմնեալ ի վերոյ անշարժ վիմի, զի իցէ նորա պետ կամ իշխան գերագոյն, զի իցէ նորա գլուխ, զի իցէ նորա հովիւ և հովուապետ։

Աբդ՝ զի սկզբնական վէմ կամ հիմն եկեղեցւոյ, նախապետական գլուխ և հովիւ է ինքն Քրիստոս, որ անտեսաբար խնամէ ըստ խոստման իւրում և ուղղէ զեկեղեցի իւր ի ձեռն երևելի փոխանորդին իւրոյ, ոյրում ետ յանձին Պետրոսի զայն ամենայն սեփական անուանս իւր՝ հանդերձ իշխանութեամբ հովուելոյ և առաջնորդելոյ երևելապէս յերկրի զեկեղեցի իւր ի համբառնալ իւրում յերկինս, որպէս հանդերձեալ եմք ցուցանել։

Ոչ որդ՝ զի անուանքս փոխանորդ և յաջորդ չեն ըստ ամենայնի համազօրք և համանշանակք, թէպէտ և խառն ի խուռն երբեմն վարիցին փոխանակ միմեանց։ Քանզի փոխանորդ է՝ որ ոչ իւրով իշխանութեամբն վարի, այլ որպէս տեղակալ այնորիկ՝ որ տայ և հաղորդէ նմա զիշխանութիւն իւր, այլ կայ ճնայ այն լրապէս և բովանդակապէս ի տուիչն։ Իսկ յաջորդ է՝ որ փոխանակէ ընդ այլում իշխանի կամ թագաւորի, ժառանգելով զամենայն իշխանութիւն նախորդի իւրոյ ինքնիշխանաբար, մինչև չմնալոյ ինչ ի նախորդն՝ թէ և իցէ կենդանի։ Աբդ յասել մերում՝ թէ Քրիստոս կացոյց զառաքեալսն Պետրոս գլուխ և իշխան եկեղեցւոյ իւրոյ, ոչ է իմանալ որպէս յաջորդ իւր՝ այլ որպէս փոխանորդ և տեղակալ յերկրի, հաղորդելով նմա լիուլի իշխանութիւն և հանրական իրաւունս հովուե-

ղմ յերկրի երևելապէս զեկեղեցի իւր երևելի, կացեալ և ճեպեալ միշտ ինքն ամենիշխան տէր և գլուխ և գերագոյն առաջնորդ եկեղեցւոյ իւրոյ, զոր անտեսաբար ուղղէ յերկնից։

Օ՜այսոսիկ նախակարգեալ, ասեմք արդ և հաստատեմք։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Զի Քրիստոս ետ Պետրոսի իշխանութիւն՝ի վերայ ամենայն եկեղեցւոյ, յորում եղ գնա գլուխ։

Տէրն մեր նախանկատ խորհրդով կացուցանելոյ զՊետրոս գլուխ և վէմ եկեղեցւոյ իւրոյ՝ անդէն՝ի կոչելն զնա յառաքելութիւն՝ փոփոխումն առնէ անուան նորա ասելով (Յհ. ա. 42.) "Դու ես Սիմոն որդի Յովհաննու, դու կոչեսցիս Կեփաս,,, որ յասորի լեզու, որով խառն էր յայնժամ եբրայեցւոցն, նշանակէ վէմ։ զայս և յաւելուած բանից աւետարանին յայտ առնէ յասելն "Կեփաս՝ որ թարգմանի Պետրոս,,. և Կեփրոս՝ յունարէն, որ և այն՝ի սովորութեան էր յայնժամ առ եբրայեցիս, վէմ լսի. որպէս և նոյն ինքն աւետարանիչն անդ (հմր. 40) յայտ առնէ յասելն "Սիմոն եղբայր Սիմոնի վիմին,,։

Դարձեալ բառս Կեփաս կամ Քէֆաս՝ի յոյն լեզու նշանակէ գլուխ, որով կրկին այս անուանք վէմ և գլուխ պրեթէ առ ամենայն Հարս սեփականեալ են Պետրոսի։

Արդ՞ կարիցէ ասել աստուածայնոյ իմաստութեանն վայրապար արարեալ զայդ փոփոխումն անուան նորա, մինչ տեսանեմք զԱբրահամն և զՅակովբայ և զայլոց ոմանց անուանն փոփոխեալ Աստուծոյ խորագոյն խորհրդով. մանաւանդ զի ասա ոչ գոյզն ինչ անուն ընդհի առաքելապետին, այլ կարի մեծ, և որպէս Ճնորհալի հայրապետն մեր ասէ՝ Ալբեպս (Յեսուս ոդէ) "Նա զիւրական անուն վիմին շնորհեաց նմա զանշարժելին,,։ Օ՜այս ամենայն գեղեցիկ բացայայտէ իմաստուն վարդապետ մեր Սարգիս առաւելաւն Հանդերձ

(՚ի Գեղ. կաթ. Պետ. Ճառ ա.) "Տէրն մեր պատուով պատուեաց զերանելին Պետրոս՝ փոխոխումն առնելով անուան նորա ըստ նմանութեան նախնւոյն Աբրահամու և Յակովբայ հայր ազգաց բազմաց առնել և զսա ըստ նմանութեան Աբրահամու կամ ևս գերագոյն քան զնա և աստուածայնագոյն: Ա՝ան զի նա մահկանացու գոլով՝ մահկանացու ազգատոհմի եղև հայր: Իսկ սա՝ վասն զի հայր լինելոց էր հոգևոր ազգատոհմին և գըլուխ և առաջնորդ, բոլորովին ընկալաւ զփոփոխումն անուանն՝ զԻմոն Պետրոս անուանել, որ թարգմանի վէմ. և ՚ի վերայ այնր վիմի շինել խոստանայ զեկեղեցին բարձրագոյն քան զամենայն ներհակս փորձութեանց, որ են դրունք դժոխոց ,,: Այսպէս ևս իսկ փոփոխութեամբ անուանն յայտ արար Քրիստոս զհանդերձեալ խորհուրդ իւր կայուցանելոյ զՊետրոս վէմ հաստատութեան և գլուխ եկեղեցւոյ իւրոյ. զոր և կատարեաց ապա բացայայտ բանիւք զոր ՚ի կրկին նուագս ասաց առ նա:

"Սկսաւ ՚ի Փիլիպպէ կեսարիայն Հարցանել ցաշակերտսն Թէ զուք զի՞ ասէք զինէն Թէ իցեմ. և իբրև պատասխանեաւ Թիւնն զայն ընկալաւ ՚ի Պետրոսէ (Ա՝ղ. ԺԶ. 17.) "Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ ,,, գովեալ զհաւատս նորա՝ զոր ՚ի յայտնութենէ Հօր վկայեաց գոլ, որպէս ՚ի վարձ մեծի խոստովանութեանն՝ ասէ. "Եւ ես քեզ ասեմ՝ զի դու ես վէմ, և ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն: Եւ տայ քեզ զփականս արքայութեան երկնից, և զոր միանգամ կապեսցես երկրի՝ եղիցի կապեալ երկինս, և զոր արձակեսցես երկրի՝ եղիցի արձակեալ երկինս ,,:

Եւ զի զբանս զայսոսիկ ոչ առ ամենայն աշակերտսն հասարակաբար ասաց Քրիստոս, այլ առանձինն առ Պետրոս, յայտ առնէ երանելով զնա յանուանէ վասն աստուածազգեցիկ խոստովանութեանն, և ոչ յանուանէ միայն, այլ և զանուն հօր նորա յաւելլով որպէս յառաւելագոյն բացայայտութիւն, և զմիաւորական դերանունսն կրկնելով և երեքկնելով. Երանի քեզ Սիմոն, որդի Յովնանու ... ոչ յայտնեաց քեզ ... ես քեզ ասեմ ... դու ես վէմ, և այլն. որով յայտնապէս

զնա կացուցանէ հիմն եկեղեցւոյ իւրոյ, խոստանալով զի և զրօնք դժոխոց չկարասցեն ստնանել նմա, ոչ հե-
թանոսացն հալածանք, և ոչ հերեսիովտացն և հեր-
ձուածողաց հակառակամարտք։

Եւ ոչ այսչափ միայն, այլ որպէս Թագաւոր որ 'ի գնալ իւրում հեռի ուրեք 'ի Թագաւորութենէն կար-
գէ զոք իւր փոխանորդ լինուլի իշխանութեամբ, նոյնպէս և Քրիստոս հանդերձեալ ելանել յաշխարհէ՝ յաւե-
լու յանձն առնել Պետրոսի զտեսչութիւն Թագաւո-
րութեան իւրոյ յերկրի՝ զինուորեալս եկեղեցւոյ՝ խոս-
տանալով տալ նմա զփականս Համօրէն այնր Թագաւո-
րութեան լրութեամբ հանդերձ իշխանութեանն կա-
պելոյ և արձակելոյ զամենեսեան առհասարակ։ Ո՛այս յայտ առնէ և մեծին Լևփրեմի ասելն 'ի Պանոպլիայն. "Իշխանն առաքելական դասուն Պետրոս իբրև խոս-
տովանեցաւ զՔրիստոս Յիսուս որդի Աստուծոյ կեն-
դանւոյ, էառ զփականս արքայութեան երկնից և ստա-
ցաւ զիշխանութիւն երկնաւորաց և երկրաւորաց ամե-
նայնի,,։ Նմանպէս սմին և 'ի Յայտնութիւնս մեր գրի ('է 27 դեկ.) "Պետրոս և Պօղոս, որ գերագոյն քերով-
բէիցն եղեն 'ի մարդկային աղցաւոյ բնութենէս։ Ո՛ան զի մինն զկուսածին զմարդն Աստուած՝ որդի Աստուծոյ 'ի բնութենէ Հօր դաւանեաց, որով 'ի Քրիստոսէ ե-
րանելեաւ, հիմն եկեղեցւոյ եղաւ և զփականս արքայու-
թեան ընկալաւ. 'ի գլուխ առաքելոյն սրբոց Հաստատե-
ցաւ՝ լինել նոցա հրամանատու փոխանակ Քրիստոսի,,։ Ա՛յսպէս ահա սովին բանիւ Քրիստոսի Հաստատի ա-
ռաջին և երկրորդ մանն առաջարկութեանս, այսինքն զի Պետրոս հիմն և գլուխ եկեղեցւոյ կացուցաւ 'ի Քրիս-
տոսէ։

Հաստատի և երրորդ մանն այսպէս. փրկիչն մեր յետ յարութեան իւրոյ, մինչ չև եր հրաժարեալ 'ի սպաս-
յերկրէ, երևեալ առաքելոցն Հարցանէ զՊետրոս. "Սի-
մէն որդի Յովհաննու, սիրէս զիս առաւել քան զդո-
սա,,։ Եւ 'ի պատասխանել նորա Թէ "Ցէր, և դու գիտես զի սիրեմ զքեզ,,, ասէ. "Ա՛րածեա զգառինս իմ,,։ Դարձեալ Հարցանէ. և զնոյն ընկալեալ պա-
տասխանի, ասէ. "Ա՛րածեա զոչխարս իմ,,. (Յհ. ԻԱ. 15)։ Ա՛ր դիտելի է զի ոչ միայն կոչմամբ անուանն

և Հօր նորա գարձեալ որոշէ զնա յայլոց աշակերտաց, այլ և ասելովն "առաւել քան զնոսա,, առ 'ի յայտ առնելոյ զինն՝ վասն առաւելութեան սիրոյն քան զայլոց առաքելոցն, յանձնէ զգառինս իւր և զոչխարս՝ այն է զՀօտ իւր բովանդակ։ Աստի և սուրբն Սկեբեբեան ասէ (Եկն. Յոհ. հտ. ք. Ձե. ք. 952). "Կանգի մեծամեծս յայտնեաց նմա Քրիստոս և զամենայն տիեզերս աւանդեաց 'ի ձեռս նորա, և վկայեաց զսիրոյ նորա, որ առաւել մեծ էր քան զայլոց ընկերացն,,։ Այսպէս և սուրբ Հայրապետեան մեր Կերսէս լամբրոնացի ('է ճէն. պոլ. 151.) յերիս երրեակ գասս վերածեալ զամենայն կարգս եկեղեցւոյ՝ զհետ բերէ. "Կ.յոգիկ երիցս գասու 'ի վերայ կարգելով զղջման առաքելոց, Քրիստոս, զՊետրոս՝ յանձն արար զնոսին նմին արածել ըստ զանազան սիրոյն զօրութեանց. Սիմն, ասէ, սիրե՞ս զիս. և յորժամ խոստովանեցաւ, ապա ասաց՝ Թէ Կ.րածեա զգառինս իմ. այսինքն զՀասարակաց ժողովուրդն։ Իսկ երկրորդ պահանջեալ զհաստատութիւն, յաւել Թէ՝ Կ.րածեա զոչխարս իմ, այսինքն քահանայական պատուոյն իշխել գառանցն և ընդ նոսին պաշտօնէից գասու։ Իսկ ևս առաւել զհերն գրաւական առեալ՝ ապա ետ նմա իշխանութիւն քահանայապետութեան, տիրել քահանայիցն և որ ընդ նոքօք պաշտօնէից և ժողովրդոց,,։ Այս զի վերագոյն ասացեալ էր Թէ "Քահանայիցն կարգ (որոշէ) յեպիսկոպոսապետս, յեպիսկոպոսս և 'ի քահանայս. քանզի սոքա պատուով մի են, և միայն անուամբ և աստիճանաւ զանազանին,,, նմին իրի 'ի վերայ ածէ անդ (152) Թէ "Պետրոս և Պետրոնն լինին արժանի 'ի ծայրագոյնն ելանել յաստիճան քահանայապետութեան և արածել զհոգեսն՝ զգասս քահանայիցն, և զոչխարան՝ զկարգս պաշտօնէիցն, և զգառինս՝ զխումբս ժողովրդոցն,,։ Սմին հանգոյն և Յոհ. երզնկացի ասէ ('է ճէն. Ա՛տր. ժ.) "Թէպետ ամենեքեան (առաքեալք) գլխաւորք էին, սակայն զՊետրոս նոցին գլուխ կարգէ. և ոչ միայն նոցա, այլ և գառանց և ոչխարաց և խոյոց հովիւ ընտրէ։ Այլ քանզի է առաջին որ գասիւ է, և է՝ որ զօրութեամբ, իսկ սա երկոքեամբք պատարուն,,։

Այս ինքն Քրիստոս ասէ այլուր. "Աղիցին մի հօտ

և մի հովիւ ,, : Եւ ո՛ հովիւ միոյ հօտին . ապաքէն ինքն Քրիստոս , այլ նոյն ինքն կամի և հրամայէ Պետրոսի բերել զդէմ իւր երկրի , և հովուել զհօտ իւր : Այսպա Պետրոս է փոխանորդ Քրիստոսի՝ի վերայ երկրի , հովիւ , գլուխ , և հիմն եկեղեցւոյ սրբոյ անժխտելի :

Ասէ այսօրիկ ինքն նախ զաստուածութիւն Քրիստոսի . ինքն նախ քան զայլ առաքեալս տեսանէ զՔրիստոս յետ յարութեան նորա . “ Երեւեցաւ Կեփայի , և ապա երկոտասանիցն ,, . (ա . Կոր . ԺԵ . 4 :) “ Յարեաւ տէր , և երեւեցաւ Սիմոնի ,, . (Ղ Ի . ԻԴ . 34) , զի և նոյն ինքն նախ քան զայլ առաքեալս վկայելոց էր զՔրիստոսէ առաջի ամենայն ժողովրդեան : Ինքն առաջարկէ ընտրել զայլ որ յառաքելութիւն փոխանակ Յուդայի . ինքն նախ սքանչելեօք բժշկութեան կաղին հաստատէ զհաւատս Քրիստոսի . ինքն նախ յառաջագէմ՝ի քարոզութիւն՝ ելոյս հազարս՝ի հրէից միանգամայն ածէ՝ի հաւատս : Ո՛ւ նա ինքն լինի հրամանի յերկնից ընդունելոյ և զհեթանոսս յեկեղեցի , և մկրտելոյ զԿոռնելիոս . նա ինքն պատուհասէ զսքանչութիւն Անանիայի և զՍափիրայ . ինքն սաստէ և յանդիմանէ զՍիմոն մոգ . ինքն նախ՝ի ժողովի առաքելոցն յայտնաբեմ տայ զկարծիս իւր . ինքն ամենայն ուրեք՝ի գլուխ առաքելոցն անուանի և դասի . ինքն միշտ յառաջամատոյց խօսի ընդ Քրիստոսի , և՝ի նաւակէ նորին վարդապետէ Քրիստոս ժողովրդեան : Այսպիսի և այսքան նախանձանութիւնք չկարեն գոլ վայրապար և անխորհուրդ , որպիսի և որքան մեկնութիւնք՝ի վերայ մեկնութեանց յաւելցին առ՝ի դերև առնելոյ զայնս :

Ասէ այսօրիկ և եկեղեցի անդատին՝ի սկզբանէ զայս այսպէս կալեալ հաստատութեամբ , և Հարք ամենայն աղագաց զնոյն պատիւ և անուանս ընծայեն Պետրոսի՝ի գիրս իւրեանց . որոց վկայութիւնք բազմականք են , ոչ միայն՝ի բացայայտել զտէրունական բանս առաքեալսն՝ այլ և՝ի յաղթահարել և ամփ՝ի բերան առնել զհակառակախօսս :

Մնըքն Կղեմէս աշակերտ և յաջորդ Պետրոսի . (Է Ընդ . ա . սա Յակ . եղբայր Տեառն .) “ Սիմոն Պետրոս հաւատովքն և քարոզութեամբ ողջամիտ վարդապետութեան սահմանեցաւ հիմն եկեղեցւոյ ,, :

Ոսկեբերան (յղ. Հռոմէական Եկեղեցւոյ.) "Պետրոսի տուաւ գլխաւորութիւն, որպէս զի մի միայն իցէ եկեղեցի, և մի աթոռ վարդապետութեան... որ զոր մեկնի յանդուգն Պետրոսի, համարեսցի զանձն յեկեղեցւոջ,,:

Սուրբն Կիպրիոս աստուածաբան (Ճառ ին.) "Ա կոչէ վէմ, և զհիմունս եկեղեցւոյ՝ի հաւատս իւր բարձեալ բերէ. և այլք յաշակերտաց մնադիւր ընդունին զնորին վերադասութիւն,,:

Սուրբն Լևոն (Ճառ Ձ. գլ. Բ.) "Ընդլին է՝ի խոստովանութեան տեառն, որ առաջինն է յառաքելական արժանապատուութեան:... Նա եմ վէմ անկեան՝ որ առնեմ զերկոսեանն մի, ես եմ հիմն՝ քան զոր այլ ոչ ոք կարէ դնել. բայց դու ևս վէմ ես, զի իմովս զօրութեամբ ամրապնդիս. որպէս զի որ ինչ իրք ինձ սեպհական են իշխանութեամբ, լիցին և քեզ հասարակ ընդ իս հաղորդակցութեամբ,,:

Սուրբն Ե Գրոստինոս (՚է աղմ. ՃԸ.) "Պետրոս վասն իւրոյ առաքելապետութեանն յինքն բերէր զդէմս եկեղեցւոյ,,:

Նոյ դարձեալ (՚է կոակարնա խնդ. ՀԸ.) "Որպէս՚ի փրկչէն էին ամենայն զօրութիւնք իշխանութեան, նոյնպէս և յետ փրկչին՚ի Պետրոս բովանդակեալ էին ամենայնն,,:

Ամեծն Կիպրիոս (առ Ջոբնէ կայսր.) "Ցնտեսութիւն բովանդակ եկեղեցւոյ յանձն եղև Պետրոսի իշխանին ամենայն առաքելոց,,:

Ամեծն Ներսես. (յղ. դպրապետ. Կաթուղիկոս.) "Նրա նելին Պետրոս, որ և այլոց աշակերտաց եղև առաջնորդ, որում քան զայլոցն ամենեցուն մեծագոյն տուաւ իշխանութիւն..:

Սուրբ Ոսկեբերան (՚է Ճառն Պետր. և Նղիայէ.) "Հաւատոյն Պետրոսի յանձնեցան տիեզերք և եկեղեցիք և բազմութիւնք ժողովրդոց,,:

Նոյ դարձեալ (՚է Ամոս. ծԸ.) "Որպէս և Հայր առ Երեմիա ասէր. Նդի զքեզ ի բերև զսիւն երկաթի, և ի բերև զպարիսպ. այլ զնա միւմ ազգի, իակ զսա հաստնորէն տիեզերաց,,:

Նոյ դարձեալ (՚է Ռէն. Յոհ.) "Ամեծաւեծս յայտ-

նեաց նմա, և զամենայն տիեզերս աւանդեաց ՚ի ձեռս նորա ,,։

Աւրբն Կիւրեղ աղեքսանդրացի (՚ի գիրս գանձոց.) “Այնպէս և Պետրոսի լիապէս յանձնեաց. ոչ այլ ոք այլում, այլ Քրիստոս Պետրոսի, զիւրն զլուծիւն նմա միայնոյ ետ ,,։

Աւրբն Կիւրեղ Երուսաղէմի. (՚ի կոչ. ընծ.) “Նախ յառաջ մատեաւ յառաջակացն առաքելոց, գլուխն եկեղեցեաց ,,։

Աւրբն Նփրեմ (՚ի Ճառն այլակերպութեան.) “Որպէս Աստուածն այնր ժողովոյ և միաբանութեան եբրայեցւոց իշխան եղև ՚ի հրամանել Նստուածոյ, այսպէս և Պետրոս եկեղեցւոյ քրիստոնէից. և ևս՝ որպէս նա հրնոյն, այնպէս և սա նորոյ կտակարանաց միջնորդ ,,։

Աւրբն Հերոնիմոս (ընդդէմ Յովինեայ. ա. ժգ.) “Ի մէջ երկոտասանից միոն ընտրի, զի ՚ի կալ գլխոյ բարձի առնի հերձուածոյ ,,։

Յեկեղեցական գրեանց մերոց։

Շ արական ՚ի կանոն գլխաւոր առաքելոց. “Որ գերպոյն ընտրելոց առաքելոցն դասուց անուանեցեր լինել զերանելին զՊետրոս, գլուխ սուրբ հաւատոյ, հիմն եկեղեցւոյ ,,։

Յերգ մեծի ուրբաթուն.

“Գլխոյն ընտրեալ հօտին փոքու
Աստեր զխորհուրդն ոչ գիտելոյ։ . . .
Շ նորհեալ վիմին եկեղեցւոյ,
Օ՞ր պահեցեր ՚ի հոսելոյ ,,։

Աշտոց ՚ի վեմծրհնեքն. “Ցեր Նստուած մեր, որ զանուն գլխաւորի սրբոյ առաքելոյն Պետրոսի անուանեցեր վէմ, և ՚ի վերայ նորա շինեցեր զընդհանուր կաթողիկէ եկեղեցի ,,։

Ի նաւակատիս եկեղեցւոյ. “Որ յանուն գլխաւորի սրբոյ առաքելոյն Պետրոսի, անուանելոյ վէմ, նմանապէս զեկեղեցի քո վէմ անուանեցեր ,,։

Ի կանոնն ձեռնադրութեան եպիսկոպոսի, որպէս ունին գրչագիրք գրեալք ՚ի ՃՂԴ. “Կամիս դու երանելւոյն Պետրոսի և սրբոյն Կրիգորի, որոյ է զօրութիւն

պարգևեալ Աստուծոյ կապել և արձակել, տալ ըզ-
հնազանդութիւն և զհաւատարմութիւն ,,։

Ճաշոց (՚ի ծանր այլևայլաբանեան). "Ադեալ ընդ
քեզ զերիս յաշակերտացն քոց, զՊետրոս զեկեղեցւոյ
զվէմն՝ որում զփականս արքայութեան խոստացար, և
զերկուս եղբարսն զՅակոբոս և զսիրելին քո զՅով-
հաննէս ,,։

Յայսմաւուրք՝ ի դեկտ. ին. "Ածի և գլխաւոր ա-
ռաքեալն Պետրոս, ընդ նմին և Պօղոս ,,։

Ի յունվար իվ. "Ածի առաքեալն Քրիստոսի
սուրբն Պետրոս, վէմն հաւատոյ և հիմն եկեղեցւոյ ,,։

Ի յունուարի իբ. "Ադաքեալն Քրիստոսի Պետ-
րոս, վէմն հաւատոյ և գլուխն եկեղեցւոյ սրբոյ ,,։

Ի դեկտ. իզ. "Պետրոս և Պօղոս՝ որ գերագոյն քե-
րովբէիցն եղեն ՚ի մարդկային յաղցաւոր բնութեանս։
Ո՛ան զի միմն (Պետրոս) զկուսածին զմարդն Աստուած
որդի Աստուծոյ ՚ի բնութենէ հօր դաւանեաց։ Որով
՚ի Քրիստոսէ երանեցաւ, հիմն եկեղեցւոյ եղաւ, և
զփականս արքայութեան ընկալաւ. ՚ի գլուխ առաքե-
լոցն սրբոյ հաստատեցաւ, լինել նոցա հրամանատու
փոխանակ Քրիստոսի ,,։

Ի սեպտ. իշ. "Յորժամ վիճակեցին առաքեալք
զաշխարհս՝ գնալ ՚ի քարոզութիւն աւետարանին, եւ
վիճակն Յովհաննու՝ գնալ Ասիա. և հրամայեաց նմա
Պետրոս գնալ անդր ,,։

"Եւ յառաջ քան զգնալ Յովհաննու... ընտրե-
ցաւ Ստեփանոս ՚ի Սիմոնէ մեծէ յառաքելապետէն, և
ոմն է բաւական նմա. կոչեցաւ Ստեփանոս ՚ի վիմէն հա-
ւատոյ, և ոչ լեզու ձառէ գնա ,,։

Ի գրոց Հարցն Սեբոց.

Սուրբ Լուսաւորիչն (Ա՛ֆաք. 340.) "Ադար գնա
վէմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց ,,։

Սուրբ Յակոբ Ա՛ծբնայ (ձառ է.) "Եւ լուաց (Պետ-
րոս) զմեղս իւր արտասուօք լալոյ իւրոյ. ընկալաւ գնա
տէր, և արար գնա հիմն, և կոչեաց գնա վէմ շինուա-
ծոյ եկեղեցւոյ ,,։

Սուրբն Թաւակ պարթև (ձառ ՀԳ. եէեղ.) "Ո՛ այս

նոյնկենդանարարն Քրիստոս ուսուցանէ ասելով ցՊետրոս. Դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ։ ... Ընդ միոջ է իմանալ զասելն ցՊետրոս՝ Դու ես վէմ։ միթէ որպէս ոմն ի քարանց. քաւ լիցի, այլ մարդ բանաւոր և դիմաւոր առաքելական դասուն։ Նոյ քանզի անդրդուելի հաւատով դաւանեաց զՔրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ, վասն որոյ և բանումն ընկալաւ և վէմ անուանեցաւ ,,։

Սուրբն Աթանաս խորենացի (Պիոյէց յղ. ուրաց. Պետրոս, ի դէմաց Նորա.) ,,Յորմէ (այսինքն ի Քրիստոսէ) պատուեցայ այնուհետև, առաջնոյն առաքելոյն գոլ գահերիցութեամբ ,,։

Եղնիկ (յԱղաղ աղանդոց 263. ի դէմաց Պօղոսի.) ,,Ընդ որ և ես միայն արժանի եղէ խորհրդոյն՝ որ տրուպս եմ առաքելոց, այլ Թէ և Պետրոս՝ որ գլուխն է առաքելոց՝ տեսանիցէ, չկարէ ձառել ,,։

Օ աքարիա կաթողիկոս (Ճառ Ննդ. Քրիստոսի.) ,,Ի Հռոմ հանդերձեալ էր կարդել զաթոռն Պետրոսի և Պօղոսի, և զգլխաւորութիւն սուրբ եկեղեցւոյ ,,։

Աբեծն Խոսրով (ի մեկն. Ջամագր.) ,,Պետրոս վէմ առնուանեցաւ ի տեառնէ, և հիմն եկեղեցւոյ եղաւ ,,։

Սուրբն Գրիգոր Նարեկացի (ի բանն ԺԷ.) ,,Քանզի արդարև վերաձայնեալ այս խոստովանութիւն երբեմնաւորեան դաւանութեան զվիմն հաւատոյ ընդ Պետրոս երանեաց ,,։

(Ի բանն Ցա.) ,,Պետրոս առաքելոց ընդ Սափիրայի ի կենաց զրաւէ ,,։

(Ի ներբող ատաք.) ,,Աջակից սկզբնաւթիւն և նախամեծարն, վէմն հաստատեալ և արձանն հիմնացեալ, քարն անուանի եօթնաւթիւ դաւանութեամբ յարմարացրեալ ... ընտրեալն և փառազարդեալն Կեփաս ,,։

(Ի ներբող Յակ. Ա՝ծբ.) ,,Պետրոս սքանչելի գնդին առաքելականի օրհնելոյ ,,։

Վարձեալ (ի նոյն աղօթական գիրս երբ պիտի ասել ի Պատարագամատոյցին ի Լուսին ՈՄԻԹ. յԷ. Կատար ի բանն որ վասն ուղիղ հաւատոյ.) ,,Քանզի և տէրն զայս եգ հիմն եկեղեցւոյ իւրոյ, ասելով առ նախնի դաւանօղն Պետրոս՝ Թէ դու քո խոստովանութեամբդ ես իբրև վէմ հաստատուն և անշարժ, և ի վերայ այդր վիմի շինեցից

զեկեղեցի իմ, այսինքն զամենայն հաւատացեալս և
Հիմարիտ խոստովանօղս Համագոյ և զուգական Եկեղե-
ցւոյդ Աստուծոյ ,, :

Աւրբն Եփրեմ Շնորհալի (՚ի Յիսուսաբդին .)

“Ոսկ որ լըսաւ ըզձայն Հոգւով,
Երկեաց ըզմիտս անել գունով.
Զաղաղակեաց գաւանելով՝
Թէ ես որդի Հօր ասելով.
Որով էաւ զերանելին
Ի բարբառոյ սուրբ երանին.
Նա զհրեական անուն վիմին
Շնորհեաց նըմա զանշարժելին ,, :

Նոյն (յՀԱՂԲԱՒ Եդեսիոյ).

“Նա դու Հրոմ մայր քաղաքաց
Վերապայծառ և պատուելի,
Ունեցեր աթոռըդ Պետրոսի
Հաւաքելոց գըլխաւորի ,, . և այլն :

Սարգիս վարդապետ . (՚ի Ճեն . կաթողիկ . ա . Պետր . Հաւ ա .) “Ընտրեաց (Քրիստոս) ՚ի մարդկային ան-
կարգ գնացից զընտրեալն ՚ի սկզբանէ, զորս և առա-
քեալս անուանեաց : . . . Նա կացոյց նոցա գլուխ և հիմն
Հաւատոյ զերջանիկն Պետրոս . . . զայն՝ որ բարձրա-
դունի յայտնութեանն Հօր արժանաւոր գտաւ, զայն՝
որ դաւանեաց զորդի ՚ի բնութենէ Հօր, զայն՝ որ մե-
ծագունի երանութեան արժանաւոր եղև, զայն՝ որ վէմ
անուանեցաւ, և ՚ի հիմունս եկեղեցւոյ եդաւ : . . . Ո՛չ
մենատէրն զիւր վայելչական անուն, խոստովանեալ ՚ի
տառից Հոգեպատում մարգարէից, գնէ նմա. Նէհա,
ասէ, գնեմ ՚ի հիմունս Սիոնի վէմ ընտիր գլուխ ան-
կեան : . . . Նորդ զոր ինչ միանգամ Յիսուս ինքն ունէր
ըստ էութեան բնութեանն, եւոյց ըստ տնտեսութեան
իւրոյ մարդանալոյն, ծանուցեալ յանմարմին Հաւատոն
Պետրոսի, մանաւանդ տեսեալ յառաջ քան զլինելն
աշխարհի, վէմ անուանէ և զնա . . . զի վէմն անտեղի-
տալի է արկածիցն անձրևաց, և զարկեալ սերմանան
ոչ ընդունի, և ՚ի հարկանելն ոչ զգայ, այլ մանաւանդ
զՀարկանօղն ճնասէ. և այսորիկ աղագաւ Սիմոն վէմ
կոչեցաւ : . . . Ոսկ որ գլուխ և առաջնորդ էր այսը ընդ-
հաց, և ՚ի վերայ նորա չինեցաւ եկեղեցի, ծանուցեալ

զմեծութիւն պարգեւացն, մանաւանդ թէ Հաշակեալ իսկ զքաղցրութիւնն ընդհացն ի փչմանէ Հոգւոյն, ի դիմաց եկեղեցւոյն՝ իբրու բերան ամենեցունն՝ սկսանիմ օրհնել զ՚ստուած ,, :

Նա դարձեալ (անդ ի ճառն ԺԲ.) “ Պետրոս վկայ նուանեցաւ, և ի հիմունս եկեղեցւոյ եղաւ, այն որ դրունք դժոխոց զնաոչ յաղթահարեցին : . . . Զքաջեմ, ո հայր պատուական, գլուխ և առաջնորդ և վերակացու նոր ուխտիս և ժողովրդեանս, զՀատարակաց լուսաւորիչն եկեղեցւոյս յանձն արարեալ տեառն բանիւն, զի անդրդուելի հաստատութեամբ կացցեն ի վերայ հիման դաւանութեան քո և խոստովանութեան ,, :

Ի գնատիոս վարդապետ (ի ճառն. Ա կ. գլ. ԺԲ.) “ Նա զի մի՛ ոք համարեսցի ունել կարծիս՝ յետ ուրացութեանն նուազանալ փառաց նորա, կամ թէ նա իսկ, յաղագս որոյ յաւելու (Պրիսկոս) և ասէ. Նա դու երբեմն դարձիս յառաջինն, և հաստատեսցես զեղբարս քո : Օ այս և յետ յարութեանն եղոյց. զի զոր միանգամ անուանեաց և ետ հիմն եկեղեցւոյ, թէպէտ և սասանեցաւ, սակայն ի բաց ոչ ընկեց. այլ առնու ի նմանէ զսէրն գրաւական, և յանձն առնէ նմա զՀօտն : Նա ասա՝ Գնա, ասէ, լուցիս հաստատութիւն եղբարցդ քոց ,, :

Սուրբն Ներսէս լամբրոնացի (ի ճառն. պատարագի). “ Յայսոցիկ երից դասու (եկեղեցւոյ) ի վերայ կարգեալ զգլուխն առաքելոց զՊետրոս, յանձն արար զնոսին նմին արածել ըստ զանազան սիրոյն զօրութեանց : . . . Նկրկորդ յետ Պրիստոսի զքեզ ուսաք, ով Պետրոս. գլուխ յետ գլխոյն դու նստար աշակերտացդ. վկայ հաստատութեան քնաւիցս զքեզ էարկ ի հիմն տաճարիս. զգաւինան և զոչխարան ի ձեռս քո աւանդեաց արածել՝ յետ առնելոյ զգրաւական սիրոյդ : . . . Հոգին սուրբ, որ էջ ի Պրիստոսէ և հանգեաւ ի վերայ միոյ եկեղեցւոյ նորա՝ որ հաստատեցաւ ի վերայ Իմանի եօթն զօրութեամբ ,, :

Յոհաննէս վարդապետ երզնկացի (ի ճառն Պասեր. գլ. Ժ. 2.) “ Անդէպ ամենեքեան գլխաւորը էին, սակայն զՊետրոս նոցին գլուխ կարգէ. և ոչ միայն նոցա, այլ և գառանց և ոչխարաց և խոյոց հովիւ ընտրէ : Այլ

քանզի է առաջին՝ որ դասիւ է, և է՝ որ զօրութեամբ, իսկ սա երկոքումբք պատարուն ,, :

Կիրիգոր սկևռացի (՚է ՃաՈ յարուԼեան.) “Ա՛ադա- ղենացին գայ առ Պետրոս որպէս առ խոհեմ և ծեր և գլուխ առաքելոց ... Յովհաննէս եկն նախ ՚ի գերեզ- մանն, բայց ՚ի ներքս ոչ եմուտ՝ պատիւ արարեալ գլե- խաւորի առաքելոցն, զի նախ նա մտցէ ,, :

Կարապետ վարդապետ (յորմն. պղեաՀ ՚է վերս հա- յոնց ՚է Կոստանդնուպոլիս).

“ Տէս զՅովհաննէս զիաւրդ մխնայր
Ի դուրս այրին մինչ Պետրոս գայր.
Տէս ըզՊօղոս զիաւրդ անսայր
Նա Աիմոնի մինչ ՚ի Հռովմ գայր ,, :

Ընդ այս ամենայն բացայայտ և միաձայն վկայու- թիւնք Հարց Յունաց, լատինացւոց և մերազնեայց բա- ւականք են առ ՚ի լուծանել զամենայն անհեթեթ ա- ռարկութիւնս հակառակորդաց Ճշմարտութեան, և առ ՚ի ցուցանել յայտնաբարբառ, զի Կրիստոս գլուխ է- կեղեցւոյ իւրոյ կացոյց զՊետրոս :

Հզօրք են ապաքէն և ազդու այսքան վկայութիւնք, մանաւանդ Հարցն մերոց, այլ ազդողագոյնք թերևս իցեն հակառակողաց Ճշմարտութեանս վկայութիւնք այնոցիկ, որ հակառակողք երբեմն գոլով՝ որպիսիք են Յոհան որոտնեցի, Կիրիգոր տաթևացի և Յակոբ Նա- լեան, սակայն բռնադատեալք ՚ի խղճէ մտաց և ՚ի յայտ- նի վկայելոյ սուրբ գրոց և Հարց, ստիպին ուրեք ուրեք ՚ի բաց դնել զհակառակութիւն, և խոստովանել զՃըշ- մարտութիւն : Ո՛ ան որոյ ոչ տարադէպ համարիմք վե- կայութիւնս ինչ և ՚ի նոցանէ յառաջ բերել :

Յոհան վարդապետ որոտնեցի (ѧարոպգեբѧ. ՃաՈ ՚է պեար.) “ Տերն մեր Յիսուս Կրիստոս զջորս յատկու- թիւնս ունի, որ միայն առանձին նմա վայելէ : Նախ՝ զի է Կրիստոս սկիզբն և հիմն եկեղեցւոյ. այսպէս ասէ Պօղոս. և զայս յատկութիւնս ետ Պետրոսի, յորժամ ասաց. Դու ես վէմ, և ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ: Երկրորդ յատկութիւն՝ որ Կրիստոս միայն է գլուխ ամենայն հաւատացելոց ... և զայս գործս ետ Պետրոսի, յորժամ ասաց. Դու կոչեսցիս Կեփաս, որ է գլուխ : Երրորդ յատկութիւն է՝ զի Կրիստ-

տոս է հովիւ եկեղեցւոյ, որպէս ասէ աւետարանիչն. Նա եմ հովիւ քաջ, և այլն. և զայս ընդհեաց առաքելոյն Պետրոսի, յորժամ ասաց. Բ՚րածեա զոչխարս իմ, և զգաւիտս իմ: Ընդորոշ յատկութիւն է՝ զի Քրիստոս է դատաւոր, ըստ այնմ թէ զամենայն դատաստան ետ որդւոյ. և զայս ասաց Պետրոսի. Ո՞ր միանգամ կապեացես յերկրի, եղիցի կապեալ յերկինս ,, և այլն:

Գրիգոր վարդապետ տաթեւացի (՚ի խրոպէրս հմ. ամբան. 682. 683. 686.) “ Պետրոս լուսատու տուընջեան, զի իշխանութիւն ունի՝ի վերայ ամենայն հաւատացելոցս՝ի Քրիստոս. ապա ուրեմն Պետրոս արժանի է, և Պօղոս լուսին: ... Յուդա, զքեզ օրհնեսցեն եղբարքդ քո, ձեռք քո՝ի վերայ թիկանց թշնամեաց քոց, քեզ երկրպագցեն որդիք հօր քո: ... Պետրոս՝ի միջ առաքելոց նախ դաւանեաց զՔրիստոս, և վասն այն եղբարքն երկիր պագինն նմա: ... Պարտ է գիտել, զի յորժամ կամեցաւ Քրիստոս զհօտն իւր յանձնել յառաքեալն Պետրոս, նախ վասն սիրոյ հարցանէ: Այլ իբրև հաւ զգրաւական սիրոյն երէք անգամ կատարեալ վկայութեամբ, ապա յանձն առնէ նմա ըզհօտն իւր՝ զոր գնեաց արեամբ իւրով. Բ՚րածեա զոչխարս իմ և զգաւիտս իմ: ... Ակ թէ վասն կր նախ զգաւիտս ասաց, ապա զոչխարս, ասեմք՝ եթէ ոմանք են՝ի ժողովրդեան որպէս գառինք ... նոցա առաւել պարտ է հոգ տանել քան կատարելոց: Կարձեալ ժողովուրդք որպէս գառինք են, և քահանայք և եպիսկոպոսք և կաթողիկոսք՝ որպէս ոչխարք որք ծնանին զգաւիտս և զժողովուրդս ,,:

Յակոբ պատրիարք նալեան. (՚ի ձէն. Լաբեկ. 910.) “ Այլ Պետրոսի ասաց (Քրիստոս). Վասն զի փոյթ է, դու եկ զինի իմ մինչև յերկինս. վայելուչ էր երկնաւոր թագաւորին՝ զինի մեծի աշխարհագուժոր պատերազմի կենցաղոյս զիմոխանօրդն իւր առ ինքեան զետեղել,, :

ԱՌԱՔԱԿՈՒԹԻՒՆՔ

Գործ. ա. — ա. Ա կայութիւնքդ ածեալք ՚ի սուրբ Հոգոյ՝ հային յանձնական բարեմասնութիւնս Պետրոսի, զի երիցագոյն էր քան զայլս տիոքք և յառաջ քան զայլս կոչեցեալ ՚ի Քրիստոսէ, և կամ զի ջերմագոյն քան զայլսն էր ՚ի նախանձ և ՚ի սէր Քրիստոսի, որպէս յաձախ ուրեք ուսուցանեն Հարք։ — բ. Ա ասն զի սուրբ Հոգին զնոյն իշխանութիւն և զնոյն պաշտօն առաքելական ցուցանեն ունել առաքելոց առհասարակ. վասն որոյ և Պօղոս անխտիր ասէ զնոցանէ. (ա. Կոր. ժբ. 28.) "Եւ զորս եդ Աստուած ՚ի եկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս,,։ — գ. Եւ Հարք զառաքեալս առանց խտրութեան կոչեն դատաւորս և իշխանս աշխարհի, հիմունս եկեղեցւոյ, պարիսպ այգւոյն Քրիստոսի, հովիւս քրիստոսական հօտին, և ծայր իշխանութեան զառաքելութիւն. մինչև ասել Կիպրիանոսի ՚ի գիրսն՝ որ յաղագս միութեան եկեղեցւոյ. "Նոյնք էին առաքեալք որ էին և Պետրոս, նմին վիճակի պատուոյ և իշխանութեան հասեալ,,։ — դ. Ասէ Պետրոս թէ, պէտ և յառաջագէմ նախանձու զայլովք դերազանցեալ, ոչ երբեք վարեր իշխանութիւն ՚ի վերայ այլոց։

Պէտ. — ա. Նարեմասնութիւնքն Պետրոսի անձնականք՝ ՚ի սուրբ գիրս յիշատակեալք՝ ոչ բառնան ՚ի բաց զիշխանութիւն նորա։ Նարեմասնութիւնքն այնոքիկ, թէ շատ, պատճառք լեալ իցեն ընտրութեան նորա ՚ի Քրիստոսէ, այլ ոչ և նպատակի գլխաւորութեանն՝ առ ՚ի սահմանել և պահել զմիութիւն եկեղեցւոյ։ Եւ ոչ Հարք յայլ ինչ ակնարկեն ՚ի ձառել զբարեմասնութեանց նորա, բայց զի Թերևս նոքիմբք ընտրեցաւ Պետրոս քան զայլս ՚ի գլխաւորութիւն. զի նոքին Հարք ՚ի խօսել ապա զսահմանադրութենէ գլխաւորութեան նորա, միաբան հաստատեն զնախնեաց ընտրեալ ՚ի Քրիստոսէ գլուխ եկեղեցւոյ, որպէս ցուցաւ վերագոյն։

— բ. Պաքէն սուրբ գիրք, ուր զառաքելական պաշտամանց իցեն բանք, հաւասարս ցուցանեն զամենայն առաքեալս. այլ ուր զգլխաւորութենէ և զյարակից

նային իշխանութեանէ, ուրոյն միշտ և եզակի խօսին ըզ-Պետրոսէ։ Այլ Պօղոսի նախ պատուիրելն ասել անխտիր, ոչ՝ի դասակարգութիւն իշխանութեանց եկեղեցւոյ հայի, զի ոչ զայնմանէ է բանն. այլ յաստիճանս ընդհանուր հաց Հոգւոյն որ առաւելաւ յառաքեալն առհասարակ, վասն որոյ յաւելու՝ ապա ընդդիմս էծգնդութեան, ապա ի ընդգիմանութիւնս ընկղմաց։

— Դ. Այսմանէս և հարց անխտիր հաւասարել զառաքեալս՝ ըստ առաքելութեան աւետ մասին է, առանց ստանալոյ իրաւանց գլխաւորութեան՝ որ այլ ինչ է ամենևին։ Վասն որոյ և Կիպրիանոս յետ հաւասարս զնոսա ասելոյ ըստ առաքելութեան՝ ըստ պատուոյ և ըստ իշխանութեանց, ի վերայ ածէ. "Այլ զի յայտնի առբասցէ զմիութիւն, միութեանն այնմիկ սկիզբն ի միոջէ առնուլ իւրով իշխանութեամբն սահմանեաց Քրիստոս ... սկիզբն ի միոջէ առնու, զի միակ ցուցցի եկեղեցի"։

— Դ. Ոչ տեսանեմք Պետրոսի ի վերայ այլոց առաքելոց վարեալ իշխանութիւն հրամայական, զի ոչ կալ բօտ էին այնմ. այլ զի վարէր իսկ զայն ըստ յարակից պաշտամանցն, ցուցաք ի վեր անդր ի սուրբ գրոց. և բանիւք իսկ Քառընտրին մերոյ թէ "Հրամայեաց նմա (Յովհաննու) Պետրոս գնալ"։

Ընդդէմ. Բ. — Ա. Նախին Քրիստոսի Գլուխ եւ վեմ. և այլն, բազմադիմի իմաստս ընծայեն հարք. կէսք ի վերայ առաքելոց առնուն զայն անխտիր, զի և նոքա կոչին քարինք և հիմունք եկեղեցւոյ. այլք վիմին զՔրիստոս ինքնին իմանան, ըստ առաքելոյն, "Այս վէմն էր ինքն Քրիստոս". (Ա. Կոր. Ժ. 4.) և այլք բազումք իմանան այնու զՀաւատան Պետրոսի՝ որով զաստուածութիւնն Քրիստոսի դաւանեաց. որպէս ի Տ արակնոցի "Ընծա այսօր եկեղեցի Աստուծոյ ... հաստատեալ ի վերայ վիմի հաւատոյ։ Ի տաճարի սրբութեան քո զոր հիմնեցուցեր ի վերայ վիմի հաւատոյ։ ... Որ հաստատեր բանիւ զեկեղեցի քո Քրիստոս ի վերայ առաքելական վիմի։ ... Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր զքո սուրբ զեկեղեցի". և այլն։ Այլ ի խառն այսքանեաց մեկնութեանց չէ իսկ մարթ հաւաստի ինչ հաստատել։ — Բ. Այս ոչ տուչութիւն փականացն առաւել

ինչ գործ. քանզի Հարք իմանան այնու առանձեալ եկեղեցւոյ ի Հռիփսիմեայ յանձին Պետրոսի զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ. վասն որոյ ոչ առանձին ինչ իշխանութիւն էր այն Պետրոսի, այլ առաքելոյ առ հասարակ։ Հիման և փականաց այլաբանութեամբ, թէ շատ, իմանալի է զայն՝ զի ի ձեռն Պետրոսի սկսանելոց էր դարձ հրէից և հեթանոսաց, և նա ինքն բանալոց էր զդուռն եկեղեցւոյ փակեալ ցայնվայր հեթանոսաց։

Պե. — ա. Այլ և այլ մեկնութիւնն զայնոսիկ ի վերայ տերունական բանին ետուն Հարք, առանց մերժելոյ զնկարագրական և զնախկին իմաստ նորին, որով Հռիփսիմեա երևեալ եկեղեցւոյ իբրեւ կացոյց հիմն երևելի զՊետրոս, վասն որոյ և վէմ զնա անուանեաց։ Եւ զայս մեկնութիւն նոքին իսկ պարագլուխք բանականաց աղանդաւորաց, և այլք ի նորագանդից ընդունին արդ. զի կարի բացայայտ ի կարգէ բանիցն Քրիստոսի է ի միտ առնուլ. և Հարք առհասարակ չորից առաջնոց դարուցն հաստատեն զայն։ Իսկ որ զհետ նոցա կացին Հարք, առանց երբեք մերժելոյ զայն իմաստ, յաւելին ընդարձակել զիշխանութիւն առաքելական հնորհի՝ եկեղեցիս, վասն որոյ և հիմունս կոչել նոցա երկրորդաբար ընդ նախնական վիմին՝ որով զմիութիւն եկեղեցւոյ հաստատեն։ Որպէս և կէսք ի նոցանէ զվէմն և ի Քրիստոս յարեն, առ ի ցուցանել զսկիզբն հաստատութեան՝ զոր Պետրոս ընկալաւ ի Քրիստոսէ ի նախնական վիմէն։

Օնոյն և Հարք հինգերորդի և վեցերորդի դարուն զհաւատան Պետրոսի իմանալով վէմ, առաւել ևս հաստատեն զնկարագրական և զնախկին իմաստ բանին. զի Պետրոսի էր դաւանութիւնն, և ի վերայ դաւանութեան նորա հիմնեալ եկեղեցի, որպէս սուրբն Ամբրոսիոս ասէ. "Քրիստոս ոչ ի վերայ մարմնոյ և ոսկերացն Պետրոսի հիմնեաց զեկեղեցի, այլ ի վերայ դաւանելոյ նորա զաստուածութիւն իւր"։ Օնոյն հաստատեն և բանք Կարեկացոյն մերոյ զոր ածաք ի վերոյ թէ "Ձերն մեր զայս եղ հիմն եկեղեցւոյ իւրոյ՝ ասելով առ նախնին դաւանողն Պետրոս թէ դու քո խոս-

տալանուԹեամբդ ես իբրև վԷմ հաստատուն անշարժ, և ի վերայ այդը վիմի շինեցից զեկեղեցի իմ։,, և այլն։ Եւ Նաթք առ ի ցուցանել զի արիանոսք զհին եկեղեցւոյ Քանացան կործանել ուրանալով զաստուածուԹիւնն Քրիստոսի, ի վերայ այնր դաւանուԹեանն Պետրոսի ասացին հիմնեալ զեկեղեցի, որ ի նոյն միտս յանկի։ Յովհ. ասել զի Նաթք բազում ուրեք վԷմ հաւատոյ զնոյն ինքն զՊետրոս իմանան, որպէս և ի Ը ար. "Ես հին հաւատոյ զմայլեալ անմահական բաժակաւն այսօր բաշխեր ծարաւեաց,,։ "Այսօր վիմին հաւատոյ և Յովհաննու սիրելւոյ ընդ հակառակս ընԹացեալ,,. և այլն. վասն որոյ և նոյն ինքն գարձեալ Յակոբ պատրիարք նահատակն (ի մեն. Լար. պիպ. Կոսա. էջ 736.) ասէ. "Ընդ զայս տեղիս Քստուծոյ՝ (զեկեղեցի) որպէս զտիկին Քստուծոյ կայարան՝ ի վերայ վիմին հաւատոյ հաստատեաց, այսինքն ի վերայ վիմին Պետրոսի... քանզի նա եղև վԷմ հիման եկեղեցւոյ և գլուխ առաքելոց։ Օ՛ի պատշաճ էր վիմին եկեղեցւոյ՝ լինել գլուխ անդամոյն Քրիստոսի. զի նա էր սկիզբն և գլուխն հաւատացողաց ի Քրիստոս, և պատուով Հոխ քան զառաքեալն,,։

— ր. Օ տուչուԹիւն փականաց Նաթք առհասարակ իմանան անձին Պետրոսի, և անտի զգլխաւորուԹիւն իսկ նորա ցուցանեն։ Քանզի Քրիստոս Պետրոսի ասաց Դու ես վէմ, նմա ասաց Ընծայեա զվէմսդ էմ, և նմա ետ փականսքն զիշխանուԹիւն կապելոյ և արձակելոյ, և ի նմանէ ապա ընկալաւ զայն եկեղեցի։ Օ՛ի եկեղեցի չէ ևս էր յայնժամ, այլ յաւուր Պենտեկոստէի սկսաւ. և Քրիստոս ոչ զՊետրոս ընդ իշխանուԹեամբ եկեղեցւոյ, այլ զեկեղեցի ընդ իշխանուԹեամբն Պետրոսի էարկ. քանզի յառաջ քան զմարմին՝ զգլուխն կացոյց, յառաջագոյն զհին եդ և ապա զշինուածն ի վերայ նորա կառոյց. որպէս զի ի գլխոյն մարմինն վարեսցի, և ի հիմանէն զհաստատուԹիւն շինուածն ընկալցի։ Այսն որոյ անտի միուԹիւն եկեղեցւոյ և անսխալուԹիւն և այլ ամենայն բարեմասնուԹիւնք և իշխանուԹիւնք յառաջ գան. որպէս զի ի բառնալ գլխաւորուԹեանն Պետրոսի, անհետանան այս ամենայն։ Ընկալան այո և այլ առաքեալք զիշխանուԹիւն կապելոյ

և արձակելոյ՝ որպէս ունին և արդ ամենայն հովիւք և առաջնորդք եկեղեցւոյ, բայց ոչ ըստ իբրև զՊետրոս՝ի փոխարէն խոստովանութեանն իւրոյ՝ այնպիսեաւ հանդիսական խոստմամբ և տուչութեամբ կամ զօրութեամբ փականաց արքայութեանն Քրիստոսի՝որ առաւելագոյն, մեծագոյն և ընդարձակագոյն ունի զօրութիւն։ Օ՛ի իշխանութիւն փականաց կամ կապելոյ և արձակելոյ՝ի զօրութենէ փականայ՝ գոլով իշխանութիւն հանրական՝ ձգի առ բովանդակ եկեղեցի. այլ ոչ նոյնպէս և իշխանութիւն լոկ կապելոյ և արձակելոյ ըստ ինքեան։ Որպէս ահա և՛ի Թագաւորութեան միւմ՛ են իշխանք և դատաւորք բազումք, որոց է իշխանութիւն դատելոյ, կապելոյ և արձակելոյ, սակայն իշխանութիւն նոցա չէ հանրական և ոչ համահաւասար գերագոյն գլխոյն կամ Թագաւորին. զնոյն իմա և յեկեղեցւոջ որ է Թագաւորութիւն Քրիստոսի՝ և Պետրոս՛ի նման գլուխ և փոխանորդ Թագաւորին Քրիստոսի։

Այլ ոչ այս միայն, այլ և նոյն իսկ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ ըստ ինքեան և ըստ իրաւանց առաջնորդութեան՝ ոչ է հաւասար յամենայն առաջնորդս եկեղեցւոյ։ Այլ ապաքէն եպիսկոպոսաց ամենեցուն և քահանայից է նոյն իշխանութիւն կապելոյ և արձակելոյ, այլ կաթուղիկոսին կամ պատրիարքացն իշխանութիւն գերագոյն է քան զմետրապօլտաց, և մետրապօլտացն քան զարքեպիսկոպոսաց, և նոցայն քան զվարդապետացն և զքահանայից, և այս ըստ իրաւանց առաջնորդութեան՝ այսինքն ըստ դատելոյ, ըստ կապելոյ և արձակելոյ յարտաքին ատենի, կամ ըստ դատելոյ, ըստ պատժելոյ, ըստ բանադրելոյ, ըստ արգելլոյ, ըստ լուծանելոյ, ըստ արձակելոյ և ըստ անօրինելոյ՝ ըստ իրաւանց աթոռոյ։ Օ՛ի ոչ են բանք մեր յայսմ վայրի զիշխանութենէ կապելոյ և արձակելոյ՛ի ներքին ատենի կամ յատենի խոստովանութեան. քանզի ըստ այսմ՝ ոչ միայն ամենայն եպիսկոպոսունք և առաջնորդք, այլ և քահանայք ամենայն զնոյն ունին իշխանութիւն՛ի կարգէ քահանայութեան. որպէս և առաքեալք ամենայն և աշակերտք ըստ այսմ մասին զնոյն ունէին իշխանութիւն՛ի կարգէ անտի քահանայութեան և եպիսկոպոսութեան։

Եւ զարձեալ ոչ ոք ի Նարց յերկեցաց էարկ զմիա-
պետական իշխանութիւն եկեղեցւոյ, այլ ամենեքեան
հաստատեն զայն. որպէս Տերտուղիանոս ասէ (՚ի Կոր-
պիսս գլ. Ժ.) "Յիշեսջիր զփականս նորա. սա Պետ-
րոսի զպետութիւն, և ի ձեռն Պետրոսի եկեղեցւոյ
եթող ,, : Եւ Կիպրիանոս (՚ի Ընդ. հգ.) "Ո՞ւր
գալոց է ... յեկեղեցի, որ մին է, և ի վերայ միոյն՝
որ զփականն ընկալաւ ,, : Եւ Փիրմիլիանոս (՚ի Ընդ.
առ Կիպրիանոս.) "Նստի ի միտ առնուլ է, զի Պետ-
րոսի միայնոյ ասաց Քրիստոս. Օ՞ր արձակիցես յերկ-
րի ,, . և այլն : Եւ սուրբն Ոպտատոս (գիրք Ե.) "Պետ-
րոս եւեթ զփականս արքայութեան երկնից ընկա-
լաւ, առ ի հաղորդել այլոց ,, : Եւ ի Յայտաւուրս
մեր "Պետրոս ... զփականս արքայութեան ընկալաւ,
՚ի գլուխ առաքելոցն սրբոց Հաստատեցաւ՝ լինել նոցա
հրամանատու փոխանակ Քրիստոսի ,, : Եւ Ներսէս
լամբրոնացի (՚ի Ճէնոռ. պատարագէ) . "Երկրորդ յետ
Քրիստոսի զքեզ ուսաք, ով Պետրէ. գլուխ յետ գըլ-
խոյն դու նստար աշակերտելոցս, վէմ հաստատութեան
բնաւիցս զքեզ էարկ՝ ի հիմն տաճարիս ,, :

Ո՝ան որոյ հիման և փականաց այլաբանութեամբ
ոչ միայն իմանալի է՝ զի ի ձեռն Պետրոսի սկսանելոց
էր զարձ հեթանոսաց, և նա ինքն քանալոց էր զդուռն
եկեղեցւոյ ի մուտս նոցա, այլ զի և նովաւ եկեղեցի
առնլոց էր զՀաստատութիւն՝ որպէս շինուած ի հիմա-
նէն, Տէրն իւր Քրիստոս յետ ասելոյ "Եւ ի վերայ
այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ ,, , յաւել. "Եւ դր-
ռունք դժոխոց չնա մի յաղթահարեսցեն ,, : Օ՞նոյն իմա
և զփականաց. զի որ ունին զայն՝ ոչ միայն քանայ զփա-
կեալն, այլ և իշխանութիւն ունի քանալոյ և փակելոյ
միշտ. որպէս յաձախ ի սուրբ գիրս է տեսանել զայն,
նշանակութեամբ իշխանութեան վարեալ. (Գործ. իբ.
22.) "Եւ տայ զփականս Դաւթի, ... իշխեսցէ՝ և
ոչ ոք իցէ որ նմա ընդդէմ դառնայցէ ,, . (Յայտ. ա.
18.) "Ունիմ զփականս մահու և դժոխոց ,, . (Ա. 7.)
"Որ ունի զփականս Դաւթի, բանայ՝ և ոչ ոք է որ
փակէ ,, . և այլն :

Ա՞ռել. գ. — ե. Ա՞րաձել զոչխարս ոչ իրիք իշխա-
նութեան կարէ գոլ նշանակ. զի խրատու է տերունա-

կանն քան ըստ մեկնելոյ Անկեբերանին, և Նարբ առ ամենայն առաքեալս իմանան ասացեալ զայն, մանաւանդ թէ առ ամենայն հովիւս հոգւոց, որպէս և զաւետել նորին տեառն «Շակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս»։ — ՚Բ. Խակ գառամբք և ոչխարօք զժողովուրդն և զերիցունս իմանալ Քրիստոսի անստոյգ իմն է. զի այլք՝ ի Նարց, որպէս և Անդրիլակոս, զկատարեալս և զանկատարս՝ ի հաւատացելոց ասեն իմանալ Քրիստոսի։ Ասն որոյ, թէ շատ, ի դէմս Պետրոսի ասէր զայն Քրիստոս եկեղեցւոյ։

Պե. — ւ. Շրածեն ոչ միայն ինքնին իսկ բերէ ըզնշանակութիւն իշխանութեան, այլ և առաւել՝ ի բարբառ սուրբ գրոց՝ ուր հովիւ կոչին իշխանք. զի որ հովուէն, նովին իսկ իշխէ հօտին։ Ասն տէրունական ոչ խրատու միայն է, այլ և իշխանութեան յայտարար, որպէս զերկոսին իսկ Անկեբերան՝ ի մեկնութեան անդ յարէ՝ ի մի. (Մեկ. Յհ. գիրք ը. Ձառ խը.) «Շպե ցնա Յիսուս. Շրածեա զգառունս իմ։ Նս ընդկը զամենեսեան եթող, և ընդ սա միայն խօսէր։ Ասզի ընտիր էր սա յառաքեալն, և բերան էր աշակերտացն, և գլուխ էր գնդի նոցա. վասն որոյ և Պօղոս Նրուսաղէմ եկանէր յայնժամ՝ տեսանել միայն զՊետրոս։.. Շանդէ նմա զտնտեսութիւն և զիշխանութիւն եղբարց իւրոց։... Խակ ընդկը, ասեն, նախ Յակոբոս ընկալաւ զաթոռն Նրուսաղէմի։ Շ՚ր որս ասեմք՝ եթէ զսա (այսինքն զՊետրոս) տիեզերաց կացոյց առաջնորդ և վարդապետ։... Նս քանզի յոյժ մեծամեծս յայտնեաց նմա, և զամենայն տիեզերս աւանդեաց՝ ի ձեռս նորա, և վկայեաց զսիրոյ նորա՝ որ առաւել մեծ էր քան զընկերացն իւրոց,,։ Ցես և զվկայութիւնս լամբրոնացւոյն և զերջնկացւոյն զոր վերագոյն յառաջ բերաք՝ ի կարգին։ Շպաքէն Նարբ և առ այլ առաքեալս և առ ամենայն հովիւս հովիւս իմանան ասացեալ զբանն զայն Քրիստոսի արածել զոչխարս իւր, այլ ոչ երբեք ժըլմտելով զգլխաւորութիւն Պետրոսի և զհովուապետութիւն։ Զանզի հաստատեալ զայս, և ապա առ այլս տերունեան բանն ընդարձակէն. որոց կոչեցեալ՝ ի հաղորդութիւն հովուական պաշտաման, զնոյն առաւելագոյն սէր առ՝ ի Քրիստոս պահանջին։ Ո՛ի Քրիստոսի

առ ամենայն իսկ առաքեալս ասել՝ "Աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս,, , ոչ ինչ սահանէ զլսաւորութեանն Պետրոսի, զոր չէ օրէն շփոթել ընդ առաքելութեան որպէս յիւրում տեղւոջն ասացաք :

— ԲՈ. Ոչ ոք կարէ ժխտել, զի Քրիստոս՝ ի յանձնելն Պետրոսի զոչխարս և զգառինս՝ յանձնէր նմա բովանդակ զհօտն. և ոչ ընդդեմ ելանէ այսմիկ Ծիսափիլակտեայ մեկնութիւնն, զի՝ ի կատարելոց և յանկատարից բաղկանայ բանաւոր հօտն Քրիստոսի: Այլ ոչ զայն ժխտեմք, զի Պետրոս զդէմս եկեղեցւոյ բերէր յընդունելն՝ ի Քրիստոսէ զիշխանս. այլ բերէր զայն իբրև գլուխ եկեղեցւոյ և իբրև տանուտէր, և ոչ իբրև հրեշտակ և պատգամաւոր :

Աբդ. Դ. — Ե. Արդեօք Քրիստոս իսկապէս խոստացեալ էր Պետրոսի զգլխաւորութիւն (Մտթ. գլ. ԺՁ.), ոչ եւս կարէին առաքեալք վիճել ընդ միմեանս զգլխաւորութենէ, որպէս նոյն աւետարանիչ պատմէ յետոյ. (գլ. Ի.) և ոչ Քրիստոս առ՝ ի խափանել ըզվէճն ասէր. "Ով կամիցի՝ ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեր պաշտօնեայ,, : — Բ. Պատճէն՝ ի հարցանել Քրիստոսի ցառաքեալսն. "Իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ,, . ՝ի գէմս ամենեցուն պատասխանի ետ Պետրոս. "Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ,, : Ա՛ն որոյ որ ինչ Քրիստոս փոխանակ այնր գաւառնէ թեան ընծրհեաց Պետրոսի, ամենեցուն ընծրհեաց : — Գ. Եւ զայս յայտ առնէ նոյն աւետարանիչ՝ ի պատմելն յետոյ (գլ. ԺՁ.) զի Քրիստոս առաքելոց ամենեցուն ասաց. "Ո՛չ որ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս,, , և այլն : — Դ. Ա՛ն որոյ առաքեալք ա առաքեցին՝ ի Սամարիա զՊետրոս և զՅովհաննէս. (Գ. 14) : — Ե. Յակոբոս եկաց եպիսկոպոս եկեղեցւոյն Երուսաղէմի, որ էր մայր ամենայն եկեղեցեաց. և Պօղոս առ գաղատացիս անուանէ զնա նախ քան զՊետրոս (գլ. Բ. 9.) և գլուխ առաքելոց իսկ կոչէ՝ ի շարականս : — Զ. Դարձեալ և Պօղոս եպիսկոպոս եկաց՝ ի Հռոմ, և հաւատարապատիւ համարին զնա Պետրոսի քահանայապետք Հռոմայ. և ինքն յայտնապէս ընդդեմ գարձաւ Պետրոսի Անտիոք, (Գաղ. Բ. 11.) "քանզի զոգ իբրև ստգտեալ ինն էր ,, :

պա. — ա. Պաւղոս եւ Բառնաբաս իմացան թէ ընդդէմ նոցա խորհուրդ արարին հրեայքն, եւ ասացին ցնոսա. Ձեզ էր պարտ նախ խօսել զբան Աստուծոյ. այլ զի մերժէք զայն, եւ ոչ դատիք զձեզ արժանի յաւիտենական կենաց, ահա դառնամք առ հեթանոսս։ Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր, ասելով. Դրի զքեզ ի լոյս հեթանոսաց, եւ եղիցիս ի փրկութիւն մինչեւ ի ծագս երկրի։ Եւ հեթանոսք ուրախ լինէին, եւ փառաւորէին զբան Աստուծոյ. եւ հաւատացին որ էին կարգեալք յաւիտենական կենաց։ Եւ տարածեցաւ բան Տեառն ընդ ամենայն երկիրն։ Եւ հրեայքն գրգռեցին զկանայս պատուականս եւ զգրեալս ի քաղաքին, եւ յարուցին հալածանս ի վերայ Պաւղոսի եւ Բառնաբասի, եւ հանին զնոսա ի սահմանաց իւրեանց։ Եւ նոքա թօթափեցին զհող ոտից իւրեանց ի վերայ նոցա, եւ եկին ի քաղաքն Իկոնիա։ Եւ աշակերտքն լցեալ էին ուրախութեամբ եւ Հոգւով Սրբով։

ԺԴ. ա. Եղեւ ի քաղաքն Իկոնիա, եւ նոքա մտին ի ժողովարանն հրեայոց, եւ խօսեցան այնպէս, զի հաւատացին բազմութիւն հրեայ եւ յունաց։ Եւ հրեայքն որ անհաւատացան, գրգռեցին եւ չարացուցին զհոգիս հեթանոսաց ընդդէմ եղբարցն։ Եւ բազում ժամանակս կային անդ, եւ խօսէին յանդգնութեամբ ի Տէր, որ վկայէր շնորհացն իւրոյ, եւ տայր նշանս եւ սքանչելիս լինել ձեռամբ նոցա։ Եւ ցրուեցաւ բազմութիւն քաղաքին, եւ էին ոմանք ընդ հրեայսն, եւ ոմանք ընդ առաքեալսն։ Եւ յորժամ եղեւ ձգտումն հեթանոսաց եւ հրեայց հանդերձ իշխանաւք իւրեանց, զի նախատեսցեն եւ քարկոծեսցեն զնոսա, գիտացեալ՝ փախեան ի քաղաքսն Լիկաւնիոյ, Լիստրա եւ Դերբէ, եւ ի գաւառսն շրջակայս։ Եւ անդ էին աւետարանելով։

ե. Եւ էր մարդ մի ի Լիստրա տկար ոտիւք, կաղ ի փորոյ մօր իւրոյ, որ երբեք ոչ էր քալեալ։ Սա լուեալ զբանս Պաւղոսի որ խօսէր, եւ նայեցեալ ի նա, տեսեալ թէ հաւատ ունի որ կարասցէ կենդանանալ, ասաց մեծաձայն. Կաց ի վերայ ոտից քոց ուղիղ։ Եւ նա ցատկեալ՝ քալէր։ Եւ ամբոխք տեսեալ զոր արար Պաւղոս, բարձրացուցին զձայն իւրեանց լիկաւնիերէն լեզուաւ, եւ ասացին. Աստուածք նմանեալք մարդկան իջին առ մեզ։ Եւ կոչէին զԲառնաբաս Դիոս, եւ զՊաւղոս Երմէս, վասն զի նա էր առաջնորդ խօսից։ Եւ քահանայապետն Դիոսի որ էր առաջի քաղաքին, ցուլս եւ պսակս ի դրունս բերեալ, կամէր զոհել ընդ ամբոխսն։ Եւ լուեալ առաքելոցն Բառնաբասի եւ Պաւղոսի, պատառեցին զհանդերձս իւրեանց, եւ ելին ի մէջ ամբոխին, աղաղակելով եւ ասելով. Արդարեւ մարդիկ եմք նմանեալք ձեզ, ողորմելիք, զոր դուք կամիք զոհել մեզ։ Եւ ոչ ինչ այլ քարոզեմք, բայց դառնալ ձեզ ի սուտ աստուածոցդ ի կենդանի Աստուած, որ արար զերկինս եւ զերկիր եւ զծով եւ զամենայն որ ինչ ի նոսա է։ Որ ի ժամանակս անցեալս թողոյր զամենայն ազգս երթալ ի ճանապարհս իւրեանց։ Եւ ոչ անվկայ եթող զանձն իւր, բարիս առնելով, եւ տալով յերկնից անձրեւս եւ ժամս պտղաբերս, եւ լնելով զսիրտս մեր կերակրոյ եւ ուրախութեամբ։ Եւ զայս ասելով, հազիւ զսաստեցին զամբոխսն, զի մի զոհեսցեն նոցա։

ի. Եկին ի նոսա հրեայք ի Անտիոքէ եւ ի Իկոնիայ, եւ համոզեցին զամբոխսն, եւ քարկոծեցին զՊաւղոս, եւ քաշեցին զնա արտաքս ի քաղաքէն, կարծելով թէ մեռեալ է։ Եւ շրջապատեալ աշակերտացն կայր անդ, եւ յարուցեալ՝ եմուտ ի քաղաքն, եւ ի միւսում օրն ելանէ հանդերձ Բառնաբասի ի Դերբէ։ Եւ աւետարանեցին քաղաքին, եւ ուսուցին բազումս, եւ դարձան ի Լիստրա եւ ի Իկոնիա եւ ի Անտիոք, զհոգիս աշակերտացն հաստատելով, եւ խրատու լինելով զնոսա մնալ ի հաւատս, եւ զի բազում նեղութեամբ պարտ է մտանել մեզ ի թագաւորութիւն Աստուծոյ։ Եւ կացուցանէին նոցա ի իւրաքանչիւր եկեղեցիս երէցս, եւ աղաւթս արարեալ ընդ պահս, մատուցանէին զնոսա Տեառն, որում հաւատացին։ Եւ անցեալ ընդ Պիսիդիա, եկին ի Պամփիլիա։ Եւ խօսեցան ի Պերգէ զբանն, եւ իջին ի Աթալիա։ Եւ անտի նաւեցին ի Անտիոք, ուստի էին մատնեալ շնորհացն Աստուծոյ ի գործ զոր կատարեցին։ Եւ ժամանեալ եւ ժողովեալ զեկեղեցին, պատմէին զամենայն որ արարին Աստուած ընդ նոսա, եւ զի բացաւ դուռն հաւատոյ հեթանոսաց։ Եւ կային ժամանակս ոչ սակաւս ընդ աշակերտսն։

ԺԵ. ա. Եւ իջեալ ոմանք ի Հրէաստանէ, ուսուցանէին զեղբարսն, եթէ Եթէ ոչ թլփատիք ըստ սովորութեան Մովսիսի, ոչ կարէք կենդանանալ։ Եւ եղեւ ոչ սակաւ հակառակութիւն եւ վիճաբանութիւն Պաւղոսի եւ Բառնաբասի ընդ նոսա։ Եւ կարգեցին զՊաւղոս եւ զԲառնաբաս, եւ զոմանս այլ յեղբարցն ելանել առ առաքեալսն եւ ի ծերսն ի Երուսաղէմ վասն հարցմանցս այսոցիկ։ Եւ նոքա ուղարկեալք ի ժողովոյ՝ անցանէին ընդ Փինիկէ եւ ընդ Սամարիա, պատմելով զդարձ հեթանոսաց, եւ ուրախութիւն մեծ առնէին զամենայն եղբարսն։ Եւ եկեալ ի Երուսաղէմ, ընկալան ի ժողովոյ եւ ի առաքելոցն եւ ի ծերոցն, եւ պատմեցին զամենայն որ արարին Աստուած ընդ նոսա։ Եւ յարուցեալ ոմանք ի հերձուածոյ փարիսեցւոց հաւատացելոց, ասէին թէ պարտ է թլփատել զնոսա, եւ պատուիրել պահել զօրէնս Մովսիսի։ Եւ ժողովեցան առաքեալքն եւ ծերքն տեսանել զբանս զայս։ Եւ մեծ հարցմունք եղեն։ Եւ յարուցեալ Պետրոս ասէ ցնոսա. Արք եղբարք, դուք գիտէք թէ յառաջագոյն աւուրս ընտրեաց Աստուած ի մէնջ, զի հեթանոսք լսիցեն զբան աւետարանին եւ հաւատասցեն։ Եւ Աստուած որ սիրտս գիտէ, վկայեաց նոցա՝ տալով Հոգի Սուրբ նոցա, որպէս եւ մեզ։ Եւ ոչ զատ արար ի մէնջ եւ ի նոսա, սրբելով սրտից նոցա հաւատովք։ Արդ ընդէ՞ր փորձէք զԱստուած, դնել լուծ ի պարանոցս աշակերտացն, զոր ոչ մեք եւ ոչ հարք մեր կարացաք տանել։ Այլ հաւատամք շնորհաւք Տեառն Յիսուսի Քրիստոսի կենդանանալ, որպէս եւ նոքա։ Եւ լռեաց ամենայն բազմութիւն։ Եւ լսէին զԲառնաբասի եւ զՊաւղոսի պատմելոց զամենայն նշանս եւ զսքանչելիս որ արար Աստուած ի հեթանոսս ձեռամբ նոցա։ Եւ յետ լռելոյն նոցա, պատասխանի ետ Յակոբոս եւ ասէ. Արք եղբարք, լուարուք ինձ։ Սիմոն պատմեաց զի նախ զնայր Աստուած այցելուլ հեթանոսաց, առնուլ ի նոցանէ ժողովուրդ անուան իւրոյ։ Եւ ընդ այսոսիկ համաձայնին բանք մարգարէիցն, որպէս գրեալ է. Յետ այսորիկ դարձայց, եւ շինեցից զխորանն Դաւթի անկեալ, եւ զաւերակսն նորոգեցից, եւ հաստատեցից զնա։ Զի խնդրեսցեն զիս մարդիկ որք մնացին, եւ ամենայն հեթանոսք, որոց կոչեցաւ անուն իմ ի վերայ նոցա, ասէ Տէր որ առնէ զայս։ Ծանոյց յաւիտենից զգործս իւր։ Վասն որոյ ես դատեմ, զի մի՛ նեղել զհեթանոսս որ դառնան առ Աստուած, այլ գրել առ նոսա զի ձեռնկալցին ի պղծութենէ կռոցն, եւ ի շնութենէ, եւ ի խեղդամահից, եւ ի նախնեաց արեան։ Զի Մովսէս յառաջագոյն աւուրս ունի ըստ քաղաքաց զքարոզիչս իւր, որ ընթեռնուն զնա ի ժողովարանսն ամենայն շաբաթու աւուր։ Եւ հաճեցաւ առաքելոցն եւ ծերոցն ամենայն եկեղեցւոյն, ընտրել զոմանս ի նոցանէ, եւ առաքել ի Անտիոք ընդ Պաւղոսի եւ ընդ Բառնաբասի, զՅուդա որ կոչեցեալ Բարսաբաս, եւ զՍիղաս առաջնորդս ի մէջ եղբարցն, եւ գրել ձեռամբ նոցա. Առաքեալքն եւ ծերքն եղբարք՝ եղբարցն որ են յԱնտիոք եւ ի Սուրիա եւ ի Կիլիկիա հեթանոսաց, ողջոյն։ Զի լուաք եթէ ոմանք ելեալ ի մէնջ, խռովեցին զձեզ բանիւք, կործանելով զհոգիս ձեր, զորոց ոչ պատուիրեցաք, հաճեցաւ մեզ ժողովեալ զեկեղեցին, ընտրել զոմանս եւ առաքել առ ձեզ հանդերձ մերովք սիրելեաւքն Բառնաբասիւ եւ Պաւղոսիւ, մարդկանց որ մատնեցին զանձինս իւրեանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Առաքեցաք զՅուդա եւ զՍիղաս, եւ նոքա բերանով իւրեանց պատմեսցեն ձեզ զբանս զայս։ Զի հաճեցաւ Հոգւոյն Սրբոյ եւ մեզ, ոչ եւս դնել ի վերայ ձեր ծանրութիւն մեծ, բայց զայսոսիկ որ պիտանի են. զի ձեռնկալջիք ի կռոց պղծութենէ, եւ ի շնութենէ, եւ ի խեղդամահից, եւ ի նախնեաց արեան։ Որոց եթէ պահեսջիք զանձինս, բարի առնիցէք։ Ողջոյն։

ի. Եւ նոքա ուղարկեալք՝ իջին ի Անտիոք, եւ ժողովեալ զբազմութիւնն, ետուն զթուղթն։ Եւ ընթերցեալ՝ ուրախացան ի մխիթարութենէ։ Եւ Յուդա եւ Սիղաս եւ նոքա մարգարէք եղեալ, բազում բանիւ մխիթարեցին զեղբարսն եւ հաստատեցին։ Եւ արարեալ անդ ժամանակս, արձակեցան խաղաղութեամբ ի եղբարցն առ առաքեալսն։ Եւ Սիղաս հաճեցաւ անդ կալ։ Եւ Յուդա միայն գնաց։ Եւ Պաւղոս եւ Բառնաբաս կային յԱնտիոք, ուսուցանելով եւ աւետարանելով զբանն Տեառն ընդ բազումս այլս։

ե. Եւ ասացին ցԲառնաբաս եւ ցՊաւղոս. Դարձցուք եւ այցելցուք զեղբարսն մեր յամենայն քաղաքս, յորս քարոզեցաք զբանն Տեառն, եւ տեսցուք զինչ կան։ Եւ Բառնաբաս կամէր առնուլ եւ զՅովհաննէս որ կոչեցեալ Մարկոս։ Եւ Պաւղոս ոչ կամէր զայնպիսի առնուլ ընդ իւր, որ հեռացեալ էր ի նոցանէ ի Պամփիլիա, եւ ոչ գնաց ընդ նոսա ի գործ։ Եւ եղեւ բարկութիւն, զի հեռացան ի միմեանց։ Եւ Բառնաբաս առեալ զՄարկոս, նաւեցաւ ի Կիպրոս։ Եւ Պաւղոս ընտրեաց զՍիղաս, եւ ելեալ գնաց, մատնեալ շնորհացն Աստուծոյ ի գործ զոր կատարեցին։ Եւ անցեալ ընդ Սուրիա եւ ընդ Կիլիկիա, հաստատէր զեկեղեցիսն։

ԺԶ. ա. Եւ եկն ի Դերբէ եւ ի Լիստրա։ Եւ ահա աշակերտ մի էր անդ, անուն Տիմոթէոս, որդի կնոջ հաւատացելոյ հրեայի, եւ հօր հեթանոսի։ Եւ վկայէին նմա եղբարքն որ ի Լիստրա եւ ի Իկոնիա։ Եւ կամէր Պաւղոս զնա ընդ իւր ելանել։ Եւ առեալ՝ թլփատեաց զնա վասն հրեայսն որ էին ի տեղիսն։ Զի ամենեքին գիտէին զհայրն նորա թէ հեթանոս էր։ Եւ անցանէին ընդ քաղաքս, աւանդէին նոցա պահել զկանոնս որ էին կարգեալք ի առաքելոցն եւ ի ծերոցն որ էին յԵրուսաղէմ։ Եւ հաստատեալ էին եկեղեցիքն ի հաւատս, եւ աճէին ի թիւ յամենայն աւուրս։

ե. Եւ անցեալ ընդ Փռւգիա եւ ընդ Գաղատացւոց աշխարհ, արգելեալ էին ի Հոգւոյն Սրբոյ խօսել զբանն յԱսիա։ Եւ եկեալ ընդդէմ Միսիոյ, կամէին երթալ ի Բիւթանիա, եւ ոչ եթող զնոսա Հոգի Յիսուսի։ Եւ անցեալ ընդ Միսիա, իջին ի Տրովադա։ Եւ տեսիլ գիշերի երեւեցաւ Պաւղոսի, այր մակեդոնացի կայր եւ աղաչէր զնա եւ ասէր. Անցեալ յՄակեդոնիա՝ օգնեա մեզ։ Եւ իբրեւ տեսիլն տեսաւ Պաւղոս, անդէն ելաք խնդրել ելանել յՄակեդոնիա, հաստատեալ թէ կոչեաց զմեզ Աստուած աւետարանել նոցա։ Եւ նաւեցեալ ի Տրովադայ, ուղղեցաք ընդ Սամոթրակէ, եւ յաջորդումն ի Նեապոլիս, եւ անտի ի Փիլիպպէ, որ է քաղաք առաջին մասին Մակեդոնիոյ, գաղութ։ Եւ էաք ի քաղաքին զաւուրս ոմանս։ Եւ ի շաբաթու աւուրն ելաք արտաքս ի քաղաքէն առ գետակն, ուր կարծէաք աղաւթս լինել։ Եւ նստեալ՝ խօսէաք ընդ կանայսն որ ժողովեալ էին։ Եւ կին մի անուն Լիդիա, ծախու ծիրանեաց քաղաքի Թիատիրացւոյ, երկրպագու Աստուծոյ, լուեալ՝ Տէր բացաւ սիրտ նորա ուշադրել զբանսն որ ասէին Պաւղոսի։ Եւ մկրտեցաւ եւ տունն նորա ամենայն, եւ աղաչեաց զմեզ եւ ասէ. Եթէ հաւատարիմ Տեառն զիս դատեցարուք լինել, մտեալ բնակեցարուք ի տան իմում։ Եւ ստիպեաց զմեզ։

ի. Եղեւ երթալ մեզ ի աղաւթս, աղախին մի ունէր ոգի վհուկ, որ մեծ շահ ետ տիրոջ իւրոյ գուշակութեամբ։ Սա հետեւեալ Պաւղոսի եւ մեզ, գոչէր եւ ասէր. Մարդիկ սոքա ծառայք են Աստուծոյ բարձրելոյ, որ աւետարանեն մեզ զճանապարհ կենաց։ Եւ այս արարեալ բազում աւուրս, դարձաւ Պաւղոս, եւ ասէ ցոգին. Հրամայեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել յնմանէ։ Եւ ել նոյն ժամու։ Եւ տեսեալ տէրանց նորա թէ ելանէ յոյս շահուց նոցա, կալան զՊաւղոս եւ զՍիղաս, եւ քարշեցին զնոսա ի հրապարակ առաջի իշխանացն, եւ մատուցին զնոսա առաջի հրամանատարացն, եւ ասացին. Զայրացուցանեն զքաղաքս մեր հրեայքս սոքա, եւ աւետարանեն սովորութիւնս զոր ոչ պարտ է մեզ առնուլ եւ կատարել, զի հռոմայեցիք եմք։ Եւ յարուցին ամբոխք ընդդէմ նոցա, եւ հրամանատարքն պատառեցին զհանդերձս նոցա, եւ հրամայեցին գաւազանահարել զնոսա։ Եւ ածեալ զբազում հարուածս ի վերայ նոցա, արկին ի բանտ, պատուիրեալ բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա։ Որ ընկալեալ զպատուէր այսպիսի, արկ զնոսա ի խորագոյն բանտն, եւ զոտս նոցա ի կապանս ամրացոյց։ Եւ կէս գիշերի Պաւղոս եւ Սիղաս աղաւթս առնէին, եւ օրհնէին զԱստուած։ Եւ կալանաւորքն լսէին զնոսա։ Եւ յանկարծ երկրաշարժ եղեւ մեծ, եւ սասանեցան հիմունք բանտին, եւ ամենայն դռնքն բացան անդէն, եւ ամենեցուն կապանքն ի ձեռաց եւ ի ոտից արձակեցան։ Եւ զարթեալ բանտապետն, եւ տեսեալ զդռնս բանտին բացեալս, հանեալ զսուսերն՝ կամէր սպանանել զանձն իւր, կարծելով թէ փախեան կալանաւորքն։ Եւ Պաւղոս կոչեաց մեծաձայն եւ ասէ. Մի՛ արասցես քեզ չարիս, զի ամենեքեան աստ եմք։ Եւ խնդրեալ լոյս՝ եմուտ, եւ դողդողակ եղեալ՝ անկաւ առ Պաւղոս եւ առ Սիղաս, եւ հանեալ զնոսա արտաքս՝ ասէ. Տեարք, զի՞նչ արարից զի կեցից։ Եւ նոքա ասեն. Հաւատա՛ Տեառն Յիսուսի Քրիստոսի, եւ կեցցես դու եւ տունդ քո։ Եւ խօսեցան ընդ նմա զբանն Տեառն, եւ ընդ ամենայն որ էին ի տան նորա։ Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիշերի, լուաց զհարուածս նոցա, եւ մկրտեցաւ ինքն եւ ամենայն որ ի տան նորա անդէն։ Եւ ածեալ զնոսա ի տուն իւր, սեղան եդ առաջի նոցա, եւ ուրախ լինէր հանդերձ ամենայն տանն իւրում, հաւատացեալ Աստուծոյ։ Եւ ընդ առաւօտն առաքեցին հրամանատարքն զհետեւակսն, ասելով. Արձակեցէ՛ք զմարդիկ զայնոսիկ։ Եւ բանտապետն պատմեաց զբանսն զայս Պաւղոսի, եթէ առաքեցին հրամանատարքն զի արձակեսցին։ Արդ ելէք, գնացէ՛ք խաղաղութեամբ։ Եւ Պաւղոս ասէ ցնոսա. Զծեծ հրապարակաւ մեզ արարեալ, անպատուեալ, մարդ հռոմայեցի, արկին ի բանտ, եւ արդ ծածուկ հանեն զմեզ։ Ո՛չ այդպէս, այլ եկեսցեն իւրեանք եւ հանցեն զմեզ։ Եւ պատմեցին հետեւակքն զբանսն զայս հրամանատարացն։ Եւ երկեան լուեալ զի հռոմայեցիք են։ Եւ եկեալ՝ աղաչեցին զնոսա, եւ հանեալ՝ խնդրէին զնոսա ելանել ի քաղաքէն։ Եւ ելեալ ի բանտէն՝ մտին առ Լիդիա, եւ տեսեալ զեղբարսն՝ մխիթարեցին զնոսա, եւ գնացին։

ԺԷ. ա. Եւ անցեալ ընդ Ամփիպողիս եւ ընդ Ապողոնիա, եկին ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողովարան հրեայոց։ Եւ Պաւղոս ըստ սովորութեան իւրում մտեալ առ նոսա, երից շաբաթու աւուրց խօսէր ընդ նոսա ի գրոց, բանայ եւ ցուցանէ, եթէ զՔրիստոս պարտ էր չարչարել եւ յարուցանել ի մեռելոց, եւ եթէ Սա է Քրիստոս Յիսուս, զոր ես քարոզեմ ձեզ։ Եւ ոմանք ի նոցանէ հաւատացին, եւ միացան Պաւղոսի եւ Սիղասի, եւ ի պաշտաւնեայսն բազում հեթանոսաց, եւ կանայք ոչ սակաւ։ Եւ հրեայքն նախանձեցան, եւ առեալ ընդ իւրեանս ոմանս ի չարագործ մարդկանէ, եւ ժողովեալ ամբոխ, խռովեցին զքաղաքն, եւ յարձակեալ ի տունն Յասոնի, խնդրէին զնոսա հանել առ ժողովուրդսն։ Եւ մինչդեռ չգտին զնոսա, քարշեցին զՅասոն եւ զոմանս եղբարցն առաջի իշխանացն քաղաքի, աղաղակելով եւ ասելով. Զայնոսիկ որ զամենայն տիեզերս խռովեցին, եկին եւ աստ, զորս ընկալաւ Յասոն, եւ ամենեքեան հակառակ հրամանացն Կեսարու գործեն, ասելով թէ թագաւոր է մեր Յիսուս։ Եւ խռովեցան ամբոխքն եւ իշխանքն քաղաքի լուեալ զայս։ Եւ առեալ զհամարս ի Յասոնէ եւ ի միւսոցն, արձակեցին զնոսա։ Եւ եղբարքն անդէն զգիշերն արձակեցին զՊաւղոս եւ զՍիղաս ի Բերիա։ Որ եկեալ անդ՝ մտին ի ժողովարանն հրեայոց։ Եւ էին սոքա ազնուագոյնք քան զհրեայսն որ էին ի Թեսաղոնիկէ, որ ընկալան զբանն ամենայն մեծաւ ախորժակաւ, քննելով զգրոցն զամենայն աւուրս, եթէ այսպէս էր։ Եւ բազումք ի նոցանէ հաւատացին, եւ ոչ սակաւ ի պատուականաց հեթանոսաց կանանց եւ արանց։ Եւ յորժամ գիտացին հրեայքն որ էին ի Թեսաղոնիկէ, եթէ եւ ի Բերիա քարոզեցաւ բան Աստուծոյ ի Պաւղոսէ, եկին եւ անդ՝ խռովեցուցանելով զամբոխսն։ Եւ անդէն եղբարքն արձակեցին զՊաւղոս, երթալ մինչեւ ի ծով։ Եւ Սիղաս եւ Տիմոթէոս անդ մնացին։ Եւ որ զՊաւղոս տանէին, հասին մինչեւ յԱթենս, եւ առեալ պատուէր առ Սիղաս եւ առ Տիմոթէոս, զի եկեսցեն առ նա շուտով, ելին։

ի. Եւ մինչդեռ Պաւղոս ակնկալէր զնոսա յԱթենս, խռովէր հոգի նորա ի նա, տեսեալ զքաղաքն լի կռամբք։ Եւ խօսէր ընդ հրեայսն եւ ընդ պաշտաւնեայսն, եւ յամենայն աւուր ընդ հանդիպելոցսն ի հրապարակի։ Եւ ոմանք ի փիլիսոփայից էպիկուրեանց եւ ստոյիկեանց խօսէին ընդ նմա։ Եւ ոմանք ասէին. Զի՞նչ կամի ասել բանբասն այս։ Եւ այլք ասէին. Աստուածոց օտարաց թուի աւետարանիչ լինել, զի զյարութիւն եւ զկեանս աւետարանէր նոցա։ Եւ առեալ զնա՝ տարան ի Մարսի բլուրն, եւ ասէին. Կարասցուք գիտել զայդ նոր վարդապետութիւն զոր դու խօսիս։ Զի զանծանօթս ինչ ինչ ածես ի լսելիս մեր, կամիմք գիտել զինչ կամին այդ ասել։ Եւ ամենայն Աթենացիք եւ օտարականք որ անդ էին, զոչ ինչ ժամանակ ունէին այլ եթէ խօսել եւ լսել զնորագոյնսն։ Եւ կայեալ Պաւղոս ի մէջ Մարսի բլրոյն, ասէ. Արք Աթենացիք, ամենայնիւ զձեզ տեսանեմ իբրեւ զաստուածասէրս։ Զի անցեալ եւ տեսի զպաշտամունս ձեր, եւ գտի սեղան ուր գրեալ էր. Անծանօթ Աստուծոյ։ Զոր ուրեմն դուք անգիտանալով պաշտէք, զայն ես աւետարանեմ ձեզ։ Աստուած որ արար զերկինս եւ զերկիր եւ զամենայն որ ինչ ի նոսա է, նա որ Տէր է երկնից եւ երկրի, ոչ ի տաճարս շինեալս ձեռամբ բնակէ, ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ զինչ կարօտ ինչ, նա որ տայ ամենեցուն զկեանս եւ զշունչ եւ զամենայն։ Եւ արար յարենէ մի ամենայն ազգ մարդկան բնակել ի վերայ ամենայն երեսաց երկրի, եւ որոշեաց զժամանակս եւ զսահմանս բնակութեան նոցա, փնտռել զԱստուած, եթէ արդարեւ շօշափեսցեն եւ գտցեն զնա, եւ թէպէտ ոչ հեռի է յամենեցունց ի մէնջ։ Զի նովաւ կեցուցանեմք եւ շարժիմք եւ եմք, որպէս եւ ոմանք ի ձերոց բանաստեղծացն ասացին. Զի եւ ազգ նորա եմք։ Արդ եթէ ազգ Աստուծոյ եմք, մի՛ կարծիցուք նման լինել Աստուծոյ ոսկւոյ եւ արծաթոյ եւ քարանց, կերպարանաց արուեստից եւ մտաց մարդկան։ Զամս ուրեմն զայս անգիտութեան անտես արարեալ Աստուած, այժմ պատուիրէ մարդկան ամենայն տեղեաց ապաշխարել, զի եդ աւուր զոր յարուցանիցէ զաշխարհ արդարութեամբ, ի մարդոյ միոյ զոր կարգեաց, հաւատս տուեալ ամենեցուն՝ յարուցեալ զնա ի մեռելոց։ Եւ լուեալ զյարութիւն մեռելոց, ոմանք ծաղր առնէին, եւ ոմանք ասէին. Լուիցուք զայդ եւս ի քէնջ։ Եւ այսպէս Պաւղոս ելանէր ի մէջ նոցա։ Եւ ոմանք արանց հաւատացեալ միացան նմա, ի նոսա եւ Դիոնէսիոս Արիոպագացի, եւ կին մի անուն Դամարիս, եւ այլք ընդ նոսա։

ԺԸ. ա. Ապա ելեալ Պաւղոս ի քաղաքէն Աթենացւոց, եկն ի Կորնթոս։ Եւ գտեալ զոմն հրեայ անուն Ակեղա, ազգաւ Պոնտացի, որ նոր եկեալ էր յԻտալիայ, եւ զԱքեղա կին նորա, վասն զի հրամայեաց Կղավդիոս կայսր երթալ զամենայն հրեայսն ի Հռոմայ։ Եւ եկեալ առ նոսա, եւ վասն զի նոյն արհեստ էր ընդ նոսա, եւ բնակէր ընդ նոսա, եւ գործէին, զի էին նոքա վրանագործք արհեստիւ։ Եւ խօսէր յամենայն շաբաթու աւուրս ի ժողովարանին, եւ համոզէր զհրեայսն եւ զհեթանոսսն։ Իբրեւ եկին ի Կորնթոս Սիղաս եւ Տիմոթէոս ի Մակեդոնիայ, ամենայնիւ զբաղէր Պաւղոս ի բանին, վկայելով հրեայսն թէ Յիսուս է Քրիստոս։ Եւ ընդդիմացեալ նոցա եւ հայհոյելով, թօթափեաց զհանդերձս իւր, եւ ասէ ցնոսա. Արիւն ձեր ի գլուխ ձեր, ես անմեղ եմ, յայսմհետէ առ հեթանոսս երթիցեմ։ Եւ անցեալ անտի, եկն ի տուն մարդոյ մի անուն Տիտոս Յուստոս, երկրպագու Աստուծոյ, որոյ տունն կից էր ժողովարանին։ Եւ Կրիսպոս իշխան ժողովարանին հաւատաց Տեառն հանդերձ ամենայն տանն իւրում, եւ բազումք ի կորնթացւոց լուեալ հաւատային եւ մկրտէին։ Եւ ասաց Տէր տեսիլ գիշերի Պաւղոսի. Մի՛ երկնչիր, այլ խօսեա՛ եւ մի՛ լռեր, վասն զի ես եմ ընդ քեզ, եւ ոչ ոք հասանիցէ քեզ չարչարել զքեզ, զի ժողովուրդ բազում է ինձ յայսմ քաղաքի։ Եւ նստաւ անդ ամիսս տասն եւ վեց, ուսուցանելով ի նոսա զբանն Աստուծոյ։

ե. Եւ Գալիոն ընդ Աքայիա կալեալ, յարուցին հրեայքն միաբան ընդդէմ Պաւղոսի, եւ տարան զնա առաջի դատաստանին, ասելով. Զայս մարդ համոզէ զմարդիկ պաշտել զԱստուած հակառակ օրինացն։ Եւ Պաւղոս սկսեալ խօսել, ասէ ցհրեայսն. Եթէ ինչ անիրաւութիւն կամ չարիք գործ էր, ո՛ հրեայք, հանդուրժէի ձեզ ըստ արդարոյ, բայց եթէ հարցմունք են ձեր ի բանի եւ ի անուանս եւ ի հրեշտակս ձեր, դուք տեսէք, զի ես ոչ կամիմ դատաւոր լինել այսպիսեաց բանից։ Եւ հալածեաց զնոսա յատեանէն։ Եւ ամենեքեան կալեալ զՍոսթենէս զիշխան ժողովարանին, զարկանէին առաջի յատենին։ Եւ Գալիոն ոչ ինչ հոգայր։

ի. Եւ Պաւղոս դեռ բազում աւուրս կայր անդ, եւ ապա զեղբարսն առեալ՝ նաւեցաւ ի Սուրիա, եւ ընդ նմա Պրիսկիլլա եւ Ակեղա, եղեալ նմա զխուրձ գլխոյ, զի ուխտ ունէր։ Եւ եկն ի Կենքրէա, եւ անտի ելեալ ի Երուսաղէմ, եւ ասէ. Տօնս պարտ է ինձ առնել որ գայ ի Երուսաղէմ։ Եւ դարձեալ եկեալ ի Կորնթոս, եւ անտի ելեալ ի Փռւգիա եւ ի Գաղատացւոց աշխարհ, եւ ի Միսիա, եւ ի Տրովադա, եւ ի Նեապոլիս, եւ ի Փիլիպպէ, եւ ի Թեսաղոնիկէ, եւ ի Բերիա, եւ ի Դերբէ, եւ ի Լիստրա, եւ ի Իկոնիա, եւ ի Պիսիդիա, եւ ի Պամփիլիա, եւ ի Պերգէ, եւ ի Աթալիա, եւ անտի նաւեցաւ ի Սուրիա, եւ ի Կիլիկիա, եւ ի Կիպրոս, եւ ի Սամոս, եւ ի Միլետոս, եւ ի Քոս, եւ ի Ռոդոս, եւ ի Պատարա, եւ ի Տիւրոս, եւ ի Պտղոմայիս, եւ ի Կեսարիա, եւ ի Երուսաղէմ։ Եւ ելեալ ի ժողովն, եւ ողջունեալ զեղբարսն, իջին ի Անտիոք։ Եւ անցեալ անդ ժամանակս, ելեալ գնաց։ Եւ շրջեցաւ ընդ Գաղատացւոց աշխարհ եւ ընդ Փռւգիա, զամենայն աշակերտսն հաստատելով։

ԺԹ. ա. Եւ եղեւ ի Կորնթոս Պաւղոսի, եւ անցեալ ընդ վերնայարկսն, եկն ի Եփեսոս, եւ գտեալ զոմանս աշակերտս, ասէ ցնոսա. Հաւատացեալք էիք ի Հոգին Սուրբ։ Եւ նոքա ասեն. Ո՛չ եթէ լուաք եթէ Հոգի Սուրբ է։ Եւ նա ասէ. Ընդէ՞ր ուրեմն մկրտեցարուք։ Եւ նոքա ասեն. Ի մկրտութիւն Յովհաննու։ Եւ Պաւղոս ասէ. Մկրտեաց Յովհաննէս մկրտութեամբ ապաշխարութեան, ասելով ցժողովուրդն զի հաւատասցեն զի որ զետեւ նորա գայ, զայն է Յիսուս Քրիստոս։ Եւ լուեալ՝ մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի։ Եւ դնելով Պաւղոս զձեռս ի վերայ նոցա, եկն Հոգի Սուրբ ի նոսա, եւ խօսէին լեզուաւք եւ մարգարէանային։ Եւ էին ամենեքեան իբրեւ տասն եւ երկու արանց։ Եւ եմուտ ի ժողովարանն, եւ խօսէր համարձակութեամբ ամիսս երիս, վիճաբանելով եւ համոզելով զնոսա զբանն Աստուծոյ։ Եւ ոմանք խստանային եւ ոչ հաւատային, հայհոյելով զճանապարհն առաջի ամբոխին։ Եւ հեռացեալ ի նոցանէ, զատոյց զաշակերտսն, եւ ամենայն աւուր խօսէր ի դպրանոցի Տիրաննոսի։ Եւ եղեւ այս երկամեայ ժամանակաւ, մինչեւ ամենեքեան որ բնակէին ի Ասիա լուան զբանն Տեառն Յիսուսի, հրեայք եւ հեթանոսք։ Եւ զօրութիւնս ոչ սակաւս արարեալ Աստուած ձեռամբ Պաւղոսի, մինչեւ եւ ի մարմնոյ նորա վերարկուս եւ գոտիս տանէին ի հիւանդսն, եւ հեռանային ի նոցանէ ախտք նոցա, եւ ոգիք չարք ելանէին ի նոցանէ։

ե. Եւ ոմանք ի շրջելոց հրեայ կռտորողացն հանդգնեցան կոչել զանուն Տեառն Յիսուսի ի վերայ նոցա որ ունէին ոգիս չարս, ասելով. Երդուանամ զձեզ զՅիսուս զոր Պաւղոս քարոզէ։ Էին որդիք Սկեւայի հրեայի քահանայապետի եւ այսպէս առնէին։ Եւ պատասխանի ետ ոգին չարն եւ ասէ. ԶՅիսուս գիտեմ, եւ զՊաւղոս ծանեայ, դուք ո՞վ էք։ Եւ ընդ նոսա ցատկեալ մարդն որ ունէր զոգին չարն, եւ յաղթեալ երկոցունց, զօրացաւ ի վերայ նոցա, մինչեւ մերկացեալ եւ վիրաւորեալ փախեան ի տանէն յայնմանէ։ Եւ լուեալ այս ամենայնի հրեայ եւ հեթանոս բնակչաց Եփեսոսի, եղեւ երկիւղ ի վերայ ամենեցուն, եւ մեծացաւ անուն Տեառն Յիսուսի։ Եւ գային բազումք ի հաւատացելոցն, եւ խոստովանէին եւ յայտնէին զգործս իւրեանց։ Եւ ոմանք ի կախարդացն ժողովեալ զգրոցս իւրեանց, այրէին առաջի ամենեցուն, եւ գնահատեցին զարժէսն նոցա, եւ գտին արծաթոյ հազարս հնգիսուն։ Այսպէս զօրութեամբ Տեառն աճէր բանն եւ զօրանայր։

զ. Եւ յետ այսորիկ լցեալ էր Պաւղոս ի

ահ էր՝ այլ գլուխ եօթանասուն և երկուց աշակերտացն Քրիստոսի, որ և նոքա ՚ի Հարց անխտիր առաքեալք անուանին, զորս և Պօղոս իսկ առաքեալս անուանէ յաւետեն. (Բ. Կոր. ԺԲ. 7.) "Եւ ապա երևեցաւ Յակոբոսի, ապա առաքելոցն ամենեցուն ,,: Նոյն միտս և ՚ի շարականս մեր ասի. "Սա եղև գլուխ առաքելոց սրբոց ,,. քանզի գլուխ էր եօթանասնից: Երուսաղէմացի եկեղեցին մայր կոչի եկեղեցեաց, որպէս երիցագոյն ժամանակաւ և ոչ ըստ աստիճանի. զի ըստ այսմ մինչև ՚ի ժողովն Նիկիական ընդ իշխանութեամբ Կեսարացւոյ եպիսկոպոսապետին էր, և առ ՚ի մեծարանս եւեթ զջորրորդ տեղին ՚ի պատրիարքական աթոռս կալաւ:

Նոքա յառաջ և զինի գասել զանուանս առաքելոց՝ ոչ միշտ կարգի աստիճանաց է նշանակ. ապա թէ ոչ, չէր մեզ հարկ երկարել զբանս՝ այսու եւեթ շատ համարեալ ցուցանել զգլխաւորութիւն Պետրոսի, զի ամենայն ուրեք յաւետարանս նախ քան զայլ առաքեալս անուանի: Ընդանադ ՚ի պատմականս մերմէ մին և մերմէ միւսն յառաջ կարգի անխտիր. որպէս ՚ի գործսն (ԺԵ. 2. 22.) Պօղոս նախ յիշատակի քան զՆառնաբաս. և ապա (՚ի 12. 25.) Նառնաբաս նախ քան զՊօղոս: Նոյպ Պօղոսի աստանօր զՅակոբոս նախ քան զՊետրոս գասելոյ պատճառս մարմէ է համարել, զի որպէս եպիսկոպոս աթոռոյն Երուսաղէմի և ազգակից Քրիստոսի՝ ծանօթագոյն էր և գերահամբաւեալ առ Հրեայս, վասն որոյ և վկայութիւն նորա արժանահաւատ առնոսին իսկ սուտ առաքեալս: Նոյպ հինմերկնչիք և Ոսկեբերան զվեփաս յառաջ գասեն քան զՅակովբոս:

— Ջ. Պօղոս եպիսկոպոս եկաց ՚ի Հռոմ որպէս գործ ծակից Պետրոսի յամենայնի, վասն որոյ և քահանայապետք Հռոմայ հաւասար երկաքանչիւրոցն ընծայեն պատիւ, ոչ զի հաւասար իշխանութիւն էր նոցա, այլ զի երկաքանչիւրոցն քրտամբ և արեամբ ոռոգեալ եկեղեցի Հռոմայ բարգաւաճեաց:

Եւ ընդդէմ գառնալ Պօղոսի, սատրնագունին առ վերնագոյնն, ոչ ինչ ստնանել գլխաւորութեանն Պետրոսի: Օ՛ի եթէ ստնանէր, զնոյն գարձեալ երկրորդեմք՝ զի հարկ էր վերագոյն զՊօղոս քան զՊետրոս

համարել, որ ոչ ումեք է ընդունելի։ Արդեաք թէ պէտ և անսխալք՝ ի վարդապետութեան և՝ ի հոգւոյն սրբոյ առաջնորդեալք՝ ի գլխաւոր գործս պաշտամանն իբրեանց, բայց ոչ ինքեանք և ոչ վարդապետք եկեղեցւոյ համարեցան քնաւ՝ թէ անվրիպելիք էին յիւրաքանչիւր առանձին գործս, մանաւանդ ուր տեղեկութեան պէտք էին հանգամանաց իրացն։ Այսպէս որոյ և առնոսա գոյր տեղի տարաձայնութեան կարծեաց, և գժտութեան իսկ՝ որպէս եղև ընդ Բառնաբաս և ընդ Պօղոս. (Գործ. ԺԵ. 39)։ Այլ չեն ինչ զարմանք երկոցունց ամփոփն հաւատոյ տարաձայնութիւն, որ հանդոյն իմն է հակառակութեանն այնմիկ՝ զոր հրեշտակն Գաբրիէլ յայտնեաց Դանիէլի՝ լեալ՝ ի միջ երկուց գերագոյն հրեշտակացն, Միքայելի իշխանին Իրէից, և միւսոյն՝ որ իշխան էր Պարսից, (Դան. Ժ. 13)։ Ոչ ի անդ երկաքանչիւրոցն տեղեկացեալ զկամս Աստուծոյ՝ միաբանեցին՝ ի նպաստ Իրէից, զնոյն և առ տեղեկացեալ Պետրոսի՝ միաբանեաց՝ ի կողմն հեթանոսաց։

Գործ. Ե. — ա. Արդ մեծն Լեւն, և այլք՝ ի քահանայապետացն Հռովմայ առաւելութիւն ինչ ետուն Պետրոսի քան զայլ առաքեալս, արդասիս համարելի և զայն ըղձից՝ որով ամենայն ոք յեպիսկոպոսաց ջանայ զիրաւունս աթոռոյ իւրոյ ընդարձակել։ — բ. Այլ ոչ՝ ի մեծարանաց բանից, որովք Հարք գլխաւորութիւն ընծայեն Պետրոսի, օրէն է համարել զայն ընդ մասունս հաւատոյ. մանաւանդ զի ընդունելի է ամենեցուն հաւատարութիւն առաքելոցն ըստ նեբբին իշխանութեան՝ որով ոչ ոք՝ ի նոցանէ քան զայլս առաւելեալ, — գ. և զի Պետրոսի առաւելութիւնն արտաքին ինչ ևեթ էր։

Պե. — ա. Ել առանց անհրաւելոյ՝ ի քահանայապետս Հռովմայ, մարթ է արդասիս փառասիրութեան նոցա ամենեցուն համարել՝ ոչ միայն զբանս որ յաղագս գլխաւորութեանն Պետրոսի, այլ և զգործս նոցա ըստ այնմ իրաւանց գործեցեալս։ Այլ եթէ արդարև ոչ ըստ իրաւանց էին, բազումքն ընդդէմ նոցա այլք եպիսկոպոսաց, մանաւանդ արևելեայք՝ վրէժխնդիրք իրաւանց աթոռոյ իւրեանց։ Ընդդէմ ոչ միայն չբողոքեցին, այլ

և ՚ի տիեզերական ժողովս իսկ ընկալան զայն և հաս-
տատեցին։ Վասն որոյ ոչ ըստ մեծարանաց բանից Նորց
ամենց գլխաւորութիւն Պետրոսի ընդ մասունս հաւա-
տոյ համարեալ է, այլ ըստ բանից սուրբ գրոց, ըստ
մշտնջենաւոր աւանդութեան, և ըստ սահմանի լատե-
րանեան չորրորդ ժողովոյն, լուգդունեան երկրորդին, և
փլորենտեան ժողովոյ։

— ՚Ի. Գլխաւորութիւն Պետրոսի արդարև արտա-
քին ինչ իշխանութիւն էր ըստ առաքելութեան մա-
սին, յորում ամենայն առաքեալք հաւասար էին, վասն
որոյ և Պետրոս ոչ վարէր ՚ի վերայ նոցա իշխանութիւն։
Նայց Քրիստոս յաւել յառաքելութիւն նորա և զգըլ-
խաւորութիւն, որ վասն եկեղեցւոյ ոչ ևս արտաքին
ինչ էր և պատահական՝ այլ ներքին և էական. զի ա-
ռանց այնորիկ լինել եկեղեցի մարմին անգլուխ, և պա-
կասէր սկիզբն և կերդոն միութեան հակառակ խոր-
հրդոցն Քրիստոսի, և նպատակին՝ վասն որոյ սահ-
մանեաց զգլխաւորութիւն։

Ղուկ. Ջ. — ՚Ի. Քրիստոս յաւելն իւրում "Ո՛ղ
կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս,,, առ ա-
շակերտան խօսի, այսինքն առ հաւատացեալս. և զայս
հաստատէ միւս ևս բանիւն՝ որով կացուցանէ դատա-
ւոր զեկեղեցի. "Ասա Թէ և եկեղեցւոյն ոչ լսիցէ, ե-
ղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր,,. և յայտ
է զի եկեղեցի է ժողով հաւատացելոց։ — ՚Ի. Վասն ո-
րոյ Պետրոս Թէպէտ և ինքնին ընկալաւ զփոխանան,
այլ զի ինքն մնան էր եկեղեցւոյ՝ ՚ի ձեռն եկեղեցւոյ
վարէր զայն. որպէս զի Թէ զտեսողական զօրութիւն որ
յաչսն է՝ շրջէ յոր կողմն և կամի, և եթէ ոտիւքն և ձե-
ռօք գնայ և շօշափէ, բոլոր անձինն է ներգործութիւն։

Պե. — ՚Ի. Քրիստոս առ աշակերտան բարբառի, այս-
ինքն առ առաքեալս և ոչ առ հաւատացեալս. զի ո՞ան-
գիտանայ Թէ սուրբ գիրք աշակերտս կոչեն անխտիր և
զառաքեալս։ Նա զեկեղեցի կացուցանէ դատաւոր և ա-
տեան, այսինքն զհովիւս և զառաջնորդս եկեղեցւոյ, և
ոչ զհաւատացեալս. քանզի այսպէս Նորք առհասա-
րակ և մանաւանդ սուրբ Յակեբերան իմանան։ Որ և
՚ի կարգէ բանիցն քաջայայտ է, զի զբանադրանաց են
անդ բանք՝ որ առաջնորդաց է անկ և ոչ հաւատացելոց։

— ԻՆ. Վ. Արիստոսի միապետական զեկեղեցի իւր սահմանեալ, զՊետրոս կացոյց ՚ի նմա պետ՝ առաջնորդել եկեղեցւոյ, և ոչ զեկեղեցի՝ ՚ի առաջնորդեացէ նմա. և այս քաջայայտ յայլոց ևս նմանութեանց է՝ որովք զգըլխաւորութիւն Պետրոսի եցոյց։ Վասնզի շինուածոյ նմա նեցուցանէ զեկեղեցի, և զՊետրոս հիման՝ որ զշինուածն ՚ի վեր ունի. Հօտի նմանեցուցանէ զեկեղեցի, և զՊետրոս հովուի՝ որ իշխէ հօտին։ Արդ եթէ անտեղի է շինուածոյ հաստատուն ունել զհիմն, և հօտի արածել զհովիւն, ապա հարկ է խոստովանել՝ զի ոչ որպէս տեսողական գնացական կամ շօշափական զօրութիւն ՚ի մարդումն, այնպէս էր՛ի Պետրոս գլխաւորութիւն. այլ լուսոյ ՚ի նմա իշխանութիւն որպէս յանձին մարդոյ, որ իւրով ներգործութեամբն վարիցի։

ԳՕԴՈՒԱԾ Բ

Գաղագս գնալոյ Պետրոսի ՚ի Հռոմ, և անդ զարթոյս իւր հաստատելոյ։

Անժխտելի ճշմարտութիւն է գնալ առաքեալապետին ՚ի Հռոմ ՚ի քարոզութիւն աւետարանին, և անդ վըկայութեամբ զկեանս իւր կատարել։ Սակայն որպէս չիք ինչ ՚ի ճշմարտութեանց՝ զոր չլցեն ժխտեալ մոլութեան, մինչև զգայութիւն իսկ գերագոյն էին, այսպէս և ճշմարտութեանս այսմիկ եղեն և են հակառակօղք։ Արդ եթէ աք ՚ի Ս. աղաւաշապատ երթեալ քաղաք, տեսանիցէ անդ մի ըստ միոջէ զամենայն յիշատակարանս սրբոյ Առաքելոյն, զկաթողիկէն՝ուր զկնի Սիամբնին ետես, զվայրս չարչարանաց նորա, զքոր վիրապին տեղի, տեսանիցէ և այլուր ընդ աշխարհն զեկեղեցիս ՚ի վերայ դիւաբնակ մեհենիցն աւերակաց կանգնեալս, զմենաստանացն առ ՚ի նմանէ կառուցելոց և զբովանդակ իսկ կենաց նորա և զմահուն յիշատակս և արձանագրութիւնս, և զհամբերէն ազգի միոյ խոստովանութիւն՝ որ անդստին ՚ի սկզբանէ և այսր Առաքելոյ իւր գնա՛ անհապէ, և յետ այսր ամենայնի հանդիպեացի պիւռհոնականաց ումանց կամ սկեպտիկեանց՝ որ յերկ-

բայս արկանիցեն և կամ քնաւ իսկ չհաւատայցեն Պրիգորի ուրուք լուսաւորչի ՚ի Հայաստան լեալ, որպիսի ինչ խորհիցի զնոցանէ։ Նոյն արժան է խորհել և զայնցանէ, որք զառաքելապետին երթ ՚ի Հռոմ յերկբայս արկանեն. և զնոյն արդարև խորհի, որ երթեալ ՚ի Հռոմ զամբաւ յիշատակարանս նորին գտնիցէ, զխմբարանն կռոց և զամենադիցն մեհեանս ՚ի սրբարանս Ձնմարտին Աստուծոյ փոխեալ, և զքաղաքն՝ սխերիմ խաչեցեալն՝ խաչիւք պարածածկեալ, և զազգ մի կռամոլ՝ որ հայր քրիստոնէութեան իւրոյ և այսոցիկ ամենայնի յեղափոխութեանց առիթ գնա ՚ի սկզբանէ հետէ ձանաչէ և խոստովանի։

Այր աղագաւ զանց զինդրովս արժան էր առնել, ոչ ինչ կարօտ ցուցակութեան զՁնմարտութիւնս զայս համարեալ։ Այլ զի մի սպառսպուռ լռութիւն տեղի տացէ նորազանդիցն օտարամուտ բանսարկութեանց, յաւելցուք ասա համառօտիւ զհաւատիս առաջարկութեանս։

Նախ և առաջին պատմիչք արժանահաւատք վկայեն այսմ։ Եւսեբի ՚ի ժամանակագրութեան իւրում յամին Հռոմայ ՃՂԱ այսպէս արձանագրէ. "Պետրոսի առաքելոյ նախ զանտիոքացւոց եկեղեցին հաստատեալ՝ ՚ի հռոմայեցւոց քաղաքն երթայ, և անդ զաւետարանն քարոզէ. և կայ անդ առաջնորդ ամս ԻԵ,,։ Եւ (՚ի պատ.), "Երեսն ՚ի վերայ ամենայն յանցանացն՝ նախ հալածանս ՚ի վերայ քրիստոնէից յարոյց. առ որով Պետրոս և Պօղոս առաքեալքն ՚ի Հռոմ վկայեցին,,։ Եւ առնմին (՚ի պատ.) յաւելու. "Հռոմայեցւոց եկեղեցւոյն յետ Պետրոսի զեպիսկոպոսութիւնն յաջորդեաց Լինոս ամս ԺԲ,,։ Եւ ապա հետզհետէ ժամանակագրական կարգաւ և զյաջորդս նոցա անուանէ։ Նոյն և յեկեղեցական պատմութեան իւրում աւանդէ, (գիրք Ը. գլ. ԺԳ. իդ)։ Նոյն հաստատէն և Կղեմէս Հռոմայեցի, Իգնատիոս, Պապիաս, Պոլիկարպոս եպիսկոպոս կորնթացւոց, Երանոս, Կայիոս, Կղեմէս այլեքսանդրացի, Որոգինէս, Կիպրիանոս, Լակտանտիոս, Աթանաս, Սպիրիդոն, Յուլիանոս ուրացողն, Գրիգոր Նազիանզոսի, Պալլադիոս, և այլք առհասարակ պատմիչք և մատենագիրք առաջնոց դարուց, զորոց վկայութիւնս ածէն բողոքա-

կանքն իսկ Պետրոս և Պաւղոս։ Օնոյն հաստատեն և Յայտնաւորք մեր ի իւ դեկտեմբերի. «Լկեալ (Պետրոս և Պօղոս) հանդիպեցան միմեանց ի մեծն Հռոմ և յոյժ ուրախացան. և էին ի միասին ... և այնպես կատարեցան ի Հռոմ քաղաքի»։ Եւ Իսկեբեբան (ի մեկն. Հռոմ. Եղբոյն հտ. ք. 413.) գոչէ. «Յս և զՀռոմ վասն այնորիկ սիրեմ... զի որպէս մարմին ինչ գեղեցիկ և զօրաւոր երկուս աչս ունելով՝ այնպէս Հառագայթեալ ունի զսրբոյն զայնոցիկ (զՊետրոսէ և զՊօղոսէ) զմարմինս։... Նոքա այնպէս երկինք պայծառ յորժամ արեգակն զՀառագայթս արձակիցէ, որպէս Հռովմայեցւոց քաղաքն որ ունի զայնպիսի ջամբարս։ Ընտի յափշտակի Պօղոս, անտի Պետրոս։ Եղէ ածէք զմեռաւ և զարհուրեցարուք, որպիսի սքանչելիս տեսանէ Հռոմ, զՊօղոս յանկարծակի ի գրանէ իւրմէ Հանդերձ Պետրոսիւ յափշտակեալ ընդ առաջ տեառն»։ Օնոյն յայտ առնէ և Լսորենացւոյն մերոյ ասելն (ի պատմ. գլխք ՃԻ. կք.) «Յիտալիա բռնութեամբ անկաք Հողմոյ. և ողջունեալ ի Հանգիստ սրբոյն Պետրոսի և Պօղոսի, ոչ քաղցմ ի Հռովմայեցւոյն կացեալ քաղաքի»։ և այլն. և ի Հառն Հռիփսիմեանց. «Ա (Հռիփսիմէ) որպէս ամենեցուն յայտնի է, ի Հռովմայեցւոյն գերապայծառ նահանգէն... երկնային բուսաւ ծաղիկ առաքելական արեամբն Պետրոսի և Պօղոսի յանդս Հոսեալ առագեալ»։

Նրկրորդ՝ զի որք միանգամ զկարդ քահանայապետացն Հռովմայ աւանդեն, ամենեքեան սկիզբն ի Պետրոսէ առնեն. որպէս Տերտուղիանոս, Նւսեբի, Նպատտոս և այլք, որպէս և տեսանել ի հնախօսութիւնս եկեղեցւոյ։

Նրրորդ՝ յիշատակարանք վաղեմիք, նկարք և տապանք, զորս Նայիոս երէց անդստին յերրորդ դարէ, առ Հերեսիոսս ժամանակին ի գեմս ածէր, որպէս ասէ Նւսեբի յեկեղեցական պատմութեանն. (գլխք Ը. գլ. իե)։

Նրդ եթէ ոչ ի բայ կամիցիմք պարսաւել զնոսա տասիրութիւն, և զամենայն պատմական հաւատս առնան կոխել, հարկ է խոստովանել՝ ըստ այսց ամենայն աւանդից՝ զերթ առաքելապետին ի Հռոմ, հաստա-

տել անդ զաթոռ իւր, և անդ վկայական մահուամբ զկեանս իւր կատարել, որպէս և առեղի մահուանն և բանտ և գերեզման վկային, ուխտատեղիք՝ յորս՝ինանէ նի դարուց հետէ յաճախեն հաւատացեալք յուխտ։ Ոսկէս վկայէ և Սոկեբերան (Հտ. Է. 213. ՚ի ցոյց առ. պռոաճռոնեանն Քրիստոսէ ընդդէմ Հրէից և հեղինոսաց.) “Յաբքուսական քաղաքն ՚ի Հռոմ.... ՚ի գերեզմանս ձինորսին և խորանակարին ընթանան ինքնակալք, բըդեաշինք և զօրավարք,,։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ղուկ. Ա. Ել ուրեք ՚ի սուրբ գիրս յիշատակի երթ Պետրոսի ՚ի Հռոմ, կամ զաթոռն փոխադրել անդր, և կամ անդ վճարել ՚ի կենաց։

Պաս. Ոչ թէ և ոչ մի ինչ յիշատակ ՚ի սուրբ գիրս գըտաներ զայսցանէ, սակայն ոչ ինչ անտի հետևեր ըստ տրամաբանական օրինաց։ Այլ թէ ոչ, պարտ էր և Պետրոն և զԱնդրէասիանոս, և զինքնակալել նոցա զայնու ժամանակաւ ուրանալ այնու՝ զի չյիշատակին ՚ի սուրբ գիրս։ Այլ ասն որոյ ուր արդեանց իրաց ապացոյցք անժխտելիք ՚ի միջի կան, ոչ ինչ ընդդէմ այնոցիկ զօրէ լռութիւն։

Ղուկ. Բ. Պօղոս առ Հռոմայեցիսն գրելով, և ոչ ողջունի միոյ արժանի զառաքեալսն առնէ։

Պաս. Պօղոս և առ Եբրայեցիսն գրելով, ոչ յաւելու ողջունել զեպիսկոպոս Երուսաղէմի զմեծն Յակովբոս զեղբայր տեառն, և ոչ զեպիսկոպոսունս գաղատացւոց եփեսացւոց և Թեսաղոնիկեցւոց ՚ի Թուղթն՝որ առ նոսա. վասն որոյ դարձեալ երկրորդեմք, զի լռութիւն ոչ է ապացոյց, զի բազումք մոռանան լեալ պատճառք լռութեան, զորս ժամանակն անծանօթս կացուցանէ։ Այլ որչափ ինչ գուշակել է, զի առաքեալք և աշակերտք Քրիստոսի եպիսկոպոսունք ոչ յաթոռս իւրեանց կային հանապազ, այլ ստէպ քաղաքաց ՚ի քաղաքս շրջէին ՚ի քարոզութիւն. վասն որոյ երկբայութիւն կամ գիտութիւն իսկ տարակացութեան նոցա մոռնի լեալ պատճառք լռութեանն։

Ա՛ռաքել. Գ. Նոյն ինքն գարձեալ գրելով առ Հռով-
մայեցիս՝ համարի ոչ զոք յառաքելոց լեալ անդ ի Հռո-
ւոմ ի քարոզութիւն. վասն որոյ յանկայ գնալ անդր
"առ ի հաստատել զնոսա, և առ ի փոխել ի նոսա
շնորհս ինչ հոգևորս". (ա. 11.) և յայտ իսկ առնէ՝
չկամել քարոզել ուր այլոց քարոզեալ իցէ, զի մի թուի
ցի յայլոյ հիման վերայ շինել։

Պա. Ո շնորհսն հոգևորս և զհաստատութիւն զհռոմայե-
ցիս ինքնին իսկ բացատրէ առաքեալն, և չինայ մեզ այլ
ինչ յաւելուլ. քանզի ասէ. "Նձկայեալ եմ տեսա-
նել զձեզ, զի փոխեցից ի ձեզ շնորհս ինչ հոգևորս՝
առ ի հաստատել զձեզ, այսինքն է հրճուարակից լինել
ձեզ վասն ընդ միմեանց իմոյ և ձերդ հաւատոց"։ Նա
այս փոխադարձ միխթարութիւն ոչ իւիք օգնէ առար-
կութեանն։ Իսկ կամել առաքելոյն քարոզել, ուր այ-
լոց ուրուք յառաքելոց չիցէ քարոզեալ, վասն լուրիկե-
ցւոց է և սպանիացւոց՝ առ որս կամէրն գնալ, և ի գը-
նալն անդր անցանել ընդ Հռոմ, որպէս ինքն իսկ ասէ
(գլ. ԺԵ. 24. 28. 30.) "Յորժամ անցանիցեմ ի
Սպանիա, ակն ունիմ յանցանելն առ նոսա տեսանել
զձեզ... անցից առ ձեզ ի Սպանիա.... Ինչու ի
կողմանս լուրիկեցւոց ընդ զաւետարանն Քրիստոսի.
այնպէս առատացեալ յաւետարանել. ոչ ուր անուանե-
ցաւ Քրիստոս, զի մի իբրև յայլոյ հիման վերայ շինի-
ցեմ"։ Այլ ուղիղ ևս ի բանից առաքելոյն է գուշա-
կել, զի վաղ իսկ այլոյ ուրուք յառաքելոց, այսինքն
Պետրոսի քարոզեալ էր ի Հռոմ, քանզի ասէ (ա. 8.)
"Հաւատք ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ"։
Ուր ինքն չև ևս երթեալ էր ցայնժամ ի Հռոմ, որ-
պէս քաջայայտ է ի ժամանակագրութենէ։ Ա ասն ո-
րոյ և նոյն իսկ կամելն հաստատել զնոսա՝ զնոյն ցուցա-
նէ. զի հաստատի ի հաւատս որ վաղ իսկ հաւատա-
ցեալն է։

Ա՛ռաքել. Դ. Պետրոս յայտնապէս զառաջինն թուղթ
իւր ի Բաբելոնէ յայտ առնէ գրեալ ի մայրաքաղաքէ
ասորեստանեայց. ուստի յայտ է անտի և զերկրորդն
գրեալ սակաւիկ մի յառաջ քան զվախճան իւր, որ-
պէս ասէ. "Ա աղվաղակի է լինելոց մերկանալ յինէն
մարմնոյս, որպէս և տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց

ինձ ,, . (Ը . Պետ . ա . 14) : Այսպա չէր մարթ նման կատարել զկեանս իւր ի Հռոմ :

Պե . Առաքելութիւնս այս վաղ իսկ և ի գիտնագունեայ անտի նորաշանդից ի բաց թողեալ է . այլ յանդգնութիւնք ամենք յարգեաց վերատին ի մէջ ածեն զայն : Խաբելոն երիւք դարուք յառաջ քան զթուականութիւն փրկչին կործանեալ էր և անհետ լեալ . (Պլին . Ը . 26) : Ա սան որոյ Խաբելոնիս անդ ամենայն Հարք զՀռոմ ինանան , յաւելեալ և զպատճառս Խաբելոն կոչելոյ առաքելոյն զքաղաքն զայն : Այս և առ հնագետս ի վաղեմի յիշատակարանաց ցուցեալ է : Այս Արգիս վարդապետն մեր , ասէ . "Ճոուի ինձ թէ զքաղաք , ուր բազում լեզուք խառնախոսք և խուժադուժք բնակիեն , սովորութեամբ գիրք Խաբելոն անուանեն ,, :

Ասդկ . Ե . Ել երբեք առաքելոյ թեմ և աթոռ սահմանեալ էր . զի պաշտօն առաքելութեան , որով պարտ էր նոցա ընդ աշխարհ ամենայն քարոզել զաւետարանն , չմարթէր միաբանել ընդ առանձնական թեմի :

Պե . Առաքելոյն թեմ և աթոռ յայտ անտի է , զի և Յակոբոս եղբայր տեառն եպիսկոպոս Երուսաղէմի էր . բայց հաստատեալ նոցա ուրեք զաթոռ իւրեանց , անտի գնային քարոզել և հաստատել այլ եկեղեցիս : Արժան և առաւել հարկ էր Պետրոսի հաստատել ուրեք զաթոռ իւր , որ ի վերայ առաքելութեանն և առաքելապետ էր , և պարտ էր նմա սահմանել զյաջորդութիւն գլխաւորութեան եկեղեցւոյ :

ԳՕԴՈՒԱԾ Գ

Քաղագս յարատևելոյ իշխանութեանն Պետրոսի ի յաջորդս իւր :

Եթէ ընդ կեանս Պետրոսի և իշխանութիւն նորա զբաւեր , ի զուր էր խոստումն Քրիստոսի լինելոյ ընդ եկեղեցւոյ իւրում մինչև ի կատարած աշխարհի : Այս ուրեմն յարատևէ նոյն իշխանութիւն նորա ի յաջորդս նորին : Այլ ի բացայայտութիւն առաքելութեանս և ի լուծումն առարկութեանց հակառակորդաց , ի դէպ է նախակարգել :

Նախ՝ զի տուրքն Պետրոս, պարզաբար որպէս առաքեալ, ունէր զայն ամենայն նախամանուկնա՝ ոչ ոք հաղորդ էին և այլ առաքեալք. որպիսի են սրբութիւն, աքանչելագործութիւն, խօսել ի լեզուս, լուսաւորութիւն կամ ազդեցութիւն յոգւոյն ի դիտել զխորհուրդս Աստուծոյ և աւանդել եկեղեցեաց գրով որպէս պատգամն Աստուծոյ: Այլ ի վերայ ամենայնի այսոցիկ էր սրբոյն Պետրոսի, որպէս ցուցաք վերագոյն, նաև իշխանութիւն անսխալ առաջնորդութեան ի վերայ համօրէն եկեղեցւոյ:

Արդ այն ամենայն ձիրք, առաքելոց ամենեցունն սեփականք, ոչ անցին ըստ իրաւանց յաջորդութեան՝ ոչ ի քահանայապետս յոլովմայ յաջորդս սրբոյն Պետրոսի, և ոչ ի պատրիարքունս և եպիսկոպոսունս յաջորդս այլոց առաքելոց: Ո՛չ ի այն ամենայն ձիրք՝ հնարհք էին առաքելութեան կարևորք ի ժամանակին առ ի ծաւալումն քրիստոնէութեան: Այլ իշխանութիւն ևեթ հովուական, որ կարևորն էր միշտ եկեղեցւոյ, անց ի յաջորդս իւրաքանչիւրոյն. որով և Պետրոսի իշխանութիւնն ի յաջորդս նորա և ի քահանայապետս յոլովմայ:

Արկրորդ՝ զի ըստ այլ և այլ տեսութեան մարթ է նկատել զտուրքն Պետրոս: Այն՝ որպէս օք ի մարդկանէ, նմին մահկանացու բնութեան վիճակեալ. երկրորդ՝ որպէս առաքեալ և եպիսկոպոս յոլովմայ. երրորդ՝ որպէս արքեպիսկոպոս կամ եպիսկոպոսապետ Հռովմէական վիճակաց. չորրորդ՝ որպէս մետրապոլիտ կամ նախագահ եպիսկոպոսապետ համօրէն Իտալիոյ և պատրիարք արևմտից. և հինգերորդ՝ որպէս գլուխ ընդհանուր եկեղեցւոյ, և հանրական փոխանորդ Քրիստոսի ի վերայ երկրի:

Ըստ այսմ և յաջորդ նորա քահանայապետն յոլովմայ, որ մեծարանաց անուամբ կոչի Պապ իբրև հայր հասարակաց, նկատի նախ որպէս օք ի մարդկանէ՝ նոքիմբք մարդկային տկարութեամբք զգածեալ. և իբր այսպիսի՝ սխալական է յառանձին գործս իւր և՝ ի կարծիս:

Արկրորդ՝ է եպիսկոպոս քաղաքին յոլովմայ, և ըստ այսմ կարէ կոչել ժողով թեմական վասն վիճակին իւրոյ, և հրատարակել գիրս հովուականս և վարդապե-

տականս Համաղօրս բանից այլոց Հովուաց և առաջնորդաց։

Երրորդ՝ է արքեպիսկոպոս գաւառին Հռոմայ, և մետրապօլիտ Իտալիոյ. և ըստ այսմ ևս կարէ ժողով գումարել գաւառական, և առնել սահմանադրութիւնս վասն Հռոմայեցւոց և Իտալացւոց, հանգոյն այլոց արքեպիսկոպոսաց։

Չորրորդ՝ է պատրիարք Եւրոպիոյ, այսինքն արևմտեան աշխարհ առ Հասարակ, և ըստ այսմ ևս կարէ գումարել ժողով արևմտեան, և առնել սահմանադրութիւնս վասն եւրոպացւոց առ Հասարակ. ոչ միայն հանգոյն այլոց պատրիարքաց, այլ և առաւել յոյժ քան զնոսա՝ որչափ առաւել են՝ի վիճակի նորա աշխարհք և ժողովուրդք։

Հինգերորդ՝ է գլուխ ամենայն պատրիարքաց իբրև յաջորդ առաքելապետին, ուր նոքա առաքելոց են յաջորդք. և ըստ այսմ կարէ ոչ միայն գումարել ժողով տիեզերական, և տալ վճիռս՝ որոց ամենայն հաւատացեալք պարտին հնազանդել, այլ և առանց ընդհանուր ժողովոյ՝ խորհրդակցութեամբ կարդինալաց և աստուածաբանից իւրոց տալ վճիռս նոյնպիսիս անսխալ, իբրև գլուխ կաթողիկէ եկեղեցւոյ։ Եւ յայնժամ միայն անսխալ է՝ի վճիռս իւր, յորժամ լրութեամբ իշխանութեան իւրոյ որպէս յաթոռոյ առաքելապետին սահմանէ զինդիրս հաւատոյ և զբարոյականին։

Այլ քահանայապետն Հռոմայ, որպէս գերագոյն գլուխ եկեղեցւոյ, ոչ եթէ նոր ինչ վարդապետութիւն հաւատոյ կամ բարւոյ վարուց սահմանէ և ուսուցանէ, այլ զյայտնեալսն ևեթ յԱստուծոյ՝ի սուրբ գիրս կամ՝ի բերանոյ առաքելոց և մարգարէից՝ մեկնաբանէ, բացայայտէ, և զչմարիտ իմաստս նոցին՝ի լոյս ածեալ՝ ուսանդէ հաւատացելոց՝ի հաւատալ. և զայն՝ յետ քննութեան հզօր աստուածաբանից, և լսելոց զկարծիս իմաստնագունից՝ի վարդապետաց և յեպիսկոպոսաց։

Օ այսոսիկ նախակարգեալ, մատիցուք արդ՝ի հաստատութիւն առաջարկութեանս։

Եթէ անժխտելի է գլխաւորութիւն սրբոյն Պետրոսի և ըստ այսմ մասին առաւելութիւն նորա քան զայլ առաքեալս, որպէս՝ի վեր անդր ցուցաք, անժխտե-

լի է նոյնպէս և գլխաւորութիւն յաջորդաց նորին քահանայապետացն Հռովմայ, և առաւելութիւն նոցա յաստուածային իրաւանց քան զայլ եպիսկոպոսունս և զպատրիարքս առհասարակ. զի որպէս այլ ամենայն յաջորդք այլոց առաքելոց կալան զիշխանութիւն եպիսկոպոսութեան և առաջնորդութեան ըստ թեմի և ըստ վիճակի նոցա յետ նոցա, նոյնպէս և յաջորդացն Պետրոսի պարտ է ունել զնորայն յետ նորա: Յորժամ ձգձմարտութիւնս այս և պատճառաբ՝ որք ի սուրբ գիրս հաստատին:

Արիստոս առ ի սահմանել և պահել միշտ յեկեղեցւոջ իւրում զմիութիւն՝ հաստատեաց զգլխաւորութիւն, և ետ զայն Պետրոսի. ապա և յաջորդք նորա յաստուածային սահմանադրութենէ ունին զնոյն գլխաւորութիւն: Իսկ յաջորդք Պետրոսի են՝ որ ժառանգեցին զեպիսկոպոսութիւն նորա և զաթոռ՝ քահանայապետն Հռովմայ, ապա նոքին իսկ յաստուածային իրաւանց ժառանգեն և զգլխաւորութիւն նորա:

Պարձեալ յայտ է ի սուրբ գրոց, զի Արիստոս թագաւորն երկնաւոր հաստատեաց յերկրի զքրիստոնէական եկեղեցի իւր իբրև զտուն և որպէս թագաւորութիւն միտակաց անվանեալ ի գրանց գժոխոց, կառուցեալ զհիմունս նորա ի վերայ Պետրոսի որպէս ի վէմ անշարժելի: Իսկ արդ Պետրոս վիճի հաւատոյ և գլխաւոր հիմն հաստատութեան եկեղեցւոյ, գոլով մարդ մահկանացու, փոխեցաւ յաշխարհէ. ապա կամ պարտ է ասել՝ զի ի վախճանել Պետրոսի բարձաւ ի բոլոր վէմ ամրութեան եկեղեցւոյ, և առ կենդանութեամբն Պետրոսի միայն ունէր կալ անսասան, և կամ զի Պետրոս կացուցաւ ի Քրիստոսէ վէմ հաստատութեան մինչև ի սպառ և ի յաջորդս իւր:

Պարձեալ եթէ եկեղեցի Քրիստոսի զինուորեալ է մի միայն հօտ Քրիստոսի երևելի՝ յանձնեալ ի տեսչութիւն միոյ երևելի հովուապետի, այսինքն հանրական փոխանորդի իւրոյ՝ որպէս ցուցաւ վերագոյն. ապա ի մեկնել նորա յաշխարհէ՝ հարկ եր յաջորդի նորին ունել զնոյն իշխանութիւն, որպէս զի մի անգլուխ և անտէրունչ մնացեալ հօտն պառակտեսցի:

Պարձեալ եթէ Քրիստոս նախապետական գլուխ

եկեղեցւոյ՝ ըստ իւրում աստուածեղէն իմաստութեանն հարկ համարեցաւ ՚ի սկզբանէ եկեղեցւոյ կացուցանել զոք նմին գլուխ և առաջնորդ ընդհանրական, նոյն հարկ առաւել ևս պահանջէ զնոյն յընդարձակել եկեղեցւոյ, զի մի բաժանեսցի միութիւնն։ Այլ եթէ անդստին ՚ի ժամանակէ առաքելոյ՝ որ հաստատեալքն էին ՚ի հաւատս և ՚ի սրբութեան՝ կարևոր համարեցաւ Քրիստոս կացուցանել անմոլար առաջնորդ եկեղեցւոյ իւրում զՊետրոս, և աղաչեաց զՅայր՝ զի դարձցի նա և հաստատեսցէ զեղբարս իւր, ևս առաւել առ յապայ ժամանակս պէտք էին այնպիսւոյ անմոլար առաջնորդի՝ որ ՚ի յառնել հերձուածոց և մոլորութեանց անմոլար և անսասան կացցի զեկեղեցի։

Յուցանի դարձեալ և ՚ի պատշաճէն օրինակաւ հնոյ եկեղեցւոյն և երկնաւորին։ Քանզի Քրիստոս տէրն մեր էկն ոչ առ ՚ի լուծանել զօրէնս, այլ լնուլ, և նոքագործ աստուածապէս Հարտարապետեալ զերկիրս երկին առնել հաստատելով զնոսա եկեղեցի համանման երկնայնոցն՝ զերագոյն քան զՀինն՝ որ օրինակն էր նոցա. որպէս և Հայաստանեայցս եկեղեցի վայելչապէս նուագէ (՚ի գէրս դպրութեան). “Հինն օրինակ քեզ և նման, դու խորանին զերազրական ,,. և թէ “Որ գերագոյն քան զերկինս պայծառացուսցէր սուրբ զեկեղեցի . . . և ըստ երկնայնոցն կարգեցեր ՚ի սմա զգասս ա-ռաքելոյ ,,. և այլն։ Զնոր ուրեմն երկբայել զի բարեկարգ քան զՀինն է նորս այս ըստ նմանութեան երկնայնոյն։ Այդ ՚ի հին եկեղեցւոջ Թէպէտ և նախապատական գլուխ ինքն Պետուած էր, սակայն էր ՚ի նմա և քահանայապետ գլուխ և իշխան ձևատացւոյ ամենեցուն և երիցանց, որ երևելապէս Հովուէր և առաջնորդէր ժողովրդեան ՚ի հոգևորս. նոյնպէս և յերկնաւոր եկեղեցւոջ Թէպէտ և Պետուած ինքնին է գլուխ և իշխան, սակայն է և հրեշտակապետ վեհագոյն ամենայն գասակարգութեանց երկնագումար խմբից, որպէս է իմանալ և ՚ի բանից գրոցն Յայտնութեան ուր ասէ. (ժբ. 7.) “Եւ եղև պատերազմ յերկինս. Միքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին, և վիշապն պատերազմէր զօրօք իւրովք ,,։ Յարկ է ապա զի և ՚ի նորում յայսմիկ յերկրաւոր եկեղեցւոջ, որոյ գլուխ աներևոյթ

ինքն է Քրիստոս, իցէ և գլուխ որ երևելի ՚ի լուսին ամենայն դասակարգութեանց եկեղեցւոյ, ՚ի բարեկարգութիւն նորին և ՚ի միութիւն։

Ա ման որոյ ՚ի սկզբանէ և այսր եկեղեցի համօրէն զքահանայապետս Հռովմայ ընկալաւ և մեծարեաց որպէս գլուխ ծայրագոյն. և յամենայն ժողովս՝ ՚ի խնդիրս զմոլորութիւնս և զաղանդս, ՚ի սահմանել զնգիրս հաւատոյ և զվէձս, յօրինագրել բարեկարգութիւնս եկեղեցականս, և ՚ի բառնալ զկերձաւածս՝ քահանայապետք Հռովմայ եղեն գլուխ։ Իբր ոչ եթէ անձամբ անձին սեփականելով զայս իշխանութիւն, զոր չէր իսկ նոցա մարթ առնել՝ առանց բազում ունելոյ զայնմանէ այլոց եպիսկոպոսաց, այլ նոցունց իսկ ձանաչելով ՚ի քահանայապետն Հռովմայ զայն իշխանութիւն։ Օ ՚ի ուր ուրեք հերձուած ինչ կամ վէձ ՚ի վեր երևէր, նոքին իսկ հաստուցանէին զայն ՚ի գահն Հռովմայ. և յատեան անդր յամենայն կողմանց աշխարհի հասանէր բազում։

Ա ման որոյ կոչէին զաթոռն Հռովմայ Ա ԷՄ ԱՆԿՈՒՆԱՂԻ ԵԿԵՂԵՑՈՑ։ Այս սուրբն Կիպրիանոս (՚ի ԸՈՒՂԻՔԱՆ ԾԸ Ի ԽԸ.) կոչէ զնա Ա՝այր հանուրց եկեղեցեաց, և յաւելու. "ուստի միութիւն քահանայութեան սկիզբն առնու,,։ Այս սուրբն Լրանոս կոչէ զայն (գիրք Ճ. ընդդէմ հերձ. գլ. Ճ.) "Լկեղեցի վեհագոյն, յոր պարտ է հաւատալ ցելոց ամենեցուն ամենայն ուստեք դիմել անդր,,։

Վկայութիւնք ՚ի ժողովոց.

Հարք տիեզերական ժողովոյն Լփեսոսի յընկենուլ զԼեստոր յիշխանութենէ՝ յայտ առնեն, յեկեղեցական կանոնաց և ՚ի թղթոյ Ալեքսանդրեայ քահանայապետին Հռովմայ եկեալք կայն. (՚ի գիրս ԺողովոյՀատ. Ճ. 622)։ Այ ՚ի նմին ժողովի Փիլիպպոս նուիրակ քահանայապետին, առանց ուրուք ՚ի ժողովականաց ընդդէմ դառնալոյ, ասէ. "Պետրոս կեայ յայսօր, և կեցցէ միշտ ՚ի յաջորդս իւր, վարել ՚ի ձեռն նոցա զիրաւունս դատելոյ,,. (անդ. 626)։

Յառաջին ժողովն Կոստանդնուպոլսի արևելեան Հարք առ ՚ի պատուել զաթոռն զայն քան զամենայն աթոռս պատրիարքաց, շատ համարեցան ասել. "Կոս-

տանդնուպօլսի եպիսկոպոսն կալցի զպատիւ նախագահութեան գՀետ եպիսկոպոսին Հռովմայ ,,. (անդ)։

Ի ժողովն Արդիկեայ սահմանեցաւ, զի որ և իցէ եպիսկոպոս դատեալ յայլոց՝ կարասցէ բողոքել յաթոռն Հռովմայ. (անդ)։

Եւ դարձեալ սահմանէ, զի յերկսպառակել եպիսկոպոսաց ՚ի խնդիր ինչ՝ քահանայապետն Հռովմայ "Որ ինչ բարւոք Համարեսցի՝ սահմանեսցէ ,,։ Սահման Ը. ժողովոյն Նիկիոյ. "Ոչ պարտ առանց հրամանի Հռովմայ հայրապետին ժողով գումարել ,,։

Ի ժողովն Քաղկեդոնի Ղեոսկորոս պատրիարքը Աղեքսանդրիոյ ոչ կարաց բազմել ընդ եպիսկոպոսունս ժողովոյն, այսպէս հրամայելով Լեւոնի պապին։ Սակ Ծեոդորետոս, Թէպէտ և ժողովուլ դատապարտեալ, սակայն բազմեցաւ ընդ Հարս ժողովոյն. զի նորին քահանայապետի դարձուցեալ էր զնա յաթոռ իւր։ Եւ ՚ի խօսել քահանայապետին, ամենայն Հարք ժողովոյն գոչեցին միաբան. "Պետրոս բերանով Լեւոնի խօսեցաւ ,,. (անդ 94 և 368)։

Ժողովն Աղեքսանդրիոյ գումարեալ ընդդէմ արիանոսաց՝ որոց մերժեալ էր զսուրբն Աթանաս յաթոռոյ, գրէ ՚ի Թղթին առ Ծեկլիքս պապ. "Պետեմք զի ՚ի մեծ և սուրբ ժողովն Նիկիոյ սահմանեցաւ՝ զի չէ օրէն ժողով գումարել, և ոչ յեպիսկոպոսաց զոք դատապարտել առանց հրամանի Հռովմայ հայրապետին. բայց Հերեսիովք, որ լկէն զմեզ Հանապազ և ջանան կոծանել, բարձին զայնպիսի կանոնս ՚ի սահմանաց ժողովոյն։ . . . Սահմանեցաւ և ևս ՚ի սրբոց Հարց ժողովոյն Նիկիոյ միաբան, զի Թէ ոք յեպիսկոպոսաց կամ ՚ի մետրապօլտաց կասկածելի Համարեսցի կամ երկբայելի զգաւառակիցս իւր կամ զդատաւորս, բողոք կալցի առ սուրբ գահդ Հռովմայ, որում յատկապէս տուաւ իշխանութիւն ՚ի տեառնէ կապելոյ և արձակելոյ ,,. (անդ)։

Սուրբն Պողիկարպոս, աշակերտ Յովաննու առաքելոյն և եպիսկոպոս Ս. միւռնայ, չոգաւ ՚ի Հռոմ առ Ընիկետոս քահանայապետ վասն խնդրոյն՝ որ յաւելը ընդ արևելեան և ընդ արևմտեան եկեղեցիս վասն ժամանակի տօնախմբութեան Ս. ատկին։

Նոյն ինդիր նորոգեցաւ յաւուրս սրբոյ քահանայապետին Ա Լեկտորի, և ի հրամանէ նորա գումարեցան ժողովք ի բազում քաղաքս Ասիոյ, Ասփեսոս, Անտիոքիա, ի Կեսարիա, ի Կորնթոս, ի Միջագետս. և ամենեքեան, բաց Ասփեսոսէ՝ ընկալան զսովորութիւն Հռոմայեկեղեցւոյն. (անդ հտ. ա. 599):

Օնոյն և Յայսմաւուրք մեր պատմեն (յ 2. յունուար ր.). "Հրամայեաց Անդրեաստրոս, և փոխոխեցին ամենայն քրիստոնեայք զաւագ Յատիկն, զի յետ չորեքտասան լուսնին զկիւրակէն արասցեն,,: Որ այն իսկ է սահման նիկիական ժողովոյն, զորմէ յաւելուն անդ Յայսմաւուրք. "Որպէս եղև առաջին սիւնհոդոսն ի Նիկիա, ուր ժողովեցան եպիսկոպոսունք ՅԻԸ,,:

Սուրբն Թանասէ հանդերձ եպիսկոպոսակցօքն զատապարտեալ յարիանոսացւոյ, բողոքեցին առ Յուլիոս քահանայապետ Հռոմայ. և գրէ Սոզոմենոս (պատ. եկեղ. գիրք Է. գլ. Ե.) զի "Քահանայապետն Հովհաննէս պետական իշխանութեամբն հսկելոյ ի վերայ ամենայն եկեղեցեաց՝ ընկալաւ զբողոք եպիսկոպոսացն, և հաստատեաց զնոսա անդրէն յիւրաքանչիւր աթոռ,,:

Նոյն ինքն սուրբն Թանասէ գրէ առ Փեղիքս քահանայապետ Հռոմայ. "Ըստուած կացոյց զքեզ և զնախորդս քո զառաքելական առաջնորդս ի բարձունս դղեկի, և աւանդեաց քեզ զհոգ ամենայն եկեղեցեաց, որպէս զի հասցես մեզ յօգնութիւն: Պատ ես վկայ, և ի վերայ քո սիւնք եկեղեցւոյ այսինքն եպիսկոպոսունք հաստատեալ կան,,:

Նոյն ինքն որպէս պատրիարքը Կ.Պոլսոյ գրէ ի ժողովական թղթին առ պապն Մարկոս յաջորդ Սեղբեստրոսի. "Տեառնդ սրբոյ և առաքելական բարձրութեամբ պատուելոյ Մարկոսի, սուրբ և առաքելական աթոռոյն Հռոմայ և ընդհանուր եկեղեցւոյ Պապիդ, Թանասէ և ամենայն եպիսկոպոսունք Եգիպտոսի, ողջ լինել:

"Պզձանամք, ի լինել պատգամաւորաց մերոց ձեզ յանդիման, արժանի լինել մեզ ընդունել յիշխանութենէդ սրբոյ աթոռոյդ ձերոյ՝ որ է մայր և գլուխ ամենայն եկեղեցեաց՝ զայն ինչ, որ իցէ յուղղութիւն և

'ի մխիթարութիւն ամենայն հաւատացելոց։ Վասն որոյ ապաքէն զի սիրտ առաքելականութեան ձերոյ այնչափ վառեալ է չնորհօք սուրբ Հոգւոյն, մինչև ամենայն դրկելոց օգնական լինել. քանի առաւել ապա մեզ, որք թէպէտ խոնարհագոյնք ըստ գասու, սակայն ձեր եմք, և հանապազ կամիմք ամենեքումք՝ որ մեզ են յանձնեալ՝ հնազանդ լինել ձեզ ,,։

Նոյնպէս և 'ի միւսում ժողովական թղթին առ Պապն Վեղիքս. "Ա ան զի, ո՛ Հայր երանելի, առաջինքն մեր և մեք միշտ ընկալաք զօգնութիւն 'ի ձերմէ առաքելական աթոռոյդ ... յորմէ և առաջինքն մեր ընկալան զբարեկարգութիւնս, զվարդապետութիւնս հաւատոյ և զօգնութիւնս։ Այս արդ առ այդ աթոռ, որպէս առ մայր, և մեք դիմեմք՝ դիտել 'ի սահմանց դորա. և քանզի անհնար է մեր մոռանալ զզաւակ իւր, նոյնպէս և դուք մի մոռասջիք զմեզ՝ որ ձեզ յանձն եղաք ,,։

Պեղագիոս Ե. գրէ առ եպիսկոպոսունս գումարեալս 'ի Ժողովն Յովհաննու կոստանդնուպոլսեցւոյ. "Բազաքեալական և եկեղեցական կանոնք հրամայելով հրամայեն՝ մի առանց հաւանութեան Հռոմայեցւոյ Հայրապետին ժողով գումարել. վասն որոյ լուծցի նանրասցի ժողովակդ ձեր, և որ 'ի դմա սահմանեալ վճիռք ,,։

Ա ան այսր ամենայնի և ժողովն Վլորենտիոյ, ձայնակցութեամբ արևելեան և արևմտեան եկեղեցեաց, ետ վճիռ։ "Սահմանեմք՝ զի սուրբ և առաքելական աթոռն և Հռոմայեցի քահանայապետն ունի զնախագահութիւն ընդ ամենայն տիեզերս, և նա ինքն Հռոմայեցի քահանայապետն յաջորդ է երանելւոյն Պետրոսի առաքելապետի, և Քրիստոսի ,,։

Վկայութիւնք 'ի Հարցն Յունաց.

Սուրբն Կղեմէս որ և Ղինոս, աշակերտ առաքելոց և յաջորդ սրբոյն Պետրոսի յաթոռ Հռոմայ, յառաջին թղթի իւրում առ կորնթացիս յայտ առնէ՝ զի հաւատացեալք Կորնթոսի դիմեալ էին առ նա, վասն բառնալոց զերձուածս՝ որ յուղէին 'ի նոսա։

Որոգինէս 'ի թղթին առ Աւռնելիոս քահանայապետ Հռոմայ. "Իչխեն նաւել յաթոռն Պետրոսի,

որպէս ՚ի գլխաւոր եկեղեցի՝ ուստի միութիւն քահանայութեան կալաւ սկիզբն, նամականեալ ՚ի հերձուածողաց և յարտաքնոց. ոչ զմեռաւ ածեալ՝ զի առ հռովմայեցիս, որոց հաւատք ըստ վկայելոյ առաքելոյն պատմեալ են ընդ ամենայն աշխարհ, չկարեն մեռ ունել ստութիւնք ,,:

Ա՛արկին երէց եկեղեցւոյն Աինոպայ յերկրորդում դարու, բանադրեալ յեպիսկոպոսէ իւրմէ, դիմեաց ՚ի հռովմ ընդունել արձակումն: (սոբր Նպէփ. հերձ. խթ):

Կղեմեդիոս Ալեքսանդրացի առանդէ՝ զի Ա՛ռնատոս, Փղոբիանոս, Ա լասկոս և այլք, բանադրեալ յԱլեքսանդրացի եպիսկոպոսէ եփեսացւոց և յայլ և այլ ժողովոց, քաղքեցին ՚ի հռովմ: (Նսեբէ պտմ. եկեղ. Ե. 25):

Յերրորդում դարու Փորտունատ և Փելիկիսիմոս, ըստ վկայելոյ Աիպրիանոսի (ընդ. խթ.) քաղքեցին ՚ի հռովմ:

Օհռովին ժամանակաւ սուրբն Վիոնեսիոս եպիսկոպոս Ալեքսանդրիոյ ամբաստանեցաւ ՚ի հռովմ յեպիսկոպոսացն Պենտապօլսոյ. և կոչեցեալ ՚ի սրբոյ քահանայապետէն Վիոնիսեայ՝ չոգաւ անդր, և արդարացաւ յամին 263. (՚ի գէորս ծաղկոյ հտ. ա. 831):

Սուրբն Ա՛ելքիատէս հայրապետ հռովմայ դատեաց զգոնատեանս հակառակորդս Աեկիլիենեայ, և դատապարտեաց զնոսա, առանց կարելոյ նոցա ժխտել զիրաւունս քահանայապետին դատելոյ զնոսա. (անդ 1402): Սուրբն Վրիգոր աստուածաբան ՚ի տաղն՝ որ զկենաց իւրոց. "Եկեղեցին հռովմայ Ձնմարիտ հաւատոցն Ալտուածոյ եկաց միշտ աւանդապահ, որպէս արժան իսկ է քաղաքին՝ որ ընդհանուր աշխարհի է վերակացու ,,:

Ետյն ինքն ՚ի բանն ծբ. "Ցուի Թէ վասն այսր և Վամասոս պապ իբրև ծանեաւ զնրան ստուգութեամբ և գիտաց զի նոքա յառաջին Թիւր վարդապետութեանն հաստատուն կան, մերժեաց զնոսա ՚ի ժողովոյ եկեղեցւոյն ,,:

Նրանոս (ընդդէմ Նրէից գիրք Ջ. գլ. Ջ.) "Ալբեր զանդուածիւնն զայն՝ զոր էառ ՚ի սրբոց առաքելոց մեծ և հին և ամենահռչակ եկեղեցին հռովմայ, որ յերկուց փառաւորեալ առաքելոյն ՚ի Պետրոսէ և ՚ի Պօղոսէ հիմնեալ հաստատեցաւ... և յաջորդու-

թեամբ եպիսկոպոսացն եհաս առ մեզ, դատեալ յա-
մօթ առնեմք զնոսա՝ որք ինքնահաճութեամբ և անա-
պառութեամբ, և կամ կուրութեամբ և չարիմաց խոր-
հըրդով ուսուցանեն զոր չէ արժան։ Վասնզի՝ ի սոյն
եկեղեցի վասն կարողագոյն իշխանութեանն հարկ է
գալ խառնիլ ամենայն եկեղեցեաց, ամենայն ուստեք՝
ուր միանգամ գտանին հաւատացեալք։ Յորում պահ-
պանեալ է հանապազ յայնցանէ, որ ենն ամենայն ուս-
տեք, աւանդութիւնն որ յառաքելոց անտի ,,։

Սուրբն Կարսեղ՝ ի թղթին առ սուրբն Աթանաս.
“Աչքժան դատեցաւ գրել առ եպիսկոպոսն Հռովմայ, զի
նա քննեսցէ զնոսա մեր, և տացէ զվճիռ դատաստանի
իւրոյ։ Այս քանզի դժուարին է առաքել անտի զամենս
ըստ կամաց ժողովոյն, ինքն տացէ վասն այսր իրի իշ-
խանութիւն արանց ընտրելոց, որք կարող իցեն կրել
զաշխատութիւն Ճանապարհի, և յաւէտ հեզութեամբ
և քաղցրութեամբ լմնաստուն բանից խրատել զայնոսիկ՝
որք խոտորեցան յուղիղ պողոտայէ ,,։

Այս դարձեալ (՝ի Ընդ. հիշ.) յաղագս Աստատիոսի
Աեբաստիոյ եպիսկոպոսին, որ՝ ի ձեռն եպիսկոպոսաց
արևելեայց ընկերեալ յաթոռոյ՝ բողոքեալ էր առ Լի-
բերիոս պապ, գրէ. “Իակ թէ զինչ իցեն առաջա-
դրեալքն յերանելւոյն Լիբերիոսէ եպիսկոպոսէ, և ո-
րպէս արդեօք հաւանեցաւ, մեզ չէր յայտնի մինչ չև էր
բերեալ զթուղթն վասն անդրէն կացուցանելոյ զնա՝ ի
տեղւոջ իւրում։ Այլ յորժամ մատոյց (զՆոաղն Լ-
Բէբէռոէ) առաջի ժողովոյն, անդրէն կարգեցաւ՝ ի տե-
ղւոջ իւրում ,,։

Սուրբն Կիւրեղ աղէքսանդրացի, ՝ի վերայ այ-
լոց բանիցն՝ որովք ՝ի ժողովն Կփեսոսի վկայեաց
յայտնաբարբառ դերագոյն իշխանութեան քահա-
նայապետին Հռովմայ և աթոռոյ նորա, ՝ի թղթին՝
զոր գրէ առ պապն Կելեստինոս՝ ասէ. “Հաճեաց յայտ
առնել զմիտս քո՝ ի վերայ այսորիկ՝ թէ արդեօք ար-
ժան էր հաղորդիլ ընդ Նեստորի, եթէ գրել առ նա
համարձակապէս՝ թէ ոչ որ՝ի մէնջ հաղորդի ընդ քեզ...
Ընդ պիտոյ է՝ զի միաբք սրբութեան քո՝ ՝ի վերայ այսո-
րիկ յայտնի լիցի թղթովք, ոչ միայն առ աստուածա-
սէր եպիսկոպոսունս Աակեդոնիոյ՝ այլ և առ ամենայն
հայրապետս արևելից ,,։

Պարձեալ ՚ի գիրս գանձուց. "Ը մենեքեան Պետրոսի խոնարհեցուցանեն զգլուխս իւրեանց (եմա ՚է յաղթող նորին), և իբրև ինքեան տեառն մերոյ Քրիստոսի հնազանդին իշխանք աշխարհի։ . . . Պարտ է մեզ անդամոյս զհետ երթալ գլխոյն մերոյ, Յովմայ հայրապետին ,,։

Սուրբ Ասկեբերան հրամանաւ Յոհաննու Ոսկեբերանի պատրիարքի դարձեալ յաքսորանաց իւրոց, գրէ առ նա յերկրորդում թղթին. "Յամենայնի գոհութիւնս և շնորհս մատուցանեմք ձեզ, զի զհայրական բարեդիմութիւնդ ցուցեք առ մեզ։ . . . Ուրախ եմք զձեր արիմնութիւնդ, զի թէպէտ նոքա (Հակառակորդք) զամենայն ինչ լցին խռովութեամբ, սակայն եթէ կամիցին դառնալ ՚ի միտս և բժշկիլ, մի խոշտանգեսցին և մի ՚ի բաց ընկեսցին ՚ի գնդէ հօտին ,,։

Սուրբն Ասպիսան (՚է գիրս հերձ. գլ. կը.) "Ասրասկիոս և Ա ազիենտիոս (եպիսկոպոսունք), արարեալ ապաշխարութիւն, չոգան առ երանելին Յուլիոս եպիսկոպոս Յովմայ, համարս տալ վասն մոլորութեանց և յանցանաց իւրեանց ,,։

Սուրբն Ակիլիանոս, այն որ վիճեցաւն ընդ սրբոյն Աթեփանոսի Յովմայ Հայրապետին զմկրտութենէ հերետիկոսացն, նա ինքն ՚ի թուղթս իւր առ պապն Նուռնելիոս կոչէ զՅովմայ եկեղեցին "Ա մայր կաթողիկէ եկեղեցւոյ ,,. և զպապն կոչէ "Ա իակ քահանայապետ և միակ դատաւոր փոխանակ Քրիստոսի յեկեղեցւոջ ,,. և զապստամբեալս ՚ի նմանէ կոչէ "Ընդդէմ հերձեալս ՚ի մարմնոյ ուղղափառ եկեղեցւոյ ,,։

Այս դարձեալ (՚է գիրն յղ. Փռոնեան եպիսկոպոսէ). "Ա ի է Ա ստուած և Քրիստոս մի, և մի եկեղեցի նորա, և հաւատք մի, և ժողովուրդ սերտեալ ՚ի միութիւն մարմնոյ հաստատուն յօդիւ միաբանութեան։ Ընդմարթ է բաժանել միութեան, և ոչ մարմնոյ յօդաւորութեան ձեղքիլ և յօշոտմամբ անդամոց պատառիլ։ Ա ՚ի բաց կայ ՚ի բուն մարմնոյ, անկարանայ կեալ և շնչել առանձին, և ՚ի կենաց անկանի։ Յոգի ցրուէ զյարդ, և ոչ զցորեան. մեզք հերձուածոյ մեծ է յոյժ։ . . . Տէրն այսպէս բարբառի առ Պետրոս. Այս ես քեզ ասեմ՝ զի դու ես վէմ, և ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի

իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն. և տաց քեզ զբանալիս երկնից, զի զոր կապեսցես, և այլն: Նա դարձեալ յետ յարութեան իւրոյ ասաց ցՊետրոս և ասէ՝ Արածեա զոչխարս իմ: Ի վերայ միոյ շինել զեկեղեցի իւր. և թէպէտ առաքելոյն ամենեցուն հաւասար տայ իշխանութիւն ասելով՝ Ընդէս առաքեայց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ. Առէք Հոգի սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, և այլն. սակայն առ՝ի ցուցանել յայտնապէս զմիութիւնն, ՚ի միոջէ զծագ միութեանն տիրական իշխանութեամբ իւրով տնօրինեաց: Պաքէն զնոյն էին և այլ առաքեալք որ ինչ էրն Պետրոս, զուգատիպ մասնակցութեամբ պատուոյ և իշխանութեան Հոխացեալք. բայց սկիզբն ՚ի միութենէ անտի յառաջադայի, զի ցուցցի մի եկեղեցի: ... Որ ոչն ունի զայս միութիւն, զիա՞րդ կարէ հաւատալ՝ թէ ունիցի հաւատս, զիա՞րդ վստահ լինիցի թէ է յեկեղեցւոջ: Այս միութիւն հաստատութեամբ պարտ է մեզ պահել և պաշտպանել, մանաւանդ եպիսկոպոսացըս՝ որ գահագլուխ յեկեղեցւոջ բազմիմք: ... Որ օրինակ յորժամ ՚ի միոջէ աղբերէ վտակք յոգունք հոսեալ ծաւալին, թէպէտ և բազմաւորութիւն ըստ թուոյ է տեսանել սփռեալ՚ի զեղմանէ առատութեամբ, այլ յաղբերակին պահի միութիւն. որպէս զի եթէ հատցես զվտակն յաղբերէ անտի, ցամաքի հատեալն: Նոյնպէս և եկեղեցի Քրիստոսի յորդաբուղխ վտակս շուրջ տարածանէ, այլ մի է գլուխ նոցա, մի սկիզբն ծագման, և մի մայր՝ հարուստ յաջորդութեամբ բեղնաւոր ,,:

“Մի է Պետրոս, մի է Քրիստոս, մի եկեղեցի, և մի աթոռ հիմնեալ ՚ի վերայ սրբոյն Պետրոսի բանիւն տեառն. ոչ է մարթ կանգնել այլուր սեղան այլ, կամ նոր քահանայութիւն. որ այլուր որ ժողովէ, ցրուէ ,,:

Օ այսոսիկ փոքր ՚ի շատէ յառաջ բերեալ վկայութիւնս ՚ի Հարց առաջնոյն գարուց, յորս գժուարին յոյժ էր հաղորդակցութիւն եկեղեցեաց ընդ Հռոմայ, և և վասն հալածանաց ժամանակին, և միակ վկայութիւն ՚ի Կատինաց զԿիպրիանոսին ածեալ, աւելորդ համարիմք յաւելուլ և զայլոց լատինացւոց Հարցն սրբոց զԵղբեատրոսի, զՄբրոսեայ, զԵրանիմեայ և

զ( )գաստինոսի շարայարել առ զվկայութիւնս, զի մի կարի երկայնեսցի մեզ ճառս։ Ո՛չ եթէ յունական մեծիւեկեղեցւոյն ՚արք՝ զանազանեալք ազգաւ և ծիսիւք, որոց մանաւանդ պարտ էր հակառակել՝ չնմարտութեանս պատիկ, սակայն ընդունին զայն և վկայեն յայտնաբարբառ, յայտ է՝ զի զնոյն առաւել հաստատեսցեն ՚արք լատինացւոց։ Ա՝ առն որոյ անցցուք ՚ի մերաշնեայս։

Ա՛ստպէտ և՝ առաքեալ լուսաւորութեանս մերոյ Գրիգորիոս ՚ի Ա՝ստղեայ հայրապետէն Կեսարիոյ առեալ ձեռնադրութիւն և զիշխանութիւն հայրապետական, և յամենայն եկեղեցական պատս իւր առնդիմեր, որով և հաղորդակցութիւն հայաստանեայց եկեղեցւոյ ՚ի սկզբանէ անընդմիջաբար ընդ Յունայն էր, և միջնորդաւ նորին ընդ մեծի եկեղեցւոյն ՚առումն, որպես և Ա՝ ըացն միջնորդաւ մերոյս, սակայն և այնպէս գլխաւորութիւն և գերագահ իշխանութիւն ՚առումն քահանայապետին յայտնաբարբառ քարոզի եթէ յեկեղեցական գիրս մեր, եթէ ՚ի ժողովս ազգիս, և եթէ ՚ի գիրս ՚արց մերոց և վարդապետաց։

Յեկեղեցական գրոց ազգիս.

Ե՝ արական. "Կեցո զօրդի ծառայի քո, զոր ՚ի ՚առումն գահիցն վերապատուեցեր, ուր եղիցի զվիճն հաւատոյ հիման առնըք եկեղեցւոյ ,,։

Ա՛ռաքնտիրք ՚ի վարս սրբոյն Ա՛թանասի. "Յուլիոս եպիսկոպոսապետն ՚առումն գայ ՚ի ժողովն (Սարդիկեայ)։ զի ոչ էր արժան առանց նորա կամացն ժողով լինել, ըստ սահմանի ուղղափառաց ,,։

Յայսմաւուրք ՚ի վարս սրբոյն Ա՝ղեքսանդրոսի. "Ո՛ր եղև յետ վախճանի Ա՝ենտիատոսի (այսինքն Ա՝ելքիադեսի) հայրապետին ձեռնադրեցաւ սուրբն Ա՝ղեքսանդրոս յաթոռ նորա Պապ ՚առումն, և կարգեաց լինել յեկեղեցիս՝ լինն դասս կարգաւորաց ըստ նմանութեան երկնաւորաց։ . . . ՚Ըտմայեաց և փոխեցին ամենայն քրիստոնեայք զաւագ Ո՛ատիկն, զի յետ չորեքտասան լուսնի զկիւրակէն արասցեն ,,։

Ո՛չ այս լիոնեակ դասս կարգաւորաց մեկնելով Ա՝խթարայ դանձակեցւոյ վարդապետի ՚ի դատաստանա-

գիրան, ասէ. "Ինձ երորդ դաս վերագոյն քան զամենեսեան Պապիոս՝ Փրանգ Պապ, նմանեալ քերովբէից,,:

Ի կանոնագիրս. (կանոն. ա). "Ասիոս եպիսկոպոս ասաց. Հաճոյ թուեցաւ՝ զի եթէ մի ոք եպիսկոպոս ամբաստանեսցի, և ժողովեալ եպիսկոպոսունք նորին գահաւոյ՝ ի չիւրմէ աշտիճանէ շարժեսցեն զնա, և (նա) օրպէս ՚ի բաց կալով ՚ի նոցա դատաստանէն՝ ապաւինեսցի առ երանելին Հռոմայ եպիսկոպոսն, և կամեսցի լսել զդատաստան նորա, եթէ սա իրաւացի կարծեսցէ նորոգել զնորա իրացն հարցումն, և քննին գրել արժանի արասցէ առ եպիսկոպոսս առ այնոսիկ՝ որ մօտ են յայն գաւառն, նոքա զգուշութեամբ և հեղութեամբ մի լսատ միոջէ քննեսցեն,,:

Եւ դարձեալ ՚ի կանոնն բ. "Ոսկ որք ՚ի Հռովմ երթան առ սիրելի եղբայրն մեր Յուլիոս Հայրապետն, զպաղատանս՝ զոր ունիցին՝ տալ պարտին, զի նախ նա փորձեսցէ,,:

Եւ դարձեալ ՚ի կանոնն գ. "Յետ Հռովմայ աթոռոյն զաւագութիւն ունիցի Սոսատանդնուպօլսոյ եպիսկոպոսն,,:

Եւ դարձեալ ՚ի կանոնն դ. "Եթէ ոք յոխտաւորաց (այսինքն յոխտէ եկեղեցւոյ) ընդդիմացի Եկեղեսիոսի Հայրապետին (Հռովմայ), լուծցի,,:

Ի վարս Հարանց (պէտք ՚է Սոսատանդնուպօլսի. գլ. ժշ. 353.) պատմի, զի կրօնաւորք ոմանք գտեհիկք բարեպաշտել կարծելով՝ նեղքինացուցեալ զանձինս, և ապա բանադրեալք ՚ի պատրիարքէն Գէրմանդրիոյ, ջոգան առ պատրիարքունս Գնտիոքայ և Երուսաղէմի և առ տուրբն Գպիփան՝ բողոք ունել և խնդրել զարձակումն ՚ի բանադրանացն: Գալ և ՚ի նոցանէ ՚ի բաց մերժեալ, "Յայնժամ ասեն ցմիմեանս. Գնասցուք առ Պապն Հռովմայ, և նա դատ արասցէ մեզ վասն այսորիկ,,: Եւ իբրև գնացին առ Պապն Հռովմայ, պատմեցին զայս ամենայն և նմա, և ասեն. "Օ այս արարքին ընդ մեզ, և մեք վասն այսորիկ եկաք առ քեզ, զի դու դատ արասցես մեզ. զի դու ես տէր և գլուխ նոցա ամենայնի,,:

ի ժողովոց ազգիս.

Նարք ժողովոյն Տարսոնի առ վեցերորդ կանդիր Յունաց պատասխանեցին. "Ըստ այմ մասին իրաւունս վարկաք ձերում պատուականութեանդ՝ ընդ առաքելոյն Պետրոսի աթոռոյն հաւատարել և ընդ մեր նուաստութեանս. և այսպէս զինքանելով զօրէնս սիրոյն նորոգել. քանզի նոքա են առաքելոյն աւանդոյն աշակերտք ,,:

Նարք ժողովոյն Սոյ այսպէս սահմանեցին. "Մեծ եպիսկոպոսն Մելանու սուրբն Ամբրոսիոս գրէ՝ թէ հնազանդել պարտ է սուրբ և առաքելական եկեղեցւոյն Նռոմայ. վասն զի հաստատեալ է ուղղափառ հաւատով յառաքելոյն Պետրոսէ: Ընդ որպէս մարմին հնազանդի գլխոյն, նոյնպէս ընդհանուր եկեղեցին՝ որ է մարմին Քրիստոսի՝ հնազանդել պարտի նմա, որ գլուխ ի Քրիստոսէ հաստատեցաւ եկեղեցւոյ ,,:

Օ այս ժողով յիշատակէ և Յակոբ պատրիարք Նալէան ի գանձարանն իւր. (Ձան. հտ. ՟ը. 259):

Ի սահմանադրութիւնս ժողովոյն Ստանայ գրեալ է այսպէս. "Իբրև այսպիսի քննութեամբ ուսեալ ծանեան զժամանակ ծննդեանն տեառն, յայնժամ հրամայեաց արձակեալ ի մեծէն Նռոմայ ի Կոստանդնուպոլիս, և առ Յոհան պատրիարք Երուսաղէմի, և առ Փլաբիանոս պատրիարք Անտիոքայ, և ամենեքեան հաւանեցան եկեղեցւոյն Նռոմայ ,,:

Օ այս և ժողով յիշատակէ նոյն ինքն Յակոբ պատրիարք ի նոյն գլուխ իւր (էջ 259.) և կոչէ զայն "ընդհանուր ժողով ազգիս կամ հայաստանեայց եկեղեցւոյ ,,:

ի գրոց Հարց մերազնեայց.

Օ աքարիա կաթողիկոս (ի ճառն ի պեսոն). "Յառաջագոյն քան զծննդիլն ի Բեթղհեմ, տայ զերկրաւոր պետութիւնն ի Նռոմայեցիս՝ որ չորրորդ գազանն անուանեալ ի Դանիելէ: Քանզի ի Նռոմ հանդերձեալ էր կարգել զաթոռն Պետրոսի և Պօղոսի, և ըզպղխաւորութիւն սուրբ եկեղեցւոյ, և զՆռոմայեցւոց

թագաւորութիւնն կոչելոց էր ՚ի հաւատս՝ լինել գաւազան քրիստոսական գաւանութեանն ՚ի վերայ դիմամնորհիս խաչին Քրիստոսի ,,։

՚Ներսէս Շ նորհալի առ Մանուէլ կայսր. ,,՚Կա ոմն և ուսաք՝ թէ նուրբ և առաջին ամենայն եպիսկոպոսապետաց՝ հայրապետն Հռոմայ և փոխանորդն (այսինքն յաջորդ) Պետրոսի առաքելոյն, յիւրոց անտի խմաստնոց առաքեաց խոսել առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ վասն միաբանութեան հաւատոյ ,,։

Նա դարձեալ (Ալէք Անեւեղ)

,,Նա գու Հրոմի մայր քաղաքաց,
Պերապայծառ և պատուելի,
Մեծին ամենայն Պետրոսի
Ընդաքելոց գլխաւորի.
Կեղեցի անշարժելի
Ի կեփայեան շինեալ վիմի,
Պրանց դրժոխոց անյաղթելի,
Նա հնիք երկնիցըն բացողի ,,։

Պրիգոր Տղայ կաթողիկոս առ Տուտէորդի, որ ասէր կործանեալ զեկեղեցի Հռոմայ, գրէ հեգնօրէն. ,,Ընդ ՚ի զուր աշխատեցաւ Պօղոս . . . ՚ի զուր աշխատեցաւ և Պետրոս, և ոչ ուղղեցան ոտք նորա ՚ի գնացս՝ ընդ որ խորհեցաւ և արար. ընդունայն են քարոզութիւնք նոցա, և սուտ են խոստմունք տեառն առ Պետրոս՝ թէ ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։ Ընդ յաղթահարեցաւ և կորեաւ, զի ոչ է եկեղեցի՝ այլ այր աւազակաց, ոչ մկրտութիւն ՚ի թողութիւն մեղաց՝ այլ միայն լուացումն ջրոյ։ Ընդ ուրախ լեր, Պինդատոս, ցնծացիք և դուք դասք քահանայապետաց, Ընդնա և Կայիափա, վասն զի ոչ սպանիք տէր, այլ մեղուցիչ . . . ոչ հովիս, այլ վարատող ոչխարաց ,,։

Պրիգոր կաթողիկոս Ալիբատ առ Ինոսվկենտիոս պապ. ,,Պերակատար գլխափոխանդ Քրիստոսի, և հաստատեալ ՚ի նմանէ ինքնագլուխ պետդ եկեղեցւոյն Հռոմայ, որ է մայր ամենայն եկեղեցեաց աշխարհի . . . Պրիգոր ծառայ Յիսուսի Քրիստոսի, և շնորհօքն Աստուծոյ կաթողիկոս ամենայն Հայոց, և որդի սուրբ եկեղեցւոդ ձերոյ, որ է . . . մայր ամենայն եկեղեցեաց

Քրիստոսի. և որպէս սովոր էաք յառաջ, նոյնպէս և այժմ ունիմք զնա, և կամիմք միշտ հնազանդ մնալ հրամանաց ձերոց՝ մեք և արհիեպիսկոպոսք և եպիսկոպոսք և քահանայք և ամենայն կղերիկոսք եկեղեցւոյս մերոյ ,,։

Յոհաննէս կաթողիկոս յաջորդ Գրիգորեայ առնոյն ինքն Գնեվկենտիոս. "Լկեղեցի Հայոց, ձանաչելով զգլխաւոր հովուապետութիւնն և զվարդապետութիւնն ընդհեալ ի տեառնէ ամենասուրբ եկեղեցւոյդ Հռովմայ, եղև սիրելի դուստր նորա։ Քանզի եկեալ ի կողմանս կաթողիկոսութեան մերոյ գերազանց կարգինալ քահանայն, Տէր Պետրոս հրեշտակն ձեր, մեք անարժան սպասաւոր նորին եկեղեցւոյն՝ մեծահանդէս հանդերձանօք եկեղեցականաց և ժողովրդոց մերոց ելաք ընդ առաջ նորա, և ընկալաք զնա մեծաւ պատուով։ Լև յետ որոյ պատուեցաք և ողջունեցաք զմիմեանս, ապա դաւանեցաք առաջի նորա ձեզ և եկեղեցւոյդ Հռովմայ զհնազանդութիւն և զպատիւ ,,։

Քանք Թղթոյ Գիքայելի կաթողիկոսի և Գրգարու դեսպանին Հայոց առ Պապն. "Լև զայս ինչ ունիմք կարգ վասն յանցաւորաց կապելոց կամ բանադրելոց. իբր զի եթէ որ քահանայ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս և կամ կաթողիկոս զյանցաւոր ոք կապեալ իցէ կամ բանադրեալ, և ինքն վախճանեալ իցէ նախ քան զարձակումն յանցաւորին՝ զոր կապեաց ի կենդանութեան իւրում, ոչ ոք ի յաջորդաց կապողին կամ բանադրողին կարօղ լինի արձակել զկապեալն զայն կամ զբանադրեալ, բայց միայն գերագոյն Հայրապետն Հռովմէական՝ առ որ բատ կանոնաց մերոց առաքեմք զզբօղ ջացեալն հանդերձ պատճենիւ բանադրանաց նորա, զի արձակեսցի ... քանզի քեզ միայնոյ է զնա արձակել ,,։ ...

"Լսակ որ միանգամ ի մէնջ ոչ դաւանի զաթոռն Պետրոսի լինել ծայրագոյն, և զքահանայապետն Հռովմէական՝ գլուխ և Հայր բոլոր աշխարհի և ժառանգորդ փականաց, այնպիսին ուրացող է աւետարանի, Լրուսալէմայ, և լուսաւորչեան աթոռոյ Գրիմածնի ,,։

Ինքնագիր դաւանութիւն տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ Հայոց կաթողիկոսի, գրեալ յամի տեառն 1680.

“Եւ Վրիստոսի նուաստ ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն Հայոց, և պատրիարգ Աղաքշապատու լուսակառոյց մեծի և սրբոյ աթոռոյն Էջմիածնի, գոլով ձե ամօք և չորիւք ամնուք, ի քանևվեց ամի հայրապետութեան իմոյ, մերձ ի ժամ մահուան իմոյ, ի մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս . . . ետու զգաւանութիւնս իմ, զոր հաւատամ և դաւանեմ՝ զոր ինչ ի վերոյ գրելոյն աւանդեցաւ մեծի և առաքելական ընդհանուր սուրբ եկեղեցւոյն Հռովմայ : Հաւատամ և զնոյն ինքն զսուրբ եկեղեցին Հռովմայ՝ ունել լի և գերագոյն կատարեալ իշխանութիւն և պետութիւն՝ ի վերայ ընդհանրական կաթողիկէ եկեղեցւոյ : Հաւատամ և զվեհապետն նմին սրբոյ եկեղեցւոյ՝ աթոռակալ և փոխանորդ սրբոց գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և արձակօղ յերկինս և յերկրի ,, , և այլն :

Ի թուղթն Նահապետ կաթողիկոսի գրեալ յամին 1699 . “Երիցս երանեալ սուրբ Հայր և գերակատար գլուխ ընդհանուր եկեղեցւոյն Վրիստոսի Յննօչենտիոս երկոտասաներորդ սրբազան Պապ : . . . Եւ երանելոյն կոչեմք մայր զհռոմէական եկեղեցին, զոր հանապազ այն պիսի դաւանեալ եմք : . . . Սուտ կարծիքն հրատարակեալք յոմանց՝ զորոց լինի յիշատակ ի նամակս սրբութեան ձերոյ՝ չեն ի մէնջ ընկալեալ, այլ ամենևին հերքեալ. զի մեք կամք հաստատուն ի նոյն դաւանութեան և միաբանութեան, զոր արարին սուրբն Աղեքսանդրոս և սուրբն Վրիգոր լուսաւորիչն : Դաւանիմք որպէս նոքա դաւանեցին, միաբանիմք որպէս նոքա միաբանեցան . վասն զի դաւանիմք զսրբազան առաքեալն Պետրոս փոխանորդ Վրիստոսի ի վերայ բոլոր եկեղեցւոյ նորին, արածօղ և հովիւ ոչխարաց և գառանց Յիսուսի, վէմ եկեղեցւոյ սրբոյ, գլուխ առաքելոց սրբոց և իշխան նոցա, վէմ անվանելի ի դրանց դժոխոց, ժառանգորդ բանալեաց արքայութեան երկնից : Դաւանիմք և զվեհապետն Հռովմայ Ձէմարիտ յաջորդ Պետրոսի վիմի, և գլուխ ամենայն հաւատացելոց, և եպիսկոպոսապետ ամենայն եպիսկոպոսաց, ընդհանրական վարդապետ բոլոր եկեղեցւոյ Վրիստոսի : Դաւանիմք և զսուրբ եկեղեցին Հռովմայ մայր ամենայն եկեղեցեաց, որում զմեզ հնազանդիլ ձանաչեմք պարտաւորս .

և ընդունիմք զայն ամենայն, զոր ընդունի սուրբ եկեղեցին Հռովմայ. և հերքեմք զայն ամենայն, զոր նա՛ի բաց հերքէ ,,։

Սոցին սակի են և Թուղթ Սիմէոնի Պղուանից կաթողիկոսի, գրեալ յամի տեառն 1695. և Թուղթ Պի. նասայ արքեպիսկոպոսին եւդոկիացւոյ՝ պատրիարքին Երուսաղէմի, գրեալ յամին 1699, առ նոյն ինքն Հնոմկենտիոս պապ. և Պղեքսանդրի կաթողիկոսի գրեալ յամին 1709. և այլն *։

Պարտ է զգալ եւս զայն, զոր՛ի ժամանակս վարդապետից՝ Ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց և նախարարաց աշխարհս նախագահութեամբ Յովսեփայ կաթողիկոսի գրեցին առ Լևէոդոս, ըստ վկայելոյ սրբոյն Ղուկիայ, ուր ասէ զՏրդատայ՝ թէ “Օ հաւատոն ընկալեալ՛ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ, լուսաւորեաց զնաւարային կողմանս հիւսիսոյ ,,։ Որով եթէ զայն իցէ իմանալ զի հաւատքն՝ զոր՛ի սրբոյ Ռուսաւորչէն մերմէ ուսաւ և ընկալաւ Տրդատ՛ի Հայս՝ էր նոյն իսկ վարդապետութիւն Լևոնդիոսի Կեսարիոյ Հայրապետին և նորայն Հռովմայ, և եթէ զի Տրդատ՛ի գնալն իւրում՛ի Հռովմ ընդ սրբոյ Ռուսաւորչին՝ աւելի ևս ուսաւ և ընկալաւ անդ՛ի սրբոյն Սեղբեստրոսէ, և կամ յուսեալն և յընկալեալս հաստատեցաւ, ամենայնին՛ի նոյն յանգին՝ ցուցանել զգահն Հռովմայ գերագոյն գլուխ և հանրական առաջնորդ հաւատոյ։

* Կարի յոյժ երկայնեացի մեզ Ճառս, եթէ կամիցիմք ասա յառաջ բերել և զայլոց կաթողիկոսաց բանս, զԱխթաթայ, զԱաւփանոսի, զՄելքիսեդէկ, զՄովսէսի, զփիլիպպոսի, զեղիազարու կլայեցւոյ, զԱղարիայի, զեսայեայ, զԱաւուածատրոյ Համատանցւոյ, և զայլոց ամենեցուն զպատգամաւորութիւնս՛ի Հռովմ և զնամականի որդիական հպատակութեան առ քահանայապետս Հռովմայ, խոստովանելով զնոսա գերագոյն գլուխ համօրէն քրիստոնէից, և զեկեղեցի Հռովմայ մայր և դայեակ ամենայն եկեղեցեաց. զորս գացն խնդրողք հաւաքեալ ոճով՛ի կարևոր մատենին, որ մակագրի Աթոռ Հռովմայ, տպագրեալ՛ի Վենետա։

Ա՛Ն Ա՛ՐԿՈՒԹԻՒՆ

Յ՚ոյէ. Ա. — Ա. Ոչ ուրեք՝ ի սուրբ գիրս է գտա-նել՝ զի սահմանադրութիւն գլխաւորութեան իցէ մշտնջենաւոր, և ոչ զի յայնմ իցէ հաստատեալ միու-թիւն եկեղեցւոյ. վասն որոյ՝ ի վարկածս և ի կիղձս բաղձացեալս յենու վարդապետութիւնդ այդ, ուր՝ ի հաւատոյս պարտ է՝ ի պատգամացն Յ՚ստուծոյ և յա-ւանդութենէ ունել հաւաստիս: — Բ. Իսկ նմանու-թիւնք շինուածոյ, թագաւորութեան, հօտի, մար-միոյ և այլն, որովք վարի Ա՚րիստոս, ցուցանեն և եթ՝ զի եկեղեցի է ընկերութիւն բարեկարգ:

Պե. — Ա. Ա՚ռեպէտ և զմշտնջենաւորութիւն գլխա-ւորութեան Պետրոսի նիւթապէս ըստ բառից չկայէ զը-տանել ուրեք՝ ի սուրբ գիրս, այլ է իսկ գտանել զայն հաւաստարազօր հաւաստեօք: Այլ եթէ բաց՝ ի ձշմարտու-թեանց՝ որ ըստ բառից բացատրին՝ ի սուրբ գիրս՝ չէր այլ ինչ ընդունելի, զգլխաւոր մասունս հաւատոյ օրէն էր՝ ի բաց մերժել: Այդ զի Ա՚րիստոս մի ըստ հաւա-տոյ կացոյց զեկեղեցի, և՝ ի հաստատութիւն այսր միու-թեան սահմանեաց զգլխաւորութիւն, հարկ է՝ զի իցէ այն մնայուն սահմանեալ. և այս մասն է հաւատոյ, թէ-պէտ և ոչ բացատրեալ՝ ի սուրբ գիրս. որպէս և ոչ եր-րորդութիւն անձանց Յ՚ստուած, և ոչ վարդապետու-թիւն երկուց բնութեանց՝ ի մարդեղութեան գտանի անդ ըստ բառից բացատրեալ: Հաւաստիք՝ զորս՝ ի սուրբ գրոց, և վկայութիւնք՝ զորս՝ ի Հարց առտի ածաք, ոչ զվարկածս և ոչ զկիղձս բաղձացեալս ցուցանեն, այլ զի-րացն ձշմարտութիւն. ապա թէ ոչ, բառնայր միութիւն եկեղեցւոյ, և նովին իսկ եկեղեցի:

Ա՚րդապետութեան հաւատոյ արդարև պարտ է՝ ի պատգամացն Յ՚ստուծոյ գրելոյ կամ աւանդելոյ առ-նուլ հաստատութիւն, այլ ըստ բացատրութեան եկե-ղեցւոյ. արդ՝ ի վկայութենէ Հարց առհասարակ ու-սանիմք, զի ըստ աստուածաւանդ իրաւանց քահանայա-պետք Հռովմայ յաջորդեն գլխաւորութեան առաքե-լապետին. նովին իսկ ապա, ըստ կանոնացն առ՝ ի նո-

յանէ սահմանելոց, զհետ գայ՝ զի միջնորդեսցուք Հաւատոյ ընդունելութեան բովանդակիցի՝ ի պատգամ Աստուածոյ, և զի վասն այն իսկ ընդ մասունս Հաւատոյ ընդունի զայն եկեղեցի։ Քրիստոս խոստանայ յայտնապէս՝ ի վերայ Պետրոսի կառուցանել զեկեղեցի իւր. և խոստանայ դարձեալ զի դրունք դժոխոց չնա մի յաղթահարեսցեն, այսինքն զեկեղեցի կառուցեալ՝ ի վերայ Պետրոսի. և աւանդութիւն զայս այսպէս իմանայ, որպէս ցուցաք՝ ի վկայութենէ Նարկ։

— ԺԲ. Ընդլաբանութիւնք Քրիստոսի առհասարակ՝ որք ցուցանեն զեկեղեցի ընկերութիւն իմն բարեկարգեալ, ցուցանեն և առհասարակ միութիւն՝ ի նմա կատարեալ. ուստի զհետ գայ զի բարեկարգութիւն ընկերութեանն այնորիկ իցէ՝ ի միութեան. բայձ զմիութիւն, և բառնի իմաստ այն ամենայն նմանութեանց չինուածոյ, թագաւորութեան, հօտի և մարմնոյ, ընդ նմին և ամենայն բարեկարգութիւն։

Առաքել. Ժ. Պօղոս եկեղեցւոյ ինքն Քրիստոս է, որպէս և ասացն՝ ես ընդ ձեզ եմ մինչև՝ ի կատարած աշխարհի. ապա չեն ինչ պէտք այլոց գլխոց. զի ամենայն պատրիարքութիւնք յաջորդք առաքելոց հաւասար ունին իշխանութիւն։

Պե. Ընդ այդմ տրամաբանութեան ոչ լինէին պէտք՝ և ոչ այլոց պատրիարքաց, և ոչ արքեպիսկոպոսաց. այլ կարող էին և բաւական եպիսկոպոսունք ևեթ և քահանայք՝ ի հովուել զհօտ Քրիստոսի։ Իսկ եթէ ընդունելի է զի բան կարգաւորութեան եկեղեցւոյ քահանայք անմիջական հովիւք են ժողովրդոց, և՝ ի վերայ նոցա եպիսկոպոսունք, և՝ ի վերայ եպիսկոպոսաց արքեպիսկոպոսունք, և՝ ի վերայ սոցա պատրիարքունք և կաթողիկոսք, զիա՞րդ կարասցեն մերժել՝ զի և՝ ի վերայ պատրիարքաց ամենեցուն պիտոյ իցէ և կարևոր գերապոյն գլուխ, որով կատարեսցի դասակարգութիւն եկեղեցական, և պահեսցի միութիւն և բարեկարգութիւն եկեղեցւոյ։ Ոչ ապաքէն և յաշխարհի պետութիւնս է այս կարգ օրինաւոր, զի ամենայն իշխանութիւնք՝ ի ստորև աստիճանեալ բարձրանան, և գնան յանգին՝ ի մի ոք իշխանապետ կամ արքայ կամ ինքնակալ. և զիա՞րդ զկատարելագոյնն՝ ի պետութիւնս կամիցիմք անգլուխ

և Թերի քան զաշխարհական իշխանութիւնս։ Զասա-
կարգութիւն եկեղեցւոյ ոչ է ռամկապետութիւն կամ
աղնուապետութիւն, որպէս ախորժեն ոմանք կոչել,
այլ կատարեալ միապետութիւն հիմնեալ ՚ի Քրիստո-
սէ. բայց միապետութիւն սահմանադրական, որոյ օ-
րէնք և կանոնք անփոփոխելի են աւետարանն և սահ-
մանք ժողովոց։ Ումեմնայն չարք զայս այսպէս իմանան.
վասն որոյ և զքահանայապետն Հռովմայ, որպէս ՚ի վեր
անդր տեսաք, կոչեն փոխանորդ Քրիստոսի, գլուխ ա-
մենայն եկեղեցեաց, հայր ամենայն հաւատացելոց, հո-
վուապետ, եպիսկոպոսապետ, գլուխ ամենայն եպիսկո-
պոսապետաց, և զերազոյն իշխան ընդհանուր եկեղե-
ցւոյ։ Եւ կաձառ աստուածաբանիցն Կաղկեդոնի դատա-
պարտեաց զվարդապետութիւն Նեստորի ուրումն մակա-
նունանելոց Տէոտոկոս՝ որ ասէրն. “Ձիք յեկեղեցւոջ
գլուխ գերազոյն և միապետ բայ ՚ի Քրիստոսէ,,. և
Թէ “Ոչ երբեք սահմանեաւ է ՚ի Քրիստոսէ միապե-
տութիւն յեկեղեցւոջ,,։

Եւ դարձեալ՝ ընդունիմք զի գլուխ եկեղեցւոյ Քրիս-
տոս է. այլ որպէս Քրիստոս երևելի կացոյց զեկեղեցի
իւր, հարկ էր նմա տալ եկեղեցւոյ իւրում և գլուխ ե-
րևելի՝ փոխանորդ իւր. զի ինքն Թէպէտ և ընդ մեզ է
մինչև ցկատարած աշխարհի, այլ ոչ է տեսանելի։ Եւ
որպէս ինքն է՝ որ մատուցանէ զպատարագ, այլ կացոյց
և քահանայս փոխանորդս իւր՝ որ պատարագեն, ըստ
նմին օրինակի ինքն է և որ ուղղէ զեկեղեցի իւր, այլ
՚ի ձեռն փոխանորդի։ Ընդքան է յայտնի այս ճշմար-
տութիւն, մինչև ստիպել նորաղանդից աներևոյթ դնել
և զեկեղեցի։

Այլ Թողեալ զայս, ուր արդիւնք իրաց բարբառին՝
ընդունայն է ամենայն տրամաբանութիւն։ Քրիստոս
կացոյց իւր փոխանորդ զառաքելապետն, ետ նմա զիա-
կանս արքայութեան երկնից, յանձնեաց նմա զհօտ իւր,
և ՚ի վերայ նորա շինեաց զեկեղեցի. ապա որպէս իշ-
խանութիւնք այլոց առաքելոց անցին ՚ի յաջորդս նորա,
նոյնպէս և առաքելապետին անց ՚ի յաջորդս իւր. ապա
Թէ ոչ, ՚ի զուր էր Քրիստոսի ասելն ցնա՝ Թէ դու
դարձցիս երբեմն և հաստատեացես զեղբարս քո։ Ո՛ի
եԹէ եղբարքն նորա այլ առաքեալք՝ հաստատեալք ՚ի

հաւատս ՚ի Քրիստոսէ՝ անմոլորք էին և անկարօտք հաստատութեան, ապա ուրեմն զյաջորդաց նոցա էր բանն, որոց յաջորդք Պետրոսի եղեն և են և լինելոց են միշտ ՚ի հաստատութիւն։

Ի հաստատութիւն ճշմարտութեանս ցուցաք մեք ՚ի վերոյ, զի նորք առհասարակ ընկալան զիշխանութիւն Քրիստոսի զՊետրոս, և յաջորդս իշխանութեան նորին զքահանայապետս Հռոմայ։ Այլ աստ յաւելումք, զի եկեղեցի Յունաց՝ որ առանց իրիք երկբայութեան ընդ իշխագոյնն է յարևելեան եկեղեցիս՝ ՚ի սկզբանէ և այսր մինչև ցվաղ ընկալաւ զգլխաւորութիւն Պապին Հռոմայ, և ինքն իսկ վաղ ՚ի բազմէն յաթոռ պատրիարքութեան՝ գրեաց որպէս զամենայն նախորդս իւր գիր հպատակութեան առ նա։ Այլ եթէ աթոռն Հռոմայ չպահանջէր գիր այսպիսի ՚ի պատրիարքաց այլոց աղգաց, յայտնի է պատճառն. քանզի արևելեան եկեղեցիք առհասարակ ընդ յունականաւն համարէին, որպէս Ալեքսանդրիայն և Աղուանից ընդ մերոյս. վասն որոյ և Յոյնք պահանջէին զի կաթողիկոսն մեր ՚ի պատրիարքէն իւրեանց ընդունիցի ձեռնադրութիւն. և ՚ի բաժանել աղգիս ՚ի նոցանէ՝ այնչափ անցք անցին յաւուրս Ճ նորհալւոյն, և թղթակցութիւնք եղեն առ ՚ի դառնալ անդրէն ՚ի միաբանութիւն. որ չէր ինչ կարևոր, եթէ եկեղեցիք իւրաքանչիւր կարէին կալ ինքնուրոյն ընդ աներևոյթ գլխովն։

Դարձեալ և յանտեղի հետևանացն իսկ յայտ է. զի եթէ չէր ոք գլուխ եկեղեցւոյ՝ որ ՚ի յառնել մոլորութեանց կարէր ժողովով եպիսկոպոսաց դատապարտել զայն, զինքն մարթէր լուծուցանել զմոլորեալս. զի մարթէր նոցա բողոքել ՚ի ժողով ընդհանուր, զոր չէ մարթ գումարել միշտ. իսկ եթէ առանձին եկեղեցեաց էս տայի իշխանութիւնդ այդ անսխալութեան ՚ի վերս Ճիոս, գալով գայցէ առաջն ՚ի դէպ, զի որ յոյժ ցուցանէ՝ ոչ ինչ ցուցանէ։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Ջի Հռովմայ քահանայապետն, որպես գրեալ եկեղեցոյ, ի վերոյ է քան զառնևայն եպիսկոպոսունս ևս և գուռարևայս ի ժողով ընդհանուր:

Ժողով ընդհանուր իմանալոյ աստանօր առանց քահանայապետին Հռովմայ կամ փոխանորդաց նորա գումարեալ՝ Կանգղի չայտ է, զի ի գումարել նորա ժողով անձամբ, և կամ ի հաստատել զգումարեալն ի ձեռն փոխանորդաց իւրոց, չկարէ ի վերոյ քան զԺողովն զայն գոլ, զի ինքն քան զինքն չայնժամ գոյր ի վերոյ: Այլ համարիմք զԺողովն ուրոյն և զքահանայապետն ինքնուրոյն առեալ. որ Թէպէտ և անհնարին իսկ է ի պատահել՝ Թէ ընդհանուր եկեղեցի որոշեսցի ի գլխոյն, և կամ գլուխն չընդհանուր եկեղեցւոյ, զի երկոքինն իսկ հակառակ ելանեն դեպք խոստմանն Քրիստոսի, այլ քանզի են՝ որ զդէպս զայս ի ներքս ածեն, հարկ է և մեզ զանհնարինն ձառել:

Չայտ է յասացելոցս յառաջագոյն, զի գլխաւորութիւն Հռոմայ քահանայապետին հաստատեալ է ի հովուապետական իշխանութեանն՝ զոր ունի ընդհանուր ի վերայ ամենայն հաւատացելոց, և ս և եպիսկոպոսաց. ապա իշխանութիւնն այն զօրէ և ի գումարել նոցա ի ժողով: Ո՛ի եԹէ ոչ զօրէր, միակ պատճառս չզօրելոյն պարտ էր իմանալ զիտուր եպիսկոպոսաց գումարելոց և ոչ գումարելոց ի մի վայր. այլ զայս խոտոր զանազանութեան չկրնան ուրեք գտանել, ոչ ի սուրբ գիրս և ոչ առ հարս: Այսպէսն Քրիստոս աւանդեաց Պետրոսի զեկեղեցի իւր, հիմն զնա եկեղեցւոյ իւրում եդ, ետ նմա զիւականս արքայութեան երկնից, և կացոյց զնա հովիւ գառանց իւրոց և ոչխարաց: Այլ զինչ է եկեղեցի Քրիստոսի, բայց ժողով բոլորից առանձին եկեղեցեաց՝ յորոց բաղկանայ իմանալի մարմինն Քրիստոսի, միակ փարախն, մի հօտն, մի եկեղեցի կաԹոլիկէ: Այս որպէս տեսաք ի վերոյ, ի տերունական բանից անտի հարքն զհետ բերեն զիշխանութիւնս գլխաւո-

րութիւն Պետրոսի և յաջորդաց նորա ՚ի վերայ եկեղեցւոյ տուեալ ՚ի Քրիստոսէ. վասն որոյ և կոչեն զնա Հովուապետ, գլուխ եկեղեցւոյ և այլն. և ոչ ուրեք երբէք ՚ի ներքս ածեն զայդ նորաձև զանազանութիւն։

Դարձեալ և նոքին իսկ եպիսկոպոսունք ՚ի տիեզերական ժողովս դումարեալք, եթէ ոչ ՚ի վեր քան զինքեանս զքահանայապետն Հռովմայ դասանէին, զվճռոցն սահմանելոց ՚ի ժողովս անդ ոչ խնդրէին ՚ի նմանէ զհաստատութիւն։

Դարձեալ և ՚ի նմանութենէ չինուածոյ և հօտի և մարմնոյ, զորս Քրիստոս և առաքեալք ՚ի կիր արկանեն առ ՚ի ցուցանել զեկեղեցի, ՚ի բաց ՚ի ժերժի այդ խոհր զանազանութեան։ Այսպա թէ ոչ, հարկ էր ասել՝ զի հիմն բարձեալ բերիցէ զքարինս իւրաքանչիւր, այլ ՚ի յարել նոցա յիրեարս՝ ինքեանք զհիմն բարձեալ բերիցեն. զի զոչխարս իւրաքանչիւր արածիցէ հովիւն, այլ ՚ի մակաղել նոցա ՚ի փարախ՝ ինքեանք զհովիւն առածիցեն. զի զանդամս իւրաքանչիւր գլուխն ուղղիցէ, այլ անդամք միահամուռ ուղղիցեն զգլուխն. որ անտեղեակ անտեղին է, որպէս և իմաստնագոյնք ՚ի նորա զանդիւց խոստովանին։

Ա ՈՒ Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ն Ք

Ա՛րկ. ա. — ա. Քրիստոս ոչ զՊետրոս, այլ զեկեղեցի կացոյց գերագոյն առեան, յասելն (՚ի Մատ. ԺԶ.) “Այսպա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ,,. որով ըզՊետրոս և զյաջորդս նորա արկ ընդ եկեղեցեաւ։ — բ. Դարձեալ յաւելու անդ Քրիստոս. “Օ՛ի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ՚ի մէջ նոցա,,. ապա ևս առաւել ՚ի տիեզերական ժողովս է։ — գ. Ա՛ան այսորիկ եկեղեցի զիշխանութիւն ժողովոյ ՚ի վեր քան զքահանայապետին համարի արդեամբք. զի Ալիպրիանոս ընդդէմ դարձաւ Ստեփանոսի Հռովմայ քահանայապետին, և ասիացիք հակառակ կացին Ալիտորի։ — դ. Նա մոլորութիւնք բազմաք, թէպետ և ՚ի քահանայապետացն Հռովմայ դատապարտեալք, դարձեալ վերստին ՚ի ժողովս քննեալ

դատապարտեցան։ Եւ սուրբն Կղիմէս մեծն զջորեսին առաջին տիեզերական ժողովս հանգոյն յորից աւետարանսյն ասէր մեծարել. (գիրք ա. Եղե. իե)։ Եւ Նոմկենտիոս գ. (՚ի Եղե. ձղ. առ Փիլիպպոս Եպոսպ.) կարգի և պաշտաման իւրոյ վանգ մեծ կասկածեր հասուցանել, եթէ առանց տիեզերական ժողովոյ իշխեր ինչ առնել ՚ի դէպն՝ զորմէ բանք էին։

Պե. — ս. Եթէ եկեղեցի առանց գլխոյ չկարէ կալ, ապա և ոչ Քրիստոս զեկեղեցի անգլուխ՝ կացոյց գեբագոյն ատեան ՚ի վեր քան զՊետրոս, քանզի այս հաւասար է կացուցանելոյ զմարմին ՚ի վեր քան զգլուխ իւր, որ է անտեղի։ Ոկ եթէ ասիցէ ոք զեկեղեցի հանդերձ գլխովին դասեալ ՚ի վեր քան զՊետրոս, զհետ դայ ասել զգլուխ ՚ի վեր քան զգլուխն դասեալ, զի ամենայն իշխանութիւն եկեղեցւոյ ՚ի գլխոյ իւրմէ է կամ ՚ի ձեռն գլխոյն, յորմէ չէ մարթ զնա բաժանել։

— ռ. Քրիստոս խոստանայ կալ ՚ի մէջ երկուց և երից միաբանելոց յանուն իւր, այլ ըստ օրինի միաբանելոց. և ոչ է օրինաւոր միաբանութիւն ընդդէմ գլխոյն եկեղեցւոյ։ Եւ այն զի յոյժ ցուցանէ առարկութիւնդ, վասն որոյ ցուցանէ և ոչ ինչ. զի ըստ այդմ և առանձինն ժողովք դատաստանք և թեմականք ՚ի վերոյ քան զքահանայապետն Հռովմայ գտանէին։

— ռ. Եթէ սուրբն Կիպրիանոս՝ Ստեփանոսի Հռովմայ Հայրապետին, և ասիացիք Ա Իկտորի ընդդէմ դարձան, ոչ զհաւատոյ էին անդ բանք՝ այլ զկարգաց եկեղեցւոյ, և կամ դէթ այսպէս նոցա թուեցեալ։ Քանզի Կիպրիանոս անհիմն կարծեր զաւանդութիւնն ՚ի դէմն ածեալ, և ասիացիք անդիտանալ կարծէին Ա Իկտորի զաւանդութիւնն ՚ի Յովհաննէ աւետարանչէ հաստեալ առ նոսա յաղագս չորեքտասանի զատկական լուսնին։ Այն զի և յետ նիկիական ժողովոյն ոչ չորեքտասանիկքն անուանեալք և ոչ կրկնակնութք դադարեցին ՚ի հակառակութենէն։

— դ. Ո՛ մնջորութիւնս դատապարտեալս ՚ի քահանայապետիս Հռովմայ ժողովք տիեզերականք վերստին դատապարտեցին առ ՚ի յաւելուլ և ապտաքին հաստատութիւն, միաբանելով ընդ քահանայապետին ՚ի դատապարտել զայնս, և պաշտպան կալով, և ոչ եթէ ա-

ռանց քահանայապետին և՝ ի վերայ նորա վարելով զիշխանութիւն։ Այն որոյ և արտաքոյ իսկ խնդրոյս է. լանէ առարկութիւնդ, զի մեր քանքս զժողովոյ ևեթ են առանց քահանայապետին Հռովմայ, այսինքն թէ կարիցէ ժողովն ստիպել զքահանայապետն՝ ի հաւանութիւն՝ յանհնարին դնալս հակառակ կալոյ նորա սահմանաց տիեզերական ժողովոյ։

Ոչիրաւի սուրբն Կիպրիոս մեծն հաւասար աւետարանաց յարգեր զտիեզերական ժողովս, այլ հանդերձ գրելոյն և ոչ անգլուխս։ Եւ Հնոսվկենտեայ երկիւղն թէ գուցէ վտանգ պաշտամանն իւրում հասուցանիցէ՝ ՚ի տեղուն ական պատգամն հայեր, թէ «Օ՜ որ Աստուած զօրեաց՝ մարդ մի մեկնեսցէ»։ Անգղ երինչեր յանցանել ընդդէմ պատուիրանին ՚ի լուծանել զպատկն Փիլիպպեայ, եթէ երբեք էր այն օրինաւոր. և յերկարաձգեր զիրն առ ՚ի տալ տեղի զգաստութեան Փիլիպպեայ։

Նաւարկ. Բ. — ա. Կոստանդեան ժողովն յայտ արար՝ զի ժողով տիեզերական ՚ի վեր քան զքահանայապետն է. և հաստատեաց զայն Քաղկեդ ժողովն, որոյ վճիռք յերից քահանայապետաց Հռովմայ են հաստատեալ։ — բ. Զյամ յայտարարութեան և հաստարկայ միտք վկայեն. զի բոլորն մեծ է քան զմասն իւր, որպիսի է քահանայապետն մասն եկեղեցւոյ. և զի հաստանելի է անդամ՝ որ զմարմինն ապականէ, որպիսի մարթի լինել ոք ՚ի քահանայապետաց՝ ոչ դովելի վարուք։

Պե. — ա. Կոստանդեան ժողովոյն յայտարարութիւն վասն կեղակարծ քահանայապետին էր, և ոչ վասն օրինաւոր և ստոյգ քահանայապետաց։ Զայն զի և խընդիր է զառաջնոյ չորից գումարմանց այնր ժողովոյ՝ թէ արդեօք իցէ՞ն լեալ ըստ օրինի. զի բազմաց անընդունելի են։ Եւ ոչ երբեք քահանայապետք Հռովմայ զվճիռս Քաղկեդոյ ժողովոյն ըստ այնմ մասին հաստատեցին, այլ մանաւանդ բանիւք և արդեամբք հերքեցին զայն։

— բ. Օրինակ մեծութեան բոլորին քան զմասն չգոյ ՚ի բարոյականս. զի աստանօր զչափոյ իշխանութեան են բանք, որ գերագոյն է ՚ի գլուխն քան ՚ի քնաւ ան-

դան։ Եւ հատանելի իսկ են անդամք ստոյնագոյնք, ձեռք և ոտք ապականեալք, այլ ոչ և գլուխն։

Գործ. Ա. Պրիստոս ոչ Հռովմայ հայրապետին ևեթ, այլ և ամենայն եպիսկոպոսաց ետ իշխանութիւն առաջնորդութեան եկեղեցւոյ. և չէ պարտ ամփոփել զթեմական իշխանութիւն նոցա։ Նազում ինչ իշխանութիւնք էին նոցա յառաջագոյն, զորս ապա Հայրապետք Հռովմայ ինքեանց պահեցին։ Ոմն որոյ ետ թէ գլխաւորութեան նոցա ոչ դիպի չափ և սահման, կարասցեն զամենայն ինչ անձանց սեփականել, և ըստ կամի առաջնորդել եկեղեցւոյ. և հարկ ևեթ հնազանդութեան միայեղ եպիսկոպոսաց։

Պե. Պրիստոս ամենեցուն իսկ եպիսկոպոսաց ետ իշխանութիւն առաջնորդութեան եկեղեցւոյ, այլ ընդ իշխանութեամբ գլխոյն եկեղեցւոյ. զի համարեալ իսկ յաստուածային իրաւանց զիշխանութիւն նոցա, զոր ոչ ընդունին բազումք և երևելիք յաստուածաբանից, սակայն միաբանին ամենեքեան՝ զի պիտառութիւն այնր իրաւանց ընդ իշխանութեամբ է գլխոյն եկեղեցւոյ։ Ոմն որոյ ոչ ինչ ընդդիմ իրաւանց դործէ Հայրապետն Հռովմայ, եթէ երբէք յօդուտ սրբոյ եկեղեցւոյ, ամփոփիցէ յիմիք զիշխանութիւն նոցա։ Գլխաւորութիւն տուաւ նմա ի Պրիստոսէ առ ի շինել, և ոչ առ ի քակել. և այս միայն է չափ և սահման իշխանութեան նորա, այլն ամենայն բռնական է և անիրաւ։ Յիրաւանց գլխաւորութեան նորա ոչ մի ինչ օրինաւոր իշխանութեան եպիսկոպոսաց հասեալ միտս ցուցանէ այսքանեաց դարուց փորձ։ Օ՛ն եթէ ի դուշնաքեայս ինչ իրս՝ վասն զեղծանելոյ նոքօք ոմանց յարևմտեան եպիսկոպոսաց՝ ամփոփեաց զիշխանութիւնս նոցա, ոչ միայն իբրև գլուխ եկեղեցւոյ՝ այլ և որպէս պատրիարք և մետրապոլիտ արևմտից կարօղ էր առնել զայն։ Ոսկ չազատութիւն արևելեայց չէք նորա և ոչ ձեռնամերձ լեալ. բայց միայն ի հակառակել նոցա յիւրեանս և ի պիմել առ նա, իրաւարար կացեալ է և դատաւոր. և ի հերձանել նոցա ազգաւ և առաջնորդօք՝ մնացորդաց նոցա ինքնին կացուցեալ հովիւս և առաջնորդս, հարկաւորապէս զնոյն և ի վերայ նոցա վարէ իշխանութիւն՝ զոր և ի վերայ արևմտեայց։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Զի վձիռք Հռոմայ քահանայապետին՝ ի հաւատոյս, վճռեալք յաթոռոյ, իցեն անսխալք։

Քահանայապետին Հռոմայ, այնու իսկ զի է գլուխ ընդհանուր եկեղեցւոյ, անկ են նոյն ձիրք անսխալութեան՝ որով Հռոմանայ եկեղեցի։ Ոչ ի ինքն իսկ եկեղեցի, ուրոյն՝ի գլխոյ իւրմէ նկատեալ, նուաւ ունի զանսխալութիւն։ Այլ՝ի Հաւէն զանսխալութենէ Հռոմայ քահանայապետին՝ իմանամք զվճիռս նորա սահմանեալս վասն ընդհանուր եկեղեցւոյ, որ սովորաբար ասի խօսել նմա յաթոռոյ։ Այդ կրկին պայմանք խընդրին առ այս. նախ՝ զի զհաւատոյ կամ զբարւոյ վարուց իցեն բանք, եթէ՝ ի հաստատել՝ որ ինչ պարտն է հաւատալ, և թէ՝ ի հերքել՝ որ ինչ ընդդէմ է հաւատոյ և բարւոյ վարուց. և երկրորդ՝ զի վասն համօրէն եկեղեցւոյ և յայնոսիկս ընդ բանադրանօք վճռեսցէ որ ինչ ընդունելի է կամ մերժելի։ Ի սմա որոյ սխալէն որք միանգամ համարիցին ձառել մեզ զառանձնական բանից և գործոց և գրուածոց քահանայապետացն Հռոմայ, յորս ոչ ոք զնոսա անսխալս համարի։

Այդ սովին պայմանօք զանսխալութիւն նոցա սահմանեալ, խնդիր է՝ թէ արդեօք վճիռ քահանայապետին Հռոմայ, չև իսկ ընկալեալ յեկեղեցւոյ, իցէ անսխալ. կամ թէ քահանայապետն ինքնին իցէ անսխալ յայնպիսի վճիռս իւր, առանց յայտնի կամ լռելեայն հաւանութեան եկեղեցւոյ ընդ այնոսիկ։

Խնդիրս այս իմանալի ինչ է քան թէ իրական. զի քահանայապետն Հռոմայ ոչ երբեք ինքնին միայնակ սահմանէ ինչ, այլ միշտ հաւանութեամբ և ըստ կարծեաց յոգունց եպիսկոպոսաց և առաւածաբանից. և եթէ երբեք երկպառակել լիցի եպիսկոպոսաց և առաւածաբանից, այնուհետև յայնժամ կացուցանեն զեկեղեցի ընդ որս քահանայապետն իցէ, ըստ ամբոխեան առածին. Որ պետրոս է, անդ է եկեղեցի։ Այլ գարձեալ բազում այն է, զի՝ի յառնել մոլորութեան իրիք կամ

նորաձև վարդապետութեան ՚ի վիճակի եպիսկոպոսաց՝ նոքա ընդդէմ զինուորեալ, և ժողովս ևս գումարեալ, դիմամարտին այնմիկ բանիւ և գրով, և առ սուրբ գահն դիմեն՝ զի դատապարտեսցէ զայն։ Եւ նա յայնժամ ընդ խիստ քննութեամբ զերան արկանէ, հրատարակին գրուածք երկուստեք, և ապա ուրեմն տայ վճիռ։ Ըստ այսմ օրինակի ոչ երբէք քահանայապետն ինքնօրէն սահմանէ զերս հաւատոյ և բարւոյ վարուց. վասն որոյ խնդիրս այս յարդիւնս իրաց չունի տեղի։ Եւ զի չէ և վարդապետութիւնս այս սահմանեալ և հաստատեալ որպէս՚ի հաւատոյ, վայրապար համարիմք՚ի հաւատառօտութեանս մերում յերկարել զայսմանէ զբանս, այլ զայս ևեթ զեկուցանել պարտ համարիմք՝ զի ոչ ջամբագոյն և հասարակաց կարծիք աստուածաբանից զհաստատութեան ունին զկողմն, և համարին զքահանայապետն Հռոմայ անսխալ յայնպիսի վճիռս իւր։ Եւ նոքին իսկ աստուածաբանք գաղղիացիք որք երբեմն զհակառակ կարծիսն ունէին, արդ մերժեն զայն, և միաբանին ունել զկողմն հաստատութեան։

Ուրանդի Թող զայլ ամենայն աստուածաբանական հաւաստիս, և արդիւնք իրացն զնոյն հաստատեն՝ զի զոր ինչ և առաջարկեաց քահանայապետն Հռոմայ՚ի հաւատոյս իբրև գլուխ եկեղեցւոյ, ընդունելի եղև ցարդ ողջամտաց։ Եւ եթէ գտան իսկ երբեմն անհաւանք, յետոյ՚ի հանրական ժողովս առաջարկութիւն նորա հաստատեցաւ։ Այսպիսի է և խնդիրս բղխման Հոգւոյն սրբոյ առաջարկեալ՚ի Պապէն յերեքտասաներորդ դարու, զոր ստորագրէ Ալ արդան ժամանակակից ամենայն անաչառութեամբ. "Ի Շ. թուին, այսինքն յամի տեառն 1521, շարժեցաւ խնդիրս մեծ՚ի Պապէն Հռոմայ, և զրեաց յազգս ամենայն քրիստոնէից, եթէ պարտ է զամենասուրբ Հոգին Ելս առաւած խոստովանել՚ի Հօրէ և ի Քրիստոյ բղխեալ։ Եւ ոչ եղև հաճոյ Ելորւոց և Յունաց և Ալ բաց, բաց՚ի Հայոց՝ որք քննեցին զդաւանութիւն առաքելոց սրբոց՚ի ձեռն աստուածամերձ վարդապետին վանականի, և գտին զայն համախոհ երևելի արանց փառաւորաց, Ելթանասի, Կրիգորի աստուածաբանի, Կրիգորի Նիւսացւոյ, Կրիգորի լուսաւորչին, և այլոց սրբոց։"

Օնոյն գրէ և Կիրակոս աշակերտակից Վարդանայ, թէ Հայք միայն հաւանեցան առ ժամն՝ ուղղակի հաստատել զՀռովմայեցւոցն խոստովանութիւն, և ապա յետ ցուցանելոյ զերկուսին Հոգւոյն սրբոյ և Որդւոյ, յարէ. "Օ այս պատասխանեցաք Թղթոյն արևմտից. և մեք ի սոյն հաւատ հաստատեալ կամք ընդհանուր Նիւրոզդութեանն սրբոյ ,,: Նա այս չհմարտութիւն սահմանեցաւ ապա'ի տիեզերական ժողովին Վլորենտիոյ միաբանութեամբ և Յունաց. և ոչ երբեք ժողով ընդհանուր մերժեաց զվճիռ ինչ վարդապետութեան հաւատոյ ուրուք ի Պապից, ուր Պապք մերժեցին զվճիռս ժողովոց ոմանց, որպէս զերկրորդ ժողովոյն Եփեսոսի, զԼրիմինու, և այլն: Նա չեք իսկ հաստատութեամբ ցուցանել՝ ուրուք ի նոցանէ մոլորական ինչ վճռեալ և առաջարկեալ եկեղեցւոյ ի հաւատալ: Օ ի որպէս ասացաքն, ոչ եթէ ինքնօրէն ինչ վայրապար հատանեն նոքա վճիռ, այլ յետ բազում և երկար քննութեան հզօր աստուածաբանից, յետ լսելոյ զկարծիս առընթեր բակայ եպիսկոպոսաց, և յետ խնդրելոյ զլոյս և զօգնականութիւն աստուածային ընդհանուր, ապա սահմանեն ինչ:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛-արկ. ա. Տիեզերական ժողովք գումարին առ ի հաստատութիւն վճռոց հայրապետացն Հռովմայ, և ի նոցանէ առ տիեզերական ժողովս լինի բողոքել. ապա և այլն:

Պա. Տիեզերական ժողովք յաւելուն արտաքին ինչ հաստատութիւն ի վճիռս Հռովմայ հայրապետին և մանաւանդ ժողովոց, և ոչ թէ ներքին: Օ ի նովաստեանք, սամոստացին, մանիքեցիք և պելագեանք, առանց ընդհանուր ժողովոց դատապարտեցան, այլ ոչ ոք երկբայի ընդ դատապարտութիւն նոցին: Ի լինի ապաքէն ի մանուական ժողովոց և ի վճռոց քահանայապետացն Հռովմայ բողոքել յընդհանրական ժողով, այլ ի մոլորելոց միշտ և ի հերձուածողաց, և ոչ ուրուք յուղղափառաց և յողջամտաց բողոք երբեք այնպիսի արարեալ է:

Ա՛-արկ. բ. — ա. Կրիստոս եկեղեցւոյ եւ զանսխա-

լութիւն, այսինքն քահանայապետին հանդերձ եպիս-
կոպոսօք. ապա կարեւոր է հաւանութիւն եպիսկոպո-
սաց առ ի կացուցանել մանն հաւատոյ: — ր. Պապ թէ
ոչ, պարտ էր ընդ հերետիկոսս դասել՝ որք ոչն հնազան-
դին վճռոց քահանայապետին՝ չև ևս սահմանելոց յեկե-
ղեցւոյ, և մանն հաւատոյ համարել զվճիռս նորա, որ
չեն իսկ: — ռ. Այս օրէնն է երկբայել միշտ՝ թէ ար-
դեօք Պապն յանծռոյ իցէ վճռեալ ինչ, և կամ պա-
հեալ զպայմանս այնպիսի վճռոյ:

Պե. — ս. Ոչ ոք ժխտէ բոլորութիւն եկեղեցւոյ տուեալ
ի Քրիստոսէ զանսխալութիւն. այլ այն իսկ է խընդիրն՝ թէ արդեօք տուեալ իցէ զայն և գլխոյ նորին
միայնոյ: Զրդ քանզի եկեղեցի առանց գլխոյն ոչ է ան-
սխալ, աստի զհետ գայ՝ զի Քրիստոս ի ձեռն նորա զե-
կեղեցի կացուցեալ է անսխալ. այսինքն այնու իսկ ան-
վանելի գնա ի դրանց դժոխոց պարարեալ, զի ի վերայ
Պետրոսի և յաջորդաց նորա կառուցեալ է զայն:

— ր. Պարտ իսկ էր ընդ հերետիկոսս դասել զան-
հնազանդս վճռոց քահանայապետին, եթէ խնդիրն ան-
սխալութեան նորա սահմանեալ էր և ընկալեալ յամե-
նեցուն որպէս մանն հաւատոյ: Զայլ քանզի չև ևս իրրև
մանն հաւատոյ սահմանեալ է խնդիրս այս, նմին իրի
անհնազանդք վճռոց նորա չև ևս սահմանելոց յեկե-
ղեցւոյ յայտնապէս և կամ լռելեայն հաւանութեամբ,
թէպէտ և մեղանչել մեղանչեն ընդդէմ հաւատոյ, այլ
յարտաքին աստենի չհամարին հերետիկոսք:

— ռ. Որքն էր ապաքէն երկբայել ընդ վճիռս քա-
հանայապետին՝ թէ արդեօք յանծռոյ իցէ վճռեալ,
եթէ անսխալութիւն նոցին հաստատեր ի խորհրդակ-
ցութիւն եպիսկոպոսաց և կարդինալաց և աստուածա-
բանից: Զայլ Քրիստոս Պետրոսի որպէս գլխոյ եկե-
ղեցւոյ՝ և յաջորդաց նորա ետ զձիրն զայն. վասն որոյ
ի տարակուսի՝ թէ արդեօք քահանայապետն պահեալ
իցէ զպայմանս վճռոց սահմանելոց յանծռոյ, գհաս-
տատութեան կողմն պարտ է ունել. ապա թէ ոչ, զնոյն
տարակոյս և զվճռոց տիեզերական ժողովոց մարթ էր
ունել:

Շաբէկ. գ. Ընդհիմս հարցեալ՝ ի Սերգեայ և՝ ի Կիւ-
րոսէ՝ ի պատասխանել իւրում առ նոսա վարդապե-

տական Թղթովք, կալեալ զխորհուրդ միակամեայցն այնոցիկ՝ յանդիմանեաց զողջամիտն Յովհաննիս։ Այսպա մելօրեցաւ նա ՚ի հաւատս՝ անպատեհ համարեալ մի կամ երկու ներգործութիւնս ասել ՚ի Քրիստոս. զի և յերկրորդում Թղթին՝ մի կամն ասէր ՚ի Քրիստոս։ Օ՛ի Թէպէտ և համաձայն սրբոյն Լեւոնի Թուխցի խոսել, այլ զնոյն և Սերգիոս Հանգոյն նմին վարդապետէր՝ միակամեայն գոլով։

Պե. Սերգիոս և Կիւրոս հերեսիոլոք ժամանակին քաջ գիտելով զողջմտութիւն Սոփրոնիոսի, հնարեցան նենգանօք՝ պատրուակաւ խաղաղութեան լուծցուցանել զնա. և Սոփրոնիոս ըմբռնեցաւ ՚ի խորհուրդս նոցա լուել վասն խաղաղութեան զի մի նորոգ յուզմամբ վըրդովեսցի եկեղեցի։ Այլ քանզի Սոփրոնիոս՝ որ տեղեկագոյնն էր չարութեան մտաց Սերգեայ և Կիւրոսի հակառակ կայր այնմ անխորհուրդ լռութեան, Սոփրոնիոս խաբեաւ ՚ի Սերգեայ՝ յանդիմանեաց զղնացս Սոփրոնիոսի, և ոչ Թէ զվարդապետութիւն. և անպատեհ համարէր խօսել զայսպիսեացս, և ոչ եթէ չընդունէր զՀամարեր խօսել զայսպիսեացս, և ոչ եթէ չընդունէր զՀաստատութիւն. ապա Թէ ոչ, ՚ի նմին իսկ Թղթի անձամբ անձին հակառակախօս գտանէր։ Այս մի կամն ասէր ՚ի Քրիստոս վասն կատարեալ միաբանութեան մարդկային կամացն ընդ աստուածայինն, և ոչ որպէս ՚ի մէջս է հակառակութիւն կամաց մարմնոյ ընդ հոգւոյ։ Այս զի այս էին միտք նորա, ոչ միայն ՚ի յաջորդ բանիցն յայտ է, զի ասէ. "Աստուածութիւնն էառ ոչ զմեր մեզս, այլ զբնութիւն՝ որպիսի ստեղծաւն նախ քան զանկումնն, և ոչ որպիսի յետ անկմանն։... Այս վարդապետութեան եկեղեցւոյ պարտ է մեզ խոստովանել, զի բնութիւնք երկու՝ իսկապէս միաւորութեամբ կցորդեալք ՚ի մի Քրիստոս՝ հաղորդք էին և գործակիցք իրերաց ՚ի ներգործել, աստուածայինն զաստուածայինս և մարդկայինն զմարդկայինս ներգործելով,. և խաւն ինչ ստորև. "Խոստովանին ընդ մեզ՝ երկուց բնութեանց, աստուածութեանն ասեմ և առեալոյ մարդկութեանն, ՚ի մի անձն միաձնին Աստուածոյ Հօր անշփոթ անբաժանելի և անայլայլակ իւրաքանչիւր զիւրան ներգործել,. այլ և Աբբայ Յովհաննէս քարտուղար նորա, և յաջորդ Սոփրոնիոսի Յո-

հանեսք Դ, և սուրբն Աթաթիոս վկայ երաշխաւորեն այնմ։ Իսկ Թէոփիլոս Ալեքսիոս ևս միականեայ հանդոյն նմին՝ ի վերին երեսս վարդապետեալ, այլ միաբ նորա ոչ միաբանելին ընդ խոսիցն. զի մինչդեռ առ երկիւղի հանձայնէրն Նոռեայ, ձեռն տայր՝ ի ծածուկ հերակլի կայսեր մոլորութեանն։

Ընդդէմ. Դ. Ապա ուրեմն մոլորեցաւ վեցերորդ ժողովն տիեզերական, որ դատապարտեաց զՆոռիոս վասն տարաձայնութեան Թզթոյ նորա՝ ի Նարց, վասն հաստատելոյ նորա զվարդապետութիւն Ալեքսեայ, վասն քարոզելոյ նորա մի կամն և մի ներգործութիւն՝ ի Քրիստոս, և զնա հանդոյն Ալեքսեայ, Կիւրոսի, Պիւռոսի, և այլոց միականեայց նզովեաց, և զգիրս նորա իբրև զայլոց հերեսիովտացն հրոյ ձարակ եառ։

Պէ. Ոչ զայս ամենայն ոչ վասն մոլորելոյն Նոռեայ, այլ վասն անարժան լռութեանն եւթ ապար. զի որում պարտն էր ըստ իշխանութեանն աւանդելոյ նմա՝ ի տեառնէ՝ հաստատել զեղբարս իւր, նա ըմբռնեալ՝ ի նենգ միականեայցն Ալեքսեայ և Կիւրոսի՝ լռեցուցանէր զնոսա որք երկուս կամս և երկուս ներգործութիւնս ասէին՝ ի Քրիստոս։ Այս եւթ էին յանցանք Նոռիոսի, որպէս յայտ առնէ սուրբն Լևոն Բ. ի Թզթին առ Պոտոնատոս, և մանաւանդ՝ ի միւսումն՝ որ առ եպիսկոպոսունս Պանիոյ, ուր ասէ. "Որ զոյց մոլորական վարդապետութեան ոչ, որպէս պարտն էր առաքելական իշխանութեանն, շինջոյց անդէն՝ ի սկզբան, այլ անտես առնելովն Ձարակեցոյց"։

Ըստ այսմ սահմանք ժողովոյն լինին դիւրիմացք. զի Թուղթ Նոռիոսի տարաձայնի արդարև՝ ի Նարց այնու՝ զի նորա ոչ երբեք տեղի տային մոլորութեան, լռեցուցանելով զՀիմարտութիւն. զի յունկնդիր լինել խորհրդոյն Ալեքսեայ՝ հաստատէր ինն այնու զվարդապետութիւն նորա, որում պարտէրն կալ հակառակ, և նովին իսկ համարէր մի կամն և մի ներգործութիւն հաստատել՝ ի Քրիստոս, ուր ինքն երկուս խոստովանէր՝ որպէս ցուցաւ վերագոյն։ Իսկ յայսմ ամենայնէ յայտ է, զի ժողովոյն հերետիկոս զնա համարել և զգիրս նորա այրել՝ վասն ձեռնտու և նպաստամատոյց լինելոյ նորա էր հերեսիովտացն Ալեքսեայ և Կիւրոսի։

Եւ միով բանիւ, Թուղթ Կնորհոսի ոչ էր վճիռ՝ իբր սահման հաւատոյ տուեալ հաւատացելոց, զորմէ միայնոյ են բանք մեր, և ըստ այնմ ևեթ անսխալ ասեմք զքահանայապետս Հռովմայ. նմին իրի ասէ և Պօսիւէ. "Հռոմէական եկեղեցի, ուսեալ ՚ի Պետրոսէ և ՚ի յաջորդաց նորին, անընդունակ է մեղուցանելոյ:... Պօղոսիւթիւնք անցին ևեթ ընդ նա, այլ ոչ կարացին արմատանալ ՚ի նմա: Հարցեալ յամենայն աշխարհէ, և ընդ այնչափ դարս ամենայն ազգի ազգի խնդրոց զվարդապետութենէ հաւատոց, զբարւոյ վարուց և զարարողութեանց պատասխանեալ, եթէ ով որ կամ երկու ՚ի քահանայապետաց բռնադատեալ կամ պատրեալ և Թերացեալ էցէ ՚ի պաշտպանելոյ անյողդողդ կամ ՚ի լիով բացատրելոյ զվարդապետութիւն ինչ հաւատոյ, և եթէ մի ևեթ ՚ի պատասխանեացս նոցա ՚ի միջէ ՚ի տիեզերական ժողովոյ յանաչառ խոստութենէ էցէ սպրտեալ, այդ առանձնական Թերութիւնք ոչ ինչ կարեն ստնանել կեփայեան գահուն:... Հռոմէական եկեղեցի է միշտ կոյս. հաւատք Հռոմէական է միշտ հաւատք եկեղեցւոյ. հաւատայ նա միշտ որ ինչ հաւատացն, նոյն ընդ Հանուր հնչէ բարբառ, և Պետրոս կայ ինայ ՚ի յաջորդս իւր հաստատութիւն հաւատացելոց: Վրկիչն ինքն ասաց՝ զի "Երկինք և երկիր անցցեն, և բանք իւր մի անցանիցեն,,. (Պոսիւէ յապենաքօսուրեան ատ գէրս Պօղղէոյ. յ9. նոյ. 1681):

ԳԼՈՒԽ Է

ՅԱՂԱԳՍ ՀԱՐՑ ՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Հարք կոչին հին վարդապետք աստուածաբանք կացեալք յեկեղեցւոջ Վրկիտոսի. և խնդրի ՚ի նոսա նախ՝ գիտութիւն, երկրորդ՝ սրբութիւն, երրորդ՝ վկայութիւն եկեղեցւոյ զնոցանէ, և չորրորդ՝ հնութիւն: Լուսինեա և Տերտուղիանոս Թէպետ և նուաղեալք ՚ի սրբութենէ, այլ են ՚ի համարի Հարց վասն բարձրագոյն գիտութեան իւրեանց և հնութեան:

Հարք եկեղեցւոյ՝ կոչին և վարդապետք, և են երորդ յեկեղեցւոջ ըստ կարգի. "Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ ըզմարգարէս, երրորդ՝ զվարդապետս,,. (ա. Կոր. ԺԲ. 28): Այլ ոմանք ի նոցանէ առաւելեալք քան զայլս ի վաստակս, ըստ աւելազանցութեան կոչին վարդապետք եկեղեցւոյ. որպիսիք են երկոտասանքն առ մեզ, Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս, Անդրեաս, Փիլիպպոս, Բարթողիմէոս, Թովմաս, Մատթէոս Հրէասէրն, Յակոբ, Թադէոս, Սիմոն Նեւսացի, Պետրոս աստուածաբան, Պաւղոս, Մակեբերան, և Մատթէոս աւետարանչական: Որք ըստ Թուոյ առաքելոյ անուանեալք. այլ երևելագոյնք յերկոտասանից աստի ըստ Թուոյ չորից աւետարանչաց անուանին չորեքին վարդապետք եկեղեցւոյ յոյնք՝ Թադէոս, Մատթէոս և Պետրոս աստուածաբանն: Ոմանք փոխանակ Մատթէոսի դնեն զՄակեբերան, զի Մատթէոս ի տեսականն աստուածաբանութեան է հզօր, իսկ Մակեբերան ի քարոզականին: Սոքա այսմ և առ առեալս են չորեքին վարդապետք՝ Գրիգոր մեծն, Ոգոստինոս, Ամբրոսիոս և Երոնիմոս: Իսկ առ մեզ մեծն Ահակ, Մեսրոպ, Մատթէոս և Շնորհալի. զի սուրբ Ուսուցիչն մեր ի վեր է քան զկարգ վարդապետաց առաքելագործ վաստակօքն:

Զինչափ է գօրաւոր վկայութիւն հարց, զի միաձայնութիւն նոցա նոյն ընդ աստուածայինն աւանդութեան համարի, որ է անսխալ կանոն հաւատոյ՝ հանդոյն սուրբ գրոց: Ոյն որոյ և աւանդապահք կոչին սուրբ հարք. և երկրորդ ժողովն Նիկիոյ սահմանէ. "Որ զվարդապետութիւն սրբոց հարց արհամարհէ, նզովեալ լիցի,,: Եւ ժողովն Քաղկեդոնի. "Հայեցիս հաւատացին սուրբ հարք, այսպէս ապա հաւատասցուք և մեք,,: Եւ ժողովն տրիդենտեան. "Ի որ իշխեսցէ զբանս սուրբ գրոց ընդդէմ համաձայն մեկնութեան սրբոց հարց մեկնաբանել,,: Եւ սուրբ Ուսուցիչն մեր. "Ոչ արդապետութիւն ոգւոյն սրբոց գրով աւանդեցաւ մեզ ի մարգարէից, յառաքելոց, և ի սրբոց հարց,,: Եւ խնաստութեամբ յաւելու ասելով. "Երկոքին առքա այնպէս յօդեալ են ընդ իրեարս և կապակցեալ, զի անհնար է մեկնել զնոսա և զատանել. ասեմ իսկ

զվարդապետութիւն սրբոց Հարց և զաւանդութիւն եկեղեցւոյ. որ զմի յերկաքանչիւրոցս իշխեսցէ խախտել, քակտէ Հարկաւ և զմիւսն ,,։

Ըստ այսմ միաձայնութիւն Հարց ի հաւատոյս և ի բարոյականին, է անսխալ. և միաձայնութիւն առաւելագունից՝ հաւանական. վասն որոյ ի տարաձայնել նոցա՝ եկեղեցւոյ է անկ սահմանել զճշմարտութիւն։

Զի ի ստոյգ իմացուած բանից Հարց՝ պարտ է նախ դիտել յորմէ ժամանակի է գրեալ, յառաջ քան ըզսահմանել այնր խնդրոյ՝ թէ յետոյ, յառաջ քան զմոլորութիւնս հերետիկոսացս զայնմանէ թէ յետոյ. զի որպէս ասէրն ( )գոստինոս ասէ, "Ի՝նչ չէ հերետիկոսացդ կամակորեալ զճշմարտութիւն, համարէին Հարք՝ զի անմոլար իմանայցին բանք իւրեանց, և աներկևանս խօսէին ,,. մոլորութիւնք ետուն ձիգել և ձիգրտել Հարց զլեզու իւրեանց։

Արկրորդ՝ զի Հարք ի պաշտպանել զճշմարտութիւն ընդդէմ իրիք ի մոլորութեանց, թուլն երբեմն միտեալք ծայրայեղ ի ներհակ մոլորութիւնն։ Այս երրորդ՝ համեմատել զերկբայելի բանս նոցա ընդ այլսըն ասացեալսն ի նոցանէ, որով ևէթ ձանաչի վարդապետութիւն նոցա։ Այս առաւել քան զամենայն, յածել ի գիրս նոցա, և հմտանալ ի լեզու Հարց՝ որ ինքնուրոյն է գիտութիւն։

Որ ինչ զՀարց և զվարդապետաց ասացաք, զնոյն է իմանալ և զաստուածաբանից, զի համաձայնութիւն նոցա ի հաւատոյս՝ հաւաստիք են ձշմարտութեան, թէ և ոչ սահմանեալ յեկեղեցւոյ. և որ ոչ ընկալցի զայն, համարի յանդուգն և մերձ ի մոլորութիւն։

ՃԱՌ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԲԱՆԻՒ ԸՆԴ ՀԱՒԱՏՍ ԱՌՔՆԶՈՒԹԵԱՆ

Բան կամ բանականութիւն է մարդկեղէն մտաց բովանդակ զօրութիւն ձանաչելոց և գտանելոց բնական նպատակս զՁշմարտութիւն։ Իսկ հաւատք է ազատ հաւանութիւնն այն, զոր միտք՝ աստուածային շնորհօք օգնեալ՝ ընծայէ գերբնական Ճշմարտութեան, վասն աստուածային յայտնութեան վկայելոց զայն։ Այսպա ուրեմն բանն յածի զբնական Ճշմարտութեամբք, զորս կարէ ձանաչել և գտանել. իսկ հաւատք ՚ի վերայ եկեալ բանին՝ յածի զգերբնական Ճշմարտութեամբք յայտնեցեալովք առ ՚ի Յստուծոյ, զորս կարէ ՚ի միտ առնուլ և գտանել։ Երկդի է բանին ընդ հաւատս առընչութիւն. նախընթաց, զուգընթաց և հետևորդ։

ԳԼՈՒԽ Ա.

ՑԱՂԱԳՍ ԲԱՆԻՒ ՆԱԽՆԹԱՑ ԱՌՔՆԶՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՀԱՒԱՏՍ

Որք միանգամ՝ զբանին ընդաբոյս զօրութենէ ձառեյին՝ յերկուս ծայրայեղ անչափութիւնս զառածան, կիսոց ընկձելով զայն և յոյժ տկարացուցանելով, այլոց կալով ի ինն զայն ՚ի վեր ամբառնալով։ Երկայնիմտք զամենայնէ կեղակարծեն, անմատոյց և անըմբռնելի համարեալ բանին զՁշմարտութիւն։ Ուրեմն և հետևօղք նորա, քանզի անկմամբ նախամարդոյն զմարդկեղէն բնութիւն յէական մտացն իւր համարեին բոլորովին յոտացեալ, ոչ միայն զանձնիշխան կամ ժխտեն մարդումն սահե-

ցելոց, այլ և այնպէս զմիտս նորա համարին տկարացեալ ՚ի խնդիր Աշմարտութեան, մինչև առանց լուսոյ Հաւատոյ չկարել նմա Ճանաչել ինչ Աշմարիտ և ՚ի բնական կարգի։ Լուսոյ և նորաշնդք չընդունին խոխոր ինչ իսկապէս ընդ բարի և ընդ չար, այլ միայն ՚ի կամսն Աստուծոյ վարկանին զխոխոր բարոյականին։

Այսպէս և այլք աւելի կամ նուազ ցնորեցան, մինչև ՚ի հակառակն ծայրայեղ զառածեալ՝ ոչ միայն զիւրաքանչիւր ուրուք միտս կացուցանել զատաւոր ՚ի վէճս Հաւատոյ, այլ և ՚ի վեր քան զաստուածային յայտնութիւն ամբառնալ զայն, և զերագոյն կանոն Հաւատոյ և բարոյականին համարել զայն. ուստի այնչափ աղանդք առ մեօք ՚ի վեր երևեցան։

Արդեօ, որ այնպիսի իղձս առ ՚ի գիւտ Աշմարտութեան զգայ յանձին, համարիմք կարել բնական զօրութեամբ հասանել յայն. ապա թէ ոչ ընդունայն ՚ինամ հարկ էր ասել տնկեալ արարչին զայս ցանկութիւն։ Պաքէն միտք մեր այնպիսի ձրիւք է հաստեալ, զի գէթ ՚ի բազում իրս կարէ աներկևան ՚ի վերայ կալ Աշմարտութեան. քանզի կրկին զօրութիւնք են ՚ի նմա Ճանաչելոյ, զգայական և իմացական. և երկոցունցն մի և նոյն է պատճառ, այն զի զգացօղ է և իմացօղ. որալ երկոքինն զօրութիւնքն այնօրիկ սերտ ընդ իրեարս կցօղին։ Եւ ՚ի կցորդութենէ աստի կրկին զօրութեանց յառաջ գայ ստոյգ գիտութիւն. և ՚ի բաժանմանէ երկոցունց սոցա բազում այնչափ անտեղի և այլանդակ կարծիք, մանաւանդ ՚ի Գերմանիա, ՚ի վեր երևեցան։

Ի կրկին զօրութեանց աստի և կրկնակ կարգ Աշմարտութեան յառաջ գայ, որ հիմն է և խոխոխ ամենայն գիտութեան և ստուգութեան։ Օ՜ ՚ի ներքին զգացողութենէ անտի միտք մարդկեղէն գիտէ զգալ իւր, և այնու ուղղակի և անմիջական գիտութեամբ, զի Աշմարտութիւն իւրոյ գոյութեանն չկարօտի այլոմ ցուցակութեան. որպէս զի եթէ ոք ժխտել զայն կամ յերկբայս արկանել կամիցի, նովին իսկ ցուցանէ զայն և հաստատէ։ Գարձեալ զգայողութեամբս այսուիկ գիտէ միտք մարդոյ որ ինչ կրի յինքեան. և զկիրս զայսոսիկ կամ մեզէն զարթուցանեմք ՚ի մեզ, և զգամք զի է պատճառ նոցին ՚ի մեզ. կամ ՚ի մեզ առանց մեր, և է

իսկ զի յակամայս մեր, զարհնուն. և մեք յայտնապէս
Հանապէմք զկրաւորական պատճառ նոցին ՚ի մէջ։ Իսկ
քանզի այս անմիջական գիտութիւն՝ որ յայտնէ մեզ
զայնս՝ աներկբայելի է, ապա իսկապէս Հմտարտութիւնք
են այնոքիկ, որպէս իսկական է զգացողութիւն մեր
կամ գոյութիւն. ապա թէ ոչ, Հարկ էր ասել՝ թէ ըզ-
պայ Հոգին միոչ ոչն զգայ։

Նայց քանզի զգացողութիւնս այս ոչ կարէ յառաջ
բերել զՀարկ տրամաբանական ընդՀանուր և անսահ-
ման՝ որ առ ստոյգ գիտութիւնս խնդրի, վասն այսորիկ ՚ի
բարձրագոյն կարգէ այսինքն յիմացականէն պարտ է մեզ
խնդրել տարերս՝ որ զՀարկն զայն յառաջ ածիցեն։
Նյսպիսի են օրէնքն այնոքիկ բանին վերացեալք և ընդ-
Հանուրք, որք բացայայտութեամբն իւրեանց միջնոր-
դեն Հարկաւորապէս ՚ի ստոյգ գիտութիւն այնր կարգի
Հմտարտութեանց. զոր օրինակ՝ Նոլորն մեծ է քան ըզ-
մասն իւր. Ձիք արարած առանց արարչի. Ալր ինքնա-
գոյն է, Հարկ է զի ՚ի յաւիտենից իցէ. Նստուած ոչ
խաբէ, և ոչ խոսի։ Ցարերքս այսոքիկ օրինաց, որ և
առածք անուանին, ինքնօրէն բացայայտութեամբն յա-
ռաջ բերեն զՀարկ տրամաբանական՝ անկարօտք ամե-
նևին և անընդունակք յուցակութեան։ Նյ Հմտարտու-
թիւնք յառաջ եկեալք յայնցանէ՝ կցորդութեամբն
այնուիկ, որով Հարկաւորապէս զօդին ընդ իրեարս,
դիւրաւ կարեն վերանալ ՚ի գերագոյն սկիզբն՝ որ Հա-
կառութիւն անուանի, այսինքն զի նոյն ինչ չկարէ միան-
գամայն լինել և ոչ լինել։ Նյսոքի միտք կամ բանն մարդ-
կային ընդունի զլոյս իւր և զկանոն Հմտարտութեան ընդ-
Հանուր և Հաստատուն։

Նյ ՚ի քաջ խելամտութիւն բանիցս, պարտ է գի-
տել ինչ ինչ զատուգութենէ և զայլ և այլ տեսակաց
նորա։ Ալտուգութիւն է Հաստատուն և բանաւոր Հա-
մոզումն մտաց ընդ Հմտարտութիւն իրին ծանուցելոյ։
Նստատուն՝ ՚ի բաց մերժելով զամենայն երկբայու-
թիւն, և բանաւոր՝ զի ոչ ՚ի կոյր և յանխորհուրդ ազ-
դեցութենէ ուստեք յառաջ եկեալ, այլ խորհրդով և
յօրինաւոր պատճառէ. որպէս զի միտք, առանց բուռն
առնելոյ անձին, չկարէ ժխտել զՀաւանութիւն իւր առ
ծանուցեալն Հմտարտութիւն, տեսանելով զի չէ Հնար
իրացն այլազգ պատահել։

Իսկ պատճառ օրինաւոր, որով միաք այսպէս կամ այն յորդորին ՚ի դատել, բազմապատիկ է ըստ զանազանութեան իրացն՝ զորոց դատին։ Այս նախ՝ ներբին և արտաքին. ներքին՝ որ զՀնարաւորութիւն իրացն կամ ըզկարևոր կցորդութիւն իրին ընդ ստորոգելոյն յայտ առնէ ՚ի բնէ, զոր օրինակ՝ Հոգին անմահ է. Հուր կիզանող է. և ստուգութիւնն յառաջ եկեալ, ըստ այլ և այլ աղբերացն՝ յորոց գայ յառաջ, կոչի տրամաբանական կամ բնազանցական և կամ բնաբանական։ Իսկ արտաքին՝ որ թէպէտ չկարէ ցուցանել զկարևոր կցորդութիւն իրացն ընդ ստորոգելոյն, այլ ընծայէ նշանակս զայնը կցորդութեան, որով և զիրացն ստուգութեան. զոր օրինակ՝ Լոյս Հոովմ, գոն հակառնեայք։ Վկաւորն ՚ի նշանացս յայտնէ զվկայութիւն այլոց. եթէ Ճշմարիտ է վկայութիւնն, ստուգութիւնն անտի յառաջ եկեալ՝ որով և հաւատքն՝ կոչի ապոստածային. զոր օրինակ՝ Վկրիատոս զաստուածութիւն իւր ցուցանէ սքանչելեօք, ապա Ճշմարիտ Ճշմարիտ է. իսկ եթէ մարդկան է վկայութիւն, կոչի ստուգութիւն, և հաւատք անտի յառաջ եկեալ՝ Համոզիչ. զոր օրինակ՝ վկայեն ականատեսք թէ գոյ Հոովմ, գոն հակառնեայք. ապա գոն իսկ ստուգիւ։

Հաւատք՝ որ ՚ի վկայութիւն աստուածային հաստատեալ է՝ բերէ ամենևին ստուգութիւն, այսինքն բնազանցական. իսկ որ ՚ի վկայութիւն մարդկան հաստատեալ, ըստ բազմութեան վկայից, ըստ գիտութեան և ըստ լաւութեան նոցա, և ըստ ամենայն հանգամանաց՝ որ ՚ի բաց մերժեն զստուգութիւն, լինի անհերքելի, և յաճախ և բնազանցական ստուգութիւն՝ ՚ի սկիզբն անդր վերառեալ, զի չիք գործ առանց պատճառի։ Այսու ՚ի միտ առնումք, զի ստուգութիւնն բաւոյական՝ որ ՚ի վկայութենէ մարդկան՝ է իսկապէս ստուգութիւն. այլ ընդ սա և ընդ ստուգութիւնն յառաջ եկեալ ՚ի ներքին տրամաբանական հարկաւորութենէ նոյն խտիր է, որ ինչ ընդ գիտութիւն և ընդ հաւատս։ Պանդի գիտել ասեմք՝ որ ինչ ըմբռնելիքն և իմանալիք, իսկ հաւատալ՝ որ ինչ ըստ վկայելոյ այլոց ընդունիմք. վասն որոյ զերկոսին զայսոսիկ ստուգութիւնս ոչ է պարտ շփոթել ընդ իրեարս, և ոչ ընդու-

նելի է նորահնար կարծիքն բազմավտանգ՝ թէ գիտութիւն առանց այսր հաւատոյ չիցէ բաւական առ իսկութիւն իրաց։

Յայսցանէ գիտեմ գոյ նախ՝ զի բանն մարդկային այնպէս ’ի բնէ իւրմէ պատշաճեալ է առ ճշմարտութիւն, զի տնկակից բնական զօրութեամբքն կարէ հասու լինել այնմ։

Երկրորդ՝ զի են ճշմարտութիւնք ինչ այնպէս բացայայտք, զոր ոչ ոք՝ առանց բռնադատելոյ զանակնութիւն իւր՝ կարէ արհամարել յերկբայս. վասն որոյ և միաբանին ամենեքեան ’ի նոյնս։

Երրորդ՝ զի այսպիսի ճշմարտութիւնք անկարօտք են ամենևին և անբնդունակք ցուցակութեան, զի ինքնին իսկ բացայայտք են և օժանդակք ’ի տրամաբանութիւն և ’ի ցուցակութիւն։

Չորրորդ՝ զի գոյ ստուգութիւն ոչ միայն առինչու նակ իւրաքանչիւր ումեք մնայ առանձինն, այլ և անսահման և անխտիր ամենեցուն. ապա թէ ոչ, ’ի սկեպտականութիւն զառածանէաք յիմաստասիրական և ’ի կրօնական, ’ի թշնամանս հաստչին և ’ի վնաս մեծ ճշմարտութեանն։

Հինգերորդ՝ զի զայս ստուգութիւն անսահման՝ մարթէ մեզ ունել ըստ կարգի ճանաչման, և ս և ’ի բաց առեալ ’ի ծանօթութենէ և ’ի ճշմարտութենէն Աստուծոյ, թէպէտ և ըստ կարգի գոլոյ էքս առհասարակ ’ի նախէնն հարկաւ ունին գոյութիւն։ Զի և զգոյութիւն մեր նախ քան զաստուածայինն ճանաչեմք, և անտի ’ի ճանաչումն գոյութեանն Աստուծոյ ’ի վեր ելանեմք։

Զայսոսիկ ծանուցեալ, մատիցուք արդ յառաջարկութիւնն մեր։

ԳՕԴՒԱԾ Ա

Չի պղտամիտ բանականութիւն կարէ, առանց նպատակից գերբնական յայտնութեան գիտել ստուգիւ բազում ձշմարտութիւնս բնականս, որ են իբր ներածութիւնք հաւատոյ:

Են որք կարծեն, զի ձշմարտութիւնս՝ որ իբր նե-
րածութիւնք են հաւատոյ, որպիսի են գոյութիւնն Ա-
ստուծոյ, աննիւթականութիւն հոգւոյ և անմահու-
թիւն, ոչ ցուցանել և ոչ գիտել կարեն միտք մարդկե
ղէն, առանց աստուածային յայտնութեան՝ զոր նա-
խատեղծքն ընկալան, և որդի՛ ի հօրէ աւանդեցին
մարդկութեան: Եթէ զարդեանց իրացն էր խնդիր,
ապաքէն ընդունելի էին կարծիք նոցա. քանզի բազում
ինչ յաստուածային յայտնութենէ ուսան նախահարք.
պայ զերաւանց է խնդիրս վասն այնոցիկ, որոց զսկզբնա-
կանն յայտնութիւն կորուսեալ իցէ կամ՛ ի բաց մեր-
ժեալ: Ո՛չ ոքա, ըստ հակառակ կարծեաց, չկարեն
զօրութեամբ ևեթ բանին հասու լինել ձշմարտու-
թեանցն այնոցիկ: Այլ ուրուք միասցուք՛ ի խնդիր գոյու-
թեանն Ա՛ստուծոյ, զորմէ առաւելագոյն յուզի վէձ, և
որ այլոց ձշմարտութեանց հիմն է և խարիսխ: Ա՛յդ
սուրբ գիրք և Հաքք համարին՝ զի մարթ է, մանա-
ւանդ և պարտ իսկ մարդոյ, յէից աստի երևելեաց զա-
ներևոյթն Ա՛ստուած իմաստասիրել. "Ո՛չ ընդունայն
էին ամենայն մարդիկ բնութեամբ՝ յորս էր աստուած-
անգիտութիւն, և յերևելի բարութեանցն ոչ կարա-
ցին գիտել զայն՝ որ էրն, և ոչ՛ ի գործս հայեցեալ՝
ծանեան զձարտարապետն,,. (Իմաստ. ԺԳ. 1.) "Ո՛չ ի
աներևոյթք նորա՛ ի սկզբանէ աշխարհի արարածովքս
իմացեալ տեսանին, այսինքն է միանձնաւորութիւն և
զօրութիւն և աստուածութիւնն նորա, զի ոչ գտանիցեն
ամենևին տալ պատասխանի. զի ծանեան զԱ՛ստուած,
և ոչ իբրև զԱ՛ստուած փառաւորեցին... զանձինս առ
իմաստունս ունէին, յիմարեցան,,. (Հռոմ. ա. 20):
Ա՛յդ առաքեալն, որպէս յայտ է, խօսի զիմաստասի-
րաց՝ որք բանիւ լոկով ծանեան զԱ՛ստուած, և գոյու-

Թիւն նորա փաստիւք ևեթ բանականօք կարացին ցուցանել։

Ի բանս յայսոսիկ սուրբք գրոց ապաստան եղեալ Հարքն՝ միաբան ուսուցանեն, զի պարտ է մարդոյ՝ ի հաճագոյից ասաի զգոյութիւն Աստուծոյ խնամատարիլ։ Տերտուղիանոս յետ զանազանելոյ զբնական ծանօթութիւն Աստուծոյ՝ զոր ունի ամենեքին՝ ի վերկարար ծանօթութենէն՝ զոր տայ աստուածայինն յայտնութիւն, ՚ի վերայ ածէ. "Համարիմք զի պարտ է նախ բնութեամբ ճանաչել զԱստուած, և ապա ուսմամբ խոստովանել. բնութեամբ յարարածոց, և ուսմամբ ՚ի քարոզութենէ ,,. (ընդդէմ Հերմ. գլուխ ա. գլ. ժբ)։ Նոյնպէս և սուրբն Կիպրիանոս (յղ. կաթող. 227.) ասէ ցհեթանոսն. "Ձեր ահագին, չճանաչել զոր չկարեան անգիտանալ ,,։ Նոյնպէս և սուրբն Կարսեղ, Գրիգոր աստուածաբան, Հսկեբերան, և Թեոդոսիոս, որք արդեամբք իսկ զգոյութիւնն Աստուծոյ բազմապատիկ փաստիւք բանականօք ցուցանեն։ Նոյնպէս և սուրբն Յովհաննէս յետ ցուցանելոյ զգոյութիւն Աստուծոյ հնգեքուքմբք փաստիւք բանականօք, զհակառակ կարծիս՝ որք աստուածայինն յայտնութեամբ ևեթ համարին մարդոյ կարել ճանաչել զԱստուած, կոչէ մոլորութիւն։

Այսմ ճշմարտութեան զհետ գան և այլք, որոց կարևոր կցորդութիւն է ընդ նմին, որպիսի են անխիթականութիւն հոգւոյ, ազատութիւն նորա և անմահութիւն, ընտրութիւն ընդ արդարն և ընդ անիրաւ, և այլ ևս սոցին սակի ճշմարտութիւնք, զորս վերոգոյնք յիմաստասիրաց լուսով բանին ուսուցանեն։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Աստ. Ա. — ա. Նախատեղիք զգոյութիւն Աստուծոյ ՚ի յայտնութենէ նորա ծանեան, և աւանդեցին յետնոց. ապա որ հեռի լինկերութենէ ոք կեցցէ, չկարէ ՚ի տեսութենէ համագոյից գիտել զայն, և ոչ ցուցանել. զի ցուցանել ինչ չէ հնար առանց գիտելոյ զայն։ — բ. Կարձեալ և ամենայն ցուցակութիւնք մակածութեամբ են, որ չկարեն ցուցանել զգոյութիւն

Աստուծոյ, զի՛ ի սահմանելոյ առ անսահմանն և՛ ինիւ-
թոյ առ աննիւթն է ձեռնարկութիւն : — ԳՈՒՐ. Պարտ-
ձեալ և զառաջս, յորոց ամենայն ցուցակութիւնք յա-
ռաջ գան, ոչ է մարթ ցուցանել· վասն որոյ ամենայն
ցուցակութիւնք գոյութեանն Աստուծոյ ոչ բատ օրի-
նի են ձեռնարկութիւնք, զի գնեն ինչ յառաջ քան
զնախէն՝ որ է Աստուած :

ՊԼՈ. — Ա. Ձախաստեղծք զգոյութիւն Աստուծոյ՛ ի
յայտնութենէ նորա ծանեան, և որդիք նոցա յաւան-
դութենէ. այլ կարող էին և լուսով բանի գիտել զայն :
Ոչ է պարտ զարդիւնս իրաց շփոթել ընդ իրաւունս, և
ոչ զկարգ ժամանակի ընդ կարգ տրամաբանութեան·
զի ոչ զառաջնոյն է խնդիրս, այլ զերկրորդէն : Ո՛ր որ-
պէս ցուցաք յառաջագոյն նեղքին և արտաքին պատ-
ճառաք, կարօղ էր մարդ գիտել իւրովի լուսով բանին
և ցուցանել զգոյութիւն Աստուծոյ : Ապա թէ ոչ, քա-
ցասական անաստուածք՝ առ որս չիցէ հասեալ աւան-
դութիւն գոյութեանն Աստուծոյ՝ անդատապարտք լի-
նէին, զորոյ զհակառակն վկայեն սուրբ գիրք և Հարք :
Իսկ եթէ վայրագասուն ոք չգիտիցէ՛ ի տեսութենէ
համագոյից գալ՛ի ճանաչումն հասցէին, ոչ՛ի թերու-
նէ բանին է՝ այլ յանկրթութենէ նորին· զի բանակա-
նութիւն մարդոյ կցորդութեամբ այլոց կրթի՛ ի տրա-
մաբանել· ապա թէ ոչ, ոչ միայն զգոյութիւն Աստու-
ծոյ չկարիցէ գիտել և ցուցանել, այլ և ոչ զիրաց՝ զո-
րոց ամենեքեան միաբանին զի միտք մարդոյ կարէ գի-
տել իւրովի : Ոչ ասն որոյ յոյժ ցուցանէ առարկութիւնդ,
որով ցուցանէ և ոչ ինչ :

— Բ. Ա՛ւ՛ի ցուցանել ինչ, շատ է դրիւ եւեթ գիտել
զայն յառաջագոյն· այլ յետ ցուցանելոյ ճանաչէ և զար-
գիւնս իրացն : Ակածութեամբ զգոյութիւն Աստու-
ծոյ ցուցանել, ոչ է ձեռնարկել՛ ի սահմանելոյ առ ան-
սահմանն և՛ ինիւթոյ յաննիւթն, այլ՛ ի գործոյ առ
պատճառն, յարարածոյ յարարիչն· իսկ անսահմանու-
թիւն և աննիւթութիւն արարչին՝ արարչութենէն
հետևանք են, և ոչ՛ ի մակածութենէ անմիջական ցու-
ցումն :

— Գ. Ո՛չ առածս ոչ է մարթ ցուցանել, զի՛ ի բնէ են
բացայայտք զօրէն լուսոյ՝ որ ինքն ինքենէ խօսի ցու-

ցիւք, զոր օրինակ Հոլոքն մեծ է քան զմանն իւր։ Ա՛մենայն ցուցակութիւնք գոյութեանն Աստուծոյ դնեն ինչ յառաջ քան զԱստուած, ոչ ըստ կարգի գոյութեան՝ այլ ըստ կարգի տրամաբանութեան. վասն որոյ առարկութիւնդ աղմկէ զտրամաբանութիւն ընդ էակաբանութեան։

Ա՛ռլէ. Ը. Ուրք միանգամ փաստիւք բանականօք զգոյութիւն Աստուծոյ ցուցանեն, անկանին յորոգայթ իդեականաց։ Ձեւ Թանոս խնամատարքը, որք զՀնութիւնս ի բնիկ արմատոց նոցին գուն գործեցին յառաջ աճել, աճին ի վերայ իւրեանց և աշխարհի քաղաքական և կրօնական կործանութեան. իսկ քրիստոնեական խնամատարութիւն լուսով աստուածայնի յայտնութեան, զբանականութիւն ընդ նմա աջակից արար՝ օգնել նոցա իրերօք։ Արդեսիոս նախ խզեաց զայս նոցա ընդ միմեանս յարակցութիւն, ուստի չարիք ծանուցանք զՀետ եկին Հնմարտութեան և կրօնից։ Աստ այժմ բանականութիւն ենթակայացեալ ի տրամաբանական էութիւն, արկանէ ընդ իւրև զարարիչն, կամ որպէս կուռս իմն ինքն իւր զնա դրօշէ յերկրպագութիւն։

Պէ. Ուրք միանգամ զլորձ ի բանականութենէ որոշեն ի բաց, նոքա անկանին յորոգայթ իդեականաց. քանզի ի բաժանմանէ աստի յառաջ եկին իմաստասիրացն այնոցիկ իդեականաց զեղծումն։ Իսկ որք զհմայականութիւն և զբանականութիւն մի ինչ իսկապէս Համարին և ոչ իրօք յիրերաց զանազանեալ, դադարէ նոցա ամենայն վտանգ։

Օ անազանութիւնդ այդ իմաստասիրութեան ի Հեթանոսական և ի քրիստոնէական ոչ է ընդունելի. զի քրիստոնէութիւն թէպէտ և նպաստիւք աստուածայնի յայտնութեան զարգացոյց զայն յոյժ, այլ ոչ փոխեաց զէութիւն նորա. զի նոյն է միշտ պաշտօն նորա, լուսով բանի զՀնմարտութիւն հետազօտել։ Ձեւ Թանոսականն իմաստասիրութիւն բազում ինչ Հնմարտութիւնս ծանեաւ Հարտաբմտութեամբ. (Ձ՛ո. ա.) վասն որոյ Աղէքսանդրացի, Յուստինոս և այլք ի նախնի Հարց սահեն զիմաստասիրութիւն ի պարգեւացն Աստուծոյ տուեալ Հեթանոսաց ի պատրաստութիւն առ ի Հաւատս Քրիստոսի, որպէս եբրայեցւոց զօրինս։ Իսկ

եթէ մարդիկ նովին իսկ իմաստասիրութեամբ զեղծան, ոչ իմաստասիրութեան է ընծայելի որ ինչ անտի յառաջ եկեալ չարիք, այլ զեղծելոցն նովաւ. քանիք և յաղանդաւորաց զեղծան և զեղծանին աստուածայնոց յայտնութեանցն պարգևօք:

Իմաստասիրութիւն և աստուածային յայտնութիւն եղեն ապաքէն աղակիցք իրերաց, այլ երկաքանչիւրոցն անկք ոչ ընդ իրեարս խառնակեցան. զի բնական աստուածաբանութիւն զանազանեալ եկաց միշտ 'ի գերբնականէն, և ոչ Կարդեսիոս ելոյծ զյարակցութիւն նոցա. զի ըստ այդմ Հարք և վարդապետք եկեղեցւոյ և դասական աստուածաբանք առհասարակ գտանէին լեալ կարգեսեանք յառաջ իսկ քան զԿարդեսիոս. զի և սուրբ Աւգուստինոս յերիս առաջին գիրս իւր ընդդէմ Հերձանոսաց 'իմաստասիրապէս և եթէ վիճաբանեալ յուցանէ զձշմարտութիւն. Կան որոց և ոչ մի ինչ չար 'ի զանազանութենէ անտի գայ յառաջ, այլ 'ի զակատեղ 'ի վերացութիւն ձշմարտութեանց և յերևակայութիւն. որովք որք վարեցանն՝ խարխարեցին զհիմունս աստուածային յայտնութեանց, և զառածան 'ի սկեպտականութիւն, 'ի համաստուածութիւն և յիդեականութիւն:

Նանականութիւն մարդոյ 'ի գործոց առ գործողն, և յարարածոց առ արարիչն ըստ օրինի 'ի վեր ելանէ, յեղեալ 'ի Հարկն՝ որ պահանջէ զպատձառ գործոյ: Այս ոչ որպէս կուռս իմն ընծայեցուցանէ զԱստուած՝ զգոյութիւն նորա ցուցանելով, այլ իբրև իսկապէս ըստկիզբն և պատձառ ամենայնի. և ոչ ընդ իւրև զնա արկանէ, այլ արարածովքս 'ի ձանաչումն նորին Հասանէ: Վարձեալ և աստ առարկութ չփոթեն զէութիւն Աստուծոյ ընդ տրամաբանական մերում ձանաչման, գալով չափ առաքելական բանին (ա. Տիմ. ա. 7.) "Ոչ իմանան զինչ խօսին, և ոչ վասն որոց պնդեսան են,,:

ՅՕԴՈՒԱԾ Բ

Չի կարէ խրատանիւթ ոք յոտով բանիւն, առանց օգնականութեան մտաց այլոց, գիտակ բազում ինչ առուգութեամբ:

Այ՛ ի ստուգութիւն իրիք են որք կարեւոր համարին զՀաւատնութիւնն ազգի մարդկան, կամ՝ զհասարակաց մտաց վկայութիւն, եթէ՝ ի բնական և թէ՝ ի գերբնական Հնմարտութիւնս. և զայն վարկանին միակ և գերագոյն կանոն գործոյ և Հաւատոյ: Այս կարծեաց նոցա բանականութիւն իւրաքանչիւր ուրուք, զոր շփոթեն չարաչար ընդ առանձնական միտս, չէ երբէք բաւական Հաստ լինել օրպիսւոյ և իցէ Հնմարտութեան: Այդ այս վարդապետութիւն սուտ և վտանգաւոր և հակառակ է քրիստոնէական կրօնիդ. նախ՝ զի խափանէ զմեծաս ամենայն Հնմարտութեան. երկրորդ՝ զի տապալէ զառ՝ ի Այ՛ստուծոյ սահմանեալ կարգն գիտելոյ և պահելոյ մարդկան զՀաւատս. և երրորդ՝ զի անընդունելի առնէ զյայտնութիւն աստուածային:

Այ՛ նախ՝ եթէ չէր այլ ինչ կանոն գործոյ և Հաւատոյ բայ՝ ի Հաւանութենէ ազգի մարդկան կամ՝ ի հասարակաց մտաց վկայութենէ (զորս Համանշանակ Համարին հակառակորդք), որովհետև չէր մարթ այլազգ ընդ Հաւանութիւն այլոց գիտել Հաւաստեաւ՝ բայց իւրաքանչիւր ումեք՝ ի ձեռն բանականութեան իւրոյ, զոր անստոյգ և մոլորական ասէն հակառակորդք յամենայնի՝ որ ինչ արտաքոյ իւր է, ապա անհնար լինէր մարդոյ գիտել ինչ ստուգիւ. զի մարթէր խաբել նմա՝ ի Համարելն՝ թէ գուցեն մարդիկ, և թէ միաբանիցեն՝ ի հաստատել ինչ կամ՝ ի ժխտել:

Երկրորդ՝ զի Այ՛ստուած ոչ զազգ մարդկան և ոչ զբազմութիւն նոցա կացոյց անսխալ ուսուցիչ Հաւատոյ և աւանդապահ, այլ զեկեղեցի, այսինքն զժողով Հովուաց ընդ Հովուապետաւ՝ ընդ որս խոստացաւ լինել մինչև՝ ի կատարած աշխարհի: Նոքա ըստ հակառակորդաց՝ ի Հաւանութենէ ազգի մարդկան և՝ ի հասարակաց մտաց վկայութենէ ընդունի եկեղեցի զիւրն ան-

սխալութիւն. որ ոչ ևս ՚ի խոստումն և յօգնականութիւնն Աստուծոյ հաստատէր, այլ՚ի համախոհութիւն մարդկան. և ՚ի խնդիրս հաւատոյ և ՚ի վէճս ոչ ևս եկեղեցւոյ, այլ հաւանութեան ազգի մարդկան ինայր սահմանել զայն՝ առանց ատենի և առանց իշխանութեան, որ բոլորովին հակառակ է կարգին սահմանելոյ Աստուծոյ առ ՚ի հաստատել և կալ ՚ի հաւատս:

Երրորդ՝ զի Աստուած զձեմարտութիւնս իւր ոչ ազգի մարդկան առհասարակ և ոչ բազմութեան նոցա յայտնեաց, այլ ոմանց ևեթ նահապետաց և մարգարէից և առաքելոց: Ոչ զի զառաքելոց ևեթ առաջս, մի մի ՚ի նոցանէ շրջեցան ընդ այլ և այլ կողմանս աշխարհի աւետարանել, ընդդէմ հաւանութեան ազգի մարդկան ընդ բազմաստուածութիւն և ընդ կռապաշտութիւն: Ունէր պարտ ուժեք, ըստ խորհելոյ հակառակորդաց, ունկն մատուցանել նոցա, կամ աներկևան հաւատս ընծայել: Ոչ զի այս և որ սմին նման հեռուութիւնք անտեղի են, մանաւանդ թէ աստուածընդդէմք, իբր զի այնպիսի արարեալ Աստուծոյ զյայտնութիւնս իւր՝ զի չէ մարթ առանց վտանգի մոլորութեան հաւատալ այնց, և ոչ հրաշից՝ որ ՚ի հաստատութիւն նոցին գործեալ՝ ընծայել հաւատս, ապա այդ վարդապետութիւն հասարակաց մտաց հաւանութեան՝ մեղայր է և վտանգաւոր և հակառակ քրիստոնէական հաւատոյ:

Ա ՈՒ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Աստղ. Ա. — ա. Բանականութիւն իւրաքանչիւր ուրուք սխալական է ՚ի բնութենէ իւրմէ որպէս սահմանաւոր. ապա առանց անսխալելի օգնականութեան չկարէ գիտել ինչ ստուգիւ: Արդ չիք այլ այսպիսի օգնականութիւն բաց ՚ի հաւանութենէ ազգի մարդկան կամ ՚ի հասարակաց մտաց, որ ՚ի բանէն Աստուծոյ յառաջ ածեալ է, և մանաւանդ նորին իսկ է բան: — բ. Զառանց այնորիկ՝ բանականութիւն առանձնական չկարէ ունել ստուգութիւն և ոչ զգոյութենէ իւրմէ. ապա և ոչ ձեմարիտ հաւատս դաւանել, զի չէ մարթ սրբասալականին անսխալ ինչ յառաջ ածել: — գ. Զան որոյ

Ճշմարտութիւնքն բնական կարծեցեալք, զոր օրինակ գոյութիւնն Աստուծոյ, անմահութիւն հոգւոց, և այլն, եթէ ՚ի բանականութենէ իւրաքանչիւր ուրուք առնուին հաստատութիւն, և ՚ի վերայ նոցա գերբնականքն Ճշմարտութիւնք հաստատեին, ՚ի կաւեղէն խարսխի անդրի ոսկի ամբառնայր։

Պաւ. — ա. Անականութիւն իւրաքանչիւր ուրուք զի սխալական է, ոչ զհետ գայ անտի զի միշտ սխալիցէ։ Այլ դարձեալ այլ ինչ է անսխալութիւն, և այլ աստուածութիւն. զի անսխալութեան պարտ է զերծ լինել յամենայն սխալանաց, որ Աստուծոյ միայնոյ է, և ոչ է մարթ արարածոյ՝ ոչ ՚ի միասին և ոչ ուրոյն ՚ի միմեանց՝ գոլ անսխալ, եթէ ոչ ՚ի ընդհարացն Աստուծոյ՝ որ տուեալ է եկեղեցւոյ ՚ի վարդապետութեան հաւատոց և բարւոյ վարուց։ Սակ առ աստուածութիւն պահանջի և եթէ հաստատուն և բանաւոր հաւանութիւն մնաց ընդ Ճշմարտութիւն ինչ, որ անկ է և արարածոյ իմացականի։ Այլ դարձեալ չիմոթէոն հակառակորդք զՀաւանութիւն ազգի մարդկան ընդ բանական զօրութեան իւրաքանչիւր ուրուք՝ որով համարին նոցա հաստու լինել անսխալականին այնմիկ կարծեցելոյ հաւանութեան. զի եթէ անսխալ իսկ էր հաւանութիւնն այն ազգի մարդկան, բայց քանզի միւսն է սխալական, ոչ երբէք անսխալութիւն նորին անսխալ զօրայոյս կարէր կացուցանել զՀաստողութիւն։

Հաւանութիւն ազգի մարդկան ոչ է անսխալ, զի չիք անսխալ ՚ի բնական կարգի, իսկ ՚ի գերբնականին եկեղեցի ևեթ, զոր չէ պարտ շփոթել ընդ ազգի մարդկան, ընկալաւ զանսխալութիւն ՚ի ընդհարացն Աստուծոյ։ Սակ զհաստարակաց միտս բան Աստուծոյ կոչել՝ ըզհամաստուածեան աղանդոյ բերէ զնեխահոռութիւն։

— բ. Ակ է ընդունելի չկարել բանականութեան, առանց նպաստից Հաւանութեան ազգի մարդկան, ունել զիմեքէ աստուածութիւն. սկեպտական է այդ վարդապետութիւն։ Այլ զՃշմարիտ հաւատս ընդունիմք իսկ զի չկարէ ոք դաւանել առանց ընդհարացն կանխաժաման և զուգընթաց օգնականութեան։

— գ. Ամէնք մարդոյ զբնական կարգի Ճշմարտութիւնս լուսով բանին Ճանաչէ և ցուցանէ, այլ ոչ ինքն

զնոսա այնպիսիս կացուցանէ։ Օ՛ի որ իւրովի՛ն ճշմարտութիւնն է, իբր այնպիսի ձանաչի և ցուցանի՛ ի բանէն, ոչ ըստ հաձոյից նորա առեալ հաստատութիւն, և ոչ մերժեալ՛ ի նմանէ առանց հակառակելոյ նմա։ Այսպիսի՛ են ճշմարտութիւնք բնական կարգի· ապա թէ ոչ, ոչ գատապարտէին զիրք զայնոսիկ՝ որք առանց իսկ աստուածային յայտնութեան ոչ ծանեան կամ մերժեցին զայս։ Այլ ճշմարտութիւնք գերբնականք ոչ՛ի վերայ բնականացն յենուն և՛ի նոսա ևեթ հաստատին, այլ յաստուածային չնորհայ առնուն զհաստատութիւն, կարապետեալ ևեթ՛ ի բնականացն և առաջնորդեալ՛ ի ճշմարտութիւնս աստուածային յայտնութեանց։

Յոան. ը. — ե. Այնէ՛ իւրաքանչիւր ուրուք բանական մարդիկ ունել ստուգութիւն զհաւատալեաց, համազօր գտաներ հաւատոյ· և ազատացեալ յիշխանութենէ եկեղեցւոյ՝ կարէր կալ գատաւոր ճշմարտութեանց, ամփոփել և յաձախել զթիւ նոցա ըստ զօրութեան հաւատացն՝ զոր համարի յառաջ բերել։ Այս յաստուածային յայտնութենէ ևեթ, զոր ոչ անսխալ ստուգութիւն վկայութեամբ ևեթ հաստատակաց մտաց մարդ է ունել, ձանաչին ճշմարտութիւնք։ — ը. Այս և յարգեանց իսկ իրացն յայտ է· զի Յուստաճ անդատին՛ ի սկզբանէ յայտնեաց նախասահեղծիցն որ ինչ ճշմարտութիւնս կամէրն՛ ի ձեռն նոցա աւանդել ազգի մարդկան· որով ևեթ կարող էին հեթանոսք նախ քան զգալուստ փրկչին հասանել փրկութեան։ — գ. Այս և յետ գալստեանն Յիսուսի նոյն ձանապարհ է փրկութեան ամենայն մարդկան· զի հաւատալ եկեղեցւոյ ոչ այլ ինչ է, բայց լսել վկայութեան հաստատակաց՝ որ հիմն է ստուգութեան· և եկեղեցի ոչ այլ ինչ առաջի առնէ՛ ի հաւատալ, բայց որ ինչ միշտ՝ որ ինչ ամենայն ուրեք՝ որ ինչ յամենեցունց հաւատացաւ, ըստ Վ՛ինկենտեայ Լիրինեցւոյ հրաչակաւորն բանի։

Գլ. — ե. Այնէ բանականութիւն կարէր ունել նեբքին ստուգութիւն զհաւատալեաց, համազօր գտանէր հաւատոյ· այլ արտաքին ևեթ ունի ստուգութիւն։ Օ՛գին առարկութիւն և առհասարակաց միտս է առ-

նել. զի եթէ մարթ իցէ նովաւ ունել ստուգութիւն, ապա և հասարակաց միտք համազօր գտանին հաւատոց: Այրող իսկ է իւրաքանչիւր ուրուք բանականութիւն առանց վկայութեան եկեղեցւոյ գիտել հաւաստեաւ Աշմարտութիւնս բնականս, այլ ոչ և դերբնականս. և ոչ զկնի գայ աստի կարել նմա յաւելուլ և նուազել զիւր բնական Աշմարտութեանց, այլ հաստատ եւեթ լինել առաւել կամ նուազ Աշմարտութեանց ըստ չափոյ մտացն զօրութեան: Ստուածայինն յայտնութիւնս մարթ իսկ է և իւրաքանչիւր ումեք գիտել ստուգիւ 'ի ձեռն հաւատոյ նշանաց հաւատոյ, և զբնական Աշմարտութիւնս՝ լուսով բանին, որպէս ցուցաք. վասն որոյ ոչ են ընդունելի երկաքանչիւր իսկ մատուռք առարկութեանդ:

— Բ. Իսկ զի Ստուած յայտնեաց նախատեղծիցն զԱշմարտութիւնս, ոչ է մարթ 'ի գործոյ զկնի բերել զիրաւունս: Այսան էր իրիք և հաՃեցաւ Ստուած յայտնել նոցա զԱշմարտութիւնս, յարդեանոյ իրացն յայտ է՝ զի ոչ ամենայն որդիք Ադամայ անեղծս զայնոսիկ և ըստ օրինի աւանդելոյն յետնոց. զի առ ոմանս յազգաց առաստղախառն հասին, և առ այլս բնաւին կորեան: Այսան որոյ ոչ շատացեալ նովաւ Ստուած, շնորհեաց մարդկան և այլ հնարս փրկութեան. և այն զի մարթէր ևս 'ի ձեռն հայրենի աւանդութեան գիտել իւրաքանչիւր ումեք զաստուածայինն յայտնութիւնս:

— Գ. Վկրիատոս ոչ զազգ մարդկան, այլ զեկեղեցի կացոյց աւանդապահ և թարգման յայտնութեանց իւրոց. ոչ զազգ մարդկան վարդապետ նմին, այլ զնա վարդապետ ազգի մարդկան: Իսկ նա ոչ որ ինչ յամենայն ժամանակի յամենեցունցն հաւատացաւ առաջի գնէ մեզ 'ի հաւատալ, այլ որ ինչ հաւատացաւն միշտ յեկեղեցւոջ: Այս է վարդապետութիւն Քրիստեայ, որպէս քաջայայտ է 'ի բանից նորա, և ոչ իսկ երազեալ է նորա զիմաստս՝ զոր հակառակորդք ընծայեն նմա:

ՅՕԴՎԻԱԾ Գ

Չի կարէ մարդ բռնով բանիւն ձանձալով դիւաբաստիս հաւատոյ, և՝ի ձեռն այնոցիկ զգոյութիւն աստուածային յայտնութեան գիտել հաւատեալ:

Յաստացեալոցս զՀետ գայ Հարկաւորապէս, զի մարթ է լուսով բանի ձանձալել զՀաւաստիս Հաւատոյ, և նաքօք զաստուածային յայտնութիւնս: Ոչանզի ամենայն որ կարէ գիտել Հաւաստեաւ որ ինչ զգայ, և որ ինչ միտք իւր ըմբռնեն Չնմարտութիւնս բնազանցականս, բարոյականս և բնաբանականս: Այլ Հաւաստիք Հաւատոյ՝ի Չնմարտութեանց անտի յառաջ գան· ապա ուրեմն պարկս մարթ է գիտել զայնս ստուգիւ, մարթ իցէ ըզնոյն ստուգութիւն ունել և զՀաւաստեաց Հաւատոյ:

Պարքէն զՀրաշս և զմարդարէութիւնս, որ գլխաւորքն են՝ի Հաւաստիս Հաւատոյ, կարէ ամենայն որ գիտել ստուգիւ՝ի վկայութենէ զգայութեանց, ՝ի պատմական աւանդից և՝ի վկայելոց Հաւատարիմ մարդկան: Զնոյն է ասել և զգերազանցութենէ քրիստոնէական վարդապետութեան, զտարածութենէ նորին և զպահպանութենէ, զանդրդուելի Հաստատութենէ վկայից, և զայլոց սոցին սակի Հաւաստեաց: Այս ուրեմն առ՝ի չանկանելոց՝ի վէս սկեպտիկեան, Հարկ է խոստովանել՝ զի մարթ իցէ լուսով բանին ունել լուսի ստուգութիւն զՀաւաստեաց Հաւատոյ:

Եւ քանզի ընդ սոսա և ընդ գոյութիւն աստուածային յայտնութեան է նեղբին և կարևոր կցորդութիւն, ապա մարթ է լուսով բանին և զգայութենէ աստուածային յայտնութեան ունել ստուգութիւն: Ցինակ իմն· յայտնի է բնազանցական ստուգութեամբ, զի Աստուած չկարէ խաբել զոք· յայտնի են դարձեալ բարոյական ստուգութեամբ նշանք և Հաւաստիք աստուածային յայտնութեան մարգարէութիւնք և Հրաշք, զորս չէ մարթ ժխտել· ապա Հարկ է բանաւոր մարդոյ պարկս ստոյգ ունել զաստուածային յայտնութիւն: Այս թէ ոչ, չէր մարթ ընդունելի առնել ան-

հաւատից զաստուածային յայտնութիւնս, և ոչ նոցա զբանաւոր պաշտօն ընծայել աստուածային յայտնութեանց։ Այլ միտք յերկբայս միշտ կային մնային ըզհաւաստեաց հաւատոյ և զգոյութենէ աստուածային յայտնութեան, ի զուր էր այնուհետև Քրիստոսի հրաշագործել, և ի հաւատ հրաւիրեցն զառաքումն իւր առ ի յՈստուծոյ ցուցանել։ Ի զուր և ջատագովք քրիստոսական կրօնից ի սկզբանէ և այսր միաբան զՀեթանոս և զանհաւատս ջանային հաւաստեօք հաւատոյ յաղթահարել զգոյութենէ աստուածային յայտնութեան։ Ասէ որով ասէ տուրբ Աւգուստինոս. "Ով հաւատայր ոք, եթէ ոչ խեղամտէր՝ զի պարտ է հաւատալ կամ վասն բացայայտութեան նշանաց, և կամ վասն սոցին սակի այլ իրիք ,,։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ասէ. — ա. Ո՞ աստուածային յայտնութիւն հրաշիւք ցուցանել է յոմէ ըմբռնակ, զի և հրաշք աստուածային յայտնութեամբք ցուցանին. մանաւանդ առ այնոսիկ՝ որոց չիցէ լեալ ականատես հրաշիցն, այլ ի վերկայութենէ այլոց ընկալեալ՝ որ միշտ է անստոյգ. քանզի հաւաստիք և ձեռնարկութիւնք թէպէտ և հզօրք, որք ի զգալի գործս հաստատին, մարդկայինք են միշտ։ — բ. Այսուհետև ոչ է մարթ ասել թէ առաքեալք ոչ խաբեալ և ոչ խաբիլ կարէին. մանաւանդ զի յարութեանն Քրիստոսի ոչ ոք գտաւ ականատես, այլ ինքն յարեաւ և ինքն վկայ յարութեան իւրոյ եղև։

Պէ. — ա. Հրաշք առ հաւատացեալս ևեթ ցուցանին աստուածային յայտնութեամբք, և ոչ առ անհաւատս։ Ո՞չ ի սոցա պարտ է քննել զայնս, և գիտել ըստ օրինի զստուգութիւն պատմական և զապստամբել իւրացն ի կարգաց բնութեան. որպէս զի կարասցեն ապրարչին բնութեան ընծայել զայն, և այնու ի գոյութիւն աստուածային յայտնութեան ի վեր ելանել։ Ո՞չ այնպիսի կարևոր կցորդութիւն է ընդ հրաշս և ընդ աստուածային յայտնութիւն, զի ի հաստատել

միանգամ զՀրաչս՝ զՀետ գայ Աչմարտութիւն աստուածային յայտնութեան։ Այլ ոչ ականատես Հրաշիցն Հարկ է գոլ առ այս. զի վկայութիւն այլոց, եթէ յառաջ ածէ բարոյական ստուգութիւն, մերժէ՛ի բաց զանճնայն վտանգ մոլորութեան։

— ԹՈՂ վկայութիւն Քրիստոսի արդարև ոչ է մարթ ցուցանել յանսխալութենէ վկայութեան առաքելոց՝զոր յաստուածային յայտնութենէ գիտեմք, քանզի ցուցումն այն լինէր յոռի շրջանակ. այլ մարթ իսկ է ցուցանել յանսխալութենէ վկայութեան նոցա, որ ըստ ամենայն Հանգամանաց յառաջ ածէ զբարոյական ստուգութիւն՝ զի և ըստ այսմ ոչ խաբել և ոչ խաբիլ կարէին։ Այլ չէր իսկ Հարկ՛ի վկայութիւն յարութեանն Քրիստոսի ականատես գոլ յառնելոյն, այլ շատ իսկ էր տեսողաց զմահ նորա՝ տեսանել զնա յարուցեալ, և խօսակից և սեղանակից լինել ընդ նմա։

ԳՕԴՈՒԱԾ Դ

Զի կարօղ է մարդ յոտով բանիւն ձանաչել ստուգիւ զեկեղեցի Քրիստոսի։

Այս Աչմարտութիւն զՀետ գայ առաջնոյն. զի որպէս ցուցաք, մարթ է լուսով բանին գիտել զՀաւատս Հաւատոց, և նոքօք Հաստ լինել գոյութեան աստուածային յայտնութեան. ապա նովին ստուգութեամբ մարթ իցէ Ճանաչել և զեկեղեցի Քրիստոսի Հաստատեալ առ՛ի պահել և տարածանել զաստուածային յայտնութիւն։ Որ ինչ Հաւատիս՛ի վեր անդր ածաք առ՛ի ցուցանել զաստուածայնութիւն քրիստոսական կրօնից, նոքին զօրեն՛ի ցուցանել և զաստուածային սկիզբն եկեղեցւոյ։ Այնմ իրի Քրիստոս նմանեցոյց զայն քաղաքի՝ որ՛ի վերայ լերին կայցէ ակներև ամենեցուն. նմին իրի կամեցաւ՝ զի իցէ նա մի, երևելի և միանչենակայ մինչև՛ի կատարած աշխարհի։ Այլ եթէ չէր մարթ լուսով բանին Ճանաչել զայն և ընտրել ստուգիւ յայլոց կրօնից, անիրաւէր Քրիստոս. որ քան և մի լիցի։ Այսպա ուրեմն մարթ է լուսով բանին Ճանաչել ստուգիւ զՀնմարիտ եկեղեցի Քրիստոսի։

Ա ՈՒ Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Այդ տրամաբանական ցուցումն քրիստոնէական հաւատոց՝ Յերմեսեայ է վարդապետութիւն դատապարտեալ յեկեղեցւոյ. քանզի հաւատք գերբնական՝ փոխին այդուիկ ի բնական գիտութիւն, և աստուածաբանութիւն՝ յիմաստասիրութիւն: Նա ոչ ինչ օգնէ զանազանութիւն աղբերաց միոյն ի միւսմէն. զի և Յերմեսիոս զանազանէր զայնոսիկ, այլ ոչ զերծաւ ի դատապարտութենէ:

Պա. Յերմեսեայ վարդապետութիւն ոչ վասն այդոլիկ դատապարտեցաւ. քանզի և այլք բազումք յաստուածաբանից զնոյն կարգ տրամաբանութեան կալան անդատապարտ. այլ վասն արհամարհելոյ նորա զնախնի Յարս և զվարդապետս, և վասն բազմավտանգ կանոնացն՝ որովք մեռաս տայր ազգի ազգի մոլորութեանց: Յաւատք գերբնական փոխին ի բանական գիտութիւն, եթէ զաստուածային հաւատս շփոթեսցէ ոք ընդ մարդկայնումն. հաւատք, զոր աշխատութեամբս մերով և իմաստասիրութեամբ գտանեմք, են հաւատք բնական և մարդկային՝ որ այլ է ամենևին ի գերբնականէն և յաստուածայնոյն, յոր ի նախաժաման ընծրհայն Աստուծոյ օժանդակեալ՝ վասն վկայելոյ նորա հաւատոյն: Այլ ինչ հաստատի աստուածաբանական վարդապետութիւն, և յայլ ինչ իմաստասիրականն. նա յաստուածային յայտնութիւն առաջարկեալ յեկեղեցւոյ, սա ի բանական հաւաստիս՝ որք ի միւսն առաջնորդեն. զի որպէս սուրբ Աստուածային ասէ, "Յաւատք աստուածայինք բնական Ճանաչման ի վերայ յաւելեալն,,: Իսկ Յերմեսիոս հինն աստուածաբանութեան եդ զիմաստասիրութիւն, որպէս զի աստուածաբանական հաւատեալ յիմաստասիրականացն առնուլ զիւրեանց հաստատութիւն, որ կործանումն է հաւատոց:

ԳԼՈՒԽ Բ

ՑԱՂԱԳՍ ԲԱՆԻՆ ԸՆԴ ՀԱՒԱՏՍ ՁՈՒԳԸՆԹԱՑ ԱՌԸՆՁՈՒԹԵԱՆ

Քանզի բազում ջանացան հերձուած ընդ բանակա-
նութիւն և ընդ հաւատս արկանել, որպէս թէ մարտ
և հակառակութիւն անմիաբանելի՝ի միջի նոցա կայցէ,
հարկ է մեզ ցուցանել զմիաբանութիւն նոցա ընդ մի-
մեանս:

ԾՕԴՈՒԱԾ Ա.

Զի հաւատք զանազանին իսկապէս՝ի բնական գիտութենէ, այլ ոչ հակառակին երկոքեան իրերաց:

Ապաքէն հաւատք, որպէս ասացաքս, է ազատ հա-
ւանութիւն մտաց, օգնականութեամբ նախաժամանակ
չնորհացն Աստուծոյ, ընդ ձշմարտութիւնս յայտնեալս
՝ի նմանէ, վասն նորին իսկ վկայութեան: Իսկ բանն,
յորմէ յառաջ գայ բնական գիտութիւն, է բնածին՝ի
մարդ խմացական: Ասն որոյ հաւատք և գիտութիւն
զանազանին յիրերայ նախ՝ ըստ այլ և այլ սկզբան իւ-
րեանց, զի հաւատք՝ի չնորհացն ծնանի, իսկ գիտութիւն
յիմացական բնութենէ: Երկրորդ՝ զի հաւատք յածին
զձշմարտութեամբք ևեթ գերբնապէս յայտնեցելովք
Աստուծոյ, իսկ գիտութիւն զբնական ձշմարտու-
թեամբ՝ որոց մարդ խմացական իւրովի լինի հասու:
Երրորդ՝ զի հաւատք զվկայութիւն ևեթ Աստուծոյ
խնդրէ՝ի ձշմարտութիւնս, իսկ գիտութիւն ապացոյցս
և կամ բացայայտութիւն: Ուստ չորրորդ՝ զի հաւատք
ընդ յարակից առաքինութիւնս պատրաստէն զմարդ՝ի
դէմ յանդիման տեսութիւն և՝ի վայելս Աստուծոյ,
իսկ գիտութիւն զձանաչումն ևեթ Աստուծոյ և զաս-
տուածնորութիւն բնական ընծայէ մարդոյ:

Այլ թէպէտ և երկաքանչիւր սոքա այսքան՝ի մի-
մեանց զանազանեալ, այլ ոչ իւիք հակառակին մի-

մեանց, և ոչ հաւատք զլոյս բանին շինչուցանէ, որպէս համարին հակառակորդք։ Ո՛չ եթէ հաւատք պահանջէին կոյր հաւանութիւն, կամ հակառակ բանին ինչ առաջի առնէին ՚ի հաւատալ, յայնժամ շինչուցանէին զլոյս նորա և ՚ի դիմի հարկանէին նմա։ Ա՛յլ նախ չպահանջեն զայդ կոյր հաւանութիւն. զի ոչ միայն հաւատս առաջի դնեն նմա բացայայտս, որպէս զի նոքիմբք խելամտեալ՝ նպաստիւք շնորհացն Ա՛ստուծոյ հաւատայցե, այլ և պահանջեն՝ զի գիտասցէ ըստ կարի որ ինչ պարտի հաւատալ և վասն որոյ հաւատալ։ Ա՛յսինքն պահանջեն՝ զի հաւատիք հաւատալեացն իցեն այնպիսիք, որպէս զի միտք համոզեալ՝ զբանաւոր պաշտօն ընծայեսցեն նոցա։ Ա՛ւ երկրորդ՝ ոչ երբեք հաւատք հակառակ ինչ բանին առաջի դնեն ՚ի հաւատալ. զի անհնար իսկ է բնազանցապէս՝ թէ աշխարհութիւն աշխարհութեան հակառակիցի։ Ո՛չ որովհետև նոյն տէր է՝ որ ուսուցանէ զաշխարհութիւնս ինքնեբևեակս բանին և զաշխարհութիւնս իւրով յայտնութեամբն հաւատալիս, ապա չէ հնարաւոր՝ զի հաւատք հակառակս ուղիղ բանին առաջարկեսցեն ՚ի հաւատալ։

Ա՛յս և ՚ի յայտնելոց իրացն երևի բացայայտ. զի կամ ըստ բնական կարգի իրք են, և կամ գերագոյնք քան զբնական կարգ։ Ա՛թէ ըստ բնական կարգի, ամենայն որ կարէ ճանաչել զի չիք ինչ ՚ի նոսա հակառակ բանի. իսկ եթէ գերագոյն քան զբնութիւն, ապաքէն չկարեն միտք ճանաչել և գտանել ՚ի նոսա հակառակութիւն, զի և ոչ հասու կարեն լինել նեբբին կցորդութեան իրին ընդ ստորոգելոյն։ Ա՛ստի միտք զգայութիւն իրացն ստուգիւ գիտացեալ, զորպէսն և եթէ գոլոյն անգիտանայ։ Ա՛րինակ իմն. կոյր ոք ՚ի ծնէ չգիտէ զինչ լոյսն իցէ և զինչ գոյնք, և չկարէ իսկ հասու լինել այնց. բայց հաւատայ որոց տեսանենն զայն և վկայեն։ Ա՛յն իսկ և բազում ինչ իրք յայտնիք խնամատնոց, այլ տգիտաց անիմանալիք. որպէս հոգիքն հոգւոյ և անմահութիւն, և որպէս հակոտնեայք, որոց անուամանքն չկարեն գոլ հասու։ Ա՛յլ իցէ՛ թէ վասն չհասանելոց նոցա՝ հակառակք իցեն այնոքիկ մտաց. ընդ նոյն է խմանալ և զնորհրդոյ անհասից մարդկեղէնն միտաց։ Ա՛ւ ասն այսորիկ եթէ հակառակութիւն ինչ ևս

'ի Աշմարտութիւնս երկաքանչիւր կարգի երևիցի, վերը 'ի վերոյ է և ոչ իրօքէն. որպէս առաքն Պօղոսիանցին ընդդէմ հեթանոսաց ցուցանէ զայս յաղթանակաւ։ Ասա որոյ և հինգերորդ ժողովն լատերանեան յետ սահմանելոյ զվճիռս զայս. "Բանզի Աշմարտութիւն Աշմարտութեան չկարէ հակառակ ելանել, զամենայն բանս՝ որ հակառակք են հաւատոյ՝ սահմանեմք առաս,,. յորդորէ զնմաստասէրս՝ գուն գործել ցուցանել փաստիւք բանականօք զանմահութիւն հոգւոյ, և զհակառակ կարծիսն եղծանել։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Պաւլ. Ա. Բանն և հաւատք դէմ ընդդէմ հակառակ են միմեանց. զի հաւատք է կոյր հաւանութիւն ընդ այն՝ որ անհաս է բանի, իսկ բանին իրաւունք են քննելոյ զամենայն՝ մինչև տուեալ զհաւանութիւն։ Ասա որոյ խոստաստիրութիւն նշկահեալ զլուծ վըկայութեան, իւրովի լուծանէ զխնդիրս՝ որ զԱստուածով, զմարդով, և զհամագոյիւքս յածին։

Պաս. Հաւատք է կոյր հաւանութիւն ընդ ներքին էութիւն հաւատալեաց, և ոչ ընդ արտաքին պատճառս գոյութեան նոցա՝ զորս կարէ քննել. որպէս չկարէ հասու լինել խորհրդոյ Երրորդութեան, այլ զպատճառս գոյութեան նորա կարէ հետազօտել։ Ասա որոյ պարտէր հակառակորդաց 'ի հաստատութիւն բանիցն իւրեանց ցուցանել, զի բանն չընդունի և ոչ մի ինչ Աշմարտութիւն բնական առանց հասու լինելոյ ներքին էութեան նոցա։ Այլ զայս չկարեն ցուցանել առանց մերժելոյ անթիւ Աշմարտութիւնս բնաբանականս և բարոյականս և զգոյութիւն հոգւոյ իսկ իւրեանց, և առանց զառածանելոյ 'ի սկեպտիկեան մոլորութիւն։ Օրէնք վկայութեանն Աստուծոյ նշկահեաց խոստանիրութիւն անհաւատից՝ գիտել յանդգնեալ որ ինչ 'ի վեր քան զմարդկեղէնն միտս է և անսահման էութեան և գիտութեանն Աստուծոյ պահեալ. այլ ոչ և քրիստոնէականն խոստաստիրութիւն, որ քննէ ըստ օրինի ցոր վայր միտք մարդկեղէնն հասանէն, անտի և անդր 'ի վկայութիւն Աստուծոյ ապաստանեալ։

Աստուած. Բ. — ա. Եթէ հաւատոյ չէր մարթ հակառակել բանի, պարտ էր սակս միոչէւ ընկալեալ զմի ի մասանց հաւատոյ՝ քննել թէ արդեօք իցէ այն ըստ աստուածային գրաւոր կամ անգիր աւանդութեան. ապա թէ ոչ, յանդգնաբար լինէր նման հաւատալ։ — Բ. Պարտ էր նման դարձեալ և յետ գիտելոյ՝ զի վկայեալ է այն Աստուծոյ, քննել թէ արդեօք չիցէ հակառակ բանի։

Պե. — ա. Ներմեսեայ է վարդապետութիւնդ դատապարտեալ. անհաւատ ոք չէ և սորդեգրեալ եկեղեցւոյ, առ ընդունելոյ գիտութեամբ զհաւատս, կարի իսկ քաջ կարէ քննել զպատճառս հաւատոյն, և զհաւաստիս աստուածային յայտնութեան, և զգոյութեան եկեղեցւոյ՝ որ այնորիկ աւանդապահն է։ Եւ յետ միանգամ տեղեկանալոյ այսոցիկ, և ընծայելոյ յեկեղեցի, պարտի ընդունել զամենայն իսկ զմասունս հաւատոյ առանց իրիք քննութեան և ցուցակութեան։ Ամենայն քննութիւն և ցուցակութիւն յետ այնորիկ առ ի հաստատութիւն է, և առ այս և եթէ ներեալ հաւատացելոյ։

— Բ. Ասա որով և միւս և մասն առարկութեանդ Ներմեսեայ վարդապետութեանն է անտեղի հետևանք։ Օ՛ի ի գիտել միանգամ զաստուածայինն յայտնութիւն յանսխալ վարդապետութենէ եկեղեցւոյ, ոչ և ինայ տեղի տարակուսելոյ՝ թէ արդեօք չիցէ այն հակառակ բանի։ Աստուածաբանին է պարտ քննել և ցուցանել զշնորհուրդութիւնս յայտնեալս Աստուծոյ և վարդապետեալս յեկեղեցւոյ. իսկ հաւատացելոյ գերել զմիտս ի հնազանդութիւն Քրիստոսի։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Զի մարթ է զնոյն ինչ և գիտել իմաստասիրաբար, և հաւատալ աստուածաբանօրէն։

Գիտութիւն ոչ ինչ տկարութիւն ածէ հաւատոյ, ուր ուրեք երկոքին և զնովին իրօք յածիցին. զի այլ և այլ ի միմեանց սկիզբն է նոցա և պատճառ ընդու-

նելի առնելոյ զՀիմարտութիւն։ Օ՛ի թէպէտ և աստուածային յայտնութիւն բովանդակէ բազում ինչ բնական՝ որ լուսով և բանի Հանճարելի են, բայց միտք զնոյն ինչ այլազգ Հանճարեն և այլազգ Հաւատան. քանզի բանիւ Հանճարեն զայն, և Հաւատովք վասն վկայութեան Աստուծոյ ընդՀօք նորա դաւանեն։ Այսու ոչ ոք մարթի է ուսանել գիտել իմաստասիրական Հաւատոք զգոյութիւն Աստուծոյ և զստորոգելիս նորա, զանմահութիւն հոգւոյ, զվարձս և զպատուհաս ՚ի Հանդերձեալ կեանս, և զայլ այսպիսի Հիմարտութիւնս, և Հաւատալ զնոյնս որպէս յայտնեալ յԱստուծոյ։ Այսպիսի օրինակի Հարք և վարդապետք եկեղեցւոյ ցուցանեն իմաստասիրական ցուցակութեամբք զայս ամենայն Հիմարտութիւնս, զորս դաւանեն Հաւատովք։ Այլ թէ ոչ այսպէս էր, բարեբախտագոյնք գտանէին տրգետք քան զգիտունս. զի Հաւատք սոցա ըստ չափոյ գիտութեանն նուազէին, զոր անտեղի է ասել։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Բանն կամ գիտութիւն տեսանել, իսկ Հաւատք դաւանել. արդ տեսանել և դաւանել Հակառակ են միմեանց, քանզի ասէ առաքեալն. (Հբր. ժա. 1.) «Օ՛ինչ են Հաւատք, եթէ ոչ յուսացելոյ իրաց Հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին»։ Այսու որոյ և Հարք, մանաւանդ սուրբն Գրիգոր Հաստատէ, զի անՀնար է զնոյն ինչ տեսանել և Հաւատալ։

Պե. Օ՛նոյն ինչ նովին ներգործութեամբ տեսանել և Հաւատալ՝ արդարև ոչ է մարթ, այլ մարթ իսկ է այլ և այլ ներգործութեամբք, որպէս զնոյն Հանապարհ մարթ է առնել կառօք և Հեծի։ Օ՛ի որ ինչ լուսով բանի և ՚ի ձեռն գիտութեան Հանճարէ զնոյն և գերբնական լուսով կարէ Հանճարել և Հաւատալ վասն վկայութեանն Աստուծոյ։ Այսուհանդերձ զի որ ինչ գիտութեամբն Հանճարէմք Հիմարտութիւնս զԱստուծոյ և զպէտս իրաց՝ ոչ դէմ յանդիման տեսանեմք, այլ իմացականապէս ՚ի ձեռն ցուցակութեանց։ Օ՛ի խոհր մեծ է ընդ Հիմարտութիւնս՝ որ ՚ի ձեռն ցուցակութեանց

Ձանաչին, և ընդ աղբերս նոցին ցուցակութեանց՝ որ-
պիսի են առածք, որոց դէմ յանդիման բացայայտու-
թիւն յափշտակէ զմիտս. իսկ ցուցակութիւնք միջնոր-
դաբար ունին զբացայայտութիւն, յորում միտք կա-
րեն հպատակել կամաց։

ԳԼՈՒԽ Գ

ՑՂԱՅՏ ԲԱՆԻՆ ԸՆԴ ՀԱՒԱՏՍ ՀԵՏԵՒՈՐԴ ԱՌԸՆԶՈՒԹԵԱՆ

Եւս և յետ աստուածային շնորհացն օգնականու-
թեամբ հաւատալոյ և ընդունելոյ զեկեղեցւոյ սրբոյ
վարդապետութիւն, յարատևեն իրաւունք բանին։
Ա.յլ զի մի վազեսցէ նա ըստ իւրն սահմանի, պարտ է
նմա պահել զկանոնս՝ զորս սահմանեն նմա հաւատք,
և յորոց գլխաւոր այն է՝ զի ՚ի հաւատոյս մի երբէք ա-
ռաջի գնայցէ, այլ վարդապետութեան եկեղեցւոյ ըզ-
հետ երթիցէ։ Ա.յսու օրինակաւ երկաքանչիւրոցն և ս,
հաւատոյ և բանին, ամբողջ կացցեն իրաւունք։ Ա.ա-
նին իրաւունք յետ հաւատալոյ՝ է հետազօտել զիւրա-
քանչիւրոյ մասանց հաւատոյ զկիմանս, առ ՚ի պաշտ-
պանել զայնս։ Ա.պաքէն ՚ի դաւանութիւն հաւատոյ չիք
խոչիր ընդ աստուածաբան և ընդ ծր և է հաւատա-
ցեալ, այլ աստուածաբանին օրէն է և պարտ հետա-
զօտել զկիմանս հաստատութեան հաւատոյ, և խընդ-
րել զհաւաստիս՝ որ բացայայտեն զգոյութիւն աստուա-
ծային յայտնութեան։ Ո՞ւ որովհետև յայտնութիւնն
իսկ այն է գործ ինչ՝ որ հաւաստեաք գայ ՚ի յայտ, անկ
է աստուածաբանին խոյզ և խնդիր առնել այնոցիկ, և
ընդդէմ անհաւատից բացայայտակի ցուցանել զայնո-
սիկ, որպէս զի նոքիմքք ընդունելի առնել նոցա զաս-
տուածայինն յայտնութիւն։ Ա.պա ուրեմն մարթ է բա-
նին, յետ ընդունելոյ զհաւատս, քօղախնդրեալ հոլա-
նել զհաւաստիս նորին առ ՚ի ցուցանել զայնոսիկ կա-
րօտելոց, և պաշտպանել զնա ՚ի հինից յարձակմանց։

Եւ ոչ աստ զկայ առեալ աստուածաբանին, այլ յաս-
տուածային յայտնութիւն եղեալ ապաստան՝ կարէ և
յիւրաքանչիւր մասունս հաւատոյ իջանել յայդ և ՚ի

խնդիր։ Պանդխտեցի յառաջադրել զայնոսիկ հաւատացելոց՝ ոչ խնդիրս զայնցանէ յուզէ, և ոչ զհաւատիս նոցին բացատրէ, այլ՝ի հլուիւն որդւոյն առնէ զայնս ապաստան։ Պատուածաբանին է գործ ցուցանել զդպրութիւն եկեղեցւոյ, և զաստուածայինն նորին ծագումն և զիշխանութիւնն և զձիրս, ցուցանել զերկաքանչիւր կանոնս հաւատոյ, զսուրբ գիրս և զաւանդութիւն, և իբր յաղբերաց աստի առեալ սահմանել եկեղեցի վճիռս ընդդէմ մոլորութեանց և հերձուածոյ։ Այլ է տեսանել զայս յայտնագոյն՝ի մատունս հաւատոյ՝ որ աւանդութեամբ հասեալ են առ մեզ, և հաւիւ՝ի սուրբ գիրս է և կամ չէ իսկ բնաւ զայնցանէ յիշատակ, և զորոց Հարքն իսկ տարտամն խօսին, մանաւանդ յառաջ քան զերևել մոլորութեանց զայնցանէ։ Այլ զիմաստ ևս աստուածաբանին ցուցանել զայնս ընդդէմ հերետիկոսաց առանց նպաստից բանին և գիտութեանց։

Օգայս այսպէս արարին Հարքն և Վատագովք քրիստոսական հաւատոյ, Կլեմէս ածէքսանդրացի, Յուստինոս, Իրոդիոնէս, Տերտուղիանոս, Կիպրիանոս, Աթանաս, Եւսեբի, Հերոնիմոս, Գրգոսիոս, մեծն Լեւոն, և այլք առհասարակ։ Այս այս է առաքելոյ ասացեալն բան Պետրոսեան (ա. Կոր. ժբ. 8.) զորմէ գրէ Գրգոսիոս. (՚ի ժղ. գէրս յղ. Հերետիկոսեան. գլ. ա.) “Սովաւ հաւատք փրկաւէտ՝ որ՚ի Քրմարիտ երանութիւնն ածէ՝ ծնանի, մնանի, պաշտպանի և կազդուրի. և բազումք՚ի հաւատացելոց նուազին՚ի գիտութենէ աստի, թէպէտ և նուիրին իսկ հաւատովք Քրիստոսեալք։ Օ՚ի այլ է գիտել միայն որ ինչ պարտ է մարդոյ հաւատալ առ՚ի հասանել երանաւէտ կենացն յաւիտենից, և այլ գիտել թէ զիմաստ այն՚ի բարեպաշտից օժանդակեալ և ընդդէմ ամպարշտաց պաշտպանի. և զայս թուի առաքելոյն տիրապէս յորջորջել գիտութիւն ,,։

Ա Ռ Ա Ք Ո Ի Թ Ի Ի Ն

Հետազօտութիւնք այդպիսիք մեծ գործեն պարզմանութեան և միամիտ հաւատոց, զոր Հարքն բազում գովեն։ Որ անաւանդ զի երբեմն ծանուցք ևս թուին առարկութիւնք, և տկար լուծուածն նոցին, և դիւրաւ անտի մարթ է երկմտութեան՝ի միտս անկանել։

Պէ· Այդ ամենայն ընտրուց չիք տեղի, եթէ ոք ոչ առ տարակուսանաց և երկմտութեան, այլ առ՝ի հաստատութիւն ճշմարտութեան արասցէ հետազօտութիւն. նա և օգնէ յոյժ՝ի հաւատս, որպէս յայտ է յօրինակէ Հարց սրբոց առհասարակ։ Իսկ յորդորել նոցա՝ի միամիտ հաւատս՝ վասն տգիտաց է և տկարաց· այլ զտգիտութիւն ոչ երբեք գովեն սուրբ Հարքն· զի եթէ գովէին զայն, ոչ զհակառակն տային օրինակ։ Ի խուզարկութեանց այսոքիկ և եթէ վտանգ, որք չիցեն հաստատեալք՝ի հաւատս, և ոչ՝ի վկայութիւնս Աստուծոյ վստահք, այլ՝ի մտաց իւրեանց խնդրեն հաստատութիւն. իսկ որք հաւատացեալքն են ըստ օրինի վասն Աստուծոյ վկայելոյ, և ոչ վասն խելամտութեան իւրեանց, ոչ մի ինչ երկմտութիւն՝ի միտս նոցա՝ի կարծեցելոց ծանուցց առարկութեանց անտի անկանի։

ՃԱՌ ՎԵՑԵՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԾՈՑ

Յայսվայր զաղբերաց աստուածաբանութեան և զկանոնաց նորա Ճառեալ, յորոց ամենայն խնդիրք աստուածաբանականք սահմանին, մատիցուք արդ յիւրաքանչիւր մասունս նորին։ Այլ պարտ է մեզ սկիզբն առնել, ուստի և զանուանն գիտութիւնս այս կալաւ, յառաջ քան զամենայն զԱստուծոյ և զստորոգելեաց նորա Ճառել։ Աստուծոյ անուամբ իմանամք զԱն ամենակատար, քան զոր գերագոյն ինչ և կատարելագոյն չիք խորհել, և ոչ յատուկ ինչ անուն սահմանել նման, որպէս Յուստինոս ասէ։ Այլ սերփականագոյն նմին քան զամենայն անուանս այն իսկ է՝ զոր ինքնին իսկ անուանեաց "Ես էն,,, զի զգոյութիւն նորա ըստ առաւելազանցութեան նշանակէ, որ էն ինքնագոյ և միտագոյ, և ի նմանէ համագոյք ունին զգոյութիւն։

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԳՈՅՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Թէպէտ և բնութիւնն Աստուծոյ է անհասանելի, բայց գիտեմք զի գոյ Աստուած, և զի չկարէ իսկ ոչ գոլ, հարկ է նմա գոլ· այնպէս զի և ոչ մարթ է խորհել կամ ըմբռնել թէ չգոյցէ։ Այլ քանզի եղեն իսկ և են անաստուածք որ ուրանան զգոյութիւն նորա, պարտ է աստուածաբանին ցուցանել և զայն։

Աշխարհ և որ ինչ յաշխարհի են՝ սահմանաւորք են, փոփոխելիք և չհարկաւորք, այսինքն ոչ ինքնա-

գոյք, որոց գոյութեան պատճառք ոչ յինքեանս են և ոչ յինքեանց։ Օ՛ի տիեզերք՝ ի մասանց բաղկացեան, և որ ինչ բաղկանայ ՚ի մասանց՝ անշնար է թէ իցէ անսահման. ապա թէ ոչ, լինելը միանգամայն սահմանաւոր և անսահման, և կամ անսահմանն ՚ի սահմանաւոր մասանց բաղկանայր, որ է անշնարին։ Օ՛փոփոխականութիւն համագոյիցս, մանաւանդ թէ գլխաւորփոփոխ նոցին բնութիւն ոչ ոք անդիտանայ. և աստի իսկ գիտէ գայ ոչ հարկաւորութիւն նոցին, այսինքն զի մերթէր նոցա գոլ և ոչ գոլ. զի զինչ անտեղի իցէ խորհել թէ աշխարհս և կամ մանն ինչ սորին չգոյր։ Ա՛րդ որ ինչ սահմանաւորն է, որ ինչ փոփոխելի, որ ինչ չհարկաւոր, այսինքն ոչ ինքնագոյ, ուստի և կարելի ՚ի գոլ և ՚ի չգոլ, հարկ է զի յայլմէ ընկալեալ իցէ զգոյութիւն. ապա թէ ոչ, լինելը ինչ գործ առանց պատճառի, և գոյն ընդ չգոյի համանգամանի պատահէր, որ է անտեղի։ Ա՛յլ ն, որ է եղելոցս ամենեցուն չհարկաւոր էակաց գերագոյն պատճառ, հարկ է՝ զի գեր ՚ի վերոյ քան զնոցայն իցէ կարգ, և հարկաւ գուցէ. զի եթէ էր և նա չհարկաւոր, հարկ էր խնդրել միւս այլ հարկաւոր։ Ա՛պա ուրեմն գոյ ն այն հարկաւոր, և նովին իսկ հարկաւ անեղ և ինքնագոյ, այսինքն իւրով զօրութեամբն և ՚ի հարկէ բնութեան իւրոյ գոյակ, նախէ և միտգոյ։ Ա՛յս է զոր Ա՛ստուածն կոչեմք։

Ա՛յժմ բնաշանճական ցուցակութեան հարկաւոր անեղ և միտգոյ ն՝ին զհետ գայ բացայայտ և կարևոր կցորդութեամբ և գոլ նորին անսահման իմացական և ազատ, զգարառութիւն ամենայն կատարելութեանց յինքն բերելով իբր լուծիչն գոյութեան. զի որ ինքնագոյ է և ինքն իւր պատճառ, ի՛ւ կամ յումմէ բռնադատելոյ կարիցէ գոլ թերի։ Ն՛ա է ցուցակութիւնս այս անտեղիտալի առարկութեան, հաստատեալ յառածս անմիջապէս բացայայտս բանիւն, այսինքն ՚ի հակասութիւն. և սուաւ վարին յաձախ ՚արք եկեղեցւոյ ընդդէմ անաստուածից. և ( )գոտանինս յարտաքնոցն իսկ իմաստասիրաց և մանաւանդ ՚ի պղատոնեանց զայս ցուցակութիւն ՚ի կիր առնու. (յղ. *պղատին Ա՛տուածոյ. գիրք ը. գլ. ջ.) զոր յառաւելագոյն բացատրութիւն

ձեռնարկութեանս աճեմք աստանօր. "Ի. յլ արդ իմաս տասէրքս այսոքիկ, յիրաւի գերահռչակեալք քան զայլսն, 'ի միտ առին՝ զի որ միանգամ փոփոխելին է, չէ նա Ի.ստուած. նմին իրի գեր 'ի վերոյ անցին ամենայն հոգւոյ փոփոխականի 'ի ինդրել զարձերեան Ի.ստուածն. Տեսին գարձեալ զի ամենայն տեսակ յիւրաքանչիւր փոփոխական իրաց, որպիսի բնութիւն և իցէ, յայնմանէ և եթէ գոյանայ՝ որ իսկութեամբ և անյեղլապէս է. Սորին վասն ընդհանուր աշխարհի մարմինք, կերպարանք, որակք, շարժումն կարգաւորեալ, տարերքք առկայացեալք յերկնից մինչև յերկիր, և որ 'ի նոսա իւրաքանչիւր մարմինք, այլ և կենդանականք համայն, եթէ որ մնանի և պահի յինքեան՝ որպէս ծառք, եթէ մեռանի և զգայուն՝ որպէս անասունք, եթէ որ հանդերձ այսու և իմանայ՝ որպէս մարդիկ, եթէ որ անկարօտ մնուցիչ դարմանոյ կայ յինքեան, զգայ և իմանայ՝ որպէս հրեշտակք, այս ամենայն 'ի նմանէ եւեթ ունին գոյանալ՝ որ էն պարզաբար, Ո. ի նորա ոչ այլ է գոլն և այլ կեալ, որպէս թէ հնար իցէ լինել նմա անկեանդանի. և ոչ այլ է նորա կեալ և այլ իմանալ, որպէս թէ կեալ մարթ իցէ նմա առանց իմանալոյ. և ոչ այլ է նմա իմանալ և այլ երանելին լինել, իբր այն թէ իմանալ կարիցէ և երանելի ոչ լինել. այլ որ ինչ է նորա կեալ՝ իմանալ՝ երանելի լինել, նոյն այն է նմա գոլ.,,:

"Յայսպիսի անփոփոխութենէ և 'ի պարզականութենէ 'ի միտ առին նոքա՝ թէ նա արար զամենայն, և ինքն անարար է յումեքէ և անեղ. վասն զի խելամուտ եղեն՝ թէ . . . որ ընդունի զյաւէտ և զնուազ, անշուշտ փոփոխական է. նմին իրի արք կորովամիտք և գիտնականք, և ներկուռքն յայսոսիկ, անդէն իմաստասիրեցին՝ թէ չիք յայն իրս տեսակ առաջին, ուր յայտնապէս փոփոխելի տեսանի: Ապա քանզի հայեցեալ տեսանէին՝ զի մարմին և հոգի յաւէտ և նուազ տեսակս ունին, և եթէ մերկ յամենայնէ լինէին՝ բնաւ իսկ անգոյ մնային, 'ի միտ առին թէ գոյ ինչ՝ յորում իցէ առաջին տեսակ և անփոփոխ, որով և անհամեմատ, ուղղապէս հաւանեալք թէ անդ է սկիզբն իրաց անարար՝ յորմէ ամենայնիք եղեն: Ապէս ահա զգիտութիւն Ի.ստուծոյ ինքն իսկ յայտնեաց նոցա, յորժամ անե-

բևոյթքն Աստուծոյ ՚ի ծանօթութենէ եղելոցն նուաւեցան, միտնջենաւոր զօրութիւն նորա և աստուածութիւն, յորմէ և երևելիք ամենայն և ժամանակեայք հաստեցան ,, :

Այս բնազանցական ցուցակութիւն ՚ի միւս ևս ածէ զմեզ ՚ի բնաբանական ձեռնարկութիւն : Արդ համագոյից, այսինքն իրաց իւրաքանչիւր առանձինն և ՚ի միասին առ նպատակն իւրեանց յարմարութիւն, բովանդակէ յինքեան զհարկ կարգադրողի. և ըստ կատարելութեան կարգին, որ ՚ի բազմայեղանակ զանազանութեանն փայլէ պարզականապէս, կարգադրողին ամենիմաստ իմանի զօրութիւն : Այս արդարև ոչչափ ոք խոհականին զկարգ էիցս բնաւից նկատիցէ, ոչչափ ՚ի բնական գիտութիւնս ներհուն ոք իցէ, ոչչափ առաւել զօրէնս համագոյիցս ծանիցէ, ոչչափ առաւել ՚ի գաղտնիս նոցին խելամուտ լիցի, այնչափ առաւել ՚ի միտ առնու՝ զի հարկ է թէ իցէ ոք նոցին կարգադիր և օրէնսդիր ամենիմաստ և ամենազօր : Արդ օրէնսդիրն այն իմաստուն և հզօր նոյն ինքն է, զոր Աստուածն անուանեմք : Ասվկին Հաւաստեօք Ճարտարախօսութիւն աստուածայինս հրաւիրէ զազգ մարդկան ՚ի ծանօթութիւն իւր. զի “Արկինք պատմեն զփառս Աստուծոյ ,, . (Սղմ. ԺԸ. 1.) “Օ՜ի աներևոյթք նորա ՚ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին ,, . (Հռ. Ա. 20) :

Ասկ երրորդ ցուցակութիւն ՚ի հասարակաց հաւանութենէ ազգի մարդկան : Ապաքէն ամենայն մարդիկ աստուածութիւն իմն ոյսիսի և իցէ հաւանիլն ընդունելի. ազգք և ազինք տարաձայնք ՚ի միմեանց ըստ վարդապետութեան ըստ սովորութեան ըստ բնութեան և ըստ ամենայն իրաց, խնամտունք և խուժադուժք, միաբանին թէ գոյ Աստուած. և Կիկերոն ասէ՝ թէ “Ո՛ ամենայն ազինս քաջայայտ է, և բնածին իսկ յամենեսին տպաւորեալ ՚ի հոգւոջ՝ թէ գոյ Աստուած ,, . և Պլուտարքոս ասէ. “Ուղևոր տարաշխարհիկ պատահէ ՚ի քաղաքս՝ որոց ոչ գուցէ պարիսպ, ոչ ուսումն, ոչ թագաւոր, ոչ ոսկի և արծաթ . . . յորս բնաւ իսկ և տուն չկայցէ, այլ հիւղք և գեռնափոր նկուղք. բայց չիք իսկ և չիք ուրեք քաղաք կամ գիւղ, ուր չիցէ Աստուած և ոչ մի, ուր չիցեն երդմունք և աղօթք, ուր

չիցեն զոհք առ պահպանութիւն բարեաց և՝ ի խափանումն մծտալուտ չարեաց ... որպէս զի տեսեալ արդեօք իցէ ուրուք քաղաք անարև քան անկրօն ,, : Զդիպ այսպիսի միաձայնութիւն է գործ, որ զպատճառ իւր պահանջէ. և ոչ է մարթ այլ ինչ պատճառս իմանալ այսմ, բայց կամ զսկզբնական աւանդութիւն, կամ զբնածին ազգումն իմացականիս բնութեան, և կամ մանաւանդ զերկաքանչիւրն իսկ :

Զորեցունց այսոցիկ հաւաստեաց տարբերք և գոգցես իմն սերմանք յամենայն մարդ բանաւոր ընդաբոյսք են, որով և ոչ օք կարէ անգիտանալ զԱստուած. կարէ ասել՝ ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած, այսինքն կամել թէ չգոյցէ Աստուած. “Ասաց անզգամն՝ ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած ,,. այլ՝ ի մտի ոչ ևս, այսինքն զի չկարէ օք հաւանել մտօք՝ թէ չգոյցէ Աստուած. զի եթէ ոչ սկզբնապատճառ գոյութեան իւրոյ զնա իմանայցէ, ոչ ևս կարէ իմանալ ինչ պատճառ եղանութեան իւրոյ : Այս զի է ինքն գոգցես փոքր իմն աշխարհ, յորում իմաստութիւնն Աստուծոյ փայլէ հրաշափառապէս, թէ՛ ըստ կազմածոյ մարմնոյն, և թէ՛ մանաւանդ ըստ հոգւոյն, որ զգայ զիւրոյին առ Հնմանբիան և առ բարին միտումն, և եթէ բարեգործէ՝ զբարոյականին կարգ և կանոն տպաւորեալ յինքեան բերելով՝ հանգչի և բերկրի, իսկ եթէ չար ինչ գործէ՝ թաւխիծք մտացն և խիղճ տանջեն զնա, անհնար է թէ չճանաչիցէ զարարօղ իւր, և ոչ զնա ամենիմաստ և ամենասուրբ Հանապազ ճանաչիցէ : Զպա ուրեմն երեքումբք ևս հաւաստեօքս այսոքիւք ստիպի մարդ՝ ի Հանապազ զգոյութիւն Աստուծոյ. և չէ Հնար թէ անյաղթելի տգիտութեամբ օք տգիտանայցէ զգոյութիւն Աստուծոյ, ոչ դրականաւ և ոչ բացասականաւ. զի եթէ էր օք այսպիսի, լինէր անդատապարտ. այլ չէք օք անաստուած անդատապարտ : “Ո՛չ ոչ գտանիցեն ամենևին տալ պատասխանի ,, , ըստ առաքելոյն. (Հռ. ա. 21) :

ԳԼՈՒԽ Բ

ՅԱՂԱԳՍ ՄԻՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Մի է Աստուած, և չէ հնար թէ չիցէ մի. այսպէս հաւատացին նահապետք, այսպէս և Հրեայք և քրիստոնեայք հաւատացին միշտ և հաւատան. և այնպէս առ ամենայն ազինս աւելի կամ նուազ բացայայտութեամբ եղեն այս հաւատք, ասէ Պերճիէ, զի կամ՝ի հաստչէն՝ի սիրտս նոցա այսպէս տպաւորեալ, և կամ յաւանդութենէ՝ որ մինչև՝ի սկիզբն անդր մարդկութեանս՝ի վեր ելանէ, յամենայն կողմանս երկրի և յամենայն ժամանակի գտանելիք զայն: Այլքն իսկ կապաշտք՝ի բազմաթեան դիցն իւրեանց ծանեան զԱն գերագոյն, վասն որոյ և անպատասխանիս զնոսա առաքեալն համարի, զի ծանեան զնա և ոչ իբրև զԱստուած փառաւորեցին: Աստուածութիւն ոչ հաւասարս իրերայ զդիան գաւանէր, այլ կարգ ըստ կարգի. և ոչ երբէք զդիան երկրաւորս և երկնաւորս ընդ գերագոյն էին՝ի մի կարգ ունէր, այլ գեր՝ի վերոյ ամենեցուն գաւանէր զամենամեծն և զամենաբարին՝ի նոցանէ անուանեալ զՀայրն դից և մահայուաց:

Վաղայայտ է մեզ՝ի հաւատոյ զի մի է Աստուած. և՝ի սուրբ գիրս չիք ինչ բացայայտագոյն քան զայս աւանդեալ իբրև հիմն հաւատոյ՝ յոր այլ ամենայն ճշմարտութիւնք հաստատեալ կան. "Լուր Իսրայէլ, տէր Աստուած մեր տէր մի է ,,. (Բ. օր. Ձ. 4): Յամ ճշմարտութեան երաշխաւորէ և բանն, և ինքնին իսկ ծանօթութիւնն Աստուծոյ. զի եթէ չէ մարթ կատարելագոյն ինչ քան զԱստուած նկարել՝ի մտի, նովին իսկ գտանի նա միակ. զի եթէ երկու կամ բազումք լինէին ամենակատարք, եղծանէր միոյն կատարելութիւն՝ որ՝ի միութեանն է: Ոչ երկուցն այնոցիկ կամ բազմից կամ հաւասարս իրերայ պարտէր գոլ, և կամ քան զիրեարս գերագոյն. եթէ հաւասարք էին, ոչ ոք՝ի նոցանէ լինէր Աստուած, զի ոչ ոք ամենիշխան. իսկ եթէ անհաւասարք, գերագունին ևեթ՝ի նոցանէ լի-

նէր անկ աստուածութիւն, զի չէ մարթ Աստուծոյ գոլ քան զոք ի խոնարհ։ Եւ զի դարձեալ հակասական է դնել ամենակատարս բազումս. քանզի բազումքն այնոքիկ կամ ունին զկատարելութիւնս միմեանց և կամ չունին. եթէ չունին, ապա ամենեքին ևս անկատարք են. իսկ եթէ ունին, և ոչ մին ի նոցանէ է ամենակատար, զի կատարելագոյն ևս գտանիցէ՝ եթէ զայլոցն ևս յանձին բերէր զկատարելութիւնս. վասն որոյ ասէ սուրբն Աթանաս ընդդէմ հերձուածոյ. "Հազումն դնել Աստուածս, այնպէս է՝ որպէս և ոչ զմին ընդունել,,։ Եւ Տերտուղիանոս ասէ. "Աստուած, եթէ չիցէ մի, ոչ ևս է,,։ Ի նէին հարկաւոր՝ բաւական է ամենայնի. և եթէ բաւական, այլք ամենեքեան չհարկաւորք, վասն որոյ և ոչ աստուածք։

Այսոյն հակասութիւն բովանդակէ և անսահմանութիւնն Աստուծոյ. զի թէ էր ինչ արտաքոյ անսահմանին, ոչ ևս գոյր նա անսահման. զի որ անսահմանն է՝ ընդ զամենայն, և ոչ թողու այլում իմիք արտաքոյ իւր տեղի։ Այսոյն և այլ կատարելութիւնք աստուածայինք հաստատեն. այլ ի զուր է մեզ յամել ի խնդիր, զոր չէ մարթ յերկեսայս իսկ արկանել։

ԳԼՈՒԽ Գ.

ՑԱՂԱԳՍ ԷՈՒԹԵՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Խնդիրս առնել աստուածաբանից զէութենէն Աստուծոյ և զնորին կատարելութեանց, ոչ զբնութիւն նորա է հետազօտել, որ անքննին է և անհաս, և "Աստ նորա անքննութիւնն ընծայութիւն անպիտութեան մատուցանելի է,,. (Աշխ գիրք ա. գլ. ա.) և յորում չիք զանազանութիւն իրական՝ ոչ կատարելութեանց յէութենէ նորա, և ոչ նոցին յիրերաց, այլ ըստ տկար մերում իմացուածոյ կարգ ինն ի միտս մեր ստեղծանել կատարելութեանց նորա, որ ի նոցանէ առաջինն և էականն ի նմա, և որ իբր երկրորդ և յառաջնումէ անտի բղխեցէ. կամ որ ի ստորոգելեաց նորա ըստ մարդկեղէնն իմացուածոյ իբր կարուցիչ աստուածայնոյն էու-

թեան, ուստի այլքն բղխիցեն ստորոգելիք. որպէս մարդ էական ստորոգելի է բանականութիւն, ուստի այլքն յառաջ գան՝ ուսումնականութիւն, ծիծաղականութիւն, այլովքն հանդերձ։

Երդ ոմանք, որ անուանականքն կոչին, ասեն էութեանն Աստուծոյ կալ՝ի պարառութեան ամենայն կատարելութեանց, իբր թէ սահմանելով զԱստուած էակ ամենակատար։ Այլ այս արտաքոյ ելանէ խնդրոյս, զի ամենեցուն է ընդունելի՝ պարառութիւն ամենայն կատարելութեանց յԱստուած, այլ խնդիրն թէ ո՞ր յայնցանէ իցէ կացուցիչ էութեանն Աստուծոյ ըստ մերում իմացուածոյ, թէպէտ և յամենապարզ բնութեան ոչ գտանիցին իրապէս այնոքիկ՝ի միմեանց։

Կոչտականք զանսահմանութիւնն Աստուծոյ ասեն կացուցիչ էութեան նորա. այսինքն զանսահմանութիւն՝ որպէս նոքա բացատրեն՝ արմատական, որ պահանջէ զամենայն կատարելութիւն։ Այլ այս ևս՝ի նոյն առաջնոյն կարծիս յանկի։

Կէսք՝ի թոմայականաց կացուցանեն զէութիւնն Աստուծոյ՝ի ծայրագոյն իմացականութեան. և կէսք, որոց կարծիք ընդունելի եղեն հասարակաց, յինքնագոյութեանն Աստուծոյ։

Վասնզի չորս ինչ, ըստ հասարակաց կարծեաց, իրընդրին առ բնազանցական էութիւն. նախ՝ զի իցէ ներքին ինչ էին. երկրորդ՝ զի որոշիցէ զայն յայլմէ ամենայնէ իմեքէ. երրորդ՝ զի նախ քան զամենայն իցէ մտաց ըմբռնելի. և չորրորդ՝ զի իբր աղբիւր այլոց բնաւից կատարելութեանց մարթ իցէ զայն համարել։ Երդ ինքնագոյութիւն այնպիսի ինչ ներքին է Աստուած, զի չէ մարթ առանց այնորիկ ըմբռնել զնա, և ոչ յառաջ քան զայն մտածել ինչ այլ՝ի նմա։ Ինքնագոյութեամբ որոշի Աստուած յամենայն էից գերազանցապէս, և յայնմանէ զայլ ամենայն կատարելութիւնս նորա մարթ է ըմբռնել յառաջագոյեալ։ Վասնզի այնու իսկ զի է ինքնագոյ՝ իմանի ամենայն կատարելութեամբք լցեալ և անսահման։

Այս կարծիք առաւելապէս համաձայնի և սուրբ գրոց և Հարցն վարդապետութեան. զի Աստուած անուանակոչեաց զինքն Որ էն, յասելն ցՈվսէս (Ելից·

Ա. 14.) "Ես եմ Աստուած որ էն. այսպէս ասասցես ցորդիան Իսրայէլի. որ էն առաքեաց զիս ,, : Օրմէ ասէ Իլարիոս (յղ. Երերդոնէան գիրք ա.) "Ոչ այլ ինչ առաւել քան զգոլ յատուկ ինչ Աստուծոյ իմանի բանիս. զի որ էն՝ ոչ դադարելոյ է և ոչ սկսելոյ ,, : Նոյնպէս Թեոդորոս ասէ. "Եթէ բարի ասիցես, եթէ մեծ, եթէ երանելի, եթէ իմաստուն, եթէ որ ինչ և յայսպիսեացս աստի ասիցես զԱստուծոյ, բովանդակի՛ ի մի յայն բան որ էն ,, : Այս ոչ միայն յոգունք՛ ի Նորոց, այլ և իմաստասէրքդ հեթանոսք լուսով և եթ բանին հաստատեն: Օ՛ի որ էն ինքնագոյ, և ինքնիշխան է, և բովանդակ հարկաւորապէս յինքեան զամենայն որ ինչ ազգի ազգի կատարելութիւնք են և կարեն լինել. ապա հարկ իսկ է նմա գոլ անսահմանաբար կատարեալ, և պարառութիւն ամենայն ազգի ազգի կատարելութեանց: Այս աստի զհետ գայ, զի Աստուած և ամենայն արարածք՛ ի միասին՝ չէն ինչ լաւագոյն, չէն ինչ աւելի քան զԱստուած. զի ամենայն որ ինչ բարութիւն է յարարածս, յԱստուծոյ է և գերազանցապէս է յԱստուած: Այսպէս չէ և չէ երանագոյն՝ որ զարարածս ամենայն ժառանգէ ընդ Աստուծոյ, քան զայն՝ որ զԱստուած միայն ժառանգէ: Այսպէս կատարեալ աստուածսիրութիւն այն է՝ զԱստուած միայն վասն իւր սիրել, և զայլ ամենայն՛ ի նմա և վասն նորա. վասն ոյոյ ոչ է սէր կատարեալ չշատանալ Աստուծով, և եբանագոյն զանձն համարել՛ ի ժառանգել այլ ինչ ևս բայ յԱստուծոյ:

ԳԼՈՒԽ Դ

ՅԱՂԱԳՍ ՍՏՈՐՈԳԵԼԵԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Բայց զանազանել զկատարելութիւնս Աստուծոյ, որ կոչին ստորոգելիք, չիցէ օտար՛ ի բնութենէ ինքնագոյ էին՝ որ հարկաւորապէս է մի, հարկաւորապէս է պարզ և ամենևին անբաժանելի: Այսպիսին կատարելութիւնք Աստուծոյ ոչ զանազանին իսկապէս՛ ի միմեանց և յէութենէ նորին, այլ անձկութիւն մտաց մերոց չկարէ ըմ

բըռնել զայնոսիկ միանգամայն. և ոչ մարթէ մեզ Ճառել զայնցանէ, առանց ՚ի կիր առնլոց զեզանակ բանիցս սուրբ գրոց, որ զկնճեալ ՚ի տկարութիւն խմացութեանս մերոյ՝ զանազանաբար յանդիման առնեն մեզ զայնս։ Վասն որոյ ՚ի Ճառել ուրոյն զմիոյ միոյ ՚ի կատարելութեանցն Աստուծոյ, ոչ իմանամք իրօրէն զանազանել զայնս ՚ի միմեանց. զի ՚ի նմա միաք կամք իշխանութիւն իմաստութիւն բարութիւն և արդարութիւն մի ինչ են։ Այն ինչ է նորայն խորհել և կամել, նոյն ինչ՝ կամել և առնել, նոյն՝ ստեղծանել և կորուսանել, նոյն՝ ներել և պատուհասել. այլ քանզի միոյ պարզական կամաց նորա այլ և այլ են առ արարածս արդասիք, և առնակատար էութիւն նորա հանգիտանայ ամենայն կատարելութեանց զանազանելոց յարարածս, վասն այսորիկ միաք մեր ըմբռնեն զայն զօրութեամբ զանազանել և բազմապատիկ։ Աստ այսմ զանազանութեան ունիմք ՚ի ստորոգելեացն Աստուծոյ ասին հարկաւորք՝ որպէս ամենիմաստութիւն, և ունիմք ազատք՝ որպէս փրկագործութիւն. և ՚ի հարկաւորսայ անտի կէսք բացայարձակք՝ որպէս յաւիտենականութիւն, այլք առընչականք՝ որպէս Հայրութիւն։ Այլ առ ՚ի քաջ խելամտութիւն զանազանութեանցս, առասցուք նախ զպարզութենէ աստուածեղէն բնութեանն։

ԳՕԴԻՒԱԾ Ա.

Ցաղագս պարզութեան Աստուծոյ։

Պարզ այն է՝ որ չէ բաղադրեալ, իսկ բաղադրութիւն է այլ և այլ իրաց միութիւն. և զանազանի երբակի, բնաբանական, բնազանցական և տրամաբանական։ Բնաբանական բաղադրութիւն է՝ որ բաղկանայ ՚ի մասանց իրապէս զանազանելոց, որպիսի են մարմինք առհասարակ. բնազանցական է՝ որ բաղկանայ ՚ի կարողութենէ և ՚ի ներգործութենէ, յէութենէ և ՚ի գոյութենէ, ՚ի բնութենէ և յանձնէ. իսկ տրամաբանական՝ որ բաղկանայ ՚ի սեռէ և ՚ի զանազանութենէ։

Արդ պարզութիւնն Աստուծոյ արտաքսէ զայս ամե-

նայն բաղադրութիւնս, որպէս ցուցցուք ՚ի ստորև, գեր ՚ի վերոյ անցեալ և քան զամենայն հոգեղէն պարզութիւն։ Ո՛չ ի հոգի ինացող և կամեցող բաղադրի յէնթակայէ և ՚ի պատահմանէ. զոր օրինակ հրեշտակն ՚ի հրեշտակային բնութենէ, յիմացմանէ և ՚ի կամեցողութենէ, զի ներգործութիւնքս այսոքիկ իմանալ և կամել զանազանին իրապէս ՚ի բնութենէ նորա։ Ոչ Ա՛ստուած ոչ այսպիսի, այլ ամենապարզ ներգործութիւն. զի ամենայն կատարելութիւն ՚ի նմա, որպէս ասացաքս, նոյն է իրապէս ընդ էութեան նորա և ընդ գոյութեան. վասն որոյ ինքն է կեանք և բարութիւն և սրբութիւն և իմաստութիւն և ամենակարողութիւն, և ոչ թէ ունակ այսոցիկ կատարելութեանց։ Ա՛ստուածոյ և՛թէ է այս պարզութիւն, անհաղորդական արարածոյ. վասն զի ո՛ր և է արարած ընդունակ է պատահմանց, այսինքն ներգործութեան, ունակութեան, սիրոյ և այլն. և ոչ իսկ գոյութիւն նորա նոյն է ընդ էութեան, քանզի ոչ հարկաւ գոյ։ Ընդդէմ այսր պարզական բնութեանն Ա՛ստուածոյ մոլորեցան՝ որք միանգամ մարմնաւոր համարեցան զԱ՛ստուած, որպէս կռապարիշտք և որպէս մարդակերպեայք՝ որք կերպարան մարդկեղէն եւուն Ա՛ստուծոյ, և որպէս համաստուածեանք՝ որք Ա՛ստուած զարիեզերս համարեցան, կամ ընդ տիեզերս միացեալ։ Ա՛յլոքն և որք իրական ինչ զանազանութիւն եդին ընդ էութիւն և ընդ ստորոգելիս Ա՛ստուծոյ, կամ ընդ այլ և այլ ստորոգելիս նորա. որպէս Վիլբերտոս և պալամեանք, որք զզօրութիւն Ա՛ստուծոյ և զգործել յէութենէ նորա զանազանեցին, և իբրև լոյս ինն յաստուածային էութենէ համարեցան ծագեալ, զոր օրինակ ՚ի Ճաբոր լերին ՚ի Վրիստոսէ. վասն որոյ կոչին և Թաբորականք։ Ա՛յլոքեայս և աբբայ Յովակիմ դնել իրական զանազանութիւն ընդ բնութիւն Ա՛ստուածոյ և ընդ աստուածային անձինս, և դատապարտեցաւ գրուած նորա ՚ի Դ. ժողովն լատերանեան յամին 1215։ Ոչ ընդ հակառակն Ա՛նոմեանք, զհետ երթեալ Ա՛նոմեայ և Ա՛յետիոսի, և ոչ զօրութեամբ ինչ զանազանութիւն կամեցան ընդունել յԱ՛ստուած, ոչ ընդ էութիւն և ընդ կատարելութիւնս Ա՛ստուծոյ, և ոչ ընդ կատարելութիւնս նորա ՚ի միմեանց։

Լ՝ը ՝ի պարզել զայս նոցա մոլորութիւն՝ գիտելի է զի այլ և այլ ազգ զանազանութեանց են. և նախ՝ իրական և իմացական. էրական՝ եթէ ինչ չիցէ նոյն ընդ իմիք, և էմպական՝ եթէ ՝ի միտս ևեթ մեր զանազանիցի ինչ յիմեքէ: Եթէ ինչ չիցէ նոյն ընդ իմիք, կամ զի որիշ իցեն ՝ի միմեանց՝ որպէս ոմն և ոմն, կամ զի կարիցեն որոշիլ՝ որպէս հոգի և մարմին, և կամ զի ներհակին առընչաբար՝ որպէս հայր և որդի, կոչի զանազանութիւն էրական. եթէ ինչ ընդ իմիք չիցէ նոյն ըստ եզանակի ևեթ, որպէս եզանակն յիրէն զանազանի, զոր օրինակ խորհուրդք ՝ի հոգւոյ և ձև ՝ի մարմնոյ, կոչի զանազանութիւն եզանակական: Ի վերայ այսոցիկ և այլ ինն զանազանութիւն եդ Արիստոտէլ ՝ի մէջ երկուց կամ բազում յատկութեանց իրիք, յորոց մին չիցէ տեսակաբար նոյն ընդ միւսում, որպէս կենդանականութիւն և բանականութիւն ՝ի մարդն, և որպէս էութիւն և ստորոգելիք Յ՝ոտուածն, և ստորոգելիք իւրաքանչիւր՝ որպէս արդարութիւն և ողորմութիւն և այլն. և զայս զանազանութիւն կոչեաց պէսական:

Դարձեալ և իմացականն զանազանութիւն բաժանի յերկուս. յորոց մին անհին, որպէս թէ ոք դիցէ զանազանութիւն ընդ Պետրոս և ընդ Կեփաս. իսկ միւսն հինական, պատճառս յիրէն առեալ՝ որպէս թէ այլ և այլ իրաց իսկ ինչ պիտանի, զոր օրինակ ցորեան ՝ի սերմանիս. և այլն:

ԳՕԴՈՒԱԾ Բ

Ջի պարզական բնութիւն է Աստուած:

Ա յս ճշմարտութիւն մեզ է հաստատ վճռեալ ՝ի Դ. Ժողովէն Լատերանեան. "Մի էութիւն, գոյացութիւն կամ բնութիւն պարզ ամենևին,,: Այլաւ ոչ և իսկ ազգ բաղկացութեան արտաքոյ Յ՝ոտուածոյ: Վասն զի սուրբ գիրք ՝ի բաց մերժէն ՝ի նմանէ նախ զբնաբանական բաղադրութիւն, որ բաղկանայ ՝ի մասանց իրապէս զանազանելոց, որպէս յամենայն մարմինս: Ինքն իսկ տէրն մեր ասէ. (Յհ. ՚ժ. 24.) "Հոգի է Յ՝ոտուած,,

և զի հոգի աստ ամենևին զհակառակն մարմնոյ նշանակէ, յայտ է՝ի նպատակէ բանին՝ զոր՝ի վերայ ածէ. "և երկրպագուաց նորա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել,,: Իւ յատկութիւնք, զորս առրբ գիրք ընծայեն միշտ Աստուծոյ, անսահմանութիւն և յաւիտենականութիւն և այլն, ոչ կարեն կալ ընդ բնաբանական բաղադրութեան:

Դարձեալ և բնազանցական բաղադրութիւն չիք Աստուած զի նոյն է՝ի նմա էութիւն և գոյութիւն. օտար է՝ի նմանէ և տրամաբանականն բաղադրութիւն, որ՝ի սեռէ և՝ի զանազանութենէ: Դիրք սուրբք՝ի բաց մերժեն Աստուծոյ զայս ամենայն բաղադրութիւնս անուանելով զնա ստէպ վերացեալ անուամբք իմաստութիւն, արդարութիւն, բարութիւն, ճշմարտութիւն և այլն, և ոչ ունակ իմաստութեան, արդարութեան, բարութեան և այլն, որպէս բաղադրութիւնքն այնոքիկ պահանջեն:

Ամենևին պարզութիւնն Աստուծոյ ցուցանեն Գալք՝ի բնութենէ և՝ի ստորոգելեաց նորա: Ի բնութենէն, զի որ ինչ ունի՝ է. և ծանօթութիւն իսկ Աստուծոյ որպէս էակ՝ քան զոր կատարելագոյն ինչ ոչ է մարթ խորհել, արտաքսէ՝ի նմանէ զամենայն բաղադրութիւն. և դարձեալ զի էակ հարկաւոր և ինքնագոյ չկարէ գոլ՝ի մասանց: Իսկ՝ի ստորոգելեաց նորա զնոյն դարձեալ հաստատեն, զի չկարեն այնոքիկ կալ ընդ բաղադրութեան, որպէս անսահմանութիւն և անփոփոխութիւն, և այլն:

Ընդ եթէ Աստուած ամենևին է պարզական, յայտ է զի մարդակերպեալք և համաստուածեանք մոլորեալք են:

ԳՕԴՈՒԱԾ Գ

Զի անտեղի և մոլորական է մարմնաւոր առել զԱստուած:

Առաջին մանն վարդապետութեանս է ընդդէմ մարդակերպեացդ, և որոց միանգամ մարմին ընծայեցին Աստուծոյ, և առաւել կռապաշտից. իսկ երկրորդն ընդ-

դէմ սակինեանց և այլոց, որք ոչ հակառակ ինչ հաւատոց համարին՝ մարմին ընծայել Աստուծոյ, և ոչ հնոց այլազգ զայսմանէ բերեալ կարծիս։ Նախեղի է մարմնաւոր ասել զԱստուած, զի ընդդէմ է բնութեան նորա. զի որպէս ցուցաք՝ի վերոյ, ամենևին պարզական բնութիւն է Աստուած, և պարզն հակառակ է բաղադրելոյ։ Այսն որոյ Աստուած՝ի ձեռն մարգարէին ասէ ցհռաստարիշտս. (Ա՛ո. Ես. 18.) “Ո՞ւմ նմանեցուցէք զիս, կամ որո՞ւմ նմանութեան նմանեցուցէք զինա „։

Իսկ զի հակառակ հաւատոց է, և ընդդէմ նախնեաց վարդապետութեան, յայտ անտի է՝ զի ընդ մարմնաւորութիւնս համարեցաւ միշտ մարմնաւոր ասել զԱստուած, և որք ասէինն՝ընդ Հերետիկոս դասէին։ Ընդ որ ինչ զմարդկայինն մարմնոյ ասացաք, զնոյն է ասել և որ այլ որպիսի և իցէ մարմնեղէն գոյացութիւնս ընծայեն Աստուծոյ։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛ռաջ. Ա. Ասեն զիրք զմարդ՝ի պատկեր Աստուծոյ ասեն արարեալ. ապա Աստուած՝ի մարմնոյ և՝ի հոգւոյ բաղադրի։ Ել սակաւք՝ի Հարց ըստ մարմնոյ և՝ի պատկեր Աստուծոյ ասեն արարեալ զմարդ։ Զիրք սուրբք և անդամն մարդկեղէնս և զգայարանս և զյատկութիւնս մարմնոյ ընծայեն Աստուծոյ, ձեռս և ոտս, աչս և հոտոտելիս, մեծութիւն և տարածութիւն, և այլն։

Պե. Արդեօ՞ զի պատկեր Աստուծոյ ստեղծումն ըստ բանականութեանն է, և ոչ ըստ մարմնոյ՝ որ հակառակ է պարզութեանն, որպէս ցուցաք։ Եւ բանք իսկ Հարց՝ի հոգեղէն յատկութիւնս Հայրն, Թէպէտ և զբոլոր մարդոյ Ձառիցեն, քանզի յիշխանութիւն նորա ակնարկեն և յազատութիւն։ Որպէս և իմանան զտիպս կերպարանաց, յորում նկարագրեն սուրբ գիրք զԱստուած՝ի ստեղծագործելն զմարդ, և կամ ըստ բազմաց և՝ զպատկեր Որանին Աստուծոյ մարդացելոյ։ Իսկ սուրբ գրոց անդամն մարդկեղէնս և զգայարանս և կիրս իսկ

բարկութեան և ատրճանաց ընծայել Աստուծոյ, վասն մարդկօրէն ձևացուցանելոյ է և իմանալի առնելոյ ըզբանն։ Օ՛ւ առ՛ի բառնալ զամենայն կարծիս նմանութեան մարդկան, ամենայն ուրեք յանդիման առնեն սուրբք գիրք զանբաւութիւն նորա և զյաւիտենականութիւն որ ընդ նիւթականի էութեան չկարեն կալ. որպէս ուր ասեն (Յերեմ. իէ. 24.) "Ի՛միթ զերկինս և զերկիր ես ո՛չ լնում,,։ Եւ այլուր (Ժամոպ. ա. 7.) "Ո՞ւր զի տեսանել ելից զտիեզերս,,։

Աստ. Բ. — ա. Սուրբ գիրք ոչ ուրեք անմարմին ասեն զԱստուած, զի բառս հոգի նշանակէ մարմին նուրբ, որպէս և ընկալան հինք զՀոգի մարմնեղէն։ — բ. Ծաղ զի և անծանօթ է մեզ հոգւոյ էութիւն. և սուրբն Կիրիղոս նազիանզացի զբնութիւն Աստուծոյ անձառ և անհաս ասէ. և սուրբն Եպիփան, ըստ վկայելոյ սրբոյն Գրոստինոսի, անբաւիր առնէր զմարդակերպեայս։

Պե. — ա. Սուրբ գիրք թէպէտ և ոչ ուրեք նիւթական բառիւս անմարմին կոչեն զԱստուած, այլ բազում ուրեք զանիւթական էութիւն նորա համազօր բնիւք յանդիման առնեն, ընծայեալ նմա յատկութիւնս՝ որոց ընդ նիւթոյ՛ի միասին պատահել անհնարին է։ Աշդարև հոգի առ հինս ոչ ամենայն ուրեք բերէ զնշանակութիւն ամենևին պարզ գոյացութեան, վասն որոյ ոչ՛ի հոգի ևեթ կոչելոյ սուրբ գրոյ զԱստուած՝ ցուցանէ զնորին ամենապարզ էութիւն, այլ յանչափութենէ նորա և յանսկիզբն և յանփոփոխելի էութենէն, զոր սահպ յեզեղեն սուրբ գիրք։ Հինք որպէս զհոգի ոչ ամենայն ուրեք ըստ բնիկ նշանակութեանն՛ի կիր առնուին, նոյնպէս և զմարմին։ Վասնզի բառիւս հոգի իմանային երբեմն հակ ոչ յամենայն բազադրութենէ զերծ. որպիսի են հոգիք եղականք առ անեղին, որ չեն ազատք՛ի բնազանցական և՛ի տրամաբանական բազադրութենէ։ Նոյնպէս և մարմնաւորս ուրեք ուրեք զՀոգեղէն հակս նշանակութեամբ գոյացութեան կոչեին. այլ ոչ ուրեք գտանի նոցա բազադրութեան բերեալ կարծիս զԱստուածոյ, կամ զպարզական էութիւն նորա արիեալ յերկբայս։

— բ. Ըպաքէն անհասանելի է մեզ հոգւոյ էութիւն, այլ գիտեմք ստուգիւ՝ զի հոգի ոչ է նիւթ և ոչ բա-

զաղբութիւն, և այս շատ է։ Իսկ սրբոյ Լապխանզա-
ցւոյն քան՝ եկեղեցւոյ սրբոյ է վարդապետութիւն, որ
զկարողութիւն մատց մերոց ցուցանէ, և ոչ եթէ բա-
զաղրութիւն ածէ զամենապարզ էութեամբն Աստու-
ծոյ։ Եւ սուրբն Լապխան զեղջկային պարզմտութիւն
տխմար միայնակեցացն մարդակերպեալց ներելի համա-
րեր ցորչափ՝ ի տգիտութեանն կային, և ոչ յետ գի-
տելոյ նոցա զվարդապետութիւն եկեղեցւոյ։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Յադագս համատառուածեանցն և ինքնատառուածեանց
մոլորութեան։

Համատառուածեանք կոչին որք մի եակ ընդունին զՀա-
մագոյս և զԱստուած Համայն, յարախառնեալ զան-
սահմանն ընդ սահմանելոյն, զիմացութիւնս եղականս
ընդ անեղին, և զԱստուած ընդ տիեզերս։ Ել նոր ինչ
է աղանդս, այլ և առ հինս Ճանապէր։ Եւ Ալ Իրգիլիոս
նկարագրէ զայն ըստ պիւթագորեան վարդապետու-
թեան այսպէս. (Ալեք. Դ. 219).

“Ասան ինչ մըտայ աստուածեղէն և շունչըս գոլ
արփենիս
Ընդին ոմանք՝ ի մեղուս, զի՝ նդ ամենայն շըրջի
Աստուած
Ընդ երկիր, ընդ ծովս հետս և ընդ երկին ան-
դընդախոր.
Ընտի հօտք և անդեայք, մարդիկ և բնաւ սեռք
գազանաց
Ուրաքանչիւր՝ ի ծնընդեան բերեն յինքեանս
նուրբ ոգիս „։

Յազգի ազգի յեղափոխութեանց աղանդոյս՝ երեք են
գլխաւորք. Ոմանք՝ որք զտիեզերս Համարին բըզ-
խումն կամ յեղյեղումն աստուածեղէն գոյացութեան,
զեղմամբ և ոչ բազմապատկելով։ Ոմանք՝ որք
ոչ ինչ ընդունին իրական, այլ զամենայն ինչ երևոյթ
առաչօք՝ բաց՝ ի միակ անսահման Համագոյիցս գոյացու-
թենէն։ Եւ Իրականացն՝ որոց զմիջին կալեալ ուղի,

ընդունին զմիակ գոյացութիւն անսահման և իրակա-
նութիւն ինչ յերևոյթս, զորս Համարին որպէս ստո-
րոգելիս կամ յեղանակութիւնս մնայուն անսահման
գոյացութեան։ Սակ ինքնաստուածեանք չինքեանս ա-
ռաւելապէս, այսինքն յազգ մարդկան, զմի յերից ա-
ղանդոց անտի Համաստուածեանց յեղանակեն։

Ընդ քանզի բազմանդակ աղանդս այս Հաստատի ՚ի
միութիւն գոյացութեան՝ չիոնմամբ անսահման և Հայ-
կաւոր Աստուծոյն ընդ սահմանելումն և ընդ հնարաւոր գոյա-
ցութեան, առ ՚ի տապալել զայն՝ շատ է ցուցանել ըզ-
գոյութիւն երկաքանչիւրոցս այսոցիկ գոյացութեանց
ինքնուրոյն։

Օ գոյութիւն որ և է գոյացութեան փորձիւ և ՚ի
մարթ է մեզ գիտել, թէպէտ անընդմիջ և թէ միջ-
նորդաւ լինի մեզ գիտել։ Ընդ փորձիւ գիտեմք զի գոն
եակք սահմանականք չարիաւորք փոփոխականք, և Հա-
մայն ասել՝ հնարաւորք, որոց չիք յիւրեանս պատճառք
գոյութեանն և չեն ինքնակացք. ապա Հարկ է ընդու-
նել եակ իմն Հարկաւոր անսահման և ազատ, որոշեալ
բոլորովին ՚ի սահմանելոց հնարաւոր էից, այսինքն զԱս-
տուած. զորս ընդ միմեանս խառնել զհնարսն եակ
ընդ Հարկաւոր Ան, և յերիւրել Հրէշ իմն անձառնի.
այսինքն եակ Հարկաւոր՝ միանգամայն և հնարաւոր,
սահմանեալ՝ Համայն և անսահման, պարզ և բազա-
դրեալ, յեղական և անփոփոխ։

Ծանձ զբարաչար հետևանս աղանդոյս, որ բառնայ ՚ի
բաց զամենայն բարութիւն և զբարութիւն գործոց.
Ծանձ և զայն՝ զի վարդապետութիւն Համաստուա-
ծեանց առհասարակ ՚ի վարկածս հետ Հաստատի, ա-
ռանց իրիք ցուցակութեան։ Ապա ուրեմն աղանդս այս
Համաստուածեանց և ինքնաստուածեանց մոլորական է
և անտեղի և հակասական։

ԱՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Ասէ. Ոչ ՚ի է անսահմանն, և ՚ի քնէ իւրմէ մերժէ
՚ի բաց զայլ ամենայն սահմանեալ և անսահման. ապա
թէ ոչ, ոչ ևս լինէր անսահման, զի ոչ բովանդակէր

յինքն զամենայն։ Արդ եթէ անսահմանին պարտ է մի և եթէ գոլ, ջհետ գայ՝ զի որ ինչ արտաքոյ նորա են կամ երևին սահմանեալ էակք, իցեն յեղյեղմունք նորին։

Պե. Ընսահման և հարկաւոր էին շատ է այնպէս քո վանդակել յինքն զամենայն, զի ոչ ինչ պակաս իցէ ի նմա, և ոչ ինչ մարթ իցէ յաւելուլ ի նա, վասն որոյ և չիցէ հնար խորհել ինչ կատարելագոյն քան զնա։ Այլ առ այս ոչ է հարկ, մանաւանդ և անտեղի իսկ է, իրապէս և նիւթապէս յինքն բովանդակել նմա զամենայն. շատ է զի զօրութեամբ և գերազանցապէս քո վանդակեսցէ զամենայն։ Վասնզի ի ստեղծանել ինչ անսահման ընդ՝ոչ ինչ կորուսանէ յիւրմէ, և ոչ ստեղծուածն յաւելուլ ինչ ի նա կարէ, և ոչ համագոյակից սահմանեալն այն արարած ընդ անսահման արարչին կարող է գոլ։ Որ՝եթէ հոգիք արարածականք չկայ ցիցե՞ն գոլ այնու զի գոյ հոգի անարար, կամ թէ կատարելագործիցե՞ն զարարիչն՝ յաւելեալք ի նա։ Այսպա գոյութիւն էից իսկապէս զանազանելոց յանսահման ընդ՝ոչ ինչ սանանէ անսահմանութեան նորին։

Այսպա այսմ օրինակի ի տապալել հիման, յոյր վերայ համաստուածեանք զվարկածն հաստատեն, համակործան և այնոքիկ անկանին. Թէպէտ և ինքնին իսկ անտեղի և հակասական է անսահմանին ունել յեղմունս սահմանականս, և ընդ սահմանելումն մի ինչ կացուցեալ՝ գոլ անսահման միանգամայն և սահմանեալ։

ՅՕԴՈՒԱԾ Ե

Չի չէ ընդունելի զանազանութիւն իրական ընդ Աստուած և ընդ ստորոգելիս նորա, և ոչ ի ստորոգելիս նորա ընդ իրեարս։

Այս վարդապետութիւն հակառակ է գիտելեօքս և պատմութեանց, որք իրական զանազանութիւն դնեն յաստուածային ստորոգելիս։ Որ՝եթէ ամենևին պարզական բնութիւն է Աստուած, որպէս ցուցաւ ի վերոյ, ապա չէ մարթ Թէ իցէ ի նմա որպիսի և իցէ իրական զանազանութիւն, Թէ՛ ընդ ինքն և ընդ ստորոգելիս

իւր ևս և առընչականս, և թէ՛ ի ստորոգելիս նորա ընդ միմեանս։ Այլ զանազան իրական զանազանութենէ յառաջ գայ իրական բաղադրութիւն, զոր ի բաց մերժէ ծայրագոյն պարզականութիւն։

Ընդ ի յայտ առնել զամենևին պարզականութիւնն Աստուծոյ՝ սուրբ գիրք բազում ուրեք կոչէն զնա իմաստութիւն, արդարութիւն, Հզմարտութիւն, և այլն։ Այլ քանզի յառնչուն ակ ստորոգելիս նորա առաւելագոյն է դժուարութիւն, վասն որոյ Հարկ ևս ի բաց մերժել զամենայն բաղադրութիւն յաստուածայնոց անտի ստորոգելեաց, յառընչականն մանաւանդ զկայ առնուն՝ ցուցանել զի և ոչ այնոքիկ տեղի երբէք տան բաղադրութեան Աստուած։ Այսու որոյ սուրբն Դիոնիսիոս Արիոպագիտացի (Ճառ լբ.) ասէ. "Ի՛ ի և երբեակ, երբեակ և մի, և՛ ի նոսա աստուածութիւն. կամ զի Հիմարտագոյնս ասացից, նոքա երեքին մի աստուածութիւն,,։ Եւ սուրբն Գրիգորիոս Նազիանզացի (Բղբ. Հի. գլ. ճ. 13.) "Աստ արդ սկիզբ կալ անսասանելի Հաւատով, զի Հայր Որդի և Հոգի են երրորդութիւն, սակայն մի Աստուած. իբր ոչ եթէ չորրորդ իմն աստուածութիւն իցէ նոցա Հասարակաց, այլ նոցին ինքն աստուածութիւնն անՃառ և անբաժանելի երրորդութիւն,,։

Եւ Աբրահամ ընդդէմ Հերեսիոլատաց. (գիրք ա. գլ. ժբ.) "Աստուած միտք գոլով բոլորովին և բոլորովին բան, զոր խորհի՝ զնոյն և խօսի, և զոր խօսի՝ զնոյն և խորհի. զի խորհուրդ նորա բան, և բանն միտք, և ամենայնի արտադրօղ միտք՝ ինքն իսկ է Հայր։ Այսպ որ ասէն միտս Աստուծոյ, և յառաջբերութիւն ուրոյն ընծայէ մտաց, բաղադրեալ զնա ասէ. իբր թէ այլ իցէ Աստուած, և այլ միտք նորա,,։

Ստորագոյնս զոյն վարդապետութիւն բացատրէ Պետրոս. (Հտ. ա. գիրք բ. գլ. ջ. եջ 103.) "Օ՜ անազանութիւն անճանց ոչ միայն չիշասէ ինչ միութեան և պարզութեանն Աստուծոյ, այլ սոյն այս իրական զանազանութիւն օգնէ ամենևին գոլոյ Աստուծոյ իսկապէս մի և ամենապարզ։ Օ՜ի թէ ոչ այս զանազանութիւն էր՝ի մէջ անճանց, և կամ եթէ մի միայն լինէր անձն աստուածային, և՛ի նմա գործողութիւնք մտաց և կամաց լոկք և պարզք առանց արտադրելոյ անձ

նաւորութիւն, ոչ ևս լինէր Աստուած՝ ոչ մի և ոչ պարզ, այլ բազադրեալ ,, :

Իսկ սուրբն Ներսէս Լամբրոնացի ընդդէմ Պիլեբերտի, որ զանազանութիւն՝ի մէջ Աստուծոյ և աստուածութեան դնէր, ասէ. “ Եթէ աստուածութիւն չիցէ Աստուած, ապա է ինչ իրապէս զանազանեալ յԱստուծոյ. և եթէ է, կամ գերագոյն իցէ քան զԱստուած, կամ խոնարհագոյն, և կամ հաւասար նմին : Եթէ գերագոյն, ինքն իսկ աստուածութիւնն լինէր Աստուած. եթէ խոնարհագոյն, ապա որ Աստուածն է՝ի վայր քան զԱստուած գտանէր, որ է անտեղի. իսկ եթէ հաւասար, և ոչ միոյն լինէր Աստուած, զի և ոչ միոյ ծայրագոյն, զոր՝ի բաց մերժէ հաստարակաց ըմբռնումն զԱստուծոյ ,, :

Ասպա ուրեմն և պալամեանցն և Պիլեբերտեայ և Յովհաննէս վարդապետութիւնք հակառակք են հաւատոյ և ուղիղ բանի :

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Հարց. ա. — ա. Իրական զանազանութիւն երից անձանց ոչ ինչ ստնանէ պարզութեանն Աստուծոյ, և ոչ բազադրութիւն ինչ՝ի ներքս մուծանէ. ապա և ոչ իրական զանազանութիւն Աստուծոյ՝ի ստորոգելեաց իւրոց, կամ ստորոգելեաց նորա՝ի միմեանց. ուստի որ ինչ և առարկութիւնք իցեն առ այս, զորեն և առ իրական զանազանութիւն անձանց՝ի միմեանց : — բ. Ալ ասն որոյ Նարեկ Յունաց Նարսէհ և Պրիգորեանք և Ներսիսեան՝ աղէքսանդրացի ընդդէմ անսմեանց հաստատեն զզանազանել Աստուծոյ՝ի զօրութեանց իւրոց այսինքն՝ի ստորոգելեաց, զի հելլէն բառն էնէրգէա նշանակէ և ստորոգելիս :

Պա. — ա. Ընտեղի է համեմատութիւնդ. քանզի զանազանութիւն ստորոգելեաց՝ի բնութիւնն Աստուծոյ հայի, վասն որոյ եթէ իցէ իրական՝ բազադրութիւն՝ի ներքս ածէ, և ընդդէմ ելանէ պարզականն բնութեան նորա. իսկ զանազանութիւնն առընչական հայի յանձինս՝ որք նոյն են ընդ միասն աստուածայինն բնութեան, և այլ և այլք յիրերաց. վասն որոյ ոչ մի ինչ

բաղաղութիւն կարէն ՚ի ներքս ածել, ոչ աստուածային բնութեան՝ ընդ որում նոյն են, և ոչ իրերաց· ապա և ոչ առարկութիւնք, որ զիրական զանազանութեենէ ստորոգելեացն Աստուծոյ առնին, կարէն զօրել ընդդէմ զանազանութեան անձանց։

— Ր. Ասէք Յունաց զէութիւնն Աստուծոյ ՚ի ներգործութեենէ և ՚ի ստորոգելեաց նորա արդարև զանազանէին, այլ իմանալի ևեթ զանազանութեամբ· որ յայտ իսկ ՚ի դիմաց բանիցն է, զի առ անտեսանս խօսին՝ որ ոչ ընդունէին մտաւոր ևս զանազանութիւն։ Օնոյն է ասել և զայլոց սմին նման բանից Ասեմ· զի եթէ զբացարձակ ստորոգելեաց իցէն բանք, մտաւոր ևեթ իմանան զանազանութիւն· իսկ ուր ուրեք իրական դնեն զանազանութիւն, զառընչական ստորոգելեաց են բանք։

Աստ. Ր. Եթէ յատկութիւնք գէթ անձնականք ոչ իրապէս իցեն զանազանեալ յաստուածային էութենէ, ոչ է մարթ հասու լինել՝ թէ արդեօք Հայր զէութիւն իւր հաղորդիցէ Որդւոյ և Հոգւոյ, առանց հաղորդելոյ նոցա և զՀայրութիւն։

Պե. Ասէ է մարթ հասու լինել առանց ընդունելոյ զսուղափառ վարդապետութիւն՝ որ ուսուցանէ զօրութեամբ զանազանեալ յաստուածային էութենէ զառընչական յատկութիւնս· քանզի այս ևեթ զանազանութիւն, որպէս տեսցուք ՚ի ստորև ՚ի Ճառն Երրորդութեան, շատ է առ ՚ի ցուցանել՝ թէ արդեօք աստուածայնոյ էութեան մարթ է հաղորդիլ ըստ տեսութեան իմիք, առանց հաղորդելոյ ըստ այլում տեսութեան։ Օ՞ի թէպէտ և Հայրութիւն ուղղակի և անմիջաբար ոչ հաղորդի այլոց անձանց, ապա թէ ոչ՝ չզանազանէր ՚ի նոցանէ, այլ հաղորդի անուղղակի և միջնորդաւ· այնու զի Հայր հաղորդէ նոցա զամենայն աստուածային էութիւն, յորմէ ոչ բաժանի Հայրութիւն իւր։

ԳՕԴՈՒԱԾ Զ

Զի ընդունելի է զանազանութիւն իմանալի ընդ էութիւնն Աստուծոյ և ընդ ստորոգելիս նորա ևս և առընչականս, և՛ ի ստորոգելիս նորա ընդ իրեարս :

Հակառակ է վարդապետութիւնս այս արիանոսացն Աէնոմեայ և Եւհետիոսի, որք զաստուածայինն ստորոգելիս առհասարակ համարէին նոյնանիշ ընդ էութեանն Աստուծոյ՝ առ՛ի բառնալ յԱրդւոյ զաստուածայինն էութիւն, այնու զի չէօրէ ևեթ ասի անծին ըստ էութեան, և ոչ զԱրդւոյ՝ որ ծնեալն է ըստ էութեան :

Պարտ է մեզ այնպէս զԱստուածոյ խորհել և խօսել, որպէս ինքն զինքեան տալ՝ ի տկարութիւն մեր խօսեցաւ ընդ մեզ զինքեանէ : Որդ Աստուած զինքեանէ և զստորոգելեացս իւրոց խօսեցաւ իբրև զբազմաց, և զինքն բազմաբինակ մեզ ընծայեցոյց. ապա պարտ է և մեզ զայնցանէ իբրև զբազմաց խորհել և խօսել : Եւ քանզի ըստ իրին չկարեմք, ապա զօրութեամբ ևեթ պարտ է մեզ իմանալ և խօսել այսպէս զԱստուածոյ : Պաւղէն Աստուած՝ ի գիրս սուրբս մերթ իբրև հզօր զանձն մեզ ընծայեցուցանէ, մերթ իբրև իմաստուն, և զի իբրև արդար, և զի իբրև ողորմած, և այլն. և Քրիստոս իբրև ոչ զմիոյ խօսելով՝ ասէ. (Յհ. ԺԷ. 15.) “Օ՜ա՜մենայն ինչ՝ զոր ունի Հայր, իմ է,,. զորմէ և առաւուածաբանն Գրիգոր ասէ. (Ճառ խէ.) “Օ՜ամենայն ինչ՝ զոր ունի Հայր, Արդւոյ է, բայց յայնմանէ զի է անծին,,: Ըստ այսմ օրինակի և այլք՝ ի Հարց ուսուցանեն զայս զանազանութիւն իմանալի յԱստուած ընդդէմ Աէտիոսի և Աէնոմեայ, մանաւանդ Գրիգոր Նիւսացի, Խարսեդ, Կիւրեղ աղէքսանդրացի. և Լեւոնիոս սահմանէ զայս իբրև կանոն. “Ել է պարտ այլազգ խօսել զԱստուածոյ քան զոր ինքն զանձնէ խօսեցաւ,,:

Եւ զանազանութիւնս այս յառաջ գայ, թէ՛ ի բեղնաւորութենէ մտաց, և թէ՛ ի բեղնաւորութենէ խորհեցելոյն, այսինքն Աստուածոյ, որ թէպէտ և մի է և

ամենապարզ՝ այլ հանգոյր բազմաց, և՛ի բազմապատիկ նորին զօրութենէ՝ որ առ բազում և բազմադիմս հասանէ. որով նախ՝ ՚ի միտս մեր յոգունք և զանազանք ծնանին ծանօթութիւնք, կամ միտք մեր զիւրաքանչիւր՚ի նոցանէ զանազանեալս ըմբռնէ: Երկրորդ՝ զի միտք մեր գոգցես այլ և այլ աստիճանս կատարելութեան ՚ի նոսա իմանայ, այսինքն զանազանութիւն իմանալի ընդ էութիւնն Ա՛ստուծոյ և ընդ առընչական ստորոգելիս նորա ըմբռնէ, և զանազանութիւն եղանակական ընդ էութիւն նորա և ընդ բացարձակ ստորոգելիս, և՛ի միջ նոցին իսկ ստորոգելեաց. այնպէս զի մեծագոյն խտիր ըմբռնէ ընդ էութիւնն Ա՛ստուծոյ և ընդ հայրութիւն, քան ընդ էութիւն նորա և ընդ բարութիւն, թէպէտ և ըստ իրին չիք այս զանազանութիւն: Ե՛րրորդ՝ զի հարկ է ընդունել զայս իմանալի զանազանութիւն, եթէ առ՚ի բացատրել զխորհուրդ երրորդութեան և զմարդեղութեան, և եթէ առ՚ի բայ կալ՚ի շփոթութենէ՝ յոր մարթ է անկանել՚ի ձառելն զԱ՛ստուծոյ. զի փոխանակ ասելոյ՝ թէ Ա՛ստուած ամենակալ զօրութեամբ իւրով ստեղծ զաշխարհ, կարելի ասել այլ ընդ այլոյ՝ թէ Ա՛ստուած անսահմանութեամբ իւրով ստեղծ զայն, կամ փոխանակ հայրութեան նորա ասել զբարութիւն, որ անտեղի է:

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ա՛ռարկ. Ա. Այս է զանազանութիւն, որ չէ համեմատ իրին զանազանելոյ. արդ այսպիսի է զանազանութիւն ստորոգելեացն Ա՛ստուծոյ, որ՚ի միտս ևեթ ունի գոյութիւն և չէ ըստ իրին ձշմարտութեան:

Պաս. Որ՚ի մարմնի զբաւ ևեթ նկատէ և կամ զմի յայլոց բնական յատկութեանց, ոչ ինչ զայլոց յատկութեանցն ժխտէ կամ հաստատէ, այլ թողու զայնս յիւրեանց իսկութեանն: Ըստ սմին օրինակի և որ Ա՛ստուած զէութիւն ևեթ նորին նկատէ կամ զոր և է՚ի ստորոգելեաց նորա ուրոյն, ոչ ինչ ժխտէ կամ հաստատէ զբոլոր էութենէ նորա. վասն որոյ և ոչ իրիք ստէ:

Աստուած. Ր. Այլ և այլ բառք՝ որովք զաստուածային այլ և այլ յատկութիւնս բացատրեմք, ոչ այլ ինչ նշանակեն ըստ վարդապետութեան Հարց և մանաւանդ Բարսղի և Աթանասի՝ բայց զաստուածային էութիւնն. (Բրս. Ըղբ. ճ: Աբ. յղ. սահման. Եպիփ. ծողովոյն. սխմ. ձ. գլ. ը): Ոմն ասէ որոյ հռետմեան ժողովն սահմանեաց ընդդէմ Պիլբերտի. "Յաստուածաբանութեան ընդ էութիւն և ընդ անձն ոչ ինչ զանազանեն միտք,,:

Պէս. Բարւոք ուսուցանեն Հարք՝ աստուածային յատկութեամբք իմանալ զնոյն ինքն զէութիւնն Աստուծոյ ըստ իրին, զի ամենևին պարզական բնութիւն է Աստուած. այլ ոչ երբեք ուսուցին նոքա զի և՝ ի միտս մեր զնոյն այլ և այլ բառք նշանակիցեն, իբր թէ ամենակարողութիւնն Աստուծոյ զնոյն՝ ի միտս մեր նշանակիցէ որ ինչ մարդասիրութիւն նորա և ողորմութիւն, կամ թէ զնոյն ինչ իմանայցեմք արդարութեամբն Աստուծոյ և ողորմութեամբ: Վաղայայտ է այս և՝ ի դիմաց բանիցդ նոցա, զի ընդդէմ արիանոսաց Հաւատն՝ ի ցոյց աստուածութեան Որդւոյն: Իսկ սահման հռետմեան ժողովոյն ընդդէմ իրական զանազանութեան է, զի Պիլբերտ աստուածաբանական զանազանութեամբ զիրականն իմանայր, ուր մեք զմտաւորն իմանամք՝ այսինքն որ՝ ի միտս ևեթ մեր է:

ԳԼՈՒԽ Ե

ՅԱՂԱԴՈՍ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Զերկոցունց այսոցիկ յատկութեանց միանգամայն Հաւատք, վասն դժուարութեանն միաբանելոյ ընդ իրեարս զազատութիւն ընդ անփոփոխութեան, և զանփոփոխութիւն ընդ ազատութեան: Արժանի ևս՝ ի պաշտպանել զանփոփոխութիւնն Աստուծոյ՝ եթարձ՝ ի նմանէ զազատութիւն, ըստ վկայելոյ Տերտուղիանոսի. իսկ ատոյիկեանք ընդ Հակառակն, ըստ վկայութեան Ղորգինեայ, փոփոխականութիւն ածին զԱստուածով: Ընդ մեջ երկաքանչիւրոցն սոկինեանք անյեղական զԱստուած ըստ էութեանն համարեալ, յեղական զնա՝ ի

վձիռս իւր ուսուցին կամ՝ ինքերգործութիւնս կամացն, առ ապահովելոյ զազատութիւն նորա։ Ուղղափառ հաւատք ազատ ամենևին և անփոփոխելի զԱստուած դաւանեն։

Զի՝ ի լուծանել զդժուարութիւն միաբանելոյ զերկոսին զայսոսիկ ստորոգելիս, պիտելի է նախ՝ զի ազատութեամբ իմանամք աստ զկարողութիւն ընտրելոյ առանց ինչ նեղչին կամ արտաքին հարկի կամ բռնադատութեան. և ս և զազատութիւն հակասութեան, որպէս զի կարել Աստուծոյ առնել կամ ոչ առնել, կամել կամ ոչ կամել. և ս և զազատութիւն ընտրութեան՝ ի մէջ այլ և այլ իրաց. այլ ոչ զազատութիւն ընդ բարի և ընդ չար, որում չիք տեղի յԱստուած։ Այլ զկրօրդ՝ զի ազատութիւնս այս յԱստուած ոչ որպէս յարարածս անկատարութիւն ինչ բերէ յինքեան, որպէս տարակոյս կամ կշռադատութիւն։ Այլ զկրօրդ՝ զի ազատութիւնն Աստուծոյ կանխէ՝ ի միտս մեր քան զանփոփոխութիւն նորա, որ ըստ մերում եղանակի խորհելոյ՝ զհետ գայ ազատութեան նորա։ Զօրրորդ՝ զի անփոփոխութեամբ ոչ այլ ինչ իմանամք, բայց՝ ի բաց տանել՝ ի նմանէ զամենայն հանգամանաց՝ ի հանգամանս անցումն, ըստ ինքեան, կամ ըստ ժամանակի, կամ ըստ որոց և իցէ արտաքին իրաց. վասն որոյ ամենևին ամենայն իրօք իմանամք զԱստուած անփոփոխելի։

Այդ ասեմք զի ըստ այսմ օրինակի ազատ է Աստուած և անփոփոխ. վասն որոյ ժողովն Նիկիական վերձ ռեաց. "Ոմք որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր... և Թէ փոփոխելի են կամ այլայլելի, զայնպիսիսն նզովէ կաթողիկէ և առաքելական եկեղեցի,,։ Եւ Աստուած՝ ի ձեռն մարգարէին ասէ. (Մաղաք. գ. 6.) "Ես եմ տէր Աստուած ձեր, և ոչ փոխիմ,,։ Եւ միւս մարգարէն ասէ. (սղմ. ճ՘ա.) "Ի սկզբանէ, տէր, զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են. նոքա անցանեն, և դու կաս և ամեաս յաւիտեան,,։ Եւ առաքեալն ասէ զԱստուծոյ. (Եբ. ա. 17.) "Յորում չիք փոփոխումն և կամ շրջելոյ ստուեր,,։

Օնոյն երկրորդեն և Հայրք. Ասասւորիչ (Յաճախ գ.) "Ընդեղծ է և անապական, ոչ ինքն փոփոխի, այլ զայլան փոփոխէ՝ ի լաւն,,։ Շնորհալի. (Յետաոդրէ) "Ես

այլայլեալ՝ի բնութենէ, ոչ փոփոխեալ՝ի տեղւոջէ. զի այլայլին՝ որք եղանին, և փոփոխին՝ որք փոխադրին ,, : Եւ՝ի շարականս Հոգեգալստեան. “Ինքն յինքեան՝ նոյն միշտ ընդ որս դասեցաւ՝ անեղեւոյթ, անժամանակ, անայլայլելի, անփոփոխելի ,, :

Եւ բանիւ իսկ քաջայայտ է, զի պարզական բնութեան չէ մարթ փոփոխել. քանզի փոխի՝ որ ըստ մասին ինչ մնայ նոյն և ըստ մասին ոչ. արդ այս պատահումն յամենապարզ բնութեան անտեղի է: Եւ այս անփոփոխութիւն ըստ ամենայն տեսութեան է Աստուած. զի անփոփոխ է ըստ գոյացութեան, վասն զի է անմահ. ըստ գոյութեան, վասն զի հարկաւ գոյ. ըստ ժամանակի, վասն զի է յաւիտենական. ըստ տեղւոյ, վասն զի է անչափ. ըստ քանակութեան, վասն զի է անմարմին. ըստ կատարելութեան, վասն զի չկարէ նոր ինչ ընդունել, և ոչ զոր ունին կորուսանել. և ըստ գործողութեան, զի որ ինչ ձանձչէ և կամի՝ի յաւիտենից ձանձչէ և կամի:

Յայտայայտ է և ազատութիւն Աստուծոյ՝ի սուրբ գրոց, և՝ի հասարակաց մտաց: “Ո՛ ամենայն զոր ինչ կամեցաւ, և արար ,, . (աղմ. ճԺ. 6. և ճԺԲ. 4.) “Որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց կամաց իւրոց ,, . (Եփես. ա. 11):

Եւ Նաւքը առհասարակ հաստատեն զայս ընդդէմ իմաստասիրաց՝ որ բաջաղէին՝ի հարկէ իմեքէ գործել Աստուծոյ, որպէս զի զաշխարհի յաւիտենականութիւն անտի զհետ բերիցեն: Եւ որս Պռոխէ. (Աստուածբ. ա.) “Ի վեց աւուրս, և ոչ միահաղոյն արար զաշխարհ Ձարտարապետն հզօր, որում դիւրահնար է ամենայն, առ՝ի յայտ առնել՝ զի ոչ գործէ ինչ՝ի հարկէ կամ յանխուսն վարեալ, որպէս իմաստասէրքն ոմանք բանգագուշեցին: Այրեգակն համանգամայն ծագէ զլոյս իւր, և ոչ նուազ ինչ՝ի ձառագայթից իւրոց ամիսիւեալ. այլ Աստուած, որ իմաստութեամբ և ինքնիշխան ազատութեամբ գործէ զամենայն, վարէ զզօրութիւն իւր ուր և կամի և որքան ախորժէ: Եւ որպէս ստեղծանելովն բանիւ լոկով զաշխարհ՝ յայտ առնէ զի և ոչ մի ինչ աշխատութիւն ստեղծանելն է նմա, նոյնպէս և տակաւ արարչագործելովն ցուցանէ զի ինքն է տէր նիւթոյ, և

առնելոյն կամ չառնելոյ, և բնաւ իսկ առաջարկութեան գործոյն, և զի յամենայնի կամք իւր միայն անստերիւր կանոն է նմա ,,։

Այս բանն ինքնին այսմ յայտնապէս վկայէ. զի ամենակատարն Աստուած առանց ինքնիշխան ազատութեան, որ իմացական բնութեան դերագոյն կատարելութիւնն է, գտանէր թերակատար։

Այլ զինքդ կարեն կալ՝ ի միասին ազատութիւն և անփոփոխութիւն. զի որ անփոփոխելին է, չկարէ փոխել զկամն իւր. և մանաւանդ Աստուած՝ որոյ կամք էութիւն իւր է, և չկարիցէ ապա կամել ինչ կամ չկամել, և չիցէ ազատ իսկապէս յընտրութիւն։

Ո՛ւ այս ասեմք նախ՝ եթէ արդարև անհնարին իսկ էր մեզ միաբանել յԱստուած զազատութիւն և զանփոփոխութիւն, սակայն ոչ այսու օրէն էր յերկբայս արկանել զերկոսին զայսոսիկ ստորոգելիս նորա։ Օ՛ի ուր երկու ճշմարտութիւնք հաւասարիք իցեն, չէ օրէն ժխտել զայնս վասն դժուարութեանն եւեթ միաբանելոյ ընդ իրեարս։

Այլաբէն անձուկ միտք մարդկեղէն չկարեն ըմբռնել թէ ինպէս Աստուած հանդերձ անփոփոխութեամբն ազատ իցէ՝ ի կամել, քանզի զազատութիւնն Աստուծոյ դատիմք ըստ մերում՝ որ չմարթի առանց փոփոխութեան։ Այսուհանդերձ ըստ մերում ըմբռնելոյ խօսին զգործոյ Աստուծոյ, ստրջանս իմն և կամաց փոփոխմանն եւնոր ծանօթութիւնս ընծայելով նմա. որպէս յասելն (Ծն. իբ. 12.) “Այժմ գիտացի թէ երկիւղած ես դու Աստուծոյ ,,։ Այս թէ (ղ. 6.) “Այրջացաւ Աստուած զի արար զմարդն ,,։ Այս խնայել նորա՝ ի նինուէացիսն, և սոցին սակի բանք։ Այլ ինքն՝ ի յաւիտենից զայն ամենայն այնպէս սահմանեալ էր, որպէս և արարն։

Երեմք երկրորդ՝ զի եթէ կարէաք ըմբռնել թէ ինպէս չիք Աստուած յաջորդութիւն ժամանակի, անցեալ և ապառնի, քաջ մարթ էր մեզ միաբանել՝ ի նմա զազատութիւն և անփոփոխութիւն։ Աստուած՝ ի յաւիտենից կամեցաւ որ ինչ արարն՝ ի ժամանակի և առնէ և առնելոց է. այս նորա կամք կատարի առանց վերստին խորհելոյ և սահմանելոյ ինչ՝ ի յաւիտենից գիտացն զա-

մենայն անվրէպ, և յաւիտեանս այս բովանդակիւ զամենայն տէրութիւն էից. չիք նման անցեալ և ապառնի, առիթ փոփոխութեան ազատ կամաց նորա։ Որով և ետուն ներգործութեամբ կամի և առնէ ազատօրէն որ ինչ արտաքոյ իւր է, միշտ զնոյն կամի և առնէ. ոչ վասն ներկայիս զանցեալն, և ոչ վասն ապագայիս զներկայն փոփոխէ։ Ան ամենակատար՝ ի մի կէտ վայրկենի զիտէ զամենայն, տեսանէ զամենայն, ըմբռնէ զամենայն, կարէ զամենայն, վասն որոյ և ազատօրէն գործէ զամենայն։ Ի յաւիտենից սահմանեալ էր Արարածոյ ստեղծագործել զաշխարհ, որ ապա ըստ ժամանակին եկն՝ ի գոյութիւն. արդ փոփոխումն ոչ յարարչագործն է, այլ յարարածն։ Նոյնպէս՝ ի յաւիտենից սահմանեալ էր զվերկագործութիւն, որ՝ ի ժամանակի եկն՝ ի կատարումն. սահմանեալքն փոփոխեցան, անփոփոխ մնալով սահմանողին։ Արդոյ հարկ լինի զազատ կամն իւր փոփոխել, զի ժամանակն և նոր ծանօթութիւնք, խելամտութիւն, դէպք յեղակարծք, արգելք և կիրք տեղի տան փոփոխելոյ. այլ Արարածոյ չիք ինչ նոր, չիք ինչ յեղակարծ, չիք ինչ խափան, զի կարողութեան նորա ոչ գոյ բաւ։ Եւ զարձեալ զի յեղափոխութիւնք մարդկային կամաց՝ թերութիւնք են ազատութեան, որոց չիք տեղի Արարածս։ Վասն որոյ և Աղնիկ վարդապետն մեր ասէ. "Ով յետոյ ծնանի՝ ի նմա կամէն. այլ իբրև կանխագէտ գիտէ՝ մինչ չև ինչ լեալ իցէ՝ թէ ուրպէս պարտ իցէ առնել և յոր ժամանակի և յոր պէտս ,,։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Հարկ. Ա. Արարած մինչ չև ինչ ստեղծեալ՝ ոչ էր ստեղծող, մինչ չև մարդացեալ՝ ոչ էր փրկիչ, եղև ինչ ապա՝ ի նմա փոփոխութիւն։

Պե. Եղև արդարև փոփոխութիւն՝ ի նմա, այլ առ արտաքս, այսինքն՝ ի կողմանէ արարածոյ՝ որ՝ ի չգոյէ գան՝ ի գոյ, յաւիտենական կամացն Արարածոյ ներգործելով՝ ի սահմանեալ ժամանակի։ Վասնզի Արարած տէր է և ստեղծող՝ ի բնութենէ իւրմէ, և կարօղ յորժամ կամի ստեղծանել զարարածս. բայց՝ ի ստեղծա-

նելն ևէթ կոչի ՚ի նոցանէ տէր և ստեղծող։ Օ՚նոյն իմա և զԱնանին Աստուծոյ մարդեղութենէ. զի ըստ սահմանելոյն ՚ի յաւիտենից Անանն Աստուած էառ ՚ի ժամանակի զմարդկային բնութիւն, իբրացոյց զայն, և իբրև անձն նորին՝ ներգործեաց նովաւ զփրկագործութիւն մարդկան, ըստ նմին օրինակի՝ որով Աստուած յերիս անձինս ենթակայացեալ զարարչական գործութիւն իւր ներգործեաց երևեցոյց, ոչ ինչ ՚ի ներքս յինքեան կրեալ փոփոխութիւն։

Աստի. Բ. Խորհել և կամել Աստուծոյ ՚ի ներքս յինքեան՝ են որպէս կենսական ներգործութիւնք իմացական և կամեցող բնութեան. արդ ներգործութիւնքս այսոքիկ կենսականք առ արտաքին իրս ազատք են Աստուած և հնարաւորք, քանզի կարէ արտադրել զայնս և ոչ արտադրել, այսու կամ այնու եղանակաւ արտադրել. ապա և ՚ի ներքս յինքեան յեղական է Աստուած։

Պէ. Ընդունիմք զի ներգործութիւնք կենսականք իմացական և կամեցող բնութեան՝ ներքինք են նմա, և Աստուած նոյնք ընդ աստուածեղէն բնութեան՝ յորմէ զօրութեամբ ևէթ զանազանին, վասն որոյ և են նոյն ընդ ինքն Աստուած՝ որ խորհի և կամի, անբաժանելիք ՚ի նմանէ։ Այլ ըստ այնմ՝ զի առ արտաքին ինչ բերին՝ արտաքինք են, և կարեն ունել կամ չունել զարտաքինն զայն ինչ, և կամ այնպիսի կամ այլազգ ունել զայն. զի կարէր Աստուած չկամել զայնս որպէս լինելի կամ լեալ։ Այլ ՚ի կամելն միանգամ որպէս լինելի, որպէս իմացաւն և կամեցաւ ՚ի յաւիտենից՝ նոյնպէս իմանայ և կամի անփոփոխելի. և քանզի ազատ ընտրութիւնն այն, ըստ մերումն տկար ըմբռնման, կանխէ քան զանփոփոխութիւնն՝ որ՚ի վերայ հասանէ ընտրութեանն, զՀետ գայ՝ զի Աստուած ՚ի յաւիտենից իցէ ներգործութիւն իմանալոյ և կամելոյ զայն անյեղապէս և ազատօրէն։

Իսկ զի Աստուած ազատօրէն կամի զարարածս նովինն ներգործութեամբ, որով հարկաւորապէս կամի զինքն, յայտ է ՚ի բնութենէ իրացն՝ յորս կամք նորա բերի։ Օ՚ի եթէ իրն այն է ՚ի ներքս յԱստուած և հարկաւոր, աստուածային կամքն հարկաւորապէս բերի յայն. որպիսի է ինքն Աստուած և բարութիւն իւր, քանզի

Աստուած ինքն իւր է նպատակ՝ յոր հարկաւորապէս բերի, վասն որոյ և հարկաւորապէս կամի զինքն և զբարութիւն իւր: Ապա եթէ իրն արտաքոյ է Աստուծոյ, որպիսի են արարածք՝ որ զփառս Աստուծոյ երևեցուցանեն առ արտաքս, զնոսա Աստուած ոչ վասն իւր կամի՝ այլ առ ի յայտնել զբարութիւն իւր և զփառս, որ չէ նման հարկաւոր՝ քայց միայն պայմանաւ: Այսն որոյ և Աստուած ոչ հարկաւորապէս բերի յայնս, և ոչ հարկաւ կամի զայնս, այլ ազատօրէն և համարեալ թէ կամիցի առնուլ յարարածոց զայն փառս՝ որչափ և որպէս հաճոյ իցէ նմա: Եւ յառնուլ յարարածոց զայս արտաքին փառս, որում ոչն կարօտի, արտաքերէ զբարութիւն իւր՝ հաղորդելով արարածոց զբարիս իւր:

Լոկ. Գ. Աստուած զանազանաբար բերի յարարածս, մերթ իբրև յապառնի, մերթ ի ներկայ, և մերթ յանցեալ. և դարձեալ մերթ սիրէ զմարդ ցորչափ յարդարութեան կայ, և մերթ ատեայ զնա ի մեզանչելն. ապա փոխիսկի և ի ներքուստ:

Պե. Աստուած անփոփոխ է ի ներքուստ, և միշտ նովին օրինակաւ բերի յարարածս միով ներգործութեամբ՝ որ բովանդակէ զամենայն ժամանակս և զամենայն պայման և զհանգամանս նոցա: Ոչ նման նոր ինչ ընդ առաջ ելանէ, որ զձանաչութիւն նորա կամ զկամն տացէ փոխել. վասն որոյ ամենայն փոփոխութիւն ի կողմանէ արարածոցն է, որք է զի ապառնի են, է զի ներկայ, և է զի անցեալ, մերթ արդար՝ որով և սիրոյ արժանի, և մերթ մեզաւոր՝ որով և ատելութեան գտանին արժանի: Որպէս լոյս արեգական միշտ նոյն է՝ ակնապարար աչաց առատաց, իսկ աչացաւացն խայթիչ և վնասակար:

ԳԼՈՒԽ Զ

ՑԱՂԱԳՑ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ, ԱՆԶԱՓՈՒԹԵԱՆՆ ԵՒ ՑԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Երեքին այսոքիկ աստուածային ստորոգելիք զմիմեանց ունին, և անդստին յինքնագոյ էութենէ նորա յառաջ գան: Անսահման է՝ որոյ չիք եզր և սահման

կատարելութեանց. անչափ կամ անվայրապիակ՝ որ ա-
մենայն ուրեք է, և չիք վայր թափուր ՚ի նմանէ. և
յաւիտենական՝ որոյ չիք սկիզբն և վախճան, որ զամե-
նայն ժամանակս բովանդակէ յինքեան, զանցեալն զներ-
կայն և զապառնին:

Ա՛րդ Ա՛ստուած է ամենակատար, զպարառութիւն
ամենայն կատարելութեանց յինքն բովանդակեալ. զի
որպէս սուրբ Ա՛գուինացին խնաստասիրէ, այնմ՝ որոյ
հոգի է նոյն իսկ գոլն՝ չմարթի պակասել ինչ ՚ի
կատարելութեանց գոլոյ. զի կատարելութիւնք ամե-
նայն իրաց յանկին ՚ի կատարելութիւն գոլոյ: Ա՛րդ որ
էն ինքնագոյ՝ է քուն իսկ գոլ, ապա է ամենակատար և
պարառութիւն ամենայն կատարելութեանց. զի եթէ
չէր ամենակատար, ապա սահման ինչ գոյր եղեալ նմա,
և չումմէ:

Ա՛յն ինքն՝ և յառաջին պատճառէ զնոյն խնաստա-
սիրէ. զի ամենայն կատարելութիւն արարածոյ հարկ
է զի ՚ի պատճառն արարչական իցէ գերազանցապէս.
ապա արարիչն ամենայնի զամենայն կատարելութիւնս
արարածոց գերազանցապէս բերէ յինքեան:

Ա՛ն ծանօթութիւնն իսկ Ա՛ստուծոյ, քան զոր կա-
տարելագոյն ինչ ոչ է մարթ խորհել, պահանջէ ՚ի նմա
զամենայն կատարելութիւն:

Ա՛նչափ է Ա՛ստուած և յամենայն ինչ և ամենայն
ուրեք էութեամբն իւրով ներկայ: Ո՛չ անչափութիւնն
Ա՛ստուծոյ այսպէս սահմանէ սուրբ Ա՛գուինացին. "Ա՛ս-
տուած յամենայնի է կարողութեամբ, զի ամենայն ինչ
հնազանդի զօրութեան նորա. է յամենայնի ներկայու-
թեամբ, զի ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի
աչաց նորա. է յամենայնի և էութեամբ, զի ամենայն
ինչ նովաւ կայ, և ինքն է պատճառ գոլոյ ամենայնի.":
Ա՛րդ երկոքին առաջին մասունքն ամենեցուն են ընդու-
նելի. զերրորդն և եթէ ՚ի հնոց գնոստիկեանք և մանի-
քեցիք, և յարդեաց սոկինեանք և մարդակերպեայք
ժխտեն: Իսկ ուղղափառ հաւատք յայսմ իսկ զանչա-
փութիւնն Ա՛ստուծոյ կացուցանեն: Ո՛ւ եթէ Ա՛ստուած
ամենայն ուրեք և յամենայն ինչ ազդէ զօրութեամբ
իւրով և ներգործութեամբ, ապա է ՚ի նոսա և էու-
թեամբ. զի ՚ի նմա զօրութիւն և ներգործութիւն ոչ
այլ ինչ են յէութենէ իւրմէ:

Օ սոյն և սուրբ գիրք Հաստատեն. "Մինչեւ զերկիր կինն և զերկիր ես ոչ ընուցում, ասէ տէր ,, . (Երեմ. իգ. 24.) "Յերեսաց քոց ես յո՞ Թագեայց. եթէ եւ լանեմ յերկինս, դու անդ ես. և թէ իջանեմ 'ի գժոխս, և անդ մօտ ես ,, . (սղմ. ճլը. 7): Յայտնագոյն ևս զամենաւայր էութիւն Աստուծոյ բացատրէ առաքեալն (գործ. իէ. 28.) ուր ասէ. "Նա և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ. զի նովաւ կեաք, շարժիմք և եմք ,,:

Անչափութիւնն Աստուծոյ անվայրափակ է, զամենայն տեղիս ոչ միայն ընու, այլ և յինքեան բովանդակէ. վասն որոյ ուղիղ ևս է ասել թէ աշխարհս է Աստուած, քան թէ Աստուած յաշխարհի. զի ոչ պարփակի նա 'ի սմա, այլ սա 'ի նմա. և բիւր այլ ևս աշխարհք եթէ ստեղծանէին, ոչ Աստուած յաւելոյր գոլ 'ի նոսին, այլ աշխարհքն այնոքիկ սկսանէին գոլ յԱստուած. նոքա փոփոխէին, այլ Աստուած կայր և մնայր նոյն: Օ յի որպէս չէ Աստուած 'ի ժամանակի, այլ ժամանակն յԱստուած, նոյնպէս չէ նա 'ի տեղւոջ, այլ տեղին 'ի նմա. վասն որոյ և ժամանակն և տեղի ընդ արարածս լեալ և վասն նոցա միայն են:

Յաւիտենականութիւնն Աստուծոյ սահմանի ըստ Նեղեսիոսի. Անեղական կենաց բոլոր միանգամայն և կատարեալ վայելումն: Ոչ նորա սկիզբն և ոչ կատարած. էր միշտ և է և եղիցի. և որպէս սուրբն Գրոտինոս ասէ. "Յաւիտենականութիւն էութիւն իսկ է նորա ,, : Յաւիտենականութիւն Աստուծոյ միայնոյ է, այնմ՝ որոյ գոյութիւն հարկաւոր է որպէս էութիւն նորա, և որոյ գոյութիւն միշտ է ամբողջ և միշտ նոյն. որ էն պարզապէս, անյեղլի և անյաջորդ. որոյ չիք անցեալ ներկայ և ապառնի, այսինքն այլ և այլ մասունք ժամանակի՝ որ բաժանելի է անսպառ, զի Աստուծոյ յաւիտենականութիւնն սպառասպառ է անբաժանելի. համեմատել զյաւիտենականութիւն նորա ընդ տեւողութեան էից և միջանջենաւորաց անվախճանից, եղծանել է զնա: Յաւիտենականութիւն ոչ այլ ինչ է բայց Աստուած, ապա և էապէս անյեղլի և անշարժ. ժամանակ և տեւողութիւն 'ի մասանց և 'ի յաջորդութենէ բաղադրին, վասն որոյ և էապէս են յեղականք. փո-

փոխին հարկաւ որպէս էքս՝ որ յաջորդեն իրերաց, և յաջորդելովին կացուցանեն անցեալ ներկայ և ապառնի: Տևողութիւն արարածոյ ոչ է միահաղոյն, մասունք նորա յաջորդեն իրերաց, և չկարեն երբեք գալ՝ի մի կէտ, մին զմիւսն արտաքսէ, հարկ է անցանել միումն զի միւսն սկսանիցի. ապառնին յաջորդէ ներկային, և ներկայն անցելումն. շարժումն միանջենաւոր, որ ըստ գեղեցիկ բացատրութեան Յոհաննու Դուսոյի՝ է "պատկեր շարժուն անշարժականին յաւիտենականութեան,,:

Այսպէս ապա չկայ ինչ Աստուած, զոր մարթ իցէ համեմատել յաջորդութեանն և տևողութեանն: Ոտևէ ինչ՝ինամա, զի և չանցանէ ինչ. ամենայն ինչ հաստատուն է՝ինամա, ամենայն ինչ միահաղոյն, ամենայն ինչ անշարժ. ոչ՝ի նմա եղև ինչ, և ոչ ինչ լիցի, այլ ամենայն ինչ՝ինամա է: Զողջոյնք ապա անդր՝ի բաց որ ինչ խնդիրս և առարկել փորձիցի ունակութիւն կամ տկարութիւն սահմանաւոր մտաց, որ զանսահմանն ըստ իւրում անձուկ և ամփոփ մտածութեան բովանդակել կամի: Այսցից, Աստուած իմ, զի մինչև ստեղծեալ զիս՝ հիր՝ի յաւիտենից, և յետ լինելութեան իմոյ կայ և մնայ քեզ միւս այլ յաւիտեան՝ յորում իցես միշտ: Այլ հիր և իցես զբժպատեհք են այնմ՝ որ էն: Զառնուս դու յանձն անցեալ ինչ և ապառնի. խօլամտութիւն է բաժանել զյաւիտենականութիւն քո, որ է կայուն անբաժանելի. կամել իմն է զի զարափունք հոսեսցին, զի յինքնել իմում ընդ գետ՝ հեռանամ՝ի նոցունց անդադար՝ի զադարելոյն անշարժ: Ո՛վ անմոռութեանս իմում. անյեղականիդ ճշմարտութեան կամիմ զոլ սահմանաւոր փոխոխելի և յաջորդական քումդ արարածոյ: Ունք՝ի քեզ չափ, որով չափել մարթ իցէ զքո էութիւն. զի քո էութիւնդ անչափ է և անմատն, և չկայ ինչ՝ի քեզ չափելի: Այս չափք իսկ, զորս բերեն համապոքս սահմանաւորք՝ յեղականք՝ բաժանելիք և յաջորդականք, ոչ բաւեն չափել զքեզ, որ եսդ անսահման անբաժանելի անշարժ և յարաճեայ: Ո՞ իմոր ապա մարթ իցէ ինձ համեմատել զտևողութիւն արարածոյ ընդ քումդ յաւիտենականութեան: Ունիր դու յառաջ քան զիս, և չիցես յետ իմ. այս բառք նկրտին՝ի նշանակել ճշմարտութիւն ինչ, այլ ճշգրտիւ դժպատեհք են և

անյատուկք։ Ա՛շմարտութիւն ՚ի նոսա այն է, զի որպէս անսահմանն անցանէ զանցանէ անսահմանաբար քան զսահմանաւորն, այսպէս անսահման քոյին գոյութիւն անցանէ զանցանէ անսահմանաբար ըստ ամենայն նշանակութեան քան զիմն գոյութիւն, որ զի է սահմանաւոր՝ ունի սկիզբն, ներկայ և ապառնի ,,։ (Ֆեներլոն. Ա՛պացոյց գոյութեանն Ա՛ստուծոյ)։

Ա՛յս ծանօթութիւն յաւիտենականութեանն Ա՛ստուծոյ չէ և չէ նրբաբանութիւն ինչ դպրոցական, այլ էութեան իրին աղօտ և փանաքիմայ տեսութիւն. և թէպէտ սուրբ գիրք ըստ մարդկեղէն տկարութեան մտաց յերիւրեն զբանն՝ առնել զայնս իմանալի, սակայն և ոչ դուն ուրեք զյաւիտենականութեան նորա էութիւն գերիմաստ բանիւք յանդիման առնեն. որպէս այն՝ ուր ասեն. "Ա՛ս եմ Ա՛ստուած որ էն ,,։ (Ելից. ՟գ. 14)։ Ա՛ւ դարձեալ. "Ա՛սկ դու կաս և մնաս յաւիտեան ... դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ անցանեն ,,։ (սղմ. ՃՂ. 28)։ Ա՛ւ դարձեալ. "Ո՛ւ մի օր տեառն իբրև ՟ՀՀազար ամ է, և հազար ամ իբրև մի օր ,,։ (Բ. Պետր. ՟գ. 8)։

Ա՛յս այսմ՝ յաւիտենականութիւնն Ա՛ստուծոյ թէպէտ և չունիցի իրական յաջորդութիւն մասանց, այլ պարտ է մեզ իմանալ զայն զօրութեամբ. քանզի չէ մարթ այլազգ զեղականքս համարել իրապէս ներկայս Ա՛ստուծոյ ՚ի յաւիտենից, բայց ՚ի միտս ածել Ա՛ստուծոյ՝ համագոյս մասին այնը իմանալի յաջորդութեան, որում յառաջընթաց է անսկիզբն յաւիտենականութիւն, և հետևորդ յաւիտենականութիւն անեզրական։

Ա՛ւելորդ իսկ է ածել վկայութիւնս ՚ի սուրբ գրոց ՚ի հաստատութիւն յաւիտենականութեանն Ա՛ստուծոյ. այլ ՚ի վերայ բանին՝ զոր առաքեալն ասէ. (Ա. Տիմ. ՟գ. 16.) "Ո՛ր միայն ունի զանմահութիւն ,,. ասէ սուրբն Ոսկեբերան. "Ո՛ւ ընչ է զոր առաքեալն ասէ՝ Ո՛ր միայն ունի զանմահութիւն, բայց զի նա միայն ունի զանփոփոխութիւն՝ որ ունին զյաւիտենականութիւն ,,։ Ո՛ւ անմահութիւն Ա՛ստուծոյ է միշտ գոլն, որոյ ոչ սկիզբն է և ոչ կատարած. ինքնագոյ, որով և անեղ. վասն որոյ երգիչն մեր կոչէդ՝ "Ո՛ր միայն ունիս զանմահութիւն և զանեղութիւն ,,։ Ա՛ւ այսուհիկ առաքեալն ոչ միայն ՚ի

մահկանացու մարդկանէ որոշէ զԱստուած, այլ և՛ ի հրեշտակաց անմահից՝ որոց անմահութիւնն ըստ կատարածին ևեթ է և ոչ ըստ սկզբանն. որպէս զի թէ՛ ի յաւիտենից իսկ կամեցեալ էր Աստուածոյ գոյացուցանել զոք՛ ի հրեշտակաց, ոչ լինէր նա տիրապէս անմահ. զի թէպէտ և անսկիզբն ըստ ժամանակի, այլ գոյր նմա սկիզբն ըստ արարչութեան: Աստուածոյ ևեթ է ապա անմահութիւնն այն ինքնագոյ և միշտագոյ. և նոյն ինքն գերակատար անմահութիւն հարկաւ բերէ ընդ իւր և զանապայթելի անփոփոխութիւն. զի ամենայն փոփոխումն, թէ և՛ ի լաւագոյն ինչ, մահ իմն է և եղծումն առաջնոց հանգամանացն: Եւ որպէս յաւիտենականութիւնն Աստուածոյ արտաքսէ զամենայն փոփոխումն, այսպէս և անփոփոխութիւն՛ ի բաց մերժէ զամենայն սկիզբն՝ զժամանակ և զկատարած: Այսն որոյ ասէ Տերտուղիանոս. "Ինչափ օտար է Աստուածոյ սկիզբն և կատարած, որչափ և ժամանակ... յաւիտենականութիւն ոչ գիտէ զժամանակ,,: Եւ սուրբ Գրիգոր ինայինն յաւելու. "Որպէս ժամանակ զհետ գոյ շարժմանն, այսպէս և յաւիտենականութիւն զհետ անփոփոխութեան. և զի անփոփոխելի է Աստուած, ապա և յաւիտենական,,: Եւ աստի ապա զհետ բերէ՝ զի յաւիտենականութիւն Աստուածոյ ևեթ է, մանաւանդ թէ Աստուած յաւիտենականութիւն է: Օ՛ի եթէ չէր յաւիտենական, չէր և անսկիզբն. և եթէ չէր անսկիզբն, ապա էր երբեմն՝ յորժամ ոչ էր. արդ այս անտեղի է: Օ՛ի եթէ չէր, ուստի՞ կամ յումմէ՞ սկիզբն էառ. յիւրմէ՞ կարէր, զի ոչ գոյր. և ոչ յայլմէ, զի ոչ ևս այնուհետև լինէր Աստուած հարկաւոր էակ: Աստ այսմ և ոչ մարթ է նմա ունել վախճան. զի չէ՛ք էակ, որ յէական ստորոգելոյ իւրմէ մերկանալ կարիցէ: Այնպէս յանփոփոխելի բնութենէն Աստուածոյ զհետ գայ, զի յաւիտենականութիւն նորա չիցէ յաջորդական. զի եթէ յաջորդական էր, կամ իւրաքանչիւր մանն յաջորդութեան կացուցանէր զյաւիտենականութիւն նորա, և կամ պարապութիւն ամենայն մասանց: Եթէ առաջինն, այնուհետև մերթ անցեալ, մերթ ներկայ և մերթ ապառնի լինէր կատարելութիւնն Աստուածոյ, որ է անտեղի. իսկ եթէ երկրորդն,

զուրկ մնայր Աստուած ՚ի կատարելութենէ անտի, զի էր նման անհնարին զամենայն մասունս միանգամայն ժառանգել։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Առակ. ա. Սուրբ գիրք յերկինս համարին զԱստուած, և անտի ասեն ինձանել յերկիր կամ շրջել ընդ ամպս և այլն։ Ու նահապետն Յակոբ ասէ. (ծն. իբ. 16.) "Տէր է ՚ի տեղւոջս յայսմիկ, և ես ոչ գիտէի,,։ Ու Յովհան փախչէր յերեսաց տեառն ՚ի Ղարսիս։ Այսպս սուրբ գիրք ոչ ամենևայն համարին զԱստուած։

Պխ. Սուրբ գիրք զյայտնութենէ փառաց կամ զօրութենէն Աստուծոյ խօսին. վասն որոյ յերկինս ասեն զաթոռ նորա, ուր դէմ յանդիման երևի երանելոց. ասեն բնակել նմա յարդարս, զի ներգործէ ՚ի նոսա շնորհօք. յերկեղեցւոջ, զի լսէ աղօթից և ընդունի պաշտօն։ Այսպէս և ելանել, իջանել, գոլ ուրեք և շրջել ասեն նմա, վասն յայտնելոյ նորա ուրեք երևելապէս զերեսս իւր, որպէս ՚ի տեսլեան նահապետին։ Իսկ փախչել Յովհաննու յերեսաց տեառն, է և ես սովորական ձև բանից սուրբ գրոց՝ որով յայտ առնեն զխուսել մարդարէին ՚ի հրամանէ տեառն։

Առակ. բ. — ա. Ընդունին նորք զներգործութիւն Աստուծոյ ՚ի համագոյս, որպէս Այժմէս այնքսանդրացի, (յաճախ. գիրք ը. և ե.) Ասկեբերան, (՚ի Ղուկ. Ճառ ե.) և Ակտանտիոս, (յղ. Հեռափորձէ գլ. ժշ)։ — բ. Օ ի ենէկ Աստուած ամենայն ուրեք էր, յաղբևս իսկ և ՚ի ջաղիր տեղիս և ՚ի դևս իսկ և ՚ի դժոխս հարկ լինէր նմա գոլ։

— գ. Դարձեալ և անչափութիւն ընդ պարզութենէն Աստուծոյ չկարէ կալ։

Պխ. — ա. Նորք ընդունին զներգործութիւն Աստուծոյ ՚ի համագոյս ըստ ատոյիկեան իմաստասիրացն մոլորութեան, որոց հակառակն խօսին։ Վասնզի նոքա համարէին հոգի համագոյից զԱստուած, և մարմին նորա զհամագոյս, և նիւթապէս ծաւալեալ ՚ի նոսա զԱստուած. ուր անչափութիւնն Աստուծոյ՝ ըստ վարդա-

պետութեան Հարց և ըստ Հիմարտութեան՝ ամենայն ուրեք ամբողջ է և բովանդակ։

— ԲԼ. Ոչ առ Աստուծոյ տեղի զգալիր, այլ ամենայն զգայութիւն տեղեաց ի միտս մեր է. և ամենայն ուրեք ըստ տեղւոյն հանգամանաց ներկայ է Աստուած, վասն որոյ և ի դևս և ի դժոխս՝ առ ի ներգործել զարդարութիւն իւր։

— Գ. Ոչ կարի քաջ միաբանի անչափութիւն ընդ պարզութեանն Աստուծոյ այնու, զի ամենայն ուրեք ամբողջ է և բովանդակ, որպէս ասացաք, և ըստ ումեմն ի նախնի իմաստասիրաց՝ ամենայն ուրեք միջակէտ է Աստուած, և ոչ ուրեք շրջապատ։

Աաղկ. Գ. Ամենայն ուրեք գիրք ընծայեն Աստուծոյ ժամանակ և յաջորդութիւն. զի Դանիէլ կոչէ զնա հինաւուրց. (է. 9.) և ի Յայտնութեան (ա. 8.) ասի. «Որ էն, և որ է, և որ գալոցն է»։ Դարձեալ ընծայեն նմա և գործս անցեալս և ապառնիս. ապա ոչ է մարթ ըմբռնել առանց յաջորդութեան զյաւիտենականութիւն նորա։

Պե. Ամենայն գիրք ըստ տկարութեան մարդկեղէն մտաց խօսին, առանց Հիմարտութեան իրացն ստնանելոյ՝ զոր յէութենէն Աստուծոյ և անդստին իսկ ի սուրբ գրոց ցուցաք։ Գործել Աստուծոյ պարզ է յինքեան և մի, այլ ըստ արգասեացն բազմապատիկ և ամենազան՝ ժամանակաց և զանազանութիւն ի պարզութեան իւրում բովանդակեալ։ Իսկ դժուարութիւն ըմբռնելոյ զայն ի տկարութենէ մտաց մերոց է, որ ոչ կարէ ըմբռնել ինչ առանց ժամանակի և տեղւոյ։

ԳԼՈՒԽ Լ

ՅԱՂԱԳՍ ԳԻՏՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Գիտութեամբ իմանամք աստ զատոյգ զբացայայտ զանմիջական Հանաչումն. և ուսանիմք ի Հաւատոյ զի է գիտութիւնս այս Աստուած, զոր սուրբ գիրք ամենայն ուրեք ընծայեն նմա, և առաքեալն գոչէ Հիացմամբ. (Հռ. ԺԱ. 33.) «Ո՛վ խորք գիտութեանն

Աստուծոյ ,, : Այլ քանի իսկ յայտնապէս ուսուցանէ զայս. զի թէ գիտութիւն է ծայրագոյն կատարելութիւն իմացական բնութեան, ապա հարկ է զի իսկ Աստուած գերակատար գիտութիւն : Այլ գիտութիւնս նորա է պարզ անփոփոխ անբաւ և գործունեայ : Օ՛ի ոչ մակեղծաւ ինչ պատահական է՛ի նմա գիտութիւն, օտար՛ի ծայրագոյն աստուածայինն պարզականութենէ, այլ նոյն ընդ էութեան նորա՝ որպէս ստէպ ( )գոստինոս ասէ. "Գոլ և գիտել մի ինչ է Աստուած ,, : Ի՛ով պարզ տեսութեամբ ըմբռնէ զամենայն ամբաւութիւն իւրաց, վասն որոյ յաւելու նոյն ինքն ( )գոստինոս. "Համանգամայն տեսանէ զամենայն, և չէք ինչ՝ զոր ոչ միշտ տեսանիցէ ,, :

Այսին իրի և անփոփոխելի է գիտութիւն Աստուծոյ. զի եթէ՛ի միում ևեթ տեսութեան զամենայն ինչ ըստ ամենայնի բովանդակէ, նովին իսկ հարկ է՝ զի իցէ անփոփոխ, գոլով անընդունակ յաւելուածոյ և նուազութեան. վասն որոյ ոչ ինչ առաքեալն զԱստուածոյ ասէ, և զգիտութենէ նորա իմանալի է : "Յորում չէք փոփոխումն և կամ շրջելոյ ստուեր ,, . (Յակ. ա. 17) : Օ՛ի եթէ էութիւն նորա է անփոփոխելի, հարկ է անփոփոխելի գոլ և գիտութեան նորա, որ յէութենէ նորա ոչ զանազանի իրապէս :

Այլ կայեն նմանապէս գիրք զի գիտութիւնն Աստուծոյ է և անբաւելի. զի "Իմաստութեան նորա ոչ գոյ քաւ ,, , ասէ մարգարէն. (ողմ. Ամոս. 5) : Այսմ վկայէ և բանն. զի եթէ չէք կատարելագոյն ինչ խորհել քան զԱստուած, հարկ է զի և գիտութիւն նորա իցէ գերակատար և անբաւ :

Ասան է հաւատոյ զի գիտութիւնն Աստուծոյ է և գործունեայ, այսինքն արգասաւոր և արարիչ պատճառ իրաց : Ի վերայ բանից սուրբ գրոյ (Էմասա. է. 21.) "Օ՛ի ամենեցունց Հարտարապետն ուսոյց ինձ, իմաստութիւն ,, . (Իրեմ. Ժ. 12.) "Կանգնեաց զտիեզերս իմաստութեամբ իւրով ,, . (Բառ. ը. 27.) "Ի՛նչգեղ պատրաստեր զերկինս ընդ նմա էի . . . ՛ի ժամանակի՝ յորում հաստատուն գնէր զհիմունս երկրի՝ ես էի առնովաւ պատշաճեալ ,, , ասէ սուրբն ( )գոստինոս. "Օ՛ամենայն արարածս իւր գՀոգեղէնս և զմարմնաւորս, ոչ

վասն զի ենն՝ գիտէ, այլ ենն՝ վասն զի գիտէ. զի ոչ անգիտանայր որ լինելոյն էին, և ոչ այլազգ գիտեր զարածածս՝ բայց իբրև առնելիս ,,։ Ո՛չայս բազում ուրեք այսպէս սուրբ վարդապետն յեղյեղէ։

Եւ սուրբն Աթանաս ասէ. “Ա՛ստուած է բոլորովին միտք, բոլորովին բան, և բովանդակ Հոգի գործունեայ, և ամենևին լոյս, միշտ նոյն և նոյնօրինակ գոյացական։ Եւ Սարգիս վարդապետն մեր. “Գիտութիւնն Ա՛ստուծոյ զկամելն նշանակէ. զի թէպէտ այլ են կամքն և այլ գիտութիւնն, սակայն ոչ բաժանելով իբրև ըստմեր. վասն զի նորայն ’ի գիտելն կամել է, և ’ի կամելն գիտել ,,։

Եւ որպէս ձանձրանայ Ա՛ստուած զինքն կատարեալապէս և ըմբռնել, “Ո՛վ ի Հոգին զամենայն քննէ, և զխորս Ա՛ստուծոյ .... և ոչ զաստուածոյն ոք գիտէ, եթէ ոչ Հոգին Ա՛ստուծոյ. (ա. Կոր. ը. 11.) այսպէս գիտէ և զամենայն կարելիս. զի եթէ ոչ այսպէս էր, անգիտանայր զամենակարողութիւն իւր։ Ա՛ման որոյ ասէ Գրիգոր վարդապետ. “Խովանդակ ունի յինքեան զամենագէտ գիտութիւնն, և բղխէ յամենեսին զամենագէտ իմաստութիւնն, և ինքն միայ անխախուտ յամենահնար իմաստութեանն ,,։

Ձանձրանայ ձիգրտիւ և զամենայն անցեալս զներկայս և զապառնիս, թէպէտ հարկաւորք, թէ հնարաւորք, և թէ ազատք։ Ա՛յսչափ սուրբ գիրք. “Ա՛մենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա ,,. (Եբր. դ. 13.) “Ի միտ առեր զխորհուրդս իմ ’ի հեռաստանէ... զամենայն ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր ,,. (սղմ. ճլը. 3.) “Ա՛ստուած յաւիտենական ծածկապէտ, որ գիտէս զամենայն յառաջ քան զլինել նոցա ,,. (Դան. ժգ. 43)։ Ա՛յսմ վկայեն և ամենայն մարգարէութիւնք, որ նախապատմեն զՀանդերձեալ ազատ և հնարաւոր իրս. վասն որոյ ասէ Տերտուղիանոս (ընդդէմ Ա՛պելլեայի գիրք ը. և ե.) “Անխափանութեանն Ա՛ստուծոյ այնչափ են վկայք, որչափ մարգարէք ,,։ Եւ սուրբն Ա՛ստուածոստինոս ասէ. (յղ. Հաղորդին Ա՛ստուծոյ. գիրք ե. գլ. ի.) “Խոստովանել թէ գոյ Ա՛ստուած, և ուրանալ զյառաջգիտութիւն նորա զհանդերձելոյ, ակնյայտին խելագարութիւն է ,,։ Ո՛վ եթէ էր լինէ՝ զոր չգիտէր

Աստուած ՚ի յաւիտենից, մարթէր յաւելուլ ինչ ՚ի նմա գիտութիւն, որ ընդդէմ է անփոփոխութեան նորա՝ անսահմանութեան և յաւիտենականութեան, և մարթէր այնուհետեւ կատարելագոյն ինչ քան զնա խորհել։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Աստղ. ա. Սուրբ գիրք զարարածս ամենակարողութեանն Աստուծոյ ընծայեն, ապա ոչ է օրէն զգիտութիւն Աստուծոյ համարել նոցա պատճառս։ Ո՛չ ի՛ եթէ գիտութիւն էր պատճառ նոցին, զհետ գայր գոլ նոցա ՚ի յաւիտենից ընդ աստուածային յաւիտենական գիտութեան։

Պե. Արդեք ինչ առ ՚ի գոյութիւն իրաց զուգընթացնան, գիտութիւն՝ կամք և ամենակարողութիւն. զի գիտութիւն փայլէ անդ իբրև խնաստուն ձարտարապետ, կամք ընտրէ, և ամենակարողութիւն ներգործէ։ Որպէս Տերտուլիանոս գեղեցիկ բացատրէ զայս. (՚ի Ջոպաֆով. գլ. ԺԷ.) "Աստուած զբոլոր աշխարհ, հանդերձ ամենայն միջնորդօք տարերց և մարմնոց և հոգւոց, Բանիւ՝ որով հրամայեաց, Ոգւով՝ որով յօրինեաց, Օրութեամբ՝ որով կարաց, յանէութենէ ՚ի վեր երևեցոյց ՚ի շուք մեծվայելչութեան իւրոյ,,։ Արդեք գիտութիւն էր հարկաւոր պատճառ արարածոց, զհետ գայր գոյութիւն նոցին ՚ի յաւիտենից. այլ գիտութիւն էր ազատ պատճառ, որպէս սուրբն Աւգոստինոս ասէ. "Գիտութիւնն Աստուծոյ պատճառ է արարածոց ըստ այնմ, զի արարածք են ՚ի գիտութեան. այլ ՚ի գիտութեանն Աստուծոյ ոչ եղև գոլ նոցա ՚ի յաւիտենից։ Այսն որոյ ՚ի յաւիտենական գիտութենէն Աստուծոյ ոչ զհետ գայ գոլ նոցա ՚ի յաւիտենից։

Աստղ. բ. Հակասական է գիտել Աստուծոյ կանխաւ զհնարաւորս, որ յազատ կամս մարդոյ կան. ապա թէ ոչ, հնարաւոր լինէր և կանխագիտութիւնն Աստուծոյ։

Պե. Հնարաւորք կանխագիտութեանն Աստուծոյ առարկական են պատճառք և ոչ արարչական։ Որպէս ՚ի

ծագել արեգական՝ մեն մի յէից լոսո քնութեան իւրում լուսաւորի. այլ ոչ ոք ի զանազանութենէ նոցա՝ զանազան զլոյս արեգական համարի։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Մոդոդոդիեք ի վերայ գիտութեանն Աստուծոյ զապաստեանաց։

Մարկիոնեանք եդին՝ թէ Աստուած ոչ էր կանխագէտ մեղաց մարդոյ, ապա թէ ոչ՝ ոչ ստեղծանէր զնա առ ի չլինելոյ պատճառ չարեաց։ Եւ Կիկերոն հակառակ կայ կանխագիտութեան հնարաւոր ապագայից, առ պինդ ունելոյ զազատութիւն մարդկային։ Ընդդէմ սոցա բազում ուրեք խօսին Հարք, և մանաւանդ սուրբն Գոստինոս, որ ասէ զԿիկերոնէ (յղ. Քաղաքին Աստուծոյ. գլուխ Է. գլ. Թ.) զի "Կամեցեալ ազատս առնել զմարդիկ, աստուածամարտս զնոսա արար։"

Պեղագեանք ընդունէին զկանխագիտութիւն Աստուծոյ, այլ ոչ իշխել նմա ազատ ապագայից, զոր ի կամ մարդոյ ապաստան առնէին, մինչև զգերբնական իսկ գործս ընորհաց, ևս և փրկութեան։ Ի սան որոյ Պեղագիոս ուրացաւ զհարկաւորութիւն ընորհաց, և զանձնիշխանութիւն մարդոյ համարեցաւ բաւական առ ի փրկութիւն. և խորոց ի խորս անկեալ՝ հարկեցաւ ուրանալ և զկրքնական մեղս, ուստի սերեալ տկարութիւն ի մարդիկ։

Իսկ կիսապեղագեանք ընկալան զգործակցութիւն Աստուծոյ ընդ մեզ յազատ ապագայս, ոչ կանխելով նորա քան զմեզ՝ այլ հետևելով մեզ, ևս և ի գերբնականս։ Ի սան որոյ զսկիզբն փրկութեան ի մէնջ, իսկ զկատարումն համարէին յԱստուծոյ. և թէ ոչ սահմանէ Աստուած տալ ընորհս ուժեք և փառս, եթէ ոչ յառաջգիտութեամբ յօժարութեան նորա ինքնօրէն առ բարին և առ ընդունելութիւն շընորհաց։

Հրկաբանչիւրոց իսկ մոլորութեանցս ի դիմի հարան բազումք ի Հարց. այլ Գոստինոս սպառազուռ եղջ պայնոսիկ խորին վարդապետութեամբ։

Լսակ ընդ հակառակն բազումք՝ ի հին աղանդաւորաց համարեցան՝ թէ Աստուած՝ ի բնէ զկէսս բարի և զայլսն չար ստեղծանէ. որպէս զի ոչ չարաց կարել բարի լինել, և ոչ բարեաց կարել չարանալ: Ընդդէմ սոցա ընդ նախնի Հարս առհասարակ զինեցաւ և մերս Նշնիկ:

Զսոյն մոլորութիւն նորոգեցին և նախասահմանականք, համարելով Աստուծոյ զումանս պարզապէս սահմանեալ՝ ի փրկութիւն և զայլսն՝ ի կորուստ իբր Ճակատագրիս, որպէս զի ոչ ևս լինել մարդոյ ազատ՝ այլ՝ ի հարկէ գործել զամենայն: Սոցա աղանդապետք կացին Լութեր և Կալուին:

Ի սոյն մոլորութիւն մատչի և Յանսենիոս, համբերելով զպատուիրանս ինչ Աստուծոյ անկարելիս. և զի որոց տուեալ է ընդհ, չկարեն ընդդէմ դառնալ նմին, այլ հարկ է նոցա գործել զբարին. և զի սակայն արժանաւորին բարեաւն, ոչ պահանջելով առ արժանաւորութիւն զպատուիրանսն՝ ի հարկէ, այլ բաւական համարեալ զպատուիրանսն ևեթ՝ ի բռնութենէ:

ԳՕԴՈՒԱԾ Բ

կարծիք՝ ի վերայ գիտութեանն Աստուծոյ զպատահեալս:

Երկպատակեցան աստուածաբանք՝ ի խօսել ընդդէմ երկոցունց ներհակաց մոլորութեանցս: Պոլինեանք, այսինքն հետևողք Պոլինայի, ընդ այլ ոմանս, ոչ բաւական համարեալ դնել յԱստուած զղանազանութիւն գիտութեան՝ ի պարզ էմպռեհեն՝ որ է գիտութիւն կարելեաց ապագայից, և՝ ի սեռուհեն՝ որ է գիտութիւն հաւաստեաց ապագայից, կարևոր համարեցան զնանազանել և Մլաիան ինչ կոչեցեալ գիտութիւն ապագայից պայմանելոց, այսինքն որոց պայմանաւ իւիք է գալ յարդիւնս: Այսպէս փրկիչն մեր զտիւրացւոյ և զսիդոնացւոյ ասաց, զի եթէ քարոզեալ էր առ նոսա՝ ապաշխարեին. որով ապաշխարութիւն նոցա ոչ պարզապէս էր կարելի և ոչ հաւաստեաւ լինելի, այլ պայմանաւ՝ Քրիստոսի քարոզութեանն. որ զի ոչ քարոզեաց, և ոչ նո-

քա ապաշխարեցին: Եւ զի այս գիտութիւն գոյ Աստուած, յուցցուք ՚ի ստորև. այլ սովին միջական գիտութեամբ կամեցան մեզինեանք միաբանել զչնորհս ընդ անձնիշխանութեան, և բարձին գրեթէ զձրի նախատահմանութիւն ՚ի չնորհս կամ ՚ի փառս, համարելով նախատեսանել Աստուծոյ միջական գիտութեամբ զհաւանութիւն կամ զգործակցութիւն մարդոյ, և ըստ այնմ նախատահմանել: Արդ զդէմ ունին Թոմայեանք, յուցանելով զի Աստուած ազատ ամենևին ՚ի հաւանութենէ կամ ՚ի գործակցութենէ մարդոյ՝ նախատահմանէ զնա ՚ի չնորհս և ՚ի փառս. քանզի ասէ առաքեալն (Հռ. Թ. 16.) "Ոչ ըստ այնմ ինչ է որ կամիցին, և ոչ ըստ այնմ որ ընթանայցէ, այլ ըստ Աստուծոյ որ ողորմի „:

ԳՕԴՈՒԱԾ Գ

Լուծումն դժուարութեան միաբանիչոյ զկանխագիտութիւնն Աստուծոյ ընդ ազատութեան մարդոյ:

Անհնարին Թուի միաբանել զգիտութիւնն Աստուծոյ կամ զկանխագիտութիւն և կամ որ ինչ զայն և կոչիցեմք, ընդ մարդկեղէն ազատութեան: Օ՛ի եթէ որ ինչ գիտէ Աստուած կամ նախատեսանէ՝ պարտին պատահել, ապա հարկաւ պատահեն. ապա թէ ոչ, գիտութիւնն Աստուծոյ ՚ի դերև ելանէր. և եթէ հարկաւ պատահեն, ոչ ևս մնայ ազատութիւն մարդոյ ՚ի գործել կամ ՚ի չգործել ինչ: Այլ այս դժուարութիւն հաւասար այլոյն է, ուր միտք մարդկան մտացեալ զի ՚ի բնութենէ իւրմէ է սահմանաւոր՝ նկրտի ՚ի բովանդակել զանսահմանն, և որպէս թէ հաւասարել զանձն Աստուծոյ: Տեսանէ Աստուած զամենայն. զայս ձշմարտութիւն ոչ է մարթ ժխտել՝ առանց ժխտելոյ զգոյութիւն իսկ Աստուծոյ: Ազատ է մարդ. և զայս ձշմարտութիւն ոչ է մարթ յերկբայս արկանել՝ առանց հինն ՚ի վեր տապալելոյ զօրէնս բարոյականին: Եւ զի երկոքին ձշմարտութիւնքս այսոքիկ ապացուցականք են, ապա հակասութիւնն որ ՚ի մէջ սոցա երևեալ՝ ոչ այլ

ինչ է, բայց տկարութիւն մտաց մերոց. որ անգիտացեալ զմիջնորդ կցորդութեան նոցա ընդ իրեարս, սասանի՝ կարծելով՝ ի նոսա հակասութիւն։ "Պարտ է յայնժամ, ասէ մեծն Պօսիւէ, պինդ ունել զերկոսին ծայրս շղթային, թէպէտ և անտես իցէ որ՝ ի միջի օղն կցորդութեան ,,։

Այլ իցէ՞ն իսկ բնաւ անմիաբանելի ճշմարտութիւնք քոյս այսոքիկ երկոքին։ Անյաջորդական յաւիտենականութիւն հարկաւոր ինն ընկալեալ յամենեցունց՝ լուծանել զամենայն դժուարութիւն։ Ո՛չ որովհետև Աստուած միով և եթ ներգործութեամբ գիտէ զամենայն, որ ինչ է, որ ինչ լեալ է, և որ ինչ լինելոց, և չիք առնմա անցեալ և ապառնի, գիտութիւն նորա ոչ այլ ինչ է՝ բայց պարզ տեսութիւն, և ոչ ճշգրտիւ կոչի այն նախագիտութիւն կամ նախատեսութիւն։ "Պատճառիք, ասէ սուրբն Գոստինոս (առ Ինվալիդ. գիրք ը. խնդ. ը.) ներկայք են Աստուծոյ. վասն որոյ ոչ նախագիտութիւն՝ այլ գիտութիւն եթէ արժան է կոչել զայն ,,։ Արդ քաջայայտ է զի տեսութիւն Աստուծոյ ոչ բառնայ զազատութիւն մարդկան։ Ընդունէ ինչ ոք վասն զի տեսանէ զնա Աստուած զի առնէ, այլ զի առնէ նա ազատօրէն՝ տեսանէ զայն Աստուած. ջառնէ Աստուած այնու զի տեսանէ որ ինչ լինելոց է, այլ տեսանէ զայնս վասն զի լինելոց։

Այլ դիցուք եւս առ վայր մի, զի և գիտութեան Աստուծոյ իցէ անցեալ ներկայ և ապառնի, այսու ամենայնիւ նախագիտութիւն նորա ոչ է պատճառ մարդկային գործոյ՝ այլ հետեւանք։ Ես զի գիտէ նա՝ ի յաւիտենից որ ինչ գործելոցս եմք՝ գործեմք, այլ զի գործելոց եմք՝ գիտէ։ "Կանգուն և ոչ, որպէս մերս Աքինիկ իմաստասիրէ (գիրք ը. յօդ. ժգ.) յորժամ տեսանիցէ ոք զընկեր իւր ընդ լայրծ տեղիս գնացեալ, և ասիցէ՝ Թէ գլորելոց է, նա եղև պատճառք գլորման ընկերին. և ոչ յորժամ ընդ աւազակուտ տեղիս դիմեալ զընկերն ոք տեսանիցէ, և ասիցէ՝ Թէ եղեռն գտանէ, նա ինչ իցէ պատճառք վհատանելոյ ընչից։ Նոյնպէս և

ոչ Աստուծոյ յառաջգիտութիւնն է պատճառք բա-
րեաց կամ չարեաց,,։ Եւ ընդհէր իսկ համարիցի պատ-
ճառք. Թերևս զի է անվրիպելի. այլ անվրիպելին գոլ
նախագիտութեանն Աստուծոյ ոչ ինչ աւելի՝ ի կամ
մեր ազդէ քան զպարզ տեսութիւն նորա, որով տեսա-
նէ որ ինչ գործեմքս. նախագիտութիւն ոչ փոխէ ըզ-
բնութիւն գործոց մերոց, որպէս և ոչ պարզ տեսու-
թիւն։ "Որպէս դու յիշողութեամբ քով, ասէ սուրբն
Գրիգորիոս, ոչ բռնադատես զի եղեալ իցեն անցեալ-
քըն, նոյնպէս և Աստուած յառաջգիտութեամբն իւ-
րով ոչ բռնադատէ զի իցեն առնելի որ լինելոցն են։
Պաքէն որ ինչ նախատեսանէ Աստուած, գան անվրէպ
՝ի կատարումն. այլ կատարին նովին օրինակաւ՝ որով և
նախատեսանէ։ Որ ինչ տեսանէ զի Հարկաւ լինելոց
են, Հարկաւ կատարին. իսկ որ ինչ տեսանէ զի ազա-
տօրէն լինելոց են, ազատութեամբ կատարին. և կա-
տարին՝ ոչ զի նախատեսեալք Աստուծոյ, այլ նախա-
տեսանին՝ զի ազատութեամբ կամաց մերոց լինելոց են։
Օ այսմանէ Ճոխագոյն ևս ՝ի ստորև ՝ի Ճառէն զՂը-
նորհայ։

ԳՕԴՈՒԱԾ Դ

*Զի գիտէ Աստուած հաւատուհաւ և անվրէպ զապառնիս
հնազանդս պայմանեալս։*

Պայմանեալ ասին ապառնիք, որոց կատարումն Հա-
տատի ՝ի պայման ինչ, և է իբր միջասահման պարզ կա-
րելեաց և Հաւատոյ ապառնեաց. զի են իսկ և նոքա
կարելիք և ապառնիք, այլ ՝ի կատարել այսր իրիք կամ
այնր պայմանի։ Աստ այսմ ՝ի դնել պայմանի քարոզու-
թեանն Պրիստոսի ՝ի Տիւրոս և ՝ի Սիդոն, տիւրացիք
և սիդոնացիք ապաշխարելոց էին անվրէպ. վասն որոյ
ապաշխարութիւն նոցա ոչ էր պարզ կարելի և ոչ Հա-
ւատեաւ ապառնի, այլ եթէ Պրիստոսի քարոզեալ
էր անդ. և զի ոչ քարոզեաց, վասն որոյ և ոչ ապաշ-
խարեցին։

Արդ զայս գիտութիւն ընդունին Աստուած ամե-

նայն աստուածաբանք, ՚ի մոռացօնս անկեալ կարծիք սակաւուն՝ որք գուշակական ևեթ գիտութիւն դնեին Աստուած զպայմանեալ հնարաւորաց։ Այլ ոչ ևս զաստուածային գիտութենէն է արդ խնդիրը, այլ թէ որպէս գիտիցէ զայնս Աստուած. այսինքն պարզ իմացութեամբ որպէս զկարելիս, եթէ տեսութեամբ որպէս զպարզ ապագայս։ Վասնզի առանց մոլորութեան չէ մարթ ժխտել զայս կանխագիտութիւն Աստուծոյ, զոր նոքին իսկ սուրբք գիրք ընծայեն նմա, և Հարք առհասարակ հաստատեն զայն, և բանն ինքնին ցուցանէ զնոյն։

Վասզուտ ինչ ՚ի սուրբ գիրս յայտնեաց Աստուած ընդ պայմանաւ ապառնեաւ, որք առ ՚ի չգոյէ պայմանին չեկին յարդիւնս. ապա գիտէր Աստուած զայնս հաւաստեաւ։ Վասնզի ընդդէմ է էութեանն Աստուծոյ, որ նոյն ինքն է ճշմարտութիւն անսահման, ասել իբր հաւաստի գլինելոցն պայմանաւ, առանց հաւաստի կանխագիտութեան։

Ասկ զի ՚ի սուրբ գիրս յայտնեաց Աստուած բազում ինչ այսպիսի, յայտ է ՚ի գիրս Թագաւորութեանց. (ԻԳ. 11.) ուր հարցանէ Դաւիթ զտէր, զի եթէ կացցէ Քէիլա ՚ի Կեղիլ ՚ի ձեռն Սաուղի պաշարել զքաղաքն. “Այս ասէ տէր. պաշարեսցի։ Այս ասէ Դաւիթ. եթէ մատնեսցէ՞ն զիս Կեղիլացիքս և զարս իմ ՚ի ձեռս Սաուղայ։ Այս ասէ տէր. մատնեսցեն,,։ Այս ոչ զկարելեաց էին բանք, և ոչ զհաւաստի ապառնեաց. զի ՚ի խուսել Դաւթի, առ ՚ի չգոյէ պայմանին ոչ ևս իջանելոց էր Սաուղ պաշարել զՔեղիլա. այլ զպայմանեալ ապառնոյ, որ յայտնին էր կանխագիտութեանն Աստուծոյ, զոր և նախապատմեաց։

Յայտ է դարձեալ ՚ի գիրս երրորդ Թագաւորութեանց (ԺԲ. 2.) ուր հաստատէ Աստուած զպատուէրն տուեալ ՚ի գիրս ելից (գԼ. ԼԴ.) չառնել խնամութիւն ընդ այլազգիս, “Մի գուցէ խոտորեցուցանիցեն զքեզ սիրտս ձեր զկնի կռոցն իւրեանց,,։ Այլ ՚ի կատարել պայմանին ՚ի Սողոմոն և յայլս՝ եկն եհաս ՚ի վերայ նոցա խոտորումն նախապատրաստեալ, իսկ այլք առ ՚ի չկատարելոյ ՚ի նոսա պայմանին՝ մնացին զերծք ՚ի խոտորմանէն։

Դարձեալ և ՚ի գիրս իմաստութեան (Դ. 11.) “Յափշտակեցաւ՝ զի մի չարութիւն ինչ չընչեսցէ զիմաս-

տութիւն նորա, կամ նենգութիւն պատրեսցէ զանձն նորա ,, : Այս գիտեր Պատուած հաւաստեաւ զի պատրելոց էր նա ’ի կեանն :

Յայտ է և ’ի բանէն Պրիստոսի, զոր ’ի վեր անդր յիշատակեցաք . “ Ա՛յ քեզ Քորազին, վա՛յ քեզ Բեթսայիդա . զի եթէ ’ի Տիւրոս և ’ի Սիդոն եղեաւ էին զօրութիւնքն՝ որ ’ի ձեզ եղեն, վաղու ևս արդեօք խորգով և մխրով ապաշխարեաւ էր ,, : (Մտթ . ԺԱ . 21) : Այս տիւրացւոց և սիդոնացւոց ապաշխարութիւնն հաւաստի էր, եթէ Պրիստոս առնէր առ նոսա զգօրութիւնսն՝ զորս արար առ Հրեայս :

Մինաբանին և սուրբ Հարք ’ի կանխագիտութիւն Պատուծոյ զպայմանեաւ ապառնեաց . քանզի այսուիկ յաձախ մխիթարեն զարդարս վշտացեալս, և զծնօղս վաղամեռիկ մանկտւոյ . այսուիկ և զէութիւն ընորհաց և զձրի ընորհաբաշխութիւն ընդդէմ պեղագեանց և կիսապեղագեանց պաշտպանեն . որպէս սուրբն Ոգոստինոս այսպէս զնոսա ’ի նեղ արկանէ . “ Պատացեն մեզ, ասէ, ընդէր զնոսա Պատուած յորժամ հաւատարմութեամբ և բարեպաշտութեամբ վարէին զկեանս՝ չյափըշտակեաց յայնժամ ’ի վտանգաց կենցաղոյս, զի մի չարութիւն շրջեսցէ զխմաստութիւն նոցա, կամ նենգութիւն պատրեսցէ զանձինս նոցա : Մի թէ անգիտանայր զՀանգերձեալ չարիս նոցա : Ոչ ինչ ապաքէն յայսպիսեաց աստի առանց մոլորութեան և խօթամտութեան մարթ է ասել ,, : Նա սուրբն Պրոսպերոս ասէ (Պա . Է .) “ Լոկ զտիւրացւոց և զսիդոնացւոց զի՞նչ պիտ ինչ իցէ մեզ ասել, բայց զի ոչ ընորհեցաւ նոցա հաւատալ . ուր ինքն իսկ Աչմարտութիւնն ասէ՝ զի հաւատալոց էին, եթէ տեսեալ էր նոցա զգօրութիւնս՝ որ եղեն առ չհաւատացեալս ,, :

Նա բանիւ իսկ յայտ է՝ զի պարտ է գիտութեանս այսմիկ գոլ Պատուած . քանզի կատարելութիւն մեծ է, և ամենակատար հոգեբանն չէ մարթ թերանալ յայնմանէ : Նա հաւատացելոց առհասարակ այնպէս յայտնի է Աչմարտութիւնս, զի յարկածս չարեաց սովոր են ասել . Պիտէ Պատուած վասն որոյ թողու պատահել արկածիցս, վասն որոյ այսպէսն տնօրինէ, զի նմա ևեթ ելք իրացն են գիտելի առ ’ի բարին :

ԱՌԱՔԱԿԱՆՈՒԹԻՆՔ

Ա՛ՍՏՂ. Ա. Արդեօք այդ կոչեցեալ կանխագիտութիւն ոչ այլ ինչ է, քայց գուշակական իմն գիտութիւն. զոր և մակբայքդ ցոյցանեն։ Որպէս այն որ՝ի գիրս Ծննդոց ասի. (Ծ. 21.) "Գուցէ ձգիցէ զձեռն, և առնուցու՝ի ծառոյն կեանաց,,։ Եւ՝ի գիրս Ելից. (Ծ. 8.) "Եթէ ոչ հաւատայցեն քեզ, և ոչ լսիցեն ձայնի առաջնոյ նշանին, հաւատասցեն քեզ ձայնի երկրորդի նշանիւք,,։ Եւ ըստիբացուց իսկ ոչ պարզաբար ասէ ապաշխարել, Թէ "Արդեօք և արդեօք ապաշխարեալ էին,,։

Պաւ. Ընդէ՞ր է գուշակական գիտութիւն ընծայել Ա՛ստուծոյ, որ էութեան իսկ նորին է հակառակ։ Ա՛յն որոյ մակբայքդ՝ որ ուրեք ուրեք յայսպիսի կանխասացութիւնս վարին՝ի սուրբ գիրս, զենութիւն իրացն և զպատճառաց նոցա յայտ առնեն. ապա Թէ ոչ, և զաւգատ ապագայից կանխագիտութիւն Հարկ էր բառնալ Ա՛ստուծոյ, զի և յայնս գտանին՝ի կիր արկեալ մակբայքդ՝ի սուրբ գիրս։ Սուրբ գիրք վասն մարդկան գրեալ են, վասն որոյ և մարդկօրէն զբանսն ձեւացուցանեն. եթէ ոչ այսպէս էր իմանալ, Հարկ էր և զնոսկայից իսկ գիտութիւն ժխտել Ա՛ստուածոյ. զի Հարցանէ Ա՛ստուած զԱ՛ովսէս (Ելից. Ծ. 2.) "Ո՞ ինչ է այդ՝ որ՝ի ձեռին քումդ է. և նա ասէ. գաւազան,,։

Ա՛ՍՏՂ. Բ. Ի պայմանեալ ապագայս չիք ինչ Հնմարտութիւն առաքական, վասն զի Հաստատի սա՝ի պայմանն անեակ։ Եւ այս անտի իսկ առաւելապէս յայտ է, զի չիք կարևոր ինչ կցորդութիւն ընդ պայմանն և ընդ ընտրութիւն. վասն որոյ ապագայիցդ այդպիսիկ գիտութիւն կամ չիք Ա՛ստուած, և կամ գուշակութեամբ ևեթ իք, որչափ ինչ կցորդութիւն ըմբռնեն միտք ընդ պայմանն և ընդ ապագայն պայմանեալ։

Պաւ. Ո՛րպէս են առ գիտութիւնն Ա՛ստուծոյ ապագայք պայմանեալք, որպէս ազատք. զի որպէս այսոքիկ պայմանքն ազատ ապագայք չինքեանս նկատեալ՝ կամ ըստ Հանդերձեալ ազատ ընտրութեանն՝ ոչ Հնմարտիւք են

և ոչ սուտ, այլ առ Աստուած Ճշմարիտք են ամենևին, նոյնպէս և պայմանեալ ապագայք ոչ սուտ են և ոչ Ճշմարիտ՝ ի նկատել զորպէսն կցորդութեան ընդ պայմանն և ընդ պայմանեալ, այլ առ աստուածային կանխագիտութիւնն կարի իսկ Ճշմարիտք են։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Քաղագս եղանակի գիտութեանն Աստուծոյ։

Եղանակ գիտութեան կոչի յիմաստասիրաց և յաստուածաբանից պատճառք Ճանաչման մտաց, այսինքն որով Ճանաչեմք ինչ. որպէս ի ձեռն հայելոյ Ճանաչեմք զդէմս մեր. ի ձեռն առածից զՃշմարտութիւնս։ Ճանաչէ Աստուած զինքն և զայլս՝ որ զանազանին յիւրմէ. արդ որք զանազանինն Աստուծոյ՝ կամ կարելիք են և կամ գոյաւորք ըստ այլ և այլ ժամանակի, այսինքն նեռկայ անցեալ և ապառնի. և ի գոյաւորաց կէսք հարկաւորք՝ զի ի հարկաւոր կամ ի բնական պատճառաց յառաջ եկեալք, և կէսք ազատք՝ զի յազատ պատճառաց. և այսպիսիկ դարձեալ՝ կամ ինքնօրէն ազատք, և կամ պայմանաւ՝ որպէս ի նախորդ յօդուածիդ յայտ արարաք։

Օ եղանակէ, որով Աստուած որ ինչ զանազանինն յիւրմէ՝ Ճանաչէ, ոչ սակաւ վէմք ի դպրոցս երբեմն յուզին՝ որ արդ լռեցին։ Եզ աստ զտոյգս յանընդունելիոց ընտրելն է նախ։ Ամենեքեան միաբանին զի Աստուած զէութիւն իւր առանց իրիք միջնորդի անմիջաբար Ճանաչէ, զի ոչ իսկ է մարթ յառաջ քան զէութիւն աստուածային ըմբռնել ինչ, որով զայն իցէ Ճանաչել։ Դարձեալ զի որովհետև զանազանեմք մտօք կամ զօրութեամբ յէութենէն Աստուծոյ զտօրոգելիս նոքա՝ իբր ի վերայ նորա եկեալս, վասն որոյ ամենեցուն է ընդունելի՝ զի Աստուած զտօրոգելիս իւր ի ձեռն էութեան իւրոյ Ճանաչէ։ Գլխաւորապէս ընդունին ամենեքեան զի Աստուած որ ինչ զանազանինն յիւրմէ՝ ըմբռնէ յինքեան կամ յէութեան իւրում իբր ի ձեռն յառաջագոյն ծանուցելոյ, թէ զկարելիս, թէ զգոյա-

ւորս հանդերձ զանազանութեամբ անցեալ ներկայ և ապառնի ժամանակաց՝ զորս ունին ՚ի ժամանակի հարկաւորքն կամ ՚ի հարկաւոր պատճառաց յառաջ եկեալք։ Այլ երրեակ եղանակաւ բացատրի Ճանաչել զնոսա Աստուածոյ ՚ի ձեռն Հումեան իւրոյ. նախ ըստ այնմ՝ զի ե բնաւից արարչական պատճառ կարելեաց և գոյացորաց. երկրորդ՝ զի ե նախատիպ պատճառ. և երրորդ՝ զի ե գերազանցական պատճառ, տեսականապէս կամ գերազանցօրէն յինքն բովանդակելով զամենայն կատարելութիւնս՝ որ են կամ կարեն գոլ յարարածս։

Յայսվայր ամենայն դասք աստուածաբանից միաբանին. այլ թէ որո՞վ եղանակաւ Ճանաչիցէ Աստուած յինքեան իբրև պատճառ զկարելիս և զգոյացորս հանդերձ ժամանակօք իւրեանց, տարաձայնեալ սկսանին։ Ոմանք մայականք վիճին՝ թէ Աստուած իբր արարչական պատճառ Ճանաչէ յինքեան զկարելիս և զգոյացորս. այլք՝ թէ իբրև նախատիպ և գերազանցական պատճառ, որպէս սովոր են վարդապետել Հարք։ Այն ևս որք համարին՝ զի Աստուած անմիջապէս դէմ յանդիման Ճանաչէ զայնս, իբր զի կատարելութիւն ինն է այսպիսի Ճանաչումն, և ամենայն կատարելութիւն է Աստուած։ Այլ ևս զայրացաւ վէմն զազատ ապագայից, թէպէտ պարզաբար և թէ պայմանաւ իցեն ազատք. զի զայսմանէ կախեալ կան խնդիրք՝ որ յաղագս ընորհաց։ Ասեն որոյ դասք իւրաքանչիւր գուն գործեն հաստատուն՝ ըստ հինն չինուածոյ իւրեանց զետեղել։

Այլ առ՚ի քաջ խելամուտ լինել խնդրոյս՝ հարկ է յերկուս կարգս զանազանել զայնոսիկ, ՚ի բնականս և ՚ի գերբնականս, այսինքն ՚ի կարգ ընորհաց. պարտ է դարձեալ և զպայման մարդոյ զանազանել յերկուս, ՚ի պայման անմեղութեան՝ յորում այնքան պարգևօք եր Ճոխացեալ Աստուծոյ, և ՚ի պայման անկելոյ բնութեան՝ յորում նախամարդն զպարգևան զայնոսիկ կորոյս և ետ կորուսանել մեզ։

Արդ թուիմայականք ըստ այնմ՝ զի Աստուած է նախապատճառ, բնաւից տէր և առաջին շարժօղ, իսկ ամբարածք ամենայն ՚ի ձեռին նորա ըստ գոյութեան և ըստ ներգործութեան, որք վասն իսկ չկարեն նոքա ներգործել ինչ իւրովի՝ առանց շարժելոյ Աստուածոյ բնա-

կանապէս, զՀետ բերեն՝ զի յորում և իցէ պայմանի և ՚ի կարգի՝ հարկաւոր է նախաշարժումն այն բնական։ Ո՚չսի զՀետ բերեն և ևս զկանխագիտութիւն Ո՚ստուծոյ ամենայն ազատ ներգործութեանց հրեշտակաց և մարդկան, թէ յառաջնում և թէ յերկրորդումն պայմանի, թէ ՚ի բնական և թէ ՚ի գերբնական կարգի, ՚ի վէհս իւր յաւիտենականս նախաշարժելոյ զնոսա բնականապէս ՚ի ժամանակի յայս կամ յայն ներգործութիւն ըստ երկաքանչիւր կարգի։ Իսկ զմեզայ՝ այլք ևս բազումք ընդ նոսին ընդ Թոմայականս՝ համարին զի տեսանել Ո՚ստուած զայնս ՚ի վէհս իւր զրականս նախաշարժելոյ զնոսա բնականապէս ՚ի ներգործութիւն նիւթականս և բնական, այլ ըստ բարոյական մասին՝ ՚ի վէհս Թոյլտուութեան։

Զոսահինեանք, ըստ երկաքանչիւր ասացելոցս կարգաց և պայմանաց, համաձայնին ընդ Թոմայականս՝ տեսանել Ո՚ստուծոյ զներգործութիւնս գերբնականս ՚ի վէհս իւր տալոյ ընորհս յաղթողս և ըստ ինքեան գործունեայս ՚ի պայմանի անկեալ բնութեան, այլ ոչ և զբնական ներգործութիւնս Թէպէտ յառաջ և Թէ յետոյ քան զանկումն, և զգերբնականս նախ քան զանկումն. զի զայնս առհասարակ համարին Ո՚ստուծոյ նախ քան զվէհս և առանց այնց։

Իսկ այլք յաստուածաբանից, որոց չէն ընդունելի վէհք բնական նախաշարժութեան՝ որպէս հակառակք ազատութեան մարդոյ, այր վասն իսկ և զընորհս ըստ ինքեան գործունեայս ոչ ընդունին, ասեն Ո՚չ տեսանել Ո՚ստուծոյ զազատ ապագայս յառաջ քան զոր և է վէհս։ Կէսք ՚ի նոցանէ համարին տեսանել Ո՚ստուծոյ զազատ ապագայս յըմբռնման ստեղծական բնութեան, զորոյ Ո՚ստուած Ո՚չ ունի զզօրութիւն յաժարութեան. այլք՝ Թէ ՚ի նոսին ինքեանս Ո՚չ տեսանել Ո՚ստուած զայնս անմիջաբար որպէս Ո՚չմարտութիւնս առարկականս ապառնիս, վասն որոյ և աստուածային անսահման մտաց իմանալիս. և այլք դարձեալ՝ Թէ Ո՚ստուած զազատ ապագայս Հնարաւորս տեսանէ յիւրում էութեան իբրև ՚ի հայելւոջ, որ յանդիման առնէ զոր ինչ ոք յարարածոց յորում և իցէ պայմանի և ՚ի ժամանակի ազատօրէն գործելոց է։ Իսկ զգերբնականներգործութիւնս Հաւա-

րին տեսանել Աստուծոյ ի վէհս, որով սահմանեալն է տալ ընդհս՝ ըստ կանխագիտութեան ապագայից պայմանելոց գործունեայս, ազատ հաւանութեամբ՝ զոր գիտէ Աստուած զի այնու ընդհօք տալոց իցէ ոք։ Այլ զմեղս, ըստ կարծեաց նոցա, ձանաչէ Աստուած ընդ հակառակն առ ի չգոյէ բարւոյն՝ որում պարտն էր գոլ ի ներգործութիւնս անդ։

Իւրաքանչիւր ոք ի դասուց աստի աստուածաբանից ջանայ հաստատել զկարծիս իւր ի սուրբ գրոց. այլ չիք յայտնի ինչ անգ զայսցանէ։ Այլ ըստ սրբոց Հարց, որպէս տեսաքն ի վեր անդր, ոչ վասն կանխագիտութեանն Աստուծոյ յարգիւնս գան ապագայք, այլ վասն զի հանդերձեալ են գալ յարգիւնս՝ գիտէ զայնոսիկ Աստուած. որով բառնի ամենայն վէհու զազատ ապագայից. զի և սուրբն ()գոստինոս ի գիրսն յաղագս նախասահմանութեան սրբոց՝ ասէ (գլ. Ժ.) "Նախասահմանութիւն ոչ կարէ կալ առանց կանխագիտութեան, այլ կանխագիտութիւն կարէ առանց նախասահմանութեան։ Նախասահմանութեամբն գիտաց Աստուած որ ինչ ինքն առնելոց էր, վասն որոյ ասէ. Ամենայն որ ինչ լինելոցն է։ Այլ կարող է գիտել կանխաւ որ ինչ ինքն ոչ առնէ, այսինքն զոր և է մեղս"։ Նա նոյն ինքն սուրբ վարդապետն այլուր (ի աղ. խոհ. Թիւ ձԸ.) խոստովանի չգիտել զորպիսն աստուածայինն գիտութեան։

ԳՕԴՈՒԱԾ Զ

Քաղագս զանազանութեան աստուածային գիտութեան։

Ամենապարզ է գիտութիւն Աստուած, և ոչ որ տարաձայնի ի մասինս յայսմիկ. այլ զօրութեամբ է բազմապատիկ, զի է համազօր բնաւից այլ և այլ գիտութեանց՝ որ իսկապէս զանազանին յիրերաց, և զի չկարեն ըմբռնել զայն միտք մեր առանց զանազանելոյ։

Ընդ ըստ առարկական տեսութեան զանազանի գիտութիւնն Աստուծոյ նախ՝ի հակիրճ և յաղաւ։ Այլ կատար է ձանաչումն իրաց՝ որոց չիք ինչ ընդ վէհս առ-

տուածայինս. որպիսի է ինքն Աստուած, և ամենայն ինչ կարելի: Իսկ ազատ է Ձանաչումն իրաց՝ որ յազատ վճիռս Աստուծոյ Հայրն, որպիսիք են ամենայն ինչ եղեալ կամ լինելի:

Երկրորդ՝ զանազանի 'ի պետական և 'ի գործնական: Տեսական է՝ որ յածի զանեղանելեօք, որպես է ինքն Աստուած, և ամենայն ինչ կարելի՝ որ ոչ գայ 'ի լինելութիւն: Գործնական է՝ որ յածի զլինելեօք, որպիսի է ամենայն ինչ եղական կամ եղանելի:

Երրորդ՝ զանազանի 'ի գիտութիւն հաճութեան և փոյթութեան: Գիտութիւն հաճութեան յածի զբարեաւ ծր և է կարգի. իսկ գիտութիւն տհաճութեան յածի զչարեօք, որպիսի են մեղք:

Չորրորդ՝ զանազանի 'ի գիտութիւն պարզ էմայութեան և 'ի գիտութիւն պետութեան: Պարզ իմացութեան կոչի Ձանաչումն այն՝ որ կանխէ քան զամենայն վճիռ, և յածի զպարզ կարելեօք. իսկ գիտութիւն տեսութեան՝ Ձանաչումն Աստուծոյ ինքեան և իրաց առհասարակ եղականաց և լինելեաց 'ի ժամանակի. որով գիտութիւնս այս գտանի ըստ մասին հարկաւոր, և ըստ մասին ազատ և հնարաւոր կամ ներբնդունական:

Օ երից առաջնոց զանազանութեանցն միաբանին ամենայն դասք աստուածաբանից, այլ զերրորդս վէճ սաստիկ յուզի: Կանղի Թոմայականք բաւական համարին զայն, այլք անբաւական՝ այնու զի բաց 'ի Ձանաչմանէ կարելեաց և պարզ ապառնեաց, ընդունելի է և Ձանաչումն ապառնեաց պայմանելոց, զոր մոլինեանք և պատշաձականք և օգոստինեանք ճշմարիտ գիտութիւն կոչեն. զի յածի այն զկրօք, որք 'ի միջասահմանին կան ընդ կարելիս և ընդ պարզ ապագայս. վասն որոյ և համարին զայն ազգ իմն պարզ իմացութեան:

Ընդ Թոմայեանք, որք 'ի ձեռն վճռոյ Եւթ համարին Ձանաչել Աստուծոյ զապագայս, մերժեն զմիջական գիտութիւն իբր նոր իմն. այլ ոչ կարացեալ զդէմ ունել յայտնի վկայութեանց սուրբ գրոց և Հարց՝ որք ընդունին յԱստուած զգիտութիւն ապագայց պայմանելոց, ստիպին և ինքեանք ընդունել զգիտութիւնն զայն: Այլ առ 'ի միաբանել զայն ընդ վարդապետութեան իւրեանց, ասեն Ձանաչել Աստուծոյ զպայման-

նեալ ապագայս ՚ի վձիռս՝ որ յաստուածակոյս կողմանէ են պարզ ապագայք, և ՚ի կողմանէ իրացն ևեթ են պայմանեալք։ Որով իմանան զայն վձիռս՝ որովք սահմանէ Աստուած առնել ինչ, եթէ այս ինչ կամ այն դիցի պայման. որ և այն դարձեալ յառարկական վձիռս իւր կախեալ կայ։ Օրինակ իմն. սահմանեալ էր Աստուծոյ դարձուցանել զՊետրոս, եթէ սահմաներ շարժել զնա հնորհօք իւրովք ՚ի զեղջ. արդ եթէ ըստ այսմ երկրորդ վձռոյ ետ նմա զգործունեայ հնորհս իւր առ ՚ի շարժել զնա ՚ի զեղջ, տեսանել ետես յայսմ երկրորդ վձռի հաւաստեաւ զհանդերձեալ զեղջ նորա. վասն զի զպայմանն, զորմէ կախեր դարձ նորա, ինքն իսկ սահմանեաց. ուր եթէ չէր սահմանեալ զայն պայման, չտեսանէր զհանդերձեալ դարձ նորա, այլ զհակառակն։

Ապա յայս յանկի խնդիրն, Թէ իցէ ընդունելի վձիռ այսպիսի յաստուածակոյս կողմանէ բացարձակ, և ՚ի կողմանէ իրին պայմանեալ, որպէս Թէ այսպէս վճռել Աստուծոյ. Սահմանեմ էրկել զՊետրոս, եթէ հաւանեսցի նա հնորհացն՝ զոր պատ նմա, ըէ և կարէցէ ընդդէմ դառնալ ոմն։ Եթէ իցէ ընդունելի վձիռ այսպիսի, ջնջէ տեղի միջական գիտութեան. իսկ եթէ իցէ անընդունելի, հարկ լիցի տեղի տալ միջական գիտութեան, որ ոչ այլ ինչ է՝ բայց գիտութիւն ապագայից պայմանեալոց։ Ծոմայականք ընդունելի ասեն զայն, զի առանց այնորիկ ոչ է մարթ ըմբռնել զստոյգ Ճանաչումն ապագայից պայմանելոց. քանզի Աստուած չկարէ տեսանել զայնս յինքեան, զի ոչ գալոց են յէութիւն. և ոչ ՚ի մերձաւոր պատճառս նոցա այսինքն ՚ի կամս մարդոյ կարէ տեսանել զայնս, զի ոչ միայն անմիտ յերկաքանչիւր կողմանս են, այլ առ ՚ի չգոյէ պայմանին՝ և ոչ ընտրութեան գոյ տեղի ՚ի նոսա։ Նայ ապա ՚ի ձեռն ասացեալոցս ևեթ վձռոց Ճանաչել զայնս Աստուծոյ։

Իսկ այլ աստուածաբանք մերժեն զայսպիսի վձիռս իբր անծանօթս Ճարց, ոչք ըստ Թոմայականաց իսկ խոստովանելոյ ընդունին ընդհակառակն գիտութիւն ապառնեաց պայմանելոց։ Եւ առանց իսկ այսորիկ ընտրելի համարին ընդ սրբոյն Օգոստինեայ խոստովանել գիտութիւն, քան յայնպիսի վձիռս ապաստանել՝ զորս ոչ ՚ի տուրբ գիրս և ոչ առ Ճարս է գտանել։

ԳԼՈՒԽ Ը

ՅԱՂԱԳՍ ԿԱՄԱՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Թէպէտ և առհնապարզ բնութիւն է Աստուած և բնաւին անբաժանելի, թէպէտ և կամք նորա և ներգործութիւնք ոչ այլ ինչ են՝ քայց էութիւն նորա կատեղող և արարող, այլ քանզի չկարեմք մեք ըմբռնել զներգործութիւնս նորա՝ եթէ ոչ համեմատելով առ մարդկայինս, վասն այսորիկ զանազանեմք ՚ի նմա այլ և այլ կամս ըստ զանազանութեան իրաց՝ զորս կամի, և ըստ եղանակին՝ որով կամի։ Եւ զանազանութիւնքս այսոքիկ ոչ օտար ինչ են ՚ի բանից սրբոց Հարց և ՚ի վարդապետէ սուրբ գրոց։

Աստուածաբանք զանազանեն զԱստուած նախ և առաջին՝ կամս ցուցական և կամս բարեհաճութեան. որ և կոչին անյատուկ և յատուկ կամք։ Ցուցականաւն ե ի մանաւ զամենայն արտաքին նշանս՝ որ ցուցանեն կամել ինչ Աստուծոյ, թէպէտ և իսկապէս չկամիցի զայն։ Ինդրամատեաց Աստուած Աբրահամու զենուլ զորդին իւր զԻսահակ. ցուցական էր այս կամք, զի չկամէր Աստուած զզենումն Իսահակայ, զի և չեթող իսկ զենուլ. այլ կամէր՝ զի հայրն հաւատոյ հանդէս արասցէ հնազանդութեան իւրոյ և վստահութեան ՚ի խոստումն, զոր խոստացեալն էր նմա Աստուած. (ԾՒ. իբ)։ Կամ խաբէութեան եւ եկաց առաջի Աստուծոյ պատրել զԱբրաամ, և լինել ոգի սուտ ՚ի բերանս մարգարէից նորա. և ասէ նմա Աստուած. «Պատրեացես և կարասցես, եւ և արա այդպէս ,,. (Գ. ԹԳ. իբ. 22)։ Կամէր Աստուած զնահատութիւնն զայն, այլ Թոյլ եւեթ տայր զիւին՝ առնել զնահատութիւնն. էր այն յատուկ կամք, այլ ցոյց եւեթ կամաց։ Ասպիսի է և Երիսաոսի բանն առ մանուհին (Ած. ԺԲ. 27.) «Զոր զոր ինչ առնելոց ես, արա վաղվաղակի ,,։ Պաքէն չկամէր փրկիչն հատատել զՅուդա ՚ի չարութեանն, այլ Թողացուցանէր եւեթ կատարել զմանուածութիւնն։ Իսկ կամք բարեհաճութեան այն է, որով կամի Աստուած իսկապէս՝ որ

ինչ կամելն յուցանէ. որպէս այն՝ որով կամի զի արասցուք մեք զբարին. զի հրամայէ զայն և վարձատրէ, և եթէ չառնեմք՝ պատուհասէ զմեզ։

Նշանք աստուածային կամաց են հինգ. հրաման, խրատ, արգել, Թոյլտուութիւն և գործ։ Ի սոցանէ գործն միաբանի միշտ ընդ կամն բարեհաճութեան. զի թէ չհաճէր Աստուած ընդ ինչ, ապաքէն և չգործէր զայն. իսկ Թոյլտուութիւն ոչ միաբանի երբեք ընդ բարեհաճութեան, զի՝ ի Թողացուցանելոյ նորա զբարիս ոչ գիտէ գայ հաճել ընդ այնս. զի ընդ բարին եթէ հաճի Աստուած, իսկ չարին՝ Թոյլ եթէ տայ։ Իսկ հրամանն, արգել և խրատ Թէպէտ և սովորաբար միաբանին ընդ յատուկ կամն Աստուծոյ, այլ ոչ միշտ. որպէս հրամանն Աստուծոյ առ Աբրահամ Թուէր նշան կամաց բարեհաճութեան, այլ յելից իրացն յայտնի եղև զի չէր այնպիսի։

Կամքն բարեհաճութեան զանազանի՝ ի նախընթաց և ի հետևորդ։ Նախընթաց կամք այն են, որով կամի ինչ Աստուած՝ մնածեալ զայն սոսկապէս առանց հանգամանաց իրին. որպէս կամել նորա զփրկութիւն ամենայն մարդկան։ Կամի Աստուած փրկել զամենեսեան, վասն որոյ և տայ ամենեցուն զՆարս փրկութեան և շնորհս իսկապէս բաւականս առ՝ ի կատարել զպատուիրանս իւր. այլ կամի առանց նկատելոյ զի կէաք՝ ի մարդկանէ արհամարհելոց են զշնորհս նորա և զՆարս փրկութեան։ Իսկ հետևորդ կամք այն են, որով կամի ինչ Աստուած նկատեալ և զհանգամանս իրին՝ որ կախին զկամաց մարդոյ։ Նման այսմ կամի Աստուած զփրկութիւն ամենայն մարդկան, այլ նկատելով զմանոյ հետևութիւն ընդդէմ շնորհաց իւրոց՝ կամի հետևորդ կամօք զդատապարտութիւն նոցա։ Որպէս դատաւոր զի ոչ զոք կամի մահանել՝ ի մահ, այլ՝ ի գործել ուրուք եղեռն մահապարտութեան՝ տայ զնա՝ ի մահ։ Ասէ Ապակեբերանն զնախընթաց կամս Աստուծոյ կոչէ առաջին, իսկ զհետևորդն երկրորդ։ Կամքն բարեհաճութեան զանազանի դարձեալ՝ ի գործառնէայ և յանգործ։ Գործառնէայ է, յորժամ Աստուած զամենայն խոչ և պատճառ հակառակ կամաց իւրոց մերժել կամի՝ ի բաց. և ըստ այսմ ասի. (Հռ. Թ. 19.) "Կամաց նորա ոչ

ոք կայ հակառակ ,, : Ոչ անգործ , յորժամ կամի ինչ Աստուած՝ առանց մերժելոյ զարգելս կամացն իւրոյ՝ ի բաց . և ըստ այսմ ասի (Գործ . ին . 37 .) “ Ո՞վ անկիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո . . . և ոչ կամեցարուք ,, : Եւ զարձեալ (Գործ . է . 53 .) “ Դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք ,, :

Ո՛անազանին զարձեալ կամքն Աստուծոյ՝ ի բաց յայտնի՛ և՝ ի պայմանեալ : Նացարձակ է , որ արտաքոյ զամենայն պայման . որպէս որ ինչ արար և առնէ Աստուած առ մարդիկ առանց ինչ զուգընթացութեան կամաց նոցա . զի կամեցաւ առնել զայնպարհ , և զմարդ՝ ի պատկեր իւր՝ տալով նմա միտս և կամս և անձնիշխանութիւն : Ոչ պայմանեալ կամք այն է , ուր զգործակցութենէ ազատ կամաց մարդոյ կախի իրն կամեցեալ . որպէս կամէր Աստուած պաշտպանել Ժողովրդեան իւրում , ՚ի պահել նոցա զպատուիրանս իւր և ՚ի չպագանել երկիր աստուածոց ստարաց : Այլ ոչ է պարտ շփոթել զբացարձակ կամն ընդ գործունեայն . զի ամենայն կամք Աստուծոյ գործունեայք՝ բացարձակք ևս են , այլ ոչ ամենայն բացարձակք են գործունեայք . քանզի մարթի իսկ բացարձակ կամացն Աստուծոյ ոչ գալ յարդիւնս , որպէս յայտ է ՚ի պատուիրանացն՝ զորս ետ և կամի զպահպանութիւն նոցա յամենեցունց . սակայն բազումք չեհատեն և չպահպանեն զայնս :

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Մորթաբիանք զկամացն Աստուծոյ :

Պեղպագեանք և Պիսապեղպագեանք համարին միով ընդհանրական կամօք անխտիր և անզանազան կամել Աստուծոյ զփրկութիւն ամենայն մարդկան . և թէ չիք Աստուած հետևորդ կամք փրկելոյ զոմանս անվրէպ , այլ նախընթաց ևեթ կամք փրկելոյ զամենեսեան՝ որ կամիցին փրկիլ : Ընդ հակառակն Պաղուին և նախասահմանականք եղին՝ թէ չիք Աստուած որպիսի և իցէ կամք փրկելոյ զամենայն մարդիկ , այլ զնախասահմանեալս ևեթ : Եւ յանսեննեանք զմոլորութեան նոցա

զՀետ երթեալ, ցուցական լեր թ անյատուկ կամն դնեն Աստուած՝ փրկելոյ զմարդիկ։ Ա ան որոյ թէպէտ և ընդունին զգանազանութիւն բարեհաճութեան կամացն Աստուծոյ ի նախընթաց և ի հետևորդ, սակայն համարին զայն՝ յառաջ քան զսկզբնական մեղս նկատեալ. իսկ յետ նախատեսութեանն Աստուծոյ զսկըզբնական մեղս՝ զընտրելոց լեր թ զնախասահմանելոց ասեն կամել նմա զփրկութիւն։ Ա ան որոյ Յանսենիոս ընդ կիսապելագեան մոլորութիւնս համարի զասելն՝ թէ Քրիստոս վասն ամենեցուն մեռաւ. զոր Մոլինակենտիոս ց. դատապարտեաց, և վճիռ նորա ընդունելի եղև կաթողիկէ եկեղեցւոյ, հատատեալ ի սուրբ գիրս, որպէս մեայ մեզ տեսանել ի ստորև։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Զի Աստուած նախընթաց կամօք բարեհաճութեան, ևս և յետ կանխատեսութեան սկզբնական մեղաց, կամի իսկապես փրկութիւն ամենայն մարդկան։

Բանք սուրբ գրոց, որ վկայեն՝ զի կամի Աստուած զփրկութիւն մեր, հային ի պայման անկելոյ բնութեանս, և որ ինչ առ ի փրկութիւն մեր է՝ կամի Աստուած իսկապես. որպէս զի որ ոք ոչն կամի գործել զփրկութիւն իւր, հակառակ կայ ընդհանուր Աստուծոյ և կամաց. ապա ուրեմն ոչ զնախասահմանելոցն եր թ կամի նա զփրկութիւն։

Պանդի ասէ առաքեալն (ա. Տիմ. բ. 1.) "Այս արդ աղաչեմ նախ քան զամենայն առնել աղօթս խնդրուածս պաղատանս գոհութիւնս վասն ամենայն մարդկան... զի այն է բարի և ընդունելի առաջի փրկչին մերոյ, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն,,։ Այդ ի բանէ աստի առաքելոյն յայտ է, զի Աստուած այնպէս կամի զամենայն մարդկան զփրկութիւն՝ որպէս առաքեալն վասն ամենեցուն պատուիրէ աղօթել. և քանզի առաքեալն ոչ զոք ի բաց հանէ, այլ վասն ամենեցուն առհասարակ պատուիրէ աղօթել. ապա և Աստուած զամենեցուն առհասարակ կամի զփրկութիւն։

Յն առաքեալսպետան ասէ (Բ. Կր. Ջ. 9.) "Ալ յա-
մեցուսցէ տէր զաւետիսն, որպէս ոմանք յամրին համա-
րին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի՝
եթէ ոք կորիցէ, այլ զամենեցունն հասանել յապաշ-
խարութիւն ,,։

Ընդունայն համարիմք ածել առ այս վկայութիւնս
ի Նարց, որք առհասարակ զնոյն Աչմարտութիւն ամե-
նայն ուրեք յեղյեղեն, զոր և Յանսենիոս խոստովա-
նի. այլ զի նա ինքն կամակորէ զբանս ինչ սրբոյն Ա-
գոստինեայ ի նպաստ իւր, զնորին սրբոյ զբանսն կա-
րևոր համարիմք յիշատակել հակառակ նորին զի ասէ.
(յղ. գրոյ ի Նոգ. գլ. ԼԶ.) "Եթէ բարի կամք՝ ո-
րով լինի հաւատալ՝ է պարգև Ստուծոյ, զի է զի ոչ
ամենեցունն պարգևի, ուր Ստուած կամի՝ զի ամենայն
մարդիկ կեցցեն և ի գիտութիւն Աչմարտութեան ե-
կեսցեն։... Պաքէն կամի Ստուած զի ամենայն մար-
դիկ կեցցեն, իբր ոչ եթէ բառնալով ի նոցանէ զանձն-
իշխանութիւն, այլ զի ի վարելն նովաւ ի բարին կամ
ի չարն՝ դատեսցին արդարութեամբ։ Ստ այսմ օրի-
նակի ի մերժել անհաւատից զհաւատս աւետարանին,
զդէմ ունին կամացն Ստուծոյ. իբր ոչ եթէ չաղ-
թեն նմա, այլ անձամբ զանձինս զլանան ի գերագոյն
բարւոյն, և զիորձ առնուն պատուհասիւք զկարողու-
թեան նորա, զորոյ արհամարհեցինն զնորհս և զողոր-
մութիւն ,,։

Ա Ո Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ստ. Ա. Եթէ կամէր Ստուած զփրկութիւն ա-
մենեցուն, ամենեքեան փրկէին. քանզի ըստ մարգա-
րէին "Ստուած մեր յերկինս և յերկրի զամենայն
զոր ինչ կամեցաւ, և արար ,,. (Ղմ. ՃԺԳ. 11)։

Պե. Պաքէն կամացն Ստուծոյ ոչ ինչ կարէ կալ
հակառակ, եթէ միայն կամիցի ինչ բացարձակ կամօք,
առանց ինչ պայմանի գործակցութեան մարդոյ. այլ
մարթի իսկ է կալ հակառակ կամաց նորա պայմանելոց,
որ կախին զգործակցութենէ մարդոյ։ Կամէր Ստուած
զի հաւատարիմ կայիր հրեշտակք առհասարակ. այլ
բազումք ի նոցանէ ապստամբեցին։ Կամէր յարատևել

Աստծոյ յարդարութեան և՝ ի սրբութեան. այլ նա հակառակ եկաց կամացն Աստուծոյ։ Կամէր Աստուած փրկել զՀրաւսաղէմ, այլ Հրաւսաղէմ մերժեաց զկամն Աստուծոյ. վասն որոյ ասէ (Մտթ. իբ. 37.) "Հաւ նմա անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր ունիցի ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, և ոչ կամեցարուք"։ Եւ դարձեալ (Ղուկ. ե. 4.) "Ո՛չինչ լինչ առնել էր այսօր իմում, և ես ոչ արարի. մնացի զի բերցէ խաղող, և եբեր փուշ"։ Եւ դարձեալ (Ղուկ. է. 31.) "Աստապարանոյգ և անթափաթ սրտիւք և ականջօք, դուք հանապազ Հոգւոյն սրբոյ հակառակ կայք"։

Այլ մի՛թէ կամքն Աստուծոյ՝ ի փրկել զմեզ այսու ամենայնիւ ոչ կատարի։ Ապրի՛ւ իսկ է ասել, զի և՝ ի հակառակել մարդոյ ընդդէմ շնորհացն Աստուծոյ՝ կամք նորա առնուն զկատարումն։ Կամի Աստուած իսկապէս զփրկութիւն մեր, այլ պայմանաւ. այսինքն զի եթէ ոչ ընդդէմ դառնայցեմք շնորհաց նորա։ Կամի փրկել զմեզ շնորհօք իւրովք, այլ կամի զի և մեք գործակից լինուք կանխաժաման շնորհաց նորա. կամի որպէս վարձատրելով փրկել զմեզ, վասն որոյ և՝ ի չկամել մեր գործակից լինել շնորհաց նորա՝ սպառնայ պատուհասել զմեզ։ Այսպա ըստ ամենայնի կատարին անվրէպ կամք նորա, թէպէտ լինուք և թէ ոչ գործակիցք շնորհաց նորա. զի եթէ լինուք, վարձատրէ և փրկէ զմեզ. իսկ եթէ ոչ, պատուհասէ և պատապարտէ։ Վասնզի չէն անպայման կամք նորա, այլ պայմանաւ անձնիշխանութեան կամաց մերոց. վասն որոյ ասէ սուրբն Գրիգոր Նազիանզոսացի. "Պէտք պատապարտեցի մարդ արդարութեամբ և թէ փրկեցի ողորմութեամբ, կատարին ամենազօրին կամք"։ (Նազ. մժե)։

Ա՛ռարկ. Ե. Առաւ ամենայն և ամենեքեան՝ ի սուրբ գիրս ուրեք նշանակէ և զբաղումս. որպէս այն որ ասէ (Ծն. ջ. 11.) "Պակասեաց ամենայն մարմին զՀանապարհս իւր՝ ի վերայ երկրի"։ Այսպա Աստուած ոչ զամենեցուն կամի զփրկութիւն. քանզի այլ ուրեք յայտնապէս՝ ի բաց հանէ զոմանս, և մինչեւ իսկ ծնեալ էին որդիք Նահակայ՝ ասէ. "Ո՛չ Յակոբ սիրեցի, և զԵսաւ ատեցի"։ (Մաղ. ա. 2։ Հռ. Թ. 14)։

պէս. Լեզուակութիւնք մեր՝ ի բաց ևեթ ա֊նայն էին հաստատեալ, թերևս զօրէր ինչ առարկու֊թիւնդ. այլ բանք սուրբ գրոց՝ ի վկայութիւնն, զորս ածաք, ոչ ընդունին զայդ ամիսիսումն նշանակութեան, եթէ ըստ կապակցութեան իմաստից, և եթէ ըստ ժխտականին՝ զոր առաքեալսպետն յաւելու. "Ոչ կա֊մի՝ եթէ ոք կորիցէ,,: Իսկ առեալ Աստուծոյ զՅաւա՝ երբայաբանութիւն է, և զկետադասութիւն ևեթ նշա֊նակէ՝ որպէս՝ ի Ձառս սուրբ գրոց ասացաք, օրինակ իսկ՝ ի տէրունական բանէն ածեալ. զի զոր՝ ի Ղուկան ա֊սէ, (ԺՂ. 37.) "Լեզէ ոք գայ առ իս, և ոչ ատեայ զՀայր իւր և զմայր,,, և այլն. զնոյն՝ ի Մատթէոսն ասէ (Ժ. 37.) "Որ սիրէ զՀայր կամ զմայր առաւել քան զիս,,. և այլն: Այս թոզ զի ոչ զյաւիտենական փրկու֊թենէ է անդ բանն, այլ զժամանակաւոր բարեաց, զոր Աստուած խոստանայր իսրայելացւոց, և առաքեալն ցու֊ցանէ այնուհիկ զձերի ընդհս կոչման հեթանոսաց՝ ի հա֊ւատս:

Աղաղէ. Գ. Պայմանեալն կոչեցեալ կամք Աստուծոյ անտարի իմն է, զի և պայմանն այն կախի զկամս Աս֊տուծոյ. և դժպատեհ իսկ է Աստուծոյ կախիլ զկամս մարդոյ:

Պէս. Պայմանն այն կախի զկամսն Աստուծոյ ըստ Յանսենիոսի վարդապետութեանն, որպէս տեսցուք՝ ի Ձառս ընդհաց, այլ ոչ ըստ վարդապետութեան կաթո֊ղիկէ եկեղեցւոյ, ըստ որում կարող է մարդ և ազատ՝ հնազանդելոյ և զդէմ ունելոյ ընդհացն Աստուծոյ: Այս ոչ դժպատեհ է Աստուծոյ կամել ըստ ազատ գործակ֊ցութեան մերոյ փրկել զմեզ:

ՅՕԴՈՒԱԾ Գ

Զի Քրիստոս վասն ամենեցուն մեռաւ, և ոչ վասն բնտրելոց ևս:

Մեռանելն Քրիստոսի վասն մարդկան, և կամելն Աստուծոյ՝ զի ամենայն մարդիկ կեցցեն, կցորդ են ընդ միմեանս անբաժանելի. ապա որպէս կամքն Աստուծոյ

առ ՚ի փրկել զմարդիկ՝ ոչ զոք արտաքոյ ՚ի բաց, նոյնպէս և մահն Քրիստոսի։ Այլ ուրոյն ևս ցուցանի Հրաշմարտութիւնս այս ՚ի սուրբ գրոց. քանզի փրկիչն մեր ասէ. "Ինպէս սիրեաց Հայրն զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ,, (Յհ. Գ. 16)։ Որդի յաշխարհի ոչ ընտրեալք և նախասահմանեալք ևեթ են, այլ և ամենայն մարդիկ. ապա յայտ է զի Քրիստոս ոչ վասն ընտրելոց ևեթ մեռաւ։ Եւ դարձեալ ասէ. (Յհ. Ձ. 39.) "Այս են կամք Հօր իմոյ՝ որ առաքեացն զիս, զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից,,։ Որդի ոչ նախասահմանեալք ևեթ տուեալ էին Քրիստոսի, այլ և անարգեալք. քանզի ասէ (Յհ. ԺԷ. 12.) "Այս պահէի զնոսա յանուն քո՝ որով ետուր ինձ, և պահեցի. և ոչ ոք ՚ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորըստեան, զի գիրն լցցի,,։ Այսպա յայտ է զի և որդին կորըստեան տուեալ էր նմա ՚ի Հօրէ, և վասն նորին իսկ եկեալ էր Քրիստոս ՚ի մեռանել. վասն որոյ ասէ սուրբն Ոգոստինոս (՚ի պղ. խը.) "Մատնիչն Յուդաս եթող զարծաթն՝ որոց զվարդապետն իւր վաճառեալ էր, ոչ ածեալ զմտաւ՝ զի գինք էին փրկութեան իւրոց, որով և գինքն փրկանաւորեալ էր վարդապետին,,։

Յուցանի դարձեալ ՚ի բանից առաքելոյն (Բ. Կոր. Ե. 14.) "Եթէ միոն փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին, և ՚ի վերայ ամենեցուն մեռաւ,,։ Որդ որպէս չէք երկբայել զի Գամաւ ամենեքին մեռան՝ առանց ուրուք ՚ի գատակնքէ անտի մահուն զերծ մնալոյ, նոյնպէս ապա և մահն Քրիստոսի վասն ամենեցուն փրկութեան էր, առանց զոք ՚ի մարդկանէ ՚ի բաց Հանելոյ։ Եւ դարձեալ ասէ (ա. Կոր. Ը. 11.) "Եւ կորնչեցի տակաւ եղբայրն ՚ի քումդ գիտութեանն, վասն որոյ Քրիստոս մեռաւ,,։ Այսպա ուրեմն ոչ վասն ընտրելոց ևեթ, այլ և վասն կորուսելոց մեռաւ Քրիստոս։

Եւ դարձեալ ասէ (Հռ. Ը. 32.) "Որ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա,,։ Եւ դարձեալ (ա. Տիմ. Բ. 5.) "Ի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն,,։ Եւ առաքեալն Յովհաննէս ասէ (ա. Յհ. Բ. 1.) "Ունի քաւութիւն մե-

զաց մերոց. և ոչ եթէ մերոյն միայն, այլ և ամենայն աշխարհի ,,։

Յետ այսչափ բանից սուրբ գրոց, զորս և չարք առ հասարակ իմանան ՚ի վերայ ամենայն մարդկան, աւետ լորդ համարիմք զվկայութիւնս նոցին ածել այսր՝ որովք և ՚ի վարդապետութիւնս իւրեանց Հաստատեն զայս չմարտութիւնս։ Նանգանակն նիկիական ամենեցուն նոցա դաւանութիւն է, և եկեղեցի սուրբ ՚ի ձեռն տիեզերական այնր ժողովոյ ուսուցանէ մեզ դաւանել, զի Վրիստոս ,,Յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ՚ի յերկինից մարմնացաւ ,,։ Լորդ զայս դաւանութիւն ոչ ՚ի բերան ընտրելոց եւեթ դնէ եկեղեցի սուրբ, այլ ՚ի բերան ամենեցուն. զի եթէ վասն ընտրելոց եւեթ էր մարմնացեալ Վրիստոս, չէր ումեք յուսալ ՚ի նա և դաւանել զնա փրկիչ իւր, առանց գիտելոյ նախ զընտրութիւն իւր. որ անտեղեաց է անտեղի։

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Պաւլ. Ա. Սուրբ գիրք զմահն Վրիստոսի ոչ վասն ամենեցուն փրկութեան ասէն լեալ, այլ բազմաց. զի ինքն իսկ փրկիչն մեր ասէ. (Մատ. ի. 28.) ,,Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց ,,։ Եւ դարձեալ (անդ ին. 28.) ,,Այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ՚ի վերայ բազմաց հեղու ,,։ Եւ դարձեալ առ ՚ի ցուցանել զի վասն ընտրելոց եւեթ զարիւն իւր հեղոյր՝ ասէր ցառաքեալսն (Ղ կ. իե. 19.) ,,Այս է մարմին իմ որ վասն բազմաց տուեալ,... այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղոյ ,,։ Եւ առաքեալն ասէ (Հբր. թ. 28.) ,,Քրիստոս և Վրիստոս միանգամ մատուցեալ պատարագ առ ՚ի բառնալոյ զբազմաց բազմաց ,,։

Պե. Սուրբ գիրք ՚ի բանս յայդոսիկ զարդասեաց մանուն Վրիստոսի խօսին, և ոչ եթէ հակասեն այլուր ասացելոցն։ Վրիստոս առ ՚ի փրկել զամենայն աղգ մարդկան եկն յաշխարհ, և վասն ամենեցուն մատոյց զանձն

պատարագ, և վասն ամենեցուն ընկալաւ զնորհս կա-
բևորա առ ի փրկութիւն, որովք եթէ կամիցին՝ կարեն
հասանել փրկութեան: Այլ բազումք ի մարդկանէ
ապախտ առնեն զնորհս Աստուծոյ, որով և զրկին ի
փրկութենէ: Արդ Քրիստոսի կամք և դիտաւորու-
թիւն էր փրկել զամենեսեան. այլ զի ոչ ամենեքին
փրկեցան, այլ ընտրեալքն եւեթ, յեղս իրացն ակնար-
կեն սուրբ դիրք՝ բազումն փոխանակ ամենեցուն ասե-
լով: Ոչ այս այսպէս իմանան Նարք. և սուրբ Հակեբե-
բանն՝ ի մեկնութիւն այդր բանի (Ա՛ռն. ձառ ձբ.)
ասէ. "Այն (այսինքն արիւն գառանցն) հեղաւ ի փրը-
կութիւն անդրանկացն, և այս ի թողութիւն մեղաց
ամենայն աշխարհի,,:

Եւ դարձեալ որպէս բառս ամենեքեան ուրեք ուրեք՝ի
սուրբ գիրս ըստ երբայեցաբանութեան նշանակէ բազում.
որպէս այն զի ասէ (Ծն. ՀԷ. 11.) "Ապականեաց ամե-
նայն մարմին զճանապարհ իւր,,. նոյնպէս և բազում
ուրեք ուրեք նշանակեն զամենեսեան, որպէս այն որ
ասէ. "Ա՛ի հաց, մի մարմին եմք բազումքս,,:

Աստուած Բ. Քրիստոս ոչ վասն ամենեցուն աղօթեաց
առ Հայր, զի ասէ. (Յհ. ԺԷ.) "Ես վասն աշխարհի
աղաչեմ, այլ վասն նոցա՝ զորս ետուրն ինձ,,: Ոչ ի ե-
թէ վասն ամենեցուն էր աղօթեալ, լսելի լինէին ան-
երկբայապէս աղօթք նորա. զի ասէ (Յհ. ԺԱ. 42.)
"Գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ,,: Եւ առա-
քեալն ասէ (Եբր. Է. 7.) "Լսելի լինէր առ Աստու-
ծեանն,,: Ապա պարտ է ասել ընդ Յանսենիոսի, զի
Քրիստոս ոմանց մաղթէր փրկութիւն, ոմանց քաւու-
թիւն, և ոմանց հաւատաս առանց սիրոյ, և ըստ այսմ
վասն երիցն ևս դասուց մեռանէր:

Պե. Ոչ իմաստս այնր մասին աղօթիցն Քրիստոսի,
որով առանձին վասն առաքելոցն աղօթէր, ինքնին իսկ
յայտ առնէ ի ստորև (ի Կոմարն 20.) ուր յաւելու.
"Աստ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ա-
մենայն հաւատացելոց,,: Ոչ ասն որոյ զաղօթեն ևս
Քրիստոսի պարտ է նովին պայմանաւ իմանալ, որով և
զկամեցն զփրկութիւն մարդկան. այս ինքն զի աղօթիւքն
բանայր զփակեալ դուռն երկնաւոր դրախտին, զի որք
միանգամ կամիցին՝ մտանել կարասցեն: Ընդարձան էր

փրկչին ըստ մտացն Յանսենիոսի աղօթել, որով յա-
ձախէին յոյժ մեղք այնոցիկ՝ որք յետ ընդունելոյ ըզ-
քաւութիւն մեղացն և հաւատոյ, ոչ կարելով յարա-
տևել կամ զերծն Աստուծոյ ունել յանձինս՝ դատա-
պարտին։

ԳՕԴՈՒԱԾ Դ

*Զի կամք Աստուծոյ և մահն Քրիստոսի վասն փրկութեան ամե-
նեցուն ունի ինչ առաւելութիւն վասն նախասահմանելոց։*

Ցուցանի՛ ի սուրբ գրոց. "Յուսացեալ եմ Աս-
տուած կենդանի՝ որ է փրկիչ ամենայն մարդկան, մա-
նաւանդ հաւատացելոց,,. (ա. Տիմ. դ. 9)։ Արդ եթէ
հաւատացեալք առաւելագոյն ընդունին առ՛ի
փրկութիւն, ապա և առաւել նախասահմանեալք. զի
ամենայն նախասահմանեալ պարտի գոլ հաւատացեալ,
այլ ոչ ամենայն հաւատացեալ է նախասահմանեալ։
"Ով վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն
հաւատացելոց,,. (Յհ. ժէ. 20)։ Այս քանզի ոչ ամե-
նեքին օգտեցան յաղօթիցն Քրիստոսի, ապա յայտ է՝
զի յաղօթել իւրում առաջին կամաք վասն ամենեցուն՝
երկրորդ և գործնեայ կամաք աղօթեաց վասն նախա-
սահմանելոց։

Այլ յամենայն բանից աստի յայտնի է, զի թէ-
պէտ Աստուած յատուկ կամաք բարեհաճութեան կամի
զփրկութիւն ամենեցուն, և ոչ ումեք զլանայ զչնորհս
իւր, և այսր կամաց արդասիք են՝ զի՛ ի ձեռն վաստա-
կոց և արժանեացն Քրիստոսի տայ ամենեցուն զկա-
րևորս առ՛ի փրկութիւն, սակայն չնորհք նորա ոչ նոյն
են յամենեսին, այլ յոմանս աւելի, յոմանս նուազ, և
ազգոզագոյն՛ի նախասահմանեալսն քան յայլս. տէր է
Աստուած պարգևաց իւրոց, և բաշխէ իւրաքանչիւր ու-
մեք որպէս և կամի, և չեն ումեք իրաւունք բողոքելոց
զի նուազ քան զայլս ընկալաւ, զի ամենեքեան ընդու-
նին զկարևորն և զբաւական աւելի քան զարժանաւո-
րութիւն իւրեանց, քանզի ձիւ ամենևին են չնորհքն
Աստուծոյ։

Իսկ տղայոց փրկութիւն ոչ որպէս զչափահասին է։ Յառաջ և յետոյ քան զգալուստ փրկչին պարտ էր և է չափահասից գործակից լինել Հոգւոյն Սրբոյ՝ որ կանխէ, և չպակասէ երբեք ումեք՝ թէպէտ փրկելոց և թէ կորուսելոց, այլ երկաքանչիւր իւրեանոյ կամօքն փրկին կամ կորնչին։ Զի Հոգւոյն ոչ միայն պատրաստեալ է նոցա զկարևորս առ՝ի փրկութիւն, այլ և կանխէ տալ իւրաքանչիւր ումեք հոգւոյ ուր և պէտք իցեն՝ի պահպանութիւն պատուիրանաց իւրոց։ Իսկ մանկունք, որոց չև ևս բացեալ է բանականութիւն և չեն նոցա տակաւին ազատ կամք, առ՝ի կիր առնուլ զՀոգւոյն Սրբոյ և զՆարս փրկութեան, յամենայն ժամանակի հաւատովք ծնողացն առաւելապէս փրկեցան և փրկին։ Եւ սակայն զի Հոգւոյն այն և հնարք փրկութեան՝ի տեառնէ է, Աշմարտապէս ապա ասեմք զի կամի Հոգւոյն յատուկ կամօք և զփրկութիւն նոցա, թէպէտ և ոչ դուն ուրեք անհոգութեամբ ծնողացն և կամ յարկածից լինչ պատահէ նոցա անկնիք մեռանել։ Այլ ուր չափահասքն պատուհասին վասն հակառակ կալոյ Հոգւոյն Սրբոյ, իսկ մանկունք զի ոչ յանցանօք իւրեանց մնան անկնուք, զրկին և եւթ՝ի գերբնական երանութենէ՝ որ ձրի պարգև Հոգւոյ է, և ոչ ումեք պարտի զայն Հոգւոյն յատուկ, որպէս՝ի Հառս սկզբնական մեղաց ցուցցուք՝ի ստորև։

ԳԼՈՒԽ Թ.

ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱՀՆԱՄՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Նախահնամութիւն կոչեմք զտեսչութիւն աշխարհի ըստ օրինաց՝ զոր եդեալ է Հոգւոյն Սրբոյ, և որովք զամենայն լինչ՝ի միասին և զիւրաքանչիւր լինչ ուրոյն ուղղէ՝ի նպատակն սահմանեալ յիմաստութենէ իւրմէ։ Զհզօրիւտ ծանօթութիւն աստուածախնամ տեսչութեան ընծայեն մեզ սուրբ գիրք, թէ որպէս խնամք նորա առ ամենայն լինչ տարածանին՝ ձգտեալ՝ի ծագայ մինչ՝ի ծագս, և գարմանեալ զամենայն քաղցրութեամբ. (Իմաստ. Ը. 1)։ Զոր ին ուսուցանեն մեզ թէ

*ոչպէս Թագաւորութիւնք և աղգք ՚ի ձեռին Աստուծոյ են, և փոփոխել զնոսա ոչպէս և կամի. պատմութիւն նախահաստեղծիցն և նահապետաց, իսրայելացւոց ընդ առաջնորդութեամբ Յեսուիսի և ընդ մարգարէիւք, և պատմութիւն Դրիատոսի և առաքելոց և նախնի հաւատացելոց, ոչ այլ ինչ է՝ բայց պատմութիւն նախախնամութեանն Աստուծոյ: Աստուած է անդ արարիչ և պահպանիչ և իշխեցող ամենայնի, որ պատուհասէ և վարձատրէ, խոնարհեցուցանէ զաղգս և բարձրացուցանէ ոչպէս և կամի ըստ բարկութեան և ըստ ողորմութեան իւրում. խաղաղութիւն և պատերազմ, կեանք և մահ ՚ի ձեռին նորա, "Ոչ զմիօրինակ խնամ ունի ամենեցուն,,. (Յհաւհ. գ. 8.) "Դանգի և ոչ Աստուած այլ գոյ բաց ՚ի քէն, որում փոյթ իցէ վասն ամենեցուն,,. (Յհաւհ. ԺԲ. 13:) Ոչ ինքն իսկ փրկիչն մեր ուսուցանէ մեզ (Մատ. գ. 26: Ղ Կ. ԺԲ. 22): Արդարև Թըռչունք երկնից ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ՚ի շտեմարանս, և Աստուած կերակրէ զնոսա. և շուշանն վայրենի ոչպէս աճէ, ոչ ջանայ և ոչ նիւթէ, և Աստուած այնպէս զնա փառաւոր քան զՍողոմոն զգեցուցանէ: Ոչ Թէ ոչպէս չանկանի Տնձղուկ մի յերկիր, և ոչ մազ մի սպիտակ առնի կամ Թուխ առանց Աստուծոյ: Արդ ասի զՀետ բերէ զինամս Աստուծոյ ՚ի վերայ մարդկան. զի եթէ զմանունս, ևս առաւել զմեծամեծաց ունի խնամ: Ա՝ան որոյ Կղեմէս աղէքսանդրացի ոչ եթէ բանից, այլ գանից արժանի համարի զուբացօղս նախախնամութեան, և անաստուածս զնոսա անուանէ:

Բայց պարտ է գիտել՝ զի Աստուած ոչ միշտ ինքնին նախախնամէ զամենայն, այլ և ՚ի ձեռն երկրորդ պատճառաց. ոչ առ նուազ կարողութեան իւրոյ, ոչպէս սուրբ Աստուածային Խմաստասիրէ, այլ վասն բազում բարութեան իւրոյ՝ պատճառակից իւր զարարածս առնելով, և զիարս արարչական բնութեանն Հաղորդելով մարդկան: Բայց Թէպէտ իւրովի, և Թէ միջնորդաւ խնամիցէ, Հասանէ միշտ ընդՀանուր նպատակին, զմանանայն ոչ դուն ուրեք անտես արարեալ: Օ՚ի ոչ զամենայն ինչ կամի անպայման, այլ բազում ինչ և պայմանաւ. այլ զնոսին իսկ անկարգութիւնս, զոր Թո-

զայուցանէ ընդդէմ մանաւոր նպատակին, ուղղէ ՚ի վերջին և յընդհանուր նպատակն՝ զոր կամի անպայման կամօք։ Ա՚ն որոյ յաջողութիւնք և ձախորդութիւնք, բարիք և չարիք, և ամենայն որպիսի և իցէն դէպք, նորին կամայն արբանեկեն։ Ա՚ողացոյց նախաստեղծիցն անկանել, այլ զՀետ այնորիկ եցոյց զարդարութիւն իւր և զողորմութիւն ՚ի ձեռն խոստացելոց փրկչին, որով "Ա՚ռաւել ևս յաւելան ընորհքն ուր առաւել եղեն մեղքն,,։ Ա՚ռաքեաց զորդին իւր յաշխարհ առ՚ի փըրկել զմարդիկ. Հրեայք սպանին զնա, այլ մահուամբ նորա փրկեցաւ աշխարհ։ Ա՚յր ոչ եթէ պատճառք չարեացն իցէ Ա՚ստուած, որ արդելու իսկ զայն խստիւ. այլ յարգելուլ անդ՝ Թողու զանձնիշխան ազատութիւն մարդոյ, և Թոյլ տայ նմա առնել զոր կամի. սակայն որ ինչ և կամիցի մարդ և առնիցէ, չկարէ խափանել զընԹացս նախախնամութեան, և հակառակ կալ կամացն Ա՚ստուծոյ։

Ա՚յլ ոչ յաջողութիւնք չարաց, և արդարոց չարաչարութիւն, և որպիսի և իցէ անկարգութիւն ներդործեալ յերկրի, կարեն զնախախնամութիւնն Ա՚ստուծոյ յերկբայս կացուցանել։ Վ՚ասզի նա ոչ յաւիտենից այսուիկ չափի, այլ և զՀանդերձեալսն բովանդակէ. պատերազմ է կենցաղս և ժամանակ զինուորութեան. յանտի կեանս է յաղԹանակ, և ըստ իւրաքանչիւր գործոց վարձ կամ պատուհաս։ "Ա՚ն զի աստուածաբանն տեսչութեան, ասէ սուրբն (՚) գոստինոս, (յղ. փաղաքն Ա՚ստուածոյ գիրք ա. գլ. ը.) կամք եղեն պատրաստել յապայն արդարոց ղբարիս՝ յորս անարդարքն չուներիցին վայելել, և ամպարշտացն ղչարիս՝ որովք ոչ տանջեսցին բարեպաշտք։ Ա՚սկ զառաժամանակեայ ղբարիսն և ղչարիս Հասարակաբար երկոցունցն կամեցաւ մանաւանդ, զի մի՛ բարիքն տարփալիք լինիցին՝ տեսեալ և չարացն ընոյնս ունել, և մի՛ չարիքն լինիցին նոգկալիք՝ որովք յոլով անգամ և բարեգործքն վարակին։ Ա՚կայն խաիր բազում է ՚ի վարել անդ ըստ արժանեաց զաջողակ և զձախողակ անուանեալ դէպս։ Ա՚ն զի այր բարի ժամանակիւքն այնոքիւք՝ ոչ բարեօքն ամբարհաւաձէ, ոչ չարեօքն լքանի. իսկ չարն յայն սակս վըշտացեալն չարակրութեամբ, զի բարօրութեամբն զեղ-

ծումն առնու : Այլ և՛ ի տնտեսութեան այսոցիկ յայտնապէս ցուցանէ Աստուած յոլովակի զնուրն ներգործութիւն. վասն զի եթէ այժմ ակներև պատուհասէր զմեզ ամենայն, կարծիւր իմն թէ ոչ պահեսցի ինչ յեանուամն դատաստանի. և եթէ ոչ միւսմ մեղաց պատուհաս ածէր յայտնապէս, համարիւր արդեօք՝ թէ բնաւ չգուցէ նախախնամութիւն աստուածեղէն : Այսպէս ըստ յաջողուածոյն՝ թէ հայցողաց ոմանց ոչ շնորհէր զայն յայտնապէս առատութեամբ, ասեաք թէ՝ ոչ նորա լինել այսոցիկ. և զարձեալ եթէ ամենեցուն խնդրողաց տուեալ լինէր, կարծել գոյր՝ թէ սակս այնպիսեաց վարձուց միայն ունիցիմք պաշտել զնա. և պաշտօն այնպիսի ոչ եթէ բարեպարիշտս զմեզ առնէր, այլ յաւէտ ցանկասէրս և օգտախնդիրս : Այլ զի այսոքիկ այսպէս, ուր միանգամ բարիքն և չարքն զնոյնօրինակ տառապին, ոչ եթէ չկայցէ ընդ նոսա խտիր, այլ նու զի յերկաքանչիւրս նոյն անցք կրին : Վասնզի՛ ի նմանութեան անդ կրիցեն մնայ տակաւին կրեալացն անմանութիւն. և թէպէտ ընդ նովին վշտօք, ոչ նոյն է առաքինութիւն և ախտաւորութիւն : Որ օրինակ նովին հրով պայծառանայ ոսկի, և յարդ ծուխ առնէ. և նովին կամնասայլիւ խոզանք մանրին, ցորեան սրբի. և ոչ միւսը ընդ ձէթ խառնի սակս նովին մամլոյ ծանրութեամբն ձնշելոյ. այսպէս բռնութիւն նոյն մի՛ ի վերայ հասեալ՝ զբարիան փորձէ, մաքրագործէ, յատակէ, և զչարս դատէ, ապականէ և կորուսանէ ,, :

Ա. ՈՒ Ա. Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Աբակ. Ա. Այլ ընդէր ոչ խափանէ Աստուած զզմեզս, և նախատեսանելով՝ զի զչգծանելոյ է մարդ առաքինութեամբն, ընդէր չնորհէ նմա զայն :

Պաւ. Կամաւոր զչգծումն մարդոյ, թէպէտ և նախատեսեալ Աստուծոյ, ոչ կարէ փոխել զբնութիւն չնորհին, և զբարին առնել չար : Այլ ըստ իսկ Աստուծոյ վայելչագոյն, փոխանակ առնելոյ զմարդն՝ ի պատկեր իւր սպառ և անձնիշխան, առնել զնա կազմած մեքենաձև կամ՝ իբրև զանբան անասուն : Կատեալ զազատու-

Թիւն մարդոյ, եթէ չինքեան, եթէ յարգասիս իւր, հարկ է խոստովանել՝ զի է բարի և ամենամեծ բարի. նկատեալ չինքեան, քանզի կարէ բարեգործել. և յարգասիս իւր, քանզի կարէ նուաւս յաւիտենական երանութեան հասանել։ Պաքէն ընդ կարողութեան բարեգործելոյ կցորդ է՝ի մէջ և կարողութիւն գործելոյ զբար. բայց երկրորդս այս ոչ գայ Աստուծոյ, այլ՝ի բնութենէ և՝ի կամոյ մարդոյ։ Եւրդ ընկալեալ Աստուծոյ զկարողութիւն գործելոյ բարիս՝ եթէ մեք զբար գործեմք, եթէ կարողք ելոյ օգնականութեամբն Աստուծոյ արժանի լինել երանութեան՝ որ վասն ստեղծեալս եմք՝ թշուառանամք կամակար, եթէ զներելոյն Աստուծոյ և զերկայնմտութեամբն յաստի կեանս արհամարհեալ, և զխստութեան նորա յանտես զփորձ առնուցումք, զինչ յայնժամ կարիցեմք ասել, բայց զի արդար է Աստուած, և արժանի որոց գործեցաքն առնումք զհատուցումն։

Առ. Բ. Օ անհաւասարութիւն բնական ձրիոց, զազգի ազգի չարիս՝ որ թշուառացուցանեն զմարդիկ, զտառապանս և զհարստահարութիւն արդարոյ և զյաղթանակ ամպարշտի, զմեղս և զանօրէնութիւնս մարդկան, որպէս մարթ իցէ միաբանել ընդ արդարութեան բարութեան և սրբութեանն Աստուծոյ։ Ընդէր ոչ հաւասարապէս երջանիկս առնէ զմարդիկ. ընդէր ոչ խափանէ զմեղս։

Պէ. Ես՝ի պատասխանել այսմ, շատ է նախ ասել զի չկարել մեր հասու լինել նախախնամութեանն Աստուծոյ՝ ոչ հարկ՝ի վերայ ածէ ուրանալ զայն։ Աստուածային յայտնութիւն, հաւատք համօրէն ազգի մարդկան, բանն մարդկային, երկինք և երկիր վկայեն թէ գոյ նախախնամութիւն՝ որ հասանէ ամենայն ուրեք, և վարէ զտիեզերս ըստ բարոյականին և ըստ բնականին։ Այս պարտ է մեզ դաւանել զայն, որչափ և՝ի վեր իցէ քան զմիտս մեր։

Երկրորդ՝ զի այս անհաւասարութիւն պարգևաց բնութեան ոչ միայն պիտանի, այլ և կարևոր է մարդկութեանս։ Օ՛ի չէ մարթ կալ ընկերութեան իմիք առանց դասակարգութեան, և ոչ դասակարգութեան առանց անհաւասարութեան՝ որով անձինք կարօտիցին

միմեանց. ըստ այմ է իմանալ զՀրամանն արարչական "Ալէ է բարւոք մարդոյդ միայն լինել,,: Եւ այս հաստատեալ է ամուսնութիւն, յորմէ յառաջ գայ ընկերութիւն ընտանեկան՝ որոյ գլուխ է հայրն. աստի քաղաքաժողով ընկերութիւն, որ է աճումն ընտանեկանին: Եւ օրպէս մարթէր տան՝ի կարգի կալ, եթէ այն ինչ ծնեալ մանուկ հաւասարէր հօրն ըստ ուժոյ, ըստ մտաց և ըստ փորձոյ. և օրպէս մարթէր քաղաքի կալ՝ի խաղաղութեան, եթէ ամենեքեան անդ քաղաքացիք հրամայէին: Եւ դարձեալ զի տէր է Աստուած ամենայն բարեաց, և բաշխէ իւրաքանչիւրոց որպէս և կամի, և չիք ումեք տեղի տրտնջելոյ. ՚ի ստեղծանել աբարչին զմարդն՝ չպարտէր այլ ինչ նմա, մանաւանդ թէ արդարութեան իւրում, բայց զի լաւագոյն գոյր նմա գալն յէութիւն, քան թէ ճնալ յոչէութեան: Արդ ոչ ոք հանդերձ ամենայն թշուառութեամբն, որ զի և ըզհատուցումն այնորիկ ընդունելոց է յիւրում ժամանակի, չիցէ գոհ ընդ էութիւն իւր և լաւագոյն զէութիւն համարիցի:

Երրորդ՝ զի յաջողութիւն չարաց, և բարեաց թշուառութիւն, յայնժամ կարէր ստանանել արդարութեանն Աստուծոյ՝ եթէ բարեաց վասն բարութեան նոցա առաքէր վիշտս, և չարաց վասն չարութեան նոցա յաջողութիւն. այլ ոչ է այսպէս: Բարիք և չարիք՚ի կենցաղումս հասարակաց են, առանց խտրելոյ զառաքինութիւն և զչարութիւն. "Ոյ զարեգակն իւր ծագէ Աստուած՚ի վերայ չարաց և բարեաց, և աճէ անձրեւ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց,,: Ալարքն և պատուհաս յանտի կեանս պահին, պատերազմ է կենցաղս, և ոչ պսակի զօրական՝ այլ յետ պատերազմի:

Եւ չորրորդ՝ զի չիք ինչ սրբութեանն Աստուծոյ ընդ մեզս. մանաւանդ արդելու զայն և պատուհասէ խստիւ ասա կամ՚ի հանդերձեալն: Այլ ընդէր ոչ խափանէ զայն: Ոյ չէ պարտ նմա. և ապացոյց զի չէ պարտ նմա՝ այն իսկ է, զի ոչ խափանէ: Եւ ընդէր պարտ իցէ նմա. Թերևս զի է անբաւ բարի. ապա ուրեմն պարտ է նմա առնել զամենայն որ ինչ և կամք իցեն մեզ. և պարտ իցէ արարչին հնազանդել կամաց արարածոց իւրոց: Ոչ ոյզ նա ազատ՚ի պարգևս իւր. ՚ի ստեղծանել նորա զը-

մարդ՝ չպարտէր նմա այլ ինչ, բայց տալ նմա հնարս ե-
րանելի լինելոյ. արդ զայն առաւելաւն ետ, ձանաչել
զինքն և սիրել, և ծառայել իւր ազատօրէն. ետ մեզ
առատապէս նպաստս՝ որովք կարեմք վաստակել և ար-
ժանի լինել, ոչ վարկպարապի ինչ երանութեան՝ այլ
գերբնականին, զոր չպարտէրն մեզ, եւս և յետ ստեղ-
ծանելոյն: Ա՛ան որոյ եթէ կամակար ընտրէ մարդ թը-
շուառանալ, զինչ իրաւունք են նորա բողոք ունելոյ և
դանգատ զարարչէն: Ո՞իցէ՞ իսկ՝ ի կարի մերում երա-
նելի լինել, և յաւէրժ երանելի:

“ Ա՛արդոյ, ասէ իմաստասէր վարդապետն մեր Ա՛զ-
նիկ, առեալ զանձնիշխանութիւն, ուժ կամի՝ ծառայա-
նայ. ոչ՝ ի հարկէ բնութեան բռնադատեալ, ոչ՝ ի
զօրութենէն՝ որ նմա վասն լաւութեանց չնորհեցաւ՝
կասեալ, այլ՝ ի հնազանդութենէ միայն շահի զօգու-
տըն, և յանհնազանդութենէ զվնաս. և զայն ոչ եթէ
առ եղեռանէ ինչ լեալ ասեմք մարդոյն, այլ վասն լա-
ւութեանց: Ո՛ի եթէ իբրև զմի ինչ յայլոյն բնու-
թեանց լեալ էր, զոր՝ ի հարկէն ծառայեն Ա՛ստուծոյ,
ապա և վարձս ընդ կամակարութեանն առնոյց էր ար-
ժանի, այլ իբրև գործի մի էր արարչին, զոր թէպետ
՝ի չար վարէր թէպետ՝ ի բարի, ոչ պարտաւանք ինչ էին
նմա և ոչ գովութիւնք, այլ պատճառ այն էր՝ որ զնա
այնպէսն վարէր. նա և ոչ զլաւ ինչ գիտէր այնուհետև
մարդն, քանզի չէր հմուտ այլ իմիք, բայց այնմ և եթէ
յոր պատշաճեալն էր: Ա՛յլ Ա՛ստուած այնպէս պա-
տուել զմարդն կամեցաւ, զի առ լաւութեանցն խելա-
մուտ լինելոյ՝ զանձնիշխանութիւնն պարգևեաց նմա,
որով կարող իցէ առնել զինչ և կամեսցի, և զանձնիշ-
խանութիւն նորա՝ ի լաւն խրատել դարձուցանել: Ա՛ր-
պէս հայր որ յորժամ զորդի իւր խրատիցէ՝ որ կարող
իցէ ուսումն ինչ ուսանել, չծուլալ յուսմանէն՝ այլ
յառաջադէմ լինել՝ ի լաւն ստիպէ. վասն զի գիտէ՝ ե-
թէ կարող է յառաջադէմ լինել, պահանջէ զուսումնն
յոր աւանդեցաւ: Ա՛յնպէս և զԱ՛ստուծոյ պարտ է ի-
մանալ՝ եթէ յօժարեցուցանէ զմարդն անսալ հրամա-
նաց նորա. բայց զկամակար իշխանութիւնն ոչ հանէ
՝ի նմանէ, որով կարողն է անսալ և չանսալ հրամանացն.
այլ խրատէ և յօժարեցուցանէ զմարդն, զի լաւս-

թեանցն ցանկացող լիցի, որովք արժանաւոր մեծաց պարգեւաց լինիցի, եթէ անսայցէ Աստուծոյ. այլ զի և չանսալցին իշխանութիւն ունիցի. քանզի ոչ եթէ վայրապար ինչ կամէր Աստուած զայնպիսի պարգեւս տալ որ յաւիտենական անեղծութիւնն է. զի վայրապար իսկ էր այնպիսոյն տալ՝ որ ոչ ունէր իշխանութիւն երկոցունց, անսալոյ այնմ զոր Աստուածն կամէր, և չանսալոյ այնմ՝ զոր նայն չախորժէր: Այլ իրաւամբք այն է, յորժամ արժանի ըստ որոց գործեացն ոք ինչ առնու„ (41):

Աւրկ. գ. Ոչ է արժան Աստուծոյ զգուշնաքէից փոյթ ունել, վասն որոյ առաքեալն ասէ. (ա. Կոր. թ. 14.) "Եթէ զեզաննց ինչ փոյթ էր Աստուծոյ„: Այլ Տնտապաշօր տեսանելեաւք՝ զի որ Ճարտարքն են և վաստակասէրք, մեծանան և ըստ Ճարտարմտութեան նոցա յաջողեն իրք:

Պխ. Սուրբ գիրք ցուցանել ցուցանէն, զի ոչ զնոյն խնամ ունի Աստուած զգուշնաքէից և զկարևորաց. այլ ոչ ինչ՝ ի բաց տանին՝ ի խնամից նորա, որ և ձագուց ապառաւուց և շուշանաց վայրի խնամարկէ: Իսկ Ճարտարմտութեան և վաստակասիրութեան յաջողութիւն, թէպէտ և ոչ միշտ յաջողիցեն, Աստուծոյ է՝ որ զայս կարգ եդ յաշխարհի, և քաղցրութեամբ դարմանէ զամենայն որպէս զի բնաւորապէս յաջողիցեն իրք. սակայն և Ճարտարմտութիւն և երկասիրութիւն պարգեւք են նորին:

ԳԼՈՒԽ Ժ

ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹԵԱՆ

Եթէ Աստուած նովին միով տեսութեամբ նկատէ որ ինչ լեալ, որ ինչ է, և որ ինչ լինելոց է, այսինքն զի չիք առաջի Աստուծոյ անցեալ և ապառնի, այլ գիտութիւն նորա տեսութիւն մնանաւանդ ասելի է՝ որ հասանպարփակ՝ ի մի կէտ տեսանէ զանցեալն զներկայ և զապառնի, ապա չիք իսկապէս յաստուածակոյս կողմանէ անտի նախասահմանութիւն: Ո՛չ որպէս սուրբն Հար-

սեղ ասէ. “Ահա իմացուածոյ այնմիդ առաջի եղեալ կայ առ Աստուծոյ ամենայն ինչ, զի ոչ ինչ անցանէ նմա, ոչ ինչ հանդերձեալ է, այլ ամենայն ներկայ. և որ ի հեռաստանէ մեզ ակնկալիք, որպէս առաջիկայք Աստուծոյ աչացն նկատին: “Այլ քանզի չէ մարթ այլազգ ձառել մեզ զկամացն Աստուծոյ առ ի փրկութիւն մեր, բայց ըստ ըմբռնելոյ մտաց մերոց, և իբր անցեալ կամ ներկայ կամ ապառնի ըստ մեզ, ըստ այսմ նախահամանութիւնն է վճիռ աստուածային անփոփոխ վասն ընտրելոց իւրոց, այսինքն սահմանել նորա ի յաւիտենից՝ տալ ումանց զյաւիտենական կեանս, և վասն այն տալ նոցա և զընծորհս կարևորս առ անվրէպ փրկութիւն: Վասն որոյ Գոստինոս կոչէ զայն “Նախապիտութիւն և նախապատրաստութիւն բարերարութեանցն Աստուծոյ, որովք փրկին անվրէպ որք փրկինն,,: Իսկ ի սուրբ գիրս կոչի “Կոչումն կամ դպրութիւն կենացս, ընտրութիւն Աստուծոյ, առաջադրութիւն Աստուծոյ, կոչումն հրաւիրանաւ, յառաջագոյն հրաւիրել կամ սահմանել զընտրեալս,,:

Աստուած թէպէտ և ամենեցուն բաշխէ զընծորհս կարևորս առ ի փրկութիւն, այլ ոչ ամենեցուն հաւասարապէս տայ զընծորհս իւր. են ընծորհք ինչ ընտրութեան՝ զորս առաւելագոյն ընծորհէ ումանց, ի յաւիտենից սահմանեալ զնոսա յերանաւէտ կեանս. կամ այլազգ ասել՝ զոյ նախահամանութիւն ընտրելոց յերկնային փառս: Այս վարդապետութիւն ասէ սուրբն Գոստինոս լեալ միշտ յեկեղեցւոջ: Եւ սուրբն Պրոսպերոս ասէ՝ թէ ոչ ոք ի հաւատացելոց ժխտէ զնախահամանութիւն:

ՅՕԴՎԻԱԾ Ա.

Զի գոյ նախահամանութիւն, և ընտրեալքն յԱստուծոյ փրկին անվրէպ:

Յուսանի ի սուրբ գրոց. “Ահաւասիկ օրհնեալք Տեառն էին, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի,,. (Մատ. իե. 34):

"Օ որս յառաջն Ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ, զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց. և զորս յառաջագոյնն հրաւիրեաց, զնոսին և կոչեաց. և զորս կոչեացն, զնոսին և արդարացոյց. և զորս արդարացոյցն, զնոսին և փառաւորս արար ,,: (Հռ. Ը. 29):

"Որպէս ընտրեացն զմեզ նովաւ յառաջ քան զվերնելն աշխարհի... յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի նոյն, ըստ հաճութեան կամաց իւրոց ,,. (Եփես. Ա. 5.) "Զհաւատացին որք էին կարգեալ ի կեանն յաւիտենական ,,. (Գործ. ԺԳ. 48):

Զի զի նախասահմանեալքն փրկին անվրէպ, վկայէ փրկիչն ինքնին. (Յհ. Ժ. 27.) "Ձխաղքը իմ ձայնի իմում լսեն, և ես Ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան. և ես տամ նոցա զկեանն յաւիտենականս, և մի կորիցեն ի յաւիտեան, և մի ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց ,,:

Ի պատասխանի ամենայն առարկութեանց՝ այսպէս մեծն Պղատոն խնամատարէ. "Ինքեան են որք ասեն՝ Կամիմ առնել որ ինչ հաճոյ է ինձ. զի եթէ յընտրելոց իցեմ, փրկեցայց. իսկ եթէ ոչ, դատապարտեցայց. որպէս յիմարութիւն է հիւանդի ասել՝ կամիմ ուտել և ըմպել որ ինչ հաճոյ է ինձ. եթէ կենդանոյ իցեմ, կեցից. իսկ եթէ մեռանելոց, մեռայց: Օ՛ի որպէս նախասահմանէ զոք Պատուած ի փրկութիւն, նոյնպէս և զեղանակ փրկութեան նորա նախասահմանէ. որ պահէ զեղանակն՝ փրկի, իսկ որ ոչն պահէ՝ կորնչի ,,:

Իսկ միւս ևս պատասխանի՝ զի սուրբ գիրք որպէս ուսուցանեն մեզ յայտնապէս զնախասահմանութիւն և զյառաջդիտութիւնն Պատուծոյ, նոյնպէս ուսուցանեն և զազատ կամ և զանձնիշխան ազատութիւն մարդոյ. արդ, ըստ գեղեցիկ բացատրութեան մեծին Ոսիւէի, երկոքին Ճշմարտութիւնքս այսոքիկ, իբր ծայրք են շղթայի միոյ՝ զորս ի ձեռին ունիմք, առանց տեսանել կարելոյ զոզ կցորդութեան նոցա ընդ իրեարս, զի է ծածկեալ: Ցես զայսմանէ և ի գլուխն է, որ յաղագս կամացն Պատուծոյ, ի յօդուածն գ:

ԳՕԴՈՒԱԾ Բ

Զի ձրի է ամենևին նախասահմանութիւն :

Յուդանի՛ի սուրբ գրոց . “Ո՛չ նորհք Աստուծոյ՝ կեանք յաւիտենից ,, . (Հռ . Զ . 23 .) “Ա՛յլքն նուազեալ են ի փառաց անտի Աստուծոյ , և արդարանան ձրի նորին շնորհօք ,, . (Հռ . Գ . 24) :

Սակայն յաւիտենական կեանք կոչին ի սուրբ գիրս վարձք բարեաց գործոց և պսակ արդարութեան . և սուրբ հաւատք ուսուցանեն՝ զի բարեգործութիւնք արդարոց թէպէտ և պարգեւք շնորհացն Աստուծոյ , այլ համանգամայն արժանիք են նոցա . ապա նոյն իսկ նախասահմանութիւն չպահանջիցէ զնախատեսութիւն արժանեաց :

Ո՛յսմանէ յուզի վէճ սաստիկ առ աստուածաբանս . և խնդիր է թէ արդեօք նախասահմանութիւն ի փառս՝ կանխիցէ քան զնախատեսութիւն արժանաւորութեան մարդոյ ի ձեռն շնորհաց , թէ իցէ պայմանաւ և նախատեսութեամբ արժանեաց նորա : Կեսք զվճիռն Աստուծոյ համարին աղատ ամենևին , այսինքն զի Աստուած ի յաւիտենից առանց իրիք նկատման արժանեաց մարդոյ նախասահմանէ զնա : Ասա այսմ արդարն ոչ վասն գործակցելոյ իւրոյ շնորհացն Աստուծոյ հասանէ ի փառս , այլ գործակից լինի աստուածային շնորհաց վասն նախասահմանութեանն ի փառս , և Աստուած ի նախասահմանելն զնա՝ սահմանէ և տալ նմա գործունեայ շնորհս , որով՝ առանց կորուսանելոյ զաստուածութիւն իւր՝ հասցէ անվրէպ կենացն յաւիտենից : Այլք ընդ հակառակն համարին պայմանաւոր զվճիռ նախասահմանութեան ի փառս , հաստատեալ ի նախատեսութիւն արժանեաց մարդոյ . այսինքն զի Աստուած՝ որ կամի զամենայն մարդիկ զի կեցցեն՝ տայ ամենեցուն զշնորհս կարևորս ի փրկութիւն , թէպէտ և ոմանք աւելի և ոմանք պակաս . և նախատեսանելով՝ զի ոմանք գործակից լինելոց են շնորհացն , նախասահմանէ զնոսա ի փառս , որպէս անարգել զայլսն՝ զորոց

նախատեսանէ զանսաստուԹիւն առ չնորհս և զանզըղջուԹիւն մինչև ՚ի սպառ։ Ըստ առաջնոյ՝ վՀիւն նախասահմանուԹեան է անպայման, նախընտրեաց, և ձրի ամենևին. ըստ այլոց՝ վՀիւն այն է հեթևորդ և պայմանաւոր, այլ ձրի իսկապէս՝ այնու զի և նախատեսեալ արժանիքն այն մարդոյ արդասիք են աստուածային ձրի չնորհացն։ Այսն որոյ չէ պարտ շփոԹել զերկրորդս այս ընդ մեղսուԹեան պեղագեանցն և կիսապեղագեանց, որք ոչ ընդունէին զկարևորուԹիւն չնորհաց առ ամենայն գործս փրկուԹեան. և ոչ զառաջնոցն կարծիս ընդ մեղսուԹեան նախասահմանականաց, որք համարին զի Ըստուած նախընԹաց և անպայման վՀռով նախասահմանէ ՚ի յաւիտենական դատապարտուԹիւն զայնոսիկ՝ որ չենն նախասահմանեալ ՚ի փառս, ուր ամենայն ուղղափառ հաւատացեալք խոստովանին զի վըՀիւ դատապարտուԹեան անարգելոց հաստատեալ է ՚ի նախատեսուԹիւն արհամարհելոց նոցա զաստուածային չնորհս։

Երկաքանչիւրոցն ևս կարծեաց պաշտպանք ՚ի սուրբ գրոց և ՚ի Հարց աճեն վկայուԹիւնս, առաւել կամ նուազ բացայայտս, և չէ մարԹ սահմանել զվնդիրն, բայց միայն սրբոց եկեղեցւոյ. այլ և սորա չիք ինչ զայսմանէ սահմանեալ, այլ զերկաքանչիւր կողմանս ԹողեալՀ ազատ յիւրեանց կարծիս։ Ընդաքէն երկրորդ կարծիքն դիւրագոյն միաբանի ընդ կամն Ըստուծոյ փրկելոյ զամենայն մարդիկ, և Թուի համաձայնագոյն՝ ըստ մեծումն ըմբռնելոյ՝ նախախնամուԹեան և բարուԹեանն Ըստուծոյ, այլ այս ոչ է բաւական առ ՚ի մերժել զառաջին կարծիս անպայմանելի նախասահմանուԹեան։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ընդդէմ. ա. ՆախասահմանուԹիւն անիրաւուԹիւն աճէ զԸստուծով, իբր զի առանց իրիք վաստակոց կամ գնասուց զումանս ընտրէ ՚ի յաւիտենից ՚ի փառս, զայլս ոչ։ Այլ ըստ այսմ մարԹ է ամենեցուն տրամաբանել, զի կամ յընտրելոց իցէ և կամ յանարգելոց. եԹէ յընտրելոցն՝ ՚ի զուր է նմա վաստակել, զի յԹոյ ապա հասցէ փրկուԹեան. իսկ եԹէ յանարգելոց՝ առաւել ևս

’ի զուր, զի որչափ և վաստակեսցէ՝ միայն նմա յետոյ ապա կորնչել. որով կամ ’ի յանդգնութիւն և կամ ’ի յուսահատութիւն զառածանիցի, և բարձցի ’ի բաց ա-մենայն յորդոր առաքինութեան։

Պե. Ընդրաւէր Աստուած յընտրել զոմանս առանց վաստակոց նոցա, եթէ պարտէր ինչ այլոց։ Եւ ումեք զլանայ Աստուած զընտրհս կարևորս առ ’ի փրկութիւն, որպէս յիւրում տեղւոջն ցուցցուք. և որ զընտրհն Աստուծոյ ապաթող առնէ, անձին մեղադրեսցէ։ Ալ ասն ոչ է տրամաբանութիւնդ ըստ օրինի, քանզի հա-մարի նախասահմանութեան արտաքսել զազատ կամ մարդոյ, որ չէ ձիմարիտ։

Ընդ. Ա. Արդ է ումեք կորուսանել և ստանալ զնախասահմանութիւն իւր, ըստ այնմ (Յայտ. Գ. 11.) “Կալ զոր ունիսդ, զի մի ոք առցէ զպսակ քո,,. և զընդ-ղիլ ’ի գպրութենէ կենաց, այսինքն ’ի մատենէ նախա-սահմանութեան, ըստ այնմ (Ղևէտ. լբ. 33.) “Ղթէ թողուս զմեղս նոցա, թող. ապա թէ ոչ, ջնջեա և զիս ’ի գպրութենէ քումմէ՝ յոր գրեցեր,,։ Ալ ասն որոյ ա-ռաքելապետն յորդորէ (Ք. Կը. Ա. 10.) “Դառնալ փութասջիք, զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումնդ առնիցէք,,։ Ընդ նախասահմանութիւն չէ հաստատի ինչ և անյեղլի, ապա թէ ոչ, ձախատագիր ’ի վերայ ածէր։

Պե. Արդ իսկ է ստանալ մարդոյ կամ կորուսա-նել զնախասահմանութիւն. վասն որոյ ’ի կոչմանէ մար-դոյ է կորուսան կամ ստացուած, այլ ոչ յաստուածա-կոյս կոչմանէ. զիրք սուրբ զպսակն կենաց, զգրեղն ’ի գպրութեան կենաց, և զփոյթ առ ’ի փրկութիւն, ա-ռաջի առնեն ’ի ցոյց ազատութեան մարդոյ և անստու-գութեան ցորչափ ’ի կեանս է, այլ ոչ ըստ կանխագի-տութեանն Աստուծոյ և ըստ նախասահմանութեան։ Ալ ասն որոյ Հարկն՝ զոր նախասահմանութիւն ’ի վերայ ածէ՝ զհետ գայ կանխագիտութեանն Աստուծոյ, որ ոչ ինչ ստանանէ ազատութեան մարդոյ, այլ ’ի վերայ նո-ցա գայ. զոր սուրբ Գրոհնացին այսպէս բացատրէ. “Ընտ այսմ և կարգ նախասահմանութեան է հաս-տատուն, և ազատութիւն անձնիշխանութեան՝ յորմէ կատարումն նախասահմանութեան յառաջ գայ,,։

ԳՕԴՈՒԱԾ Գ

Զի ոչ ոք առանց աստուածային յայտնութեան կարէ գիտել աստուածս զնախահաւատականութիւն իւր:

Զայս այսպէս սահմանեաց Ժողովն տրիդենտեան. "Ոը զմեծն զայն մինչև 'ի սպառ յարատևութեան ընդդէմ համարիցի ունել անպայման և անվրէպ ստուգութեամբ, առանց իրիք աստուածային յայտնութեան, նզովեալ լիցի,,. (Կոնս. Ա. գլ. Բ):

Վասնզի ասէ առաքեալն. (Եբր. ԺԱ. 20.) "Որու հաւատովք հաստատեցար. մի հպարտանար, այլ երկիր,,: Եւ զարձեալ (Ա. Կոր. Ժ. 12.) "Ոը համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի, գուցէ անկանիցի,,: Եւ սուրբն (Հռոմինոս ասէ. (Յղ. ընդդմ. գլ. Ժ.) "Ո՞ իսկ 'ի բազմութենէ հաւատացելոց, ցորչափ 'ի մարկանացու կենցաղումն է, վստահիցի գոլ 'ի թիւս նախատապահմանելոց,,:

Եւ բանիւ իսկ յայտ է ձշմարտութիւնս այս. քանզի նախատապահմանութիւն, ըստ ասացելոցս 'ի վեր անդր, է ներգործութիւն մտաց և կամացն Աստուծոյ. ապա ոչ ոք գիտել զայն կարիցէ առանց աստուածային յայտնութեան:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Վրկիչն մեր ասէ. (Մտթ. ԺԱ. 24.) "Ո ամենայն ինչ, վասն որոյ աղօթս արարեալ լինդրիցէք և հաւատայցէք՝ թէ առնուցուք, եղիցի ձեզ,,: Եւ առաքեալն ասէ (Ա. Կոր. Ը. 16.) "Այն ինքն Աստուած վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ. և եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի,,: Եւ զարձեալ (Ա. Թես. Ա. 4.) "Գիտեք, եղբարք սիրեցեալք Աստուծոյ, զընտրութիւնն ձեր,,: Ոմն որոյ և այլուր ասէ (Բ. Տիմ. Գ. 8.) "Ասպատեհ կայ ինձ արդարութեան պսակ

սակն ,,։ Եւ առաքեալն Յովաննէս ասէ . (ա. Կը. Ե. 13.) ,,Ոչ այս գրեցի ձեզ, զի գիտասջիք եթէ կեանս յաւիտենական ունիք ,,։ Պատ մարթի է ունել ստուգութիւն զնախասահմանութենէ անձին։

Պե. Եթէ գիտեաք ստուգիւ՝ զի որպէս պարտն է կամք յաղօթս, և ունիցիմք յարատեւել ի նոյն, մարթեր մեզ ունել ստուգութիւն և զնախասահմանութենէ. այլ որպէս առաքեալն ասէ, ,,Ոչ կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք ,,. (Հռ. Ը. 26)։ Նոյնպէս եթէ գիտեաք ստուգիւ՝ զի ունիմք յարատեւել ի ընծրկս որդեգրութեան, չմնայր մեզ երկմտել զժառանգութենէ երկնից։ Իսկ ընտրութեամբ զկոչումն ի հաւատս իմանայ առաքեալն. որ և վասն բազում վատակոյն ի Քրիստոս ակն ունէր ի նմանէ վարձուցն հաստուցման ըստ քրիստոնէական աւետ յուսոյ, եթէ չէր նմա յայտնեալ զայն Աստուծոյ ստուգութեամբ։ Իսկ կեանս յաւիտենական իմանայ միւս առաքեալ զըստկիզբն այնր կենաց՝ որ ի հաւատն է. ապա թէ ոչ, պարտ էր փրկեալս ասել զամենեսեան իսկ՝ առ որս գրէրն, և ոչ ումեք ի նոցանէ կարել անկանել ի հաւատոցն։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Քաղագս բուոյ նախասահմանելոյ։

Նախասահմանելոյն թիւ Աստուծոյ աւետ է գիտելի. ամենայն գուշակութիւնք զայսմանէ անհիմն են։ Այլ ինդիր իմն զայսմանէ առնեն աստուածաբանք՝ թէ արդեօք նախասահմանելոյն կամ ընտրելոց թիւ առաւելագոյն իցէ թէ նուազագոյն քան զանարգելոցն։ Ներսէս Ա. քահանայապետն Հռոմայ, կոչէ զկնի դիրս զայս ընդվայրախոյզ քան օգտակար. պարտ էր մեզ շատանալ գիտութեամբս, զի ոչ ամենեքեան հասանեն փրկութեան, զի բազումք յոյժ են ապստամբք յօրինացն Աստուծոյ՝ որ անզեղջ մեռեալ և դատապարտին. և զի ի հաւատացելոց եթէ միւմ աւետ ի հնգից, միւմ աւետ ի տասանց, միւմ աւետ ի քսանից, միւմ աւետ ի հինգից, միւմ աւետ ի հարիւ-

րոց հասանէր դատապարտել, սակայն պարտ էր մեզ երկնչել, և ահիւ և դողութեամբ զփրկութիւն մեր գործել։ Այլ քանզի բեմբասացք դիւրաւ երբեմն համարձակին ստուարացուցանել յոյժ յոյժ զթիւ դատապարտելոց ի խօսելն զաակաւութենէ ընտրելոց, արժան է գիտել՝ զի ոչ ըստ չհմարտութեան է որպէս վարդապետութիւն հաւատոյ՝ զթիւ սակաւուց ընտրելոց սահմանել ի հաւատացեալս. նախ՝ զի ոչ ինչ զայսմանէ վճիռ է եկեղեցւոյ. և երկրորդ՝ զի ի դատապարտութենէ առաւելագունից ոչ ըստ գոյ դատապարտութիւն մեծի մասին հաւատացելոց. մանաւանդ առ ծեալ զմտաւ զբազմութիւն մանկտւոյ, որ մկրտեալ և չև ի չափ հասեալ՝ մեռանին անընդունակք մեղաց։ Զայն որոյ երբեակ կարծիք են մեկնչաց սուրբ գրոց զսակաւութենէ ընտրելոց։ Զմանք համարին առաւելագոյն յոյժ զընտրեալս ի հաւատացելոց քան զդատապարտեալս, պատասպարան կարծեացն առեալ զառակն հարսանեաց՝ որով տէրն զարքայութենէ երկնից այլաբանէ, ուստի մի և եթ ոք արտաքսեցաւ չունելով հանդերձ հարսանեաց։ Զայլք հաւատար համարին ընտրելոց ընդ դատապարտեալս, առակաւ տասանց կուսանացն՝ յորոց հինգ իմաստունքն ընկալեալք, և յիմարքն հնգեքին արտաքսեցան։ Ոմք այլք առաւելագոյնս համարին զդատապարտեալս՝ տէրունական բանիւքն. "Բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք,,. (ԶՄտ. ի. 17.) "Զտէր ընդ նեղ դուռն. քանի՞ ընդարձակ է դուռն և համարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ, և բազումք են՝ որ մտանեն ընդ նա,,. (Զդ. է. 13)։ Զայլ խնդիր այն է՝ թէ ոչք կոչեցեալքն իցեն, յորոց սակաւք փրկելոց էն. յայտ է թէ առաջնոց երկուց կարծեացն պաշտպանք՝ կոչեցեալս զամենայն ազգ մարդկան համարին Զստուծոյ, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն։ Զայն որոյ Զուսաբէզ, զոր մի ի լուսաւորաց աստուածաբանական մակացութեան կոչէ նոյն ինքն վերոյիշեալ քահանայապետն, թէպետ և յերկբայս զիրն համարի, այլ յաւելու՝ զի հաւանական յոյժ է առաւելագունից ի ծոց ուղղափառ եկեղեցւոյ հասանել փրկութեան։

ՅՕԴՈՒԱԾ Ե

Յաղագս անարգելոյ :

Անարգութիւն կամ մերժումն Աստուծոյ է նախապիտութիւն անիրաւութեան ոմանց, և պատրաստութիւն դատապարտութեան նոցա : Արդեք ինչ ներգործութիւնս այս բովանդակէ, զԹոյլտուութիւն մեղաց, ջնջել գործունեայ չնորհս յառնելոյ 'ի մեղաց, և զվճիռ դատապարտութեան : Ապա ուրեմն մերձաւոր պատճառ դատապարտութեան են մեղք. և միաբանին յայսմ հաւատացեալք առհասարակ ընդդէմ նախասահմանականաց և կալուինականաց : Վանդի վճիռս այս թէպէտ և է անվրէպ որպէս զկանխագիտութիւնն Աստուծոյ, սակայն չածէ հարկ անարգելոյ մեղանչելոյ, այլ նախատեսանէ 'ի նոսա զազատ արհամարհութիւն չնորհացն Աստուծոյ՝ որ ոչ ումեք պակասեն : Այլ ինքն անարգեալն ոչ վասն դատավճռոյն Աստուծոյ է անարգեալ, այլ դատավճիռն այն վասն կամաւոր և մինչև 'ի սպառ յարատեւութեան մարգոյն 'ի մեղս՝ է նախասահմանեալ : Ա՝ն որոյ մասն է հաւատոց, զի ոչ զոք նախասահմանէ Աստուած 'ի դատապարտութիւն առանց նախատեսանելոյ զմեղս նորա, և ամպարշտութիւն է ասել՝ զի Աստուած յատկապէս կամօք զոմանս անարգեալ և նախասահմանեալ իցէ 'ի դատապարտութիւն, առանց նախատեսանելոյ 'ի նոսա զմեղս :

Վանդի հակառակ է այս սուրբ գրոց, և ընդհանուր աւանդութեան, և ուղիղ բանի : "Օ՛ի Աստուած ըզմահ ոչ արար, և ոչ խնդայ ընդ կորուստ կենդանեաց ,, . (Ես. ե. 13.) "Օ՛ի ոչ եթէ առ ատել հաստատեցեր ինչ ,, . (անդ. ժե. 25.) "Եթէ կամելո՛վ կամիցիմ զմահ մեղաւորին, որպէս զդառնալ նորա 'ի չար ճանապարհէն և զկեալ ,, . (Եզեկ. ժը. 23) : Արդ եթէ Աստուած չկամի զմահ մեղաւորին, այսինքն զդատապարտութիւն, ո՞րչափ ևս առաւել զդատապարտութիւն ուրուք առանց մեղաց. վասն որոյ առաքելապետն ասէ. (Բ. Պետր. գ. 9.) "Վանդի ոչ կամի եթէ ոք կորիցէ ,, :

Եւ դարձեալ սուրբ գիրք ոչ այլ ինչ պատճառս բաց ի մեղաց համարին պատճառ դատապարտութեան ասելոց. "Արթայք լինիցին անիծեալք ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա. զի քաղցեայ, և ոչ ետուք ինձ ուտել,, . այլովքն հանդերձ. ապա ուրեմն զմեղս ևեթ նոցին ցուցանէ Քրիստոս պատճառս դատապարտութեան նոցա.

Ընդունայն է կուտել աստ վկայութիւն ի Տարոց, այլ զ( )գոստինեայն ևեթ ածից՝ զոր ընդդէմ Յուլիանոսի (գիրք Ը.) ասէ. "Խարի է Աստուած և արդար. կարէ զոմանս փրկել առանց արժանեաց, զի բարի է. այլ չկարէ զոք առանց մեղաց դատապարտել, զի արդար է,, : Այս և հասարակաց մնաց է հակառակ, և գարշին միտք և զարհուրին յայնպիսւոյ վարդապետութենէ. զի արդարութիւնն Աստուծոյ պահանջէ մի ումեք տարապարտուց սահմանել պատուհաս, ապա թէ ոչ՝ լաւագոյն գոյր մարդկայինս քան զաստուածայինն արդարութիւն :

Իսկ որք առարկենն զբան առաքելոյն, որ առ Հռոմայեցիան (Ը. 12.) առեալ ի մարգարէէն. "Ո՛չ Յակոբ սիրեցի, և զԵսաւ ատեցի,, , և որ ըստ նմանէ բանք, ոչ բարւոք ընդելանին գրոյն : Ո՛չ ի անդ ամենայն բանք առաքելոյն հային ի ձրի կոչումն հեթանոսաց ի հաւատս. քանզի ամենեքին իսկ և՛ Հրեայք և՛ հեթանոսք կային ընդ մեզօք, և ընդհանուր Աստուծոյ կարօտ էին. իսկ Աստուած ձրի բարութեամբն իւրով, առանց ինչ յառաջագոյն նոցին արժանեաց զհեթանոսս ողորմութեամբն իւրով կոչեաց ի հաւատս, իսկ զՀրեայս արդարութեամբն իւրով մերժեաց վասն անհաւանութեան նոցա, առ որ օրինակ ածէ զժամանակաւոր օրհնութիւնն Յակոբայ, և զԵսաւայ մերժումն, մինչև ծնեալ էին, և մինչև բարի ինչ կամ չար գործեալ :

ՃԱՌ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Հիմն և խարիսխ քրիստոնէական հաւատոց, առաջին և անձառելի քան զամենայն խորհուրդս նորին, է խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան։ Ոյ սոյն որոյ առ՝ի կարելոյ ձառել զայնմանէ, հարկ է մեզ՝ի կիր առնուլ զբարբառ սուրբ գրոց, որպէս ուսուցանեն մեզ զայն Հարք եկեղեցւոյ։

Խորհուրդ Երրորդութեան հաստատի՝ի մի Էութեան յերիս անձինս, այսինքն են Հայր, Որդի և Հոգի։ Հայր է Էութեամբ, Որդին է Էութեամբ, Հոգին սուրբ է Էութեամբ. սակայն չեն երեք աստուածք, այլ երեքին նոյն մի Էութեամբ, երեցունց մի բնութիւն և նոյն մի աստուածութիւն։ Ոչ գոյ, եթէ ոչ մի Էութեամբ. այս հիմն է քրիստոնէական հաւատոց. բայց նոյն հաւատք ուսուցանեն, զի միութիւն խակ Էութեամբ է բեղնաւոր, զի բնութիւն աստուածային առանց դադարելոյ՝ի միութենէ՝ հաղորդի՝ի Հօրէ Որդի, և՝ի Հօրէ և Որդւոյ՝ի Հոգին սուրբ։ Սոքա երեքին խնկապէս են այլ և այլ. Հայր ոչ է Որդի և ոչ Հոգի, Որդի ոչ է Հայր և ոչ Հոգի, և սուրբ Հոգին ոչ է Հայր և ոչ Որդի. այլ անձն Հօր, անձն Որդւոյ, և անձն Հոգւոյն սրբոյ, Երրորդութեան յաստուածային բնութեան՝ որ մի և նոյն է յերիս անձինս. և յայսմ խակ է ահաւոր և անձառելի խորհուրդ Երրորդութեան։ "Երեք անձինք, և մի բնութիւն, մի աստուածութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ Երրորդութիւն,,։

Ոլորութիւնք ընդդէմ խորհրդոյս յերիս կարգս բովանդակին։ Առաջին՝ որք ոչ ընդունին այլ և այլ ան-

ձինս Ա՛ստուած, որպէս սաբելեանք և որ յառաջ քան զնոսա սակինեանք և միաստուածեանք։ Երկրորդ՝ որք ուրանան զհամագոյութիւն անձանց և զդոլ նոցին հաւասարակից, որպէս արիոսեանք, մակեդոնեանք, և հետուողք նոցին։ Իսկ երրորդ՝ որք ուրանան զերկուսին Որդւոյն սրբոյ՝ի Հօրէ և Հոգւոյ իբրև՝ի միջէ պատճառէ։ Իսկ բանականք՝ որք զսակինեանցն նորոգեցին զաղանդ, և միաստուածեանք, բովանդակ իսկ ուրանան զերկուսիւքդ Երրորդութեան։ Եւ քանզի հերետիկոսքդ ոչ գոն ուրեք խառնաւալր առնեն զբառս, որով Հարք վարին՝ի բացայտել զերկուսիւքդ Երրորդութեան, սահմանեսցուք նախ ճշգրտիւ զնշանակութիւնս նոցա, թէ՝ի բացայայտութիւն ճառիս, և թէ՝ի դիւրութիւն եղծանելոյ զմանաստակութիւնս հակառակորդաց։

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ՉՉՕՐՈՒԹՄՆԷ ԲԱՌԻՑ Ի ԲԱՑԱՏՐԵԼ, ՉԵՐՈՐՀՈՒՐԴ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Համագոյական ասի Երրորդութիւն, և անձն անձին համագոյ կամ համագոյակից, և նշանակէ ունակ նոյն գոյացութեան, ունօղ զնոյն էութիւն։ Կոչին նշանակութեամբ ասի և համէութիւն, համաբնութիւն, համաբնակից, և նոյնագոյ. քանզի Ա՛ստուած նոյն է էութիւն և գոյութիւն, և գոյացութիւն իսկ Ա՛ստուծոյ կամ՝ բնութիւն նոյն իսկ էութիւն նորա է պէսպէս օրինակաւ մտածեալ յիմաստասիրաց և յաստուածաբանից։ Ա՛ստ նմին նշանակութեան վարի՝ի մեզ և բառս գրաւնական, իբր՝ի միասին եական, ունակ զնոյն մի էութիւն և զնոյն մի աստուածութիւն անբաժանելի. վասն որոյ ասեմք "Երկնեալ համագոյ և միաւնական անբաժանելի սուրբ Երրորդութիւն, Հայր և Որդի և սուրբ Հոգի"։ Այս բառ համագոյ կամ համագոյական, համագոյակից, որ յունարէն ասի ὁμοούσιον, առեալ յաղնոց սրբոց Հարց ժողովն Նիկիոյ արձանագրեաց՝ի հանգանակի իւրում իբրև կնիք ուղղափառաց ընդդէմ արիանոսաց. որպէս երգեմքն. "Ցեսի ես յայնմ ասենի Որան ծագեալ՝ի Հօրէ, գաւանի ճնուեալ և ոչ ա-

բարած, միշտ համագոյակից ընդ Հօր և Հոգւոյ ,,։ Իսկ սուրբ Աստուածութիւն մեր, ժամանակակից սրբոյ Հոգւոյն, ուր և զորդին իւր զՔրիստակէս յղեալն էր, և ևս պարզաբանեաց ի հանգանակի մերում զԹարգմանութիւն համագոյակից բառիս ասելով՝ ,,Նոյն ինքն ի բնութենէ Հօր ,,. այսինքն ի նոյն ինքն բնութենէ Հօր*։ Ոմանք կամ նմանագոյակից, զոր Յոյնք ասեն օմոյուսիոն, միով եւթ տառիւ տարաձայնեալ ի համագոյակցէն՝ որ է օմօուսիոն։ Ո այս խորամանկութիւն հնարեցան կիսարիանոսք առ ի խափանել զհամագոյակիցն, պատճառանօք բառնալոց զհոմաձայնութիւն և զերկպառակութիւն. այլ ոչ ընկալաւ զայն Ժողովն։

Ոչինչ բազմապատիկ նշանակէ ի մէջ. նախ ինքնութիւն իմացական գոյացութ, այսինքն ոչ անգոյ. երկրորդ՝ հոգի բանական, որպէս յաւետարանի՝ ուրեմն ասի ,,Ցրտում է հոգի իմ,,. և այլ ուրեք ,,Ցրտում է անձն իմ,,։ Երրորդ՝ ինքն դերանուն. որպէս փոխանակ ասելոյ ինքեանէ՝ ասեմք յանձնէ, անձամբ, վասն անձին և այլն։ Իսկ չորրորդ՝ իբր անհատ կամ անհատ ընդհանուր գոյացութիւն. և ահա ըստ այսմ ասեմք ի մի Աստուած կամ ի միում աստուածային բնութեան երիս անձինս, որք իբրև անձինք՝ անհաղորդականք են իրերաց և հակադրեալք առընչապէս, վասն որոյ և այլ և այլք. իսկ իբրև Աստուած հաղորդք նոյն միոյ բնութեան և էակից։ ,,Երրակի թիւ կատարեալ, յերիս անձինս բաժանեալ, աստուածութեամբ միաւորեալ, միով բնութեամբ հաւասարեալ ,,։

Փոխանակ անձին ասի և դէմք, և նշանակէ զզանազանութիւն անձնական ներգործութեանց՝ որպէս յասել Հօր առ Որդի ,,Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ ,,. յայտնապէս որոչին առաջին և երկրորդ դէմք, այսինքն անձն Հօր և անձն Որդւոյ։ Այլ քան-

* Որպէս և այլուր նոյնպիսի յետադասութեամբ նախդրին ասի ի մէջ. «Նոյն և ինքն իսկ առաջնեմք զՊետրոսիակէ աւազանին». (Շարակ)։ «Նոյն զաղօթան կատարեմք որ յեկեղեցին և արտաքոյ». (Լմբ. Ներս. պաշտօնագիր)։ «Կամ՝ յայ զՀայր մեծ ասել,... այլ երկայ նոյն ինքն ի Հօրէ». (Մամբր)։ «Նմին իսկ ի ցուցէս (այսինքն ի նմին ցուցմանէս) հաւանեցուցից». (Փիլոն ի Յոբ.)։ «Բանիք քո այնպէս մնին ի սիրտ իմ, և այնպէս համարեցայ զնոսա, թէ նոյն ի Քրիստոսէ լուայ». (Վարդ Ոսկէբ.) և այլ բազում ուրեք։

զի առ Յոյնս ֆոծոօֆծն, որ է դէմք, Թուի համաձայն իբր առ երեսս կամ առ աչս, վասն որոյ հարկ եղև նոցա վարել ըստ տեղւոյն և էֆոնեսոս, որ է ենթակայութիւն։

Առաւս այս ենթակայութիւն, զոյն ուրեք ՚ի կիր արկեալ առ նախնիս մեր, երեք ինչ առաւելապէս նշանակէ։ Մի՝ յենարան կամ խարիսխ, և ըստ այմ ասի ՚ի մեզ յատկապէս հաստատութիւն։

Սրբորդ՝ գոյացութիւն իբր ենթակայ յատկութեանց կամ պատահմանց իւրաքանչիւր բնութեան. և ըստ այմ վարին ՚ի մեզ բառքդ գոյացորութիւն, գոյութիւն, էութիւն, բնութիւն։

Սրբորդ՝ անձն, այսինքն զենթադրեալն՝ որ իբր խարիսխ է և յենարան գոյացութեան իրիք։ Այս հոմանձայնութիւն բառիս ըստ երկուց վերջին նշանակութեանցս՝ վէճ անհնարին յարոյց առ նախնիս ՚ի Հառել զևորհրդոյ Սրբորդութեան, յորում են երեք անձինք և մի գոյացութիւն. ուր կէաք ասէին մի գոյացութիւն էֆոնեսոս, ըստ երկրորդ նշանակութեան։ Ոմանեսիոս պապ, Ժողովն Նիկիոյ, Աղրիկեայ, և Հռովմայ առ Ոսամոսիս, Աթանաս և այլք, և սիդագոյնս քան զամենեսեան Հերոնիմոս հաստատէր, զի ենթակայութիւն էֆոնեսոս գոլով նոյն ընդ գոյացութեան՝ մի միայն է ասելի Աստուած։

Իսկ Ոմոնեսիոս արիոպագացի, Ոմոնեսիոս աղէքսանդրացի, Աղէքսանդր աղէքսանդրացի, Նիւսացին, Ոսկեբերան, և Ժողովք ոմանք, և առաւել քան զամենեսին մեծն Ոսրսեղ Հաստատէր, զի որովհետև էֆոնեսոս այսինքն ենթակայութիւն ՚ի ներքս բերէ զիմաստ ենթադրելոյ այսինքն անձին՝ պարտ է երիս ասել Աստուած և ոչ մի։ Իսկ աստուածաբանն և Նպիփան անխտիր երիս և մի ասէին, ըստ ուղղութեան մտաց երկաքանչիւր կողմանց։

Որոյ ուրեմն զօրացաւ կարծիք Ոսրսեղեանց, և սովորութիւն եղև յեկեղեցւոջ ասել երիս ենթակայութիւնս Աստուած, և խափանեցաւ կարծիք Հերոնիմեանց։ Ալ ասն որոյ և դասական աստուածաբանք առհասարակ երիս ենթակայութիւնս զնեն Աստուած, առեալ զէֆոնեսոս նշանակութեամբ անձին։ Այլ թո-

մայեանք զանազանութիւն ինչ արարեալ՝ ասեն. էն-
թակայութիւնն առընչական այսինքն անձնաւորական՝
երբեակ է Աստուած, իսկ էնթակայութիւնն էական՝
է միակ:

Օ այս համաձայնութիւն բառիս էնթակայութեան
գտանեմք առ Կիւրղի և 'ի Ճառս խորհրդոյ մարդեղու-
թեան, է զի նշանակութեամբ բնութեան, և է զի նշա-
նակութեամբ անձին վարեալ. և ըստ այնմ մերթ ե-
կաւս, և մերթ միակ ասացեալ:

Ենոխիոն, որ յունարէն ասի Քիպո, բազում յոյժ
ունի նշանակութիւնս, ոչ ինչ ընդհատ 'ի բառիցս էակ
կամ ինչ. բայց ըստ իմաստասիրաց և ըստ աստուածա-
բանից վարի փոխանակ էութեան կամ գոյացութեան
իրին, իբր բուն յատկութեանց նորին. վասն որոյ և
մի բնութիւն աստուածային ասի, այսինքն մի աստուա-
ծութիւն, հինն և արմատ ամենայն ստորոգելեաց նո-
ցա: Պարտուարին էր փիլիսոփայից առանց լուսոյ Հաւա-
տոց ըմբռնել զբնութիւն զանազանեալ յանձնէ, կամ
զգոյացութիւն յենթակայութենէ: Եւ դարձեալ չիք
յունարէն յատուկ բառ նշանակիչ գոյացութեան, այս-
ինքն գոյաւոր ինքնենթակայ էակի, այլ փոխանակ այնր
վարի ուսիա, որ է էութիւն ուր և իցէ էակի. չիք և ոչ
յատուկ բառ նշանակիչ գոյութեան, որ է ունել ներ-
գործութեամբ զէութիւն, այլ ասի Էֆարխո, որպէս
թէ էնէրգիոն. զի չիք առ Յոյնս զանազանութիւն
Աէմ և Պոմ բայիցս, այլ ասեն անխտիր էմի, և ոչ ո-
րոշումն բայիցս լինիմ և եղանիմ, այլ ասեն անխտիր
ղէնօմէ: Այսուհետև առ նախնիս շփոթի պիտառութիւն բա-
ռիցս բնութիւն, էութիւն, գոյութիւն, գոյացութիւն,
էնթակայութիւն, և անձն. մինչև ոմանց 'ի հնագոյն
հարց երիս բնութիւնս, երիս էութիւնս, և երիս գոյա-
ցութիւնս ասել փոխանակ ասելոյ երիս անձինս: Այ-
սուհետև յաւաղէկն և ոմանց ասել անխտիր 'ի Կրիտաս
մի կամ երկու բնութիւն ըստ այլ և այլ մտաց, որպէս
յուցանէ Պետրոս վկայութեամբք նախնեաց:

Այլ պարտ է աստուածաբանից՝ որ դաւանին մի Աս-
տուած երեքանձնեայ, և մի Կրիտաս Աստուած և
մարդ կատարեալ, միաբանել յորոշումն բառիցս, առ
'ի կարելոյ իմանալ զմիտս իրերաց, և միախոհ և միա-

կրօնս լինել։ Ա՝ան որոյ մէջ զբառդ բնութիւն վարեմք նշանակութեամբ էութեան, որիշ ամենևին յանձնաւորութենէ. և ըստ այսմ ասեմք Երրորդութեան է՝ բիս անձինս և մի բնութիւն, իսկ՝ի մարդեղութեան՝ մի անձն և երկուս բնութիւնս. կամ որպէս աստուածաբանն ասէ՝ "Երրորդութեան երեք ումն, և մի ինչ. իսկ՝ի մարդեղութեան՝ մի ումն, և երկու ինչ"։

ԳԼՈՒԽ Բ

ՋԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՈՉ Է ՀԱԿԱՌԱԿ ԲԱՆԻ

Աւելորդ է մեզ դեպերել՝ի ինդիր թէ արդեօք հնար իցէ ցուցանել բանիւ գխորհուրդ Երրորդութեան, զայն որ՝ի վեր է քան զամենայն միտս և զբան. պլ շատ է մեզ գիտել՝ զի չէ մարթ ցուցանել զի իցէ այն հակառակ բանի։ Ո՞չ առ՝ի դատել թէ է ինչ հակառակ բանի, պարտ է նախ ըմբռնել զայն. արդ խորհուրդս այս գեր՝ի վերոյ է մարդկեղէնն մտաց և անըմբռնելի։ Ոչ չէ մարթ ասել՝ թէ իցէ հակասական երից և միոյ՝ որ զմիմեանս արտաքսեն՝ կալ՝ի միասին, իբր զի մին չկարէ գոլ երեք, և ոչ երեքն մի. քանզի աստ ոչ եթէ զմիոջէ էութենէն Որդւոյ ասեմք մի և երեք, այսինքն այո և ոչ, այլ մի էութիւն, և երիս անձինս. ուր մին ստորոգի զայլսն, և երեքն զայլսն, և ըստ առածին՝ զանազանութիւն վերաբերութեանց բառնայ՝ի միջոց զհակասութիւն։ Նաւատք՝ որ ուսուցանէ մեզ երիս անձինս և մի բնութիւն Աստուած, նոյնն՝ և մի անձն և երկուս բնութիւնս ուսուցանէ՝ի Քրիստոս. յորմէ յայտ է, զի այլ ինչ է բնութիւն կամ գոյացութիւն, և այլ անձն. ոչ ապաքէն և իմաստասիրութիւն ընդունի՝ի մեզ երկուս գոյացութիւնս այսինքն զհոգի և զմարմին, և անձն մի. ապա ուրեմն չէ հակասական ընդունել Աստուած երիս անձինս և մի գոյացութիւն։

Այլ թէպետ և ոչ է մարթ ցուցանել բանիւ գխորհուրդ Երրորդութեան, սակայն Նաւքն հնարին օրինակաւք, որպէս մարթ է, իմանալի առնել զայն, որպէս

Առաւաւորիչ Հայրն մեր ասէ. (յաճախապա. Ճառ ա.) "Օ՛ի որպէս արև և լոյս և ջերմ միոյ արեգական ասի և ոչ այլոց, և որպէս աղբիւր և. ջուր և գետ՝ի միոյ՝ի բնութենէ լինին, սոյնպէս և միտք և բան և հոգի իմանի՝ի մարդում, նոյնպէս և աստ միոյ բնութեանն և աստուածութեան է իմանալ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ,, : Եւ մանաւանդ Տէրտուղիանոս և Կիրիղոս նահանգացի և սուրբն Գրիգորիոս պատկեր իմն զնորին ցուցանեն՝ի մէջ : Պաքէն ասելն իսկ Աստուծոյ՝ի բառեղծանէն զմարդ "Բրասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան ,, . տայ մէջ՝ի միտ առնուլ, զի՝ի պատկեր Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ արար զմեզ : Օ տեսութիւնս Հարց զայսմանէ այսպէս բացատրէ Պօսիւէ. "Նմին լուեցուցուք առ վայր մի զղգայարանս մեր, և ամփոփեսցուք՝ի խորս մտաց, այսինքն՝ի մասին մերում՝ ուր Աշմարտութիւն լինի լսելի, տեսցուք անդ գոգցես իմն զպատկեր Երրորդութեան՝ որում երկրպագեմքն : Խորհուրդ մտայ որպէս բողբոջ շառաւիղեալ՝ի Հոգւոյս, իբրև որդի իմացութեանս մերոյ, զաղօտ իմն նմանութիւն ընծայէ զՈրդւոյն Աստուծոյ ծնելոյ՝ի յաւիտենից՝ի միտս Հօրն երկնաւորի. վասն որոյ և Նան կոչի, զի մի ըստ նմանութեան մարմնոյ իմասցուք զնա ծնեալ՝ի ծոց Հօր, այլ որպէս՝ի ներքս՝ի Հոգւոյ մերում ծնանի բանս՝ յորժամ յառեալ հայիմք՝ի Աշմարտութիւն : Նայց թեղնաւորութիւն Հոգւոյս մերոյ ոչ սպառի՝ի բանն յայն ներքին կամ՝ի խորհուրդն իմանալի՝ի պատկերն Աշմարտութեան կերպարանեալ՝ի ներքս՝ի մէջ. այլ սիրեմք և զբանն զայն ներքին, և զՀոգի՝ յորմէ նայն ծնանի. և՝ի սիրելն զայն՝ իմանամք ինչ յանձին ոչ ինչ ընդհատ պատուական քան զնոյն ինքն զՀոգի մեր և զխորհուրդ, որ յերկաքանչիւրոցն յառաջ եկեալ՝ միաւորէ զնոսա, և միանայ՝ի նոսին, և մի կեանս ընդ նոսին կեայ : Նստ այսմ օրինակի, որչափ ինչ մարթի նմանութիւն ընդ Աստուած և ընդ մարդ, բղխեհ Աստուած սերն յաւիտենական. ելանէ՝ի Հօրէ՝ որ խորհի, և Որդւոյ՝ որ է խորհուրդ Հօր, և է ընդ նմա և ընդ խորհուրդ նորա մի էութիւն, հաւասարապէս երանելի և կատարեալ : Եւ համառօտիւ ասացեալ՝ կա-

տարեալ է Աստուած. և Ման նորա՝ պատկեր կենդանի անսահման իսկութեանն՝ ոչ ինչ նուազ է կատարեալ. և սիրոյ նորա, որ բղխեալ յանսպառ աղբերէն բարութեան՝ յինքն բերէ զլրութիւն նորին, ոչ է մարթ նուազել յանսահման կատարելութենէ: Եւ քանզի անհնար է մեզ ունել զԱստուծոյ այլ ինչ նկարագիր բաց՝ ի կատարելութենէ, զմի մի յերեցունց աստի ուրոյն մտածեալ՝ արժան է անուանել Աստուած. այլ զի երեցունց մի է հարկաւ բնութիւն, երեքին ապա մի Աստուած են: Ապա ուրեմն մի՛ ինչ անհաւասարութիւն, մի՛ ինչ բաժանումն իմաստուք յերկրպագելի Երրորդութեանն. և թէպէտ անհաս՝ ի մտնջ գեր՝ ի վերոյ քան զմիտս անցանէ այդ հաւասարութիւն, սակայն հոգիս մեր՝ եթէ միտ դնեմք՝ ուսուցանէ ինչ մեզ զայնմանէ ,,:

“Հոգիս մեր գոյ. արդ իբրև սա գիտէ ստուգիւ թէ գոյ, միաք իւր վկայեն Հնմարտութեան գոլոյ իւրոյ. և՝ ի սիրել զգոյութիւն իւր և զմիտս՝ որչափ արժանի են սիրոյ, աչերն այն հաւասարէ երկաքանչիւրոցն կատարելութեան: Երեքին սոքա անբաժանելի են; և՝ ի միմեանս բովանդակին. իմանամք զի գոմք, և զի սիրեմք զմեզ, և զի սիրելի է մեզ գոլ մեր և իմանալ. և ո՛ կարասցէ ժխտել զայս, եթէ միտ դիցէ անձին: Եւ ոչ միայն մի յերեցունց աստի չէ քան զմիւսն գերազանց, այլ երեքին եւս միանգամայն չեն քան զմի՝ ի նոցանէ գերազանց. զի իւրաքանչիւր ոք բովանդակէ զամենայն, և յերեսին հաստատեալ կայ երանութիւն և փառք բանականիս բնութեան: Ասա սմին օրինակի, և անսահմանաբար գեր՝ ի վերոյ քան զօրինակս, կատարեալ և անբաժանելի է և մի յէութեան և համահաւասար Երրորդութենն՝ զոր պաշտեմք, և որում՝ նուիրեալ եմք՝ ի սուրբ աւազանէն,,. (Ցօան՝ ի Վեպս ապիոյ. մանն ը. գլ. ժԹ):

Եւ սուրբ Ամբրոնացին այսպէս զնոյն խորհուրդ աղօտաբար բացատրէ. (՝ի Ղեին. պատարագէ 2.) “Եւ ահա նա (Հոգի Տէրոյ) անմահ բնութիւն և պարզ, որ և բերէ յինքենէ յառաջ քան:... Յառ քանն՝ որ՝ ի նմանէ յառաջ գայ,... և գոյացեալ անձնաւորի՝ ի նմանէ, և այլ է (Էակ) ամենայն իրօք քան զնա տեսանի, որ ոչ

'ի նմա է որպէս ծնունդ, և է առ նմա որպէս զհամաքնութիւն: Այսպէս ասէ և աւետարանիչն վասն Աստուծոյ Հանին Քրիստոսի. Ի սկզբանէ էր Հանն, և Հանն էր առ Աստուած, և Աստուած էր Հանն. նա էր 'ի սկզբանէ առ Աստուած: Այսպէս և 'ի յարացոյցդ է տեսանել Հիմարիա քննողն, և նշմարելոյին հաւատալ իսկ, զի այս բանս՝ որ անձնաւորեցաւ 'ի միտն և է առ նմա, կամաք ծնողն մտացն արտաքս բղխէ, և ելանէ առ Աստուած իմանալի խօսութեամբ, կամ ինչպէս 'ի զգայական և սիրտ 'ի մարդկիկ լեզուդ պաշտամամբ և ձեռին սպասաւորութեամբ: Այլ է խօսս բղխեալ այլ քան ըզբանն ծնեալ. զի ոչ եթէ յելանելն սորա՝ նա 'ի մտաց պակասէ, այլ 'ի ձեռն ներգործութեան մտացն և բանին՝ որ 'ի նմա՝ սա բղխէ, և նա 'ի ծնօղ միտն անշարժ մնայ, և անձնաւորի 'ի մտացն և 'ի բանէն անձնաւորութիւն խօսիցն, եթէ առ իմանալիս իմացականապէս, եթէ առ զգալիս սպասաւորութեամբ զգայարանացս՝ որպէս ասացաւ. այսպէս Քրիստոս ասէ և յաղագս Հոգւոյն սրբոյ. Հոգին ճշմարտութեան՝ որ 'ի Հօրէ ելանէ, և յինձ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ: Ըստ ըստ էութեան և բնութեան անմարմին տեսանի, Հոգին ծնօղ և բանն ծնեալ և խօսքն արտաքս բղխեալ. սակայն տրամորոշին յերիս Հատուածս, 'ի Հոգին՝ 'ի բան և 'ի խօսս: Այս պատկերաւս 'ի նախապաղափարն Աստուած Հպիմք իմացմամբ, և իմանամք զմի աստուածութիւնն և զմի զօրութիւն և զբնութիւն՝ երիս անձնաւորութիւնս կատարեալս: Սակայն 'ի ստորև մնայ յարացոյցս 'ի նախատակէն բազում իրօք՝ զի Աստուածոյ բանն անձնաւոր է 'ի նմա անցնդելի, իսկ մերս ցնդի Հանապազ. և Աստուածոյ բղխումն ընդ զարարածս գիտութեամբ նորա, և առ ծնողին է անաղաւաղելի. իսկ մերս աղաւաղեալ ստուերանայ ,,:

Ա. ՈՒ Ա. Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ասէ. Ա. Հանն ցուցանէ անհնարին զամենայն բազմաւորութիւն Աստուած, վասն որոյ և զմիոյ են. թակայութեան կամել և իմանալ յերիս իմացական և

՝ի կամեցող էնթակայութիւնս զանազանեալս յիրե-
րաց ըստ անձին և ըստ ներգործութեան . ապա յընդու-
նել զերրորդութիւն՝ հարկաւ զհետ գայ կամ զսաբե-
լեան կամ զեռաստուածեան և կամ զարիոսեան ընդու-
նել զաղանդ : Այսն զի վարդապետութիւն երրոր-
դութեան ուղղակի հակառակ է առածին՝ Որ նոյն են
ընդ միասն երրորդի , նոյն են ընդ միմեանս . քանզի էու-
թիւնն Աստուծոյ ոչ զանազանի իրապէս յանձանց . արդ եթէ
անձն իւրաքանչիւր նոյն է ընդ աստուածային էութեան ,
ապա նոյն և ընդ միմեանս պարտին գոլ անձինք . զի
Հայր է աստուած , Որդին է աստուած . ապա Հայր է
Որդի , ըստ սաբելեան հայհոյութեան : Իսկ եթէ զան-
ձինս՝ի միմեանց ասիցեմք զանազանեալ , երիս իմանամք
աստուածս . զի եթէ Հայր զանազանի իսկապէս յՈր-
դւոյ , և անձինք աստուածայինք նոյն են ընդ աստուա-
ծային էութեան , ապա էութիւնն աստուածային՝ի Հայր
և յՈրդի զանազանի իրապէս յինքեանէ :

Պա. Կամն ցուցանել անհնարին զբազմաորութիւն
աստուածային էութեան , այլ ոչ զեզանակին՝ որով նոյն
աստուածային էութիւն յերիս անձինս է : Զի առ՝ի
կարելոյ ցուցանել զանհնարութիւն իրիք , պարտ է ձա-
նաչել զիսկութիւն նորին . իսկ բանն մարդկային չձա-
նաչէ զէութիւնն Աստուծոյ , ապա և ոչ կարող է զան-
հնարութիւն իրին ձանաչել : Այլ ենթակայութեան
արդարև անհնարին էր յերիս իմացական՝ի կամեցող
և՝ի ներգործական ենթակայութիւնս իմանալ կամել
և ներգործել , եթէ երեքին այնոքիկ այլ ինչ էին՝ի
միջէն , այլ միւն այն ենթակայութիւն նոյն ինքն աս-
տուածային էութիւնն է՝ որ է՝ի Հայր և յՈրդի և՝ի
սուրբ Հոգին , և նոյն իմանայ կամի և ներգործէ յե-
րեսին՝ի նոսա անձինս , և յիւրաքանչիւրս յերեցունցն
ըստ նորին եղանակի : Այր ոչ սաբելեանցն է՝ որ բառ-
նային զզանազանութիւն անձանց , ոչ եռաստուածեան-
ցին՝ որք բաժանէին զաստուածային էութիւն , և ոչ ա-
րիոսականաց՝ որ աստիճանս դնէին՝ի նմա :

Աստ զհետ գայ՝ զի և ոչ հակառակ ելանէ առածին
վարդապետութիւնս այս : Զի որք նոյն են ընդ միու-
մ երրորդի , արդարև չկարեն զանազանել՝ի միմեանց ըստ
նմին տեսութեան . այլ քաջ իսկ մարթ է նոցա զանա-

զանել ըստ այլում տեսութեան։ Ընդհակ հին. ՚ի տեզս՝ և բարձրութիւն երկայնութիւն և լայնութիւն. երեքին ևս նոյն են ընդ տեղոյ, այլ ոչ և ընդ միմեանս։ Ա ան որոյ ՚ի ձեռնարկութենէդ՝ Հայր է աստուած, և Որդին է աստուած, ոչ զհետ գայ՝ թէ Հայր իցէ Որդի, այլ զի երկոքին ևս իցեն նոյն ընդ Աստուծոյ և նոյն Աստուած։ Նոյնպէս և միւսոց ձեռնարկութեանդ ոչ ըստ կարգի է հետեւումն. զի նոյն աստուածային էութիւն յերկուս անձինս իրապէս զանազանեալս ՚ի Հայր և Որդի այլ և այլ եղանակաւ է, ՚ի մին իբրև ՚ի Հայր և ՚ի միւսն իբրև Որդի, եղանակաւ գոլոյն ևեթ զանազանեալ, որպէս նոյն տեղի ըստ լայնութեան ըստ երկայնութեան և ըստ բարձրութեան զանազանեալ։

Աստ. Բ. — ս. Նովին օրինակաւ՝ որով ձեռնափակեմքն. Հայր է անձն աստուածային, Որդի է անձն աստուածային, Հոգի է անձն աստուածային, ապա երեք են անձինք աստուածայինք, մարթ է և ձեռնարկել. Հայր է աստուած, Որդի է աստուած, Հոգին է աստուած, ապա երեք աստուածք են։ Ո՛չ անձն բովանդակի յինքեան զէութիւն. ապա ՚ի բազմապատկել անձանց՝ բազմապատկի և էութիւն։ — ս. Նթէ մի էութիւն է Աստուած, մի է և անձն՝ որպէս պահանջէ նոյն ինքն ծանօթութիւն Աստուծոյ, որ ցուցանէ զէութիւն գոյաւոր, վասն որոյ և մի անձն անսահմանն և անբաժանելի, պարզ և անմասն յամենայն բազադրութենէ՝ որ յառաջ գայ ՚ի թուոյ անձանց, որոց այլ և այլ գոյութիւն է և կատարելութիւն. քանզի մէն մի յանձանց պակասէ ՚ի կատարելութենէ, որ միւսումն է յատուկ։

Պէ. — ս. Ընդհանրապէտք միմեանց են երկոքին ձեռնարկութիւնքդ. զի յառաջնումն բազմապատկին անձինք, այսինքն եղանակ ևեթ գոլոյ աստուածային էութեան, ուստի զհետ գայ երիս անձինս աստուածայինս ասել. իսկ յերկրորդումն բազմապատկի աստուածային էութիւնն, որ է անտեղի, զի նոյն է յերեսին։ Ընդ անուղղակի ևեթ բովանդակէ յինքեան զէութիւն, իսկ ուղղակի զգոյութիւն։ Ա ան որոյ ծանօթութիւն Աստուծոյ ցուցանէ զէութիւն, այլ ոչ պահանջէ զի էու-

Թեանն այնմիկ մի ևեթ եղանակ իցէ գոլոյ· այլ մանաւանդ այնու իսկ զի աստուածայինն է էութիւն անսահմանն՝ կարէ բովանդակել զանազան գոյութիւնս, զոր էութիւն սահմանեալ ոչ կարէ, զի հարկ է նմա միով ևեթ եղանակաւ գոլ։

— ԻԲ· Եւ ոչ զանազանութիւն անձանց բազադրութիւն երբեք մտածանէ յԱստուած· զի չեն մանն աստուածութեան, այլ նոյն ինքն էութիւն աստուածային երրակի գոյաւոր· և թէպէտ անձինք՝ ի միմեանց զանազանեալ, այլ յաստուածային էութենէ ոչ զանազանին, և ոչ կացուցանեն այլ և այլ գոյակս։ Աստիպէն Հայր ոչ է Որդի և Հոգի, և ոչ Որդի Հայր է և Հոգի, և ոչ Հոգի Հայր է և Որդի· այլ Թող զի առնչութիւնք ըստ յոգունց յաստուածաբանից ոչ աճեն կատարելութիւն ինչ, զի առնչութիւն ոչ այլ ինչ է՝ բայց տեսութիւն իրիք առ այլ, պատասխանեմք առ յետին մանն առարկութեանդ, զի զառընչական կատարելութիւնս՝ որ մէն միում յանձանց պատկանին անմիջապար, երեքին և անձինք ամենատուրբ Երրորդութեան ունին միջնորդաւ աստուածային էութեան՝ որ նոյն է յամենեսին։

ԳԼՈՒԽ Գ

ԶԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԶԻՐ ԻՍԿ ԱՆԹԱՆՕԹ Ի ՀԻՆ ՕՐԻՆՑ

Նահապետք և մարգարէք և վարդապետք հին օրինաց ունէին ինչ ծանօթութիւն գԵրրորդութեան։ Աստուած՝ ի ստեղծանելն զմարդ՝ ասէ· «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան»։ Եւ ապա· «Ահա Ադամ եղև իբրև զմի ի մէնջ»։ Տերտուղիանոս, Իրէնէոս անտիոքացի, Կղեմէս աղէքսանդրացի, սուրբն Աթանաս, Ամբրոսիոս և Թէոդորիտոս, և Թէոդորետոս, զայս ձև բանի իմանան գԵրրորդութեան. զի օտար է այս ձև բանի՝ ի սուրբ գրոց, խօսել բազմաւորական. Աստուծոյ իսկ երիցս գտանեմք խօսեալ այսու պայմանաւ. զորմէ այսպէս իմաստասիրէ դարձեալ նոյն ինքն Պօսիւէ· (Լսօ՛ ի Վեպս. բ. ա.)

“Ա՛րասցուք մարդ. խօսի Ա՛ստուած յանձին իւր, խօսի առ այլ ոք՝ որ գործէ իբրև զինքն, առ այլ ոք՝ որոյ ա֊րարած է մարդն և պատկեր. խօսի առ միւս այլ ինքն, ընդ այնմ՝ որ ասէ յաւետարանի իւրում, զի զոր Հա՛յր առնէ՝ զնոյն և Որդին նմին նման գործէ. և ՚ի խօսել առ Որդի և ընդ Որդւոյ, խօսի համայն և ընդ ամենա֊զօր Հոգւոյն, որ համագոյ և միանձնաւորակից է Հօր և Որդւոյ,,։

Այն ՚ի հին կտակարանս և այլ բանք, յորս երևի զա֊նազանութիւն անձանց Ա՛ստուած, և մանաւանդ աս֊տուածութիւն Ա՛նանին՝ որ խոստացեալն էր փրկիչ ամե֊նայն մարդկան։ Ա՛յլ թուի թէ ոամիկն չունէր ինչ յայտնի ծանօթութիւն զայսմանէ. ապաքէն գիտէին ամենեքեան զխոստումն փրկչին գալստեան, այլ զի Ա՛ս֊տուածոյ որդի էր նա համագոյակից Հօր՝ անդիտանային։ Գիտէին և զՀոգին Ա՛ստուածոյ, այլ ոչ իբրև անձն զա֊նազանեալ ՚ի Հօրէ և Որդւոյ. Որդւոյն Ա՛ստուածոյ էր պահեալ, այնմ որ է ՚ի ծոց Հօր, իջանել յերկինից՝ ոչ մեկնելով ՚ի Հօրէ, և գալ պատմել մեզ զդաղտնիս աստուածային էութեան, զոր Ա՛ովսէսի և այլոց մար֊գարէից ակնարկեալ ևեթ էր։ Սակ ՚ի չնորհս աւետա֊բանին ամենայն հաւատացեալք ուսեալ գիտեն, զի Ա՛ս֊տուած մի և անբաժանելի՝ որում նուիրին ՚ի սուրբ ա֊ւազանէն՝ է միանգամայն Հա՛յր, Որդի և Հո՛գի սուրբ։ “Ա՛յս ապա պարզին առաջի մեր աստուածայնոյ էու֊թեանն խորք անհասանելի, անպատում մեծութիւն միութեան նորա, և անբաւ Հնարութիւն բնութեան, որ քեզնաւորագոյն ևս ՚ի ներքս քան արտաքոյ՝ յերիս հաւասար անձինս հաղորդի անբաժանելի։ Ա՛ստանօր յայտնին խորհուրդքն ծածկեալք և գոգոյես իմն կըն֊քեալք ՚ի հին կտակարանս։ Ա՛րդ համանամբ զխորհուրդ բանին. Ա՛րասցուք մարդ ըստ պատկերի մերում։ Այ֊րորդութիւնն ակն արկեալ անդ ուրեմն յարարչութեան մարդոյ, յայտնապէս ծանուցաւ ՚ի վերածնութեան նո֊ր։ Ա՛րդ ՚ի միտ առնումք զինչ է իմաստութիւնն, ըստ Սողոմոնի, երկնեալ յառաջ քան զյաւիտեանս ՚ի ծոց Ա՛ստուծոյ, որով ուրախ լինէր նա և հաստէր նուաւ֊զամենայն արարածս։ Գիտեմք զի նա ինքն է, զոր ե֊տես Գաւիթ ծնեալ նախ քան զարուսեակն. և մա֊

տեանք նորոց կտակարանաց ուսուցանեն մեզ, զի նա ինքն է Բանն՝ նեղբին բարբառ Աստուծոյ և յաւիտենական իմաստութիւն նորա, որ է ի ծոց Հօր անմեկնելի, և որով ամենայն ինչ եղև։ Զուարա պատասխանեմք խորախորհուրդ հարցուածոյն՝ որ յԱբրահամ, Թէ Ո՞րինչ անուն է Աստուծոյ, կամ զինչ անուն Որդւոյ նորա. քանզի գիտեմք զի անունն այն Աստուծոյ, այնպես խորհրդաբար ծածկեալ, Հայր է. հասու եղեալ խորոց իմաստիցն՝ զի Հայր է նա ի յաւիտենից հաւասարակցի Որդւոյ իւրոյ։ Եւ զի Բան է անուն որդւոյ նորա, զոր ծնանի յաւիժաբար անձամբ զանձն Հանապէտ, որ Հիմարտութեանն իւրոյ տիպ է անվթար, որ է պատկեր իւր և որդի միածին, Հառագայթ փառաց իւրոց և նկարագիր էութեան իւրոյ ,,։

,,Ընդ Հօր և ընդ Որդւոյ Հանապէտք և զՀոգին, սէր փոխադարձ երկաքանչիւրոցն, և յաւիտենական միաւորութիւն նոցա։ Այս Հոգի է՝ որ յարդարէ մարգարէս, և բնակէ ի նոսա, խորհրդազգացս Աստուծոյ առնէ զնոսա և տեղեակս գաղտնեաց ապագայից։ Սա է՝ վասն որոյ գրեալն է. Ցէր առաքեաց զիս, և Հոգի նորա. որ որիշ է ի տեառնէ, և տէր Հանդերձն նմին, զի առաքէ մարգարէս, և յայտնէ նոցա զՀանդերձեալս։ Սա ինքն, որ խօսի ի մարգարէս, մի է ընդ Հօր և ընդ Որդւոյ. և ի միասին ընդ նոսա զնոր մարդն Հաստատէ սրբութեամբ։ Այսպէս ահա Հայր և Որդի և սուրբ Հոգին, մի Աստուած յերիս անձինս, այն որ ընդ ազգս ցուցեալն էր առ Հարս մեր, ծանուցաւ յայտնապէս ի նոր օրինս։ Որ ուսեալ արդ զգերահրաշ խորհուրդն, և ընդ անհասանելի խորս նորա սարսափեալ, ծածկեմք զդէմս ընդ սերովբէից ըստ մարգարէին տեսութեան, և երկրպագեմք ընդ նոսա երեքսրբեան տերութեանն ,,։ (Պօսէ-է Խօսք ի վերս մասն ք. գլ. ժԹ)։

ԳԼՈՒԽ Դ

ՋԻ Ի ՄԻՈՒՄ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՁԻՆՔ ԵՐԵՔ ԻՍԿԱՊԷՍ ՋԱՆԱԶԱՆԵԼՔ

Յուդանի՛ ի սուրբ գրոց. "Մ՚կրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,,. (Մ՚ած. իբ. 19)։ Ա՚րդ փրկիչն մեր եղակի դնելով զանունն՝ ցուցանէ զմի աստուածութիւնն, և՛ի նմին զՀայր և զՈրդի և զՀոգի երիս անձինս զանազանեալ, և զերեսին ևս նոյն մի Ա՚ստուած՝ յորոյ անուն պատուիրէ մկրտել զՀաւատացեալս։ Ա՚յսպէս զբանս զայս մեկնեն և բացատրեն հարք և մեկնիչք առհասարակ։

"Նա իբրև մկրտեցաւ Յիսուս, եւ վաղվաղակի՛ ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք, և եռես զՀոգին Ա՚ստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի, և գայր՛ ի վերայ նորա։ Նա ահա ձայն յերկնից՝ որ ասէր. Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ,,։ (Մ՚ած. ՟ի. 16)։ Ա՚րդ յայտնապէս զանազանին՛ ի սմա երեք այլ և այլ անձինք. Հայր որ բարբառի յերկնից. Որդի՝ ընդ որ հաճի Հայր. և Հոգին՝ որ իջանէ աղաւնակերպ՛ ի վերայ Որդւոյ։

"Նա ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ... զՀոգին Ճշմարտութեան,,։ (Յհ. ԺՂ. 16.) "Դայց յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ՛ ի Հօրէ, զՀոգին Ճշմարտութեան որ՛ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ,,. (Յհ. ԺԵ. 25)։

"Հոգին սուրբ եկեսցէ՛ ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լինի՛ ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է՛ ի քէն՝ սուրբ է, և որդի Ա՚ստուծոյ կոչեսցի,,. (Ղ. Ի. ՟ա. 35)։

"Օ՚ի ոչ եթէ չափով տայ Ա՚ստուած զՀոգին. Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ՛ ի ձեռս նորա,,. (Յհ. ՟ի. 35)։

"Նա նա էր լի Հոգւով սրբով. Հայեցաւ յերկինս, և եռես զփառս Ա՚ստուծոյ, և զՅիսուս զի կայր ընդ աջմ Ա՚ստուծոյ,,. (Գործ. Է. 55)։

“Ո՞նդհակառակ մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ, և հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ ընդ ձեզ ամենեսին ,,։ (Բ. Կոր. ԺԳ. 13)։

“Ընտրեաց Աստուած զՀոգի Որդւոյ իւրոյ ի սիրտս մեր, որ աղաղակէ աբբա՝ Հայր ,,. (Գաղ. դ. 6)։ “Որ քա երեքին են՝ որ վկայեն յերկինս. Հայր, և Բանն, և Հոգին սուրբ. և երեքեանս այս մի են ,,. (Ա. Յհ. Ե. 7)։ Սուրբն Կիպրիանոս, սուրբն Եփրեմ, սուրբն Փուլգենտիոս, և այլք ի Հարց ի կիր առնուն և զվերջինս զայս վկայութիւն ի հաստատութիւն վարդապետութեան իւրեանց զՀրոյդութենէ։

Ի վկայութեանց աստի ոչ միայն զանազանութիւն երից անձանց ցուցանի, այլ և ամենևին հաւասարութիւն նոցա. զոր և ի բաղդատութենէ բանիցն Յայեայ (դ. 9.) Յոհաննու աւետարանին (ԺԲ. 40.) և Պօղոսի (իբ. 26.) բացայայտ ի միտ առնուլ է. զի ըստ նոյն բան՝ “Լսելով լուիջիք, և մի իմասջիք ,,. յառաջնում ընծայի Հօր, յերկրորդումն Որդւոյ, և յերրորդումն Հոգւոյն սրբոյ, հանդերձ փառօք տեսլեանն։

Յետ այսչափ վկայութեանց սուրբ գրոց աւելորդ համարիմք զբանս Հարց և զԺողովոյ կուտել այսր՝ ի ցոյց յամենեցունց խոստովանեալ Աշմարտութեանս. և թէպէտ յառաջնին դարս ոչ յոյժ յայտնապէս Հառէին զանհաս խորհրդոյս վասն հերձանոսաց, զի մի զմարգարիտս արկանիցեն առաջի խոզաց, սակայն այսու ամենայնիւ նախ քան զսաբելեանն իսկ մոլորութիւն Հառեցին զայնմանէ Յուստինոս սուրբ վկայն և Թէոնա դորաս և Աթանաս յառաջնին դարս. իսկ ի վերջ կոյս երկրորդին, և ի սկիզբն երրորդին, Տերտուլիանոս ընդդէմ Պրաքսեայ, սուրբն Նպպոլիտ եպիսկոպոս և վկայ ընդդէմ Նոետոսի՝ որ յամառութեամբն արտաքսեցաւ յեկեղեցւոյ. և սուրբն Դիոնեսիոս աղէքսանդրացի ձայնակցութեամբ Դիոնիսեայ քահանայապետին Հռոմայ ընդդէմ նորին իսկ Սաբելի. որոյ մոլորութիւն երկիցս ի ժողովն Նիտիոքայ դատապարտեցաւ ընդ Պօղոսէ սամոսատացւոյ. և ապա ի տիեզերական ժողովն Նիկիոյ. և որ յետ այնորիկ ժողովք ընդհանուրք և ըստ մասնեաց ի դատապարտել զայլ մոլորութիւնս նզովեցին և զսաբելեանն ի բաղում նուագս։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛ՍՏՂ. Ա. Սուրբ գիրք ոչ սրեք յայտնի ցուցանեն զհամագոյութիւն երից անձանց. զի զձև խորհրդոյ միջոցաւթեան մարթ է մեկնել յանուն Հօր Աստուծոյ, Յիսուսի Քրիստոսի, և Հոգւոյն սրբոյ՝ իբր զօրութեանն Աստուծոյ անձնաւորելոյ. նոյնպէս է իմանալ զոր առաքեալն ասէ (Ա. Կոր. ԺԲ. 13.) "Ո՛ նորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ, և հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ,,: Նմանապէս և յայլ վկայութիւնս:

ՊԽ. Սուրբ գիրք զհամագոյութիւն երից անձանց նիւթապէս նոյնին բառիւ ոչ ցուցանեն, այլ յայտնապէս զայն ըստ իմաստից բացատրեն, որպէս տեսաք՝ի ցուցմունս անդ. զի զնոյն զօրութիւն երեցունցն ևս հաւասարապէս ընծայեն: Ո՛չ վկայութիւնս սուրբ գրոց ոչ է պարտ առնուլ ուրոյն՝ի միմեանց, զի զմիմեանս բացատրեն: Այսու որոյ թէպէտ և՝ի ձևն միջոցութեան և յայլ վկայութիւնս՝ ուր հարևանցի յիշատակին անձինք սրբոյ Երրորդութեան՝ չիցէ տեսանել յայտնապէս զհամագոյութիւն նոցա, այլ՝ի բանս Քրիստոսի յայտնապէս տեսանի. և զառաքելոցն ևս ոչ է մարթ իմանալ զբանս առանց այնր վարդապետութեան:

Ա՛ՍՏՂ. Բ. Քրիստոս ասէ առ Հայր. (Յհ. ԺԷ. 3.) "Ա՛յս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն Ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս,,: Այսպէս ուրեմն Հայր ևեթ է Ճշմարիտ Աստուած. իսկ Քրիստոս և Հոգին սուրբ ոչ նոյն են ընդ Հօր: Ո՛յոյն և առաքեալն Հաստատէ (Ա. Կոր. Ը. 5.) "Ո՛ի թէպէտ և իցեն անուանեալ աստուածք, եթէ յերկինս և եթէ յերկրի, որպէս և են աստուածք բազումք և տէրք բազումք, այլ մեզ մի է Աստուած Հայր, յորմէ ամենայն, և մեք՝ի նա. և մի տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, և մեք նովաւ,,: Ուր առաքեալն սահմանէ զԱստուած ոչ Հայր և Որդի և Հոգի, այլ Հայր միայն: Նոյնպէս և այլուր ասէ (Եփ. Դ. 6.) "Ա՛ի Աստուած և Հայր ամենեցուն, որ՝ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին՝ի մեզ,,:

պե· Նանն Քրիստոսի առ Հայր զսուտ աստուածս ևեթ արտաքսէ, զի բառն դոյն ոչ ի Հայր հայի, այլ ի Հիմարիան Աստուած. և իմաստ բանին է, զի առանց Հաւատոյ ի Հիմարիան ևեթ Աստուած և ի մարդեղութիւն որդւոյ Նորա Յիսուսի Քրիստոսի՝ չէ մարթ ումեք զյաւիտենական կեանս ժառանգել· Նոյնպէս ևս զի և որպիսի Հիմարիանն այն Աստուած իցէ, նոյն ինքն Քրիստոս այլուր բացայայտէ՝ և զիւրն և զՀոգւոյն սրբոյ զաստուածութիւն յայտ առնելով։

Յայտնի ևս առաքեալն զսուտ աստուածս ևեթ արտաքսէ, առ բազմաստուածութիւն հեթանոսաց զմի Աստուածն դիմադրելով, և առ բազմութիւն տեարցն զմի տէր Հիմարիտ։ Ո՞ան որոյ դ ասելովն՝ ի բաց տանի միայն զայլ աստուածս և զտեարս աստուածարեալս ի հեթանոսաց, և ոչ եթէ զՈրդի կամ զՀոգի արտաքս թողու յաստուածութենէ՝ որպէս արիանոսքն թիւրեին։ Ապա թէ ոչ, և յասելն դ առ Յիսուս, պարտ էր զՀայր արտաքոյ իմանալ ի տերութենէ անտի։ Ապաքէն զաստուածութիւն Որդւոյ լռելեայն ծանոյց առնել Հայր՝ որ առանց Որդւոյ ոչ իմանի. և չէ մարթ ասել՝ թէ Հայր Հաւատացելոց կոչիցէ զնա, զի առ այդ շատ իսկ էր Աստուածն անուն։ Նայց զգուշանայ վանն տկարամտութեան նորահաւատ հեթանոսաց սովորելոյ ի բազմաստուածութիւն, չյիշել միանգամայն և զՈրդի և զՀոգի՝ զորս այլուր ըստ տեղւոյն յիշէ հաւատոյ Հօր։

Զնոյն է ասել և զմիւսմէ վկայութենէն առաքելոյն, զոր և նախորդ բանիւն յայտ առնէ· «Ի տէր, մի հաւատք, մի մկրտութիւն»· զի դ ասէն ի Քրիստոս Հայր, որ մանաւանդ ըստ մտաց հեթանոսաց նշանակէ Աստուած։

Ասէ· Բ· Ա կայութիւն կամ ողիկեայ թզթոյն Յոհաննու ոչ է վաւերական· զի չիք ի թարգմանութեան մերում և գրեթէ յամենայն իսկ գրչագիրս Յունաց։

Պե· Զայլ վկայութիւնդ այդ դոյ ի հերոնիմեան վաղեմի թարգմանութեան, և չորեքհարիւր Հարք ափրիկեան ժողովոյն ի հինգերորդ գարու ի կիր առնուն զայդ, որպէս և ոչ սակաւք ի նախնի Հարց, յորոց ըզկիպրիանոս և զՀիլարեմ և զՀուլգենտիոս ի վեր անդր

յիշատակեցաք։ Եւ այնչափ են ապացոյցք վաւերակա-
նութեան Համարոյս, և՝ ի յոյն օրինակս ևս յառաջա-
գոյն գոլոյ, զի անաչառ քննաբանք Համարին անկեալ
զայն վասն նմանաձերձութեան երկոցունց Համարոցն.
քանզի և յոմանս՝ ի գրչագրաց պակասեալ ութերորդ Հա-
մարն փոխանակ եօթներորդին։

Ա՛ռել. Գ. Ի առաջ Հրոդոտոսէ՛ն յերրորդումն դա-
րու է հնարեալ, և անծանօթ էր առ նախնիս այդ ձև
վարդապետութեան, թէպէտ և դաւանէին զ՚այր և
զ՚կին և զսուրբ Հոգի։

Գիւ. Ա արդապետութիւն Հրոդոտոսեան ըստ նիւ-
թական ձևոյն և անուանն անծանօթ էր առ նախնիս,
այլ ոչ եթէ և ըստ էութեան իմաստիցն. զի բազում
յոյժ է խտիւն ընդ միմն և ընդ միւս։ Ի պաքէն Ա՛ֆո-
փիլոս գտանի լեալ առաջին՝ որ՝ ի կիր էառ զբառդ Հրո-
դոտոսէ՛ն. այլ թող զի իբրև ծանօթ իմն և ընդու-
նելի՝ ի կիր արկանէ զայն, ոչ նոր ինչ վարդապետու-
թիւն նորով բառիւն՝ ի ներքս մուծանէր, այլ զՀնչմար-
տութիւն՝ ի սկզբանէ հետէ ընկալեալ յամենեցունց
բացատրէր նովաւ։

ԳԼՈՒԽ Ե

ՉԻ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ, ԿԱՄ ԲՆԱՆ, Ի ԱՍՏՈՒԱԾ ՀՇՄԱՐԻՑ ՀԱՄԱԴՈՑԱՆԻՑ ՀՕՐ

Ցուցաք զի երեք անձինք են Ա՛ստուած, Հայր, Որ-
դի և Հոգի. զի սոքա երեքին իսկապէս զանազանին,
սակայն մի է Ա՛ստուած. զի են միանձնաւորակից և
ամենևին հաւասարք և համագոյք, գոլով նոցա նոյն և
մի էութիւն։ Ա՛ռ ասն որոյ և պարտիմք ըստ նիկիական
հանգանակին խոստովանել և հաւատալ, ոչ միայն "Ի
Հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի երևելեաց
և աներևութից,, այլ և "Ի մի տէր Յիսուս Ա՛ստ յոր-
դին Ա՛ստուծոյ, ծնեալ Ա՛ստուծոյ Հօրէ միածին նախ
քան զամենայն յաւիտեանս. Ա՛ստուած Ա՛ստուծոյ, լոյս
՝ի լուսոյ, Ա՛ստուած ճշմարիտ, Ա՛ստուծոյ ճշմարտէ
ծնունդ և ոչ արարած, համագոյակից (կամ՝ ինոյն ինքն

'ի բնութենէ) Նօա, որով ամենայն հինչ եղև ,, : Յոր յա-
ւել և սուրբ Ժողովն. "Իսկ որք ասեն՝ էր երբեմն
յորժամ ոչ էր Արդին... և կամ յայլմէ էութենէ ա-
սեն լինել զորդին Աստուծոյ... զայնպիսիսն նզովէ կա-
թողիկէ և առաքելական եկեղեցի ,, :

Պարթև էր մեզ ապա զկայ առնուլ աստ, և շատ հա-
մարել որ հինչ ասացաքս և վասն աստուածութեան Բա-
նին: Մ.յլ քանզի այն ամենայն 'ի խորհուրդ Երրոր-
դութեանն հայէին ուղղակի և 'ի զանազանութիւն ե-
րից անձանց, ոչ արտաքոյ առաջարկութեանս մերոյ է
խօսել ուրոյն և յառաջիկայ երկուս գլուխս զաստուա-
ծութենէ Բանին և Նոցուոյն:

Երկրորդ անձն ամենասուրբ Երրորդութեան կոչի
'ի գիրս Արդի աստուծոյ, Միածին որդի, Բան, Ի-
մաստութիւն, Պատկեր կամ Նկարագիր էութեանն
Աստուծոյ, Ճառագայթ փառաց Նօր, Լոյս 'ի լուսոյ,
Լոյսն Ճշմարիտ՝ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ
գալոց է յաշխարհ, Անապական, Անմահութիւն և
կեանք, Ցեր բոլորից, և Ճշմարիտ Աստուած՝ որով ա-
մենայն հինչ եղև: Ի վերայ այսոցիկ յաւելցուք զգլխա-
ւորագոյն վկայութիւնս 'ի սուրբ գրոց:

"Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած,
և Աստուած էր Բանն... ամենայն հինչ նովաւ եղև ,,.
(Յհ. ա. 1): Արդ քառեակ հինչ 'ի սմա սահմանի. նախ՝
յաւիտենականութիւն Բանին, 'ի սկզբանէ էր Բանն.
երկրորդ՝ զանազանութիւն նորա 'ի Նօրէ, և Բանն էր
առ Աստուած. երրորդ՝ աստուածութիւն նորա, և Աս-
տուած էր Բանն. և չորրորդ՝ արարչական զօրութիւն
նորա, զի ամենայն հինչ նովաւ եղև:

Մեյսմ գերահրաշ սկզբան հաւանձայնին և որ զինի
ամենայն բանք նորին աւետարանչի, որպէս զի յընդու-
նել զաստուածութիւն Բանին՝ դիւրիմացք ամենայն, և
'ի բառնալ զայն՝ անիմանալիք գտանին: Ո՛ւ ասէ (ա.
19.) "Միածինն որդի, որ է 'ի ծոց Նօր ,,. և (ի. 16.)
"Ո՛ր որդին իւր միածին ետ ,,. և (ի. 13.) "Որ էն յեր-
կինս ,, մինչ խօսի յերկրի: Ո՛ւ Արիստոս անձին ըն-
ծայէ զյարութիւն մեռելոց յաւուրն յետնում. (ի. 40):
Ո՛ւ ասէ զանձնէ Մ.յսուծոյ եղեալ. (ժի. 27. և այ-
լոյ.) "Ես և Հայր իմ մի եմք. (ժ. 29.) "Հայր յիս,

և ես՝ի Հայր. (անդ. 38)։ Օ՛ի ասէ զանձնէ՝ ոչ միայն յառաջ քան զԱբրահամ լեալ, այլ և յառաջ քան զլինելն աշխարհի. (ժԷ. 5)։ Օ՛ի կոչէ զանձն Հանապարհ և Ճշմարտութիւն և կեանք. (ժդ. 6)։ Օ՛ի պահանջէ դաւանել զինքն որդի Աստուծոյ. (Ի. 35. ժա. 26)։ Օ՛ի բովանդակ գաւետարանն վասն այնորիկ ասէ գրեալ, որպէս զի հաւատասցուք եթէ Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ (ՀԱ. 31)։ Աբդ յայսմ ամենայնի Հանն՝ զամենայն, որ Աստուծոյ է, ընծայէ անձին և պահանջէ. ապա Ճշմարիտ Աստուած է և Համագոյակից Հօր։

Համաձայն այսոցիկ և այլ աւետարանիչք և սրբազան մատենագիրք վկայեն. և վասն այնորիկ Քրիստոս իբրև Հայհոյիչ՝ի մահ մատնի, զի զանձն որդի Աստուծոյ արար։ Եւ առաքեալն ասէ (Հռ. Ը. 32.) "Որ չիւր որդին ոչ խնայեաց,,։ Եւ (Կողոս. Բ. 9.) "Օ՛ի՝ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս,,։ Եւ (անդ. Ա. 15.) "Օ՛ի նովաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երևին և որ ոչն երևին, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ նովաւ և՝ի նմին հաստատեցան, և նա է յառաջ քան զամենայն, և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ,,։ Եւ (Եբր. Ա. 2.) "Որով և զյաւիտեանն արար. որ է լոյս փառացն և նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ,,։ Ունի յաւիտենականութիւն նորա, ամենակալ զօրութիւն, և աստուածային բնութիւն բովանդակին։

Ովսպետ և արիանոսք և սոկինեանք Ջանացան խոյս տալ՝ի բանից սատի, այլ Հանապականք՝ անկեղծք քան զնոսա խոստովան լինին զի աւետարանիչք և առաքեալք ընծայեն արդարև Քրիստոսի զամենայն սեպհականելիս Աստուծոյ և որդի Աստուծոյ իսկապէս առնեն զնա։ Աբդ կամ Քրիստոս և առաքեալք խաբեցին զմեզ, և Աստուած հաստատեաց զխաբէութիւն նոցա հրաշիւք և զօրութեամբք, որ յանհնարինն է. և կամ պարտ է խոստովանել զի Քրիստոս այսինքն Հանն Աստուծոյ իսկապէս է Աստուած և Համագոյակից Հօր։

Ապաքէն սուրբ գիրք ուրեք ուրեք զորդին Աստուծոյ

ցուցանեն ստորանկեալ կամայ Հօր և՛ի վայր քան զնա։ Եւ այսպիսի բանք ոչ զաստուածութենէ նորա ասացեալ են, այլ զմարդկութենէ. ապա թէ ոչ, հակառակ ելանէին Քրիստոսի բանին. "Այս և հայր իմ մի եմք,,. (Յհ. Ժ. 30)։ Ալ ասն որոյ ասի՛ի Հանգանակին սրբոյն Աթանասի. "Հաւասար Հօր ըստ աստուածութեանն, և՛ի վայր քան զՀայր ըստ մարդկութեանն,,։ Իսկ որ ինչ յիմաստասիրութենէ առարկութիւնք՝ ոչ նոր ինչ են, այլ՛ի հնոյ իսկ հերետիկոսացն առարկեալք. բայց Հարքն Նիկիոյ, և կաթողիկէ Հաւատքն սրբ յաղթանակեցին ընդդէմ Հարատարմութեան և խաբէութեան արիանոսացն, կարասցեն միշտ իսկ յամենի առնել և կործանել զամենայն բարձրութիւն հպարտացեալ՛ի վերայ գիտութեանն Աստուծոյ։ Համառատասիրութիւն առարկել առարկէ՝ յանդգնեալ հետազօտել զխորս Աստուծոյ. այլ ամենայն Ճիշդն նորա ոչ յայլ ինչ զօրէ՝ բայց՛ի յանդիմանել զտկարութիւն նորա, և զՀարկ խոստովան լինելոյ՝ զի ե՛ ինչ՛ի վերոյ քան զինքն, որում՛ չկարէ Հասու լինել։ Այլ եթէ զիւրոյ մտացն իսկ զծնունդ չկարէ պատմել, զիա՞րդ զԱնին Աստուծոյ զծնելութիւն կարասցէ պատմել։

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Աւետ. Ա. Աւետարանիչն առ՛ի ցուցանել զի իմաստութիւնն Աստուծոյ գերազանցօրէն յայտնեցաւ՛ի Քրիստոս, զնոյն իմաստութիւն այլաբանէ մարմնացեալ, և որդի Աստուծոյ միածին կոչէ զՔրիստոս վասն գերաշխարհիկ առաքինութեան նորա և առ՛ի յԱստուծոյ սիրելութեան։

Պօ. Այդ մեկնութիւն աւետարանական ասացուածոյն "Յառ Յանն մարմին եղև,,, օտար է՛ի մեկնութենէ Հարց առհասարակ և անգամին՛ի սկզբանէ քրիստոնէական աւանդութեան։ Նմանեղև և է. զի աւետարանիչն ընծայէ Յանին մարմնացելոյ ոչ միայն զաստուածայինն ստորոգելիս՝ որ էնթակայութեան և էից գոյաւորի անկ են, այլ և զկիրս մարդկայինս առհասարակ՝ որ այլաբանեալ դիմառնութեան չկարեն երբէք

պատկանել։ Ընտեղի դարձեալ. քանզի Յովն Աստուծոյ մարդ եղեալ՝ այնչափ նշանս և զօրութիւնս արար առ ի յուցանել զաստուածութիւն իւր և զձիմարտութիւն յաւիտենական ծննդեան իւրոյ առ ի Հօրէ։ Յաւետարանիչն ի ծոց Հօր ասէ զնա, և եղեալ ի Հօրէ, եկեալ յաշխարհ, մարդ եղեալ առ ի փրկել զազգ մարդկան. որ այս ամենայն չէն և չէն ի ձահ այլաբանութեան։

Աստ. ԺԱ. Ոչ երբեք Քրիստոս զինքն Աստուած կամ Յովն Աստուծոյ կոչէ, այլ զԱստուած հաւատացեալսն իւր և այլոց կոչէ Աստուած. "Յառնեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր ,,. (Յհ. Ե. 17)։ Այլ եթէ ուրեք աստուածային ինչ ի նմա երևի, ինքն իսկ Քրիստոս յԱստուծոյ ասէ տուեալ իւր զայն. "Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ ,,. (Մտթ. ԺԱ. 27.) "Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի ,,. (անդ. ԻԸ. 18)։ Նոյնպէս և զաստուածային գործս յայտ առնէ որպէս պաշտօնեայ նորին կատարեալ. "Ո գործան կատարեցի, զոր ետուր ինձ զի արարից. (Յհ. ԺԷ. 4)։

Պե. Քրիստոս ոչ կոչէ զինքն Աստուած կամ Յովն Աստուծոյ նիւթապէս ըստ բառին, այլ կոչել կոչէ ըստ իմաստին բազում ուրեք. և ուր ուրեք զԱստուած կոչէ Հայր և Աստուած իւր և այլոց, ըստ մարդկութեանն է իմանալ զայն։ Այսու ամենայնիւ ոչ ուրեք խառնիխուռն ընդ այլս կոչէ զնա Հայր ձեր, Աստուած ձեր, այլ "Հայրն իմ և Հայր ձեր, Աստուածն իմ և Աստուած ձեր ,,. որով քաջիկ յայտ առնէ զիտիր զանազանութեան ընդ ինքն և ընդ այլս։ Ըստ այսմ է իմանալ և զոր ինչ ասէ իւր տուեալ ի Հօրէ. այլ խորհին ևս իմաստ է ի նոսա ըստ աստուածութեանն, զի ամենայն աստուածային կատարելութիւնք Որդւոյ են ի Հօրէ, որպէս Որդի ի Հօրէ։

Իսկ զաստուածութիւն իւր հաւատալ Հօր յայտ առնէ յասելն. "Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ... զոր նայն առնէ, զնոյն և որդին նմին նման գործէ... զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որդի զորս կամի կենդանի առնէ ,,. (Յհ. Ե. 17.) "Ո՛չ ամենեքեան պատուես-

յեն զՀՈՐԴԻ, որպէս պատուէն զՆՈՅԸ ,,. (ՅԿ. Ե. 23.) այսոքիկ ոչ պաշտօնեի են բանք:

Ը. ՅԱՐԿ. Գ. Ը.ԱԲՐԱՀԱՄ կոչէ զԱՐՐԻՍՏՈՍ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌՆԱՅՆ ԱՐԱՐԱԾՈՑ. (ԿՈՂՈՍ. ՇՕ. 15.) և ինքն ԱՐՐԻՍՏՈՍ ասէ (ՅԿ. ԺՂ. 28.) "ՆՈՅԸ ԻՄ ՄԵԾ Է ՔԱՆ ԶԻՍ: ԱՅԹԷ ՈՐԴԻ ԾՆԵԱԼ Է, ՉԿԱՐԷ ԴՈՂ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ. ԵՒ ԵԹԷ ՉԷ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ, ԵՒ ՈՉ Ը.ՅԱՌԱԾ Է ՀԱՒԱՏԱՑԱՐ ՆՈՅ:

ՊԼ. Ը.ՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՐԱԾՈՑ ԿՈՉԻ ԱՐՐԻՍՏՈՍ ԻԲՐԵՒ ԾԸՆԵԱԼ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԱՐԱՐԱԾՍ. ՎԱՆ ՈՐՈՅ ՈՉ ԸՆԴ ԱՐԱՐԱԾՍ ԴԱՍԵԱԼ, ԱՅԼ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՄԲՆ ԿՈՉԻ. ԶԻ ՈՉ ՈՔ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՆԱ ԷՐ ԿԱՄ ԼԻՆԵԼ ԿԱՐԷՐ: Ա՛ՐԹ Է ԵՒ ԸՍՏ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՒԹԵԱՆՆ ԻՄԱՆԱԼ, ԸՍՏ ՈՐՈՒՄ ԿՈՉԻ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՈՂՈՑ: ԻՍԿ ՄԵԾ ՔԱՆ ԶԻՆՔՆ ԿՈՉԵԼ ԶՆՈՅՆ ԶԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԶԱՆՁԱՒ ԾՆՈՒՆԴՆ ՅԱՅՏ ԱՌՆԷ. ԱՊԱ ԹԷ ՈՉ, ԸՆԴ ԱՐԱՐԱԾ ԵՒ ԸՆԴ Ը.ՅԱՏՈՒԱԾ ՉԻՔ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ. ՎԱՆ ՈՐՈՅ ԵԹԷ ԱՐԱՐԱԾ ԷՐ ԱՐԴԻ՝ ՈՐՊԷՍ ԱՐԻԱՆՈՍՔ ՀԱՅՀՈՅԵՆ, ՉԿԱՐԷՐ ԱՍԵԼ ՆՈՅԸ ԻՄ ՄԵԾ Է ՔԱՆ ԶԻՍ: ԻՍԿ ԾՆՈՒՆԴ ԱՐԴԻՈՅ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ Է ԵՒ ՀՋԱՆՔԵՆԱՒՈՐԱԿԻՑ ՆՈՅ, ԶԻ ԸՍՏ ՊԱՏՃԱՌԻՆ ԿԱՄ ԸՍՏ ՍԿԶԲԱՆ ՄԻԱՅՆ Է Ի ՆԱՆԱՆԷ, ԵՒ ԸՍՏ ԱՅԺՄ ԱԵԹԷ ՉԷ ՄԱՐԹ ԱՍԵԼ ԶԱՐԴԻ ՀԻՆՔԵՆԷ ԿԱՄ ԱՆՍԿԻԶԲՆ. ԱՅԼ ԸՍՏ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԷՈՒԹԵԱՆՆ, ՈՐՈՎ ՆՈՅՆ Է ԸՆԴ ՆՈՅ, ԱՍԻ ԵՒ Է ԻՆՔՆԱԳՈՅ ԵՒ ԱՆՍԿԻԶԲՆ. ԶԻ Ը.ՅԱՏՈՒԱԾ, ԻԲՐ ԷԱԿ ԻՆՔՆԱԳՈՅ ԵՒ ԱՆՍԿԻԶԲՆ, Է ՆՈՅՆ, ԱՐԴԻ ԵՒ ՆՈՑԻ:

ԳԼՈՒԽ Զ

ՉԻ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ Է ԱՍՏՈՒԱԾ ՃՇՄԱՐԻՑ, ՀԱՄԱՊՈՑԱԿԻՑ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՑ

Մ.ԱԿԵԴՈՆ ԵՂԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵՄԱՐԱՏԻՑ, ԵՒ ՀԱՄԱՐԵՑԱԻ ԱՐԱՐԱԾ ԶՆՈՑԻՆ: Ա՛ՂՕՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ ԸՆԴ ՆՄԱ ԴԱՏԱՍԱՐԱՐԵՑԱԻ ՅԱՌԱՋՆՈՒՄՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ ՅԱՄԻՆ 381: Ա՛ՒԿԻՆԵԱՆՔ ՅԱՌԱՋ ԼԱՒ ՄԱՏՈՒՑԵԱԼ, ԵՒ ՈՉ ԱՆՁՆ ԶՆՈՑԻՆ ՀԱՄԱՐԵՑԱՆ, ԱՅԼ ՆՇԱՆԱԿ ԶՕՐՈՒԹԵԱՆՆ Ը.ՅԱՏՈՒԱԾՈՑ: Ա՛ՈՐԱ, ԵՒ ՈՐ ԱՅԼՔ ՍՈՑԻՆ ՀԵՏԵՒՕՂՔ, ԿՈՉԻՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ ՆՈՑԵՄԱՐՏՔ:

Ի ՅՈՒՑԱԿՈՒԹԵՆԷ ԵՐԻՑ ՀԱՄԱՊՈՑԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՄԵ-

նասուրբ Հոգւոյդ ի մէնջ մի առնուր։ Հոգւոյն սրբոյ իսկապէս աստուածութիւն, զոր և՛ի հանգանակին դաւանիմք։ Այլ ուրոյն ևս այսպէս ցուցանի վկայեալ՛ի սուրբ գրոց։ Նախ՝ Աշմարիտ Աստուած է՝ որում անուն Աստուծոյ և աստուածային յատկութիւնք և գործք, պատիւ և պաշտօն, և երկուին աստուածային ընծայի. արդ զիրք սուրբք զայս ամենայն ընծայեն Հոգւոյն սրբոյ. ապա Հոգին սուրբ իսկապէս և Ճշմարտապէս Աստուած է։

Ա. Նախ՝ անուն Աստուծոյ ընծայէ նմա առաքեալ պետն. (Գործ. Ե. 3.) "Ընդէ՞ր եդից սատանայ զսիրտ քո, ստել քեզ Հոգւոյն սրբոյ ... ոչ ստեցեր մարդկան, այլ Աստուծոյ,,։ Այսպէս և առաքեալն (Գործ. ԻԸ. 25.) Հոգւոյն սրբոյ ընծայէ, զոր Տասայի (Ձ. 9.) Աստուծոյ ասէ պատգամ. "Յարուք խօսեցաւ Հոգին սուրբ՝ի ձեռն Եսայեայ մարգարէի առ Հարսն մեր, և ասէ. Երթ,, և այլն։ Ա. դարձեալ (Ա. Կոր. Գ. 16)։ Ցաձարս Աստուծոյ կոչէ զՀաւատացեալս, և ապա (Ձ. 19). Ցաձարս Հոգւոյն սրբոյ։

Ոյն ինքն առաքեալն զամենապիտութիւն Աստուծոյ ընծայէ Հոգւոյն. (Ա. Կոր. Բ. 10.) "Օ՛ի Հոգին զամենայն քննէ, և զխորս Աստուծոյ,,։

Ա. մարգարէն (Սղ. ԼԲ. 6.) ընծայէ նմա զամենակարողութիւն Աստուծոյ. "Յանիւ տեառն երկինք հաստատեցան, և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա,,։

Ա. գործք աստուածայինք ընծայեալք նմա բանիւքս. "Ի Հոգւոյն սրբոյ կրեալ խօսեցան մարգիկ Աստուծոյ,,. (Բ. Պետր. Ա. 21)։

"Ըպա եթէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդևս,,. (Մատ. ԺԲ. 28)։

"Մինչև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ՛ի Հոգւոյն սրբոյ,,. (Մատ. Ա. 19)։

"Ընդարացարուք յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և՛ի Հոգին Աստուծոյ մերոյ,,. (Ա. Կոր. Զ. 11)։

"Ընկ Հոգին սուրբ. որոշեցէ՛ք ինձ զՀառնաբաս և զՍօղոս,,. (Գործ. Ժգ. 2)։

"Ո՞վ ոք կարէ ասել տեր զՅիսուս, եթէ ոչ Հո-

գուշն սրբով։ Ակնկալութիւն և բաժինք չնորհաց են, այլ Հոգի նոյն է ,,. (ա. Կոր. ժբ. 3.) "Աչերն Աստուծոյ սիրեալ է՛ի սիրտս մեր՛ի ձեռն Հոգւոյն սրբոյ, որ տուաւ մեզ ,,. (Հռ. Ե. 5.) "Եթէ Հոգի այնորիկ՝ որ յարոյցն զՅիսուս՛ի մեռելոց՝ բնակեալ է՛ի ձեզ... կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ Հոգւովն՛ի ձեզ ,,. (Հռ. Ը. 11)։

Իսկ զի և պաշտօն աստուածային ընծայի Հոգւոյն սրբոյ, յայտ է՛ի ձեռս մկրտութեան՝ զոր տէրն մեր պատուիրէ. և՛ի ձեռս քանից առաքելոյն, ուր ընդ շնորհս Քրիստոսի մաղթէ հաւատացելոց զհաղորդութիւն Հոգւոյն սրբոյ. (ա. Կոր. ժգ. 13)։ Եւ ուր տէրն մեր ծանրագոյն զՀոգւոյն հայհոյութիւն քան զիւրն համարի. "Ով ասիցէ բան զորդւոյ մարդոյ, թողցի նմա. բայց որ զՀոգւոյն սրբոյ ասիցէ, մի թողցի նմա ,,. (Ղ. Ի. ժբ. 10)։

Ընդ ելոյն աստուածային, զի ինքնին իսկ փրկիչն մեր պատուիրէ ասել զանձնէ (Յհ. ժգ. 26.) "Գայ՛ի Հօրէ ,,. նոյնպէս և զՀոգւոյ ասէ (ժե. 26.) "Որ Հոգին Ճշմարտութեան, որ՛ի Հօրէ ելանէ։

Ընդ զի այս ամենայն յատկութիւնք աստուածայինք ընծային Հոգւոյ՛ի սուրբ գրոց, որպէս Հօր և Որդւոյ. ապա որպէս Հայր և Որդի այլ և այլ անձինք են հաւասարակից, հարկ է զի և Հոգին իցէ իսկապէս երրորդ անձն աստուածային համագոյակից Հօր և Որդւոյ։

Որպէս զաստուածութենէ քանին ասացաք, նոյնպէս և աստ աւելորդ համարիմք ածել վկայութիւնս՛ի Հայոց և՛ի ժողովոց, որք եթէ յառաջ քան զՀոգեմարտս, և եթէ ընդդէմ նոցա հաստատեցին զաստուածութիւն Հոգւոյն. ընդ որս և սուրբն Աթնաստոս աստուածազգեաց, սուրբն Յուստինոս, սուրբն Աղեքսիոս անտիոքացի, սուրբն Լրանոս, սուրբն Կղեմէս այլեքսանդրացի և Տերտուղիանոս։ Որոյ հաստատեաց և առաջին ժողովն Կոստանդնուպոլսի ընդդէմ Հոգեմարտից զուսմարեալ, և ժողովն Աղեքսանդրիոյ յաւուրս Թանասի, և Նիկիականն՝ որ սահմանեաց. "Իսկ որք ասենն... էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգին, և կամ յոչէից եղև, և կամ յայլմէ էութենէ ասեն լինել... զսուրբ Հոգին, զայսպիսիսն նզովէ կաթողիկէ և առաքելական եկեղեցի ,,։

Ա. ՈՒԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛տրկ. Ա. Հոգին սուրբ ոչ անձն է առանձին, և ոչ Ա՛ստուած. զի որ ինչ սուրբ գիրք աւետն զնմանէ, պարտ է իմանալ զԱ՛ստուծոյ՝ որ Հոգի է, կամ՝ զօրութիւն Ա՛ստուծոյ՝ այլաբանօրէն դիմառնութեամբ յանդիման ածեալ:

Պե. Օ՛ի Հոգի է Ա՛ստուած, զայն և փրկիչն մեր ուսուցանէ (Յհ. ՟ի. 24.) այլ սուրբ գիրք, ուր զՀոգւոյն սրբոյ խօսին, ցուցանեն անձն աստուածային առանձին՝ որ՛ի նմին աստուածային էութեան ներգործէ ըստ առաքելոյն (ա. Կոր. ՟ի. 10.) "Ա՛յլ մեզ յայտնեաց Ա՛ստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ, և զխորս Ա՛ստուծոյ,,: Այլ ոչ ուրեք՛ի սուրբ գիրս Հայր իբրև Ա՛ստուած յիւրում էութեանն կոչի Հոգի, այլ միշտ զանազանեալ՛ի Հոգւոյ. որպէս և՛ի ձեւոյ միջոցութեան յայտ է. "Ա՛կրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,,: Այլ այլուր ևս մերթ ասէ "Հոգին Ճշմարտութեան, որ՛ի Հօրէ ելանէ,,. և մերթ զի "Ա՛խիթարիչն Հոգին սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն,,. և այլուր զարձեալ "Օ՛ի եթէ ես ոչ երթայց, մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ,,: Ա՛րդ յայս ամենայն և յայսպիսի բանս փրկչին այլաբանութիւն իմանալ անտեղեաց է անտեղի, և հարկ է ասել՝ զի Ա՛րիստոս ոչ ևս մարդկօրէն և իմանալի մտաց մարդկան խօսիցի:

Ա՛տրկ. Բ. Որպէս Հոգի մարդոյ ոչ է անձն զանազանեալ՛ի նմանէ՝ յորում է, այսպէս և Հոգին սուրբ՝ որ յաձախ ուրեք՛ի սուրբ գիրս կոչի Հոգի Ա՛ստուծոյ և Հոգի Ա՛րիստոսի ոչ է անձն զանազանեալ յԱ՛ստուծոյ և՛ի Ա՛րիստոսէ:

Պե. Ա՛յիք և չիք նմանութիւն մարդկային Հոգւոյ ընդ աստուածայնութեան. զի՛ի մարդումն է մանն էական, իսկ Ա՛ստուած անձն զանազանեալ՛ի Հօրէ և Ա՛որդւոյ: Յորժամ ասեն գիրք Հոգիւ ոմն ապրեցան, և կամ Ք՛ա՛ղէնայն Հոգւոյ հաւատայ, իմանամք զբոլոր մարդն յէական մանեալ իւրմէ. այլ յորժամ Հոգին սուրբ ասեմք՝

առնչական անուն է, և ոչ իմանամք զՅայր կամ զՈրդի, Թէպէտ և մի անձն ի միասումն է ըստ տէրունեան բանին. "Յայր յիս, և ես ի Յայր,,. (Յհ. Ժ. 38):

Ա՛ստղ. Գ. Ընկալեալ իսկ զի Յոգին սուրբ իցէ անձն գոյաւոր, ոչ զՀետ գայ անտի՝ զի իցէ Աստուած. զի սուրբ գիրք ոչ ուրեք կոչեն զնա Աստուած, և ոչ պաշտել զնա կամ կարդալ հրամայիմք: Այլ առաքեալն ի Թուել զպարգևս Աստուծոյ՝ զՅայր և զՈրդի յիշատակէ, այլ զՅոգի ոչ ևս. (ա. Կոր. ԺԳ. 6):

Պե. Օնոյն և առ այս պատասխանեմք որ ինչ զաստուածութենէ Որդւոյ ասացաք, զի ոչ է հարկ բառս նիւթական խնդրել ի սուրբ գիրս, ուր զհամազօր բանից զիմաստն ցուցաք ի վեր անդր. և զի պաշտել զնա հրամայիմք հաւասար Յօր և Որդւոյ՝ և ի ձևոյ մկրտութենէն է յայտ: Այլ եթէ ուրեք առաքեալն ի Թուել զընդորհս Աստուծոյ չյիշէ զնա, բայց այլուր (ա. Կոր. ԺԲ.) ստէպ յիշատակէ, որպէս ուր ասէն "Առաքեալք և բաժինք չնորհաց են, այլ Յոգի նոյն է... ուր մեծն ի Յոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին Յոգւոյ... այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն Յոգի:

Ա՛ստղ. Դ. Առաքեալն ասէ. (Յհ. Ը. 26.) "Այլ ինքն Յոգին բարեխօս լինի ի հեծութիւնս անմռունչս,,. իսկ եթէ բարեխօսէ, ապա ոչ է Աստուած:

Պե. Եթէ Յոգին վասն բարեխօսելոյն արարած էր, ապա և վասն հեծութեանցն պարտ էր գոլ Թշուառ: Այսն որոյ ըստ միաբան մտայ Յարոյ իմանալի է, զի Յոգին սուրբ բարեխօս լինի, ոչ ինքնին յաղօթս կալով առ Աստուած, այլ ներգործելով ի սիրտ աղօթաւորաց իղձս աստուածահաճոյս, և զարթուցանելով հառաչանս ի նոսա առ Հանդերձեալ բարիս: Ըստ այսմ ասի խօսել Յոգւոյն սրբոյ ի մարգարէս և յառաքեալս. ըստ այսմ և Քրիստոս ասէ. "Ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիք, այլ Յոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի ի ձեզ,,: Ըստ այսմ դարձեալ նոյն առաքեալ ասէ զՅոգւոյն՝ "Ոչ աղաղակէ սրբոյ՝ Յայր,,. (Գաղ. Դ. 6):

Ա՛ստղ. Ե. Քրիստոսեանք ուրանային և զաստուածութիւն Յոգւոյն. սակայն ոչ այնր ժամանակի Յարք, և

ոչ ժողովին Նիկիական ընդդէմ Նոցա ըստ այմ մասին։

Պե. Ալանիկ Հարք և ժողովն Նիկիական ուղղակի ընդդէմ դևսաւոր մեղրութեան արիոսեանց զինեցան, և ևան այսորիկ գուժարեցան ի ժողով. այլ այսու ամենայնիւ յայտնապէս և զայն ևս մեղրութիւն Նոցա դատապարտեցին ի յաւելուածի անդ Հանգանակին՝ Իակ որք ասեն, և այլն։

ԳԼՈՒԽ Է

ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵԼՄԱՆՑ

Յուցաք ի վերոյ՝ զի աստուածային անձինք զանազանին ի միմեանց, զի Հայր ոչ է Որդի և ոչ Հոգի, զի Որդի ոչ է Հայր և ոչ Հոգի, և զի Հոգին ոչ է Հայր և ոչ Որդի։ Իբր ոչ եթէ ըստ էութեան և ստորոգելեաց է Նոցայն զանազանութիւն, զի մի էութիւն է Նոցա և ստորոգելիք Նոյն. և երեքին այնպէս մի էութեան, զի են ի միմեանս իսկապէս. "Ես ի Հայր, և Հայր յիս է,,. (Յհ. ԺԴ. 10)։ Պարտ է ապա յայլ իմիք զնոցայն խնդրել զանազանութիւն, այսինքն յառնչութիւնս։ Օ՛ի հայրութիւն զանազանէ զՀայր Որդւոյ և ի Հոգւոյ, որ ոչ են Հայր. ծնելութիւն զանազանէ զՈրդի ի Հօրէ և ի Հոգւոյ, որ ոչ են ծնեալ. և բղխումն զանազանէ զՀոգի ի Հօրէ և Որդւոյ, որ ոչ են բղխեալ։ Հայրութիւն կացուցանէ զանձն Հօր, որ չէ յումեքէ. որդիութիւն կացուցանէ զանձն Որդւոյ, որ ծնեալ է ի Հօրէ, և է ընդ Հօրնոյն և մի պատճառ բղխման Հոգւոյն. և բղխումն կացուցանէ զանձն Հոգւոյն, որ բղխէ ի Հօրէ և Որդւոյ։ Ըստ այսմ օրինակի անձն Հօր ունի զառաջին տեղի, և կոչի առաջին անձն Երրորդութեան. անձն Որդւոյ ունի զերկրորդն տեղի, և կոչի երկրորդ անձն Երրորդութեան. անձն Հոգւոյն ունի զերրորդն տեղի, և կոչի երրորդ անձն Երրորդութեան, և չէ մարթ փոխել զկարգ Նոցա. սակայն երեքին ևս յաւիտենականք են և միանձնաւորակիցք։ Եւ այս իսկ է պատճառ եթէ

զանապանութեան և եթէ համագոյութեան երից անձանց. զի մի ունելով բնութիւն, հակադրին իրերաց առընչութեամբ, որով և զանազանին: Այսն զի ելումն յիրերաց յարարածս՝ որ կարեն բազմանալ թըւով՝ բերէ ազգակցութիւն՝ի համատեսակ բնութեան. իսկ Այսուածծ՝ որ մի է և անբաժանելի՝ բերէ զմիասնականութիւն համագոյական: Որպէս վասն որպէս ուսուցանեն մեզ հաւատք երիս այլ և այլ անձինս՝ի մի Այսուածծ, նոյնպէս ուսուցանեն և ներքինք ելմունս՝ի նմա: Ասաի հերետիովք, որք ուրացան զզանազանութիւն անձանց կամ զհամագոյութիւն նոցին, ուրացան և զներքին ելումն՝ի մէջ Այսուածծային անձանց, այլ զարտաքին ևեթ ելումն ընկալան, այսինքն զարարչագործութիւն. որով շփոթեցին զԱրդի և զՆոգի ընդ Նօր, կամ՝ի քաց զատուցին զնոսա իբրև արարածս:

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Չի գոն Այսուածծ եւմունք առ՝ի ևերքս:

Ցուցանի՝ի սուրբ գրոց ընդդէմ Արեելի, Արիոսի, Մակեդոնի, և հետեւողաց նոցա: Արիոսաւս ասէ զանձնէ. "Օ՛ի ես Այսուածծ ելի ,,. (Ցհ. Ը. 42.) "Եկի՝ի Նօրէ ,,. (Ցհ. ԺԷ. 28): Եւ զՆոգւոյն սրբոյ ասէ. "Օ՛Հոգին Ճշմարտութեան՝ որ՝ի Նօրէ ելանէ ,,. (Ցհ. ԺԵ. 26):

Եւ Նաբք և ժողովք գնոյն ստէպ յեղյեղեն, զելումն Որանին՝ որ ասի Ծնունդ, և զելումն Նոգւոյն՝ որ ասի բղխումն:

Որայց ելումն աստուածային ոչ բերէ կրտսերութիւն ժամանակի ելոցին քան զայն՝ յորմէ ելանէ, զի Այսուածծ չիք ժամանակ. վասն որոյ և ելոցն է յաւիտենական և անսկիզբն, որպէս անվախճան. և ըստ այսմ անսկիզբն է Նայր, անսկիզբն Արդի, անսկիզբն և սուրբ Նոգի: Սակայն է՝ի նոսա կարգ ծագման ընդ ծագօղ և ընդ ծագեալ, որպէս օրինակ հին աղօտ՝ի մէջ արեգական և Հաւատոյ՝ի նորա: Եւ ըստ այսմ կարգի ասի Նայր առաջին անձն, Արդի երկրորդ անձն, և Նո-

զի երրորդ անձն. Հայր անսկիզբն և անպատճառ, իսկ Որդի և Հոգի սկզբնաւոր և պատճառեալ: Այլ որպէս զի մի հոմաձայնութիւն բառից՝ ի ներքս ածիցէ ժամանակ ինչ կամ կրտսերութիւն, յարին միշտ բառքս անսկզբնաբար, անժամանակապէս, անպատճառաբար, և այլն: Ասա այսմ ասէ Ճ նորհալի. "Անսկիզբն Հայր, և յանսկզբնականէն Հօրէ սկսեալ Որդի և Հոգի անեղապէս և անժամանակաբար,,: Ա՛ն գարձեալ. "Հայր պատճառ, և Որդի և Հոգի՝ ի պատճառէն անժամանակաբար և առանց պատճառի,,:

Ասանօր գիտելի է՝ զի Հարք Ցունաց յաստուածայինս սովորաբար վարին բառիս պատճառ, կոչեալ զՀայր՝ պատճառ Որդւոյ, կամ Հոգւոյն սրբոյ. որով իմանան զՀնմարիտ և զիրական արտադրիչ սկիզբն անձին Որդւոյ կամ Հոգւոյն սրբոյ՝ առանց զանազանութեան էութեան, կամ կախման. և՝ ի նոցանէ ընկալեալ և Հարք մեր՝ վարին նովին բառիս, գիտելով զուղիղ իմաստ նորին, և ոչ անգիտանալով և զայլ նշանակութիւն այնր բառի, ըստ որոյ ոչ պատշաճի աստուածայինն անձանց. զի պատճառ՝ ի ստեղծուածս զայնցանէ ասի սովորաբար, յորս գոյ զանազանութիւն բնութեան և կախումն միոյն զմիւսմէ. և ըստ այսմ մտաց անպատճառ ասեն վարդապետք Հայոց զՈրդին և զՀոգին սուրբ. որպէս Ճ նորհալին՝ ի Ցհաւստոդին. "Հայր է պատճառ՝ անպատճառից, Որդւոյ ծննդեամբ՝ Հոգւոյն բղխմամբ: Ո՛չ ի Աստուծոյ՝ չէ ինչ պատճառ, ինք՝ պատճառաւ՝ գոյից պատճառ,,: Նոյնպէս և (՝ի Ճ ար. Հոգեգալ. կան. ՟ը.) "Որ բոլորից ես պատճառ էից անպատճառից և որոց պատճառաւ,,: Նոյնպէս և յառաջնում Թղթին առ Ա՛նուէլ կայր. "Հայր պատճառ, և Որդի և Հոգին՝ ի պատճառէն անժամանակաբար և առանց պատճառի,,:

Ասակ վարդապետք լատինացւոց սովորաբար՝ ի կիր առնուն զբառն ակէզբն, և հնագոյնք՝ ի նոցանէ երբեմն նաև զբառն պատճառ. որպէս Ղարիոս (գիրք ժա. ժբ.) ուրեք կոչէ զՀայր պատճառ ծննդեան Որդւոյ. և այլուր ասէ զՈրդւոյ. "Ա՛ստիպեալ և՝ ի կատարեալ և յանփոխելի պատճառէ ծնեալ,,, և այլն. և Օգոստ. (գիրք ձՂ. խնդ. ժՂ.)"Ա՛ստուած Հայր՝ամենայն էից է պատճառ...

նա և Խմաստութեան իւրոյ պատճառ է· և ոչ երբեք (էր) Ըստուած առանց իմաստութեան իւրոյ: Ըստ միանգենաւոր իւրումն իմաստութեան պատճառ է միշտն ջենաւոր ,, : Ա Լիկտորինոս Ըփրիկեցի (գիրք· ա· ընդ· դէմ Ըբեոպ·) “ Հաւատալ (Հօր՝ Որդի·) այլ մեծագոյն ասի Հայր՝ զի ինքն ետ նմա զամենայն· և պատճառ է նմին Որդւոյ զի էցե, և զի զայսօրինակ էցե ,, : Ա Հրիքարտոս Ա Լիկտորեան· (գիրք Ե· յղ· Երրորդ·) “ Յաստուածայինն չկարէ լինել յառաջագոյնն ժամանակապէս· կարէ լինել պատճառաբար՝ և նովին իսկ բնաւորապէս ,, · և Թէ “ Մի անձն է պատճառ միւսոյն ,, · և այլն: Իսկ յետ երկոտասանեւօրդ գարուն խափանեցաւ առ Հատինս վարել զբառս զայս՝ Թէպէտ առանց մերժելոյ զսովորութիւն այլոց ազգաց, որպէս ասէ նա ինքն սուրբն Ցովհաննս ազուինացի (Ի Ճ· կանդ· յղ· կարդ· պրակ· ա· առ· 8·) “ Յոյնք ընդարձակագոյն վարին անուամբ պատճառին, զծագումն ևեթ այնու նշանակելով··· վասն զի ոչ ըստ պատշաճի ասի ինչ Ի լատին լեզու, զոր վասն հանդամանաց լեզուին մարթ է ըստ պատշաճի ասել Ի լեզու յոյն: Ա կայն յընդունել մեր զանուն պատճառին յաստուածայինս ըստ Յունաց, չէ պարտ յայն միտս իմանալ, որպէս յորժամ զատեղծուածոց ասի ,, : Ա ան այսորիկ Ի փլորենտեան ժողովն՝ Ի վիճաբանութիւնս անդ՝ Յոյնք անդադար Ի կիր առնուին զբառն պոպճաս, և երբեմնն և Հատինք՝ ըստ մտաց Յունաց· մինչ զի և Ի սահմանն Հաւատոյ ասացին· “ Որդին ևս է՝ ըստ Յունաց պոպճաս, և ըստ լատինացւոց ածէղբն ենթակայութեան Հոգւոյն սրբոյ, պրպէս և Հայր ,, :

ԳՕԴՈՒԱԾ Բ

Զի երկու միայն ևն երևոյթք յԱստուած:

Եւ այս ասեն Հաւատոյ զՀետ գայ առաջնուածն· զի եթէ Հայր է անձին, Որդին ծնեալ, և Հոգի բղխեալ, ապա երկու ևեթ են երևոյթք, ծնունդ Որդւոյ և բղխումն Հոգւոյն: Ո՛չ որպէս ձեռնարկէ Ի Հաւատոյ

սուրբ Հոգւոյն, եւ ասի Հայր աստուած ի առնելութիւն միայն եւ ոչ անցաւոր. իսկ արդ զոլով Հայր աստուած իմաստական արարող՝ երկու են ի նմա միայն առնելութիւնք, այսինքն իմացումն եւ կամեցումն՝ զանազանեալք զօրութեամբ. ապա եւ երկու են ելմունք, մտօք՝ որ ի ելումն բանի, եւ կամօք՝ որ ի ելումն սիրոյ:

Ելմունք աստուածայինք են երկու որպէս ասացաք, այլ յայտ ի զի կրաւորաբար. քանզի ներգործաբար մարթ ի եւ միակ ասել: Երկին ասի ըստ զանազանելոյ իմացման եւ կամեցման Հայր աստուած զօրութեամբ. եւ միակ ասի, զի իրօք նոյն են ընդ միմեանս իմացումն եւ կամեցումն, նոյն են եւ ընդ աստուածային էութիւն՝ մտածեալ իբր ելուզիչ կամ բեղնաւոր ըստ անսահման իմացականութեանն: Իւր ընդ հակառակն կրաւորական ելմունք, թէպէտ եւ նոյն ընդ աստուածային էութեան, այլ չեն նոյն ընդ միմեանս. եւ պատճառ իրական զանազանութեան նոցա ի զօրութեամբ զանազանել ներգործականին. որ համազօր գոլով իրականին՝ կարէ արտադրել զիրապէս զանազանեալս:

Ոչ ման այսր ամենայնի աստուածային բնութիւնն ոչ ի հաղորդական առ ի ներքս՝ ոչ աւելի եւ ոչ նուազ անձանց քան զերրեակ թիւ. զի ելմունք Հայր աստուած չկարեն գոլ աւելի կամ նուազ քան զերիս, առ որ հարկաւ պահանջին անձինք երեք, ոչ աւելի եւ ոչ նուազ. որպէս զի երկին ելմունք են ապայոյց երրորդութեան անձանց, եւ երրորդութիւն անձանց ապացոյց են երկին ելմանց: Ոչ ման զի միով ելմամբ, այսինքն ծննդեամբ, Թէպէտ եւ Հաղորդի բոլոր բնութիւնն աստուածային, այլ ոչ ըստ ամենայն եղանակի՝ որով ի հաղորդելի առ ի ներքս. վասն որոյ պահանջի եւ միւս ելումն, այսինքն բղխումն: Իսկ ի դնել երկոցունց ելմանցս, այսինքն ծննդեան Որդւոյն եւ բղխման Հոգւոյն, չինայ տեղի այլոյմ ելման. զի որովհետեւ երկու են ստորոգելիք Հայր աստուած ներգործականք, այսինքն իմացումն եւ կամեցումն, բեղնաւորութիւն իմացութեան համագրաւի յանձնել Որդւոյն, եւ բեղնաւորութիւն կամեցման՝ յանձնել Հոգւոյն:

Վասն զի ի հաւատոց զի ելումն Որդւոյն զանազանի յելմանէ Հոգւոյն. զի ելումն Որդւոյն ի ձշմարիտ ծը-

նունդ, իսկ ելումն Հոգւոյն ոչ ծնունդ՝ այլ բղխումն և անձառ։ Վասնզի Բանն կոչի ի տուրբ գիրս պարզապէս որդի Աստուծոյ, միածին Հօր, և ծնեալ. իսկ Հոգին ոչ ուրեք ասի ծնեալ կամ որդի Հօր, այլ միայն ելեալ կամ բղխեալ։ Այլ թէ ինչ զանազանիցի ծնունդ որդւոյն ի բղխանել, ոչ ուսուցանեն մեզ հաւատք. և տուրբն (գոստինոս ասէ (ընդդէմ Արիոսի. գ. 14.) "Ես հա այս է մեր պատասխանի, թէպէտ իմանայցես և թէ ոչ. ի Հօրէ է Որդի, ի Հօրէ և Հոգին տուրբ. այլ նա ծնեալ. սա ելեալ։... Իսկ թէ զինչ խտիր ընդ ծնունդն և ընդ բղխումն կայցէ՝ ո՛ կարէ մեկնել ի խոսել զայնմ գերահրաշ բնութենէ։ Ես ամենայն որ ելանէ՝ ծնանի, թէպէտ ամենայն որ ծնանի՝ ելանէ։... Այսոսիկ գիտեմք. այլ սահմանել ընդ ծնունդդ և ընդ ելումն՝ անպիտանամք, անկարանամք, չեմք բաւական։"

Ի բազմապատիկ կարծիս և ի բացատրութիւնս հինն և նոր վարդապետաց առաւել հաւանելի թուին կարծիք սրբոյ Աստուածայնոյն հիմնեալ ի բանս գրոց և Հարց. զի ծնունդ Բանին է ելումն ի ձեռն մտայ՝ որ զօրութեամբ իւրով է նմանեցուցիչ, իսկ բղխումն Հոգւոյն է ի ձեռն կամաց՝ որ զօրութեամբ իւրով չէ նմանեցուցիչ։ Այսու որպէս ասէ տուրբն (գոստինոս. "Արդ ի Հանապազել անդ զինքն՝ ծնանի զՀանապազումն իւր, այլ ի սիրել զինքն՝ ոչ ծնանի զսէր իւր։" Եւ դարձեալ. "Որ վինն որդի՝ որով Բան, և նովին Բան՝ որով որդի։" Որ այսպէս ինքն իսկ Աստուածային պարզաբանէ. "Ելումն բանին յաստուածայինս՝ թերէ զեզանակ ծնընդեան, զի ըստ եղանակի առնելութեան է ելանէ, որ է գործողութիւն կենաց... և ըստ եղանակի նմանութեան, զի ըմբռնումն իմացութեան է նմանութիւն իսին իմացելոյ։" Հայցատրութեանս այսմիկ ի դէպ գան և անուանք ընծայեալք Որդւոյ, այսինքն միածին, նկատողիկ էութեան Հօր, պատկեր աներեւութին Աստուծոյ, և այլն, որք են յայտարար նմանութեան Հօր։ Իսկ յաղագս Հոգւոյն սրբոյ ասէ. "Ելումն սիրոյ յաստուածայինս ոչ է պարտ թէ ասիցի ծնունդ. զի այս խտիր է ընդ միտս և ընդ կամս, զի մտաց ներգործութիւն է՝ իմանալ զկրն ըստ իւրում նմանութեան, իսկ

կամայ ներգործութիւն՝ ոչ նմանութիւն ինչ կամեցե-
ցին, այլ բերումն յիւրն կամեցեալ։ . . . Ա՛ան որոյ ոք
ելանէ յաստուածայինս ըստ եղանակի սիրոյ, ոչ ելանէ
իբր ծնեալ կամ որդի, այլ որպէս Հոգի և փչումն ,,։
Եւ այսմ՛ ի դէպ դան անուանք ընծայեալք Հոգւոյն
սրբոյ, այսինքն սէր, պարգև, շնորհ, Հոգի, և այլն։

Որպէս եղերք աստուածային ելմանց են անձինք,
նոյնպէս և սկիզբն կամ պատճառ ելման է անձն կամ ան-
ձինք. զոր օրինակ եզը ծննդեան է Որդի, իսկ սկիզբն
կամ պատճառ Հայր, զի որդի Հօր ասի և է Որդին.
նոյնպէս և եզը բղխման է Հոգին. իսկ սկիզբն նորա
կամ պատճառ են Հայր և Որդի միանգամայն, զի Հոգի
Հօր և Որդւոյ ասի և է Հոգին։ Եթէ որ զայս աստուա-
ծաբանօրէն՛ ի միտ առցէ, չինայ տեղի վիճելոյ զբղխման
նէ Հոգւոյն՛ ի Հօրէ և Որդւոյ։

Եւ քանզի սկիզբն ելման է անձն՛ ի ձեռն բնու-
թեան, և բնութիւնն՛ ի ձեռն գործողական զօրու-
թեանց՝ այսինքն մտաց և կամաց, իսկ միտք և կամք
անմիջական գործողութեամբ իւրեանց, վասն որոյ Հայր
անխտիր ասեն ելումն յանձնէ կամ յէութենէ կամ՛ ի
մտաց և՛ ի կամաց. և ներգործաբար ծնանել ասեն Հօր
զՈրդի, և ծնանել էութեան կամ մտաց Հօր զՈրդի,
ոչ վերացուցեալ զէութիւն յանձնաւորութենէ. զի
ընդ հակառակն, որպէս ժողովն լատերանեան վճռեաց,
էութիւնն Աստուծոյ ոչ ծնանի և ոչ ծնեալ լինի ան-
միջաբար։

ԳԼՈՒԽ Ը

ՅԱՂԱԴՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՌՔՆԱՈՒԹԵԱՆՑ

Եթէ գոյ Աստուած ելումն ներքին, որպէս ուսա-
նիմք՛ ի հաւատոյ, այսինքն ծագումն անձանց միոյ՛ ի
միւսմէ, զհետ գոյ և հայեցումն նոցա առ իրեարս, որ
է առընչութիւն ընդ ծագօղ և ընդ ծագեալ։ Նոյց
առընչութիւն յարարածս է եկամուտ ինչ պատահումն.
իսկ Աստուած, քանզի չիք տեղի պատահման, Հարկ
է զի իսկ նոյն իսկ էութիւն աստուածային։ Ա՛ան ո-

րոյ Աստուած առընչութիւն և առինչունակ ոչ զանազանին և ոչ իմացականապէս, այլ զանազանի իրապէս առընչակից յառընչակցէ, այսինքն Հայր Աստուծոյ, զի հակադրութիւն առընչութեան՝ ի ներքս մնանէ ըստ ծագման։ Ոչնոյն իմա և զերմանէ Հոգւոյն։

Հաստատի վարդապետութիւնս բանիւ առաքելոյն. (Դէպ. ը. 14.) "Ա ան այսորիկ դնեմ ծունր առ Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ուստի ամենայն նահապետութիւն յերկինս և յերկրի անուանի,,։ Եւ Աստուածաբանն ասէ. "Հայր միրապէս, զի ոչ և Աստուած. իբր և Աստուած միրապէս, զի ոչ և Հայր. վասն զի մերքս ոչ միրապէս, զի և երկոքեան մեք,,. այսինքն զի մեք կարեմք գոլ Հայր միանգամայն և որդի։ Նոյնպէս և այլք՝ ի Հարց, մանաւանդ Կիւրեղ և Գրիգոր Տիւնոս՝ որք և զբառքս առընչութիւն և առինչունակ՝ ի կիր արկանեն Աստուած, որպէս և Պետրոսն մեր Պաւղէս ասէ. "Որք Հոգին առինչունակ է,,։ Եւ՝ ի դաւանութեան առեւտեան ժողովոյ ասի. "Յառընչական անուանս անձանց՝ Հայր առ Որդին, և Որդին առ Հայր, և Հոգին սուրբ առ երկաքանչիւրսն առընչական, որք թէպէտ առընչապէս երեք անձինք ասին, այլ զմի միայն գոյացութիւն բնական հաւատամք,,։

Ի նոյն վարդապետութենէ հաւատոյ գիտեմ գայ, զի ըստ են Աստուած իրական առնչութիւնք ծագման. պսինքն Հայրութիւն, որդիութիւն, բղխումն ներգործական, և բղխումն կրաւորական. բայց առընչակիցք են երեք միայն, այսինքն Հայր, Որդի, Հոգի։ Ոչ՝ ի չորից առընչութեանց երրորդն ոչ զանազանի իրօք յառաջնոյն և յերկրորդէն, այլ բանիւ միայն։ Պանդի որպէս յայտ է՝ երկու ելմունք են Աստուած, պսինքն ծնունդ և բղխումն, և երկաքանչիւր՝ ի մէջ բերեն կրկին հայեցուածս ըստ ներգործական և ըստ կրաւորական ծագման. զոր օրինակ ծնունդն զծնողութիւն և զծնելութիւն, և բղխումն զբղխողութիւն և զբղխելութիւն, ուստի Հարկաւ լինին քառեակ առընչութիւնք։ Ա՛յլ՝ ի չորից առընչութեանց աստի Հայրութիւն և որդիութիւն քանզի հակադրին իրերաց, վասն որոյ և զանազանին իրօք. նոյնպէս և բղխումն ներգործական և կրաւորական քանզի հակադրին մի-

մեանց, ուստի և զանազանին իրօք։ Այլ բղխումն ներգործական ոչ հակադրի ոչ հայրութեան և ոչ որդիութեան, այլ է իրապէս նոյն ընդ երկաքանչիւրսին, և զօրութեամբ ևեթ զանազանեալ յերկաքանչիւրմէն. քանզի Հայր ոչ միայն է ծնօղ, այլ և բղխօղ. նոյնպէս և Որդի ոչ միայն է ծնեալ, այլ և բղխողակից ընդ Հօր. նմին իրի ոչ ծագին անձինք չորք առընչակիցք, այլ երեք միայն. այսինքն Հայր՝ որ հայի առ Որդի իբրեւ ծնօղ, և առ Հոգի իբրև բղխօղ. Որդի՝ որ հայի առ Հայր իբրև ծնեալ, և առ Հոգի իբրև բղխօղ. և Հոգի՝ որ հայի առ Հայր և Որդի իբրև բղխեալ։ Եւ այս է վճիռ լատերանեան ժողովոյն՝ թէ "Հաստատ երբորդութիւն ևեթ է, և ոչ չորրորդութիւն ,,։

ԳԼՈՒԽ Թ

ՑԱՂԱԳՍ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԿԱՄ ԱՆՁԱՆՑ

Յայտ է՝ի նախագրելոցս, զի յառընչութեանցդ հակադրելոցդ ծագին աստուածային անձինք։ Օ՛ի անձն է իմացականի բնութեան ինքնութիւն, այսինքն անհատզորդական գոյացութիւն. արդ քանզի անսահման բնութիւնն աստուածային՝ ծայրագոյնս իմացական՝ ունի երբեակ առընչութիւնս իրօք զանազանեալս, այսինքն ըստ հայրութիւն, զորդիութիւն և զՀոգիութիւն, սոքին ապա լինին ինքնութիւնք աստուածութեան, անբաժանելիք յաստուածութենէ, բոլորովին հաղորդեալք նմին, այլ զանազանեալք յիրերաց և անհաղորդականք միմեանց։ Օ՛ի հայրութիւն ոչ հաղորդի Որդւոյ, և ոչ որդիութիւն Հօր, և ոչ Հոգիութիւն Հօր և Որդւոյ. որով լինին անձինք երեք՝ի միում բնութեան, որպէս ուսուցանեն հաւատոք ընդդէմ Սաբելի։ Այլ աստի զՀետ գայ դարձեալ, զի առընչութիւնք կայուցանեն զաստուածային անձինս։ Քանզի նոյն է ըստ աստուածին կայուցիչն և զանազանիչ. և զի Աստուած առընչութեամբք ևեթ զանազանին յիրերաց անձինք, ապա նոքին առընչութիւնք են և կայուցիչք աստուածային անձանց։

Այս դարձեալ, աստուածային անձանց է կացուցիչ՝ որ ինչ է Աստուած բազմաւորական. և զի Աստուած չիք այլ ինչ բազմաւոր բաց յառընչութեանց հակադրելոց, ապա սոքա են կացուցիչք աստուածային անձանց:

Այս դարձեալ՝ աստուածային անձանց ոչ է մարթ կալ իւիք՝ որ իցէ հասարակ երեցունցն. և քանզի չիք ինչ Աստուած որ չիցէ հասարակ երեցունցն՝ բաց 'ի հակադրեալ առընչութեանց, ապա սոքա կացուցանեն զաստուածային անձինս:

Ըստ այսմ վասն զոլոյ առընչութեանց յատուկ միում միոմ յանձանց՝ այս յատկութիւնք վարին փոխանակ անձանց. զոր օրինակ անծին՝ նշանակէ զՀայր, միածին՝ զՈրդի, և բղխումն՝ զՀոգի. ըստ նմին օրինակի և յատկութիւն կամ առանձնաւորութիւն վարի երբեմն փոխանակ անձնաւորութեան:

Անձնաւորութիւնք կամ անձինք կոչին և առընչական ենթակայութիւնք, առ 'ի զանազանել 'ի բացարձակ ենթակայութենէ՝ որ երից անձանց է հասարակ. և կոչի այս առ մեզ յատուկ բառիւս ինքնութիւն: Որդի զոյ Աստուած ինքնութիւն մի և երրեակ. մի՝ հասարակ, և երրեակ՝ առանձնական. այսինքն զոյ Աստուած բացարձակ ենթակայութիւն՝ երից անձանց հասարակ, զանազանեալ զօրութեամբ յառընչական ենթակայութեանց՝ որ յատուկ են իւրաքանչիւր անձին: Այս բացարձակ ենթակայութիւն՝ որով է Աստուած ըստ ինքեան, և յառաջագոյն քան զառընչութիւնս և քան զանձինս մտածեալ, կոչի յաստուածաբանից սկիզբն որ. և զայս զանազանութիւն իմանալի դնեն Աստուած սուրբն Ղևրեդ աւետբանդրացի, սուրբն Գրիգոր Նիւսացի, սուրբն Ներսիսիոս, և Համաստացին և Գրիգորիոս, առ դիւրիմաց առնելոց զանբաւական գործս Երրորդութեան առ արտաքս, և զիմացողութիւն նորա և զկամեցողութիւն յայնմ առաջնութեան: Որպատեանք բարձին զերրեակ ինքնութիւն, շատ համարեալ ասել միակ ինքնութիւն կամ բացարձակ ենթակայութիւն յերիս անձինս: Այլ 'ի նշանակութենէ իսկ ինքնութեան յայտ է, զի և զերից դիմաց առ հասարակ մարթ է ասել զայն, և զիւրաքանչիւրոց ուրոյն. զոր օրինակ

ասեմք առ Աստուած՝ զոմ ինքն տէր մեր և արարիչ, և թէ նա ինքն է տէր մեր և արարիչ։ Այս անձն իւրաքանչիւր կարէ ասել առանձնաբար որ ինչ այլոմ անձին չէ անկ. զոր օրինակ Հայր ասէ՝ Ես ինքն եմ անծին. և Որդի՝ Ես ինքն եմ միածին Ծնունդ Հօր. և Հոգին՝ Ես ինքն եմ բղխումն անձառ։ Ոչ ասեն որոյ Հարք մեր անխտիր ասեն մի և երրեակ ինքնութիւն. զոր օրինակ "Ընդնին անհաս երրեակ ինքնութեանդ,,։ Այլ "Տէր Աստուած ինքնութեամբ, որ միայն կարողդ ես,,։

Զոյնպէս և բառս էակութեան նոյնին նշանակութեամբ վարին անխտիր եզակի և յոգնակի. զոր օրինակ սուրբ Ուսուցչին մեր ասէ զՀօրէ. "Պատճառ նոցունց իսկութեանցն,,։ Այլ ի շարականի ասեմք. "Որ ի հայրական իսկութենէն յառաջ բղխեալ,,։ Յորս փոխանակ ինքնութեան կամ իսկութեան մարթ է գնել անխտիր էիծութիսիս, այսինքն է էնթակայութիւն։ Զանգի սա անխտիր ի մէջ բերէ զինքնութիւն բացարձակ՝ որպիսի է ի գոյացութեան, և զինքնութիւն առընչական՝ որպիսի է յանձնաւորութեան. և զի Աստուած երրեակ անձնաւորութիւն է և մի գոյացութիւն, ապա անխտիր մարթ է ասել Աստուած երրեակ և մի էնթակայութիւն. մի՝ բացարձակ, և երրեակ առընչական։ Ոչ ասեն որոյ Հարք Ծնող և Ստեղծող է զի մի էնթակայութիւն ասեն Աստուած, և է զի երիս. և զիարդ մարթ իցէ ուղղութեամբ ասել մի և երիս միանգամայն, բայց մի՝ բացարձակ, և երիս առընչական։ Ապա անվրէպ կանոն զգուշութեամբ խօսելոյ յաստուածայինս ըստ միութեան և ըստ բազմաւորութեան, այս է. Զոր պատշաճին անձանց ըստ էութեան ևեթ, եզակի ևեթ ասին. զոր պատշաճին նոցա ըստ առընչութեանց ևեթ, յոգնակի ևեթ ասին. իսկ զոր պատշաճին ըստ էութեան և ըստ առընչութեանց, ասին եզակի և յոգնակի։

Անձնաւորութիւնք քանզի յիւրերաց զանազանին իրապէս, և յաստուածային բնութենէ զանազանին զօրութեամբ ևեթ, պարտին գոլ միանական։ Այլ ըստ միանականութիւն առնումք աստ ոչ ընդհանուր նշանակութեամբ իբր նոյն ընդ համագոյութեան որպէս ի վեր անգր, այլ ըստմանեայ՝ իբր հետևակ համագոյու-

Թեան, իբր պարտուԹիւն կամ ներգոյուԹիւն ՚ի մեռանիս, զոր Յոյնն ֆէբէկժբէսթս ասէ, և Լատինն էքզոմնոպսթօ, որ ՚ի մեզ բացատրի բռնադակել անձանց զմիմեանս։ Այս ըստ այսմ դասական սահմանի ներգոյուԹիւն անձանց չիրեարս, կամ անբաժանելի ընդակցուԹիւն երից անձանց, իբր զի Հայր է Աստուած, և Աստուած ՚ի Հայր, և երկոքին ՚ի Հոգին, և Հոգի յերկոսին. ըստ այնմ. "Ո՞չ հաւատաս՝ եԹէ ես ՚ի Հայր, և Հայր յիս է։ Հայրն, որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն,,. (Յհ. ԺԴ. 10. 11)։ Այս այս է՝ զոր ասեմքն ՚ի ժամամուտս. "Ա՛ստն որոյ և մեք զՀոգին սուրբ ընդ Հօր միաւորեալ և ընդ Որդւոյ միասնական խոստովանիմք,,։

Այս աստուածաբանօրէն այսպէս բացատրեմք. առ միասնականուԹիւն երկու ինչ պահանջի. զանազանուԹիւն իրական՝ որպէս ՀրեշտակուԹեան ըստ անձանց, և միուԹիւն անհատական՝ որպէս ՚ի նմին՝ ըստ բնուԹեան. իսկ արդ Հաստատ անձինք են զանազան, և բնուԹիւն մի, ապա գոյ ՚ի նմա կատարեալ միասնականուԹիւն։

Այս քանզի անձինք զանազանին ՚ի միմեանց այնպիսի առընչուԹեամբ՝ որ Հաստատին ՚ի ներքին ելմտնս հարկաւորս, ասի և միումն առաքել զմիւսն, այլ ըստ կարգի ներքին ծագմանն. այսինքն զի ծագօղն զծագեալն առաքէ, և ոչ անդրադարձեալ. բայց ծագօղն և ծագեալ ասին անխափուր եկաւորել, բնակիլ, և այլն։ Այս այս ևս յայտ է ՚ի բանից սուրբ գրոց, յորոց և Հարք զնոյնս յեղյեղեն։

"Ուսուցեալ Աստուած զորդի իւր յաշխարհ։ Ուսուցեալ զիս կենդանին Հայր։ Արձամ ես առ առաքիչն իմ։ Հոգին սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ։ Առաքեա զոգի քո։ Ա՛խիԹարիչն, զոր ես առաքեցից ձեզ ՚ի Հօրէ։ Ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ՚ի ձեզ։ Առաքեալ Աստուած զՀոգի Որդւոյ իւրոյ ՚ի սիրտս մեր,,. (Յհ. Ը. 17։ Ղ. 58։ ԺԳ. 26։ ԺԵ. 26։ ԺՂ. 7։ Պ Կ. ԻԳ. 49։ Գաղ. Դ. 6)։

Իսկ զմնորդեղուԹենէն Քրիստոսի ասի և առաքիլ ՚ի Հոգւոյն՝ ըստ կամակցուԹեան և ըստ գործակցուԹեան, ըստ որում և յանձնէ իսկ իմանի առաքեալ

Որդին, որպէս ասէ Ժողովն Տրէտոյ. և որպէս երդեմքն. "Որ զառաքումն առ ի Հօրէ և ի Հոգւոյդ Նանին յաշխարհ՝ մարգարէիւն ծանուցեր. զոր ի դիմաց մարգացելոյն բարբառիւր առ մարդկութիւնս՝ Տէր Տէր առաքեաց զիս, և Հոգի նորա,,։

ԳԼՈՒԽ Ժ

ՑԱՂԱԴՍ ԱՌԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ՑԱՍՏՈՒԱԾ

Ա՜անչնաւորութիւն թէպէտ և երբեմն նշանակէ և զանձնաւորութիւն, բայց բնիկ նշանակութիւն նորա է ցուցանել զառանձին և զյատուկ ինչ ուրուք՝ իբր հետևանս անձնաւորութեան։ Ա՝ան որոյ ամենայնիւ ի դէպ գայ այնմ ամենայնի, որ՝ յատուածաբանից կոչին առընչութիւնք, յատկութիւնք աստուածային անձանց, ծանօթութիւնք, և սեփական անուանք, որք առ հասարակ մի ինչ նշանակեն. բայց կոչին առընչութիւնք՝ հայեցմամբ առընչակցին, յատկութիւնք՝ հայեցմամբ անձին որոյ են, ծանօթութիւնք՝ հայեցմամբ առ միաս որում յայտնին, և սեփական անուանք՝ զի ստորոգելիք են ընծայեալք միում միում յանձանց ըստ ծանօթութեանն զոր ունիմք։ Ա՝րդ զայս ամենայն յայտ առնէ անուանս առանձնաւորութիւն։

Ո՝րք են առանձնաւորութիւնք Ա՝ստուած. անծնելութիւն և հայրութիւն՝ յատուկ անձին Հօր. որդիութիւն՝ յատուկ անձին Որդւոյ. և բղխումն՝ յատուկ անձին Հոգւոյ։ Ա՝րդ ասացաք առանձնաւորութիւնս Հօր, անծնելութիւն յատուկնման իբրև առաջին անձն, իսկ հայրութիւն իբրև ծնօղ Նանին. այլ անձնական յատկութիւն՝ իբր կացուցիչ անձին Հօր՝ հայրութիւն եւեթ է, վասն որոյ երբեակ եւեթ ասին յատկութիւնք իբր կացուցիչք երից անձանց։

Ո՝անօրեն-բիւն, որ կոչի և Նշան կամ Կնիք, է առանձնաւորութիւն այնպիսի՝ որով Հանապետիւք զիւրաքանչիւր անձն զանազանեալ յայլոց, և կամ զերկուս յերկրորդէն։ Ա՝ւ զի այսպիսիք են միայն ամենայն առընչութիւնք և յատկութիւնք, նմին իրի են հինգ. այսինքն

երեք յատկութիւնք՝ որ նոյն են ընդ երիս առընչութիւնս, և են հայրութիւն, որդիութիւն, և բղխումն կրաւորական։ Այլ է և մի ՚ի յատկութեանց՝ որ ոչ մնանէ ՚ի թիւ առընչութեանց, այսինքն անծնութիւն. և դարձեալ է և մի յառընչութեանց՝ որ ոչ մնանէ ՚ի թիւ յատկութեանց, այսինքն բղխումն ներգործական. վասն որոյ լինին ընդ ամենայն հինգ ծանօթութիւնք, որ են անծնութիւն, հայրութիւն, որդիութիւն, բղխումն ներգործական, բղխումն կրաւորական։ Անծնութիւն և հայրութիւն՝ են յայտարար առաջին անձին, որդիութիւն՝ երկրորդին, բղխումն ներգործական՝ առաջնոյն և երկրորդին, իսկ բղխումն կրաւորական՝ երրորդին։

Անծին կոչի Հայր, ոչ միայն զի չէ ծնեալ որդիաբար, այլ և զի չէ ելեալ իբրև զՀոգի. վասն որոյ նշանակէ և անել, անպատճառ, անսկիզբն։

Աստիճան կամ առանձնաւոր անուանք են ստորոգելիք իւրաքանչիւր անձին, որք այլում ոչ պատշաճին։ Առաջնոյ անձին առանձնաւոր ստորոգելիք են՝ Հայր, ծնօղ ծոցածին Որանին, անծին, պատճառ կամ սկիզբն։ Երկրորդ անձին՝ որդի, ծնունդ Հօր, Որան, պատկեր կամ նկարագիր կամ կնիք Հօր, Ճառագայթ և կերպարան էութեան Հօր, միածին։ Իսկ երրորդ անձին՝ Հոգի, բղխումն, սէր՝՚ի նշանակ փոխադարձ սիրոյ Հօր և Որդւոյ, և պարգև՝ իբր զեղումն նոյն սիրոյ, զի նմա ընծային ամենայն բարիք զեղեալք ՚ի ստուծոյ յարատածս։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՅԱՂԱԳՍ ԲՂԽՄԱՆ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ ԵՒ ՅՈՐԴՒՈՅ *

Բղխումն կամ ելումն Հոգւոյն սրբոյ իմանամք զյաւիտենական յառաջագայութիւն նորա ՚ի ներքոյ Հօրն, որով է երրորդ անձն ՚ի սուրբ Երրորդութեան,

* Զգլուխս զայս ըստ առաւելագոյն մասին համառօտեմ ՚ի Ճառէ Աւետիքեան վարդապետի, որ ՚ի վախճան Բացատրութեան Ընդակիանոց։

ոչ Հայր և ոչ Որդի՝ այլ բղխեալ։ Յաղագս սկզբան այսը բղխման՝ թէ յումմէ յառաջագոյն Հոգին, ամենայն հաւատացեալք միաբանին թէ՛ի Հօրէ. զոր յառաջնոց աղանդաւորաց ուրացան Հոգեմարտք, զի մի հարկեսցին խոստովանել զաստուածութիւն նորա։ Ապա որոյ առաջին ժողովն կոստանդնուպօլսի կարևոր համարեցաւ ընդդէմ նոցա դնել՛ի հանգանակի՝ որ է Հօրէ ելանէ։

Բայց թէ արդեօք՛ի Հօրէ միայն ելանէ թէ Ա֊որդւոյ ևս, յառաջին դարս եկեղեցւոյ ոչ յուշեցաւ խնդիրը, զի ոչ գոյր հակառակօղ այսմ վարդապետութեան. մինչև յարեաւ Մակեդոնիոս կուսակից Եւեստոլի, որ ընդդէմ սրբոյն Կիւրղի արձանացոյց նոր հակառակութիւն՝ թէ Հոգին սուրբ՛ի Հօրէ միայն ելանէ, և ոչ և Որդւոյ։ Որում պատասխանի արարեալ սուրբն Կիւրեղ, ասէ. “Յատուկ է Որդւոյ Հոգին, որպէս արդարև Յատուածոյ Հօր,,. և բերէ զբան առաքելոյն “Զի թէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա,,. և զերանելականն “Ո՛ամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի՝ թէ յիմմէ առնու և պատմեսցէ ձեզ,,։ Այլին՛ի նենգ արկանէ զՄակեդոնիոս. զի եթէ նա՛ի բանէ առաքելոյն “Ոչ եթէ զՀոգի աշխարհիս առաք, այլ զՀոգին որ Յատուածոյ ելանէ,,, ձեռնարկէր ելանել նմա՛ի Հօրէ, նովին ձեռնարկութեամբ հարկի ընդունել և Որդւոյ. վասն զի նոյն առաքեալ Հոգի Քրիստոսի կոչէ զնա այնպէս որպէս Հօր։

Հակառակութիւնն Մակեդոնիոսեայ չեգիտ յայնժամ իւր համախոհս, վասն զի վարդապետութիւնն Կիւրղի վկայեալ էր և յայլոց Հարց արևելեայց, ընդորս և բազումք՛ի լատին վարդապետաց միաբանէին՝ զի Հոգին սուրբ ոչ միայն՛ի Հօրէ ելանէ, այլ և՛ի Որդւոյ։ Մանաւանդ զի ոչ ուրուք յառաջնոց ողջամիտ վարդապետաց Յունաց կամ Լատինաց ասացեալ էր բնաւ՝ թէ՛ի Հօրէ միայն ելանէ, և ոչ Որդւոյ։ Վասն այսորիկ բղխումն Հոգւոյն՛ի Հօրէ և Որդւոյ յառաջին դարուց հետէ ծանուցեալ էր առ վարդապետս, թէպետ և ոչ հրատարակեալ իբր դաւանութիւն եկեղեցւոյ՛ի հաւատացեալս։ Ի վեցերորդ և յեօթներորդ

դարու սկիզբն եղև հրատարակելոյ խնդրոյս՝ի Սպանիա և՝ի Գաղղիա, և տակաւ տարածեալ յայլ ևս եկեղեցիս Արեւմտեայց, յիններորդ դարու ամենեցուն համաձայնութեամբ քարոզեցաւ իբրև խնդիր հաւատոյ։

Եկեղեցի Յունաց չեղոյց ինչ անհաւանութիւն՝ի սկզբան. այլ յեօթներորդ դարու սկսան ոմանք ընդ առաջս հայել յայս վարդապետութիւն։ Սակ յիններորդումն յայտնապէս յարոյց պատերազմ Յոան պատրիարքը Կոստանդնուպօլսոյ. որոյ յայլոց պատճառաց երկնեալ հակառակութիւն առ եկեղեցին Հռովմայ, պատրուակ ապստամբութեան իւրոյ կալաւ զայս վարդապետութիւն, իբր թէ հռամայեցիք՝ի Յօրէ և Լեւոնէ ասելով զերծումն Հոգւոյն՝ երկուս սկզբունս՝ի ներքս մուծանիցեն։ Այս որոյն հակառակութեան բուռոյց դառնարմատ հերձուած՝ի մէջ երկուց եկեղեցեաց, որ ըստ անցանել ժամանակաց այնպէս աձեալ արմատացաւ, զի թէպէտ և՝ի բազում ժողովս ջանացան հռոմայեցիք խլել զանմիաբանութեանն տունկ, բայց մինչև ցայսօր կայ և մնայ հերձուածն անբժշկելի։

Ի մեռաւանեցորդ դարու Միքայէլ Կերուլարիոս պատրիարք Յունաց գրգռեաց միւսանգամ զվէճն. վասն որոյ Ուրբանոս Բ. Հռովմայ քահանայապետն կոչեաց ժողով յամին 1097, ՚ի Քաղինա Պուլիոյ, ուր յաղթահարեցան Յոյնք՝ի սրբոյն Պետրոսէ՝ խոստովանել զբղխումն Հոգւոյն և Լիւդուոյ։ Պա յամին 1215, ՚ի չորրորդ ժողովին լատերանեան բացայայտ ևս դաւանեցան Յոյնք ընդ Լատինս զնոյն վարդապետութիւն։ Այլ՝ի պառակտել անդրէն Յունաց, յամին 1251, Ինոսենկենտիոս Դ. Հայրապետն Հռովմայ, գրեաց Թուղթ շրջաբերական զայսմանէ առ տիեզերական եկեղեցի։ Այս ըստ վկայելոյ ժամանակակից պատմագրաց մերոց Վարդանայ և Կիրակոսի, զորոց զբանն տեսցուք՝ի տօրէ, ոչ հաճոյ Թուեցաւ այլոց ազգաց՝ բայց միայն Հայոց, որք ժողովուլ ընկալան զնոյն խոստովանութիւն լատինացւոց։

Պարձեալ և յամին 1274, ՚ի ժողովին Լուգդունի յանձն առին Յոյնք միաբանել ընդ Լատինս՝ի խոստովանութիւն բղխման Հոգւոյն սրբոյ և Լիւդուոյ, զոր և՝ի տուրբ պատարագի նուագեցին՝ի յոյն և՝ի լատին

բարբառ: Բայց յայնմ ևս նուազի ոչ հաստատուն կացին ՚ի խոստովանութեանն:

Յետոյ ապա յամին 1439, ՚ի ժողովն փլորենտեան, միաբանութեամբ արևելեան և արևմտեան եկեղեցեաց սահմանեցաւ վարդապետութիւնս այս. և Թուէր ՚ի բաց բարձեալ ՚ի սպառ ամենայն հակառակութիւն և հերձուած: Եւ սադրանօք Սարկոսի եփեսացւոյ մերժեցին դարձեալ Յոյնք զվարդապետութիւնն զայն և մերժեն մինչև ցայսօր:

Հայաստանեայց եկեղեցի ՚ի սկզբան անդ անխռով կայր ՚ի պատերազմէ աստի. զի ըստ վարդապետութեանն չէր ոք հակառակօղ ՚ի ստոյգ վարդապետաց: Եւ որպէս խնդիր հաւատոյ ՚ի լոյս ևեթ ծանուցեալ յաղգիս յիններորդ դարու, և ապա յերեքտասաներորդին հրատարակեցաւ, որչափ ինչ աւանդեն մատեանք առ մեզ հասեալք: Որ և յայնժամ մտադիւր ընկալան մերքս, որպէս ՚ի վեր անդր ակնարկեցաք, իբրև համաձայն առաջնոց Հարց՝ որք զՀմարտութիւն խընդրոյս ուրեք ըստ ձայնին, և բազում ուրեք ըստ մտոյ աւանդեալ էին ՚ի գիրս իւրեանց: Եւ յս ընդունելութիւն տևեաց ՚ի մերում ազգի զբազում ամս. և տևէր ևս մինչև ցայսօր, եթէ չէին հետևողք ումանք Յունաց ընդդէմ Հայրենի աւանդութեան:

Եւ ձեռնարկեալ ՚ի ցուցումն խնդրոյս՝ կարևոր համարիմք ազգ առնել, զի խոստովանել զըղխուսն Հոգւոյ ՚ի Հօրէ և Որդւոյ՝ ոչ է դնել զՀայր և զՈրդի երկուս այլ և այլ սկզբունս կամ պատճառս բղխման, այլ զերկոսին իբրև մի սկիզբն: Որ ի ոչ եթէ այլով բղխողութեամբ բղխէ Հայր, և այլով Որդի, այլ ամենևին մի և նոյն բղխողական զօրութիւն և ներգործութիւն է ՚ի Հայր և Որդի. վասն որոյ Թէպէտ և երկու են բղխող անձինք, այլ մի սկիզբն բղխիչ՝ որպէս և մի բըղխեալ: Որ օրինակ ՚ի միջի արարչական զօրութենէն Հաստուածոյ, յորում երեքին ևս անձինք են համագործք, յառաջ գան արարածք յերեցունցն իբրև ՚ի միջի պատճառէ:

ՅՕԴՈՒԱԾ Ա

Ակագոյցք ի սուրբ գրոց :

Աւրդ ցուցանի վարդապետութիւնս այսոսկա ի սուրբ գրոց, զի փրկիչն մեր ասէ. (Յհ. ԺԴ. 14.) "Եւ զիս փառաւորեսցէ, զի յիմմէ առնուցու և պատմեսցէ ձեզ. զամենայն ինչ զոր ունի Հայր, իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ յիմմէ առնուցու ,,: Աւրդ եթէ Հոգին այնու իսկ զի ի Հօրէ առնու՝ առնու և Աւրդւոյ, ըստ տէրունեան բանին, քանզի որ ինչ Հօր է՝ է և Աւրդւոյ, ապա նովին իսկ զի Հոգին բղխէ ի Հօրէ՝ բղխէ և Աւրդւոյ :

Եւ դարձեալ քաջայայտ է աստուածաբանօրէն, զի ոչ Աւրդի ի Հօրէ և ոչ Հոգի ի Հօրէ և Աւրդւոյ առնու ինչ ի ժամանակի, այլ ի յաւիտենից առնուն. և տուչութիւն և առումն Աստուածոյ ոչ արտաքոյ Աստուածոյ ինչ է, այլ է նոյն ինքն էութիւնն Աստուածոյ : Ապա Հոգին ոչ այլ ինչ առնու Աւրդւոյ՝ բայց զաստուածութիւն, որպէս և նոյն ինքն Աւրդի և Հոգի առնուն ի Հօրէ զնոյն աստուածութիւն. և որպէս առողութիւն Աւրդւոյ ի Հօրէ՝ ելումն է ի նմանէ, նոյնպէս և առողութիւն Հոգւոյ ի Հօրէ և Աւրդւոյ է ելումն ի նոցունց :

Եւ դարձեալ փրկիչն մեր ասէ. (Յհ. ԺԶ. 7.) "Եթէ ես ոչ երթայց, միխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ ,,: Եւ դարձեալ. (անդ. ԺԵ. 26.) "Աւրաքեցից ձեզ ի Հօրէ զՀոգին Ճշմարտութեան ,,: Աւրդ առաքումն Աստուածոյ ոչ այլ ինչ է աստուածաբանօրէն՝ բայց ելումն. զի ոչ իշխանութեան ինչ և ոչ մեծութեան և կրտսերութեան իմաստս մարթ է ի ներքս մտածանել յանձինս Երրորդութեան, և ոչ ներգործութիւն ինչ ժամանակեայ : Ապա առաքէ Հայր զԱւրդի, զի Աւրդի ելանէ ի Հօրէ. և առաքեն Հայր և Աւրդի զՀոգին, զի Հոգին ելանէ ի նոցունց : Ոմանց որոյ ասեն սուրբ գիրք. "Աւրաքեաց Աստուած զՄրդի իւր. Աւրաքեաց զիս կենդա-

նին Հայր։ Արդարեւ ես առ առաքիչն իմ։ Հոգին զոր առաքեսցէ Հայր յանուն իմ։ Նա ես առաքեմ զաւետիս Հոգի ճշմարիտ ի ձեզ,,։ այլ ոչ ուրեք երբեք ասեն գիրք առաքել Որդւոյ զՀայր, կամ Հոգւոյ առաքել զՈրդի կամ զՀայր։

Եւ դարձեալ փրկիչն մեր փչեաց յառաքեալսն և ասէ. "Առէք Հոգի սուրբ,,։ (Յհ. ե. 22)։ Արդ այս փչումն նշանակ էր ներգործական բղխման Հոգւոյն, զի հաւասար հայհոյութեան է ասել՝ թէ Քրիստոս պաշտօնեաբար հանգոյն եպիսկոպոսի ետ առաքելոցն զՀոգի, այլ իբրև զիւրն եհեղ ի նոսա։ Ոյն որոյ ասէ սուրբն Կիւրեղ. "Արմենապէս փչեաց Քրիստոս, յայտ արարեալ՝ զի որպէս ի բերանոյ մարդոյ ելանէ շունչ մարդկային, նոյնպէս և յաստուածային գոյացութենէ աստուածութեանն հեղանի Հոգին՝ որ ի նմանէն է,,։ Եւ սուրբն Կիւրեղ աղեքսանդրացի. "Ոչ զայլ Հոգի տուեալ Միրտելոցն ծառայաբար, և որպէս պաշտօնեայ, այլ որպէս Աստուած՝ ըստ բնութեան իշխանութեամբ վերնոյն զոր չիւղենէն և Իւրեն,,։ Օ՛ի որպէս ի ստեղծման Ադամայ ընդ կենդանական շնչոյ փչեաց ի նա Աստուած զՀոգին սուրբ, և չէ իսկ մարթ ասել թէ Հայր միայն էր փչող՝ այլ և Որդի, նոյնպէս և աստանօր. վասն որոյ ի պաշտամունս մեր փչումն Ադամ և յառաքեալ՝ ընծայի անխտիր Քրիստոսի. "Որ յերկրորդի լինելութեանս յետ յարութեան քումմէ եակցին, մեռեալ ի վերնատունն դրօքն փակելովք, շնորհեցեր ըստ առաջնին փչմանն զքեզ մատասանիցն առաքելոյ՝ ասաց. Առէք Հոգի սուրբ,,։ Եւ դարձեալ. "Ցուր մեզ զհաղորդութիւն քո, զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոց՝ փչմամբ քո ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր Հոգի քո սուրբ,,։

Եւ դարձեալ սուրբ գիրք կոչեն զՀոգին սուրբ Հոգի Որդւոյ և Հոգի Քրիստոսի անխտիր որպէս Հոգի Հօր և Հոգի Աստուծոյ. "Առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյ իւրոյ ի սիրտս մեր։ Ապա եթէ ոք զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա։ Քննեցին յորմէ և յորպիսի ժամանակի գուշակեր ի նոսա Հոգին Քրիստոս։ Մաւակոխեցին երթալ ի Խութանիա, և ոչ համարձակեաց նոցա Հոգին Յիսուս,,։ Արդ Հոգի Հօր

ոչ այլազգ ինչ նշանակութեամբ ասի, այլ ըստ առընչութեանն առ Հայր, զի է բղխումն Հոգւոյ. որպէս և Որդի Հոգի ասի, զի է ծնունդ Հոգւոյ. ապա և ոչ այլազգ ինչ նշանակութեամբ ասի Հոգի Որդւոյ, այլ ըստ առընչութեանն առ նա, զի է բղխումն և Որդւոյ: Ոմն որոյ ասէ Վերիթոն մեր. "Որպէս Հոգին առինչնակ է, զի որումն Հոգի է, վասն զի՝ ի դէմս Հոգւոյ և Որդւոյ ասի Հոգի ,,:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Ժամանակամ եւեթ փրկիչն մեր զեկմանէ Հոգւոյն վարդապետեալ, և անդ՝ ի Հոգի միայնոյ զեկումն նորա ուսուցանէ. "Դադաքեցից ձեզ՝ ի Հոգի զՀոգին Ճշմարտութեան, որ՝ ի Հոգւոյ եկանէ ,,. (Յհ. ԺԵ. 26):

Պե. Վրիստոս յաճախ ուրեք ասէ "Այս և Հայր իմ մի եմք. Ո ամենայն ինչ զոր ունի Հայր, իմ է. Որ տեսանն զիս, տեսէ զՀայր. Այս՝ ի Հայր, և Հայր յիս է. Որ ինչ իմ է, ամենայն քո է. և որ ինչ քո է, այն իմ է. Ո՝ի իւեն մի, որպէս և մեք մի եմք ,,: Այսպա յասելն զՀոգւոյ՝ զի՝ ի Հոգի եկանէ, նովին իսկ յայտ առնէ զեկումն նորա և յինքենէ. մանաւանդ զի անդէն իսկ և զառաքումն նորա յիւրմէ, և զառնուլ նորա յինքենէ՝ ի վերայ ածէ ասելով. "Ո ամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, Թէ յիմմէ առնու և պատմէ ձեզ ,,. (Յհ. ԺԶ. 15):

Ո այս այսպէս իմանալ և սուրբն Կիւրեղ. և յաւելու մանաւանդ՝ ի բանէ աստի ցուցանել զեկումն Հոգւոյն և յՈրդւոյ: Ո՝ի ուր՝ ի Հոգի ասէն սուրբ գիրք եկանել Հոգւոյ, անդ զինա Հոգի Ճշմարտութեան կոչեն. արդ Ճշմարտութիւն ո՞ այլ ոք էցէ, բայց Որդին՝ որ ասէ. "Այս եմ Ճանապարհ և Ճշմարտութիւն և կեանք ,,: Այսպա նախ քան զեկումն Հոգւոյ՝ ի Հոգի՝ բացատրի անդ եկումն նորա յՈրդւոյ, յասելն "Ո Հոգին Ճշմարտութեան՝ որ՝ ի Հոգի եկանէ ,,: ԱյնՔէ՝ ի Հաստատելոյ սուրբ գրոյ զեկումն Հոգւոյն՝ ի Հոգի՝ ըզՀետ գայր ժխտել զեկումն և յՈրդւոյ, ապա և ամենայն ուրեք՝ ուր զմիոյ անձնէ իւեն բանք կամ զերկուց՝

պարտ էր զՀետ բերել զՀակառակն զայլոց անձանց. այլ այս արիոսեանցն է և Հոգեմարտիցն, որք առ՝ի ցուցանել՝ զի Որդի և Հոգի չեն Ստուած, ածեն զվկայութիւնս՝ ուր զՀօր ևեթ զաստուածութենէ իւրեն բանք:

Ստ. քաջայայտ է աստուածաբանօրէն, զի այն ինչ միայն սեփական է Հօր՝ որ ինչ առանձնաւորութիւն է Հայրութեան, և յայտարար Հայրական առընչութեան առ Որդի. վասն որոյ եթէ ելանել Հոգւոյն՝ի Հօրէ՝ նշանակէր՝ի Հօրէ միայնոյ, ոչ ևս զանազանէր Հոգին՝ի Որդւոյ. վասն զի անձինք զանազանին Ստուած առընչութեամբ ևեթ ծագման:

ՅՕԴՈՒԱԾ Բ

Ապացոյցք՝ի բաւիւ:

Որդի ելանէ՝ի Հօրէ՝ի ձեռն մտաց որպէս բան, իսկ Հոգին՝ի ձեռն կամաց որպէս սէր: Որդ սէրն ելանէ՝ի բանէ. զի չկարէ սիրել ինչ ոք, եթէ ոչ ըմբռնէ և իմանայ մտօք. և քանզի բան յաստուածայինս գոյացեր է և ենթակայացեալ, ապա և Որդի ընդ Հօր բըղխող է Հոգւոյն որպէս ծանօթական սկիզբն սիրոյ:

Ստ. եթէ Հոգի ոչ ելանէր և Որդւոյ, լինէր նոյն ընդ նմա և ոչ անձն այլ՝ իսկապէս զանազանեալ՝ի նմանէ. քանզի Ստուած ամենայն ինչ նոյն է, ուր չիցէ առընչական հակադրութիւն: Որդ եթէ Հոգին չելանէր և Որդւոյ, չմնայր և ոչ մի առընչական հակադրութիւն ընդ Որդի և ընդ Հոգի. ապա լինէին մի, որ է անտեղի: Սրբոյն Կիւրիղոսի Ալեքսանդրեայ է ձեռնարկութիւնս, որպէս աւետարք՝ի ստորև՝ի կարգս վկայութեանց:

Ստ. եթէ Հոգին չելանէր և Որդւոյ, զՀետ գայր առել՝ զի Որդին չունիցի բովանդակ զէութիւն Հօր, և չիցէ հաւասար Հօր. զի եթէ հաւասար Հօր ունէր կան, յառաջ ածէր նովաւ զՀոգին որպէս յառաջ ածէ զնա Հայր:

Յաւելու աւրբն Աւովմաս և երկուս այլ ցուցակութիւնս, Մի՝ զի՝ի միջ երկուց անձանց ծագելոց՝ի Հօ-

ըէ, այսինքն՝ ի մէջ Որդւոյ և Հոգւոյ գոյ կարգ· արդ այս կարգ չկարէ յայլմէ իմեքէ յառաջ գալ, բայց զի մին է՝ ի միւսմէ, որպէս և առաջնութիւնն Հօր յայսմանէ է· ապա թէ ոչ, պարտ էր նիւթական ինչ դնել զանազանութիւնն ընդ Որդի և ընդ Հոգի որպէս ընդ արարածս, որ անասելի է: Այլ քանզի Որդի ոչ ելանէ՝ ի Հոգւոյ, ապա պարտ է ասել՝ զի Հոգի ելանէ և Որդւոյ:

Երկրորդ՝ զի որ ինչ ոչ է հակառական, կարելի է· և յայտ է զի բղխել Որդւոյ զՀոգի ոչ է հակառական, ոչ որպէս Յառաջած, զի և Հայր բղխէ զՀոգին, և ոչ որպէս որդի՝ զի այլ է ելումն Որդւոյ և Հոգւոյն այլ, և ոչ որպէս երկրորդ անձն ելեալ յառաջնմէ՝ զի մարթ է ելոյզն ելուզանել զայլ: Այլ քանզի Յ[յառաջած նոյն է գոլ և կարել, ապա իսկապէս և Որդի բղխէ ընդ Հօր զՀոգի:

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Ա[ռարկ· Ա· Այթէ Հոգին սուրբ բղխէ և Որդւոյ, ապա և Որդի ոչ՝ ի Հօրէ միայնոյ ծնանի՝ այլ և՝ ի Հոգւոյ· զի՝ ի ծնելութեան Որդւոյ չիք ընդ Հայր և Հոգի հակադրութիւն առընչական:

Պաս· Ա[յդ ձեռնարկութիւն դղրդէ զկարգ ելմանց· զի բղխումն երկրորդ է ըստ կարգի, և ծնելութիւն առաջին· և որպէս՝ ի ձևոյ իսկ սկզբութեան յայտ է, երրորդ անձն է Հոգի ըստ կարգի, վասն որոյ և երկրորդ ըստ ելման· ապա չէ մարթ Որդւոյ՝ որ երկրորդն է կարգաւ և առաջին ըստ ելման, ծնանել՝ ի Հոգւոյ:

Ա[ռարկ· Բ· Այթէ Հոգին սուրբ բղխէր և Որդւոյ, զհետ գայր ասել՝ զի՝ ի կրկին բղխմանց ելանէ Հոգին, և հեռագոյն քան զՈրդի է Հօր, և զի կանխէ ծնունդ Որդւոյ քան զՀոգւոյն բղխումն, և զի Որդի աւելորդ սկիզբն է Հոգւոյ, կամ անբաւական Հայր առ՝ ի բըղխել զՀոգի:

Պաս· Այթէ՝ ի մասին բղխման գոյր առընչական հակադրութիւն ընդ Հայր և ընդ Որդի, յայնժամ զհետ գայր Հոգւոյ՝ ի կրկին բղխմանց ելանել· այլ քանզի չիք

'ի նոսա առընչական հակադրութիւն ըստ բղխման, յերկոցունց իբրև 'ի միոջէ սկզբնէ յառաջ բղխէ Հոգին, որպէս ջուր՝ ղի յաղբերէ և 'ի վտակէ լճանայ. քանզի սուրբ Հոգին բղխէ յաստուածային էութենէն՝ որ մի և նոյն է 'ի Հայր և Որդի: Եւ ոչ հեռագոյն Հօր քան զՈրդի և ոչ կրտսերագոյն քան զՈրդի գտանի սուրբ Հոգին, ղի միանձնաւորակից է Հօր և Որդւոյ՝ յորոց որպէս 'ի միոջէ սկզբնէ գայ յառաջ, և չիք 'ի նոսա բաց 'ի կարգէ այլ ինչ յառաջ և յետոյ, երեքին ևս յաւիտենականք են և հաւասարակիցք յամենայնի: Իսկ եթէ բղխումն Հոգւոյն և Որդւոյ աւելորդ ըստկիզբն կացուցանէր զՈրդի կամ անբաւական զՀայր, ևս առաւել օրէն էր զհետ բերել զայդ անտեղութիւն յարարչագործութեան՝ յորում արարչակից Հօր զՈրդի և զՀոգի դաւանեմք, թէպէտ և բաւական սկիզբն կամ պատճառ արարչութեան իցէ Հայր. քանզի նոյն և մի ամենակարողութիւն յերիս անձինս է արարչագործ, և օտար է 'ի հաւատոյ զՀայր առանց Որդւոյ նկատել. ապա եթէ Հայր բղխէ զՀոգի, հարկաւ բղխէ ընդ Որդւոյ: Ընդինակ իմն. արդեօք ձայն 'ի զանգակէ հնչիցէ, թէ 'ի լեզուէ նորին. յայտ է թէ յերկոցունցն միանգամայն, և 'ի միոջէ ներգործութենէ՝ այսինքն 'ի բանէն:

ԳՕԴՈՒԱԾ Գ

Վկայութիւնք 'ի Հարց յաղագս բղխման Հոգւոյն և յՈրդւոյ:

Աւելորդ համարիմք ածել աստանօր վկայութիւնս 'ի Հարց լատինացւոց, որոց յայտնի է վարդապետութիւն յաղագս բղխման Հոգւոյն և յՈրդւոյ: Այլ ասն որոց 'ի Յունաց անտի ածցուք փոքր 'ի շատէ, և ապա 'ի մերազնեայց:

Սուրբն Եպիփան. "Եթէ Քրիստոս 'ի Հօրէ ձառնայէ Հաստուած յՀաստուծոյ, և Հոգին 'ի Քրիստոսէ կամ յերկոցունց,,:

"Իսկ Հոգին սուրբ յերկոցունց, Հոգի 'ի Հոգւոյ, քանզի Հոգի է Հաստուած,,:

«Հոգին սուրբ, Հոգի Աշխարհութեան, է լոյս երբորդ՝ ի Հօրէ և Որդւոյ»:

«Ել օտար առ ի Հօրէ և Որդւոյ, այլ ի նոյն էութենէ, ի նոյն աստուածութենէ, ի Հօրէ և Որդւոյ, ընդ Հօր և Որդւոյ ներանձն միշտ Հոգի սուրբ»:

Սուրբն Կիրիգոր Նիւսացի. «Որպէս շարազուգի Հօր Որդին, և զառ ի նմանէն զգոլ ունելով՝ ոչ յետնի ըստ պղութեանն, սոյնպէս դարձեալ ընդ միածնին շարակցի Հոգին սուրբ, մտածութեամբ միայն քան պաճառին բանէ յառաջագոյն տեսեալ քան զՀոգւոյն ենթակայութիւն... մինչ զի բանի պատճառին՝ ի բաց բարձելոյ՝ յոչ իմիք սրբոյ Երրորդութեանն առ ինքն անհամաձայն գտանիլ»: Այսինքն զի բառնայ զանազանութիւն անձանց, ի բառնալ բանի առընչութեանց ծագման:

«Ի անայլայլութիւն բնութեանն խոստովանելով՝ ըստ պատճառի և պատճառեցելոյ զզանազանութիւնն ոչ ուրանամք, որով միայն որոշիլ միմյն ի միւսմէն ըմբռնեմք՝ հաւատալով զամն պատճառ գոլ և զամն ի պատճառէ. և զորոյ ի պատճառէն է՝ դարձեալ զայլ զանազանութիւն իմանամք. զի ոմն է Ղեչաւորապէս յաւելնոյն. և ոմն ի ձեռն Ղեչաւորապէսի յաւելնոյն միջնորդութեամբ Որդւոյ»:

«Հոգին սուրբ ի Հօրէ ասի, և Որդւոյ գոլ միանգամայն վկայի. զի թէ ոք զՀոգին Քրիստոսի ոչ ունի, ասէ, սա չէ նորա: Այդ Հոգին Հայտուածոյ է, և Հայտուածոյ Հոգի. իսկ Որդի Հայտուածոյ է, բայց ոչ Հոգւոյն է. և ոչ ասի, և ոչ անդրադարձի ուանելական հեռաւորութեան այս»: Եւ դարձեալ զզանազանութիւն Հոգւոյն ի Հայրոյ կացուցանէ «Ոչն միածնաբար առ ի Հօրէ ենթակայանալ, և նովին իսկ Որդւոյն ելանել»:

Սուրբն Կիւրեղ աղէքսանդրացի ի Թուղթն գրեալ ի դիմաց Արդ ժողովոյն Աղէքսանդրիոյ առ Եւտող. «Հոգին Թէպետ և ենթակայացեալ ինքնութեամբ... և չէ Որդի, սակայն և ոչ օտար ի նմանէ է, զի Հոգի Աշխարհութեան կոչի: Այդ Քրիստոս է Աշխարհութիւն, և վասն այնորիկ ի նմանէ իսկ և Հայտուածոյ Հօրէ ելանել»: Այս Թուղթ սրբոյն Կիւրղի ընդունե-

լև եղև ՚ի հինգ ընդհանուր ժողովս, այսինքն յերկրորդն ՚ի չորրորդն ՚ի հինգերորդն ՚ի վեցերորդն և յութերորդն։

Նոյն ինքն սուրբն Կիւրեղ. «Ա՛ման զի աստուածոյն է և Տէր և Աստուած՝ Եսայեան յերկոցունց, այս է՛ ՚ի Հօրէ Աստուած յառաջ խաղացեալ Հոգի։

«Ըստ որում է Յ՛աստուած և Ա՛յաստուծոյ ըստ բնութեան Աստուածն . . . յատուկ նորա է և ՚ի նմա, և ՚ի նմանե Հոգին ,,։

«Ել զայլոց Հոգի տուեալ սկզբանէցոյն ծառայաբար, և որպէս պաշտօնեայ. այլ որպէս Յ՛աստուած՝ ըստ բնութեան իշխանութեամբ վերնոյն զոր յինոչենէն ի բրէն ,,։

«Օ՛ր տայն ինքն՝ որպէս Ա՛յաստուծոյ Հօրէ Որդի, և յիւրմէ բնութենէն աղբիւրացուցեալ մեզ ,,։

«Աստէպ ՚ի գէմս Յ՛աստուծոյ Հօր՝ յորմէ երևեցաւ Որդի, Հաւասար և նման նմա ըստ ամենայնի յառաջ գայ եղիցոմբ և Հոգին կենդանարար ,,։

«Ա՛րդ յորժամ Հոգին սուրբ ՚ի մեզ եղեալ՝ կերպարանակիցս ցուցանէ զմեզ Յ՛աստուծոյ, և յառաջ գայ ՚ի Հօրէ և Որդւոյ, քաջայայտ է թէ Ա՛յաստուծոյ իսկութենէն է՝ յապէս ՚ի նմա և ՚ի նմանէ յառաջ եկեալ, որպէս որ ՚ի մարդկայնոյն բերանոյ ընթանայ փչումն, թէ և փոքր է և ոչ արժանաւոր բանիս օրինակս ,,։

«Ա՛րդ յորժամ է տէր Յիսուս Քրիստոս ըստ Պօղոսի ձայնին, և տէր զՀոգին կոչէ, և ոչ մի տարբերութիւն ուրեմն մի բնութեան Որդւոյ և Հոգւոյն, այլ որպէս ՚ի նմանէն՝ և ՚ի նա բնաւորապէս գոլով տէրութեանն անուն ,,։

Սուրբն Աթանաս. «Պաւղոս սաղմոսելով ասէ՝ թէ առ ՚ի քէն է աղբիւր կենաց, և լուսով քով տեսանեմք զլոյս. քանզի գիտէ առ Հօր գոլ զՈրդի պաշտօնեայ Հոգին սրբոյ ,,։

«Որպէս ծանեաք յատկութիւն Որդւոյ առ Հայր, զնոյն ունել Որդւոյ առ Հոգին գտանեմք ,,։

«Ա՛ր ինչ է Հոգւոյ, ՚ի Որանէն է ,,։ (ընդդէմ. Մակեդոն. քան. գ)։

«Հոգին սուրբ ՚ի Հօրէ և Որդւոյ, ոչ արարեալ և ոչ ծնեալ, այլ ելեալ ,,. (՚ի հանգանակին՝ որ յառաջն քան մակագրեալ)։

Սուրբ Սկեթերան. "Տեսանես զաղբիւր ջրոյ զ՚ելանուածդ, և զկենդանի ջուրն զՀոգի սուրբ. աղբիւր ջրոյ կենդանւոյ Հայր, գետ յաղբերէ յառաջ եկեալ Որդի, ջուր գետոյն Հոգին սուրբ ,,։

"Փրկիչն ցուցանէ զանձն աղբիւր կենաց, և ջուր կենդանի զՀոգին սուրբ ,,։

Սուրբն Յարսեղ. "Որպէս ունի Որդին առ Հայրն, նոյնպէս առ Որդին՝ Հոգին ,,։

Սուրբ Ա՚ստուածաբանն. "Այս զինչ է, ասեն, որով նուազեալ է Հոգին առ՚ի գոլ Որդի. զի եթէ ոչ պակասեալ իւիք իցէ, որդի եղիցի։ Ել նուազեալ ինչ ասեմք, զի և ոչ նուազէ Ա՚ստուած. բայց երևմանքն՝ զի այսպէս ասացից, (այսինքն ծագմամբն,) և կամ առ իւրեարս ունելոյն զանազանութիւն, զանազան նոցա և զկոչմունս արար. զի և ոչ Որդւոյ ինչ նուազեալ է առ՚ի գոլ Հայր, յաղագս որոյ և ոչ կարօտեալ է որդիութիւնն, սակայն ոչ վասն այնորիկ Հայր ,,։

Ակեթերիանոս եմեսացի. "Ընծնին Ա՚ստուծոյ Հօր, և ծնիցելոյն՚ի նմանէ Որդւոյն միածնի, և սուրբ Հոգւոյն ելոյին՚ի նոցունց էութենէ, երիցն միութեան փառք ,,։

Սուրբն Յարսեղ. "Ել եթէ եղբայր եղբօր Համագոյ ասի, որպէս ամանոյ Թուեցաւ. այլ յորժամ և պապճաոն և որ՚ի պապճաոէն զգոյութիւն ունի՝ նոյն գտանի՚ի բնութեան, Համագոյ ասի ,,։ Ա՚ան որոյ և սուրբ Լուսաւորիչն մեր զՀամագոյակիցն Թարգմանեաց՚ի նոյն ինքն՚ի բնո-ՒԷնէ Հօր։ Ո՚նոյն և սուրբն Կիւրեղ ասէ. "Ո՚ի Թէ Համագոյակից է Որդին Հօր, ՚ի նմանէ և ՚ի նմա ըստ բնութեան և էապես է ,,։ Ա՚պա ուրեմն առ՚ի Համագոյութիւն Որդւոյ ընդ Հոգւոյ Հարկ է, զի կամ Որդի՚ի Հոգւոյ և կամ Հոգին՚ի Որդւոյ ելանիցէ. և զի առաջինն ոչ, ապա երկրորդն է Ճշմարիտ։

Դարձեալ նոյն ինքն սուրբն Յարսեղ. "Ել առանց Որդւոյ առնէ Հայր, և ոչ Որդի առանց Հոգւոյ. վասն այսորիկ Ա՚ստուծոյ բան Որդին, և բան (կամ խօսք) Որդւոյ Հոգին ,,։

"Պատկեր Ա՚ստուծոյ Քրիստոս.., պատկեր Որդւոյ Հոգին ,,։

Նոյնպէս Ա՚թանաս և Կիւրեղ կոչեն զՀոգին սուրբ

կերպարան և կնիք և նմանութիւն Աղտւոյ, որպէս Աղտի ասի Նոյ. զոր չէր մարթ ասել, եթէ Նոգին ոչ բղխեր և Աղտւոյ։

ՑՕԴՈՒԱԾ Դ

Վկայութիւնք Հարց մերազնեայց յաղագս բղխման Հոգւոյն և Յիրդոյ։

Սուրբ Ղուսաւորիչն մեր՝ի գիրս Ընդհանդեպ. "Նայր յանձնէ, Աղտի՝ի Նոյէ, Նոգին՝ի նոցունց՝ի նոսին ,,։

Եւս բան յիշատակեալ է՝ի պրակս Շ իրակվանու Բ. ժողովոյն, որ եղև յաւուրս մեծին Ընդոտոյ Նագրատունեայ, և Յովաբրիայի կաթողիկոսի, յառաջնումն կանոնի։ Նչ սովորութիւն իսկ էր կաթողիկոսաց, որպէս Մխիթար վարդապետ ապարանցի վկայէ, յեռուլ՝ի գլուխ կոնդակաց զսոյն զայս դաւանութիւն. "Նոստովանիմք զՆայր և զԱղտի և զՆոգին սուրբ՝ի նոցունց ,,։

Սուրբն Յակոբ Մծբնայ Հայրապետան՝ի Օ գծն գիրս. (Ճառ Ջ.) "Մարդ՝ որ ընդունի զՆոգին՝ի ջուրց անտի, և տրտմեցուցանէ զնա, ելանէ գնայ՝ի նմանէ (Նոգին) . . . և երթայ՝ի բոռն խոտ առ Սրիստոս ,,։ Նրիցս զնոյն բան յեղյեղէ, և որպէս չկր երկբայել՝ զբառն բոռն առնու փոխանակ սկզբան, մինչև ասել "Նուն Աստուած հոգ է յերկրէ ,,։

Սուրբն Նդիշէ (՝ի Ռեին. ԺՆ.) "Աստղինն չէ ծնեալ յումեքէ. երկրորդն ծնուննդ է առաջնոյն. երրորդն երկրորդին և առաջնոյն ելումն և բղխումն՝ իբր արմատ և ծառ և պտուղ ,,։

Մամբրէ վերծանող (՝ի Ճառն յարութեան Ղ աղ.) "Փառաւորէ Նոգի զՆայր և զԱղտի, զի՝ի նոցունց էութենէ առնու։ . . . Աստղ զայս դաւանութիւն ընկալան Նայք՝ի մեծէն Գրիգորէ և՝ի սրբոյն Ներսիսէ և յերանելոյն Ներսիսէ ,,։

Մովսէս քերթող՝ի քերականին. "Ընծնին և ծնիցելոյն, և ելողութեամբ յերկաքանչիւրոց ներհակին

սուրբ Հոգին ,, : Եւ գարձեալ. “ Սուրբ Հոգին առին-
չեռնակ է, զի ուրումն Հոգի է. վասն զի ’ի դէմս Հօր
և Որդւոյ ասի Հոգի : Հոգի Աստուծոյ շրջէր ’ի վերայ
ջրոց, և կամ Հոգի ամենակալին վարդապետէ ինձ. զի
Աստուած և ամենակալ՝ Հայր և Որդի են ,, :

Ընծն Աստրով ’ի մեկնութեան ժամագրոց. “ Որ-
նեմք զՀայր իբրև զպատճառ Որդւոյ ծննդեամբ, և
զՈրդի իբր ծնեալ ’ի Հօրէ բնութենակից և հաւա-
սար Հօր, և զՀոգին իբրև զբղխումն ’ի նոցունց էու-
թենէ ,, :

Ոսկէս քերթող ’ի Վերականին. “ Յաստուածա-
յին գոյութենէն անհատաբար Հայր, և Որդի յերկուց
բնութեանց միացեալ Քրիստոս, և սուրբ Հոգին ան-
հատացեալ բղխումն ’ի Հօրէ և Որդւոյ ,, :

Ստեփանոս սիւնեցի ’ի հին Վերականին. “ Հոգին
սուրբ բղխէ ’ի Հօրէ իբրև յականէ, անհատաբար դադա-
րէ յաղբեր. և Որդւոյ ելանէ անմեկնելի խոհականու-
թիւն գետ ,, : Որ և բացատրէ ասելով՝ զի բղխէ ’ի
Հօրէ իբրև յականէ կամ յառաջին ծագողէ, և առանց
սպառելոյ կամ բաժանելոյ դադարէ յաղբիւրն Որդի.
և ’ի նոյն Որդւոյ ելանէ իբրև գետ : Նոյն միտս ասի ’ի
Շարականի Հայրաշարժ աղբիւր. և այս գեղեցիկ օ-
րինակ ական և աղբեր առեալ է ’ի Վրիգորէ աստուա-
ծաբանէ՝ որ ասէ Յովհան. “ Լոյս էին և աղբիւր և
գետ զմեռաւ ածի ... Թերևս արդեօք միումն Հայր, և
միւսումն Որդի, և միւսումն Հոգին սուրբ յարմարա-
գոյնք ինչ լցեն ,, :

Սուրբն Վրիգոր Նարեկացի Յաղօթան (’ի բանն
իսկ.) “ Որեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ
սկզբանդ և սկզբնաւորիդ սկզբանց, սուրբ Նորոգող-
թեանդ փառք ,, . և այլն : Այս ինքն Հօր՝ որ անսկիզբն
գոլով՝ սկիզբն է Որդւոյ. Որդւոյ՝ որ սկիզբն է Հոգւոյ.
և Հոգւոյ՝ որ սկզբնաւորի ’ի սկզբանց, այսինքն ’ի Հօ-
րէ և Որդւոյ : Նոյն և այլազգ ’ի բանն Լ. երկրոր-
դէ. “ Որեզ միայնոյ պատճառիդ, և միոյդ ’ի միոյ պատ-
ճառէ, և ունողիդ զպատճառ միոյ, երրեակ անձնաւո-
րութեանդ ,, : Այս չէ մարթ խմանալ զՀօրէ զպատճառ
միոյ, զի Հայր երկուց է պատճառ. ապա նշանակէ զՈր-
դի, և է ասել՝ ունիս քեզ պատճառ զՈրդի, որ միայն

է պատճառ միոյ՝ որպէս ասացն սկզբնաւորիդ սկզբանց, այսինքն որ ունիս քեզ սկիզբն զՀայր և զԱրդի։ Յաղաղէաւ յայտնագոյնս (ի բանն հնգ.) “Որ հնաբանեմք ընդ Հօր և Արդւոյ և զանբաժանելի բղխումն նոցին՝ փառակից Հոգւոյն տերութեան ,,։

Յոհան իմաստասէր ի կանոնիկսն. (գլ. Ճ.) “Երևեցաւ այր մի Մակեդոն անուն, որ հայհոյէր զՀոգի սուրբ, և ոչ ի Հօրէ և Արդւոյ էութենէ ասէր ,,։

Ընդհանրական ուրեք ուրեք ակնարկէ զբղխումն Հոգւոյն և ի Արդւոյ զգալի օրինակօք, որպէս ի Յիսուս որդին. “Կամ լոյս ի ջուրըս ծագելով, և ճառագայթ ներգործելով. Որպէս և Հայր՝ յորմէ Արդի, Հոգին ծաւալ ճառագայթի ,,։ Որով նմանեցուցանէ լուսոյ առեգական զՀայր, յորմէ ճառագայթէ Արդին; և զՀոգի ծաւալումն ասէ ճառագայթին, այսինքն Արդւոյ. զի Արդի բազում ուրեք ի շարականս մեր և այլուր օրինակի ի ճառագայթ. որպէս “Յիսուս որդի Հօր միածին, և ճառագայթ կերպարանին ,,։ Եւ դարձեալ ուր ասէն. “Նանիւ Հոգին առ ի Հօրէ ,,. այսինքն ի Հօրէ Արդւոյն, որ է ասել ի Հօրէ և Արդւոյ։

Ամբրոնացին ի մեկնութեան պատարագի. “Եւ է խօսս բղխեալ այլ քան զբան ծնեալ. զի ոչ թէ յեղանելն սորա՝ նա ի մտացն պակասի. այլ ի ձեռն ներգործութեան մտացն և բանին՝ որ ի նմա՝ բղխէ, և նա ի ծնօղ միտն անշարժ մնայ, և անձնաւորի ի մտացն և ի բանէն անձնաւոր էութիւն խօսիցն, եթէ առ իմանալիս՝ իմացականապէս, եթէ առ զգալիսս՝ սպասաւորութեամբ զգայարանացս, որպէս ասացաւ։ Նմայպէս հրամայէ Քրիստոս և յաղագս Հոգւոյն. Հոգին Ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ. և յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ ,,։ Յայսմհետէ բանիս, զի որպէս ներքին բան մեր զօրութեամբ մտացն արտաքս բերէ զխօսս, և խօսքն այն այլ է ի բանէն և ի մտացն՝ յորոց գոյանայ, սոյնպէս և Հոգին՝ զորմէ փրկիչն ասաց թէ ի Հօրէ ելանէ, և թէ յիմմէ անտի առնու։

Ի խիթար վարդապետ Օշ. առակ ձկին. “Որպէս ըստ առակիդ սուրբ Հոգւոյն է ամենաբարի նշանակութիւն՝ Հայր, և ոստն՝ Արդի, և պտուղն Հոգի,, Օ այս նմանութիւն ի կիր առեալ և Հինկացոյն և Նո-

կան վարդապետին, փոխանակ պտղոյ՝ առաջինն գնէ ծաղիկ, և երկրորդն բողբոջ. և երեցունց նոյն են իմաստք, այսինքն զի որպէս յարմատոյն և յոստոյն յառաջ գայ ծաղիկն կամ պտուղ կամ բողբոջ, նոյնպէս ՚ի Հօրէ և Հոգւոյ յառաջ գայ Հոգին սուրբ։

Յիշատակարան մեկնութեան կաթողիկեացց գրեալ յամին 1195. ՈՒԽ. «Ընդհատաբար գոհութիւն ... համագոյ Երրորդութեան անսկիզբն Հօր, և ՚ի նմանէ ծնեալ միածին և արարչագործ Բանին, և ամենասուրբ Հոգւոյն ելոյին ՚ի նոցունց էութենէ»։

Ի արդան վարդապետ ՚ի մեկնութեան սաղմոսաց. (Տե՛ս 5.) «Յիսուս Քրիստոս իմանալի արեգակն ընդ Հօր և ընդ Հոգւոյն՝ որ արև է նորա, որպէս ինքն Հօրն ասի Ճառագայթ, և Հոգին՝ լոյս երեսաց Երրուին»։ Ու ՚ի քաջ իմանալ զբանս զայս՝ գիտելի է, զի արև առ մեզ ըստ բնիկ նշանակութեանն է լոյսն արեգական։ Եւ դարձեալ ՚ի սաղմոսն ՃԼԵ. 16. կրկնէ զսոյն. «Եւ բես Հօր՝ Երրի, լոյս երեսաց՝ Հոգին»։

Եւ դարձեալ ՚ի խմբագիր մեկնութեան Ծննդոց, ոչ միայն ըստ իմաստից՝ այլ և ըստ յայտնի բառից աւանդէ զբղխումն և Երրուոյ. զոր և Եփթաղ ապարանցի առեալ ՚ի նմանէ՝ ասէ. «Հասարակաց մեկնիչն արարածոց գրոցն և Եղիշէի և Ի արդանայ վարդապետի, ՚ի բանն՝ որ ասէ վասն ԲերաՀամու, երիս հետս, և միով երկիր եպագ, ասէ. Իմացաւ զերրորդական խորհուրդն. երեք են. առաջինն ոչ է ծնեալ յումեքէ, երկրորդն ծնունդ է առաջնոյն, երրորդն առաջնոյն և երկրորդին ելումն և բղխումն, իբրև արմատ և ծառ և պտուղ»։

Յովհան եղնկացի ՚ի մեկնութեան Ա՛ատթէի. (գլ. ԺԶ. 3.) «Երրի զի ՚ի Հօրէ ծնանի և տայ Հոգւոյ, վասն այսորիկ առաքի ՚ի Հօրէ, և առաքէ զՀոգի։ Իսկ Թէ ոք ասիցէ՝ Թէ և Հոգի զԵրրի առաքէ ... ապա ուրեմն և Երրի ՚ի Հոգւոյ է, առ այս ասեմք լուծումն՝ Թէ զայս առաքումն Երրուոյ ՚ի Հոգւոյն՝ ըստ մարդկութեանն ասէ մարգարէն. իսկ ըստ աստուածութեանն՝ Հոգի որպէս ՚ի Հօրէ, այսպէս և Երրուոյ առումն. վասն այսորիկ և առաքումն Հաւասար ասի ՚ի Հօրէ և Երրուոյ»։

Իսաւատուր վարդապետ տաղասաց, ժամանակակից Ա՛խթաթայ Գօշի, ՚ի տաղն Տեառնընդառաջին. "Օ՛ Հայր առաքող Որդւոյ փառակցի, զՈրդի ծնեալ նախ քան զյաւիտեանս, զՀոգին բղխեալ ՚ի Հօրէ անձառ, ելեալ յՈրդւոյ յառաջ խաղացմամբ ,,։

Յարսեղ վարդապետ ՚ի մեկնութեան Ա՛րկոսի. (գլ. ԺԲ. 26.) "Լ՛ուանձինն է Հօր՝ անծին և անսկիզբն գոլ. իսկ Որդւոյ՝ ծնունդ և սկսեալ ՚ի Հօրէ անժամանակաբար. և Հոգւոյն սրբոյ՝ բղխումն ՚ի Հօրէ և յՈրդւոյ երևումն անհատաբար և անժամանակապէս ,,։ Այլ չեն ինչ զարմանք ընդ բառդ երևումն, զի և սուրբն Յարսեղ ունի (՚ի Պատրաստ.) "Լ՛ոյսն Աչմարիտ (Որդին), յորմէ Հոգին սուրբ երևեցաւ, Աչմարտութեան Հոգին ,,. և մեծն Կիւրեղ ՚ի գիրս Պարապմանց. (է. բես 186.) ասէ. "Որ ՚ի կերպարանս Լ՛ուսոյ և Հօր, յորմէ երևեցաւ Որդի Հաւասար և նման նմա ըստ ամենայնի ,,։ Այլ դարձեալ յերես 272. "Ո՛ւ միանգենաւորել և յանփոփոխելոյ երևեալ յԼ՛ուսոյ և ՚ի Հօրէ ,,։

Յակոբ ոմն աբեղայ, ժամանակակից Լ՛ամբրոնացւոյն, ՚ի յիշատակարանի ուրեք. "Գառաքանութիւն անսկիզբն Հօր, և ՚ի նմանէ ծնեալ միածին և արարչագործ Բանին, և ամենասուրբ Հոգւոյն ելոյին ՚ինոյսունց էութենէ ,,։

Յաւելումբ ՚ի սոսին և զոր Ոսկան վարդապետ յերուս ՚ի յիշատակարանի աստուածաշունչ գրոց. "Օ՛ն գին սուրբ բղխեալ ՚ի նոցունց էութենէ ,,։

ԳՕԴՈՒԱԾ Ե

Վկայութիւնք յհնկղեցական գրոց մերոց յաղագս բղխման Հոգւոյն և յՈրդւոյ։

Ոչ շատացան Հարքն մեր աւանդել յառանձին գիրս իւրեանց զբղխումն Հոգւոյն և ՚ի յՈրդւոյ, այլ և յեկեղեցական երգս և յաղօթս և յընթերցուածս յայտ արարին զայս Աչմարտութիւն։ Այլ զայս կրկին օրինակաւ. մի՝ ՚ի կիր առեալ մեկնողական ոճով զբանս աստուածային գրոց՝ որովք ցուցանի այս Աչմարտութիւն.

և միւս կա՝ դնելով զայն ՚ի բերանս մանկանդ եկեղեցւոյ։

Ի սուրբ գրոց առաջին ապացոյց բղխման Հոգւոյն և ՚ի Հօրէ առնուն զբանն Յովհաննու (ԺԵ. 14.) "Յիսո մէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ,,։ Օ՚ի առնուլ Հոգւոյն ՚ի Հօրէ նշանակէ աստուածաբանօրէն ելանել ՚ի նմանէ։ Ոյ ասն որոյ Շ նորհալին ՚ի շարականն Հոգեգալստեան ասէ. "Ո՚ղող Հօրէ անձառաբար,,։ Օ՚ի ահա և Լ ամբրոնացին, որպէս տեսաք ՚ի վերոյ, ՚ի կիր առնու զայս բան ՚ի ցոյց ելման Հոգւոյն և ՚ի Հօրէ։

Երկրորդ ապացոյց առնուն աստուածաբանք ՚ի բանէն (Յոհ. ԺԶ. 26։ ԺՇ. 7.) "Ասայ յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ ՚ի Հօրէ...։ Ա՚պա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ,,։ Եւ զայս դարձեալ երգեմք ՚ի կանոնի Հոգեգալստեան. "Երեր տէր առ Հայր փառաւք ՚ի յերկինս, և մխիթարիչ առաքեցեր սուրբ զՀոգիդ,,։ Ասկ թէ յաստուածային առաքման փակի երանին առաքեցելոյ անձին յառաջողէն, ոչ միայն աստուածաբանօրէն յայտ է, այլ և ՚ի միաբան վկայութենէ վարդապետաց։ Որպէս սուրբ Ալեքսանդրեան ՚ի մեկնութեան Յովհաննու խօսելով զառաքմանէ Որդւոյն ՚ի Հօրէ, ասէ. "Ո՚չ իմանաս զի այս ամենայն ոչ վասն այլ իրիք ասացաւ, այլ զի ըզպատճառն իմասցուք, և ոչ անկցուք ՚ի չարաչար ախտն և հաւաքուածն Սաբելի,,։

Եւ Աստուածաբանն Ա՚ղոթն մեկնելով զբանն՝ Առաքեցից զՀոգին, ասէ. "Ա՚յսու զիւր պատիւն յայտ արար,,. և զո՚ր պատիւ (կամ ըստ Յունին զո՚ր էչխոնոսկին) կարէիցէ ունել Որդին առ Հոգի, բայց միայն զբղխողութեանն։

Ա՚յնչափ յայտնի էր այս նշանակութիւն և իմաստ առաքելոյ առ վարդապետս ազգիս, զի և նա ինքն Յովհաննէսեան սովին մտօք սահմանէ զյատկութիւնս աստուածային անձանց. (Երդ. 105.) "Ա՚ռաքող և ոչ առաքեալ (Հայր.) առաքեալ և առաքող (Որդի.) առաքեալ և ոչ առաքող (Հոգին)։

Երրորդ ապացոյց յաստուածային գրոց՝ ասել զՀոգին սուրբ՝ Հոգի Որդւոյ կամ Քրիստոսի. (Գաղ. դ.

6։ Նե. ը. 9։ Կոլ. ժզ. 7)։ Օ՛ի սուրբ գիրք այ՛սպէս Նոգի Աբդուց կոչէն, որպէս Նոգի Նօր. իսկ արդ Նոգի Նօր ասելով՝ ամենայն վարդապետք իմանան բըղխեալ՝ի Նօրէ, ուրեմն և Նոգի Աբդուց իմանան բըղխեալ՝ի Աաբդուց։ Եւ ահա սուրբն մեռք կցորդեն զերկոսին՝ի շարականի. "Ընդհուր կենաց և փրկութեան մերոյ Նոգի Նօր և Աբդուց ,,։

Յորմէդ ապացոյց առնուն՝ի սուրբ գրոց զբան Յոհաննու (ի. 22.) "Փչեաց՝ի նոսա և ասէ. առէք Նոգի սուրբ ,,։ Օ՛րմէ Ընտուածաբանն Ա՛ռորան ասէ. "Օ՛փչումն յառաջին պատճառն՝ի վեր տանելի է, զի յորմէն ցուցցի ,,։ Եւ Կիւրեղ աղեքսանդրացի՝ի գիրսն Պարապմանց ասէ. "Եւ զոր տայն ինքն որպէս Ա՛ստուածոյ Նօրէ Եան և յիւրմէ աղբիւրացուցեալ մեզ... քանզի փչեաց՝ի սուրբ առաքեալսն և ասէ, Ընդէք Նոգի սուրբ. և ոչ չափով տայ զՆոգին ըստ Յոհաննու ձայնին, այլ ինքն մուծանէ յինքեանէ՝ որպէս և Նայր ,,։ Տե՛ս զի զփչելն Քրիստոսի մարմնապէս՝ առնու նշանակ յիւրմէ բնութենէ աղբերացուցանելոյ զՆոգին որպէս և Նայր։ Նանգոյն սոցա և Գրոստինոս (ընդդէմ Ա՛ռափինոսի. գիրք ը. գլ. ժզ.) յետ ասելոյ թէ Նոգին ելանէ և Աբդուց, ՚ի վերայ բերէ. "Օ՛ի եթէ ոչ ելանէր՝ի նմանէ, ոչ արդեօք ասէր առ աշակերտսն. Ընդէք Նոգի սուրբ, և ոչ փչելով տայր զնա. այլ զի նշանակեալ զառ յինքենէ և ելանելն՝ յայտնապէս ցուցցէ փչելովն, զոր բղխելով տայր գաղտնապէս ,,։

Ընդ սովին մնօք ասի (՚ի ը. կանոն Նոփեփալ.) "Որ յերկրորդի լինելութեանն յետ յարութեան քումմ եակցին, մնեալ՚ի վերնատունն դրօքն փակելովք, հնօրհելով ըստ առաջին փչմանն զքեզ մետասանից առաքելոցն՝ ասաց. Ընդէք Նոգի սուրբ ,,։ Եւ դարձեալ՚ի ժամերգութեան. "Տուր մեզ զնաղաղութիւն քո, զոր հնօրհեցեր սրբոց առաքելոցն՝ փչմամբ քո՚ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր Նոգիդ քո սուրբ ,,։

Ընյորվք և ասացուածովք բացայայտի բղխումն՚ի Աբդուց յեկեղեցական գիրս մեր։ Եւ նախ յայտնի է քան շարականին. "Որ՚ի հարաշարժ աղբերէն յառաջ բղխեալ անհատաբար՚ի Աբդուց միրապէս սուրբ Նոգին ,,։ Ընդ հարաշարժ կամ հայրաշարժ աղբիւր

նշանակէ աղբիւր շարժեալ ՚ի Հօրէ, զոր Հարկ է իմանալ զՈրդւոյ, և է ասել թէ Հոգին սուրբ յառաջ բղխի զՈրդւոյ, և բղխի ՚ի նմանէ իբրև ՚ի Հօրէ շարժեալ աղբերէ. ուստի բովանդակի ՚ի բանիս ամբողջ դաւանութիւն, զի Հոգին սուրբ բղխի ՚ի Հօրէ և զՈրդւոյ:

Եւ ՚ի Յայսմաւուրս ՚ի վկայաբանութեան սրբոյն Անդիմոսի՝ որ ասէ զվարդապետէ առաքելոյ. "Հանապազ ինձ զտէրն իմ զարարիչն երկնի և երկրի, և զՈրդին միածին, և զսուրբ Հոգին՝ որ ՚ի նոսցունց,,:

Եւ ՚ի Նաշոյ գիրս յաղօթս Պենտեկոստէին որ սկսանի՝ Որ եադ տէր զօրութեանց, ըստ երկաթագիրս ևս ձեռագրացս ընթեռնումք. "Ղեսեալ անքննաբար ՚ի Հօրէ և զՈրդւոյ,,: Եւ ժողովն Խիթարայ կաթողիկոսի յամին 1342 վկայէ, զի յայնմ ժամանակի յամենայն եկեղեցիս Հայոց ընթեռնուին զայն "բըղխեալ անքննաբար ՚ի Հօրէ և զՈրդւոյ,,: Եւ զայս բան ժողովոյն արդարացուցանեն Նաշոցք մեր Հնագոյնք քան զժողովն, մին վեցհարիւր ամօք, միւսն Հարիւր քսան և վեց ամօք երիցագոյն:

ԳՕԴՈՒԱԾ Զ

Վկայութիւնք յազգային ժողովոց յաղագս բղխման Հոգւոյն և զՈրդւոյ:

Զանազի այս խնդիր, որպէս ասացաք, կարի անագան շարժեցաւ ՚ի Հայս, վասն այն ոչ բազում ժողովս և ոչ կարի վաղնջականս գտանեմք լեալ յազգիս զայսմանէ. այլ ըստ աւանդելոյ պատմութեանց մերոց՝ յերիս և եթ ազգային ժողովս եղև քննութիւն խնդրոյս:

Առաջին ժողով՝ որ մնասամբ ինչ յայտ արար զայս Հմարտութիւն՝ եղև ՚ի Իրակվանս երկրորդն, արարեալ ՚ի Աբաբիայ կաթողիկոսէ յամին 862, յորում էին բազում եպիսկոպոսունք, վանականք և իշխանք, և սահմանեցին այսպէս. "Եթէ ոք ոչ խոստովանեսցի՝ սրբոյ և կենդանարար Երրորդութեանն մի բնութիւն և երեք անձինք, զՀայր անպատՀառ, և զՈրդի ՚ի Հօրէ,

և զՆոգին սուրբ՝ ի նոցունց էութենէն, հարթ և հաւասար և հաստարակաց, այնպիսին նզովեալ եղիցի ,,։

Երկրորդ ժողով զայսմանէ եղև՝ ի Միս, որպէս պատմեն ականատես վկայք Կիրակոս գանձակեցի և մեծն Ներսէս, աշակերտք Ներսիսի վարդապետին։ Որ ի սմանէն. Յամին 1251, և՝ ի Թուին 2, Հայրապետն Հռոմայ Ինոսէնկենտիոս չորրորդ գրեաց առ Կոստանդին կաթողիկոս և առ Հեթում Թագաւոր՝ թէ պարտ է խոստովանել զելոյն Նոգւոյն սրբոյ և յՈրդւոյ։ Իսկ կաթողիկոսն հաւաքեալ զվարդապետս Միւիկից, գրեաց առ արևելեան վարդապետսն՝ հարցանելով վասն խընդրոյս այսորիկ։ "Ու նոքա քննեալ, ասէ Կիրակոս, զաստուածաշունչ գիրս առաքելոց, մարգարէից և սրբոց վարդապետաց . . . (փոխն) ուղղակի զհռոմայեցւոցն խոստովանութիւն ,,։ Ու յառաջ բերելով զկայսրութիւնս վարդապետաց, ասէ՝ թէ համաձայն գտաւ Ներսէս, Եթանասի, Գրիգորի աստուածաբանին, Կիւսակացւոյն, Բարսղի, Եփրեմի, Ոսկեբերանին, Յովսեփի, Ստեփանոսի, և աւարտէ այսպէս. "Եւ յայսմհի խոստովանութիւնս ընդունելի է յեկեղեցիս Հայաստանեայց և յոգիս Կիւրակոսի, և համարձակ արժան է քարոզել զՆոգի՝ ի Հօրէ ելեալ և յՈրդւոյ երևեալ։ Որ այս պատասխանեցաք Թղթոյն արևմտից, և մեք՝ ի սոյն հաւատ հաստատեալ կամք ընդհօք Երրորդութեանն սրբոյ ,,։ Ի՞նչպէս այսմ գրէ և Ներսէս, թէ յընդդէմ գառնալ Յունաց, Ներսէս և Եւթոլոս, "Վասնզի Հայք զդաւանութիւն առաջնոց սրբոց՝ ի ձեռն աստուածամերձ վարդապետին Ներսիսի, և գտին զայն համախոհ երևելի արանց փառաւորաց, Եթանասի, Գրիգորի աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյ, Գրիգորի Նազիանզացւոյն, և այլոց սրբոց ,,։

Վասնզի Ներսիսին անական վարդապետին ոչ բանիւք ևեթ վճարեալ, այլ արար նա ձառ զայսմ խնդրոյ, զոր և Կիրակոս յառաջ բերէ յիւրում պատմութեանն, և են՝ ի նմա այս բանք. "Որդի՝ ի Հօրէ, և Հոգի՝ ի Հօրէ և յՈրդւոյ։ Հայր արմատ, Որդի բոյս, Հոգին՝ ի յարմատոյն և՝ ի բուսոյն բողբոջ։ Հոգին չունչ, Որդին բերան, Հայր գոյ. (այսինքն բուն գոյակն՝ որպէս մարմին բաղդատեալ առ բերան) Հոգւով բերանոյ նորա

ամենայն զօրութիւնք նոցա ... և թէ փչեաց յերեսս նոցա և ասէ՝ Ա՛ռէք զՆոգին սուրբ: .. Որդի՛ ի Հօրէ, և Հոգի՛ ի նոցունց, ասէ սուրբն Հպիփան: Որդի՛ ի Հօրէ ելանէ, և Հոգի՛ ի Որդւոյ և՛ ի Հօրէ եւ. Որդի՛ ի Հօրէ առնու, նմանապէս և Հոգի՛ ի Որդւոյ: Ոչն Հայր, զի ոչ յայլմէ Հօրէ. և ոչն Որդի, զի՛ ի Հօրէ. և ոչն Հոգի, զի՛ ի Հօրէ և Որդւոյ: Հայր անծին ասի, զի ոչ յումեքէ է. և Որդի ծնեալ, զի՛ ի Հօրէ է. Հոգի ոչ ասի որդի կամ ծնեալ, զի մի երկու եղբարք Թուեսցին. և ոչ երկու որդի՝ զի մի դուստր կարծիցի. և Որդւոյ միայն՝ (այսինքն և ոչ Որդւոյ միայն), զի մի Թոռն համարիցի: Ցոյս ընդհ՛ր ծանրաբնաս, ուր իմաստուն և Աչմարիտ հաւատացեալ, երկու պատճառ իմանալ: Ճարսեղ Հարցաներ զեղբայր իւր զԱրիգոր, զինչ է սկիզբն սկզբանն. և նա ասէ, առաջինն պատճառն երկրորդ պատճառին: Ոչ սիրելի, ոմ պէս ումեք իցէ պատճառ Հայր և Որդի, եթէ ոչ Հօրէ Որդւոյ իւրոյ: ... Եւ դարձեալ ասեմ: (էջէ) բանդ քո՛ ի մտացդ է առանց Հոգւոյդ, անՀոգի է քո բանդ. և թէ Հոգւոյդ է առանց մտաց, անմիտ է քո բանդ. ապա թէ՛ ի Հոգւոյդ և՛ ի մտացդ, Հոգևոր և մտաւոր է քո բանդ: ... Հոգին եթէ՛ ի Հօրէ միայն ասիցես եւ բղխումն, անբան է Հոգին. և թէ Որդւոյ միայն ասիցես, օտար սկիզբն է. իսկ եթէ՛ ի Հօրէ և Որդւոյ, Աչմարիտ է և Որդւոյ ,,:

Ա՛յս բանք են Ս անական վարդապետին, զորս յանձին կալան վարդապետք մեծին Հայոց, և միաձայն դաւանութեամբ առաքեցին՛ ի ժողովն Ասոյ. և ըստ նոցա քննութեանն ընդունելի եղև Աչմարտութիւնն: Ս ան որոյ յառաջ բերեալ բանքս ոչ են առանձին ուրուք վարդապետութիւն, այլ ընդՀանուր եկեղեցւոյ Հայաստանեայց ժողովական բացայայտութիւն, կանոնական քննութեամբ Հաստատեալ: Յորմէ՛ ի միտ առնուլ է, զի միաբան Հաւանութիւն վարդապետաց Հայոց՛ ի ցոյց բղխման՛ ի Որդւոյ առնոյր զասելն գրոց. "Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա ,,. և թէ "Ընդունու Որդւոյ ,,. և թէ "փչեաց և ասէ՝ առէք Հոգի սուրբ ,,:

Ա՛իսանգամ յամին 1342 ժողովական Հաստատու-

Թեամբ վկայեցաւ այս Ձիմարտութիւն, յաւուրս Մխի-
թարայ կաթուղիկոսի և Կոստանդնոյ երրորդի ար-
քային մերոյ։ Եւ այս են կարևորագոյնք ՚ի բանից ժո-
ղովոյն, որ պատասխանէ առ Ներսէսիկտոս ԺԲ. քահա-
նայապետն Հռովմայ ընդդէմ ամբաստանութեանց Կեր-
սեսի ուրուն հալածական վարդապետի. «Ձիմարիտ
է զի Թէպէտ սակաւս ունիմք ՚ի վերայ այսր խնդրոյ,
սակայն ուրեք ուրեք գտանի ՚ի գիրս մեր (Եկեղեցականս)
բղխումն Հոգւոյն ՚ի Հայրէ, որպէս ՚ի Հօրէ. որպէս
յաղօթս Պենտեկոստէին՝ որ յամենայն ամի ընթեր-
ցեալ լինի առ հասարակ յընդհանուր եկեղեցի Հայոց,
և ասէ այսպէս. Որ եսդ տէր տէր զօրութեանց և Ար-
տուած Ձիմարիտ, աղբիւր լուսոյ, և ՚ի քէն բղխեալ
անքննաբար ՚ի Հօրէ և Հայրէ Հրաշագործ սուրբ
Հոգիդ »։

«Պիտելի է դարձեալ՝ զի յորժամ բղխումն Հո-
գւոյն սրբոյ ՚ի Հայրէ, որպէս ՚ի Հօրէ, սահմանեցաւ
՚ի Հռոմէական եկեղեցւոջ, Թէպէտ Հոյնք ընդդէմ
դարձան, բայց վարդապետք Հայոց ընկալան ժողովով.
որպէս գտանի առ մեզ ՚ի պատմութիւնս՝ որ ՚ի մեծն
Հայք, այլ զանուն Պապին՝ որ առաքեացն՝ չունիմք
յայտնապէս։ Եւ ՚ի փոքր Հայս ՚ի ժամանակս արքային
մեծին Հեթմոյ և տեառն Կոստանդնոյ կաթուղիկոսի՝
Գրիգորիոս պապն (Ստեփաննոս Դ.) առաքեաց հրեշ-
տակ, և հրամայեաց Թղթով՝ ասել և դաւանել զՀո-
գին սուրբ ելանել ՚ի Հայրէ, որպէս ՚ի Հօրէ. և նո-
քա ժողովով ընկալան և հաստատեցին. և առաքեցին
յարևելս, զոր և նոքա ընկալան և հաւան եղեն »։

«Եւ ուրեք գտանեմք Թէ եկեղեցին Հայոց հակա-
ռակ լեալ ՚ի բղխման Հոգւոյն սրբոյ ՚ի Հայրէ, կամ
ոչ իշխեալ քարոզել համարձակ. մանաւանդ այժմ,
յորժամ միաբան է ընդ ձերում եկեղեցւոյ, Թէպէտ
և անգամք Քրիստոսի ոչ եղեն առանց հակառակողաց
ոմանց »։

Հայսմիկ հաստատէ և մաշտոց մի գրեալ ՚ի ՃՂԴ
Թուականին, այսինքն երիւք ամօք յետոյ քան զժո-
ղովն, յաւուրս նորին Մխիթարայ կաթուղիկոսի, ուր
՚ի կարգի ձեռնադրութեան եպիսկոպոսի Հարցանէ Հայ-
րապետն զդաւանութիւն ընտրելոյն. «Հաւատաս դու

կանաւ և յօժարութեամբ զսուրբ Հոգին Աշմարտութեամբ Կատուած. Հաւատամ Աշմարտութեամբ, զի առաքի և ելանէ 'ի Հօրէ և Որդւոյ· Հաւատամ Աշմարտութեամբ, զի Հաւասար է Նոցին և ամենակարող որպէս զնոսին ,, : Եւ պատասխանէ ընտրեալն· ,, Հաւատամ ,, : Եւ Թէպէտ յանդուգն ոք քերթեալ անդ ըզբառն Հ Որդւոյ, և փոխանակ գրեալ է Հոգին սուրբ, սակայն յաջորդ բառքն նոցին, որպէս զնոսին նշաւակեն զյանդգնութիւն նորա :

Յետ այսքանեաց և այսպիսի յայտնի վկայութեանց ժողովոց և եկեղեցական գրոց, եթէ յառանձնական կիրս ուրուք յողջամիտ վարդապետաց գտանիցի ինչ ըստ բառիցն հակառակ այսոցիկ երևեալ, հարկ է զի ևս միաբան ըստ իմաստից· որպէս նոյն ինքն Կաբրիել վարդապետ Հետիքեան քննեալ զեանս ինչ սրբոյ Ներսիսեան և զ| ամբրոնացւոյ, ցուցանէ միաբանս ուղղափառ վարդապետութեան 'ի նմին Հառի յետկոյս Հայոցս թերութեան Տ արականաց : Այլ զայս ևեթ յայտնելովք աստանօր առ ուղիղ իմացուած բանից Հարցն մերոց՝ ուր 'ի Հօրէ միայնոյ ասեն զՀոգին բղխեալ, զի կարևոր է գիտել զպատճառութիւն նշանակութեան բառիցս ելնել և ելանել· քանզի ելանել ընդարձակագոյն ունի նշանակութիւն քան զբղխել, և ցուցանէ զնոր և է յառաջ խաղացումն· իսկ բղխել նշանակէ առաւելապէս զերծումն 'ի սկզբնական պատճառէ իբրև յաղբերականէ : Որդ ըստ այսմ նշանակութեան և սուրբն Յովհան զամենակացի 'ի Հօրէ միայնոյ ասէ զՀոգի, զի մի և Որդի սկզբնական պատճառ կարծեսցի բղխման Հոգւոյն որպէս աղբերակին՝ որ յատուկ և սեփական է Հօր : Եւ սուրբն ( )գրատինոս ասէ· ,, Ոչ կարեմք ասել՝ թէ Հոգին սուրբ ջերմնիցէ և Որդւոյ, զի ոչ վայրապար նոյն Հոգին կոչի և Հօր և Որդւոյ Հոգի··· ապա որ 'ի Հօրէ ելանէ և Որդւոյ, առ նա վերածի՝ յորմէ ծնաւ Որդին ,, : Եւ ապա զանազանելով բացատրէ՝ զի սկզբնաբար 'ի Հօրէ ելանէ, և յաւելու· ,, Ոմանն այն զսկզբնաբարն յաւելի, զի և Որդւոյ գտանի ելանել Հոգին սուրբ· այլ զայդ ևս Հայր տայ նման, ոչ իբր թէ յառաջագոյն զոյր առանց ունելոյ զայն, այլ որ ինչ ետ Հանին միածնի՝ ծնանելով ետ· ապա այն-

պէս ճնաւ գնա, զի՛ ի նմանէ ելանիցէ Հասարակաց պաշտպանն, և Յովին սուրբ՝ երկոցունց իսկ Յովի ,, : Ալ ասն որոյ ըստ այսմ է իմանալ և զոր սուրբ Ամբրոնացին մեր ասէ զՅովսէ՝ բացատրելով զառաջն Եղնեայ (՛ի մեկն. պաշտպ. էջ 398.) "Ալ թէ իբրև՛ ի նմանէ (այսինքն Ալբդուէ) յառաջ սկիզբն առեալ և բղխեալ... այլ ՛ի Յօրէ ,, :

Այս թէպէտ բառս բղխել վարի և նշանակութեամբ պարզաբար ելանելոյ, որպէս և առասանել՛ի վկայութիւնս Յարց մերոց՝ զորս ՛ի վեր անդր ածաք, այլ բնիկ նշանակութիւնն նորա է ելանել իբր յաղբերականէ : Ալ ասն որոյ կիւիկեցի Նոմինիկեան միանձունք մերազնեայք, հմուտք մերոյս բարբառոյ և լատինականին, և երկիւղածագոյնք՝ ի հետևողութիւն ատինաց, ՛ի յաւելուած հանգանակին փոխանակ Եղնելոյ՝ իմաստութեամբ եդին զբառս ելանել, այսպէս ունելով բանին. Ար ՛է Յօրէ և Ալբդուէ ելանէ. պահելով զնոյն բառ աւետարանին, որպէս և ատինք և Յոյնք պահեն զայն :

ՅՕԴՈՒԱԾ Է

Խնդիրք յարակից բղխման Հոգւոյն և ՛ի յՈրդւոյ :

Արդեօք ուղիղ էր ասել՝ Թէ Յովին ելանէ ՛ի Յօրէ Ալբդուէ : — Ընդ երկբայել ընդ ուղղութիւն բացատրութեանս, զի Յարք Յունաց, և ՛ի ատինաց Ելբիոս ՛ի կիր արկին զայն : Այս դարձեալ որպէս ուղղութեամբ մարթ է ասել զարտաքին գործողութեանց՝ Թէ Յայր Յանիւ արար զարարածս, և ամենայն ինչ նուաւս եղև, նոյնպէս մարթ է ասել ուղղութեամբ ներգործութենէ բղխման՝ Թէ Յայր Ալբդուով բղխէ զՅովին, կամ Ալբդուով ելանէ Յովին : Ալ ասն զի որպէս յառաջնում, նոյնպէս և յերկրորդում Հոլովին գործիական, կամ ըստ այլոց նախադրութիւնն ՛է ՅԷ առ, նշանակէ զմիանականութիւն ՛ի գործել, և զբղխումն Յովսէի և Ալբդուէ իբրև ՛ի միանական պատճառէ, և յերկոցունց իբրև ՛ի միջոց պատճառէ :

Ա՛յլ ընդհէր ասիցի Հոգին՝ի Հօրէ և յԱվրդւոյ իբրև՝ի միոյ պատճառէ, ուր երկու են անձինք բղխողք։

Ա՛յսպէս ասեմք ընդդէմ Դորանդոսի և Կրիգորի արիմինեցւոյ, և այսպէս պարտ է ասել ըստ ճշմարտութեան, զի այսպէս վարդապետեն Հարք և Ժողովք։ Յատկապէս զայսմանէ գրէ Թէոդոտինոս (յղ. Երզ. է. 14.) «Պարտ է խոստովանել՝ Թէ Հայր և Վրդի են սկիզբն Հոգւոյն սրբոյ, և ոչ երկու սկզբունք»։ Եւ երկրորդ Ժողովն Կոստանդնի սահմանէ. «Դատապարտեմք զբք յանդուգն համարձակութեամբ ժպրհեացին ասել՝ Թէ Հոգին սուրբ ելանէ՝ի Հօրէ և Վրդւոյ իբրև յերկուց սկզբանց, և ոչ իբրև՝ի միոջէ»։ Եւ Ժողովն Փլորենտիոյ. «Սահմանեմք Թէ Հոգին սուրբ՝ի Հօրէ և Վրդւոյ՝ի յաւիտենից իբրև՝ի միոջէ ըստ կըզբնէ և՝ի միակ փչմանէ ելանէ»։

Եւ յայտ իսկ է պատճառ ճշմարտութեանս. զի Հայր և Վրդի ամենևին մի են՝ ուր չէք հակադրութիւն աւընչական. իսկ արդ՝ի բղխողութեան Հոգւոյն չէք այդ հակադրութիւն, ապա բղխողութիւն մի ինչ է երկոցունց Հասարակ։ Ա՛յլ է Թէ որ՝ի բղխօղ անձինս անիարկելով, և ոչ՝ի բղխողութիւն, վարեացի յոգնականաւ. որպէս սուրբն Կլարիոս, և մեր՝ Արեկացի վարեցան ուրեք առ՝ի ցուցանել բացայայտակի զառ՝ի Հօրէ և Վրդւոյ բղխումն։ Վրպէս արարօղք աշխարհի են անձինք երեք, և մարթ իսկ է ասել զնոցանէ աճապարանապէս արարիչս. այլ զի միով արարչական զօրութեամբ արարին զաշխարհ, մի ասի արարիչ գոյականապէս, և է մի։

Վ՚աջայայտ է ամենեցուն՝ զի վարդապետութիւն բղխման Հոգւոյն սրբոյ և յՎրդւոյ նախ առաջին հանդիսացաւ յարևմտեան եկեղեցիս. յորս ըստ երևելոյ Հակառակութեանց և բացայայտութիւն ճշմարտութեանն օր ըստ օրէ պայծառանայր. և զառաջինն եկեղեցին Պապիոյ սկսաւ բացայայտել զայս՝ի դաւանութեան իւրում՝ի տոլետեան Ժողովն յամին 589. զոր և յաջորդ Ժողովք արարին յամին 633 և 653։ Ի Պապնիոյ հանց՝ի գաղղիացիս և յիտալացիս սովորութիւն բացատրելոյ զայն՝ի հանդանակի. որ վասն մեծն Կարոլոս Ժողով կոչեաւ Ա՛խէնակրանա յամին 809, ա-

ռաքեաց առ | Լեռն Գ Հայրապետն Հռոմայ՝ խնդրելով Հաստատութիւն բացատրելոյ զզղեստսն և Ա|րդւոյ ՚ի Հանդիսանակի. բայց Հայրապետն չետ հրաման։ Նա ապա ՚ի մէջ կոյս ինն երորդ դարուն, յաւուրս Նիկոլայոսի Ա. պապին, տարածեցաւ յարևմտեան եկեղեցիս սովորութիւն բացատրելոյ ՚ի Հանդիսանակի. սակայն յեկեղեցիս Թեմին Հռոմայ և ոչ յայնժամ էր ընկալեալ սովորութիւնն այն. այլ զառաջինն եմուտ առ նոսա յաւուրս Ադենեդիկտոսի Ե. յամին 983։ Նա յետ այնորիկ ՚ի լինել խնդրոյ միաբանութեան Յունաց ընդ Հռովմայեցիս յաղագս այսր վարդապետութեան յերիս ընդհանրական ժողովս, այսինքն ՚ի չորրորդն | ատերանեան յամին 1215, ՚ի | ուգդոնին յամին 1274, և ՚ի Փլորենտեանն յամին 1439, Թէպետ և Յոյնք հաւանեցան ընդ Ձեմարտութիւնն, բայց ոչ պահանջեցաւ ՚ի նոցանէ բացայայտել զայն ՚ի Հանդիսանակի յեկեղեցիս իւրեանց։ Նա ինքն ժողովն Փլորենտիոյ, յաւանդել Հրեշտակաց Կոստանդնոյ կաթուղիկոսին Հայոց զՀանդանակն Կոստանդնուպոլսի ժողովոյն Հանդերձ յաւելուածովն և Ա|րդւոյ, ոչ պահանջեաց ՚ի նոցանէ ասել զայն զօրհնապազ, այլ գէթ ՚ի կիւրակէս և յերևելի տօնս. և ցարդ իսկ չպահանջէ զայն իբրև պարտս ինչ անհրաժեշտ։

Ժողովն Նիկիոյ յաւել ոչ սակաւ բառս ՚ի Հանդանակին առաքելոց. և դարձեալ ժողովն Կոստանդնուպոլսի յաւել ՚ի նիկիականն ոչ սակաւ բացատրութիւնս. ապա որպէս յայնժամ եկեղեցի ունէր իշխանութիւն առնելոյ զայս, ունէր զնոյն միշտ, և մանաւանդ ՚ի Փլորենտեան ժողովի՝ յորում սահմանեաց տիրապէս զայս բացատրութիւն։ Ո՛ ի ոչ ամենեքեան իմանալ կարէին զայն զօրութեամբ՝ որպէս արդիւնք իրացն ցուցանէին. և դարձեալ զի փոտեանք ջանային պղտորել զմիտս Հաւատացելոց՝ Թէ յասելն որ ՚ի Հօրէ ելանէ, չէր պարտ իմանալ և Ա|րդւոյ։ Վասն որոյ ժողովն ասէ. "Սահմանեմք ՚ի վերայ այսր ամենայնի՝ Թէ բացատրութիւն բառիցս այսոցիկ և Ա|րդւոյ, վասն Ձեմարտութեան և ՚ի ստիպել Հարկին յայնժամ, ըստ պատշաճի և ըստ օրինի յաւելաւ ՚ի Հանդանակն "։

Նոյն որք զարգելական վճռոյ ժողովոյն Ափեսոսի ՚ի

դեմն աճեն այսր յաւելուածոյ, ոչ զդիտաւորութիւն ժողովոյն և ոչ զիմաստս վճռոյն՝ ի միտ առեալ է նոցա. ապա թէ ոչ նուիրն իսկ պարտ էր նոցա դատապարտել և զժողովն Կոստանդնուպօլսի՝ որ արար յաւելուածս ի հանգանակն Նիկիական: Վասն այն արդելու չառնել այլ դաւանութիւն արտաքոյ Նիկիականին, և ոչ թէ չյաւելուլ բացատրութիւն ի նոյն: Այլ դարձեալ՝ արդելու զայն իւրաքանչիւրոց ոմանց եպիսկոպոսաց կամ երիցանց, որպիսի ոք էր Վարիսիոս երէց՝ որ յանդգնեաւն էր յայնժամ յօրինել հանգանակ այլ, հանդերձ նեստորեան մոլորութեամբք, և ոչ թէ եպիսկոպոսաց գումարելոց ի ժողով օրինաւոր՝ որ կացուցանէ զկեղեցի:

ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Յայս վայր զներգործուԹեանցն Աստուծոյ առ ի ներքս. ժամ է արդ և յարտաքին գործս իւր նկատել զնա, այսինքն ի ստեղծուածս: Ստեղծանել է ի չգոյէ ածել զինչ ի գոյ. արդ ուսուցանեն մեզ հաւատք զի ամենայնի ստեղծիչ Աստուած է. ամենայն հաւատացեալ խոստովանի, դաւանէ, և հաւատայ "Ի սի Աստուած ամենակալ արարիչ երկնի և երկրի երևելեաց և աներևուԹից,,: Այս հաւատք են քրիստոնէից, այս եղեն և ի հին օրէնս, այս և առ նահապետս, հաւատք ամենայն ժամանակի: "Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր,,. այսպէս ակսանին սուրբ գիրք: Այլ ոչ միայն ի յարդ և ի կերպարանս իմանան այսուիկ ածեալ Աստուծոյ զաշխարհս, այլ և զի զնիւԹ և զտարերս նորին ինքն ստեղծ: Այլ քան զստեղծանելն զինչ, ինքն միայն էր. բանիւ ևեԹ եհան զարարածս ամենայն յոչընչէ, կամք ևեԹ նորա արդիւնք եղեն. ասաց ևեԹ՝ "Լղիցի լոյս,,, և եղև լոյս: "Ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան,. (սղմ. ՃՆԿԲ):

Այլ Մովսէս նախ քան զպատմուԹիւն վերծօրեայ արարչուԹեան ասէ լեալ զերկիր աներևոյԹ և անպատրաստ. և Սոլոմոն ի նոյն ակնարկէ՝ (էմասպ. ԺԸ. 18.) "Օ՛ի ոչ էքաւորէր ամենազօր ձեռն քո, որ հաստատեաց զաշխարհս յանկերպարանուԹեայ,,: Այլ երբ ուրեմն արար Աստուած զնիւԹն անկերպարան, զերկիրն անպատրաստ: Այներբ է Աստուած, չիք առ նմա անցեալ և ապառնի, այլ այժմ ևեԹ միշտ՝ յաւիտենից ի յաւիտեան. յաւիտենականուԹիւն նորա ոչ չափի, չիք նորա յաջորդական տևողուԹիւն: Այլ առ մեզ

ոչ այսպիսի, որ ՚ի չգոյէ ածեալս եմք ՚ի գոյ. նովին իսկ
զի սկսանիմք գոլ, սկսանի ընդ մեզ ժամանակ, զի էր
երբեմն՝ յորժամ ոչ էաք. վասն որոյ է երբ վասն մերը,
է յառաջ և յետոյ: Այս ըստ այսմ օրէն է հարցանել՝
Թէ ե՞րբ արար Աստուած զերկինն և զերկիր անպատ-
րաստ. և պատասխանեմք զի լռէ գայն Մովսէս. զա-
րարչութիւն անկերպարանն նիւթոյն ոչ մուծանէ նա ՚ի
ժամանակագրութիւն ազգի մարդկան. ոչ զտևողու-
թիւն նորա, ոչ զժամանակ լինելութեան լուսոյ, ոչ
զանջրպետութեան ջուրց ՚ի ջուրց, ոչ զցամաքի երև-
ման, ոչ զծագելոյ լուսաւորաց տունջեան և գիշերոյ և
զաստեղց, և ոչ զբուսոցն և զկենդանեաց: Այլ սկիզբ
այսոքիկ առհասարակ քան զմարդիկ, և ընդ սոսա վաղ
ուրեմն սկսեալ էր ժամանակ: Սուրբ գիրք ՚ի վեց ա-
ւուրս ասեն Աստուծոյ արարչագործեալ զաշխարհ. այլ
Թէ զինչ աւուրքն այնոքիկ էին յառաջ քան զօրակշիռ
շրջան արեգական, ոչ ինչ սահմանեն. զժամանակ արար-
չութեան և՛ զի մարդոյ շատ համարին ուսուցանել մեզ:

Այս դարձեալ՝ արդեօք յառաջ քան զնիւթականս
գայս աշխարհս զգալի արար Աստուած զգերաշխարհն
աներևոյթ, և զբնակիչս նորա հոգեղէնս: Ասաղումք ՚ի
Նարեկ, Աբգինէս, սուրբն Կարիոս, մեծն Բարսեղ,
Գրիգոր Նազիանզացի, Ամբրոսիոս, Հերմիսմոս, Ա-
սիանոս, մեծն Գրիգոր, սուրբն Յոհան դամասկացի,
զարարչութիւն հրեշտակաց համարին յառաջ քան
զաշխարհս զգալի: Հաւաստի այն է, զի յառաջ քան
զմարդ և նախ քան զկազմութիւն աշխարհի ստեղծան.
Աստուած ինքնին յայտ առնէ զայն՝ յասելն ցՅոբ.
"Յորժամ եղեն աստեղք ծերոյ, ամենայն հրեշտակք
աստեղաց օրհնեցին զիս մեծաձայն, և ամենայն հրեշ-
տակք իմ գովեցին ,,. (ՀԸ. 6): Այս հաւանելի է զի
իւեն ստեղծեալ ՚ի սկզբանէ, յորժամ արար Աս-
տուած զերկինն և զերկիր անպատրաստ. զի լատերա-
նեան չորրորդ ժողովն ասէ "արարեալ Աստուծոյ ՚ի
սկզբանէ ժամանակաց զՀոգեղէն և զնիւթական արա-
րածս, այսինքն զհրեշտակայինն և զերկրային ,,: Աստ
պարտ մարթի է ասել Թէ ՚ի սկիզբն ծննդոց բովանդակի
արարչութիւն հրեշտակաց յասելն՝ "Ի սկզբանէ արար
Աստուած զերկինն և զերկիր ,,:

ԳԼՈՒԽ Ա.

ՑԱՂԱԳՍ ՀՐԵՇՏԱԿԱՑ

Հրեշտակք՝ ի պաշտամանէ իւրեանց կալան զանուն, զի պատգամաւորք են Աստուծոյ և «Հոգիք հարկաւորք՝ (այսինքն սպասաւորք կամ պաշտօնեայք) որք առաքին՝ ի սպասաւորութիւն,, ըստ Պաւղեղեայն։ Ապա որոց հրեշտակք կոչին՝ ի գիրս և մարգարէք, որպէս աստուածառաքք. և փրկիչն իսկ՝ որպէս առաքեալ՝ ի Հօրէ՝ կոչի հրեշտակն ուխտին։ Այլ հրեշտակ ըստ բնութեան է էակ հոգեղէն աստուածաստեղծ գերաբուն քան զմարդ։

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Քաղագս գոյութեան հրեշտակաց։

Ասէ Հաւատոյ՝ զի գոն հրեշտակք, և զի կէաք՝ ի նոցանէ հաւատարիմք Աստուծոյ, այլք ապստամբք՝ ի ընդհաց նորա գտան։ Գոյութիւն քարի և չար հրեշտակաց յայտնի է յաւետարանէն, ՝ի մովսիսական օրինաց և՝ ի նահապետացն աւանդութենէ. որ թէպէտ այլայլեալ՝ ի նանրահաւատ կռապաշտութենէ՝ այլ գտանի պահեալ և առ հեթանոս և առ ամենայն ազգս երկրի։ Ասոյեն և մարգարէք, աւետարանիչք և առաքեալք, և սրբազան մատենագիրքն առ հասարակ խոսին զսպասաւորութենէ հրեշտակաց, և զչարութենէ դիւաց։ Անուն և վարդապետք աւանդապահք նախնի վարդապետութեանն, զոր հաստատեաց Քրիստոս, յամենայն ժամանակի միաբան քարոզեն զգոյութիւն հրեշտակաց և դիւաց։ Ընդհանրական եկեղեցականք ընդ հրեշտակս երգակցութեամբ, և հրաժարմունք՝ ի դիւաց և սատանայ երդմնեցուցիչք այսոց սահմանեալք յեկեղեցւոջ՝ յարևելս և յարևմուտս, հաստատեն զնոյն հաւատս։ Ասացածին ինչ զնոսա համարել և մեացուած

նանրահաւատ հեթանոսութեան, է ընդդէմ գառնալ սուրբ գրոց և ընդհանուր և հաստատուն աւանդութեան, ի թշնամանս ազգի մարդկան։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Քաղագս բնութեան հրեշտակաց։

Հրեշտակք են գոյացութիւնք հոգեղէնք աննիւթականք։ Ալ կայէ առաքեալն ի սաղմոսաց. (Եբր. ա. 7.) "Զարար զհրեշտակս իւր հոգիս,,։ Եւ սուրբ գիրք ամենայն ուրեք հոգիս զնոսա անուանեն որպէս և զմարուսած, և ոչ ուրեք մարմնաւորս։ Եւ երևել նոցա ի կերպարանս մարդոյ այնպիսի է, որպէս Աւետեալ ասաց ցՅովսեփ. "Օ ամենայն աւուրսն, զոր յայտնէի ես ձեզ, ոչ կերայ և ոչ արբի, այլ իբրև տեսիլ տեսանէիք,,. (Ժբ. 19)։ Ալ ասն որոյ և չորրորդ ժողովն լաւերանեան ասէ Հաստեալ Աստուծոյ "զերկաքանչիւր արարածս, զհոգեղէն և զմարմնաւոր, այսինքն զհրեշտակայինն և զերկրաւոր, և ապա զմարդկայինս իբր հասարակ ի հոգւոյ և ի մարմնոյ հաստատեալ,,։

Պաքէն Տերտուղիանոս, Կղեմէս աղեքսանդրացի, Որոգինէս, և այլք ոմանք ի Հարց Հաւարեցան նուրբ ինչ մարմին ունել հրեշտակաց. զի կէսք մարդն ասելով իմանային գոյացութիւն, և այլք՝ զի երկբայանօք խօսէին նախ քան զԺողովն լաւերանեան։ Հայց Լակտանտիոս, սուրբն Աթնատիոս աստուածազգեացն, արիսպագացին, աքանչելագործն, սուրբն Թանասս, Եւսեբիոս կեսարացի, սուրբն Հարսեղ, սուրբն Գրիգոր Նիւսացի, Գրիգոր Նազիանզացի, սուրբ Ոսկեբերանն, Եպիփան, Թէոդորետոս, սուրբն Ամբրեղ աղեքսանդրացի, սուրբն Լեռն, մեծն Գրիգոր, և գրեթէ Հարք առ հասարակ՝ որք ի չորրորդ դարէ և այսր գրեցին զհրեշտակաց՝ հոգեղէնս զնոսա համարին։ Ոոցա համաձայնին և Հարք մեր, և սուրբ Լուսաւորիչն ասէ. "Ուր տէրն է, անդ ամենայն բանակք հրեղինացն են..։ Զհմարտագոյն համարիմք այսուհետև զհոգևորական ազգին զամենայն մարդակերպ նմանութիւնս առ մարդիկ երևեալ առ ի պատ-

գամաւորութիւնս . . . և ոչ հանապազակիր զնոյն նամանաւորութիւն յանձին պահելոյ : Օ որոց անտարբերական անձինս մարգարէն իսկ գուշակէ՝ ԹԷ ո՞ արար զՀրեշտակս իւր հոգիս , և զպաշտօնեայս իւր՝ ի բոց հրոյ . զի հոգիք են հարկաւորք՝ որք առաքին՝ ի սպասաւորութիւն ժառանգաւորացն փրկութեան : Ալ ասն այսորիկ և անպատում եղեալ Մովսեսի , զի մի՛ ընդ անզգայ արարածքս հոգիքն մտաւորք և բանաւորք համարեսցին : . . . Կայց ԹԷ էին տարրաւորք , ապա երևելիք և ոչ աներևոյթք ,, :

Եւ Նորհալի Հայրապետն մեր՝ ի շարականին . ,, Որ արարեր Յոգիս իմանալի զՀրեշտակս քո , Հոգի Աստուածոյ ,, :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս բազմոտրեան հրեշտակաց :

Աւրարչին միայնոյ է գիտելի Թիւ հրեշտակաց . զի տեսիլ զի բիւրք բիւրուց են նոցա , զի Դանիէլ ասէ (ազգ . կէ . 18 .) ,, Կառք Աստուածոյ բիւրապատիկք , հազարք ուղղիչք ,, . Եւ այլուր (լէ . 8 .) ,, Դանակ տեառն շուրջ զերկիւղածսովք իւրովք ,, :

Դանիէլ ասէ (է . 10 .) ,, Հազարք հազարաց պաշտէին զնա , և բիւրք բիւրուց կայէն առաջի նորա ,, :

Եւ առաքեալն զնոյն երկրորդէ (Յայտ . է . 11 .) ,, Եւ էր Թիւ նոցա բիւրք բիւրուց և հազարք հազարաց ,, :

Յակ փրկիչն մեր (Ա՛ովն . իզ . 53 .) ,, Մի՛ համարիցիս Թէ ոչ կարեցեմ աղաչել զՀայր , և հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց ,, :

Ոչ եր երկբայել զի հրեշտակք առ հասարակ գեր՝ ի վերոյ են բնութեամբ քան զմարդիկ , որպէս այն որ ասէ (ազգ . ը . 6 .) ,, Փոքր մի խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս ,, : Ալև և՝ ի նոսա են աստիճանք դասուց , և՝ ի դաս իսկ իւրաքանչիւր՝ դասականք և դասապետք , հրեշտակք և հրեշտակապետք՝ ի սուրբ գիրս անուանեալք . ըստ այնմ (Յուդ . 9 .) ,, Ոչ Միքայէլ հրեշտակապետն յորժամ բանսարկուն սատանայի վիճեալ

տայր պատասխանի ,, : Սուրբն Յովհաննէս արիսպագոյն զգաստակարգութենէ նոցա գրեաց Ճոխագոյնս . և ըստ նմանէ Հարք և աստուածաբանք բաժանեն զնոսա յերիս քահանայապետութիւնս , և զմի՝ի քահանայապետութեանց յերիս դասս : Առաջին քահանայապետութեան դասք՝ սերովբէք , քերովբէք , և աթոռք . երկրորդին դասք՝ տէրութիւնք , զօրութիւնք , և իշխանութիւնք . երրորդին դասք՝ պետութիւնք , հրեշտակապետք , և հրեշտակք : Յորմէ և Ը նորհալի հայրապետն մեր առեալ , Թուէ զդասակարգութիւն նոցա (՝ի պէյեբինէյն՝ կանոնի հրեշ .) “ Նմանհ արքայիւն անապրուեստ աթոռք ,, և այլն : Եւ սուրբ Գրիգորիոսիկն հայմարի իւրաքանչիւրոց հրեշտակաց զանազանել՝ի միմեանց , ոչ Թուով միայն՝ այլ և տեսակաւ :

Հրեշտակք չկարեն քնապէս գիտել զազատ ապագայս՝ որ Աստուծոյ միայնոյ է պահեալ , և ոչ զգաղտնիս սրտից մարդկան՝ առանց կամաց նոցա և առանց յայտնութեանն Աստուծոյ :

Դասակարգութիւն հրեշտակաց պահանջէ՝ի նոսա և լեզու ինչ իմանալի , որով վերինք և աստուածամերձք լսասաւորեն զստորինս , և ամենեքին իսկ յայտնեն միմեանց զիմաստութիւն իւրեանց : Առգումք՝ի Հարց՝ի սոյն միտս իմանան զբան առաքելոյն (ա . Կոր . ԺԳ . 1 .) “ Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց ,, :

ԳՕԴՈՒԱԾ Դ

Գաղափար սպասաւորական հրեշտակաց :

Ընդունելի էր և առ հինս , զի Աստուած սպասաւորութեամբ հրեշտակաց ուղղէ զաշխարհ՝ նոքօք իշխէ՝ի վերայ ազգաց և պետութեանց , նոքօք բարերարէ մարդկան : Սուրբ գիրք ամենայն ուրեք յայտ առնեն զայս սպասաւորութիւն հրեշտակաց : Գաւիթ ասէ զնոցանէ՝ զի “ առնեն զբան նորա , և լսեն ձայնի պատգամաց նորա ,, (Ճ . 21 .) և բազում ուրեք կոչէ զնոսա “ պաշտօնեայս Աստուծոյ , և արարօղս կամաց նորա ,, : Եւ առաքեալն ասէ զնոցանէ (Հբր . ա . 14 .) զի “ Հո-

գիք են հարկաւորք, որ առաքին 'ի սպասաւորութիւն վասն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են զփրկութիւն ,,: Ուստ 'ի գիրս Յայտնութեան տեսանեմք զանդադար երթևեկ նոցա ընդ երկինս և ընդ երկիր, արբանեկել կամացն Աստուծոյ, ածել փրկութիւն և պատուհաս, կնքել 'ի ձակատ ծառայիցն Աստուծոյ (է. 4.), կործանել յերկնից զվիշապն մեծ (ժբ. 7.), ածել մատուցանել Աստուծոյ զաղօթս սրբոց 'ի խնկանոց ոսկի 'ի վերայ ոսկեղէն սեղանոյ (ը. 3.) "Եւ եղ ծուխ խնկոյն, աղօթք սրբոցն, 'ի ձեռաց հրեշտակաց առաջի Աստուծոյ ,,: Յառաջնոյ դարուց հետէ ընդունելի էր առ Հաւատացեալս, զի հրեշտակք յամենայնի սպասաւորեն սուրբ եկեղեցւոյ, 'ի միաբանութեան, 'ի սուրբ պատարագի, և յայլ խորհուրդս, որպէս յայտնի 'ի միտ առնուլ է անդստին 'ի բանից Յայտնութեան (գլ. ը):

Ունք երկբայել զի Ընկալեալ պաշտպան է սրբոյ եկեղեցւոյ՝ որպէս էրն Իսրայելեան ժողովրդեան, ըստ վկայելոյ նորին առաքելոյ (Յայտ. ժբ. 7.) և Դանիէլի (ժբ. 1.) որ որպէս զմի 'ի հրեշտակաց կոչէ իշխան թագաւորութեանն Պարսից, այսինքն պաշտպան, և զմիւս որ իշխան Յունաց (ժ. 20.), նոյնպէս և զԸնկալեալ կոչէ ժողովրդեանն Աստուծոյ (ժ. 21): Ոչնոյն հաստատակ և հրեշտակն առաջնորդ իսրայելեան բանակին երևեալ Յեսուայ, յասելն "Ես զօրավար եմ զօրու տեառն ,,: (Յես. ե. 14): Եւ սուրբ Հարք ուսուցանեն՝ աստուածախնամ տեսչութեան 'ի խնամս հրեշտակաց յանձնեալ զամենայն ինչ առ 'ի ներքոյ երկնից, և մանաւանդ զպահպանութիւն մարդկան: Ընդ այն որոյ մասն է հաւատոյ, 'ի գիրս սուրբս և 'ի վկայութիւն Հարց հաստատեալ, զի են հրեշտակք պահապանք մարդկան: Այլ զի իցեն և անձին իւրաքանչիւր պահապանք, ոչ արդարոյ ևեթ և նախասահմանելոյ՝ այլ և մեղաւորաց և անարգելոց, և դարձեալ գաւառաց և աշխարհաց, և մանաւանդ եկեղեցեաց, աներկբայելի ընկալեալ է յամենեցունց, այլ ոչ որպէս մասն հաւատոյ:

Յայտնի է Ճշմարտութիւնս, ոչ միայն 'ի վկայութենէ առաքելոյն՝ զոր վերագոյն ածաք· "Ամենեքեան հոգիք են հարկաւորք, որք առաքին 'ի սպասաւորութիւն վասն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են զփրկութիւն ,,· այլ

և 'ի բանից մարգարէին (աղ. ՚ղ.) "Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, պահել զքեզ յամենայն ճանապարհս քո,,. զոր 'ի վերայ արդարոց առնուն ըստ նկարագրին ամենայն Հարք և աստուածաբանք: Ա.յլ առաւել քան զամենայն վկայութիւնս տէրունեանն պատգամ հաստատէ զայս Ձեմարտութիւն. "Օ դուշ լերուք, մի արհամարհիցէք զմի 'ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինսն է,,. (Մտթ. ԺՁ. 10):

Ա.յսոքիկ 'ի միտ առնուլ է՝ զի և իւրաքանչիւր ումեք 'ի մարդկանէ պահապան կարգեալ է Ա.յստուծոյ մի 'ի հրեշտակաց. զի ոչ ասէ հրեշտակ նոցա, այլ հրեշտակք, այսինքն իւրաքանչիւրոցն հրեշտակք: Ա.յս վարդապետութիւն այնպէս յայտնի և սովորական էր և առնախնի հաւատացեալս, զի յազատել Պետրոսի 'ի բանտէն և 'ի գալ բաղխել զդուռն Մարկոսի, յորժամ Հռոդէ աղախին տանն ազդ արար զայն 'ի ներքս, չհաւատացեալ ընտանեաց զլուրն յեղակարծ՝ Թէ նա ինքն Պետրոս իցէ, "ասէին՝ Հրեշտակ նորա իցէ,,. (Գործ. ԺՁ. 15):

Ա.յս նահապետն Յակոբ (Ծն. խՁ. 16.) "Հրեշտակն, որ փրկեաց զիս յամենայն չարեաց, օրհնեսցէ զմանկունս զայսոսիկ,,:

Ա.յսան որոյ սուրբն Հերոնիմոս ('ի մեկն. Մտթ. գիրք ա.) ասէ. "Հրաշափառ պատիւ Հոգւոց, իւրաքանչիւր ումեք ունել 'ի ծնեալ զոք 'ի հրեշտակաց պահապան իւր,,: Ա.յս սուրբն Ա.ստուածածին (ընդդէմ Ա.ռնոմ. գիրք ՚ղ.) ասէ. "Ամ ոք զտերունականն բան 'ի միտ առնուցու՝ Թէ ըզգոյշ լերուք մի արհամարհիցէք և այլն, ոչ ժխտեսցէ զի իւրաքանչիւր ումեք 'ի հաւատացելոց մի 'ի հրեշտակաց առընթեր կայ որպէս մանկածու ոք և հովիւ, ուղղիչ կենաց:

Ա.յս սուրբն Կղիմէս Նաբեկացի ('ի մեկն. երեքերորդ.) "Հրեշտակք ըստ գաւառաց և ըստ քաղաքաց պահապանք են մարդկան անհաւատիցն, իսկ հաւատացելոց ամենայն անձին մի մի հրեշտակք,,:

Ա.յս դարձեալ ('ի Ա.ռնն հա.) "Ամենք և ինձ մեղաւորիս հողեղինի մարդասիրեսցես ողորմել, Յիսուս, ա-

զաչանօք իմովն հրեշտակի. դարձուցանելով զիս, ասէր, ՚ի բարիդ քո հետս լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան, զոր հաւատացեր նմին տեսչութեան ,,. և այլն։

ՅՕԴՈՒԱԾ Ե

Յաղագս յիւնդոթեան հրեշտակաց ՚ի շնորհս, և կիրացն ՚ի նոցանէ անկման և պատուհասի։

Զի հրեշտակք ՚ի շնորհս Ա՛ստուծոյ հաստեցան, յայտ է ՚ի բանէն՝ զոր փրկիչն մեր զաստանայիկ ասէ (Յհ. ը.) “Ա՛ճմարտութեան ոչ եկաց ,,. այսինքն ՚ի սրբութեան և յարդարութեան, որպէս մեկնեն սուրբ Ա՛սկեբերանն և մեծն Ա՛ւետ։ Ա՛սան որոյ սուրբն Ա՛գոստինոս ասէ զհրեշտակաց (Յղ. ֆաղ. Ա՛ստուծոյ. գիրք ԺԲ. գլ. Թ.) “Ա՛նդէն յեղանիլն՝ յհացուցիչ իւրեանց յարեցան սիրոյն, ընդ որում էացան. և այնուհետև իսկ զատան սոքա ՚ի միաբանութենէ հրեշտակաց չարաց, զի սոքա կացին մնացին յայն բարի կամս. իսկ նոքա պակասեալք յայնմանէ՝ փոփոխեցան չար կամօքն, այնու իսկ՝ զի ՚ի բարւոյն Թերացան. և ոչ Թերանային արդեօք, եԹէ կամեցեալ ոչ էին ,,։

Ա՛յլ եղեն և ասանք՝ որք համարեցան զհրեշտակս լեալ ՚ի սկզբանէ ըստ բնութեան ևեԹ իւրեանց, և ապա յետ ժամանակի ընկալեալ նոցա Ա՛ստուծոյ զսքըբարար շնորհս։ Ա՛յլ սուրբն Ա՛գոստինոս զհակառակն հաստատէ, յաւելեալ ՚ի վերոյ առաջնոյ բանիցն. “Ա՛սան որոյ հաւատալ արժան է՝ ԹԷ հրեշտակք սուրբք ոչ երբէք եղեն առանց բարի կամաց, այս է առանց սիրոյն Ա՛ստուծոյ։ Իսկ այլքն, որ յարարչութենէ բարի էին, չարացան իւրեանց չար կամաւն ,,։

Հաւաստի է դարձեալ՝ զի հրեշտակք, բայ ՚ի սրբաբար շնորհայ, ընկալան և ներգործական շնորհս. զի առանց այնորիկ չէր նոցա մարԹ յարատևել ՚ի բարւոջ։ Ա՛յլ խնդիր է՝ ԹԷ արդեօք ներգործական շնորհս այս հաւաստի տուաւ ընտրելոցն և անարգելեաց հրեշտակաց։ Ա՛գոստինեանք ընդ այլս ոմանս համարին հա-

ասասր ընդհեալ ամենեցուն. իսկ Թոմայականք՝ և գործնեայ ընդհնս համարին ընկալեալ յարատեւողացն՝ ի վերայ ներգործական ընդհաց։ Սուրբ հաւատք ոչ ինչ սահմանեն զինդրոյս։

Հաւատոի է գարձեալ՝ զի ոչ ամենայն հրեշտակք ի ընդհս, յորում հաստեցանն, կացին՝ այլ բազումք ի նոցանէ կորուսին զայն ծանր մեղաք։ Եւ ցուցանի այս ի բանից սուրբ գրոց։

Պաւղի առաքեալապետն ասէ. (ք. Կոր. ք. 4.) "Ի հրեշտակսն յանցուցեալս Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանաք արկեալ ի տարտարոսն՝ եւ պահել ի դատաստան ,,։ Եւ առաքեալն Յուդա ասէ. "Եւ զհրեշտակս՝ որք ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւրեանց բնակութիւնն, ի դատաստանս մեծի աւուրն միանգենաւոր կապանաք պահեաց ի խաւարի ,,։

Եւ առաքեալն Յոհաննէս ասէ. (Յայտ. ժք. 7.) "Եղև պատերազմ յերկինս, Միքայել և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին, և վիշապն պատերազմէր զօրօք իւրովք. և ոչ կարացին կալ ընդդէմ, և տեղի ոչ գտաւ նոցա յերկինս։ Եւ անկաւ վիշապն մեծ, օձն առաջին, որ մոլորեցուցէ զամենայն տիեզերս երկրի, և հրեշտակք նորա ընդ նմա անկան ,,։

Ի բանից սոսի, և մանաւանդ տէրունական բանիւն (Մատ. իե.) "Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենական՝ որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա ,,. հաստատեն Հարք և աստուածաբանք առ հասարակ, զի արուսեակն եկաց պարապլուխ դիւաց, և եղև պատճառք անկման նոցա։

Այլ թէ ի՞ւ մեղան դևք, հասարակաց կարծիք զկըպարտութիւն համարին ըստ գրոց. զի առաքեալն ասէ (Ա. Տիմ. գ. 6.) "Ոչ մի հպարտացեալ ի դատաստանս սատանայի անկանիցի ,,։ Պաւղի զայս ցուցանէ կարգ բանից առաքելոյն. այսինքն զի որպէս սատանայ ընդ բարձրութիւն իշխանութեան իւրոց ամբարտաւանեալ կործանեցաւ, նոյնպէս մատաղատունկ եպիսկոպոսն մի մեծամտեալ ընդ բարձր աստիճան իւր՝ կործանեսցի։ Եւ այլուր սուրբ գիրք ասէն. (Առակ ժ. 15.) "Սկիզբն մեղաց ամբարտաւանութիւն ,,։

Այս մարգարէն ՚ի դէմս արքային Իսրաելացւոց ասէ. (Եսա. ԺՂ. 12.) "Ո՛ւռդ անկաւ յերկինից արուսեակն ... զոր ասէիր ՚ի մտի քումմ, ելից յերկինս, ՚ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ իմ,,:

Ա՛յլ թէ զինչ և յորմէ էր ամբարտաւանութիւն դիւաց, ոմանք ասեն՝ զի կամեցան իւրովի գոլ երանելիք, որպէս սուրբն Գրիգորիոս ասէ. (յղ. Յաղ. Յոբաժ. գիրք ԺԲ. գլ. ա.) "Իւրեանց իշխանութեամբն խայտացեալք, իբր համակ բարի անձանց ելով, ՚ի գերագոյն ՚ի հասարակաց և յերանաւէտ բարւոյ անտի յանձնականն խոտորեցան,,: Ա՛յլք համարին զաստուածական փառաց թեկն ածեալ նոցա. և կէսք՝ իշխելով ՚ի վերոյ ամենայն արարածոց համարին փառասիրեալ նոցա: Ո՛վկայութիւնս նախնեաց զայսցանէ հաւաքեալ է Պետրոսի երրորդ գիրն՝ որ յաղագս հրեշտակաց:

Իսկ թէ քանի՞ ժամանակ ընդ լինելութիւն և ընդ անկումն նոցա էանց, ոչ է գիտելի. այլ այն յայտ է, զի իսկ և իսկ զինի մեղացն իբր աստուածամարտք պատուհասեալ՝ անկան յերկինից հալածականք:

Հազմապատիկ էր նոցա մեղացն պատուհաս. նախ՝ կուրութիւն մտաց, վասն որոյ կոչին խաւար. "Ա՛յս է ձեր ժամ և իշխանութիւն խաւարի,,. (Ղկ. իբ. 52): Այս կուրութիւնս այս ոչ պակասութիւն է բնական լուսոյ, այլ ՚ի գերբնականէն զրկումն: Երկրորդ՝ յամառութիւն կամաց նոցա ՚ի չարն, վասն որոյ կոչին չարք. "Չայ չարն, և յափշտակէ զսերմանեացն. Իսկ որոմն որդիք չարին են. Ա՛ւելին քան զայն ՚ի չարէն է,,: Երրորդ՝ մերժումն ՚ի փառաց և յերանութենէն, որ վասն հաստեալն էին: Այս չորրորդ՝ պատուհաս զգալի, և տանջանք հրոյ պատրաստեալ նոցա: Ա՛յլ այս ամենայն պատուհասք ոչ բաւէին ՚ի նոցանէ և ոչ ինչ յէականաց ձրից բնութեան. որպէս իմաստասիրէ և սուրբն Դիոնէսիոս. (յղ. Ա՛սորածայնի անուան գլ. ՚Ը):

Յաղագս զգալի պատուհասի դիւաց այլ և այլ են կարծիք ՚արց: Յաղագս համարին ոչ իսկ և իսկ ընկալեալ նոցա զզգալի պատուհաս: Կէսք յամեցուցանեն զայն մինչև ՚ի վերջին դատաստան. այլք ասեն՝ ոչ բոլորից ՚ի տարտարոսն բանտարկեալ, այլ մասին ինչ նոցա ընդ օդս և ՚ի մծտաւոր տեղիս ունել կայս. այլք

թէ բանտարկեալք ՚ի տարտարոսն փոխիցեն կարգաւ ղկայս իւրեանց ընդ օդաքնակս. իսկ այլք դարձեալ՝ թէ ոչ իսկապէս նիւթական հրով տանջիցին դեւք։ Արդ՝ ի՞նքս այսոքիկ գրեթէ առ Հասարակ խափանեցան. և Համարին արդ աստուածաբանք՝ դիւաց առ Հասարակ իսկ և իսկ ձկետ մեղացն ըստ իւրաքանչիւր արժանւոյն պատուհասել, և զի ուր և յածեալ շրջիցին՝ կրեն զտանջանս իսկապէս հրոյ։ Իսկ զոր յաւետարանի անդ դևն ասեր առ Ցրիստոս, "Եկիր տարաժամ տանջել զմեզ,,, ակնարկէ ՚ի պատահական տանջանս՝ զոր յերեսաց փրկչին կրէին, արգելեալք ակամայ ՚ի յոլովից չարեաց՝ զոր առնել կամէին։

Իսկ զի հուր ո՞րպէս ազդել կարիցէ ՚ի հոգի, այսպէս սուրբն Ոգոստինոս իմաստասիրէ. (յղ. *աղ. Ղուածոյ գիրք իե. գլ. ժ.) "Իւրականքն ոգիք, թէ և անուշնակք մարմնոյ իցեն և աննիւթականք, յարեալ յարեսյին ՚ի հուր մարմնական առ ՚ի տանջելոյ. իբր ոչ եթէ զի նոցա միաւորութեամբ հուրն՝ յոր մերձենան՝ հնչաւորեալ լինիցի կենդանի, որ ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ բաղկանայ, այլ աքանչելի անձառ իմն օրինակ լծորդեալք՝ պատուհաս ՚ի հրոյ անտի կրեսցեն, և ոչ թէ կեանս նմա տացեն,,։

Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ւ Ն Ք

Ղուկ. ա. Ո՛ոչափ ոչ ինչ զլինելութենէ հրեշտակայ ասէ. և անուանք հրեշտակայ Մ՛իքայել Գաբրիել և Ռափայել յիշատակին նախ առ գերութեամբն Բաբելացւոյ ՚ի Ղաբելոն, ՚ի քաղդէացւոյ անտի՝ որպէս Թուխ՝ անցեալ առ նոսա կարծիք գոյութեան հրեշտակաց։ Հրեշտակ պաշտօնէի անուն է. և սուրբ գիրք ցուցանեն նովաւ զարս ընտրեալս ՚ի պատգամաւորութիւն, որպէս և կոչեն իսկ հրեշտակս զՄ՛աղաքիա, զՅովհաննէս Մ՛կրտիչ, և զ՚Ցրիստոս։ Մ՛ան որոյ ոչ ինչ ՚ի սուրբ գիրս է զհրեշտակայ՝ այլաբանօրէն պարտ է իմանալ զգօրութենէն Ղստուծոյ։

Պե. Մ՛ովսէս նովին իսկ զի ասէ արարեալ Ղստուծոյ զերկինս և զերկիր, բովանդակէ ՚ի նոսա և զհրեշտակս.

այլ չասէ ինչ զնոցանէ ուրոյն, զի առաջարկութիւն նո-
րա էր պատմել զմարգկանէ և զերևելեացս։ Յայնմա-
նէ զի առ գերութեամբն բաբելացւոց յիշատակին նախ
անուանք հրեշտակապետաց, ոչ զկետ գայ անճանօթ
առ Հրեայս լեալ ցայն վայր գոյութեան հրեշտակաց,
ուր և յառաջագոյն՝ ի սուրբ գիրս յիշատակին հրեշ-
տակք։

Այլ քաջ իսկ զանազանեն գիրք զհրեշտակս՝ ի մարդ-
կանէ. զի Հրիատոս առ սադուկեցիսն ասէ (Պռ. իբ.
30.) "Ի յարութեան ոչ կանայս առնեն, և ոչ կա-
նայք արանց լինին, այլ են իբրև զհրեշտակս յերկինս"։
Այլ դարձեալ զիոքրկանց չարհամարհելոյ ասէ (անդ
ժբ. 10.) "Օ՛ի հրեշտակք նոցա յերկինս հանապազ
տեսանեն զերեսս Հօր"։ Այլ առաքեալն հակադրու-
թիւն ընդ հրեշտակս և ընդ մարդիկ՝ ի ներքս մուծեալ,
ասէ. (Հբր. բ. 16.) "Զանգի ոչ երբեք զհրեշտա-
կաց բռնն հարկանէ, այլ զզաւակն Աբրահամու"։
Իսկ եթէ այլաբանօրէն զամենայն զբանս գրոց յաղագս
հրեշտակաց պարտ իցէ իմանալ, ընդայ ինչ ստոյգ՝ ի սուրբ
գիրս, և ոչ իմաստ՝ ի նոսա զերծ՝ ի կամակորելոյ։

Աբարկ. ԺԸ. Ընդառաջ Միքայելի և այլոց հրեշտա-
կաց զՎրդին Աստուծոյ է իմանալ՝ ի սուրբ գիրս, որ
կերպս՝ ի կերպս յայտնէրն՝ ի հին օրէնս։

Պե. Ասացի ոչ մի ևս եթ հրեշտակ յիւրաքանչիւր նը-
ւազս յիշատակի՝ ի գիրս. և դարձեալ Գաբրիէլ ըզ-
Հրիատոսի մարգեղութիւնն աւետեր Կուսին, ապա
չէր ինքն աստուածորդին։

Աբարկ. Գ. Սուրբ գիրք մարմնաւորս համարին զհրեշ-
տակս, զի ասեն. (Ծն. ղ. 2.) "Տեսեալ որդւոցն Աս-
տուծոյ զդստերս մարդկան՝ զի գեղեցիկ էին, առին ի-
րեանց կանայս յամենեցունց"։

Պե. Որդիս Աստուծոյ Հալիք առ հասարակ իմանան
զորդիս Սեթայ, վասն որոյ սուրբն Գիոսինոս ասէ.
(յղ. ֆաղ. Աստուծոյ. գիրք ԺԸ. գլ. իգ.) "Որդիք Աս-
տուծոյ՝ ի Սեթայ ըստ մարմնոյ սերեալքն Թոզեալ զար-
դարութիւն, յարեցան յայս Ժողով (սկայէց.) և չէ
պարտ զարմանալ՝ թէ՝ ի նոցունց ևս ծնանէին սկայք"։

Աբարկ. Դ. Աբելորդ լիմն Թուի պահպանութիւն հրեշ-
տակաց, զի Աստուած ինքնին պահպանէ զմեզ. "Որ-

պէս ոչ ննջէ և ոչ ՚ի քուն երթայ պահապանն Իսրայէլ ,, · (սղմ · ՃԻ · 4) ։

Պե · Նստ այդմ պարտ եր բառնալ յաշխարհէ զգործակցութիւն երկրորդ պատճառաց · այլ Աստուած , որ քաղցրութեամբն խնամէ զամենայն արարածս , որպէս զեկեղեցի ՚ի ձեռն հովուաց և զժողովուրդս ՚ի ձեռն իշխանաց , այսպէս և զմարդիկ ՚ի ձեռն հրեշտակաց պահպանէ ։ Որ և հեթանոսք , ընկալեալ յաւանդութենէ , զայս այսպէս ընդունէին ։

Աւետ · Ե · Լթէ պահպանեն զմեզ հրեշտակք , առիմ այսքան չարեօք և փորձութեամբք նեղիմք , և ոչ մերժեն ՚ի միջոջ զվտանգս մեզաց ։

Պե · Յովին պատճառաւ , որով և Աստուած ոչ արգելու ՚ի միջոջ զամենայն չարիս · զի կէսք յայնցանէ փրկաւէտք են մեզ , և կէսք ՚ի կամ մեր ։

Աւետ · Զ · Ալիրտ և խորհուրդք մարդկան Աստուծոյ ևեթ են յայտնի , վասն որոյ պահապան հրեշտակք անգիտանան զկարևոր պէտս մեր գնեղբլինս , որով և չկարեն օգնել մեզ ։

Պե · Հրեշտակք գիտեն իսկ գուշակելով զկարիս մեր · այլ համարեալ ևս Թէ չտեսանիցեն գնեղբլինս մեր անվնջաբար , այլ ՚ի կամ Աստուծոյ տեսանեն զայն ։

Աւետ · Ը · Այս ուրեմն հրեշտակք խոնարհագոյնք են քան զմարդիկ , զի սպասաւորեն նոցա ։

Պե · Աստուծոյ սպասաւորեն հրեշտակք , Թէպէտ և սպասաւորութիւն նոցա իցէ ՚ի նպաստ մարդկան · որպէս պաշտօնեայք Թագաւորի , զի սպասաւորեն ժողովրդեան , ոչ ստորև այնու քան զւսմիկն գտանին ։

ԳՕԴՈՒԱԾ Զ

Քաղագս դիւաց ընդ մարդիկ հաղորդութեան ։

Հաղորդութեամբ խմանամք զԸնաբս դիւաց Թէ ՚ի նեղել զմարդիկ և Թէ ՚ի փորձել · ընդ առաջինումն բռվանդակին այսահարութիւնք , և ընդ երկրորդումն ազգի ազգի հրապոյրք դիւաց՝ որովք հնարին ՚ի մեղս ածել զմարդիկ ։ Այլ յայսոսիկ զգուշալի են երկոքին և ս

ծայրայեղ մոլորութիւնք, մի դիւրահաւանս լինել և մի կարի անհաւանս։ Այլ եթէ կէսք հաւատս ընծայեն առնային դիւակցութեանց, այլք ՚ի սպառ մերժեն զայն՝ չհաւատացեալ թէ իցէ իսկ հնարաւոր այսոցդ ընդ մարդկան հաղորդութիւն։ Ի յետինս յայս անհաւատութիւն զառածանն նորաղանդք բողոքականք և բանականք, որք զայսահարութիւնս համարին բնական ախտակրութիւնս կամ ռամկական նանրահաւատ ցնորս։

Ընդդէմ սոցա ՚ի սուրբ գրոց և ՚ի Հարց ցուցանի հնարաւոր՝ դիւաց ընդ մարդկան կցորդութիւն։ Փըրկիչն (Մրկ. ը. 24.) սաստէ այսոն պղծոյ ելանել ՚ի մանկանէն, և մի ևս մտանել ՚ի նա. և յաւելու զի այն ազգ դիւի ոչ ելանէ, եթէ ոչ պահովք և աղօթիւք։ Եւ դարձեալ՝ (Ղ ւ. ը. 30.) հարցանէ զդևս, և պատասխանեն. աղաչեն, և հրաման տայ նոցա։ Եւ դարձեալ՝ (Ղ ւ. Ժ. 19.) ՚ի դառնալ եօթանասունն և երկուց աշակերտացն խնդութեամբ, զի դևք հնազանդէին նոցա, ասէ. "Ընդ այն մի խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ. այլ խնդացեք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս,,։ Եւ դարձեալ՝ (Մտ. ժը. 24.) ՚ի զըրպարտել փարիսեցւոցն զնա թէ Ահեղզեբուղաւ հանէր զդևս, ասէ. "Մինայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի,,։ Եւ դարձեալ՝ (Մտ. Ժ. 1)։ Իշխանութիւն ուրոյն տայ առաքելոց հանելոյ զայս պիղծս, և բժշկելոյ զախտս և զհիւանդութիւնս։ Ընդ այս ամենայն և այսպիսի բանք սրբոյ աւետարանին եթէ չիցեն Աչմարիտք, հարկ է խաբեբայ զփրկիչն մեր համարել, որ է ամպարշտութիւն։

Հարք առ հասարակ, ևս և առաջնոց դարուց, միաբան հաստատեն զդիւաց ընդ մարդկան կցորդութիւն, և զիշխանութիւն եկեղեցւոյ հանելոյ զդևս, և յայտնապէս ձայնատուր լինին հեթանոսաց ՚ի փորձ մատչելոյ։ Ընդ այսոսիկ Յուստինոս, Աթենագորաս, Տերտուղիանոս, Կիպրիանոս, և այլք բազումք ուրեք։ Շատ ևս ՚ի Տերտուղիանոսէ. (Ապաւէն գլխ.) "Ընծայ յատեան ձեր այսր ՚ի վկայելոյ ոք այսահարաց. և հրամայեալ յումմէ ումեքէ և իցէ ՚ի քրիստոնէից՝ խոստովանեսցի թէ դև է Աչմարտապէս, որպէս այլուր ստութեամբն ասէ գոլ Աստուած ... ու-

բեմն աստուածդ ձեր Հնազանդի քրիստոնէից ,,։ Օ այս իշխանութիւն քրիստոնէից և հեթանոսք խոստովանին, որպէս է տեսանել առ Պրոգինեայ. (գիրք ա. 6.) և առ Հերոնիմեայ (ընդդէմ Ելվէլ. ժա.) և առ Կիւրղի (գիրք է.) զի Կելսոս և Պորփիւր և Յուլիանոս ուրացօղ՝ մոգութեան ընծայեն զզօրութիւնն զայն հալածելոց զգևս։

Օ այս հաստատէ և սրբոց Հարց յանժխտելի հաւաստիս աստուածգութեանն Քրիստոսի և աստուածայնութեան եկեղեցւոյ նորա ածել զիշխանութիւնն զայն. և վասն այսորիկ սահմանեալ է յեկեղեցւոջ և կարգ երդմնեցուցչաց։

Նայց յետ փրկագործ գալստեանն Քրիստոսի կարի նուազեալ է արդ այս իշխանութիւն դիւաց 'ի վերայ մարդկան՝ զոր ներէ Աստուած առ 'ի փորձել զարդարս և առ 'ի պատուհասել զմեղաւորս, և կամ "զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ 'ի նոսա ,, (Յհ. Թ. 3.) ըստ տէրունական բանին։ Յաւուրս քարոզութեան փրկչին մերոյ յաճախեցին այսահարք, թողայուցանելով Աստուծոյ վարել դիւաց զիշխանութիւն իւրեանց, որպէս զի երևեալի ևս լիցի յաղթութիւն փրկչին և առաքելոց նորա ընդդէմ նոցա, առ 'ի յամօթ առնել զկուրութիւն Հրէից և հեթանոսաց։

Իսկ զի զևք փորձեն արդարև զմարդիկ ներելոյն Աստուծոյ, և առ 'ի մեղս հրապուրեն, յայտ է նախ յաւետարանէն Մատթէի (գլ. ՚ի.) ուր ժպրհեցաւ սատանայ և զփրկիչն մեր փորձել։ Այլ դարձեալ 'ի բանից առաքելոյն՝ որ ասէ. (Եփես. ք. 2.) "Ըստ իշխանին իշխանութեան օդոյս այսոյ, որ այժմ ընդմուեալ է յորդիսն ապստամբութեան,,։ Այլ դարձեալ Թէ "Օ ձեզաբ՛նք զպատրաստութիւնն Աստուծոյ, զի կարօղ լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի. զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ ընդ այս չարութեան՝ որ 'ի նեբքոյ երկնից ,,. (անդ. ՚ի. 11)։ Այլ առաքեալապետն ասէ (ա. Պետր. է. 8.) "Ըրթուն լերուք և հսկեցէք, զի սատան ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ, շրջի և խնդրէ Թէ զով կլանիցէ ,,։

Յայսմ ամենայնէ քաջայայտ է զի դէպ վարէն զԼուսաւորիչն իւրեանց՝ի վերայ նիւթականացս՝ ցոլվայր ներէ նոցա Աստուած առ՝ի նպաստ մեր, որպէս յայտ է յիրացն Յոբայ. և ոչ երբէք թողացուցանէ նոցա փորձել զմեզ առաւել քան զկար մեր, որպէս սուրբ Հարքն առ հասարակ ուսուցանեն, և որպէս առաքեալն վկայէ յայտնապէս (ա. կոր. Ժ. 13.) "Հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ՝ի փորձութիւն առաւել քան զկար ձեր,,:

Որոգինեայ կարծիք էին, ընկալեալ և յոմանց՝ի Հարց, զի իւրաքանչիւր ումեք՝ի մարդկանէ իցէ զնա սահմանեալ՝ի փորձութիւն: Պետրէ և Շ արմէս հաւանական համարին զայս, իբր զի Քանայ անդնդապետն նմանել Աստուծոյ յամենայնի, և հակառակաթոռնմին ամբառնալ: Այուն նպաստել այսմ և բան Շ նորհալւոյն՝ի Ճառն հրեշտակաց, զի ասէ. "Ստեր գոլով իւրաքանչիւրքն մարդոյ, բարի հրեշտակն՝ի բարւոյն առաքեալ յԱստուծոյ՝ սերմանել զբարիս, և չար դևքն՝ի չարէն՝ սերմանել զչարութիւնս,,: Նայց այլք յաստուածաբանից, ընդ որս և Պիլուարտ, չհաւանին այսմ. զի թէպէտ և ներէ Աստուած փորձել դիւաց զմարդիկ, այլ ոչ յոյժ պատշաճ Թուի բարութեանն Աստուծոյ մինչև ցայդ վայր տալ նոցա իշխանութիւն:

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆ

Մատթ. Ա.—ա. Աշակերտիչք ընդ Հիւանդս դասեն զդիւահարս, որպէս՝ի Մատթ. Ը. 23. Ժ. 18. ՝ի Մարկ. ա. 32. և այլուր. վասն որոյ և բժշկել ասեն զդիւահարս, որ է ապաքինել: — բ. Զմին իրի և առաքեալն Յոհաննէս ոչ յաշակերտաթենէ իւրմէ և ոչ՝ի Թուղթսն յիշէ զդիւահարս. և Պօղոս (ա. կոր. ԺԲ. 14.) ընդ պարգևս Հոգւոյն ոչ դասէ զդևս հանել:

Պե. — ա. Աշակերտիչք յետ պատմելոյ զանազանաբար զբանիչսն Քրիստոսի՝ի բժշկել զհիւանդս, ՝ի հանել զդևս, ՝ի սատել և հրամայել այսոց, և ապա միով բանիւ բժշկութիւնս կոչելով զայս՝ տան իմանալ զերկաքանչիւր այլ և այլ ազգ բժշկութեանցն: Ա-

Քրիստոս զերկաքանչիւրոցն իշխանութիւն ուրոյն ետ առաքելոց, զի ասէ. (Մրկ. ԺՁ. 17.) "Յանուն իմ դեւս հանցեն... ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն, և բժշկեսցեն,,: Մանաւանդ զի ի բժշկելոցն ոմանք երկոքումբք եւս ախտանային, դիւահարութեամբ և հիւանդութեամբ, որպէս համրն դիւահար՝ որ ի Մատթ. (Թ. 33.) և դիւահարն կոյր և համր՝ որ անդ (ԺԲ. 22:)

— Բ. Յոհաննէս ոչ պատմէ զկրս դիւահարացն. զի առաջարկութիւն նորա էր՝ զթողեալս յայլոց աւետարանչաց պատմել, և որ ինչ առաւելապէս զաստուածութիւն նորա յայտ առնէին: Իսկ Պօղոս ոչ միայն ակնարկէ զայն յասելն՝ "Լլում յաղողութիւնք գործութեանց,,. այլ և ինքն իսկ դեւս բազում եհան, որպէս և զայն հարցուկ յաղախնոյն՝ որ շահս բազում տայր տերանց իւրոց մոլելովքն. (Գործ. ԺՁ. 16):

Մարկ. Բ. Դիւահարքն ի սուրբ գիրս կոչեցեալք զամենայն կիրս չիմարութեան և գլուխնոտութեան բերեն. որպէս պատահեալքն Քրիստոսի յերկրին գերգեսացւոց, որք ի բժշկելն ի չիմարութենէ իւրեանց՝ նստէին զգեցեալ և զգաստացեալ առ ոտս փրկչին. (Մատ. ը. 28: Մրկ. Ե. 2: Ղ Կ. ը. 27): Եւ որպէս այն՝ զոր փրկիչն մեր չիջանելն ի Գաբաւորական լեռնէ բժշկեաց, յար և նման լուսնոտի անկանէր յերկիր, թաւալեր և փրփրայր. (Մրկ. Թ. 19): Վանդի և չեն իսկ հաւաստի նշանք ընտրելոց զայսահարս ատյգս ի ատյգ. և ի փորձոյ իսկ չայտ է, զի առ դիւրահաւանս յաձախեն կարծեցեալ այսահարքն: Այսն որոյ կանոն երդմնեցուցանելոց զդեւս տածէ զսնապաշտութիւն:

Պե. Ըէ ինչ արգելու զի դիւահարք միանգամայն անզգայեալք լցեն և չիմարեալք կամ լուսնոտք. զի նոքին իսկ դեւք որպէս ի թողացուցանելոց Աստուծոյ մտանեն ի մարդ, կարեն և զախտս ածել ի մարդիկ, որպէս բազումք ի Հարց և ի մեկնչաց վարդապետեն: Որպէս և փրկիչն մեր վասն կարկամեալ կնոջն, որ զամս ուվեւտասն ոչ կարէր ամենևին ի վեր հայել, ասաց. (Ղ Կ. ԺՁ. 16.) "Իսկ այս դուստր Աբրահամու էր, զոր կապեաց սատանայ ահաւադիկ ուվեւտասն ամ,,: Ի պատմութիւնս այլոց դիւահարաց չիք նշան ինչ այդպիսեաց հիւանդութեանց. և ի դէպս իսկ գերգեսացի

պատանուոյն՝ հանդերձ հիւանդութեամբն երևին յայտնապէս նշանք դիւահարութեան, և չէ մարթ մեկնել զայն հիւանդութեամբ ևթէ՝ առանց կամակորելոյ ըզբանս աւետարանին։ Այլ մարթ իսկ է ընտրել հաւաստեաւ զստոյգ դիւահարս յանստուգից. որպէս այնք՝ որ յօդս վերանան, որք յայլ և այլ լեզուս անծանօթս ինքեանց պատասխանեն, և որ այլ այսպիսի նշանք ապրստամբք՝ ի մարդկօրէն հնարից։ Փիլիպպեցիք և եփեսացիք չէին ինչ դիւրահաւանք, այլ առաքեալն Պօղոս անդ զգօրութիւն իւր յաձախագոյնս՝ ի կիր էարկ հալածելոյ զդևս. և է իսկ ասել, զի ուր չհաւատան մարդիկ գոյութեան դիւայ կամ դիւահարաց՝ հարկաւ չներգործեն անդ դևք՝ առ՝ ի թողուլ զնոսա յանհաւատութեան անդ յառաւելագոյն օգուտ իւրեանց։ Այլ սակայն այսր ամենայնի կանոն երդմնեցուցանելոյ զդևս չէ՝ ինչ ՚ի՞նչ պատասկար, հանգոյն դեղոյ՝ ՚ի կարևոր ժամանակի՝ ՚ի կիր արկեալ։

ՅՕԴՈՒԱԾ Է

Յաղագս մարդկան ընդ դևս հաղորդութեան։

Որպէս զայսահարաց և զհաղորդութենէ դիւայ ընդ մարդկան, այսպէս և զմարդկան ընդ դևս հաղորդութենէ ծայրայեղ եղեն կարծիք. զի մերթ առաւել քան զարժանն հաւատս ընծայեցին այնմ, թէ՛ ուղղափառք և թէ՛ բողոքականք, և մերթ բոլորովին տգիտութեան և անապաշտութեան արդասիս համարեցան զամենայն գործս մգութեան, կախարդութեան, դիւահարութեան և սոցին սակի ամբարշտութեանց։ Այ՝ ինչինն յամենայնի աներկևան է շաւիղ. քանզի և ընդունել զամենայն և զամենայն արհամարհել անտեղի է։

Հաւատիք ներքին և արտաքին ոչ ներեն երկբայել զՀնմարտութենէ իրացն։ Այանզի յընդունել միանգամ զդիւայ գոյութիւն և զբարեսէր կամ նոցա, ո՞ կարէ երկբայել՝ զի ՚ի թողացուցանել Աստուծոյ կարասցեն նոքա հրապուրել զմարդիկ ՚ի հնարս չարեաց գործակցութեամբ իւրեանց։ Այ ո՞ դարձեալ չգիտէ զբարեսէր կամս

տալատ մարդկան յօժարութիւն ՚ի փորձ այսպիսեաց հնարից։ Ա՛ան որոյ չիք ինչ երկուստեք ըստ ներքինմասին ընդդիմութիւն։ Իսկ ըստ արտաքնոյն՝ նոքին իսկ սուրբ գիրք աւանդեն մեզ զհաւաստիս։ Ա՛ոգքն և կախարդք Փարաւոնի, (ելք. է և ը.) վհուկն Սաուղի, (ա. Ընդ. իը.) Սիմոն մոգ՝ որ ապշեցուցանէր զազգն սամարացւոց, (գործ. ը. 9.) Ելիմաս մոգ, (անդ. ժգ.) և աղախինն հարցուկ՝ որ շահս բազում տայր տերանց իւրոց, (անդ. ժզ. 16.) վկայեն արդեանց իրացն։

Օ՛նոյն հաստատեն և նախնեացն միաբան կարծիք զայսմանէ, ոչ ոամկին և՛եթ այլ և նոցին իսկ իմաստասիրաց. և վկայութիւն արժանահաւատ մատենագրաց՝ որ զհնարս մոգութեան քօղախնդրեալ հոլանեն, ընդ որս Ապսեքի ՚ի Պատրաստութեան աւետարանին (գլ. ժև ժա.) սուրբն Գրիգոր Նիւսացի ՚ի Կրիստոնէական վարդապետութեան. (գիրք ը. գլ. ի. 30.) և սուրբն Ե՛ղբոնիոս ՚ի վարս սուրբ Հօրն Իլարիոնի, հաստատեն զնոյն Ճշմարտութիւն աներկբայելի։

Ա՛ան որոյ առ ՚ի խափանել զբազմապատիկ չարիս՝ որ ՚ի դիւական հնարից աստի աղբերանան, օրինադրեաց Ա՛ստուած ՚ի ձեռն Մովսիսի. (ելից. իը. 18.) “Օ՛կախարդս մի ապրեցուցանել,,։ Ա՛ւ դարձեալ. (ղևտ. ժը. 31.) “Օ՛չհետ վհկաց մի երթայցէք, և ՚ի գետս մի յարիցիք պղծել նոքօք,,։ Ա՛ւ դարձեալ. (ը. օր. ժը. 10.) “Ա՛՚ի գտանիցի ՚ի քեզ՝ որ դիւթիցէ դիւթութիւն, և հմայիցէ, և հաւահարց լինիցի, և կախարդիցէ կախարդանօք, և վհուկ և նշանադետ լինիցի առ ՚ի զմեռեալս հարցանելոյ,,։ Ա՛ւ դարձեալ. (ղևտ. ի. 27.) “Ա՛յր կամ կին՝ որ լինիցի վհուկ կամ գետ, մահու մեռցի,,։

Ա՛յնպէս և եկեղեցի սուրբ ընդդէմ կախարդասար հնարից բազում օրէնս պատիժս և ապաշխարանս սահմանեաց, դատապարտեալ զամենայն եղերուն՝ որ յայտնի կամ լռելեայն գործակցութեամբ դիւաց կատարին։

Ա՛րդ եթէ արդարև գոն կախարդութիւնք այսպիսիք, որպէս գոն իսկ ըստ վկայութեանցս՝ զորս ածաք, ապա իմաստութեամբ ընդդէմ այնոցիկ սահմանեցան օրէնք։ Ա՛յլ եթէ էին իսկ ցնորք ոամկականք և կանխակալ մտոտի կարծիք, այսու ամենայնիւ իմաստու-

թեամբ սահմանեալ լինէին օրէնք՝ առ ի խափանելոյ զեղբեռն նոցա ընդդէմ կրօնից և ընկերութեան . ամէն իրի և քաղաքական օրէնք արգելս և պատուհաս յաւելեալ ժամանակի ընդդէմ այնոցիկ սահմանեցին :

ԳԼՈՒԽ Բ

ՑԱՂԱԳՏ ԱՇԽԱՐՀԻ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ՑՈՉՆԶԻ

Որք միանգամ անդիտացան կամ մերժեցին զաստուածային յայտնութիւն , զառածան յայլ և այլ մոլորութիւնս յաղագս լինելութեան աշխարհի : Յոգունք ի նախնի աղանդաւորաց յաւիտենական եղեալ զնիւթ ինքնակայ , անտի զբնաւս համարեցան յառաջ եկեալ : Ոմք յարդեաց կէսք ի նիւթականութիւն անկան , այլք յիդէականութիւն , և այլք դարձեալ յերևութականութիւն :

Ընդհարհաւ իմանամք աստանօր զպարտութիւն էից եղականաց , եթէ հոգեղէնք իցեն , եթէ նիւթեղէնք , և թէ խառն յերկոցունց : Ո՛չ հոգեղինացն ասացաք . արդ մինչև ձեռնարկեալ ձառել զմարդոյ՝ որ ի հոգւոյ և ի մարմնոյ է բաղկացեալ , առաջօրք զնիւթականացս էից :

ԳՕԴՈՒԱԾ Ա.

Ջի Աստուած գոյհարկս յոչընչէ արար ի ժամանակի :

Առաքն հաւատաք ուսուցանեն մեզ զայս , և ի հանդանակն առաքելոց և ի նիկիականին դաւանեմք ասելով . “ Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ յարարիչն երկնի և երկրի երևելեաց և աներևութից ,, : Նա ջորրորդ ժողովն լատերանեան սահմանեաց . “ Ի է արարիչ համայնից . . . որ ի սկզբանէ արար յոչէից համանգամայն զերկաքանչիւր արարածս , զհոգեղէն և զնիւթեղէն , այսինքն զհրեշտակային և զերկրաւոր ,, : Նա սուրբ գիրք վկայեն այսմ յասելն . “ Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր ,, : Նա բառն եբրայա-

կան, ըստ վկայելոյ հմուտ բաբունեաց, նշանակէ յո-
չէից ածել՝ի գոյ. զոր և բանք սաղմոսերգուին հաստա-
տեն. "Ի սկզբանէ, տէր, զհիմունս երկրի հաստատե-
ցեր. և գործք ձեռաց քոց երկինք են,,: Յոր դարձեալ.
"Ասաց, և եղեն. հրամայեաց, և հաստատեցան,,: Յո-
այնպիսի հաստատուն աւանդութիւն էր այս իմացուած
մովսիսական բանին, զի երանուհին մայր եօթանեցունց
պատանեացն մակաբայեցւոց ասէր՝ի քաջալերել զեօթ-
նեւորդն՝ի նոցանէ զկրտսերագոյնն. "Ողջէմ զքեզ,
որդեակ, հայեսցիս դու յերկինս և յերկիր, և որ՝ի
նոսա արարածք իցեն. յուշ լիցի քեզ, զի յոչընչէ ա-
րար զնոսա Աստուած,,. (Բ. Մակ. Է. 28): Յո փրկիչն
մեր ասէ. (Յհ. ԺԷ. 5.) "Փառաւորեա զիս Հայր առ
՝ի քէն փառօքն, զոր ունէի յառաջ քան զլինելն աշ-
խարհի,,:

Յետ այսր ամենայնի աւելորդ համարիմ զվկայու-
թիւնս Հարց կուտել այսր առ՝ի ցուցանել զհաստա-
տուն աւանդութիւն Հնմարտութեանս այսորիկ՝ի սուրբ
եկեղեցւոջ:

Այլ՝ի լուսոյ իսկ բանին յայտ է. զի եթէ աշխարհս
՝ի մասանց սահմանելոյ բաղկանայ, ապա և ինքն սահ-
մանեալ է. և եթէ սահմանեալ, ապա հնարաւոր և եթ
և փոփոխելի է, և ոչ եթէ բերէ յինքեան զպատճառ
գոյութեան իւրոյ: Ապա յայլմէ ումեքէ ածեալ է՝ի գոյ,
այսինքն յայնմանէ՝որ ամենակարողն է և յաւիտենական
և ինքնագոյ, որ միայն է Աստուած: Ի Հնմարտութենէ
աստի ինքնին անկեալ կործանին ամենայն ազգի ազգի
աղանդք հիւլէականացն, ինքնաստուածեանց, համաս-
տուածեանց, մանիքեցւոց, և այլոցն ամենեցուն՝ որ՝ի
նոցանէ ստեղնեալ մոլորութիւնք:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Աստէ. Ա. Պարտ է զմովսիսական բանն "Ի սկզբ-
բանէ արար Աստուած զերկինս և զերկիր,,, իմանալ
յինքնակայ նիւթոյ. որպէս և՝ի գիրս իմաստութեան
ասի (Ժա. 18.) "Ո՛ի ոչ չքաւորէր ամենազօր ձեռն
քո, որ հաստատեաց զաշխարհս յանկերպարան նիւ-
թոյ,,:

Պե. Որ ինչ գրեաց Մովսէս աստուածային յայտնութեամբ, զնոյն և բանիւ աւանդեաց. և աւանդութիւն այսպէս կալաւ միշտ, զի Աստուած յոչընչէ արար զամենայն. և հեթանոս իմաստասէրք անգէտք այսր աւանդութեան անկան՝ ի մոլորութիւնս անտեղիս։ Իսկ իմաստունն ոչ ժխտէ զանկերպարան նիւթոյն այնորիկ յոչընչէ գոյացումն, այլ՝ ի նիւթոյ անտի՝ որ խառն՝ ի խուռն անարդ անզարդ և անկերպարանն էր՝ ի ստեղծանելն՝ ի սկզբան, ասէ՝ ի յարդ և՝ ի կերպարան աճեալ Աստուծոյ զգեղեցիկս զայս աշխարհ։

Աստ. ԺԲ. Հակասական է և անհնարին յոչընչէ գալ՝ ի գոյ, ուստի և առած է Յոչընչէ ոչ ինչ։

Պե. Ի չգոյէ գոյացումն՝ ի վեր է քան զմիտս, այլ ոչ հակասական։ Միտք մարդկեղէն բազում ինչ, զի ոչ ըմբռնել կարէն, կարծեն հակասական։ Նոպիս մեր, զորոյ գիտեմք զգոյութիւն, զինչ էր յառաջագոյն. չկարեմք ըմբռնել զայն, այլ ոչ եթէ այնու գտանի գոյութիւնս մեր հակասական։ Այսն որոյ առածն այն Յոչընչէ ոչ ինչ, զամենակարողութիւնն Աստուծոյ՝ ի բաց հանէ, որում ամենայն ինչ կարելի է՝ բաց՝ ի հակասականացս։ Այս որք աստուածային յայտնութեանն՝ անգէտք էին աստուածային յայտնութեան, վասն որոյ և ոչ կարացին զպատճառս էիցս սահմանել. որպիսի որ Ոնեանն էր և Ափսեմիանէս, Պլատոն և Ամիստոտէլ որք զեղելութենէ էից վարանեալ մոլորեցան։ Զոհից ասել զի յոչընչէ ասելն՝ ոչ իբրև յիմեքէ իմանալի է, այլ թէ՝ մինչ ոչն գոյր ինչ։

Աստ. Գ. — Ե. Եթէ Աստուծոյ լեալ են եղականքս, ապա՝ ի յաւիտենից լեալ են որպէս յաւիտենական և հարկաւոր Անին արգասիք. — Բ. Անաւանգ զի գործոյ հարկ է զպատճառն բերել զյատկութիւնս, որպէս իմացութիւն զմտաց, և գոլ յաւիտենական. զի և ոչ տարաժամ լինելութեան նոցա են ինչ պատճառք։ — Գ. Այս գարձեալ զի եթէ ոչ՝ ի յաւիտենից լեալ իցեն, հարկ է գնել յառաջ քան զեղանութիւն նոցա ժամանակ անսահման, որ անտեղի է։

Պե. — Ե. Երկդիմութիւն է՝ ի բանիդ, և շփոթէ զհարկաւոր Անին ինքնագոյութիւն ընդ արարչութեան իրաց՝ որ արտաքոյ նորա են, և զազատ կամաց նորա կա-

խեալ։ Այն որոյ և ոչ արգասիս Հարկաւոր Լինի օրէն
ն կոչել զարարածս. զի Թէպէտ և Այ՛ցառուածոյ յառաջ
գան, այլ արտաքսապէս և ոչ էբրև 'ի պատճառէ՝ որ
բնաւորապէս յառաջ ածիցէ։

— ԺԲ. Ինոյն երկդիմութենէ և 'ի շփոթելոյ Այ՛ց-
տուած զներգործութիւնս ընդ արտաքին գործս նորա
յառաջ գայ և միւս ձեռնարկութիւնդ՝ գործոյ զպատ-
ճառին հարկաւ բերել զյատկութիւնս։

— ԺԳ. Իսկ յամենայ արարածոց պատճառք՝ կամքն Այ՛ց-
տուածոյ. եթէ իցէ իսկ օրէն յամեցուին կոչել զչեզա-
նիլ նոցա 'ի յաւիտենից. զի 'ի յաւիտենականութեան
չիք վաղ կամ անագան, յառաջ և յետոյ, այլ ընդ ե-
զականքս սկսան ժամանակ և յաջորդութիւն. վասն ո-
րոյ զստեղծուին նոցա ընդ ժամանակի ասելի է քան 'ի
ժամանակի, կամ զժամանակին ընդ նոսա. և որ յառաջ
քան զլինելութիւն նոցա խմացեալ ժամանակ՝ տկարու-
թեան մարդկայնոյս մնայ են արգասիք։

ՅՕԴՈՒՄԱԾ Բ

Զի որ ինչ երկրաբանից և բնագիտաց և աստեղաբաշխից ասոյգ գնեռբիւնք, ոչ հակառակ կացնին մովսիսական պատմութեան։

Բնագէտք 'ի ներգործութենէ ջրոյ և հրոյ այնպիսի
արգասիս 'ի ներքին կազմած երկրի գտանեն, որ առա-
ւելագունից յոյժ ժամանակաց կարօտի քան զպատ-
մեալն 'ի Այ՛ովսիսէ սկիզբն աշխարհի. նոյնպէս և նախ-
նականացն 'ի նոցանէ յոլովորդելոց լերանցն կազմած։
Պարձեալ ըստ երկրաբանից առ տեղափոխութիւնս
ծովուց, առ հրաբուղխ լերինս 'ի վաղնջուց շինեալս, և
առ բրածոյս յալս երկրի գտեալս, և առ սոցին սակի
ոչ սակաւ իրս չբաւեն ժամանակն եդեալ 'ի Այ՛ովսիսէ։
Իսկ աստեղաբաշխք առ աստեղատանց և կենդանաբե-
րին խոնարհումն, զոր ժամանակաւ համարին լեալ, և
առ յեղյեղումնս հասարակօրութեանց առաւելագոյն
յոյժ դարս պահանջեն քան զմովսիսականն։

Այլ գիտելի է նախ, զի մովսիսական ժամանակա-
գրութիւնն 'ի լինելութենէ մարդկան սկսանի տիրա-

պես. քանզի Մովսէս զԴամայ և զայլոց նահապետաց ևեթ զամս կենացն հաշուէ, և ոչ զաշխարհի լինելութեան:

Ասացեալ որոյ գիտելի է երկրորդ, զի Հարք և մեկնիչք և աստուածաբանք ոչ միաբանին զչափոյ աւուրցն վեցեցունց արարչութեան. զի առաւելագոյնք՝ ի նոցանէ համարին զայնոսիկ պարագայս ժամանակի անյայտս՝ զորս Մովսէս աւուրս կոչէ: Որ և ոչ արեգակն օրակշիռ յերեսին առաջնին աւուրս գոյր, վասն որոյ և չմարթէր աւուրցն այնոցիկ նմանս այլոցն գոլ. որպէս և ոչ եօթներորդին՝ յորում Հանգեաւ Աստուած՝ օր մի է իբրև զմի յաւուրց, զի օրն այն տեւէ տակաւին և տեւեսցէ՝ ի սպառ աներեկոյ և անվաղորդայն:

Այս երրորդ՝ կրկին ժամանակս՝ ի մովսիսական պատմութեան պարտ է զանազանել. մի զոյն՝ զորմէ ասէ. "Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիրն, և երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և խաւար՝ ի վերայ անդնդոց ,,. այսինքն յառաջ քան զստեղծումն լուսոյ. և միւս այլ ժամանակ՝ ի ստեղծմանէ լուսոյ և այսր: Քանզի առաջինն այն ժամանակ, զորոյ Մովսէս չսահմանէ զդարս և զչափ, բաւէ՝ ի լուծումն առարկութեանց երկրաբանիցն և բնագիտաց. վասն որոյ քաջահմուտք՝ ի նոցանէ Աղերիոս, Քիրուան, Պալլաս, Գրմենեգիլտ Պինիոս, Հենոլեր, Տըլիւք, Ստրէ, Պիւքէլանտ, և այլք ոչ ինչ՝ ի գնութենէն Իւրեանց գտանեն հակառակ մովսիսական պատմութեան: Այս բազում ինչ ևս համաշխարհական ջրհեղեղին համարին արգասիս, մանաւանդ զտեղափոխութիւնս ծովուց՝ որ ծածկէին ըզկողմանս ինչ երկրի երբեմն խոնարհագոյնս. և յայսցանէ համարին զպատճառս բրածոյից ձկանց՝ ի ցամաքային վայրս բարձունս գտելոց, և ոսկերաց փղաց և ուղտ, գեղջերց՝ ի ցրտային գաւառս ընդ երկրաւ վիմատեսելոց:

Իսկ զխոնարհմանէ Ադիակին, զորմէ Աղերիոս կասկածէրն, ՝ի զարգանալ և ևս աստեղաբաշխութեան՝ Լակրանժ, Լափլաս, Փրիսիոս, և այլ ներհուն աստեղաբաշխք ցուցին զի շարժումն այն կենդանաբերին ոչ է յաջորդական, այլ ձօձումն. և զի յեղյեղմունք գուշնաքեայք հասարակօրութեանց՝ ի տատանելոյ բևեռայ առնուն պատճառս, զոր աստեղաբաշխք երերումն կոչեն:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ընդդէմ. — ա. Մովսիսականն երկրաբանութիւն ոչ ըստ բնագիտութեան և ոչ ըստ աստեղաբաշխութեան օրինաց գրեալ է. զի զերկիր կացուցանէ միջակէտ, և զամենայն յօրինուած երկրի զնովաւ, և զաստեղս բևեռեալ ընդ երկին. և զամս իբր հաստատուն ինչ անշրջպետս ջուրց՝ որ ՚ի վերոյ հաստատութեանն: — բ. Եւ գարձեալ յառաջ քան զլինել լուսաւորաց դնէ զիմաստութիւն տունջեան և գիշերոյ. զձկունս ՚ի ջուրց և զսեռս կենդանեաց հանէ յերկրէ, որ արդի զարգացման գիտութեանց ոչ ՚ի ձառ պատահին:

Պէ. — ա. Սպաքէն ՚ի մովսիսական երկրաբանութեան ոչ է գտանել ձառս բնագիտականս և աստեղաբաշխականս. զի Մովսիսի ոչ այսոքիկ էին պատճառք գրոցն, այլ պատմութիւն արարչագործութեան՝ զոր և կատարէ: Ա ասն որոյ ոչ խնդիրս զյօրինուածոյ երկնից և զշարժմանէ աստեղաց և երկրի ՚ի ներքս մտածանէ. այլ զամենայն ինչ որպէս և երևիւնն յանդիման առնէ: Եւ ոչ զամսոյ ինչ հաստատութենէ ասէ ինչ, այլ որ ինչ ասէն՝ ՚ի դէպ իսկ ելանէ վերին և ներքին ջուրցն բաժանման, այսինքն ջուրց ՚ի գոլորշի և գոլորշեաց ՚ի ջուր յար փոփոխելոյ:

— բ. Յաղագս դնելոյ աւուրս նախ քան զլինելութիւն լուսաւորաց ասացաք ՚ի վեր անդր, և առ Յոյնս իսկ և առ հռովմայեցիս սովորութիւն էր աւուրս կոչել զանյայտ և զանպայման միջոց ժամանակի: Եւ յաւելումք զի կրկին եղանակք են առ արդի բնագէտս մեկնելոյ զազգեցութիւն լուսոյ. մի հոսմամբ ՚ի լուսաւորաց, և միւս ևս ցնոյմամբ ՚ի նոցանէ գոյացութեան լուսոյ՝ որ յօդս է: Նստ այսմ երկրորդ եղանակի մարթ է խմանալ զմովսիսականն պատմութիւն, արարչին լուսոյ ներգործելով ՚ի նմա ղցնցումն զայն՝ զոր ապա լուսաւորաց ետ ներգործել:

Արդարև ջուրք և երկիր չկարեն հանել իւրովի ըզձկունս և զկենդանիս, այլ կարել կարեն՝ արարչական հրամանին ՚ի նոսա ներգործելով: Ա ասն որոյ մով-

սխալանն պատմութիւն ոչ միայն չհակառակի բնական դիտութեանց, այլ սոքին իսկ յայտ առնեն զճշմարտութիւն նորա, զի յետ այսքան և այսպիսի աքանչելի յառաջադիմութեան իւրեանց համաձայնին ընդ նմա ըստ ամենայնի, որ աստուածային ճշմարտութեան նորա է ապացոյց:

ԳՕԴՈՒԱԾ Գ

Զի զուր չաւնան անհաւատք ցուցանել զակիզբն մարդկութեանս երիցագոյն քան զժամանակն պատմեալ ի Մովսէս:

Ոչ ինչ ի հնարից Թողմն անհաւատք առ ի հերքել զժամանակագրութիւն Մովսեսի, որ ոչ երիցացուցանէ զակիզբն մարդկութեանս քան զամն իբր եօթն հազար հինգ հարիւր: Ի մէնայն ուստեք ածին կուտեցին ընդդէմ նորա աւանդս յեգիպտացւոց ի քաղդէացւոց ի հնդկաց և ի Չինաց, այլ առաջի պատմական լուսոյ պայծառութեան յայտնեցաւ առասպելապատում ստութիւն նոցա:

Ո՛չ յամենայն հեթանոսական հնութիւնս արժանահաւատ՝ չիք երիցագոյն ինչ քան զամն վեց հարիւր յառաջ քան զԹուականութիւն փրկչին, ոչ յարևելեայս և ոչ յարևմտեայս: Հնագոյն ի պատմագիրս աբևելեայս Հերոդոտոս եկաց չորեքհարիւր քառասուն ամօք յառաջ քան զԲրիստոս. այլք առհասարակ կըրտսերագոյնք քան զնա են ժամանակաւ: Մինչդ որ ինչ նոքա պատմեն, կամ դիցաբանականք են առասպելապատումք, և կամ չհասանեն ի ժամանակագրութիւն մինչսխալական, որպէս որ ինչ յաղագս Եկեղոպայ, Վեհկալիոնի, Կադմեայ, Դանաւոսի և Դարդանեայ առ ի նոցանէ պատմեալք:

Օնոյն է ասել և զՀին աւանդից, զորս եգիպտացիք քաղդէացիք հնդիկք և Չինք ընծայեն իւրեանց. զի քննաբանք նախնիք և արդիք միաբան մերժեն զբաբելոնական և զեգիպտական ժամանակագրութիւնս: Մինչդ նախնիան իմն և զՃուդիմս, զի արբան և զԼուտարքոս. և նա ինքն Մովսէս յամենայն դիտութիւնս ե-

գիպտացւոց վարժեալ, եթէ գտանէր ինչ ի նոսա հնադոյն քան զժամանակագրութիւն իւր, ոչ արդեօք կըրտսեր քան զնոսա զսկիզբն մարդկութեանս կացուցանէր։ Ակնարկս ոմեքիմ թշնամի քրիստոնէութեան հարկեցաւ խոստովանել ակամայ, որպէս վկայէ Աբոգինէս (գիրք ը. 20.) զի չիք գտանել ինչ հնագոյն քան զմովսիսական ժամանակագրութիւն։ Եւ Աեոկրիտոս, որպէս վկայէ Աիոգինէս Լայերտոս (գիրք թ. 35.) շրջեալ ընդ Եգիպտոս՝ ընդ քաղդէացոսն՝ ընդ Պարս՝ ընդ Եթովպիա և ընդ հնդիկս, և հետազօտեալ զամենայն հին աւանդս նոցա, ի գարձին իւրում յԱյգլադա յայտ արար՝ զի չիք գտանել ինչ հնագոյն քան զԹեբական և քան զտրովական պատերազմունս։

Ասկ Ն՚ենացն պանծայեալ հնութիւնք ի կշիռ քննաբանիցն ածեալ, առաջին մասն ժամանակագրութեան նոցա գտաւ գիցաբանական, երկրորդն յայտնապէս առասպելապատում, և երրորդն՝ որ միայն բերէ տիպս ինչ կերպարանաց պատմութեան՝ հազիւ հասանէ ի ժամանակս Ե՚գբահամու, որպէս ապացուցանեն քաջահմուտքն Աոկէ և Ն՚երտիլ։ Ե՚յսոքիկ են հնութիւնք, զորս հակառակորդք հանեն ի Ձակատ մովսիսականին։

Ե՚րաքնոյն վէպք, սկիզբն և զարգացումն գիտութեանց և արուեստից, և նոքին իսկ գինութիւնք երկրաբանականք, ոչ միայն չհակառակին՝ այլ և հաստատեն զմովսիսականն պատմութիւն։ Ի՚անգլ Աովսէս պատմէ զորդւոցն Լոյ նախ առաջին գնալ ի Աենաար, ուստի սկիզբն եղև ցրուելոյ նոցա յայլ և այլ կողմանս. արդ բաբելացիք, եգիպտացիք և ասորեստանեայք ի քաղդէացւոց անտի սերեալք, հնագոյն ազգք են ի պատմութիւնս Հերոդոտոսի և Աիոդորի սիկիլիացւոյ։ Ելին արկեալ ապա ի սկիզբն և ի զարգացումն գիտութեանց և արուեստից, ոչ ինչ հնագոյն քան զպատմեալսն ի Աովսիսէ գտանեմք։ Ո՚ի Կադմոս, որ նախ ի Փիւնիկիոյ յԱյգլադա զդպրութիւն կամ զալփաբետս էած, երկոտասան՝ կամ թէ շատ՝ վեշտասան դարուք յառաջ քան զԹուկիդեսութիւն փրկչին եկաց։ Յառաջ քան զԱովսէս և զՄիւթագոր անծանօթ էր իմաստասիրութիւն. և եթէ այնչափ յառաջագոյն էր սկիզբն մարդ-

կութեան, որպէս հակառակորդք համարին, որպէս մարդկային մտաց զօրութիւն ընդ այնչափ դարս դադուց առանց զարգանալոյ կայր և մնայր՝ ի միեղենաւոր տղայութեան։ Տըլիւք, Վիւվիէ, Պրոքի, Լանցանի, և այլ քաջահմուտ բնագէտք հաստատեն՝ ոչ ուրեք գտեալ ոսկերս մարդկեղինս բրածոյս վիմատառեալս, և ոչ քարեղէն կամ մետաղեայ յիշատակ առաւելագունի հնութեան։

Յայսմ ամենայնի յայտ է, զի ոչ իւիք ջհաստատութիւն մովսիսական ժամանակագրութեան յաղագս ըստկըզբան ազգի մարդկան մարթ է դրդուեցուցանել։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Պօղ. — ա. *Ել էր մարթ այնպէս վաղ աճել և բազմանալ ազգի մարդկան ընդ ամենայն երեսս երկրի։* — բ. *Ոսկ զյառաջադիմութիւն արուեստից և զգիտութեանց, զոր ասացեր, դէպք յեղակարծք և յեղափոխութիւնք համաշխարհականք անծանօթ կացուցանեն մեզ։*

Պօ. — ա. *Հաշիւք Եւսեբոսի և այլոց քաջահմուտ արանց ցուցանեն, զի՝ ի սուղ միջոց ժամանակի չորեքհարիւր ամաց՝ ի ստեղծմանէ աշխարհի կամ՝ ի ջրհեղեղէ և այսր մարթ էր այնչափ բազմանալ մարդկան, մինչև երկրի հազիւ բաւել կերակրել զնոսա։ Ահա է առ այս օրինակ իսրայելացւոց, որք յամս երկերիւր և քառասուն այնչափ բազմացան Եգիպտոս, զի եօթանասուն անձինք իջեալ անդր՝ վաթսուն բիւրք կարողք՝ ի զէն գտան՝ ի նոսա ելս իսրեանց անտի. յորս յաւելեալ զծերս անցեալս զվաթանասունիւք, և զմանկտին՝ ի քսանամենից և՝ ի վայր, և զկանայս առհասարակ, ոչ ինչ նուազ գտանին միահամուռ քան զերեքհարիւր բիւրս։*

— բ. *Զի՝ ի հերքել զձշմարտութիւն ոչ բաւեն գուշակութիւնք կարելեաց, այլ հաւաստեաց և ցուցակութեանց են պէտք։ Անաւանդ զի են ինչ յարուեստից այնպէս կարևորք և սովորականք, որ դամ մի հնար բեալ՝ ոչ ևս կորնչին՝ ի յեղափոխութեանց, առանց կորնչելոյ ազգի մարդկան առհասարակ։*

ԳԼՈՒԽ Գ

ՅԱՂԱԳՍՈՒ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ

Ընթեռնումք՝ի գիրս ծննդոց՝ զի Աստուած յետ առնելոյ զերկինս և զերկիր, զլոյս և զաստեղս, զջուրս և զանասունս, ասաց. "Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան,, : Եւ յաւելու Մովսէս. "Եւ արար Աստուած զմարդն՝ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա: ... Եւ օրհնեաց տէր Աստուած զմարդն հողմ յերկրէ, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի: ... Եւ ասաց տէր Աստուած. ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցուք դմա օգնական ըստ դմա: ... Եւ արկ տէր Աստուած թմբրութիւն՝ի վերայ Ադամայ, և ննջեաց. և առ մի՝ի կողից նորա, և ելից ընդ այնր մարմին. և շինեաց տէր Աստուած զկողն՝ զոր առ յԱդամայ՝ՙի կին, և ած զնա առ Ադամ,. (Ծննդ. ա. 26. 27. բ. 7. 18. 21):

"Յայսմայր հրամանաւ լոկով արարեալ էր Աստուծոյ զամենայն. եղիցի լոյս. եղիցի հաստատութիւն՝ի մէջ ջրոցդ. ժողովեսցին ջուրքդ. երևեսցի ցամաքն. բղխեսցէ երկիր բանջար խոտոյ. եղիցին լուսաւորք՝ մեկնել՝ի մէջ տունջեան և գիշերոյ. հանցեն ջուրք զեռունս շնչոյ կենդանեաց և թռչունս թևաւորս. հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի: Այլ իբրև եկն՝ի ստեղծագործութիւն մարդոյն, ոչ ևս ձայն իշխանական և տիրական, այլ բարբառ մեղմագոյն, թէպէտ և ազգու իբրև զառաջինն: Նմանապէս զանձն՝ի խորհուրդ կոչէ Աստուած. ձայն տայ ինքեան, կամելով իմն յայտ առնել՝ զի գերագոյն ինչ քան զցայսմայր գործեցեալսն գործելոյ է. Արասցուք մարդ: ... Զի խորհրդեան, որով վարի Աստուած, զի արարածն առաջնիկայ՝նա միայն խորհրդով և բանիւ վարելոյ է: Այլ ինչ նուազ զարմանալի են և այլ ամենայն հանգամանք ստեղծագործութեան մարդոյն: Մինչև ցայսմայր՝ի գիրս ծննդոց չէր տեսեալ հպել մատին Աստուծոյ՝ինչ ի թուղթ ապակա-

նացու. այլ առ՝ի հաստել զմարմին մարդոյ՝ առնու իւրովի հող յերկրէ, և հողն այն կերպաւորեալ այնպիսի ձեռամբ՝ առնու կերպարան չքնաղագեղ, որպիսի չև ևս էր երևեալ յերկրի։ Այս առանձին մտադրութիւն Աստուծոյ յարարչութեան մարդոյ յայտ առնեն զերիցագոյն իննամ իւր առ նա, թէպէտ և տիեզերք ամենայն նովին իմաստութեամբն նորա ուղղին ,,։

“Քանչելագոյն ևս՝ օրինակ արարչութեան հոգւոյն։ Ոչ՝ի նիւթոյ առնու զայն, ընդ՝ի բարձանց, և է սա շունչ կենդանի առ՝ի նմանէ յառաջ եկեալ։ Ստեղծանել զանաստուածս՝ ասաց. Հանցեն ջուրք զեռունս շնչոյ կենդանեաց, և ստեղծ զնհանգս ծովայինս և զամենայն շունչ կենդանի և զեռուն՝ որ լցուցանելոց էին զջուրս։ Զսոց ևս. Հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի ջորքոտանի և սողուն։ Յապէս պարտ էր ծնանել անբանիցն և երկրաքարշ կենդանեաց, զորոց բովանդակ կենդանութիւն՝ի խաղացական շարժումն եղ Աստուած. Եհան զնոսա՝ի ծոցոյ ջուրց և հողոյ։ Այլ ոչ էր պարտ ելանել՝ի նիւթոյ այնմ, որովհետև պարտ էր կեալ իբրև զարարիչ իւր բանիւ և մտօք, և միանալ ընդ նմա խորհելով զնա և սիրելով, և որ վասն այն՝ի պատկեր նորա արարեալն էր։ Հնար է Աստուծոյ կազմել՝ի նիւթոյ մարմին գեղեցիկ. այլ որպէս զնարդ և յարդարեսցէ զնա և կերպարանեսցէ, ոչ գոցէ՝ի նմա զպատկեր իւր և զնմանութիւն. Հոգւոյ՝ որ՝ի պատկեր նորա արարաւ, և որովհետև մարթէրն երանելի լինել ժառանգելով զնա, պարտ էր նորահրաշ արարչութեամբ առնուլ գոյութիւն, պարտ էր նմա իջանել՝ի վերուստ. և այս է շունչն կենդանի փչեալ՝ի բերանոյ Աստուծոյ,,։

“Յուշ լիցի զի Աովսէս զգալի պատկերօք առաջի առնէ մարմնեղէն մարդկան զպարզ և զնմանալի Հնմարտութիւնս։ Ի կարծեսցուք թէ փչեցէ Աստուած որպէս զկենդանիս. մի կարծիք լինչ լինիցին թէ հոգիս մեր իցէ օդ անօսր կամ շոգի լուծանելի. շունչ՝ զոր փչէ Աստուած, և որ բերէ զպատկեր նորա, ոչ է օդ կամ սըղոխ։ Ի և մասն աստուածեղէն բնութեան զհոգի մեր համարեսցուք, որպէս ոմանք յիմաստասիրաց եբազեցին. ոչ է յօդուածոյ Աստուած, զի բաժանեսցի. Թէ էր նմա ունել մասունս, պարտ էր անարարս լինել

և մնասանցն. զի արարչին և անեղ Աստուծոյն չէր մարթ ՚ի մնասանց եղականաց կալ: Աղեկան է՝ հոգի, և այնպիսի եղական, յորում չիք բնաւ մանն աստուածեղէնն բնութեան. այլ եղական ըստ պատկերի և ըստ նմանութեան աստուածեղէնն բնութեան, եղական՝ որում պարտ է կեալ միշտ միացեալ յարարիչն իւր. զայս գուշակէ փչումն աստուածային, զայս ցուցանէ մեզ հոգին կենդանի ,,:

“Արդ աւանիկ մարդն հրաշակերտեալ. կերպարանէ ՚ի նմանէ Աստուծոյ և օգնական նմա. ՚ի միջէ հարսանեաց ծնանին ամենայն մարդիկ, զի կացցեն մինչև ՚ի սպառ ազգատոհմ մի, թէպէտ և համասփիւռ ընդ երեսս երկրի բազմացեալ ,,. (Պոսիէ. խօսք ՚ի Վեպս ապագայ. մասն ՟ը. գլ. ա):

Որ ուրեմն բարբանջեն, որք ՚ի ձուոյ կամ ՚ի պարտուճենէ երկրի գոյացեալ ասեն զմարդիկ: Որ և նախադամեանք, որք յառաջ իսկ քան զԱդամ դնեն ազգ ինչ մարդկային: Որ և համադամեանք, որք բազումս համարին լեալ նախահարս ազգի մարդկան համաստեղծս ընդ Ադամայ: Որս առհասարակ հերքեն գիրք. զի ասեն ընդդէմ առաջնոցն. “Այս աստեղծ տէր Աստուած զմարդն հող յերկրէ, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի: . . . Այս չինեաց տէր Աստուած զկողն, զոր առ յԱդամայ, ՚ի կին ,,: Այս ընդդէմ նախադամեանց ասեն. “Այս մարդ չէր՝ որ գործեր զերկիր . . . և Ադամայ ոչ գտաւ օգնական նման նմա . . . ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցուք նմա օգնական նման նմա ,,: Այս ընդդէմ համադամեանց ասեն. “Աճեցէք և բազմայարուք և լցէք զերկիր ,,: . . . Այս փչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կեանս, զի նա է մայր ամենայն կենդանեաց ,,. Այս դարձեալ (Պօղոս. Ժե. 26.) “Ըստ ՚ի միջէ արկանէ զամենայն ազգս մարդկան բնակեալ ՚ի վերայ երեսաց ամենայն երկրի ,,:

Ասպա առաջին մարդ ՚ի ձեռանէ Աստուծոյ արարչագործեալ երկոքին նախածնօղք մարդկութեանս են Ադամ և Եւայ, և ՚ի նոցանէ սերեալ ամենայն ազգ մարդկան: Որ այս այսպէս ուսուցանեն սուրբ գիրք, և նաքօք եկեղեցի սուրբ:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ Ի

Առաւել ա. — ա. Սուրբ գիրք յայտնապէս երկուս աղգաբանութիւնս մարդկան աւանդեն. մի՝ յառաջին գլուխ Ծննդոց, զնախահօրն հետ անոսա. և միւս այլ ի գլուխն երկրորդ՝ զ'Ադամայ զնախածնողին եբրայեցւոց: Այլ և այլ երկաքանչիւրոյ ստեղծագործութեանցն են յարակից հանգամանք. յառաջնումն առու և էգ ի միասին ստեղծեալ, երկրորդումն Ադամ ևեթ, և ապա ի կողէ նորա Եւայ կին նորա կերպացեալ. առաջինն ի դրախտի, երկրորդն արտաքոյ դրախտի, և ապա եդեալ անդ: — բ. Եւ որ ինչ յաղագս Կայենի և Աբելի պատմին ի չորրորդ գլուխն, քաջ հատատեն զայս. զի Աբել հովիւ եր պահապան խաշանց, և յերեսաց իւց պահպաներ զայնս, յայտ է զի ոչ յազգականացն՝ այլ յօտարաց. — գ. Իսկ Կային երկրագործ էր, և առանց բահի և բրչի, կահուց և կազմածոց, չէ մարթ գործել զերկիր. ապա գոյին յայնժամ դարբինք, հիւսունք, և արուեստաւորք: — դ. Եւ դարձեալ՝ Կային անկեալ յերեսացն Աստուծոյ, ասէ. "Ամենայն որ գտանիցէ զիս, սպանցէ զիս": Իսկ Աստուած "Այդ նշան ի Կային, չսպանանել զնա ամենայնի՝ որ գտանիցէ զնա": (անդ. 15. 16): Եւ յայլ ումանց եր երկիւղ Կայենի, բայց յօտարազգի ծննդոց: — ե. Ի նոցանէ էած նա և իւր կին, և գործաւորս առ ի կառուցանել զքաղաքն՝ զոր յանուն որդւոյ իւրոյ Հնոքայ անուանեաց: — զ. Եւ այս ոչ ընդդէմ ելանէ սկզբնական մեզայ վարդապետութեան, զի միւսոյ աղգատոհմին զատակ կոչեաւ ի համայնաջինջ ջրհեղեղին:

Պե. — ա. Վասնզի համառօտիւ յառաջնումն գլխի անդ սպառեալ զստեղծումն Ադամայ, երկրորդումն ապա մանրապատում առնէ զյարակից հանգամանս ստեղծագործութեանն՝ առ ի բերել զհետ զանկումն Ադամայ: Երկոքին այդոքիկ նախահայրք հետանոսականն և եբրայական աղգաց՝ առասպելք են, հակառակ բովանդակ սուրբ գրոց, որ ամենայն ուրեք մի ևեթ նախահայր և նախածնող ընծայեն մարդկան աղգի: Եւ

զոր յառաջնումն գլխի լռե զվայր արարչութեանն, յերկրորդումն յաւելու՝ զի արտաքոյ դրախտին արարչագործեալ Ադամայ զնախաստեղծն, եդ զնոսա ապա ՚ի դրախտին. նոյնպէս և յայլս ՚ի յաւելուածոցն չիք ինչ գտանել հակառակ նախապատումն բանի:

— Բ. Պահպանութիւն խաշանց ոչ ՚ի գողոց միայն է զգուշանալ, այլ և ՚ի գազանաց. և արածել իսկ զխաշինս՝ պահպանութիւն է նոցա:

— Գ. Իսկ երկրագործութիւն ՚ի սկզբան անդ Ճարտարութեամբ և զօրութեամբ ընոյր զտեղի կահուց և զկազմածոց:

— Դ. Ետ միաբան կարծեաց ժամանակագրաց 125 ամք անցեալ էին ՚ի ստեղծմանէ աշխարհի մինչև ցեղբայրասպանութիւն Կայենի. յորում ժամանակի և այլ որդիք և դստերք ծնեալ էին Ադամայ, որպէս և յաւելուն պատմել սուրբ գիրք. Թերևս և Աբելի իսկ էին որդիք, յորոց խնամայր Կային: Պարձեալ և որպէս սուրբն Ամբրոսիոս ասէ, յիւրոց իսկ որդւոցն և ՚ի Թոռանց կասկածեր՝ Թէ գուցէ Հայրենի օրինակաւն ՚ի նոյն չարիս անկղիտանայցեն:

— Ե. Ի սկզբան աշխարհի, որպէս Հարք առհասարակ ուսուցանեն, վասն Հարկի սերնդեան ազգի մարդկան՝ օրէն եր եղբօր իսկ զքոյր ածել ՚ի կնութիւն. այլ որպէս ասացաք, մարթեր և Աբելի ունել յայնժամ դստերս: Իսկ զոր ասէն քաղաք, իմա բազմութիւն տաղաւարաց. այլ շինուածս իսկ եթէ կամիցիմք իմանալ, շինութիւն քաղաքին այնորիկ ըստ ժամանակագրաց պատահէ յետ ամաց իբր չորեքարիւրոց, յորս բազմացեալ էին մարդիկ:

— Զ. Ի արդապետութիւն սկզբնական մեղաց զամենայն ազգ մարդկան բռնանդակէ. վասն որոյ ոչ է մարթ համարել Թէ յայնկոյս ջրհեղեղին լեալ իցեն մարդիկ զերծք ՚ի մեղաց անտի, ուր ամենեքեան զպատուհաս այնր մեղաց կրեցին:

Աբել. Բ. ԱՀ և այլ տեսակս ազգի մարդկան գըտանեն կենդանաբաշխք զանազանեալս յատկութիւք. Ինչեւս երկուս տեսակս զանազանէ, խամաստնոց և ծակամարից. նոյնպէս և Ի իրէյ երկուս զանազանէ ՚ի սուր և ՚ի բութ անկեանէ դիմաց. Ցըմանէն մետա-

սան տեսակս, Պօրի Հնգետասան։ Եւ արդարև չէ մարթ միով նախահօր որդիս համարել զնախիկս, զցօրենսմարթս, զթզուկս, զՀսկայս, զագևորս, զնայատաբղէտս, զանմօրուս ամերիկացին, զտափագլուխ և զայլ այսպիսի տեսակս մարդկան։

Պե. Եղեն արդարև ի կենդանաբաշխից, որք առ ի մերժել զաստուածային յայտնութիւն՝ այլ և այլ տեսակս մարդկան ազգի զանազանեցին. այլ որպէս յառաջ պատահէ, ի զարգանալ պիտուիեանն՝ ծագր կացին։ Օ՛ի և ոչ մի ինչ տեսակարար զանազանութիւն գտեալ յազգի մարդկան կենդանաբանք առհասարակ յայտառնեն. և Ֆլուրանս յիւրում կենդանապատում մատենին զանտեսակ միութիւն մարդկային ազգի անժըխտելի փաստիւք իբրև բնագիտական հաւաստիս ցուցանէ։ Լիննէոս՝ի կարծիս լեալ զառաջինն, և ապա ինքնին իսկ մերժեաց զզանազանութիւն կրկին տեսակաց ազգի մարդկան. իսկ Պիւֆէյ, Ջրմուկն և Պօրի, զկերպարանաց մարդկեղէն մարմնոյ իմանան ասել տեսակս, զոր ցեղս մարդկային ազգի կոչեմք։ Իսկ եթէ այլազգ ինչ իմանայցեն, մոլորեալք յանդիմանին՝ի միաբան վճռոյ քաջահմուտ բնագիտաց։

Ագևորաց և խայտաբղետից և այլոց այսպիսեաց տեսակաց մարդկան առաստղեալք նշաւակեցան՝ի զարգանալ աշխարհագրական գիտութեան և՝ի դիւրել նաւարկութեան։ Ծղկաց և Հսկայից նկուն և բարձր հասակ, թէպէտ և առաստղեալխառն ստուարացուցեալ և այն, սակայն ըստ հմուտ կենդանաբաշխից՝ զօրութեան և տկարութեան նորին տեսակի են արգասիք։ Վեսս և ցօրենագոյն, գեղին և կարմիրերանգ, ի նահանգին և օդոց և ջուրց և կերակրոց զանազանութենէ գան յառաջ. զի՝ի տեղափոխել այնպիսեաց՝ տակաւ և գոյնք որդւոցն և թոռանց և թոռնէից փոխին։ Որպէս զի փոխանակ ցուցանելոյ այլ և այլ տեսակս ազգի մարդկան, միութեան նորա է ապացոյց զանազանութիւն գունոյ և հասակաց, զի և թզուկք գտանին սեաւք և սպիտակք ըստ վկայելոյ քաջահմուտ բնագիտաց։

Ռաֆ. գ. Օ բնակիչս հեռաւոր կղզեաց և զերկրացունց Ամերիկայ՝ որպէս՝ի միոջէ ազգէ մարդկան մարթի իցէ համարել. զի իբր իսկ մարթ էր նոցա անցանել

անդը, մինչ չև ևս էին անդրուվարք ընդ անդունդս գնալոց. վասն որոյ առ նախնիս չէին ընդունելի հակոտնեայք. և սուրբն իսկ Գրիգորիոս ասէ. (յղ. յաղ. Ա. սաղմոս. գլուք ԺԷ. գլ. Թ.) "Իսկ այն զի հակոտնեայս կամ ընդդիմամարտունս լինել առասպելէն... ոչ ինչ օրինակաւ հաւատալ արժան է... և կարի յանտեղեակ է ասել, թէ ոմանք՝ի մարդկանէ զանբաւութիւն Աւկիանոս հատեալ՝ կարացին աստուստ յայն կողմն նաւարկել հասանել, որով անդանօր ևս մարդկան ազգ՝ի միջ ջն անտի՝ի մարդոյն առաջնոյ առնուցու զհաստատումն.,:

Այս զի քաջայայտ է արդ հակոտնէիցն գոյութիւն, ապա և յայտ է նախահարս բազումս յայլ և այլ կողմանս երկրի ստեղծեալ Աստուծոյ, որպէս և կենդանիս ըստ նահանգաց այլ և այլ՝ որք այլուր չկարեն կեալ:

Գլ. Արդեօք և չիցէ մեզ սահմանել որմէ՞ օրինակաւ մարդիկ՝ի հեռաւոր կղզիս անդր երթեալ լցեն, այլ զուստի՞ անդր երթալ նոցին հաւատոյ առնեն բարբառոյ և կրօնական արարողութիւնք և աւանդութիւնք: Կարեմք դարձեալ՝ի հին աշխարհագրայ՝ զի Աթլանտիկա ոչ այսպէս հեռի էր յառաջագոյն՝ի ցամաքէ, այլ անձուկ ծովով անջրպետեալ Ասիոյ. և զինչ դժուարին էր մարդկան նաւաբեկութեամբ, կամ՝ի վարելոյ մրրկաց, և կամ գաղթականութեամբ իսկ անկանել անդր:

Այլ ինչ են զարմանք եթէ սուրբն Գրիգորիոս և այլք՝ի նախնեաց այնպէս ըստ այնմ ժամանակի գՀակոտնեայ իմաստասիրեին. զի այնպէս էր յայնժամ նաւարկել ընդ Աւկիանոս, որպէս արդ առ մեզ գնալ անդր օգաչու: Այսուհանդերձ որոյ բանք սրբոյ վարդապետին զայս գժուարութիւնն ևեթ ցուցանեն, և ոչ այլ ինչ ազգ մարդկան Հարկ առնեն դնել ընդդէմ աստուածային գրոց, որպէս և՝ի կարգէ բանից իսկ նորա յայտ է:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Քաղաքս բնութեան մարդոյ, անհիբակաւորութեան և անմահութեան:

Որ ինչ զատեղծմանէ մարդոյ ՚ի մովսիսական գրոց ասացաք, առաւել ծանուցանեն զընութիւն նորա քան զամենայն Հառս իմաստասիրաց: Ասուրք գիրք զանազանեն ՚ի մարդն զմարմին և զՀոգի. զմարմին՝ զոր ստեղծ Աստուած ՚ի հողոյ, և զՀոգի՝ զոր ոչ ՚ի նիւթոյ արար, այլ յիւրմէ էտ փչումն կենդանութեան՝ որ որոշէ զմարդ յանբանից, և առնէ զնա պատկեր Աստուծոյ՝ տալով նմա իմացականութիւն: Այլն գիրք ուսուցանեն՝ զի կարող է մարդ ընտրել ընդ բարին և ընդ չար, իմանալ զգործս ամենակալին, փառաւորել զանուն նորա, առնել զօրինս նորա կամ անօրինել, որպէս ասէ. (Ելից. ԺԷ. 1.) "Ցեր հաստատեաց ՚ի հողոյ մարդ... ըստ պատկերի իւրոյ արար զնոսա: Եդ զահ նորա ՚ի վերայ ամենայն մարմնոյ, և տիրել գազանաց և թռչնոց. խոյհուրդ և լեզու և աչս և ականջս և սիրտ էտ, իմանալ նոքօք:... Յաւել նոցա գիտութիւն և օրէնս կենաց էտ նոցա ՚ի վիճակի. ուխտ յաւիտենից հաստատեաց ընդ նոսա, և զդատաստանս իւր եցոյց նոցա... և ասաց նոցա, զգոյշ լերուք յամենայն անիրաւութենէ,,: Այս դարձեալ. (Յեր. ԼԲ. 8.) "Ոգի է մարդկան և շունչ ամենակալի, որ ուսուցանէ,,: Եդ այս ամենայն անկ է իմացական և անձնիշխան էակի, և յայտ առնէ՝ զի է մարդ իմացականութիւն միացեալ ընդ մարմնոյ այնու սերտ կցորդութեամբ, զի է ընդ նմա անձն մի: Ասաւ զՀետ գայ, զի Հոգի որիշ է ամենևին ՚ի նիւթոյ և անմահ, և զի ՚ի քակտել նիւթական մարմնոյն՝ անքակտելի և անեղծ մնայ Հոգին, ըստ այնմ. (Ժող. ԺԲ. 7.) "Այս դարձցի Հողն յերկիր, որպէս և էրն. և Հոգին դարձցի առ Աստուած՝ որ ետն զնա,,:

Ի Հոգւոյ և ՚ի մարմնոյ Հաստեալ է մարդ. կրկին գոյացութիւնք են ՚ի նմա իրապէս զանազանեալք յիրեարաց. Հոգի ոչ է մարմին մարդոյ, և ոչ մարմինն Հոգի

նորա։ Այլ ինքն նիւթական ինչ էր հոգի և եղծանելի ընդ մարմնոյ, պարտ էր ասել զնա՝ի պատկեր անքանիւց լեալ քան ըստ պատկերի Աստուծոյ։ “Սակայն մարդ, ասէ Պիւֆոն, այնչափ գեր՝ի վերոյ է բնութեամբ քան զանբանս, զի պարտ էր հանգոյն նոցին անխմաստ գոլ առ՝ի կարելոյ զերկոսին ընդ միմեանս շփոթել,,։

Ընդնիւթականութիւն մարդկային հոգւոյ ոչ միայն՝ի սուրբ գիրս է հաստատեալ, և ուսուցանէ մեզ զայն սուրբ եկեղեցի, այլ և բանն և ամենայն ազգաց հաւատք հաստատեն զնոյն։ Անդէպ՝ի սկզբնական աւանդութենէ համարիցիմք զայն, թէ՝ի ներքին ըզգացմանէ, և թէ՝ի խելամտութենէ գործոց մերոց, չէ ինչ փոյթ. այլ ընդդէմ ոչ յերեւոյնն ևս համարիցիմք։ Եվ իսկ լեալ էին իմաստասէրք, ոչ ոք յազգաց և ոչ ոք մարդ բանաւոր համարէր կարել նիւթոյ խորհել. հակառակ եպիկուրեան իմաստակութեան՝ յամենայն ժամանակի և ամենայն ուրեք զօրացան տիրեցին հաւատք աննիւթականութեան խորհօղ էակի։ Այս իմաստասէրք գրեթէ առհասարակ, Պիւթագորաս, Պլատոն, Արիստոտէլ, Քսենոկրատ, Փիլոլայոս, Արքիտաս տարենտացի, Ալարքոս, Կիկերոն, Պլուտարքոս, Ֆռնգիոս և Պորփիւր, Հաւատցին զաննիւթականութենէ հոգւոյ։

Ընդ փոքր ի շատէ յինքն դարձուցեալ տեսանէ մարդ յանձին զգօրութիւն ըզգալոյ, խորհելոյ, կշռադատելոյ, ընտրելոյ, տրամաբանելոյ, կամելոյ և գործելոյ ըստ կամի։ Արդ այս ամենայն զօրութիւնք չկարեն կալ ընդ էական յատկութիւնս նիւթոյ. զի մարմին, թէպէտ և ամենանուրբ, ունի տարածութիւն և մասունս, վասն որոյ և բաժանելի է. իսկ իմացական զօրութիւնք մարդոյ, խորհուրդ և դատումն և ներգործութիւնք հոգւոյ են պարզք և անբաժանելիք. զի ո՞ իշխիցէ ասել զկէս կամ զերիր մասն խորհրդոյ կամ դատման իւրոյ, կամ մասն ինչ՝ի կամաց և ընտրութեան իւրոյ։ Այսպա օրէնն զօրութիւնք հոգւոյ՝ խորհել, կշռադատել, ընտրել, և կամել՝ չեն ընդունակ քանակի և մասանց, և չկարեն յառաջ գալ՝ բայց միայն՝ի պարզ և՝ի հոգեղէն էակէ, որ՝ի պատկեր Աստուծոյ իցէ լեալ ջունչ կենդանի։

Աստի զհետ գայ և անմահութիւն հոգւոյ. զի հոգի անխիւթական պարզ և անբաժանելի չկարէ երբեք նեղքոյ անկանել ապականութեան մարմնոյ: Ա՛ւ զարձեալ՝ զի՛ պատկեր Աստուծոյ արարեալ է և առ այլ կեանս սահմանեալ, ուր արդարոց վարձք և անխրատաց ճնոյ պատուհաս, վասն այնորիկ հաւատք անմահութեան հոգւոյ եղեն յամենայն ժամանակի առ ամենայն ազգս: Այսպէս հաւատացին նահապետք, այսպէս իսրայելացիք, այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից, և հեթանոսք անգամ կռապարիշտք: Ընդէ՞ս հասարակաց եղեն այս հաւատք, որպէս այն զի գոյ Աստուծոյ՝ վրէժխնդիր անխրատութեան և վարձատու առաքինութեան:

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յադագս թէ յորմէ պայմանի առեղծաւ մարդ:

Պարտ էր արարչին, զի ստեղծանելն զմարդ՝ զի պատկեր իւր, առնել զնա ընդունակ երջանկութեան: Այլ երջանկութեան արարածոյ աստիճանք են. Աստուծոյ ևեթ պահեալ է երանութիւն անպայման: Մարդոյ, զի գաղն՝ զի գոյութիւն՝ որ ինքնին իսկ երջանկութիւն իմն է, զմի ինչ օրէն էր պահանջել յարարչէն. այսինքն մի՝ զի հարկէ, այլ՝ զի կամաց ևեթ կարել նմա թշուառանալ. և զոլ այնպիսի, զի ընտրելի լինէր նմա էութիւն քան զոչէութիւն: Այս երջանկութիւնս երկուս զանազանելի է, բնական և գերբնական: Բնական՝ որ անկ է բնութեանս մերում, և ընդ զկարօտութիւն առնա, և սահմանի՝ զի վայելումն գերագոյն բարւոյն ոչ անմիջաբար, այլ առաւել կամ նուազ թերութեամբ: Իսկ գերբնական՝ որ առաւելու քան զկարօտութիւն բնութեան, և զոր ոչն կարէր մարդ պահանջել յարարչէն՝ զի՛ ստեղծանելն իւրում. այս ինքն է անընդմիջ վայելումն Աստուծոյ, և ակն յանդիման տեսութիւն նորա:

Զանազանութենէ աստի զհետ գան այլ և այլ պայմանքն, յորս մարթ էր Աստուծոյ ստեղծանել զմարդ. այսինքն՝ զի պայման պարզ բնութեան, և՝ զի պայման

սկզբնական արդարութեան։ Յառաջնումն վայելէր մարդ զերջանկութիւն եւ էր բնական, ներքոյ անկեալ ցանկութեան եւ ցաւոց եւ մահու. յերկրորդումն սահմաներ յերջանկութիւն դերբնական՝ ի ձեռն սրբարար շնորհայ՝ որ աստուածահաճոյ կացուցանէր զնա, եւ շնորհեր նմա իրաւունս դէմ յանդիման տեսութեանն Աստուծոյ՝ ի յարատեւէն՝ ի շնորհս անդ։ Իսկ սկզբնական արդարութեան կոչուէր էին եւ ձիրք ինչ պատկանեալք առ՝ ի նոյն երանութիւն. այսինքն գիտութիւն խորհրդոյ եւ կատարելութեանցն Աստուծոյ, ազատութիւն յանկարգ կրից ցանկութեան, եւ անմահութիւն զերծ յաղետից կենցաղոյս։

Ուղղափառ հաւատք ուսուցանեն, զի յայսմ երկրորդ պայմանի կացուցեալ էին նախածնօղք մեր, այսինքն՝ ի սկզբնական արդարութեան, զերծք՝ ի թշուառութեանց մարմնոյ եւ հոգւոյ՝ ընդ որովք պատուիրանազանցութեամբն անկաւ, որպէս սահմանեալ ժողովին տրիդենտեան. "Որ ոք չխոստովանեսցի, զի նախաստեղծ մարդն Ադամ յանցանելոյ զպատուիրանաւն Աստուծոյ՝ ի դրախտին՝ կորոյս իսկ եւ իսկ զսրբութիւն եւ զարդարութիւն, յոր հաստատեալ էր, եւ զի պատուիրանազանցութեամբն այնուիկ անկաւ՝ ի ցասումն Աստուծոյ, վասն որոյ եւ՝ ի սպառնացեալն նմա Աստուծոյ՝ ի մահ, եւ հանդերձ մահու՝ ի գերութիւն սատանայի՝ որ յայնմհետէ զիշխանութիւն մահուն կալաւ, եւ զի Ադամ նուիւին յանցանօք փոխեցաւ ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ՝ ի յոտնեցոյն պայման, նզովեալ լիցի,,։

Եւ զայս ամենայն ուսուցանեն սուրբ գիրք. զի վասն սկզբնական արդարութեանն ասեն (Ժող. է. 30.) "Ստուգապէս Աստուած զմարդն ուղիղ,,։ Եւ դարձեալ (Ժամաւո. ը. 23.) "՝ի պատկերը բարերարութեան իւրոյ արար զնա,,։ Եւ գիտելի է զի բառն եբրայական ուղիղ, նշանակէ զսրբութիւն, եւ յաձախ ուրեք զսրբութենէ Աստուծոյ ասացեալ է։

Եւ առաքեալն ասէ (Եփես. դ. 22.) "Զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյն հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ ճշմարտութեանն,,։ Եւ դարձեալ (Կող. գ. 9.) "Երկացարուք զհին մարդն գործովք իւրովք, եւ զգեցարուք զնորոգեալ՝ ի

գիտութիւն ըստ պատկերի արարչին իւրոյ ,, : Ընդ որ նորոգին՝ հարկ է թէ իցէ լեալ երբեմն այնպիսի . և քանզի նորոգութիւնն պատուիրեալ յառաքելոյ՝ է զգեներ զմարդն նմանեալ Քրիստոսի սրբապարտ ընդհօք, ապա այնպիսիք երբեմն էաք ի մարդն առաջին :

Ալ կայեն գիրք և յաղագս գիտութեան նախասահմանեցին, զի ասեն (Եբրա . ԺԱ . 6 .) “ Ձեր հաստեաց ի հողոյ մարդ , գիտութեամբ հանձարոյ լցոյց զնոսա , և զբար և զաւար ի ներոյ նոցա ,, :

Եւ գարձեալ նոյն բան առաքելոյն . “ Ո՛ դեցարուք զնոր մարդն նորոգեալ ի գիտութիւն ըստ պատկերի արարչին իւրոյ ,, : Յայնքան ի գիտութիւն աստուածայինն , ի հաւատս և ի պաշտօն Աստուծոյ , ի ճանաչումն խորհրդոյն Քրիստոսի , ի խորհել զաստուածոյն և զնորայն խնդրել , որպէս բացատրէ յետոյ նոյն ինքն առաքեալն :

Ալ կայեն և ազատութեան նոցա յախտաւոր ցանկութեանց , ուր ասեն . “ Եւ էին երկոքեան մերկ , և ոչ ամաչէին ,, : Եւ գարձեալ “ Ո՛ պատմեաց քեզ թէ մերկ ես , բայց եթէ ի ծառոյն՝ յորմէ պատուիրեցի քեզ անտի ևեթ չուտել՝ կերար արդեօք ի նմանէ ,, : Յորոց քաջայայտ է , զի պատուիրանազանցութեամբն տիրեաց ի վերայ նոցա ցանկութիւն :

Իսկ անմահութեան նոցա վկայեն յառեալն . “ Յորում աւուր ուտիցէք ի նմանէ , մահու մեռանիցիք ,, : Ապա ուրեմն եթէ ոչ կերեալ էր նոցա , ոչ մեռանէին . և մեղայ նոցա ընդ եկն մահ . վասն որոյ ասէ առաքեալն (Հռո . Ը . 23 .) “ Ո՛ի թոշակ մեղայ մահ է ,, : Եւ գարձեալ (անդ . Ե . 11 .) “ Ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին , և ի մեղայ անտի մահ ,, :

Եւ իմաստութիւնն ասէ (ա . 13 .) “ Ո՛չ Աստուած զմահ ոչ արար . . . զի Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութեան . . . նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ ,, . (անդ . բ . 23) : Ալ ասն որոյ Ժողովն Կարթագինեայ սահմանեաց ընդդէմ պելագեանց . “ Որ ոք ասիցէ զնախահարդն Ադամ մահկանացու ստեղծեալ , որպէս զի եթէ մեղանչէր և թէ ոչ՝ պարտ էր նմա մեռանել մարմնով , այսինքն բաժանել հոգւոյն ի մարմնոյն , ոչ ըստ մեղացն՝ այլ ըստ հարկի բնութեան իւրոյ , նզովեալ լիցի ,, :

Աւ ընդ մահու իմանալ է զամենայն աղէտս կենցաղոյս, զորս Աստուած ՚ի վերայ էած մեղայ նախաստեղծին՝ թէ "Անիծեալ լիցի երկիր ՚ի գործս քո, տըրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենցաղոյ քոյ... քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո,,: Աւ կնոջն՝ թէ "Բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո և զհեծութիւնս քո, տրտմութեամբ ծնցիս որդիս,,:

Օգայս ամենայն վկայութիւնս սուրբ գրոց այսպէս իմանան սուրբ Հարք միաբան, և սոքօք զնախասահմանդոյն զսկզբնական արդարութիւն ցուցանեն: Այսպէս սուրբն Գոսանինոս ՚ի գիրսն յաղագս քաղաքին Աստուծոյ. (գիրք ԺԴ. գլ. ԻԳ.) "Այլ արդ կեայր մարդն ՚ի դրախտի որպէս կամէր՝ զոր Աստուծոյ հրամայեալ էր. կեայր զուարճացեալ Աստուածո, ՚ի բարւոյ անտի բարեգործեալ. կեայր անկարօտ իմիք, իշխան գոլով այնպիսի կեալ միշտ: Վերակուր առ ձեռն կայր, զի մի քաղցնուցու. ըմպելի, զի մի ծարաւիցի. կենացն փայտ, զի ծերութեամբ մի լուծանիցի: Ոչ մի ինչ ախտ ապականութեան ՚ի մարմնի անդ կամ ՚ի մարմնոյ՝ վիշտս երբեք բերէր ՚ի նորայն զգայութիւնս: Ոչ կայր երկրին չել, ոչ ՚ի ներքինս ախտակրութենէ իմեքէ, ոչ յարտաքին դիպմանց. քաջողջութիւն կատարեալ ՚ի մարմնի, համակ անդորրութիւն ՚ի հոգւոջ,,:

"Աւ զոր օրինակ ՚ի դրախտի անդ ոչ տօթ էր և ոչ ցուրտ, նոյնպէս և ՚ի բնակիչ նորա ոչ մի ինչ ներհակ բարւոյ կամացն պատահէր ՚ի ցանկութենէ կամ յերկիւղէ. ոչ գլխավիշտ տրտմական ինչ, և ոչ վայրապար խընդալի. զուարթութիւնն Աստուածային միշտ առ ՚ի Աստուածոյ, և ՚ի նմա եռայր սէր ՚ի սուրբ սրտէ և յանկեղծաւոր հաւատոյ: Ծակցայն առ իրեարս հաւատարիմ կենակցութիւն մաքուր սիրով, մտաց և մարմնոյ կատարեալ միաբանութիւն, և անաչխատ պահպանութիւն պատուիրանին: Ոչ խոնջումն հարկ առնէր ՚ի պատարկանալ, ոչ քուն ներգեր յակամայս: Յայնքան յաջողուած իրաց և ՚ի բարերջանկութեան մարդկան կասկածել իսկ օրէն ոչ է, թէ չմարթէր լինել զաւակասերութեան առանց ախտի տուփանաց,,:

ԱՌԱՔՈՒԹԻՒՆ

Ա. Պետ. Ա. Ովկիանոսեան զայդոսիկ սուրբ գրոց մարթ է իմանալ զբարոյական արդարութենէ և զսըրբութենէ, յոր Աստուած ըստ բնական և ըստ բարոյական կազմուածոյն հաստատեալ էր. վասն որոյ ոչ միայն չէ այն արգասիք, այլ և պատճառ է սրբարար շնորհաց։ Քանզի զգայութեանցն հպատակութեամբ բանին առաւածահաճոյ էր մարդ. զի "Տեսեալ Աստուած զամենայն զոր արար, և ահա բարի են յոյժ"։ Բայց բարեհաճութեան Աստուծոյ հաստատեալ են սրբարար շնորհք. զի նուաւ սիրելի լինի մարդ Աստուծոյ, և Աստուած տայ նմա նպաստս գերբնականս առ՝ի գործել զբարին։

Պե. Այդ իմացուած բանից սուրբ գրոց՝ հակառակ է իմացուածոյ, զոր՝ի սկզբանէ հետէ ունի աւանդութեամբ սուրբ եկեղեցի, և զոր սահմանեաց երկրորդ ժողովն արաւսեան։ Ով հակառակ է և բանին՝ զոր Յովհաննէս ասէ. "Բարի Աստուած զմարդն ուղիղ". զի որպէս՝ի վեր անդր ասացաք, ուղղութիւնս այս ոչ զբարոյականն և ևթէ սրբութիւն նշանակէ, այլ և զգերբնականն. զի երբայականն բառ ստէպ ասացեալ է և զԱստուծոյ՝ի սուրբ գիրս։ Վասն որոյ սուրբն Գրիգորիոս՝ի բան առաքելոյն՝ "Ով գեցարուք զնոր մարդն, որ ըստ աստուծոյն հաստատեալ է", ասէ. "Զհա զոր կորոյսն Ադամ մեղօք"։

Այս թէպէտ ոմանք՝ի հնոց դասականաց համարեցան նախաստեղծիցն՝ի միասին ընդ ստեղծմանն ընկալեալ Աստուծոյ զսկզբնականն արդարութիւն՝ որ չէ ինչ ընդդէմ ուղղափառ հաւատոց, այլ զարդարութիւնն զայն համարել պարզապէս բնական և բարոյական՝ ընդդէմ է. զի անբաժանելի՝ի ստեղծմանէ մարդոյն կացուցանէ զսկզբնական արդարութիւն նորա և զգերբնական շնորհս, իբր թէ չէր մարթ Աստուծոյ ստեղծանել զմարդ առանց այսոցիկ, որ պէղապետանցն է մոլորութիւն, և դատապարտեալ ընդ վարդապետութիւնս Պայի՝ որ ասէր. "Մեղաւորութիւն մարդոյ (այսինքն ձիրք նորա կորուզք սկզբնական արդարութեանն)

չէղև անպարտական ամբարձումն մարդկեղէն բնութեան, այլ բնական պայման նորա ,,. և թէ "Պատ է վարդապետութիւնն այն՝ թէ մարթ էր Աստուծոյ ստեղծանել զմարդ և հաստատել առանց սկզբնական արդարութեան ,,:

Պարթեւ մարթէր նախաստեղծիցն առանց սրբարար շնորհայ հաճոյ լինել Աստուծոյ որպէս զայլս յարարածոց ըստ բնական կարգի, այլ ոչ ըստ գերբնականին՝ զորմէ ինդիրս մեր է. զի ըստ այսմ ևեթ շնորհէ Աստուած մարդոյ նպաստս գերբնականս: Օ՛ի որպէս ժողովէն տրիդենտեան ընդդէմ նորաղանդիցն սահմանեաց, սրբարար շնորհք հաստատեալ էն՝ի սերն Աստուծոյ հեղեալ՝ի սիրտս այնոցիկ՝ որք արդարանան կամաւոր ընդունելութեամբ շնորհացդ, որով մեղաւորն լինի արդար, և ատեցեալն Աստուծոյ սիրելի նմին:

Ասորկ. Բ. Աբաքեանն ասէ. "Երկրորդ Ադամ՝ի շունչ կենդանի, երկրորդ Ադամ՝ի հոգի կենդանարար ,,. (ա. կոր. ԺԵ. 45): Ապա նախաստեղծն Ադամ ոչ հաստեցաւ՝ի հոգի կենդանարար, այսինքն՝ի սրբարար շնորհս: Պատճառն որոյ սուրբն Քրիսոստոմոս ասէ բազում ուրեք՝ ոչ վաղվաղակի ընկալեալ նախաստեղծին զհոգի շնորհաց, այլ զհոգի բանական:

Պե. Աբաքեան խօսի անդ զհանգամանաց մարդկեղէն մարմնոյ յառաջ և յետոյ քան զյարութիւն. և այս յայտ է թէ յառաջարկութենէ և թէ՝ի կարգէ բանիցն: Քանզի զյարութիւնն Քրիստոսի անդր ածէ իբր պատճառ և օրինակ յարութեան մերոյ, և այլ և այլ հանգամանաց մահկանացու և փառաւորեալ մարմնոյ:

Ասկ՝ի բանից սրբոյն Քրիսոստոմոսեայ ոչ ինչ աւելի մարթ է զհետ բերել քան զայն, զի համարի նա զԱդամ ըստ բնութեան ևեթ ստեղծեալ Աստուծոյ, և ապա ընդ սրբարար շնորհս և զայլ պարգեւս ընկալեալ. քանզի ասէ ընդդէմ մանիքեացոյ (՚ի գէս ծննդոց. ը. 10.) "Եւ եւս պարտ է մեզ իմանալ զմարդն հոգեւոր՝ ՚ի հոգի կենդանարար, այլ դեռ եւս զայն՝ որ ՚ի շունչ կենդանի. զի հոգեւոր յայնժամ եղև, յորժամ ՚ի դրախտն այսինքն յերջանիկ կեանս հաստատեցաւ, և ղպատուիրան կատարելութեանն ընկալաւ՝ առ ՚ի հաստանել բանիւն Աստուծոյ ՚ի կատարումն ,,:

Ա՛ռիկ. Գ. Ել է մարթ միաբանել զգիտութիւն և զբրքութիւն Ադամայ ընդ անկումն նորա, որ տգիտութեան և հրապուրանաց զգայութեան է ցոյց: Այս գարձեալ՝ ի վեր քան զպայման բնութեանս է անմահութիւն և զերծ՝ ի ցաւոց և յաղետից գոլ:

Պե. Գիտութեան ընդ մեզս միաբանելոյ չկիք ինչ գժուարութիւն. իսկ զկորստեան չնորհացդ զաղետալի փորձ տեսանեմք՝ ի բազումս յարդարոց. զի սրբարար չնորհքդ ոչ անմեղանչականս կացուցանեն զմարդիկ: Այլ Ադամ ոչ՝ ի տգիտութենէ մեղաւ, և ոչ՝ ի հրապուրանաց զգայութեան, այլ՝ ի հպարտութենէ և առ՝ ի հաձելոյ զԱյայ. իսկ Այայ պատրեալ՝ ի սուտ խոստմանէ օձին: Արդարեւ վարդապետութիւն քաջ իսկ գեր՝ ի վերոյ քան զպայման մարդկեղէն բնութեան համարի զանմահութիւն և զայլան ևս ձիրս. և վասն այնորիկ ուսուցանէ յառաջիկայ պարզևացն Ոգւոյ յաւելեալ զայնս, և ոչ՝ ի բնութենէ մարդոյ:

Ա՛ռիկ. Դ. Նախաստեղծիցն ազատութիւն յախտից ցանկութեան յառաջ քան զպատուիրանազանցութիւնն ոչ է յայտ՝ ի բանից այսր սուրբ գրոց. զի չամաչել նոցա ընդ մերկութիւն իւրեանց յառաջ գայր՝ ի պայմանէ տղայութեան՝ յորում հաստեցան, որպէս և տղայք չամաչեն. իսկ յետ յանցանացն ամօթ, զի պղտղոյն ձաշակմամբ բացաւ բանականութիւն նոցա: Բայց զի ցանկութիւն բարւոյ ինչ է բնութեան, յորմէ ոչ է պարտ զրկեալս համարել զնախաձնօղս:

Պե. Ընդհունք իրացն ցուցանեն, զի Ադամ ոչ՝ ի պայմանի տղայութեան էր ստեղծեալ. զի եթէ չէր նորա ազատ բանականութիւն, և ոչ պատուիրանազանցութիւն նորա լինէր նմա՝ ի մեզս: Այս ոչ տղայոյ էին պատասխանիքն, զոր ետ Այայ օձին. և ոչ տղայոյ մարթէր այնու իմաստութեամբ անուանս դնել կենդանեաց: Այս անտեղի իսկ է՝ ի ձաշակմանէ պտղոյն համարել զբացումն բանականութեան նոցա:

Իսկ ցանկութիւն հպատակեալ բանիւն բարւոյ ինչ է, և ոչ զայնմանէ է մեզ խնդիրն, այլ որ հակառակ բանիւն ախտաւոր ցանկութիւնն է:

Ա՛ռիկ. Ե. — ը. Ո անմահութիւն նախաստեղծիցն երկարայաւէտ կեանս իմանալի է, որպէս և Յովհաննու

՝ի հրէական հնախօսութեանն իմանայ. (գիրք ա. գլ. ա)։ Իսկ զսպառնալիսն Աստուծոյ՝ կամ զհոգևոր մահուանէ է իմանալ, և կամ զհամառօտելոյ կենաց։ — բ. Այս ցուցանէն և ուսանելոյ և ընկալելոյ պէտք նախաստեղծիցն. և ծառն իսկ կենաց, որ առ՝ի կազդուրել զգօրութիւն մարդոյ՝ դեղոյ նմն օրինակաւ տնկեալ էր՝ի դրախտին։

պխ. — ա. Այսրբ գիրք ոչ այլ ինչ, քայց զանմահութիւն իմանան յասելն՝ զի Աստուած զմահ ոչ արար, և զի մեղք մուծին զայն յաշխարհ, և գարձեալ թէ արար Աստուած զմարդն յանեղծութեան։ Իսկ Յովսեպոս առ՝ի չնթերել և ընդ միտ մտանել հռովմայեցւոց բազում և այլ ինչ մեկնութիւնս հակառակ իմաստից սուրբ գրոց կամակորեաց։ Ի կարգէ բանիցն իսկ Աստուծոյ յայտ է, զի սպառնալիքն այն ոչ զհամառօտելոյ կենաց էին. քանզի ասէ. "Հող էիր, և՝ի հող դարձցիս,,։ Նմա առաքեալն յայտնապէս զմարմնոյ մահուանէ ասէ լեալ հետևանս մեղաց (Հռ. ը. 10.) "Մարմին մեռեալ է վասն մեղաց,,. Նմա Հարք առհասարակ այսպէս զաստուածառաստ սպառնալիսն իմանան. և Աթանաս Թարգմանութիւնն այսպէս ունի. "Յորում աւուր ուտիցես, մահկանացու եղիցիս,,։

— բ. Նախաստեղծիցն կարօտութիւն ուտելոյ այնպիսի էր, զի Հաշակմամբն ապրելոյ էին՝ առանց ցաւոց և ախտակրութեանց. ապա՝ի կարօտութենէ անտի ոչ զհետ գայ մահկանացու գոլ նոցա։ Իսկ ծառոյն կենաց զօրութիւն ոչ բնական արդասիք էին ըստ դեղոց, այլ գերբնական զօրութիւն աստուածաձիր՝ Հաշակելեացն զպտուղ նորա տալոյ անմահութիւն։

Ելք. ԻԲ. — ա. Զասպելք՝ որ յաւանդութիւնս աղգաց գտանին՝ որպիսիք էին արդեօք և աւանդեալքն՝ի Մովսիսէ, ոչ են պատմականք, այլ յօդուածոյք առ՝ի սիրելել զքշուառութիւն մտացածին պայմանօք կենաց անցելոյ կամ ապառնեաց. և ըստ անկրթութեան ժամանակաց և առասպելք յաձախեն։ — բ. Հարկ էր սկզբան մարդկութեանս զուրկ յամենայն քաղաքականութենէ և՝ի կրթութենէ գոլ. և կշիռ ոսկեղինիկն այն դար մտացածին Հանդիսի յայնմ իսկ ժամանակի՝ յորում կաղնւոյք պարենաւորէր մերկ և վայրենի աղգ մարդկան աղխկեր մարդկեղէն մարմնոց։

պէս. — ԲՐ. Աչալուրջ լինիլ ի զաւանդութիւնս պաշտպանել առաքելոցք, և այլ ինչ ստայօդել զայնոսիկ. և մանաւանդ՝ ի խնդիր մերս յայս չունին տեղի առաքելք։ Օ՜ի ոչ եթէ տարտամ անստոյգ և տեղական ինչ աւանդութիւնք են մերքս, այլ բացայայտ և մանրապատում զսկիզբն մարդկութեանս աւանդեն հաստատուն և համաչխարհական աւանդութեամբ։ Ի մի վայր աճեալ որ ինչ Հնդիկք և Յոյնք, Ասիկք և Եգիպտացիք յաղագս առաջնոյ զարուն աւանդեցին, զնախամարդոյն պայման կենաց և զանկումն նորա հանդերձ հետևանօքն, գոգցես իմն զմովսիսականն պատմութիւն առաջի առնեն։ Արդ այս ամենայն ազգք, տեղեաւ և ժամանակաւ հեռաւորք՝ ի միմեանց, չկարէին ստայօդել աւանդութիւն այսպիսի, ոչ միայն ըստ էութեանն՝ այլև ըստ մանրապատում հանգամանացն չար և նման։

— ԲՐ. Ոչ միայն արտաքինոյն պատմիչք Հեսիոդոս և Հերոդոտոս և Վիոդոր սիկիլիացի, որք զսկզբան մարդկութեանս պատմեն զգձուձ պայման, այլ և ինքն Մովսէս՝ որ զգիւտս գլխաւոր արուեստից և գբաղաքաց շինութեան զսկիզբն և զտակաւ զարգացումն քաղաքականութեան աւանդէ, միաբանին՝ ի նկարագրել զանմեղութիւն և զերջանկութիւն զսկզբնական պայմանի մարդոյս։ Արդ զայս կարծեցեալ հակասութիւն նոցա, որով ինքեանք ինքեանց բանիցն երևին չերթալ զհետ, ոչ այլազգ է միաբանել՝ բայց զանազանութեամբ ժամանակի յառաջ և յետոյ քան զանկումն մարդկութեանս։

Մարդակերութիւն և անասնամիտ ապրելութիւն չէ և չէ նախնոյ զարու մարդկութեանս պայման, որպէս հնագոյն քան զամենայն պատմիչս Մովսէս վկայէ. այլ յառաջութիւն է այն մարդկայնոյ բնութեան, և անտաւաբնակ մարդկան օտարախորթ վայրենութիւն։ Օ՜ի որպէս է զարգացումն մարդկութեան և յառաջադիմութիւն, նմանապէս և նահանջումն. զայս՝ ի միա առնուլ է և յայժմու հանգամանաց ազգաց ոմանց, որք երբեմն՝ ծայրագեալք՝ ի քաղաքականութեան էին, և դիպատացիք և քաղդէացիք և Հելլէնք. և որպիսիք երբեմն՝ ի խուժել բարբարոսաց՝ ի Հռոմ, եղեն և Հռոմայեցիք։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Չի մարթ էր Աստուծոյ առնել զմարդ ի բնական ևեթ պայմանի, առանց շնորհիւոյ ևմա գերբնականաւն արդարութիւն, այսինքն զարբաբար շնորհս:

Ապաքէն կարօղ էր Աստուած ստեղծանել զմարդ ի պայմանի ևեթ բնութեան, և չէր այս հակառակ՝ ոչ արդարութեանն Աստուծոյ, ոչ բարութեան, ոչ իմաստութեան, և ոչ սրբութեան: Արդ առանց մեղացյ կարէր գոլ երջանիկ բնական ևեթ երջանկութեամբ, և չունէր ինչ բողոքել զարարչէն. զի ոչ այլ ինչ պարտ էր Աստուծոյ ի ստեղծանելն զնա, բայց առնել այնպիսի՝ զի լաւագոյն լինէր նմա գոլ քան ոչ գոլ, այսինքն զի չլինէր նմա ընտրելի՝ կալ միայն յոչնչութեան: Ապարտէր ինչ նմա Աստուած բայ ի կարևորաց բնական պայմանին՝ յորում Թէ ստեղծանէր. որ ինչ աւելի քան զայն ընկալաք ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ, Աստուծոյ բարութեանն է պարգև. և եթէ պարգևս այս է այնպիսի՝ որում չկարէաք բնականապէս հասանել, որպիսի է սրբարար շնորհն՝ որ առնէ զմեզ ժառանգս արքայութեան երկնից, է պարգև գերբնական և յատկապէս շնորհ: Այլ քաջայայտ է զի մարդ ի բնական պայմանի չկարէր պահանջել ոչ զգեմ յանդիման տեսութիւն Աստուծոյ, և ոչ որ ինչ պատկանին յայն գերբաբառն երանութիւն: Նոյնպէս և իշխել ի վերոյ ըզգայութեանց, և զօրութիւն պատասխարելոյ ի ցաւոց և ի մահուանէ, պարգևք Աստուծոյ էին շնորհեալ նահատեղծիցն՝ ոչ ըստ պարտեաց: Արհէր Աստուծոյ ստեղծանել զնոսա ի բնութեանն ևեթ պայմանի, առանց տալոյ նոցա աւելի ինչ քան զկարևորս վախճանին իւրեանց, այսինքն բնական երջանկութեան: Այն ոչ ոյ մարդ յանկանելն մեղաւք ի սկզբնական արդարութենէ՝ կորոյս ևեթ որ ինչ ձրի պարգևք նմա յարարչէն շնորհեալ էին. այսինքն զի, ի բայ առեալ զմեզս, ծնանի արդ մարդ՝ որպէս մարթէրն գալ ի գոյ յարար-

չէն առանց անմահութեան և առանց գոյց վերջ՝ ի ցանկութենէ։

Այս վարդապետութիւն ոչ պարզաբար ինչ կարծիք են թողեալ՝ ի կամ աստուածաբանից, այլ սահմանեալ յեկեղեցւոյ յաւուրս սրբոյն Պիոսի Ե. Պրիգոբի ԺԳ. և Ալբանոսի Ը. Հայրապետացն Հռովմայ, որք դատապարտեցին զհակառակ այսոցիկ վարդապետութիւնս՝ ի ժողովս։

Լութեր և ապա Պայ, Յանսենիոս և Պուէսնել զբերբառ ընդհատ, զազատութիւն՝ ի ցանկութենէ և զանմահութիւն հանդերձ յարակից ձրիւք այնպէս բնական համարեցան և պատկանեալս մարդկեղէն բնութեան, զի վիճեալ պնդէին թէ բնութիւն մարդոյ առանց այնոցիկ չկարէր գոլ կատարեալ և ամբողջ, և ոչ արդարութեանն Աստուծոյ և բարութեան մարթէր առանց այնոցիկ հաստել զմարդ։ Ասի զհետ բերէին՝ զի յայժմու պայմանին զրկեալ դատին մարդ՝ ի բնական բարւոյն, որպէս խաչն զի կաղ ծնանիցի կամ կոյր։ Ինպէս զի սկզբնական արդարութիւն հանդերձ յարակից ձրիւքն եթէ ունէր այժմիկ ընդհատեր, ոչ տիրապէս գերբնական ինչ զայն համարելի էր՝ այլ յեղանակաւ ինն, որպէս կուրի ընդհատեալ տեսութիւն։

Սակ ուղղափառ հաւատք զայս ամենայն ձիրս ընդ սրբարար ընդհատ ուսուցանեն գերբնականս, և ոչ պատկանեալս մարդկեղէն բնութեան. որպէս զի մարթէր բարութեանն Աստուծոյ և արդարութեան հաստել առանց այնոցիկ զմարդ, և զոր ետն՝ ի ձրի պարգեւաց իւրոց առատաձեռնեալ ետ։ Ոչ ետն որոյ մարդ յանկանել իւրում՝ ի սկզբնական արդարութենէն՝ ոչ ինչ յեսականաց բնութեան իւրոյ կորոյս, այլ որ ինչ՝ ի ձրի առատաձեռնութենէն Աստուծոյ ընկալեալն էր։ Ոչ եթէ ոչ՝ ի սկզբնական մեղս ծնանէր այժմիկ մարդ, լինէր գրեթէ որպիսի մարթէրն Աստուծոյ հաստել զնա առանց շնորհաց, առանց անմահութեան և առանց արդարութեան՝ ի ցանկութենէ։

Պրեթէ ասեմ, զի են յաստուածաբանից՝ որք ըստ պատշաճի սովորական տեսչութեանն Աստուծոյ համարին, թէ չէր մարթ Աստուծոյ հաստել զմարդ առանց ցանկութեանն հպատակելոյ բանին. թէպէտ և խոս-

տալանին՝ զի չպահանջէ զայն բնութիւն, և զի գերբնական էին ազատութիւն նորա ՚ի ցանկութենէ և յառակից նմին ձիրք։ Նոյնպէս այլք յաւելուն և ս, զի այժմու պայման անկելոյ բնութեանս, թէպէտ և ըստ էութեան նոյն ընդ այնմ՝ զոր մարթէրն Աստուծոյ հաստել ՚ի բնական պայմանի, այլ ըստ իմիք իմիք գտանի անկմանքն յոռեգոյն քան զայն։

Այս զի չէին անկ մարդկեղէնն բնութեան ձիրքս այսոքիկ՝ յայտ անտի է, զի բնութիւն մարդոյ որպէս կէնդանի բանական չպահանջէ այլ ինչ՝ քայց զբաւարն բնութեան իւրոյ, ուր սրբաւարար չնորհաց յարակից ձիրք ՚ի վեր են քան զբնութիւն։ Այսուհանդերձ՝ որ ՚ի մէջ մարմնոյ և հոգւոյ ստեպ յարուցեալ, ՚ի բնական կազմութենէ մարդոյ գայ յառաջ. զի մարմին ցանկայ զգալի բարւոյն, իսկ հոգի իմանալւոյն և հոգևորին։ Այս քանզի միացեալ են հոգի և մարմին ՚ի մի անձն, և զմիմեանց ուննին, ասեմ յառնէ ՚ի միջի նոցա պատերազմ. և ասեմ յայտ է մարդկեղէնն բնութեան չպահանջել ՚ի բնէ զազատութիւն այդպիսի ՚ի ցանկութենէ։ Զնոյն է ասել և զանմահութենէ և զազատութենէ ՚ի ցաւոց և յաղետից։ Վասնզի բնութիւն մարդոյ յայլ և այլ և ՚ի ներհակ տարերաց բաղադրեալ՝ ապականութեան և լուծման ներքոյ անկեալ է, որպէս բնաբանք առհասարակ վկայեն։ Արդ եթէ բնութիւն մարդոյ զձիրսդ զայդոսիկ ոչ պահանջէ, յայտ է՝ զի և ոչ յաստուածակոյս կողմանէ պահանջի տալ նմա զայնոսիկ. քանզի աստուած է Աստուած, և որպէս և որչափ ինչ կատարելութիւնս կամի՝ չնորհէ արարածոց ըստ իմաստութեան իւրում. և որ ինչ ՚ի վեր քան զոր պարտ է չնորհել բնութեան, ՚ի ձրի պարգևաց իւրոց առատաձեռնէ։

Այսոցիկ դատապարտեցան ՚ի սուրբ եկեղեցւոյ որպէս մոլորականք՝ վարդապետութիւնք Պայի և Յուէնեւեայ, որ են այսոքիկ։

“Այսպիսոյ բնութեանս ամբարձումն ՚ի հաղորդութիւն աստուածեղէն բնութեան՝ անկ էր ամբողջութեան սկզբնական իւրումն պայմանի, վասն որոյ և բնական ասելի է և ոչ գերբնական„։

“Ամբողջութիւն սկզբնական ստեղծագործութեան չեղև մարդկայնոյ բնութեանս ՚ի վեր քան զանկն իւր ամբարձումն, այլ բնական՝ պայմանին իւրում„։

"Ալ էր մարթ Աստուծոյ այնպիսի՛ ի սկզբանէ հաստեալ զմարդ, որպիսի ծնանի արդ ,,։

"Անմահութիւն նախաստեղծին չէր պարգև ընտրհաց, այլ բնական՝ պայմանին իւրում ,,։

"Աստ կարծիք են վարդապետաց, թէ մարթէր Աստուծոյ ստեղծանել զնախաստեղծն և հաստատել առանց սկզբնական արդարութեան ,,։

"Ընդ նորհք նախաստեղծին հեռևանք էին լինելութեան նորա և անկ բնական և անթերի ամբողջութեան նորա ,,։

Ի դատապարտութենէ վարդապետութեանցս այսցիկ յայտ է, զի հակառակն սոցին է ուղղափառ վարդապետութիւն։ Այսինքն զի սկզբնական պայման մարդոյ նախ քան զպատուիրանազանցութիւնն չէր անկ մարդկեղէն բնութեան, այլ գերբնական և ձրի պարգև էր. զի կարէր Աստուած ստեղծանել խոնարհագոյն զմարդ՝ ի պայմանի պարզ բնութեան, որպիսի գրեթէ են սերունդք իւր, արատ մեղացն՝ ի բաց բարձեալ որ յինքեանէ՝ ի նոսա ածանցեցաւ։ Այս զայս այսպէս ուսուցանեն սուրբ Հարք, մանաւանդ սուրբն Աթանաս՝ զորոյ զբանս՝ ի նպաստ մեղսութեան իւրեանց կամակորեն Պայ և Յանսենիոս։ Վասնզի ասէ սուրբ վարդապետն (գիրք Ղ. ընդդէմ Յով.) "Մեծ ընդհակ Աստուծոյ էին երկրաւոր և ընչաւոր մարմնոյն (Ադամայ) զերծ յանեթանական ցանկութենէ գոլ ,,. Այս դարձեալ (՝ի ծնունդս գիրք Ղ. գլ. ԻՁ.) "Մահկանացու էր ըստ պայմանի կենդանական մարմնոյն, և անմահ՝ ի բարերարութենէ արարչին ,,։ Այս դարձեալ (յղ. Տաղ. Աստուծոյ. գիրք ԺՁ. գլ. ի.) "Որ և զանծերանալի զայն կեանս ընդհակէր նոցա աքանչելի բարերարութիւնն Աստուծոյ կենացն փայտիւ, որ էր՝ ի մէջ դրախտին ,,։

ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆՔ

Աստուածաբան. — ա. Երջին և բնական վախճան մարդոյ է երանական աստուածտեսութիւն, զի այս ևեթ կարէ ընդ զիրեա հոգւոյ բանականի ըստ քաջածանօթն բանի սրբոյն Աւգոստինեայ. "Դարեր զմեզ

վան քո, և չկը անդորը սրտի մերոյ մինչև հանգիցէ 'ի քեզ ,,: — ՚Ր. Ա՚րդ եթէ ոչ 'ի վախճան անդր իւր դիմէր մարդ, գտանէր խոտորեալ. իսկ եթէ դիմէր և չհասանէր անդր, լինէր թշուառ: — Ա. Ասն որոյ յաճախ յեղյեղէ սուրբն Գրիգորիոս, զի երանութիւն, որ երբեմն վարձ վաստակոց լինելոցն էր, արդ պարգև է ընծրհաց: Ընդ և սուրբն Յովհաննէս ուսուցանէ իղձս 'ի բնութեան մարդոյ. այսինքն զի 'ի տեսանել զգործս Ստուծոյ, ցանկայ զպատճառ նոցին տեսանել:

Պե. — Ա. Երջին և բնական վախճան մարդոյ է երանութիւն, որում մարթի է գալ 'ի ձանաչման Ստուծոյ գերագոյն եղանակաւ, և կամ յայլ իմիք: Իսկ երանութիւն աստուածտեսութեան գերբնական վախճան է մարդոյ, և ամբառնայ զնա ընծրհօք 'ի գերագոյն կարգ. ապա թէ ոչ, ընծրհքն՝ որով հասանէ 'ի վախճան անդր գերբնական՝ գտանէր բնական ինչ և անկ բնութեան մարդոյ, որ օտար է ամենևին յուղղափառ վարդապետութենէ: Ասն որոյ բանն այն սրբոյն Գրիգորիոսի կամ 'ի բնական վախճան մարդոյ հայի, և չէ պարտ իմանալ այնուիկ գերանական և զգեմ յանդիման աստուածտեսութիւն, և կամ 'ի գերբնական վախճան մարդոյ յամբառնալ նորա գեր 'ի վերոյ քան զբնութիւն, որ արտաքոյ է խնդրոյս:

— Ր. Ա՚րդ եթէ չէր մարդ վերառեալ 'ի գերագոյն կարգ, չէր ինչ նման բնական տեսութիւնն երանական, վասն որոյ և չգտանէր խոտորեալ 'ի զգիմել 'ի վախճան անդր գերբնական, և ոչ թշուառ գտանէր 'ի չհասանելն անդր:

— Գ. Սուրբն Գրիգորիոս այնու եղանակաւ բանից ցուցանէ զառաւելագոյն ընծրհս և զողորմութիւն Ստուծոյ յամբառնալ նորա զանկեալն մեղօք 'ի գերբնական երանութիւն, քան 'ի ընծրհել զայն ոչ անկելումն. Թէպէտ և յառաջ քան զանկանելն և ընծրհք էին այն, որպէս յայտնի իսկ բայատրէ այլուր յասելն. (Յ՚Եզեկ. գլ. ԺՁ.) "Վասն և առանց ընծրհայ և ոչ յայնժամ արժանիք ինչ մարթէր ,,: Ա՚պա ուր ասէն, Թէ երբեմն վարձ վաստակոց լինելոց էր՝ որ այժմ պարգևք ընծրհայ՝ պարտ է իմանալ զառաւելագոյն շընորհս և զողորմութիւն Ստուծոյ, որպէս ինքն իսկ

յաւելու. "Աւետ յետ անկմանն մեծապոյն է ողորմութիւնն Աստուծոյ,,:

Այսու ամին օրինակի պարտ է իմանալ և զբանս սրբոյ Գրիգորիայ, ուր ասէն՝ Թէ մարդ՝ի տեսանել զապարաճս Աստուծոյ, բնականապէս ցանկայ տեսանել զարարիչն: Արդեպս ինքն իսկ ապա՝ի յաջորդ գլուխս ուսուցանէ, զի "Ոչ մարդ և ոչ այլ ինչ արարած բնականապէս զԱստուծոյ էութիւնն կարէ տեսանել,,: Նոյ այլուր (յղ. Ճշմարտ. խնդ. ութ. յօդ. է.) ասէ. "Ինդապայս է՝ի մարդ իղձ հասանելոյ՝ի վերջին վախճան իւր անսահմանաբար, այսինքն զի բնականապէս բաղձայ ընալ բարութեամբ. այլ չիմ իմիք բարութիւնս այս իցէ, արդեօք յառաքինութիւնս Թէ՝ի գիտութիւնս Թէ՝ի բերկրութիւնս կամ Թէ յայլ ինչ յայսպիսեաց, ոչ է սահմանեալ՝ի բնութենէ,,:

Ա. Յովհ. բ. — ե. Ոչ էր մարթ Աստուծոյ հասանել զմարդ առանց բնական և բարոյական ուղղութեան, կամ՝ նեբքոյ անկեալ տգիտութեան և ցանկութեան: Օ՛ի ոչ է ուղիղ կազմած բնական՝ որ զերծ ոչ կացուցանիցէ զմարդ յորոց և իցէ՝ի նիւթական իսկ մոլորութեանց, և անշնասելի՝ի հրապուրանաց. ապա Թէ ոչ, գտանէր անկարգ արարեալ Աստուծոյ, որ է անտեղի: — բ. Նոյ միակ պայման այս էր մարդոյս աստուածահաճոյ լինելոյ. առանց այսորիկ՝ի մեղս գտանէր հատեալ: — գ. Ոչ ամն որոյ սուրբն Գրոստինոս զտգիտութիւն և զցանկութիւն կոչէ ստէպ պատիժս մեղաց, և առաքեալն պարզապէս իսկ Ղեր կոչէ ցանկութիւն. (Հռ. է: 20): — դ. Նոյ ո՛ իշխեսցէ բնական համարել մարդոյ զպայման, զոր ողբայ անդ առաքեալն ասելով. "Աւետ ես մարմնաւոր եմ, ընդ մեղօք վաճառեալ. զի զոր գործեմն՝ ոչ գիտեմ. ոչ եթէ զոր կամիմն՝ զայն առնեմ, այլ զոր ատեամն զայն գործեմ:.... Աւետ արդ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ չիս մեղքն:... Տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց, և գերեալ զիս օրինաւքն մեղաց՝ որ են յանդամս իմ. այր ի տառապեալ եմ ես,,: — ե. Նոյ ցանկութիւնս այս գտանէր ոչ միայն բնական յատկութիւն մարդոյ, այլ և բարութիւն նորա՝ որպէս ունին բանքդ. ուր սուրբն Գրոստինոս ցու-

ցանկ բազում ուրեք ընդդէմ Յուլիանոսի, զի իբրեւ
իսկ չար և անպտուղ է այն։ — ջ. Որ և հեթա-
նոսքն իմաստասէրք ծանեան զապականութիւն մարդ-
կային բնութեան, վասն որոյ զբնութիւն ոչ մայր՝ այլ
մօրու կոչեցին։ — ի. Իւ ըստ այսմ արարիչ գտանէր
Ստուած տգիտութեան և ցանկութեան, և որ յայն-
ցանկ սերելոց չարեաց։ — ճ. Ասսի և աստուածա-
բանք ասեն՝ ոչ միայն մերկացեալ զմարդ սկզբնական
մեղաւք յաստուածաձիր ընդարձաց, այլ և վիրաւորեալ
ըստ բնութեան։ — ի. Իւ ժողովն տրիդենտեան սահ-
մանէ "Թոխեալ զնա ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ՝ ի յո-
ւեզոյն պայման,,։ Ասն որոյ զապիտութիւն և զցան-
կութիւն վէրս բնութեան և ոչ յատկութիւնս համա-
բելի է. զորս և փրկիչն մեր ոչ էառ ընդ մարդկութեան,
զի զերծ՝ ի տգիտութենէ և՝ ի ցանկութենէ էր։

Պխ. — ա. Ոչ էր մարթ Ստուծոյ հաստել զմարդ
այժմու բնական և բարոյական անկարդութեամբ, այլ
կարէր իսկ հաստել զնա այնպիսի բնութեամբ յորմէ
մարթէր յառաջ գալ բարոյական անկարգութեան։
Զի ոչ է պարտ շփոթել ընդ իրեարս զայժմու անկար-
գութիւն բնութեան մարդոյ՝ յորում արդարև չէր
մարթ Ստուծոյ հաստել զմարդ, ընդ բնութեան՝ որ
իւր ընդունակ անկարգութեան, յորում չիք ինչ ան-
տեղութիւն. զի չէ հարկ Ստուծոյ ամենակատար առ-
նել զարարածս, և ոչ ստեղծուած մարդոյ պահանջէ
զայդ արտունութիւն։

Ապա ըստ այսմ զանազանելի է զստեղծուած մար-
դոյ. զի այժմու անկարգութեամբ բնութեան ստեղ-
ծեալ՝ չլինէր ուղիղ, այլ ոչ եթէ և՝ ի ստեղծանելն
բնութեամբ խոտորելեաւ յանկարգութիւն։ Ապա թէ
ոչ, հարկ էր Ստուծոյ այնպիսի ամենակատար ստեղ-
ծանել զմարդ, զի չլինէր ընդունակ թերութեան. զոր
արդիւնք իրացն ևս ցուցանեն սուտ, զի Ադամ թէ-
պէտ և այնքանեօք ձրիւք Հոգեացեալ, և սակայն ան-
կաւ։

— բ. Ոլորութիւն է ասել ստելի Ստուծոյ զմարդ
վասն բնական ինչ թերութեան, և անտեղի է զթե-
լութիւն համարել մեղս։ Զի թէպէտ և այնպիսի
կազմութիւն մարդոյ ազդիցէ ևս յաչատ կասն և՝ ի բա-

*բոյականին մասունս, այլ յորչափ կամք չհաւանին հրա-
պուրանաց ցանկութեան՝ ազատ են ի մեղաց։*

*— գ. Արդեոք (գոստինոսի զտգիտութիւն և զցան-
կութիւն համարել պատիժս մեղաց՝ ըստ այժմու պայ-
մանի բնութեանս է. զի խօսի ընդդէմ պեղագեանց՝
որք ուրանային զսերունդ սկզբնական մեղաց, վասն ո-
րոյ և զտգիտութիւն և զցանկութիւն համարէին ըստ
պայմանի բնութեանս հաստելոց յարարչէն, ուր ուղ-
ղափառ հաւատք պատիժս մեղաց ուսուցանեն զայնո-
սիկ։ Իսկ առաքելոյ մեղս կոչել զցանկութիւն, որպէս
ժողովէն տրիդենտեան յայտ առնէ, վասն ծնանելոց նո-
րա է ի մեղս, և առ ի մեղս յօժարելոյ։*

*— դ. Արդեօք ի վեր անդր ասացաք, պարտ է զանա-
զանել զընդունակութիւն ցանկութեան ի ներգործա-
կան ցանկութենէ՝ զոր չէր մարթ Աստուծոյ տնկել ի
մարդն, քանզի այս դրական է անկարգութիւն. որպէս
և ոչ ախտակիր զնա ստեղծ և ի ցաւս վարակեալ, զոր
անտեղի է խորհել զԱստուծոյ։ Այլ չէ ինչ անտեղի
ստեղծանել Աստուծոյ բնութիւն այնպիսի՝ յորմէ կա-
րիցեն յառաջ գալ բնական և բարոյական անկարգու-
թիւնք, վասն որոյ և ներհակակիրք ի նմա։ Արդ ա-
ռաքեալ ի դէմս մարդոյ եղելոց յառաջ քան զօրհնս,
ընդ օրինաւք և ընդ հնօրհաւք, աւաղէ զայժմու բնու-
թեանս անկարգութիւն, և ոչ զընդունակութիւն նորա խոտո-
րելոյ յանկարգութիւն՝ որ չէ ինչ չար իւրովի, թէ-
պէտ և վասն սահմանաւորն գոլոյ՝ նեղքոյ անկեալ թե-
րութեանց։*

*— ե. Ոստ այսմ զանազանութեան է իմանալ զբանս
սրբոյն (գոստինոսի, որ չար և անգոնելի զայժմու
ցանկութիւնս կոչէ՝ որ պատիժն է մեղաց, և ոչ զըն-
դունակութիւն ցանկութեան՝ որ զի բնական է, բարի
իսկ կոչել զայն մարթ է։*

*— զ. Աբեղայքն իմաստասէրք այլ և այլ ազգ խորհ-
հեցան և խօսեցան զբնութենէ մարդոյ. կիսոց կարի
ընդվայր հարեալ զայն, այլոց գեր ի վերոյ բարձրացու-
ցեալ. որպէս և արդի անհաւատք առնեն, մերթ անաս-
նոց հաւասարեալ զմարդ և մերթ Աստուծոյ. նա և
աստուածացարեն իսկ զայն համաստուածեանքն և հեգե-
լեանք։ Այլ յիմաստասիրաց անտի ոմանք վարանեալ*

կասկածելին արդարև ապականութիւն ինչ կրեալ մարդկային բնութեանս։

— Ե. Աստուած արարիչ է բնութեան՝ որ բարին է, այլ ոչ թերութեանց՝ որ ի նմանէն յառաջ եկեալ, զորս չարգելու եւեթ, այլ թողացուցանէ վասն արդարացի պատճառաց՝ զորս ինքն գիտէ։ Ոչ ի և ոչ դարբին արարիչ է ժանգոյն, որ ուտէ զսուսեր դարբնեալ ի նմանէ։

— Զ. Ալ իրաւորեալ ասէն աստուածաբանք զմարդկային բնութիւն, համեմատեալ ընդ այնմ՝ որ հաստեցաւն Աստուծոյ կատարեալ յիւրում կարգի ըստ բնական ձրիցն։ Ոչ թէպէտ և մեղաւք ոչ ինչ յիանգն ձրիցն կորոյս մարդ, որպէս և ոչ հրեշտակք ստոյգ անկեալք. այլ որպէս յառաջ ասացաք, կէաք յաստուածաբանիս համարին զբնութիւն մարդոյ իւիք իւիք և ըստ բնական ձրիցն յոռացեալ, և սրբոյ եկեղեցւոյ չիք ինչ հակառակ այսմ վարդապետութեան սահմանեալ։ Սուրբ Գրիգորիոս, Նեղլոսիենոս, Սուարեզ, և դասականք առհասարակ չընդունին զայս։

— Է. Ըստ յայտ է և տրիդենտեան ժողովոյն միտք, որով զպիտութիւն և զցանկութիւն վերս ասէ բնութեան. քանզի Աստուած արար զայն ձոխացեալ գիտութեամբ և ամենայն ձրիւք սկզբնական արդարութեան, և կորոյս նա զայնոսիկ մեղօք։ Ոչ փրկիչն մեր էառ զմարդկային բնութիւն առանց մեղաց, որպիսի էրն այն Ադամ յառաջ քան զպատուիրանազանցութիւնն, վասն որոյ ոչ տգիտութեան և ոչ ցանկութեան ներքոյ անկեալ. և եթէ ցաւոց և մահու զանձն ի ներքոյ էարկ, տնօրէնութեամբ և ինքնիշխանութեամբ յանձն էառ զայն ամենայն։

Յոան. Գ. — Ը. Գնէթ չմարթէր մարդոյ մեռանել և ցաւոց և աղետից ներքոյ կալ առանց մեղաց, ըստ սահմանելոյ արաւսեան ժողովոյն՝ որ ասէ. "Ընդհանրացութիւն ածէն զԱստուածով, որք համարին զի եթէ չմեղանչէր իսկ Ադամ՝ սակայն մեռանելոց էր,,։ Նոյ սուրբն Ոգոստինոս ասէ. (յղ. ի Պետ. Աստուածոյ ԺԳ. 15.) "Քանզի այսպէս է թէ և մարմնոյ իսկ մահն ի վերայ եգաւ մեզ՝ ոչ եթէ օրինաւք բնութեան, զի Աստուած մահ ինչ ոչ արար մարդոյ, այլ ըստ արժանի մեղաց,,։ — Թ. Նո

բանիւ իսկ յայտ է, զի մարմնոյ պարտ է անմահու թեան հոգւոյն հաղորդ լինել։ — Դ. Դարձեալ և անհնարին եր մարդոյ մահկանացուի հասանել և ոչ բնական երանութեան՝ որ անկ է նմա. զի որպէս սուրբն Գրիգորիոս ստէպ յեղյեղէ, Ընդ երանութիւն առանց յաւիտենականութեան։ — Դ. Եւ զի հոգի հաստեալ վասն մարմնոյն անձկալ նորա յարաժամ տոչորեր, և չմարթեր գոլ երջանիկ։ — Ե. Եւ դարձեալ՝ի սիրտս ամենեցուն տպաւորեալ է, զի չէ պարտ արդարոյ ցաւս և աղէտս կրել։ Ապա անմահութիւն և աղաւտութիւն յաղետից բնական յատկութիւնք են մարդոյ։

Պե. — Ե. Հոդոյին արաւսեան ըստ ուղղափառ վարդապետութեան սահմանէ, զի յետ միանգամ ընդհեղլոյ Աստուծոյ նախամարդոյն զանմահութիւն՝ չէր մարթ առանց անիրաւութեան զրկել զնա յայնմանէ առանց՝ի ներքս մտանելոյ մեղաց։ Ովին մնօք և սուրբն Գրիգորիոս վասն մեղաց ասէ դատապարտեալ զմարմին՝ի մահ։

— Ր. Մարմնոյ պարտ էր անմահութեան հոգւոյն հաղորդ լինել, եթէ ոչ այլազգ ինչ պահանջէր բնական իւրն պայման։

— Դ. Եթէ անհնարին եր մարդոյ մահկանացուի հասանել բնական երանութեան յայսմ աշխարհի, այլ մարթէր իսկ՝ի հանդերձեալն։ Վասնզի այս կեանք ոչ այլ ինչ են, քայց պատրաստութիւն առ միւսն՝ որ պարգևի վաստակոց։

— Դ. Իսկ զհոգւոյ անձուկ առ մարմինն կարող եր Աստուած այլազգ ընուլ, որպէս և ընու իսկ արդ զարդարոյն մինչև ցյարութիւն մարմնոյ. և կամ ընորհել նման դարձեալ գերբնապէս զիւրն մարմին։

— Ե. Տպաւորեալ իսկ է՝ի սիրտս ամենեցուն՝ զի արդարոյ չէ պարտ ցաւս և աղէտս կրել առ՝ի պատուհաս. այլ մարթ իսկ է, ուր այլ պատճառք կայցեն՝ի միջի։ Եւ պատճառք ցաւոց և աղետից մարդոյ հաստեալ՝ի բնական և՝ի եթէ պայմանի՝ յառաջ գային՝ի բնական կազմուածենէ նորա, որպէս և ամենայն կենդանեաց, որք առանց ինչ մեղաց՝ ներքոյ կան նոցին աղետից։ Ա՝ան որոյ դատապարտեալ է՝ի սուրբ Եկեղեցւոյ վարդապետութիւն Պայլ, որ ասէ. "Ամենայն

վիշտք արդարոց պատիժք մեղաց նոցա են, ուստի և Յոբ և մարտիրոսք վասն մեղաց իւրեանց խոշտանգեցան ,,։ Եւ զարձեալ թէ "Բայց ի Քրիստոսէ չիք ոք ազատ ի սկզբնական մեղաց. ուստի և սուրբ Կոյսն վասն մեղացն՝ զոր Ադամայ ձգէր յանձն՝ մեռաւ. և ամենայն վշտակցութիւնք նորա ի կենցաղումն, որպէս և այլոց արդարոց ամենեցուն, պատիժք էին ներգործական կամ սկզբնական մեղաց ,,։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս անկման նախաստեղծիցն։

Պատուիրեաց Աստուած նախամարդոյն չուտել ի ծառոյն ևևէթ գիտութեան բարւոյ և չարի։ Այսու պատուիրանաւ, որ դուշնաքեայ իմն ըստ իրին թուէր, կամեցաւ Աստուած յայտ առնել նմա զտէրութիւն իւր, և զի պարտ էր արարածոյ հնազանդել արարչի իւրում։ Եւ նա ոչ պահեաց զպատուիրանն, անսաց բանսարկուին՝ որ նախանձէրն ընդ փառս նորա, եկեր յարգելեալ պտղոյն. և այնչափ ծանր էին յանցանքն, որչափ թեթև էր պատուիրանն և պահպանութիւն նորա դիւրին, որով և արհամարհութիւնն մեծ։ Վասն որոյ անկաւ ի ջնորհացն Աստուծոյ, և կորոյս պատուիրանազանցութեամբն որ ինչ գերբնական պարգեւք տուեալ էին նմա։ Յարձաւ ի նմանէ զեղն անմահութեան սրբութեամբ պահպանութեամբ, և ահագին և քան զմարմնոյն՝ մահ հոգևոր նովին իսկ գործոցն իսկ և իսկ եհաս նմա, այսինքն կորուստ սրբարար շնորհին, որով օրինակ ևևէթ էր մահն մարմնաւոր՝ յոր դատապարտեցաւն։ Վասն որոյ այս վարդապետութիւն զի մեզան նախաստեղծքն պատուիրանազանցութեամբ, և զի ծանուցանք էին մեզքն, մասն է հաւատոյ։ Եւ քաջայայտ է այս ի սուրբ գրոց, և զնոյն վկայեն հրէական և քրիստոնէական և հեթանոսական իսկ աւանդութիւնք։ Պատուիրեաց Աստուած Ադամայ, և ասէ. "Բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի ուտիցէք. զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ, մահու մեռանիցիք ,,։

Նա ասպա Նոա «Ես ի պաղոյ նորա, եկեր, և ետ առն իւրում ընդ իւր, և կերան»։ Ա՝ ան որոյ և առաքեալն ասէ. (Հռ. Ե. 12.) «Ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին»։

Օ՝ եբրայականն աւանդութիւն ոչ միայն յամենայն գիրս նոցա յաձախ է գտանել, այլ և ի տուրբ գիրս կրտսերագոյնս ժամանակաւ քան զՈ՝ովսէս. որպէս ի գիրս խնաստութեան (Ը. 34.) «Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ»։ Նա դարձեալ. (Ժ. 2.) «Նա զնախահաստեղծն... փրկեաց ի յանցանաց իւրոց»։

Ոսկ զքրիստոնէական աւանդութենէ չիք իսկ երկբայել. զի տուրբ եկեղեցի Ա՝ըրիստոսի ի՝նմանէ իսկ ուսաւ զբանսարկուին մարդասպանութիւն ի սկզբանէ՝ որով մահ և դատապարտութիւն ի վերայ նախահաստեղծին և որդւոց նորա էած. «Օ՝ր նա մարդասպան էր ի սկզբանէ»։ (Յհ. Ը. 44)։ Նա առաքեալն ասէ. (Ը. Կոր. Ժա. 3.) «Զնն խաբեաց զՆւայ խորամանկութեամբ իւրով»։

Օ՝սոյն հաստատեն և առաւօտեալհաւն աւանդութիւնք հեթանոսաց. որպէս Ա՝ըշմն զրադեշտական կեշտին, Պրոմեթևան և Ե՝երակլէս Ե՝լլենաց, և որ ի մեհենական գիրս եգիպտացւոցն գտեալք. մինչև Վ՝ոլթերի ի վէպս խնաստասիրութեան ասել. «Ա՝նկուճն նախամարդոյն հիմն է դիցաբանութեան գրեթէ ամենայն ազգաց առաջնոց»։

Ոսկ զի ծանուցք էին մեղք նախահաստեղծիցն, յայտ է նախ ի բանէն Ա՝իրաքայ (Ժ. 14.) «Ակնզան ամբարտաւանութեան մարդոյ՝ հեռանալ ի Տեառնէ, զի յաբարչէն խոտորեցաւ սիրտ նորա»։ Ա՝պա նախ մեղանն Հպարտութեամբ. և զի անհնազանդութեամբ և մեղան, յայտ է ի բանէն. «Վոխանակ զի լսաւր ձայնի հնոջդ քոյ, և կերար ի ծառոյ անտի՝ յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել»։ Ա՝ն որոյ և առաքեալն ասէ. (Հռ. Ե. 19.) «Ա՝րպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն»։ Նա պատուհասն իսկ ի վերայ ածեալ զծանրութիւն մեղացն ցուցանէ։

ՅՕԴՈՒԱԾ Ե

Ցաղագս սերնդեան մեղացն Ադամայ։

Ասուած, որ սահմանեալն էր վարձատրել զհաւատարմութիւն նախաստեղծին յորդիս նորա, պատուհասեաց վասն անհնազանդութեան նորա ոչ զնա միայն՝ այլ և զսերունդ նորա։ Այլ որ եթէ անկանի՝ ի ձեռս Թագաւորի, ոչ նմա հասանեն աղէտք, այլ և որդւոյ նորա և ընտանեաց. ոչ է մարթ նմա կորուսանել զժառանգութիւն, առանց առնելոյ զորդիս իւր հաղորդս կորստեանն։ Այսպէս այսմ՝ օրինակի արարս նախահօրն մերոյ յանցանաց ածանցեալ՝ ի մեզ յորդիս նորա, ամենեքին մեղաք՝ ի նմա ըստ առաքելոյն՝ (Հռով. ե. 12)։ Այսուհետև մեղքն սկզբնական, ի սկզբնէ մարդկութեանս սերեալ՝ ի մեզ։

Սկզբնական մեղաց վարդապետութիւն մանն է հաւատոց. և ցուցանի նախ բանիւք սուրբ գրոց։ "Ոչ ի որպէս՝ ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, և՝ ի մեղաց անտի մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքին մեղան,,։ (Հռ. ե. 12)։

"Իրպէս միոյն յանցանաւք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ արդարութիւն,,. (Հռ. ե. 18.) "Ոչ ի եթէ մին փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին,,. (Բ. Կոր. ե. 14)։

Այդ ըստ այսոցիկ բանից առաքելոյն՝ ամենեքին մեղուցեալ են, և վասն այսորիկ ընդ դատապարտութեամբ մահու գրաւեալ. և քանզի ոչ ամենեքին ներգործականի մեղաց են պարտաւորք, որպէս չէն իսկ մանկունք, ապա ամենեքին սկզբնական մեղաւք են պարտաւորք։

Այլ՝ ի հին օրէնս իսկ աւանդութեամբ վարդապետութիւնս այս պահէր. և՝ ի սոյն ակնարկէ Յոբ յասելն "Իսկ արդ ո՞վ կարէ սուրբ յապաւոյ, այլ և ոչ ոք, թէպէտ և միոյ աւուր կեանք նորա,,. (Յոբ. ԺԴ. 4)։ Այս սաղմոսերգուն յասելն. "Ընդօրէնութեամբ յղացաւ, և՝ ի մեղս ծնաւ զիս մայր իմ,,. (ՍՂմ. Ծ. 7)։

Սուրբ Հոգի առհասարակ յեղյեղելով զբանս զայսոսիկ սուրբք գրոց, բացատրեն և հաստատեն զայս վարդապետութիւն. և ժողովն տրիդենտեան նզովէ՝ որք ոչն ընդունին զայն. և խորհուրդն իսկ մկրտութեան, որով վերածննանիմքս, ՚ի սոյն վարդապետութիւն հաստատեալ կայ։

Այս միաբան վարդապետութիւն ամենայն եկեղեցեաց Քրիստոսի ուրացաւ Պեղագիոս ՚ի սկիզբն հինգերորդ դարու, զբերմանս մոլորութեանց իւրոց ընկալեալ ՚ի Հռուփինեայ աշակերտէ Պոպոս եստացւոյն. յորս գլխաւոր այն էր, թէ մեղքն Ադամայ անձին և ենթ իւրում էր, և ՚ի սերունդս նորա ոչ այլազգ ե իմանալ զայն՝ բայց ըստ նմանողութեան, իբր զի և որդիք նորա հետևեցան նմա անձնական մեղօքն։ Ասն որոյ զմանկունս, որոց չև ե ծագեալ լոյս բանին, աղատս ասէր ՚ի մեղաց անտի, ուստի և զմկրտութիւն ոչ հարկաւոր, և որ գՀետ սորին գան մոլորութիւնք. որ դատապարտեցան ընդ նմա ՚ի բազում ժողովս, Կարթագինէ և ՚ի Հռոմ։ Ուղղափառաց, որ գրովք զինեցան ընդդէմ մոլորութեանս, պարտգլուխ եկաց սուրբն Օգոստինոս՝ բազում մաւենիւք յաղթահարեալ զաղանդն պեղագեանց ամենայն մասամբք։ Այսու ամենայնիւ ոչ պակասեցին հետևողք աղանդոյն. և ՚ի յետին դարս ալբիգեանք, սակիւնեանք, և ՚ի նորաղանդից բազումք, որք կարկատուն մեկնութեամբք կամակորեն զբանս գրոց, և մանաւանդ զառաքելոյն՝ զոր ՚ի վեր անդր ածաք։

Այլ անտեղութիւն բանիս նոցա յայտ անտի ե նախ, զի առաքեալն զմեղս Ադամայ համեմատէ արդարութեանն Քրիստոսի. իսկ արդարութիւնն Քրիստոսի եմուտ ՚ի մարդիկ Հնմարիտ և ներքին հաղորդութեամբ, և ոչ վայրապար նմանութեամբ իբր օրինակ արդարութեան։ Այսպա թէ ոչ, պարտ էր առաքելոյն համեմատել զԱդամ ընդ այլոց արդարոց, ընդ Աբելի, ընդ Հնովսայ, ընդ Հնովքայ, ընդ Նոյի, և այլոց՝ որք յառաջ քան զՔրիստոս եղեն օրինակք արդարութեան։ Այսպա սոյնպես և մեղք Ադամայ եմուտ ՚ի մարդիկ ներքին հաղորդութեամբ։

Երկրորդ՝ եթէ ըստ նմանութեան ենթ իմանալը

առաքեալն զմեղանչել մարդկան Ադամ, պարտ էր նմա ասել մանաւանդ՝ թէ Ահա մեղան. զի նա եղև առաջին յանցաւոր հրամանին, և պատճառ յանցանացն Ադամայ: Ա՛նուանդ ասելի էր՝ թէ ՚ի սատանայ մեղան ամենեքին, և մեղք բանսարկուին էանց ՚ի մարդիկ. զի նա ՚ի սկզբանէ մեղանչէ, և նա եղև օրինակ և դրդիչ նախաստեղծիցն և այլոց ամենեցուն ՚ի մեղս:

Երրորդ՝ եթէ Ադամ եղև առաջին ՚ի մեղանչել, եղև առաջին և յապաշխարել. ապա ասասցի նոյնպէս՝ թէ ապաշխարութիւնն Ադամայ էանց յամենայն մարդիկ, որ չիք ուրեք ասացեալ:

Չորրորդ՝ առաքեալն զամենեցունց ասէ մեղուցեալ Ադամբ. իսկ զայս զիա՞րդ իցէ իմանալ զմանկանց, ոչ յոյ չիք ինչ անձնական մեղք. զիա՞րդ և զայնցանէ, ոչ յոյ ոչ ինչ դիտելով զմեղացն Ադամայ՝ մեղանչէն. որպէս առաջին հեթանոսք, և այժմու կռապաշիշք և աղգք վայրենիք՝ յորս չիք ծանօթութիւն ադամեան մեղացն: Ո՛չ ինամանութիւն կամ հետեւողութիւն յայնս է, որ ըստ օրինակի ինչ գործեն:

Հինգերորդ՝ նովին օրինակաւ ասէ առաքեալն զմեռ մեղացդ, որով և զմեռ մահուն. արդ մահն չէմեռ ըստ նմանութեան եթէ, այլ իսկապէս և իրօք. ապա նոյնպէս և մեղքն:

Վասնայայտ է ապա զի զիրական ապականութենէ պարտ է իմանալ զբանս առաքելոյն, որով շաղախեցաւ բնութիւնս մեղօքն Ադամայ: Ա՛ստ զի Ադամ ստուած կարգեաց զնա սկզբնահայր մարդկութեանս ըստ մարմնական սերնդեան, և զարդարեաց զնա գերբնական չնորհօք և անախտութեամբ մարմնոյ և զգայականաց, վայելել ՚ի նոյնս համօրէն սերնդովք՝ եթէ հաւատարիմ կայր ՚ի հնազանդութեան, իսկ յանհնազանդելն՝ կորուսանել զամենայն վասն իւր և վասն սերնդոցն: Ա՛ստ որոյ եթէ կացեալ էր յանմեղութեան, ՚ի ծնանել զաւակս՝ հաղորդեր նոցա ընդ բնութեան և զսկզբնական արդարութիւն. այլ զի յանցեաւ, յանցումն նորա չեղև անձնական ՚ի կորուսանել զիւրն եթէ անմեղութիւն, այլ հաղորդական յամենայն որդիս իւր՝ պղծ սերմնական ածանցմամբ յառաջ եկին ՚ի նմանէ, բաց ՚ի սրբոյ Աստուածէն՝ զորմէ մնայ մեզ ասել ՚ի ստորև:

Ա. յոու օրինակաւ ապականեցաւ բնութիւնս յարմատի անդ իւրում, յորում փակեին ամենայն մարդիկ. ուստի այն մեղք՝ որ կամաւոր եղև Ադամայ ներգործութեամբ, եղև որդւոց նորա կամաւոր զօրութեամբ։ Ա՛ս այս ամենայն բովանդակեն սահմանք տրիդենտեան ժողովոյն, որ են այսոքիկ։

«Որ ոք ոչ խոստովանի զի նախամարդն Ադամ պատուիրանազանցութեամբն ՚ի դրախտին կոտոյս վաղվաղակի զսրբութիւն և զարդարութիւն՝ յորում հաստատեալն էր, և անկաւ այնուիկ ՚ի ցասումն և ՚ի բարկութիւն Աստուծոյ, ուստի և ՚ի սպառնացեալն Աստուծոյ ՚ի մահ, և մահուամբն ՚ի գերութիւն այնորիկ՝ որ յայնմ՝ետեղ զիշխանութիւն մահուն կալաւ, այսինքն սատանայի. և զի պատուիրանազանցութեամբն այնուիկ բոլորովին ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ փոխեցաւ ՚ի յոռեգոյն պայման, նզովեալ լիցի.։

«Որ ոք ասիցէ պատուիրանազանցութեանն Ադամայ նման միայնոյ վնասեալ, և ոչ սերնդեան և նորա. և զի Ադամայ զբնկալեալն առ ՚ի Աստուծոյ սրբութիւն և արդարութիւն՝ զոր կորոյս՝ անձին և ևթէ իւրեանց կորուսեալ, և ոչ մեզ ևս. և կամ զի մեղօք անհնազանդութեան ապականեալ՝ զմահ և զպատիժս ևթէ մարմնոյ յամենայն ազգ մարդկան ածանցեալ, ոչ և ըզմեղս՝ որ հոգւոյ է մահ, նզովեալ լիցի.։

«Որ ոք զմեղսայ Ադամայ, որ միակ ըստ սկզբան՝ այլ ածանցեալ՝ սերնդեամբ և ոչ թէ նմանութեամբ, յամենայն մարդիկ է և իւրաքանչիւր ումեք յատուկ, այլով իւիք ասիցէ զքաւութիւն և ոչ վաստակովքն Քրիստոսի, նզովեալ լիցի.։

«Որ ոք ասիցէ՝ թէ չէ պարտ մկրտել զնորածինն տղայս, և և ՚ի ծնողաց մկրտելոյ ծնեալս. կամ թէ մկրտել զնոսա ՚ի քաւութիւն մեղաց՝ իբր ոչ ևթէ ածանցեալ ինչ կայցէ ՚ի նոսա ՚ի սկզբնական մեղացն Ադամայ, նզովեալ լիցի։

«Որ ոք ուրանայցէ՝ թէ շնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր մկրտութեամբն ընդունիմք, ոչ քաւէ զարատս սկզբնական մեղաց. կամ ասիցէ՝ թէ ոչ բառնայ ՚ի բաց զամենայն՝ որ ինչ մեղայ յատուկ և Ձնմարիտ մնասնս, նզովեալ լիցի.։

Նայց պարտ է զանազանել զգայութիւն սկզբնական մեղաց՝ յէութենէ նորա, և զսերունդ նորին ՚ի մեզ՝ յեղանակէ սերնդեանն. զի առաջինքն ՚ի հաւատոյ են, ուր երկրորդքն խնդիրք աստուածաբանականք։ Ալ սան առաջնոցն սահմանեաց ժողովն արիդենտեան ընդդէմ պելագեանց և նորազանդից, զի Ադամ կորոյս մեղք զարքունութիւն և շարդարութիւն, և ած զնովին զգաստութիւն Աստուծոյ, զմահ և զկերութիւն ընդ իշխանութեամբ սատանայի. զի սերեցաւ ՚ի նմանէ և յամենայն որդիս նորա ոչ միայն մահ և կիրք մարմնոյ, այլ և մեղք՝ որ է մահ հոգւոյ. զի մեղքն այն եղեալ անձնական և յատուկ ամենայն մարդոյ, ոչ ընդ՝ թայց միայն զօրութեամբ արդեանցն Ադրիստոսի, և զի ընդ բոլորովին ՚ի ձեռն մկրտութեան։ Յորոց զհետ բերեն աստուածաբանք որպէս զանհրաժեշտ կարևորութիւն մկրտութեան, նոյնպէս և զարգասիս չարեաց սկզբնական մեղաց. որ են նախ՝ զրկումն ՚ի սրբարար շնորհայ և կիրաւանց յաւիտենական երանութեան, զոր ունէր Ադամ յանմեղութեան. երկրորդ՝ անկարգութիւն ցանկականին կամ բերումն ՚ի չարն. երրորդ՝ կիրք մարմնոյ և մահ։ Յայսմանէ ուսուցանեն սուրբ հաւատք։

Իսկ աստուածաբանք զէութենէ և զեղանակէ սերնդեան կամ ածանցման սկզբնական մեղաց ոչ համաձայնին, մինչև ասել սրբոյն Թոմասի. «Ադատիւրապոյն աստանօր ուսանիմ քան ուսուցանել կամիմ. չիշխեմ իսկ վարդապետել զոր ոչն գիտեմ։ Ի չիք ծանօթագոյն ինչ քան զսկզբնական մեղս, և ոչ անծանօթագոյն ինչ քան զէութիւն նորա»։ Ադասի ըստ հանրապոյն վարդապետութեան աստուածաբանից՝ էութիւն սկզբնական մեղաց ոչ զրկումն միայն է ՚ի սրբարար շնորհայ, զի այս նիւթական և ևթե մանն է յանցաւորութեան Ադամայ, այլ և յետադարձութիւն առ ՚ի Աստուծոյ՝ որ է տեսական մանն նորին. զի սկզբնական մեղք ժառանգութիւն է ոչ միայն նեղգործական յանցաւորութեան նախահարցն՝ յորում ամենեքեան յանցեաք, այլ և ունակական մեայուն ինչ արատ՝ որոյ պատիժ է զրկումն ՚ի շնորհայ։ Զինակ ինն՝ սպանութիւն է նեղգործութիւն ինչ անցաւոր, այլ արատ նորին մնայուն ՚ի սպանօղն. այսպէս և սկզբնական մեղք մնա-

յուն է՝ի մարդ, չև վերածնեալ աւազանաւ։ Աստի զՀետ գայ և ծանրութիւն սկզբնական մեղաց, զի է ունակական խոտորումն Աստուծոյ, վասն որոյ և կամաւոր։

Եւ ածանցի՝ի մեզ սերնդեամբ սերման. զի, ըստ բացատրութեան սրբոյ Գրիգորիոսի, սկզբնական մեղք ածանցին՝ի նախահօրէ անտի՝ի մարդիկ՝ի ձեռն սերման, որպես գրեթէ կաւք՝ի հոգւոյ ածանցի յանդաման առ ներգործական մեղս։ Որպես զի եթէ ոք աստուածային զօրութեամբ կերպանայր՝ի մարդկային մարմինոյ՝ որպես Ադամ՝ի կաւոյ, ոչ ձգէր յանձն զսկզբնական մեղս. որպես և ոչ ձեռք մեղսակից գտանին հոգւոյ՝ յայլմէ արտաքին զօրութենէ և ոչ՝ի կամաց շարժեալ։ Այսպէս Քրիստոս չկարէր ձգել յանձն զսկզբնական մեղս, զի զօրութեամբ սուրբ Հոգւոյն յղացեալ անսերմնաբար՝ նիւթապէս ևեթ եղև Ադամայ, որպես Ադամ՝ի կաւոյ, և Եւա Ադամայ. որպես զի եթէ Եւա յետ պատուիրանազանցութեանն Ադամայ առեալ էր՝ի կողէ նորա, զերծ գտանէր՝ի սկզբնական մեղացն։ Իսկ զի և սուրբ աստուածածինն զերծ գտաւ յարատոյ անտի, որպես յիւրում տեղւոջն ցոյց մեզ տեսանել, այն նախաժաման շնորհացն Աստուծոյ եղեն արգասիք՝ի ձեռն արդեանցն Քրիստոսի։ Որպես որ զի՝ի վտանգի կալով անկանելոյ՝ի հիւանդութիւն՝ նախաժամանն նպաստիւք բժշկի զերծանիցի, կարէ ապաքէն ասել՝ թէ զերծուցեր զինս՝ի հիւանդութենէ, ոչ յոր անկեալն էի, այլ յոր մերնայր լինէ անկանել։ Արբոյն Ոսկեբերանի է օրինակս։

ԱՌԱՔԱԿՈՒԹԻՒՆՔ

Հարկ. Ա. — Ա. Ո՞ անկումն նախասահեղծիցն այլաբանօրէն մարթի է իմանալ, և ստուգիւ լինչ՝ի մովսիսական պատմութենէ անտի ոչ է գիտել։ — Բ. Ո՞՛ր և յանցուած նոցա թեթև լիմն է, Ճաշակումն պտղոյ. և չէ մարթ հաւատալ՝ զի ղդուզնաքեացն զայն և զանմեղանչական իր՝ զՃաշակումն պտղոյն ընդ այնպիսի ծանր մեղաց կամեցեալ իցէ Աստուծոյ արգելուլ նախամարդոյն։ — Գ. Եւ ընդէ՞ր իսկ օրէն պատճառ մեղաց Համա-

ըել զԱստուած, ՚ի կացուցանելն զմարդ ՚ի վտանգ այնպիսի՝ յորում զիտէրն Թէ անկանելոց է նա։ — Գ. Եւ անիրաւ իսկ Թուի հատասարապատիժ առնել զԱդամ ընդ Աւային, ուր Թեմնադոյն յոյժ եղեն յանցանք նորա քան զկնոջն։

Պխ. — Ա. Եթէ զսուրբ գիրս ըստ նորագանդիցն մեկնութեան կամիցիմք իմանալ, չգիտեմ ինչ ՚ի նոսա ստոյգ և հաւաստի՝ այլ ամենայն ինչ այլաբանութիւն և խորհուրդ։ Առաջին կանոն իմացուածոյ սուրբ գրոց աւանդութիւնն է. և քանզի անկման նախաստեղծիցն աւանդութիւն առ Հրեայս և առ քրիստոնեայս պահի Հաստատուն՝ յեցեալ ՚ի վկայութիւն սուրբ գրոց, յանդուգն է և մոլորական խոտորել յայնմանէ։

— Բ. Ոչ յիրէն եւեթ է ծանրութիւն մեղաց, այլ և ՚ի յարակից հանգամանաց։ Պատուիրանազանցութիւն նախաստեղծիցն բերէ յինքեան հպարտութիւն և ապերախտութիւն. պարտ է յաւելուլ և զձանձաչումն՝ զոր նոքա ունէին զչարութենէ մեղաց, և զմեծութենէ բարերարութեանն Աստուծոյ՝ այն ինչ յանէութենէ ՚ի գոյութիւն ածեալ այնպիսեօք գերբնական ձրիւք։ Վասն որոյ սուրբն Պօղոս առաքեալ զմեծութիւն մեղաց նախաստեղծին կոչէ։

Եթէ չէին իսկ արգելմանն այնմիկ պատճառք, սակայն զկամել եւեթ Աստուծոյ այնպէս՝ ՚ի վեր քան զամենայն պատճառս համարելի էր. այլ սուրբ Հարքն բազում իսկ պատճառս իմանան հրամանատրութենէն Աստուծոյ, և նախ՝ զի ծանիցէ մարդ զնչխանութիւն արարչին իւրոյ, և զի հանդիպ արասցէ հպատակութեան իւրոյ և հաւատարմութեան։ Եթէ ծանր ինչ և դժուարին օրպէս Աբրահամու էր հրամայեալ նոցա, յանդգնագոյն ևս յայնժամ ամպարիշտք զպատճառս մեղացն վերստուած հանէին։

— Գ. Այլ մեք յիւրում տեղւոջն ցուցցուք՝ զի նախատեսութիւնն Աստուծոյ ոչ հարկ առնէ նմա արգելուլ զչարիս, և զի մարթի է Աստուծոյ թողացուցանել զմեզ՝ առանց լինելոյ պատճառ մեղաց. մանաւանդ ՚ի խնդիրս յայս, զոր ոչ է պարտ բաժանել երբեք ՚ի պատրաստեալ փրկագործութենէն՝ որ առաւելաւն փոխարինելոց էր չարեացն։

— Դ. Իսկ զյանցանաց նախասահեղծին՝ Թէ ոչ քան զոր ծանրագոյն լեալ էր, Աստուծոյ միայոյ է սահմանել. սուրբ Հոգւոյն պատճառս երկուստեք ածեալ՝ և բերեն կարծիս, այլ ոչ ինչ յայնցանէ ի հաստատել հաւաստեաւ:

Աստ. Բ. Օ սերունդն մեղաց Ադամայ՝ ի մարդիկ՝ փոխանուննութեամբ իմանալի է, այսինքն փոխանակ պատժոյ և արգահատեաց մեղացն, իբր զի անտի տկարութիւն բնութեան և ամենայն ազգի ազգի չարիք մտին ի մարդիկ:

Պե. Եթէ այդպէս իմանալի էր, չգիտեմ այնուհետև տեղի համեմատութեանն՝ զոր առաքեալն առնէ, ընդդատապարտութիւնն ածեալ Ադամա՝ ի մարդիկ, և ընդ արդարութիւնն ածեալ Քրիստոսիւ: Զի անտեղի և աւելորդ առաքելոյն գտանիցէ, իբր ասել՝ ի Նահապետէ անդրէ եղոյս նահ յաշխարհ, փոխանակ ասելոյ՝ ի մեղաց անդրէ:

Աստ. Գ. Զառաքեալ անդանօր զներգործական մեղաց խօսի, և ոչ զսկզբնականին. զոր քաջայայտ առնէ բառդ բազմ. «Եթէ միոյն յանցանօք բազումք մեռան,» ուր պարտ էր ասել ամենեքեան:

Պե. Ահա աւանիկ բանիւս այսուիկ առաքելոյն ցուցանէ սուրբն Թէոդորոս ընդդէմ պետապատեանց, զի զսկզբնական մեղաց է բանն. զի եթէ ներգործական նաց էր, ընդէր միոյն յանցանօք մեռանէին բազումք, և ոչ վասն իւրեանցն մեղաց: Իսկ Բաղամայն ասելով ոչ եթէ արտաքոյ զմեզնայնն, զոր վերն՝ ի վայր յեղյեղէ. այլ առ՝ ի ցուցանել զբազմութիւն ծնելոցն՝ ի մեզ, զբազմութիւն ազգի մարդկան: Զայն զի և եբրայագիտութիւն զբազումն փոխանակ ամենեցուն սովոր է վարել, որպէս այն՝ ուր ասէ. (Ղուկ. Ժբ. 2.) «Զբազումն՝ ի ննջեցելոց՝ ի հող երկրի՝ յարիցեն, ոմանք՝ ի կեանսն յաւիտենականս, և ոմանք՝ ի նախատինս և յամօթ յաւիտենական,» և դարձեալ (ա. Կոր. Ժ. 17.) «Մի՛ հայ մի մարմին եմք բազումքս, զի ամենեքին՝ ի միոջէ հացէ անտի վայելեմք,»:

Աստ. Դ. — ե. Ադամ պատուիրանազանցութեամբն եղեալ մահացու, հարկաւ մահացուս և զորդիս իւր ծնանելոց էր, առանց իսկ սերելոց մեղաց իւրոց

՚ի նոսա . ապա ոչ է մարթ ՚ի թագաւորելոյ մահուան զհետ բերել զթագաւորութիւն մեղաց : — ՚ի . Պաւղէն ասէ առաքեալն . “Ալր ոչ են օրինք , և ոչ յանցանք ինչ ,, . (Հռ . դ . 15) : Ուր տղայոց չեն օրինք , ապա և ոչ յանցանք ինչ : Այլ գալձեալ ասէ (՚ի . Կոր . Ե . 10 .) “ Պետեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աստեղին Քրիստոսի , զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով՝ զոր ինչ գործեաց յառաջ , եթէ բարի և եթէ չար ,, : Պատ մանկունք , որոց չիք բարի ինչ կամ չար գործեալ , չկարեն ներքոյ անկանել դատապարտութեան : — ՚ի . Պատ թէ ոչ , ճշայր նոցա զհայրենի մեղացն կրել պատուհաս , ուր Պատուած ասէ Եզեկիելիւ (ԺԸ . 20 .) “ Պնձն՝ որ մեղիցէ , նոյն և մեռցի . և որդի զՀօր մեղս մի առցէ ,, :

Պխ . — ՚ա . Պդամ պատուիրանազանցութեամբն ոչ ըստ մարմնոյ եթէ ՚ի մահ դատապարտեցաւ , այլ և ըստ Հոգւոյ՝ կորուսեալ զսկզբնական արդարութիւն . և զոր կորոյն՝ չկարէ տալ որդւոց իւրոց . վասն որոյ և որդիք նորա ծննդեին ոչ միայն պարտաւորք մահու , այլ և զբերկեալք ՚ի սկզբնական արդարութենէ , ապականեալք սկզբնական մեղօք . ուստի և թագաւորութիւն մահու հարկաւ ընդ թագաւորութեան մեղաց գտանի կցորդեալ յայժմու պայմանի բնութեանս յորդիս Պադամայ ծնեալս ըստ բնական օրինի :

— ՚ի . Ալր ոչ են օրէնք , չեն ապաքէն և յանցանք ներգործական . այլ սկզբնական յանցանք իբր ունակութիւն ածանցի յորդիս Պադամայ վասն նորին անձնական ներգործութեան մեղացն . վասն որոյ և ՚ի միւսմէ բանէ առաքելոյն ոչ զհետ գայ անդատապարտ գոլ մանկտւոյ . զի ՚ի բանի անդ առաքելոյն գործել ոչ միայն զարտաքին գործս նշանակէ , այլ և զներքին խորհուրդս սրտից , վասն որոյ և զունակութիւնս բարիս կամ չարս՝ որովք շարժին կամքն ՚ի գործել : Պրդ այսպիսի չար ունակութիւն է յանկնուք տղայս մեղքն սկզբնական խանգարիչ կամաց նոցա : Պյլ զդատապարտութենէ անկնուք մանկտւոյ՝ թէ որպիսի ինչ պարտ իցէ իմանալ զայն՝ տեսցուք ՚ի ստորև :

— ՚ա . Պսա այսմ և մարգարէին բան զայնցանէ է , որք չեն ինչ հաղորդ հայրենի մեղացն գործեցելոց ՚ի

նոցանէ, վասն որոյ և արտաքոյ է խնդրոյս։ Քանզի ասա հաղորդք նախահօրն յանցանաց ծնանին որդիք, առանց սկզբնական արդարութեանն՝ զոր կորոյս նա մեղօք, և մեղք նորա մարդկայնոյ բնութեանս եղեն մեղք։

ԳՕԴՈՒԱԾ Զ

Զի սկզբնական մեղաց վարդապետութիւն ոչ է հակառակ բանի, և ոչ արդարութեանն Աստուծոյ։

Բուն մեղքն սկզբնական մեղաց՝ այն է կորուստ սկզբնական արդարութեան, այսինքն սրբաբար շնորհաց, զոր Աստուած ձրի շնորհեաց նախամարդոյն՝ ամբառնալով զնա ի վեր քան զբնիկն պայման, և առնելով զնա իւր որդեգիր։ Այսմ շնորհաց կը-ցորդք էին այլն ամենայն պարգևք, և պահպանութիւն նոցին հաստատեալ էր ի յարատևութիւն սրբաբար շնորհաց։ Այս գերբնական շնորհք աստուածապարգևք նախամարդոյն՝ էին ի ժառանգութիւն որդւոց նորա, եթէ պահեալ էր նորա զայն հնազանդութեամբ. այլ Ադամ պատուիրանազանցութեամբն կորոյս զայն. ապա և որդիք նորա ընդ նմա զրկեցան ի ժառանգութենէ նորա։ Այս է՝ զոր սկզբնական մեղաց սերումն անուանեմք. այսինքն զի իբրաքանչիւր որ յորդւոց Ադամայ, փոխանակ ծնանելոց սկզբնական արդարութեամբն՝ որով միայն հաճոյ լինելոց էր Աստուծոյ գերբնապէս, ծնանի զրկեալ յայնմանէ։ Եւ քանզի սկզբնական արդարութիւն ոչ այլ ինչ է՝ բայց շնորհք սրբաբար, կորուստ նորին հաւասար գոհանի մեղաց, և իբր ունակութիւն և արատ մեղաց սերի յորդիս, վասն որոյ որդիք Ադամայ ծնանին հեռացեալք յԱստուծոյ, որդիք բարկութեան և պարտաւորք դատապարտութեան։ Եւ զի այլ ևս պարգևք աստուածաձիլք Ադամայ կցորդք էին ընդ սկզբնական արդարութեան, կորըստեամբ սորա՝ զուրկ և յայնցանէ ծնանին որդիք նորա, անտառորք, մահկանացուք, տգիտութեան և ցաւոց ներքոյ անկեալ, որ են պատիժք և արգասիք մեղաց։

Արդ ընդէր չկոչէ օրէնն Աստուծոյ բառնալ վասն մե-

զայց նախամարդոյն յայգեստանէն նորա, որ ինչ ձրի և պայմանաւ հաւատարմութեան նորա առատաձեռնեալն էր նմա պարգեւաւ՝ որ չէին անկ բնութեան նորա. և զինչ հակառակ իցէ բանի, զի նախամարդոյն կորուսանելով մեղօք իւրովք զաստուածապարգեւ շնորհան՝ ոչ ևս կարիցէ թողուլ որդւոց իւրոց զայնս ՚ի ժառանգութիւն։

Հայր ոք ընկեցեալ յիշխանութենէ՝ կորուսանէ զազնուականութիւն իւր և զորդւոց իւրոց. կորուսանեն նաքա ՚ի հայրն իւրեանց զամենայն իւրեանց ժառանգութիւն. և իցէ այս հակառակ բանի։

Ասէ ասիցէ ոք զի չէ իրաւացի որդւոց զպատուհաս հայրենի մեղացն կրել. զի և սուրբ գիրք ոչ օրէն համարին զայն. "Որդի չկոր մեղս մի առցէ,, (Եզեկ. ԺԸ. 20)։ Նայց որպէս ասացաքս, ոչ է պարտ զներգործական մեղս ընդ սկզբնականիս այսմիկ շփոթել. զի ներգործական մեղք անձնական է գործողին, և գործողին և՛եթ իրաւացի է կրել պատուհաս, և չէ արդարև օրէն պատուհասել զոք որպէս մարգասպան վասն սպանութեանն ՚ի հօրէ նորա գործեցելոյ. այլ նախատինք սպանութեանն, և հետևանք նորին՝ անկումն ՚ի պաշտամանէ և ՚ի գոյից, անցանէն յորդիս։ Այսոցիկ ոչ նախաստեղծքն զներգործական մեղացն իւրեանց պատուհաս ինքեանք և՛եթ ընկալան խստիւ յաստուածային արդարութենէ։ Այլ և չէ իսկ համեմատութիւն ընդ սկզբնական մեղս և ընդ ներգործական. ապաքէն ամենեքին Ադամու մեղան, այլ ոչ ամենեքին իբրև զԱդամ. վասն որոյ և ոչ զնոցին պատուհաս մեղքն այն ածին ՚ի վերայ Ադամայ, որ ինչ ածեցան վախճանելոյ սկզբնական և՛եթ մեղօք. զի նորայն յաւիտենական պատապարտութիւն էր, եթէ ոչ զղջումն ընդ շնորհացն Քրիստոսի ՚ի վերայ հասանէին. իսկ սոցայս զըղկումն և՛եթ ՚ի տեսութենէն Աստուծոյ, որ ձրի պարգև է նորին։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ Ը

Աստղ. ա. — ա. Յաւելութիւն մեղացն ՚ի կամն է, զի մեղք է կամաւոր յանցումն ընդդէմ օրինացն. իսկ սկըզ-

բնական մեղք ականջ է՝ ի մեզ։ — ը. Վասն որոյ զայդ վարդապետութիւն ոչ է մարթ միաբանել, ոչ ընդ բարութեանն Աստուծոյ՝ վասն միոյն յանցանացդ յառնեալ և ապականիլ բոլոր բնութեանս. ոչ ընդ իմաստութեանն Աստուծոյ՝ ծուլացուցանել մարդկային բնութեան, զոր այնպիսեաք գերազանց ձրիւք Հոգւոյն էր, վայրապար դոյզն ինչ իրօք վատթարել և փոխել՝ ի յառեղծոյն պայման. և ոչ ընդ արդարութեանն Աստուծոյ՝ պատուհասել զանմեղս վասն մեղացդ այլոց, և հարկ՝ ի վերայ ածել նոցա մեղանչելոյ. զի որպէս քաջ իմաստասիրէ Պեդիագիոս, «Ոչ է մարթ Աստուծոյ, որ զմեղս իւրաքանչիւր ուրուք ծողս, զայլոյ մեղս՝ նոցա համարել»։

Պե. — ը. Պարտ է զանազանել զսկզբնական մեղս՝ ի ներգործականէն, որ պահանջէ զկամաւոր յանցումն ընդդէմ օրինացդ։ Մեղք նախաստեղծին ներգործական էր՝ ի նմա, վասն որոյ և կամաւոր. այլ կորուստ սկզբնական արդարութեանն՝ յորում է էութիւն սկզբնական մեղացդ՝ չպահանջէ զկամս, այլ յարատևէ յորպիսի նորա միտչէն դարձեալ՝ ի նոսա արդարութեան՝ այսինքն սրբարար շնորհացդ։ Եդդ որք միանգամ ծնանին որդիք Աստուծոյ, զրկեալք՝ ի սկզբնական արդարութենէ նորա ծնանին՝ որով և եմք մարթ էր նոցա աստուածահաճոյս գոլ գերբնապէս և որդիս Աստուծոյ։

— ը. Ուր կարի իսկ քաջ միաբանի վարդապետութիւնս այս ընդ բարութեան և արդարութեան և ընդ իմաստութեանն Աստուծոյ։ Օ՛ի եթէ հակառակորդք ոչ անարժան համարին Աստուծոյ ստեղծանել զմարդ որպէս էն իսկ այժմիկ, ապա և առաւել ոչ անարժան իցէ Աստուծոյ խոնարհեցուցանել զնա յայս պայման վասն յանցանացդ նախաստեղծին։ Իսկ հարկ՝ ի վերայ ածել մեղանչելոյ՝ լութերականացն է մոլորութիւն ընդդէմ ուղղափառ վարդապետութեան. և Պեդիագեայ իմաստասիրութեանն չիք աստ տեղի, զի ոչ ումեք՝ ի ներգործական մեղս համարի սկզբնականն, և յայժ մեծ է որ՝ ի մէջ երկաքանչիւրոցն խտիր։ Ուղղափառ հայքս ոչ ուստեանէն պատուհասել Աստուծոյ զսկզբնական մեղս դատապարտութեամբ՝ ի դժոխս, այլ զի մեռելոցն՝ ի նմին՝ զրկել և եթ՝ ի գերբնական և՝ ի ձրի

պարգեւաց, որ Քրիստոսին շնորհեցաւ մեզ։ Եւ է մարթ ցուցանել երբեք՝ զի պարտ էր Աստուծոյ սահմանել զմարդ ի գերբնական երանութիւն և յայն վեհ բարձրութիւն. մարդկայնութիւն իսկ արդարութեան օրէն է զրկել զորդիս յանցաւորի հօր ի փառաց և ի մեծութեանց ընդհելոց նմա։

ՑՕԴՈՒԱԾ Է

Յաղագս արգասեաց սկզբնական մեղաց։

Սկզբնական մեղօք անկաւ մարդ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ի յոռեգոյն պայման։ Ընդ որբաւրար շնորհաց կորոյս և զաստուածաձիր պարգեւս կցորդս նմին, զլուսաւորութիւն մտաց, զհաստատութիւն կամաց ի բարին, զտէրութիւն ի վերայ զգայութեանցն, և զազատութիւն ի շնաւորութեանց կենցաղոյս։ Ա ան որոյ տգիտութիւն և խաւար մտաց, տկարութիւն կամաց և ազատութեան, հիւանդութիւնք, ցաւք և մահ զհետ եկին սկզբնական մեղաց՝ որ է մահ հոգւոյ։ Այլ թէպէտ և այս ամենայն տկարացուցին զազատութիւն մարդոյ, այլ ոչ ի սպառ շինջուցին զայն. որպէս ուղղափառ հաւատք ուսուցանեն։

Իսկ Լութեր և հետեւողք նորա, քանզի զսկզբնական արդարութիւն համարին էական մասն բնութեանս մերոյ, յետ անկման նախաստեղծին կորուսեալ ասեն մարդոյ զրեթէ բոլորովին զազատութիւն իւր, ապիկար ընտրելոյ ինչ և առնելոյ, և լեալ ի հոգևորս իբրև կոճղ և իբրև արձան աղի։ Ա՛ւ զարձեալ զցանկութիւն՝ ի մեղս համարին. և քանզի սա ազդէ յամենայն գործս մարդոյ, վասն որոյ ապականեալս զնոսա ասեն և առհասարակ մեղանչականս, և զամենայն խնամատարիցն առաքինութիւնս գոլ յոռութիւնս։

Օհնդն և յանսեհենեանք ուսուցանեն, ըստ քառից եւեթ զանազանեալ ի վարդապետութենէ լութերականաց և կալւինականաց։ Քանզի զսկզբնական արդարութիւն անկ համարեալով բնութեանս մերում իբր ամբողջական մասն, կորստեամբ այնորիկ՝ կորուսեալ

աւէն մարդոյ զազատութիւն իւր ՚ի հարկէ. և զգանկութիւն մեզս համարին, և զամենայն առաքինութիւնս անհաւատից՝ յոռութիւնս և մեղս։

Նոքա ըստ բանականացն աղանդաւորաց, որք իմանալի ինչ համարին զմարդն կոչեցեալ ՚ի նոցանէ դրախտացին, սկզբնական մեղք ոչ այլ ինչ էին՝ բայց ամփոփումն մարդկային բնութեան. և ըստ առաւելագոյն զօրութեան զգայութեանցն կամ բանին՝ աւէն ստիպիլ մարդոյ ՚ի հարկէ ՚ի յոռութիւն կամ յառաքինութիւն։ Վասն որոյ և զիրկագործութիւն ոչ այլ ինչ համարին, բայց նոցոգութիւն ՚ի բանաւոր կենաց, առ որ Աբրահամ զանձն եւս օրինակ՝ որում ոչ միայն նմանիլ կարեն մարդիկ, այլ և գերազանցել քան զնա։

Ընդդէմ ամենեցուն սոցա զուղղափառ վարդապետութիւն յերկոսին ՚ի յաջորդ յօդուածոդ բացատրեսցուք։

ՅՕԴՈՒԱԾ Ը

Չի ՚ի պայմանի անկեալ բնութեանս վասն արժանի լինելոյ վարձուց կամ պատուհասի ոչ է բաւական ազատութիւն ՚ի բոնութենէ, այլ խնդրի և ազատութիւն ՚ի հարկէ։

Այս վարդապետութիւն մասն է հաւատոյ, զի հակառակն սորին՝ Յանսենեայ վարդապետութիւնն դատապարտեալ է յեկեղեցւոյ, այսինքն՝ զի «Ի պայմանի անկեալ բնութեանս վասն արժանի լինելոյ վարձուց կամ պատժոյ ոչ խնդրի ազատութիւն ՚ի հարկէ, այլ բաւական է ազատութիւն ՚ի բռնութենէ»։ Այս յառաջ քան զայս ՚ի Պիոսէ Հինգերորդէ և ՚ի Գրիգորէ Երեքտասաներորդէ դատապարտեալ էր վարդապետութիւն Պայի, որ ասէ. «Ոչ ինչ գործէ ոք կամաւ, թէպէտ և ՚ի հարկէ գործիցէ, սակայն գործէ ազատ»։

Այլ որպէս զի մի ինչ երկդիմութիւն ՚ի բանս մեր սպրդեսցի, ասասցուք նախ որ ինչ աստուածաբանք և ողջամիտ իմաստասէրք վերութենէ ազատութեան ասանդեն։

Ազատութիւն է կարողութիւն ընտրութեան. այս

ընդհանուր սահման բովանդակէ և զաստուածայինն և գերբնական և զմարդկայինն ազատութիւնս, և՝ ի բաց մերժէ զամենայն հարկ գիտելոյն և զարտաքին։ Իսկ զանազանի յազատութիւն կամելոյ և յազատութիւն գործելոյ։ Ազատութիւն կամելոյ է նոյն ինքն ներգործութիւն կամաց, որպէս թէ ոք կամիցի յառնել կամ ընկնել. իսկ ազատութիւն գործելոյ է կատարումն կամաց, որպէս թէ ոք կատարելով գիտման՝ յարիցէ և ընկնիցի։ Ասով յայտ է, զի տիրապէս ազատութիւն ներքինն այն է՝ յորում է կարողութիւն ընտրելոյ։

Ընտրութիւն այսր ներքին ազատութեան խնդրի, զի ոք զայս ինչ ընդ այն՝ կամ զբազում ինչ ընդ իրեարս կշռադատեալ՝ զմին կամ զմիւսն կամելոյ կամ չկամելոյ տէր իցէ։

Ազատութեան կամելոյ հակառակ է հարկն, զի բաւնայ զկարողութիւն կամելոյ կամ չկամելոյ։ Ասն ոյ մարթ է ումեք ունել զազատութիւն կամելոյ առանց ազատութեան գործելոյ, կամ ընդ հակառակն ունել զազատութիւն գործելոյ առանց ազատութեան կամելոյ։

Կարողութիւն ընտրելոյ խնդրին գոնեա երկու ինչ առ՝ի կշռադատել զայնոսիկ ընդ իրեարս. զի՝ի մի և եթէ ինչ չիք տեղի ընտրութեան։ Ասն որոյ ոչ է մարդ ազատ՝ի կամել զերջանկութիւն՝ իւր, և ոչ եթանեալ ոք՝ի սիրել զԱստուած. զի կամին նա հարկաւ, և սիրէ սա նմանապէս հարկաւ։

Կշռադատութեան ազգի ազգի են ծայրք. քանզի մարթ է նոցա լինել հակասականս, որպէս սիրել և ոչ սիրել. և ասի սա հակասական ազատութիւն։ Մարթ է ծայրիցն գոլ ներհականս, որպէս սիրել և ատել. և սա ասի ներհական ազատութիւն։ Մարթ է և գոլ զանազանս, որպէս գրել կամ ընթեռնուլ. և ասի յայնժամ անդրադարձական ազատութիւն։ Բուդ Աստուած և չերանեալս չիք ներհական ազատութիւն ընդ բարին և ընդ չար, զի հարկ է նոցա սիրել զբարին և ատել զչարն. իսկ՝ի մարդ ուղևոր՝ի կենցաղումն՝ ընդ այլ ազատութիւնս է և ներհականն։

Զանազի արմատ ազատութեան, որպէս ուսուցանէ սուրբ Աստուածային, են կամք իբր ենթակայ. իսկ բանն

է պատճառ. զի սովաւ կամքն բերի ազատօրէն յայս ինչ կամ յայն, կարելով բանին այլ և այլ ազգ դատել ըզբարւոյ։ Երկոքին սոքա, կամք և բան, ներգործեն ՚ի միմեանս. զի կամք վարէ զբանն ՚ի կշռադատել զպատճառս ընտրութեանն, և բանն վարէ զկամն յընտրութիւն։ Ոչ ա՛յսուհանդ կշռադատութիւն, այլ յարատածս ևեթ։

Ի ծանօթութեանց ասի ՚ի միտ առնուլ է, զի նախ չէ պարտ շփոթել ընդ միմեանս զազատութիւն կամելոյ՝ որ կանխէ, ընդ ազատութեան գործելոյ՝ որ գայ ըզհետ. երկրորդ՝ զկամն ընդ ազատութեան, զի մարթ է թէ իցէ ինչ կամաւոր՝ այլ ոչ ազատ. երրորդ՝ զի չէք ազատութիւն ուր չիցէ ընտրութիւն, և ոչ ընտրութիւն ուր չիցեն գոնէ ծայրք երկու՝ յորոց ՚ի մին կապրասցէ անկանել ընտրութիւն. չորրորդ՝ զի հաւաստիութիւն ազատութեան, զորմէ են բանքս, հաստատի ՚ի կանխիկ ազատութեան յորմէ և իցէ հարկէ՝ որ բառնայցէ զընտրութիւն ՚ի մէջ երկուց կամ բազմաց ծայրից զանազանից կամ ներհականաց կամ հակառակաց։ Ոչ ինչ փոյթ թէ հարկն այն կոչիցի բնական կամ բարոյական. այլ ուրանօր չիցէ հարկս այս, ՚ի վեր երևի ազատութիւնն կոչեցեալ անձնիշխանութեան, որով մարդ տէր է իւրաքանչիւր գործոց իւրոց։

Այլ առ բարւոք իմացուածք հնոց մատենագրաց՝ գիտելի է նախ, զի սովաւ են նոքա զկամաւորն փոխանակ ապաւոր յաձախ ուրեք վարել. երկրորդ՝ զի զկամս փոխանակ ապաւորելեան խառն ՚ի խուռն վարեն. երրորդ՝ զի զհարկ փոխանակ բռնադատութեան և բռնութեան վարեն. և չորրորդ՝ զի զբնական ազատութիւն ընդ բարոյականին, և զբարոյականն ընդ բնականին այլ ընդ այլս վարեն։

Այսոքիկ ծանուցեալ՝ մատիցուք ՚ի ցոյց վարդապետութեանս, զի առ ՚ի գործել զբարւոյ կամ զչարն՝ և առ և ՚ի պայմանի անկեալ բնութեանս՝ ոչ բաւէ ազատութիւն ՚ի բռնադատութենէ, այլ խնդրի և ազատութիւն ՚ի հարկէ։

Վասնզի սուրբ գիրք զբարութիւն կամ զչարութիւն, զվարձ կամ զպատուհաս, սահմանեն այնոցիկ ևեթ ՚ի գործոց՝ յորս ընտրոյ տէր է մարդ։ «Անիմ ձեզ վկայ

այսօր զերկինս և զերկիր. զկեանս և զմահ ետու առաջի երեսաց ձերոց, զօրհնութիւնս և զանէծս. ընտրեա զկեանս, զի կեցցես դու և զաւակ քո ,,. (Բ. օր. Լ. 19): Այս և յառաջին պատուիրանաց և՛ի խրատուց սուրբ գրոց քաջայայտ է. զի եթէ ոչ՛ի կամս մարդոյ էր առնել զայնս, ՛ի զուր էին պատուէրքն և խրատք, ՛ի զուր և խոստմունք և սպառնալիք պատուիրանապահացն և օրինազանցից. այլ լի են այսոքիւք հին և նոր կտակարանք: Յաջայայտ է դարձեալ՛ի վկայութեանց, որք պայմանաւ ինչ առաջի դնին մարդոյ, որպէս տեսանեմք. "Եթէ կամիս մտանել՛ի կեանս, պահեա զպատուիրանս ,,. (Մատ. ԺԹ. 17.) "Եթէ կամիս կատարեալ լինել, երթ ,, և այլն. (անդ. 23):

Օհոյն և Հարք ուսուցանեն. "Զպատս անձնիշխանս հասեալ զմեզ Յաւուած, ոչ յառաքինութիւնս և ոչ՛ի յառութիւնս հարկաւ բերիմք. զի ուր հարկն իցէ, չիք անդ տեղի պսակի ,,. (Հերոն. ընդդէմ Յովին. Գ. 3): Օրմէ սուրբն Գրիգորիոս՛ի գիրսն յաղագս բնութեան և ընդհայց (կե. 70.) ասէ. "Եւ ո՞ չգիտիցէ, ո՞ թողորով սրտիւ ոչ ընդունիցի զայդ. ո՞ այլազգ ըստմարդկային բնութիւն ասիցէ հաստեալ ,,: Եւ ապա յաւելու (յղ. էվլին հոգ. ԺԲ. 17). "Ի ման որոյ որ զինչ և արասցէ ոք, եթէ՛ի բնութենէ և ոչ՛ի կամաց առնէ, այսինքն եթէ չունիցի ազատութիւն առնելոյ կամ չառնելոյ, չկարեմք համարել նմա զայն՛ի մեղս ,,: Այսա ամին օրինակի և այլք՛ի Հարց ստէպ վարդապետեն. և քանն ինքնին զնոյն ցուցանէ, և խիղճ մտաց ամենեցուն վկայէ. քանզի իւրաքանչիւր ոք զգայ զիւր ազատութիւն, և՛ի ժխտելն իսկ զայն՝ տայ գնահատութիւն ազատութեան իւրոյ: Այրէ իսկ ոք վէր՛ի վերոյ ուրանալ զայն, որպէս պիւհոնականք զգոյութենէ իւրեանց երկբայանօք խօսէին, այլ ոչ ոք համարի խօսել նման՛ի մտաց: Այնոցայն ոք մտացի գիտէ զազատութիւն իւր առնելոյ կամ չառնելոյ զայս ինչ կամ զայն, և այսպէս կամ այնպէս առնելոյ. և ոչ երկբայի ընդ այն, ցորչափ արտաքին ինչ բռնութիւն չտեսանիցէ զնա անհրաժեշտ և անյաղթելի: Այնա ձշմարտութիւն, ասէ սուրբն Գրիգորիոս, յորոյ՛ի ցոյց չէ հարկ յածել՛ի արտաքսանութիւնս մատենից. բնութիւնն իսկ մեծա-

ձայն աղաղակաւ յայտ առնէ զայն, ՚ի սիրտս մեր ՚ի բնութենէ տպաւորեալ։

Օնոյն հաստատէ և ամենայն ազգայ և ազանց յաւիտենական ժամանակի համարել զմարդ ազատ ՚ի գործս իւր, և սահմանել նոցին վարձս և պատուհաս ըստ գործոյ. զոր ոչ ուրեք երբեք խորհեցաւ ոք սահմանել անբանից կենդանեաց, կամ առեան դնել դատելոյ զգործս նոցա, և ոչ զմանկանց չև ՚ի չափ հասելոց, և ոչ զխելագարից։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛ռաւ. — ս. Աւրբն Գրիգոր ՚ի գիրսն յաղագս քաղաքին Ա՛ստուծոյ ասէ (գիրք Է. գլ. Ժ.) "Թէ հարկ զայն սահմանիցեմք՝ որով ասեմք, հարկ է զի այսպէս իցէ ինչ կամ այսպէս լինիցի, չգիտեմ ընդէր երկնչիցիմք յայնմանէ իբր բարձող ազատութեան կամաց ՚ի մէնջ։ Այլ զանզի և ոչ զԱ՛ստուծոյ կեանս և զյառաջգիտութիւն ընդ հարկաւ արկանեմք յասել մեր՝ Թէ հարկ է Ա՛ստուծոյ կեալ միշտ, և զամենայն գիտել կանխաւ,,։ Ա՛պա ըստ սրբոյն Գրիգորի՝ հարկն ոչ բառնայ զազատութիւն կամաց։ — ս. Օ՛յ և այլոյք զազատութիւն կամաց սահմանէ՝ "շարժումն հոգւոյ առանց յուժոյ բռնադատելոյ,,։ Այսպէս և սուրբ Ա՛գուստինոս սահմանէ. "Ա՛զատ անձնիշխանութիւն ասի այնու, զի ոչ ինչ կարէ զնա բռնադատել,,։ Ա՛պա բռնադատութիւն ևեթ հակադրի ազատութեան։ Այս՝ ասի որով սուրբ Ա՛գուստինոս ՚ի վերոյ բանին Գրիգորի, "Այր հարկաւորն է, ոչ է կամաւոր,,, ասէ. "Պարտ է զբան Գրիգորի հասանել զհարկէ բռնադատութեան. զի բնական հարկ ոչ բառնայ զազատութիւն կամաց, որպէս ինքն իսկ ՚ի նոյն գիրս ասէ,,։

Պե. — ս. Աւրբն Գրիգոր վկայէ ընդդէմ ըստոյիկեանց, որք յառաջգիտութեանն Ա՛ստուծոյ ասէին բառնալ զազատութիւն մարդոյ. վասն որոյ ասէ, զի հարկն այն յառաջ եկեալ ՚ի նախագիտութենէն Ա՛ստուծոյ ոչ է նախընթաց՝ այլ հետեւորդ։ Այս ոչ է պարտ

պէ՛ր ընդ այլոց առնուլ զներգործութիւնս աստուածայինս՝ որ չէն ազատ, ընդ արտաքին գործս Արարչոյ՝ որ ազատ են ամենևին։

— Բ. Յերկոսին ևս՝ ի վկայութիւնդ բռնապարտութեան փոխանակ հարկի առեալ է։ Այս նախ սուրբն (Գրիգոր Նիւսացի այլուր ևս (Նահանջ. գիրք ա. գլ. ԺԵ.) սովին նշանակութեամբ ասէ, զի "Անխածնօղք առանց յուսոյ բռնադատելոյ մեղան, այսինքն ազատ կամօք. քանզի հաճոյական փորձիչն առնել զայն, և ոչ բռնադատեաց,,։ Սովին նշանակութեամբ և սուրբն Ցովհաննէս բազում ուրեք ասէ, թէ "Պնակատութեամբ աստուածայինն չնորհաց ոչ բռնադատի մարդ յառաքինութիւն,,։ Ա՛ն որոյ նոյն երկդիմութիւն բռնապարտութեան է և՛ ի յետին բան սրբոյ վարդապետին։

Արարիչ. Բ. Փրկիչն մեր ազատ էր՝ ի սիրել զԱրարուածս, և՛ ի հնազանդել կամաց Հօր մահուչափ, սակայն արժանի եղև այնուիկ երկրպագութեան յերկնաւորաց և յերկրաւորաց և՛ ի սանդարամետականաց։ Արդ Քրիստոս ոչ էր ազատ յայնս՝ ի հարկէ. զի որպէս երանելի՝ հարկաւ սիրէր զԱրարուածս, և իբր անմեղանչական՝ հարկաւ հնազանդէր կամաց Հօր։ Ա՛ն որոյ ասէ սուրբ Աթանասիոս, զի "Անպատ և՛ ի մի՛ինչ հաստատեալ էր՝ ի սիրել զԱրարուածս՝ զոր չկարէր չսիրել, սակայն այսուիկ չկորուսանէր զաղատութիւն կամ զպատճառ վաստակոց և արժանեաց, զի ոչ բռնի այլ կամակար բերելով յայն՝ տէր էր գործելոյ իւրոյ,,։

Պե. Ընդ կրկին տեսութեամբ պարտ է նկատել զաստուածսիրութիւնն Քրիստոսի. մի յետութեան իւրում, և ըստ այսմ չկարէր Քրիստոս չսիրել զԱրարուածս. և միւս ևս՝ ի ներգործութեան, և ըստ այսմ ազատ էր Քրիստոս ընտրել և զայս ինչ կամ զայն վասն սիրոյն Արարածոյ գործել, որպէս պահել կամ ձաշակել, շրջել կամ հանդչել, քարոզել կամ լռել։ Իսկ վասն մահուչափ հնազանդութեանն Քրիստոսի ասեմք, զի բազումք յաստուածաբանից ոչ հարկեցուցիչ զպատուէր մահուն համարին, և այլք գարձեալ պայմանաւ տուեալ նմա զայն՝ ի Հօրէ. վասն որոյ եթէ չկամէր յանձն առնուլ զմահ, կարէր խնդրել՝ ի Հօրէ՝ այլազգ մնօրինել. որպէս ինքնին իսկ յայտ արար. (Ա՛ռն. ԻԳ.

53.) "Ով համարիցին՝ թէ ոչ կարեմ ազատել զ՚այր իմ, և հատուցանիցէ ինձ այժմ այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց,,: Եւ գարձեալ (34. Ժ. 18.) "Իշխանութիւն ունիմ դնել զնա (այսինքն զանձն իմ,) և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր առի՛ ի Հօրէ իմմէ,,:

Իսկ սուրբ Աւգուստինոս ինքնին իսկ այլուր բացատրէ զբան իւր. "Ո՛չ թէպէտ Քրիստոս՛ ի մի ինչ հատատեալ էր, այսինքն՛ ի բարին, այլ ոչ պարզաբար՛ ի մին. քանզի կարող էր զայս ինչ կամ զայն բարի առնել կամ ոչ առնել, վասն որոյ և ունէր զազատութիւն անպատճառական՝ որ բաւական է՛ ի ստացումն արժանեաց,,:

Այսպէս և ուր ասէն՝ ոչ բռնի այլ կամակար՛ ի սէրն Աստուծոյ գալ Քրիստոսի, որով զազատութիւն՛ ի բռնադատութենէ Թուի շատ համարել՛ ի ստացումն արժանեաց, բռնադատութեամբ անդանօր իմանայ զՀրէշ, որպէս և կամակատարութեամբ զպատուիրանն. վասն որոյ յաւելու՝ զի Քրիստոս պէր էր գործելոյ էրոյ: Աստի յայտ է, զի բռնի ասէ փոխանակ ասելոյ կարկառ. և այլուր ևս բացատրէ՝ թէ որպէս ոք տէր գտանի գործելոյ իւրոյ, զի ասէ. "Տէր եմք գործելոյ մերոյ այնու, զի զայս կամ զայն ինչ ընտրել կարեմք,,:

Աշխարհ. գ. — ա. Աղատութիւն շատ է՝ զի գատատանաւ բանին գայցէ գործն՛ ի կատարումն, և կամքն ինքնօրէն բերիցի յայն. այսինքն այնպէս կամաւոր իցէ գործն, զի թէ կամի զ՚՝ արասցէ, և թէ ոչ կամի՝ ոչ արասցէ. որպէս սահմանէ սուրբն Գրոտինոս: Արդ ընդ այսմ սահմանի կարէ կալ՛ ի միասին հարկն, ապա ընդունայն է ասել՝ թէ հարկն բառնայցէ զազատութիւն մարդոյ: — բ. Ո՛ի ահա մեղաւորք խստացեալք յանզղջութեան՝ ընդ հարկաւ կան, այլ ազատութեամբ մեղանչեն. ընդ ծանրագոյն ևս հարկաւ ընկՀեալ դևք և դատապարտեալք, սակայն մեղանչեն. որպէս երանեալքն ազատօրէն սիրեն զ՚Աստուած, թէպէտ և հարկաւ բերիցին՛ ի սէր նորա, քանզի աստուածսիրութիւն նոցա է ներգործութիւն մարդկային: Եւ Աստուած ինքնին գոնէ արդ հարկաւ կամի զարարածս, այլ ազատ է յայն:

Պե. — ա. Որ ինչ և բառնայ զընտրութիւն՝ անհրա-

ժեշտ ՚ի մի ինչ կանխիկ սահմանելով կամաց, բառնայ պազատութիւն առնելոյ կամ չառնելոյ՝ որ պահանջի ՚ի ստացուածն արժանեաց կամ պարտաւորութեան։ Ա՝ ամն որոյ զսահմանն զայն սրբոյն Ներսիսեայ պարտ է ի-մանալ, եթէ ընտրութեամբն ոք կամիցի կամ չկամիցի, որպէս ինքնին իսկ այլուր պարզաբանէ։

— ԺԸ. Ընդեղջ մեղաւորաց հարկ ՚ի մեղն կալոյ՝ ոչ է բնական, այլ բարոյական և տարտամ, և ոչ ՚ի մի ինչ անդրաժեշտ սահմանեալ. վասն որոյ մարթ է նոցա յաղթել այնմ, մանաւանդ աղօթիւք և այլովք նպաստիւք՝ որ ՚ի մեղաց յետս ձգիցեն զնոսա. զորս թէ ոչ առնեն, իւրեանց է վնասն։ Իսկ դատապարտեալք և դէք ապաքէն և նոքա ընդ բարոյական հարկաւ կան. այլ քանզի ոչ ևս են ուղևորք, մեղք նոցա չհամարին ՚ի մեղս ըստ վարդապետութեան սրբոյ Ներսիսեայն։

Եւայց հարկն, որով Աստուած կամի արդ զարարածս, հետևորդ է հարկ. այսինքն զի այնու կամաւ կամի արդ Աստուած զարարածս, որով կամեցաւն զնոսա ՚ի սկզբանէ ազատ և անփոփոխելի կամօք։

ՅՕԴՈՒԱԾ Թ

Զի և ՚ի պայմանի անկեալ բնութիւնս կայ և մնայ ՚ի մարդում ձշմարիտ ազատութիւն կարևոր ՚ի վարձ կամ ՚ի պատուհաս։

Ասն է հաւատոց վարդապետութիւնս այս սահմանեալ ընդդէմ յանսեներեանց և նորազանդից ՚ի ժողովէն տրիդենտեան. "Որ զանձնիշխան ազատութիւն մարդոյ ասիցէ կորուսեալ և շիջեալ մեղօքն Ադամայ, կամ անուն և իսկ անիր, և կամ կեղծիս ՚ի սատանայէ մուծեալ յեկեղեցի, նզովեալ լիցի։"

Որ ինչ ՚ի նախորդ յօդուածի ՚ի սուրբ գրոց և ՚ի հաւատարակաց մտաց և ՚ի գործոց աճաք ապացոյցս, նոքին և ՚ի ցոյց ձշմարտութեանս այսորիկ զօրեն հաւատարատիս։ Ոչ ինքեանք, որք ուրանան բանիւք զայս ձշմարտութիւն, գործովք իւրեանց խոստովանին զայն ՚ի վարել իւրեանց ընդ այլս, և մանաւանդ որոց իշխեն. քանզի յոյժ այլազգ պարտ էր նոցա վարել ընդ

յանցաւոր, եթէ արդարև Հաւատայքին՝ թէ չիք նոցա ազատութիւն և՝ ի հարկէն բռնադատեալ զառաճա-նիցին՝ ի յանցանս։

Այլ որպէս սուրբն Աթանաս վարդապետէ, նոյն իսկ կամք մարդկային ապացոյց ազատութեան իւրոյ է, զի եթէ կամիցի ինչ կամել՝ կամի, և գայ կամել իւր՝ ի գոյ. քանզի ասէ սուրբ վարդապետն. (յղ. Ամ-փոճոյ. գիրք Ե. գլ. Ժ.) “Վասնզի բազում ինչ առ-նեմք, զոր եթէ չկամիցաք՝ առնիցաք իսկ ոչ. և յայսմ առաջին է նոյն ինքն կամելն. զի եթէ կամիմք՝ գոյ, եթէ չկամիմք՝ ոչ գոյ. քանզի ոչ իսկ կամիցաք, եթէ չկամիցաք,,։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ածարկ. Ա. Սուրբ գիրք յայտնի ուսուցանէն, զի չիք ազատութիւն մարդոյ՝ ի գնացս իւր. քանզի ասէն (Յե-րեմ. Ժ. 23.) “Գիտեմ տէր, զի ոչ մարդոյ է ձանա-պարհ իւր,,։ Այլ դարձեալ (առակ. ԻԹ. 1.) “Այրն Թագաւորի՝ ի ձեռս Աստուծոյ, ընդ որ կոյս կամի հա-յեցուցանել՝ դարձուցանէ զնա,,։

Պե. Այդոսիկ և զայլ այդպիսի վկայութիւնս սուրբ գրոց պարտ է իմանալ նախ զկարևորութենէ աստուա-ծային չնորհաց, որով և՛ եթէ կարող է մարդ գործել զբարիս։ Երկրորդ՝ պարտ է իմանալ զկատարմանէ գործոց, և ոչ զկամաց գործողին։ Այլ դարձեալ ըստ տեղւոյն պատշաճի պարտ է իմանալ և զծառայութե-նէ մեղաց, և զբարոյական հարկէ։

Ածարկ. Բ. Սուրբն Աթանաս ուսուցանէ (յԱմ-ֆեռն. գլ. Ժ.) կորուսեալ մարդոյ՝ ի ձեռն մեղաց զանձն-իշխանութիւն, քանզի ասէ. “Զի եղծեալ մարդոյ անձնիշխանութեամբն, և զանձն կորոյս և զանձնիշ-խանութիւն,,։ Այլ որ մեծն է, յաւելու՝ հարկ մեղաց՝ ի վերայ հասեալ անկելոյ բնութեանս. քանզի ասէ (ընդդէմ Փոտ. ին.) “Ի մեղանչել նախաստեղծին ա-զատ կամօք, անկաք ընդ հարկաւ մեղաց սերեալքս՝ ի նմանէ,,։

Պե. Կորաղանդք և յանսեներանք զայդ և զայդպիսի

բանս սրբոյ վարդապետին կամակորէն ըստ մտի իւրեանց, այլ նա բաղդատութեամբ անձնիշխանութեան նախասահմանեալ չև յանցուցելոյ կոչէ կորուսեալ զնոր ազգեանն՝ ի նմա յետ յանցուածոյն։ Ա՝ ասն որոյ այլուր ևս ասէ ևս ոմն կոչէ զայն. "Առեալ՝ ոչ ևս ունելով լիուլի զարդարութիւն ընդ անմահութեան, և անմեռ՝ կարելով գործակից լինել ընծորհացն Աստուծոյ,,։ Յայտնագոյն ևս ասէ այլուր (առ Հռոմ. գլ. ը.) "Կորեաւ մեղաք ազատութիւն, այլ այն՝ որ՝ ի դրախտին էր,,։

Իսկ հարկ զբարոյականն զայն իմանալ, այսինքն զօրինս՝ որ յանդամս մեր է, զորմէ ասէ առաքեալն (հռ. է. 15.) "Ա՛ւ եթէ զոր կամիմն՝ զայն առնեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ,,։

Աստուածն. գ. Ա՛թէ՝ ի հարկէ բերին կամք առ երջանկութիւն ընդհանրապէս, ապա և՝ ի գործս իւրաքանչիւր. քանզի որ ինչ և ընտրեն, իբրև իսկապէս բարի կամ կերպարանաւ բարւոյ ընտրեն։ Ա՛թէ երկուստեք զուգահաւասար պատճառք ընդ առաջ ելանիցեն կամաց, ոչ ևս կարասցէ ընտրել. ապա թէ ոչ, առանց բաւական պատճառի գտանելոյ ընտրութիւնն. որպէս մէտ կշռոյ՝ զի ոչ խոնարհի, եթէ ոչ մի՝ ի նժարիցն լցէ ծանրագոյն։ Աստուածն առնելոյ կամ չառնելոյ՝ ի զուգակշռութեան կայ, որ ոչ երբեք յաջողէ իրօք. զի կամ՝ ի պատճառաց, կամ՝ ի զգայարանաց, այսինքն՝ ի ցանկութենէ, աղմկի. քանզի կամք կուրօրէն զհետ գնան՝ ի հարկէ բանին կամ հրապուրանաց զգայութեան։

Պա. Ա՛ւ յաւիտականն կամք, եթէ ոչ բարի ինչ ըստ ամենայնի ծանիցեն. այլ յիրս իւրաքանչիւր միշտ չար ընդ բարւոյ խառն ընդ առաջ ելանեն կամաց, զի չիք ինչ ամենևին բարի՝ բայց միայն Աստուած։ Կամք՝ ի ձեռն այնր ընդհանուր և հարկաւոր բերման առ երջանկութիւն՝ առնէ ընտրութիւն և յիրս իւրաքանչիւր. այլ՝ ի չգտանել ինչ ամենևին բարի կամ չար, կարէ միշտ ազատօրէն կշռադատել և սահմանել։ Իսկ եթէ երկուստեք զուգահաւասար իցեն պատճառք, առաւել ևս ցուցանեն զազատութիւն ընտրութեան նորա. զի ուր մէտ կշռոց անշարժ կայ՝ ի հաւասար ծանրութեան նը-

ժարիլ, կամք մարդոյ ազատօրէն միտէ յոր կոյս և կա-
մի։ Եւ ոչ՝ի զուգակշռութեան կայ ազատութիւն առ-
նելոյ ինչ կամ չառնելոյ. այլ շատ է առ այն, զի ընտ-
րոյ տէր իցէն կամքն, Թէպէտ և՝ի պատճառաց և՝ի
զգայութեանց ձգեալ։

Լ՝ուտր. Դ. Ա՝արթ է զի գիտակցութիւնս մեր ներ-
քին սխալիցէ, և զոր կարծեմքս գործել ազատօրէն՝՝ի
կանխիկ հարկէ վարեալ գործիցեմք։ Եւ այս ոչ օտար
ինչ՝՝ի չէմարտութենէ Թուի՝ այնու, զի՝՝ի գործս մեր
իւրաքանչիւր կարօտիմք աստուածային նախաշարժու-
Թեան, և յամենայնի կախիմք ջնմանէ իբրև երկրորդ
պատճառաք զառաջնոյ պատճառէ։

Պէ. Ա՝րդեօք և իմաստասիրութիւն ուսուցանէ, գի-
տակցութիւն մեր չկարէ՝՝ի նենգին զգայողութիւնս իւր
սխալել. ապա Թէ ոչ, ՝՝ի պիւտհոնական անտեղութիւն
լինիցէ մեզ զառաջանալ. յարտաքին ևեԹ իրս մարԹ է
նմա սխալել։

Լ՝պաքէն կարօտ է մարդ հանապազ պահպանու-
Թեանն Լ՝ստուածոյ առ՝՝ի կեալ և՝՝ի գործել. Լ՝ստուած
՝՝ի սկզբանէ ետ իրաց ամենեցուն զիւրեանց ներգործու-
Թիւն, և պահէ զայն հանապազ. և ըստ այսմ մարԹ
է և պարտ ասել, զի և մարդիկ ըստ այլոց բնաւից էից
կախին զԼ՝ստուածոյ որպէս երկրորդ պատճառաք զառաջ-
նումն, եԹէ՝՝ի կեալ և Թէ՝՝ի գործել։ Լ՝այլ այս պահ-
պանութիւն հաստատեալ կայ՝՝ի ներգործութեան կա-
մացն Լ՝ստուծոյ՝՝ որ ձգի ընդ գոյութիւն համագոյից ան-
եղրապէս, պահելով իւրաքանչիւր ըստ բնական գիւր շար-
ժումն. որպէս սուրբն Լ՝գուստինոս ասէ. ՚՚Լ՝ստուածա-
յին կամքն այնու օրինակաւ շարժէ զէակս ամենայն
՝՝ի գործել, որպէս անկ է բնութեան իւրաքանչիւրոցն.
վասն որոյ առաւել հակառակին շարժմանն Լ՝ստուծոյ,
եԹէ կամքն՝՝ հարկաւ շարժէր՝՝ որ չէ անկ բնութեան
իւրում, քան ազատօրէնն շարժելովին՝՝ որ անկ է բնութեան
իւրում՚՚.

ԳԼՈՒԽ Դ

ՅԱՂԱԳՍ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵՆԱՑ ՄԱՐԴՈՑ

Ժամանակաւոր և սուղ են կեանք մարդոյ ՚ի վերայ երկրի, և յաջորդէ յաւիտենականն. այլ քանի՛ այլ աղգ ՚ի նմա պայմանք մարդկան: Ամբք միանգամ ընդ հօքն Աստուծոյ առաքինացան, միան նոցա վարձք. որք ընդհայն Աստուծոյ ընդդէմ դարձեալ և անօրինեցան, միայ նոցա պատուհաս: Ամբք առանց արատոյ մեղաց ընթաւին ՚ի կենաց, իսկ և իսկ հասանեն յաւիտենական երանութեան. իսկ որ մեղօք վախճանին, անկանին ՚ի յաւիտենական դատապարտութիւն: Ամբք թեթև ինչ յանցանօք մեռանին, և կամ չև ևս քաւեալ սատ ապաշխարանօք զմեղս, կրեն անդ ժամանակաւոր քաւութիւն. իսկ որք միանգամ սկզբնական ևեթ մեղօք առանց մկրտութեան, զրկին ՚ի յաւիտենական երանութենէ: Ոչ ամք են ապա հանդերձեալ կենաց պայմանք, զորոց առաջի կայ մեզ խօսել. այսինքն զկերբնական երանութենէ, զքաւարանէ, զյաւիտենական դատապարտութենէ, և զպայմանէ անկնուք վախճանելոց:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս գերբնական երանութեան:

Երանութիւն է պարառութիւն ամենայն բարեաց, զոր իմաստասէրք արտաքինք ծայր բարեաց կամ վերջին վախճան կոչեցին. և սահմանի ՚ի դասականաց՝ բնականին ցանկութեան յագեցուցիչ գերագոյն բարին: Երանութիւն արդարոյ է ժառանգութիւն գերագոյն բարւոյն. Աստուած է վարձ նորա: Ոյ ասն որոյ առաքեալն ասէ. (ա. կոր. բ. 9.) "Զոր աչն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց,,: Այ է տուեալ մարդոյ յերկրի ատ ՚ի միտ առնուլ զերանութիւն, զոր

արդարք վայելէն յերկինս. որ ինչ ՚ի հաւատոյ զի-
տեմքն՝ այս է, զի Աստուած ինքնին երանութիւն լեալ
մարդոյ՝ յագեցուցանէ զմիտս նորա և զսիրտ, ընդ զա-
մենայն իղձս նորա միշտ ցայնժամ անյագելիս, և առ-
նէ զնա գերաբնապէս երանելի: Երանութիւն արդա-
րոց յերկինս՝ է երանութիւն լուսոյ և գերակատար.
ժառանգեն նոքա զԱստուած, և գտանեն ՚ի նմա ան-
դորր կատարեալ և զվայելս ամենայն բարեաց. անդորր,
զի Աստուած է վերջին վախճան նոցա, և զվայելս բա-
րեաց, զի նա ինքն է Ճշմարտութիւն, նա ինքն կեանք,
նա ինքն լուսոյ ամենայն բարութեանց:

Երանութիւն արդարոց է կատարեալ, ոչ միայն զի
ժառանգեն զդերագոյն բարին, այլ և զի ժառանգեն
զայն յաւիտեան անկորուստ. "Եւ արդարքն ՚ի կեանսն
յաւիտենականս,,. (Մատթ. իե. 46): Երանութիւն՝
զոր ոչ ոք կարասցէ կապտել ՚ի նոցանէ. յաւիտեան
տեսցեն զԱստուած դէմ յանդիման, յաւիտեան սի-
րեսցեն զնա և սիրեսցին ՚ի նմանէ, և ՚ի նոյն սէր փո-
խադարձ լիցին հաղորդք փառաց և երանութեանն Աս-
տուծոյ: "Օ՛ի նոքիմբք աստուածեղէն բնութեանն
լինիցիք հաղորդակիցք,,. (Բ. Պետր. ա. 4):

Այս դէմ յանդիման տեսութիւն Աստուծոյ, յորում
է երանութիւն արդարոց, կոչի գերբնական. զի ոչ է
հնար ստեղծական բնութեան տեսանել կամ իմանալ
զԱստուած բնականապէս, որպէս մոլորեցան ասել ա-
նոմեանք և բեզուարդեանք և բեզուեանք հակառակ
առաքելական բանին. "Օ՛որ ոչ ոք ՚ի մարդկանէ ետես,
և ոչ տեսանել կարող է,,. (ա. Տիմ. զ. 16): Եւ պատ-
ճառք անտեսութեանն Աստուծոյ քաջայայտ են. զի
որպէս մարմնաւոր աչք չկարեն տեսանել զհոգեղէն
էակս վասն գոլոյ նոցա գերազոյ բնութեամբ, այսպէս
և ոչ հոգի տեսանել կարող է զԱստուած բնականա-
պէս: Արդ զհետ գայ, զի և ոչ գերիմաց միտք հրեշ-
տակապետի աւելի ինչ քան զմարդկեղէն միտս իմանայ
զԱստուած, եթէ գերբնական լոյսն իւր հաւատոյ յեր-
կոսին. որպէս և ոչ նրբամիտ աստուածաբանի աւելի
ինչ են հաւատք գերբնական քան զմիամիտ շինականին:

Եւ կոչի պէմ յանդիման տեսութիւնս այս գերբնական,
զի այնպէս ունի սա առ միտս՝ որպէս առ աչս տեսանել

զոք երես առ երես, նկատել դէմ ընդդէմ. և զայս յայտնաբանէ առաքեալ յասելն. "Արդ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յան-դիման. այժմ խեղամուտ եմ փոքր ի շատէ, այլ յայնժամ գիտացից որպէս և նայն ծանեաւ զիս ,,. (ա. կոր. ԺԳ. 12):

Արդ այսմ ապա սուրբ գիրք ուրեք տեսանելի ասէն զԱստուած և չտեսանելի, որպէս այն "Ով հրեշտակք նո-ցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է ,,. (Մատ. ԺԸ. 10.) "Յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք. զի տեսանելոց եմք զնա որպէս և էն ,,. (ա. Յհ. Գ. 2): Եւ բազում այլ ուրեք ասեն զԱստուած անտեսանելի, անչմանալի. "Ով Աս-տուած ոչ ոք ետես երբեք ,,. (Յհ. ա. 18.) "Ճառագա-ւորին յաւիտենից անեղծի և աներևութի ,,. (ա. Տիմ. 17): Եւ այս ոչ վասն այն միայն՝ զի բնականապէս ան-տեսանելի է Աստուած, որպէս ասացաքս, և ըստ քա-րոզութեան աւետի իւրում ընդոհէ արարածոց զօրութիւն գերբնական առ ի կարելոց նոցա տեսանել զինքն և ի-մանալ, ըստ այնմ թէ "Առաւել երեսաց քոց տեսա-նեմք զլոյս ,,. (ադմ. ԼԶ. 10.) այլ և զի ընդոհին իսկ այնուիկ և զօրութեամբ անհնար է արարածոց տես-նել զԱստուած՝ իմանալ զնա և ըմբռնել ըստ բոլորին, կամ բովանդակել զանսահմանն՝ որպէս մոլորեցան ա-սել անուամբք: Որոց ընդդէմ յեղյեղեն Նաղք ըզ-քառքս անտեսանելի, անչմանալի. որպէս և Յակեբեան ի բանն տերունական "Եթէ ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ոչ որ էն յԱստուծոյ՝ նա ետես զՀայր ,, (Յհ. Զ. 46.) ասէ ընդդէմ նոցին. (Ճառ Է.) "Տեսութիւն աստ զՀանապազումն կոչէ. և զի մի կարծիցի զմարդիկ միայն ի բաց տանել և ոչ զՀրեշտակս, յա-ւելու՝ եթէ ոչ ոք են յԱստուծոյ, նա ետես զՀայր. (այս-ինքն Որդի միայն): Այսոքան բառքս անտեսանելի և անչմանալի ընծային Աստուծոյ իբր հարկաւոր ստորոգե-լիք. զի Աստուած իսկապէս անտեսանելի է, անիմանա-լի, անբովանդակելի, անհասանելի և անըմբռնելի:

Ով այսոսիկ նախակարգեալ, մատիցուք արդ ի ցոյց առաջարկութեանս մերոյ:

ՅՕԴՈՒԱԾ Բ

Ջի արդարք յերկիւղս գերբնապես տեսանելն զԱստուած դեմ յանդիման:

Ասէ Հաւատոց, սահմանեալ ՚ի ժողովն փլորենտեան, և հաստատեալ ՚ի բանս յայսոսիկ սուրբ գրոց: "Ո՛չ հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ ,,. (Մատ. ԺԸ. 10): Այլ զոր ասէն զհրեշտակաց՝ զարդարոց առհասարակ է իմանալ, զորոց ասէ այլուր նոյն տէր. "Ո՛չ հաւասար հրեշտակաց են ,,. (Ղ Կ. ի. 36): Այլ առաքեալն ասէ. "Ո՛չ յԱմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման ,,. (Ա. Կոր. ԺԳ. 12):

Այլ միւս առաքեալ ասէ. "Գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք. զի տեսանելոց եմք զնա որպէս և էն ,,. (Ա. Յհ. Գ. 2): Ո՛նոյն յայտ առնեն և այլ բանք գրոց. "Յապեցայց յերևել փառաց քոց: ... Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից, և ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց ,,. (Սղմ. ԺԳ. 17: ի. 7):

"Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն ,,. (Մատ. Ե. 8):

"Եւ որ սիրէն զիս, սիրեսցի ՚ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս ,,. (Յհ. ԺԴ. 21):

Մարթ եր մեզ բազում վկայութիւնս ՚ի Հարց առհասարակ և ՚ի ժողովոց ածել ՚ի հաստատութիւն ճշմարտութեանս. այլ մեք ՚ի մերոցս ևեթ, որք կարծեցան յոմանց ժխտել զայս ճշմարտութիւն, կարևոր համարիմք ածել փոքր ՚ի շատէ:

Սուրբ Ղուսաւորիչն մեր. "Ո՛վ բաւական է ասել զսրբոցն հատուցումն, զԱստուած տեսանել և յանսպառումն վայելել: Ո՛ի եթէ զարեգակն տեսանեմք յետ դիշերային ցրտութեան ՚ի ջեռուցանել, ՚ի լուսաւորել՝ խնդամք, որ փոփոխելի և անցաւոր է. իսկ զանձառելի լոյսն, զնորա արարիչն և զմեր՝ զինչ պարտ է ասել զանհամեմատ բարին զԱստուած, որ լցուցանէ զսրբոցն

զանձինս ընդհօք, և վայելեցուցանէ յամբաւ բարիսն և յանվախձան երանութիւնն ,, . (Յճխ. ք) :

"Իսկ միւս ևս բարձրագոյն. Յայնմ աւուր ծանիջիք, ասէ, թէ ես 'ի Հօր, և դուք յիս, և ես 'ի ձեզ: Նոյն իսկ առնուլ զասացեալն պատեհագոյն է, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց ,, . (Աթխ. չԼԹ) :

Նովսէս քերթող ('ի ճառն Վարդավառի.) "( )ր ծագման մեծի փառացն Աստուծոյ, որ է նոր արքայութեան սկիզբն, և տեսչութիւն էական լուսոյն . . . 'ի հոգևորն բարձրանամք աստուածգիտութեան լեառն . . . 'ի նմա զփառս տեառն իբրև ընդ հայելի տեսանեմք : . . . Նոր և պարբ բարերջանկացն . . . բայաւ երեսօք առ Աստուած հայելով՝ աստուածացեալք ,, :

Գրիգոր առ երանեալ աւազակն ('ի ճառ Յարեաւ.) "Գնա 'ի վեր բարձրացար . . . զՀայր բոլորովին տեսեր դու, և զոր մեծն Պօղոս ոչ կարաց թարգմանել զպատրաստ տեղին և զպարգևան, դու առաջագնաց եղեր ,, :

(Ի պատ. Վարդ.) "Օ՛ի ոչ այսուհետև է ասել՝ թէ տեսից զերկինս զգործս մատանց քոց, այլ զի տեսից զքեզ տէր երկնի և երկրի ,, :

Նամբրէ ('ի ճառ գալստ.) "Նոր իմանալի է տէրութեամբ, բոլոր աստուածութեամբն սերովբէից երևի ,, :

Թէոդորոս ('ի ճառն Խաչին). "Գասք աջակողման . . . զեռաթևեան և զեզակի լոյն աչալուրջ երեսօք հայմարձակապէս տեսանելով ,, :

Յոհաննէս իմաստասէր (ընդդէմ պաւլիկեանց). "Յանկայ միշտ բանական բնութիւնս զերագունի և առաջնոյ պատճառին հասանել տեսութեամբ ,, :

Յոհաննէս կաթողիկոս (Վերջաբ. պատմութեան) "Չանդիսապէս արժանի գտնիք յետ այսմ ժամադրութեան կենացս . . . հայցել զտեսութիւն Աստուծոյ. ոչ վիմով ծերպի զեղչել և գյետոյն միայն տեսանել, այլ զբովանդակ նկարագիրն փառացն Հօր դէմ յանդիման նրկատել ,, :

Եծն Աստղիկ ('ի մեկն. ձամագրոց և պատարագի) "Ցեսանի սուրբ Երրորդութիւնն մաքրեցելոցն մտօք ,, :

"Օ՛ուարթուն կոչին վերինք, վասն միշտ 'ի զուար-

Թուլթեան և յուրախութեան գոլոյն աստուածային տեսութեամբ ,, :

Նարեկացի (ի բանն ժբ.) "Ընդերկմիտ յուսով հաւատամ ... ոչ քաւութեան միայն հասանել, այլ ըզնոյն ինքն տեսանել յողորմութիւն և ի գթութիւն և յերկնից ժառանգութիւն ,, :

Մարկաւագ վարդապետ (յաղօթն). "Հարձրացո ի ստորայնոցս զմիտս իմ ... խաւարեացին աչք մտաց իմոց ի տեսիլ սիրոյ սորա, զի զքեզ միայն տեսից կորովութեամբ աչաց ի պարգեւէ քումմէ լոյսդ իմանալի ,, :

Մարգիս վարդապետ (յորդ. Ճ.) "Յանկանելոյն Աստուծոյ և ի զրկելոյն ի բարւոք տեսութենէ նորա երկիցուք : ... Ընդ ի գեհենէն երկնչին, այլք ի տանջանացն սարսեն. բայց ես յամենայնէ սարսեմ և դողամ ... եթէ ի սիրոյն Աստուծոյ անկանիցիմ, և ըզքաղցր տեսիլ նորա ոչ տեսանիցեմ : ... Ահ և յարքայութիւնն մնանիցեմ, և զամենայն փառան ժառանգիցեմ, և զնա ոչ հասանիցէ ինձ տեսանել, քան զգեհենն չար համարէի զայն հանգիստն ,, :

"Ի մարմնի գոլով մեր, իբրև ընդ հայելի օրինակաւ տեսանեմք. վասն զի և ոչ տանի տկար բնութիւնս այլ ազգ գհրաշալի և զսոսկալի տեսիլ նորա տեսանել : Ոչ յորժամ զսպականացուս ի բաց եդեալ՝ զանապականն զգենուցանք պատկեր, յայնժամ դէմ յանդիման՝ որպէս և էն իսկ՝ իբրով անհասանելի բնութեան փառաքն տեսանեմք զնա : Ասուի ինձ եթէ այս այն է, զոր ինքն ամենատէրն ասաց առ Հայր. Կամիմ, ասէ, զի ուր եմն իցեմ, և սոքա ընդ իս իցեն, զի տեսանիցեն զփառան իմ : ... Տեսանելոց եմք, ասէ, զնա որպէս և էն. չէք ինչ բարձրագոյն փառք և մեծագոյն երանութիւն, քան զնա իբրական փառաքն լի բովանդակ տեսանել. քանզի այն է արքայութիւնն ... այն իսկ է անձառ բարիքն և անպատում երանութիւնն : Ընդարև բիւրապատիկ երանութեան և անեզրական ինդութեան արժանաւորք են, որք աչալրջութեամբ զտեսիլն զայն տեսանեն, և առանց ամօթոյ և պատկառանաց Հային յերեսան Աստուծոյ : ... Ընդարև մեծագոյն յոյս և մարդասիրութեանն Աստուծոյ արժանաւոր՝ ակն ունել ... զնա տեսանել յիւր անզուգական փառան ,, :

Ը Նորհալի (՝ի ՌԷՖ. Խոյէր.) "Յայնմ աւուր տի-
րապէս տեսանեմք զՔրիստոս և զՀարդի և զՔրոգին փառա-
ւոր աստուածութեամբն, և իմանամք զանձառելեացն
զդիտաւորութիւն, ըստ այնմ՝ Տեսանելոց եմք զնա որ-
պէս և էն,,:

(Ի ՌԷՖ. ա. Յոհ.) "Քայց մեք տեսանելոց եմք զնա
որպէս ունի զիսկութիւն էութեան աստուածութեանն,
և ոչ միայն տեսանել, այլ և՝ ի նոյն հաւասար հաղոր-
դութեամբն զօդիլ,,:

Ասէ՝ ի Յիսուս որդին.

"Օ աչաց մերոց զախտից փոշին
Ա՛աքրեա զնեղբին և զարտաքին,
Որով յրստակ տեսից յերկին
Զկերպարանըդ նախատպին: . . .
Ա՛աքրեա և զիմ միտս մըթին
Եւ զգայարանս իմ խաւարին,
Ընդ յայտնապէս՝ ի յերկրորդին
Յագել փառօքն աստուածային: . . .
Օ՛ի արարածք արժանասցին
Յայնժամ տեսլեան երրեակդ անձին: . . .
Օ՛ի տեսանի՝ ի նոցանէ,
Երրև լըշայր և՝ ի՛ ՀօրէՀ,,:

Ասէ՝ նոյն հնքն յողբս Նգեսիոյ.

"Քայց դուք որդիք իմ սիրելիք
Ընդ գաղան նըման ծագիք . . .
Յաղքայութեան երկնից փայլիք . . .
Ընտուածային տեսլեամբ յագիք:

Ասէ՝ ամբրոնացի՝ ի ներբող Ը Նորհալւոյն.

"Ընդ զԱն տեսեր դէմ՝ յանդիման,
Եւ անկարօտ գոս քըննութեան,,:

Ակսեալ՝ ի սրբոյ Ասաւորչէն՝ հասաք յերեքտասա-
ներորդ դար. անտի և այսր յաձախագոյն ևս այլք՝ ի վար-
դապետաց մերոց, Ա՛անականն և Ա՛արգան և Ընդնակա-
յին և այլք՝ զնոյն յեղյեղեն: Օ՛րը՝ Թողեալ՝ ի բաց,
վկայութիւնս ինչ յեկեղեցական գրոց մերոց ածցուք,
որ են խոստովանութիւն հաւատոյ հայաստանեայց ե-
կեղեցւոյ:

"Ար անպարագրելի աստուածութեանդ տեսօղ, և
բարեխօս իւր ուխտաւորացս,,. (՝ի տոռբէ Լոխովկայն):

“Որ փառացն իւրոց տեսող սուրբ զվկայն արժանի արար ,,։

“Շ նորհեա մեզ արժանաւորել քումմ աստուածա-յին տեսլեանդ ,,։

Ց այսոսիկ բանս շարականին և եօթներորդ ժողովն Սոց յաւուրս Ա խիթարայ կաթողիկոսի յառաջ քե-րե ՚ի վկայութիւն ընդդէմ ամբաստանութեանն, որ լեալ զազգիս Հայոց՝ իբր թէ ոչ ընդունիցին զդէմ յանդիման տեսութիւն Ա ստուծոյ յերկինս։

Եւ գարձեալ յաղագս Հրեշտակապետացն Ա ինքայե-լի և Գաբրիէլի. “Տեսանօղք անտեսին, խորհրդա-ծուք խորոցն Ա ստուծոյ ,,։

Եւ գարձեալ. “Օ՚ի լոյս անտես իմանալի,
Ա՚աքուր Հոգւոյ տեսանելի ,,։

Եւ գարձեալ. “Տ՚ենչալիդ տեսլեամբ,
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Ք՚րիստոս ,,։

Ի դէմ յանդիման տեսութենէն Ա՚ստուածոյ զՀետ գայ, զի արդարք տեսանեն յԱ՚ստուած զամենայն՝ որ ինչ բո-վանդակի ՚ի նմա Հարկաւ. այսինքն տեսանեն յաս-տուածային էութեան նախ՝ զերիս անձինս և զամենայն ստորոգելիս նորա. զի ոչ է մարթ տեսանել զԱ՚ստուած որպէս և էն, առանց տեսանելոյ զայս ամենայն։ Երկ-րորդ՝ տեսանեն զկատարելութիւնս արարածոց։ Եր-րորդ՝ զայն ամենայն խորհուրդս՝ յորս Հաւատացին. զի Հաւատոյ վարձք են տեսութիւն իրին։ Ա՚ան որոյ ասէ սուրբն (Գրգոտինոս (յղ. *աղ. Ա՚պոս՝ գիրք Ե. գլ. իա.) “Տեսանիցեմք և զայն ամենայն, զոր ոչ տեսեալ այժմս՝ այլ Հաւատացեալ միայն, ըստ մարդկօրէն Հա-ստոցութեան կարի ստորև քան զոր ենն ածեմք զմտաս ,,։ Երրորդ՝ տեսանեն որ ինչ առ իւրաքանչիւրս յերա-նելեաց առանձինն պատկանեալ. վասն որոյ Հնար է ու-մեք ՚ի նոցանէ ստորնագունի վաստակօք և փառօք՝ տե-սանել աւելի ինչ քան զվերնագոյնն՝ վասն առանձին Հանգամանաց ինչ, զոր օրինակ զի առաւելագոյնք ՚ի մարդկանէ ունին զնա բարեխոս։ Ա՚յլ ոչ վասն այնո-րիկ լոյսն նա երանագոյն, որպէս նոյն սուրբ վարդապետ ասէ (Խոսո. գիրք Ե. գլ. Ը.) “Երանեալ է որ ծա-նեաւ զքեզ, թէպէտ և այլ ինչ ոչ ծանիցէ. իսկ որ

ընդ քեզ և զայլ ամենայն ինչ ծանեաւ, ոչ վասն այն իցէ երանագոյն, այլ վասն քո ևեթ ,,։ Հինգերորդ՝ տեսանեն ինչ ինչ առանձինն յայտնութեամբ, զոր դասականք կոչեն պեսանել ՚ի բանն. զի նորանորս հետզհետէ տեսանեն, զորս չէ մարթ նոցա տեսանել ՚ի ձեռն երանական տեսութեան՝ որ անփոփոխելին է և յետ մահու ոչ ևս կարէ յաւելուլ կամ նուազել. որ և կոչի առաւօտեան գիտութիւն, վասն զի կատարելագոյն Հանապէին իրք երանական տեսութեամբ քան զտեսեալսն յայտնութեամբ, որ վասն այսորիկ կոչի երեկոյեան գիտութիւն։

ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ

Ա՛ռաքել. ա. — ե. Սուրբք գիրք նովին օրինակաւ ասեն հրեշտակաց և երանելեաց տեսանել զԱստուած, որով՚ի հին օրէնս ասենն Հակոբայ և Մովսեսի գէմ յանդիման տեսեալ զԱստուած. (Ծննդ. լբ. 30. և Ելից. լգ. 11)։ Զայլ նոքա զէութիւնն Աստուծոյ ոչ տեսին։ — բ. Պարձեալ սուրբ գիրք յայտնապէս և պարզաբար անտեսանելի ասեն զԱստուած. (ա. Տիմ. ա. 17. ջ. 16.) “Թագաւորին յաւիտենից անեղծի և աներեւութի։ . . . Բնակեալ ՚ի լոյս անմատոյց, զոր ոչ ոք ետես ՚ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող է ,,։ Նոյնպէս (Հհ. ա. 17.) “Ո՛չ Աստուած ոչ ոք ետես երբեք ,,։ Նոյնպէս առաքելապետն զՀրեշտակաց իսկ ասէ (ա. կը. ա. 12.) “Ո՛չ որ ցանկային դոնեա ընդ աղօտ տեսանել ,,. ապա ուրեմն ոչ տեսանեն։

Պե. — ե. Թէպէտ և ասի ՚ի գիրս բազում անգամ երևեալ Աստուծոյ առ նահապետս և առ մարգարէս, սակայն տեսլեամբ առակաւ և արտաքին ցուցակօք. բայց գոյիւ բնութեանն ոչ ոք ՚ի մահկանացուաց ետես զԱստուած. որպէս ինքն իսկ փրկիչն ասէ, “Ո՛չ Աստուած ոչ ոք ետես երբեք ,,։ Նոյնպէս առաքեալն. “Որում ոչ եթէ զայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ոչ որ էն Աստուածոյ՝ նա ետես զայր ,,։ Այսպէս իմանան զհին կտակարանաց զաստուածատեսութիւնս ամենայն այրք։ Իսկ զառաքելականն խնդիր է առ նոսա և առ աս-

տուածաբանս, որք առաւել՝ ի ժխտականն կոյս միտեն. և որք՝ ի հաստատականն միտել Թուին, անյայտս ձառեն։ Օ ի սուրբն Երոնիմոս ասէ (Ընդ. Ղովեայ. գիրք Գ. գլ. Ի.) "Սուրբն Պօղոս՝ ի ստորայնոց յափշտակեալ՝ ի բարձրագոյնն, Հոգւովն սրբով և Հրովն Հասանէր առ Տայր, և լսէր զբանս անձառս, զորս մարդոյ լսել ոչ պատշաճ է ,,։ Նստ այսմ և սուրբ Կարեկացին խօսի (Ընդ. Երփոյ. 101 և 155.) "Արդկային բնութիւնս զՍտուածոյն ոչ կարէ տեսանել կամ իմանալ որչափ յայսմ՝ ի կեանս է. յաղագս այսորիկ զՊօղոս արտաքոյ մարմնոյն առեալ, յերրորդ երկինս տարեալ, անդ եղոյց զանձառելիսն ,,։ Նստ այսմ և՝ ի Շարականի. "Որ գերագոյն քերովբէից վերամբարձեալ՝ ի յերրակի խորանս երկնից, և հրահոսան վտակացն արբմամբ զմայլեալ, երրորդութեանն արժանաւորելով տեսլեան սուրբն Պօղոս ,,։ Նրդ այսոքիկ և սոցին նման բանք ոչ հարկաւ ցուցանեն, Թէ ըստ երանեալ Հոգւոցն լեալ իցէ աստուածտեսութիւն առաքելոյն դէմ յանդիման որպէս էն յինքեան, կամ՝ ի Նանն աստուածային՝ որպէս դասակարք բացատրեն, այլ մարթ է իմանալ Ճանաչումն արտաքոյ Նանին Հեղեալ գիտութեամբ և գերագոյն լուսով Հաւատոյ։

— ԺԲ. Նետեւանելի ասեն սուրբ գիրք զՍտուած, ոչ ըստ ամենայն նշանակութեան, այլ ըստ չորից ևեթ՝ որպէս Տարք ուսուցանեն. մի՝ մարմնաւոր աչաց. երկրորդ՝ ի կեանս յայս. երրորդ՝ բնականապէս. և չորրորդ՝ իբրև անկասկածելի։ Նստ չորից այսոցիկ նշանակութենց է իմանալ զամենայն բանս սուրբ գրոյ և զՏարոյ։

Նսկ՝ ի բան առաքելապետին՝ Օ որ ցանկային և այլն. յարաբերականն ոչ զսուրբ Տոգին յարաբերէ, այլ զտնտեսութիւն խորհրդոյ փրկագործութեան՝ որ ծածկեալն էր յամենայն յաւիտեանց առ Զստուածոյ ըստ առաքելոյն (Էֆես. Գ. 9.) "Օ ի յայտնեացն իշխանութենց և պետութեանց, որ յերկինս են, ՝ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւնն Զստուածոյ ,,։ Ոմանք որոյ Արգիս վարդապետն մեր ասէ յայտնաբանելով զնոյն բան առաքելապետին. "Ոչ միայն մարդիկ ծանեան՝ ի ձեռն այսր չնորհաց զիմաստութիւնն Զս-

տուծոյ ՚ի Յիսուս Քրիստոս, այլ և գերաշխարհիկ բնութիւնքն զօրութեանցն և իշխանութեանց՝ եկեղեցեաւս ուսան զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ ՚ի Յիսուս Քրիստոս։»

Աստ. Ր. Սուրբ Հարքն և յայտնագոյնս Աքրոսիոս և Հերոնիմոս անտեսանելի սահն զաստուածայինն էութիւն եթէ հրեշտակաց և եթէ մարդկան. և ՚ի Յունաց Թէոդորետոս և սուրբ Ալեքսանդրացին որ ասէ (Ղեկ. Յհ. Ճառ ԺՇ.) «Աչք եթէ հրպէս կամ զինչ է Աստուած, ոչ միայն մարդարէքն՝ բայց և ոչ հրեշտակք և ոչ հրեշտակապետք կարեն տեսանել զԱստուած... բնութիւն եղականի զհայդ իցէ հնար տեսանել զանեղն»։

Պե. Այլքին իսկ Հարք այլուր զբանս իւրեանց մեկնաբանեն ըստ միոյ ՚ի չորից նշանակութեանցն, զորս ՚ի վեր անդր նշանակեցաք։ Այսմ ինքն սուրբ Ալեքսանդրացին ոչ միայն անդ ՚ի մեկնութեան աւետարանին զՀետ բերէ զմեկնութիւն բանիցն, այլ և յառաջնում Ճառին առ անկեալն Թէոդորոս (Թիւ ԺՁ.) ուր ասէ. «Յորժամ ՚ի բանալ արքունեացն զնա ինքն նկատիցեմք զարքայն, ոչ ևս օրինակաւ և ոչ ընդ հայելի, այլ դէմ յանդիման. ոչ ևս հաւատովք, այլ տեսլեամբ»։

Աստ. Գ. Սրբոյ Ալեքսանդրացին բան զանհնարութիւն իրին յայտ առնէ՝ եղականի բնութեանս տեսանել զանեղն. զի արարչի և արարածոյ այլ և այլ կարգ են, և չիք ընդ նոսա համեմատութիւն, որպէս և ոչ ընդ մարմին և ընդ հոգի. վասն որոյ մարմնաւոր աչաց անհնար է տեսանել զհոգի։

Պե. Աչքն աղագաւ բազում անգամ ասացաք, զի ՚ի ձեռն գերբնական լուսոյ արդարք և հրեշտակք տեսանեն զԱստուած, որ ամենակարողութեանն Աստուծոյ է շնորհ, և կոչի յաստուածաբանիս լոյս փառաց։ Աչք եթէ որպիսի՞ ինչ իցէ այս շնորհ, դժուարին է սահմանել։ Հոմանիքն կացուցանեն զայն ՚ի զօրութիւն ինչ, իբր ունակութիւն որ յարնչիցի ՚ի հոգի։ Ակունք տականք ՚ի սերն՝ յորում արդարք մեռանին, և որով աստուածեղէն բնութեանն լինին հաղորդակիցք։ Աստ Հոմանիներայ՝ նոյն ինքն ենթակայութիւն հոգւոյն սրբոյ, որ զերանելեացն զմիտս լուսաւորէ։ Աստ Պետաւեայ՝ ինքն իսկ Աստուած միացեալ ընդ հոգիս ե-

բանելոց։ Ըստ սոցին օրինակի և այլք այլազգ սահմանեն, և ամենեցուն բանք՝ ի մի յայս միաբանին՝ յանելիկայելի գոյութիւն երից. իսկ զորպէսն ծանիցուք, յորժամ Քրիստոսիւ արժանի լիցուք այնմ ընդհն։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Զի արդարք գերբնական աստուածապարգև բռնութիւն իսկ ոչ կարեն բռնանալ զԱստուած։

Այս վարդապետութիւն մանն է հաւատոց. զի ըստ այսմ բառս անպէսանելի նշանակէ անհասանելի, անիմանալի, անբռնադատելի. և Դ. Ժողովն լատերանեան սահմանէ. "Խոստովանիմք զի անհասանելի է Աստուած։ Ի սուրբ գիրք ասէն.

"Ո՞ Աստուած ոչ ոք ետես երբեք, բայց միածինն Որդի որ է՝ի ծոց հօր, նա պատմեաց,,. (Յհ. ա. 18)։

"Իբր ոչ եթէ զՅայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ոչ՝ որ էն Աստուածոյ, նա ետես զՅայր,,. (Յհ. զ. 46)։

"Ո՞ Աստուած ուրուք չիք տեսեալ,,. (ա. Յհ. դ. 12)։ Որդ զայսոսիկ և զայսպիսի բանս սուրբ գրոց ոչ է մարթ իմանալ այլազգ, բայց զբռնադատապէս տեսութենէ. ուր զդեմ յանդիման տեսութիւն երանելեացն հաստատեն և սուրբ գիրք, որպէս ցուցաքն՝ի վեր անդր։ Ալ կայեն այսմ հարք առհասարակ. որք մերթ տեսանելի ասեն արդարոց և հրեշտակաց զԱստուած, և մերթ անտեսանելի՝ անըմբռնելի և անբռնադատելի՝ նովին բացատրութեամբք սուրբ գրոց։

Ոսկեբերան (ընդդէմ Աէնոփանց. Ճառ դ.) "Որդ կարգաւորեցաք զնոյն ինքն զանձառելին, զանբռնադատելին, զանպարփանալին Աստուած, զանտեսանելին, զանհասանելին, զյաղթօղն մարդկեղէն լեզուի կարողութեան, զառաւելեալն քան զհասուածն մահկանացու մտաց, զանքննելին հրեշտակաց, զանշննելին հրեշտակապետաց, զանտեսն սերովբէից, զանիմանալին քերովբէից, զաներևոյթն իշխանութեանց և պետութեանց և զօրութեանց, և պարզաբար՝ ամենայն արարածոց, և զառ՝ի Ամէնսդ և՝ի հոգւոյ միայն ծանուցեալն,,։

"Այս զինչ է զիմաստն. յորժամ ոչ որպէս է Աստուած՝

երևի, այլ որպես կարօղ ոք լինի տեսանել զնա՝ այնպես զանձն ցուցանել, չափելով ըստ տկարութեան տեսողացն զիւրոյ տեսութեան զցուցակութիւն։ ... Զոհ և մարգարէին լուիցես ասելոյ՝ տեսի զտէր, մի՛ զայդ կարծիցես՝ եթէ զաւուն իսկ զէութիւնն տեսս, այլ ըզնոյն զայն զլինջսին. և զայն աղօտագոյն՝ քան որչափ վերին զօրութիւնք. զի նոյնչափ տեսանել ոչ արդեօք բաւական իցէն, որչափ քերովբէքն ...։

(Ի Գէն· ՅԻ· Ձառ ԺԳ·) "Այլ եթէ որպես և զինչ է Աստուած, ոչ միայն մարգարէքն՝ բայց և ոչ հրեշտակք և ոչ հրեշտակապետք կարեն տեսանել զԱստուած. և եթէ հարցանես զնոսա վասն բնութեան նորա, ոչ ինչ պատասխանի տայցեն քեզ՝ բայց միայն փառք 'ի բարձունս Աստուծոյ 'ի վեր ամբառնան... Արդեն միայն տեսանէ զնա և Հոգին սուրբ. բնութեան եղականի զիաւրդ իսկ տեսանել զանեղն։ Եթէ զանմարմին բնութեանցն, թէպէտ և արարածք իցեն, զնորոգ տեսիլն ոչ եմք բաւական ընդունել՝ որպես բազում անգամ առ հրեշտակօք եղև, որչափ և առաւել զանեղանելի բնութեան տեսութիւն ոչ եմք բաւական ընդունել։ Այսն որոյ և Պօղոս ասէ. Որ ոչ ոք ետես 'ի մարդկանէ, և ոչ տեսանել կարօղ է։ Եթէ զՀայր միայն ասիցէ, և զԱրդի ոչ. լուր նմին զինչ ասէ. Որ է պատկեր անեղեւութեին Աստուծոյ. եթէ կերպարան է անտեսանելւոյն, ապա և ինքն անտեսանելի է,,։

Գրիգոր աստուածաբան. (Ձառ ԼԶ·) "Ոչ գիտեմ եթէ ոչ և վերնագունիցն և իմանալեաց բնութեանցն, որք յաղագս մերձակայ լինելոյ Աստուծոյ, և բովանդակ լուսոյն են պայծառացեալք, թերևս ինչ արդեօք Հաւատոյն (Հաստ լինել) թէպէտ և ոչ ամենևին, այլ սակայն քան զմեզ կատարելագոյն և տպաւորագոյն, և քան զայլս այլք առաւել և կամ նուազ ըստ Համեմատութեան կարգին,,։

Սուրբն Կիւրեղ (Կոչ· ընծ· Ը· 8·) "Յօժարեալ միսիթարէ զմեզ տկարութիւնս տէր Յիսուս, և ասէ. Ով Աստուած ոչ ոք երբեք ետես։ Արդ զիաւրդ գրեալ ի՝ եթէ հրեշտակք այսց փոքրկանց յամենայն ժամ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է։ Ա՛յս՝ տե-

սանել տեսանեն հրեշտակք զԱստուած, ոչ եթէ որ-
չափ ինքն է Աստուած, այլ որչափ նոքա բաւական
լինին տեսանել։ Օ՛ի ինքն տէրն ասաց. Որը ոչ եթէ
զայր որ կարաց տեսանել, այլ որ էն Աստուծոյ՝ նա
ետես զայր ,,։

Սուրբն Երոնիմոս յետ հաստատելոյ զաստուածա-
տեսութիւն արդարոց և հրեշտակաց, ՚ի վերայ ածէ.
(՚ի գլուխ ա. Ա-ոյ.) “Սկսպէտ զերեսս տեառն ըստ
յատկութեան բնութեան իւրոյ ոչ ոք յարարածոց կա-
րէ տեսանել, այլ յայնժամ նշմարի մտօք՝ յորժամ ան-
տեսանելի դաւանի ,,։

Օնոյն յառաջ բերէ և ( )գոստինոս (՚ի Ի՛ղ. Ճժա.)
և յաւելու ՚ի Երոնիմեայ. “Տեսանել զԱստուած,
որպէս և էն յԵութեան իւրում, ակն մարդոյ ոչ կարէ.
և ոչ միայն մարդ, այլ և ոչ հրեշտակք, և ոչ աթոռք,
և ոչ իշխանութիւնք, և ոչ տէրութիւնք, և ոչ ամե-
նայն անուն անուանեալ. զի ոչ կարէ արարած զարա-
րիչ իւր նկատել ,,։

Այս (՚ի Ճառն լէ. յղ. Բանիլ պեռն.) “Զո փոքր մի
հայել առ Աստուած մտօք՝ երանութիւն մեծ է. իսկ
հասու լինել բովանդակապէս, գվսեմին անհնար ,,։

Ամբրոսիոս (՚ի Ղեն. Գ ո-է.) “Այս զինչ ասեմք զմարդ-
կանէ, ուր յաղագս նոցին իսկ երկնաւոր զօրութեանց
և պետութեանց ընդհանուրք, թէ զԱստուած ոչ ոք
ետես երբեք։։։ Յայն սակս զԱստուած ոչ ոք ետես
երբեք, զի զոր Աստուածն բնակէ լոյսն աստուածու-
թեանն՝ ոչ ոք նկատեաց, ոչ ոք մտօք կամ աչօք բո-
վանդակեաց ,,։

Այս գարձեալ (՚ի Հանգանակն առաքելական.) “Որչափ
ոք և յառաջադէմ լիցի ՚ի գիտութիւնս և հետամուտ
գաղանեաց իմաստութեան, սակայն անհնար է եղա-
կան բնութեան զանեղական գոյացութիւնն որպէս և
էն՝ լրիւ իւրով բովանդակել ,,։

Աստծն Կիրիգոր (՚ի Յոբ. գլ. իը.) “Աչք ոչ այն-
պէս տեսցուք զնա, որպէս ինքն զինքն տեսանէ. զի կա-
րի յոյժ այլազգ տեսանէ զինքն արարիչն, քան զոր տե-
սանէ արարածն զարարիչն ,,։

Ել յաւելումք վկայութիւնս առ այս ՚ի մերոց Հարց,
զի որպէս ՚ի վեր անդր ակնարկեցաք, մերքս ՚ի վեր ՚ի

վերոյ աստուածաբանից ումանց կարծին ՚ի ծայրայեղ կարծիս անկեալ: Ե՞ստ լինի բան Ե՞նորհալւոյն, որ զերկաքանչիւր Չնարհաւութիւնքս միանգամայն հաստատ ՚ի ՚Լորաստեղծեալն գեղեցիկ հակադրութեամբ. "Օ՛ի լոյսն անտես իմանալի, մաքուր հոգւոց տեսանելի,,: Նա՛ ՚ի Աստուածն հրեշտակաց. "Տեսանողք անտեսին,,: Նա ազգողագոյնս ՚ի ներքոյ հրեշտակաց. "Տեսանողք անտեսին անտեսաբար,,:

ԱՌԱՐԿՈՒԹԻՆՔ

Ա՛ռարկ. — ա. Ա՛ռաքեալն ասէ (ա. կոր. ԺԲ. 12.) "Ա՛յլ յայնժամ դիտացից, որպէս և նայն ծանեաւ զիս,,: Ա՛րդ Ա՛ստուած Չանաչէ զմեզ բովանդակաբար, չէք ընդ այս երկբայել, ապա և մեզ լիցի գիտել զնա բովանդակապէս: — բ. Նա դարձեալ՝ չէք մասն ինչ յամենապարզ Նն. ապա կամ բովանդակ տեսանեն զնա արդարք, և՞կամ ամենևին չտեսանեն:

Պա. — ա. Չամեմատութիւն առաքելական բանին ընդ եղանակի ևեթ Չանաչմանն, և ոչ ըստ որքանութեան. զի ոչ ասէ՝ որչափ նայն ծանեաւ զիս, այլ որպէս նայն. այսինքն պայծառ և Հաւասար Չանաչէ զիս Ա՛ստուած և զիսորհուրդս իմ, նոյնպէս և ես գիտացից զաստուածայինսն՝ որպէս են յինքեանս իսկապէս: Ա՛րդ կայ և մնայ ամբաւ առաւելութիւնն՝ որով աստուածային միտք Չանաչէն զմարդկայինսն, քան թէ ստեղծեալ միտք զաստուածայինս:

— բ. Պարզական բնութիւն ընդ Ա՛ստուած և անմասն իսկապէս, այլ զօրութեամբ զանազանեալ՝ որպէս ՚ի Չառս պարզութեանն Ա՛ստուծոյ ասացաք: Ա՛րդ Ա՛ստուած բովանդակ Չանաչի յիւրմէ կողմանէ, այլ ՚ի կողմանէ արարածոյ՝ որչափ սոքա կարող են Չանաչել. զի այլ եղանակ ընդ տեսելոյն, և այլ տեսողացն, որպէս ասէ սուրբ Ա՛գուինացին. և Աստարիզ յաւելու՝ զի տեսեալն անսահմանաբար ընդ Չանաչելի, իսկ տեսութիւն՝ ոչ անսահմանաբար Չանաչօղ: Ա՛յս և յանհատասութենէ երանական տեսութեան արդարոցն ընդ յայտ. զի զնոյն տեր ըստ իւրաքանչիւր չափոյ ընդունակութեան տեսանեն երանեալք, որպէս մնայ մեզ արդ ցուցանել:

ԳՕԴՈՒԱԾ Դ

Քաղաքս անհաշտասպառութեան հրաւիրական տեսութեան։

Եւ այս ևս մասն է հաւատոյ՝ սահմանեալ ի փլոբենտեան և ի տրիգենտեան ժողովս ընդդէմ Յովինիանոսի՝ որ ուսուցանէր հաւասարս զարդարոց ամենեցուն վաստակս, ըստ այմմ և զվարձս. և ընդդէմ Ոսոթեըի՝ որ ըստ այլոց սկզբանց անկաւ ի նոյն մոլորութիւն, զոր սրբոյն Սիրիկիոսի ի ժողովն Նռովմայ, և սրբոյն Ամբրոսիոսի ի ժողովն Միդիոլանու, վաղ իսկ հերքեալ էր։

Այս զանազանութիւն ոչ է ըստ իրին տեսելոյ, այլ ըստ տեսողաց. այսինքն զի զնոյն տէր տեսանեն ամենեքեան, այլ ոչ հաւասարապէս. զի լոյսն փառաց՝ ոմով տեսանեն՝ ոչ յամենեսին է հաւասար, այլ ըստ չափոյ իւրաքանչիւր արժանեաց։ Եւ քաջայայտ է այս ի սուրբ գրոց, նմանս ըստ տէրունական բանին. (Յհ. ԺԴ. 2.) "Ի տան Հօր իմոյ օթևանք բազումք են,,։ Եւ առաքեալն (Ա. Կոր. ԺԵ. 41.) ասէ. "Այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, և աստղ քան զաստղ առաւել է փառօք. նոյնպէս և յարուցիչն մեռելոց,,։ Որոց ասէ Տէրտուղիանոս (ի Սկորպիակ.) "Եւ ոպիսի բազումք օթևանք առ Հօր, ոչ ապաքէն ըստ վաստակոց առաւելութեան. և ոպիսի աստղ քան զաստղ առաւել իցէ փառօք, եթէ ոչ ըստ զանազանութեան նշուլիցն,,։

Եւ դարձեալ ասէ առաքեալն. (Հռ. Ը. 6.) "Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց,,։ Եւ դարձեալ (Ը. Կոր. Թ. 6.) "Որ սերմանէ ձկդելով, ձկդելով և հնձեսցէ. և որ սերմանէ առատութեամբ, առատութեամբ և հնձեսցէ,,։

Որոյ նոյն բանս սուրբ գրոց յեղյեղեն և սուրբ հարք. Սուրբն Գրիգորիոս (ի Յհ. Ճառ կէ.) "Թէպէտև նոյն բազմութիւն զբազմադիմ վաստակոց արժանիս ի մի յայն յաւիտենական կեանս յայտ առնեն,,։ Եւ (ի Ճառն յաղագս սուրբ Կոստանդեան.) "Ստեղ քան

զատեղ առաւելութիւն փառաց այս է՝ այլ և այլ չափ վաստակոց սրբոցն ,, :

Ա՛ԵՃՆ Գրիգոր (Խրոյ. լե. 4.) “Խազում օթևանք են առ Հօր, զի ի նոյն երանաւէտ կեանս՝ իւրաքանչիւր ոք ըստ այլ և այլ չափոյ վաստակոցն զանազան օթևանաց լինի ընկալուչ ,, :

Ա՛ՍՐԲ Ղուկաս ուսուցչին մեր (յաճախ. Ճ.) “Ի տան միոյ հոյ առաքինութեանցն են և պսակք փառաց և գովութիւնքն՝ որ յօրինին ի տեառնէ ,, :

Ա՛ՂԻՂԷ (Է. Ղ Լոնդեանփ.) “Իսկ չարչարանքն յորժամ ընդերկարեսցին ի վերայ, յայնժամ բազմանայ վարձ հատուցման պարգևին ,, :

Շ՛ՆՈՐՀԱԼԻ (ի Դերբ. հրեշտ.) “Ընհատասակք ի փառս, փառաբանիչք ի զուգահաւասար բնութեամբ փառաւորելոյն ... զանազան վայելչացեալ փառօք ,, :

Ա՛Ե ԴԱՐՁԵԱԼ (ի Ֆէն. Ա՛ոն. է. 11.) “Ընդհակս զանազան են առաքինութիւնք, նոյնպէս և պսակքն ,, .

Ա՛Ե ԴԱՐՁԵԱԼ (յղ. Երզնկ.)

“Ընն և ակունք յիս պատուական և բազմազան,
Ընմանք նրբազղ և այլք պայծառ բոցանըման,
Ընդք օրինակք են արդարոց ի յարութեան,
Ո՛ր ի կէսք նրբազղ, այլք առաւել պայծառանան ,, :

Ա՛Ե ԴԱՐՁԵԱԼ (ի ՇԱՐԱԿԱՆ.)

“Հիւսին պըսակք զանազանեալ,
Ա՛Ե պատմուճանք լուսափայլեալ ,, :

Ա՛Ե քանզի իսկ յայտ է Ճշմարտութիւնս այս ըստ արդարութեանն Աստուծոյ : Ո՛ր ի եթէ երանութիւն արդարոյ վարձ է և պսակ արդարութեան ըստ առաքելոյն՝ “Այժ և ինձ լինիցի արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ յաւուր յայնմիկ արդարն դատաւոր ,, , (ք. Տիմ. դ. 8.) ապա ուր առաւել կամ նուազ են վաստակք, հարկ է զի ըստ այնոցիկ և վարձքն կշռեսցին : Ա՛Ե քանզի էական վարձ արդարոյ է երանականն տեսութիւն, ապա հարկ է զի ըստ առաւելութեան վաստակոյ և արժանեաց առաւելագոյն ընկալցին զոյս փառաց, որով պայծառագոյն տեսանեն զԱստուած :

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ա՛ռարկ. Ա. Փրկիչն մեր Հաւատալ եցոյց զվարձս արդարոց առակաւ գործաւորացն յայգւոջ. ապա Հաւատար են փառք երանելոց:

Պա. Ի՛նազումք՝ի ՚ի՛արց և՝ի մեկնչաց զառակն զայն յարեն՝ի կոչումն ՚ի՛րէից և հեթանոսաց, և ոչ՝ի վարձս երանելեաց. որով կործանի՝ի հիմանէ առարկութիւնդ: Ա՛յլ ընկալեալ ևս զհայեցումն առակիդ յերանեալս, հաւատարութիւն վարձուցն ըստ էութեանն է և ոչ ըստ չափոյ:

Ա՛ռարկ. Բ. Ա՛յժմ երանեալք ոչ հաւատարապէս տեսանէին զԱ՛ստուած, կէսք քան զայլս երանագոյնք գտանէին, և որ նուազն երանեալ՝ տեսութեամբ երանագունին ոչ գոհ գտանէր ընդ իւրն պայման: Ա՛պա չէ ընդունելի անհաւատարութիւնդ այդ:

Պա. Ա՛ռաւել կամ նուազ երանութիւնդ այդ՝ի տեսողաց անտի է, և ոչ՝ի տեսելոյն. քանզի արդարքն առհասարակ զնոյն ինքն զԱ՛ստուած տեսանեն, ամենեքեան՝ի նոյն գերագոյն Լո՛ն վայելեն. իսկ անհաւատարութիւն երանական տեսութեանն յայլ և այլ չափոյ տեսութեան նոցա է, ըստ իւրաքանչիւր վաստակոյն և արժանեաց. զի ամենեցուն նոցա յապի քաղց, ամենեցուն բուժի ծարաւ, Թէպէտ և ըստ իւրաքանչիւր ընդունակութեան նուազ կամ աւելի զուարճս փափկութեան նորա Ճաշակիցեն, որպէս միոյ հօր որդիք զգեցեալք զնոյն կերպաս ըստ չափոյ հասակի իւրեանց: Ա՛յսն որով ոչ զհետ գայ ասէ աղօտագոյն տեսողացն նուազ քան զպայծառագոյն տեսօղս գոլ երանելի, և չյապեհնալ՝ի վայելս իւրեանց. քանզի Ճանաչէն զհամեմատութիւն և զիշիւ հաւատարութիւն վարձուցն ընդ վաստակոյ իւրեանց, և միացեալք ընդ Ա՛ստուծոյ սիրով՝ ՚ի նոյն կամ աստուածային արդարութեան Ճանգչին: Այս որպէս սուրբն ( )գոստինոս ասէ. (՚է Յոհ. Ճառ կէ. 1.) "Ա՛նպէս ամենայն յամենեսեան՝ի նոսա լիցի Ա՛ստուած, զի սէր ինքն գոլով՝ սիրոյնէ այնուիկ որ ինչ իւրաքանչիւր ուրուք է՝ լիցի ամենեցուն հասարա-

կաց. զի այսպէս ամենայն ազ որ ինչ ոչն ունի, սիրելոյին յայլում՝ և ինքն ժառանգեսցէ զնոյն. վասն որոյ ոչ լինի՝ ի նոսա նախանձ ընդ անհատատարութիւն պայծառութեան, զի սիրեսցէ յամենեսեան միութիւն սիրոյ ,,։

ՅՕԴՈՒԱԾ Ե

Զի հոգիք արդարոց անկատարօք քառերեան, առանց մնալոյ յաքառերեան մարմնոցն և վերջին դատաստանի, յնոյն՝ ի մարմնոյ վայելեն յերանականն տեառնէ Աստուծոյ։

Սիոյս այսորիկ ցուցմամբ Աշնարտութեան՝ անկանին այլ և այլ մոլորութիւնք։ Նախ Հազարամեայցն, որոց աղանդապետ Կերինթոս՝ ի վերջկոյս առաջին դարու ուսուցանէր՝ զի յետ յարութեան և ընդհանրական դատաստանի Թագաւորելոց են արդարք ընդ Քրիստոսի՝ ի վերայ երկրի հազար ամ, և յետ հազար ամին՝ վախճան լինի Թագաւորութեան նորա, և ընդ սուրբս ելեալ յերկինս՝ հաղորդս արասցէ զնոսա բարեացն, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ։ Ի սոյն կարծիս անկան և մարկիոնիտք յերկրորդ դարու, և ապօրինաբարբառ՝ ի չորրորդումն, և զնոյն հաւատան արդ այլազգիք ըստ դէնի իւրեանց։

Երկրորդ՝ հետևողք մոլորութեանն Պապիասայ Հիերապօլսեցւոյ սուրբ եպիսկոպոսի, որ պարզմտութեամբ համարեցաւ ընդունելի զման ինչ աղանդոյն կերինթեանց, այսինքն Թէ ինչ արդարոց Թագաւորել յերկրի հազար ամ ընդ Քրիստոսի, բայց օրինաւոր վայելչութեամբ, և ապա վերանալ յերանականն տեսութիւն. և ընդդէմ մոլորութեան նոցա յաւելաւ՝ ի հանդանակին ,,Ոլոց Թագաւորութեանն ոչ գոյ վախճան,,։ Ի սոյն կարծիս և երևելիք ումանք ըստ այլ և այլ մասին անկան, այսինքն սուրբն Լրանոս, սուրբն Յուստինոս, Տերտուղիանոս, և Ղոստինոս իսկ առ ժամանակ մի ըստ իրումն խոստովանելոյ։

Երրորդ՝ հետևողք սխալանաց սրբոյն Ալէքսանդրացոյ վկայի, որ և նա պարզմտութեամբ համարեր՝ զի սուրբք ոչ իսկ և իսկ՝ ի մեհնէն՝ ի մարմնոյ հասանեն

յերանելականն տեսութիւն, այլ՝ ի կայանի ուրեմն մնան՝ ի հանգստեան մինչև՝ ի հասարակաց յարութիւն, և ապա ընդունին զհատուցումն երանութեան հանդերձ մարմնով. ըստ սմին և զտանջանս մեղաւորաց յամենայնեցեալսն մինչև՝ ի յարութիւն մարմնոց, այսինքն ցվերջին գատաստան։ Ոչ է պարտ շփոթել զսոսա ընդ առաջինսն, այսինքն ընդ հազարամեայս. զի յոգունք՝ ի նախնեաց՝ որք չընդունէին զհազարամեայ թագաւորութիւն պապեանց՝ միաբանեցին՝ ի կարծիս կալուստրատեանց, և ըստ վկայելոյ սրբոյն Երոնիմեայ՝ "Ոչ սակաւք յեկեղեցական արանց և մարտիրոսաք զնոյն ասացին,,։ Որպէս յանուանէ յիշատակին սուրբն Փիլոս անտիոքացի, սուրբ Հայրն Ղեղոս, Նովատիանոս, Վիկտորինոս, Լակտանտիոս, Սեւերոս, Սուլպիկիոս, և այլք։ Ոչ ընդ այս չէն ինչ զարմանք, զի չև ևս յայնժամ քննեալ և սահմանեալ էր յեկեղեցւոյ այս խընդիր. վասն որոյ, և ըստ ասելոյ Տուռնելի, ոչ է պարտ գատապարտել զնոսա որպէս զՕրիգէր և զՎալենին և զնորաղանդս հետեւողս նոցին, որք յետ վճռոյ եկեղեցւոյն կացին մնացին յամառեալք՝ ի նոյն մոլորութիւն։

Ա՛րդ Ժողովն փլորենտեան յամին 1439 ետ զվճիռս զայս. "Սահմանեմք՝ զի հոգիք այնոցիկ, որ յետ մկրտութեան անշաղախ մնացին յարատոյ մեղաց, ևս այնոցիկ՝ որք յետ շաղախելոյ՝ մինչդեռ՝ ի մարմնի էին կամ յետ ելից՝ ի մարմնոյ՝ մաքրեցան, իսկ և իսկ վերանան յերկինս, և պայծառ նկատեն զնոյն ինքն զԱ՛ստուած զերրեակ և զմին որպէս և էն, բայց ըստ զանազանութեան արժանեաց այլ որ քան զայլ կատարելապէս,,։

Նոյն վճիռ բացայայտ ևս Հաստատեցաւ՝ ի Ժողովն տրիդենտեան, ՝ի բանից սուրբ գրոց և ՝ի Հարց։ Ո՛ի առաքեալն ասէ (Ա. Կոր. Ե. 6.) "Որչափ յամենից՝ ի մարմնի աստ, օտարանամք՝ ի տեառնէ... առաւել ևս հաճեալ եմք ելանել՝ ի մարմնոյ աստի, և մտանել առ Ա՛ստուած,,։ Ա՛րդ եթէ յամենայնս՝ ի մարմնի հեռի մնամք Ա՛ստուծոյ, և պարտիմք ցանկալ ելանելոյ՝ ի սմանէ առ՝ ի տեսանել զԱ՛ստուած, յայտ է զի յետ՝ ի մարմնոյ՝ ինքն մեզ տեսանել զնա, եթէ չէցէ ինչ խափան. որպէս և ինքն իսկ առաքեալն յայտ առնէ ասե-

լոյնն Տեառնէ աս Աստուած։ Յայտնապէս ևս ի նախորդ բանիցն է այս իմաստ, զի ասէ. «Ոմանցն զիտեմք՝ զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած Աստուծոյ ունիմք տաճար առանց ձեռագործի յաւիտենական յերկինս»։ Ահա զքակտումն մարմնոյ համարի առաքեալն առնել յաւիտենական երանութեան մերոյ. վասն որոյ և այլուր (Փիլ. ա. 23.) ասէ. «Կեղեալ եմ յերկոցունց. զցանկալն ելանել և ընդ Քրիստոսի լինել՝ առաւել լաւ համարիմ. և կալ ինձ աստէն ի մարմնի՝ կարևոր ևս վասն ձեր»։ Պարձեալ և ի խնդրել բարոյ աւազակին ի Քրիստոսէ. «Յիշեա զիս, տէր, յորժամ գայցես արքայութեամբ քո»։ պատասխանի ետ նմա Քրիստոս. «Ամէն ասեմ քեզ՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին»։ Ընդ դրախտիւն աստ չէ մարթ իմանալ զերկրաւորն, զի ոչ զայն խնդրէր աւազակն՝ այլ զերկնաւորն. ապա հարկ է իմանալ զերկնից արքայութիւնն, ուր վայելէն արդարք ի տեսութիւնն Աստուծոյ՝ որ ի նոր կտակարանի կոչի դրախտ. ըստ այնմ՝ «Յաիշտակեցաւ ի դրախտն»։ (ՃԻ. խդ. ԺԳ. 4.) «Տայ նմա ուտել ի փայտէն կենացդ, որ է ի մէջ դրախտին Աստուծոյ»։ (Յայտ. Ճ. 8)։ Ասէ որմէ և սուրբ Կարեկացին ասէ. «Ո՛վ աւազակն երջանիկ, որ յարձակումն երջանիկ ընկեցար»։ (Բան. ծա)։ Ընդ նոյն և Նարեկ Հաստատեն։

Պղիգոր Նիւսացի (ի Ներբ. Լդէր.) «Ա՛ր այլուր նուրբն Հոգւոյ պարտ է ասել օթևանել, եթէ ոչ՝ որպէս յայտ է՝ ի խորանս երկնայինս... յայն բարութիւնս՝ զոր ցանկան հրեշտակք ընդ ազօտ տեսանել։... Այլ դու զաստուածայնով շուրջ կալով զսեղանով, և զկենսատպատեան և զգերատուրըն պաշտելով ընդ հրեշտակս զԱրարողութիւն, յիշեսջիր զմեզ»։

Պղիգոր աստուածաբան (յարձանագրանէ Նարեկէ) «Այլ դու ի մեզ հայեսցիս ի վերուստ, ով աստուածայինս և սրբազան գլուխ... և եթէ փոխեսցուք յաստեաց, ընկալ անդանօր զմեզ ի քոյին խորանդ, որպէս զի միւսանգամ կենացդ կցորդ եղեալ, և զուգակցեալ ի սուրբ Հրեշտակսն... զայս առցուք փոխարէն որոց պատերազմեցաքն»։

Ասկեբերան (ի Փիլիպ.) «Ո՛վ տօնս զայսոսիկ լքեալ՝

'ի հրեշտակայն փոխադրեցաւ ամենաժողով ժո՛ղ . . . աստ բիւրք հրեշտակաց . . . այլուր երախանք մարգա- րէից , յայլում վայրի մարտիրոսացն դասք , առաքելոց պարք , ջոկք արդարոց . . . և որ մեծն է ամենայնի , զի 'ի մէջ ակմբին գեղերի ամենեցուն Թագաւորն : Կան- զի յետ ասելոյ (առաքեալն) 'ի բիւրաւոր բանակս հրեշ- տակաց , 'ի վերայ ած՝ և առ դատաւորն ամենեցուն Աս- տուած : Ո՛ երբեք ետես 'ի հանդէս ժողովի մերձ եկեալ զԹագաւորն . աստ արդարև ոչ ոք ետես երբեք , այլ անդ յաւէժաբար մերձակայք տեսցեն : . . . Եւ հոգին անդանօր իբրև 'ի սրբազան մուտս գաղտնեաց և յաս- տուածային ինն խորհուրդս՝ զաստուածեղէնն կատարէ խորհրդականութիւն : Յայս երանութիւն և յանծե- բանալի վիճակ փոխեցաւ այսօր երանելին Փիլոգոնիոս ,, :

Եւ դարձեալ ('է ֆէլիպ . Ճառ ը .) “ Օ՛ ինչ ասես . հանդերձեալ առաքելոցն փոխադրիլ և ընդ Կրիս- տոսի լինել . . . վարանիս ասելով՝ ոչ գիտեմ զինչ ընտ- րեցից ,, : Եւ ('ի Ճառն ը .) “ Աեղաւորք ուր և իցեն՝ հեռի են յարքայութենէ , վասն որոյ արտասուաց ար- ժանիք . իսկ արդարքն՝ եթէ աստ և եթէ անդ՝ ընդ Թագաւորին են , և անդ առաւելապէս և հպատակագոյն , ոչ տեսլեամբ երազոյ և ոչ հաւատով , այլ երես առ երես ,, :

Սուրբ Աստուածաբանն ('է յաճախ . ը .) “ Հոգիքն՝ որ ելանեն 'ի մարմնոյ աստի , երթան 'ի կեանսն ըստ իւ- րաքանչիւր արժանաւորութեանցն . և անդ հրճուին ա- ռաքինեաց հոգիք ըստ խոստացեալ աւետեացն , որ կայ և պահի յուսացելոց իւրոց անՃառ և անքնին ,, :

Յակոբ մծբնայ . ('է ղէօն . Ճառ ը .) “ Կայց հա- ւատան մեր այսպէս ցուցանել . յորժամ ննջեն ամենայն մարդիկ , հոգիք նոցա գնան առ Աստուած՝ որք արդարք են , և որք մեղաւորք՝ առ գեհեանն ,, :

Աղաթանգեղոս . “ Ծուխ եմ ելանել 'ի մար- մնոյս , և առնուլ զպատկն և զկեանսն յաւիտենից ,, : . . . Կաջալերեցաւ պինդ կաց , և այժմ տեսանես զԿրիս- տոս , առ որ անձկացեալն էիր ,, :

Եղիշէ . “ Հայպա առաքինիք , եհաս ժամ պսակման մերոյ . խցէք զաչս մարմնոյդ վայր մի , և այժմ տեսա- նէք զլոյսն մեր Կրիստոս ,, :

Արեկացի (՝ի փող ֆոտոանից.) «Երանաւետեալք անդ՝ ի վերինն Երուսաղէմ, տեսլեամբ զուարճանայք արարողին տիեզերաց»։

Նա (՝ի բան ճգ.) Ալան մարտիրոսաց ասէ. «Ոմանք նալեացն անտեսից և ծածկելոց աներկեայ բարեացն՝ յուսով տեսլոցն աստէն՝ նկատիչք»։

Նա (՝ի Յոբ.) «Ի՛մենայն արդարոց և արժանաւորաց հոգիք այս հրեղէն փառաբաս յափշտակին և վերանան յերկինս՝ յանդիման լինել փառացն Աստուծոյ»։

Սարգիս վարդապետ (Վահն Պետրոսի.) «Արդ նա ընդ Քրիստոսի թագաւորէ, և մեք կորագլուխ ամաչեցեալք. նա յանձառ փառն վայելէ, և մեք անփառունակ զառածանիմք»։ և գարձեալ (՝ի ընդ. Յոան. եբես 835.) «Ո՛չ եթէ յորժամ զարեգակինս զայս տեսանեմք յետ բազում աւուրց ամպոյ և մառախլոյ, խընդամբ և ուրախանամք. ապա ոչքան խնդութիւն, որ պիսի ցնծութիւն ոչ ծնանի այնմ, որ յետ՝ի բաց դնելոց զամպ մարմնոյս և զխաւար կենցաղոյս այս, վճիտ լուսով զարարիչն արեգականս տեսանիցէ՝ զանաղօտ լոյսն, զանձառ գեղեցկութիւնն, զյաւերժական ցընծութիւնն»։

Շնորհալի (՝ի ընդ. Հռիփսիմեանց).

«Լուծեալ մարմնոյն որ՝ի տապան,
Անկիր զհոգին յերկինից խորան,
Փառաբ փայլէ յարքայութեան,
Ադէ նըման արեգական։ . .
Հան զորդին քո յերկրէ չար
Ի հրեշտակաց բնութըն պար.
Բնական լուսոյն անձառ
Հուպ և տեսող ընծա արար»։

Ամբրոնացի (՝ի վարս Շնորհալւոյն).

«Արդ վայելեա՛ի նոյն ապա.
Օ՛խակն ծանեաւ հուպ գերակայ.
Արդ զնա տեսեր գեմ յանդիման,
Նա անկարօտ գոս քննութեան»։

Նա (՝ի ճէն. Ի՛ր ընդ եղբարն) խնդիր արարեալ թէ գուցէ առանց մարմնոյ հանգիստ հոգւոց, հաստատէ՝ զի «Յուրբք, որք աստ յաղթեցին սատանայի, ելանեն առ Քրիստոս»։

Եւ դարձեալ (ի ՃՈՒ համբոյն.) "Դարձիր յունայնութենէն, և կացո զոտս քո յուղիղ պողոտայն. զի գնացեալ ընդ նոյն այժմ հաւատով, արժանի լիցուք յետ ելիցն աստի երկնային տանն օթևանացն՝ հոգւով, և յաւիտենական կենացն ի հանդերձեալ գալուստն՝ մարմնով,,:

Ի բաց Թողեալ զայլն ամենայն անթիւ վկայութիւնս, յաւելումք ինչ ինչ յեկեղեցական գրոց մերոց, որ ի գաւանութիւն հայաստանեայց եկեղեցւոյ:

Ի շարականաց.

"Ի խաթական մարմնով յերկրի յաշակերտաց քոց պարածածկեցար, և անխաթական հոգւով ընդ Աբրհատոսի յարքայութիւնն երկնից վերափոխեցար,,:

"Որ վերափոխեալ այսօր (սուբբ | ուսաորբէն) մերոտանէ ի սրբութիւն սրբոց, միշտ բարեխօսել առ տէր վասն մեր,,:

"Զքեզ զընթացս իւրեանց կատարեցեալն ըստ հաճոյից կամաց քոց Աբրհատոս, նահատակեալք ձգնութեամբ ընդդէմ թշնամւոյն, և փոխեցան յերկինից արքայութիւնդ,,:

"Զքեզ փորձեցեալք շինանուտ հրով, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն, համարձակութիւն ունիք բարեխօսել առ տէր վասն անձանց մերոց,,:

"Նշեն օթևանք սուրբ Նրրոտդութեանն, զանձառականն ընկալեալ զկեանս,,:

"Որ փառացն իւրոց տեսօղ սուրբ զվկայն արժանի արար,,:

"Աջքա են մեզ բարեխօս յարքայութեանն Աստուծոյ,,:

Եւ ի բազում բանից Աշտոցին զերկուս ևեթ յաւելցուք. "Եւ այժմ, բարեբար և բազումողորմ Աստուած, ընկալ զհոգի ծառայիս քո... և դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեան քում, ուստի մերժեալ են ցաւք և հեծութիւնք, միշտ յարագուարճ բերկրանօք պայծառացեալ տեսլեամբ աստուածային փառաց, ուր ուրախանան ամենայն ընտրեալք քո,,: "Եւ այժմ, տէր Աստուած մեր... զհոգի սորա՝ զոր աւանդեցեր ի ձեռն հրեշտակի քո՝ մերձեցո առ սուրբ

փառաց աԹոռով քով ընդ այլ պայծառացեալ Հոգիան ցնծալ և պարել և զուարձանալ շուրջ զարքունական աԹոռովդ մինչև յօր կրկնակի գալստեան քո ...։

Յաւելումք և զհասարակաց վարդապետուԹիւն սըրբոց Հարց, որ յաձախ ուրեք յիշեցեալեն, զի 'ի հին օրինս մահ 'ի գժոխս ածէր զՀոգիս ննջեցելոց, իսկ այժմ ածէ առ Քրիստոս։

ՕգնՀնարտուԹիւնս զայս վկայեալ 'ի սուրբ գրոց և 'ի Հարց՝ յուցանեմք և բանն ինքնին։ Զի նախ՝ Հոգին ե զվնասուց տէր վաստակոց, զորս ազատ կամօք իւրովք գործէ. արդ ուր վաստակք են, հարկ ե զի և վարձք իցեն՝ եԹէ չիք ինչ այլուստ խափան. ապա Հոգիք արդարոց 'ի մահուն՝ որոց են վաստակք յաւիտենական կենաց, և ընդունակք իսկ են երանուԹեան, հարկ ե ԹէՀ ընկալցին զվարձս վաստակոցն իւրեանց։

Այս և առատաձեռնուԹեանն Աստուծոյ և արդարուԹեան ե անկ, չյապաղել զվարձս արդարոց մինչև յօր դատաստանին։ ԱռատաձեռնուԹեանն, զի որպէս ըստ առաձին կրկին տայ՝ որ վաղն տայ, ըստ նմին ՀաստատուԹեան կէս տայ՝ որ յապաղէն 'ի տալ։ Եւ արդարուԹեանն, զի յամենայնի երանուԹեանն՝ որում այնպիսի ըղձիւք փափաքեն արդարք՝ լինէր նոցա 'ի ծանր պատուհաս, ուր նոքա քաւեալ են 'ի մեղաց և 'ի պատժոյ նոցին։ Զի եԹէ 'ի լրումն մարդկային արդարուԹեան Հրամայեաց Աստուած (Ա Կոր. ԺԶ.) "Ի ապ-ցին վարձք վարձկանի քո մինչև ցառաւօտս ... և առաւել 'ի լրումն աստուածային արդարուԹեան իւրոյ չյապաղեսցէ զվարձս արդարոց։

Երկրորդ 'ի հին օրինս Հոգիք արդարոց յայն սակս արգելեալ էին ընծանել յաղքայուԹիւն երկնից, զի մեղքն Ադամայ փակեալ կայր դուռն երկնից. արդ մահուամբն Քրիստոսի բացաւ այն, ապա չիք այժմ խափան մտանելոց անդր Հոգւոց արդարոց։

Երրորդ՝ ըստ տէրունեան բանին "Շրեշտակք Հանապազ տեսանեն զերեսս Հօր ... արդ Հոգիք արդարոց ըստ ըստ նորին տեառն բանի՝ Հաւասար հրեշտակաց են, ապա և նոքա տեսանեն զերեսս Հօր։

Չորրորդ՝ յառաջ քան զգալուստն Քրիստոսի ոչ բովք և արտմուԹեամբ կատարէին տարեկանք մա-

հուան սրբոց, որպէս Մովսիսի և Ահարոնի և այլոց. իսկ այժմ ուրախութեամբ և մեծահանդէս տօնախմբութեամբ կատարէ զայնս եկեղեցի. և զինչ պատճառք իցեն այսր զանազանութեան, բայց զի յայնժամ չէին մահուն գայր թշուառութիւն, իսկ այժմ երանութիւն և հանդիստ յաւիտենական:

Իսկ առ ի լուծումն առարկութեանց, որ ի բանից տուրբ գրոց և Հարց առարկին, պարտ է զանազանել զբօղոքական հատուցումն՝ զոր մեայ արդարոց հանդերձ մարմնովն ընդունել, ի մանական հատուցմանէն՝ զոր իսկ և իսկ յետ ի մարմնոյ հոգւովն ևեթ ընդունին: Ահաւասիկ խոսիր է ընդ այս և ընդ այն հատուցումն, և յետինն այն համաշխարհական ատեան այնպէս է առ առանձնական դատաստանաւ; զի տուրբ գիրք և Հարք բազում ուրեք թողեալ զայս՝ զայնմանէ առաւելապէս խօսին, առ ի ցուցանել զամենադատաւորին Քրիստոսի իշխանութիւն ի վերայ հոգւոց և մարմնոց, ըստ այնմ թէ «Ո ամենայն դատաստան եա Որդւոյ իւրում, զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի որպէս պատուեն զՀայր»: (Յհ. Ե. 23):

Ի սոյն միտս ասեն Հարք և վարդապետք մեծ արդարոց առնուլ զպսակ յաւուրն յետնում, այսինքն հանդերձ մարմնով զկատարեալ հատուցումն՝ զոր վաղ իսկ հասեալոցն ի փառս՝ տալոց է Աստուած, հանդէս առնելով արդարութեան իւրոյ առաջի ամենայն աշխարհի: Ոմանց որոց և առաքեալն զանազանէ զաստուածատեսութիւնն՝ որ յետ ի մարմնոյն, ի պսակէն արդարութեան՝ զոր հատուսցէ նմա յաւուրն յետնում արդարն դատաւոր: Եւ առաւել ևս բացայայտէ զայն ի միւսում բանին՝ զոր յաւելուածով Տարսոյն ասէ. «Ո՞վ մեռանեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աթոռոյն Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեացն, եթէ բարի և եթէ չար»:

Պարտ է ևս ասել, զի ոմանք ի Հարց երկբայէին, ոչ զերանութենէ արդարոց՝ այլ զայժմու տեղւոջէ նոցա, իբր այն թէ այլուրեք ի հայրենի օթևանացն բազմոց վայելիցեն արդարք մինչև ի յարութիւն մարմնոց և ի բոլորական հատուցումն: Զսա այսմ է խմանալ զաղօթս սրբոյն Յովսէի ի քահանայապետն. «Յոր

(այսինքն՝ ի սուրբ խաչն), ապաւինեալ ծառայ քո (այս անուն) քահանայ, սովաւ հասցէ՛ ի պահեստ՝ ուր սուրբք ամենայն հաւաքեալ ապաստեն մեծի հարսանեացդ յերևելի մեծիդ Յաստուծոյ և փրկչիդ՝ ի ձայն փողոյ մեծի ,, :

Այլ առարկեն ումանք զբան առաքելոյն, (եբր. ժա. 40.) ուր յետ թուելոց զկատարեալսն հաւատովք՝ յայս կինքէ զբանն. “Զև ևս ընկալան զաւետիսն, Յաստուծոյ վասն մերդ լաւագոյն համարեալ՝ զի մի առանց մերդ կատարեացին ,, : Արձակ և զբանն Յայտնութեան, (գլ. չ.) ուր ասի՝ Թէ հոգիք չարչարելոցն վասն բանին Յաստուծոյ՝ կային՝ ի ներքոյ սեղանոյն, և խնդրէին զվրէժ արեան իւրեանց, և առացաւ նոցա՝ զի “հանգիստ փոքր մի ժամանակ, մինչև լցցին ծառայակիցք նոցա և եղբարքն նոցա՝ որք հանդերձեալ են կատարել իբրև զնոսա ,, :

Այլ յերկուց այսի առարկութեանց յեհտինն ընդ իւր բերէ զլուծումնն, զի անդ ոչ զերանութենէ հոգւոյ են բանք. քանզի յաւելու անդէն՝ Թէ “տուաւ նոցա արկանելիս սպիտակս ,, , որ է փառք հոգւոյ, որով կային առաջի Յաստուծոյ և առաջի գառինն: Այսպա ոչ յաղագս հոգւոյ է բանն, այլ յաղագս միաւորութեան հոգւոյ ընդ մարմնոյ՝ յոր բերին արդարքն բնական բաղձանօք. վասն որոյ և ասին կալ՝ ի ներքոյ սեղանոյն. քանզի յաւասկին ժամանակս քրիստոնէութեան՝ զմարմինս վկայից հանդուցանէին՝ ի ներքոյ սեղանոց, ուստի սովորութիւն կալաւ ցարդ մասունս՝ ի նշխարաց նոցա դնել ընդ սուրբ վիմանէն, որպէս հրամայի և՝ ի կանոնն վեմծրհնեաց: Այս դարձեալ ըստ սրբոյ Յոհննացւոյն՝ ազաղակ նոցա և աղօթք՝ է ցանկութիւն միանալոյ, ոչ միայն ընդ մարմնս իւրեանց, այլ և ընդ սուրբս՝ որք հանդերձեալ են փրկիլ:

Նակ առաքելական բանին՝ Թէ “Զև ևս ընկալան զաւետիսն . . . զի մի առանց մերդ կատարեացին ,, , կրկին են իմաստք: Մի՝ զի և առաջինքն, ի հին օրէնս վկայեալք, ընդ մեզ ընկալան զկատարումն հաւատոցն իւրեանց գալստեամբն Քրիստոսի՝ որում սպասեալ մնային, և որ եբաց զդրունս երկնից մեզ և նոցա միանդամայն՝ ի ժառանգութիւն աւետեաց երանութեանն: Երկրորդ՝ զաւետիս կատարեալ երանութեանն է իմա-

նալ, այսինքն զամբողջ երանուելն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ ի կատարած աշխարհիս, յորում աւուր անմահ և երանելի ծննդեամբն յարուցեան մարմնոյ՝ լիցուք ամենեքեան համաճինք, ոչ երէց որ և ոչ կրտսեր։

ԱՌԱՔԱՒՈՒԹԻՒՆՔ

Ա֊ՈՒՐԿ. Ա. Աւրբ գիրք զվարձս արդարոց և զպատուհաս մեղաւորաց արկանեն յօրն դատաստանի. քանզի չև զվճիռ երկաքանչիւրոցն տուեալ, բաժանէ զնոսա Քրիստոս. ապա մինչև ցայնժամ խառն՝ ի խուռն՝ ի միասին կայցեն։ Այս յետ վճռոյն, ապա յաւելու՝ թէ "Այրթ իցեն նոքա՝ ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն՝ ի կեանսն յաւիտենականս,,։ Հաստատի այս և առաքաւն՝ ի միասին ածելոյ որոմանն ընդ ցորենոյ, մինչև՝ ի կատարած աշխարհիս ընտրեսցեն զնոսա հրեշտակք։ Այս դարձեալ բանիւն Քրիստոսի (Յհ. ԺԲ. 2.) "Այրթամ պատրաստեմ ձեզ տեղի... դարձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի ուր եմն իցեմ, և դուք անդ իցէք,,։

Պե. Օայդ ամենայն բանս գրոց, որպէս ասացաք, պարտ է իմանալ զբոլորական հատուցմանէ ամբողջ մարդոյ։ Օ՝ի եթէ ոչ այսպէս էր իմանալ, չէր մարթի միաբանել զբանս գրոց՝ ուր իսկ և իսկ յետ մահուն ասեն զհատուցումն, զորս և ածաք՝ ի վեր անդր. մանաւանդ զի այս եղանակ միաբանելոյ զնոսա առ՝ ի Հարց սրբոց աւանդեալ է յեկեղեցւոջ։

Օնոյն առաւելաւն է ասել զբանիւ Հարց. որք եթէ ուրեք երկդիմի իմաստս տան, այլուր յայտնապէս զմիտս իւրեանց բացատրեն, մինչև չմնալոց տեղի երկբայանաց։ Որպէս սուրբն Քրիսոստոմոս՝ ի գիրսն յաղագս բարի մահուան՝ յայլ և այլ օրինակս ասէ կալ Հոգւոյ. բայց ապա բացատրէ զմիտս իւր յասելն՝ "Այս ինքն են օրինակքն, զորոց տէրն ասաց բազում օրինակս՝ ի տան Հօր իւրոյ, և զորս՝ ի գնալ իւրում առ Հայր՝ պատրաստելոց էր իւրոցն,,։

Նոյնպէս և սուրբ Ոսկեբերան, որ՝ ի ձառն լթ. ա.

կոր. ժ՟ա. 3.) թուի յամեցուցանել զհատուցումն, ապա (՚ի Ձառն Ճ. ք. կոր.) ասէ. "Ոմոզ անդը ՚ի բաց զերկիւղ, քաջալերեաց ՚ի մահու. զի ոչ միայն յապակաՆուելենէ զերծուցանէ նա զքեզ, և ՚ի ծանր բեռանէդ թեթևացուցանէ, այլ և առ տէր էակ ՚ի էակ փոխադրէ,,:

Պարձեալ և զառաջն օգուտսինեան պարտ է ունել միշտ ՚ի մտի, զի մինչև մեղուելեանց ՚ի վեր երևեալ, "Համարձակագոյնս խօսէին Հարք,,, առանց զբանան Ձչգիելոյ, ոչ ինչ կասկածեալ՝ զի այլ ընդ այլոյ ոք առցէ զաստուածեալն:

Ա՟ստուածն. Բ. — ա. Սկսեալ ՚ի սկզբանէ հետէ սովոր է աղօթել ՚ի պատարագի վասն սրբոյ Յուսին և սրբոց առաքելոց և ամենայն սրբոց. և այս ոչ միայն յարևելեան պատարագամատոյցս, այլ և յարևմտեայս՝՚ի Հռոզարապեանն, և յաղօթս ուրեք | ատինաց, որպէս և վասն սրբոյն | Լևոնի աղօթեն ասելով՝ "| ուր մեզ տէր, զի մատուցումիս (կամ պատարագ) օգտեսցէ Հոգւոյ ծառայի քո,,: — բ. Սակ զարձեալ վասն Հանդուցեալ Հոգւոյ աղօթեն առ տէր էրկնէլինոսա ՚է յաւէրենական մահուանէ. և զի ՚ի ընկղցեն վնասա դժոխոյ: Ա՟պա չև ևս ընկալեալ է նոցա զվճիռ յաւիտենական: — գ. Օ՟ի և ոչ իրաւացի է Հոգւոյ առանց մարմնոյն, որ կցորդ ամենայն վաստակոց նորա լեալ է, միայնակ վայելել. — դ. և զի զարձեալ չկարէ Հանդչել ՚ի բաղձանաց միանալոյ ընդ մարմնոյն, որոյ անձկալին տոչորի:

Պա. — ա. Սկսեալ աղօթէ վասն սրբոց, զի յաւելցին պատահական փառք նոցա, և ոչ վասն էական երանութեանն՝ յոր վայելեն: Սթէ ոչ այս էին միաք աղօթիցն այնոցիկ, ոչ էր մարթ միաբանել ընդ այնոսիկ զաղօնախմբութիւնս նոցա և զայլ աղօթս՝ յորս յայտնապէս գաւանէ եկեղեցի զերանական փառս նոցա, և զբարեխօսելն առ Ա՟ստուածոյ:

— բ. Իսկ յաղագս ննջեցելոցն աղօթից, որպէս և ՚ի Հանդատեան շարականս մեր և յաղօթս են ինչ ինչ Հանգոյն սոցին, սովոր է եկեղեցի ՚ի Հոգեհանգիստս, և ՚ի սոցին սակի պաշտամունս այնպէս համարել, որպէս թէ յայնմ իսկ պահու Հոգի ննջեցելոյն ելանիցէ ՚ի մարմնոյ՝ յանդիման լինել առեղծին Ա՟ստուածոյ:

— գ. Ա՟պաքէն և մարմինն կցորդ է վաստակոց Հո-

գւոյն, այլ Հոգին է գլխաւոր տէր վաստակոյն. այսու ամենայնիւ եթէ չէր մարմինն դատապարտեալ՝ ի Հող, և ընդունակ էր վարձուց նախ քան զյարուԹիւն, յայն ժամ Թերևս զօրէր առարկուԹիւնդ։ Ոչ՝ զի չզգայ ինչ մարմինն լուծեալ՝ զյամեցումն վարձուցն, այլ Հոգին անմահ՝ չկարէ գոլ անիմայ։ — Դ. Իսկ քաղձանք Հոգւոյ՝ ի միուԹիւն մարմնոյն՝ ընկղմի՝ ի փառս երանուԹեան Հոգւոյն, և այլազգ զքաղձանս նորա ընու՝ ի տուած մինչև ցօրն յարուԹեան։

ՅՕԴՈՒԱԾ Զ

Յաղագս առաւձնական դատաստանի։

Առանձնական դատաստան զՀետ գայ վարդապետուԹեան, որ վասն իսկ և իսկ Հատուցման Հոգւոց. և է մասն Հատատոյ, սահմանեալ՝ ի Հոգոյնէն փլորենտեան։

Օգայս ձշմարտուԹիւն ցուցանէ Վ. Քրիստոս առակաւ Հարսանեացն, յորում աղտեզահանդերձ կոչնականն դատապարտեալ՝ յուղարկի՝ ի խաւարն արտաքին. դարձեալ և առակաւ Հեղգացելոյ չար ծառային՝ զորմէ ասէ. "Ակեսցէ տէր ծառային այնորիկ յաւուր՝ յորում ակն ոչ ունիցի, և՝ ի ժամու՝ յորում ոչ գիտիցէ. ընդմէջ կտրեսցէ զնա, և զմասն նորա ընդ անՀաւատս դիցէ,,. (Ա Կ. ԺՔ. 46)։

Օգայս ձշմարտուԹիւն Հաստատեն և սուրբ Հարք. և Հայաստանեայց եկեղեցի երգե յայտնապէս՝ ի Շաբաթականի. "Յանձատման Հոգւոյս՝ ի մարմնոյս, ի քակտել գեղեցիկ շինուածոյս, զարհուրիմ՝ ի սպառնալեացդ Թագաւորին՝ ԹԷ պահանջէ յինէն զտաղանդ պատուիրանին. օգնեա և ինձ, Վ. Քրիստոս, այսօր յառաջին ձաՀապարհին, (այսինքն յառանձնական դատաստանի), և՝ ի միւսանգամ գալստեանդ քո (այսինքն յընդՀանրական դատաստանի) օգնեա ինձ,,։

Ներսէսեան (՝ի բառն Է և Ձ.) "Այ ինձ առ ելս անարժան Հոգւոյս յեղկելի մարմնոյս, իբր գատաւորին ձշմարտի յանդիմանելոյդ,,։

"Ժանդակեա ԹևոյդՀ աղօԹիւք, խոստովանեալ

մայրդ կենդանեաց, և ելից իմ յերկրես Հովեի՝ առանց լկանաց հետևել ՚ի կեանս օձևանացդ պատրաստութեան. զի Թեթևասցի կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ. ապասցես ոտն ինձ բերկրութեան զօրն իմ տագնապի ,,։

Ի վարս Հարանց. (գլ. ղՂՀան և արքաս. հտ. ա. 553.)

“Արդիսի ահ և դողումն առաջի կան մեզ, եղբարք, յորժամ հեռասցին Հոգիք մեր ՚ի մարմնոյս. զի և գան յայնժամ փուլթանակի զօրավարք և գունդք հակառակ զօրութեանց, իշխան աշխարհիս և խաւարային դևքն, և գատաստանս գնեն անձին մեղուցելոյ... և արդ որպիսի ահ և դողումն ունիցի անձն այն, մինչև ելցէ վերձիւռ, և ազատեսցի ՚ի նոցանէ։ Օ՛ի ժամն այն գժուարին է, գառն և չար, և զի երկիւղ մեծ իցէ ամենայն աղամայնոցս մինչև տեսցէ անձն այն զվախճան գործոյն այնորիկ, (այսինքն զառանձնական դատաստանի)։ Օ՛ի գան և աստուածայինն զօրքն սուրբ հրեշտակք, և բերեն և նոքա զորս ինչ ունէրն բարի գործս, և զի նայի գողալով անձն այն յայսկոյս և յայնկոյս, և երկնչի յոյժ ՚ի խաւարային դասէն, մինչև յիրաւ և յանաչառ դատաւորէն հատցի գատաստան։... Իսկ մինչ ազատեսցի ՚ի հալածչացն յայնցանէ, տանին զնա յանպատմելի ուրախութիւնն և ՚ի փառս աննկատելիս առաջի Աստուծոյ և երեսացն Աբրհատոսի, և կարգեն զնա յօձևանս երանելի արդարոցն ամենեցուն։ Իսկ եթէ գտցի անձն եղկելի և վաաճառ գործովք կենցաղոյս,.. յայնժամ պաշարէ զնա օր բարկութեան... օր որ հանէ ՚ի խաւարն արտաքին և ՚ի հուր գեհենին, զի տանջեսցի ՚ի նմա յաւիտեան ,,։

Շնորհալի ՚ի Յիսուսորդին.

“Օ՛ի յորժամ ոչ գիտես՝ կոչիս,
Որ ըստ գործոց քոց պահանջիս.
Եթէ չունիս պատասխանիս,
Յանկոյս խաւար բանտ յուշարկիս ,,։

Նոյն Ս. Եփրեմ.

“Դասն դատողին երկնաւորի,
Սրատես զքեզ սպասել յերկրի.
Որ ՚ի մարմնոյ քո վախճանի
Դողոյդ կոչմանըն տերունի,

Ա՛նալով լինել յանկարծակի
Ելման գողոյ ՚ի գիշերի ,, :

Արգիս վարդապետ (՚ի Ռէհ. Հ. Ձառ Ճ.) “Ի՛ւրա-
կաւ զմահուանէն Ձառէ, Թէ քեզ զի փոյթ է երկայ-
նութիւն ժամանակաց դատաստանին. զի դատաւորն
առ դուրս քո անցեալ կայ, և յամենայն աւուր կոչէ
զքեզ ՚ի դատաստան. և դու ոչ գիտես զժամն և զժա-
մանակ եւիցէ քոց ՚ի կենցաղոյս, և մանաւանդ առաջի դա-
տաւորին : Ա՛ւասն զի իւրաքանչիւր ումեք ՚ի մարդկանէ
դրուն դատաստանին ՚ի մահուան իւրում բացան նմա,
և դատաւճիռն ըստ գործոց նորա եղեալ ՚ի վերայ նո-
ցա, եթէ կենաց և եթէ դատապարտութեան, եթէ
արքայութեան և եթէ դժոխոց ,, :

Լամբրոնացի (՚ի Ռէհ. սղմ.) “Ի՛մ զդատաստանին
ընտրողութիւն՝ որ այժմ կայ անդ, ՚ի պատմութենէ
անտի սրբոյ Հօրն Ի՛ոհաննի ատուգեմբ՝ Թէ որպէս նա
իրաւամբք կոչեցաւ ելանել վերոյ իշխանի օդոյդ յերկ-
նաւորն քաղաք, և պյլք : . . . Ի՛սկ զՀանդերձեալ աթոռ
դատաստանին, որով ընտրին օդիքն յայծեաց, ինքն տէր
պատմէ ,, :

Եւ ՚ի Ձառ տնտեսին. “Ի՛ահուան եղմամբ վՀիռ
արդար իրաւանցն սահմանեցաւ ՚ի վերայ, և քննու-
թիւն իւրաքանչիւր գործոց : . . . Ելախ խոկայ՝ Թէ մե-
ռանելոց եմ, և ապա Թէ ՚ի մահուանն՝ քննութեան
ատենի եմ մատնեալ ըստ ամենայն գործոց ,, :

Եւ ՚ի զուր է առարկել, զի յետ դատաստանի իւրա-
քանչիւր ուրուք՝ չիցեն պէտք ընդհանրական դատաս-
տանի :

ՎՀանգի նախ յայտ է ՚ի վերոյ գրելոցս, զի որպէս
առ ՚ի սահմանել զՀատուցումն իւրաքանչիւր ուրուք ըզ-
վարձ կամ զպատուհաս ըստ հոգւոյ՝ հարկ է զի իցէ ա-
ռանձնական դատաստան, նոյն հարկ և ընդհանրական
դատաստանին է առ ՚ի սահմանել զՀատուցումն և ըստ
մարմնոյ. և զի դարձեալ Հաւորէն ազգի մարդկան լի-
ցի դատաստան յաշխարհագումար ատենի՝ ՚ի Հանդէս
արդարութեանն Ա՛ստուծոյ, և ՚ի ցոյց արդար արժա-
նեաց իւրաքանչիւր ուրուք. որպէս զի ՚ի սխեզլա-
կան ատենին ակն յանդիման փառաւորեսցի դատաւորն
մեր ՎՀրիստոս, որ յատենի մարդկան պարտաւորեցաւն

տարտպարտուց։ Կարևոր է դարձեալ ընդհանրականն այն դատաստան, առ՝ի վախճան առնել ամենայն փոփոխութեան։ Օ՜ի թէպէտ և կեանք առն իւրաքանչիւր վախճան առնու մահուամբ, սակայն կեայ նա տակաւին՝ի յիշատակս մարդկան, յորդիս իւր, ՚ի միացուածս գործոց իւրոց և այլն, որոց կատարեալ վախճան՝ի կատարածի աշխարհիս է։ Ա՛ան որոյ յայնժամ Քրիստոս զվախճանական և զկատարեալ վճիռն տայ յաշխարհական հրապարակին։

ՅՕԳՈՒԱԾ Լ

Քաղաքս քաւարանի։

Բառս քաւարան մերթ նշանակէ քաւել, որպէս ուր ասէքն. "Յիսուս Քրիստոս քաւարան մեղուցելոց,,։ Եւ յաճախ ևս ուրեք նշանակէ եկեղեցի, որպէս յորժամ ասէքն՝ի պատարագի. "Ի հրեշտակաց բնակարանին, և մարդկան քաւարանին. և՝ի Գանոնացի՝ "Ընդ դարուց հանդիստ, մեզաւորաց քաւարան,,. և՝ի շարականս խոսի՝ "Ընակք և եկք հետևեալք՝ի քաւարանն՝ի մաղթանս,,։ Այլ որպէս զեկեղեցի կոչեմք քաւարան, վասն զի անդ քաւչական պատարագաւն ընդունելիք զքաւութիւն մեղաց, ապա չէ լինչ օտար՝ի հայկական բարբառոյս քաւարան կոչել և զմաքրարանն յումանց կոչեցեալ վայր, յորում վախճանեալքն՝ի ջնորհս Աստուծոյ, որոց չև ևս հատուցեալ լցեն զպատիժ մեղաց իւրեանց, կամ որոց լցեն մեղք ներելիք, հատուցանեն անդ արդարութեանն Աստուծոյ, սրբին և մաքրին։ Այլ արտաքոյ առաջարկութեանս մերոյ է վիճել զանուանէ։

Յակ զի գոյ տեղի այնպիսի, մանն է հաւատոյ՝ սահմանեալ՝ի ժողովէն փլորենտեան և տրիդենտեան, ընդդէմ մոլորութեան բազմաց. որոց նախաօակիզքն ըստ սրբոյն Կպիփանու և ըստ սրբոյն Գոստինոսի եկաց Այերիս ումն անուն երէց սեբաստացի յամին 340, որ զաղօթս վասն մեռելոց՝ ընդունայնս ասէր։ Ի սոյն մոլորութիւն զառածան ապա և ալպիկեանք, վալդե-

նեանք, լսելեականք և կալսնականք. որոց ամենեցուն ընդդէմ ցուցանի նախ ՚ի սուրբ գրոց։

Ի հին կտակարանս բազում ուրեք պատմի՝ սուգ առնուլ և պահս պահել զաւուրս բազումս վասն վախճանելոց. որպէս Աբրահամ արար վասն Սարրայի, Յովսէփ վասն Յակոբայ, Դաւիթ և արք Յաբիսայ վասն Սաւուղի և Յոնաթանու և Աբենեերայ։ Արդ այն սուգ և պահք ոչ վասն ապերախից մահուան նոցա էին, զի ահա Դաւիթ վասն մանկանն մեռելոյ և վասն Աբիսողմայ՝ զորս այնչափն սիրէր, և ընդ մահ նոցա անհնարինս ցաւեր նմա, ոչ սուգ էառ ընդելիկար, և ոչ պահս պահեաց. այլ այն ամենայն լինէր ՚ի նպաստ հոգւոց նոցա, ՚ի հատուցումն արդարութեանն Աստուծոյ։

Աստ յայտնի և ես տերունեանն պատգամ. “Որ ոք ասիցէ բան զԱրդւոյ մարդոյ, թողի նմա. իսկ որ զՀոգւոյն սրբոյ ասիցէ, մի թողի նմա, մի յայսմ աշխարհի, և մի ՚ի հանդերձելումն ,,. (Ղուկ. ԺԲ. 32)։ Այս ուրեմն են մեղք՝ որոց ՚ի հանդերձելումն լինի թողութիւն, և ոչ է նպաստ մնանել առ Աստուած մինչև թողցին. և այս է քաւարան։ Զայն որոյ ասէ սուրբն (Յովհաննես (յղ. Հաղ. Աստուծոյ. գիրք ին. գլ. իդ.) “Զէր մարթ ասել ձշմարտութեամբ յաղագս ոմանց՝ եթէ չթողուցու նոցա ոչ յայսմ աշխարհի և ոչ ՚ի հանդերձելումն, եթէ չլինէին այլք՝ որոց յայսմ աշխարհի ոչ, բայց ՚ի հանդերձելումն թողուցու ,,։

Եւ զի այս հաւատք էին և ՚ի հին օրինս, յայտ ՚ի մակաբայեցւոց գրոցն է. (ՃԲ. Մակ. ԺԲ. 42.) “Զաջիկ ևս միսիթարէր Յուդա զզօրսն, ... քաջութեամբ խորհրդով չորս սահեցս կրկին ժողովէր, և տայր տանել Երուսաղէմ, մատուցանել պատարագս վասն մեղացն. կարի բարւոք իմաստութեամբ, զի վասն յարութեան մեռելոց խորհէր առնել զոր առնէր։ Որ ի եթէ յարութեան ակն ոչ ունէր անկելոցն ՚ի պատերազմին, զուր տարապարտուց լինէր վասն մեռելոցն աղօթս մատուցանել. այլ հայէր նա ուղիղ, ննջեցելոցն գեղեցիկ պահեալ զընծորհս պարգևաց, արութեամբ քաջութեամբ վասն մեռելոցն զմատաւ ածէր այց լինել մեղացն թողութեան ,,։ Աստի յայտ է զի մակաբայեցիքդ աղօթիւք և պատարագօք օժանդակէին քաւութեան մե-

ղայ՝ որոց գոյը յոյս փրկութեան. ապա ուրեմն արտաքոյ փրկութեան և դատապարտութեան՝ հաւատայինս միւս այլ տեղի, ուր քաւութիւն լինելը պատժոց մեղայ կամ թեմե յանցանաց։

Հաստատուն աւանդութիւն յամենայն ժամանակի և յամենայն եկեղեցիս ցուցանէ լեալ զայս հաւատս. շատ է՝ի պաշտամունս նոցա ակնարկել, որ հաւատարապէս վասն կենդանեաց և ննջեցելոց կատարին։ Այսուհետև որոց և ժողովին փլորենտեան սահմանեաց, զի "Ընդունիցի ապաշխարօղք՝ որք՝ի սէրն Աստուծոյ վախճանին չեն արարեալ պտուղ արժանի ապաշխարութեան՝ի վերոյ յանցանաց և պակասութեանց, հոգիք նոցա քաւին յետ մահու՝ի մաքրողական պատիժս. և՝ի թողութիւն այսպիսեաց պատժոց օգնեն օժանդակութիւնք հաւատացելոց կենդանեաց, այսինքն նուէրք պատարագաց, աղօթք և ողորմութիւնք, և այլ ևս գործք բարեպաշտութեան, զորս սովոր են առնել հաւատացեալք ըստ կարգաց եկեղեցւոյ "։

Օնոյն հաստատեաց և ժողովն տրիդենտեան, արգելեալ եթե չիասցէ զանատոյգ հանգամանաց քաւութեան։

Իսկ ժողով Այսոց առ Խիթար կաթողիկոսիւ՝ի պատասխանի ամբաստանութեանն Կերսեսի, թէ Այսաստանեայց եկեղեցի ջընդունիցի զքառատրան, գրէ առ Ներսէս իկոս ժբ Հռոմայ Հայրապետան. "Այդ ամբաստանութիւն ըստ իմիք ձշմարիտ է, և ըստ իմիք ոչ։ Օ՛ի եթէ զանուանէն ասիցէ, ձշմարիտ է թէ Այք՝ի սակաւ ժամանակաց և այսր ծանեան զքառատրան. ապա եթէ ասիցէ՝ թէ հոգիք մեղուցեալք, որք հաւատով, յուսով, զղջմամբ և խոստովանութեամբ ելին յաշխարհէ, այլ ոչ կատարեալ ապաշխարութեամբ, ՛ի հանդերձեալն ոչ լինչ կրեսցեն պատիժ՝ի հատուցումն մեղաց՝ի տեղւոջ ուրեք կամ՝ի ժամանակի, սուտ է այդ։ Եւ այս յայտ անտի է, զի Այք և վասն միոյ ուրուք ննջեցելոյ և վասն բազմաց՝ իսկ և իսկ զկնի մահուան և յետ ժամանակաց՝ եթէ անձամբ առնէն և եթէ այլոց տան առնել պահս, ողորմութիւնս և պատարագս, և՝ի ձեռն գործոց բարեաց հայցեն Աստուծոյ վասն ննջեցելոց, նախ՝ մեղաց թողութիւն, երկ-

լորդ՝ աղատութիւն ՚ի տանջանաց, և երրորդ՝ ժառանգութիւն երկնից արքայութեան. և զերեսին զայսոսիկ յուցանեմք ՚ի շարականս ,,։

Յետ այսորիկ աւելորդ է մեզ բերել վկայութիւնս ՚ի Նարեկ. շատ լիցի բան սրբոյ Ներսիսին. (՚է յաճախապար.) "Իսկ զհաւատացելոց՝ մեղուցելոց և խոստովանողաց և ապաշխարողաց, և հաղորդեալ փրկական խորհրդոյն և հրաժարեալք յաշխարհէս, և նոցա կատարեսցին յիշատակք՝ Քրիստոսի պատարագաւն և աղօթիւք և զթով տնանկաց, և այլ բարի գործովք, զի վերջնովքս բարեգործութեամբք հանգուցեալքն նորոգեսցին նորոգութեամբ կենացն անվախձանից ,,։

Նասարակաց իսկ միտք վկայեն այսմ ճշմարտութեան։ Քանզի խորհուրդն ապաշխարութեան ոչ բառնայ զպատիժս մեղաց, բայց միայն արձակէ ՚ի մեղաց, վասն որոյ և ՚ի վերայ ածէ մեղուցելոյն պատիժս ապաշխարանաց. և զի ոչ ամենեքին ժամանեն կատարել զապաշխարանն կամ ոչ ըստ արժանւոյն կատարեն, ապա Հարկ ՚ի վերայ կայ նոցա ըստ արդարութեանն Աստուծոյ կրել ՚ի հանդերձեալն զպատիժս՝ զոր աստ պարտ էր նոցա կրել. ապա թէ ոչ, բարեբախտ գտանելին հեղգացեալք քան զփութաջանս. և ՚ի զուր լինէին ապաշխարութիւնքն, զորս ՚ի սկզբանէ և այսր սովորեցաւ դնել եկեղեցի ՚ի վերայ ապաշխարողաց։

Նա զարձեալ՝ բազումք ներելի մեղս մեռանին. և զի չէ մարթ մնանել առ Աստուած որում և է թեթև յանցուածով, ապա պարտ է նոցա քաւել նախ յայնցանէ և ապա արժանի լինել արքայութեան. վասն որոյ ասեմք՝ "Նրա արժանի ողորմութեան, քաւութեան և թողութեան մեղաց ,,։

Նա զարձեալ՝ մի մարմին Քրիստոսի է եկեղեցի, թէպէտ և բաժանի ՚ի զինուորեալ, ՚ի յաղթական և ՚ի չարչարակիր. ապա պարտ է զի իցէ հաղորդութիւն անդամոց նորա ընդ իրեարս, որպէս քաջ պարզաբանէ մեծն Պօղոս (՚է Ղեփ. պաոարգր.) "Որպէս զսրբոցն զաղօթս և զբարեխօսութիւն մեզ կոչեմք յօգնականութիւն, նոյնպէս և մեք պարտիմք առաջնոց ննջեցելոցն օգնել աղօթիւք. մանաւանդ պատարագաւն, որ յոյս և կենդանութիւն և փրկութիւն է ննջեցելոցն.

և կարգ ըստ կարգի յիշելով զսուրբսն, և ընդ նոսա զամենայն հաւատացեալս՝ ի միմեանս յարելով, իբրև զմի մարմին Քրիստոսի՝ հասարակաց գլխովին՝ Քրիստոսի պատարագատն յիշատակելով առաջի Աստուծոյ Հօր, յայս ըզանն աւարտեմք. ընդ որս և մեզ այդ արասցես ,,։

Եւ գարձեալ (՝ի Ղկղ. ՃամաՓր.) “Օ՜ի որ սուրբքն՝ի նոսա իցեն, զմեզ Հոգասցին՝ վասն մեր հասարակաց նոցա և մեր եղբարցն Հոգալոց ,,։

Իսկ թէ ո՞ւր իցէ տեղի քաւարանի, ո՞ր ազգ պատժոյ անդ, ո՞րչափ տեւողութիւն, և այլն. ոչ ինչ զայսցանէ սահմանեն հաւատք։ Այլ որոյ քաջ աստուածաբանն Ցուռնել այսպէս վարդապետէ. “Ուղղափառք ա՜նուամբս քաւարան իմանան զկայս, ուր Հոգիք արդարոց կան՝ի դիպահոլ մինչև՝ի լուսալի հատուցումն աստուածային արդարութեան, եթէ՝ի լրումն ժամանակաւոր պատժոյ՝ զոր մնայր նոցա յետ թողութեան մեղացն կրել, և եթէ վասն թեթև և ներելի մեղաց՝ որ չիցեն թողեալ նոցա՝ի կենդանութեան։ Այս զկայ առնու ուղղափառ վարդապետութիւն, անդր ևս ոչ խաղայ յաւաչ. զի ո՞ր և ո՞ւր իցէ տեղին այն, զո՞ր ազգ տանջանաց կրիցեն անդ Հոգիք, տրտմութիւն եւեթ և վիշտս ընդ յամեցումն երանութեան, բանտարգելութիւն՝ի խաւարչտին և՝ի մառախլապատ ուրեք վայրի, տանջա՞նս մարմնաւոր հրոյ առ՝ի բոցակիզել և ծախել զմնացուած աղտոյ, գարձեալ և ո՞րչափ և որպիսի՞ և մինչև ցե՞րբ, և ո՞ անդ գահիճ, զի զամենայնէ այսոցիկ լռեալ է եկեղեցի և ոչ ինչ սահմանեալ, չկարեմք ինչ ասել հաւաստեաւ։ Այլ միայն չէ արժան լռել զՀաւատարակաց կարծիս աստուածաբանից, զի հաւանական թուի նոցա իսկական հրով չարչարել Հոգւոցն այնոցիկ։ Եւ չզօրէ ինչ սուղորականն այն և յայտնի ընդդիմութիւն, թէ իբր մարթ իցէ նիւթականին հրոյ ներգործել՝ի հոգի աննիւթ. զի այդ եթէ զօրեր, և զդևս և զդատապարտեալս՝ի հրակիզմանէ՝ի բաց պարտուրէր։ Օ՜ի թէպէտ և ոչ պայծառ իմանամք զայդ, բայց բաղում և այլ ինչ իրք են ձգմարիտ և ստոյգ՝ զորս չկարեմք բացատրել. զի ահա ոչ ոք մինչև յարդ հատուեղև ըստ բաւականին՝ թէ զինչդ Հոգի աննիւթական

միանալ կարիցէ այնպէս սերտիւ ընդ մարմնոյ։ Պարտ է մեզ զկայ առնուլ անդ, ցոր վայր եկեղեցի զկարևոր մասն վարդապետութեան առաջի դնէ՝ի հաւատալ. ոչ է պարտ ընդվայրախոյզ զորպէսն հետազօտել,,։ Այսպէս ուրեմն Հայաստանեայց եկեղեցի, և ըստ մասին հաւատոյ, և ըստ հաւանական կարծեաց աստուածաբանից, դաւանէ զայս վարդապետութիւն յերգեղն.

“Ընդեղ խորհուրդ քահանային
Հազկատարած կայր՝ի բեմին
Առաջի սուրբ սեղանոյն.
Նուր շինչանի, խաւար մերժի,
Տըրտմեալ հոգիքն ուրախանան,
Օ՛ի թողութիւն մեղաց լինի.
Ողջմած տէր, ողորմեա
Հոգւոցըն մեր նընջեցելոց ,,։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ընտրէ. ա. — ե. Ել՝ի հին և ոչ՝ի նոր կտակարանս գտանի ինչ ասացեալ զքաւարանէ. մանաւանդ յեղոյն վկայութիւն յետոյ՝ի գիրս անդր մուծեալ է. և անդ զմահուչափ մեղաց են բանք, զի յուռութիւնք դիցանուէրք գտան ուսընդանութ առ անկեալս՝ի պատերազմին՝ վասն որոց աղօթս և պատարագս Յուդա մակաբէ ետ մատուցանել։

— բ. Նա զարձեալ զհետ գայ՝ի բանէ այսմ՝ վախճանել հոգւոց ընդ մարմինս, զի ասէ. “Նմին յաղթութեան ակն ոչ ունէր, անկելոցն՝ի պատերազմին զուր տարապարտուց լինէր վասն մեռելոցն աղօթս մատուցանել։

պե. — ե. Պաղեստինացիք քննաբանք ոչ ընդունին՝ զի հատուածն այն յետոյ մուծեալ իցէ. բայց ընկալեալ և սա զայդ, զի թէպէտ պատմական աւանդ հին՝ զօրէ՝ի հաստատութիւն Հնմարտութեանս։ Դիցանուէրք բըժժանացն իրք անյայտ են, զի թերևս աւար առեալ զայնս՝ առ սէր արծաթոյ և ոսկւոյ ունէին զայնոսիկ առ իւրեանս։ Պէտ համարեալ և՝ զի մնասպաշտութեամբ ուսընդանութ տանէին զայս, մինչ թէր նոցա մեռանել

զղջմամբ, և դիտաւորութիւն Յուդայի էր վասն ուղիղ ննջեցելոցն:

— Բ. Իսկ հաւատք անմահութեան հոգւոյ անբաժանելի էր առ Հրեայս ի յարութենէ մարմնոց, վասն որոյ և փրկիչն մեր ասէր (Մտթ. իբ. 31.) "Ձիցէ ընթերցեալ ձեր զասացեալն ձեզ յԱստուծոյ. Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ. և չէ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց,,: Նոյնպէս և առաքեալն ասէ. (Ա. Կոր. ժե. 32.) "Եթէ վասն մարդոյ ի գազանամարտի լեալ եմ Ս. Ս. Ս.

տեալք յետ երկար տանջանաց՝ ի յաւիտենական ե-
լանուԹիւն զերծանիցին. այլք՝ ԹԷ իսկ և իսկ յետ
մահու կամ յետ սակաւ միոյ և կամ գէԹ զկնի ընդ-
հանրական դատաստանին ի չիք դառնայցեն։

Երդ ուղղափառ հաւատք ուսուցանեն նախ՝ զի գոն
գԺոխք, և երկրորդ՝ զի յաւիտենականք են. վասն որոյ
և ի հանգանակին խոստովանիմք հաւատալ "ի դա-
տաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց,,։ Երկրոր-
դի մասինս ցուցմամբ, այսինքն յաւիտենականուԹեան
գԺոխոց, ցուցցի և առաջինն։

Ի հին օրէնս իսկ յայտնի էր այս ճշմարտուԹիւն.
Դանիէլ (ԺԲ. 2.) ասէ. "Եւ բազումք ի ննջեցելոց
ի հող երկրի յարիցեն, ոմանք ի կեանսն յաւիտենա-
կան, և ոմանք ի նախատինս և յամօԹ յաւիտենա-
կան,,։ Եւ Եսայի ասէ. (ԿԶ. 24.) "Եւ ելցեն և տես-
ցեն զոսկերս մարդկան առ իս յանցուցելոց, զի որդն
նոցա ոչ վախճանեսցի, և հուր նոցա ոչ շիջցի,,։ Այն
ինքն դարձեալ. (ԼԶ. 14.) "Ոսկ արդ ո՞ պատմեսցէ ձեզ
եԹէ հուր բորբոքեալ կայ, կամ ո՞ պատմեսցէ ձեզ ըզ-
տեղւոյն յաւիտենից,,։

Ոսկ ի նոր օրէնս յայտնագոյն ևս զնոյն ցուցանէ
Քրիստոս. զի յետ ասելոյ առ մեղաւորս (Մտ. իե.
46.) "ԵրԹայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտե-
նական,,, յաւելու "Եւ երԹիցեն նոքա ի տանջանսն
յաւիտենականս, և արդարքն ի կեանսն յաւիտենա-
կանս,,։ Երդ չիք անտեղի ինչ քան ի միում բանի եր-
կուանշանակուԹիւնս տալ նմին միում յաւիտենական բա-
ռի, վասն արդարոյ իմանալ զայն անսպառ, իսկ վասն
մեղաւորաց սպառելի։ Եւ դարձեալ (Մրկ. Թ. 43.)
"Լաւ իցէ քեզ խեղ ի կեանսն յաւիտենից մտանել,
քան երկուս ձեռս ունել և երԹալ ի գեհենն ի հուրն
անշէջ... քան երկուս աչս ունել և անկանել ի գեհենն,
ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի,,։ Այով
հաստատէ Քրիստոս զվերոյիշեալ բան մարգարէին։

Եւ դարձեալ (Մրկ. Ջ. 29.) "Այլոյ որ հայհոյեսցէ
զՍուրբն սուրբ, ոչ ունիցի ԹողուԹիւն յաւիտեան,
այլ պարտական լիցի յաւիտենից մեղաց,,։

Եւ դարձեալ վերկիչն մեր ասէ վասն Հուդայի մատ-
նչին, զի "Լաւ էր՝ ԹէՀ չէր իսկ ծնեալ մարդն այն,,.

(Ա՛ՌՔ. ԻԴ. 24)։ Ա՛յլ եթէ դժուխք չէին յաւիտենական, ո՛ր և իցէ երկարութիւն ժամանակի տանջանաց առ յաւիտենականութեամբ երանութեանն՝ որ յետ այնորիկ յաջորդէր՝ գտանէր իբր կէտ անջնելի, և ոչ երբեք լաւագոյն լինէր Յուդայի ոչնութիւն և զրկումն յանեզրական երանութենէ անտի վասն առժամանակեայ տանջանացն՝ զոր միայր նմա կրել վասն մատնութեանն։

Հաստատուն և անխեղդի աւանդութիւն յեկեղեցւոջ յամենայն ժամանակի դատապարտեաց զայնոսիկ, որ ուրանային զյաւիտենականութիւն դժոխոց. և սուրբ Հարք միաբան կոչեն զպատիժս դժոխոց անեզրականս, մշտնջենաւորս, անսպառս, անշէջ զՀուրն, անմահ զորդն, և յաւիտենից զկորուստն. և հերքեն զմոլորութիւն այնոցիկ, որ կամակորեն զնմաստս յաւիտենից։ Զոհան ամենեցուն դարձեալ ՚ի սրբոյն ( )գոստինոսէ ածից օրինակ. (յղ. ֆաղ. Ա՛ռոծոյ. գիրք իա. գլ. իգ.) “Պարտ և արժան է խնդրել զառաջինն և ՚ի միտ առնուլ՝ էր վասն արդեօք չկարէ եկեղեցի անտես առնել զհակառակադրութիւն մարդկանն, որով մաքրութիւն ինն կամ ներողութիւն խոստանան սատանայի և՝ յետ սատիկ և երկայնժամանակեայ պատուհասից։ Ո՛չ զի անմարթ էր այնչափ արանց սրբոց ընդ հինն և ընդ նոր մատեանս դեգերելոց՝ յաչաղանս բերել ընդ մաքրագործութիւն բազմաթիւ հրեշտակաց, և ընդ երանեալսն վայելուչն նոցա յերկնիցն արքայութիւն յետ յոգնատեսակ և դժնդակ տանջանաց, եթէ ոչ տեսանէին զի անհնար է անկած լինել կամ տկարանալ դատավճռին այնմ՝ զոր կանխաւ ինքնին տէրն զեկոյց ասել ՚ի դատաստանն օր. Ա՛րթայք յինէն անիծեալքդ ՚ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալն է սատանայի և հրեշտակաց նորա։ Ո՛ի այս ցուցանէ մշտնջենաւոր տոչորիլ հրով՝ սատանայի և հրեշտակաց նորա։ Ա՛ւ որ ՚ի Յայտնութեանն գրեալ է. Ո՛ սատանայ՝ որ մոլորեցոյց զնոսա՝ արկեալ ՚ի ծովն հրոյ և ծծմբոյ, ուր էր գազանն և սուտ մարգարէն, և չարչարեսցին զտիւ և զգիշեր յաւիտեանս յաւիտենից։ Ա՛ւ այսպիսի ասացուածք զանվախձանն ըստ ժամանակի նշանակէ ՚ի տևողութեան աստուածային գրոց։ Ա՛յլն իրի առ ՚ի

պինդ և անդրդուելի ունելոյ իրաւադատ բարեպաշտուԹեամբ՝ ԹԷ չէ և չէ բնաւ սատանայի և հրեշտակաց նորա անդրէն դարձ յարդարուԹիւն և՝ ի կեանս սըրբոց, ոչ է մարԹ՝ ոչ զայլ ցոյցս հաւաստուԹեան, ԹողԹէ զևս իրաւացին և զյայտնին գտանել, բայց զայն զի դիւն՝ որ ոչ խաբէ զոք՝ ասէ. ԹԷ ոչ խնայեաց ի նոսա Աստուած, այլ առ ժամն այնպէս կանխեաց դատապարտել զնոսա, զի խաւարին կապանօք արկեալ՝ ի տարտարոսն պահեսցին, հանդերձեալք և ևս պատուհասիլ՝ ի վերջնում դատաստանի, յորժամ ըմբռնեսցէ զնոսա հուրն յաւիտենական, և անդանօր տանջեսցին յաւիտեանս յաւիտենից: Այլ եԹէ այս այսպէս, զիա՞րդ ապա կամ ամենայն մարդիկ, կամ ոմանք ոմանք՝ ի միջոցի ջենաւոր յայնմ պատուհասէ զերծեալք լինիցին յետ ժամանակաց ինչ. ապա ԹԷ ոչ, անզօր միայր Հաւատոյն բան՝ ԹԷ միանձեան լինելոց են դիւացն տանջանք: Օ՛ի եԹէ որոց ասիցի. ԱյրԹագը լինէն անիծեալք՝ ի հուրն յաւիտենական՝ որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա, ամենեքին նոքա կամ ոմանք յայնցանէ ոչ միշտ անդանօր կացցեն, սակս որոյ պատճառի ապա լինի հաւատալ ԹԷ սատանայ և հրեշտակք նորա կալոց են անդ հանապազ: Ի՝ի ԹԷ դատաւճիռ Աստուծոյ՝ զոյգ բարբառեալ՝ ի վերայ չարաց հրեշտակաց և մարդկան՝ իրաւ լինիցի առ հրեշտակս, և առ մարդիկ սուտ: Այլ արդարև այդպէս լինիցին իրքդ, եԹէ առաւել ակաստան տացի ոչ Աստուծոյ ասացելոյն, այլ զոր մարդիկ կշռադատեն: Այլ զի այդ անհնարին է, ոչ արժան է հակառակ Աստուծոյ պատճառաբանել. այլ մինչդեռ ժամանակ է՝ ունկնդիր լինել աստուածայնոյ հրամանին, որոց՝ ի միանձնաւոր տանջանացն ցանկան ձողոպրել,:

«Այլ դարձեալ զինչպիսի իցէ՝ յաւիտենական տանջանս իմանալ յաղագս երկարատև հրոյ, իսկ յաւիտենական կեանս առնուլ զանվախձանն, ուր Քրիստոս՝ ի միում վճռի զերկաքանչիւր միահաղոյն ասէ. Այս երԹիցեն նոքա՝ ի տանջանս յաւիտենականս, և արդարքն՝ ի կեանս յաւիտենականս: ԱյԹէ երկաքանչիւրքն են յաւիտենականք, ապա կամ զուգապէս երկարատև վախձանելիք իմանայցին, կամ զուգապէս առանց վախ-

ձանելոյ միտնջենաւորք։ Այսպէս զի նման առ նման հա-
մեմատի. մին տանջանք յաւիտենական, միւսն կեանք
յաւիտենական. իսկ ասել՝ ի միում բանի՝ թէ կեանք
յաւիտենական լինին անվախձան, և տանջանք յաւի-
տենական վախճանելի, ահա բազում ունի անտեղու-
թիւն։ Այսպէս որպէս սրբոցն կեանք յաւիտենական ա-
ռանց վախճանի է, նոյնպէս և որոց տանջանք յաւիտե-
նական իցեն, անշուշտ վախճան ոչ ունիցին ,,։

ԱՌԱՔՈՒԹԻՆՔ

Գլուխ. Ա. Յաւիտենական դատապարտութիւն
ի սուրբ գիրս պարտ է իմանալ կամ զդարձ յոչեր-
թիւն, վասն որոյ Մահ, սպառնուածն և կորուսք կոչեն յա-
ճախ զդատապարտութիւն ամպարշտաց, և կամ եր-
կար ժամանակ՝ որում չետոյ ապա հասցէ կատարած.
որպէս առաքեալն Յուդա ասէ. "Որպէս Սոդոմ և
Գոմոր, և որ շուրջ զնոքօք քաղաքքն՝ որ ըստ նմին
օրինակի պոռնկեցան զհետ ընկերացն մարմնոց, կան ա-
ռաջի օրինակ՝ զյաւիտենական հրոյն ընկալեալ զդա-
տաստան ,, (7)։ Այլ յաւիտենական կոչէ զհուրն առժա-
մանակեայ։

Պա. Սուրբ գիրք ոչ մահ, սատակումն և կորուստ
միայն կոչեն զդատապարտութիւն ամպարշտաց՝ զորս
մարթ է իմանալ և զյաւիտենական դատապարտու-
թենէ, այլ յաճախ ուրեք և բացատրեն զայնս՝ խաւար
արտաքին, կրճտել ատամանց, որդն անմեռ, հուր, պա-
պակումն և տանջանս կոչելով, զորս ոչ է մարթ իմանալ
զոչէութենէ։

Եթէ յաւիտենականութիւն դժոխոց զերկարու-
թիւն նորա նշանակէը, ոչ էր մարթ սուրբ գրոց ասել
զայնմանէ անվախճան, անշէջ, տղայնջենաւոր. և ոչ հակա-
դրել զայն երանութեան արդարոց, ի նմին բանի եր-
կուս նշանակութիւնս տալով յաւիտենականին։

Իսկ առաքեալն յերկոսին և ի հուրս ակնարկելով՝
կոչէ յաւիտենական զայրեցումն Սոդոմայ և Գոմորի, ար-
պէս իմանան մեկնիչք և քննաբանք, վասն որոյ և Այր-
դիս վարդապետն մեր ի նոյն բան առաքելոյն ասէ.

«Օ օրինակ տոկալի տանջանացն ՚ի նոսա եցույց և եդ առաջի մեր օրինակ, զի որ ոչն հաւատան գոլ գեհեան՝ զՍոդոմ զմտաւ ածցեն և զահի հարկանիցին»։

Ա՛ռակ. Բ. Սուրբ գիրք յաճախ ուրեք յայտ առնեն, զի Ա՛ստուած «Ոչ ՚ի սպառ բարկանայ, և ոչ յաւիտեան պահէ ոխս»։ (սղմ. Հ՟Գ. 9)։ Եւ եթէ գոյր յաւիտենականութիւն գժոխոց, ոչ Հնմարտէր վարդապետութիւն առաքելոյն՝որ զիրկագործութեանն Քրիստոսի առաւելագոյն համարի զօգուտ քան զՀնաս մեղացն Ա՛դամայ. (Հ՟Ե)։

Պե. Սուրբ գիրք զանչիշաւարութենէն Ա՛ստուծոյ ՚ի վերայ զղջացելոց ասէն զայդ ամենայն, և ոչ ուրեք զմեղաց՝ անզեղջ վախճանելոցն։

Իսկ զառաւելութիւն զօրութեան Հնորհացն Քրիստոսի քան զմեզաց նախաստեղծին՝ ինքնին իսկ առաքեալն պարզաբանէ յասելն՝ «Օ ի դատաստանն ՚ի միջէ յանցուածոյ անտի ՚ի դատապարտութիւն, այլ շնորհքն ՚ի բազմաց յանցուածոյ յարդարութիւն»։ Ա՛յսինքն զի Հնորհքն ոչ միայն բաւական է ՚ի լուծանել զառաջին մեզն Ա՛դամայ և զմերն առ ՚ի նմանէ ձգեալ, և բառնալ զդատապարտութիւն նորա, այլ և զանՀամար մեզս ներգործականս սրբէ ըստ արատոյն և ըստ պատժոյն, և զպարտաւորեալս մեղօք բազմօք ՚ի կորուստ՝ արժանացուցանէ յաւիտենական կենաց։ Եւ այսու կրկնակի երևի առաւելութիւն Հնորհաց. մի՝ յաղատելն ՚ի բազում մեղաց և ՚ի բազմապատիկ դատապարտութենէ, և միւս ևս՝ յարդարացուցանել զյանցաւորն. քանզի դիւրաւ մնանէ չարն քան ելանել, դիւրագոյն է աղտեղել քան մաքրել, անկանել քան զկանգնել, վիրաւորել քան զբժշկել, պատառել քան զկարկատել. և առՀասարակ յամենայն իրս դիւրագոյն է եղծումն քան զնորոգութիւն. մանաւանդ ՚ի Հոգևորականս, յորս ապականութիւն ընդ բիւր Հանապարհ մըտանել կարէ ՚ի ձեռն մարդոյ, այլ նորոգել՝ Ա՛ստուծոյ միայնոյ զօրութեանն է։

Ա՛ռակ. Գ. Ա՛վետ և Ա՛ստուած յաւիտենական սպառնայ պատիժ, այլ կարող է մեղմել ապա զվՀիտիւրն, և ՚ի սպառ իսկ ներել դատապարտելոց. քանզի այս խոսիր է ընդ խոստումն և ընդ սպառնալիս, զի որ

խոստանայն՝ տայ իրաւունս այլում պահանջելոց զայն ՚ի խոստացողէն, այլ որ սպառնայն՝ տէր է պատուհասելոց և նեբելոց, որպէս և արար իսկ Աստուած երբեմն նինուէացւոց և այլոց: Այսպա ոչ ինչ արգելու զնա, զի նեբեսցէ և դատապարտելոց:

Պե. Խովանդակ երկդիմութիւն առարկութեանդ է ՚ի շփոթելոց զսպառնալիս ընդ վճռոյ, ուր բանն Աբրիստոսի ոչ սպառնական է՝ այլ վճռական. "Արթայք հինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական,,: Այս դարձեալ՝ սպառնալիք առնին այնոցիկ, որոց մարթ իցէ դառնալ ՚ի մեղայն. իսկ ամպարշտաց վախձանելոց վճռեալ է ժամանակ դառնալոց ՚ի մեղաց, և ժամանակ է այնուհետև պատուհասի: Այս համայն ասացեալ, այսպէս ՚ի սկզբանէ և այսր Հարք առհասարակ և եկեղեցի սուրբ խնացան զբանս սուրբ գրոց, և անդարձ՝ զվճռաձիւռ դատապարտութեան: Այս եթէ եղեն իսկ ՚ի Հարց՝ որ այլազգ ինչ ուրեք ՚ի Հարևանցի ասացին, նոքին իսկ ապա զհակառակն ըստ ուղղափառ վարդապետութեան հաստատեցին: Այսպա ամենայն առարկութիւնք և գուշակութիւնք առաջի աւանդութեան կործան անկանին:

Այոբկ. Դ.— ա. Այնաքեայն ասէ. (ա. Կոր. ԺԵ. 22.) "Որպէս Այդամն ամենեքեան մեռանին, նոյնպէս և Աբրիստոսիւ ամենեքեան կենդանասցին,,. ապա ուրեմն և դատապարտեալք. "Օ՚ի յետին թշնամին խափանի մահ,,. ապա ուրեմն և երկրորդն մահ, որպէս կոչեն զդժոխս սուրբ գիրք (Յայտ. ԻԱ. 14.) և Թագաւորեսցէ Աբրիստոս յամենեսին այնպէս, "Օ՚ի եղիցի Աստուած ամենայն յամենայնի,,: Այսան որոյ առաքեալն ասէ զԱբրիստոսէ. "Օ՚որ պարտ է երկնից ընդունել մինչև՚ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ,,. (Գործ. Ի. 21.) այսինքն մինչև դատապարտելոցն և վճարեսցի պատուհաս: — բ. Այսան որոյ առաքեալն Յոհաննէս առաջին յայտնութեան զարդարոցն կոչէ, համեմատութեամբ յարութեան դատապարտելոցն յերկրորդ Ահռոանէ. և ՚ի վերայ բերէ զբան նստելոյն ՚ի վերայ աթոռոյ. "Այհաւասիկ առնեմ զամենայն նոր,,. (Յայտ. Ի. 5 և 14: իա. 5):

Պե.— ա. Այլ զյարութենէն դատապարտելոց, և ոչ զայլմէ խնբէ են բանք առաքելոյն. նա զյարութենէն

Քրիստոսի, և զփառաւորեալ յարութենէն արդարոյ Ճառէ, որում Քրիստոսիւ արժանանան, և որոյ պատ- Ճառ և օրինակ Քրիստոս է: Ալ ան այսորիկ և թա- գաւորեցէ յընտրեալս իւր, և 'ի նոսա լինի Աստուած ամենայն յամենայնի. իսկ զամպարիշտս դիցէ 'ի ներ- քոյ ոտիցն Քրիստոսի, որպէս ասէ անդ նոյն առաքեալ: Առաքելապետին բան 'ի կատարած աշխարհիս Հայի, յորժամ եկեսցէ Քրիստոս դատել զկենդանիս և զմե- ռեալս:

— Ժ԰. Իսկ զբանս Յայտնութեան կէսք զառանձնա- կան և զընդհանրական դատաստանէ իմանան, այլք զժամանակէ յարութեան արդարոյ և մեղաւորաց ըստ մարմնոյ, զի համարին կանխել արդարոյ 'ի յարութիւն. և այլք այլազգ տան մեկնութիւնս: Նայց ոչ ոք 'ի Հարց և 'ի մեկնչաց երազէ անդ զվախձան յաւիտենական դատապարտութեան այնոցիկ՝ զորս ասէ արկեալ 'ի լիճ հրոյն. զընտրեալս ևեթ ցուցանելով 'ի գէրն կենաց զբ- րեալ, որոց վասն և յաւելու նատելոյն 'ի վերայ աթո- ռոյ առնել զամենայն նոր:

Ընդարձ. Ե. Գէթ օրէն էցէ առ փոքր ինչ սփոփուիլն դատապարտելոց աղօթել, որպէս զի տանելի լինին նո- ցա տանջանքն, որպէս յաղօթս ուրեք է տեսանել:

Պէ. Գէթ առանձնակի ուրեք ումանք այդպիսի ա- ղօթս իմացան, եկեղեցի սուրբ չընկալաւ երբեք զայդ- պիսի վրիպագուժ մաղթանս. որպէս երկար զայսմանէ սուրբն ( )գոստինոս 'ի գիրն յաղագս քաղաքին Աս- տուծոյ Ճառէ, (գիրք ին. գլ. իդ.) ուր ասէ. "Ով որ յողջամտաց զայդ ասաց, և ոչ ասիցէ որ երբեք. ապա թէ ոչ, առ ինչ ապա ոչ աղօթել եկեղեցւոյ և այժ- մէն իսկ վասն սատանայի և հրեշտակաց նորա, այն որ ընկալաւ պատուէր 'ի Քրիստոսէ աղօթս վասն թշնա- մեաց իւրոց առնել:... Նա նոյն գարձեալ պատՃառ է՝ զի և ոչ այժմ լինի աղօթել 'ի վերայ մեռելոց անհա- ւատից և ամպարշտաց, թէպէտ և մարդ են: Կանգի վասն ումանց ննջեցելոց լսելով լսին աղօթք եկեղեցւոյ, և ս և առանձին բարեպաշտից. սակայն այնոցիկ վասն, որք 'ի Քրիստոս վերածնեալք՝ ոչ կարի չարաչար քա- ղաքավարեցան 'ի մարմնի, որով անարժանիք այնպի- սում՝ ողորմութեան դատիցին. և ոչ այնպէս լաւու-

Թեամբ՝ զի անկարօտք ողորմութեան գտանիցին։ ... Ա՛յլ յորժամ դատաւորն կենդանեաց և մեռելոց ասիցէ. Այ՛սչափ օրհնեալ՛ Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք պատրաստեալ ձեզ պարտաւորութե՛ան՝ ի սկզբանէ աշխարհի, իսկ այլոց ներհակաբար՝ Այ՛լևս չինէն անիծեալ՛ ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա, և երթիցեն նո՛ա՛ ի պանջանս յաւիտենական, ապաքէն ժպրոհութիւն մեծ է պատճառաբանել՝ թէ ոչ միտնջենական լինիցին տանջանք ոմանց յայնցանէ, որոց՝ ի միջոյն ջենաւորն գնալ տանջանս առէ Ա՛ստուած. և այդպիսում ժպրհութեան հրապուրանօք զնոյն իսկ գյաւիտենական կեանս անյոյս առնել կամ երկբայելի՛։

ՑՕԴՈՒԱԾ Թ

Զի վարդապետութիւն յաւիտենական պատժոց ոչ է հակառակ յուսոյ քանիւն։

Յաւիտենականութիւն պատժոց, զոր կրեն մեղաւորք, յայտ է յաստուածայինն յայտնութենէ. վասն որոյ չէ մարթ զի հակառակ իցէ լուսոյ քանին։

Այլ գարձեալ պատիժքն այնոքիկ կամ զրկանաց են և կամ դրականք։ Ա՛յրդ զրկումն՝ ի յաւիտենական եքանութենէ ոչ այլ ինչ է, քայց կորուսանել զԱ՛ստուած զՆն ամենաբարի. և քանն իսկ ցուցանէ, զի պարտ է կորստեանս այսմիկ գոլ յաւիտենական։ Վանզի մեղաւորն գիտութեամբ և կամօք կորուսանէ զնա. և միանգամ կորուսեալ մահուչափ մեղօք, և անզեղջ՝ ի մեղսն վախճանեալ, ոչ ևս կարէ զայն ստանալ. որպէս զի զմի կամակար զաչս իւր խլեսցէ, ոչ ևս կարէ տեսանել, և ճնայ՝ ի սպառ՝ ի կուրութեան։

Իսկ դրական պատիժք, կամ նեղքինք են՝ որ՝ ի զըրկանաց անտի գան յառաջ, և կամ արտաքինք՝ յարգարութենէն Ա՛ստուծոյ սահմանեալ նոցա տանջանք։ Ա՛ռաջինքն հարկաւ կցորդք են զրկանաց, այսինքն տըրտմութիւն, յուսահատութիւն, խայթ խղճի մտաց, այլովքն հանդերձ, յորոց անմարթ է զերծանել դատապարտելոց։ Իսկ արտաքին տանջանք կարի իսկ արդա-

րութեամբ ըստ իւրաքանչիւրոցն մեղայ Հարկ է զի յաւելցին. այլ զայսցանէ՝ Թէ որպիսի ինչ իցեն, ոչ ինչ սահմանեն Հաւատք։

Ի մեծայն առարկութեանց, զորս յարդարութենէն Աստուծոյ և յողորմութենէ առարկեն հակառակորդք, իբր Թէ չիցէ մարթ զյաւիտենականութիւն պատժոց միաբանել ընդ սուտ, առաջին պատասխանի այն է՝ զոր առաքեալն ասէ. (Հռ. Թ. 20.) "Դու ո՛վ ես մարդ, որ պատասխանի տաս Աստուծոյ,,։ Եւ զոր իմաստունն ասէ. (Իմաստ. ԺԲ. 12.) "Ո՛վ ասիցէ ցքեզ՝ Թէ զինչ գործեցեր, և կամ ո՞վ է որ ընդդէմ դառնայցէ դատաստանի քումմ։ . . . Զանազի արդար ես, և արդարութեամբ վարես զամենայն. զայն որ պարտն իցէ տանջելոյ, տանջեցեր,,։

Ապա և մարդկօրէն բանիւ պատասխանեմք նախ. ապաքէն արդար է Աստուած և ողորմած, այլ ոչ է պարտական ըստ կամաց մարդկան առնել զարդարութիւն իւր և զողորմութիւն։ Ալէ է մարթ արարածոյ պահանջել այլ ինչ յարարչէն, բայց զի մի Թշուառ զինքն ստեղծանիցէ և կամ սահմանեալ՝ի Թշուառութիւն։ Այլ Աստուած ազատ և անձնիշխան արար զմարդ, և՝ի յաւիտենական երանութիւն սահմանեաց զնա, և ետ նմա զամենայն կարևորս հասանելոյ այնմ։ Իսկ եԹէ մարդ՝ կամօք և գիտութեամբ զխոստմունսն Աստուծոյ արհամարհեալ, ՝ի սպառնալիսն զիմէ, պարտ է նմա անձին իւրում մեղ դնել։

Երկրորդ՝ մեծն և առաջին՝ի պատժոց գժոխոց է զրկումն մեղաւորաց՝ի տեսութենէն Աստուծոյ։ Զդայս ձրի և գերբնական չնորհ խոստացեալ է այնոցիկ՝ որ կամիցին արժանի լինել այնմ ըստ գործոց իւրեանց։ Զդ՞ր այն պարտք իցէն արդարութեանն Աստուծոյ տալ զչնորհն զայն այնոցիկ՝ որ կամաւ իւրեանց հրաժարեն յայնմանէ. այլ ընդ հակառակն որպէս զսուրբսն արդարութեամբ իւրով երանացուցանէ յաւիտեան ըստ իւրաքանչիւր արժանեաց, նոյնպէս յոյժ իսկ անկ է արդարութեան նորա պատուհասել յաւիտեան զմեղաւորս և տալ նոցա Ձանապէլ յիմնէ իմեքէ հրաժարեցին արհամարհանօք. և այս Ձանապէնն է նոցա սաստկագոյն պատուհաս, և որդն անմեռ։

Արդարդ՝ ըստ համեմատութեան յանցանացն ընդ պատուհասին՝ պատասխանեմք զի տևողութիւն պատժոց և ոչ առ մարդիկ ըստ տևողութեան յանցանացն կշռի, զի ծանրութիւն Աշնամանացն կատի ըստ նուաստութեան Աշնամանողին և ըստ մեծութեան Աշնամանելոյն։ Արդ ծանրութիւն մեղաց Աէպետ և ըստ Աշնամանողին չիցէ անսահման, այլ ըստ Աշնամանելոյն անսահման է. զի Աստուած է Աշնամանեալն։ Ոսան որոց պատիժն դժոխոց ըստ յաւիտենականութեանն լեալ անսահման, չէ ինչ անհամեմատ ընդ Աշնամանացս անքաւելի բարութեանն Աստուծոյ։ Այլ զայսմանէ և յառարկութիւնս անդ ասացուք ի տեղի։

Այս չորրորդ՝ զի մեղքն այն ժամանակաւոր, յորում մեռանի ոք անզեղջ, ոչ ևս է ժամանակաւոր՝ այլ եղանի յաւիտենական, մնալով միշտ մեղաւորին անզեղջ ինոյն կամ։ Որ եղաւորն յետ մահուն՝ միշտ է մեղաւոր, վասն որոյ և միշտ պատուհասեալ. իբր ոչ եթէ վերստին անդ ի դժոխս մեղանչելով, այլ զի ոչ ևս հրաժարել կարէ ի մեղաց անտի, և կայ մնայ միշտ անզեղջ։ Որ ևս հեղգութիւն արեանն Քրիստոսի օգնէ նմա, որոյ չնորհօքն յաստի կեանս կարօղ էր ղղջալ, և ղղջումն իւր նուաճ եւեթ էր ընդունելի։ "Ոչ օրէնք և յետ մահուն ոչ դադարեն ի գոլոյ անօրէն. զի Աէպետ և ոչ ևս կարիցեն մեղանչել, այլ ի կամս մեղանչելոյ հաստատուն կան,,, ասէ սուրբն Գրիգորիոս. (ի Ոսոն. Հատ ժԶ)։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

Ասաքէ. Ա. Ո վարդապետութիւն յաւիտենական պատժոց ոչ է մարթ միաբանել ընդ բարութեան և ընդ ողորմութեանն Աստուծոյ, և ոչ ընդ արդարութեան նորա։

Պա. Այս է մարթ ըստ մտաց անհաւատիցն, որք չփոթեն զողորմութիւնն Աստուծոյ ընդ ներգործելոյ նորա զայն ըստ տեղւոյն և ըստ ժամանակի։ Ողորմութիւն հարկաւորապէս է Աստուած, այլ ազատ է նա յողորմել որպէս ինքն գիտէ զժամանակն և զտեղին։ Այս քանզի սահմանեաց ամենեցուն ժամանակ ողորմութեան,

և ամպարիշտք արհամարհեն զայն և երկայնմտութեամբ նորա զեղծանին, ՚ի սպառել սահմանեալ ժամանակին՝ ոչ և զտանեն զայն։ Հանդերձ այսու ամենայնիւ՝ վարդապետութիւն է հաստարակաց, զի մեղաւորք նուազ քան զարժանն իւրեանց պատուհասին, և ՚ի դժոխս իսկ անդ ողորմութիւնն Աստուծոյ ընդ արդարութեան նորա յաղթանակէ՝ ոչ ըստ արժանի իւրաքանչիւր մեղաց տանջելով զմեղաւորսն։

Ա-արկ. Բ. — ե. Աստուած ըստ բարութեան իւրում և ըստ մարդասիրութեան արար զմարդն ՚ի յաւիտենական երանութիւն, վասն որոյ և ՚ի սրտի նորա եդ իղձս առ այն՝ այլով իւիք անյագելի. արդ ՚ի դերև լիներ այս, եթէ կորնչէր ոք յաւիտեան։ Ա-ու ոչ միայն լիներ ՚ի դերև, այլ և ՚ի թշուառութիւն մարդոյ, զոր անտեղի է ասել. ապա ուրեմն յետ կրելոյ մեղաւորաց պատիժս ըստ յանցուածոցն, պարտ է զի լցցին իղձք նոցա։ — Բ. Յարձեալ զի և առաւելագոյն խնամք են Աստուծոյ ՚ի վերայ բանաւոր արարածոց, և հարկ է զի յետոյ ապա հասուցէ զնոսա ՚ի վախճանն՝ յոր սահմանեաց զնոսա։

Պե. — ե. Աստուած արար զմարդն ՚ի յաւիտենական երանութիւն, եթէ զպատուիրանն պահեսցէ. և առ ՚ի յորդոր պատուիրանապահութեան՝ եդ ՚ի նմա զիղձս յաւիտենական երանութեան։ Ա-ան որոյ առ ՚ի չգոյէ պայմանին՝ զրկի մարդ յերանութենէ, այլ սահմանեալն յԱստուծոյ կատարի միշտ։ Զրկին վախճանս մարդոյ պարտ է զանազանել. մերձաւոր յաստիս, և վերջին յանտիս. այլ վերջինս այս կախի զմերձաւորէն՝ որ է ծառայել Աստուծոյ և զպատուիրանս նորա պահել, զի այսուիկ եւեթ հնար է մարդոյ հասանել ՚ի վերջին իւր վախճան։ Ա-ան որոյ եթէ անփոյթ առնէ մարդ զայսմանէ, զրկի յայնմանէ և թշուառանայ կամօք իւրովք, և ոչ ըստ կամացն Աստուծոյ՝ որ զիղձս երանութեան եդ ՚ի նմա առ ՚ի հասուցանել զնա յայն։ Սակ ՚ի սպառել սահմանեալ ժամանակին, ոչ և այնուհետև քաւին մեղք մարդոյ պատժովքն՝ զորս կրէ։

— Բ. Սմանօք Աստուծոյ ՚ի վերայ բանաւոր արարածոց առաւելեալն կատարին բնական և գերբնական նպաստիւքն՝ զորս տուեալ է նոցա, որպէս զի գործակից

լինելով այնոցիկ՝ հասցեն երանութեան. իսկ եթէ մեր-
ժեն նոքա զնանաման Աստուծոյ, այն նոցա է մեղ, յաս-
տուածակոյս կողմանէ անտի ոչ ինչ պակասեալ.“ Ո՛ ինչ
ինչ առնել էր այգւոյ իմում, և ես ոչ արարի նմա. ինա-
յի զի բերցէ խաղող, և եբեր փուշ„. (Ես. Ե. 4):

Ա՛ուտ. Գ. Ա՛րդարութիւն խնդրէ համեմատութիւն
պատժոյ ընդ յանցանս. արդ յաւիտենական պատժոյ
չիք համեմատութիւն ընդ ոչ և է ծանր յանցուածոյ:
Այս չէ մարթ ասել՝ զի վասն յարատեւելոյ մեղաւորաց
՚ի չար կամն, յարատեւէ և պատիժ նոցա. զի և գող
ոք բանտարկեալ՝ թէպէտ և՝ ի գողութեան կամն յա-
մառեալ կայցէ, սակայն ՚ի ընդ չափոյ պատուհասին՝
զերծանի ՚ի բանտէ:

Պե. Պարտ է կրկին համեմատութիւն զանազանել
՚ի մէջ մեղայ և պատժոյ. մի՝ զի մի պատիժն ծանրա-
գոյն քան զյանցանսն իցէ, և միւս և՝ ըստ տեղոյու-
թեան: Ա՛ռաջինն խնդրի միշտ, երկրորդն ոչ միշտ.
ապա թէ ոչ, զհետ գայր և սպանութեան՝ զոր ՚ի
միում ևեթ վայրկենի ոք գործիցէ՝ տալ պատիժ վայր-
կենական: Այս քանզի Թշնամանք ՚ի Թշնամանողէն
և ՚ի Թշնամանելոյն առնու զծանրութիւն, զիւրին
է ՚ի միտ առնուլ՝ զի ըստ յոգնապատիկ առընչու-
թեանց մեղաւորին ընդ Աստուծոյ, և մանաւանդ ըստ
ամբաւ մեծավայելչութեան նորա՝ ընդդէմ որոյ գոր-
ծին մեղքն, և ըստ անարգութեան արարածոյն՝ յոր-
մէ գործին, ամբաւութիւն ինն առնու չարութիւն մե-
ղացն. և յայսմ իսկ է անգիւտ կորուստ վերջնոյ վախ-
ճանի մարդոյն, վասն որոյ և կորուստ յաւիտենական:
Իսկ դրական պատժոցն չափ՝ արդարութեանն ևեթ Աս-
տուածոյ է գիտելի՝ որպիսի և որչափ իւրաքանչիւրոցն է
արժան, զի մի քան զչափ մեղացն առաւելուցու: Ա՛յժ
այսմ ևեթ ոչ ինչ արգելու զչափ պատուհասի դնել
և վասն դատապարտելոյ, այլ ըստ ժամանակին ոչ ևս.
զի որպէս ՚ի մարդկային ատենի որ ոք մահապարտն գը-
տանի՝ այնպէս կորուսանէ զկեանսն, զի ոչ ևս գտանել
զայն կարէ, և տեւէ նմա պատուհասն այն յաւիտեան,
այսպէս և որ յատենի աստուածային արդարութեան
զհոգևոր կեանսն կորուսանիցէ՝ այսինքն զերանութիւնն
յաւիտենական՝ ոչ ևս գտանել զայն կարէ, և ոչ ՚ի

պատժոյ անտի զերծանել։ Արթէր ևեթ Աստուծոյ յոչէութիւն զնոսա դարձուցանել առ ի զերծուցանել զնոսա անտի, եթէ կամէր. այլ զկամն նորա՝ ոչ է տուեալ մեզ գիտել այլազգ, բայց միայն յայտնութեամբ իւրով. արդ ինքն յայտնէ, զի չկամի զայն. ապա մեսյ մեզ խոստովանել, զի կորիք եմք մտօք, չձանաչելիք զիրաւունս աստուածայինն անսահմանելի արդարութեանն, զծանրութիւն մեղացն՝ որ ընդդէմ անքաւելի բարութեանն գործեալ, և զպատուհաս՝ որում արժանի գտանի այն, որ մինչև ցմահ զանքաւելի բարութեամբն նորա արհամարհէ, և հակառակին կայ անսահմանելի ողորմութեան նորա։

ՅՕԴՈՒԱԾ Ժ

Ցաղագս տանջանացն դժոխոց։

Կրկին ազգ տանջանաց են ի դժոխս. իմանալի և զգալի. իմանալի՝ զրկուածն ի տեսութենէն Աստուծոյ, և զգալի՝ այրեցուածն. երկոքին ևս անհնարին ծանրագեալք յուսահատութեամբն յաւիտենից։ Օ առաջինն անմեռ որդամբն բացայայտէ Վրիստոս, զի խիղճ մտաց կրծէ զմեղաւորն՝ որ վասն առժամայն հաճոյից զերանութիւնն զայն յաւիտենական կորոյս։ Իսկ զերկրորդն՝ անշէջ հրովն, որպէս ասէ. "Օ լի որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի,,։

Այլ նիւթականն արդեօք իցէ հուրս այս եթէ անյիւթ, ոչ ինչ զայսմանէ սահմանեն սուրբ հաւատք. ուսուցանեն ևեթ զի դատապարտեալք յաւիտեան զըլկեալ կացցեն ի տեսութենէն Աստուծոյ, և տանջեսցին ի դժոխս։ Այլ սակաւք ի վարդապետաց և զհուրն այլաբանօրէն իմանան իբրև զորդնն. այլ նիւթականութեան հրոյն այնորիկ հաւատք այնպէս ընդհանուր է առ հաւատացեալս, զի ոչ է օրէն զհակառակ կարծիսն հաստատել։ Այլ այլաբանօրէն ևս զհուրն առեալ, հարկ է խոստովանել՝ զի դժոխք ըստ տերունական բանին է տեղի տանջանաց, և զի մեղաւորք տանջին անդ հո-

գեով և մարմնով։ Արաւսյի է կրել տանջանս և մարմնոյն, որ գործակիցն եղև Հոգւոյն ի մեղս. և ի սոյն ակնարկեն գիրք յասելն. (Հռոմ Է. 18.) "Օ՛ի վրէժխընդրութիւն մարմնոյ ամպարշտի՝ Հուր և որդն ,,։ Օ՛որմէ սուրբն (Գոստինոս այսպէս իմաստասիրէ. (յղ. *աղ. Աստուածոյ. գիրք իա. գլուխ Ի.) "Իսկ որ գիտեն աներկբայ՝ Թէ յայն տանջանս կայ տուժիլ և Հոգւոյ և մարմնոյ, հաստատեն այրիլ ի Հուր՝ մարմնոյն, և Հոգւոյ կրծիլ որդամբ տրտմութեանն։ Այս առաւել ևս զՀաւանութեանն ունի բան. զի արդարև անտեղի իմն է՝ Թէ պակասիցին անդ ցաւք կամ մարմնոյ և կամ Հոգւոյ։ Այլ ես մտադիւր ևս ի մարմնին անդր ասեմ իմանալ զերկաքանչիւրն, քան Թէ և ոչ զմի. ուստի լռելեայն ակնարկին ցաւք Հոգւոյն յայն բանս աստուածային գրոց՝ ըստ հետևութեան իմացեալ, Թէպէտ և յայտնապէս չասիցի. իբրև զի մարմնոյն ցաւելով՝ գոյ և Հոգւոյն տանջիլ անպտուղ ապաշաւանօք։ Օ՛ի ընթեռնումք ի գիրս. վրէժխընդրութիւն մարմնոյ ամպարշտի՝ Հուր և որդն։ Նմանօթ ևս մարթ էր ասել, վրէժխընդրութիւն ամպարշտի. վասն էր ապա ասացաւ մարմնոյ ամպարշտի. բայց զի ծանիցի՝ զի երկոքինն ևս, Հուր և որդն, պատուհաս մարմնոյ են ,,։

Արդէս զարդարոցն երանութենէ ասացաք, զի ըստ իւրաքանչիւր վաստակոցն ընդունին աւելի կամ նուազ զվարձս, ըստ այնմ Թէ "Ի տան Հօր իմոյ օթևանք բազումք են ,,, զնոյն և ի դժոխս է իմանալ. զի և անդ ըստ իւրաքանչիւր մեղաց, ըստ Թուոյ և ըստ ծանրութեան նոցա, և ըստ առաւելութեան չնորհացն արհամարհելոց, աւելի կամ նուազ կշռի յարդարութենէն Աստուծոյ պատուհաս։ "Օ՛ի որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ. և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն ի նմանէ ,,. (Ղուկ. ԺԲ. 48)։ Այլեւնեցուն պատիժ լինի յաւիտենական, այլ ոչ ամենեցուն հաւասար պատիժ. և որչափ և որպիսի իւրաքանչիւր ումեք յարդար դատաւորէն սահմանի պատիժ, նոյն և անյեղլի տևեսցէ ի յաւիտեան։

Ել սակաւք ի Հարց համարին, զի գիւաց և մեղաւորաց յետ վերջին դատաստանի սկսանիցին հրոյ տանջանք։ Այլ առաւելագոյնք ի Հարց զՀակառակն ու-

սուցանեն, և այս են հասարակաց հաւատք. զոր և մեծատանն դատապարտելոյ բան՝ թէ "Պատակիմ՝ ի տապոյ աստի,,, ջնոյն հաստատէ:

ԳՕԴՈՒԱԾ ԺԱ.

Քաղագս անկնուք վախձանելոցն:

Անկնուք վախճանեալս ինն զտղայս և զնեաւագարս, և ոչք իբրև զնոսա՝ ի սկզբնական ևեթ մեղս առանց ինքնուրեան մեռանին: Յողոմէն փլորենտեան և ուզդանի երկրորդ ժողովն տիեզերական սահմանեն՝ ինքնեալ նոցա՝ ի դժոխս ընդ վախճանեալսն մահուչափ մեղաւք, բայց այլ և այլ պատիժ: Յորմէ զհետ գայ ոչ միայն անհաւասարութիւն, այլ և զանազանութիւն պատժոյ սկզբնական մեղացն՝ ի պատուհասն ներգործականին: Սակ զզանազանութիւնն զայն թողու եկեղեցի սուրբ սահմանել աստուածաբանից՝ թէ յորմէ իցէ. որով մարթ է ընդ վէհիւ ժողովոյն այնոցիկ միաբանել զկարծիս, որ զպատիժ սկզբնական մեղացն յետ մահու ոչ յայլ ինչ կացուցանեն՝ բայց ի զրկումն յարքայութենէ երկնից: Քանզի բազումք են և՝ ի դժոխս. անդանաւոր կային յառաջ քան զգալուստ փրկչին և արդարքն՝ որք սպասէին գալստեան նորա յաստուածութիւն, բայց այլ էր օթևան նոցա յամենարշտելոցն: Այլ ինչ ապա արգելու և զանն անկնուք վախճանելոցն գնել այլ օթևան. զի սահման ժողովոյն յարքայութենէ ևեթ արտաքսէ զնոսա, ոչ ինչ զպատժոց նոցին սահմանեալ: Այսոյն կարծիս հաստատէ և Ինոսենկենտիոս երկրորդ Հռոմայ հայրապետն, զի ասէ. "Պատիժ սկզբնական մեղաց՝ զրկումն է՝ ի տեսութենէն Աստուծոյ, իսկ ներգործականին՝ յաւիտենական գեհենին տանջանք,,:

Սուրբն Գրիգորիոս ընդդէմ պեղագեանց, որք զանկնուք մանկունս մեծանէին յարքայութիւն, ՝ի ջերմն վիճի զանցանէ՝ ի բան, և ընդ դատապարտեալսն՝ ի ձախմէ Քրիստոսի դասակարգէ զմանկտին. բայց այլուր ապա այլազգ յոյժ խօսի, և "Կարեմ, ասէ, սահմանել զինչ պատիժ նոցա իցէ և ոչբան: Բայց և չիշխեմ ա-

սել՝ Թէ լաւ էր նոցա կալ մնալ յանէութեան քան լինել որպիսիք են. (ընդդէմ Յոլ. գիրք Ե. գլ. ժա)։ Եւ այլուր յաւելու (յՀռէոն. գլ. ղէ.) "Վաղորա գոյն ապաքէն քան զամենայն պատիժս լինի այնոցիկ, որոց բաց՝ի սկզբնական մեղացն ժառանգելոց՝ այլ ինչ մեզս չիցէ գործեալ,,։

Վասն որոյ հասարակաց կարծիք աստուածաբանից ջհանդերձեալ կենաց անկնիք վախճանելոցն, զոր և սուրբ Ագուինացին պաշտպանէ, այս է. զի նոքա Թէպէտ և զրկեալք՝ի տեսութենէն Աստուծոյ, չկրեն այլ ինչ՝ բաց՝ի զրկմանէ անտի. այլ մանաւանդ վայելեն՝ի բնական երանութեան, առանց զգալոյ տրտմութիւն ընդ զրկումն իւրեանց՝ի գերբնականէն՝ զոր ոչն Ճանաչեն, և զոր ոչ իսկ մարթեր նոցա յարդարութենէն Աստուծոյ պահանջել։

Զրկումն նոցա յարբայութենէ՝ բաղդատմամբ ևեթ ընդ գերբնական երանութեան կոչի պատիժ. այլ ըստ ինքեան այնպիսի է պայման կենաց նոցա, որպիսի լինէր նախամարդն՝ եթէ չէր նորա կորուսեալ մեղօք զբնական ձիրս իւր, և ոչ վերադեալ՝ի բարութենէն Աստուծոյ՝ի գերբնական պայման։ Վասն որոյ ոչ միայն չկրեն ինչ վիշտ ընդ զրկումն իւրեանց՝ի տեսութենէ Աստուծոյ՝ զոր չկարեն պահանջել յարդարութենէ նոցա, այլ և վայելեն՝ի բնական ձիրս պարգևեալս նոցա՝ի բարութենէն Աստուծոյ, որպիսի է Ճանաչել նոցա բնականապէս զԱստուած և սիրել։ Ի սոյն կարծիս են և Պետրոս Լոմբարտացի, և սուրբն Բոնաւենտուրա, և Ալկոլա։

Ի հաստատութիւն բանիցս՝ ասէ սուրբն Գրիգոր Նազիանզացի. (Ճառ ԺԱ.) "Ընդունիմք, որ անկնիք վախճանին, ոչ՝ի տանջանս յարդար դատաւորէն դատապարտին. ոչ է պարտ դասել նոցա ընդ չարս այնու՝ զի զկնիք քրիստոնէական չէ նոցա ընկալեալ։ Այր չէն արժանի վարձուց, ոչ այնու արժանի է պատուհասի,,։

Եւ Գրիգոր Նիւսացի՝ի նոյն միտս ասէ. (՚ի Ճառն յՂ. պղայող.) "Յարաժամ մահ տղայոց ոչ տայ մեզ պատճառս կարծելոյ, զի յետ աստի կենաց՝ի վիշտս կայցեն կամ՝ի տրտմութեան,,։

Ա. ՈՒ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ա՛ռաք. Ա. — ա. Յոստանայ Ա՛ստուած Ա՛բրահամու և ասէ. (Ծն. ԺԷ. 7.) "Հաստատեցից զուխտ իմ ընդ իս և ընդ քեզ, և՛ի մէջ զաւակի քո յետ քո յազգս իւրեանց յուխտ յաւիտենական, լինել քեզ Ա՛ստուած և զաւակի քումն յետ քո,,։ Ա՛պա մանկունք քրիստոնէից, որք ըստ աւետեաց որդիք են Ա՛բրահամու, փրկին ըստ յաւիտենական ուխտին Ա՛ստուծոյ։ — բ. Ո՛ւ ասն որոյ և առաքեալն ասէ. (Ա՛ա. կոր. Է. 14.) "Սուրբ է այրն անհաւատ կինաւն... ապա թէ ոչ, որդիքն ձեր պիղծ են. բայց այժմ սուրբ են,,։ Ա՛պա առնն հաւատացեալ և կամ կնոջն հաւատացեալք սրբին մանկունք առանց իսկ մկրտութեան։ Ո՛ր որպէս մանկունք Հրէից ժառանգք աւետեացն Ա՛բրահամու որոշէին յորդւոց կռապաշտիցն, և զաւակք սուրբք կոչէին, նովին պատճառաւ սուրբս պարտ է համարել և զորդիս քրիստոնէից՝ որք ըստ վերոյգրեալ աւետեացն որոշին յորդւոց յանհաւատից։

Պե. — ա. Ո՛անկունք քրիստոնէից լինին որդիք Ա՛բրահամու ըստ աւետեաց, ոչ մարմնաւոր ծննդեամբ՝ այլ վերածնութեամբ՝ ի սուրբ աւազանէն։ Ո՛ր եթէ որդիք Հրէից նախ քան զքրիստոնէութիւն սուրբք կոչէին, ըստ օրինական սրբութեան էր՝ որով մանն ժողովրդեանն Ա՛ստուծոյ համարէին, այլ ոչ ըստ հոգևոր սրբութեան. քանզի զայս ի ձեռն հաւատոյ ծնողացն ստանային՝ թլփատութեամբ կամ այլով իւիք հաղորդեալ նոցին։

— բ. Ա՛ռաքեալն սուրբս կոչէ զորդիս հաւատացելոց որպէս ծնեալս առ՛ի մկրտութիւն և՛ի սրբութիւն, նովին նշանակութեամբ՝ որով սուրբս կոչէ զայր կամ զկին անհաւատ վասն ամուսնոյ նոցա հաւատացելոյ։ Ա՛պա թէ ոչ, պիղծ և կռապաշտիշտ այր վասն ամուսնութեանն ընդ կնոջ հաւատացելոյ՝ ասելի էր սուրբ և սրբութեալ հոգւով, որ է անտեղի։ Ա՛յսպէս իմանան Հրէք առհասարակ զբան առաքելոյն։

Ա՛ռաք. Բ. Ա՛նիրաւութիւն է անմեղ մանկանց, ի բնութենէ կամ վասն յանցանաց ծնողացն զրկելով ի

մկրտութենէ, անկանել ՚ի յաւիտենական դատապարտութիւն։

Պա։ Այլ եթէ դատապարտութիւն նոցա էր իբրև զմեղաւորացն, ապաքէն զօրէր առարկութիւնդ· այլ որպէս ՚ի վեր անդր ասացաք, պայման նոցա լաւագոյն է միշտ քան զոչէութիւն, որպէս սուրբն Յովհաննէս և այլք ՚ի վարդապետաց և յաստուածաբանից ուսուցանեն։

ՅՕԴՈՒԱԾ ԺԲ

Յաղագս յարութեան մարմնոց։

Յարութիւն մարմնոց մերոց յամենայն ժամանակի եղև յոյս և քաջալերութիւն հաւատացելոց· վասն որոյ Տերտուղիանոս ասէ· "Վստահութիւն քրիստոնէից՝ յարութիւն մեռելոց"։ Դաղումբ ՚ի հերեսիովտայց, սկսեալ անդստին ՚ի սադուկեցւոց անտի, ուրանային զայն· և անհաւատք անհնարին զայն համարէին։ Ոչնոցա և զոցա մոլորութիւնս կցորդեն յանձինս արդի աղանդաւորք բանականք։ Նդդէմ սոցա ամենեցուն ցուցցուք նախ ՚ի գրոց և յաւանդութենէ՝ զի վարդապետութիւնս այս մեր է հաւատոյ, և ապա՝ զի չէ հակառակ լուսոյ բանին։ Այլ առ ՚ի բառնալ զամենայն երկդիմութիւն, գիտելի է

Նախ՝ յարութիւն մեռելոց իմանամք զամենեցուն, այսինքն զարդարոց և զմեղաւորաց, և ոչ որպէս կէաք ՚ի նախնեացն Հրէից մոլորեցան ասել՝ թէ արդարոց եւեթ լինի յառնել։

Երկրորդ՝ զի նոյն մարմին, զոր մահուամբն կորուսանեմք, յառնելոց է։ Այլ առ ՚ի նոյնութիւն՝ ոչ է հարկ զի մանկունք իւրաքանչիւր նոյնք իցեն, այլ շատ է՝ զի էականքն ՚ի նոցանէ իցեն նոյնք, որ յայլոցն մարմնոյ զիւրաքանչիւր ուրուք որոշեալ՝ կացուցանեն մարմին մի։

Երրորդ՝ զի ՚ի յարութեան մեռելոց ոչ համասեր ըստ որոգինեանցն մոլորութեան լինին մարմինք, այլ զանազանութեամբ արուի և իգի, իւրաքանչիւրոց նոցին մարմին։

Չորրորդ՝ զի աննմանք ըստ հանգամանաց լինին մար-

մինք արդարոց ՚ի մեղաւորաց ։ ՚Բանզի արդարոցն փա-
ռաւորեալ մարմինք ընկալցին ձիրս գերբնականս, յորոց
զրկեալ մնայցեն մեղաւորացն մարմինք անփառունակք.
և յարութիւն նոցա լիցի ՚ի նախատինս նոցա և ՚ի տան-
ջանս. զի “Խնդրեսցեն նոքա զմահ, և մի գտցեն. ցան-
կասցին մեռանել, և փախիցէ ՚ի նոցանէ մահ,,. (Յայտ.
թ. 6)։ Զոր ելոհեմն ձիրս փառաւորեալ մարմնոյ Թուէ
առաքեալն (ա. կոր. ժԵ. 42)։ ՚Լսեմ՝ զի իցեն անչար-
չարելի, այսինքն զերծք ՚ի ցաւոց և ՚ի կրից. “Սերմա-
նի ապականութեամբ, և յառնէ առանց ապականու-
թեան,,։ Ընապականութիւնս այս ոչ արտաքոյ միայն
զմահ, զի այդ և մեղաւորաց յարուցելոց է. իսկ առա-
քեալս զարդարոցն յարուցելոց զփառս նկարագրէ աստ,
և իմանայ զկատարեալ անապականութիւնն՝ որ մերժէ
զցաւս և զկիրս վշտացուցիչս, զոր աստուածաբանք ան-
կրեականութիւն կոչեն։

Երկրորդ՝ զի իցեն լուսաւորք. “Յայնժամ արդարքն
ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից,,.
(Մտթ. ԺԳ. 43)։ Զոր ակնարկէ առաքեալ յասելն.
“Սերմանի անարգութեամբ և յառնէ փառօք,,։

Երրորդ՝ զի իցեն թեթևք և երագունք, և թռանին-
ցին ընդ հոգւոյ հանգիստարարդ մտաց. “Սերմանի տկա-
րութեամբ, և յառնէ զօրութեամբ,,։

Ի չորրորդ՝ զի իցեն նուրբք և ընդ ամենայն ուրեք
թափանցիկք. “Սերմանի մարմին շնչաւոր, և յառնէ
մարմին հոգևոր,,։ Լսեսցէ իմանան՝ նաբք և վարդա-
պետք զբանս առաքելոյն։

Իսկ յաղագս տիոց և կերպարանաց նոցա, որովք յա-
րիցեն, չիք ինչ յայտնի ՚ի սուրբ գիրս. այլ կարծիք աս-
տուածաբանից են՝ զի ոչ միայն խեղանդամքն և պակա-
սաւորք ՚ի բնութենէ յարիցեն ամբողջք և անթերիք,
այլ և ամենեքեան մանկունք և ծերք յարիցեն ՚ի չափ
հասակի։ Զոյն կարծիս հաստատեն և սուրբն Գրգո-
տիոս (յղ. Խաղ. Նչաո-ծոյ. գիրք իբ. գլ. ԺԵ.) “Ընկալ-
ցի իւրաքանչիւր ոք զիւրն չափ, զոր կամ յերիտասար-
դութեանն կալաւ՝ թէ և ՚ի ծերութեան վախճանեալ,
և կամ զոր ունելոցն էր՝ եթէ վաղ չէր մեռեալ,,։ Եւ
դարձեալ (անդ. գլ. ԺԲ.) վասն ամբողջութեան մար-
մնոյ նոցա ասէ. “Ի՛թէ ոչ արդեօք կարող իցէ արա-

բիչն զայլանդակութիւնս զամենայն մարդկային մար-
մնոց, ոչ զսովորականն ևեթ՝ այլ և զանսովորս և զ-
ձիւաղատեսիլս՝ որք Թշուառացեալ կենացս անկ են,
այլ մերժեալք գլխովին ի սրբոցն ապառնի երջանկու-
թենէ, այնպէս իմն բառնալ և անհետ առնել, զի Թէ
և բնաւորական մաստնք մարմնեղէնն գոյացութեան
գործիցեն զայնս ըստ ոչ վայելչականին, բառնայցին ա-
ռանց նուազելոյ իւիք գոյացութեանն ,, :

Ա՛րդ զայս ամենայն, և որ ինչ այլ հանգամանս փա-
ռաւորեալ մարմնոց ընծայեն աստուածաբանք, Թողեալ
ի խնդիր նոցին՝ ցուցցուք աստ զուղղափառ վարդապե-
տութիւն յարութեան հաստարակաց ի սուրբ գրոց :

Ա արդապետութիւնս այս մեզ է հաւատոց, և դա-
ւանեմք ի հանգանակին յասելն՝ “ Հաւատամք . . . ի
յարութիւն մեռելոց և ի դատաստանն յաւիտենից
հոգւոց և մարմնոց ,, : Այս ի Դ. Ժողովն լատերանեան
սահմանեցաւ . “ Ամք (այսինքն արդարք և մեղաւորք)
ամենեքեան իւրեանց մարմնովն, զորս կրեն արդ , յա-
րիցեն ,, :

Ի հին օրէնս իսկ գոյին հաւատք յարութեան մե-
ռելոց, զի ասէ Յոբ . (ԺԹ . 25 .) “ Գիտեմ զի միշտն-
ջենաւոր է որ լուծանելոցն է զիս յերկրի, յարուցա-
նել զմորթ իմ՝ որ կրեաց զայս ամենայն ,, :

Յայտնապոյն և եօթն եղբարք մակաբայեցիք առ
Անտիոքոս . (Բ . Մկ . է . 9 . 14 .) “ Անպէտ և մեռա-
նիմք մեք վասն օրինացն, ի կեանսն յաւիտենից ի միւս
անգամ ծննդեանն ժամանակի՝ կենաց ի կեանս դար-
ձուցանէ : . . . Մեզ լաւ է զի փոխիմք աստի ի մարդ-
կանէ, և յուսոյն առն ունիմք միւսանգամ ծննդեանն
յարութեան մեռելոց ,, :

Սովին հաւատովք և սաղմոսերգուն ասէր . “ Բա-
զում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զն-
նոսա տէր, և պահէ զամենայն ոսկերս նոցա, և մի ի
նոցանէ ոչ կոտրիցէ ,, :

Ըստ այսմ հաւատոց և Մարթա պատասխանեաց
փրկչին . (Յով . ԺԱ . 24 .) “ Գիտեմ զի յարիցէ (եղ-
բայրն իմ) ի յարութեան յաւուրն յետնում ,, : Այս
քանզի սաղմոսեցիք խոստովեալ ի հայրենի հաւատոց
աստի՝ ուրանային և զանմահութիւն հոգւոց և զյա-

բուԹիւն մեռելոց, յանդիմանեաց զնոսա Քրիստոս և ասէ. (Ա՛ռԹ. իբ. 31։ Ղ ՚ովհ. Ե. 38.) "Ա՚ան յաբուԹեան մեռելոց չիցէ ընԹերցեալ ձեր զաստուածն ձեզ յարուցող. Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, և Աստուած Յակոբայ. և չէ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց, զի ամենեքին նմա կենդանի են,,։

Իսկ առաքեալն ՚ի վերայ այնորիկ հաստատէ զամենայն հաւատս մեր յասելն. (Ա՛. կոր. ԺԵ. 16.) "Իսկ եԹէ մեռեալք ոչ յառնեն, ապա և Քրիստոս չէ յարուցեալ. և եԹէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր... իսկ արդ որոնքեցին՚ի Քրիստոս, կորեա՞ն արդեօք,,։

Ըստ այսմ հաւատոց մխիԹարէ նա զԹեսաղոնիկեցիս՝ ասելով. (Ա՛. Թես. Դ. 13.) "Եթէ հաւատամք՝ եԹէ Յիսուս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ՚ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա. և մեռեալք ՚ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն,,։

Հաւատովքս այսուիկ ՚ի սկզբանէ և այսր զօրացան հաւատացեալք ՚ի բարեպաշտուԹիւն և ՚ի կրօնս. ասվաւ վկայք զանտանելի զբարբարանն ՚ի յանձն առին. սովաւ սուրբք առհասարակ զայնպիսի Ձգուն Ձգնեցան. և սովաւ արդարք մտադիւր մահուամբ զհոգիս իւրեանց արարչին աւանդեցին։ Ա՚յսորիկ ազգաւ և Հարք ընդդեմ հեԹանոսաց և մոլորելոց զվարդապետուԹիւնս զայս պաշտպանեցին. և հաւատացեալք ՚ի վերայ չիրմաց զսոյն հաւատս իւրեանց արձանագրեցին, և զսրբոց վկայից նշխարս սովին հաւատովք ամփոփեցին. և զամբոյ

ցեն զքեզ ,,։ Իսկ դարձեալ (ա. Տ.) “Ամէն յարիցեն ամբ պարիշտք՝ ի դատաստան ,,։ — բ. Ամն որոյ և Դատնիել (ժբ. 2.) ոչ ամենեքեան ասէ, այլ թէ “Դատզուարք՝ ի ննջեցեալոց՝ ի հոգ երկրի՝ յարիցեն ,,։ — գ. Իսկ առաքեալն ասէ (ա. կոր. ժե. 50.) “Ի՝արմին և արիւն զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն, և ոչ ապականութիւն զանապականութիւն ժառանգէ ,,։ Իսկ փրկիչն մեր զյարուցելոցն ասէ՝ թէ իցեն իբրև զհրեշտակս յերկինս, (Ի՝ոթ. իբ. 30.) այսինքն հրեշտակային անվնասելի մարմնով. զոր և առաքեալն հաստատէ յասելն (ա. կոր. ժե. 14.) “Երմանի մարմին ընչաւոր, և յառնէ մարմին հոգևոր ,,։

Պէս. — ա. Աղմոսերգուն յառաջնումն բանի զընական կենաց խօսի յասելն հոգւոյ ոչ ևս դառնալ, և ոչ զհանդերձեալ կենաց՝ որ գերաշխարհիկն է։ Իսկ՝ ի միւսումն բանի յայտ առնէ, զի մեռեալք ցորչափ՝ ի գերեզմանի կան՝ չկարեն օրհնել զԱստուած. վասն որոյ Ի՝ծբնայ Հայրապետն (Ճառ ըբ. 262.) ասէ. “Իսկ ո՞րպէս արդեօք պատմեացեն զՏնօրհս ողորմութեանն Աստուծոյ, եթէ ոչ յորժամ լսիցեն զձայն փողոյն . . . և գերեզմանք բանայցեն, և յարիցեն սկայազունք փառօք . . . և առասցեն. Ի՝եծ են այս Տնօրհք՝ զոր Տնորհեաց մեզ, զի . . . սերմանեցաք ապականութեամբ, և յարեաք փառօք ,,։ Իսկ յերրորդումն բանի ցուցանէ, զի ամպարիշտք ոչ՝ ի փառս յարիցեն, որպէս զարդարոսն. և այս յայտ է՝ ի յաջորդ բանէն՝ զոր ասէ. “Իսկ ոչ մեղաւորք՝ ի խորհուրդս արդարոց ,,։ Ամն որոյ Ամանաման վարդապետն մեր գրէ (՝ի Ռէին. Ֆեբայ. գլ. ըբ.) “Ամէն յառնել ամպարշտաց՝ ի դատաստան՝ ցուցանէ թէ առանց Հարցափորձի յառաջագոյն դատապարտեալ են ,,։ Իսկ Ամարդիս վարդապետն մեր (՝ի Ռէին. ա. Պետր. Ղ. 17.) “Ոչ ոքա ամենեքեան, որք յանհաւատութեան կացին մնայցին, ոչ յառնեն՝ ի դատաստանի հաստատակաց յարութեան՝ այլ՝ ի դատապարտութիւն և՝ ի տանջանս ,,։

— բ. Ի՝ադոմ՝ ի բանն Դանիէլի նշանակէ զամենայն բազմութիւն մեռելոց ըստ եբրայեցութեան, որպէս ասացաք այլուր. և ըստ այմ է տերունական բանն՝ “Ամ՝ի վերայ բազմաց հեղու՝ ի թողութիւն մե-

ղաց ,,, այսինքն 'ի վերայ բոլորից. և առաքելականն՝ "Մի հայ մի մարմին եմք բազումքս ,,, այսինքն ամենեքեան. որպէս և յաւելու "զի ամենեքին 'ի միոջէ հացէ անտի վայելեմք ,,. (ա. կոր. Ժ. 17):

— ԳԱրմին և արիւն, այսինքն են գործք մարմնոյ, պղծութիւնք, զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն: Այս թէ ոչ, և ոչ մարմինն Քրիստոսի յարուցեալ՝ համբառնալ յերկինս կարէր: Ասա որոյ նովին նշանակութեամբ ասէ զայս առաքեալն՝ որով յաւելու, զի "և ոչ ապականութիւն զանապականութիւն ժառանգէ ,,: Իսկ բանն տէրունական ոչ 'ի բաց տանի զմարմին, այլ նմանեցուցանէ զայն հրեշտակաց, զի զձիրս նոցա բերեն 'ի յարութեան փառաւորեալ մարմինք արդարոց. վասն որոյ և առաքեալն հակադրէ զայն ընչաւորի. "Երմանի մարմին ընչաւոր, և յառնէ մարմին հոգևոր ,,: Այս Տերտուղիանոս ասէ. (պղ. յար. Տարմ. գլ. ծա.) "Զասաց Քրիստոս թէ լինին հրեշտակք, զի մի զմարդկութիւն 'ի բաց տարցի. այլ թէ լինիցին իբրև զհրեշտակս, առ 'ի պահել զմարդկութիւն. զի ոչ բառնայ զնրն, որ ոք յաւելու յայն զնմանութիւն ,,:

ՅՕԴՈՒԱԾ ԺԹ

Զի յարութիւն մեռելոց ոչ է հակառակ լուսոյ բանին:

Նախ իրն ինքնին ոչ ինչ բերէ յինքեան հակասութիւն. զի զինչ անհնարին իցէ մարմնոյ լուծելոյ նորոգիլ զօրութեամբն Աստուծոյ. զի որ արարն, նա առաւել կարէ նորոգել զայն: Հակասութիւն յայնժամ գոյր, եթէ նոյն մարմին՝ մեռեալ և կենդանի էր միանգամայն: Այլ եթէ Աստուած 'ի փոքրիկ տարերէ արար ընձիւղել և գալ 'ի լիութիւն կատարելութեան զմարմին մարդկեղէն, ընդէր ոչ կարիցէ և զմանկունս նորին մարմնոյ լուծելոյ ժողովել 'ի մի, և վերստին միաւորել ընդ հոգւոյ: Ո՞ւ որպէս Տերտուղիանոս ասէ, մարմինք կորուսեալք մեզ՝ ոչ կորնչին Աստուծոյ, այլ մանկունք

նոցա լուծեալք յօդս և ընդ այլ մարմինս խառնեալք՝ ակներև կան նմա միշտ։

Ո՞այս հաստատէ և Պ՞ազարու չորեքօրեայ մեռելոյ, և նորին ինքեան Վ՞րիստոսի երեքօրեայ յարուԹիւնն. զի Ք՞ուռած որ յարոյցն զնոսա, ընդ՞ը ոչ և զայլոց մարդկան յարուցանել կարիցէ զմարմինս, ԹէպէտԹ և լուծեալս՝ի սպառ։ Ո՞ կարիցէ ասել, զի Պ՞ազարու մարմինն՝ի վերայ նեխոյն եԹէ լուծեալ և֊ն էր՝ի փոշի, չկարէր Վ՞րիստոս յարուցանել զայն. ո՞ ամենակարողուԹեանն Ք՞ուռածոյ կարիցէ հատանել սահման։

ՅարուԹիւն մեռելոց ոչ միայն չէ հակառակ լուսոյ բանին, այլ և համաձայն է նմին մեծապէս, եԹէ՛ ըստ համեմատուԹեան համագոյից իրաց նկատեալ, և եԹէ ըստ բարոյականին։ Ո՞ի որպէս ասէ Տ՞երտու՞ղիանոս. (անդ. գլ. ժբ.) “Ք՞մենայն ինչ դառնայ ուստի եկն, ամենայն ինչ սկսանի՝ի դադարել. վախճանի զի լիցի, ոչ ինչ կորնչի բայց առ՝ի կեանս։ Ք՞պա համագոյիցս իրաց շրջան վկայէ յարուԹեան մեռելոց. զի Ք՞ուռած յառաջ քան զգրաւոր մատեանս՝ զգործս իւր ետ յընԹերցուին, յառաջ քան զբարբառ աւետարանչաց զբօրուԹիւնս իւր կացոյց քարոզս։ Ո՞համագոյս ետ քեզ նախ վարդապետ մինչեւ զմարգարէս առաքեալ, որպէս զի աշակերտեալ նախ համագոյից՝ դիւրաւ ապա հաւատայցես մարգարէուԹեան, և անսայցես անդիմադարձ՝ի լսելն, և մի երկմտիցես՝ զի որ զամենայն յիւր բնուԹիւնն անդրէն դարձուցանէ, նոյն և զմարմին յարուսցէ,,։ Ո՞արմանալի և֊ս այն է, զի յառաջ քան զՏ՞երտու՞ղիանոս զայս այսպէս և Ա՞ենեկա (Ընդ. լիզ.) իմաստասիրէ։

Ք՞այլ հզօրագոյն և֊ս բարոյականին օրէնք ցուցանեն համաձայն բանի զայս վարդապետուԹիւն, որպէս առաքեն Ք՞ղրոսիոս (յղ. հաւտ. յար. ծբ.) ասէ. “Վ՞ան զի բռնանգակ կեանք մեր՝ի կցորդուԹեան հոգւոյ և մարմնոյ է. ապա յարուԹիւն եԹէ՝ի վարձ իցէ բարեգործուԹեան և եԹէ՝ի պատուհաս չարեաց, հարկ է զի յարիցէ մարմինն՝ որոյ քննին գործք. զի ո՞րպէս եկակոչ առնիցի հոգւոյ առանց մարմնոյ յատեան, ուր զբնակակցուԹենէ նորա ընդ մարմնոյ լինելոց է դատաստան,,։ Ո՞նոյն և այլք՝ի Ա՞րոց պէսպէս օրինակաւ ցուցա-

նեն՝ զի անկ է մարմնոյ յառնել, որպէս զի ընդ հոգւոյն՝ որում գործի եղև ՚ի բարին կամ ՚ի չար՝ ընկալցի ըստ վարձ կամ զպատուհաս։ Այնաւանդ զի ՚ի միութենէ երկաքանչիւրոցն է անձն մարդոյ, ոչ հոգի առանձին և ոչ մարմին ինքնուրոյն է մարդ. վասն որոյ ենթակայու- թիւն մարդոյ կամ մարդն կորնչէր յաւիտեան, եթէ չէր յարութիւն մեռելոց. յայս հայի և բնածինն ՚ի մեզ խղճ չքաժանելոյ ՚ի մարմնոյ, որում ոչ է մարթ ՚ի դերև ելանել ՚ի սպառ։

Յայսմանէ ըստ բնութեան ևեթ և ըստ բարոյակա- նին նկատեալ զմարդ. իսկ զինչ եթէ ըստ քրիստո- նէութեան ևս զնա նկատիցեմք։ Անդամ է նա Քրիս- տոսի, վասն որոյ պարտ է նմա գլխոյն վիճակի հաղորդս լինել յարուցելոյն ՚ի կեանս անմահ. անեալ մարմնով և արեամբ նորա, բերէ յանձին զսերմն անմահութեան՝ որում պարտ է ընձիւղել ըստ ժամանակին, որպէս սուրբն Կրանոս և սուրբն Յուստինոս և այլք ՚ի Նորոյ ձեռնարկէն։

Այս կինք բանիս՝ եթէ մեռեալք ոչ յառնէին, ա- ռաւելոյր վնաս մեղացն Ադամայ ՚ի մեզ քան զօգուտ արդարութեանն Քրիստոսի, որ հակառակ ելանէ բա- նիւ առաքելոյն (Ե՝ Ե. Ե)։ Քանզի որ ինչ նորա մեղաքն կորուսաք, Քրիստոս առաւելաւն հատոյց մեզ. վասն որոյ սուրբ եկեղեցի ընդ յարութեան մեռելոց յաւե- լու ՚ի հանգանակին զկեանան յաւիտենից. “Ի յարու- թիւն մեռելոց, ՚ի գատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից, և ՚ի կեանան յա- ւիտենականս ,,։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Գլուխ. Ա. — ա. Անհնար է մանկանց մարմնոյ, որ յայնչափ այլ և այլ մարմինս՝ ևս և մարդկան՝ սփռեալ են և յեղափոխեալ, դառնալ ժողովել ՚ի մի և ՚ի նոյն մարմին։ — բ. Յարձեալ ոչ է անկ մարմնոյ, ոչ վարձ և ոչ պատիժ, զի նա ինքնին չկարէ գործել, ոչ չար ինչ և ոչ բարի։ — գ. Այլ եթէ չիցէ մարթ հոգւոյ առանց մարմնոյ ունել ՃՀմարտիւ կեանս, ընդէր բարերարն Աս- տուած չամէ յետ այնքան դարուց յարուցանել զնա։

պէս. — ա. Ընդհանար իսկ է առանց աստուածայինն զօրութեան ժողովել անդրէն ի մի և ի նոյն մարմին մանկանց յանթիւ մարմինս ցրուելոց և յեղափոխելոց. այլ անհնարինքն ի մարդկանէ հնարաւորք են ընդառաջոյ. մանաւանդ զի յեղափոխութիւն մանկանցն այնոցիկ պատահական ինչ է և ոչ էական փոփոխումն, որպէս յայտ է ի բնաբանութենէ և ի կենդանաբաշխական գիտութենէ:

— բ. Ամ մարմին և ոչ հոգին է որ գործէ զբարին կամ զչար, այլ անձն յերկոցունց անտի բաղկացեալ. ապա պարտ է զի անձն այն ընկալցի զվարձ կամ զպատուհաս: Հոգին ի ձեռն մարմնոյ ղգայ, և նովաւ բերկրի կամ վշտանայ:

— գ. Ամենայն և հոգի և մարմին բաժանեալք ի միմեանց՝ չկրեն լրացեալ գոյացութիւնք համեմատեալ բոլոր անձին մարդոյ, բայց հոգին կեայ ձկնարտիւ գիտակից իւր և ընդունակ վարձուց և պատժոյ, և վասն այսորիկ ընդ մեռանելն ընդունի զհատուցումն: Ըստ այսմ օրինակի և ոչ մարդասիրութեանն Աստուծոյ հակառակ է յամեցումն յարութեան մարմնոյ. զի զինչ են պարագայք գարուց առաջի յաւիտենից:

Ընդդէմ. բ. — ա. Հիւղեալք կամ մանկունք նիւթեղինք յանցանելն մարմնոյ ի մարմինս՝ ի սպառ փոխին ըստ գոյացութեան. և մարդիկ առհասարակ՝ կամ անմիջաբար և կամ միջնորդաւ մարդակերք են. անմիջաբար՝ որպէս որք ձարակինն վայրենաբարոյ ազինք ըզմարմին մարդկեղէն, և միջնորդաւ խոտաձարակքն՝ զի ի դիականցն ապականութենէ գոյանայ խաւարտ: Ընդ անհնարին է նոյն մարմնոյ վերստին յառնել: — բ. Ամենաւանդ զի և ի նոյն մարմնի փոփոխին հանապազ մասունք, կորուսելոցն յաջորդելով յաւելեալքն ի սննդենէ. որպէս զի երիկեանն մարմին ոչ ևս նոյն է ի սերկեան, և ի շրջան եօթն աւի այլ մարմին է բոլորովին. արդ զիր յեօթնամեայ մարմնոյ անտի իւրոց մնայ հոգւոյն զգենուլ ի յարութեան: — գ. Վարձեալ և միօրեայ մանկան տղայոյ մարմինն ի յառնելն չափահաս՝ ուստի առնուցու զյաւելուած մասանցն, որք մարմին էին: Յաւել և զայն, զի բիւրուց բիւրաւորաց մարդկան, որ եղեն յարդ և որ լինելոց են մինչև ի կատա-

րած աշխարհի, ոչ բաւէ յընդունելութիւն տարածու-
թիւն երկրի՝ ի յառնել ամենեցուն նոցա միանգամայն:

Պե. — ե. Այդ ամենայն առարկութիւնք, մեծա-
մեծ թուեցեալք յերևման, անհետ լինին վերածեալք
ի բնաբանական օրէնս՝ յորոց առեալքն են: Վանղի
համարեալ իսկ ձշմարիտ զհասարակաց մարդակերու-
թիւն, յայտ է նախ՝ զի նախատարերք, յոր մարմին և
կերպարանափոխ լինին, մնան միշտ նոյնք և անապականք.
վասն որոյ և կարեն զօրութեամբն Աստուծոյ դառնալ
ժողովել ի մարմին, որոյ էին երբեմն բաղկացուք:

— ր. Երկրորդ՝ զի թէպէտ և յար ի փոփոխու-
թեան է մարմին մարդկային, այլ ըստ քաջահմուտ բնա-
բանից՝ նոյն միշտ մնան էական մասունքն. և առ ի կա-
ցուցանել զնոյն մարմին՝ ոչ խնդրի զի նոյնք իցեն և մա-
սունքն պատահականք: Այսան որոյ և հոգիս մեր վե-
կայէ, զի նոյն մարմին է՝ զոր կրեմքն. զի փոփոխումն
այն տակաւ և յաջորդաբար ներդործեալ ի յարափո-
փոխ մանկունս, նոյն մնայ միշտ մարմինն ի նմին հո-
գւոյ առեալ զկենդանութիւն. մանաւանդ զի և արտա-
քին կերպարան նորին և կազմած մնայ միշտ նոյն, յո-
րում է նիւթականն նոյնութիւն:

Այսպա ուրեմն մանկունք նիւթեղինք կամ հիւլեայք
յանցանելն մարմնոց ի մարմինս ոչ փոխին ի սպառ ըստ
գոյացութեան, և ոչ ի համարել մեր շաղղակերս ըզ-
մարդիկ. քանզի նախատարերք կան և մնան նոյնք, և
յարափոփոխ իսկ մանկանցն տակաւ և յաջորդաբար
փոփոխութեամբ՝ նոյն մնայ մարմինն:

— գ. Այոյնպէս և մարմին միօրեայ տղայոյ ունի զիւր
էական մանկունս՝ որպէս սերմանց իւրաքանչիւր՝ որոց
մնայ աձել մակեղուտ մասամբք և ձևանալ ի մարմին
չափահասակ. և այն էական մասունք անկորուստ և
անփոփոխ պահեալք՝ յարիցեն ի մարմին չափահաս:
Իսկ հաշիւն չբաւելոյ տարածութեան երկրի ի հասա-
րակաց յարութեան՝ վրիպակ ամենևին ցուցեալ է ի
բնաբանից: Այլ եթէ չէր իսկ վրիպակ, սակայն միշտ
զարմանաբանութիւն հաշուողացն ծաղր կացուցանէր ա-
ռաջի ամենակարող զօրութեանն:

Ծ. Լուծումն առարկութեանցս այսոցիկ կատարեմք
բանիւն Պօստինեայ, որ ասէ. Այս. Աստուծոյ.

գիրք ԼԲ. գլ. Ե.) "Վաւ 'ի մէնջ կարծել՝ Թէ արար-
չին ամենակարն զօրութիւն, առ 'ի կանգնելոյ զմար-
մինս կենագործութեամբ, տկարանայցէ վերակոչել
զամենայն՝ զոր գազանք ծախեցին և կամ հուր, կամ
զմանրեալն 'ի փոշի և 'ի մոխիր, կամ զփտեալն 'ի ջուր,
կամ զցնդեալն յօդս: ()՛ն անդր քաւ լիցի՝ Թէ խորշ
ինչ կամ ծածկոյթ բնութեան այնպէս իմն գոլանայցէ
ինչ 'ի մերոց զգայութեանց, մինչև յամենեցունց իսկ
արարչագործին 'ի գիտութենէ ծածկեսցի, և կամ ըստ
իշխանութիւնն արտաքս վազեսցէ... զինչ յամենա-
գիտէն ծածկել կարիցէ, կամ զինչ 'ի համայնից շար-
ժողէն խուսել անդարձաբար ,,:

"Սովիմբ ապա 'ի լուծումն առցի և խնդիրն՝ դժուարա-
լոյծ քան զայլսն Թուեցեալ, երբ լինի հարցանել. Ա՛ր-
մին մարդոյ մեռելոյ, լեալ մարմին այլոց ուրուք կենդա-
նւոյ, ո՞մ ումեք 'ի նոցանէ տացի 'ի յարութեան. քան-
զի նքողեալ ուրուք և հարկեալ 'ի քաղցէ՝ եթէ շաղ-
ղակեր մարդկան դէպ լինիցի, զոր օրինակ այսպիսւոմ
աղետից պատահել երբէք ուրեք և նախնականն պատ-
մութիւն վկայէ, և ժամանակաց մերոց փորձք ազիո-
ղորմ ուսուցին, իսկ Թէ պնդիցէ ոք իրաւացի քանիւ՝
բովանդակ կերածին անցանել Թափիլ ընդ սրբանն ո-
րովայնի, և ոչ մասին իրիք փոխարկեալ յարել 'ի մար-
մին կերողին:... Իսկ արդ փոքր ինչ յառաջ ասացե-
լովքն 'ի դէպ է և զայս կնճիռն լուծանել: Ո՛չ զոր
միանգամ 'ի մարմնոյն ծախեաց քաղցն, յայտ է Թէ
յօդս ցնդեցաւ այն. ուստի և ասացաք՝ Թէ կարող է
հզօրն Աստուած վերակոչել զփախստեացեալն: Ա՛պա ու-
րեմն միան այն տացի մարդոյն, որում յառաջն եղև մար-
մին մարդկային. վասն զի իրր յանօթ առեալ համարի
առ միւսն, և իրրև դրամ օտարին նմա հատուցանելի
է՝ յորմէ առաւ. իսկ միւսումն որպէս սեփական ինչ 'ի
քաղցոյ սպառեալն մարմին տացի յայնմանէ, որ վերա-
կոչելն կարող է զցնդեալն յօդս: Ա՛յլ Թէպէտ և կո-
րուսեալ իսկ էր բնաւին, և ոչ նիւթոյ ինչ մասն Թո-
ղեալ 'ի դարանս բնութեան, ապաքէն նորոգէր զայն
ամենակարողն ուստի և կամէրն ,,:

ՅՕԴՈՒԱՅ ԺԴ

Յաղագս վերջին դատաստանի։

Կալուին և աշակերտք իւր զառանձնական ևեթ դատաստան ոչ ընդունէին. և ցուցաք զայն ՚ի վեր անդր ընդդէմ նոցա։ Այլ արդի հետևողք նորա ընկալեալ զառանձնականն, մերժեն զընդհանրական դատաստան. վասն որոյ հարկ է և ընդդէմ նոցա ցուցանել զայս։

Արդեան առհասարակ, որ եղէնն և են և լինելոց են, պարտ է յանդիման լինել ատենին Քրիստոսի. այլ թէ ՚ի բրբ և ՚ի ս և ՚ի պաւղոս դատաստանն այն լինելոց իցէ, ոչ է գիտել հաւաստեաւ։ Վասն որոյ զատուգութենէ ևեթ դատաստանին են բանքն մեր աստանօր. այսինքն զի յետ հասարակաց յարութեան դատելոց է Քրիստոս զամենայն մարդիկ ՚ի միասին։

Վարդապետութիւնս այս մասն է հաւատոց, որպէս դաւանեմք ՚ի հանգանակին. "Նստեալ է նովին մարմնովն դատել զկենդանիս և զմեռեալս,,։ Եւ զայս յայտնապէս նոյն ինքն տիրակիչն մեր ասէ. (Մտթ. իե. 31.) "Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրով և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նըստցի յաթոռ փառաց իւրոց. և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք,,։ Եւ այլուր ևս ոչ սակաւ ուրեք զնոյն յեղյեղէ։ Եւ առաքեալք որպէս աներկբայելի ինչ ամենայն ուրեք յիշատակեն զայն. "Նա է սահմանեալն Աստուծոյ դատաւոր կենդանեաց և մեռելոց,,. (գործ. Ժ. 42)։ "Քանզի հաստատեաց օր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ,,. (անդ. ԺԷ. 31)։ "Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ, եթէ բարի և եթէ չար,,. (Բ. կոր. ե. 10)։ "Եւ տեսի զմեռեալս մեծամեծս և զփոքունս՝ որ կային առաջի աթոռոյն. և գրեանք բանային... և դատեցան մեռեալքն ՚ի գրելոցն ըստ գործոց իւրեանց,,. (Յայտ. իա. 11)։ Եւ այլուր բազում ուրեք։

Եւ արժան իսկ է Աստուծոյ ի տիեզերական առեւի ցուցանել ամենեցուն զինաման տեսչութեան իւրոյ ի վերայ արարածոց և զարդարութիւն իւր, յամենի առնել զՀայհոյիչս նախախնամութեան իւրոյ, նշաւակել զխորհուրդս ամպարշտաց ընդդէմ արդարոց, և զսոցա վշտակրութիւնս և զՔրիստոս ի լոյս ածել, և զգաղտնիս սրտից իւրաքանչիւրոց յայտնի առնել ամենեցուն։ Այսր աղագաւ հարկ առաւել քան զառանձնականն՝ զդատաստանս զայս յիշեցուցանեն հաւատացելոց, առ ի յորդորել զնոսա ի ջանս արժանի լինելոյ զուարթերես կալ յաջմէ Քրիստոսի ընդ սուրբս և ընդ սիրելիս նորա ի տիեզերական յայնմ հրապարակի։

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Հարկ. Ա. Հետ միանգամ ընդունելոյ զդատաստան առանձնական, ընդունայն է միւսն ընդհանրական։

Պաս. Ընդունայն թերևս լինէր, եթէ չէին այլ պատճառք ընդհանրականին՝ զորս ցուցաք ի վերոյ։ Հառանձնականին ամենայն ոք զիւրն ընդունի դատակնիք, և իւրոյ արժանեացն կամ պատուհասի լինի խնամուած։ այլ յընդհանրականին ամենայն ոք ծանիցէ զամենեցուն վճիռ ըստ իւրաքանչիւր գործոց, և զարդարութիւն Աստուծոյ ի վերայ ամենեցուն։

Հարկ. Բ. Քրիստոս զվախձան աշխարհի և զընդհանուր դատաստան նախատպատմէ ընդ կործանմանն Երուսաղէմի. արդ Երուսաղէմ վաղուց էս կործանեցաւ, և աշխարհս կայ. ապա այլաբանօրէն իմանալի է զվերջին դատաստանին բանս, որպէս և ի յարակից հանդամանացն է յայտ. այսինքն ի վերայ ամպոց գալ Հասանել Քրիստոսի, զօրք հրեշտակաց ընդ նմա, փող հրեշտակապետին տիեզերագոչ՝ հրաւիրակ մեռելոց և կենդանեաց, ատեան համաշխարհական, գալուստեանց բանալ, այլովքն հանդերձ քերթողօրէն այլաբանիկ նկարագրութեամբք։

Պաս. Ընկալեալ իսկ զի Քրիստոս ի մարգարէութեանն յայնմիկ և զվախձանիդ աշխարհիս և զդատաստանիդ խօսիցի, զոր յոգունք ի մեկնչաց ոչ ընդունին,

սակայն ոչ գիտեաց այնմ՝ զի միանգամայն ՚ի միում ժամանակի ընդ կործանմանն Երուսաղէմի իմանայցէ զկատարումն նոցին, զորոյ ոչ ուրեք երբեք կամեցաւ յայտնել աշակերտացն իւրոց զժամանակն. "Ոչ է ձեզ գիտել զժամ և զժամանակս,,. (Գործ. ա. 7.) "Զայն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից և ոչ Որդի, բայց միայն Հայր,,. (Մտթ. իդ. 36): Փրկիչն մեր ՚ի մարգարէութեան անդ երեք ինչ բովանդակէ. զկործանումն Երուսաղէմի, զմիւսանգամ գալուստ իւր, և զկատարած աշխարհի: Առաջնոյն ասէ՝ թէ "ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի,,. իսկ զերկրորդէն և զերրորդէն՝ թէ Հայր ընդ ժամանակ նոցին եդ յիւրում իշխանութեան: Յայսմ համաձայնին և նորաղանդք և բանականքն իսկ աղանդաւորք: Իսկ ՚ի յարակից հանգամանս գալստեանն Քրիստոսի չիք տեղի այլաբանութեան. զի որ ՚ի թևս ամպոց վերացաւն յաշխարհէ, ընդէր ոչ նոյնպէս և դառնալ կարիցէ: Ինչ անհնարին իցէ զօրաց երկնաւորաց գալ ընդ նմա, և հրեշտակապետին մարմնաւոր տեսլեամբ հնչեցուցանել զաւազակող, և ժողովել զամենայն ազգ մարդկան յատեան անդր, այսինքն առ դատաւորն:

Իսկ բանալ գոլոութեանց է յայտնել խղճի մտաց ամենեցուն, որպէս մեկնեն Հարք, և զորմէ գրէ առաքեալն. (Հռ. ը. 15.) "Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ՚ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց, և յանդիմանել զմիմեանս ՚ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ յաւուրն՝ յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան,,: Եւ փրկիչն մեր ասէ. (Մտթ. ԺԴ. 26.) "Որ ինչ է ՚ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի,,:

ՑԱՆԿ

	Նախաճանաչութիւնք զաստուածաբանութենէ առհասարակ	1
ՃԱՒ Ա.	Ցաղագս սուրբ գրոց և աւանդութեան . .	7
ԳԼՈՒԽ Ա.	Ցաղագս սուրբ գրոց	—
	Ցուցակ կանոնական գրոց	13
	Առարկութիւնք	14
ԳԼ. Բ.	Ցաղագս վաւերականութեան հին կտակարանաց .	18
ԳԼ. Գ.	Ցաղագս վաւերականութեան նոր կտակարանաց .	20
ԳԼ. Դ.	Ցաղագս ամբողջութեան սուրբ գրոց . . .	23
ԳԼ. Ե.	Ցաղագս աստուածաշունչ գոլոյ սուրբ գրոց . .	24
ՅՕԴ. Ա.	Զի կանոնական գիրք հնոց և նորոց կտակարանաց գէթ ըստ իրացն և ըստ իմաստից, ազդեցութեամբ Հոգւոյն են գրեալ	26
	Առարկութիւնք	—
ՅՕԴ. Բ.	Զի և բառք իւրաքանչիւր ի սուրբ գիրս ազդեցութեամբ Հոգւոյն են գրեալ	29
ԳԼ. Զ.	Ցաղագս բնագրի և թարգմանութեանց սուրբ գրոց	31
ԳԼ. Է.	Ցաղագս իմացուածոյ և մեկնութեան սուրբ գրոց .	38
ՅՕԴ. Ա.	Հանրական կանոնք իմացուածոյ սուրբ գրոց .	39
ՅՕԴ. Բ.	Ցաղագս այլ և այլ ազգ իմաստից սուրբ գրոց .	40
ՅՕԴ. Գ.	Եբրայական սիպակ բանից ածանցեալք ի թարգմանութիւնս սուրբ գրոց	43
ՅՕԴ. Դ.	Զի սուրբ գիրք նա և ի մասունս հաւատոյ և բարւոյ վարուց ոչ այնպէս բացայայտք են՝ զի չիցեն նոցա պէտք մեկնութեան	45
	Առարկութիւնք	47
ՅՕԴ. Ե.	Զի եկեղեցւոյ միայն է տալ անսխալ զվարդապետական մեկնութիւն սուրբ գրոց . . .	48
	Առարկութիւնք	49
ԳԼ. Ը.	Ցաղագս աւանդութեան	50

ՅՕԴ· Ա· Յաղագս գոյութեան և կարևորութեան առաքելական աւանդութեանց 53
Առարկութիւնք· 61
ՅՕԴ· Բ· Յաղագս աւանդապահից վարդապետական աւանդութեանց 66
ՅՕԴ· Գ· Որ ինչ ի հին արձանագրութիւնս ի նկարս և ի քանդակս առաջնոց դարուց պահեալ աւանդութիւնք 69
ՃՄՄ Բ· Յաղագս կրօնից· 72
ԳԼ· Ա· Չի կարելի էր Աստուծոյ յայտնել մարդկան զկարևորս առ ի փրկութիւն . . . . . —
Առարկութիւնք· 74
ԳԼ· Բ· Չի կարևոր էր մարդկան յայտնութիւն աստուածային . . . . . —
Առարկութիւնք· 84
ԳԼ· Գ· Յաղագս հրաշից ի յոյց աստուածային յայտնութեանն· 86
Առարկութիւնք· 87
ՅՕԴ· Ա· Չինչ են հրաշք 91
ՅՕԴ· Բ· Չի կարելի են հրաշք 92
ՅՕԴ· Գ· Չի հրաշք ապացոյցք են առ ի Աստուծոյ առաքեալութեան 94
ԳԼ· Դ· Յաղագս մարգարէութեան 95
ՅՕԴ· Ա· Թէ զինչ է իսկապէս մարգարէութիւն· . . 96
ՅՕԴ· Բ· Չի կարելի է մարգարէութիւն 97
ՅՕԴ· Գ· Չի մարգարէութիւնք են հզօր ապացոյցք աստուածային յայտնութեան 99
Առարկութիւնք· 100
ՃՄՄ Գ· Յաղագս աստուածայնութեանն քրիստոսական կրօնիս· 102
ԳԼ· Ա· Կատարումն մարգարէութեանց ի Քրիստոս, ապացոյց առ ի Աստուծոյ առաքման նորա . . 104
ԳԼ· Բ· Կանխասացութիւնք Քրիստոսի, ապացոյցք առաքման նորա առ ի Աստուծոյ 108
ԳԼ· Գ· Սքանչելագործութիւնք Քրիստոսի, ապացոյցք առաքման նորա առ ի Աստուծոյ . . . 109
ԳԼ· Դ· Յարութիւնն Քրիստոսի, ապացոյց առաքման նորա առ ի Աստուծոյ 110
Առարկութիւնք· 113
ԳԼ· Ե· Հրաշալի տարածումն քրիստոնէութեան, ապացոյց առաքմանն Քրիստոսի առ ի Աստուծոյ . . 117
Առարկութիւնք· 121
ԳԼ· Զ· Վեմութիւն և արքութիւն վարդապետութեանն Քրիստոսի, ապացոյց առաքման նորա առ ի Աստուծոյ 123

Առարկութիւնք. 131
ՃԱՒ Գ. Յաղագս եկեղեցւոյ 134
ԳԼ. Ա. Յաղագս եկեղեցւոյ ընդհանրապէս . . . 135
Առարկութիւնք. 138
ԳԼ. Բ. Յաղագս նշանաց առհաւատչէից եկեղեցւոյ . . 140
ՅՕԳ. Ա. Յաղագս միութեան եկեղեցւոյ . . . . —
Առարկութիւնք. 146
ՅՕԳ. Բ. Յաղագս սրբութեան եկեղեցւոյ 149
ՅՕԳ. Գ. Յաղագս ընդհանրականութեան եկեղեցւոյ . . 152
ՅՕԳ. Դ. Յաղագս առաքելականութեան եկեղեցւոյ . . 155
Առարկութիւնք. 156
ԳԼ. Գ. Թէ որո՛ւմ միաբանութեան քրիստոնէից չորեքին նշանաբս եկեղեցւոյ անկ իցեն 158
ՅՕԳ. Ա. Ձի չորեքին նշանք առհաւատչեայք Ճշմարիտ եկեղեցւոյ երևին յայտնապէս ՚ի վերայ հռովմէական եկեղեցւոյ 159
ՅՕԳ. Բ. Յաղագս միութեան հռովմէական եկեղեցւոյ . . 160
ՅՕԳ. Գ. Յաղագս սրբութեան հռովմէական եկեղեցւոյ . 162
ՅՕԳ. Դ. Յաղ. ընդհանրականութենէ հռովմէական եկեղեցւոյ. 165
ՅՕԳ. Ե. Յաղագս առաքելականութեան հռովմէական եկեղեցւոյ 166
Առարկութիւնք. 167
ԳԼ. Դ. Յաղագս յաջորդութեանց եկեղեցւոյ . . . 172
ՅՕԳ. Ա. Ձի եկեղեցի Քրիստոսի երևելի է և ճշմարիտ . 173
Առարկութիւնք. 176
ՅՕԳ. Բ. Յաղագս անսխալութեան եկեղեցւոյ . . . 177
Առարկութիւնք. 179
ՅՕԳ. Գ. Ձի հարկ է թէ իցէ եկեղեցւոյ աստուածատուր իշխանութիւն ուսուցանելոյ զՃշմարտութիւն . 181
Առարկութիւնք. 184
ՅՕԳ. Դ. Ձի անսխալ է եկեղեցի և և ՚ի սահմանել զերս վարդապետականս 186
Առարկութիւնք. 188
ԳԼ. Ե. Յաղագս Ժողովոց 191
Առարկութիւնք. 193
ՅՕԳ. Ա. Տիեզերական Ժողով. 196
ՅՕԳ. Բ. Ձի անսխալ է եկեղեցի և ՚ի վճիռս՝ յորս համաձայնին եպիսկոպոսունք ընդ գլխոյն եկեղեցւոյ, և և առանց գումարելոյ ՚ի Ժողով . . . 199
ԳԼ. Զ. Յաղագս հռովմէական գահին, և իշխանութեան Հռովմայ հայրապետին 201
ՅՕԳ. Ա. Ձի Քրիստոս և Պետրոսի իշխանութիւն ՚ի վերայ ամենայն եկեղեցւոյ, յորում եդ ինա գլուխ . 204

Առարկութիւնք 217
ՅՕԳ. Բ. Յաղագս գնալոյ Պետրոսի ՚ի Հռոմ, և անդ զաթոռ իւր հաստատելոյ 229
Առարկութիւնք 232
ՅՕԳ. Գ. Յաղագս յարատևելոյ իշխանութեանն Պետրոսի ՚ի յաջորդս իւր 234
Առարկութիւնք 254
ՅՕԳ. Դ. Զի Հռովմայ քահանայապետն, որպէս գլուխ եկեղեցւոյ, ՚ի վերոյ է քան զամենայն եպիսկոպոսունս և զաւետարեալս ՚ի Ժողով . . . 258
Առարկութիւնք 259
ՅՕԳ. Ե. Զի վճիռք Հռովմայ հայրապետին ՚ի հաւատոյս, վճռեալք յաթոռոյ, անսխալք են . . . 263
Առարկութիւնք 265
ԳԼ. Է. Յաղագս Հարց և վարդապետաց եկեղեցւոյ . . 269
ՃՈՒՌ Ե. Յաղագս բանին ընդ հաւատս առընչութեան . . 272
ԳԼ. Ա. Յաղագս բանին նախընթաց առընչութեան ընդ հաւատս . . . . . —
ՅՕԳ. Ա. Զի ոչ ըմբռնիս բանականութիւն կարէ, առանց նըպաստից գերբնական յայտնութեան, գիտել զաստուածս բազում՝ Ճշմարտութիւնս բնականս, որ են իբր ներածութիւնք հաւատոյ . . . 277
Առարկութիւնք 278
ՅՕԳ. Բ. Զի կարէ իւրաքանչիւր ոք լուսով բանին, առանց օգնականութեան մտաց այլոց, գիտել բազում ինչ աստուածութեամբ 282
Առարկութիւնք 283
ՅՕԳ. Գ. Զի կարէ մարդ լուսով բանին Ճանաչել զհաւատս ինչ հաւատոյ, և ՚ի ձեռն այնոցիկ զգոյութիւն աստուածային յայտնութեան գիտել հաւատեաւ 287
Առարկութիւնք 288
ՅՕԳ. Դ. Զի կարող է մարդ լուսով բանին Ճանաչել աստուած զկնի զեկեղեցի Քրիստոսի 289
Առարկութիւնք 290
ԳԼ. Բ. Յաղագս բանին ընդ հաւատս զուգընթաց առընչութեան 291
ՅՕԳ. Ա. Զի հաւատք զանազանին իսկապէս ՚ի բնական գիտութենէ, այլ ոչ հակառակին երկոքեան իրերաց 291
Առարկութիւնք 293
ՅՕԳ. Բ. Զի մարթի է զնոյն ինչ և գիտել իմաստասիրաբար, և հաւատալ աստուածաբանօրէն . . . 294
Առարկութիւնք 295

ԳԼ. Գ. Յաղագս բանին ընդ հաւատս հետևորդ առընչութեան 296
Առարկութիւնք 298
ՃՈՒՏ Զ. Յաղագս Աստուծոյ 299
ԳԼ. Ա. Յաղագս գոյութեանն Աստուծոյ 299
ԳԼ. Բ. Յաղագս միութեանն Աստուծոյ 304
ԳԼ. Գ. Յաղագս էութեանն Աստուծոյ 305
ԳԼ. Դ. Յաղագս սաորոգելեացն Աստուծոյ . . . 307
ՅՕԴ. Ա. Յաղագս պարզութեանն Աստուծոյ . . . 308
ՅՕԴ. Բ. Զի պարզական բնութիւն է Աստուած . . 310
ՅՕԴ. Գ. Զի անտեղի և մոլորական է մարմնաւոր ասել զԱստուած 311
Առարկութիւնք 312
ՅՕԴ. Դ. Յաղագս համեմատութեանցն և ինքնատութեանց մոլորութեան 314
Առարկութիւնք 315
ՅՕԴ. Ե. Զի չէ ընդունելի զանազանութիւն իրական ընդ Աստուած և ընդ սաորոգելիս նորա, և ոչ ի սաորոգելիս նորա ընդ իրեարս 316
Առարկութիւնք 318
ՅՕԴ. Զ. Զի ընդունելի է զանազանութիւն իմանալի ընդ էութիւնն Աստուծոյ և ընդ սաորոգելիս նորա ևս և առընչականս, և ի սաորոգելիս նորա ընդ իրեարս 320
Առարկութիւնք 321
ԳԼ. Ե. Յաղագս ազատութեան և անփոփոխութեանն Աստուծոյ 322
Առարկութիւնք 326
ԳԼ. Զ. Յաղագս անսահմանութեանն Աստուծոյ, անչափութեան, և յաւիտենականութեան . . . 328
Առարկութիւնք 334
ԳԼ. Է. Յաղագս գիտութեանն Աստուծոյ . . . 335
Առարկութիւնք 338
ՅՕԴ. Ա. Մոլորութիւնք ի վերայ գիտութեանն Աստուծոյ զապառնեաց 339
ՅՕԴ. Բ. կարծիք ի վերայ գիտութեանն Աստուծոյ զապառնեաց 340
ՅՕԴ. Գ. Լուծումն գժուարութեան միաբանելոյ զկանխագիտութիւնն Աստուծոյ ընդ ազատութեան մարդոյ. 341
ՅՕԴ. Դ. Զի գիտէ Աստուած հաւաստեաւ և անվրէպ զապառնիս հնարաւորս պայմանեալս . . . 343
Առարկութիւնք 346
ՅՕԴ. Ե. Յաղագս եղանակի գիտութեանն Աստուծոյ . . 347

ՅՕԴ· Զ· Յաղագս զանազանութեան աստուածային դիտու-
թեան 350
ԳԼ· Ը· Յաղագս կամացն Աստուծոյ 353
ՅՕԴ· Ա· Մոլորութիւնք զկամացն Աստուծոյ . . . 355
ՅՕԴ· Բ· Զի Աստուած նախընթաց կամաք բարեհաճութեան,
եւս և յետ կանխատեսութեան սկզբնական մե-
ղաց, կամի խնայել զփրկութիւն ամենայն մարդ-
կան 356
Առարկութիւնք· 357
ՅՕԴ· Գ· Զի Քրիստոս վասն ամենեցուն մեռաւ, և ոչ վասն
ընտրելոց եւեթ 359
Առարկութիւնք· 361
ՅՕԴ· Դ· Զի կամք Աստուծոյ և մահն Քրիստոսի վասն փըր-
կութեան ամենեցուն՝ ունի ինչ առաւելութիւն
վասն նախասահմանելոց 363
ԳԼ· Թ· Յաղագս նախախնամութեանն Աստուծոյ . . 364
Առարկութիւնք· 367
ԳԼ· Ժ· Յաղագս նախասահմանութեան 371
ՅՕԴ· Ա· Զի գոյ նախասահմանութիւն, և ընտրեալքն յԱս-
տուծոյ փրկին անվրէպ 372
ՅՕԴ· Բ· Զի ձրի է ամենևին նախասահմանութիւն . . 374
Առարկութիւնք· 375
ՅՕԴ· Գ· Զի ոչ ոք առանց աստուածային յայտնութեան
կարէ գիտել ստուգիւ զնախասահմանութիւն իւր· 377
Առարկութիւնք· . . . . . —
ՅՕԴ· Դ· Յաղագս Թուոյ նախասահմանելոց . . . 378
ՅՕԴ· Ե· Յաղագս անապրգելոց 380
ՃՄՄ Է· Յաղագս խորհրդոյ ամենասրբոյ Երրորդութեան · 382
ԳԼ· Ա· Զգուշութենէ բառից՝ ի բացատրել զխորհուրդ Եր-
րորդութեան 383
ԳԼ· Բ· Զի խորհուրդ Երրորդութեան ոչ է հակառակ բանի· 387
Առարկութիւնք· 390
ԳԼ· Գ· Զի խորհուրդ Երրորդութեան չէր իսկ անծանօթ
՚ի հին օրէնս 393
ԳԼ· Դ· Զի ՚ի միում աստուածային էութեան են անձինք
երիք իսկապէս զանազանեալք 396
Առարկութիւնք· 398
ԳԼ· Ե· Զի Որդին Աստուծոյ, կամ Բանն, է Աստուած
Ճշմարիտ համագոյակից Հօր 400
Առարկութիւնք· 403
ԳԼ· Զ· Զի Հոգին սուրբ է Աստուած Ճշմարիտ, համագոյա-
կից Հօր և Որդւոյ 405
Առարկութիւնք· 408

ԳԼ. Ի. Յաղագս աստուածայնին էլմանց 410
ՅՕԳ. Ա. Զի գոն ՅԱստուած էլմունք առ ի ներքս . . 411
ՅՕԳ. Բ. Զի երկու միայն են էլմունք ՅԱստուած . . 413
ԳԼ. Ը. Յաղագս աստուածայնին առընչութեանց . . 416
ԳԼ. Թ. Յաղագս անձնաւորութեանց կամ անձանց . . 418
ԳԼ. Ժ. Յաղագս առանձնաւորութեանց ՅԱստուած . . 422
ԳԼ. ԺԱ. Յաղագս բղխման Հոգւոյն սրբոյ ի Հօրէ և ՅՈրդւոյ 423
ՅՕԳ. Ա. Ապացոյցք ի սուրբ գրոց 427
Առարկութիւնք 429
ՅՕԳ. Բ. Ապացոյցք ի բանէ 430
Առարկութիւնք 431
ՅՕԳ. Գ. Վկայութիւնք ի Հարց յաղագս բղխման Հոգւոյն և ՅՈրդւոյ 432
ՅՕԳ. Դ. Վկայութիւնք Հարց մերազնեայց յաղագս բղխման Հոգւոյն և ՅՈրդւոյ 436
ՅՕԳ. Ե. Վկայութիւնք յեկեղեցական գրոց մերոց յաղագս բղխման Հոգւոյն և ՅՈրդւոյ 440
ՅՕԳ. Զ. Վկայութիւնք յաղագային ժողովոց յաղագս բղխման Հոգւոյն և ՅՈրդւոյ 443
ՅՕԳ. Ի. Խնդիրք յարակից բղխման Հոգւոյն և ի ՅՈրդւոյ . 448
ՃՈՒՏ Ը. Յաղագս արարչագործութեանն Աստուծոյ . . 452
ԳԼ. Ա. Յաղագս հրեշտակաց 454
ՅՕԳ. Ա. Յաղագս գոյութեան հրեշտակաց . . . —
ՅՕԳ. Բ. Յաղագս բնութեան հրեշտակաց 455
ՅՕԳ. Գ. Յաղագս բաղմութեան հրեշտակաց . . . 456
ՅՕԳ. Դ. Յաղագս սպասաւորութեան հրեշտակաց . . 457
ՅՕԳ. Ե. Յաղագս լինելոյ թեան հրեշտակաց ի չնորհս, և կիսոցն ի նոցանէ անկման և պատուհասի . . 460
Առարկութիւնք 463
ՅՕԳ. Զ. Յաղագս դիւաց ընդ մարդիկ հաղորդութեան . 465
Առարկութիւնք 468
ՅՕԳ. Է. Յաղագս մարդկան ընդ դէս հաղորդութեան . . 470
ԳԼ. Բ. Յաղագս աշխարհի լինելոյ թեան յոչընչէ . . 472
ՅՕԳ. Ա. Զի Աստուած զաշխարհս յոչընչէ արար ի ժամանակի 472
Առարկութիւնք 473
ՅՕԳ. Բ. Զի որ լինչ երկրաբանից և բնագիտաց և աստեղաբաշխից աստղ զննութիւնք, ոչ հակառակ ելանեն մովսիսական պատմութեան 475
Առարկութիւնք 477
ՅՕԳ. Գ. Զի զուր ջանան անհաւատք ցուցանել զկիզբն մարդկութեանս երիցագոյն քան զժամանակն պատմեալ ի Մովսիսէ 478

Առարկութիւնք 480
ԳԼ. Գ. Յաղագս լինելութեան մարդոյ 481
Առարկութիւնք 484
ՅՕԳ. Ա. Յաղագս բնութեան մարդոյ, անխիւթականութեան և անմահութեան 488
ՅՕԳ. Բ. Յաղագս թէ յորմէ պայմանի առեղծաւ մարդ . 490
Առարկութիւնք 494
ՅՕԳ. Գ. Զի մարթ էր Աստուծոյ առնել զմարդ ՚ի բնական ևէթ պայմանի, առանց շնորհելոյ նմա զսկզբնական արդարութիւն, այսինքն զսրբաբար շնորհս . 499
Առարկութիւնք 502
ՅՕԳ. Դ. Յաղագս անկման նախատառեղծիցն . . . 509
ՅՕԳ. Ե. Յաղագս սերնդեան մեղացն Ադամայ . . . 511
Առարկութիւնք 516
ՅՕԳ. Զ. Զի սկզբնական մեղաց վարդապետութիւն ոչ է հաստատակ բանի, և ոչ արդարութեան Աստուծոյ . 520
Առարկութիւնք 521
ՅՕԳ. Է. Յաղագս արդասեաց սկզբնական մեղաց . . 523
ՅՕԳ. Ը. Զի ՚ի պայմանի անկեալ բնութեանս վասն արժանի լինելոյ վարձուց կամ պատուհասի ոչ է բաւական ազատութիւն ՚ի բռնութենէ, այլ խնդրի և ազատութիւն ՚ի հարկէ 524
Առարկութիւնք 528
ՅՕԳ. Թ. Զի ՚ի պայմանի անկեալ բնութեանս կայ և մնայ ՚ի մարդսն ճշմարիտ ազատութիւն կարևոր ՚ի վարձ կամ ՚ի պատուհաս 531
Առարկութիւնք 532
ԳԼ. Դ. Յաղագս հանդերձեալ կենաց մարդոյ . . . 535
ՅՕԳ. Ա. Յաղագս դերբնական երանութեան . . . —
ՅՕԳ. Բ. Զի արդարք յերկինս դերբնապէս տեսանեն զԱստուած դէմ յանդիման 538
Առարկութիւնք 543
ՅՕԳ. Գ. Զի արդարք դերբնական աստուածատարգև լուսոյն իսկ ոչ կարեն բովանդակապէս տեսանել զԱստուած 546
Առարկութիւնք 549
ՅՕԳ. Դ. Յաղագս անհատասարութեան երանական տեսութեան 550
Առարկութիւնք 552
ՅՕԳ. Ե. Զի հոգիք արդարոց անկարօտք քաւութեան, առանց մնալոյ յարութեան մարմնոցն և վերջին դատաստանի, յելս ՚ի մարմնոյ վայելեն յերանականն տեսութիւն Աստուծոյ 553

Առարկութիւնք 562
ՅՕԳ. Զ. Յաղագս առաւձնական դատաստանի . . . 564
ՅՕԳ. Է. Յաղագս քաւարանի 567
Առարկութիւնք 572
ՅՕԳ. Ը. Յաղագս դժոխոց 573
Առարկութիւնք 577
ՅՕԳ. Թ. Զի վարդապետութիւն յաւիտենական պատժոց ոչ է հակառակ լուսոյ բանին 581
Առարկութիւնք 583
ՅՕԳ. Ժ. Յաղագս տանջանացն դժոխոց 586
ՅՕԳ. ԺԱ. Յաղագս անհնուք վախճանելոցն 588
Առարկութիւնք 590
ՅՕԳ. ԺԲ. Յաղագս յարութեան մարմնոց 591
Առարկութիւնք 594
ՅՕԳ. ԺԳ. Զի յարութիւն մեռելոց ոչ է հակառակ լուսոյ բանին 596
Առարկութիւնք 598
ՅՕԳ. ԺԴ. Յաղագս վերջին դատաստանի 602
Առարկութիւնք 603

Ի ՀԱՏՈՐՆ Ա.

Է.Ջ	ՏՈՂ.	ՈԻՂՂԵԼԻՔ		ՈԻՂՂԱՆԱՔ
23	16	Թարգմանութեաց		Թարգմանութեանց
112	7	վկայութիւնն		վկայութիւն
117	2	ընտեալ		ընտել
153	23	պարագրոնէան		նախագրոնէան
186	28	արդար ցուցանեն		արդարացուցանեն
200	13	պետագեանք	խմ	մոլորութիւն պետագեանց
264	30	յամի տեառն 1521		յամի տեառն 1251
315	21	հնաւոր		հնարաւոր
331	29	քումդ		ըստ քումդ
381	26	բարութեամբն		բարեբարութեամբն
383	1	սաբելեանք և որ յառաջ քան զնոսա		սաբելեանք և որ յետոյ նոցա
385	1	համաձայն		հոմաձայն
453	34	արարեալ Աստուծոյ		արարեալ Աստուծոյ միանգամայն
511	7	ոչ նմա		ոչ նմա միայն
576	27	անհնարինն է		յանհնարինն է

Ի ՀԱՏՈՐՆ Բ

24	36	ԱՀԱ յայսքան		Արդ յայսքան
75	29	ոչ ամենայն		որ ամենայն
117	3	Նա ինքն իշխանութեամբ		Նա ինքնիշխանութեամբ
250	7	ընդդէմ Յանհենիոսի	խմ	ընդդէմ մոլորութեան Յանհենիոսի
274	8	երևել		երևեալ
363	14	հայաստանեայցս		ի հայաստանեայցս

ՀՀ Ազգային գրադարան
NL0150926